



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Ն Ի Ի Թ Ե Ր

Հ. Յ. ԴՆՆՊՈՒԹԱՆ

ՊԱՆԻՆԱՆ



Բ. ՀԱՏՈՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
(Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ Ո Վ)

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Հայ Յեղափոխական Դաշնակցության իրական եւ ամբողջական պատմութիւնը չի կրնար գրուիլ առանց անոր օրէնսդիր գերագոյն հաւաքականութեանց՝ Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովներու եւ անոնցմէ բխող յաջորդական Ծրագիրներու, որոշումներու եւ զործունէութեան եղանակներու ըստ հնարաւորի ամբողջական ծանօթացման:

Կ'ըսենք՝ ըստ հնարաւորի, քանի դժբախտաբար ներկայիս կարելի չէ բոլոր Ընդհանուր Ժողովներու եւ անոնցմէ բխած Բիւրօներու եւ Պատասխանատու Մարմիններու նիստերու արձանագրութեանց ամբողջական ծանօթացումը: Դաշնակցութիւնը, բարեբախտաբար, իր կազմութեան առաջին իսկ օրերէն սկսեալ եղած է գերազանցապէս գործի կուսակցութիւն. բայց դժբախտաբար, ատոր իսկ հետեւանքով, իր ժողովներն ու մարմինները անհրաժեշտ կարեւորութիւնը չեն ընծայած արձանագրութեանց, պատմական այն փաստաթուղթերուն՝ որոնք օր մը կոչուած պիտի ըլլային իրենց գործունէութեան լրիւ ու հարազատ պատկերը տալու: Պատմութիւնը դարբնողները Պատմութիւն չեն խաղար:

Պայմանները նաեւ, որոնց մէջ կ'ապրէին ու կը գործէին մեր կազմակերպական մարմիններէն ու գործիչներէն շատերը, -- աշխատանքներու գաղտնի եւ ընդատակեայ բնոյթը կամ ֆէտայական խումբերու հետ լեռնէ լեռ թափառումները, սուլթանական կամ ցարական ոստիկանութեան ամէնօրեայ հալածանքն ու հետապնդումները, -- կը ստիպէին ըլլալ շատ զգոյշ, եւ կազմակերպութիւնն ու անոր զանազան միաւորներու գործունէութիւնը վտանգող փաստաթուղթեր չպահել կամ չկրել: Երկրի մարմիններէն ու գործիչներէն փաստօրէն շատ սահմանափակ թուով գրութիւններ մնացած են միայն, -- անոնք՝ որ օրին այս կամ այն ձեւով հասած են ժընեւ, Արեւմտեան Բիւրոյին: Իր յուշերուն մէջ՝ Ռուբէն տեղ մը կը խօսի արխիւային թուղթերու գործածութեան մասին, երբ սոված ու յոգնասպառ ֆէտայիները ծխախոտ փաթթելու համար սովորա-

կան թուղթ իսկ չէին գտներ...: Մօտաւորապէս նոյնն է եղած կովկասեան մարմիններու թղթածրարներու պարագան. զգուշանալով ոստիկանութեան հետապնդումներէն, Արեւելեան Բիւրօն տարիներ շարունակ փճացուցած է բոլոր ատենագրութիւններն ու վտանգաւոր փաստաթուղթերը. կորուստէ փրկուած են միայն ժընեւ զրկուած կարգ մը կարեւոր գրութիւններ:

Յետագային, Հայաստանի Հանրապետութեան անկումէն ետք, Երկրի եւ կովկասեան մարմիններու վերաբերեալ կարեւոր թուով թղթածրարներ՝ կամ փճացուած են, կամ օրին պահուած են անծանօթ գաղտնարաններու մէջ եւ փաստօրէն կորուսած, -- կամ, լաւագոյն պարագային, անցած են Հայաստանի նոր իշխանաւորներուն ձեռքը եւ այսօր մաս կը կազմեն Հայկական Ս. Խորհրդային Հանրապետութեան պետական արխիւներուն (1):

Դաշնակցութեան Կեդրոնական Դիւանին մէջ ոչ մէկ փաստաթուղթ կը գտնուի Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան հիմնադիր ժողովէն (Թիֆլիս, 1890ի ամառ կամ աշնան սկիզբը) եւ կուսակցութեան անդրանիկ Ընդհ. Ժողովէն (Թիֆլիս, 1892ի ամառ): Այս վերջինէն՝ մնացած է Հ. Յ. Դ. անդրանիկ Ծրագիրը միայն, կազմուած առաւելաբար Ռոստոմի ու յաւելումներու ենթարկուած՝ Քրիստափորի եւ Զաւարեանի կողմէ (2): Անկէ ետք՝ կը գտնենք հատուկտոր փաստաթուղթեր 1895-98 թուականներուն Կովկասի մէջ զումարուած Ընդհանուր-նայոնական Ժողովներուն վերաբերեալ (3): Հ. Յ. Դ. 2րդ. Ընդհ. Ժողովէն սկսեալ (Թիֆլիս, 1898 Ապրիլ-Մայիս), սովորութիւն դարձած է հրատարակումը ԳԱՂՏՆԻ մակագրուած և Դաշնակցութեան գլխաւոր մարմիններուն միայն վերապահուած (Բիւրօներ, Պատասխանատու Մարմիններ եւ Կեդրոնական Կոմիտէներ) որոշումներու գրքոյկներու, որոնցմէ պահուած են հատուկտոր օրինակներ: Նոյն Ընդհ. Ժողովէն սկսեալ, պահուած են նաեւ, բարեբախտաբար, արձանագրութիւններ, ատենագրութեանց ամփոփումներ եւ յա-

րակից կարգ մը շահեկան փաստաթուղթեր (շրջաբերականներ, մարմիններու միջեւ փոխանակուած գրութիւններ, կարգ մը շրջաններու տեղեկագրեր, եւն.):

Դաշնակցութեան պատմութեան մէջ գրեթէ Ընդի. ժողովներուն չափ կարեւորութիւն ներկայացուցած են Արեւելեան Բիւրոյի շրջանի (Տարօն, Վասպուրական, Բարձր Հայք, Ատրպատական, Կովկաս եւ Ռուսաստան) մասնակի Ընդհանուր ժողովները, ծանօթ՝ Կովկասեան Ռայոնական ժողովներ անունով: Այդ ժողովներու ընթացքին է որ տրուած են Կովկասի թէ Երկրի մարտական գործունէութեան վերաբերեալ շատ մը հիմնական որոշումներ: Ռայոնական ժողովները շարունակուած են 2րդ. Ընդի. ժողովէն ետք, մինչեւ 1917: Կեդրոնական Դիւանին մէջ պահուած են բարեբախտաբար անոնցմէ շատերու արձանագրութիւնները, ինչպէս նաեւ յարակից փաստաթուղթեր ու որոշումներու քանի մը գրքոյկներ:

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի ներկայ Բ. հատորը ամբողջութեամբ յատկացուած պիտի ըլլայ Հ. Յ. Դաշնակցութեան առաջին 3 Ընդհանուր ժողովներուն (1892, 1898, 1904), ինչպէս նաեւ մինչեւ 1906 զումարուած Արեւելեան (Կովկասեան) Ռայոնական ժողովներուն վերաբերեալ փաստաթուղթերու հրատարակութեան: Ժողովական արձանագրութիւններէն եւ որոշումներէն դուրս, պիտի տանք նաեւ ներկայիս մեր տրամադրութեան տակ գտնուող այն բոլոր գրութիւնները, շրջաբերականները, յայտարարագրերը, — օրին տպագրուած կամ ոչ, — որոնք այս կամ այն ձեւով ադերս ունին այդ ժողովներուն կամ անոնցմէ բխած մարմիններու գործունէութեան հետ: Կարգ մը ժողովներու կապակցութեամբ, պիտի հրատարակուին նաեւ ցարական Օխրանայի արխիւներէն քաղուած փաստաթուղթեր (4):

Ժողովներու եւ յարակից գործունէութեան այս շարքին մէջ անհրաժեշտաբար տեղ պիտի գտնեն տակաին՝ 2րդ. Ընդի. ժողովին կողմէ հաստատուած Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմինն եւ 3րդ. Ընդի. ժողովէն ետք (Սոփիա, 1904 Յունուար—Փետրուար) կեանքի կոչուած Դաշնակցութեան Խորհուրդին վերաբերեալ կարգ մը նիւթեր: Վերոյիշեալ մարմինները, Ընդի. ժողովներուն միջեւ, փաստօրէն ամենազօր վարիչ հաստատութիւններն էին Հ. Յ. Դաշնակցութեան: Ինչ որ Կեդրոնական Դիւանին մէջ մնացած է անոնց ժողովական արձանագրութիւններէն՝ հետագային ամբողջական կերպով կու տանք այլ հատորով մը, երբ հրատարակուին Բիւրօներու եւ Պատասխանատու Մարմիններու վերաբերեալ թուղթերը:

Անկախ Ընդի. ժողովներու որոշումներու գրքոյկներէն եւ օրին առանձին հրատարակութեան արժանացած «Հ. Յ. Դ. Ծրագիր»ներէն, «Կովկասեան Նախա-

գիծ»էն եւ կարգ մը այլ յայտարարագրերէ, 1895—98ի Կովկասեան Ռայոնական ժողովներու եւ Հ. Յ. Դ. 2րդ. Ընդի. ժողովին վերաբերեալ կարգ մը արձանագրութիւններ լոյս տեսած են արդէն ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ երկհատոր շարքին մէջ: Պիտի տանք սակայն վերստին՝ ապահովելու համար ներկայ հատորի նիւթին ամբողջականութիւնը:

Հ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

(1) «Բանբեր Հայաստանի արխիւներէ» պարբերաբարքի 1900ի 3րդ. (24րդ.) համարին մէջ, էջ 12, կը կարգանք՝ թէ Հայաստանի պետական արխիւներում մէջ կան նաեւ միւլթեր «Հայ յեղափոխական շարժումների, ցարական կառավարութեան կողմից այդ շարժումների զեկավարների նկատմամբ հեղադուրքի սահմանելու եւ հետապնդումների, Դաշնակցութեան կուսակցութեան կազմակերպման, այդ կուսակցութեան գործունէութեան, եւն.» մասին: Նայն համարին մէջ, էջ 13 եւ 17, կը գտնենք յիշատակուող 1914—17ի կամուրակայն գործունէութեան եւ 1918—20ի Հայաստանի շրջանական զեկավարման օրգանների փոփոխութիւն վերաբերեալ արխիւային միւլթերու:

(2) Հ. Յ. Դ. անդրանիկ Ծրագիրը առաջին անգամ հրատարակուած է ԴՐՕՇԱԿԻ մէջ, Ա. Ընդի. ժողովէն երկու տարի ետք միայն (1894, թիւ 10 եւ 11). ապա լոյս տեսած է նաեւ առանձին գրքոյկով, յաջորդական տարիներու ընթացքին արժանանալով բազմաթիւ տպագրութիւններու (ոմանք արեւելահայերէնով, ուրիշներ՝ արեւմտահայերէնով): «Ռուստումը անձամբ պատմել է մեզ. — կը գրէ ռաբացեալ ընկ. Ս. Վրացեան ԴԻԻԱՆԻ Ա. համարին մէջ, էջ 87, — որ այդ Ծրագիրն ներածական ընդհանուր տեսութիւնը գրել է ինքը եւ Քրիստափորն ու Զաւարեանը յաւելումներ են կատարել: Այդ պարագան հաստատուած է Հ. Յ. Դ. կեանք. Դիւանում պահուած ԴՐՕՇԱԿԻ հաւաքածուով, ուր ծրագրի ընդհանուր տեսութեան տակ նշանակուած է Ռուստումի անունը»: «Յուշակցութեան Հ. Յ. Դաշնակցութեան» հատորին մէջ, էջ 185, կը կարգանք նաեւ՝ «Այդ ծրագրի ներածական մասը գրել էր, Ընդի. ժողովից յետոյ, Ռուստումը, եւ առանց Ընդի. ժողովի ֆինանսեան բովից անցնելու՝ կցուել էր ծրագրին՝ յաջորդ՝ երկրորդ Ընդի. ժողովից վաւերացնելու պայմանով»:

(3) Օրին՝ Արեւելեան Բիւրոյին եմթակայ շրջաններու պարբերական այս հաւաքոյթները կոչուեցան Ընդի. ժողովներ: Արեւմտեան Բիւրոյի, Պոլսոյ եւ արտասահմանի մարմիններու ընդդիմութեան վրայ, սակայն, այդ անունը վերացուեցաւ եւ 1898ի Ապրիլ—Մայիս ամիսներուն թիփիս կայացած համագումարը, մասնակցութեամբ երկու Բիւրօներուն եւ Դաշնակցութեան գրեթէ բոլոր կեդրոնական կամիտներուն (բացառութեամբ Վասպուրականի, Սասունի եւ Ամերիկայի մարմիններուն), կոչուեցաւ Հ. Յ. Դ. 2րդ. Ընդի. ժողով: Արեւելեան շրջաններու պարբերական համագումարները (գրեթէ տարին անգամ մը) կոչուեցան Կովկասեան Ռայոնական ժողովներ:

(4) Հ. Յ. Դ. Բիւրոյի որոշմամբ, Քալիֆօրնիայ Հուլիսը Հիմնարկութեան մօտ գտնուող՝ ցարական գաղտնի ոստիկանութեան՝ Օլթրամայի Փարիզեան գրասենեակի արխիւները մանրակրկիտ կերպով աչքէ անցուց եւ Դաշնակցութեան վերաբերեալ թղթածրագրերը առւերէնէ հայերէնի բարգամանք ընկ. Ամսրէ Ամարեան, 1909ի: Այդ թղթածրագրերու փաստաթուղթերէն մաս մը արդէն իսկ հրատարակուեցաւ ԱԶԻԱԿ ԵԱԲԱԹՕՐԵՆԻԱԿԻ մէջ՝ ընկ. Ամարեանի ծածօթագրութիւններով:

Ա.— Զ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Ինչպէս ըսուած է ներածական բաժնին մէջ, փաստօրէն ոչ մէկ գրաւոր արձանագրութիւն մնացած է Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան Հիմնադիր եւ Առաջին Ընդհանուր ժողովներէն: Գէթ՝ նման ոչ մէկ փաստաթուղթ գոյութիւն ունի Հ. Յ. Դ. կեդրոնական Դիւանին մէջ:

Դաշնակցութեան հիմնադրութեան մէջ գործօն դեր ունեցած կարգ մը հիմ ընկերներու յուշերու պատահիկները, Ռուստումի վերյիշումները՝ մէջբերուած Ս. Վրացեանի, Ա. Գիւլիսանդանեանի, Վ. Նաւասարդեանի եւ ուրիշներու կողմէ՝ բաւական յստակ կերպով ցոյց կու տան որ 1890 թուականի ամբողջ կէտերուն, հաւանօրէն Օգոստոսի սկիզբները, արդէն իսկ կազմաւորուած էր Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը եւ ընտրուած՝ անոր անդրանիկ Գերագոյն Մարմինը՝ «Հ. Յ. Դ. կեդրոն»ը:

«Ճիշդ ո՞ր ամսին եւ ո՞ր օրը տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը, ստույգ յայտնի չէ. — կը գրէ ռաբացեալ ընկ. Ս. Վրացեան: Քրիստափորի յուշերից դատելով պատմական այդ դէպքը տեղի ունեցած պէտք է լինի 1890 թ. Օգոստոսին: Ըստ Ռուստումի՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը տեղի է ունեցել Յուլիս ամսին: Կուկուսեանի արշաւանքի պատմութիւնից երեւում է, որ Օգոստոսին Հ. Յ. Դաշնակցութիւնը արդէն կազմուած էր եւ անցել էր գործունէութեան»(1):

Ս. Վարանդեան եւս կը հաստատէ՝ որ «ծնու Հ. Յ. Դաշնակցութիւնը 1890ի ամառը», թէն՝ «ժողովները սկսուած էին դեռ 1889ի աշնան»(2):

Նարկազմ կեդրոնական վարչութեան կամ «Հ. Յ. Դ. կեդրոն»ի անդամներն էին՝ Քրիստափոր Միքայելեանը, Սիմոն Զաւարեանը, Արաքիւմ Դաստակեանը, բժիշկ Յովի. Լարիս—Մելիքեանը եւ Լեւոն Սարգսեանը: Քրիստափորի (Գիշնու) եւ Սիմոնի (Տրապիզոն) ձեռքապաշտօններն էին, կազմին վրայ կ'աւելուէին Մարտին Շաքիրեանն ու Արշակ Թաղեանեանը:

Ռուստումը, «Կեդրոն»ին պաշտօնապէս մաս չկազմելով համարձակ, նախ քան Պարսկաստան անցնիլը անոր ամենագործօն օժանդակն էր(3):

Հիմնադիր ժողովէն (կամ անկէ բխած «Կեդրոն»էն) մնացած միակ փաստաթուղթը Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան անդրանիկ կոչ-յայտարարագիրն է (մանիփէտը), — «որ մի տեսակ հրաշքով ընկել է Ռուստումի ձեռքը Պետրոգրադի ժամտարմական վարչութեան դիւանական թղթերը քրքրելիս, 1917 թ. յեղափոխութիւնից յետոյ»(4): Անդրանիկ կոչ-յայտարարագիրը, ամենայն հաւանականութեամբ, հրատարակ է եղած 1890ի աշնան կամ վերջերը: Ան յետագային հրատարակուած է գանազան առիթներով, ի մասնաւորի ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆԻ առաջին հատորին մէջ (էջ 88—89), ԴՐՕՇԱԿԻ 1890—97 տարիներու հաւաքածոյի վերատպագրութեան առիթով՝ դրուած հատորին սկիզբը, Հ. Յ. Դ. ՎԱԹՍՈՒՆԱՄԱԿ (հրատարակութիւն Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ. Կոմիտի, 1950) հատորին մէջ (էջ 49—51), եւն.: Կու տանք վերստին, նկատի ունենալով մեր ներկայ շարքին հետ անոր կապը:

Հ. Յ. Դաշնակցութեան առաջին տարուան գործունէութեան հետ սերտօրէն կապուած է առաջին Սարգիս Կուկուսեանի խումբի արշաւանքը, որու վերաբերեալ հիմնական յուշագրութիւններն ու փաստաթուղթերը տրուած են ԴԻԻԱՆԻ երկու հատորներուն մէջ, (Ա. հատոր, էջ 10—86, եւ Բ. հատոր՝ էջ 5—25):

«Հ. Յ. Դ. կեդրոն»էն մնացած է նաեւ Խաչատուր Կերեկցեանի սպաննութիւնը դատապարտող «Յայտարարութիւն» մը, հրատարակուած ամենայն հաւանականութեամբ 1891ին(5), գոր կու տանք նոյնպէս՝ անցնելով ԴԻԻԱՆԻ Ա. հատորէն (էջ 94—95):

«Հ. Յ. Դ. կեդրոն»ի գործունէութեան մասին ընկ. Ս. Վրացեան կը գրէ(6). — «Վարչութիւնը չարագործացրեց իր վրայ դրուած մեծ յոյսերը. նրա թոյլ գործունէութեան դէմ ամէն կողմից ծայր տուին դժ-

գոհութիւններ: Այդ տրամադրութեան արտայայտութիւնն է 1892 թ. Ապրիլին հրատարակուած «Հայ յեղափոխականներին» ուղղուած մէկ կոչը «Հ. Յ. Դաշնակցութեան մի խումբ» ստորագրութեամբ, որ քննադատութիւն էր յեղափոխական գործի ընդհանուր քաղաքականութեան և միաժամանակ՝ հրաւեր ընդհանուր ժողովի: Այդ կոչից մէկ օրինակ մնացել է Հ. Յ. Դ. կենտրոնի հիմնադրումը: Կոչի տակ Ռոստոմի ձեռքով գրուած է «Հրատարակուած Թարիզում, 1892 թ. ապրիլին, Ընդհ. ժողովից առաջ: Խմբագրել են Յոնանը և Օֆոնեանը»: Այդ կոչը եւս կու տանք մեր ներկայ շարքին մէջ, առնելով Գիւնի Ա. հատորէն (էջ 95):

Հ. Յ. Դ. առաջին Ընդհանուր ժողովին մասին (գումարուած Թիֆլիս, 1892ի ամառը(7) կամ աշնան(8)), Մ. Վարանդեան կը գրէ իր Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հատորին մէջ (էջ 107). «Ներկայ էին գլխաւոր զեկավարներուն հետ, ի միջի այլոց, Արամ Արամեան (Երզրումէն), Տերսիմի Բեռնի, Պետո, Արաթ, Նիկոլ-Դուման, Յովսէփ Արզուրեան, Յոնան Դարեան: Ժողովները տեղի կ'ունենային ջղայնացած մթնոլորտի մէջ (Թիֆլիզում), ուստի ժամտարմերիայի արթուն հսկողութեան տակ: Ընկերները շարունակ կը փոխադրուէին թաղէ թաղ, տունէ տուն: Եւ այդտեղ, վերջապէս, Հ. Յ. Դաշնակցութեան կարեւոր գործիչներու այդ անդրանիկ համագումարին մէջ, քննութեան դրուեցան ծրագրային, տակտիկային ու կազմակերպչական խնդիրները, շօշափուեցան անգամ կուսակցական ընդհանուր, ընկերային աշխարհահայեացքի խնդիրը...»:

Առաջին Ընդհանուր ժողովի արգասիքն է Հ. Յ. Դաշնակցութեան անդրանիկ Մրագիրը: Ան առաջին անգամ հրատարակուած է 1894ին, ԴՐՕՇԱԿի թիւ 10 եւ 11 համարներուն մէջ, ապա արժանացած յաջորդական առանձին հրատարակութիւններու՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն: Համաձայն Ա. Գիւլիսանեանի(9), Մ. Վրացեանի(10) եւ Վ. Նաւարդեանի(11), Մրագրի ներածական-տեսական բաժինը գրած է Ռոստոմը՝ Ա. Ընդհ. ժողովէն անմիջապէս ետք, յաւելումներով կամ աշխատակցութեամբ Բրիտանացիի եւ Սիւսն Զաւարեանի, մինչ գործնական մասը կամ «բուն ծրագիրը» (Նպատակ, Միջոցներ, Կազմակերպութիւն) մշակուած է Ա. Ընդհ. ժողովին իսկ ընթացքին: Հ. Յ. Դ. կեդրոնական Գիւնին մէջ կը մնան «բուն ծրագրի» քննի մը խմբատար օրինակները, ինչպէս նաեւ ձեռագիր օրինակ մը — ա-

մենայն հաւանականութեամբ յետագայ արտագրութիւն — Միֆայէլ Յովհաննէսեանի (Վարանդեան) ստորագրութիւնը կրող:

Անդրանիկ Մրագիրը, ամբողջական կերպով եւ արեւելահայերէն քննարկով, վերատպուած է Գիւնի Ա. հատորին (էջ 95-102), ապա նաեւ Հ. Յ. Դ. ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ մէջ (էջ 97-109): Ներկայ մեր շարքով կու տանք արեւմտահայերէն թէքսթը, առնելով 1906ի չորրորդ տպագրութենէն(12): Կը յուսանք այս ձեւով տուած ըլլալ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր եւ Ա. Ընդհ. ժողովներէն մնացած փաստաթուղթերու ամբողջութիւնը՝ գէթ ներկայի մեր ժամօրութեանց եւ հնարաւորութիւններու սահմաններուն մէջ(13):

Հ. Յ.

- (1) «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան», Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Բիւրոյի, Պոթըն, 1950. էջ 84:
- (2) Մ. Վարանդեան, «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւն», Ա. Հատոր. էջ 58:
- (3) Տեսնել (1), էջ 95. (2), էջ 59 եւ 64. Ինչպէս նաեւ՝ Ն. Հանգոյց, «Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից (Մարտի Շաբիրեանի յուշերը)», ՀԱՅՐԵՆԻԹ Աժ., Ա. տարի, թիւ 5 եւ 6:
- (4) «Գիւն Հ. Յ. Դաշնակցութեան», Ա. Հատոր, էջ 86:
- (5) Տեսնել (2), էջ 86:
- (6) Տեսնել (4), էջ 87:
- (7) Տեսնել (1), «Հ. Յ. Դ. Ընդհ. ժողովները», էջ 556:
- (8) Տեսնել (2), էջ 107:
- (9) Ա. Սեւեան (Գիւլիսանեան), «Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական ծրագիր-կանոնագիրը», ՀԱՅՐԵՆԻԹ Աժ., ԺԵ. տարի, թիւ 3. «Հ. Յ. Դ. առաջին ծրագրի հեղինակները», նոյն, ԺԵ. տարի, թիւ 4: Նոյն հեղինակէն՝ տեսնել նաեւ «Երբ է հիմնուել Հ. Յ. Դաշնակցութիւնը», ՀԱՅՐԵՆԻԹ Աժ., ԺԵ. տարի, թիւ 2 եւ «Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները», նոյն, ԺԵ. տարի, թիւ 6 եւ 7:
- (10) Տեսնել (1), էջ 107. եւ (4), էջ 87:
- (11) Վ. Նաւարդեան, «Գաղափարների ոգին», Գահիրէ 1951, էջ 32-42:
- (12) 1906, ԺԵԵԸ, Դաշնակցութեան տպարան: Մանթէ է որ Հ. Յ. Դաշնակցութեան երկրորդ Մրագիրը մշակուեցաւ 1907ին միայն, վերջնայի չորրորդ Ընդհ. ժողովին: Անկէ առաջ, միեւնոյն Մրագիրը, դարձեալ արեւմտահայերէնով, կը գտնենք Բ. Ընդհ. ժողովի որոշումներու գրքակին մէջ (ԺԵԵԸ, 1903):
- (13) Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան Հիմնադրութեան կազմակերպութեամբ՝ շահեկան է նաեւ տեսնել Գ. Ղազարեան, «Երկու դար ծնունդ առաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը», ՀԱՅՐԵՆԻԹ Աժ., Դ. տարի, թիւ 1. Իսկ Ա. Ընդհ. ժողովի մասին՝ Իլիան Ե. Արզուրեան, «Յովան Դարեան», ՎՃՄ, Զ. տարի, թիւ 3:

1.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՉ-ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ (ՄԱՆԻՖԷՍՏ)

Հայեր, Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ թիրաքա-Հայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը, որ դեռ երէկ, շինքը ծռած, Եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզուելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Դարերով ճնշուել է հայ ժողովուրդը թուրք բռնապետների լծի տակ: Դարերի ընթացքում ցանկ է, բայց պտուղը երբեք չի վայելել. աւագակ տիրողը յափը շտակել է: Դարերի ընթացքում անարգել են նրա սրբութիւնները, բայց հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ՝ շարունակելով ողողել հայրենիքի հողը իր քրտինքով... Դարերի ընթացքում հայը կարծէք թէ կամեցաւ ապացուցանել մարդկութեանը, թէ կարելի է ազատութիւն ձեռք բերել կուլտուրական ճանապարհով: Գաղաքակիրթ Եւրոպան խոստացաւ վերջ տալ թուրքերի բարբարոսութիւններին Հայաստանում: Սակայն, անցան տարիները տարիների ետեւից, եւ հայերի դրութիւնը իրանց հայրենիքում ոչ թէ միայն չլաւացաւ, այլ աւելի ծանրացաւ եւ այժմ միանգամայն անտանելի, դժոխային է դարձել: Հայի պէս համբերող ազգն անգամ անկարող է շարունակել իր գոյութիւնը այդպիսի երկրում:

Բայց համբերութիւնն էլ ունի իւր սահմանը: Գաղաթնակէտին հասցրած հալածանքները, վերջապէս, սթափեցրին հային. այսօր նա վճռել է կամ մեռնել կամ ազատուել: Եւ ահա իրզրումը եւ ապա Կ. Պոլիսը աներկիւղ բողոքում են անիրաւութիւնների դէմ. Հայը այլեւս չի խնդրում, այլ պահանջում է եւ պահանջում է զէնքը ձեռքին:

Սուլթանը սարսափահար է. թուրք կառավարութիւնը զլուխը կորցրել է:

Այսօր Եւրոպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները:

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ոյժը իր մէջ է. երէկուայ ստրուկ, համբերող Հայաստանցին այսօր յեղափոխական է դարձել:

Հայոց հարցի վճռի յետաձգելը այլեւս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամէն մի լուրջ հայրենասէրի, — այդ բոլոր յեղափոխական ոյժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է:

Այդ յեղափոխական գաղափարի դրոշակակիրն է «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը», որ սո-

րանով դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել մի դրոշակի տակ:

«Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը», թէեւ նոր է հանդէս գալիս իբրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց դործող խմբերի միութիւնն է. «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ոյժերը՝ կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Նպատակ դնելով թիրաքաց Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը՝ «Դաշնակցութիւնը» մտել է այն կուռի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ՝ ուխտելով մինչեւ արեան վերջին կաթիլը կուռել հայրենիքի ազատութեան համար:

Միանանք ամէնքս ժողովուրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրոշակը. նա, ով այսօր երեսը կը դարձնի ժողովուրդից եւ չի հետեւիլ նրան, այդ ժողովուրդի հակառակորդն է, նրա թշնամին է...

Ուրեմն, եղբայրներ, միանանք յանուն սուրբ դործի ընդհանուր թշնամու դէմ:

Եւ դո՛ւք, երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովուրդի հետ:

Եւ դո՛ւք, ալիքարդ ծերունիներ, ողևորեցէ՛ք ձեր որդոց եւ օգնեցէ՛ք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

Եւ դո՛ւք, հարուստներ, բաց արէ՛ք ձեր քսակները, զէնք հայթաթելու ժողովուրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ:

Եւ դո՛ւ, հայ կին, ոգի ներշնչիր սուրբ գործի մէջ:

Եւ դո՛ւ, հայ հոգեւորական, օրհնիր ազատութեան զինուորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուե՛նք, հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

2.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օգոստոսի վերջերին սպաննուեց իրզրումում Խ. Կերեկցեանը: Հանդուցեալը անյայտ չէր այն ամէն մէկին ով փոքր ի շատէ ծանօթ է հայ յեղափոխական շարժման պատմութեան հետ: 80ական թուականների սկզբներում տեղի ունեցած իրզրումի շարժման ամենահռոնդոտ ստեղծողներից մէկը Խ. Կերեկցեանն էր, եւ սորա համար հանգուցեալը ամբողջ հինգ տարի տանջուեց տաճկական բանտերում: Եւ ահա նա ըստ պանուտ է մի հայի ձեռքով յանուն սկզբունքների, որի համար կուռել, տանջուել ու շարժարուել է հանգուցեալը:

Ի նկատի ունենալով քաղաքական սպանութիւններ-

րի մասին գոյություն ունեցող մի սխալ ու վնասակար գաղափարը, Հ. Յ. Դ. ը իր պարտքն է համարում հրատարակապես յայտնել իր կարծիքը այդ հարցի մասին: Մեր խօսքը այն սպանությունների մասին է, որ գործադրում են ընկերների վերաբերեալ:

Ամէն մի հասարակական, նամանակահատուկ յեղափոխական գործում առաջ է դալիս գործիչների մէջ սկզբունքների, կոուլի եղանակի եւ կարծիքի տարբերութիւն, որ յաճախ հասցնում է մոլեռանդութեան, մոռացնում է ընդհանուր գործը, ընդհանուր թշնամին. մոռացնում է որ կուռելով ընդհանուր թշնամու դէմ, մարդիկ գորանով սուրբ գործում եղբայրներ են եւ ընկերներ, որոնց միացնում է ազգի ազատութեան եւ բարօրութեան գաղափարը: Բանը այնտեղ է հասնում, որ մի կուռակցութիւն վճռում է հեռացնել, ոչնչացնել հակառակորդներից մէկին կամ միւսին, կարծելով որ գորանով կը հարթեցնէ իր ճանապարհը, կը հեշտացնէ իր կուռը ընդհանուր թշնամու դէմ: Եթէ մէկը այստեղ շահում է, դա ընդհանուր թշնամին է, որը հեշտութեամբ, նոյնիսկ հարազատների ձեռքով, ազատում է իր համար մի վտանգաւոր անձնաւորութիւնից. մոռացնում է որ այդ միջոցով չեն հարթւում խոչընդոտները, որ այդպիսի քայլեր աւելի սուր կերպարանք են տալիս կուռակցական յարաբերութիւններին, մի անջնջելի վիճակաց անելով նրանց մէջ:

Յանուն ընդհանուր գործի եւ բազմաչարչար ազգի ազատութեան գաղափարի, մենք դիմում ենք հայ յեղափոխականներին, մանաւանդ մեր կոմիտէներին, երբեք չդիմել այդպիսի միջոցի: Մենք բարձրաձայն յայտնում ենք, որ այդպիսի սպանութիւն մենք համարում ենք յանցանք, ուղղուած ազգի շահերի դէմ, որի անուշով կատարում է նա:

Հ. Յ. Դ. ը ընկերների վերաբերեալ միմիայն մի դէպքում թոյլատրելի է համարում այդ միջոցի գործադրութիւնը, այն է, երբ ապացուցուած է մէկի գիտակցական դաւաճանութիւնը եւ այդ մահապատժաւորող չէ լինել առանց Կեմտրոնի համաձայնութեան, առանց նորա սանկցիայի(1):

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(Կարծիք գոյով կըր կնիք, մէջտեղ՝ խաչածաւած գրչակ, դաշնի եւ հրացանի, իսկ շուրջը գրուած՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն:)

(1) Հաւանութեամբ, վաւերացմամբ:

3.- ՀՐԱԻԵՐ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԵԱՆ ՆԵՐՈՒՆ

Ընկերներ, ի նկատի ունենալով մեր յեղափոխական գործերի ընդհանրապէս թոյլ ընթացքը, ժողովրդի գործից սառչելը, որ հետեւանք են գլխաւորապէս գործողներ:

րի մէջ մի ընդհանուր ընկերական կապ, գործունէութեան որոշ ուղղութիւն — տաքսիկա չլինելուն եւ բոլորիս դիմած կէտ-նպատակի անորոշութեան, ասպարեզի վրայ գործողների «Դաշնակցութեամբ» մի որոշ խումբ, որոնց աւելի զգալի է գործի ներկայ անմխիթար եւ տարտամ դրութիւնը՝ ցանկանալով վերջ տալ այդ անորոշ դրութեան, որոշ եւ հաստատ հիմունքներ յիմար դնել յեղափոխական գործը, իւր պարտակաւորութիւնն է համարում կազմել մի ժողով: Ուստի առաջարկում ենք ձեզ մասնակցել կայանալիք ընդհանուր ժողովին, ընտրելով ձեր շրջանում մի պատգամաւոր ներկայանալու այդ ժողովին, ուր քննուելու են գլխաւորապէս հետեւեալ կէտերը.

- 1) Յեղափոխութեան նպատակը.
2) Կազմակերպութիւնը.
3) Միջոց-տաքսիկան:

Առաջարկելով այս 3 գլխաւոր կէտերը ձեր խորհրդածութեան, աւելորդ չենք համարում յայտնել մեր մի քանի հայեացքները:

Մեր նպատակն է յեղափոխութեան միջոցով ձեռք բերել թուրքա-Հայաստանում ժողովրդական-ազատական կազմակերպութիւն:

Յեղափոխական կազմակերպութիւնը բաժանուած պէտք է լինի շրջանների: Ընդհանուր բնաւորութիւն կրող խնդիրները վճռուում են շրջանների ներկայացուցիչների հերթական եւ արտակարգ ժողովներում, որ կոչւում են «գործադիր ժողով» կամ «գործադիր մարմին», որի վճիռներին եւ իրաւասութեան ենթարկւում է ամբողջ կազմակերպութիւնը: Այդ ժողովներում խնդիրները վճռուում են ձայների մեծամասնութեամբ, բացի ընդհանուր ապստամբութեան ծանր եւ վճռական խնդրից, որի համար պահանջուում է «գործադիր ժողովի» ձայների երեք զարոյրը: Իսկ տեղական կամ շրջանական խնդիրները վճռուում են տեղական ժողովներում:

Իսկ ինչ կը վերաբերի միջոց-տաքսիկային, բացի յայտնի՝ պրոպագանդա(1), ագիտացիա(2) եւ տերոր(3) միջոցներից, մնացած գործնական եւ նպատակայարմար միջոցների մասին առ այժմ մենք ոչինչ չենք կարող ասել, այլ թողնում ենք, որ դուք ձեր շրջանում, ինչպէս վերոյիշեալ կէտերը, նոյնպէս եւ այլ, եւ էլի ուրիշ խնդիրներ — օրգանի(4), կասայի(5), գործիչների պարտականութեան, իրաւանց եւայլն — խիստ լուրջ քննութեան եւ մշակման ենթարկելով, մի եզրակացութեան դաք եւ այդ ներկայացնէք կայանալիք ժողովին:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ

- (1) Քարգուլութիւն:
(2) Շարժում, խրատում, խրգայիմ աշխատանք:
(3) Անարկիզմ:
(4) Պաշտօնաբերք:
(5) Գամաթիկ, հիմնադրամ:

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՏՄՈՒՄ 1892 Թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Այն ժամանակէն, երբ մարդկութիւնը մտեր է քաղաքակրթութեան ճամբուն մէջ, այն ժամանակէն երբ նա սկսեր է իր պատմութիւնն ունենալ, ամէն տեղ եւ ամէն ժամանակ կը տեսնենք իշխողներ ու հպատակներ, կեղեքողներ ու կեղեքուողներ, տանջողներ ու տանջուողներ: Տառապեալներու լացին ու կոծին, աշխատաւորին ծանր տնջոցին հետ միասին՝ ամէն տեղէ մեր ականջին կը հասնին ճիւղակներ իշխողներու ցնծալից աղաղակները: Այսպէս եղեր է անցեալին մէջ, այսպէս է այժմ, սակայն այդպէս պիտի չըլլայ ապագային մէջ. — մենք վստահ ենք ասոր: Շատ լաւ կը տեսնենք, թէ ինչպէս իշխող դասակարգերը միշտ կ'իյնան աւելի եւ աւելի թէ՛ Ֆիդիքապէս եւ թէ բարոյապէս, թէ ինչպէս աշխատանքը հետզհետէ ձեռք կը ձգէ իր իրաւունքները, թէ ինչպէս կեղեքուող տարրը հսկայական քայլերով կը մօտենայ իր վերջնական յաղթութեան: Եւ այդ տարրը կը հասնի կատարեալ յաղթութեան, երբ կը վերնան ամէն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցները եւ արդիւնքը կը դառնան աշխատաւորին կատարեալ սեփականութիւնը, երբ մարդոց կառավարութեան կը փոխարինէ իրերու կառավարութիւնը:

Բայց ի՞նչպէս կարելի է հասնիլ այդ բաղձալի ապագային:

Կար ժամանակ, երբ մարդկութեան բոլոր ցաւերը բուժելու, տիրող անհաւասարութիւնը ջնջելու, եղբայրութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն հաստատելու համար մարդկութեան ըէֆօրմատօրներ (բարենորոգիչներ) երեւան կու գային այս կամ այն վարդապետութիւնով, իրենց որոշ «հաւատոյ հանգանակներով»: Համոզուած իրենց վարդապետութեան արդարութեանը, ոգեւորուած վեհ զրացումներով, պատրաստ կրելու ամէն տեսակ զրկանքներ, զոհել կեանքն իսկ՝ իրենց գաղափարները մարմնացնելու համար, այդ ըէֆօրմատօրները կը նայէին ամբողջ մարդկութեան վրայ այնպէս, ինչպէս իրենց վրայ: Անոնք հաւատացած էին թէ բովանդակ մարդկային հասարակութիւնը կարող է ունենալ նոյն զրացումները, նոյն ձգտումը, նոյն պատրաստականութիւնը, ինչ որ իրենք ունին, թէ իրենց վարդապետութիւնը կարող է իրականանալ հէնց վաղը, — պէտք է միայն քարոզել, հասկացնել անոր արդարութիւնը եւ օրինակներ ցոյց տալ:

Անցան դարեր, մէկ վարդապետութիւն յաջորդեց միւսին, շատ ըէֆօրմատօրներ զոհուեցան, բայց եւ այնպէս կը տեսնենք թէ մարդկութեան մէկ մասը, — որու համոզուելն իսկապէս անհրաժեշտ է, որովհետեւ

անոր ձեռքը կը գտնուի անարդարութեան բանալին, — դեռ եւս չէ՛ համոզուեր, չուզեր համոզուիլ եւ ո՛չ մէկ կերպ ալ չի համոզուիր, քանի որ ատիկա իր գործին չի գար: Համոզեցէ՛ք քաղաքակրթուած անգլիական լորտը, թէ իրաւունք չունի իրլանդացիները կեղեքելու. համոզեցէ՛ք բարձրագոյն ուսում ստացած գործարանատէրը, թէ անարդար կերպով է որ իր գրպանը կը լեցնէ բանուորներու աշխատանքը. համոզեցէ՛ք վերջապէս քիւրդը, որ ինքը ոչ մէկ բարոյական իրաւունք չունի ալաչկերացիին տունը եւ ընտանիքը գրաւելու...

Պատմութեան դառն ու դաժան դասերը ակներեւ կերպով ցոյց տուին միանգամայն, թէ մարդկութեան տանջուած մասին իր դառն վիճակը հասկանալը, համոզուելը, մինչեւ իսկ զայն բարեփոխելու բաղձալը, դեռ եւս բաւական չեն յաղթանակը տանելու, թէ ատկէ գատ անհրաժեշտ է ձեռք բերել իրական ոյժ ալ: Բայց որովհետեւ այդ իրական ոյժը յանկարծակի չի ստեղծուիր, որովհետեւ անիկա արդիւնք է գոյութիւն ունեցող պայմաններու եւ կը փոխուի այդ պայմաններուն փոփոխման համեմատ, ուստի պարզ է, թէ ոչ մէկ հանրային կազմակերպութիւն, որքան ալ իտէալական ըլլայ, մէկ անգամէն անկարելի է իրականացնել, թէ այդ իտէալական կազմակերպութեան կարելի է հասնիլ միմիայն գոյութիւն ունեցող պայմանները բարեփոխելով:

Ահա ճիշդ այս պատճառով, մենք ասպարէզ չենք իջեր իբրեւ այս կամ այն իւտոպիական (մտացածին) վարդապետութեան պատկանողներ, չենք ձգտիր մղացնել մեր կեանքին մէջ այս կամ այն «դաւանութիւնը» հանդերձ իր «հանգանակներով», մեր ժողովրդին չենք նկարագրեր այժմ այս կամ այն իտէալական հանրային կազմակերպութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով: Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը կենսական ըլլայ. մեր ուշադրութիւնը, գլխաւորապէս, կեդրոնացած է մեր երկրի ներկայ դրութեան վրայ. մեր նպատակն է անողոք եւ անաշու քննադատութեան ենթարկել մեր կեանքին մէջ ներկայիս գոյութիւն ունեցող պայմանները, մերկացնել բոլոր այն ցաւերը, որոնցմէ կը տանջուի մեր բազմաչարչար ժողովուրդը, եւ, հիմնուած ընկերական գիտութեան դրական օրէնքներու վրայ, պարզել այդ ցաւերուն հակա պատճառները եւ միաժամանակ կատարել կուռ մղել այդ ցաւերը պատճառող պայմաններու (ֆակտօր) դէմ: Հիմնուած նոյն դրական օրէնքներուն եւ երկրին ներկայ պայմաններուն վրայ՝ կ'արծարծենք, կը պարզենք այն դրութիւնը, զոր անհրաժեշտ կը համարինք, որ փոխարինէ ներկային:

Տեսնենք այժմ թէ ինչ կը ներկայացնէ մեր կեանքը:

Թիւրքերը մեր երկրին տիրապետելն ետքը, ամէն ջանք ի գործ դրեր են մեր ժողովուրդը վերածելու

կատարելի (դասի) մը, որու պարտականութիւնն ըլլայ միմիայն աշխատել, արդիւնաբերել, ուրիշ ոչինչ: Պէտք էր այդ ժողովուրդը մշտական հպատակութեան տակ պահել եւ անարգել կերպով ծծել անոր արիւնքերտինքով եւ զրկանքով ձեռք բերած աշխատանքը: Ահա ատոր համար անհրաժեշտ էր մեռցնել այդ տարրին ռազմական ոգին, թողով որ նա աշխատի եղան նման եւ այդ աշխատանքով կերակրէ տիրապետող տարրը: Թիւրքերը բնաջինջ ըրին մեր ազնուականութիւնը եւ իրենք բանցին անոր տեղը, խլեցին ժողովրդին ձեռքէն սուր, հրացան, ամէն տեսակ պաշտպանութեան զէնքեր եւ թողին միայն արօրն ու բրիչը: Արտաքսեր են մեզ զինուորական ծառայութեանն եւ զինուորի փոխարէն մեզմէ կ'առնեն բազմատեսակ հարկեր՝ կերակրելու համար իրենց զինուորները եւ բազմաթիւ պաշտօնեաները. ամենածայրայեղ զէնքերու մէջ անգամ չէին դիմեր մեր օգնութեանը, երկիւղ կրելով, որ այդ զէնքը օր մը կարող է իրենց գլխուն դառնալ: Մէկ խօսքով՝ թիւրքերը ձգտեր են մեզ զենել ճիշդ այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ որ էին իրողները (սարուկ) սպարտացիներու ձեռքին տակ: Չանազան պատճառներով, որոնց մասին երկար պիտի ըլլայ ձու խօսիլը, այդ բանի մէջ չյաջողեցան անոնք բարեբախտաբար. անոնց այդ ձգտումը չկրցաւ իրականանալ լիակատար կերպով: Բայց եւ այնպէս, երկրին ժողովրդին մէջ կ'որոշուէր երկու իրարմէ բաժնուած, եթէ ոչ կատա, գէթ դասակարգ, հիմնուած բուն Ֆիզիքական ուժի վրայ. մէկ կողմէն առանձնաշնորհեալ միւսը մասն տարրը, միւս կողմէն բազմաթիւ քաղաքական իրաւունքներէ զրկուած քրիստոնեայ ժողովուրդը: Ժամանակի ընթացքին, գլխաւորապէս երկրին տնտեսական զարգացման շնորհիւ, այդ երկու դասերուն տարբերութիւնը աստիճանաբար նուազեր է, բայց դեռ բոլորովին չէ վերջացեր. տարբերութիւնը խիստ զգալի է դեռ: Այդ անհասարկութեան պաշտպանը, ուժ տուող հիմա թիւրք կառավարութիւնն է: Պէտք է ուրեմն մէկզի ձգել այդ կառավարութիւնը, պէտք է ձեռք բերել ազգերու եւ դաւանութիւններու հաւասարութիւնը օրէնքի առջեւ:

Ասկէ զատ՝ երկրին ազգաբնակչութեան մէջ կը տիրէ կալուտարկամ աչքի զարնող անհասարկութիւն: Ազգաբնակչութեան մէկ մասը՝ քիւրդը դեռ կը վարէ կիսավայրենի, վրանարնակ կեանք եւ իր էաբնամբ թշնամի է խաղաղ երկրագործ դասին: Վերոյիշեալ անհասարկութեան պատճառով հայ երկրագործ ժողովուրդը անկարող դարձած է ինքզինքը պաշտպանելու: Եւ թիւրք կառավարութիւնը, փոխանակ օգնութեան զայլու կուլտուրապէս բարձր կանգնած խաղաղ, աշխատող տարրին, փոխանակ զսպելու այդ աւազակներուն անընդհատ յարձակումները, փոխանակ աշխատելու այս կամ այն միջոցով զանոնք խաղաղ պարապմունքի դարձնելու, ընդհակառակը

ինքն է որ կը քաջալերէ այդ աւազակները, անոնց կողմուտին մէկ մասը ինքը ստեպ կը վայելէ, եւ վերջապէս ինքն է որ բացարձակ կերպով, յայտնապէս զանոնք իր սեփական հրացաններով կը զինէ:

Այս բացասական նշանակութեանն զատ՝ զոր ունի թիւրք կառավարութիւնը մասնաւորապէս հայերուն կատմամբ, ունի ընդհանուր նշանակութիւն մըն ալ իր բոլոր հպատակներուն վերաբերմամբ:

Սկիզբները, երբ թիւրքերը նոր երեւցան մեր կողմերը, երբ դեռ ամէն մէկ թիւրք զինուոր էր, թիւրք կառավարութիւնը առանձին մարմին չէր կազմեր գրեթէ. ինքը նոյնն էր, ինչ որ էր համայն թիւրք ժողովուրդը եւ ամբողջովին կը ծծէր հպատակ ժողովուրդներու արիւնքը: Բայց որովհետեւ այդ անազին կազմութիւնն անկարող էր պահպանել իր գոյութիւնը կողմուտով, որովհետեւ ոչ մէկ հպատակ ժողովուրդ, որքան ալ աշխատասէր, արդիւնաբերող ըլլար, ոչ մի հնարաւորութիւն ունէր կերակրել թէ զինք եւ թէ զանոնք իր աշխատանքին արդիւնքով, ուստի թիւրք ժողովրդին մեծագոյն մասը պէտք է դիմէր խաղաղ պարապմունքներու, ստիպուած ինքն ալ պէտք է արդիւնաբերէր, հպատակ ազգերու աշխատանքով ապրելու արտօնութիւնը թողով իր աւելի ուժեղ, աւելի ճարպիկ, աւելի խորամանկ մասին, որ եւ եղաւ երկրին տիրապետող տարրը: Այդ դեռ հերիք չէր: Խաղաղ պարապմունքի դիմած թիւրք տարրը ոչ միայն ստիպուած էր հրաժարիլ հպատակ ազգերը կեղեքելու իրաւունքէն, այլ եւ հետզհետէ ինքն ալ ինկաւ անոնց դրութեան մէջ եւ նոյնպէս սկսաւ կեղեքուիլ, բուն իսկ իր ազնուականութեան, բուն իսկ իր կառավարութեան ձեռքով:

Ահա այդ կառավարչական մարմինն է, որ բաւականին զտուելով ժողովրդէն, կապարի նման կը ծանրանայ իր բոլոր խաղաղ հպատակներու կուրծքին վրայ: Ինքը բազմաթիւ մշտական զօրք, թնդանօթներ, վերջին ձեւի հրացաններ ունի հիմա. իր հրամանին տակ են ոստիկանութիւնը, լրտեսներու անազին բանակը, դահիճները, իր ձեռքն են բանտերը, աքսորավայրերը, եւ այդ իր ուժով կը ճնշէ ու կը ծծէ... եւ վա՛յ անոր, որ համարձակի խլել իրմէ կամ բոլորովին արդիւն այդ ծծելու իրաւունքը: Ապստամբ քրաք ըլլայ ատիկա, թիւրք սօֆտա, թէ հայ յեղափոխական, միեւնոյն է: Այդպիսիներու դէմ են՝ զօրքը, ժանդարմները. այդպիսիներու համար պատրաստ է բանտը, աքսորը, կախաղանը: Մարդու հոգեկան աշխարհը կաշկանդուած է ամէն կողմէ. հալածուած է մամուլը, հալածուած է խօսքը, հալածուած է խիղճը:

Այս բոլորին վերջ է կարող է տալ միմիայն բռնի յեղափոխութիւնը, եւ մենք ատոր կը դիմենք. պէտք է թօթափել այդ խայտառակ լուծը, ոչնչացնել արդի միապետական բռնակալ ընդհանր (կարգեր), ձեռք բերել ազգերու համերաշխութիւն, աշխատանքի ապա-

հովութիւն, խղճի, խօսքի ու համոզմունքի ազատութիւն:

Սակայն այդ արտաքին բռնակալ լուծը հեռացնելը, ինքնավարութիւն ստանալը, վերը յիշուած քաղաքական իրաւունքները ձեռք բերելը մենք դեռ մեր նպատակին հասած չենք համարիլ. միայն գործի մէկ մասն է ատիկա: Միայն ատով մենք չենք կարող ապահովել աշխատաւորին՝ իր աշխատանքէն լիակատար կերպով օգտուելու հնարաւորութիւնը: Աշխատաւոր դասին շահերու դիմաց կանգնած է ուժ մըն ալ, որ այժմ համեմատաբար թոյլ է, որ արդի պայմաններուն մէջ դեռ հնարաւորութիւն չունի բացարձակապէս իր ամբողջ ուժով արտայայտուելու եւ որ որոշ չափով ճնշուած է բռնապետական ընդհանր տակ: Այդ ուժը տնտեսական զարգացման եւ, ատոր հետեւանք, տնտեսական անհասարկութեան ուժն է:

Տնտեսական անհասարկութիւնը մեր երկրին մէջ, ինչպէս եւ ամէնուրեք, ծագեցաւ այն ժամանակէն, երբ աշխատանքի միջոցներուն կատարելագործման հետ միասին, կարելի եղաւ արդիւնաբերել աւելի, քան պէտք էր անհատին գոյութիւնը պահպանելու համար: Եւ որովհետեւ այդ միջոցներուն կատարելագործման հետ միաժամանակ առաջ եկաւ աշխատանքի բաժանումն ալ, որսորդներու քովն երեւցան անասնապահները, երկրագործները, արհեստաւորները, ուստի այդ տարբեր պարապմունքի տէր դասերուն եւ անհասարկութեան մէջ անխուսափելի կերպով պէտք էր հաստատուէր արդիւններու փոխանակութիւն, ուրիշ խօսքով՝ առեւտուր: Ահա այս ժամանակ կարելի եղաւ ձեռք ձեռք անցնել, փոխադրել մէկ տեղէ միւս տեղ արդիւնաբերութեան աւելորդը, անհատները կամ համայնքները հնարաւորութիւն ունեցան հարստութիւն դիզելու իրենց մօտ, ահա այդ ժամանակ հասարակութեան մէջ ասպարէզ եկաւ տնտեսական անհասարկութեան յարատեւ ուժը: Դրամը՝ որ մտցուած էր փոխանակութիւնը դիւրացնելու համար, սկսաւ աւելի եւ աւելի մեծ դեր խաղալ հանրային յարաբերութիւններու մէջ: Փողատէրը նոյնպէս, ինչպէս եւ ֆիզիքական ուժի տէրը, կարող էր ինքը չաշխատել, չարդիւնագործել, քրտինք չթափել, այլ ապրել փառաւոր կերպով հարիւրաւոր, հազարաւոր աշխատաւորներու հաշուով:

Փողատէրը կամաց-կամաց սկսաւ հաստատ դիրք բռնել եւ իր ձեռքն առաւ մեր երկրին մէկ քանի տնտեսական Փունկիցիաները (գործառնութիւնը), բայց դեռ կարողացած չէ իր ձեռքը ձգել երկրին ամբողջ տնտեսական կեանքը. ինքը դեռ անմիջական մասնակցութիւն չունի արդիւնագործութեան մէջ, ինչպէս տեղի կ'ունենայ ատիկա տնտեսապէս աւելի զարգացած երկիրներու մէջ, ուր դրամատէրերը վարձկան բանուորներու ձեռքով կը հերկեն իրենց հողերը, կը բանեցնեն գործարանները եւայլն: Մեր մէջ փողատէրը կամ կը

կատարէ միջնորդի դեր արդիւնաբերողներու եւ սղանողներու միջեւ, — օգտուելով, հարկաւ երկու կողմէն ալ, կամ անազին տոկոսով ստակ փոխ կու տայ ասոր անոր, գլխաւորապէս արդիւնագործողին. այսինքն անիկա կամ վաճառակամ է կամ վաշխառու: Իսկ բուն արդիւնագործող դրամատիրութիւնը մեր մէջ դեռ այնքան չնչին եւ այնքան սաղմային վիճակի մէջ է, որ անոր մասին խօսիլն անգամ աւելորդ է:

Փողատէր-վաշխառու դասը իր ցանցերով պատեր է ամբողջ երկիրը եւ յաճախ ձեռք-ձեռքի տուած կառավարութեան պաշտօնեաներու, ազնուականութեան եւ եկեղեցականներուն հետ, երկաթէ ճանկերով կը քամեն աշխատաւոր ժողովրդին արիւնքը: Իր ունեցած ուժին շնորհիւ կարողացեր է իրեն համար փափուկ դիրք մը ստեղծել, կարողացեր է ձեռք ձգել զանազան առանձնաշնորհումներ եւ հարկերու ամբողջ ծանրութիւնը բեռնել խեղճ աշխատաւոր ժողովրդին վրայ: — Փողատէր-վաշխառուն եղեր է տարր մը, որուն հետ անխուսափելի կերպով կ'ընդհարուին ազգաբնակչութեան բոլոր խաւերը. անոր կը դիմէ թէ՛ արդիւնաբերողը եւ թէ՛ սղանողը, թէ՛ աշխատանքի միջոցներու կարօտ աշխատաւորը եւ թէ՛ զուարճութիւններու ետեւէ ինկած ազնուականը: Անոր կը դիմէ կառավարութիւնն ալ իր ընթացիկ ծախքերը դոցելու եւ իր պարտքերը վճարելու համար: Ասկէ զատ, անշնորհք թիւրք կառավարութիւնը իր ապուշ պաշտօնեաներով անընդունակ գտնուելով միջեւ անգամ իր հարկերը ինքը հաւաքելու, ստիպուած կը դիմէ փողատէր-վաշխառուներու միջնորդութեան: Այդպիսով դրամը կը դառնայ այն ուժը, որու առջեւ գլուխ կը խոնարհեցնեն թէ՛ ճնշուած աշխատաւորը եւ թէ՛ զոռոգ իշխանաւորը:

Դրամը աշխարհաքաղաքացի է, չի՛ ճանչնար ո՛չ ազգ, ո՛չ կրօնք, կը նայի ամէնուն վրայ հաւասար աչքով, անխտիր կերպով կը կեղեքէ թէ՛ հայը եւ թէ՛ թիւրքը, թէ՛ քիւրդը, թէ՛ եղիդը... չի ճանչնար ո՛չ մէկ սրբութիւն, ո՛չ մէկ աւանդապահութիւն, հիմնադասակ կ'ընէ վաղեմի տոհմային կազմակերպութիւնը, խռովութիւններ կը ձգէ նահապետական ընտանիքի մէջ, կը քայքայէ համայնական կեանքը:

Դրամը որքան աւելի զարգանայ, այնքան աւելի զօրեղ կ'ըլլայ անոր յեղաշրջիչ ուժը, այնքան աւելի աչքի կը զարնէ տնտեսական անհասարկութիւնը, այնքան աւելի խոր անդունդ կը բացուի հարուստներու եւ սղանողներու միջեւ, ինչպէս որ կը տեսնենք ատիկա տնտեսապէս աւելի զարգացած երկիրներու մէջ: Այնտեղ այդ անհասարկութիւնը կը հասնի իր գագաթնակէտին՝ ազգաբնակչութիւնը որոշ կերպով բաժանուած է երկու դասակարգի՝ փոքրաթիւ, բայց երկրին հարստութեան տէր բուրժուազիայի եւ բազմաթիւ օրուայ հացի կարօտ պրոլետարիայի (բանուոր դասակարգի):

Տնտեսական այդ շարիքին՝ տնտեսապէս կեղեքող դասին դէմ ալ կը կռուինք այժմ: Ի դարձ կը դնենք ամէն միջոց պահպանելու գոյութիւն ունեցող համայնական սկզբունքները: Մենք կ'աշխատինք տարածել համայնական սեփականութիւնը եւ համայնական աշխատանքը, որպէսզի աւելի պատրաստ գտնուինք անցնելու հանրային այն կազմակերպութեան, որ այսօր վաղը պիտի հաստատուի տնտեսապէս աւելի զարգացած երկիրներու մէջ՝ պրոլետարիայի յեղափոխութիւնովը:

Այս ընդհանուր տեսութենէն պարզ է՝ թէ թիւրքաց Հայաստանի դրութիւնը միանգամայն սարսափելի է շատ կողմերէ:

Ազատել ժողովուրդը այդ անտանելի դրութենէն, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թոյլ տան անոր մտնել ընդհանուր մարդկութեան զարգացման շաւղին մէջ՝ կարելի է միայն յեղափոխութիւնով:

Ընդունելով իրեն սկզբունք, որ ամէն մարդ իր ճակտին ջրտինջով պիտի վաստկի իր կերած հացը, որ հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքէն օգտուելու:

Նկատելով՝ որ ամբողջ կուլտուրական աշխարհի պատմութիւնը հազարաւոր տարիներու ընթացքով մեզի ցոյց կու տայ՝ թէ յանձնել ամբողջ ժողովրդին բախտը մէկ դասակարգի, որ իր կացութիւնը կարող է հաստատել ծագման, ֆիզիքական եւ նիւթական ուժի կամ թէ նոյն իսկ ուսման վրայ, տալ կառավարութեան ղեկը ո՛րեւէ դասակարգի, կը նշանակէ այդ դասակարգը ճշդ տարր մ'ընել, ծառայ դարձնել ժողովուրդը այդ փոքրիկ մասին եւ միեւնոյն ժամանակ անբարոյականացնել իշխող պոլիտիկոսներին,

Նկատելով, որ հանրային կեանքի ալիքը, թուրքացնելով առանձին անհատի գազանական ձգտումները եւ պակասեցնելով նիւթական, տնտեսական անհաւասարութեան հետ անխտիր կապուած ճնշումը, կը տանի մեզ դէպի եղբայրական սկզբունքները, դէպի ընկերական, համայնական հաստատութիւնները:

Նկատելով այս բոլորը, մենք կ'ընդունինք իրեն

Ն Պ Ա Տ Ա Կ

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» նպատակն է ապստամբութեան միջոցով թիւրքաց Հայաստանի մէջ ձեռք բերել զաղաքական եւ տնտեսական ազատութիւն, դնելով ներկայիս մէջ հետեւեալ պահանջները.

1. Ապագայ ազատ Հայաստանի մէջ իշխող ժողովրդական-աւստիարական կառավարութիւնը, ծառայելով ընդհանրութեան շահերուն՝ անշուշտ հաստատուած պէտք է ըլլայ ամէն չափահաս բնակչի հա-

ւասար ընտրողական իրաւունքին վրայ, առանց ընտրողական որեւէ սակի (ցենզի), իսկ այդ շահերը իրականապէս պաշտպանելու համար ընտրողական սկզբունքը կառավարչական բովանդակ գործողութիւններէն սկսեալ դէպի աւելի նեղ՝ դաւառականը եւ համայնականը պէտք է ստանայ աւելի եւ աւելի լայն ծաւալ:

2. Կեանքի եւ աշխատանքի ապահովութիւն ամենախիստ միջոցներով:

3. Տարբեր ազգութիւններու եւ դաւանութիւններու հաւասարութիւն օրէնքի առջեւ:

4. Ազատութիւն, խօսքի, մամուլի, ժողովներու:

5. Հող չունեցողին հող տալ եւ ապահովել մշակողին հողէն օգտուելու հնարաւորութիւնը:

6. Ամէն տեսակ տուրքերու քանակութիւնը պէտք է որոշուի ըստ կարողութեան, համբայակամ սկզբունքով, որ դարերէ ի վեր խոր արմատ ձգած է մեր ժողովրդին մէջ:

7. Ոչնչացնել ամէն տեսակ պարտաւորեցուցիչ եւ չվարձատրուող աշխատանք, ինչպէս կռռ ու բէկար, ամկարիտ, օլամ եւ այլն:

8. Ոչնչացնել զինուորական տուրքը, հաստատելով տեղի եւ ժամանակի պահանջին համեմատ զինուորագրութիւն:

9. Ամէն կերպով նպաստել ժողովրդին մտաւոր զարգացման: Ուսումը պարտաւորիչ ընել:

10. Զարգացնել ժողովրդին արդիւնաբերութիւնը, մտցնելով անոր մէջ նոր ձեւեր համայնական սկզբունքներով եւ ընդլայնել արտածութեան միջոցները:

11. Ուժ տալ զիւղացու, արհեստաւորի համայնական սկզբունքներուն, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները, ձեւերը, որոնք ծագեր են Հայաստանի հողին վրայ տեղական եւ պատմական հանգամանքներու ազդեցութեան տակ: Ընդարձակել այդ հիմնարկութիւններուն սահմանը, սկսած թաղէն, զիւղէն մինչեւ դաւառը եւ ապա մինչեւ ամբողջ պետութիւնը ու այդպիսով միանգամայն ապահովել համայնքի ամէն մէկ անդամը բնութեան եւ ընթացիկ կեանքի պատահական հարուածներուն դէմ:

Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» ապստամբութեան միջոցով իր նպատակին հասնելու համար կը կազմակերպէ յեղափոխական խմբեր, որոնք

կառավարութեան դէմ անընդհատ եւ զօրեղ կռուի հետ՝ կռիւ կը մղեն նաեւ այն ընդհանուր պայմաններուն դէմ, որոնցմէ նեղուած են միեւնոյն ժամանակ թէ՛ հայ եւ թէ՛ օտար տարրերը (առորինները, եղիդները, ջրդերուն մէկ մասը, խաղաղ թիւրքերը եւ այլն): Այս ուղղութիւնն, իր ընդհանուր նշանակութենէն զատ, կարող է, եթէ ոչ միացնել, գէթ չէզոքացնել օտար տարրերու ընդդիմադրական ուժը:

Յեղափոխական խմբերը ի դարձ դնելու են հետեւեալ միջոցները.

1. «Դաշնակցութեան» գլխաւոր սկզբունքները, նպատակը, ինչպէս նաեւ յեղափոխական գործին գիտակցօրէն վերաբերութեան համար պրոպագանդան ընել (քարոզել):

2. Կազմակերպել մարտական խմբեր, յատկապէս պարապիլ անոնց հետ վերոյիշեալ խնդիրներով եւ դրժով պատրաստել:

3. Ամէն միջոց ի դարձ դնել՝ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով բարձրացնելու ժողովրդին յեղափոխական գործն ու ոգին:

4. Ամէն միջոց ի դարձ դնել ժողովուրդը զինելու:

5. Կազմակերպել յեղափոխական կոմիտէներ եւ սերտ կապ հաստատել անոնց միջեւ:

6. Ուսումնասիրել երկիրը եւ ժողովուրդը յեղափոխական տեսակէտէն եւ յարատեւ նիւթ մատակարարել «Դաշնակցութեան» օրգանին («Դրօշակ»):

7. Կազմակերպել դրամական շրջաններ:

8. Կռիւ մղել եւ ահաբեկել կառավարութեան պաշտօնեաները, մասնիչները, դաւաճանները, վաշխառուները եւ ամէն տեսակ հարստահարիչները:

9. Պաշտպանել խաղաղ ժողովուրդը, ազգաբնակչութիւնը աւազակներու յարձակումներու դէմ:

10. Ճանապարհներ հաստատել՝ մարդիկ եւ զէնք տեղափոխելու համար:

11. Կառավարութեան հիմնարկութիւնները ենթարկել աւերումներու եւ կողոպտումներու:

Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Փ Ի Ւ Ն

«Դաշնակցութիւնը» անցեալի փորձէն համոզուած է, թէ յեղափոխական գործին մէջ իրաւունքի եւ պահանջի խնդր չի կրնար ըլլալ, այլ միմիայն բարոյական պարտաւորութեամբ ու բաւարարութեամբ խնդիր: Ահա այս հիման վրայ «Դաշնակցութեան» ընդհանուր

Ժողովը ընդունեց կազմակերպութեան մէջ մտցնել ապակիդրոմացման սկզբունքը, որ աւելի կը համապատասխանէ ընկերական, բարոյական յեղափոխական գործին եւ որ անցեալին մէջ կիսով չափ գործադրուեր է: Սոյն սկզբունքով գործող կոմիտէները կը կապէ, կը միացնէ Ընդհանուր Ժողովը, որ մշակեր է ներկայ Մրազիւրը, որու վճիռները պարտաւորիչ են ամէնուն համար եւ ինքը միայն կարող է փոփոխութիւն մտցնել Մրազիւրն մէջ:

Կազմակերպութիւնը հետեւեալ ձեւը կ'ընդունի.

1. Բոլոր կոմիտէները թէ՛ զաղաքներու եւ թէ՛ գիւղերու մէջ իրենց ներքին գործերը կը վարեն անկախ, ինքնուրոյն կերպով:

2. Գաւառական քանի մը խմբեր կը միանան եւ կը կազմեն շրջան մը, որ ունի իր կեդրոնական կոմիտէն:

3. Եթէ թիւրքաց Հայաստանի սահմանակից գիւղերուն մէջ խմբեր չկան, կեդրոնական կոմիտէին գործը կը տարածուի սահմանէն դուրս:

4. Իւրաքանչիւր անդամ կ'ենթարկուի այն կոմիտէին, որուն մէջ կը գտնուի (խմբական եւ ոչ անհատական ապակիդրոնացում):

5. Կոմիտէ չեղած տեղը «Դաշնակցութեան» անդամը կը գործէ անկախ, յարաբերութիւն ունենալով մօտակայ կոմիտէի հետ:

6. Դաշնակցական կոմիտէներուն եւ անդամներուն համար կ'ընդունուի խիստ ընկերական դատաստան:

7. Ո՛րեւէ կոմիտէի անդամի սխալը կամ զեղծումը կը քննէ ինքը կոմիտէն, իսկ ամբողջ կոմիտէինը՝ իր շրջակայ կոմիտէներուն ներկայացուցիչները: Մարակչիւ պարագաներու մէջ, երբ դրացի կոմիտէները անձեռնհաս են վճիռ կայացնելու, այն ատեն Ընդհանուր Ժողովն է որ քննութիւնը կը կատարէ:



Կոմիտէները իրենց բոլոր կարեւոր տեղեկութիւնները՝ թէ՛ գործունէութեան եւ թէ՛ պահանջի մասին պարբերաբար կը ղրկեն այն հիմնարկութեան, որ կը կոչուի քիւրօ(*): Առ այժմ այդպիսի երկու քիւրօ կայ, (1): Իւրաքանչիւր քիւրօ ստանալով վերոյիշեալ գրաւոր տեղեկութիւնները, կը հաղորդէ թէ՛ միւս քիւրօներուն եւ թէ՛ իր շրջանի կոմիտէներուն: Այն տեղեկութիւնները, որոնք հարկաւոր են

(* Սրտատահան կարելի է գտնել «Դրօշակ» խմբագրութեան հասցէին:

խմբագրութեան, բիւրօները անյապաղ կ'ուղարկեն տնօրէն: Բիւրօներուն մէջ ամփոփուած տեղեկութիւններէն կարելի է զաղտփար կազմել յեղափոխական զործին զրուիքեան եւ ընթացքի մասին:

ՅԱՆՕԹ.— Եթէ որեւէ ուրիշ կէտ մը զործուծութեան տեսկէտով մեծ նշանակութիւն ստանայ, ահ ալ կ'ունենայ բիւրօ:



Իւրաքանչիւր կոմիտէ հաւաքած նպաստներով իր տեղական պէտքերուն զուհացում տալէն ետքը, աւելորդ գումարը կը զբիւրէ կեդրոնական արկղը:

Դրամական բոլոր հաշիւները կը կեդրոնանան բիւրօներուն մէջ:

Ամէն կոմիտէ պարտաւոր է ամիսն անգամ մը հաշիւ ներկայացնել այն բիւրօյին, որուն հետ կապուած է:

Ծախքի հաշիւը, ծայրայեղ պարագայի մէջ, կարելի է յետաձգել մինչեւ երեք ամիս:



Դաշնակցութիւնն ունի իր օրգանը, «Դրօշակ» տնտեսով: «Դրօշակ»ը պիտի ըլլայ անկեղծ արտայայտող:

տող, Թարգման հայ յեղափոխական կեանքին, երկույթներուն, անոր մէջ պիտի շօշափուին տնտեսական, հասարակական, քաղաքական խնդիրներ՝ համաձայն Դաշնակցութեան ծրագրած ուղղութեան: Կը հրատարակուին նաեւ ժողովրդական ու գիտական-ընկերակցական զրուածքներ:

Ամէն կոմիտէ կարող է հրատարակել կարեւոր պարզանքներու մէջ «Թուուցիկ Թերթ»:

Ներկայացնելով այն ծրագիրը, ուրիշութեամբ կ'ընդունինք անոր վերաբերեալ բոլոր գիտողութիւնները՝ ազազայ ընդհանուր ժողովին ներկայացնելու համար:

(1) Անդրամիկ Երագրով ակնարկուած երկու Ռիբօնքը Արեւելեան եւ Արեւմտեան Ռիբօնքը չեն: Ամենայն հաւանականութեամբ՝ կ'ակնարկուի Թիֆլիսի եւ Քարսի Ռիբօնքուն: Վերջինիս կազմուած էին Ատրպատականի եւ Վասպուրականի մարմինները: Գործնապէս 1896ի Արեւելեան Ռայոնական ժողովէն, եւ իրաւապէս՝ 1898ի Հ. Յ. Դ. 2րդ. Ընդհ. ժողովէն ետք է որ ԴՐՕ-ՇԱԿի Խմբագրութիւնը դարձաւ Արեւմտեան Ռիբօ, Թիֆլիսիին՝ Արեւելեան Ռիբօ, եւ վերջ տրուեցաւ Քարսի Ռիբօյին (որ վերածուեցաւ Վրէժի կեդր. կոմիտէի):



Բ.— 1895—98 ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ երկու հատորներուն մէջ հրատարակուած են 1895ի սկիզբը եւ 1896 Դեկտ. — 1897 Յունուար ամիսներուն գումարուած (ամենայն հաւանականութեամբ՝ Թիֆլիս) երկու Ռայոնական—Ընդհանուր ժողովներու վերաբերեալ արձանագրութիւններ: ԴԻԻԱՆի խմբագրութեան տուած քաղաքագրութեան համաձայն, Արեւելեան մարմիններու այդ երկու Ռայոնական ժողովներն ալ սկզբնապէս գումարուած են իրրեւ Ընդհանուր ժողովներ յետագային սակայն, այդ ժողովներուն ոչ-մասնակից մարմիններու հասկնալի ընդդիմութեան իրրեւ հետեւանք, անոնք նկատուի առնուած են իրրեւ կովկասեան Ռայոնական ժողովներ միայն: Ասիկա ոչինչ կը պակսեցնէ անշուշտ անոնց պատմական կարեւորութեան. 1896—97ի Ռայոնական ժողովին է որ որոշուած է ձեռնարկել համաստրի արշաւանքին: Կու տանք այդ երկու ժողովներու ամփոփ արձանագրութիւնները:

1896—97ի Ռայոնական ժողովին կը վերաբերի նաեւ «Հ. Յ. Դ. Վասպուրականի կեդր. կոմիտէի կարծիքները Ընդհ. ժողովի մասին» խորագրուած գրութիւնը, զոր կու տանք մայնպէս՝ առնելով ԴԻԻԱՆի Բ. հատորէն (էջ 324—326):

Հ. Յ. Դաշնակցութեան արեւելեան մարմինները ունեցած են արդեօք այդ երկու ժողովները կամ խոզ կամ միջանկեալ այլ համագումարներ՝ միեւնոյն տա-

րագութեամբ: Փաստաթուղթերու պակասը մեզի թոյլ չի տար այս ուղղութեամբ յստակ պատասխան մը տալու:

Կայացած են անշուշտ այլ ժողովներ եւ խորհրդակցական հանդիպումներ՝ նուազ ընդհանուր, աւելի տեղական—ընդհանուր կամ գուտ մասնագիտական—նազանական բնոյթի, ինչպէս 1895 Փետրուարի «Երեւանի Ա. Ռայոնական ժողովը» (ԴԻԻԱՆ, Ա. հատոր, էջ 167—168) եւ 1896 Յունիս—Յուլիսի Կարսի «Զինուորական խորհուրդը» (ԴԻԻԱՆ, Ա. հատոր, էջ 385—388 եւ Բ. հատոր, էջ 257—258), որոնցմէ մնացած արձանագրութիւնները եւս կու տանք մեր ներկայ շարքով:

Արեւելեան մարմիններու եւ Երկրի գործունէութեան հետ իրենց ունեցած սերտ առընչութեան համար՝ ԴԻԻԱՆէն առնելով կու տանք նաեւ Վասպուրականի Կ.Կ.ի մէկ նամակը՝ ուղղուած Քարսի Ռիբօյին (Ա. հատոր, էջ 262—264), եւ 1896 Յունուարի Պոլսոյ կեդր. կոմիտէի մէկ շրջաբերականը (Ա. հատոր, էջ 257—260):

Կու տանք վերջապէս ամփոփ արձանագրութիւնը 1897—98ի (հաւանօրէն՝ Դեկտեմբեր—Յունուար) կովկասեան մարմիններու «տարեկան Շրջանական ժողովին, որ Հ. Յ. Դ. 2րդ. Ընդհ. ժողովին անմիջական կերպով նախորդող եւ զայն նախապատրաստող կարեւոր համագումարներէն մէկն է (ԴԻԻԱՆ, Բ. հատոր, էջ 239—250):

1.— 1895Ի «ԸՆԴՀԱՆՈՒՐ»

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Այս ժողովին մասին, ծանօթագրութեամբ մը մէջ, «Դիւան»-ի հմբագրութիւնը կը գրէ:—

Ժողովի արձանագրութիւնը չիբատարակուեց: Այդ ժողովից իբրեւ միւս մնացել է միայն մերկայ ամփոփումը, որ ժամանակին Թիֆլիսից ուղարկուած է եղել ժընեւ, Ռոստումին. Հ. Յ. Դ. Կեմուր. Դիւանի պահուած օրինակի վրայ մակագրուած է՝ «տալ Գոթթիին»(1): Ռոստումը ժողովին չի մասնակցել: Բուն արձանագրութիւնները չեն պահուած:

Ներկայ 1895 թուականի սկզբում տեղի ունեցաւ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան պատկանող եւ Տաճկաստանից դուրս գտնուող կոմիտէների ներկայացուցիչների ընդհանուր ժողով:

Ժողովի նպատակը.— Ժողովի նպատակն էր՝ պարզել վերջին երեք տարուան ընթացքում առաջ եկած մի քանի անորոշ հարցեր, լուսարանել ընդհանրապէս գործուած սխալները եւ ճանապարհներ գտնել խոյս տալու համար ապագայում այդպիսի սխալների կրկնութիւններից. ներկայացուցիչների երես առ երես տեսակցութեամբ աւելի սերտ կապ հաստատել գործող խմբերի մէջ, եւ որ գլխաւորն է՝ դալ համաձայնութեան այն ընթացքի վերաբերմամբ, որ հարկաւոր է բռնել ներկայ բարդ հանգամանքներում, որպէսզի բոլոր խմբերի գործողութիւնների մէջ լինի ներքին համերաշխութիւն՝ Դաշնակցութեան վերջնական նպատակին — Տաճկահայաստանի ազատութեանը աւելի կատարելութեամբ հասնելու համար:

Ժողովի կազմութիւնը.— Ժողովին մասնակցում էին այն կոմիտէների ներկայացուցիչները, որոնք գործի տեսակէտից աւելի նշանաւոր դեր ունին կատարելու: Ցանկալի էր, ի հարկէ, կազմել աւելի բազմամարդ ժողով, հրաւիրել ներկայացուցիչներ բոլոր թէ՛ օժանդակող եւ թէ՛ գործող խմբերի կողմից, բայց այդպիսի բազմամարդ ժողով նոյնիսկ գործնական տեսակէտից շատ արգելքների կարող էր հանդիպել եւ ցանկալի հետեւանքներ չտալ: Միւս կողմից էլ՝ ներկայ հանգամանքներում, ցանկալի չէր, որ Տաճկահայաստանից ուժեր հեռանալին ժողովին մասնակցելու համար: Ընկերութեան Բիւրօն աւելի օգտակար համարեց բաւականանալ դրանցից մի քանիսների գրաւոր կարծիքներով: Ուստի Բիւրօն, որին պատկանում է ժողով կազմելու ինիցիատիւրը(2), յոյս ունի, որ բոլոր բացակայ ընկերները ու խմբերը ներողամիտ կը գտնուին դէպի նա, ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները: Ժողովին մասնակցում էին 12 շրջանների ներկայացուցիչները: Ժողովականները աշխատում էին խնդիրները որոշել ոչ թէ ձայների բազմու-

թեամբ, այլ ձգտում էին բոլոր հարցերում գալ միաձայն որոշումների:

Այդ որոշումները Տաճկաստան գտնուող խմբերի համար կարող են միայն խորհրդակցական եւ ոչ պարտադիր նշանակութիւն ունենալ:

Ժողովում շօշափուած հարցերը. ընդհանուր ակնարկ գործերի դրութեան.— Առաջին մի քանի նիստերում ներկայացուցիչները հաշուի հետ միասին ամփոփ կերպով պատկերացրին իրանց ռայոնի (չրջան) յեղափոխական գործի դրութիւնը, ցոյց տուին թէ գործուած սխալները եւ թէ այն դրական քայլերը, որոնց շնորհիւ գործը ունեցել է այս կամ այն յաջողութիւնը: Նախկին երկու Բիւրօնների ներկայացուցիչները ընդհանուր հայեացք ձգելով գործի ամբողջ պատկերի վերայ՝ աւելացրին նաեւ տեղեկութիւններ այն խմբերի գործունէութեան մասին, որոնց ներկայացուցիչները պակասում էին ժողովում: Այս տեղեկաւորից կարելի է գալ այն ուրախալի եզրակացութեան, որ գործը այսօր աւելի հաստատ հիմքի վրայ է դրուած, քան էր 92 թուի ժողովից առաջ, որ մեր անելիքներն ու միջոցները աւելի գործնական են եւ աւելի որոշ քան թէ 2½ տարի առաջ, եւ որ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան գործունէութիւնը այս չորս տարուան ընթացքում ապարդիւն չէ անցած մեր յեղափոխական զարգացման տեսակէտից: Չէ կարելի չուրախանալ, որ հասարակութեան մէջ վաղուց տիրող անտարբերութիւնը դէպի յեղափոխական գործը օր ըստ օրէ պակասում է, ոչնչանում է եւ, ընդհակառակը, շատերի մէջ հաստատուում է այն համոզմունքը, որ յեղափոխական ծածուկ գործունէութիւնն է այն միջոցը, որով ներկայ հանգամանքներում կարելի է դրական կերպով նպաստել Տաճկահայաստանում յեղափոխութիւն առաջ բերելու գործին:

Կազմակերպութեան վերաբերեալ հարցեր.— Նշանաւոր(3) հարցերից մէկն էր ժողովականների համար՝ աւելի պարզ որոշել միմեանց մէջ ունենալիք փոխադարձ յարաբերութիւնների ձեւը եւ միջոցները: Ինչպէս յայտնի է («Դրօշակ»ի թիւ 11), 92 թուի ժողովում ընդունուած էր ապակենտրոնացման սկզբունքը, որով ամէն խումբ, նոյնիսկ անհատ, ազատ էր գործելու: Ժողովում ընդունում են նոյնպէս ապակենտրոնացման դրական կողմերը, քանի որ հազար վերստերի վրայ տարածուող գործունէութեան շրջանում կենտրոնակա-նութիւնը պիտի ստեղծէր միահազին տէրութեան նման կազմ, բայց գաղտնի կազմակերպութիւն, ինչ որ ինքն ըստ ինքեան անկարելի բան է: Բացի այդ՝ կենտրոնացումով կը ճշուէր զանազան խմբերի շատ անգամ անհրաժեշտ ինքնուրոյնութիւնը, կը սահմանափակուէր նրանց զարգացումը, կը հեռացուէր նրանցից գործի համար անհրաժեշտ պատասխանատուութիւնը: Վեր-

ջապէս, որեւէ պատճառով կենտրոնին հասած վտանգը մեծ հարուած կը լինէր ամբողջ կազմակերպութեան համար եւ նոյնիսկ կարող էր պատճառ լինել գործի ընդհատման: Միւս կողմից էլ չէր կարելի չհամաձայնուել, որ բուն ապակենտրոնացումը կարող է հասցնել նոյնիսկ միմեանց հակասող գործողութիւնների զանազան խմբերի մէջ, կարող է ոչ-ցանկալի մրցումն առաջ բերել միեւնոյն կազմակերպութեան պատկանող եւ գործին ծառայող խմբերի եւ անձնաւորութիւնների մէջ. կարող է ուժերը ու միջոցները բաժանել բոլորովին աննպատակալարմար կերպով եւայլն:

Ուստի անհրաժեշտ էր մի միջին ճանապարհ գտնել, պահպանելով մի կողմից խմբերի եւ ռայոնների ազատութիւնը եւ ինքնուրոյնութիւնը, իսկ միւս կողմից՝ ապահովել գործնական ներդաշնակութիւն եւ համերաշխութիւն բոլոր խմբերի մէջ:

Այդ իրագործելու համար ընդհանուր ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեանը՝ ընդունելով սկզբունքով կազմակերպութեան նախկին ձեւը:—

Ապակենտրոնացումը, որով իւրաքանչիւր ռայոն գործում է ինքնուրոյն կերպով, ժողովս անհրաժեշտ է համարում՝ որ մասնաւոր խմբերը սերտ կապ պահանքներն իրանց ռայոնական կոմիտէների հետ, իսկ ռայոնական կոմիտէները Բիւրօնի հետ: Երբ հարցը ընդհանուր է, վերաբերում է աւելի լայն շրջանի, կամ դրա ազդեցութիւնը կարող է տարածուել գործող խմբի կամ ռայոնական կոմիտէի շրջանից դուրս, գործի յաջողութիւնը պահանջում է, որ այդ դէպքերում գործող մարմինը խորհրդակցէ եւ աշխատէ համաձայնուել այն խմբերի եւ շրջանի հետ, մինչեւ ուր հասնում է կատարուելիք գործի ազդեցութիւնը: Իսկ աւելի ընդհանուր բնաւորութիւն ունեցող հարցերում, կոմիտէները գործում են Բիւրօնի գիտութեամբ եւ խորհրդակցութեամբ: Նոյնը պիտի լինի մասնաւոր կազմակերպութեան ուժերն եւ միջոցները գործածելու հարցում: Հակառակ դէպքում՝ եթէ զանազան խմբեր տեղեկ չլինին միմեանց գործողութիւնների մասին եւ այդ գործողութիւնները համաձայնեցրած չլինին ընդհանուրի շահին, կարող է առաջ գալ ուժերի եւ միջոցների աննպատակալարմար գործածութիւն. օրինակ, մի աննշան տեղ կարող են Տ հողի ուղարկուել, այն ինչ աւելի կարեւոր կէտում ոչ ոք չլինել. մէկը կը ստանայ միջոցներ ամէն կողմից, մինչդեռ միւսը տարիներով զուրկ կը լինի:

Կոմիտէների Բիւրօնի հետ ունենալիք «խորհրդակցութիւնները» արդիւնաւէտ դարձնելու եւ առհասարակ անհամաձայնութիւնների եւ դժգոհութիւնների տեղիք չտալու նպատակով, ժողովը որոշեց, որ «Բիւրօն ընտրողական լինի եւ մինչեւ միւս ընդհանուր ժողովը բաղկացած լինի 6 ընտրուած անձնաւորութիւններից՝ երեքը Բիւրօնի գտնուած քաղաքից, իսկ մնաց-

եալ երեքը այն նշանաւոր երեք կենտրոններից, որոնց ցոյց է տուել ընդհանուր ժողովը»:

Որովհետեւ Բիւրօնի անդամների մէկ տեղ ժողովելը կարող էր կտրել ներկայացուցիչներին իրենց ընտրող տեղերից, ուստի ժողովը թոյլ տուեց Բիւրօնի անդամներին մնալ իրանց տեղը՝ սերտ յարաբերութեան մէջ մտնելով միմեանց հետ եւ գլխաւոր հարցերը որոշելով միմեանց համաձայնութեամբ, իսկ ժամանակ առ ժամանակ պայմանաւորուել եւ տեսակցել իրար հետ:

Ասածներից պարզ է, որ «կոմիտէտներ» ներկայացուցիչներից կազմուած ընդհանուր ժողովը մնում է գործի հիմնական ընթացքի ղեկավար, իսկ Բիւրօն մի կապ պահպանող, ներդաշնակութիւն տուող եւ ուժերը նպատակալարմար բաժանող մարմին՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը կազմող ազատ եւ ինքնուրոյն կերպով գործող մարմինների եւ կոմիտէների մէջ:

Ժողովի նպատակալարմար որոշմամբ, «Պարսկաստանի Բիւրօն» այսուհետեւ կոչուելու է եւ ստանալու ինքնուրոյն խմբի անուն ու նշանակութիւն: Լինելով ազատ իր գործունէութեան մէջ՝ Պարսկաստանի խումբը սերտ յարաբերութիւններ պիտի պահպանէ Բիւրօնի հետ, պիտի ներկայացնէ վերջինիս իր կարծիքներն ու պահանջները, որոնք Բիւրօն պարտաւոր է կատարել իր միջոցների ներքիւն չափով: Այս որոշման դէմ բողոքել է Պարսկաստանի ներկայացուցիչը՝ ի նկատի ունենալով, որ ժողովը ձեռնհաս չէր այդպիսի մի խնդիր լուծել, քանի որ Պարսկաստանի Բիւրօն կազմուել է գլխաւորապէս Վասպուրականի գործիչների ցանկութեամբ, իսկ ժողովին Վասպուրականի գործիչները չէին մասնակցում: Նոյն տեսակ դիրք կ'ունենան Բիւրօնի վերաբերմամբ եւ այն գործունեայ խմբերը, որոնք առաջ կը գան ապագայում Բիւրօնից շատ հեռու կամ այս եւ այն պատճառով անջատուած տեղերում: Կազմակերպութիւնը, ի հարկէ, ինքն ըստ ինքեան նպատակ չէ, այլ միջոց հասնելու մեր նպատակին — Տաճկահայաստանի ազատութեան:

Այդ ազատութիւնը պահանջում է անթիւ արիւնաշաղախ զոհեր, անասելի մեծ ոյժ, անյողդողղ կամք, ծանր եւ վտանգալի ճիգ տարիների անխոնջ գործունէութիւն... Հեշտ չէ ձեռք բերում նոյնիսկ անհատի շատ թէ քիչ մարդավայել վիճակը, բայց որքան՝ որքան դժուար է ստեղծել մի ամբողջ ազգի բախտաւորութիւնը, բարօրութիւնը... Ժողովրդական ապրտամբութիւնը երկնքից չէ իջնում եւ ոչ էլ գետնից սուսկի պէս բուսնում, այլ նախապատրաստուած, կրնալու, սրբագործուած է նոյն ազգի բոլոր մաքուր զաւակների տասնեակ տարիների ընթացքում գործ դրած անընդհատ դառնադին աշխատանքով... Հայկական յեղափոխական դրամայի առաջին գործողութիւնն է միայն, որը, անշուշտ, տեղի կը տայ շուտով միւս

գործողութիւններին... Պէտք է պատրաստ լինել, պէտք է զինուել, պէտք է լարել իր բոլոր ուժերը գործը յաջողութեամբ պսակելու համար... Ճակատագրական կոիւր յայտնուած է, յետ դառնալը կամ դանդաղ կոտուութիւնը ամօթալի, մահաբեր, նոյնիսկ անկարելի է...

Ահա թէ ինչու ժողովը ուրախութեամբ նկատելով, որ յեղափոխական գործը ժամանակի ընթացքում աւելի ու աւելի է ամբանում եւ արմատ ձգում ժողովրդի բոլոր խաւերի մէջ, այնուամենայնիւ ցանկութիւն յայտնեց, որ բոլոր խմբերը, բոլոր յեղափոխականները իրենց ամբողջ ուժերը գործ դնեն հասկացնելու, համոզելու ժողովրդին, թէ որքան անհրաժեշտ է այս գործում, մանաւանդ իրերի ներկայ դրութեան ժամանակ, հաստատակամութիւնը, տոկոճուութիւնը, հետեւողականութիւնը եւ, ընդհակառակն, ինչ աստիճան կորստաբեր, վտանգաւոր են յանկարծակի հիասթափումը կամ անտարբերութիւնը այս կամ այն մասնաւոր դէպքերի առթիւ:

Ներկայ հանգամանքներում այս կամ այն անյաջողութիւնը չպէտք է մեզ յուսահատեցնէ, նոյնիսկ այս կամ այն յաջողութիւնը, մասնաւոր յաղթութիւնը չպէտք է մեզ գլխից հանէ. մեզ պէտք է ոգեւորէ ընդհանուր գործի վսեմութիւնը, ջերմ հաւատը, սուրբ գործի տանելիք յաղթանակը եւ, ուստի առանց մագաչափ հիասթափման, առանց չփոթման, հերոսական ստանալութեամբ եւ անսայթաք հետեւողականութեամբ, յամառ տոկոճութեամբ պէտք է ձեռք առնել բոլոր յեղափոխական միջոցները, որ նպատակայարմար կը գտնուեն, որ կը զօրացնեն մեր ուժերը:

Յեղափոխական գործունէութիւնը ուժեղացնելու միջոցներ.— Գործող ազենտներ(4) թիւը բազմացնել. ամենակարեւոր մեր անելիքներից մէկն է շատացնել Տաճկաստանում ղեկավարող, կազմակերպող ուժերի քանակութիւնը: Չեղած տեղերը հարկաւոր է որ լինին դրանք, եղածներում անհրաժեշտ է, որ ընկնողներին փոխարինեն նորերը: Այս պատճառով ժողովը որոշեց, որ «ներկայացուցիչները իրենց ռայոնները վերադառնալուն պէս անմիջապէս կոմիտէտի խնդիր դարձնեն կազմակերպող ուժեր ուղարկելու հարցը եւ համաձայնութիւն տուողների մասին առանց ուշացնելու լուր տան Բիւրոյին»: Որպէսզի թիւերի մացութիւններ չծաղեն գործողների մէջ, ընդունուեցաւ, որ «թէ կարեւորութիւն է զգացում գործիչներով ուժեղացնել այն տեղերը, ուր առաջուց ազենտներ կան, հարկաւոր է նախօրօք ստանալ այդ ազենտների համաձայնութիւնը»:

Ճամապարհներ եւ կայարաններ շինել.— Յեղափոխական կոմիտէների մէջ յարաբերութիւններ պահելու ու հարկաւոր պիտոյքներ տեղափոխելու համար գործի սկզբից արդէն պահանջ էր զգացւում ճանապարհներ եւ կայարաններ ստեղծել:

պարհներ եւ կայարաններ ստեղծել: Մի քանիսները դրանցից կան, միւսները ստեղծուելու են ապագայում: Ամենակարեւորը գտնելով առայժմ 3 ճանապարհ. 1) դէպի Մուշ տանող, 2) դէպի Վասպուրական, 3) դէպի Ալաշկերտ—Վան: Ժողովը պարտք դրեց սահմանակից ռայոնների վրայ կանոնաւորել յիշեալ ճանապարհները, պակաս տեղերը լրացնել կայարանները, նշանակել հարկաւոր մարդիկ եւ այլն:

Զէնքի եւ դրամական միջոցների հայթայթումը.— Կուռի միջոցները շատացնելը եւ դրա հետ սերտ կապուած դրամական հարցը կանոնաւոր հիմքերի վրայ դնելը պիտի համարուի նոյնպէս ամենազրկաւոր հարցերից մէկը:

Հեռու լինելով այն կարծիքից, թէ Ընկերութիւնը կարող է զինել ամբողջ ժողովուրդը, նոյնիսկ նրա մէկ տասներորդ մասը, ժողովը մնում է համամիտ 92 թուի ժողովի հետ, հետեւեալ պատճառներով: Առաջին՝ ներկայ պայմաններում շատ դժուար է տեղացիների համար զէնք գնել մոլեռանդ մահմետականներից: Երկրորդ՝ շատ անգամ գործին նուիրուած մարդիկ աղքատ լինելով՝ անկարող են ձեռք բերել կոտուելու պարագաններ: Մենք չենք խօսում բուն յեղափոխական խմբերի մասին, որոնց օգնելը արդէն Ընկերութեան ուղղակի պարտքն է: Միւս կողմից, օժանդակ հանդիսանալով զէնք տարածելով՝ դրանով մեծ զարկ տուած կը լինինք եւ նրան, որ ժողովուրդը ինքը կը ձգտի զինուել, որից յետոյ արդէն գալիս է զէնքից օգտուելու խնդիրը — պաշտպանողական եւ յարձակողական դիրք բռնելը: Ի նկատի ունենալով անցեալի փորձը՝ ժողովը կարծում է, որ երկրում յեղափոխական գործը առաջ տանողները պիտի ձգտին ինչքան կարելի է զէնք ձրի չբաժանել եւ տալ, հարկաւ, գործին շատ մօտ մարդկանց: Ինչ վերաբերում է զէնք ձեռք բերելու հարցին, դա վերապահուած է ամէն մի գործող խմբի, որ, հարկաւ, հետամուտ կը լինի թէկուզ քիչ, բայց լաւ զէնքեր գնելու ձեռնհաս եւ փորձուած մարդկանց միջոցով, որպիսի դործունէութեան մէջ կարող է օգտակար լինել եւ Բիւրօն՝ տեղեկութիւններ տալով այն մասին, թէ որտեղ եւ ինչպիսի գներով կարելի է գնել լաւագոյն զէնքեր: Ինչքան անհրաժեշտ է զէնք ձեռք բերելու գործը ընդարձակել, նոյնքան էլ կարեւոր է, որ բոլոր խմբերը ձգտին դրամի հարցը հաստատուն եւ տեւողական հիմքերի վրայ դնել:

Այդ տեսակէտից՝ բացի զանազան ժամանակաւոր ձեռնարկութիւններից, նաեւ կարեւոր նշանակութիւն են ստանում ամսական վճարները, որոնցով, եթէ կանոնաւոր տարուի դրամ հաւաքելու այդ եղանակը, միշտ կարելի է շօշափելի գումարներ կազմել եւ, որ գլխաւորն է, յեղափոխական գործունէութիւնը չի ընդհատուի եւ չ'ենթարկուի պատահական տատանումների, այլ առաջ կը տանի կանոնաւոր տեւողա-

կանութեամբ անընդհատ: Որպէսզի Բիւրօն կարողանայ այս կամ այն ընդհանուր բնաւորութիւն ունեցող ձեռնարկութիւնը անել, անհրաժեշտ է, որ խմբերը շուտ շուտ տեղեկութիւններ տան իրենց ունեցածի մասին: Ամենաուշը խմբերը 4 ամիսը մի անգամ եւ Բիւրօն տարին մի անգամ հաշիւ են ներկայացնում՝ առաջինները Բիւրոյին, երկրորդը բոլոր ռայոնական կոմիտէներին: Դրամ ժողովելու համար չդիմել այնպիսի միջոցների, որոնք կարող են այսպէս կամ այնպէս վիրաւորել գործիչի զգացմունքը. յեղափոխական մեծ գործի համար գոհողութիւններ անողը ողորմութիւն չէ տալիս, որ հարկ լինի նուաստանալ, վիզ ծոել նրա առաջ. նա իր ամենատարրական եւ ամենասրբազան պարտքն է կատարում եւ, հետեւաբար, առանց գործիչների կողմից զանազան խոստումների, երաշխաւորութիւնների, ճարտար լեզուի, պարտաւոր է օժանդակել գործին ինչքան կարող է, ինչով ձեռնհաս է, նա հաւատ պիտի ընծայի յեղափոխական գործիչներին... Ինչն ըստ ինքեան հասկանալի է, որ ուղղակի գործում չմասնակցող խմբերը, որոնք ծախսի զգալի պահանջներ չունին, իրանց միջոցները գործ են դնում կամ Բիւրոյին յանձնելով, կամ ըստ ցուցման Բիւրոյի՝ ուղարկելով իրանց միջոցները ուրիշ գործող խմբերի:

Ամսագրի հրատարակութիւնը.— «Յեղափոխականների Դաշնակցութեան» ժողովը լուրջ նշանակութիւն տալով ճշմարիտ ազիտացիային՝ հրաւիրում է բոլոր խմբերին, կազմելով խմբադրական մասնաժողովներ, միշտ նիւթ մատակարարել Բիւրոյի միջոցով Ընկերութեան օրգան «Դրօշակ»ին եւ բարձրացնել զանազան հարցեր, որոնք ունին այս կամ այն յեղափոխական նշանակութիւնը: Շտապողական դէպքերում տեղական խմբերը պիտի աշխատեն թուրքիկ թերթերով «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան այսինչ ձեւը» ստորագրութեամբ վառ պահել հասարակութեան հետաքրքրութիւնը դէպի յեղափոխական գործը: Որպէսզի այդ թուրքիկների մասին անտեղեկ լինին միւս խմբերը, լաւ կը լինէր Բիւրոյի միջոցաւ յաջողակները դրանցից տարածել ռայոնից դուրս(5): Զգալով մի գիտական լուրջ պարբերականի հրատարակութեան կարեւորութիւնը՝ ժողովը որոշեց գտնել ձեռնհաս խմբազիր եւ աշխատակիցներ այդ գործը գլուխ բերելու համար: Կոմիտէները պարտաւոր են ձեռք բերել նիւթական միջոցներ:

Ժողովը՝ մի կողմից՝ համոզուած լինելով, որ Թուրքիայում կատարուող ամենայն մի փոփոխութիւն եւրոպական պետութիւնները միշտ կապում են իրենց շահերի հետ եւ հետեւաբար, հայկական խնդրի այս կամ այն կերպ լուծելը լինելու է այդ պետութիւնների համաձայնութեամբ, եւ միւս կողմից՝ ի նկատի առնելով, որ, օրինակ, Անգլիայում բացի հասարակա-

կան կարծիքի եւ կառավարչական շրջանների նպատաւոր տրամադրութիւնից, գոյութիւն ունին նոյնիսկ ամբողջ միութիւններ (Անգլո-Հայկական Միութիւնը եւ Հայկական Դաշնակցութիւն), որոնք ներգործական դեր են վերցրել իրենց վրայ հայկական խնդրին նպատելու համար, — այս հանգամանքների վրայ հիմնուելով՝ վճռուեցաւ կազմակերպութեան կողմից, ըստ կարելւոյն, ազենտներ(4) ուղարկել Եւրոպա, որոնք աշխատէին օգտուել հանգամանքներից՝ եւրոպական հասարակական կարծիքի վրայ ազդել, որոշ գործունէութեան հրաւիրէին Եւրոպայի զանազան անկիւններում եղած հայկական ուսանողական թէ այլ կողմիաները(6), կապէին դրանց իրար հետ եւ, որ գլխաւորն է, անմիջապէս լիակատար տեղեկութիւններ հաղորդէին Բիւրոյին՝ եւրոպական քաղաքական շրջաններում տիրող տրամադրութեան եւ, մասնաւորապէս Անգլիայում եղող միութիւնների վերաբերմամբ: Վերջինը կարեւոր է նամանաւանդ այն պատճառաւ, որ մեր հասարակութիւնը բոլորովին դադափաղ չունենալով, օրինակ, Անգլո-Հայկական Միութեան մասին՝ շատ անգամ հարց է դնում նրանց նիւթապէս օգնելու նկատմամբ, թէ եւ մինչեւ այժմ դեռ ոչ ոք չգիտէ, ի՞նչ է աւելի կարեւոր ներկայումս յիշեալ Միութեան. արդեօք դրամ թէ, օրինակ, լոկ փաստական տեղեկութիւններ Հայաստանում կատարուող բարբարոսութիւնների մասին եւ կամ որոշ գործունէութիւն Մայր հողի վրայ:

Ի վերջոյ, ժողովը կարեւոր համարեց իր նիստերի մասին կազմուած արձանագրութիւնը հրատարակել՝ ի գիտութիւն բացակայ եղող յեղափոխական ընկերների եւ, առհասարակ, ամբողջ Հայ հասարակութեան:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՆ

- (1) Խոստումի ծածկանուճներէմ մէկը:
(2) Նախաձեռնութիւնը, իրաւունքը:
(3) Կարեւոր, հիմնական:
(4) Գործիչներ:
(5) Դիւրին թէքթը քանած եմք ճոյնութեամբ: Պէտք է ըլլայ հաւանորէն՝ զանտեղեկ չլինիմք կամ զտեղեկ լինիմք:
(6) Գաղութները:

2.— Հ. Յ. Դ. ԵՐԵՒԱՆԻ Ա. ՌԱՅՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Ինամ»ի սերագրութիւնը (Ա. հատար, էջ 107) կը գրէ. իր ընթացքով...

Ինչպէս յայտնի է, Հ. Յ. Դաշնակցութիւնը, միջնաբերդի Ընդի. Ժողով (1898 թ.), բազկացած էր ամկախ կոմիտէներից, որոնք իրենց շրջանում գործում էին ինքնուրույն կերպով: Կոմիտէները ունէին իրենց մերթիմ կամուսնակիրը, որ, սովորաբար, յարմար-

ցրում էր տեղական պայմաններին: Այդ տեղական կանոնները վերջը, երկրորդ Հնդկամուր ժողովում, միք ծառայեցին ընդհանուր կազմակերպական կանոնների մշակութեամ: Երեսմի Ա. Ռայոնական ժողովի կանոնները որոշ գաղափար տալիս են եւ միւս շրջանների կանոնների մասին:

95 թ. Փետր. 10 եւ 11ին գաւառացի եւ տեղացի 15 ներկայացուցիչների մասնակցութեամբ կայացած Ա. Ռայոն. Հնդկանուր ժողովը հետեւեալ որոշումներն արեց.—

1. Ռայոնական գլխաւոր կոմիտէ ճանաչուեց «Հրաւէր» կոմիտէն:

2. Մերտ յարաբերութիւն կապել ուսյոնի բոլոր կոմիտէներէ մէջ.

ա) Իւրաքանչիւր կոմիտէ պարտաւոր է ամիսը մէկ անգամ նամակ գրել «Հրաւէր» կոմիտէին, որը իր կողմից նոյնպէս ամիսը մէկ անգամ տեղեկութիւններ կը տայ ընդհ. գործի վերաբերեալ:

Ծանօթ.— Բացառիկ դէպքերում փոխադարձաբար անմիջապէս նամակ գրել:

բ) Այսուհետ ուղարկած եւ ստացած նամակները պէտք է կրեն իրենց վրայ համար (թիւ). այդ համարները պէտք է ճշգրտութեամբ պահուին, որպէսզի կորածները անմիջապէս իմացուին:

գ) Իւրաքանչիւր կոմիտէ պէտք է ունենայ իր նոմերը(1), իրբեւ նշանաբան, որ որոշում է «Հրաւէր»ը:

դ) Իւրաքանչիւր կոմիտէ պարտաւոր է ամիսը մէկ հաշիւ տալ «Հրաւէր» կոմիտէին, որն էլ իր կողմից հաշիւ կը տայ ընդհ. ժողովներում եւ Դաշնակցութեան օրգանի մէջ:

ե) Հնդկանուր ժողովներ(2) կը կայանան տարին 2 անգամ. Ժամանակը եւ տեղը կ'որոշէ «Հրաւէր» կոմիտէն:

Ծանօթ.— Գաւառական կոմիտէների կարեւոր խնդիրները մշակում են ընդհ. ժողովներում:

3. Գաւառական կոմիտէների պարտքը եւ պահանջը դէպի «Հրաւէր» կոմիտէն.—

ա) Բացի «Հրաւէր»ի կասալից, գաւառներում գոյութիւն կ'ունենան եւս երեք կասաներ(3):

բ) Կասա չճանաչուող կոմիտէն իր բոլոր դրամական միջոցները ուղարկում է «Հրաւէր» կոմիտէին:

գ) Գաւառական երեք կասաների պակասորդը (դեֆիցիտը) լրացնում է «Հրաւէր»ի կասան:

դ) Գաւառական կոմիտէներին միանգամայն արգելում է դրամական նպաստներ տալ եկող-գնացող անձանց, բացի «Հրաւէր» կոմիտէից յանձնարարական ունեցողներից:

ե) Իւրաքանչիւր կոմիտէի վրայ պարտք է դրւում պատրաստել ե'ւ խնամիրգն(4), ե'ւ կռուող մարզիկ բուն գործելու տեղը ուղարկելու համար:

զ) Պատրաստի ունենալ ապաստանարաններ գործին մասնակցող անձանց, նեղ բոստում, ապաստան տալու հետեւող աչքերից:

է) Գլխաւոր «Հրաւէր» կոմիտէին վերապահում է իրաւունք՝ հայթայթել «զէնք» եւ

ը) Ստանալ ու տարածել «Հ. Յեղ. Դաշնակց. օրգանը»:

4. Մշակում է դէպի Տաճկաստան անմիջական եւ նոր գիծ անցկացնելու հարցը:

«ՀՐԱՒԷՐ» ԿՈՄԻՏԷ

- (1) Թիւր, համարը:
(2) Ներկայ իմաստով՝ Երջամայիմ ժողովներ:
(3) Գամաբկղներ:
(4) Մտաւարակամ:

3.— ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. Կ. Ի ՆԱՄԱԿԸ ԹԱԻՐԻԶԻ ԲԻՒՐՈՅԻՆ

Ստորեւ՝ «Իււսմ»ի ծանօթագրութիւնը (Ա. հասար, էջ 282): Ամբողջութիւնը կու տաճ անփոփոխ:

Գրուած է Պետոյի ձեռնով: Սկիզբը եւ վերջը դրուած է կնիք, առաջինը սեւ, մուրով, վերջինը քաւաճով՝ կանաչ: Կնիքը կլոր է. մէջտեղը՝ երկու աւորքանակ խաչաձեւ. աւորքանակների վրան՝ դաշայն եւ գրոշակ խաչաձեւ. տակը 1895. շուրջը՝ «Հ. Յ. Դաշնակցութ. վասպուրակ. կեդր. կոմիտէ»: ԽՄԲ.

Պարսկաստանի Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյին.

Այժմ գտնուում ենք հայկական յեղափոխութեան ամենատազնապալից վիճակի մէջ: Սա մի նոր դրութիւն, շրջան է, որ ձեռք է բերուած ահագին զոհերով, արիւնով: Որքան ծանր, թանգ է առաջ բերուած այս նոր շրջանը, նոյնքան մեծ է յեղափոխութեան յառաջադիմութիւնը: Ու մենք համոզուած ենք, թէ նոր, վերջին տրագիկական(1) շրջանն առաջ գալու, ստեղծուելու համար (որը գրեթէ պահանջ է, իրերի դրութեան պատճառով) միակ եւ միակ միջոցն է անդուլ, անդադար կռիւր, զետեքով հոսող արիւնը. չկայ այս յեղափոխականը դարձանը թող կանգ առնի, կորած, մեռած է ամէն յոյս: Գիտենք նաեւ, ամբողջ Տաճկաստանի երկարութեամբ եւ լայնութեամբ սպանւելու, կողոպտուած, անպատուուած են ոչ թէ մի անհատ, մի դիւր, այլ բոլոր հայաբնակ քաղաքները, նահանգները, ամբողջ ժողովուրդը. իսկ դժգոհների թիւը հազարաւորներ են. Ի՞նչ անել — կռուել եւ ամէն տեղ ու միշտ կռուել:

Յեղափոխական գործերը ամէն տեղ բացուած են

Թուրքի առաջ. Թուրքն ու հայը կանգնած են դէմ դիմաց, պէտք է շտապել, այլապէս ամէն բան կորած է: Վասպուրականի Դաշն. կեդր. կոմիտէն, ի նկատի առնելով իրերի այս սպառնալից դրութիւնը, որոշեց դիմել ձեզ առաջիկայ գարնան գործունէութեան համար: Կրակը պէտք է բորբոքել ամէն տեղ եւ միաժամանակ, որքան ոյժ ունինք նրանով: (Կարծում ենք՝ լաւ էք հասկանում, թէ ինչ ենք ուզում ասել): Այս գործի համար մեզ հարկաւոր են կռուող, լաւ հայ-դուկներ, որոնց գոնէ մի մասը լինին հայ գիւղուորներ: Թուրքի մասին ոչինչ չենք կարող ասել. որքան շատ, այնքան լաւ. մենք յոյս ունինք, որ Վասպուրականի համակ թիւր հարիւրից կ'անցնի: Պէտք է ստեղծել 90 թուականի ժողովրդական շարժում, իսկ դրա համար ձեզ անհրաժեշտ կը լինէր առանց ուշանալու ազիտատորներ(2) զրկել Կովկաս: Դեռ ուշ չէ, պէտք է շտապել:

Կոմիտէս սոյն առիթով ունի Պոլսի եւ Երզրումի կեդրոնական մասնաժողովների կարծիքները, որոնք վերջերս իրանց պաշտօնական նամակներում նոյն կարծիքն են յայտնում. իսկ Երզրումից գրում են, որ իրենցից մէկը պիտի մեզ մօտ գայ, յատկապէս խորհրդակցելու:

Չմոռնանք յիշել, որ այժմ ձեռքը հայդուկն եւս ազատ կարող է գործել. եթէ կարելի է մի խումբ եւս ձեռքը հանեցէք: Վասպուրականը համեմատաբար քիչ զոհ տուեց. գործունէութեան ասպարէզ ունի, հանգիստ է ու, իրբեւ պահպանողական նահանգ, եռանդ ունի պահած:

Ոնդրում ենք այս թղթի իսկականը զրկեցէք միւս կոմիտէներին, իսկ պատճէնը պահէք ձեզ մօտ եւ անմիջապէս բանակցութիւն պահպանեցէք այս առաջարկութեան առթիւ մեզ հետ:

ՊԵՏՕ, ՇԱԽԱՐՇ, ԺԵՆԵԱ ՀԱՍՏԱՏԱՄԻՏ Ն. Տ. Յ. (Կնիք)

96 թիւ, 20 Յունուարի

Յ. Գ.— Այս թղթի մի օրինակը մեր սուրհանդակով զրկեցինք, որը Սարայում ձեռքակալուեցաւ եւ նամակը ոչնչացրեց: Ապա առիթ ունեցանք կրկին այս թուղթը Յունուար 20ին զրկելու, որը չյաջողուեցաւ ու մնաց մինչեւ այսօր: Շտապ լինելով, կնիքի թանաքի տեղ՝ մրով կնքեցինք. ապա միջոց ունենալով՝ թանաքով:

Կարդացէք բոլորը: ՊԵՏՕ:

Նայմ թուրքի վրայ, իրբեւ շարունակութիւն, դարձեալ Պետոյի ձեռնով եւ գաղտնի մեղանով գրուած է հետեւեալ մամակը.—

Ընկերներ, Ձեզնից մինչեւ հիմա մի նամակ ենք ստացել — Ռոստոմիւնը՝ Երզրումի գործերի մասին: Իսկ ձեր մասին ոչ մի տեղեկութիւն: Իբրեւ տարածուած լուր, լսում ենք, թէ գործարանը վնասուած է, զինագործներից ձերբակալուած, զէնքեր խլուած: Ի սէր պարսկ. մեծ Ալլահի մի տեղեկութիւն տուէք:

Առհասարակ Վասպուրականից նամակներ դուրս հանելը տասնեակ արգելքների է հանդիպում, բայց այս աշնան անյաջողութիւնները մեզ ահագին հարուած տուին: Դէպի Պարսկաստան աշնանից ալ ու ձախ ըսպաննել, թալանել, ձերբակալել էր, այդ պատճառով չորս անգամ ձեզ զրկուած նամակ-թղթակցութիւններ չէք ստացել, նոյնիսկ ամենապահանջ միջոցով զրկուածն էլ: Ասորիները միջոցով զրկուածը դեռ մինչեւ հիմա մնում է այնտեղ, վախկոտները ուրիշի գոնէ չեն յանձնում ձեզ հասցնելու համար: Կարաւանով մի մեծ ծրար զրկեցինք (Աղայի կամ ընկերոջ հետն էր), այդ էլ չէք ստացել, որովհետեւ Ռոստոմի նամակում չէր յիշուած: Դարձօն բռնուեց, բոլոր թղթերը ոչնչացան, ինքն էլ քաջաբար բանտից փախաւ, մեզ մօտ է: Սալխանցու միջոցով վերջերս ճարահատ մի կարճ նամակ գրեցինք: Ահագին քանակութեամբ թարմ թղթակցութիւններ ձեզ զրկած ենք, դժբախտաբար, եւ ոչ մէկն էլ չէք ստացել: Պոլսի վրայով ձեզնից երեք անգամ աւել զրկեցինք. 2 ամսուան մէջ 20 ծրար, որոնցից 12ը թղթակցութիւն. տարաբախտաբար, դրանք էլ չեն կարողացել բաց անել, զարմանք(3): Այդ առիթով մի քիչ իրար դիպանք, մեզնից մինը խիստ նամակ գրեց: Ամէն գրելիս, մենք փորձում ենք 3 անգամ, ապա գրում: Ինչպէ՞ս է որ չեն բացած: Հակառակը, եթէ չէր բացուում, անմիջապէս մեզ լուր տալու էին, որով մի ճար կարելի էր անել: Մենք կարծում ենք, որ քիչ անհոգ են եղել:

Այսպէս թէ այնպէս, շատ ծանր էր, պատահում էր, որ միեւնոյն նիւթը 3 անգամ էինք գրում թէ՛ ձեզ եւ թէ՛ նրանց: Սարա-Բողազ. կռիւները երեք անգամ զրկեցինք: Չը չի յաջողուել, վերջինը չգիտենք: Ի դէպ, եթէ սահմանազիւսից չուղարկէք, բոլորովին պիտի խայտառակուէինք. բայց շատ սխալներ կան մէջը եւ Բողազէսանի զեղեցիկ կռիւր դուրս բերուած չէ, ուր մերոնց գոմում շրջապատում եւ կրակ են տալիս. մերոնք ծիւց դուրս են պրծնում գոմից եւ առանց մի զոհ տալու քրտերին կոտորում:

Նիւթերը բոլորովին հիննալով՝ կ'աշխատինք միայն համառօտ ծաղկաքաղ անել թղթակցութիւններից: Եթէ զատ, բրոշիւրով ուզեն ամփոփել, մի կերպ կարելի է ամփոփել. գրեցէք այդ մասին: Կռուի մէջ իսկապէս նահատակուած են 5 հոգի, 6 էլ ցրուած զանազան տեղեր՝ սպանուած են. 10 հոգի էլ կորուած են:

Հերձուածներէ զրկած 17 հոգուց միայն երկուսը դարձան: Նիկիոյ վիրաւորուած չէ ամենեւին, ոչ էլ Սալամուրն ու Յարուսթիւնը: Միայն Սալ. Յարթադադից յետոյ ճամբան չգտնելու պատճառով կորուսեալ է 3 օրից դուրս պրծաւ Վան: Խնամին, Պճկէ Յակոբ, Կարթ, Կարօն եւայլն կորսուած են. Ուստա Փանոս սառած է կռուի դաշտում:

Այժմ Դաշնակցութեան բոլոր կոմիտէները շատ կանոնաւոր կապուած են իրար հետ — Պոլիս, Տրապիզոն, Կարին, Վան, Մուշ, Խնուս, Երզնկա, Բիթլիս եւ սրանց հետ տասնեակ գաւառներ: Ինչ խօսք, որ զուանաչիները դրանց մեծ մասի եղը քաշած ու փախած են:

Կարճկան գաւառն եւս կապուեցաւ մեր կոմիտէի հետ. սրանով Դաշնակցութիւնը Վասպուրականում ունի 5 գաւառներ, որոնցից 4ը գաւառական վարչութիւն ունին. թող որ միւս գաւառներում էլ հատ-հատ գիւղեր կան կապուած: Կազմակերպութիւնը լայն ծաւալ է առած, որով եւ պատասխանատուութիւնը խիստ ծանրանում է:

Ըստ Նիկիոյ, կարելի է հանգիստ կերպով 100 մարդ այստեղից դուրս հանել զէնք բերել գործելու համար, այնքան որ զէնք կայ: Մենք արդէն շուտով կը սկսինք մարդիկ ընտրել եւ շարժանք բռնելուն պէս, խումբ-խումբ ձեռք զրկել: Զէնքի որքանութեան մասին շուտով տեղեկութիւն տուէք մեզի:

Ասորեստանի մասին նորից մտածում ենք մի ճար գտնել. հարկաւոր է մանել Տիար-Տիւրք, մելիքների հետ գործ ունենալու: Այստեղ ասորիների հետ բաւական լաւ յարաբերութիւն ունինք. մեր կռուից յետոյ նրանց 16 զիւղն էլ մերի պէս թալանեցին եւ 13 ասորի սպաննեցին. զրգուած են ասորիները: Սարայի մելիքը մի քանի ամիս է Վան է, մեզ հետ լաւ յարաբերութեան մէջ: Բուն Ասորեստանի մէջ քարոզելու համար յարմար ձեռնից մարդ երթայ Ուրմիայի վրայով, այնտեղի ասորիների օգնութեամբ գարնան սկզբին, եւ որքան այստեղ պատմում են, պ. Ղարա-Մելիքն յարմար է այդ գործին. մենք Սարայի մելիքի միջոցով աշխատում ենք յարաբերութիւն սկսել: Ասորեստանի շարժումը ահագին նշանակութիւն ունի մեր գործերի նկատմամբ. նա Զէյթունից աւելի բարձր է; մեզ կից: Այս մասին մեզ գրեցէք:

Մեր վիճակը քաղաքում բաւական լաւ է: Աշնանը, երբ խումբը Շատախից դարձաւ, ժողովուրդն սկսեց լաւ վերաբերուել. աւելի լաւացաւ, երբ կռուի խումբը մտաւ քաղաք: Մինչեւ այժմ ժողովուրդը հիւրասիրում է: Մախքեր քիչ ունինք. այսքան մարդոց ամիսը հազիւ 3 ոսկի, որի կէսը գրեթէ նպաստ ենք տալիս վախտներին եւայլոց: Դեռ մի ամսուան կայ:

Բանտից ելած Աւետ.(4) ամէն գէշ միջոց ձեռք է առած քաղաքում մեր խմբերը խառնելու, բամբաստելով, թէ Դաշնակցութիւնը մտադիր է կոտորած անե-

լու, ու քաշում է զէպի արմենականները. ամօ'թ իրեն: Կոտորածի երկիւղը դեռ կայ, զգոյշ ենք:

Ձերմ համբոյրներ:
Հա', շուկան դեռ կանոնաւոր չի բացուում:

ՊԵՏՕ

- (1) Ողբերգակամ, օրհասակամ.
- (2) Շարժում ստեղծող, խրախուսիչ աշխատանք տանող:
- (3) Կ'ակնարկուի անկասկած ծածկագրի կամ գաղտնի մելամի:
- (4) Աւետիսեան (?):

4.— ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ (16 Յունի. 1896)

(Զհաղորդել Դաշնակցական կազմակերպութեան չպատկանող անձերու):

Կ. Պոլսի Կեդրոնական Կոմիտէն կը փութայ իր ընկերներուն ուշադրութեան յանձնել հետեւեալ շրջաբերականը, որ հրատարակուած է Դաշնակցութեան Կովկասեան Կոմիտէներու կողմէն:

Սիրելի ընկերներ,

Գործի դրութիւնը քանի գնում, այնքան աւելի բարդանում է... Եթէ մի կողմ թողնենք դիպլոմատիական միջամտութիւնները, առանց որոնց հայկական հարցը չի կարող որոշել ստանալ՝ գործի բուն ասպարէզում, Տաճկահայաստանում, վերջերս ստացած տեղեկութիւններից երեւում են հետեւեալ, մեզ համար մեծ կարեւորութիւն ունեցող փաստերը:

Որտեղ հայերը մեծամասնութիւն, կամ որոշ զգալի ոյժ են կազմում, տաճիկների եւ քրտերի կողմից յարձակումներ տեղի չեն ունենում: Ինչքան էլ նրանք դէմ լինին հայերին, այնուամենայնիւ գիտեն, որ յարձակուած ժամանակ կարող են ընդդիմադրութեան պատահել, որքան էլ անզէն լինեն վերջիններս: Զէ՞ որ տաճիկներն էլ մարդ են, նրանք էլ իրենց կաշուից վախում են: Ահա ինչու կոտորածները մեծ ծաւալ են ստացած Փոքր Ասիայում, Տրապիզոնից, Բարբերդից սկսած զէպի Երզնկա, Արաբկիր ու Տիգրանակերտ, որտեղ հայերը ամբողջ ազգաբնակչութեան 1/4 մասն էլ չեն կազմում: Բայց նոյնիսկ այդ տեղերում տաճիկները ընդդիմադրութեան պատահելիս, թողնում փախչում էին:

Տրապիզոնում, երիտասարդների մի խումբ 10-15 հոգուց բաղկացած, կտրելով մի նեղ հայաբնակ փողոցի երկու ծայրերն էլ, յետ է մղում ահագին խուժան:

Երզնկայում մահմետականների կողմից էլ բաւական մարդ է ընկած:

Դալով այն կէտերին, որտեղ հայերը քիչ թէ շատ զգալի թուով են, պէտք է ասել, որ այն կէտերում կոտորածը աւելի թույլ է եղել:

Կարինում կոտորածը տեղի է ունենում ըստ մեծի մասամբ խառը թուրքաբնակ թաղերում ու շուկայում: Միւս թաղերը, մասամբ հայ ազգաբնակչութեան մեծամասնութեան պատճառով, մասամբ էլ այն դիրքի, որ բռնած են եղել մեր այնտեղի ընկերները, մնում են ազատ: Կարինում ապրող Դաշնակցականները, առաջուց իմանալով 21ին սպասելիք կոտորածի մասին, ամէն ջանք գործ են դնում ստեղծել թաղերում պաշտպանութեան խմբեր, բայց չեն յաջողացնում վերջացնել գործը, որովհետեւ ըէֆտրմների լուրի տրուելը կռուի առիթ է դառնում. ամսի 18ին նահատակուած հարիւրների մէջ կան եւ մեր ընկերներէն 8ը, որոնք օրինակ են եղել միւսներին իբրեւ դիմադրող ու կռուի մէջ նահատակուողներ: Դրա հետեւանքն է լինում այն, որ 700 հայի դէմ ընկնում է մօտ 130-150 հոգի եւ բաշխողուկներից:

Աւելի հետաքրքիր է, թէ ինչ դրութեան մէջ են եղել Բասենը եւ մի քանի այլ տեղեր:

Որտեղ ժողովուրդը ունեցել է մէկ քանի հրացան եւ կտրիճ տղաքներ, դիւղերը պաշտպանած են: Այդ հասկանալի կը լինի, եթէ ի նկատի ունենանք, որ պաշտպանողները նստած են լինում պատի յետեւը, որ նրանց գնդակը հասնում է թշնամուն ու չի թողնում մօտենալ դիւղին, իսկ յարձակուող խուժանը առհասարակ բաց տեղ է լինում, դաշտի վերայ եւ հինգ-տասը մարդ ընկնելուց թողնում հեռանում է դիւղից: Սրան շատ նպաստում է այն հանգամանքը, որ ամէն տեղ, որտեղից լսում է հրացանի ձայն, յարձակուողները ենթադրում են ջանֆիդա (անձնագոհ) յեղափոխականների ներկայութիւնը: Իսկ ջանֆիդաները տաճիկների համար դառել են ահ ու սարսափ:

Յեղափոխականների մի քանի խմբերի անցնելը, Օգոս.—Սեպտ. ամիսների ընթացքում տարած մի-երկու մանր յաղթանակները, ջանֆիդաներից մի քանիսի անպատմելի քաջութիւնը (հանգուցեալ Կորկոտեանը, պատմում են, մինչ նրա ընկնելը տասից աւելի թուրք է սպաննել) — այս ամէնը սարսափ է դրել քրտերի ու տաճիկների վրայ:

Հասան-Կալէ դիւղաքաղաքում խմբերի անցնելու ժամանակ մէկը պատահմամբ ատրճանակ է արձակում: Ամբողջ դիւղաքաղաքը իրար է անցնում, գիշերը ոչ ոք չէ քնում, սպասելով որ ջանֆիդաները վրայ կը տան: Շատերը, ինչպէս էր 90-91 թ., ապաստարան են փնտրում հայերի մօտ, «Այսօր դուք մեզ պաշտպանեցէք յեղափոխականներից, վաղը մենք կը պաշտպանենք ձեզ» ասելով: Ջանֆիդաների մեծ աշունք լսելով, թարաքամայ աւազակներից մէկը դիմում է նրանց, որ միասին յարձակուեն Մ. հարուստ թուրք դիւղի վրայ, եւ դա հասկանալի է: Բասենում

մեր ընկերներից 14 հոգուց բաղկացած խումբը յաջողեցնում է պաշտպանել երեք-չորս դիւղ:

Միւս խումբը երեսուն հոգուց բաղկացած դիմադրում է ամբողջ երկու շաբաթուան ընթացքում մի քանի 100 հոգու յարձակմանը եւ պաշարմանը: Ահա ինչու Բասենի 10-12 դիւղերում հայերի կողմից սպաննուած են ոչ աւելի քան յիսուն հոգի, իսկ բաշխողուկների կողմից հարիւրից աւելի: Ուրիշ փաստ:

Վանից, Նոյեմբերի 5ին մեր ընկերը գրում է.

Երկու շաբաթ է դպրոցները, խանութները Վան գոց են, շրջաններից գիւղացիք թափուել են Վանին կից գտնուած գիւղերը: Ազգաբնակչութեանը սով է ըսպանում... Պարսկաստանից անցեալ ամսուան 18ին դուրս եկած 56 հոգուց բաղկացած խումբը (42 մեր ընկերների հետ միանում են եւ 14 արմենականներ) սահմանի միւս կողմը ընդհարում է ունենում քրտերի մեծ բազմութեան հետ: Քրտերը շրջապատում են նրանց մի ձորակում եւ բռնում շրջապատող սարերի գագաթները: Չնայած դրան, կռուի ընթացքում «Քաջերից» ընկնում են վեցը, վիրաւորուած են երեքը, իսկ քրտերից քսան-երեսուն հոգի (որոնց մէջ են երկու-երեք յայտնի աղասիներ): Իրողութիւնը սա է. իսկ սահմանի քրտերից լսելով, քրտերից սպաննուած է մի քանի հարիւր մարդ. էլի քրտերի խօսքով ջանֆիդաները մի տեղ ցրտից ու սովից դրոշուած մտնում են մի քրտի դիւղ եւ հաւատացած լինելով քրտերի դիմադրութեան մէջ, կոտորում են բոլոր դիւղերում գտնուող ցեղապետներին: Այս լուրի մէջ մասամբ ճշմարտութիւն կայ, որովհետեւ վերը յիշած Վանի նամակում ասում է, որ խմբից կռուի ժամանակ 18 հոգի բաժանուելով մինչեւ հիմա չեն հասած Վան եւ յայտնի չէ, թէ ուր են, կենդանի՞ են արդեօք, թէ քաջերի նման ընկան կռուի դաշտում...

Ահա ինչու են քրտերը եւ տաճիկները սարսափում ջանֆիդաներից: Ահա ինչու են փախչում նրանցից որտեղ ենթադրում են նրանց գոյութիւնը: Պարզ չէ՞ արդեօք, ընկերներ, որ կոտորածների պատճառը հայերի թուլութիւնն է: Պարզ չէ՞ արդեօք, որ ժողովուրդը պաշտպանելու, մեր արդարացի պահանջները լսելու, իրականացնելու համար հարկաւոր են ջանֆիդաներ, հարկաւոր է զէնք կռուելու եւ պաշտպանուելու համար: Ահա ինչու մեր կարծիքն է՝ հաւար կանչել ամէն կողմից բոլորին, մանաւանդ քաջ եւ վարժ մարդկանց, նախկին զինուորայիններին՝ օգնութեան հասնել կռոււմ գտնուողներին:

Սպասելու ժամանակ չէ... Սահմանի այն կողմը արիւն է հոսում եւ մեր խրախուսող ուռուտատանցիների կողմից դաւաճանութիւն է այժմ նստել տեղներս եւ սպասել... Սպասել, չգիտենալով ինչու համար նոյնիսկ: Երբ մեր ազգի գոյութիւնն է այսօր ամբողջապէս որոշուած, մեր ամբողջ ապագան, մի՞թէ պարզ չէ, որ մեզ վրայ էլ մի մեծ պատմական պարտք է

դրուած: Այդ պարտքն է ամէն ազգասէրի նուիրել իրան բոլորովին յեղափոխական Ս. Գործին, կռուողին զնալ կռուելու, մնացողին, հարեւաններին, համազիւղացիին զինել, ամէն պատրաստութիւն տալ կամաւոր յեղափոխականին, իսկ իր պատմական պարտքը չհասկացողին համոզումով, նոյնիսկ ուժով կատարել տալ այս պարտքը: Զէ՞ որ յեղափոխական կազմակերպութիւնը՝ այդ ժամանակաւոր օրէնքով չճանաչուած տէրութիւնը՝ որոշ չափով ունի եւ օրէնքով ընդունուած կեղեքող տէրութիւնների իրաւունքը:

Միեւնի ընկերներ, մենք չենք մտնում ձեր տեղական հանգամանքների մէջ, բայց մի բանի վրայ շեշտում ենք, ցրուելով ամէն կողմ, օգնութեան կանչել բոլորին, առանց սպասելու դալ դէպի սահման ու անցնել:

Ձանձիղանների դրօշակը պիտի լինի այսօր յարձակուել, կոտորել ժողովրդի վրայ յարձակուողներին, կռուել մինչ վերջին շունչը լիրբ, վայրենի տէրութեան դէմ, վալիից սկսած մինչև վերջին զափութեան, հարկահանր: Սա է պահանջում յեղափոխական ոգին, սա է պահանջում Սուրբ Արդարութիւնը:

Սահմանի մօտ արդէն շարժում սկսուած է: Անցեալ շաբաթ յիսուն հոգի անցան, միւսներն էլ անցնելու են: Դուք էլ շուտ եկէ՛ք, հասէ՛ք օգնութեան: Կամաւորները թո՛ղ խումբ-խումբ ճանապարհ ընկնեն... Բարեւ եւ յաջողութիւն բոլորիդ:

Դեկտ. 1, 1895 թ.

5.— ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Մտքի՝ նոյնութեամբ կաւ տամբ Վիտանի Խմբագրութեան ծածօքագրութիւնը (Ա. հատար, էջ 385).—

Իննամական թուականներից, Հ. Յ. Դ. Դիւանում, զինուորական բնոյթ կրող շատ քիչ միւսք է մնացել: Ստորեւ բերուող վաւերագիրը բնագիր արձանագրութիւնն է զինուորականի մի խորհրդի, որ տեղի է ունեցել 1896 թ. ամառը, Բերդիկում (Կարսում): Վաւերագրի վրայ նշանակուած է միայն ամսաթիւը, տարին չկայ, բայց բովանդակութիւնից երեւում է, որ վաճառի կոտորածից անմիջապէս յետոյ է տեղի ունեցել խորհրդակցութիւնը, ուրեմն 1896ին:

Խորհրդակցութեան կազմի մասին կարելի է որոշ կերպով ասել, թէ մասնակցել են՝ Բիւրոյի ներկայացուցիչը, Արմենակը (Հրայր-Դժոխք), Արիստակէս (Կարօ) Զօրեանը, Արա-Մելիքը, Ղարա-Մելիքը, Զալալը. միւսների անունները կարօտ են պարզաբանութեան:

Վաւերագիրը, իբրեւ արձանագրութիւն, շատ ան-

կատար է, բայց իր արժէքը այնքա՛ն մեծ է, որ մեծք առաջ եմք բերում առանց մէկ բառ իսկ փոխելու, պակասաւոր ու մութ մասերը թողնելով ձեռնհաս անձանց լուսարձակութեան:

22 ՅՈՒՆԻՍ 1896

Ներկայ էին Համագասպը, Թորոսը, Արիստակէսը, Արմենակը:

1) Պոլսոյ դործիչները ովքե՞ր են, ի՞նչ են անում եւ ի՞նչ հայեացք ունին ընդհանուր անելիքների մասին: Պոլսոյ նամակները տեղս չեն ստացւում, ճիշդը՝ քիչ եւ ուշ-ուշ են ստացւում:

2) Քաղաքական աշխարհի բռնած դիրքը պէ՞տք է արդեօք ի նկատի առնել, թէ ոչ. եթէ այո, պէ՞տք է արդեօք բաւականանանք լրագիրների տուած աղբիւրներով, թէ՞ հարկաւոր կը լինի դիմել անմիջական յարաբերութեան կարեւոր ներկայացուցիչների կարծիքները իմանալու: Հարկաւոր է միշտ յարմարուել եւ անպայման ի նկատի առնել նրանց բռնած դիրքը:

Անցնելու

Պէ՞տք է կենտրոնանալ, թէ ոչ:

Հ.— Պէտք է կենտրոնանալ. այդ կարելի է, թէեւ դուցէ մեծ զոհողութիւններով, որովհետեւ մի մասը եթէ կոտորուի, միւս մասը կը հասնի տեղ: Փաստեր՝ Թաթուլի խումբը, բաղկացած 30-35, Դժոխքի՝ 35-40 երկրորդ անգամ, իսկ առաջին անգամ 25-30ը: Հընչակեանների խումբի անցնելը, 2 անգամ, որից մի անգամը բռնուեց:

Ե.— Երեք ճանապարհ. 1) Ալաշկերտ, 2) Բասեն, 3) Ենիքօ: Անցնելու գլխաւոր պայմանները երեք են. ա) Ռուսաստ. սահմանի վրայ յարմար տեղ զինուելու, բ) լեռնոտ ճանապարհ եւ տեղը հասնելու ժամանակամիջոց, գ) իջեւանելու ապահով տեղ: Ալաշկերտի դիժը երրորդ պայմանին բաւարարութիւն չէ տալիս:

Հ.— Երրորդ պայմանն էլ գէթ կիսով չափ բաւարարութիւն կը ստանայ, որովհետեւ ա) Սերոբը այդ ճանապարհը ուսումնասիրելով 95 թ. Մայիսին խումբեր էր կազմել, որոնք պէտք է ընդունուէին այդ գիւղերում, այդ գիւղերի համաձայնութեամբ. բացի այդ բ) փետրուար ամսին Պետիկը կամենալով ուսումնասիրել գալով Տաճկաստանից մինչև սահմանը եւ այդ մասին տեղեկութիւն տալով մեզ՝ յայտնել էր, որ բոլոր գիւղերում այդ գծով կարելի է պատսպարուել՝ տալով թէ՛ գիւղերի եւ թէ՛ գլխաւորների անունները. գ) ի նկատի առնելով անցած փորձերը՝ չպէտք է առանձին նշանակութիւն տալ այն հանգամանքին, որ մի քանի գիւղերի մարդիկ խօսք չեն տալիս ընդունել, ո-

բովհետեւ շատ անգամ ասում են չենք ընդունի, բայց ընդունում են, եւ երկրորդ՝ ամէն մի գիւղում չցանկացողներ կարող են լինել. (ի նկատի առէ՛ք, Ե.ի ասելով, որ այս՝ միայն Ռուսաստանում):

Ե.— Հ.ի ասած կազմակերպութիւնը, որի մասին թէ՛ Սերոբը, թէ՛ Պետիկը տեղեկութիւն են տուել, այժմ չկայ, 1) որովհետեւ այդ տեղերում մենք մարդիկ չենք ունեցել, որոնց միջոցով մենք պրոպագանդա արած լինէինք, կամ հետները կապուած լինէինք. այդ դժով չենք անցկացրել խումբ երբեք. 2) Արամայիսին եւ Յակոբին երբ Զալալը առաջարկել էր անցնել այդ գծով, նրանք մերժեցին ասելով, որ դժուար է: Դորան Հ. պատասխանում է, որ Արամայիսը մօտ 6 տարի է, որ այդ գծի հետ անմիջական տեղեկութիւն չունի:

Բասենի ճանապարհը բաւարարութիւն չի տալիս վերջին երկու պայմաններին, որովհետեւ Միլզա բէկը իր խմբով, 40 մարդկանցով, շրջում է ճանապարհին, իսկ իջեւանելի գիւղերում զօրքեր կան, որոնք նոր տեղեկութեան համեմատ միացել են ենթադրաբար մի գիւղում: Բացի այդ, որովհետեւ այդ գծի վրայով մենք միշտ անցել ենք, ուստի թշնամին միայն այդ գծով է սպասում մեզ հանդիպել եւ կենտրոնացած է այդտեղ:

Ենիքոյի դիժը բաւարարութիւն է տալիս բոլոր պայմաններին, միայն ունի հետեւեալ անյարմարութիւնները: Առաջին՝ Կազաչի պոստ (Կազակների կայան) կայ այն գիւղում, ուր պէտք է առաջին պայմանը ի կատար ածուի. 2) հետեւեալ օրը պէտք է պատըպարուել ուսուց անտառում, ուր կարող են մեզ տեսնել օրիեսչիկները (պահակները):

Ա.— Ալաշկերտի դիժը չէնց 1) պայմանին բաւարարութիւն չի տալիս, որովհետեւ Արաքսից անցնելու միակ կամուրջը խիստ հսկողութեան տակ է. 2) Սերոբի փորձը հիմնաւոր չէ, որովհետեւ չէնց ինքը եւ Թաթուլը այդ գծով անյարմար համարեցին անցնել անցեալ տարի եւ մի ամիս սպասելով անցան Բասենի գծով: Բացի այդ, Սերոբի ասելով այդ գծով ուղղակի կարելի է գնալ Ախլաթ, իմանալով որ չորս օր շարունակ պէտք է քիւրտերի միջով գնալ, — մի բան, որ անհաւատալու չափ անխոհեմութիւն է: Պետիկը ասածները քիչ հաւատալի են, որովհետեւ նախ փոփոխամիտ է եւ թէ նա, իմ կարծիքով, աւելի դրել է, քան տեսել:

Թ.— Համաձայն լինելով Ա.ի ասածներին, աւելացնում եմ, անցնելիս պէտք է գնալ ուսուց Բասենից մինչև Բեօսաղաղ, իսկ այս ճանապարհը լինելու է ուսուց սահմանը, շոտ է շինուում եւ զինուորներով խիստ հսկուում, այնպէս որ անցնել անհնարին է. այդպէս էր վկայում եւ անցեալ տարի այդ վալառը:

Ա.— Ալ. կողմերի գիւղերից շատերը հազորդակցութիւն ունին Կազդուանի հետ եւ միշտ պատ-

րաստակամութիւն են յայտնել օգնել անցնողներին, որ հնարաւոր եւ կարելի են համարում:

Ա.— Թ.ի ասած անյարմարութիւնը՝ Ենիքոյի գծի մասին աւելի ծանր է, քան ենթադրուած է, որովհետեւ այժմ զօրքի մի մասը զնացել է անտառը լազեր, իսկ քիչ յետոյ բոլորը կը գնան:

Հ.— Այդ առաջներն էլ եղել է:

Ընդհանուր տեսութիւն գծերի մասին

Ե.— Նախ այժմ անցնել անհնարին է, որովհետեւ քրտերը ամառ լինելու պատճառով սարերի վրայ են եւ կը տեսնեն ճանապարհին. երկրորդ՝ գիւղը մտնելիս պէտք է լինել դաշտ, ուր այժմ ամառ լինելու պատճառով վարուցանք անողներն իրանց անասուններով են իջեւանած. երրորդ՝ Հ. աղան ման է դալիս Բասենի գծի վրայ: Ընդհանրապէս կառավարութիւնը այժմ խիստ է նայում սահմանագծի վրայ, որովհետեւ բոլոր հայ պաշտօնեաներին փոխել են եւ փոխում են:

Անցնելու մթերքների միջոցների բաւարարութեան չափը

1. Բասենի եւ Ալաշկերտի գծի վրայ կայ 44 հրացան, որից 12ը դափաղղու են եւ 17,000 փամփուշտ. 40-44 ատրճանակ ?...

Ենիքոյի գծի վրայ կայ 126 հրացան, մօտ, 12,000 փամփուշտ, 88 ատրճանակ ?...

7 մի, մօտ 120 մարտախմբի հաւանականօրէն, մօտ 30 ուսահայեր, մօտ 8-10 նախկին զինուորներ, 40ի չափ հրացան ձգողներ, տաճկաստանցիները դըլխաւորապէս չգիտեն:

Առաջին առաջարկութիւն

1) Մինչև 20 օր պատրաստ լինել անցնելու. եթէ վանի դէպքերը, սպանութիւնները մեծ չափով եղած լինեն, այդ քսան օրից յետոյ չանցնել. եթէ փոքր չափով եղած լինեն, անցնել յարձակում գործելով(1): վանի դէպքերի մասին եթէ նոր տեղեկութիւն չլինի, ընդունել վանի սպանութիւնը՝ փոքրաթիւ:

- Ղ. Այո՛:
- Թ. Ո՛չ:
- Ա.Կ. Ո՛չ:
- Հ. Այո՛:
- Զ. Այո՛:
- Եկեր. Այո՛:
- Աբ. Ո՛չ:
- Ա. Ո՛չ:
- Ո՛չ.— Կոտորածների մեծ վնասը, որ անխուստ-

փելի է եւ աննպատակաբարձութիւնը, որովհետեւ միջամտութիւն անսպասելի է:

Նրկրորդ առաջարկութիւն

Խմբերի տեղափոխելը յետաձգել մինչեւ սեպտեմբեր, շարունակելով զէնքեր անցկացնել, դորանով մի կողմից քաղաքական աշխարհի դիրքը կը պարզուի, միւս կողմից սեպտեմբերին մեծ ուժով գործ կ'անենք. սեպտեմբերին խմբերը աշխատել անցկացնել խաղաղ, առանց ընդհարումների, եթէ հնարաւոր է, կենտրոնանալ Բասենում:

- Ջ. Ո՛չ:
- Աբ. Ո՛չ:
- Թ. Այո՛:
- Ա-Կ. Ձեռնպահ:
- Հ. Ո՛չ:
- Ա. Այո՛:
- Ղ. Այո՛:
- Եկ. Ո՛չ:

Ո՛չ.— Տեղափոխելիս կարող են նոյնպէս ընդհարումներ լինել եւ հետեւաբար կոտորած կը լինի. խումբը ցրելով դժուար է մէկ էլ նորից հաւաքել, հետեւաբար ամսի կէս ժամանակամիջոցում դժուար է զգալի տարբերութիւն առաջացնել ուժերի մեծութիւնների մէջ. այնպէս որ մի որոշ թուով մարդկանցից զրկուելով, սպասուում է, որ գէթ նոյն թուով մարդկանց Թուրքիայում կը գտնենք. ժողովրդի մէջ դժգոհութիւն առաջ կը գայ մեր անգործութեան վերաբերեալ: Միւս կողմից դժուար է սպասել, որ մինչեւ սեպտեմբերը քաղաքական աշխարհի դիրքը հազիւ թէ կը պարզուի:

Նրկրորդ առաջարկութիւն

Ընդհանուր ժողովին Թաթուլի, Դժոխքի եւ այլների որոշած կենտրոնացումն Կ. Ս. եւայլն հնարաւորութիւն է եւ պէ՛տք է ձգտել բացառապէս նորա իրագործման թէ՛ ոչ. հակառակ դէպքում քուէարկուած առաջարկութիւններից ո՛րը ընդունել:

Խումբը կը ցրենք, ձիերով զէնքերը կը տեղափոխենք Բասեն, ապա Կ. Շ., որ դժուար չէ, ունենալով մօտ 600 մարդ, մենք սեպտեմբերին կը դիմադրենք ամբողջ ամիս եւ ձմեռ կը մնանք պաշարուած դրութեան մէջ: Զանազանութիւնը առաջուան կենտրոնացումից կայանում է նրանում, որ մարդիկ կը տեղափոխուին միայն վերջին պարտիայի հետ:

Նախ շատ դժուար եւ գրեթէ անհնարին է կենտրոնանալ ի նկատի առնելով տեղափոխուելու արգելքները, ժողովուրդը նախկին համակրութիւնը, աջակ-

ցութիւնը ցոյց չէ տալիս, ի նկատի առնելով կրած սարսափները, սպաննութիւնները:

- Ղ. Ոչ:
- Հ. Ոչ:
- Ա. Ոչ:
- Թ. Ոչ:
- Ա. Ոչ:
- Ջ. Ոչ:
- Եկ. Ոչ:
- Աբ. Այո:

Առաջին առաջարկութիւնը անցել է 4 ձայնով 4ի դէմ. երկրորդ առաջարկութիւնը 3 ձայնով 3ի դէմ եւ երրորդ առաջարկութիւնը՝ մէկ ձայնով 7ի դէմ(2): Հետեւաբար ո՛ր առաջարկութիւնը ընդունել:

- Ղ. Առաջին:
- Հ. Առաջին:
- Աբ. Երկրորդ:
- Թ. Երկրորդ:
- Ա. Երկրորդ:
- Ջ. Առաջին:
- Եկ. Առաջին:
- Աբ. Առաջին:

Ընդունուեց առաջին առաջարկութիւնը 5 ձայնով 3ի դէմ:

Այժմուանից ի՞նչ պակասութիւններ են մնում լըրացնելու:

Հրացանները 149 բերտ. 8 նոր սիստ., 5 այնալու, 100 մարդ. 26,000 բերդանկի փամփուշտներ, 7,000 կը պակտի բերդանկի՝ եթէ լինի 170 հրացան:

- 20 — դուլպայ,
- 50 — շալուար,
- 100 — արխալուզ,
- 10 — գլխի շոր,
- 150 — մնթ. շապիկ, ոտաշոր,
- 150 — մնթ. մանր ծախս:

580 — 600

Այդ ծախսը տեղը կը հոգացուի: Գնալու իրանց մօտ կայ 600 մնթ.:

Ջ. Անցնել կենտրոնանալու նպատակով անհնարին է. ընդհարումն անխուսափելի է. ուստի պէ՛տք է անցնել յարձակումով: Որովհետեւ նախ խիստ հըսկողութիւններ կան, բացի այդ, ուսուսաց սահմանից անցնել առանց կոռուելու անկարելի է, ուստի աւելի նպատակաբարձ է մեր բոլոր ուժերը կենտրոնացնել Պարսկաստան եւ այդտեղից յարձակում գործել: Կը ստանանք Կոկոնեանդա(3): Էրզ., Ալաշ., Բասենի կոտորած կը լինի, բայց ես կը յարձակուեմ Դալի-Բաբայի վրայ եւ մի քանի թրջական գիւղեր կը ջարդեմ:

21 ՅՈՒԼԻՍ

6.— 1896 — 97Ի

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

«ԸՆԴՀԱՆՈՒՐ» ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Այս ժողովն մնացած են միայն արձանագրութիւններու ներկայ ամփոփումը եւ քանի մը պատահական յիշատակութիւններ ցամաքներու մէջ:

1896 թուի Դեկտ. 27ից սկսուեց Դաշնակցութեան տարեկան Ընդհանուր ժողովը, որը 22 նիստ ունեցաւ եւ որին մասնակցում էին Վրէժստանի, Մրզաստանի, Մովսիսի, Նաւահանդստի, Գաղթավայրի, Ապառաթի, Հիւսիսակերտի, Նուխազի, Եկտարի, Ոսկանապատի, Քարտի, Բերդիկի, Արարատի եւ Մեծ Քաղաքի(1) ներկայացուցիչներն եւ բուն գործի ղեկավար ուժերից հինգ անհատներ. բացակայ էր արտասահմանի ներկայացուցիչը:

Նախ քան նիստը բանալը, ժողովականները ոտքի կանգնելով յարգեցին այն յեղափոխականների յիշատակը, որոնք նահատակուեցին Կ. Պոլսի վերջին ցոյցի(2) ժամանակ եւ Վարազայ լեռան ճակատամարտում: Դրանից յետոյ, ժողովը որոշեց առանձին, նամակով յայտնել իր խորին յարգանքը եւ հիացումը Գարոյին, Հրաչեային, Լեւոնին եւ բոլոր ընկերակիցներին նրանց հերոսական անձնուիրութեան համար:

Ժողովի սկզբնական նիստերում իւրաքանչիւր ներկայացուցիչ ամփոփ կերպով պատմեց իր ռայոնի անցեալ տարուան գործունէութիւնը լաւ եւ վատ կողմերով, յաջող եւ անյաջող հետեւանքներով եւ ապա ներկայացրեց այժմ պատրաստի եղած յեղափոխական ուժերի համառօտ հաշիւը: Այդ բոլորից յետոյ, ժողովը քննեց հետեւեալ հարցերը.—

1. Խաղաղ նախապատրաստութիւն.
2. Գործունէութեան դադարեցնելը բուն երկրում.
3. Ապագայ գործունէութեան տակտիկան բուն երկրում.
4. Կազմակերպութիւն եւ դիպլոմատիկա.
5. Լեռնավայր եւ Քարաթայա.
6. Միութիւն կամ համերաշխութիւն.
7. Ընդհանուր հաշուետուութիւն.
8. Այլեւայլ հարցեր:

Այսօրուան ժողովը, Վանի եւ Բաթումի խմբերի դրութիւնը աչքի առաջ ունենալով, աչքի առաջ ունենալով Թաթուլի եւ Դժոխքի բռնուիլը, նրանց խմբի այս կամ այն կողմ անցնելը, աչքի առաջ ունենալով նաեւ իր նախընթաց արձանագրութիւնը, որով անցնելը սլամանաւորուած էր Վանի կոտորածների ծաւալովը, — երկար ու բարակ քննելով երկրի ներկայ դրութիւնը, անցնել թէ չանցնելու հարցը նորից դըրեց այս բանաձեւով:

Ներկայ պայմաններում Տաճկ. Հայաստանում շարժումներ առաջ բերել տալը ձեռնտու է, թէ ոչ:

Պատասխան.—

- 1.— Ոչ:
- 2.— Ոչ:
- 3.— Ոչ:
- 4.— Ոչ:
- 5.— Ոչ:
- 6.— Ոչ:
- 7.— Այո:

Ծանօթ.— Այս հարցը այս ձեւով դրուելը առաջ եկաւ այն միաձայն համոզմունքից, որ մեր խմբի անցնելը անպատճառ առաջ պիտի բերէ կոտորած, որ թաքուն, լուռ անցնելը անհնարին է համարուում, ընդհարումը անխուսափելի է եւայլն...

Կոտորած առաջ բերելը ձեռնտու չէ ընդհանուր առմամբ, մասնաւորապէս Բասենում եւ շրջակայքում, որ այս կողմերի միակ գիծն է եւ որը կոտորածից յետոյ բոլորովին կը փակուի մեզ համար...

Տրուեց նոյն դիշեր այն հեռագիրը, որի պատասխանը ստացուեց երրորդ օրը միայն:

Այդ պատասխանը մեզ համար այնքան էլ պարզ չէր, բայց այնուամենայնիւ հեռագրի իմաստը ընդունելով որ անցնելու մասին է, նոյն օրուան (ամս. 23ին) դումարուած ժողովը այս հարցը դրեց.

Արդեօք շարունակե՞լ ցրուել տեղիս խումբը, որի մի մասը արդէն ցրուած էր:

Որոշուեց՝ Միաձայն — շարունակել ցրուել:

Ս. ԱՐԱՄԵԱՆ

1896 թ. 27 Յուլ., Բերդիկ

(1) Բնագրում գրուած ու յետոյ ջնջուած է հետեւեալ կոտորւ. «Անցնել յարձակում գործելով, Զալլադի առաջարկած եղանակով: Այդ հետեւանք կ'ունենայ կոտորած, ըստ Զալլադի, Շատրուան, ամբողջ հայրի, որոնք կազմում են 20 գիւղ, 7000 բնակիչներով, 120 թուրքերի մէջ»: (Ծանօթ. «Իրիւանքի» կազմակերպութեան):

(2) Տուած ենք մոյմութեամբ, հակառակ իմաստի բացայայտ անորոշութեամբ:

(3) Անկասկած՝ ակնարկութիւն Կուկուանի արշաւանքի ձախող ելքին:

1. Խաղաղ նախապատրաստութիւն.— Ժողովականներից մէկը, պատճառ բերելով այն հանգամանքը, որ հայերը իրանց Դատի համար արդէն բաւական զուհեր տուել են, այժմ կարգին ոյժ չունեն, չեն կարող ցոյցերով իրանց Դատը վճռել տալ եւ, վերջապէս, Հայկական Հարցը ներկայումս քաղաքական-հերթական հարց է, առաջարկեց — դադարեցնել ցուցային գործունէութիւնը եւ ամէն ճիգ թափել միայն խաղաղ նախապատրաստութեան համար, թէկուզ դրա համար հարկաւոր լինի տասը տարի:

Ժողովը միաձայն մերժեց այդ առաջարկութիւնը

եւ որոշեց շարունակել կենդանի յեղափոխական գործունէութիւնը, որովհետեւ նախ՝ նախապատրաստութիւնը երբեք խաղաղ կերպով չի կարող կատարուել, քանի որ զէնք տեղափոխելու միշտ էլ կարող են ընդհարման պատահել, կուռի բռնուել եւ դրանով խլըրտում առաջ բերել:

Երկրորդ՝ տաճկահայ ժողովրդի դրութիւնը այնքան անտանելի է, որ նա երկար սպասել, ապագայի յոյսով սփոփուել չի կարող:

Երրորդ՝ եթէ Հայկական Հարցը այժմ հերթական է, այդ դեռ չի նշանակում թէ այդպէս էլ կը մնայ, կամ յաջող լուծում կը ստանայ: Ժամանակի ընթացքում նա հետզհետէ մեռնում է, ուստի ժողովուրդը նորից պիտի արտայայտէ իր արդար բողոքը, ցոյց տայ իր աննորմալ վիճակը եւ դրանով միայն նպաստէ իր Դատի յաջող լուծման:

2.- Գործունէութեամբ դադարեցնելը բուն երկրում.— Մի գործիչ՝ հիմնուելով անցեալի փորձի եւ գործերի ներկայ դրութեան վրայ, առաջարկեց դադարեցնել ակտիւ գործունէութիւնը ներքին նահանգներում եւ բոլոր ուժերը կենտրոնացնել եւրոպական Տաճկաստանում, իսկ, եթէ հնարաւոր է, Երկիր մըտցնել միայն հատուկտոր ուժեր: Երբ այդպիսով ձեռք բերած կը լինենք որոշ ըէֆորմներ(3), երբ ժողովուրդը զէթ մասամբ ազատ կը լինի, այն ժամանակ միայն կարելի է մտցնել զէնք եւ խմբեր...

Իր այդ առաջարկութեան օգտակարութիւնը եւ նպատակայարմարութիւնը ապացուցանելու համար, նա բերում է հետեւեալ փաստերը.—

ա) Հայկական Հարցը արդէն լուծուելու վրայ է, մեր ուժերը չեն կրնում եւ նրանով հազիւ կարողանանք մի արդիւնաւէտ բան անել եւրոպական Տաճկաստանում:

բ) Մեր անցկացրած խմբերը Երկրի մէջ կոտորածների առիթ են դառնում, ինչպէս օրինակ, մի քանի գիւղերում Վասպուրականի ճանապարհի վրայ:

գ) Հայկական Հարցը արդէն անց է կացրել այն Փաղիւր(4), երբ հարկաւոր էին հայդուկային խմբեր, ժողովրդական ցոյցեր, նորանոր կոտորածներ եւայլն:

Այդ հարցը վճռողը դիպլոմատիան(5) է, իսկ նա էլ միջամտում է միայն այն ժամանակ, երբ նրա սեփական շահերն էլ են վնասուում (ինչպէս Պոլսի վերջին ցոյցին). հէնց այդ պատճառով պէտք է կենտրոնանալ միայն եւրոպական Տաճկաստանում:

Ժողովը մի առ մի զննեց այդ բոլոր փաստերը եւ եկաւ այն եզրակացութեան, որ դրանք հիմնաւոր չեն, որովհետեւ

ա) Ինչ ուժեր (զէնք-մարդիկ) որ անհրաժեշտ են ներքին նահանգներում գործունէութեան համար, նրանք արդէն պատրաստի կան եւ հարկաւոր էլ չեն լինի եւրոպական Տաճկաստանում, հետեւապէս բուն Երկրի

գործունէութիւնը չի կարող մեր ուժերը ջլատել:

բ) Յեղափոխական խմբերը ընդհանուր առմամբ կոտորածի պատճառ չեն դառնում, այլ, ընդհակառակը, յարմար դէպքում, նոյնիսկ պաշտպանել են ժողովրդին: Մինչեւ այժմ բոլոր կոտորածները տեղի են ունեցել բարձրագոյն հրամանով եւ, ընդհակառակը, այն տեղերում, որտեղ յեղափոխական ոյժ է եղել, կամ ժողովուրդը ինքնապաշտպանութեան միջոց է ունեցել, կոտորածը շատ չնչին ծաւալով է կատարուել, իսկ մի քանի տեղերում բոլորովին տեղի չի ունեցել: Իբրեւ օրինակ կարելի է յիշել Սամսոնի, Պլաթի, Շատախի եւ Բասենի ամբողջ գաւառները, ուր կոտորած չի եղել: Իսկ Բասենի Դալիբաբա, Իւզվերան, Զիթող եւ Թողովերան գիւղերը կոտորածից ազատուելու համար պարտական են միայն յեղափոխական խմբերին, որոնք յետ են մղել հարիւրաւոր քրդերին եւ տաճիկ զօրքին եւ Թոյլ չեն տուել ծրագրած թալանն ու կոտորածը իրագործելու:

գ) Յեղափոխական գործը բուն ժողովրդական մի գործ է, ուստի ե՛ւ վնասակար ե՛ւ նոյնիսկ անհնարին է հեռանալ ժողովրդից եւ բաւականանալ միայն եւրոպական Տաճկաստանով: Զիչդ է, Կոռածադիկը(6) եւ եւրոպական Տաճկաստանը մեր Հարցի վերաբերմամբ մեծ նշանակութիւն ունին, սակայն, բուն Երկիրը պիտի ցոյց տայ իր աննորմալ վիճակը, անտանելի կեանքը, ժողովուրդը ինքը պիտի արտայայտի իր կենտունակութիւնը, ինքնուրոյն ապրելու ընդունակութեան յատկանիշները, որպէսզի Եւրոպան էլ ստիպուած լինի կատարելու ժողովրդի պահանջները:

Գալով եւրոպ. շահերին, այսքանը կարելի է ասել, որ նրանք միշտ էլ կը վնասուեն, քանի որ Երկիրը խաղաղ չէ եւ Տաճկաստանի Փինանները սխտեմատիկութեամբ քայքայուում են: Բացի այդ բոլորից, աչքի առաջ պէտք է ունենալ, որ Հայկական Յեղափոխութիւնը բուն Երկրում առաջ է եկել որոշ պայմաններից եւ քանի որ այդ պայմանները ոչ թէ վերացել, այլ աւելի եւս վատթարացել են, ուստի խօսք անգամ չի կարող լինել ներքին նահանգների գործունէութիւնը դադարեցնելու մասին:

Հայ ժողովրդին ամէն ընդամենը կոտորած է սպասում. նա զզուում է այդ. նա զէթ ինքնապաշտպանութեան համար զէնք է պահանջում, եւ մեծ պարտաւոր ենք հնար եղածին չափ կատարել այդ իրաւացի պահանջը եւ ոչ թէ անուշադիր թողնել բուն Երկիրը Էւ դրանով ստիպել հայ ժողովրդին կորցնել իր բարոյական արիւթիւնը, հաշտուել իր թշուառ դրութեան հետ եւ վերջնականապէս ստրկանալ, քիւրդի եւ տաճիկի ճիրաններում: Ի նկատի ունենալով այդ բոլոր փաստերը՝ ժողովը մերժեց յիշեալ առաջարկը եւ որոշեց — մեծ ուշադրութիւն դարձնել Կոռածադիկի(6) վրայ, բայց միեւնոյն ժամանակ շարունակել ակտիւ գործունէութիւնը ե՛ւ ներքին նահանգներում:

3. Ապագայ գործունէութեամբ տակտիկամ բուն Երկրում.— Աչքի առաջ ունենալով այն իրողութիւնը, որ հանգամանքները աւելի ու աւելի բարդուում են եւ յեղափոխական գործը ամենակրիտական ֆազիսի(4) մէջ է մտնում, Ընդհանուր Ժողովը ամենածանրը եւ առաջնակարգը համարեց ներքին նահանգների գործունէութեան տակտիկայի(7) հարցը, որը եւ երկար վիճարանութիւնների, մանրակրկիտ քննութեան նիւթ դարձաւ: Առաջարկուեցին գործունէութեան մի քանի ձեւեր, որոնք են՝

1) Բաւականանալ միայն մանր հայդուկային խմբեր մտցնելով Երկրի մէջ: Այդ խմբերի գործն է լինելու անհանգստացնել թէ՛ տաճիկ կառավարութիւնը եւ թէ՛ մահմետական տարրին, յարձակումներ գործել ճանապարհների վրայ, ամբանալ լեռներում եւ միշտ հեռու մնալ ժողովրդից, որպէսզի կոտորածների եւ ճնշումների առիթ չլինի:

2) Մեծ արշաւանք՝

ա) Պանարագի(8) մանր խմբերով ներս գնալը, զէնք տեղափոխելու անհնարին է, ուստի պէտք է հաւաքել Բերդիկի ռայոնում եղած բոլոր ուժերը, մի անգամից ներս արշաւել եւ Բարձրաւանդակ(9) հասնել (եթէ հնար է):

բ) Վրէժստանից(1), որի նպատակն է լինելու վրէժ լուծել քիւրդ մահմետականներից եւ տաճիկ զօրքից, ցոյց տալ, որ հայ ժողովուրդն էլ ոյժ ունի, իր թըլ-նամիններին պատժելու եւ բարեկամներին խնայելու, դրանով վերականգնեցնել վհատուած հայերի բարոյական ոգին, առաջ բերել մեծ խլրտում, եւ, վերջապէս, գրաւել դիպլոմատիայի ուշադրութիւնը:

3) ա) Պանարագի կողմից բոլոր ուժերը կենտրոնացնել Բարձրաւանդակ(9), նախապատրաստել եւ ապա կամ Կոռածադիկի(6) նոր ցոյցից յետոյ կամ մի ուրիշ դէպքում զօրեղ արձագանգ տալ եւ սկսել կազմակերպուած ապստամբութիւնը:

բ) Վրէժստանից մանր խմբերով գնալ Շամ(10) եւ այնտեղ սկսել գործը, որովհետեւ մեծ խմբով ներս գնալը անհնարին է, իսկ միայն սահմանին խփել եւ իսկոյն յետ նահանջելը անօգուտ է եւ վտանգաւոր:

Այդ բոլոր առաջարկութիւններն էլ մի առ մի զննուեցին, յայտնուեցին դանազան թեր եւ դէժ կարծիքներ, ուշադրութեան առնուեցին անցեալի փորձերը, գործի ներկայ պայմանները եւ այդ բոլորից յետոյ, ընդհանուր եզրակացութիւնը եղաւ հետեւեալը.—

Առաջին առաջարկութիւնը միաձայն մերժուեց այն պատճառաբանութեամբ, որ հայկական յեղափոխութիւնը արդէն անցուցել է զուտ հայդուկային գործունէութեան շրջանը, որ այդ խմբերը իրանց մանր մուկը յարձակումներով ու աղմուկներով չեն կարող Եւրոպայի ուշադրութիւնը գրաւել, չեն կարող ժողովրդից հեռու մնալ եւ կոտորածների ու բռնութիւնների առիթ չտալ. վերջապէս, ամէն տեղ չկան լեռ-

նային ապաստարաններ, ուր այդ խմբերը իրանց գործիւնը պահպանել կարողանան:

Երկրորդ առաջարկութեան Ա. կէտը նոյնպէս մերժուեց հետեւեալ փաստերի հիման վրայ.

Պանարագի հայ ժողովուրդը անհամեմատ սակաւաթիւ եւ անզօր է, քան թէ մահմետական տարրը, հետեւապէս արշաւանքից յետոյ մահմետականները կարող են հուր ու սրի ճարակ դարձնել ամբողջ Պանարագը: Արշաւող խումբը ճանապարհի հեռաւորութեան եւ ուրիշ շատ արգելքների պատճառով չի կարողանայ Բարձրաւանդակ(9) հասնել եւ կարճ ժամանակում կ'ոչնչանայ: Պանարագը ներկայացնում է մի բնական դուռ, որի միջոցով մենք Երկիր ենք մտնում, ուստի պիտի աշխատել անվտանգ պահել նրան, իսկ արշաւանք դործելով, մենք գոնէ առ ժամանակ կը կորցնենք այդ դուռը, որովհետեւ դրացի կառավարութիւնը խստութիւններով կ'ոչնչացնէ իր շրջանի յարմարութիւնները (ինչպէս անցեալում), իսկ Պանարագում էլ հայ տարր չի մնայ: Այդ բոլոր բացասական փաստերի վրայ պիտի աւելացնել եւ այն, որ մինչեւ արշաւանքի յարմար ըրպէն հասնելը հարկաւոր կը լինի մեծամեծ ծախսեր անել (մարդկանց կերակրելու), որ ձեռնաու չէ:

Երրորդ առաջարկութեան Ա. կէտը զննելիս պարզուեց, որ Բարձրաւանդակում կենտրոնանալը հնարաւոր է, ինչպէս այդ վկայել են Երկրի միջի մեր գործիչները եւ իրանք՝ Բարձրաւանդակցիք, միեւնոյն ժամանակ իրանց կողմից մեծ պատրաստակամութիւն յայտնելով:

Աչքի առաջ ունենալով բոլոր վերոյիշեալ փաստերը, ժողովը ընդունեց երկրորդ առաջարկութեան Բ. կէտը, երրորդ առաջարկութեան Ա. կէտը, իսկ դրա Բ. կէտը քիչ փոփոխութեան ենթարկեց եւ այդ բոլորը ձեւակերպեց այսպէս.

ա) Պանարագի, Բերդիկի ռայոնում եղած ուժերը կենտրոնացնել Բարձրաւանդակ(9), թէկուզ զէնքը տեղացիներին յանձնելով:

բ) Վրէժստանում(1) պատրաստի ոյժ (զէնք եւ մարդիկ) պահել եւ յարմար դէպքում մեծ արշաւանք գործել սահմանից(11):

ՄԱՆՕԹ.— Դրանց մամբամամութիւնը որոշելը եւ իրագործելը թողնուում է տեղական կոմիտեներին:

գ) Վրէժստանում արշաւանքի անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելուց յետոյ, աւելացած զէնքը մի կերպ Շամ(10) ուղարկել գոնէ տեղացիների ձեռքով:

դ) Երկրի այս կամ այն գաւառում արդէն կազմակերպուած հայդուկային խմբերը չոչնչացնել, որովհետեւ, ինչպէս անցեալում, այնպէս էլ ապագայում կարող են որոշ պաշտպանութիւն ցոյց տալ ժողովրդին:

4. Լեռնավայր եւ Քարաժայռ(12) — Ժողովը աչքի առաջ ունենալով Լեռնավայրի անառիկ դիրքը, տեղական ժողովրդի յեղափոխական ոյժը եւ ընդհանրապէս միւս յարմարութիւններն ու առաւելութիւնները, որոշեց լուրջ ուշադրութիւն դարձնել այդ կէտի վրայ եւ այնտեղ ուղարկել կազմակերպող-ղեկավարող մի ոյժ: Գալով Քարաժայռին՝ ժողովականներից մի քանիսը թերահաւատութիւն յայտնեցին, հիմնուելով այն բանի վրայ, որ չի կարելի լիովին հաւատալ ժայռեցիների անկեղծութեանը եւ մշտական բարեկամութեանը, որ այդտեղի գործը գուցէ եւ հայկական չհամարուի եւ այլն: Սակայն, ժողովականներից երեքը թէ՛ անցեալից եւ թէ՛ ներկայից մի շարք համոզեցուցիչ փաստեր բերելով եւ մատնացոյց անելով այն իրողութիւնը, որ ցանկալի ձեռնարկութիւն արդէն կիսով չափ կատարուած է (Քեռին իր ամբողջ խմբով Քարաժայռ է հասել եւ լաւ ընդունելութիւն գտել), փառատեցին բոլոր կանգաձեւերը, ուստի եւ ժողովը որոշեց ժայռն էլ գործունէութեան մի կենտրոն համարել եւ մեր նիւթական միջոցների համեմատ ուշք դարձնել նրա վրայ:

5. Միութիւն կամ համերաշխութիւն — Այս հարցը քննելիս պարզուեց, որ մինչեւ հիմա «Դաշնակցութիւնը» մի անգամ արդէն փորձ արել է միանալ «Հընչակեանների» հետ եւ միշտ ձգտել է ընդհանուր գործունէութեան մէջ համերաշխութիւն պահպանել, սակայն, այդ բաները, դժբախտաբար, չեն իրագործուել, եւ դրա խոչընդոտները գլխաւորապէս «Հնչակեանների» կողմից են եղել: Ներկայումս էլ «Հնչակ» խմբազրից հետացած մի խումբ Հնչակեաններ ցանկանում են միանալ Դաշնակցութեան հետ, բայց յայտնի չէ թէ դրանք ինչ ոյժ են եւ ինչ պայմանով են ուզում միանալ: Բացի դրանից, այդ խմբի մի քանի անդամները վրայ բարդուած են մի շարք մեղադրանքներ, որոնց հիմնաւոր կամ անհիմն լինելը դեռ պարզուած չէ: Ահա այդ բոլոր հանգամանքները ուշադրութեան առնելով եւ միեւնոյն ժամանակ ի սրտէ ցանկանալով միութիւնը կամ գոնէ համերաշխութիւնը իրականացած տեսնել, Ընդհանուր Ժողովը իր կողմից լիազորութիւն տուեց երկու Բիւրօներին, որպէսզի բանակցին յիշեալ «Հնչակեանների» հետ, հաւաքեն նրանց մասին անհրաժեշտ տեղեկութիւնները եւ հնար եղածի չափ աշխատեն գլուխ բերել միութիւնը կամ գոնէ համերաշխ գործելու համաձայնութիւնը: Միեւնոյն ժամանակ ցանկալի է, որ այդ բանը իրագործուէր նաեւ բոլոր միւս յեղափոխական կուսակցութիւնների վերաբերմամբ:

6. Կազմակերպութիւն եւ Դիւցիպլինա(13) — Անցեալի վրայ ձգած ակնարկը պարզեց այն իրողութիւնը, որ այդ գործունէութեան ընթացքում շատ ու

շատ անգամ սխալներ են պատահել, որոնցից վնասուել է ընդհանուր գործը, տուժել է ժողովուրդը, որ երբեմն մի կոմիտէ քանդել է միւսի վճիռը, մի ուրիշը գործել է բոլորովին հակառակ Բիւրօյի վճռին եւ ընդհանրապէս, ամէն տեղ բացակայ է եղել դիւցիպլինա ասած բանը:

Չարիքն ուղղելու համար մի քանիսն առաջարկում էին փոխել կազմակերպութեան ձեւը, այսինքն՝ դիմել կենտրոնացման. սակայն, այդ առաջարկութիւնը մերժուեց այն հիման վրայ, որ անցեալի թերութիւնները եւ սխալները առաջ են եկել ոչ թէ կազմակերպութեան ձեւից, այլ թիւրիմացութիւններից, անտարբերութիւնից եւ կամ բոլորովին այլ պատճառներից: Դրանից յետոյ Ժողովը լուրջ քննութեան ենթարկեց այդ ցաւալի իրողութեան բոլոր շարժառիթները եւ երկար վիճարանութիւններից յետոյ, կայացրեց հետեւեալ որոշումները. —

- 1) Կազմակերպել մի ուժեղ խմբագրութիւն «Դրօշակ»ի համար, որպէսզի նրա անդամներից մէկը ժամանակ առ ժամանակ շրջագայի արտասահմանում, կազմակերպի նորանոր խմբեր, բանակցի զանազան գործիչների, հրապարակասուների հետ եւ առհասարակ աշխատի վառ պահել հայկական բողոքը եւ աւելի ու աւելի զրգուր Եւրոպայի հետաքրքրութիւնն ու մարդասիրութիւնը: Այդ խմբագրութիւնը միեւնոյն ժամանակ լինելու է ամբողջ «Դաշնակցութեան» արտասահմանեան ներկայացուցիչ-բիւրօն: Այդ հարցի վերաբերմամբ Ժողովը լիազորութիւն տուեց Մեծ Քաղաքի(1) կոմիտէին, որպէսզի նա խորհրդակցելով Ոսկանապատի(1) եւ մեր արտասահմանի ընկերների հետ, ընտրէ խմբագրութեան անդամներին:
- 2) Բիւրօյի (Ռուսաստանի) անդամների թիւը (6) թողնել անփոփոխ, միայն Արարատի (տեղացիների ցանկութեամբ) ձայնը տալով վերջստանին:
- 3) Բիւրօյի իւրաքանչիւր անդամ պէտք է ընտրուի մի տարի ժամանակով:
- 4) Բիւրօն կարող է հրաւիրել մի նուիրուած մարդու, որը մշտապէս ապրի Մեծ Քաղաքում, մերթ ընդ մերթ շրջագայէ՝ կատարելու Բիւրօյի այս կամ այն յանձնարարութիւնը:
- 5) Թէ՛ Բիւրօն եւ թէ՛ բոլոր կոմիտէները պարտաւոր են իրագործել Ընդհանուր Ժողովի որոշումները. հակառակ վարուողը պատասխանատու է:
- 6) Եթէ հարկաւոր եղաւ այս կամ այն որոշման մէջ քիչ փոփոխութիւն մտցնել, այն ժամանակ Բիւրօն կարող է այդ անել, միայն նախապէս խորհրդա՝: ցելով գործողութեան տեղի կոմիտէի հետ եւ այնպէս, որ այդ փոփոխութիւնը չհակասի գործունէութեան ընդհանուր ընթացքին:
- 7) Գործիչներին դերեր յանձնելիս Բիւրօն կամ համապատասխան կոմիտէն պէտք է ամենաառաջին նշանակութիւնը տան նրա անհատական ընդունակու-

թիւններին եւ դրանց համեմատ էլ կայացնեն իրենց որոշումը, որին անպայման հպատակուելու է գործիչը:

8) Ընդհանուր Ժողովը լիազորութիւն տուեց երկու Բիւրօներին եւ Կուսածաղիկի Կենտրոնական Կոմիտէին(6), որպէսզի նրանք հարկաւոր եղած դէպքում փոխադարձ խորհրդակցութեամբ բանակցեն այս կամ այն պետութեան, այս կամ այն քաղաքական գործիչի հետ, պատասխանեն նրանց հարցերին ու առաջարկութիւններին եւ նոյնիսկ որոշումներ ու վճիռներ կայացնեն ամբողջ «Դաշնակցութեան» կողմից(14):

9) Բոլոր կոմիտէները եւ գործիչները պարտաւոր են ուշի ուշով ուսումնասիրել «Դաշնակցութեան» Մըրազիրն ու գործել նրա ոգուն համեմատ:

10) Առաջիկայ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի Մեծ Քաղաքում(1), եթէ արտակարգ հանգամանքներ չպատահեն: Այդ Ժողովին մասնակցողներին պիտի որոշէ եւ հրաւիրէ Բիւրօն, ի հարկէ, նախապատուութիւն տալով գործունէութեան որակին:

7. Ընդհանուր հաշուետուութիւն — Ժողովում կարդացուեց «Դաշնակցութեան» տարեկան ընդհանուր հաշիւը. սակայն, անհնարին էր որոշ գաղափար կազմել ամբողջ մուտք ու ելքի մասին, որովհետեւ շատ տեղերից կամ բոլորովին հաշիւ չէին ուղարկել, կամ միայն մի կիսամեակի հաշիւն էին ներկայացրել: Ահա այդպիսի անախորժութիւնների առաջն առնելու համար Ժողովը որոշեց.

- 1) Բոլոր կոմիտէներին յիշեցնել կանոնաւոր հաշուետուութեան պարտաւորութիւնը:
- 2) Իւրաքանչիւր կոմիտէ նախապէս պիտի վերջատուզէ իր հաշիւները եւ ապա ուղարկէ առանձին ստորագրութեամբ:
- 3) Մրանից յետոյ հաշիւ պիտի տան նաեւ արտասահմանի եւ Տաճկաստանի կոմիտէները, որպէսզի գաղափար կազմենք մեր ոյժի մասին:
- 4) Իւրաքանչիւր կոմիտէ իր ռայոնի հաշիւը պիտի ուղարկէ իր ժամանակին՝ մօտակայ Բիւրօյին:
- 5) Բիւրօն բոլոր հաշիւները պիտի ուղարկէ «Դրօշակ»ի խմբագրութեան, արխիւում պահելու համար:

8. Այլեւայլ հարցեր — Բացի վերոգրեալներից, Ժողովում քննուեցին նաեւ ուրիշ մի քանի հարցեր, սակայն, դրանք մասնաւոր ռայոնական բնաւորութիւն(15) ունէին, ուստի եւ արձանագրութեան մէջ չմտան: Ի միջի այլոց, խօսուեց «Դրօշակ»ի զանազան թերութիւնների, արժանիքների եւ ընդհանուր ուղղութեան մասին, բայց որովհետեւ խմբագրութեան ներկայացուցիչը բացակայ էր, այդ պատճառով Ժողովը անտեղի համարեց աւելի երկար կանգ առնել եւ մի որեւէ որոշում կայացնել այդ հարցի մասին:

Յայտնուեցին միայն մի քանի դիտողութիւններ, որոնք ուշադրութեան պիտի առնուին ապագայում:

Այդ բոլորից յետոյ Ժողովը փակեց իր պաշտօնական նիստերը, հաստատ յոյս ունենալով, որ բոլոր որոշումները հաւանութիւն կը գտնեն նաեւ բացակայ ընկերների կողմից, մանաւանդ որ այդ որոշումները կայացնելիս մեծ նշանակութիւն է տրուել բուն Երկրից ստացած տեղեկութիւններին, յեղափոխական գործին մօտիկ անձնաւորութեանց նամակներին, բանաւոր կարծիքներին եւ այլն:

Ստորագրութիւններ մերկայացուցիչների

| | | |
|-----------------------|--------------|-------------------|
| Բերդիկի | ԱՏՐՆԵՐՍԵՀ Ս. | ԱՐԱՄԵԱՆ |
| Վրէժստանի | | ՎԱՀԱՆ |
| Մովսիսի եւ Գաղթավայրի | | ԿԱՐԷՆ(16) |
| Նաւահանգստի | | ՋԱԼԷՆ |
| | | ՆԻԿՕԼ |
| Քարաժայռ | | ԿԱՐԱՄԵԼԻՔ |
| Քարտտի | | ՌԵՏՈՒՆԻ-ՂՈՒԿԱՍԵԱՆ |
| Արարատի | | ՕՆԻԿ |
| Նուխազի | | ՄԻՐ-ՊՈՒՇԿԻՆ |
| Ապառաժի | | ՏՕՆԻ |
| Հիւսիսակերտի | | ԱՐՄ. ԲՐԵՆ |
| ՍՄԲ ՕՀ.(17) | | |
| ԼԱԼԻԿ | | |
| Շատախի | | ՎԱՐԴԱՆ(18) |

- 1.— Կուսակցական Մարմիններու կամ շրջաններու ծածկաւորներ.—
- Վրէժստան կամ Վրէժ՝ Արքայապետական. Մրգաստան՝ Երևան.
 - Մովսիս՝ Տրապիզոն.
 - Նաւահանգիստ՝ Պարսիւ.
 - Գաղթավայր՝ հաւանաբար երբևէ կամ Սեւծովեան այլ շրջան մը.
 - Ապառաժ՝ Լեռնային Ղարաբաղ.
 - Հիւսիսակերտ՝ հաւանաբար Ս. Փէրքապուրի.
 - Նիստա՝ արդեօ՛ք Նիստաբիճոտար (Հիւս. Կովկաս).
 - Ոսկանապատ կամ Ոսկանայր՝ Պարսիւ.
 - Քարտտ կամ Քար՝ Ալեքսանդրապոլ.
 - Բերդիկ կամ Զրաքիք՝ Պարսիւ.
 - Մեծ Քաղաք՝ թիֆլիս:
- 2.— Կ'անդամների Օսմանեան Դրամաստան գրամում:
- 3.— Յրաններէ բառ, — բարեկարգումներ:
- 4.— > > > փուլ:
- 5.— > > > դիւստագիտութիւն:
- 6.— Կուսակցակի կամ վիշապ, — Պալայ կուսակցական ծածկաւորներ:
- 7.— Յրան. բառ, — գործելակերպ, գործունէութեան եղանակ:
- 8.— Կուսակցական տեղամուկ, — շարունակութեան զանաւոր վրէժ է ըլլայ կարելի Տարած անցում գիծ մը, հաւանաբար Ալաշկերտի վրայով:
- 9.— Բարձրաւանդակ, — Մասնայ կուսակցական ծածկաւորներ:
- 10.— Շամ, Շամիր կամ Շամիրամ, — վաստակաւոր կուսակցական ծածկաւորներ:
- 11.— Այս որոշումներու գործակալացումը կազմեց, ժողովէն վեց անոն հա՛մ, համապարօտ արշաւանքը: «Դիւստ»ի Բ. հատորին մէջ կը գտնուի համապարօտ արշաւանքի վերաբերեալ այլ փաստա-

բաղադր, ինչպէս՝ Արիստակէս Ջորանի, Քրիստոփորի եւ Արեւելիան Բիւրոյի մասնակցները, Աստղագիտական կ. Կոմիտէի մէկ ճիւղը, ինչպէս նաեւ Բիւրոյի մերկայացուցիչ Յարթ. Շահրիկեանի եւ արշաւամբի գիմուտական զեկավարներ՝ Իշխան Յ. Արշալույսեանի եւ Վարդանի վերաբերեալ գրութիւններ, որոնցմէ աւելեւ կարեւորներն մէկն է Վարդանի մասնակց ԴՌՇԱԿի եղբւրջաբան՝ արշաւամբէն ետք (տեսնել Վիւսնի Վիւսնի Հ. Յ. Դաշնակցութեան, Բ. հասար, էջ 94-97):

12.— Լեւոնակոյր, — Կիլիկիոյ կուսակցական ժածկաւորներ, Գառաժայր, — Տերապիսի շրջանը:

13.— Թեւոսեան Բառ, — Կարգապահութիւն:

14.— Թեւոսեան 1896-97-ի այս համագումարին ընդհ. ժողովի բնօրէն խնդրոյ առարկայ դարձնողն ու մերժողը առաւելաբար ԴՌՇԱԿի եւրոպայեան կէտեր, սակայն փաստորէն այս ժողովին սկզբնաւորէն ինքնաբերական դարձաւ Արեւմտեան Բիւրո: Տարիակէս ետք, Բ. ընդհ. ժողովը պիտի վաւերացնէր այդ կոչումն ու անոր կազմում իրաւասութիւնները: Այստեղ կը տեսնենք նաեւ՝ որ Բիւրոներն ու կարեւոր կեդր. Կոմիտէի մը հաւաքական եւ հիմնական պատասխանատուութիւններ կը տրուին, — ինչ որ նախապէս Դաշնակցութեան Կամօր Ներկայացնող Մարմինն ու Հ. Յ. Դ. երկուքն ալ յետագայ կազմութեան:

15.— Բաշնակցական բնաւորութիւն, — շրջանային բնօրէն:

16.— Ծաղկաբոյս (Տրապիզոն) մերկայացուցիչ Կարէնը, եթէ շրջան չկայ տեղամասներն ու անձնակազմներն իրաւասութեան մէջ, Արամ Յակոբեանն է, մեր ամենահին յեղափոխական գործիչներէն, որ պիտի մասնակցէր Բ. ընդհ. ժողովին՝ իրեն Նաւահանգիստի (Պաթուսի) պատգամաւորն ու, 1901ին, Դաշնակցութեան Կամօր Ներկայացնող Մարմին Ֆիլիպէի ժողովին՝ իրեն անձամբ եւ մերկայացուցիչ Պալոյ Պատասխանատու Մարմին:

17.— Մարտ Օհանեան կամ Անտոն, — Սիւննի Զուարթնոսի կուսակցական ժածկաւորները: Զուարթնոս, ամենայն հաւանականութեամբ, ժողովին կը մասնակցէր իրեն Բիւրոյի մերկայացուցիչ:

18.— Խառնատրի վարդաբը (Մարգիս Մեծապետան):

7.— Հ. Յ. Դ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՒԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Գրուած գաղտնի մելամուղ, Վազգէնի ձեռագիր (Տիգրան Տէրայեան):

Դաշնակցութեան Վասպուրականի Կեդր. Կոմիտէն, չունենալով ոչ մէկ դիւրութիւն ուղարկելու ընդհ. ժողովին իր յատուկ պատգամաւորը, գրաւոր կերպով կը յայտնէ իր կարծիքները:

Մեր լրատու դիւրաւոր հարցերը լինելու են՝ գործունէութեան նոր տակտիկան եւ միութեան խնդիրը:

Գործունէութեան մասին մեր կարծիքն է՝ եղած պատրաստի ուժերով կոչելու շարունակել անընդհատ: Յոյսեր, շարժումներ անպակաս անել թէ՛ քաղաքներու եւ թէ՛ գաւառներու մէջ: Նոր շարժումներու համար պատրաստուիլ եւ Պոլսի մէջ, որտեղի շարժումները ամենէն աւելի մեծ արձագանք կը գտնեն աշխարհի մէջ: Փորձերը ցոյց տուած են այս:

Ամէն ջանք թափել ուղարկել ու դիմադրել ներմուծել գաւառները, որոնք ապստամբական մեծ շարժումներու ժամանակ շատ գործ կարող են կատարել:

Տէրրորը, անհատական գործունէութիւն, որ շատ տեղեր աւելորդ համարուած է, մեր շրջանակի համար անհրաժեշտ է միշտ իր բարոյական բարձր ազդեցութեան համար:

Մեր կարծիքով, շատ աղէկ կը լինի իրազործել 96ի համար գծուած ծրագրի գոնէ մէկ մասը, Պոլսի, Տրապիզոնի, Էրզրումի եւ Վանի բաժինը: Բացի Պոլսէն, մնացած տեղերու համար պատրաստուած ուժերը կը մնան անարատ: Եթէ իրագործուի այդ ծրագիրը, կարելի է ուղղակի ազատ դրօշակ պարզել Վասպուրականի հարաւային լեռնոտ գաւառներու վրայ, ուր կեդրոնանալու է մեր եւ Էրզրումի ուժերու մեծ մասը: Միայն նախապէս պաշարի պատրաստութիւն պէտք է տեսնել:

Իսկ եթէ հնար լինի ասորիներն ալ ոտքի հանել միաժամանակ, մէկ խօսքով կարելի է ասել մեր հարցը իր վերջնական լուծումը կը ստանայ: Ասորեստանի համար պէտք է ազդեցիկ միջոցներ ձեռք առնուին, ոչ թէ նախորդ տարուան նման ծիծաղելի միսսիա մը պատրաստուի: Այդ ինչն իրեն յայտնի էր, որ անյաշողութեան պիտի հանդիպէր: Մեզ երբեք յայտնի չէ՛ ինչ արդիւնք ունեցած է այդ միսսիան:

Դիւր-Տիւրքը(1) պատրաստ է շարժուել ամէն բոլոր: Միայն կայծ մը պէտք է տալ եւ 4,000 հրացանաւորներ (ոչ փամփուշտաւոր) Միլիթներու առաջնորդութեամբ ոտքի կը կանգնին: Մարշլմոն նշանակութիւն չունի անոնց մօտ, միայն Միլիթներ են: 96ի մէկ փորձը դարձեալ ցոյց տուաւ ասորիներու կտրուութիւնը:

Վանի մեծ կուռնի վերջ ջերդեր կը յարձակին Դիւր-Տիւրքի քանի մը գիւղերու վրայ եւ կը թալանեն: Միլիթներ քանի անգամ կը բողոքեն տաճիկ կառավարութեան. երբ անխելի կը մնայ, իրենք անմիջապէս կը յարձակին ջերդերու վրայ, աւելի շատ գիւղեր կ'աւերեն, կը թալանեն եւ կը նստին ջերդ գիւղերու մէջ: Տաճիկ կառավարութիւնը Վանէն զօրք ուղարկեց անոնց վրայ, Միլիթներ քաշուեցան իրենց անառիկ երկիրը եւ պատրաստուեցան կուռելու կառավարութեան դէմ: Այդ ժամանակ տեղի ունեցաւ Վանի Սեպտ. 11ի (հ. տ.) մեր նշանաւոր կոչիւր: Կառավարութիւնը անմիջապէս զօրքերը ետ կանչեց, մէկ մասը սահմանազուլիս ճամբեց, մէկ մասը ներս բերաւ: Կառավարութեան սոսկումը ծայրայեղ էր այդ ատեն:

Ասորեստանի մասին պատասխանատու է միմիայն պարսկական Բիւրօն, որ ունի ամէն դիւրութիւններ եւ ցարդ անտարբեր մնացած է(2): Պարսկաստանի Բիւրօնի թուլութիւն, անտարբերութիւն՝ Վասպուրականի կոմիտէի համար ալ շատ ծանր նստած է, մանաւանդ 96ի մէջ: Մինչեւ հիմա կանոնաւոր յարաբերու-

թեան միջոց մը պատրաստուած չէ: Թերթեր, բրոշիւրներ կու գան ու կը մնան այնտեղ: Բաւական դիմադրել, ահազին զիրքեր դեռ 95էն կը մնան Պարսկաստան: Երբեք փորձ մը շարունեցաւ զանոնք փոխադրելու մեզ մօտ, որ, ի հարկէ, շատ-շատ կարեւոր է: Մեր անմահ ընկերոջ Պետոյի նահատակութենէն ետք՝ կը չփութին ու կը չփութին եւ չեն կրցած տակաւին ներկայացուցիչ մը ուղարկել Վասպուրականի կոմիտէի համար, որու պէտքը չափազանց զգալի է: Ոչ միայն մէկ, անհրաժեշտ են մեզ համար քանի մը ինտելիգենտ ուժեր: Այս ուժի պակասութեան համար գաւառները բոլորովին երեսի վրայ մնացած են: Տեղական ինտելիգենտ ուժեր չկան. պարզ է, պէտք է անպատճառ դրսէն գան. ուրիշ ճար չկայ:

Ժողովուրդը իր դրամով զինելու փորձեր եղան մեր կողմէն, որպէսզի կուսակցութիւն չպարտաւորուի իր ամբողջ ուժերը զոհել ժողովրդի պաշտպանութեան եւ կարողանայ ազատ գործել: Սակայն, Բիւրօն բոլորովին թոյլ մնաց եւ այս մասին 95ի աշնան եղած կարգ մը յանձնառութիւններ զէնքեր զնելու համար՝ ցարդ անկատար կը մնան:

96ի մեծ կուռի ժամանակ, Դաշնակցութիւն ամենէն փոքր տեղ կը բռնէր գրեթէ, մինչդեռ պատրաստի ուժեր անգործութեան մատնուած էին Պարսկաստանի մէջ:

96 Սեպտ. 11ի կուռի հերոսները, իրենց ասածով, գրեթէ ըմբոստութեամբ եկած էին մեզ մօտ, որովհետեւ Բիւրօն չէր համաձայնած: Մինչդեռ այդ ահեղ կուռի արդիւնքն է, որ ժողովուրդը եւ մասնաւորապէս Դաշնակցութիւն իր գոյութիւնը կը պահպանէ Վանի մէջ: Ու անոր փառաւոր արդիւնքը պարծանք եղաւ յեղափոխութեան, սոսկացնելով տաճիկ կառավարութիւնը, խուժանը եւ բոլոր ջերդերը:

96ի Վասպուրականի կոտորածներ, թէեւ մեր շատ մը ծրագիրները օղը ցնդեցուցին եւ ժողովուրդը ամէն տեղ ալ լքաւ մեզնէ առժամանակ, բայց Սեպտ. 11ի կուռի ժողովուրդը յեղաշրջեց: Նա նորէն սկսեց կենդանութիւն ստանալ, յուսահատները սիրտ առին եւ ոգեւորութիւնը հետզհետէ ընդհանուր դարձաւ: 96 Դեկտ. 7ի տեղական ընդհանուր ժողովէն յետոյ ընտրուեցաւ Դաշնակցութեան Վասպուրականի Կեդրոնական Կոմիտէն: Ժողովրդի ոգեւորութիւնը մեզմով եղաւ եւ անոր միակ ուշադրութիւնը դէպի մեզ է — դէպի Դաշնակցութիւնը: Գաւառական վարչութիւններ սկսած են իրենց կանոնաւոր յարաբերութիւնը Կեդր. Կոմիտէի հետ. ափսո՛ս, անոնց կենսական պահանջները ոչնչով լրացնելու անկարող ենք: Նոյնիսկ Թերթ չենք կրնար հասցնել, որ շատ մեծ տեղ կը բռնէ: Մեր ստացած Թերթերը մէկ կամ երկու օրինակ կը լինին, այն ալ ոչ թէ Բիւրօնէն, այլ Տաճկաստանի կոմիտէներէն: Մեր անկեղծ շնորհակալութիւն Տաճկաստանի երեք կոմիտէներուն, որոնք ամէն բոլոր պատրաստ

գտնուած են մեր պահանջները լրացնելու՝ իրենց կարողութեան չափով, յարաբերութիւն պահպանելով, Թերթեր, լուրեր հաղորդելով եւ այլն:

Հին դրութիւնը փոխուած է մեր կողմեր. այժմ աւելի կարելի է գտնել ժողովրդի մէջ անկեղծութիւն եւ հարազատութիւն դէպի յեղափոխական սուրբ գործը: Ուժեր, գաղափարական, փորձուած ուժեր անհրաժեշտ են մեզ, լրացնելու համար կոմիտէի եւ կազմակերպութեան պահանջները: Անհրաժեշտ են եւ այն պատճառով, որ մէկ անգամով մաքրուած Հնչակեաններ եւ Արմենականներ վերստին գոյութիւն չունենան մեր մէջ:

Յունիսի մեծ կուռնի յետոյ, Արմենականներ եւ Հնչակեաններ իրենց գոյութիւնը կորսնցուցին: Դաշնակցութիւն միակ կարողացաւ իր գոյութիւնը պահպանել:

Կոտորածներու ազդեցութիւնը՝ երկու կուսակցութեանց վերցուելէն զատ՝ ջիշ նշանակութիւն ունեցաւ ժողովրդի համար: Նա պատրաստ է դարձեալ եւ մեր գաւառական ընկերներ ազատ մնացած են ամէն տեղ. Շատախ իր տրամադրութեամբ փրկուեցաւ, Մոկս ազատ է: Գաւառ, Կարճկան թէեւ շատ զոհ տուին, բայց նորէն կան, իրենց տեղն են: Խիզան, Սպարկերտ, Կարկառ այս տարի չկոտորուեցան: Արճէշ միայն քանի մը գեղեր ծանր կորուստ կրեցին կոտորածէն: Արճիկէն ազատ է:

Երեւանի կոմիտէն եթէ յանձն առնէ, այս տարի կարելի է իրագործել եւ Արճէշ-Արծկէի համար գրծուած ծրագիրը: Որովհետեւ Արճէշ-Արծկէի տեղական վարչութիւն խուժար պատրաստած ճամբայ պիտի հանէր, երբ կոտորածն սկսեց:

Միութեան հարցին գալով՝ մեր շուրջը գտնուած երկու կուսակցութեանց մասին յայտնեցինք վերը: Կոտորածէն առաջ ալ Արմենականներ եւ Հնչակեաններ միակ քաղաքի մէջ գործ ունէին. գաւառները բոլոր մեզ հետ էին: Այժմ քաղաքի մէջ ալ չկան եւ, ինչպէս յայտնեցինք, եթէ ունենանք գաղափարական գործիչներ, բոլորը մեզ հետ կը լինեն: Ժողովրդի տրամադրութիւնը աղէկ է դէպի յեղափոխութիւն եւ դէպի Դաշնակցութիւնը:

Լսելով Հնչակեաններու ներքին երկպառակութեանց մասին՝ մենք չենք կրնար որոշ գաղափար կազմել միութեան խնդրի վրայ, եւ եթէ հարցը կնճռոտի, շատ տխուր հետեւանք պիտի ունենայ: Այս մասին ընդհանուր ժողովը կրնայ համոզուած գոյացնել իր մէջ, ի հարկէ: Մենք մեր գիտցածը միակ հաղորդեցինք:

Երիտասարդ Թուրքիային ամէն կերպով մօտիկնալ նպատաւոր կը լինի մեր կարծիքով. բաւական է, որ միութիւն անկեղծ լինի եւ ոչ օգտուելու համար սոսկ:

Երիտասարդ Թուրքիան գաւառներու մէջ ալ, ան-

շուշտ, իրեն համակրողներ ունի. թո՛ղ միջոցներ ձեռք առնուին եւ ամէն տեղ յարարերութիւն տեսնուի:

Հ. Յ. Դաշն. Վասպ. Կեղր. Կոմիտէի կողմէն՝

ՓԵՆՆԱ, ԱՐՏՈՍ, ՎԱԶԳԷՆ

23 Դեկտ. 1896, Վան

(1) Անկապած՝ յեզփոխակամ վայրի մը, շրջանի մը ծածկանուր. անորա՛յ:

(2) Պարսկաստանի կամ թուրքի Ռիբայի կապակցութեամբ՝ ըստ երեւոյթի շփոթ տիրած է 1895էն ետք, գէշ միջնէ 1896-97ի զՆեղի. յ-Ռայաթակամ ժողովը: Կամ, առ ճշտագն Արտապտակամի եւ Վասպուրականի Մարտիկները շրջամ մը շարունակած են վրէժ-ծի կեցր. Կամսուրն ճանչալ իբրեւ Ռիբո:

8.— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

(ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ)

1897 - 98 ՏԱՐԵԿԱՆ ՇՐՁԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

1897-98 Շրջանական ժողովը շարունակուեց 18 օր, որի ընթացքում կայացաւ 21 նիստ:

Ժողովը կազմուած էր Մայր, Գար, Զրարերդ, Արա, Միրզ, Ամուր, Ոսկեղջուր, Լուսամուտ, Նաւահանգիստ(1) կոմիտէներէ ընտրած ներկայացուցիչներից եւ հրաւիրուած այնպիսի գործիչներից, որոնք երկրում պատասխանատու գործեր են վարել, եւ Բիւրոյի երեք անդամներից:

Առաջին նիստի սկզբում Արա քաղաքի ներկայացուցիչի առաջարկութեամբ ժողովը ոտի կանգնելով յարգեց 1897 թ. ընթացքում Սուրբ Գործի համար նահատակուած ընկերների յիշատակը եւ յետոյ վճռեց միաձայն՝ յայտնել իր խորին յարգանքը Արշաւանքին(2) եւ Պոլսի ցոյցին(3) մասնակցողներին, որոնք հերոսական քաջութեամբ կատարեցին իրենց վրայ առած ծանր ու պատասխանատու պարտաւորութիւնը: Նաեւ յայտնել յատուկ շնորհակալութիւն Մինարէթի(4) հայ ժողովուրդին, որն ամենայն կերպ աջակցեց ու նպաստեց Արշաւանքի յաջողութեան:

Ա. Բ. Գ. Դ. նիստերում կոմիտէների ներկայացուցիչները ներկայացրին ժողովին բերանացի զեկուցում ու հաշիւ իրենց տեղական գործերի վերաբերեալ: Բոլոր ներկայացուցիչները շեշտում էին պատմական բոլոր լրջութիւնը եւ այն հակասական երեւոյթը, որ մինչդեռ մեր Ընկերութեան գործունէութիւնը երկրում օր ըստ օրէ զօրեղանում է, յեղափոխական տրամադրութիւնը ուսուսանողների մէջ թուլանում է, եւ առաջարկում էին ժողովին լուրջ կերպով զբաղուել այդ հարցով:

Զեկուցումներից երեւաց, որ բոլոր տեղերում, բացի Արա եւ Նաւահանգիստ քաղաքներից, 1897 թ. ընթացքում նիւթական միջոցները՝ համեմատած անցեալ տարիների հետ, պակասել են, մի քանի քաղաքներում, ինչպէս Գար, Զրարերդ եւ Ամուր, շատ զգալի կերպով:

Գործիչների թիւը բոլոր տեղերում շատ սահմանափակ է, մի քանի տեղերում փոխանակ մեծանալու, վերջին տարուան ընթացքում մինչեւ անգամ փոքրացել է, չնայած այն հանգամանքին, որ համարեա ոչ մի տեղ ուրիշ յեղափոխական կազմակերպութիւն, բացի Դաշնակցութիւնից, գոյութիւն չունի այժմ:

Ամենահայաշատ տեղերում անգամ համոզուածներ թիւը ամենաշատ տանտնակներով է հաշոււում, համոզուած յեղափոխական մասսա դեռ ոչ մի տեղ գոյութիւն չունի: Ամէն տեղ գործը առաջ է գնում միմիայն շնորհիւ առանձին անհատների, որոնց շատ մեծ դժուարութիւններով է յաջողում իրանց ետեւից տանել հասարակութեան աննշան փոքրամասնութիւնը: Մեծամասնութիւնը ընդհանրապէս անտարբեր է դէպի գործը եւ եթէ նպաստ տալիս է, այն էլ պատահաբար, ոչ այնքան ներքին դրդամբ, որքան դէպի գործիչները ունեցած անձնական յարաբերութիւնների շնորհիւ: Հասարակութեան որոշ մասը՝ բուրժուազիան եւ ապահովուած ինտելիգենցիան համարեա ամէն տեղ ոչ մի կերպով չէ նպաստում գործի յառաջդիմութեան եւ շատ անտարբեր է վերաբերում նրան: Ոմանք դէմ չլինելով յեղափոխութեան՝ դժգոհ են յեղափոխական գործը առաջ տանող կազմակերպութիւններից եւ այդ պատճառով իրենց հետ են պահում գործից, իսկ միւսները կարծում են, թէ այժմ անմտութիւն է շարունակել յեղափոխական ձեռնարկութիւնները: Հաւատ եւ համակրութիւն դէպի գործը նկատուած է, այն էլ ոչ այնքան բուռն չափերով, միայն հասարակ ժողովրդի խաւերում՝ արհեստաւորների, բանուորների, գործակատարների, մանր վաճառականների եւ զիւղական ամբոխի մէջ, որտեղ մուտք է գործում պրոպագանդան:

Վերջին տարուան նշանաւոր դէպքերը, ինչպէս Արշաւանքն(2) ու Պոլսի ցոյցը(3), թէեւ ամէն տեղ եւ ամէն շրջանում թողել են լաւ տպաւորութիւն, բայց այնուամենայնիւ առաջ չեն բերել երկարատեւ ոգեւորութիւն ու հաւատ դէպի գործի ցանկալի նպատակը: Հաւանական է, որ այդ դէպքերը աւելի խորը եւ երկարատեւ տպաւորութիւն կը թողնեն ժողովրդի վրայ, եթէ իր ժամանակին ամէն տեղ ինչպէս հարկն է Դաշնակցութեան օրգանի կամ այլ միջոցներով տեղեկութիւններ ու պատմութեան քննարկներ տարածուէին այդ դէպքերի մասին. ոչ մի տեղ այդ չի արուել. թերթը շատ դէպքերը լուրջութեամբ է անցել կամ տժգոյն է նկատաբերել. բացի այդ՝ նա քիչ թուով է տարածուել. շատ տեղեր նրա այն համարները, որոնց մէջ կան վեր-

ջին դէպքերի նկարագրութիւնները մինչեւ 97 թ. վերջը՝ դեռ մուտք չեն գործել. առհասարակ, պրոպագանդան ամէն տեղ ու ամէն շրջանում շատ թոյլ եւ անզոյն է եղել: Բացի ընդհանուր անյաջող պայմաններից, դրան քիչ չի նպաստել օրգանը, որը եղած պահանջներին շատ քիչ ու աննշան բաւարարութիւն է տուել ու իր կոչման բարձրութեան չի հասել դեռ: Յեղափոխական գրականութիւնը շատ աղքատ է, Դաշնակցութեան մի քանի հրատարակութիւնները, յեղափոխական բովանդակութիւն ունեցող բրոշուրները մեծ մասամբ վաղուց սպառուել են ու այլեւս չեն տարածուում հասարակական խաւերում: Շատ տեղերում, մանաւանդ զիւղերում, ժողովուրդը զաղափար ունի հայկական շարժման ու նրա նշանաւոր մոմենտների մասին միայն դաղթականների ու կամաւորների անշուք պատմութիւններից. կանոնաւոր ու գիտակցական յեղափոխական պրոպագանդան անհամեմատ աւելի մեծ օգուտներ կը տար, եթէ մուտք գործէր ու մշտական գիտութիւն ունենար այդ խաւերում: Այն տեղերում, ուր կան հայաշատ քաղաքներ ու զուտ հայաբնակ զիւղեր, նկատուած են շատ թոյլ կապեր զիւղերի ու քաղաքների միջեւ. կան տեղեր, նրանք մեծամասնութիւն են կազմում, որտեղ ոչ մի կապ գոյութիւն չունի, բազմաթիւ զիւղերում կազմակերպութեան ոչ մի նշոյլ չկայ, մի քանի զիւղերում թէեւ տեղի են ունենում ժողովարարութիւններ, բայց այդ էլ պատահական, միանուագ. շատ հազուադէպ զիւղերում կայ տեղական կոմիտէ, որը գործ է կատարում ու նիւթական միջոցներ է հայթայթում միշտ:

Սակայն, չնայելով հասարակութեան մէջ տիրող այդ ընդհանուր հիասթափման եւ մի տեսակ շուարած գրութեան, գործը ոչ մի տեղ դեռ չի մեռել, նուիրուած ոյժեր թէեւ քիչ թուով, բայց ամէն տեղ կան: Հասարակութեան այն շրջանները, որոնք հաւատում են գործին, ամէն տեղ, ինչպէս յայտնեցին ներկայացուցիչները, միաձայն կրկնում են, որ գործը պէտք է շարունակուի անընդհատ, որ յեղափոխութիւնը մեր պատմական կեանքի վերջին շրջանի բնական հետեւանքն է, որ նրան դադարեցնել ո՛չ հնարաւոր է եւ ո՛չ էլ ցանկալի:

Համարեա բոլոր տեղերից առաջարկում են մեծ ուշադրութիւն դարձնել Երկրի վրայ, կենտրոնացնել հնարաւորութեան չափ մեծ քանակութեամբ կուտելու նիւթական միջոցներ, ուժեր եւ գործիչներ այն կէտերում, որոնց մասին որոշում է կայացել անցեալ 1897 թ. Ընդհ. ժողովում: Յոյցերը Պոլսում հնարաւորութեան դէպքում միշտ ու ամէն տեսակ պայմանների մէջ ցանկալի են, քանի որ նրանց միջոցով կարելի է զգալի կերպով շօշափել եւրոպական շահերը եւ առաջ բերել նրա միջամտութիւնը. բացի Պոլսի ցոյցերից ցանկալի են այն միւս կէտերում, որտեղ իր շահերը կարող են շօշափել:

Արշաւանք կրկին կարելի է ձեռնարկել, եթէ հանգամանքներն այդ պահանջն են, եթէ նրա միջոցով կարելի լինի ներսի գործերին, երբ նրանք տեղի ունենան, աւելի մեծ ոյժ տալ, չլարել կառավարութեան ուժերը, որ նա չկարողանայ մի տեղի վրայ, ուր ծագած լինի ապստամբութիւնը, կենտրոնացնել իր ուշադրութիւնը: Բոլոր տեղերից առաջարկում են լուրջ ուշադրութիւն դարձնել Դաշնակցութեան օրգանի ու պրոպագանդի վրայ, բարեփոխել օրգանը, աւելի հետաքրքիր դարձնել նրան, տալ բազմակողմանի ընթերցանութեան նիւթ յեղափոխական բովանդակութեամբ, մատչելի դարձնել հասարակ դասի ընթերցողների համար, հարստացնել յեղափոխական գրականութիւնը զանազան տեսակի գրքոյկներով մեր եւ օտար կեանքից:

Ներկայացուցիչների զեկուցումներից յետոյ Բիւրոյի անդամներից մինը զեկուցում ներկայացրեց Բիւրոյի գործունէութեան մասին: 1897 թ. ընթացքում Բիւրոն իր գլխաւոր ուշադրութիւնը դարձրել է նոյն թուի Ընդհ. ժողովի որոշումների վրայ: Այդ որոշումներից յաջողուել է իրագործել Արշաւանքը, որը կատարուեց շատ յաջող կերպով, ու Պոլսի ցոյցը: Արտասահմանեան Բիւրոն, որը համաձայն Ընդհանուր ժողովի որոշման պէտք է կազմակերպուէր, գոյութիւն չստացաւ, քանի որ արտասահմանի ընկերները չհամաձայնուեցին ընդունել Ընդհանուր ժողովն իրեն ընդհանուր: Մի քանի պատճառաբանութիւնների թուում նրանք մատնացոյց են անում այն հանգամանքի վրայ, որ նրանց ներկայացուցիչը իր ժամանակին ներկայ չէ եղել Ընդհ. ժողովին, անմիջապէս չի մասնակցել նրա պարապմունքներին: Բիւրոն իւր կողմից ոչինչ չի խնայել համոզելու համար նրանց՝ ընդունել Ընդհանուր ժողովի այդ որոշումը, բայց անյաջող: Այդ թիւրիմացութիւնները բնականաբար դանդաղեցրել են արտասահմանի գործունէութիւնը եւ չեն բերել նրան այն հետեւանքներին, որոնք ցանկալի էին արտասահմանում տեղի ունեցած ցոյցերը կարող էին աւելի ազդու ու յաջող լինել, եթէ հէնց սկզբից այդ թիւրիմացութիւնները գոյութիւն չունենային: Երկրի ներսում աչքի ընկնող քայլեր չի յաջողուել անել, բայց կենտրոնացման համար որոշ նախապատրաստութիւններ արուել են: Թէեւ Մովսսարի հետ ուղղակի կապեր չեն հաստատուել եւ մինչեւ այժմ մարդ չի գնացել այդտեղ, բայց նիւթեր որոշ քանակութեամբ մտել են: Քարաժայռից Գեռին ստիպուած է եղել հեռանալ, թէեւ ժայռեցիների հետ հաստատած բարեկամական կապերը չեն խախտուել այնտեղ:

Շամիրի(5) հետ յարաբերութիւններ կան. այնտեղ ուղարկուած են որոշ քանակութեամբ մարտական միջոցներ, գործիչներ:

Բոլոր զեկուցումները լսելուց յետոյ՝ ժողովը զբաղուեց հետեւեալ ընդհանուր հարցերով:

Ա.— Ինչո՞վ պէտք է բացատրել այն հանգամանքը, որ նոյն ուսուսանող հասարակութիւնը, որ 90-91 թուականներին ոգեւորութեամբ էր վերաբերում դէպի յեղափոխական գործը, այժմ գրեթէ անտարբեր է:

Բ.— Որքա՞ն անկեղծ են այն ինտելիգենտները, որոնք մերժում են յեղափոխականներին օգնել, պատճառ բերելով որ իրանց համոզմունքով այժմ յանցանք է շարունակել յեղափոխական գործունէութիւնը Թուրքիայում:

Գ.— Որքա՞ն հիմնաւոր է նրանցից անկեղծների համոզմունքը:

Այդ հարցերի վերաբերմամբ ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան.—

ա) Ռուսահայ հասարակութեան հիասթափումը բացատրուում է մասամբ յեղափոխական կազմակերպութիւնների եւ գործիչների պակասութիւններով, մասամբ էլ եւ գլխաւորապէս այդ նոյն հասարակութեան ամբոխային եւ ստրկական հոգեբանութեամբ:

բ) Հակայեղափոխական ինտելիգենտների մէջ միանգամայն անկեղծներ չատ հազուադիւս են, իսկ մնացածները կամ ի բնէ աշրջանական աշխարհահայեացքի կուսակիցներ են, որոնք հիասթափուած յեղափոխական են ձեւանում, կամ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք յեղափոխութեան դէմ են խօսում՝ միայն իրանց գրպանի եւ անձի ապահովութեան տեսակէտից:

գ) Անկեղծ յեղափոխականների պատճառաբանութիւնները միայն ըստ երեւոյթի են հիմնաւոր եւ չեն դիմանում լուրջ քննադատութեան:

Որովհետեւ երկար կը լինէր արձանագրութեան մէջ յառաջ բերել այն հիմքերը, որոնցով ժողովը եկաւ այդ եզրակացութեան, որոշուեց այդ հիմքերը տպել առանձին եւ տարածել հասարակութեան մէջ:

Յետոյ, ի նկատի ունենալով պատմական բոլոր լրջութիւնը եւ այն հանգամանքը, որ թէ՛ մեր արտասահմանեան ընկերները եւ թէ՛ մեր շրջանի բոլոր կոմիտէները պահանջում են որքան կարելի է շուտ Ընդհանուր ժողով հրաւիրել, Շրջանական ժողովը վճռուեց, որ անհրաժեշտ է Ընդհ. ժողով հրաւիրել՝ որոշելով ժամանակը: Այնուհետեւ աչքի առաջ ունենալով զանազան հանգամանքներ եւ, ի միջի այլոց, խմբագրութեան ուղարկած գրութիւնը, ժողովը որոշեց առաջիկայ Ընդհ. ժողովը գումարել Սարուստանում(6) եւ կազմեց այն՝ շրջանների ու մարմինների ցուցակը, որոնք պէտք է ներկայացուցին ուղարկեն գումարուելիք Ընդհ. ժողովին: Այդ ցուցակի համաձայն, Սարուստանը բաժանուեց 10 շրջանի, որոնցից իւրաքանչիւրը պէտք է ուղարկէ մի-մի ներկայացուցիչ, Բիւրօն 2 ներկայացուցիչ, Սարուստանի ուսանողութիւնը 1 ներկայացուցիչ, Վրէժստան պէտք է ուղարկէ 2 ներկայացուցիչ: Սեւաստանից(7)՝ Շամիր, Մովսար, Մաղիկ, Ոսկեհանք մի-մի ներկայացուցիչ: Թրք-

բազրութիւն, Ամերիկա, Եւրոպա, Պալքանեան թերակղզի եւ արտասահմանեան ուսանողութիւնը՝ մի-մի ներկայացուցիչ: Բացի այդ, Բիւրօն պարտաւոր է հրաւիրել բոլոր այն գործիչները, որոնք Ընդհ. ժողովի ժամանակ կը գտնուեն Սարուստանում: Որոշուեց, որ այն մարմինը, որ չի կարող ներկայացուցիչ ուղարկել, կարող է ձայնը տալ գրաւոր կամ լիազօրութիւններ տալ ու՛մ որ կամենայ:

Բացի այդ, ժողովը կազմեց հետեւեալ հարցերի ցուցակը.—

1. Ընդհանուր ժողով.
2. Տակտիկա(8).
3. Կազմակերպութիւն.
4. Պրոպագանդա(9).
5. Դրամական դրութիւն.
6. Միութիւն:

Գննելով այդ հարցերը՝ ժողովը յայտնեց հետեւեալ կարծիքները եւ տուեց հետեւեալ որոշումները, որ անհրաժեշտ էր գտնուում առաջարկել Ընդհ. ժողովին ի քննութիւն:

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ոմանք պնդում էին, թէ Ընդհ. ժողովը պէտք է հրաւիրել միայն այն ժամանակ, երբ հանգամանքները այդ պահանջին, պատճառ բերելով այն, որ Ընդհ. ժողով գումարելու համար հարկաւոր է բաւական գումար ծախսել (ճանապարհածախսեր) գործիչներին որոշ ժամանակով հեռացնել գործից ու բռնուելու վրտանդին ենթարկել նրանց եւ այն, որ կարիք չի լինել Ընդհ. ժողով գումարել որոշուած ժամանակ: Միւսները, դրա հակառակ, պնդում էին, թէ պէտք է անպատճառ պարբերաբար Ընդհ. ժողով գումարել, որովհետեւ այդ ժողովն է միակ ձեռնհաս մարմինը վճռելու կարեւոր հարցերը եւ յարմարեցնելու մեր ընթացքը հանգամանքների պահանջի: Իսկ այժմ քաղաքականութիւնը այնպիսի արագ եւ դիւրափոփոխ ընթացք է ստացել եւ յեղափոխական գործը այնպիսի Փայտի(10) մէջ է, որ հեղինակաւոր որոշումներ անհրաժեշտ կը լինեն ամենաքիչը 1-2 տարին մի անգամ: Վիճարանութիւններից յետոյ 13 ձայնով 2ի դէմ որոշուեց Ընդհ. ժողով հրաւիրել պարբերաբար, որոշ ժամանակամիջոցներից յետոյ, իսկ հանգամանքների պահանջած ժամանակ՝ ե՛ւ որոշուած ժամանակամիջոցներից առաջ:

Այնուհետեւ քուէարկուեց այն հարցը, թէ քանի՞ տարին մի անգամ պէտք է Ընդհ. ժողով գումարել: 8 հոգի ցանկութիւն յայտնեցին, որ Ընդհ. ժողով գումարուի ոչ ուշ քան երկու տարին մի անգամ, իսկ 7 հոգի՝ տարին մի անգամ:

II ՏԱԿՏԻԿԱ

Ա. Յուցակամ գործունէութիւն եւ ուժերի կենտրոնացում.— Տակտիկայի վերաբերեալ գլխաւոր հարցերն էին ցուցական գործունէութիւն եւ ուժերի կենտրոնացումն Երկրի որոշ կէտերում, իբրեւ նախապատրաստութիւն ապագայ ապստամբութեան համար: Ժողովականներից երկու հոգի՝ մէկը երկրացի, միւսը Երկրում անմիջական գործ կատարած ուսուսանող, պնդում էին, թէ այդ երկու տեսակ գործունէութիւններից պէտք է ընտրել կամ մէկը կամ միւսը, որովհետեւ նրանք միմեանց խանգարում են՝ ջլատելով մեր առանց այն էլ սահմանափակ ուժերը. առաջինը, չըհերքելով Պոլսի միջեւ այժմ եղած ցոյցերի (մանաւանդ Օսմ. Բանկի գրաւման) անհրաժեշտութիւնը եւ օգտակարութիւնը, իբրեւ յեղափոխական գործունէութեան բնորոշ արտայայտութիւնների եւ դիպլոմատիայի վրայ ազդելու հիմնական փորձերի, գտնում էր, որ այսուհետեւ, այդ զօրեղ ցոյցերի եւ նոյնիսկ 100 հազար կոտորածների անհետեւանք մնալուց յետոյ՝ անմտութիւն է ցուցական գործունէութիւնը, եւ բերելով Կրետէի օրինակը, որ կարող է ազատութիւն յուսալ միայն այն պատճառով, որ չնորհիւ իր ներքին ուժերի ընդունակ գտնուեց ամիսներով դիմադրել, նա պնդում էր, թէ մեր միակ ելքն է այժմ ներքին ոյժ ձեռք բերել ապագայ երկարատեւ դիմադրութեան համար եւ այդ նպատակով ամէն ջանք թափել հետզհետէ բուն Երկրի մէջ որոշ կէտերում ուղղակի ոյժ կենտրոնացնելու (որի համար հարկաւոր կը լինի 8-10 տարի): Երկրորդը, ընդհակառակը, ապացուցնում էր, թէ ցուցական գործունէութիւնը երբեք այնքան անհրաժեշտ չի եղել, որքան այժմ եւ թէ գէնքերի կենտրոնացում բուն Երկրում այժմ անհնարին է: Նա պնդում էր, թէ այդ նպատակով տարիների ընթացքում ձեռնարկած փորձերը, չնորհիւ Երկրում տիրող անտանելի պայմանների եւ մեր միջոցների (թէ՛ մարդկանց եւ թէ՛ դրամի կողմից) չնչնութեան, իրանց նպատակին չեն հասնում, գէնքերը կորչում են, նոյն իսկ ծախուած են մեր թշնամիներին, կամ թէ բռնուած են եւ առաջ են բերում խիստ խուզարկութիւններ, ընդհարումներ, կողոպուտ, բռնութիւն, երբեմն՝ եւ կոտորած, որոնց հետեւանք լինում է աշխատանքի, դրամի եւ աչքի ընկնող ուժերի կորուստ եւ հարստահարուած ժողովրդի մէջ հազիւ նշմարուող յեղափոխական ողու թուլանալը: Կուուել երկրի մէջ մեր թըշնամու հետ այժմ մենք անկարող ենք. պատրաստուել կուուելու համար նոյնպէս չենք կարող, մինչեւ որ չի փոխուեն պայմանները, իսկ այդ պայմանները փոխուել կարող են միայն չնորհիւ այն ընթացքների(11), որոնց ծրագիրը մշակել են եւրոպական տէրութիւններ եւ որոնց իրազրծումը պահանջում են նրանք Թուրքիայի կառավարութիւնից: Այդ ընթացքներն են ներ-

կայ մոմենտի հարցը. նրանք մեզ խոստացուած են Եւրոպայի կողմից եւ մօտակայ միակ նպատակը պէտք է լինի մեր բոլոր ուժերը լարելով՝ պահանջել եւ ստանալ այդ ընթացքները: Իսկ այդ ընթացքները կարելի է ստանալ ոչ թէ երկար տարիներ լուռ ու մունջ պատրաստութիւններ տեսնելով, այլ կոխ մղելով, ցոյցեր անելով. այդ կուուում ոյժն ու յաջողութիւնը կարող է մեր կողմը լինել, եթէ նա մղուի ոչ թէ Երկրի խորքում, որտեղ մենք շատ թոյլ ենք, որտեղ մենք յաճախ յաղթուած ենք ու անխնայ, անպաշտպան կոտորում հետու Եւրոպայի հսկող աչքից եւ որտեղի մեր ամենափայլուն գործերը (96ի Վանի հերոսական կռիւը եւ 97ի յաղթական Արշաւանքը) մնում են գրեթէ անյայտ Եւրոպայի, այլ Թուրքիայի այն կէտերում, որտեղ մենք կարող ենք վնասել Թուրքիայի եւ Եւրոպայի շահերին՝ այնպիսի զօրեղ եւ ջիշ մարդ ու դրամ պահանջող գէնքի միջոցով, ինչպէս ուսումն են. այդ կրկնակի շահերին մենք կարող ենք վնասել ծովեզրեայ Թուրքիայում, իսկ տէրութեան մնացած կէտերում մենք կարող ենք կատարել միայն անհետեւանք հերոսութիւններ, որոնք կարող են նիւթ չինել վիպասանութեան, բայց ոչ նպատակ յեղափոխութեան: Ցոյցեր անհրաժեշտ է անել միայն այնպիսի կէտերում, ուր շօշափուած են Եւրոպայի շահերը եւ որտեղ շուտով կարելի է սպասել նրանից օգնութիւն. մնացեալ կէտերում նրանք միտք չունեն, իսկ գէնքերի կենտրոնացման կարելի կը լինէր դիմել միայն այն դէպքում, եթէ ընթացքները հերթական հարց չլինէին կամ եթէ արդէն մոռցուած լինէին եւ մենք մտադիր լինէինք ձգտել աւելի հեռաւոր նպատակներ: Որ ցոյցերը ունենում են ազդեցութիւն, ցոյց է տալիս այն հանգամանքը, որ Սուլթանի կառավարութիւնը դիմում է Դաշնակցութեան եւ խոստումներ անում՝ խնդրելով դադարեցնել ցուցական գործունէութիւնը: Ժողովականների մեծամասնութիւնը, սակայն, գտնում էր, թէ պէտք է շարունակել միաժամանակ ե՛ւ ցուցական գործունէութիւնը ե՛ւ ուժերի կենտրոնացումը: Այդ մեծամասնութեան կարծիքով ցուցական գործունէութիւնը չի կարելի դադարեցնել, որովհետեւ ցոյցերը անկասկած ազդեցութիւն գործում են Եւրոպայի վրայ եւ կարող են յաջողեցնել ընթացքներ(11) մտցնելը, մինչդեռ ուժերի կենտրոնացումը ըստ էութեան պէտք է գաղտնի պահուի եւ լուռ ու մունջ կատարուի այնպէս, որ եթէ մենք միայն կենտրոնացմամբ զբաղուինք, Եւրոպան կարող է հանդիստ ստանալ մեզ մոռնալ եւ հայկական հարցը մահու դի տակ դնել: Բայց եւ չի կարելի միայն ցոյցերով բաւականանալ, որովհետեւ նախ՝ կարող են եւ ցանկալի նպատակին չհասնել, այնպէս որ մեր յոյսը էլի կը մնայ Երկրի ներքին մասերի շարժումների վրայ, եւ երկրորդ՝ ցոյցերը այն ժամանակ են նշանակութիւն ունենում, երբ ենթադրուում է, թէ յենուում են

Երկրի ժողովրդի եւ ուժի վրայ: Եթէ Եւրոպան, երբ մենք նրա շահերին ցոյցերով վնասում ենք, բարեխօս է հանդիսանում մեզ համար Թուրքիայի առաջ եւ ստիպում է նրան ուշադրութիւն դարձնել մեզ վրայ, այդ նրանից է, որ հիմնաւոր է համարում մեր պահանջները եւ մեզ վրայ նայում է իբրեւ ամբողջ ժողովրդի ներկայացուցիչների վրայ, հակառակ դէպքում նա կարող էր միանալ Թուրք կառավարութեան հետ եւ կռուել մեզ հետ՝ իբրեւ իր շահերին վնասող տարրի հետ: Բացի այդ, Երկիր փոխադրուած զէնքերից մի մասը ճիշդ է, կորել է, բայց միւս մասը տեղ է հասել եւ արդէն օգուտներ է տուել բնակչութեան (տեղ-տեղ զերծ պահելով նրան կոտորածից), որ այժմ աւելի է սկսել հասկանալ զէնքի գինը եւ առանց մեզ էլ ձգտում է ձեռք բերել զէնք. այնպէս որ կենտրոնացումը այսուհետեւ աւելի եւս յաջողութեամբ կարելի է կատարել, եթէ, մանաւանդ, հարկ եղած ուշադրութեամբ և եռանդով սկսենք վերաբերուել այդ գործին: Վիճարանութիւններից յետոյ ժողովը բոլոր ձայներով 2ի դէմ վճռեց առաջարկել Ընդհ. ժողովին շարունակել ցուցական գործունէութիւնը եւ զէնքերի կենտրոնացումը զուգընթաց, թողնելով Բիւրօներին, հանդամանքների պահանջի համաձայն, թէ ուժերի ո՛ր մասը պէտք է ցոյցերի վրայ գործադրուի եւ ո՛րը կենտրոնացման:

Բ. Բարեկամութիւն Երկրում ապրող միւս ցեղերի հետ եւ յարաբերութիւն թուրքապատակ ուրիշ ազգերի յեղափոխական կազմակերպութիւնների հետ. — Թէ՛ ազգերի ու ցեղերի համերաշխութեան տեսակէտից եւ թէ՛ գործի յաջողութեան տեսակէտից, ժողովականները բոլորը ցանկալի էին համարում բարեկամական յարաբերութիւններ պահպանել բուն Երկրում ապրող ուրիշ ցեղերի հետ, սակայն, բոլորն էլ ցաւելով խոստովանում էին, որ Թուրք ժողովրդի հետ այժմ հայերին համերաշխ լինել անկարելի է, քանի որ նրանց բաժանում է այնքան արիւն եւ վիրաւորանք: Քրդերի վերաբերմամբ ոմանք նոյն կարծիքին էին եւ պնդում էին, թէ հայերի եւ Թուրքերի կռոււած զէրդերը Թուրքերի կողմը կը լինեն եւ եթէ ոչ միշտ ինքնաբերաբար, գոնէ նրանց հրամանով կը կոտորեն ու կը կողոպտեն հայերին, որովհետեւ զրդերը միշտ իրանց շահը ի նկատի կ'ունենան եւ դաշնակից կը լինին զօրեղ հարստահարողին եւ ոչ թէ թոյլ ապստամբին, լաւ իմանալով, որ հակառակ դէպքում, Թուրքերը իրանց էլ հայերի վիճակին կը հասցնեն: Ապրտամբին դաշնակից լինել եւ ապստամբել կարող են նրանք, որոնք դժգոհ են իրենց դրութիւնից, իսկ զէրդերը շատ լաւ են զգում իրանց այժմեան պայմաններում: Միւսները, ընդհակառակը, պնդում էին թէ զէրդերի գոնէ մի մասը կարող է շատ վստահելի եւ օգտակար դաշնակից լինել հայերին. եղիւնք եւ

ուրիշ շատ քրդական ցեղեր, որոնց մի մասը մահմետականացած հայեր կարելի է ենթադրել, բարեկամաբար են տրամադրուած դէպի հայերը եւ յաճախ, պաշտպան են հանդիսանում մեզ, իսկ ուրիշ քրդական ցեղերը (խօսքը համիտականների մասին չէ) մեզ դէմ գրգռում են կառավարութեան գործակալ մօլլաները հաւատացնելով, թէ հայերի նպատակն է ազատութիւն ձեռք բերելով բէկ դառնալ զէրդերի գլխին: Մենք էլ մինչեւ այժմ առանձնապէս չենք աշխատել ձեռք բերել զէրդերի բարեկամութիւնը, եւ մինչեւ անդամ յարձակումներ ենք գործել նրանց վրայ, մինչդեռ նրանք այնպիսի ոյժ են ներկայացնում Փոքր Ասիայում, որ արհամարհել չի կարելի եւ թշնամացնել վերին աստիճանի վտանգաւոր է:

Ասորիների եւ առհասարակ Թուրքահայատակ քրիստոնեաների վերաբերմամբ կարծիքների տարբերութիւն չկար: Ժողովականները համաձայն էին նոյնպէս եւ ուրիշ Թուրքահայատակ ազգերի յեղափոխական կազմակերպութիւնների հետ յարաբերութիւններ ունենալու հարցի վերաբերմամբ:

Վիճարանութիւններից յետոյ ժողովը որոշեց. —

1) (Միաձայն) Դիմել Թուրքահայատակ հայերին հարեւան բոլոր ցեղերին եւ նրանց լեզուով գրուած թուղթիկ թերթերով բացատրել մեր ծրագիրը, հասկացնելով, որ մեր նպատակն է ձեռք բերել Անքիմ ինքնավարութիւն հայաբնակ նահանգների համար, մի բան, որ չի խանգարում ուրիշ ցեղերին ճշտուելն ու հարստահարուելն(12):

2) (Միաձայն) Գրաւոր բանակցութիւններ սկսել եւ պատգամաւորութիւն ուղարկել ասորիների մօտ բարեկամական կապեր հաստատելու համար:

3) (Միաձայն) Յարաբերութիւններ սկսել Թուրքահայատակ միւս ազգութիւնների յեղափոխական կազմակերպութիւնների հետ համերաշխ գործակցելու համար:

Եւ 4) (Ձայների մեծամասնութեամբ) Դիմել Թուրքահայատակ բոլոր մեր վիճակակից ազգութիւններին բացատրելով, որ մեր նպատակն է ձեռք բերել Անքիմ ինքնավարութիւն հայկական նահանգների համար, եւ առաջարկել նրանց համերաշխ գործելով մեզ հետ, ձգտել այն նպատակին վերաբերմամբ, որտեղ իրանք են բնակչութեան կենտրոնական գերիշխող տարրը կազմում: (Փոքրամասնութիւնը դէմ էր, պընդելով թէ այդպիսի դիմումն շօշափելի օգուտներ չբերելով՝ կարող է նոյնիսկ վնասել մեր դատին: Աւելորդ հիմքեր տալով Թուրք կառավարութեան ձեռքը բնօրոմները չգործադրելու այն պատրուակի համար, որ առանց այն էլ նա առաջ է բերում Եւրոպայի դէմ, թէ բնօրոմներ հարկաւոր են ոչ միայն հայկական նահանգների համար, այլ եւ ամբողջ Թուրքիայի համար):

Գ. Արշաւանք դրսից. — Բոլորը համաձայն էին, որ Սարուստանի սահմանակից մասերում արշաւանքը կարող է վնասակար հետեւանքներ ունենալ մեզ համար, իսկ Վրէժստանի սահմաններից արշաւել գոնէ 2 տարի անհնար է, ինչպէս հեղինակաւոր կերպով պնդում էին անցեալ տարուան արշաւանքի բոլոր մասնակցողները:

Դ. Միմարէթի(4) պաշտպանութիւն. — Միաձայն որոշուեց 20 հոգուց բաղկացած խումբ ուղարկել Միմարէթ, որպէսզի տեղում դստուած նոյնքան մարդկանց հետ կազմակերպեն Երկրի պաշտպանութեան գործը:

III ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՓԻՒՆ

Ա. Բիւրօ եւ Արա յարաբերութիւնները կոմիտէների հետ. — Բոլորը համաձայն էին այն բանում, որ Բիւրօն հիմնուած լինելով Մրազրի համաձայն, իբրեւ լոկ տեղեկատու հիմնարկութիւն, իրերի բնական պահանջին համապատասխանելով դարձել է կիսավարչական մարմին, որ չէ հակասում ապակենտրոնացման սկզբունքին, որովհետեւ լաւ հասկացուած ապակենտրոնացումը դէմ չէ այնպիսի կենտրոնական հաստատութեան, որ չխառնուելով տեղական հարցերի մէջ եւ կատարեալ ազատութիւն տալով այդ հարցերում տեղական գործիչներին՝ հսկում է, սակայն, նրանց գործունէութեան, համաձայնեցնում է իրար հետ նրանց այն քայլերը, որոնք ընդհանուր նշանակութիւն ունին եւ առհասարակ նախաձեռնող է հանդիսանում և վարում է ընդհանուր գործը ծրագրի եւ Ընդհ. ժողովի վճիռների գծած սահմաններում:

Կենտրոնական մարմնի թուի մասին, սակայն, երկար վիճարանութիւններ եղան: Աննշան մեծամասնութիւնը (10 ձայն 9ի դէմ) պնդում էր թէ չպէտք է խիստ փոփոխութիւններ մտցնել եղած կարգերի մէջ, այլ պէտք է եղածը, որ երեւան է եկել իբրեւ բնական ծնունդ իրականութեան, աւելի եւս զարգացնել այն ուղղութեամբ, որ ցոյց է տալիս կեանքը: Այդ տեսակէտից նրանք անհրաժեշտ էին համարում թողնել 2 Բիւրօ՝ — մէկը Սարուստանում, մէկը՝ արտասահմանում, տալով նրանց կիսավարչական իրաւունքներ իրանց շրջանում (մի կողմից Սարուստան, Վրէժստան եւ Երկրի մի մասը, միւս կողմից արտասահման եւ Երկրի միւս մասը)(13):

Փոքրամասնութիւնը բաժանուած էր երկու մասի, մի մասը բերելով Միացեալ նահանգների եւ Շուէյք-ցարիայի օրինակները՝ պնդում էր, որ ապակենտրոնացման սկզբունքը դէմ չէ կենտրոնական վարչութեան եւ առաջարկում էր կազմել մի կենտրոնական վարչութիւն, որ ընտրուելով Ընդհ. ժողովից՝ կը վարի գործը այդ ժողովի վճիռների համաձայն: Միւս

մասը առաջարկում էր բաժանել Երկիրը մի քանի մասերի, նայելով թէ որքան կէտերում պատասխանատու գործեր կը լինեն կատարելու, նշանակել այնտեղ գործադիր պատասխանատու մարմիններ աչքի ընկնող տեղական եւ դրսի գործիչներից, տալ նրանց կենտրոնական Կոմիտէների իրաւունքներ, բաժանել բուն Երկրից դուրս եղած սահմանակից տեղերը այնպէս, որ նրանցից ամէն մէկը օժանդակիչ համարուի Երկրի շրջաններից մէկին, հիմնել այդ շրջաններին կից Բիւրօներ, որոնցից իւրաքանչիւրը կը հանդիսանայ օժանդակիչ իր Կենտրոնական Կոմիտէին: Պարտականութիւն դնել Կենտրոնական Կոմիտէներին եւ նրանց կից Բիւրօներին վրայ տանիլ գործը իրանց շրջանում Ընդհ. ժողովի վճիռի համաձայն եւ իրաւունք տալ նրանց ընտրել իրանց միջից մի-մի ներկայացուցիչ ամէն շրջանից (Կենտրոնական Կոմիտէն եւ կից Բիւրօն միացած), որոնք հարկաւոր դէպքում ժողովուելով կարողանան 1) հանդիսանալ ամբողջ կազմակերպութեան ներկայացուցիչ Եւրոպայի եւ Թուրքիայի առաջ, 2) վճռել այնպիսի ընդհանուր հարցեր, որոնք դուրս լինելով մի շրջանի իրաւասութիւնից եւ շօշափելով ուրիշ շրջանների շահերը, այնքան կարեւոր չեն լինի սակայն, որ պէտք լինի նրանց համար գումարել Ընդհ. ժողով:

Հետեւեալ ժողովում խօսք եղաւ նրա մասին, թէ տա՛լ արդեօք իրաւունք Բիւրօներին փոխել Ընդհ. ժողովի վճիռները հանդամանքների պահանջի համաձայն, այսինքն՝ չկատարել Ընդհ. ժողովի որոշածը եւ ձեռնարկել այնպիսի բան, որ չէ որոշուած Ընդհ. ժողովից: Միաձայն վճռուեց, որ այնպիսի դէպքերում, երբ այդպիսի արձատական փոփոխութիւն կարող է պահանջուել հանդամանքների փոփոխման շնորհիւ (դիցուք, յունական պատերազմի նման մի բան կամ ուրիշ ցեղի ապստամբութիւն), Բիւրօները պարտական են հրաւիրել Ընդհ. ժողով, եթէ այդ անկարելի լինի, գոնէ Երջանական ժողով: Յետոյ ձայները բաժանուեցին. 8 հողի այն կարծիքին էին, որ եթէ այնքան շտապով պահանջուի վճիռ, որ անհնար լինի գումարել նոյնիսկ Երջանական ժողով(14), այն ժամանակ Բիւրօները կարող են իրանք վճռել հարցը, պարտաւոր լինելով, սակայն, նախապէս նամակներով իմանալ մօտակայ կոմիտէների կարծիքները, առնել այն կոմիտէի համաձայնութիւնը, որտեղ կատարուելու է գործը, եւ արդարացնել իրենց վարժունքը յառաջիկայ Ընդհ. ժողովի առաջ. իսկ 5 հողի այն կարծիքին էին, թէ Բիւրօները առանց Ընդհ. կամ Երջանական ժողովի, իրաւունք չունին հիմնական փոփոխութիւն մտցնել Ընդհ. ժողովի վճիռների մէջ, այլ կարող են միայն երկրորդական փոփոխութիւններ մտցնել, այն էլ խորհրդակցելով պատասխանատու մարմինների կամ նրանց ներկայացուցիչների հետ: Այնուհետեւ որոշուեց՝ 1) (ձայների բացարձակ մեծամասնութեամբ)

որ Բիւրոյի անդամներին ամէն տարի ընտրում է Շըրջանական Ժողովը, 2) (ձայների մեծամասնութեամբ) որ Բիւրոյի անդամները չփոխուեն ամէն անգամ բոլորը միասին, այլ մի անգամ կանոնաւոր ընտրուելուց յետոյ, մաս մաս, այնպէս որ ամէն տարի դուրս գայ Բիւրոյի կազմութիւնից նրա փոքրամասնութիւնը նորից վերընտրուելու իրաւունքով, 3) (միաձայն) որ Բիւրոյի անդամները պարտական են իրանց ժողովներին հրաւիրել խորհրդակցական ձայնով պատասխանատու մարմինների անդամ եղած այնպիսի անձնաւորութիւնների, որոնք կարող են օգտակար լինել ընդհանուր հարցեր քննելիս, 4) (միաձայն) որ Բիւրոյի անդամները բոլորը լինեն մշտապէս միեւնոյն տեղում ապրող անձնաւորութիւններ, թուով առնուազն 5 հոգի, փոխանակ այժմեան կարգի, որի համաձայն Բիւրոյի անդամներից 3ը Մեծ Քաղաքում(15) են ապրում, իսկ միւսները զանազան հեռաւոր կէտերում, 5) (բոլոր ձայներով 4ի դէմ) որ Սարուստանում կնիք ունենայ միայն Բիւրոն (իսկ 4ը հարկաւոր էին գրտնում, որ ունենան բացի Բիւրոններից եւ սահմանակից Կենտրոնական Կոմիտէները), 6) (բոլոր ձայներով 3ի դէմ) որ տեղական մարմինները տեղական կարիքները հոգալուց յետոյ մնացած փողերը ուղարկեն Բիւրոյին կամ ուրիշ մարմինների, միայն թէ Բիւրոյի համաձայնութեամբ:

Բ. Սարուստանի Երջանակներ.— Որոշուեց բաժանել Սարուստանը 10 Երջանակների հետեւեալ կենտրոնական կէտերով.— Մեծ Քաղաք, Ոսկեղջիւր, Նաւահանգիստ, Աւազան, Քար, Զրաբերդ, Արա, Ամուր, Նալբանդ եւ Եկեղեցի(16):

Գ. Սարուստանի եւ Վրէժստանի(17) տեղակից եւ Կենտրոնական Կոմիտէների կազմակերպութիւնը, նրանց իրաւասութեան սահմանները եւ փոխադարձ յարաբերութիւնները.— Որոշուեց որ 1) տեղական կոմիտէները կազմուած լինին ընտրողական սկզբունքով, ինչպէս այդ պահանջում է Ընկերութեան ծրագիրը, 2) որ նրանց ընտրեն տեղական խմբերի ներկայացուցիչները, 3) որ այն քաղաքներում, որտեղ տեղական բուրժուազիան, որեւէ պատճառով չէ կարողանում գործել միւս տարրերի հետ միասին, այդ բուրժուազիայի ներկայացուցիչները կազմեն մի առանձին կոմիտէ (Երջանական Ժողովի ձայնի իրաւունքով) տեղական բուն կոմիտէի գիտութեամբ եւ այն պայմանով, որ գոնէ մի անձնաւորութիւն երկու կոմիտէների մէջ էլ անդամ լինի եւ նպաստի նրանց համեարաշխ գործունէութեան, 4) որ ամէն մի Երջանակի տեղական կոմիտէների ներկայացուցիչները հաւաքուելով կենտրոնական կէտում՝ ընտրեն այնտեղ Կենտրոնական Կոմիտէ, հետեւեալ կերպով. ամէն մի կոմիտէ պէտք է ուղարկի մի ներկայացուցիչ, իսկ կեն-

տրոնական կէտի կոմիտէն այնքան ներկայացուցիչ պէտք է ունենայ, որքան միւս կոմիտէները միասին, 5) որ այդպիսով ընտրուած Կենտր. Կոմիտէն կը լինի եւ տեղական կոմիտէ կենտրոն կէտի համար, 6) որ Կենտրոնական Կոմիտէների անդամները փոխուում են մաս-մաս (Բիւրոյի անդամների նման), 7) որ Կենտրոնական Կոմիտէներն պարտաւոր են հրաւիրել իրանց ժողովներին խորհրդակցական ձայնով, տեղում գրտնըւող յայտնի գործիչներին եւ այնպիսի անձանց, որոնք կարող են մեծ օգուտ տալ գործին, 8) որ Կենտր. Կոմիտէները կարող են միմեանց հետ յարաբերութիւնների մէջ մտնել, բայց անդամներ ուղարկել միմեանց չեն կարող առանց Բիւրոյի համաձայնութեան, 9) Վրէժստանը բաժանել երեք Երջանակների Կենտր. Կոմիտէներով, որոնցից Մինարէթի Կենտր. Կոմիտէն կը կազմուի պատասխանատու գործիչներից եւ կը համարուի գլխաւոր, 10) ամէն Կենտր. Կոմիտէ իրաւունք ունի թուցելի թերթեր հրատարակել դուրս չգալով Երազրի սահմաններից, 11) միայն Կենտրոնական Կոմիտէները իրաւունք ունին Սարուստանում տեղական գործերի համար, անհրաժեշտ ունէ գործիչի ամբողջ տարին ապրուստի միջոց տալ կազմակերպութեան փողերից, այն էլ համաձայնութեամբ Բիւրոյի եւ ամենածայրայեղ, բացառիկ եւ միանգամայն անհրաժեշտ դէպքերում պարտական լինելով արդարացնել իրանց արածը այդ կողմից Երջանական Ժողովի առաջ, 12) Վրէժստանը պէտք է ունենայ մի կնիք (10 ձայն), 2 կնիք (6 ձայն):

Դ. Երջանակի ժողով(14).— Որոշուեց 1) շարունակել այսուհետեւ էլ ամէն տարի հրաւիրել Երջանական Ժողով, 2) որ այդ Ժողովին հրաւիրուեն Սարուստանի, Վրէժստանի եւ Երկրի այն մասի Կենտրոնական Կոմիտէների ներկայացուցիչները, որ Ընդհ. Ժողովը կը մտցնի մեր շրջանի մէջ, 3) Երջանական Ժողով գումարելուց առաջ Բիւրոն պարտական է հարցնել է զանազան Կենտրոնական Կոմիտէների կարծիքները այն հարցերի մասին, որ նրանք կը ցանկանային քննութեան ենթարկել Ժողովում, եւ այդ պատասխաններից օգտուելով՝ կազմել առաջիկայ Ժողովի քննութեան ենթարկուելիք հարցերի ցուցակ ու նախապէս ուղարկել այդ ցուցակը բոլոր Կենտր. Կոմիտէներին, որպէսզի նրանց ներկայացուցիչները Ժողովի դալիս բերեն իրանց հետ իրանց ուղարկողների կարծիքները, լիազօրութիւն ունենալով ի հարկէ ցուցակից դուրս նոր հարցեր առաջարկել Ժողովին եւ բոլոր հարցերի վերաբերմամբ Ժողովում տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնից յետոյ ձայն տալ իրանց համոզմունքի համաձայն, 4) ամէն տարի Երջանական Ժողովին է ընտրում նոր անդամներ Երջանական Բիւրոյին հերթական դուրս եկող անդամների տեղ, 5) առաջիկայ Ընդհ. Ժողովի ժամանակ այն ներկայացուցիչները,

որոնք եկած կը լինեն շրջանի Կենտր. Կոմիտէների կողմից, հաւաքուելով առանձին կը կազմեն արտակարգ Երջանական Ժողով եւ կ'ընտրեն շրջանական Բիւրոն, եթէ Ընդհ. Ժողովը ընդունի 2 մեծ շրջանի բաժանմունքը եւ 2 Բիւրոնների սկզբունքը, 6) Երջանական Ժողովին պէտք է հրաւիրուեն եւ տեղում գտնուած պատասխանատու գործեր վարած գործիչները, 7) Երջանական Ժողովում պէտք է զեկուցում տան եւ հաշիւ ներկայացնեն Բիւրոն եւ Կենտր. Կոմիտէների ներկայացուցիչները:

Ե. Արտասահմանեան Բիւրո.— Որոշուեց 1) որ արտասահմանեան Բիւրոն պէտք է լինի արտասահմանի եւ Երկրի մի մասի շրջանի համար, կազմակերպութեան ներկայացուցիչ եւրոպական կառավարութիւնների ու հասարակութեան եւ թուրք կառավարութեան առաջ եւ խմբագրական կոմիտէ կազմակերպութեան թերթի համար, 2) որ արտասահմանեան Բիւրոն իր այժմեան կազմութեամբ չի համապատասխանում այդ դերին, ուստի պէտք է նոր մարդիկ մտցնել նրա մէջ եւ աւելացնել անդամների թիւը, եթէ այդ հարկաւոր գտնի Ընդհ. Ժողովը, 3) որ արտասահմանեան Բիւրոն ընտրուում է Ընդհ. Ժողովի կողմից եւ նրա անդամները մի անգամ կանոնաւոր ընտրուելուց ետք փոխուում են մաս-մաս նորից վերընտրուելու իրաւունքով, 4) որ արտասահմանեան Բիւրոն պէտք է ուսումնասիրի արեւելեան հարցը, եւրոպական քաղաքականութիւնը եւ թուրքահայաստանը կանոնաւոր կերպով եւ սխտեմբար, 5) որ նա պէտք է յարաբերութիւններ պահպանի եւրոպական նշանաւոր քաղաքական եւ հասարակական գործիչների հետ, 6) որ նա պէտք է աշխատի կանոնաւոր պրոպագանդա անել հայկական դատի համար եւրոպական հասարակութիւնների առաջ, 7) որ նա առաջիկայ Ընդհ. Ժողովից առաջ դիմի մեզ համակրող նշանաւոր պետական գործիչներին (օր. Գլադստոն, Բրայս եւ այլն) ու խորհրդակցելով նրանց հետ Երկրի դրութեան վրայ՝ յայտնի Ընդհ. Ժողովին նրանց կարծիքները մեր դատի մասին եւ բացի այդ, զեկուցում կազմեն նոյն Ընդհ. Ժողովի համար թուրքահայաստանում մնացած հայերի թուր մասին:

IV ՊՐՈՊԱԳԱՆԴԱ (9)

Ա. Օրգանի խմբագրական կոմիտէ.— Բոլորը համաձայն էին որ պրոպագանդան մինչեւ այժմ տարուել է շատ թոյլ կերպով: Բոլորը, բացի մէկից, գրտնում էին, որ կազմակերպութեան օրգանը, իբրեւ ժողովրդին ոգեւորող, ընդհանուր յեղափոխական հարցեր լուսաբանող եւ մեր դատը փաստաբանող՝ անբաւարար է կատարել իր դերը: Ժողովը որոշեց 1) ցան-

կանալով, որ կազմակերպութեան օրգանը կարողանայ կանգնել իր կոչման բարձրութեան վրայ եւ գրականական տեսակէտից այնպէս, ինչպէս մինչեւ այժմ բարձր է կանգնած եղել բարոյական կողմից, առաջարկել Ընդհ. Ժողովին այնպէս փոփոխութիւն մտցնել խմբագրական կոմիտէի մէջ, որ նրա անդամներից գոնէ մէկը օտուում լինի օրգանն խմբագրելու համար անհրաժեշտ գրականական պատրաստականութեամբ եւ ընդունակութիւններով, 2) բոլոր Կենտր. Կոմիտէները պարտաւոր են նիւթեր եւ, եթէ կարելի է, յօդուածներ ուղարկել Կենտր. Կոմիտէին(18):

Բ. Գրքայկներ եւ թուցիկ թերթեր.— Որոշուեց առանձին ուշադրութիւն դարձնել այսուհետեւ այդ ճիւղի վրայ:

Գ. Պրոպագանդիստներ.— Որոշուեց 1) Սարուստանում չպահել մշտական պրոպագանդիստներ, որոնց վրայ մեր սկզբունքի դէմ է ծախսել կազմակերպութեան այն փողերը, որոնք հաւաքուում են զէնք զնելու Երկրում գործ կատարելու համար, այլ շարունակել հին ձեւով, պէտք եղած ժամանակ պատահական պրոպագանդիստներ ուղարկել հարկաւոր տեղերը, 2) առանձին ուշադրութիւն դարձնել պրոպագանդայի վրայ դիւղերում:

Դ. Պրոպագանդա եւրոպական հասարակութիւնների մէջ՝ գրաւոր եւ բերամտցի.— Որոշուեց խմբագրութեան վրայ, որ միեւնոյն ժամանակ եւ արտասահմանեան Բիւրոն է, պարտականութիւն դնել կանոնաւոր պրոպագանդա անել եւրոպական հասարակութիւնների առաջ թէ՛ անձնական ծանօթութիւնների, միտինգների եւ թէ՛ մանաւանդ, եւրոպական մամուլի միջոցով, աշխատելով որոշ թերթերի մէջ կանոնաւոր կերպով տեղեկութիւններ տալ եւրոպացիներին մեր դատի եւ մեր ընթացքի մասին:

V ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՐՑ

Ա. Հաշուետուութիւն.— Որոշուեց 1) այսուհետեւ ամէն Երջանական Ժողովում ընտրել քննիչ յանձնաժողով Բիւրոյի եւ Կենտր. Կոմիտէների ներկայացրած հաշիւները քննելու եւ ստորագրելու համար, 2) պատրաստել մի ընդհանուր եւ միաձեւ բլանկ, որով կազմուեն բոլոր Կենտր. Կոմիտէների հաշիւները:

Բ. Նախահաշիւ.— Որոշուեց ամէն Ընդհ. Ժողովում կազմել մօտաւորապէս նախահաշիւ սպասուելիք եկամուտների եւ արուելիք ծախսերի:

Գ. Կարմիր Խաչ.— Որոշուեց հիմնել յեղափոխական Կարմիր Խաչ, որի բաժանմունքները պէտք է կազմուեն կոմիտէներէ շմանակցող անձնաւորութիւններէց եւ որի նպատակը պէտք է լինի ժողովի նպաստներ վերաւորեալ, բանտարկեալ եւ աքսորեալ յեղափոխականներէ համար եւ օգնել նրանց կոմիտէներէ դիտուեամբ:

Գ. Գործից հեռացած Սարուստամում ապրող կամաւորներն օգնութիւն.— Որոշուեց, որ պատասխանատու գործեր վարելու անընդունակ այն կամաւորները, որոնք գործից երկար ժամանակով կամ ընդմիջա հեռացել են Սարուստամ, այլեւս իրենց գործ չլինելուն պատճառով կարող են կազմակերպութեան փողից ապրուստի միջոց ստանալ ամենաշատը միայն մի ամիս: Այդ ամսուան ընթացքում ինքը՝ կամաւորը մի կողմից, Բիւրօն եւ կոմիտէները միւս կողմից պարտաւոր են ամէն կերպ աշխատել պարապմունք գտնել: Պարապմունք գտած օրից սկսած, կամաւորը զրկուում է կազմակերպութեան միջոցներից օգտուելու իրաւունքից:

VI ՄԻՌՔԻՒՆ

Ի նկատի ունենալով, որ Դաշնակցականները միշտ սկզբունքով կուսակից են եղել զանազան հայ յեղափոխական կազմակերպութիւնների միացեալ գործունէութեան, եւ որ ժողովուրդն էլ պահանջում է, որ յեղափոխականները միասին գործեն, Շրջանական Ժողովը առաջարկում է Ընդհ. Ժողովին, չնայելով մեր արած անցեալ երկու փորձերի անյաջողութեան, դարձեալ փորձ անել միանալու միւս հայ յեղափոխական կազմակերպութիւնների հետ, իսկ անյաջողութեան դէպքում յայտարարել մեր օրգանում, որ մենք ընդհանուր առմամբ նայում ենք նրանց վրայ, որպէս միեւնոյն նպատակին ձգտող դաշնակիցների, եւ պատ-

րաստ ենք ձեռք մեկնել նրանց հարկ եւ հնարաւոր եղած ժամանակ:

- (1) Կուսակցական տեղամասներ, մէկ մասը՝ մեզի համար ամբողջ: Բար, — Ալեքսանդրապոլ. Զրաբերդ, — Կարս. Միքզ (հաւանօրէն Մրգաստամ), — Երեւան. Ոսկեղբուրք, ամենայն հաւանականութեամբ, պէտք է ըլլայ Ոսկեղբուր (թէի արձանագրութեան մէջ գործածուած է նաեւ Ոսկեղջիւր ձեւը) — Բագու (կոչուած նաեւ Ոսկեմազաւ). Նաւահանգիստ, — Պաքում:
- (2) Կամաւոր:
- (3) Կ'ակնարկուի անկասկած Պոլսոյ 1897ի ցուցական գործունէութեան (տեսնել ՆԻՌՔԵՐ Հ. Յ. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Ա. հատար, էջ 169-172):
- (4) Միմարէթ, — Սալմաստի շրջանի կուսակցական ծածկամասը:
- (5) Շամ կամ Շամիր, — Վասպուրականի յեղափոխական ծածկամասը:
- (6) Ռուսաստան (առաւելաբար Կովկաս): Արեւելեան Բիւրօն կոչուած է նաեւ Սարուստամի Բիւրօն:
- (7) Կ'ակնարկուի Թուրքիոյ յեղափոխական շրջաններում, — Շամիր՝ Վամ, Մովսար՝ հաւանօրէն Սասնոյ կամ Բազէշի շրջանը, Մազիկ (կամ Կուսածաղիկ)՝ Պոլսո եւ Ոսկեհամբ՝ Խզմիր:
- (8) Գործելակերպ:
- (9) Քարազուրթիւն:
- (10) Փուլ:
- (11) Բարեմարտագումներ:
- (12) Վերարտադրած ենք մոյմութեամբ, թէի իմաստի անկեքնութիւն կայ. հաւանօրէն չի խանգարում ըսուած է շիպ չունի՞ի կամ շիպտառ չի կրնար ըլլալ՞ի իմաստով:
- (13) Վարչական յատուկ բաժանումներով օժտուած երկու Բիւրօններու այս դրութիւնը ի վերջոյ նուիրակամացու Հ. Յ. Դ. Չրդ Ընդհ. Ժողովին:
- (14) «Շրջանական Ժողովը» հայացում է անկասկած «Ռոյալ-նական Ժողովին»: Պէտք է ճշիլ սակայն՝ որ յետագային շարունակած է գործածուիլ «Ռոյալնական» ձեւը (բազմաթիւ Կ. Կովտէնբուր անբկայացուցիչներու ժողովի իմաստով, եւ առաւելաբար Կովկասի մէջ), հաւանօրէն շփաթ չյառաջացնելու համար իւրաքանչիւր Կ. Կովտէնբուրեան շրջանի «Շրջանային» ժողովին հետ:
- (15) Թիֆլիս:
- (16) Նալբանդ, — Նար Նախիջուանի շրջան. Եկեղեցի, — Մոսկուա:
- (17) Վրէժստան, — Ատրպատական:
- (18) Պէտք է ըլլայ հաւանօրէն՝ «...ուզարկի խմբագրութեան» կամ «խմբագրական կոմիտէին»:



Գ.— Լ. Յ. Դ. ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բ. Ընդհ. Ժողովի արձանագրութիւնները քննած, դատարարած եւ հրատարակութեան պատրաստած է ողբացեալ ընկ. Սիմոն Վրացեան (ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ, Բ. հատար, էջ 208-239): Դաշնակցութեան Կեդրոնական Դիւանին մէջ մնացած են նաեւ որոշ թուով օրինակներ «Մրազիր Հ. Յ. Դաշնակցութեան եւ ատենադրութիւն Երկրորդ Ընդհանուր Ժողովի» գրքոյկէն (հրատ. № 8, Ժընեւ, Հ. Յ. Դաշնակցութեան տպարան, 1903): Գրքոյկով տրուած «Ատենագրութիւններու կրճատ ամփոփումը» աւելի սահմանափակ է քան ԴԻԻԱՆի «Հ. Յ. Դ. Չրդ. Ընդհ. Ժողովի նիստերում ամփոփ եւ կրճատ ատենագրութիւնը», ուր յապաւումներ եւ գաղտնի պահուած (կիտաւոր) մասեր փաստօրէն չկան: Յայտնի է որ ամբողջական թէքսթն է տրուած ընկ. Ս. Վրացեան, առնելով ոչ գրքոյկէն, այլ բուն իսկ ժողովական արձանագրութիւններէն: Այդ արձանագրութիւնները գրքոյկով ամբողջական կերպով չհրատարակելը արդիւնք է արդէն Ժողովի յատուկ մէջ որոշման (տեսնել վերջին մասը):

Ուշագրաւ է նաեւ՝ որ ե՛ւ գրքոյկը ե՛ւ ԴԻԻԱՆի հրատարակութիւնը արեւմտահայերէնով են: Ըստ երե-

ւոյթին Բ. Ընդհ. Ժողովի արեւելահայերէն արձանագրութիւններ գոյութիւն ունեցած չեն, կամ, եթէ պատրաստուած են օրին, կորուած են յետագային:

Ընկ. Ս. Վրացեանի հրատարակութեան պատրաստած աշխատութիւնը այլապէ՛ս շահեկան է սակայն, շնորհիւ ամոր առաջին մասին՝ «Ժողովի նախապատրաստութիւնն ու ընթացքը» գլուխին, որ արձանագրութեանց հետ ուղղակի կապ չունի եւ կը կազմէ պայմաններու, տրամագրութիւններու եւ որոշումներու բաւական բծախնդիր վերլուծում մը: Ուստի մենք այստեղ կու տանք ԴԻԻԱՆի հրատարակութիւնը՝ իր ամբողջութեան մէջ, Ս. Վրացեանի ծանօթագրութիւններով հանդերձ (աստղանիշներ): Ի պահանջել հարկին՝ մենք եւս կու տանք յաւելեալ ծանօթագրութիւններ (թուանշաններ): Երանի՛ թէ մեր ողբացեալ բազմավաստակ ընկերը առիթը ունեցած ըլլար քննելու եւ հրատարակութեան պատրաստելու յաջորդ քանի մը Ընդհ. Ժողովներու ատենագրութիւնները նաեւ, ի մասնաւորի՝ թուրքերը 1907ի Վիեննայի Հ. Յ. Դ. 4րդ. Ընդհ. Ժողովին՝ որում ինք եւս մասնակցած էր իբրեւ Նալպանտի (Նար Նախիջուան) պատգամաւոր:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
ԺՈՂՈՎԻ ՆԱԽՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ
ՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Հ. Յ. Դաշնակցութեան գերագոյն օրէնսդիր Իւ-
խանութիւնը Ընդհանուր ժողովն է:

Առաջին Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 1892
թ.: Դրանից առաջ գումարուել էր Հիմնադիր ժողո-
վը, 1890 թ. ամառը:

Հիմնադիր ժողովի ճիշդ ժամանակի, այսինքն՝
ո՛ր ամսի մէջ գումարուելու մասին ստորագրուե-
լու չկայ. այդ ժողովից ոչ մի վաւերագրութիւն չի մը-
նացել: Հաւանաբար Յալիս ամսին է տեղի ունեցել
Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը:

Շատ նիւթ չի մնացել եւ Հ. Յ. Դաշնակցութեան
Առաջին Ընդհանուր ժողովի մասին: Ինչ որ մնացել
է՝ հրատարակուել է «Դրան Լ. Յ. Դաշնակցութեան»
Ա. հատորում:

Այնուհետեւ Կովկասում տեղի են ունեցել մի շարք
տարեկան ժողովներ, որոնք սկզբնապէս կոչուում էին
«Ընդհանուր ժողովներ եւ փաստօրէն Ընդհանուր
ժողովի էլ պաշտօնն էին կատարում, բայց իսկապէս
Ընդհանուր ժողով չէին, որովհետեւ տեղական ու
մասնակի բնոյթ էին կրում:

Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ծրագրի «կազ-
մակերպական» մասում Ընդհանուր ժողովի մասին
այսպիսի կէտ է դրուած. «Որեւէ կոմիտէտի անդամի
սխալը կամ զեղծումը քննում է ինքը՝ կոմիտէտը, իսկ
ամբողջ կոմիտէտինը՝ իր շրջակայ կոմիտէտներին
ներկայացուցիչները: Մանրակշիռ դէպքերում, երբ
հարեւան կոմիտէտներն անձեռնհաս են վճիռ արձա-
կելու, քննութիւնը կատարում է Ընդհանուր ժողո-
վը» (*):

Դրանից առաջ, բնորոշելով Հ. Յ. Դաշնակցու-
թեան հիմնական սկզբունքը եւ ընդունելով, որ «յե-
ղափոխական գործում չի կարող լինել իրաւունքի եւ
պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտա-
ւորութեան եւ բաւարարութեան խնդիր», այդ հիման
վրայ ծրագրերը որդեգրում է «ապակենտրոնացման
սկզբունքը»: «Այս սկզբունքով գործող կոմիտէտներին
կապում, միացնում է Ընդհանուր ժողովը, որը մշակել
է ներկայ ծրագրերը, որի վճիռները պարտաւորեցու-
ցիչ են բոլորի համար եւ որը միայն ինքն է կարող
փոփոխութիւն մտցնել ծրագրի մէջ» (**):

Ուրիշ որեւէ կէտ Ընդհ. ժողովի իրաւասութեան,

(*) «Դրան Լ. Յ. Դաշնակցութեան», Ա. հատոր, էջ 101:
(**) Նոյն տեղը:

կազմի եւ գումարման ձեւի մասին 1892 թ. ծրագրերը
չի տալիս:

Այդ պատճառով առաջին տարիների «Ընդհանուր
ժողովներն» որոշ ու կազմակերպուած ձեւ չունէին:
Ամէն տարի Կովկասի, Պարսկաստանի եւ Երկրի(*)
սահմանակից շրջանների «գործի կոմիտէտներին ներ-
կայացուցիչներ եւ անհատ գործիչ ընկերներ հաւաք-
ւում էին ժողովի, քննում էին նախորդ տարիներին
գործունէութիւնը, որոշումներ էին տալիս նոր տարե-
շրջանի համար եւ ցրում էին: Այս հաւաքումները եր-
բեմն կոչուում էին «Ընդհանուր ժողով, երբեմն «Ռա-
յոնական ժողով» եւ, ինչպէս ասինք, փաստօրէն կա-
տարում էին Ընդհանուր ժողովի պաշտօնը: Յամենայն
դէպս, նրանց որոշումները պարտաւորեցուցիչ էին ոչ
միայն իրենց վայրի, այլ եւ այդ վայրերի գործու-
նէութեան օժանդակող դրսի շրջանների, ինչպէս եւ
«Դրօշակ»ի խմբագրութեան համար էլ:

Այս կարգի հաւաքոյթներէց էր եւ այն ժողովը,
որ գումարուեց 1897 թ.(1) եւ որին Հ. Յ. Դ. Բիւրօն
Թիֆլիսում եւ Կովկասի ու Պարսկաստանի ներկայա-
ցուցիչներն ու գործիչները ուզում էին իրաւապէս էլ
Ընդհանուր ժողովի իրաւասութիւն տալ, բայց այդ
ցանկութեան դէմ դուրս եկաւ «Դրօշակ»ի խմբագրու-
թիւնը, եւ ժողովը մնաց, որպէս տեղական կամ Ռա-
յոնական ժողով:

Իսկական Ընդհանուր ժողով գումարուեցաւ միայն
1898 թ-ին, որ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան
մէջ յայտնի է «Երկրորդ Ընդհանուր ժողով» անունով՝
առաջինը լինելով 1892ի Ընդհանուր ժողովը:

**

Առաջին Ընդհանուր ժողովից յետոյ, վեց տարի
էր անցել — 1892—1898 — եւ այդ ժամանակուան ըն-
թացքում ահապէս խնդիրներ էին կուտակուել, որոնք
հեղինակաւոր լուծում էին պահանջում: Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը արդէն տարածուն կուսակցութիւն էր,
որ արմատներ էր ձգել ոչ միայն Կովկասում, Պարս-
կաստանում եւ Մեծ Հայքում, այլ եւ պատկառելի ոյժ
էր դարձել Պոլսում, Եգիպտոսում, Բալկաններում,
Ամերիկայում եւ այլուր: Նա հետզհետէ գրաւում էր
Հնչակեան քայքայուող կուսակցութեան տեղը: Նրան
հաշուի էին առնում արտաքին ուժերը: Նրան «միու-
թիւն» էին առաջարկում Հնչակեանները. նոյնիսկ չլա
բարեկամութիւնն էր փնտրում ինքը՝ գոռոզ Նազար-
բէկը: Նրա հետ բանակցում էր Սուլթանը Յարութիւն
փաշա Տատեանի միջոցով: Հայ ժողովրդի ազատա-
տենչ մասի յոյսերը աւելի եւ աւելի Դաշնակցութեան
կողմն էին դառնում, — Դաշնակցութեան, որ Բանկ

(*) Մինչեւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը Եր-
կր ասելով հասկացում էր Տաճկահայաստանը:

Օթոմանի, Վանի Սեպտ. 11ի կոուլի ու Խանասորի ար-
շաւանքի պէս փառաւոր գործեր էր կատարել: Իր կազ-
մակերպական մեքենայով, սակայն, Դաշնակցութիւնը
ի վիճակի չէր կատարելու հետզհետէ իր ուսերին ա-
ւելի եւ աւելի ծանրացող պարտականութիւնները:

1892 թ. Ընդհ. ժողովը ձեւակերպել էր միայն
Դաշնակցութեան հիմնական սկզբունքները — «ապա-
կենտրոնացում», «բարոյական պարտաւորութիւն եւ
բաւարարութիւն»: Բայց այդքանը հերիք չէր: Երբեմն
այդ «ապակենտրոնացումը» անիշխանութեան կերպա-
րանք էր առնում: Երբեմն տեղի էին ունենում խաչա-
ձեւումներ մարմինների եւ առանձին գործիչների ձեռ-
նարկների մէջ: Իրաւունքների եւ պարտականութեանց
սահմանները չփոխուում էին, որից առաջ էին գալիս
դժգոհութիւններ, եւ տուժում էր գործը(*): Անհրա-
ժեշտ էր Կուսակցութեան տալ որոշ ու յստակ ձեւա-
կերպուած կազմակերպական ձեւ: Եւ այդ պարտակա-
նութիւնը կատարեց 2րդ Ընդհանուր ժողովը:

**

Ընդհանուր ժողով գումարելու միտքը վաղուց էր
գրադեցնում կուսակցութեան շարքերն ու մարմիննե-
րը: Ինչպէս ասինք, այդ պահանջը ոմանք ուզում էին
բաւարարուած համարել 1897 թ. տեղական Ընդհա-
նուր ժողովով, բայց այդ ցանկութիւնը չանցաւ: Այս-
պէս, նոյն տարուան 3 Մարտ նամակով Ա. Վառժանը
առաջարկում է «Դրօշակ»ի խմբագրութեան «արծար-
ծել Ընդհանուր ժողով գումարելու խնդիրը. հիմա
ժամանակն է, եւ Պուլկարիան կրնար ըլլալ ամենէն
յարմար տեղը այդ ժողովը գումարելու. թէ՛ մօտիկ
Երկրին եւ թէ՛ քիչ ծախքով»:

Ի պատասխան այս առաջարկի, Ռոստոմը «Դրօ-
շակ»ի խմբագրութեան կողմից, գրում է Վառժանին,
Մարտ 23 նամակով. —

«Ընդհանուր ժողովի հարցը միշտ մնում է: Թիֆ-
լիսի Բիւրօն համաձայնել էր Ընդհանուր ժողով կազ-
մել արտասահմանում, բայց որովհետեւ ուշացաւ,
մօտեցաւ Յունուար ամիսը, երբ ամէն տարի մասնակի
ժողովներ են տեղի ունենում, առաջարկեցինք իրենց
մասնաւոր ժողովում խօսել ի միջի այլոց եւ Ընդհա-
նուր ժողով կայացնելու մասին, կամ ընտրել ժողո-
վում 2-3 մարդ արտասահմանեան Ընդհանուր ժողո-
վին ներկայացնելու համար: Բայց, յանկարծ, արձա-
նագրութիւնից տեսնում ենք, որ ժողովը ընդհանուր է
համարուել»:

(*) Մասնաշեղծ տեղի ունեցող խաչաձեւումներն ու բազ-
միշխանութիւնը կուսակցութեան մէջ՝ Ս. Չաւարեանը 1897 թ.
Յունիս 10ին գրում էր Ռոստոմին. «Տառ տեղից մտածում եւ
կարգադրութիւններ են արւում մի տեղի մասին, առանց միմեան-
ցից տեղեկութիւն ունենալու... Բացի վատ հետեւանքներից ոչ
մի լաւ հետեւանքի դա չի կարող հասցնել»: Ս.Վ.

Այնուհետեւ համարեա ամբողջ տարի բանակցու-
թիւններ ու գրագրութիւններ են կատարուում եւ միշտ
էլ Թիֆլիսից դժուարութիւններ են հանում ժողովի
գումարման համար: Այսպէս, Ա. Վառժանը, 1897 թ.
Նոյեմ. 8 նամակով, «Դրօշակ»ի խմբագրութեան կող-
մից գրում է Յ. Իւսուֆեանին, Ամերիկա. —

«Այս օրերս գրադուած ենք ապագայ Ընդհ. ժո-
ղովին ներկայացնելիք ծրագրով մը. մտադիր ենք մեր
դիտողութիւնները կոմիտէտներուն հաղորդել՝ առա-
ջարկելով միանգամայն, որ իրենք ալ իրենց կարգին
մշակեն ծրագիր մը, կամ ձեւակերպեն անհրաժեշտ
փոփոխութիւններու մասին պարբերաբար յայտնուած
կարծիքները: Կը սպասենք, որ դուն ալ նմանօրինակ
աշխատութեան մը ձեռնարկես:

Բաց մնացած խնդիր մըն ալ՝ ժողովը գումարելու
կամ չգումարելու մասին է: Անտոնը Թ.ից(*) իր երէկ
ստացուած նամակին մէջ կը յայտնէ, թէ ընկերներու
մէջ վախ կայ, որ այդ ժողովը կրնայ կռիւներ առաջ
բերել, ուստի այդ միտքը շատ համակրողներ չունի-
բայց ամէն պարագայի մէջ գլխաւոր խումբերու եւ
գործիչներու կարծիքը պիտի հարցուի: Հիմա մեծա-
մասնութեամբ լուծելու սկզբունքը պիտի դրուի ներ-
կայացուցչական այդ մեծ ժողովին մէջ, հետեւաբար
ձայնատուութեան կնճռոտ խնդիրը կը ծագի ինքնին.
ինչպէ՞ս պիտի բաժանուին քուէները»:

Նոյն խնդրի մասին կարդում ենք եւ «Դրօշակ»ի
խմբագրութեան 18 Դեկտ. նամակում Տրապիզոնի կո-
միտէին. —

«Ընդհանուր ժողովի հարցը վաղուց ընդհանուր
պահանջ է, բայց խնդիրը նրանում է, որ Մեծ Քաղա-
քից դեռ որոշ, դրական պատասխան չունինք այդ
հարցի առթիւ. մենք իր ժամանակին դիմել ենք այն-
տեղ: Չարմանալին այն է, որ դուք եւ Վազգէնը, նաեւ
Արծիւը հաղորդում էք, որ իբր Ընդհ. ժողովի խնդի-
րը արդէն որոշուած բան է, որ Մեծ Քաղաքը նոյնպէս
իր հաւանութիւնը տուել է»:

Հետզհետէ Երկրի մարմիններն էլ արտայայտուում
են Ընդհ. ժողովի մասին, այլ եւ ուղարկում են ի-
րենց կարծիքները: Այս տեսակէտից առանձնապէս հե-
տաքրքրական է Վասպուրականի Կենտր. Կոմիտէի հե-
տեւեալ ծածկագիր նամակը՝ գրուած Վազգէնի ձեռ-
քով. —

Շախր, 19/1 Դեկտ. 1897

Ընկերներ',
Նախորդով գրած էինք որ՝ մեր կարծիքները
յայտնելու ենք Ընդհ. ժողովի եւայնի մասին:

Ժողովը անհրաժեշտ է, մասնաւորապէս ապագայ
գործունէութեան մասին: Եթէ հնար լինի Ընդհ. ժո-
ղով կազմել, ի հարկէ, շատ աղէկ կը լինի. եթէ ոչ՝

(*) Ս. Չաւարեան Թիֆլիսից: ԽՄԲ.

աշխատել Ընդհ. ի կերպարանք տալ ժողովին՝ բոլոր կարեւոր տեղերու պատգամաւորները հաւաքելով: Կը ցաւինք որ մեր կողմերէն անկարող ենք պատգամաւորներ հասցնել ժողովին, որը կատարուելու է, անշուշտ, Մեծ Քաղաքին մէջը: Ու պիտի բաւականանք միայն գրաւոր յայտնելով մեր կարծիքները:

Առայժմ ապագայ գործունէութեան մասին մեր կարծիքները կ'ուզարկենք ձեզ, իսկ մնացած՝ Շամիրի 97ի տեղեկագիրը, դրամական հաշիւը, միութեան խնդիրը եւայլն կը մնան յաջորդներով: Գուցէ մեր կողմէն մէկը նշանակենք ժողովին մէջ իբր պատգամաւոր, յայտնեցէք ո՞վ կայ մեր ծանօթներէն այդտեղը:

Վասպ. Կեդր. Կախտի կարծիքները՝
ապագայ գործունէութեան մասին

Դաշնակցութեան անցեալի գործունէութիւնը ի նկատի ունենալով՝ Վասպ. Կեդր. Կոմիտէն կազմած է հետագայ ծրագիրը կուսակցութեան ապագայ գործունէութեան մասին:

Մասնակի թեթեւ շարժումները, անպայման կերպով իրենց շրջանը լրացուցած ըլլալով՝ անհրաժեշտ է այսուհետեւ խորհել լուրջ, գրական գործունէութեան մը համար, որու ուժեղութեան շնորհիւ հնար լինի ուժգին ցնցում առաջ բերել եւ վերջնականապէս վճռել հայկական հարցը:

Այդ լուրջ գործունէութեան համար՝ Վասպ. Կեդր. Կոմիտէն աչքի առաջ ունի՝ Քարժայու, Մովսար (Աբրոյի գերեզման), Շամիր եւ Ասորեստան(*): Այս չորս տեղեր իրար հետ կապուած՝ կարելի է հազորակցութիւնը մշակել եւ միեւնոյն ծրագրով գործ սկսել: Առաջին երեք տեղերու մէջ պէտք է կերպարանցնել գէնքի մեծ ուժեր — իւրաքանչիւրի մէջ գոնէ պատրաստել 500-700ական հրացանով կազմակերպուած ուժեր: Իսկ չորս տեղերու մէջ մտցնել մեծ քանակութեամբ իւր(**): Ասորեստանի համար 2-3 գաղափարական գործիչներ եւ 1-2 թեթեւ հայդուկային խումբեր բաւական են ոտքի հանելու Ասորոց մելիքները:

Թէ՛ որչափ ժամանակ է հարկաւոր, վերոյիշեալ չորս տեղերու պատրաստութիւնները ամբողջացնելու համար՝ այդ մասին ոչինչ կարելի չէ ասել, քանի որ մեր կամքէն անկախ պատճառները կարող են յետաձգել կամ փութով իրականացնել: Միայն այսչափ անկասկած պէտք է լինել որ՝ եթէ հնար լինի որեւէ գծով ուժերը ներս մտցնել՝ այդ ուժերը կարելի է ցանկացած տեղը հասցնել: Մովսար Շամիր իրար հետ կապուած են գրեթէ, Քարժայու եւ մելիքները անջատ կը մնան:

(*) Տերսիմ, Մասաձ, Վան, ասորիներ:
(**) Ուժանակ: ԽՄԲ.

Շատ դիւրութեամբ կարելի է մելիքները Շամիրի հետ կապել եւ Քարժայու Մովսարի հետ:

Վերոգրեալ չորս տեղի համար գործունէութեան մանրամասն ծրագիրը պէտք է կազմել առանձին: Յատուկ մարմին մը պիտի վարէ այդ տեղերու գործերը. նա պատրաստելու է ծրագիրը:

Հանգամանքները փոխուած լինելով այժմ, եւ մէն տեղ, բացի մելիքներէն, վստահելի ուժեր ստեղծուած, կարելի է հաւատալ, որ գործը պիտի յաջողուի: Բացի այդ, ի հարկէ, դրսէն մարդիկ ալ պէտք է մտնեն հոն, ուր կարիք կայ ղեկավարող ուժերու: Եւ որչափ այդ ուժերը բազմաթիւ լինեն՝ յաջողութիւնը այնչափ ակներեւ կը լինի:

Այս չորս տեղերու հետ միասին պէտք է առանձին ուղարկութիւն դարձնել եւ Վիշապի վրայ, որը շարժուելու է այն ժամանակ, երբ որ հարկը պահանջէ:

Ու երբ, այս չորս տեղերը պատրաստութիւնները ամբողջացնելէ յետոյ ժամանակը հասնի, դրոշակը պարզելու Քարժայուէն Մովսար, Շամիր եւ Մելիքներ՝ այն ատեն Վիշապը(*) պէտք է շարժի գոնէ 96ի նման ուժով մը: Վիշապի շարժումը որչափ որ շուտ վերջանայ՝ գաւառները կարող են գոնէ 2-3 ամիս դիմանալ ու այդպիսով վճռել հայկական հարցը:

Ապագայ գործունէութեան մասին՝ Վասպ. Կեդր. Կոմիտէն այս համոզման եկած է, աչքի առաջ ունենալով եւ Մովսարի, Միրնկատարի (Ուրուականի շրջանակ, Մովսար եւն.) եւ Ցամաքձորի (Աղբիւրի շրջանակ)(**) կարծիքները, Վրէժստանի պատրաստի ուժը, Մեծ Քաղաքի եւ ուրիշ շատ կոմիտէներու ցոյց տուած պատրաստակամութիւնը, խոստումները եւայլն:

Վասպ. Կեդր. Կոմիտէի կողմէն՝
ՎԱԶԳԻՆ

Ընդհ. ժողովի ուղարկուած ատիթ է տալիս դժգոհութեանց ու բողոքների: Մասնաւորապէս բուռն կերպով արտայայտուում է Տրապիզոնի Կենտր. Կոմիտէն, որին պատասխանում է Ռոստոմը, 1898 թ. Փետր. 9ին, «Վրոշակ» խմբագրութեան կողմից:—

«Այս տարուան Մեծ Քաղաքի Ռայոնական ժողովը ձեզ տեղի է տուել կարծելու, թէ՛ դրանով նոքա իրենց միապետական ուղղութիւնը չխախտելու համար Ընդհանուր ժողովի իրազրոծումը մի կողմն են թուելու: Մինչդեռ Մեծ Քաղաքում ամէն տարի կայանում են Ռայոնական ժողովներ, որոնք ոչ մի կապ չունին Ընդհանուր ժողովի գաղափարի հետ (անցեալ տարուանը թիւրիմացութեամբ է միայն Ընդհանուր կոչուել, որի դէմ մենք իր ժամանակին բողոքել ենք): Ընդհանուր ժողովը պիտի կայանայ բոլորովին անկախ

(*) Գուտը:
(**) Տրապիզոն, Տարոն, Բիթլիս:

Մեծ Քաղաքի ժողովներից: Իր ժամանակին մենք խնդրել ենք, որ իրենց Ռայոնական ժողովում որոշեն Ընդհանուր ժողովի տեղը, ձեւը, ժամանակը եւայլն: Բացի այդ, առաջարկել ենք ընտրել պատուիրակներ՝ Ռուսաստանի եւ Պարսկաստանի կոմիտէների կողմից Ընդհանուր ժողովին ներկայացնելու: Եւ թէ՛ Մեծ Քաղաքացիք բնաւ մտադրութիւն չունին խաբել սրան, նրան, խանգարել Ընդհանուր ժողովի կայանալը՝ դա պարզ է եւ նաւահանգստի մի նամակից, որով բողոքում են Մեծ Քաղաքի առաջարկութեան դէմ՝ պատուիրակների միջոցով ներկայանալ Ընդհանուր ժողովին եւ ոչ այն ձեւով, որ իւրաքանչիւր կոմիտէ ունենայ իր առանձին ներկայացուցիչը: Մեր կարծիքով նաւահանգիստը գուր է բողոքում: Առանձին ներկայացուցիչներ ուղարկելու իրաւունքը վերապահուում է միայն բուն Սրկրի գործիչ կոմիտէների համար: Ամերիկան, Եգիպտոսը, Բուլղարիան կ'ունենան միմիայն մէկ-մէկ ներկայացուցիչ, իսկ Ռուսաստանինը եւ Պարսկաստանինը թող կատարուի պատուիրակների ձեւով: Ուրիշ կերպ, այսինքն՝ եթէ ամէն մի պատահական կոմիտէ (արտասահման, Սրկրից դուրս) իրաւունք ունենայ մի-մի ներկայացուցիչ ուղարկել, խառնաշփոթ բան դուրս կը գայ. դա Ընդհանուր ժողով չի լինի»:

Սրկար ձգձգումներից յետոյ, վերջապէս Ընդհ. ժողովի խնդիրը լուծում է ստանում Կովկասեան Ռայոնական ժողովում: Այդ մասին հաղորդում է «Վրոշակ» խմբագրութեան (Վրամեանի ձեռքով) գրուած 1898 թ. Փետրուար 15ի նամակը Մելիքին (Յ. Իււսոֆեան), որ այդ ժամանակ գտնուում էր Ամերիկա, Ուսար: «... Կովկասի մէջ գումարուեցաւ Ռուսաստանի եւ Պարսկաստանի Ռայոնական ժողովը, որու ատենագրութիւնը տակաւին ստացած չենք. դիտար խնդիրն այն է, որ այդ ժողովն ալ միանալով Սրկրի եւ արտասահմանի կոմիտէներու յայտնած փափաքին՝ Ընդհանուր ժողով գումարելու առաջարկն ընդունեց: Վերջապէս, որոշուած է այդ ժողովը գումարել Մարտ 29ին (հ. տ.), Ջատկէն շարաթ մը առաջ, Անտոնի քաղաքին մէջ(2):

«Այսօր իսկ հրաւէր դրկեցինք Ամերիկայի Կեդր. Կոմիտէին (Լովէլի հասցեով), որպէսզի կոմիտէներու հետ համաձայնութեան մը գալով՝ պատգամաւոր մը ընտրէ: Հրաւէրին մէջ յայտնած չենք ոչ ժողովին գումարուելու տեղը եւ ոչ թուականը: Պատգամաւորը Մարտ 9/21ին պիտի գանուի եւրոպական որեւէ նաւահանգիստ մը կամ Փարիզ. հոն նամակով մը պիտի իմացնենք իրեն ուր երթալը եւ պիտի հաղորդենք հարկ եղած տեղեկութիւնները, որպէսզի կարենայ մերիններուն հանդիպել: Ուրեմն, դուռն ալ գաղտնի կը պահես այդ երկու կէտերը:

«Ամերիկայի Պատգամաւորական ժողովին արձանագրութիւնը չստացանք եւ ոչ իսկ նամակ մը նորըն-

տիր Կեդր. Կոմիտէէն, ուստի յայտնի չէ մեզ թէ ի՞նչ կերպով պիտի ընտրուի Ընդհանուր ժողովի պատգամաւորը: Հարկաւ կը հսկես, որ օրինական ճամբայով կատարուի այդ ընտրութիւնը:

«Ամերիկեան կոմիտէները պարտաւոր են նաեւ իրենց հաւաքական հաշիւը ներկայացնել Ընդհանուր ժողովին: Հարկ եղածը խօսէ, որ հետաւոր ճամբորդութեան համեմատ դրամ տան իրենց պատգամաւորին. մեր վրայ յոյս չդնեն ի դուրս»:

Նոյն նիւթին է վերաբերում եւ «Վրոշակ» խմբագրութեան 1898 թ. 16 Փետր. նամակը Բերլինի «Մոլեկուլ» կոմիտէին: Ռոստոմը խմբագրութեան կողմից գրում է հետեւեալը:—

«Ընդհանուր Դաշնակցական ժողովի միաքը, որ վաղուց ի վեր պատում էր մեր մէջ, վերջապէս իրականանալու վրայ է: Թիֆլիսում կայացած Ռուսաստանի եւ Պարսկաստանի կոմիտէների Ռայոնական ժողովում վճռուել է շատ մօտ ժամանակում կատարել ընդհանուր ժողով, որի անհրաժեշտութեան վրայ պնդում էին վերջերս Սրկրի մէջ գտնուած կոմիտէները»: Եւ առաջարկում է, խորհրդակցութեամբ Փարիզի մեր կոմիտէի հետ, «հրաւիրել արտասահմանեան քաղաքներից մէկում մի Դաշնակցական ուսանողական ժողով, որը կը ծրագրի ուսանողների մասնաւոր գործունէութեան ուղղութիւնը, կը մշակէ Ընդհանուր ժողովին ներկայացնելիք առաջարկութիւնները եւ կ'ընտրի մի պատգամաւոր՝ ժողովին մասնակցելու: Այս խնդրի մասին գրել ենք եւ Փարիզը»:

Փարիզի եւ Բերլինի կոմիտէները, սակայն, չեն համաձայնում այս առաջարկութեան եւ ուզում են ամէն մէկը առանձին ներկայացուցիչ ունենալ Ընդհ. ժողովում: Մարտ 10ին «Վրոշակ» խմբագրութիւնը (Ռոստոմ) պատասխանում է. «Ռոմովհետեւ ժողովը կայանալու է այնպիսի պայմաններում, որ միանգամայն վտանգաւոր է դարձնում մեծ թուով պատգամաւորներ ունենալը, մեր մէջ համաձայնութիւն է կայացել պատգամաւորներ հրաւիրել ոչ թէ բոլոր Դաշնակցական կոմիտէներից առանձին-առանձին, այլ որոշ կերպով բաժանուած լայն շրջաններից: Այսպէս, Ամերիկան (որ մօտ 20 կոմիտէ ունի) ուղարկելու է միայն Ա՛հ ներկայացուցիչ. Բուլղարիան եւ Ռուսաստանն՝ նոյնպէս մէկ, Եգիպտոսը Կիպրոսի հետ միասին՝ մէկ եւայլն: Միայն բուն Սրկրի կոմիտէներն իրաւունք ունին առանձին-առանձին ներկայացուցիչ ունենալու»:

Բերլինի ուսանողները յամառում են, եւ հետեւանք լինում է այն, որ Սերոպայի ուսանողութիւնը ներկայացուցիչ չի ունենում Ընդհանուր ժողովում:

Ընդհանուր ժողովի հրաւիրագրերը ուղարկուած են «Վրոշակ» խմբագրութեան կողմից, Փետր. 15ին եւ 16ին, մօտաւորապէս միեւնոյն բովանդակութեամբ. արբերութիւնները ըստ վայրի են եւ ըստ

պայմաններին: Նմոյշի համար առաջ բերենք Ամերիկայի Կեդր. Կոմիտէին (Լոս Բրայք) Փետր. 15ին գրուած նամակը, Վոստոկի ձեռքով:

«Ընկերներ՝ Դաշնակցական կոմիտէներու կողմէն միահամուռ յայտնուած փափաքին համաձայն՝ որոշուած է մինչեւ երկու ամիս Դաշնակցութեան Ընդհանուր Ժողով գումարել:

«Ուստի Ամերիկայի Կեդր. Կոմիտէն ներկայիս կը հրաւիրուի առ այդ հարկ եղած օրինական դիմումներն ընկելով իր շրջանի կոմիտէներուն՝ կատարել տալ պատգամաւորի մը ընտրութիւնը:

«Եթէ ո՛րեւէ պատճառով կարելի չըլլայ յատուկ պատգամաւոր զրկել, ամերիկեան կոմիտէները իրենց հաւաքական ձայնատուութեան իրաւունքը կարող են յանձնել ուրիշ ռայոնի պատկանող իրենց ծանօթ գործիչի մը եւ կամ Դաշնակցական ուրիշ մարմնի մը:

«Ամէն պարագայի մէջ, յատուկ պատգամաւոր ընտրուի թէ ոչ, նկատելով Ընդհ. Ժողովի բացառիկ կարեւորութիւնը, կը յանձնարարուի մանրամասնօրէն մշակուած տեղեկագիր մը պատրաստել ու ներկայացնել Ընդհ. Ժողովին, քննութեան ենթարկուելիք բոլոր խնդիրներու մասին:

«Ամերիկեան կոմիտէները կը հրաւիրուին իրենց հաւաքական, ընդհանուր հաշիւը ներկայացնելու Ընդհանուր Ժողովին:

«Ամերիկայի պատգամաւորը պարտի ոչ ուշ, քան մինչեւ 9/21 Մարտ, 98, գտնուելի Եւրոպայի որեւէ նաւահանգիստ մը՝ Լիվրպուլ, Համպուրկ, Հաւր եւ կամ Փարիզ, ուր Poste restante նամակով մը պիտի հաղորդուի իրեն իր անդրադոյն ուղեւորութեան համար հարկաւոր դատուած տեղեկութիւնները: Ուստի խճճազրուութեանս կանխաւ պէտք է հաղորդել պատգամաւորին անունն ու մականունը, ո՛ր նաւահանգիստը եւ ե՛րբ մեկնելը:

Պատգամաւորին երկար ճամբորդութիւնն ի նկատ ունենալով՝ ըստ այնմ կարեւոր գումար մը հաճեցէք իր տրամադրութեան ներքեւ դնել:

Ամերիկեան, սակայն, չկարողացաւ պատգամաւոր ուղարկել, ոչ էլ նրա տեղեկագիրը հասաւ Ժողովին: Յ. Իւսուֆեանը Ամերիկայի գործիչի հանգամանքով մասնակցեց Ընդհ. Ժողովին:

Ընդհ. Ժողովի նախօրեակին տիրող տրամադրութիւնները ընտրուելու տեսակէտից հետաքրքրական է եւ Ռոստոմի «Իրօշակ» խմբագրութեան կողմից գրած 26 Մարտ նամակի հետեւեալ հատուածը Թաւրիզի կոմիտէին.—

«Ներողութիւն, որ երկար գրելու ժամանակ չունինք. հարսանիքի պատրաստութիւնների մէջ ենք: Ռոստոմը վաղը մեկնելու է: Միւսները սպասում են փողի: Դրամ մենք եւս չենք ստանում, չնայած մեր նամակներին, հեռագրին եւայլն: Ժամանակները վատ

են: Տեսնենք ընդհանուր հարսանիքի հետեւանքը: Աստուած տայ, որ խաղաղ անցնի գոնէ: Այդ կողմից երկիւղ ենք կրում, որովհետեւ մի-երկու պարոններ, ինչպէս իմանում ենք Թիֆլիսից, թունդ պրոպագանդ են անում խմբագրութեան դէմ, ինտրիզաներ են լարում»:

Ռոստոմը Ժրնեւից մեկնեց Կովկաս Մարտ 29ին, իսկ մի քանի օր յետոյ դուրս եկաւ եւ Վոստոկ: «Իրօշակ» խմբագրութեան գործերը մի առժամանակ անցան Մ. Վարանդեանի ձեռքը: Ընդհ. Ժողովից առաջ յուզող միտքերի բնորոշման տեսակէտից անհետաքրքիր չէ եւ վերջինիս 3 Ապրիլի նամակը Վառնայի կոմիտէին.—

«Երկու խօսք ի պատասխան ձեր հարցումին՝ թէ արդեօք Ընդհ. Ժողովը օրակարգի է՞նչ խնդիրներ պիտի յարուցանէ ու քննէ: Բնական է, որ միմիայն հաշուական մասը չի կարող զբաղեցնել Ընդհ. Ժողովին, այլ կը յարուցուին շատ էական ու կարեւոր հարցեր, որոնք կ'առաջնորդեն դէպի Դաշնակցական ծրագրի հիմնական վերաքննութիւնն ու թերեւս մասամբ փոփոխումը: Չենք կարծում, սակայն, որ ապակենտրոնացումը որ մեր լաւագոյն զէնքն է եւ յաջողութեան գրաւականը, որեւէ շօշափելի փոփոխութիւն կրէ:

«Կը ծագին հարցեր մեր ծրագրի թէ՛ զուտ տեսական եւ թէ՛ գործնական կէտերի վերաբերեալ: Թէ՛ որիական հարցերը, ինչպէս նաեւ շատ ուրիշ անմիջական կարեւորութիւն ունեցող հարցեր, հաւանաբար, չեն ենթարկուի Ընդհ. Ժողովի քննութեան: Ընդհ. Ժողովը այնքան խելահաս կը լինի, որ իր սուղ ժամանակը կը նուիրէ զուտ գործնական ու հրատապ խնդիրներին: Մնդիրներ մեր ընդհանուր կազմակերպութեան վերաբերեալ: Տակտիկան, ուր կը մտնեն օրինակ ուժերի այս կամ այն տեղ կենտրոնացնելու հարցը, յեղափոխական կազմակերպութիւնները ուժեղացնելը, պրոպագանդը օտար, տաճկահայատակ տարրերի մէջ, համերաշխութեան կամ միութեան հարցը եւայլն: Կը խօսուի Բիւրօների, Կենտր. Կոմիտէների, կոմիտէների յարաբերութեան, իրաւասութեանց մասին: Թերեւս նոր Բիւրօներ կազմելու պէտք զգացուի յեղափոխական գործունէութիւնը փութացնելու համար: Դրամական ուժերը աւելացնելու նոր-նոր միջոցներ պիտի խորհուին, եւայլն, եւայլն»:

Ընդհանուր Ժողովը բացուեցաւ Ապրիլ 5ին, իսկ Ռոստոմը, ճանապարհին, Պարկովում, հանդիպելով Յ. Իւսուֆեանին՝ Թիֆլիս հասաւ մի քանի օր առաջ: Ապր. 2ի նամակով «Իրօշակ» խմբագրութեան նա հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնները.—

«Միայն կիւրակի դիշերը կարողացանք տեղ հասնել: Ուշ չէր, որովհետեւ դեռ հազիւ մի 4-5 օրից յետոյ բարեկամներս հաւաքուեն պսակի խնդիրը վերջացնելու:

«Այդ լաւ է, ժամանակ ունիմ այստեղ հօրեղբայրներս հետ համաձայնութեան գալու: Սրանք չափազանց լարուած են եղել իմ դէմ մի շարք Թիւրքիմացութիւնների պատճառով, որ հետզհետէ պարզուում են: Յոյս ունիմ, որ բոլորովին կը պարզուի հարցը, եւ հօրեղբայրներս խոչընդոտ չեն հանդիսանայ ընդհանուր խորհրդակցութեան ժամանակ: Գուցէ հարկ լինի երես առ երես դուրս գալ ինձ գրպարտող Բորիսի հետ: Սրանց «նեղանալու» պատճառներից, հանգամանքներից մի քանիսը շատ կոմիկական են: Դրա մասին յետոյ: Ես պինդ եմ կանգնելու, իսկ եթէ համաձայնութեան չեկանք, tant pis! Գարեգինին տեսայ. Վահային դեռ եւս ոչ, չի եկել:

«Ես էլ լաւ եմ: Նեարդերս էլ, բարեբախտաբար, շատ հանգիստ: Ծանապարհորդութիւնը շատ լաւ ազդեց վրաս: Ներողութիւն, որ մանրամասն չեմ գրում: Կ'աշխատեմ մի յարմար ժամանակ այդ անել»:

Ժողովի աշխատանքները շատ դանդաղ են ընթանում: Ապրիլ 20ին Ռոստոմը հաղորդում է Ժրնեւ. «Արդէն երկու շաբաթ է ինչ սկսուել են իմ պարագմունքները, բայց դեռ եւս բուն խնդրին չեմ հասել. հազիւ հազ զեկուցումներով էի զբաղուած: Այսօր յուսով եմ վերջինը կը լինի եւ վաղը կը սկսիմ կանոնաւոր պարագմունքները:

«Որոշ դեռ ոչինչ չեմ կարող գրել: Անտոնը հրաժարում է. կարող է Թոփալը գալ»:

Պօսքը «Իրօշակ» խմբագրի մասին է. Չաւարեանը մերժում է եւ, իբրեւ խմբագիր, կարող է դալ Քրիստափոր Միքայէլեանը:

Չորս օր անցած, Ապրիլ 24ին Ռոստոմը գրում է. «Գործերս առայժմ լաւ են գնում. յոյս ունիմ մի 2-3 շաբաթից յետոյ վերջացնել»: Այս լաւատեսութիւնը, սակայն, չի արդարանում: Ընդհակառակը, մասամբ ոստիկանական հսկողութիւնից խուսափելու համար, մասամբ էլ ներքին պատճառներով Ժողովը խիստ ձրգձրգում է եւ տեղիք է տալիս բողոքների: Առաջ են գալիս եւ այլ կարգի դժուարութիւններ, որոնցից յիշենք Ս. Չաւարեանի Մայիս 21 գրաւոր հրաժարականը թեկնածութիւնից Բիւրոյի, կամ այլ մարմինների անդամութեան համար: Դժբախտաբար, յայտնի չեն մանրամասն պատճառները, բայց երեւում է, որ Ժողովում պահանջ է դրուել ընտրութիւնները կատարել առանց բոլոր հիմնական հարցերի լուծման: Ըստ երեւոյթի, պատգամաւորների մի մասը, դժգոհ Ժողովի երկարաձգումից՝ պնդել է, որ օր առաջ ընտրութիւններ կատարուեն, որպէսզի իրենք կարողանան հեռանալ առանց Ժողովի վերջին սպասելու: Գործերի մէջ այդ իմաստով թուղթ կայ ստորագրած նաւահանգաւոր եւ Տրապիզոնի պատգամաւորների կողմից, որոնք շատ խիստ բառերով բողոքում են Ժողովի ձգձգումների դէմ:

Ահա Ս. Չաւարեանի Ընդհ. Ժողովին ուղղած գրութիւնը.

«Անցեալ նիստերում բերելով շատ առարկութիւններ՝ քանիցս անգամ ես յայտնած եմ, որ ընտրութիւններին դիմելն ու նրանց կատարելը նախ քան ընդհանուր հարցերի լուծումը, կը ստիպէ մեզ շատ եւ շատ սխալներ անել: Վերջին շաբաթը ինձ աւելի եւս համոզեց այդ բանի մէջ:

«Չցանկանալով այդ սխալների պատասխանատուութիւնը տանել՝ ես հրաժարում եմ որեւէ մեր պատասխանատու մարմինների (Բիւրօ եւ Պատասխանատու Կենտրոնական Կոմիտէներ) անդամ ընտրուելուց: Ես վերապահում եմ ինձ այն ազատութիւնը ինչ որ Ժողովականներից շատ շատերը:

«Երբ պարզ կը լինին կազմակերպութեան բոլոր մարմինների պարտականութիւններն ու յարաբերութիւնները, երբ լուծուած կը լինին դրամական, դիսցիպլինայի ու միւս առկախ մնացած ընդհանուր բնատրութիւն ունեցող խնդիրները, այն ժամանակ ես կը մտնեմ Դաշնակցութեան մարմիններից մէկի մէջ (հարկաւ արդէն ընտրուած կամ եղածների համաձայնութեամբ):

«Գուցէ աւելորդ չլինի այստեղ սասել, որ այս հրաժարականով ես չեմ ուզում ճնշում գործ դնել եւ ձեր առաջ կանգնեցնել մի ինչ որ ուրուականի հարց, որը անտեղի կերպով արուեսց անցեալ օրերից մէկում:

«Անձնականապէս ոչ ներկայ, ոչ դրսում գտնուած ընկերներից եւ ոչ մէկի հետ ես (մեղմ խօսելով) վատ չեմ: Գաղափարական տեսակէտից, գլխաւոր հարցերի վերաբերմամբ, ես համամիտ եմ կազմակերպութեան եւ Ժողովականների ճշող մեծամասնութեան հետ: Բացառութիւնը կենտրոնականութեան եւ ապակենտրոնացման հարցն է. դա էլ չի կարող պատակտման մի առանձին պատճառ լինել, որովհետեւ ես ապահով եմ, որ կազմակերպութիւնը թէ՛ պաշտօնապէս, թէ՛ այս կամ այն քօղի տակ թոյլ չի տայ կենտրոն ստեղծուելուն եւ կ'ապահովէ մեր բոլոր մարմինների հաւասարակշռութիւնը:

«Միւս կողմից էլ, նոյնիսկ դէպի կենտրոնականները ես զգում եմ ամենաքիչը ընկերական յարգանք: Բայց եթէ չլինէր նոյնիսկ այս ամէնը, եթէ ես անձնականապէս վատ լինէի շատ շատերի հետ, եթէ Ժողովը անէր այս կամ այն մեծ սխալը, — եթէ լինէր նոյնիսկ այս ամէնը, ասում եմ, — ես այնքան սերտ կերպով կապուած եմ Դաշնակցութեան միջոցաւ մեր Ժողովուրդի դատի հետ, այնքան մեծ յարգանք եւ վստահութիւն ունիմ դէպի Ժողովը իր ամբողջ կազմով, որ ոչ մի պարագայում խոչընդոտ չէի հանդիսանայ կազմակերպութեան ու Ժողովի կարծիքներին ու անելիքներին, այլ, ընդհակառակը, կ'աջակցէի այդ անելիքների իրագործուելուն:

«Ահա ինչու, թողնելով մի կողմ մեզ վախեցնող ուրուականը, ես խնդրում եմ միմիայն ընտրութիւնների ժամանակ, իմ անձի վերաբերմամբ, թողնել ինձ այս կամ այն մարմնի մէջ մտնելը:

21, V, 98

Զեր՝ Ս. ՕՀԱՆՅԱՆ»

Այս գրութիւնից երեւում է, թէ կենտրոնացման եւ ապակենտրոնացման խնդիրը բաւական զբաղեցրել է ժողովը: Զաւարեանը ծայրայեղ ապակենտրոնական էր:

Ընդհ. ժողովի գործերի մէջ մնացել է եւ Ս. Զաւարեանի ձեռքով գրուած հետեւեալ գրութիւնը — մի հատուած կանոնադրի նախագծից — որից երեւում է, որ Զաւարեանը շատ գործօն մասնակցութիւն է ունեցել Կանոնադրի մշակման աշխատանքներին:

«Դաշնակցութեան որոշումները կատարելու պարտականութիւնը դրւում է ամբողջ կազմակերպութեան վրայ առանձին անհատից, խմբից, կոմիտէից սկսած մինչեւ Կենտր. Կոմիտէին, Բիւրօներն ու Պատասխ. Մարմինները:

«Ամէն մարմին իրա շրջանին վերաբերեալ գործերը կատարում է իր պատասխանատուութեամբ. եթէ որեւէ ձեռնարկութեան ազդեցութիւնը դուրս է գալիս մարմնի շրջանից, կամ ձեռնարկութիւնը կատարելու համար անհրաժեշտ է հարեւանների ու միւս մարմինների օգնականութիւնը, այդ պարագայում գործող մարմինը դիմում է հարեւան աւելի լայն շրջան ունեցող մարմիններին:

«Այդ շրջանների վճիռները կայացւում են ձայների մեծամասնութեամբ: Երբ որեւէ խմբի, կամ Բիւրօյի, կամ Պատ. Մարմնի կողմից անհրաժեշտ է գրտնւում ձեռնարկել որեւէ գործի մարմնի անդամների մասնակցութեամբ, ամէն մէկի վրայ պարտականութիւն է դրւում ենթարկուել ընկերների (2/3ի) ձայներին: Ծայրայեղ պարագաներում ձեռնարկուելիք գործի համար յարմարագոյնը որոշուում է վիճակով:

«Դաշնակցութեան մէջ, անհատներից, խմբերից եւ կոմիտէներից սկսած մինչեւ Բիւրօ եւ Պատ. Մարմին, չկայ խնդիր իրաւունքի ու իշխանութեան, այլ միմիայն պատասխանատուութեան ու պատրաստակաւնութեան կատարելու կազմակ. որոշումներն ու ընկերների խնդիրները: Պարզ է, որ քանի անհատը ու այս կամ այն մարմինը աւելի անձնուէր ու արդիւնաւէտ կերպով է կատարել իրա վրայ դրուած պարտականութիւնը, այնքան նա աւելի կը վայելէ ընկերների յարգանքն ու հաւատը, այնքան նա աւելի համապատասխան կը համարուի աւելի լայն շրջանի գործերը տանելու:

«Երբ այս կամ այն անցանկալի գործերի ու գրու-

թեան շնորհիւ խզւում են եւ դադարում են ընկերական լինելուց այս կամ այն մարմնի անդամների ու կամ ամբողջ մարմինների յարաբերութիւնները եւ անկարելի է հարցերը պարզել, թիւրիմացութիւնները լուծել ու չարիքի առաջը առնել միջնորդ ընկերական դատաստանի միջոցաւ, այդ պարագաներում ամէն մարմին դառնում է դատաստանական ատեան իրա ընկերով կամ ուրիշի վերաբերմամբ եւ տալիս որոշում 2/3 ձայների մեծամասնութեամբ:

«Պատժի ծայրայեղ աստիճանները (սպանութիւն ու կազմակերպութիւնից հեռացնելը) որեւէ մարմնի կողմից կարող է տրուել միմիայն դատապարտուող մարմնից աւելի լայն շրջան ունեցող մարմնի համաձայնութեամբ, որը արդարութիւնը պաշտպանած լինելու համար կամ ինքը կը քննէ գործը, կամ դրա անելը կը յանձնէ ուրիշ քննիչ դատաստանական ատեանի:

«Ղառամատանական մարմինները վրայ պարտք է դրւում մեղադրուողի շահերը պաշտպանել կարելի եղած միջոցներով՝ չմոռնալով, որ յեղափոխական գործի էտիկայի հետ միասին կայ եւ ընդհանուր բարձր արդարութեան ձայնը, որոնք հաւասարապէս պարտաւորեցուցիչ են ամբողջ Դաշնակցութեան համար»:

Ընդհ. ժողովի ընթացքի բնորոշման համար որոշ տեղեկութիւն է պարունակում եւ Հր. Թիրեաքեանի 25 Մայիս նամակը Կիպրոսի Կոմիտէին. —

«Ընդհ. ժողովը դեռ կը շարունակուի. 15 օրէն անպատճառ աւարտած կը լինենք: Արտասահմանի Բիւրօ խմբագրութիւնը կազմուեց հետեւեալ անձնաւորութիւններէ. Քրիստափոր, Վահագ, Սմբատ, Ռոստոմ եւ Գարօ: Վերջինս անուանական պիտի լինի. անոր տեղ անպաշտօն կերպով կ'երթայ Տիգ. Յովհաննիսեանը. աս թէեւ օրինական կերպով ընտրուեցաւ, սակայն մեր մի քանի ընկերներու յայտնած դժգոհութիւններու պատճառով հրաժարական տուաւ եւ ընդունեց մասնաւոր կերպով երթալ Ժընեւ: Ի՛հ, արտասահմանն ալ ուժեղացաւ: Երկու անդամներ շրջիկ պիտի լինին: Ընդհ. ժողովի բացակայութեան ժամանակ Դաշնակցութեան կամքը արտայայտող մարմիններ պիտի լինին երկու Բիւրօները եւ հետեւեալ 4 Պատասխ. Կեդր. Կոմիտէները՝ Մաղիկ, Լեոնավայր, Բարձրաւանդակ, Շամիր: Թէ այս մարմինները ինչպէս պէտք է կազմուեն եւ այլ մանրամասնութիւնները՝ յետոյ»:

Տիգրան Յովհաննիսեանը — հետագային յայտնի փաստաբան եւ գրագէտ — Քրիստափորի թեկնածուն էր: Քրիստափորը նրա հետ մեծ յոյսեր էր կապում, որոնք, սակայն, չարարացան: Տ. Յովհաննիսեանը կարճ ժամանակ մնալով Ժընեւում՝ համոզուեցաւ, որ յեղափոխական գործը իր ասպարէզը չէ, եւ հեռացաւ:

Ընդհանուր ժողովը վերջացաւ Յուլիսի սկիզբները: Ժողովի տեւողութեան ընթացքին կուսակցական կեան-

քը շրջաններում գրեթէ կանգ էր առել՝ առաջ բերելով ընդհանուր դժգոհութիւն:

Օգոստոսի սկզբին Վառձեանը վերադառնալով Ժընեւ նորից ձեռք է առնում խմբագրութեան գործերը: Օգոստ. 12ին Ալեքսանդրիա գրած մէկ նամակում նա տալիս է հետեւեալ տեղեկութիւնները Ընդհ. ժողովի մասին. «Ընդհանուր ժողովը վերջացած է երեք շաբաթէ ի վեր եւ հետզհետէ ընկերները կը սկսին ցրուիլ: Խմբագրութեան անդամներէն միայն Վահագը եկած է. միւսներն ալ չեն ուշանար: Ժողովի ատենագրութիւնը տպուելու վրայ է եւ կը յուսանք մինչեւ 10 օր կոմիտէներուն ցրուել: Հետաքրքիրները թերեւս չգտնան փնտառածին, որովհետեւ տակտիկան, բանակցութիւնները եւ ընտրութիւնները չպիտի հրատարակուին, այլ իւրաքանչիւր կոմիտէի պիտի հաղորդուի տակտիկի վերաբերեալ այն մասը, որ իրենց գործունէութեան կը վերաբերի: Միութեան խնդիրն ալ կարգադրուած է. մերժուած է կարգ մը նկատուներու հիման վրայ»:

Մի ուրիշ նամակում, Օգոստ. 24ին, Վառձեանը հաղորդում է Ամերիկայի Կենտր. Կոմիտէին, թէ՛ «Ընդհանուր ժողովը կարծուածէն աւելի երկար տեւեց նախ՝ պատգամաւորներուն ուշ գալուն եւ երկրորդ՝ զգուշութեան համար ժողովի նիստերը շաբաթի մը չափ ընդհատուելուն համար: Այդ երկարելն է եղած պատճառը, որ խմբագրութիւնս մասամբ անկարող գտնուած է կոմիտէներու պահանջներուն եւ հարցերուն զոհացում տալ, որովհետեւ մենք ալ բաւական ատեն զրկուած մնացինք լուրերէ: Այսօր կրնանք հաղորդել, որ արդէն ժողովի նիստերը Յուլիսի սկիզբներուն վերջացեր են եւ խմբագրութեանս մէջ ստացուած է ատենագրութիւնը, որուն կրճատ ամփոփումը տպուելու վրայ է եւ մինչեւ 7-8 օր կը յուսանք կոմիտէներուն ցրուել»:

Իսկ Արեւելեան Բիւրօյին գրած 31 Օգոստ. նամակում Վառձեանը ասում է, թէ՛ «Ընդհ. ժողովի այլանդակօրէն չափազանց երկարումը իր գէշ հետեւանքներն ունեցեր է զրեթէ բոլոր շրջաններու համար — բան մը, որ դժուար չէր գուշակել: Գործերը կանգ են առեր. խմբագրութիւնը անկարող գտնուած է զոհացնելու եւ ուղղութիւն մը տալու ընթացիկ գործերուն, եւ ամէնքն ալ ձեռքերնին զրպաննին դրած, բարանին բաց՝ Ընդհ. ժողովէն դալիք պատգամներուն սպասելը են»:

Այսպէս թէ այնպէս, Երկրորդ Ընդհանուր ժողովը, կարելի է ասել, վերջացաւ յաջողութեամբ, հիմնական լուծում տալով հերթի դրուած բոլոր կարեւոր հարցերին: Բայց ամենակարեւորը նրա կատարած գործի մէջ եղաւ, ի հարկէ, Կուսակցութեան կազմակերպական կանոնադրի մշակումը՝ լայն ապակենտրոնացման դրութեան հիման վրայ: Ենթահիւ այդ կազմակերպական դրութեան՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը ա-

րագ կերպով զարգացաւ, ծաւալուեց, ժողովրդակաւնացաւ եւ դարձաւ հայոց կեանքի ղեկավար հզոր կազմակերպութիւնը:

ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժողովի մանրամասն արձանագրութիւնները, ղեկախտաբար, պահուած չեն: Մնացել է «նիստերու ամփոփ եւ կրճատ ատենագրութիւնը», այսինքն՝ արձանագրութեանց սեղմ ամփոփումը: (Տես Հ. Յ. Դիւան, թիւ 1522 թղթածրար): Այս ամփոփումը տպուած եւ մարմիններին ուղարկուած է որոշ կրճատումներով: Այստեղ հրատարակուած ենք առանց յապաւումների:

Երկրորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ Թիֆլիսում: Նիստերը տեղի էին ունենում մասնաւոր բնակարաններում, գաղտնի կերպով:

Ժողովին մասնակցում էին 19 պատգամաւորներ եւ 13 գործիչներ: Ահա նրանց ցանկը. փակագծի մէջ տալիս ենք վայրի եւ պատգամաւորների իսկական անունները: Մի քանիսի մասին, դժբախտաբար, ստոյգ տեղեկութիւններ կարելի չեղաւ ձեռք բերել:

Ա. ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ

1. Վիշապի՝ Վահագ — (Պոլիս, Ա. Վառձեան).
2. Ոսկեհանքի՝ Բարսեան — (Իզմիր, Գ. Խաժակ).
3. Մովսիսի՝ Տաշրացի — (Տրապիզոն, Վրէն Գաւապարեան).
4. Արծիւի՝ Արծրունի — (Երզնկա՞).
5. Կզըի՝ Հրաչ — (Կիպրոս, Հրաչ Թիրեաքեան).
6. Խմբագրութեան՝ Ռոստոմ:
7. Վրէժտանի՝ Մխիթար — (Թաւրիզ, բժ. Քր. Օհանեան).
8. Պալքանեան թերակղզի՝ Արվախի — (Բուլղարիա եւ Ռումանիա, Վարդ Պատրիկեան).
9. Եզդիպտոսի՝ Գարօ — (Արմէն Գարօ).
10. Մեծ Քաղաքի՝ Ռուբէն — (Թիֆլիս).
11. Ոսկեջուրի՝ Էլէն — (Բագու, Քրիստափոր).
12. Ամուրի՝ Կարօ (Սեւ) — (*).
13. Քարի՝ Բժիշկ — (Ալեքսանդրապոլ).
14. Զրաբերդի՝ Խաչիկ — (Կարս).
15. Նաւահանգստի՝ Կարէն — (Բաթում, Արամ Յակոբեան).
16. Աւազանի՝ Շահէն — (*).
17. Նալպանտի՝ Բէգլար — (Նոր-Նախիջևան).
18. Եկեղեցիի՝ Ուսանող Յովսէփ — (Մոսկուա, Յովս. Թադէոսեան).
19. Սարուստանի Բիւրոյի՝ Սիմոն — (Ռուսաստանի Բիւրօ, Ս. Զաւարեան):

Բ. ԳՈՐԾԻՉՆԵՐ

1. Արբակ Ռչտունի — (Յովսէփ Միրզայան).
2. Բորիս — (Մարտո Պաշտուրեան).
3. Կարա-Մելիք — (Բարսեղ Տէր Գրիգորեան).
4. Մանուկ — (*).
5. Մելիք — (Յովհ. Իւսուֆեան).
6. Շատախիցի Յովսէփ.
7. Նիկոլ — (Նիկոլ-Պուստան).
8. Շահրիկեան — (Յար. Շահրիկեան).
9. Սաքօ — (Սեւ Քարեցի Սաքօ).
10. Վահէ Սիւնի.
11. Վարդան — (Պանասորի Հրամանատարը).
12. Տորք — (Յ. Աշրկէզոյեան).
13. Քեռի — (Շիշմանեան, Տերսիմի Քեռի): ՊՄԲ.

Հ. Յ. Դաշնակցութեան Երկրորդ Ընդհ. Ժողովի նիստերուն ամփոփելու կրօնատ ատենագրութիւնը(3)։

Դաշնակցութեան կոմիտէներու միահամուռ յայտնած բաղձանքին համաձայն, խմբագրութիւնը եւ Սարուստանի Բիւրօն հրաւէր ուղղեցին Երկրորդ Ընդհ. Ժողովը գումարելու։

Ժողովը բացուեցաւ 5 Ապրիլ 1898ին, Մեծ Քաղաքի մէջ եւ ունեցաւ 66 նիստ։ Ներկայ էին՝

Ա. Թուրքիայէն՝ Վիշապի, Ոսկեհանքի, Մովսփի, Արծիւի եւ Կղզիի պատգամաւորները (5 ձայն)։

Բ. Երկրէն դուրս՝ Վրէժստանի, Բալկանեան թերակղզիի, Եգիպտոսի եւ Սարուստանի ինը Կեդր. Կոմիտէներէ, այն է՝ Մեծ Քաղաքի, Ոսկեջուրի, Ամուրի, Քարի, Զրարերդի, Նաւահանգստի, Աւազանի, Նալպանտի եւ Եկեղեցիի պատգամաւորները (12 ձայն)։

Գ. Երկրի մէջ պատասխանատու գործեր վարող ընկերներ թուով 13 հոգի, որոնցմէ մէկը հրաւիրած էր խմբագրութիւնը արտասահմանէն, միւս 12ը, որոնք կը գտնուէին Ժողովի գումարման պահուն Մեծ Քաղաքի մէջ եւ ձօտերը, Սարուստանի Բիւրոյի հրաւէրով։

Դ. Խմբագրութեան եւ Բիւրոյի ներկայացուցիչները (2 ձայն)։

Բացակայ էին Շամիրի, Բարձրաւանդակի, Կարմիր-Բերդի(4) եւ Ամերիկայի պատգամաւորները։

Ատոնցմէ առաջինը իր ձայնը յանձնած էր Մովսփիին, իսկ երկրորդն ու երրորդը՝ միայն տեղեկագրեր ներկայացուցած էին Ժողովին(*):

(* Տպագրութեան օրինակէ մէջ աւելցուած է հետեւեալ ծանօթութիւնը։— Ժողովը փակուելէն յետոյ միայն խմբագրութեան, որ Կարմիր-Բերդի իր ձայնը տուած էր Ոսկեհանքի պատգամաւորին, իսկ Ամերիկայի տեղեկագրերը, ինչպէս նաեւ Կարմիր-Բերդի երկրորդ տեղեկագրերը, մնացորդ էին խմբագրութեան մէջ, յարաբերութիւններու անսկզկալ ընդհատումի մը հետեւանքով։

Հետեւաբար, Ժողովը կը կազմէին 17 պատգամաւոր 18 ձայնով, Բիւրոյի եւ խմբագրութեան երկու ներկայացուցիչներ՝ 2 ձայնով եւ 13 ընկերներ 13 ձայնով, ընդամէնը 32 հոգի 34 ձայնով։

Ժողովը իր այդ կազմին մէջ ինքզինքը ճանաչեց եւ յայտարարեց վաւերական Ընդհանուր Ժողով Դաշնակցութեան եւ սկսաւ իր գրադմունքները(*):

Ժողովը նկատելով, որ Ընդհ. Ժողովի կանոնադրութեան մը չգոյութեան պատճառով ճշդութեամբ չէին կարգ մը կազմական խնդիրներ, առանց որոնց լուծման անհնար էր օրակարգի խնդիրներուն անցնել, հետեւեալ որոշումները տուաւ։—

1. Ընդհանուր Ժողովը իր վճիռները կու տայ գոնէ ձայններու երկու երրորդի առաւելութեամբ։

2. Պատգամաւոր մը երկու ձայնէ աւելի չի կրնար ունենալ։

3. Գործիչ մը, երբ շրջանի մը ձայնը կը ստանայ, կը համարուի պատգամաւոր եւ կը կորսնցնէ իր գործիչի ձայնը։

4. Նկատելով որ կոմիտէներու ուղղութեամբ հրաւիրագրերուն մէջ առաջարկուած էր անոնց՝ տեղեկագրերով յայտնել իրենց կարծիքը այս կամ այն խնդրի մասին, եթէ հնար չունենային պատգամաւոր ղրկելու կամ իրենց ձայնը Ժողովի տեղին մօտ գտնուող գործիչին կամ ուրիշ Դաշնակցական մարմնի մը յանձնել։—

Ժողովը միայն այս Ընդհ. Ժողովի համար ընդունեց՝ երկրի այն կոմիտէներու տեղեկագրերուն միայն քուէի իրաւունք ճանաչել, որոնք յարգելի պատճառով մը չէին կրցած պատգամաւոր ղրկել կամ իրենց ձայնը ուրիշի մը տալ։

5. Սարուստանի Պատգամաւորական Ժողովը եւ խմբագրութիւնը հարկ տեսած էին արտասահմանի եւ Սարուստանի Դաշնակցական ուսանողութիւնն էլ հրաւիրելու Ընդհ. Ժողովի՝ տալով անոնց մէկ-մէկ ձայնի իրաւունք։ Ոչ մէկը եւ ոչ միւսը ժամանակ եւ դիրութիւն չէին ունեցած Ժողով գումարելու եւ պատգամաւոր ընտրելու։ Բայց Մոլէկիւլ կոմիտէն (արտասահմանի ուսանողական կոմիտէ մը) իր կողմէն լիազօրութիւն ունեցող գործիչի մը միջոցաւ կ'առաջարկէր միայն տեսական խնդիրներու լուծման մէջ ճանաչել իր ձայնը՝ նոյն սկզբունքը դնելով եւ միւս

(* Բնագրի մէջ, յետոյ, գրուած ու ջնջուած են հետեւեալ տողերը։— Գալաթեան Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը միայն բողոքեց Ընդհ. Ժողովի այդ կազմին դէմ եւ միայն այն պայմանով համաձայնեցաւ մասնակցել Ժողովին, եթէ իր բողոքը մտցուի Ժողովի արձանագրութեան մէջ։

Ժողովը յարգելով պ. ներկայացուցչի առաջարկը՝ որոնց կցել ատենագրութեան այդ բողոքի համառօտագրութիւնը եւ յանձնարարեց նախագահին, զարտուղարներուն՝ դնել միանգամայն համառօտ այն պատճառաբանութիւնները, որոնց հիման վրայ այդ բողոքը ի նկատ չառնուեցաւ Ժողովի կողմէն։

ուսանողական կոմիտէներու համար, եթէ այդպիսիներ ներկայացուցիչ ղրկէին Ընդհ. Ժողովին։

Ժողովը ընդունեց Մոլէկիւլի առաջարկը եւ այդ հիման վրայ Երկրորդ Ընդհ. Ժողովին մասնակցելու իրաւունք տրուեցաւ Մոլէկիւլի, Պարթուիի եւ Հիւսիսակերտի կոմիտէներու պատգամաւորներուն՝ տալով անոնց ձայնի իրաւունք միայն զուտ տեսական խնդիրներու լուծման ժամանակ։

Սնդիր եղաւ, թէ կարելի՞ է արդեօք արդէն Ժողովին հրաւիրուածներէն դուրս ընդունել նոր անդամներ՝ խորհրդակցական ձայնով։

Նկատելով, որ ներկայ անդամներու թիւը արդէն մեծ է եւ նորեր եւս աւելացնելով Ժողովի հաւաքումները կը դժուարանան եւ թէ Ժողովը իր գրադմունքէն պիտի շեղէր ամէն անգամ, երբ հարկ տեսնուէր որոշել, թէ պէ՞տք է այսինչ գործիչը ընդունել թէ ոչ, Ժողովը մեծամասնութեամբ մերժեց նոր անդամներ աւելցնել ներկայ կազմին։

Այս նախապատրաստական գործողութիւններէն ետք Ժողովը ընտրեց քննիչ յանձնախումբ մը երեք անդամէ բաղկացած, որուն պաշտօն յանձնուեցաւ ստուգելու Ընդհ. Ժողովին ներկայացուած դրամական հաշիւները եւ պատրաստել Դաշնակցութեան 1897ի ընդհանուր հաշուեկշիռը։

Այնուհետեւ Ժողովը մեծամասնութեամբ, վճռեց օրակարգի խնդիրները քննելէ առաջ, լսել ներկայացուած գրաւոր տեղեկագրերու (Բերդ, Փարիզ, Ոսկեհանք, Եգիպտոս, Կղզի, Սալոյ Զոր, Շամիր, Զոհ, Աղեքսանդրիա եւ Գահիրէ, Եկեղեցի, Նիկոսիա, Պարթուի), ինչպէս նաեւ բոլոր կոմիտէներու, խմբագրութեան եւ Սարուստանի Բիւրոյի համարատուութիւնը, կարելի եղածին չափ ամփոփել եւ լրիւ(*):

Ձեկուցումները գրաւեցին Ժողովի տասն եւ չորս նիստերը։

Ժողովականների առջեւ պարզուեցաւ Դաշնակցութեան անցեալ ամբողջ գործունէութիւնը 1892-97, իր բոլոր կողմերով։

Ժողովը գործի շահի տեսակէտով վնասակար գրտաւ այդ զեկուցումները կցել ատենագրութեան եւ ցրուել, այլ յանձնարարեց պատգամաւորներին, որ իւրաքանչիւրը իր զեկուցումը գրաւոր պատրաստելով յանձնէ Դիւանին, որպէսզի ամփոփելով մէկ տետրակի մէջ ղրկուի արտասահմանի Բիւրոյի պահելու։ Այդ

(* Յետոյ գալիս է հետեւեալ հատուածը, որ գրուած ու ջնջուած է։— Բնագրի մը տեղեկագրերու ընթացումը առիթ տուաւ ի նկատ ունենալու մեր մէջ տիրող ազդեցութեան, որ իրար յաջորդող մարմիններ ու գործիչներ ընդհանրապէս ձգտում ունին նախորդներու գործունէութիւնը անյաջող ներկայացնել։ Ժողովը վնասակար գտաւ այս բանը զլիաւորապէս գործի բարոյանքով տեսակէտէն։ Հատուածը, սակայն, գրուած է սպուտ օրինակի մէջ։

տետրակէն կ'օգտուին Դաշնակցութեան գործիչները կամ մարմինները ամէն անգամ, երբ հարկ տեսնուի որեւէ առիթ(*):

Ժողովը ստիպուած ըլլալով ամբողջ տասնուչորս նիստ նուիրել այդ զեկուցումներուն, խոյս տուաւ զբաղելէ այնպիսի խնդիրներով, որոնք ընդհանուր գործի տեսակէտէն մասնաւոր հանգամանք կրնային ունենալ միայն. օրինակ, այս կամ այն մարմնի, այս կամ այն ընկերոջ միջեւ ծագած թիւրիմացութեան, դժգոհութեան կամ բողոքի դէպքերը, ուստի յանձնարարեց շահագրգռուող կողմերուն իրաւախնդրութեամբ ընտրել երեք Ժողովականներէ բաղկացած յանձնախմբեր խնդիրը քննելու եւ Ընդհ. Ժողովին տեղեկացնելու համար։

Այդ տեսակ յանձնախումբ մը կազմուեցաւ Վրէժ-ժրստանի ընկերներու պահանջով քննելու համար Միւնաթի(5) Կեդր. Կոմիտէի եւ զինուորներուն միջեւ ծագած դժգոհութիւնները(**)։ (Այդ յանձնախումբը երկար քննութեանէ ետքը, անհնար գտաւ արդարացուցիչ կամ ամբաստանող վճիռ մը բերել մէկ կամ միւս կողմին նկատմամբ. իր տրամադրելի միջոցներն անբաւարար նկատուեցան խնդիրը հիմնապէս լուսարանելու, որովհետեւ բացակայ էին կարեւոր վկաներ եւ կը պակսէին վաւերագրեր)։

Ընդհ. Ժողովի դատաստանին դիմեց նաեւ խրմբագրութեան ներկայացուցիչը, որ պահանջեց քննել Սարուստանի վերջին (1897-98) Պատգամաւորական Ժողովի քննադատութիւնը խմբագրութեան բիւրոյական եւ խմբագրական գործունէութեան դէմ։

Ժողովը որոշեց այս խնդիրը յետաձգել մինչեւ բիւրոյական խմբագրութեան ընտրութիւնները, բայց ետքն ալ որովհետեւ հարկ կը զգացուէր այդ ընտրութիւնները փութացնել, միջոց չունեցաւ այդ խնդրով զբաղելու։

Ժողովը ընտրութիւններէն ետք զոհացում տուաւ խմբագրութեան ներկայացուցիչին՝ Ա. յայտարարելով, թէ Սարուստանի Պատգամաւորական Ժողովի կարծիքը պարտաւորիչ չէ Ընդհանուր Ժողովի համար, Բ. թէ Ժողովը խմբագրական նախկին մարմինը վերընտրելով ներկայ կազմին մէջ եւս՝ միանգամայն իր վստահութիւնը յայտարարած կը լինի խրմբագրութեան նախկին անդամներուն, Գ. եւ յանձնարարեց, որ այդ խնդիրը քննուի Սարուստանի Ժողովական պատգամաւորներու մասնաւոր ատենանի մը առջեւ խմբագրութեան ներկայացուցիչին մասնակցութեամբ։

(* Դժբախտաբար, այդ նիւթերը չեն մնացած Հ. Յ. Դ. Դիւանում։ ՊՄԲ.

(**) Գլխաւորապէս Պանասորի արշաւանքի նախապատրաստութեան շրջանում տեղի ունեցած դէպքերը, ինչպէս Ոսկեհանքի գործը, տաճկահայ-աւստալ խնդիրը եւայլն։ ՊՄԲ.

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Տակտիկա կամ գործունէութեան եղանակ.
- Բ. Կազմակերպութիւն.
- Գ. Կարգապահութիւն (discipline).
- Դ. Դրամական խնդիր.
- Ե. Միութեան խնդիր.
- Զ. Բանակցութեան խնդիր.
- Է. Ընտրութիւններ:

Ա. ՏԱԿՏԻԿԱ (6)

Ժողովը Տակտիկայի վիճարանութեան ձեռնարկելէ առաջ, սկզբունքով միաձայն ընդունեց, թէ առանց եւրոպական միջամտութեան անկարող ենք մեր ժողովուրդի ազատութեան գործը զլուխ բերել, հետեւաբար, գործունէութեան եղանակը որոշելու ատեն ի նկատի պիտի ունենալ այդ միջամտութիւնը յառաջ բերելու բոլոր հնարաւորութիւնները:

Վիճարանութիւնները տասնեակներու երկար նիստերու նիւթ եղան եւ պատեցան զլիաւորապէս հետեւեալ երկու կէտերու շուրջ.—

1. Միայն ցուցական գործունէութիւն բուն երկրէն (Օսմանեան Հայաստանէն դուրս):
2. Ուժերու կեդրոնացում Երկրին մէջ (ապրտամարական պատրաստութիւններ) ցոյցերու հետ ընկերացած:

Միայն ցուցական գործունէութեան պաշտպանները կը պատճառարանէին, թէ ցուցական գործունէութիւնը երբեք այնքան անհրաժեշտ չէ եղած, որքան այժմ, եւ թէ զենքերու կեդրոնացումը բուն երկրի մէջ այժմ անհնարին է. կը պնդէին, թէ այդ նպատակով երկար տարիներ ձեռնարկուած փորձերը երկրի մէջ, տիրող դժոխսային պայմաններու եւ մեր տրամադրելի միջոցներու (մարդ եւ դրամ) պակասութեան շնորհիւ իրենց նպատակին չեն հասնիր. զենքերը կը կորսուին, նոյնիսկ մեր թշնամիներու կը ծախուին եւ ընդհանրապէս առաջ կը բերեն խիստ խուզարկութիւններ, ընդհարումներ, կողոպուտ, բռնութիւն, երբեմն եւ կոտորած, որոնց հետեւանքները եղած են եւ կը լինին աշխատանքի, դրամի եւ կարեւոր ուժերու կորուստ ու հարստահարուած ժողովուրդի մէջ հազիւ նշմարուող յեղափոխական ոգիի թուլացումը. կռուել երկրին մէջ մեր թշնամույն դէմ այժմ մենք անկարող ենք. պատրաստուել կուրելու համար՝ նոյնպէս չենք կարող, մինչեւ որ չփոխուին պայմանները, իսկ այս պայմանները փոխուել կարող են միայն շնորհիւ այն բարենորոգումներուն, որոնց ծրագիրը մշակած է Եւրոպան եւ որոնց իրագործումը կը պահանջէ Օսմանեան կառավարութեան:

Այս բարենորոգումներն են ներկայ վայրկեանի հարցը. ատոնք խոստացուած են մեզ Եւրոպայի կողմէն եւ մեր մերձաւոր միակ նպատակը պէտք է լինի մեր բոլոր ուժերը լարելով՝ պահանջել եւ ստանալ այս բարենորոգումները. իսկ ատոնք կարելի է ստանալ ոչ թէ երկար տարիներ լուռ ու մունջ պատրաստութիւններ տեսնելով, այլ կոխ մղելով, քիչ-շատ ուժեղ ցոյցեր ընելով: Այդ կողմի մէջ ոյժն ու յաջողութիւնը կարող են մեր կողմը լինել, եթէ մղուին ոչ թէ երկրի խորը, ուր մենք շատ թոյլ ենք, ուր յաճախ կը յաղթուինք ու անխնայ եւ անպաշտպան կը կոտորենք հեռու Եւրոպայի աչքէն եւ ուրտեղի մեր ամենափայլուն գործերը (96ի Վանի հոյակապ կռիւը եւ 97ի յաղթական արշաւանքը) դրեթէ անյայտ կը մնան Եւրոպայէն, այլ թուրքիոյ այն կէտերը, ուր մենք կարող ենք վնասել թուրքիոյ եւ Եւրոպայի շահերուն այնպիսի զօրեղ եւ քիչ մարդ ու դրամ պահանջող զենքի միջոցով, ինչպէս ուսման է: Այս կրկնակի շահերուն մենք կարող ենք վնասել թուրքիոյ ծովեզերքին վրայ, իսկ մնացած կէտերու մէջ մենք կարող ենք կատարել միայն ապարդիւն հերոսութիւններ, որոնք կարող են նիւթ կազմել վիպասանութեան, բայց ոչ նպատակ յեղափոխութեան: Յոյցեր անհրաժեշտ է ընել եւ պէտք է ընել միայն այնպիսի կէտերու վրայ, ուր կը շօշուփուին Եւրոպայի շահերը եւ ուր շուտով օգնութիւն կարելի է սպասել անկէ. մնացեալ կէտերու մէջ անօգուտ է. իսկ զենքերու կեդրոնացման կարելի էր դիմել միայն այն պարագային, եթէ բարենորոգումները օրակարգի խնդիր չլինէին. կամ եթէ արդէն մտցուած լինէին ու մենք մտադիր լինէինք դիմելու աւելի հեռաւոր նպատակներու: Յոյցերու ազդեցութեանց ապացոյց կարելի է յիշել այն հանգամանքը, որ Սուրթանի կառավարութիւնը դիմած է Դաշնակցութեան եւ խոստումներ կ'ընէ՝ խնդրելով դադարեցնել ցուցական գործունէութիւնը: Այս հիմքերու վրայ կ'առաջարկէին Դաշնակցութեան ամբողջ ուժը գործ դնել Հայրենիքէն դուրս թուրքիոյ որոշ կէտերու մէջ (ծովեզերայ) ցոյցեր կատարելով՝ պարտականութիւն համարելով ներսը միայն կազմակերպութեամբ զբաղուել:

Ապստամբական պատրաստութիւնները (ցոյցերու հետ ընկերացած) պաշտպանները կը պատասխանէին.

1) Երկրի դժոխային պայմաններու մասին խօսել հիմնաւոր չէ, քանի որ այդ կարգի նկատումները նշանակութիւն կարող են ունենալ ոչ թէ մեր գործունէութեան նպատակը որոշելու, այլ միջոցները խորհելու ատեն: Այդ պայմանները միշտ դժնդակ լինելէ չեն դադրած, բայց եւ այնպէս հնարաւոր եղած է մինչեւ այժմ այնքան պատրաստութիւն տեսնել երկրին մէջ եւ փայլուն գործեր կատարել, իսկ այսօր դեռ այն առաւելութիւնն ունինք, որ անհամեմատ կերպով աճած է յեղափոխական տարրը բուն երկրի մէջ, անցեալի փորձառութիւնը կայ եւ գործի

հիմքը վաղուց դրուած են արդէն: Եթէ երկրին մէջ դժոխային են պայմանները — այդ պայմանները նոյն համեմատութեամբ ծանր են այսօր Պոլսոյ մէջ, քան 1896ին, ուր այսօր գրեթէ անհնարին է խմբակաւ եւ երկարատեւ որեւէ գործ կատարել — միակ ձեւը, որ հաւանականութիւն կրնայ ունենալ իբր ժողովրդային զօրեղ բողոք եւրոպական ազգու միջամտութիւն հրաւիրելու:

2) Մեր ուժերի սակաւութիւնը կարող էր փաստ ծառայել այն պարագային, երբ իրապէս երկրին մէջ գտնուող յեղափոխական ուժերը եկուոր մարդիկ լինէին, որոնք կարելի լինէր քաշել, հանել երկրէն եւ տանել գործունէութեան վայրերը եւ եթէ այդ ուժերը նոյնքան օգտակար հանդիսանային այդ գործունէութեան, որքան են այժմեան իրենց դերին մէջ, — բան մը, որ հակառակն է իրականութեան:

Այնպիսի կարուստը երկրին մէջ ծանր փաստ մը կարելի էր համարել, եթէ ճիշդ լինէր այդ իրողութիւնը. իրաւ է որ բաւական զենքեր ձեռքարկուած են, բայց չէ՞ որ Դաշնակցութեան դնած զենքերուն մեծագոյն մասը կը մնայ իր տրամադրութեան տակ, իր պահեստներուն մէջը կամ հայ ժողովուրդին ձեռքը: Կորսուած զենքերը նոյն պատահականութեան ենթակայ եղած են, ինչպէս նաեւ այն ուսմբերն, որոնք թուրք կառավարութեան ձեռքը ինկան Պոլսոյ մէջ: 90ական թուերուն մեր բաժնած զենքերը մինչեւ իսկ կը ծախուէին ժողովուրդի կողմէն քիւրտերուն եւ թուրքերուն, իսկ այս 7-8 տարուան յեղափոխական կարճ կեանքը ոչ միայն այդ ցաւալի երեւոյթը արժատախիլ ըրաւ, այլ եւ այնքան բացաւ հայ ժողովուրդին աչքը, որ այսօր շատ տեղեր հայը իր վերջին կահկարասին կը ծախէ եւ զենք կը գնէ:

Գալով դրամի սակաւութեան վախը անտեղի է, որովհետեւ հազիւ թէ առաջին երկու տարուան մէջ արդէն պատրաստ գտնուած զենքերը կարելի լինի փոխադրել գործունէութեան համար որոշուած վայրերը: Իսկ եթէ արտակարգ ծախսերու պէտք զգացուի, աւելի դիւրաւ կարելի է հայ ժողովուրդի աջակցութեան դիմել այդ գործին համար, քան թէ զուտ ցուցականին:

3) Սխալ է այն կարծիքը, թէ կոտորածներու պատճառ եղած է երկրի գործունէութիւնը: Արդէն ապացուցուած խնդիր է այսօր, որ կոտորածները բարձրագոյն հրամանով ծրագրուած եւ իրագործուած են, իբրեւ պատասխան հայկական դատի յաջողուելուն իր բոլոր մասերուն մէջ՝ սկսելով Ս. Ստեփանոյի դաշնադրէն, Այսթուլի ապստամբութիւններէն, մինչեւ վերջին բոլոր անցքերը, որոնք թուրքիայէն դուրս կամ ներս, հեռուէն կամ մօտէն առընչութիւն ունէին հայ տարրի ազատութեան խնդրի հետ: Եթէ անմիջական պատրուակ (ոչ թէ պատճառներ) որոնելու ըլլայինք, աւելի շուտ Պոլսոյ կամ Տրապիզոնի անցքերը

կարող էին համարուել, քան ներսի գործունէութիւնը: Դաշնակցութեան համար այսօր ընդունուած իրողութիւն մըն է, որ մեր ֆէտայիական խումբերու շնորհիւ էր որ շատ տեղ կոտորածներու առաջն առնել հնարաւոր եղաւ. (տե՛ս «Դրօշակ» 95, 96, 97ի համարները): Իրաւ է, թէ եղած են աւերներ ու սպանութեանց զէպքեր մեր խումբերու տեղափոխութեան ժամանակ, բայց ատոնք հետեւանք են մասամբ այս խումբերու անփորձութեան քան անխոհեմ շարժումներուն եւ մասամբ եւս անխուսափելի այն պարզ պատճառով, որ մարդկային կարողութեան վեր է ամէն բան նախատեսել, եւ թէ ոչ մէկ լուրջ գործ զլուխ եկած է կամ կրնայ դալ առանց զոհերու:

4) Գալով այն խնդրին, թէ Պոլսի կամ Թուրքիոյ ծովեզերայ զաղաքներու մէջ կատարուելիք ցոյցերով միայն կարելի է հայ ժողովուրդի պահանջները լսել ընել տալ կամ խոստացուած բարենորոգումները ձեռք բերել — այդպիսի եզրակացութեան չեն կարող հասցնել ցարդ կատարուած իրողութիւնները: Պոլսի ցոյցերը եթէ համարուեր են իբրեւ բողոքի արտայայտութիւն բուն երկրի անտանելի վիճակին, այն պատճառով է միայն, որ միշտ զուգընթաց կատարուեր են երկրին մէջ տեղի ունեցող բոլոր անցքերուն: 18 Սեպտ. 95ի ցոյցը (Հնչակեան), որ այնքան խզճալի էր, Ստամբուլի արիւնոտ տարեդարձի եւ կոտորածների շնորհիւ իր նշանակութիւնը ստացաւ: 14 Օգոստ. 96ը իր բոլոր մեծութեամբ հանդերձ Վանի հերոսական կռիւներուն շատ բան կը պարտի. 6 Օգոստ. 97-ը Սանասորի շնորհիւ միայն աչքի ինկաւ եւ Եւրոպան ու թուրքիան յուզեց:

Լրագրերով դատելու չենք երկրէն ներս ու դուրս կատարուած գործերու ընծայուած կարեւորութեան աստիճանը. այստեղ դեր կը խաղայ պարզապէս լուրերու դիւրին եւ արագ հաղորդումը. կը բաւէ բանալ «Կապոյտ» եւ «Նեղին» գրքերը երկրի ներսի գործունէութեան տրուած կարեւորութիւնը չափելու համար:

Ամբողջ թուրքիան խարխիլու սպառնացող այս համասփիւռ յեղափոխական ուժին է, որ այսօր կը դիմէ թուրք կառավարութիւնը բանակցութիւններ կատարելու. եթէ գիտնար, թէ մեր ամբողջ ուժը Պոլսի մէջ է, մեզ դիմելու փոխարէն՝ նոր ոստիկաններու թիւը կը բաւէր աւելցնել Մայրաքաղաքին մէջ եւ խընդիրը վերջացած էր:

Բարենորոգումներ կը տրուին բողոքող կէտի ժողովուրդի հետեւաբար, Եւրոպայի հանրային կարծիքը, ինչպէս նաեւ պաշտօնական Եւրոպան այն ատեն միայն պիտի միջամտեն մեր դատին, արտակարգ պայմանները մէկ կողմ, ա) երբ հայ ժողովուրդի հօր բողոքը լսեն իր իսկ Օճախին մօտ. բ) երբ այդ բողոքը թուրքիոյ ներքին անդրադարձիւնը խանգարելով՝ որոշ ֆազաֆակամ շահերու վտանգել սպառնայ եւ թուրքիոյ ելեւմուտքը սակմուլրայ ընէ:

Յոյցերը, առանց երկրի մասնակցութեան, կարող են վնասել մեր դատին՝ զէնք տալով մեր թշնամիներու ձեռքը՝ քանի մը տասնեակ անիշխանականներու գործ ներկայացնելու մեր բողոքը, եւ անգամ երբ համոզուին, թէ ոչ ոյժ կայ երկրին մէջ եւ ոչ կարողութիւն բողոքելու, դժուար չէ գուշակել, թէ իրենց շահերը պաշտպանելու համար ձեռք ձեռքի կու տան թուրք կառավարութեան հետ իսպառ խորտակելու մեր ոյժը այդ քաղաքներուն մէջ:

5) Ենթադրելով պահ մը, որ Դաշնակցութիւնը դադրեցնէ իր գործունէութիւնը երկրին մէջ, մի՞թէ ամէն շարժում իրապէս պիտի դադրի: Յեղափոխական շարժումը այսօր իր աղբիւրն ունի ժողովուրդի ընդերքներուն մէջ, հարիւր հազար նահատակներու արիւնտ յիշատակին մէջ: Հոն կայ ջլատուած, բայց հոգուով բարձր ու վրիժառու հայ ժողովուրդը, որ ժամէ ժամ աւելի ու աւելի սպառնական դիրք բռնել սկսած է իր արիւնը ծծողին դէմ, որովհետեւ դանակը ոսկորին հասած է: Այդ ժողովուրդը արդէն ինքը զէնք զնել ու ճարել սկսած է եւ չմոռնանք, որ կան ուրիշ յեղափոխականներ եւս այդ արիւնտ երկրին վրայ, որոնք մեր հրամանին չեն սպասեր: Այն բոլոր ցաւալի պատահարները, որ կը վախնանք թէ կրնային ծագել երկրին մէջ ներսի մեր գործունէութենէն, թերեւս աւելի ահաբեկ կերպով առաջ գան, եթէ թողունք ժողովուրդը իր ճակատագրին, որովհետեւ դժուար թէ գտնուի ձեռք մը, որ կանոնաւորութիւն ու ուղղութիւն տայ այդ ժողովուրդի տարերային ու յախուռն շարժումներուն:

Կեդրոնացման գործն է, որ պիտի ամրապնդէ ժողովուրդի հոգին, պիտի սորվեցնէ անոր իր բազմակնքութեան վստահելու, յարատեւութեան մէջ գործին պսակումն ակնկալելու, պիտի պատրաստէ ժողովուրդը օգտուելու մերձաւոր ապագայի բարենորոգումներէն եւ, վերջապէս, պիտի պատրաստէ մեծ գործը — յեղափոխական ընդհանուր շարժումը բովանդակ Հայաստանի մէջ: Այս պարագաներուն մէջ կեդրոնացման գործի վիժումը չ'ունենար իբր հետեւանք այն ահաւոր լքումը, ինչ որ կրնայ ունենալ վիժած ցոյցէ մը ետք զգացուած պարագը:

Մեր պարտականութիւնն է, վերջապէս, պաշտպանութեան միջոցներ տալ երկրի ժողովուրդին, որ ոչ միայն ամէն ժամանակէ աւելի պէտք ունի մեր աշակցութեան, այլ եւ արժանի է ստոր ամէն ժամանակէ աւելի իր գիտակից վերաբերումովը դէպի պատիւն ու կեանքը: Մոռնալու չէ նաեւ, որ կարող են ծագել անակնկալ դէպքեր (պատերազմ, զրաւում), երբ որեւէ կէտի մը վրայ քանի մը հազար հայ սուրիներու երեւումը իր որոշ նշանակութիւնը կարող է ունենալ այդ երկրին բախտը վճռելու գործին մէջ:

Գալով ցոյցերուն՝ պէտք է զգուշանալ գործելէ ծովեզերեայ քաղաքներու մէջ, նախ՝ որովհետեւ երկ-

րի յարաբերութիւններու դուռ կը ծառայեն ատոնք, երկրորդ՝ երկրի մօտ գտնուած այդ վայրերու մէջ կատարուած ցոյցերը կարող են աղէտներու առիթ դառնալ երկրին համար, երրորդ՝ այդ վայրերը եւրոպական միջամտութիւն հրաւիրելու աստիճան քաղաքական շահեր վտանգելու հաւանականութիւնը չեն ներկայացնիր: Հետեւաբար, ցոյցի համար միակ վայրը պէտք է ընտրել Պոլիսը, որ յեղափոխական իր անցեալէն եւ պատմական դերէն զատ, որ ունի իբրեւ թուրքիոյ հայերու զարկերակը եւ պաշտօնական կեդրոնը, համեմատաբար աւելի շանս ունի քիչ վնասուելու եւ քիչ վնասելու երկրին, եւ ուր իսկապէս հաւանականութիւն կայ եւրոպական միջամտութիւն հրաւիրելու: Եւրոպական պետութիւններու համար ձեռնտու չէ խառնակութիւններու ասպարէզ տեսնելու այդ քաղաքը՝ այս կամ այն տէրութեան առիթ չընծայելու համար Պոլսին տիրանալու:

Վերեւ բերուած բոլոր պատճառաբանութիւններու հիման վրայ կ'առաջարկէին մեր կազմակերպութեան գլխաւոր ուժերը կեդրոնացնել երկրի քանի մը ամուր եւ յարմար կէտերու վրայ՝ երկարատեւ դիմադրութեան համար, եւ միեւնոյն ատեն Պոլսի մէջ զօրեղ ցոյցի պատրաստութիւն տեսնել եւ կատարել այն ժամանակ, երբ որոշուած կէտերը պատրաստ կամ ապրտամբած վիճակի մէջ գտնուին:

Այս կարծիքները պաշտպանողները դէմ էին նոյնպէս Ֆէտայական-պարտիզանական կռիւներու, որոնք, իրենց կարծիքով, իբր վաղանցուկ շարժում մը, ապարդիւն անցնելէ զատ, կարող էին առիթ տալ հայ տարրի համար վնասաբեր յուղմունքներու եւ նոյնիսկ կոտորածի:

Յոյց եւ ֆէտայական-պարտիզանական կռիւ.— ժողովականներէն մէկը անհնար համարելով կեդրոնացումը նոյն պատճառաբանութեամբ, ինչպէս զուտ ցուցականները, կ'առաջարկէր երկրէն դուրս մեծ ցոյցերը անպայման շարունակելով հանդերձ՝ երկրի մէջ եւս ունենալ թուրքիկ ֆէտայական խումբեր, որոնք անընդհատ «պարտիզանական» կռիւ մղէին տիրող կարգերու դէմ՝ մէկ կողմէն շփոթեցնելով կառավարութիւնը եւ ահ ու սարսափ պատճառելով շարագործ թուրքերուն, միւս կողմէն ոգեւորութիւն ներշնչելով եւ կոռելու փորձառութիւն յառաջ բերելով հայ տարրի մէջ, մինչեւ բարեւոյն անտանելի պայմանները եւ յեղափոխական հոծ տարր մը կազմուի երկրին մէջ:

ՈՐՈՇՈՒՄ

Ժողովը, երկար վիճաբանութիւններէ վերջ, ըստաւար մեծամասնութեամբ (2 ձայն դէմ) սկզբունքով

ընդունեց ուժերու կեդրոնացումը երկրին մէջ, ցոյցը Պոլիս եւ ծովեզերեայ քաղաքները, եւ մերժելով Ֆէտայական ասպատակային գործունէութիւնը՝ ընդունեց մարտական-գիմարգակամ խումբեր կազմակերպելու ծրագիրը:

Ա. ՈՒԺԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ ԿԱՄ ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍԿԱՆՆԵՐԻՆ.— Ժողովը ի նկատի առնելով Բարձրաւանդակի եւ Լեռնավայրի թէ՛ յեղափոխական անցեալը եւ թէ՛ Եւրոպայի առջեւ անոնց ստացած քաղաքական նշանակութիւնը, ինչպէս նաեւ այդ կէտերու աշխարհագրական յարմար դիրքը, տեղական հայ տարրի քանակութիւնը եւ տրամադրութիւնը, որոշեց կեդրոնացման կէտեր ընդունել այդ երկու կէտերը:

Լեռնավայրի առթիւ առարկուեցաւ, թէ Դաշնակցութիւնը դեռ ոչ մէկ կազմակերպութիւն ունի Կիլիկիոյ մէջ, եւ արդէն Հնչակեանները կը գործեն հոն: Ուստի խնդիր ծագեցաւ, թէ՛ ա) չե՞նք կարող Լեռնավայրի գործը թողուլ Հնչակեաններուն. բ) հաւանակ պարագային, կարելի չէ՞ արդեօք անոնց հետ համերաշխ գործել. գ) փափաքելի եւ հնարաւոր է արդեօք անոնցմէ անկախ գործել, թէ՞ մեր այդ ընթացքը կուսակցական մրցում առաջ բերելով՝ շատ բացասական հետեւանքներ կրնայ ունենալ:

Ժողովը քննելով այս բոլոր առարկութիւնները՝ հետեւեալ եզրակացութեան յանգեցաւ.— Կիլիկիոյ մէջ Հնչակեան ըսելով պէտք է հասկնալ նորերը միայն (Մարտականները), որովհետեւ հիններու ձեռքը գրեթէ բան մը չ'մնաց հոն: Մարտականներն ալ թէեւ մինչեւ վերջերս 15ի չափ մասնաճիւղեր ունէին, բայց ատոնք ալ, անցեալ տարուան Մէրսինի ցաւալի դէպքերէն ետք, մեծ մասով քայքայուեցան, գլխաւոր գործիչները ձերբակալուեցան կամ հարկադրուեցան Կիլիկիայէն փախչել: Պէտք չէ մոռնալ նաեւ, որ Կիլիկիոյ ժողովուրդը 95ի շարժումներէն յուսախար՝ մասնաւոր համարում չի տածեր հիմա Հնչակեան կուսակցութեան նկատմամբ: Ժողովը ուշադրութեան արժանի համարեց այն պարագան, որ Մարտականներու բարոյականը հեռու է մեզ յարգանք ներշնչելէ, մանաւանդ այժմ, երբ իրենց ընկեր եղած մաքուր յեղափոխական անձնաւորութիւններ հետզհետէ կը հեռանան իրենցմէ:

Ուստի ժողովը գտնելով, որ Լեռնավայրի գործը միանգամայն բարձր է Մարտականներու ուժէն եւ Դաշնակցութեան պարտքն է առաջնակարգ կարեւորութիւն տալ այդ վայրի գործունէութեան. որոշեց Բարձրաւանդակի համահաւասար կեդրոնացման վայր ընդունել Լեռնավայրը, պայմանով, որ միջոցներ ձեռք առնուին կազմակերպութիւն ստեղծելու Կիլիկիոյ մէջ:

Գալով այն բանին, թէ հնարաւորութիւն կա՞յ Կիլիկիոյ մէջ համերաշխ գործել Մարտականներու հետ, թէ պէտք է ստիպուինք բոլորովին ազատ մնալ անոնց-

մէ, ժողովը յարմար դատեց թողուլ այդ խնդիրը Կիլիկիոյ մէջ գործող մեր ընկերներու կշռադատութեան, գործի շահերու եւ տեղական պայմաններու համաձայն կարգադրելու, դուրս չելնելով Ընդհանուր Ժողովի որոշումներու սահմանէն:

Ժողովին առաջարկ բերուեցաւ կեդրոնացման վայր ընդունել նաեւ 1) Շատախ եւ 2) Քարաթայոյ(*): Ժողովը նկատելով, որ այս երկու կէտերն ալ կեդրոնացման համար հարկ եղած առաւելութիւնները լիովին չունին եւ յատկապէս Քարաթայոյի ուսումնասիրութիւնը բաւարար չհամարելով իբր որոշ երաշխաւորութիւն գործի յաջողութեանը, թէեւ Քարաթայոյը իր աշխարհագրական անտիկ դիրքի եւ տեղական քերթ բնակչութեան մեզ նկատմամբ ունեցան նպաստաւոր տրամադրութեան շնորհիւ ապագային մեր կուռի կոռուաններէն մէկը կրնայ դառնալ, իսկ միւս կողմէն նկատելով, որ Դաշնակցութեան արդէ միջոցները չեն ներեր Բարձրաւանդակի, Լեռնավայրի եւ Կոռածաղկի համահաւասար հոգ տանել այդ վայրերու կազմակերպութեան եւ դիման գործին, որոշեց՝

1. Շատախ-Վասպուրականի հայաշատ շրջանը պաշտպանողական դրութեան մէջ դնելու համար, Վրէժստանի մօտ (300) երեք հարիւր հրացանները հաւասար կերպով բաշխել Շամիրի, Շատախի եւ Մոկոփ լեռնային մասերում կազմուելիք զինամարզական-մարտական խումբերուն:

2. Շարունակել Քարաթայոյի ուսումնասիրութիւնը ապագայ գործունէութեան տեսակէտէն. պահպանել մեր արդէն ունեցած կապերը Քարաթայոյի ցեղապետներուն եւ կրօնապետներուն հետ եւ ջանալ կազմակերպել այդ շրջանի հայաքանակ վայրերը՝ յատկապէս մարտական-զինամարզական խումբերու ձեւով, առանց որոնց դոյութեան կարելի չէ ապագային եւս Քարաթայոյեցոց հետ համերաշխ գործունէութեան ծրագրի իրագործման խնդիրը:

Բ. 8ՈՅՑ.— Ժողովը սկզբունքով ընդունելով հանդերձ ցոյցեր կատարել Կոռածաղկի(**) եւ Թուրքիոյ ծովեզերեայ քաղաքներու մէջ՝ գործնականին մէջ հետեւեալ սահմանափակումներն ըրաւ.—

Կոռածաղկի.— Որոշեց կեդրոնացման գործին հետ միաժամ անյապաղ ձեռնարկել ցոյցի պատրաստութեան՝ Կոռածաղկի մէջ (միաձայն):

Գալով Կոռածաղկի ցոյցերու ժամանակին՝ որոշեց.

ա) Անկախ ցոյց կատարել, այսինքն՝ առանց երկրի պատրաստութիւններուն սպասելու, այն պարագային միայն, երբ անպայման մեծ ու հոյակապ գործ մը յոյս կայ գլուխ բերելու (միաձայնութեամբ):

(*) Տէրեթ.
(**) Պոլիս:

բ) Անխտիր մեծ կամ փոքր ցոյց կատարել, երբ քաղաքական հանգամանքները ձեռնառու համարուին Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնին կողմէն:

գ) Անխտիր մեծ կամ փոքր ցոյց՝ երկրին մէջ հայկական ապստամբութիւն ծագած ատեն:

Մովեզրեայ քաղաքներու մէջ ցոյց հնարաւոր համարեց երկու պարագայի մէջ միայն:

ա) Երկրի մէջ հայկական ապստամբութիւն ծագած ատեն:

բ) Եթէ անհնար լինի Կոուածադղի մէջ պատրաստուիլ, իսկ քաղաքական հանգամանքները պահանջեն անպատճառ ցոյց մը պատրաստել: Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմնին կը թուի ընտրել ուրիշ ծովեզրեայ քաղաք մը եւ հոն կազմակերպել ցոյցը:

Առաջարկուեցաւ նոյնպէս կատարել ցոյցեր.—

1. Կոուածադղի եւ Ոսկեհանք(7) միաժամանակ.
2. Անկախ՝ միայն Ոսկեհանք.
3. Բոլոր ծովափները անխտիր՝ առանց պայմանի.
4. Մեծ ցոյց նաեւ բոլոր ծովափները.
5. Մեծ ցոյց Մովսիս, Սամս եւ Ոսկեհանք(7)՝ անկախ.
6. Մեծ ցոյց երկրի դուռ ծառայող բոլոր ծովեզրեայ քաղաքները.
7. Բոլոր ծովափները, երբ իբր դուռ այլևս պէտք չեն.
8. Երբ իբր դուռ դադարած են ծառայելէ և միանգամայն քաղաքական պայմանները նպաստաւոր են.
9. Մովսիսները — մեծ կամ փոքր ցոյց — երբ քաղաքական պայմանները նպաստաւոր են.
10. Երեք կէտերու մէջ (Մովսիս, Սամս, Ոսկեհանք) միայն, երբ քաղաքական պայմանները նպաստաւոր են:

Սակայն, ժողովը նկատելով, որ դաւառական ծովափնեայ քաղաքներուն մէջ ցուցական գործողութիւնները չեն ունենար քաղաքական այն մեծ նշանակութիւնը, ինչ որ Կոուածադղի մէջ կատարուածները, եւ միւս կողմէն քաղաքական հանգամանքներն այնքան բարդ են, որ կարելի չէ ճիշդ կշռադատութիւն ընել եւ աներկբայ դրական արդիւնք ակնկալել՝ որ փոխարինէր այն բազմատեսակ կորուստներուն, որոնք հաւանորէն կարող էին յառաջ գալ այդ, իբր երկրին աւելի մօտիկ, քաղաքներու մէջ կատարուելիք ցոյցերէն, —

Ուստի մեծամասնութեամբ մերժեց վերոյիշեալ բոլոր առաջարկները:

Գ. ԶԻՆԱՄԱՐԶԱԿԱՆ-ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ.— Ժողովը որոշեց պարտաւորիչ ուշադրութիւն դարձնել ամէն տեղ եւ գլխաւորաբար կեդրոնացման համար ո-

րոշուած կէտերու շուրջը տեղական զինամարզական խմբեր կազմակերպելու վրայ:

Այդ խմբերը կը հիմնուին տեղական կամ կեդրոնական կոմիտէներու ձեռնով, որոնց եւ կ'ենթարկուին, տեղական միջոցներով եւ, ըստ կարելւոյն, տեղական երիտասարդներէն: Այդ խմբերը նպատակ ունին.

1. Տեղական տարրի մէջ յեղափոխական կռուող ուժեր պատրաստել, ստուարացնել եւ ծաւալել (Մրազիր. Միջոցներ. յօդ. 9):

2. Պարագային համեմատ սատարել ժողովուրդի պաշտպանութեան (Մրազիր. Միջոցներ, յօդ. 9) եւ կեդրոնացման գործին (Մրազիր, յօդ. 10):

3. Այնպիսի ասպատակութիւններով, որոնք չեն հակասեր Դաշնակցութեան սկզբունքներուն եւ Ընդհ. ժողովի վճիռներուն, նիւթական միջոցներ ձեռք բերել խումբի կամ, եթէ կարելի է, տեղական մարմիններէ համար:

Դ. ԱՐՇԱԽԱՆՔ.— Աչքի առաջ ունենալով, որ կեդրոնացման գործը մինչեւ հետեւեալ Ընդհ. ժողովը մեծ տեղ պիտի բռնէ կազմակերպութեանս գործունէութեան մէջ, ժողովը (մեծամասնութեամբ) որոշ վճիռ չտուաւ ոչ սահմանի վրայ եւ ոչ ալ սահմանէն երկրի ներսը արշաւանք գործելու մասին:

Միայն որոշեց ապստամբական գործը յաջող կամ անյաջող կերպով կատարուած պարագային, երբ արդէն երկրի մէջ կոիւր սկսած է — ըստ հայեցողութեան Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնին — երկրէն դուրս կազմուած մարտական խումբերու եւ անոնց հետեւող կամաւորներու միջոցով սահմաններէն ակտիւ միջամտութիւն կատարուի՝ թէ՛ իբր արձագանգ երկրի կռուին եւ թէ՛ իբր պաշտպանութիւն կամ օգնութիւն ընդհանուր գործին:

Ե. ՏԵՆՈՐ.— Ժողովը նկատելով, որ տէրորը (Դաշն. Մրազիր. Միջոցներ, յօդ. 8) անձուկ ըմբռնումով միայն գործադրուած է ցարդ, որով վնասած է յեղափոխական հմայքին (prestige) երկրէն թէ՛ ներսը, թէ՛ դուրսը, եւ միւս կողմէն ներդաշնակելու համար այդ կարգի գործերը երկրի ընդհանուր շահերուն հետ՝ որոշեց.

1. Թուրքիայէն դուրս եւս ամէն տեղ տէրորի ենթարկել հայ դաւաճաններ եւ ոչ-պաշտօնեայ թո՛ւշ չարագործներ Յրդ յօդուածի տրամադրութեան համաձայն:

2. Կեդրոնացման վայրերու շրջանին մէջ տէրոր կատարել պատասխանատու Կեդր. Կոմիտէներու վրձնով:

3. Այդ շրջաններէն դուրս կատարել տեղական կոմիտէի 2/3 ձայնի որոշմամբ և խորհրդակցութեամբ մօտակայ կամ աւելի լայն շրջանի մարմիններուն՝ նա-

յելով տէրորի ունենալիք ազդեցութեան շրջանակին: (Տե՛ս Կարգապահ. Բ. 1, 2, 3, 4 յօդ., Գ. 1 յօդ., Դ. 1 եւ 2 յօդ., տես Դրամական խնդիր Գ. 1 յօդ.):

Զ. ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆ ՕՏԱՐ ՏԱՐՐԵՐՈՒ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ.— 1. Որոշուեցաւ (մեծամասնութեամբ) Ասորեստան պատգամաւոր մը զրկել առայժմ միայն երկիրը ուսումնասիրելու եւ հարկաւոր տեղեկութիւններ բերելու նպատակով: Այս վճիռ իրադրութեամբ կը թողուի Պարսկաստանի Կեդր. կոմիտէին, որ եւ կ'որոշէ ժամանակը, անձնաւորութիւնը եւ հարկաւոր ծախքերը:

2. Ջանալ կապեր հաստատել Մակեդոնացիներու, Յոյներու եւ ուրիշներու հետ՝ այդ պարտաւորութիւնը ղնելով տեղական մարմիններու վրայ:

3. Երիտասարդ Թուրքերու հետ շարունակել սկսուած համերաշխ գործունէութեան մասին բանակցութիւնները, անոնց թերթերու եւ մեր հրատարակութիւններու միջոցով պարզել տաճիկ կառավարութեան մեր ձգտումները եւ նպաստել անոնց մէջ իսկական յեղափոխական ոյժ ստեղծելուն: (Տե՛ս Դաշնակց. Կամքը Ներկ. Մարմին, յօդ. 2):

Բ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեան հիմնական սկզբունքի, այն է ապակեդրոնացման կամ կեդրոնացումի մասին գրեթէ վիճաբանութիւն տեղի չունեցաւ, որովհետեւ ժողովը ուրախութեամբ հաստատեց, որ Դաշնակցութիւնն իր վեց տարուան յարաճուն գործունէութիւնը մասամբ կը պարտի ապակեդրոն գրութեան, որ մէկ կողմէն առաջ բերած է նախաձեռնութեան ոգի եւ պատասխանատուութեան դիտակցութիւն եւ միւս կողմէն ձեւական շղթաներու մէջ չկաշկանդելով Դաշնակցական մարմինները՝ թոյլ տուած է իւրաքանչիւրին անկախ գործունէութիւն գործի շահերու եւ տեղական պայմաններու համաձայն:

Ժողովը որոշեց, հետեւաբար, ընդունել եւ վաւերացնել, իբրև լրացում ծրագրի կազմակերպութեան վերաբերեալ յօդուածներուն, այն ձեւերը եւ յարաբերութիւնները միայն, որոնք կեանքի եւ գործի պայմանները ընդհանրացուցած էին արդէն եւ կամ պահանջ դարձուցած մեր կազմակերպութեան մէջ:

Իր այդ աշխատութեան ատեն ժողովը կանգ առաւ գլխաւորապէս հետեւեալ չորս կէտերուն վրայ.—

1. Ընդունել այն որոշ տարբերութիւնը, որ իրապէս գոյութիւն ունի Թուրքիոյ եւ Թուրքիայէն դուրս գտնուող կոմիտէներու կազմութեան եւ գործունէութեան եղանակին մէջ, այն է՝ առաջիններուն մէջ տիրող դաւադրական գործունէութեան հիմունքն էին, որ անխուսափելի կերպով սահմանափակած են զիրար ճա-

նաչումի եւ ընտրական սկզբունքի կիրառութիւնը երկրին մէջ:

2. Կատարելապէս ապահովելու համար վճած ձեռնարկներու յաջողութիւնը (կեդրոնացում, ցոյց), ժողովը որոշեց լայն ինքնօրէնութիւն տալ այդ ձեռնարկները վարող մարմիններուն պատասխանատու ճանչնալով անոնք՝ իրենց յանձնուած գործին համար: Այդ մարմինները որոշուեցաւ ընտրել ժողովի կողմէն եւ անուանել «Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէ»ներ:

3. Նկատելով, որ Դաշնակցութիւնը հետզհետէ աւելի ընդարձակելով իր գործունէութիւնը թէ՛ արտասահմանի եւ թէ՛ Փոքր Ասիոյ մէջ, ինքնին ծագած արտասահմանեան Բիւրոյի մը պէտքը, որու դերը իրերու բնական բերումով կատարած է ցարդ խմբագրութիւնը, ժողովը որոշեց՝ ընդունելով կեանքի գործնական պահանջներէ բխած այդ երեւոյթը, զօրացնել խմբագրութիւնը եւ յայտարարել Արեւմտեան Բիւրո:

4. Նկատելով, որ Ընդհանուր ժողովի բացակայութեանը միշտ պէտք զգացուած է ունենալ մարմին մը, որ ձեռնհասութիւն եւ իրաւունք ունենայ Դաշնակցութիւնը ներկայացնելու օտարներու առջեւ, նրկատելով, որ կան նաեւ բացառիկ պարագաներ, երբ անհրաժեշտ է ստիպողաբար վճիռ մը տալ կամ քայլ մը ընել Դաշնակցութեան կողմէ, բայց երբ հնար չկայ Ընդհանուր ժողով գումարելու, ժողովը վճեց այդ իրաւունքը տալ «Դաշնակցութեան Կաւէր Ներկայացնող Մարմին» անուան տակ երկու Բիւրօներուն եւ Պատասխանատու Կեդր. Կոմիտէներուն հաւաքաբար:

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԿԻՈՑ ՄԷՁ

Կոմիտէ

1. Կոմիտէ չեղած տեղը կոմիտէն կը կազմուի Դաշնակցական պատուիրակի մը ձեռքով եւ տնօրէնութեամբ ու շրջանի Կեդր. Կոմիտէի գիտութեամբ:

2. Կոմիտէն առնուազն երեք անդամէ կը բաղկանայ:

3. Կոմիտէն կազմուելէն ետք եթէ պատուիրակը կը մնայ, կը դառնայ տեղացիներու ընկեր՝ հաւասար ձայնի իրաւունքով:

4. Նոր անդամներ կ'ընտրուին կոմիտէի անդամներուն փոխադարձ համաձայնութեամբ:

5. Որեւէ կոմիտէի կնիք կը տրուի միայն այն պարագային, երբ ասոր պէտքն զգացուի եւ երբ շրջանի Կեդր. Կոմիտէն ալ յարմար դատէ:

Մասօք.— Կեդրոնական Կոմիտէի գտնուած քաղաքի մէջ եղած կոմիտէներն երբեք կնիք չեն կարող ունենալ:

6. Կոմիտէն անկախ է իր գուտ տեղական գործերուն մէջ, իսկ Ընդհ. Ժողովի նախագծած որոշ պարագաներու եւ վճռած ձեռնարկներու գործադրութեան սահմաններուն մէջ՝ կոմիտէն պարտաւոր է գործել Կեդր. Կոմիտէի համաձայնութեամբ:

7. Կոմիտէն իր տեղական ծախքերէն աւելցած գումարը իր հաշուին հետ կը զրկէ Կեդրոնական Կոմիտէի արկղը՝ շրջանի Բիւրոյին իմաց տալով:

Կեդր. Կոմիտէ

1. Շրջանի մը կոմիտէներու հաւանութեամբ եւ Դաշն. Կամքը ներկայացնող Մարմնի համաձայնութեամբ իրենցմէ ամենէն աւելի յարմար դիրք ունեցող եւ եռանդուն գործունէութիւն ցոյց տուող կոմիտէն կը յայտարարուի Կեդրոնական Կոմիտէ այդ շրջանին համար:

2. Կեդր. Կոմիտէն առնուազն երեք անգամ է կը բաղկանայ:

3. Կեդր. Կոմիտէն ունի իր կնիքը:

4. Կեդր. Կոմիտէն կը պահպանէ արտաքին յարաբերութիւնները թէ՛ միւս Կեդր. Կոմիտէներու եւ թէ՛ Բիւրօներու հետ:

Մանօք. — Բացառիկ եւ կարեւոր պարագաներու մէջ տեղական կոմիտէները կրնան անմիջաբար հաղորդակցել միւս մարմիններու հետ:

5. Կեդր. Կոմիտէն կը գործադրէ Ընդհ. Ժողովի բոլոր որոշումները, որ իր շրջանին կը վերաբերին՝ խորհրդակցելով տեղական կոմիտէներու հետ:

6. Կարեւոր պարագաներու մէջ, եթէ դիւրութիւններ կան, Կեդր. Կոմիտէն կը հրահրէ շրջանի Պատգամաւորական Ժողով:

7. Կեդր. Կոմիտէն հարկ դատած ատեն կարող է զրկել պատուիրակներ իր շրջանի կոմիտէներուն թէ՛ անոնց գործերուն մօտէն ծանօթանալու եւ թէ՛ զանոնք ուժով ցնելու:

8. Կեդր. Կոմիտէն պարտաւոր է կոմիտէներու եւ խումբերու աջակցութեամբ իր շրջանի յեղափոխական քարտէզները եւ տեղական հայ Ժողովրդի վիճակագրութիւնը պատրաստել եւ զրկել, ինչպէս նաեւ տեղեկագրել Բիւրոյին կատարուող յեղափոխական գործերը, կառավարութեան եւ աւազակներու հարցատահարութիւնները, հայերու եւ միւս տեղական ցեղերու փոխադարձ յարաբերութիւնները, տեղական զինուորական ոյժը եւ այլն եւ այլն:

9. Կեդր. Կոմիտէն տարին երկու անգամ (Մայիս եւ Նոյեմբ. ամիսներու մէջ) կը զրկէ իր Բիւրոյին իր շրջանի գործունէութեան տեղեկագիրը:

10. Կեդր. Կոմիտէն գէթ առնուազն երեք ամիս անգամ մը իր Բիւրոյին կը ներկայացնէ իր շրջանի հաշիւները թէ՛ օրագրական ձեւով եւ թէ՛ այն աղիւսակներու համաձայն, որ ընդունուած են Ընդհ.

Ժողովի կողմէն: Հաշիւները կրելու են կոմիտէի կնիքը եւ անդամներու ստորագրութիւնները:

11. Կեդր. Կոմիտէն պարտաւոր է պատրաստել իր շրջանի կոմիտէներու եւ խումբերու մանրամասն ցանկը (ըստ պատրաստուած ցանկի) եւ արտասահմանեան Բիւրոյին զրկել պահելու համար:

12. Կեդր. Կոմիտէն կը ստանայ Բիւրոյին Դաշնակցութեան անունով շրջաբերութեան հանուած նուիրատուները, կը բաշխէ կոմիտէներուն ու կը պահէ այդ տոմսերուն հաշիւը:

13. Կեդր. Կոմիտէն իր շրջանի կոմիտէներու հասոյթի ցուցակը շրջանի անունով հրատարակութեան կու տայ «Դրօշակ»ի մէջ:

14. Կեդր. Կոմիտէն իր բոլոր կարեւոր թղթերը կը զրկէ Արեւմտեան Բիւրոյին պահելու՝ մնացածը ոչնչացնելով:

15. Կեդր. Կոմիտէն կը կազմէ իր շրջանի խմբերու, ենթակոմիտէներու, Կեդր. Կոմիտէի քաղաքը գտնուող կոմիտէներու կազմական ներքին կանոնադրը՝ չհակասելով Դաշնակցութեան ծրագրին եւ Ընդհ. Ժողովի որոշումներուն:

Բ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԳԻԱՅԷՆ ԴՈՒՐՍ

Կոմիտէ

1. Կոմիտէն կը կազմուի Կեդր. Կոմիտէի պատասխանատուութեան տակ շրջանի Պատգամաւորական Ժողովի գծած ներքին կանոնադրի համաձայն:

2. Կոմիտէն կնիք չ'ունենար:

Մանօք. — Ժողովը որոշեց 2րդ յօդուածի տրամադրութեան համաձայն Կեդր. Կոմիտէներու միջոցաւ Ժողովը արդէն տրուած կնիքները եւ Բիւրօներուն յանձնել:

3. Կոմիտէն իր դրամը կը զրկէ շրջանի Կեդր. Կոմիտէի արկղը, իսկ անպատահութիւն տեսնուած ատեն՝ իր Բիւրոյին, կանխաւ իմաց տալով Կեդր. Կոմիտէին այդ մասին:

Կեդր. Կոմիտէ

1. Կեդր. Կոմիտէն կ'ընտրուի իր շրջանի Պատգամաւորական Ժողովի կողմէն:

Մանօք. — Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէի շրջանի Պատգամաւորական Ժողովի կը թողուի որոշել այդ շրջանին մէջ գտնուող մարմիններու մասնակցութեան եղանակը Պատգամաւորական Ժողովին:

2. Կեդր. Կոմիտէն իր ունեցած դրամէն հանելով տեղական ծախքերը՝ մնացածը կը յատկացնէ իր Բիւրոյի խորհրդակցութեամբ, անոր միջոցաւ կամ

ուղղակի, Ընդհ. Ժողովի որոշումներով գծուած ձեռնարկներուն (Կեդրոնացում, ցոյց եւ այլն):

3. Տե՛ս Կազմ. Թուրքիոյ մէջ, Կեդր. Կոմիտէ, յօդ. 3:

4. Տե՛ս Կազմ. Թուրքիոյ մէջ, Կեդր. Կոմիտէ, յօդ. 11:

5. Տե՛ս Կազմ. Թուրքիոյ մէջ, Կեդր. Կոմիտէ, յօդ. 12:

6. Տե՛ս Կազմ. Թուրքիոյ մէջ, Կեդր. Կոմիտէ, յօդ. 13:

7. Թուրքիայէն դուրս ոչ մէկ մարմին առանց իր Բիւրոյի խորհրդակցութեան եւ առանց զէնքը ստացող եւ պահող մարմնի համաձայնութեան իրաւունք չունի զէնք գնելու:

8. Վրէժստանի, Պալքանեան թերակղզիի, Եդիպտոսի եւ Ամերիկայի Պատգամաւորական Ժողովներու, ինչպէս նաեւ Սարուստանի Կեդրոնական Կոմիտէներու Պատգամաւորական Ժողովին կը վերապահուի Ընդհ. Ժողովի այս վճիռներէն դուրս մնացած կազմակերպական խնդիրները գծել իւրաքանչիւրը իր ներքին կանոնադրով, առանց հակասելու Դաշնակցութեան ծրագրին եւ Ընդհ. Ժողովի որոշումներուն:

Գ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

1. Պատասխ. Կեդր. Կոմիտէ կը կոչուի Ընդհ. Ժողովի կողմէ ընտրուած այն մարմինը, որուն կը յանձնուի վճռուած խոշոր ձեռնարկի մը իրագործման պատասխանատուութիւնը երկրի որոշ շրջանի մէջ:

2. Պատասխ. Կեդր. Կոմիտէի վայրեր որոշուեցան՝ 1. Բարձրաւանդակ, 2. Լեռնավայր, 3. Կոռածաղիկ եւ 4. Վասպուրական(8):

3. Այդ մարմինները առնուազն երեք անգամ է կը բաղկանան՝ ընտրուած Ընդհանուր Ժողովէն:

4. Պատասխանատու Կեդր. Կոմիտէներուն կը յանձնարարուի ամէն կերպ ջանալ տեղացիներէն եւս կարող ընկերներ միացնելու իրենց:

5. Որեւէ պատճառով պակասող անդամին տեղ նորը կ'ընտրուի մնացած ընկերներու եւ շրջանի Բիւրոյի համաձայնութեամբ:

6. Պատասխ. Կեդր. Կոմիտէն վարիչ ղեր ունի իր գործունէութեան շրջանը կազմող երկրին մէջ:

7. Պատասխ. Կեդր. Կոմիտէի խորհրդակցութիւնը պարտաւոր է հարեւան Կեդր. Կոմիտէներու կամ միւս կոմիտէներուն համար ամէն անգամ, երբ վերջիններուն կողմէն քիչ-չատ կարեւոր յեղափոխական դործ մը կատարել որոշուի:

8. Պատասխ. Կեդր. Կոմիտէն իր ստանձնած խոշոր ձեռնարկին գործադրութեան վայրկեանը վճուելէ առաջ, պարտաւոր է այդ մասին խորհրդակցել դոնէ իր շրջանի Բիւրոյին եւ երկու Պատասխ. Կեդր. Կոմիտէներու հետ:

9. Պատասխ. Կեդր. Կոմիտէն կը համարուի անդամ Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմինն: (Տե՛ս նաեւ Կարգապահ. Ե., յօդ. 1):

Դ. ԲԻՒՐՈ

1. Բիւրօն գիտակ կը պահէ իր շրջանի Կեդր. Կոմիտէները դործի ընթացքի մասին եւ պարբերաբար կը հաղորդէ անոնց իր Բիւրոյական հաշիւը:

2. Բիւրօն պարտական է, եթէ հարկ տեսնէ, տեղացիներու համաձայնութեամբ՝ հաւասար ձայնի իրաւունքով ընկերներ զրկելով՝ զօրացնել Կեդր. Կոմիտէները:

3. Բիւրօն կարգադրիչ (régulateur) ղեր ունի դրամի բաշխումի մէջ (տե՛ս Կեդր. Կոմ., յօդ. 6):

4. Բիւրօն կ'ունենայ իր պահեստի գումարը՝ բացառիկ ծախքերու համար:

5. Բիւրօն կը կատարէ իր շրջանի Կեդր. Կոմիտէներու հաշուետուութեան քննթրուը:

6. Բիւրօններուն կը վերապահուի կնիք պատրաստել ու յանձնել՝ այդ մասին արդէն գծուած օրէնքներով: (Կազմ., Կոմիտէ յօդ. 5, Կեդր. Կոմիտէ յօդ. 1):

7. Բիւրօն կ'ընտրուի Ընդհ. Ժողովի կողմէն եւ իր պաշտօնավարութիւնը կը տեւէ մինչեւ յաջորդ Ընդհ. Ժողովը:

8. Եթէ որեւէ պատճառով Բիւրոյի անդամներէն մէկը պակաս, նորը կ'ընտրուի Բիւրօնի համաձայնութեամբ:

9. Բիւրօն ունի իր կնիքը:

10. Դաշնակցութիւնը ունի երկու Բիւրօ — Արեւելեան եւ Արեւմտեան:

1. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

1. Արեւելեան Բիւրոյի շրջանը կը կազմեն՝ ա) Երկիրը՝ Կիրասոն-Պարբերդ-Տիգրանակերտ գծէն դէպի արեւելք՝ Վասպուրական, Բարձրաւանդակ, Շանթակերտ, Արծիւ, Մովսիս, Բերդ եւ այլն:

բ) Սարուստան եւ Վրէժստան:

2. Արեւելեան Բիւրօն կը բաղկանայ եօթը անդամէ:

3. Մանրակշիռ խնդիրներու լուծման մէջ Բիւրոյական մէկ անդամի ձայնով կը մասնակցին Ջրաբերդի, Ոսկեջուրի եւ Նաւահանգիստի կոմիտէները՝ իրենց ներկայացուցիչներով:

4. Արեւելեան Բիւրօն իրաւունք ունի, երբ հարկ զգացուի, Դաշնակցութեան հաշուով առ առաւելն երկու անգամ ունենալու:

2. ԱՐԵՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

1. Արեւմտեան Բիւրոյի շրջանը կը կազմեն. — ա) Լեռնավայր, Կոռածաղիկ (Վիշապ) եւ Սամ-

սոնէ դէպի արեւմուտք (Խարբերդ, Կարմիրբերդ, Ոսկեհանք եւ այլն)։ Փոքր Ասիա (Կիրասոն-Խարբերդ-Տիգրանակերտ գծէն դէպի արեւմուտք)։

բ) Եգիպտոս, Պալէստինայի թերակղզի, Ամերիկա եւ ամբողջ արտասահմանը (Մարուստանէն եւ Վրէժըստանէն դուրս)։

2. Արեւմտեան Բիւրօն in corpore իր պատասխանատուութեան տակ կը հրատարակէ «Տրօշակ»-ը՝ ուղուքեան մասին առաջնորդուելով Ընդհ. Ժողովի կողմէն ճշակուած ծրագրով մը, եւ Դաշնակցութեան անունով եղած ուրիշ հրատարակութիւններ։

3. Արեւմտեան Բիւրօն պարտաւոր է հրատարակել ամէն անգամ երբ պէտք զգացուի, Փրանսերէն լեզուով «Տրօշակ»-ի յաւելում մը՝ Supplement Français Du Droschak, որ պիտի ծառայէ եւրոպական հասարակութիւնը մեր դասին ծանօթացնելու։

4. Արեւմտեան Բիւրօն կը բաղկանայ հինգ անդամէ, որոնց երեքը կը մնան ժընեւ քաղաքը «Տրօշակ»-ի խմբագրութիւնը եւ բիւրոյական ընթացիկ գործերը վարելու, իսկ միւս երկուքը շրջան գործիչներ են։

Մանօք.— Մնայուն եւ շրջան անդամները կ'որոշէ ինքն՝ Արեւմտեան Բիւրօնը։

5. Բիւրոյի շրջան կոչուած ընկերները հաւասար ձայնի իրաւունքով իր անդամ կը մանեն Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու մէջ։ Անոնց բիւրոյական ձայնը ի նկատ կ'առանուի Բիւրոյի կողմէն ծանրակշիւ խնդիրներու լուծման առին միայն։

Ե. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՄՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. Ընդհ. Ժողովի բացակայութեան Դաշնակցութիւնը կը ներկայացնեն չորս Պատասխանատու Կեդր. Կոմիտէները եւ երկու Բիւրօնները՝ «Տրօշակ»-ցութեան Կամքը ներկայացնող Մարմին» անուն ներգիւծել։

2. Երբ յօդ. 1ի մէջ յիշուած մարմիններէն մէկը կը լուծուի, մնացածները պարտական են անոր ձայնը յանձնել Թուրքիոյ ամենէն ձեռնհաս կոմիտէին՝ այդ կարգադրութիւնը հազարդելով բոլոր Կեդրոնական Կոմիտէներուն։

3. Դաշն. Կամքը ներկայացնող Մարմինն է, որ կը վարէ արագին բոլոր յարաբերութիւնները։

4. Այդ Մարմինն կը վերապահուի Ընդհ. Ժողովի հետեւեալ իրաւունքը՝ վճարած ձեռնարկներու յաջողութիւնը ապահովելու համար կատարել ուժերու բաշխումը, այն է՝ զօրացնել կամ կազմել այս կամ այն մարմինը (Բիւրօն, Պատ. Կեդր. Կոմիտէն եւ այլն) տեղացիներու համաձայնութեամբ։

5. Չնախատեսուած բացառիկ պարագաներու ա-

տեն, այն է՝ պատերազմի կամ քաղաքական անկայելու մեծ տագնապի ատեն, այդ մարմինը կարող է փոխել կամ յետաձգել Ընդհ. Ժողովի վճիռները կամ նոր ձեռնարկ սկսել իր պատասխանատուութեամ տակ, ըստ հնարաւորութեան միւս Կեդր. Կոմիտէներու հետ խորհրդակցելով։

6. Դաշն. Կամքը ներկայացնող Մարմինն կը յատկացուի երկու կնիք — հայերէն ու Փրանսերէն. վերջինս հետեւեալ կերպով՝ Conseil des Représentants (F.R.A.):

Մանօք.— Այդ կնիքները կը պահուին Արեւմտեան Բիւրոյին մօտ։

Տե՛ս նաեւ՝ Տակտ. Ցոյց, Մով. քաղ. 2 յօդ., Կազմակերպ. Ա. Կեդր. Կոմ., 3, Ընդհ. Ժողովի 4րդ յօդ. Մանօք. Բ. կէտ եւ յօդ. 6. Կարգապահ. Ա. 6րդ յօդ.։

Զ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1. Առաջիկայ Ընդհանուր Ժողովը որոշուեցաւ գումարել 1900թ. Վերջերը։

2. Երկու Բիւրօնները կ'որոշեն Ժողովին գումարման օրը եւ վայրը եւ կ'ուղղեն հրահրները։

3. Բիւրօնները պարտական են հրահրները ղրկել Ժողով գումարելէ առնուազն վեց ամիս առաջ՝ հարցընելով ձայնատու մարմիններու կարծիքները այն խնդիրներու մասին, որ իրենք կը փափաքին Ժողովի ջընութեան ենթարկել։ Այդ պատասխաններէն օգտուելով կը կազմեն խնդիրներու օրակարգը եւ նախապէս կը ղրկեն այդ ցուցակը բոլոր ձայնատու մարմիններուն, որպէսզի անոնց ներկայացուցիչները Ժողովի եկած առին իրենց հետ բերեն այդ մարմիններու կարծիքները, հարկաւ, լրագորութիւն ունենալով ցուցակէն դուրս նոր խնդիրներ ուղարկել Ժողովին եւ բոլոր խնդիրներու մասին Ժողովի մէջ տեղի ունեցած մտքերու փոխանակութենէ ետք ձայն տալ իրենց համոզմունքի համաձայն։

4. Ընդհ. Ժողովը պաշտօնապէս ճանաչելով ստորեւ նշանակուած շրջաններու Դաշնակցական կազմակերպութիւնները՝ ձայնի իրաւունք տուաւ անոնց առաջիկայ Ընդհ. Ժողովի համար հետեւեալ համեմատութեամբ.—

| Ա. | Ձայն |
|--|------|
| 1. Կառնածաղիկ-Վիշապ (Պատ. Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 2. Բարձրաւանդակ (Պատ. Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 3. Լեռնավայր (Պատ. Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 4. Վասպուրական-Շամիր (Պատ. Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 5. Սեպուհ (Կոմիտէ) | 1 |
| 6. Մովսիս (Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 7. Կարմիր-Բերդ (Կոմիտէ) | 1 |

| | |
|---|---|
| 8. Ոսկեհանք (Կոմիտէ) | 1 |
| 9. Մարուստան (Կեդր. Կոմիտէներու շրջան) | 4 |
| 10. Վրէժստան (Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 11. Պալէստինայի թերակղզի (Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 12. Ամերիկա (Կեդր. Կոմիտէ) | 1 |
| 13. Եգիպտոս (Կոմիտէներ) | 1 |

Բ. 14. Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրօ

9. 15. Մարուստ. եւ արտասահմ. ուսանողութիւն (Դաշն.), խորհրդակցական ձայնով

Մանօք. Ա.— Մարուստանի Կեդր. Կոմիտէներու Պատգամաւորական Ժողովին կը թողուի իր կողմէն ընտրել չորս պատգամաւոր եւ կամ բաշխել այդ չորս ձայնը իր յարմար դատած կեդրոնական կէտերուն։

Բ.— Եգիպտոսը առաջիկայ Ընդհանուր Ժողովին այն պայմանով միայն կրնայ մասնակցել, եթէ մինչեւ այն առին Դաշն. Կամքը ներկայացնող Մարմին կողմէն ճանչցուի իբրեւ վերջնականապէս կազմակերպուած եւ որոշ գործունէութիւն ցոյց տուած մարմին։

Գ.— Մարուստանի եւ արտասահմանի Դաշնակցական Ուսանողութեան տրուած ձայները խորհրդակցական են։

5. Նշանակուած շրջաններէն զատ երկրի մէջ առաջիկային նոր կազմուելիք Կեդր. Կոմիտէներն եւ Ընդհ. Ժողովին մասնակցելու իրաւունք ունին։

Մանօք.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու շրջաններու մէջ կազմուելիք Կեդր. Կոմիտէներն եւ այդ իրաւունքը կը պահեն։

6. Դաշն. Կամքը ներկայացնող Մարմինն իրաւունք կը տրուի Ընդհ. Ժողովին մասնակցելու հրահրել նաեւ (նշանակուած շրջաններէն դուրս) որոշ գործունէութիւն ցոյց տուող անկախ կոմիտէներ։

7. Սկզբունքով ընդունուեցաւ, որ զուտ դրամական մարմինները չեն կարող մասնակցել Ընդհ. Ժողովներուն. իսկ եթէ այդպիսի առանձին որեւէ մարմին մեծ նշանակութիւն ստանայ, Դաշն. Կամքը ներկայացնող Մարմինն կը վերապահուի զայն եւս հրահրել։

8. Բիւրօ մը եւ իր շրջանի երկու Պատասխանատու Կեդր. Կոմիտէներ փոխադարձ համաձայնութեամբ կարող են Ընդհ. Ժողովի հրահրել հետու տեղեր զընդունող այնպիսի ընկերներ, որոնք իրենց յեղափոխական գործունէութեամբ այդ մարմիններուն որոշ երաշխաւորութիւն կը ներշնչեն Ընդհ. Ժողովի պարագմունքներուն զգալապէս նպաստելու։ Իսկ Ժողովի գումարման վայրը կամ անոր մօտ գտնուող այդպիսի ընկերները անպայման միայն Ընդհ. Ժողովը կարող է հրահրել։

9. Այդ կերպով հրահրուած ընկերները պատգամաւորի հաւասար ձայնի իրաւունք կ'ունենան Ընդհ. Ժողովի մէջ։

10. Ընդհ. Ժողովը իր որոշ նիստերուն խորհրդակցական ձայնով հրահրել կարող է նաեւ այնպիսի ընկերներ (համապատասխան յօդ. 8ին) եւ ուրիշ յեղափոխական կուսակցութիւններու պատկանող կամ չպատկանող անհատներ, որոնց մասնակցութիւնը օգտակար կը դատուի այս կամ այն խնդրի առթիւ բացուելիք վիճաբանութիւններուն։

11. Երկրի (Թուրքիոյ) ամէն ձայնատու մարմին Ընդհ. Ժողովին տեղեկագիր կամ պատգամաւոր զընկելէ առաջ, եթէ հնար կայ, պարտական է (Տե՛ս Կազմ., Կ. Կոմ. յօդ. 12) շրջանի Պատգամաւորական Ժողով գումարել, հակառակ պարագային զոնէ իր շրջանի կոմիտէներու կարծիքներն ստանալ։

12. Երկրէն դուրս պատգամաւորները կ'ընտրուին շրջանի Պատգամաւորական Ժողովի կողմէն։

13. Ամէն պատգամաւոր պարտական է իր շրջանի ոչ միայն մեծամասնութեան, այլ եւ փոքրամասնութեան կարծիքները բերել Ժողովին։

14. 4րդ, 5րդ, 6րդ եւ 8րդ յօդուածներու տրամադրութեան համաձայն հրահրուած պատգամաւորներու և գործիչներու երկու-երրորդի ներկայութեամբը Ընդհ. Ժողովը բացուած կը համարուի։

15. Ընդհ. Ժողովը իր վճիռները կու տայ զոնէ ձայններու երկու-երրորդի առաւելութեամբ, ձեռնպահներն ալ հաշուելով։

16. Մէկ պատգամաւոր երկու ձայնէ աւելի չի կրնար ունենալ։

17. Գործիչ մը երբ շրջանի մը ձայնը կը ստանայ, կը համարուի պատգամաւոր եւ կը կորսնցնէ իր գործիչի ձայնը (Տե՛ս յօդ. 8)։

18. Ընդհ. Ժողովի վճիռները վերջնական կը համարուին, երբ Ժողովը փակուած կը յայտարարուի եւ ամբողջական արձանագրութիւնը կը ստորագրուի։

Գ. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Ժողովը նկատուելով, որ Դաշնակցական քանի մը մարմիններ հարկ եղած լրջութեամբ չեն ըմբռնած Մրազրի կազմակերպութեան յօդուած 4րդի ոգին, կոմիտէներու լուրջ ուշադրութիւնը կը հրահրէ այդ յօդուածներու տրամադրութեան վրայ, որով ամէն Դաշնակցական պարտաւոր է համակերպել իր անձին նկատմամբ եւս իր պատկանած մարմին ըրած կարգադրութեան։

Ա. ԸՅԻԵՐՈՒՆԵՐՈՒ ԱՐՏԱԲԱՆԱԸ

1. Պատմական բնոյթ ունեցող ամէն վճիռ կը տրուի ձայններու երկու-երրորդի մեծամասնութեամբ։

2. Ամէն Դաշնակցական մարմին (խումբ, ենթա- կոմիտէ, կոմիտէ, Կեդր. Կոմիտէ, Բիւրօ) կարող է կարգապահական պատիժներ տնօրինել եւ իր մէջէն արտաքսել զեղծում գործող անդամը, զգուշութեան համար անմիջապէս տեղեկացնելով միւս շրջաններուն եւ Բիւրօներուն:

3. Արտաքսման ամէն վճիռ ժամանակաւոր է, մինչեւ աւելի լայն շրջանէն վաւերացուիլը:

4. Եթէ լայն շրջանի մարմինն եւս կը հաստատէ, վճիռը վերջնական կը համարուի միայն այդ շրջանի համար:

5. Արտաքսուողը կարող է բողոքել աւելի լայն շրջանի մարմիններուն:

6. Ընդհ. Ժողովը կամ Դաշն. Կամքը ներկայացնող Մարմինը միայն կրնայ ընկեր մը Դաշնակցութեանէն իսպառ արտաքսել եւ այդ մասին յայտարարել «Դրօշակ»ի մէջ:

Բ. Մահուամ պատիժ ընկերներու համար

1. Դաշնակցական կոմիտէները, Կեդր. Կոմիտէները եւ Բիւրօներ, իրենց անհատական պատասխանատւութեամ տակ, կարող են Դաշնակցական ընկեր մը մահուան դատապարտել ապացուցուած դաւաճանութեամ եւ ընկերասպանութեամ (անիրաւ կերպով, անհատական վրէժխնդրութեամբ եւայլն) ոճիրներու համար, պայմանաւ որ վճիռը միաձայն տրուի:

Մանօթ.— Եթէ վճիռը միաձայն տրուած չէ, պարտաւոր են դիմել աւելի լայն շրջանին համաձայնութեան (Տե՛ս յօդ. 4):

2. Եթէ Դաշնակցական մարմին մը իր անդամ- ընկերը կը դատապարտէ մահուան, պարտական է իր- մէջ լայն շրջանի համաձայնութիւնն ստանալ (Տե՛ս յօդ. 4):

3. Ուրիշ յանցանքներու համար մահուան պատ- ժի կիրառութիւնը կարելի է միայն այն ատեն, երբ աւելի լայն շրջանի համաձայնութիւնը ստացուի:

4. Մահուան դատաւճռին վերի երեք յօդուած- ներով նախատեսուած պարագաներու մէջ վաւերա- ցումը հետեւեալ աստիճանաւորումը կ'ընդունի. կո- միտէն՝ Կեդր. Կոմիտէին, Կեդր. Կոմիտէն՝ իր շրջանի Բիւրօին, Բիւրօն՝ միւս Բիւրօին:

Գ. Մահապատիժ ուրիշ յեղափոխական կուսակցութիւններու կամ հիմնարկութիւններու պատկանող անհատներու համար

1. Երբ ամբաստանուողը կը պատկանի վստահու- թիւն ներշնչող ունէ յեղափոխական կուսակցութեան կամ հիմնարկութեան, դատապարտող մարմինը պար- տաւոր է դիմել անոնց՝ իրաւախոհ ատենան մը կազմե- լու:

Եթէ այդ դիմումները հետեւանքի մը չյանգին, դատապարտող մարմինը ազատ է իր գործողութիւննե- րուն մէջ:

Դ. Մարմնի մը արձակած վճիռներու գործադրութեամ պայմանները միւս շրջաններու մէջ

1. Երբ դաշնակցական մարմնէ դատապարտուած մը փախուստ կու տայ ուրիշ մարմնի մը շրջանը, վեր- ջինս պարտական է յարգել տրուած վճիռը, այսինքն՝ կրնայ գործադրել այդ վճիռը դատապարտող մարմնին հետ հաւասար պատասխանատուութեան տակ. կրնայ եւ չգործադրել, բայց ստանձնելով չգործադրած ըլլա- լուն պատասխանատուութիւնը (Տե՛ս նաեւ Տակտիկ, Տեղոր յօդ. 1, 2, 3):

Ե. Զինուորական կարգապահութիւն եւ պատերազմական վիճակ

1. Ընդհ. Ժողովը կը յանձնարարէ Պատասխ. Կեդր. Կոմիտէներուն զինուորական կարգապահու- թեան եւ պատերազմական դրութեան համար պատ- րաստել առանձին կանոնադրի:

2. Պատերազմական դրութիւն կը յայտարարուի երկու պարագայի մէջ միայն.

ա) Երբ Օսմանեան կառավարութիւնը ինքը կը յայտարարէ.

բ) Երբ Դաշնակցութիւնը ապստամբական կամ ցուցական կռիւ կը սկսի:

3. Կարգապահական վերեւ յիշուած կանոնները կը դադրին գորութիւն ունենալէ «պատերազմական դրութիւն» յայտարարուած պահուն(9):

Դ. ԴՐԱՄԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ա. Հաշուետուութիւն

1. Ժողովը լսեց հաշուեքննիչ յանձնախումբի զե- կուցումը եւ վաւերացնելով բոլոր ներկայացուած հա- չիւնները՝ յանձնարարեց Արեւմտեան Բիւրօին պահան- ջել կոմիտէներէ չստացուած հաշիւները եւ յանձնա- խումբի պատրաստած աղիւսակը լրացնելով՝ ցրուել բո- լոր Կեդր. Կոմիտէներուն:

2. Ժողովը նկատելով, որ ներկայացուած բազ- մաթիւ հաշիւներուն մէջ կազմութեան միաձեւութիւն չլինելուն, շատ դժուար է ճշգրիտ եզրակացութիւններ հանել, թէ ո՞ր տեսակի ծախքեր ինչ սոկոս կը կազմեն Դաշնակցութեան ընդհանուր հաշուեկշռին մէջ, ապա- դայի համար որոշեց.

ա) Օրագրական հաշիւները մէկ սիստեմով կատա- րել տալու համար ընդունել հաշուեքննիչ յանձնախումբի

պատրաստած աղիւսակը եւ ցրուել բոլոր Կեդր. Կոմի- տէներուն:

բ) Պարտաւորել Կեդր. Կոմիտէները, որ օրագրա- կան ձեւով պահեն իրենց շրջանի դրամի եւ զէնքի հա- չիւնները:

գ) Պարտաւորել Կեդր. Կոմիտէները, որ իրենց շրջանի մանրամասն հաշիւներու հետ, որոշուած ա- տեն, Բիւրօներուն ներկայացնեն նաեւ նոյն հաշիւնե- րը աղիւսակի վերածած:

դ) Գործիչի մը իբր ճանապարհածախս տրուած գումարը — որու քանակը կ'որոշէ տեղական կոմիտէն — պէտք է իբր պահանջ արձանագրել այն կոմիտէի հաշուին, ուր կ'երթայ գործիչը: Վերջինս պարտաւոր է իր հաշիւը տալ այդ երկրորդ մարմնին:

3. Ժողովը նկատելով որ, թէեւ շատ հազուա- գիւտ եղած են այնպիսի դէպքեր, երբ Դաշնակցու- թեան միջոցներէն նպաստներ տրուած են գործի մէջ գտնուող մեր ընկերներու ընտանիքներուն, սկզբուն- քով մերժեց այդ կարգի նպաստները:

Բ. Դաշնակցական տուրք

1. Ընդհ. Ժողովը միաձայն որոշեց պարտաւորել բոլոր Դաշնակցականները պարբերական որոշ տուրք մը (ամսէ ամիս կամ տարին անգամ մը) վճարել Դաշ- նակցութեան:

2. Պատգամաւորական ժողովները կարող են որոշել յօդ. 1ով քուէարկուած տուրքի քանակը (mini- mum կամ եկամտին %), եթէ խնդրին այդ տեսակ լու- ծումը արդէն հասունացած կը համարեն իրենց շրջանի համար:

Գ. Տեղորը համաձայնութեամ գործի մէջ

Ժողովը յանձնարարեց կոմիտէներուն ամէն կերպ ջանալ խոյս տալու սպանութեան դիմելէ դրամ հաւա- քելու գործին մէջ:

Դ. Օգնութիւն գործող եւ գործի վայրէն հեռացած ընկերներու

1. Դաշնակցական ամէն գործիչ պարտական է իր սեփական աշխատանքով ապրել ամէն անգամ՝ ա) երբ մասնաւոր զբաղմունքը չի վնասեր իր ստանձնած գործին յաջողութեան, բ) երբ իր ստանձնած գործը կատարելէն կամ իր շրջանէն հեռանալէն ետք անմի- ջապէս նոր գործի չի կոչուիր:

2. Յօդուած 1ի Բ. պարբերութեան մէջ նախա- տեսուած պարագային Դաշնակցական մարմիններն ու ընկերները պարտական են ընկերող համար աշխատանք գտնել եւ կազմակերպութեան հաշուով անոր ծախքե- րը հոգալ առ առաւելն մէկ ամիս:

Մանօթ.— Յօդուած 2րդի նախատեսած պարա- գաներու մէջ գտնուող ընկերող մը Դաշնակցութիւնը կ'օգնէ մէկ ամիս եւ ոչ թէ ամէն կոմիտէ մէկ-մէկ ամիս:

Ե. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ (10)

Ա. Արեւելեան Բիւրօ(10)

1. Ա. Թ. 2. Աւ. 3. Գր. 4. Ծ. 5. Սեր. 6. Սիմ. 7. Տ. Թ. (*):

Բ. Արեւմտեան Բիւրօ

1. Բորիս, 2. Գարօ, 3. Ռոստոմ, 4. Վահագ, 5. Էլէն:

Գ. Բարձրաւանդակի Պատասխ. Կեդր. Կամիտէ

1. Աղբիւր, 2. Գուրգէն, 3. Սաքօ, 4. Վարդան: Մանօթ. 1.— Ժողովը որոշեց յանձնարարել ըն- տրուած ընկերներուն, եթէ իրենք յարմար կը տես- նեն, ընդունին նաեւ Դժոխքը իբր հաւասար ընկեր- անդամ:

2.— Այդ մարմնի մէջ ինտելիգենտ կազմակերպող գործիչի մը անհրաժեշտութիւնը տեսնելով՝ Ժողովը որոշեց յանձնարարել Արեւելեան Բիւրօին, որպէսզի գտնէ այդպիսի անձ մը եւ զրկէ Բարձրաւանդակ:

Դ. Լեռնավայրի Պատ. Կեդր. Կամիտէ

1. Հրաչ, 2. Մար., 3. Արթակ: Մանօթ.— Ժողովը ի նկատ առնելով Ամերիկայի կոմիտէներու ջերմ փափաքը յատկապէս զբաղուել եւ օգնել Լեռնավայրի գործին՝ միաձայն ընդունեց, որ այդ կոմիտէները կարող են իրենց կողմէն անդամ մը ունենալ Լեռնավայրի Պատ. Կեդր. Կոմիտէի մէջ, ըն- տրութիւնը վերջինս հաւանութեամբ, եթէ այդպիսի անդամ մը կարեւորութիւնը զգացուի:

Ե. Կառուածադիկի Պատ. Կեդր. Կամիտէ

1. Աշոտ, 2. Բաբա, 3. Կարէն(11): Մանօթ.— Ժողովը կը փափաքէր Մրկոն եւս ըն- տրել Մաղկի Պատ. Կեդր. Կոմիտէի մէջ, բայց ստոյգ բան մը չգիտնալով անոր յօժարութեան մասին, որո- շեց այդ խնդիրը թողուլ Մրկոյի եւ Պատ. Կեդր. Կո- միտէի փոխադարձ համաձայնութեան:

(*) 1. Արշակ Թադէոսեան, 2. Աւետիք Սահակեան, 3. Գ. 4. Ե. Շահրէպեան, 5. Գ. 6. Ս. Զաւարեան, 7. Տիգրան Թադէոսե- ան:

2. Վասպուրականի Պատ. Կեդր. Կոմիտեի

1. Վասպուրականի Կեդր. Կոմիտեի ընտրութեան ատեն ժողովը բախեցաւ երկու կարգի դժուարութեան. նախ՝ չկային դրսի ընկերներու մէջ տրամադրելի ուժեր. երկրորդ՝ երկրի մէջ գտնուած ուժերն ալ անծանօթ էին ժողովի ստուարագոյն մեծամասնութեան:

Ուստի, ժողովը նկատելով, որ արդէն Շամիրի ընկերները քանիցս անգամ եւ դեռ վերջերս ալ Արեւելեան Բիւրոյն ինտելիգենտ եւ կարող ընկեր մը խընդրած էին, որոշեց յանձնարարել Արեւելեան Բիւրոյին ամէն ջանք գործ դնելով՝ փութալ կազմակերպող եւ ինտելիգենտ ոյժ մը ղրկել Շամիր, որ Վասպուրականի շրջանի Պատգամաւորական ժողովի կողմէն ընտրուած երկու ընկերներու հետ միանալով՝ կազմէ Վասպուրականի Պատ. Կեդր. Կոմիտէն:

2. Մինչ այդ մարմնի կազմուելը, Ընդհ. ժողովի այդ կէտին նկատմամբ տուած վճիռը (Տե՛ս Տակտիկա) կը վարեն Շամիրի եւ Վրէժի Կեդր. Կոմիտէները:

3. Մինչեւ Վասպ. Պատ. Կեդր. Կոմիտէի կազմուելը, Շամիրի Կեդր. Կոմիտէն կը համարուի անոր փոխանորդը Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմնի մէջ:

2. ՄՈՒՌԵՐ ԱՆ ԽՆԴԻՐ

Ա. Միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդիրը նոր Հնչակեան կուսակցութեան հետ.—

Նոր Հնչակեան կուսակցութեան Կեդր. Վարչութիւնը այդ առաջարկը ուղղած էր Դաշնակցութեան «Դրօշակ»-ի խմբագրութեան միջոցաւ, որով երկու տարիէ ի վեր այդ առթիւ կատարուած բոլոր բանակցութիւնները վարած էր խմբագրութիւնը ընկերներու համաձայնութեամբ եւ անոնց կարծիքներէն առաջնորդուելով:

Ժողովը լսեց այդ խնդրի առթիւ խմբագրութեան մասնաւոր տեղեկագիրը, ծանօթացաւ այդ խնդրին վերաբերեալ բոլոր վաւերագրերուն, ի միջի այլոց եւ պ. ձիւնակիւնեանի նամակի հետ ու ժողովի պատուիրակներուն տուած բերանացի բացատրութիւններուն, եւ ի նկատ առնելով պատգամաւորներու կարծիքները այն բոլոր կէտերու մասին, որոնք հետուէն կամ մօտէն առընչութիւն ունէին միութեան խնդրին հետ, հետեւեալ նկատումներու հիման վրայ տուաւ իր որոշումը՝ պատճառաբանութիւնը «Դրօշակ»-ի մէջ հրատարակել յանձնարարելով:

1) Նկատելով, որ Դաշնակցութեան հետ միութիւն՝ առաջարկող Նոր Հնչակեան Վարչութիւնը անկարող գտնուած է ցարդ իր հետ միացնելու Հնչակեան բոլոր ուժերը, որով նախկին Վարչութիւնը իր կու-

սակիցներուն հետ կը շարունակէ տակաւին ինքզինքը հռչակել հարազատ ներկայացուցիչ ամբողջ Հնչակեան կուսակցութեան,

2. Նկատելով, որ Նոր Հնչակեան կուսակցութիւնը հիմնովին գոյութիւն չունի Մեծ եւ Փոքր Հայքի մէջ, Պոլսի մէջ միայն անհատներ կան, իսկ իր գլխաւոր ուժը որ Լեռնավայրի մէջ իր ունեցած կազմակերպութիւններն կը ներկայացնէին՝ այսօր քայքայուած վիճակ մը ունի,

3. Նկատելով, որ այդ կուսակցութիւնը ինքնին կազմակերպուած ամբողջութիւն մը չի ներկայացներ, եւ այլեւայլ մասերն իսկ տարբեր կերպով կը վերաբերին միութեան խնդրին,

4. Նկատելով, որ այդ կուսակցութիւնը ի սկզբան հակառակ յայտարարելով ինքզինքը որեւէ ուղղութեան՝ իր խախտող դրութիւնը մատնեց եւ միւս կողմէն իր յետագայ հրատարակութիւններով ապացուցեց նոյնիսկ յեղափոխական ոգիի չբացումը իր մէջ,

5. Նկատելով, որ այդ կուսակցութեան ղեկավարներէն շատերը վստահութիւն չեն ներշնչեր յեղափոխական եւ ընդհանուր բարոյական կրկին տեսակէտներով, որով կը բացատրուի մաքուր ճանչցուած գործիչներու հետզհետէ հեռացումը այդ կուսակցութեան (Տամատեան, ձիւնակիւնեան, Գրլըճեան Լեն.),

6. Նկատելով, որ Ա. Արփիարեանի պէս մէկը, հակառակ տրուած խոստումներուն, ոչ միայն չէ հեռացուած նոր կուսակցութեան, այլ եւ իր ձեռքն առած է այսօր կուսակցութեան ղեկը,

7. Նկատելով, որ այդ կուսակցութեան վարիչ անդամներէն շատերը երկու տարի անընդհատ զբաղուած լինելով կուսակցական այլեւայլ պայքարներով՝ ոչ մէկ երաշխաւորութիւն կ'ընծայեն թէ նոյն ընթացքը չպիտի շարունակեն նաեւ Դաշնակցութեան մէջ, եթէ միութիւնը իրագործուի,

8. Նկատելով, որ պաշտօնապէս միութիւն առաջարկելով հանդերձ՝ Հնչակեան ղեկավարներէն շատերը անպաշտօն կերպով հալածանք սկսած էին Դաշնակցութեան դէմ, բան մը, որ քիչ վերջ բացարձակ սկսաւ արտայայտուել կուսակցութեան օրգանին («Մարտ») եւ աւելի ուշ «Նոր-Կեանք»-ի էջերուն մէջ,

9. Նկատելով, որ այդ կուսակցութիւնը ազգադաւ փրփականտայի ձեռնարկած է՝ զբաղելու Օսմանեան հայերը իրենց ուսուցապատակ եղբայրներու դէմ.—

Ժողովը միաձայն որոշեց Նոր Հնչակեան կուսակցութիւնը իր արդի կազմին մէջ չմտնելով իբր վրստահութիւն մերջնոց յեղափոխական կազմակերպուած մարմին մը՝ մերժել անոր Վարչութեան առաջարկը միութեան կամ համերաշխ գործունէութեան մասին:

Ժողովը հաստատ համոզուած, սակայն, թէ Նոր Հնչակեան կուսակցութեան մէջ կան անկեղծ յեղափո-

խական խմբեր եւ անհատներ, որոշեց հրաւեր կարգաւ անոնց, որ գան եւ իբր Հնչակեան գործիչներ ձեռք-ձեռքի տալով մեր ընկերներուն՝ համերաշխաբար մղուեն մեր անհաւասար կռիւը թշնամիին դէմ:

Բ. Համերաշխութիւն միւս յեղափոխական կուսակցութիւններու եւ մարմիններու հետ.—

Գալով միութեան խնդրին միւս յեղափոխական կուսակցութիւններու եւ մարմիններու հետ, ժողովը ի նկատ առնելով Դաշնակցութեան այդ նպատակով կատարած ապարդիւն փորձերը անցեալին մէջ՝ առկա թողուց այդ խնդիրը: Բայց ընդունելով միանգամայն, որ յեղափոխական բոլոր ուժերու գործակցութիւնը անհրաժեշտ է մեր դատը յաջողութեամբ գլուխ հանելու համար, որոշեց ջերմապէս յանձնարարել Դաշնակցութեան բոլոր մարմիններուն եւ ընկերներուն, որ ամէն կերպ ջանան համերաշխութեան յանգելու իրենց շրջաններուն մէջ գտնուող ոչ-Դաշնակցական վստահելի յեղափոխականներու հետ, որպէսզի ատով կարելի լինի հող պատրաստել եւ հասունցնել ապագայ միութեան բաղձալի գործը:

Է. ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ (12)

Արթին փաշա Տատեան Թուրք կառավարութեան կողմէն դիմումներ ըրած էր խմբագրութեան, խնդրելով դադարեցնել յարձակողական հանգամանք կրող գործողութիւնները, փոխարէն խոստանալով ընդունել եւ իրագործել տալ Դաշնակցութեան առաջարկները հմարաւոր բարենորոգումներու մասին: Ժողովը յանձնարումը մը կազմելով՝ լիազօրութիւն տուաւ անոր, Ընդհ. ժողովի Տակտիկայի մասին տուած որոշումներու սահմանին մէջ, մշակել եւ Դաշնակցութեան կողմէն տրուելիք պատասխանը:

ՈՐՈՇՈՒՄ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԶԱՂՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատելով, որ զրեթէ բոլոր Կեդր. Կոմիտէներէ պատգամաւորներ կամ գործիչներ ներկայ էին Ընդհ. ժողովին, որոշուեցաւ գործի շահու տեսակէտէն, կոմիտէներուն հաղորդուելիք ամփոփ ատենագրութեան մէջ չմտնել հետեւեալ երեք մասերը.— 1) Տակտիկա կամ գործունէութեան եղանակ, 2) Բանակցութեան խնդիր եւ 3) Ընտրութիւններ: Գալով այն Կեդր. Կոմիտէներուն, որոնց վայրերը գնացող չկայ ժողովին մասնակցող ընկերներէն, գրաւոր հաղորդել ժողովի այն որոշումները միայն, որոնք անմիջապէս կը վերաբերին այդ կէտերու գործունէութեան (13):

Գալք. Կ. Կոմիտէի ներկայացուցիչը առաջարկեց ջնջել իր բողոքի մասին յիշատակութիւնը ատենագրու-

թեան մէջէն, որովհետեւ Ընդհ. ժողովի կազմի մասին իր հայեացքները պարզուած գտաւ կազմակերպութիւն, Ընդհ. ժողով 8րդ յօդուածով:

ՄԻՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

Ջնջել երրորդ երես վերջըներ պարբերութեան «Քանի մը... տեսակէտէն» եւ փոխարէն աւելցնել չորրորդ երես առաջին տողէն անմիջապէս ետք (*) հետեւեալը.— «Այս զեկուցումներու ատեն ժողովի ուղարկութիւնը գրաւեցին մէկ-երկու դէպքեր, երբ իրար յաջորդող քանի մը մարմիններ եւ գործիչներ ձգտուած ունեցած են իրենց նախորդներու գործունէութիւնը անյաջող ներկայացնելու: Ժողովը վնասակար գտաւ այդ բանը գլխաւորապէս գործի բարոյական տեսակէտէն» (**):

Աւելցնել Կազմակերպ. Ընդհ. ժողովի յօդուածներուն՝ յօդ. 18.— «Ընդհ. ժողովի նիստերը բացուած յայտարարուելէն ետք Պատ. Կեդր. Կոմիտէները եւ Բիւրօները ժողովին կը ներկայացնեն իւրաքանչիւրն իր շրջանի համարատուութեան տեղեկագիրը: Բիւրօներու տեղեկագիրներուն մէջ կը մտնեն նաեւ միւս Կեդր. Կոմիտէներուն ալ, եթէ կարեւորութիւն չի տեսնուիր այս կամ այն Կեդր. Կոմիտէի համարատուութիւնը մասնաւոր տեղեկագրով մը լսելու»:

Աւելցնել Կարգապահութիւն, 2., Յամակցութեան մասին.— Ժողովը ըստ կարելոյն նուազեցնելու համար այն վտանգը եւ վնասները, որ նամակներու կորուստը կամ գրաւումը պատճառած է եւ կը պատճառէ գործին, որոշեց յանձնարարել կոմիտէներուն՝ 1) Որ խոյս տան նամակներ գրելէ ամէն անգամ, երբ հնար կայ սուրհանդակի միջոցաւ բերանացի հաղորդել կարելորդ, 2) Նամակները գրել կարճ եւ ամփոփ, ծածկագրով եւ գաղտնի թանաքով, վերջին երկուքը գաղտնի պահելով ոչ-կոմիտէական ընկերներէն, 3) Պատիւ հետեւել, որ կոմիտէի կողմէն նշանակուած ընկերէն զատ ոչ մէկ ուրիշը գործի մասին թղթակցութիւն պահէ դրսի ընկերներու հետ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԶԵՆՈՒՄ

- 1) Հրաչ — Կղզիի պատգամաւոր.
2) Արքայ Ռշտումի.
3) Ռուբէն — Մեծ Բաղաքի պատգամաւոր.
4) Բարայեան — Ոսկեհանքի պատգամաւոր.

(*) «1892-97, իր բոլոր կողմերով» բառերից յետոյ:
(**) Այս հաստատումը, ինչպէս ատենագրութեան սկզբում տեսնուի, իր տեղում ջնջուած է եւ գրուած է այստեղ իբրև յուշում: ԿՄԲ.

1ա. — ԲԻՒՐՈՅԻ 1895 ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄԵԱԿԻ ՀԱՇՈՒՆՏԱՆՏԱԿԸ

Ձեռագիր, մշտնդէմ (վերեմ վար) ծալուած մեծ բուրդի վրայ (37x44 սմ.). ծանօթութեամբը՝ հաշուետախոսկի սակ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնի կատարելով Ընդհանուր ժողովի որոշումը, հրատարակում է, ի դիտութիւն Ընկերութեան բոլոր խմբերի եւ անդամներին, իւր 1895 թուի խմբակի ամփոփման հաշիւը, որը խնդրում է կարգալուծ պէս ոչնչացնել: Բոլոր խումբերի մանրամասն հաշիւները պահուած են Բիւրոյում, որը եւ կըլէ դրան առթիւ հետաքրքրուողներին բաւականութիւն տալ:

| 1895 թ. Յունուարից մինչև Յուլիս | Մ ու լ տ ֆ | | | | | | | | Ս լ ֆ | | | | | | | | | | | | | | | | |
|---|-----------------|-----------|------------------------------------|----------|------------------------|-----------------------|----------------------|------------------|--------------------|----------------------------|--------------------|---------------------------|--|----------------------------------|---------------------------|-------|-------|------------------------|-----------------------------|----------------------|-------------------------|--------------|---------|-------|--------|
| | Մեքայտ անցնալից | Անցումներ | Ներկայացում, կանցրա եւ ցանխոյանքից | Գիւղերից | Հանգանակութիւն եւ ճակը | Մուտքի խնայանք գումար | Միւս խմբերից ստացում | Ընդհանուր գումար | Հրացան եւ սարճանակ | Ձէմքի պարագանքի եւ գործերի | Փամփուշտ եւ պիստակ | Ապրանքի փոխադրութեան ծախք | Խմբերի եւ անդամների սրբանադրութեան սակ | Կամուրջներն եւ բանաբերութիւններն | Ատրպասական եւ վասպուրական | Փոխիս | Կարթն | Մամուլի կամար եղանակով | Փոստային եւ այլ մանր ծախքեր | Ծախքի խնայանք գումար | Փոխադրուած ուրիշ խմբերի | Ընդհ. գումար | Մնացորդ | | |
| Բիւրոյում | — 204 | 929 | 596 | > | 571 | 1-292 | 10-580 | 11-872 | 328 | 248 | 548 | 117 | 2-220 | 714 | 1-170 | 1-100 | 500 | 770 | 213 | 7-928 | 3-000 | 10-928 | 944 | | |
| Բերդիկ գիւղում (Կարս) | 1-718 | 518 | 117 | 22 | 152 | 2-527 | 1-100 | 3-627 | 118 | 78 | 400 | > | 2-251 | 344 | > | > | > | > | 8 | 3-199 | > | 3-199 | 428 | | |
| Ապառաժում (Ղարաբաղ) | 130 | 440 | > | > | 2-625 | 3-195 | > | 3-195 | 391 | > | > | > | > | > | > | > | > | > | > | 391 | 2-000 | 2-391 | 804 | | |
| Արարատում Յունուար — Մայիս | > | 157 | > | 217 | 30 | 404 | 200 | 604 | 117 | > | > | > | 89 | > | > | > | > | > | > | 79 | 285 | > | 285 | 319 | |
| Այգեատանում (Գանձակ) Մեկուս. 94 թ. — Յունիս | > | 46 | 887 | 149 | 589 | 1-671 | > | 1-671 | > | > | > | > | 61 | > | > | > | > | > | > | 1 | 62 | 1-609 | 1-671 | > | |
| Պողպատում (?) | > | 650 | 2-211 | > | 900 | 3-761 | 6-000 | 9-761 | 3-081 | 2-422 | 1-073 | 447 | > | > | > | > | > | > | > | > | 7-023 | > | 7-023 | 2-738 | |
| Գարուտ քաղաքում (Ալեքսանդրապոլ) | 184 | 483 | 168 | 104 | 346 | 1-285 | 1-100 | 2-385 | 902 | > | 1-100 | 31 | > | 334 | > | > | > | > | > | 18 | 2-385 | > | 2-385 | > | |
| Ոսկանապատում (Պախու) Յունուար 94թ. — Մայիս 95թ. | > | 5-778 | > | > | 8-042 | 13-820 | 430 | 14-250 | 200 | 130 | > | > | 1-375 | > | 1-400 | > | 2-000 | > | > | > | 5-105 | 6-100 | 11-205 | 3-045 | |
| Նաւահանգստում (Պաքում) | > | 100 | 451 | > | 310 | 861 | 500 | 1-361 | 317 | > | > | 19 | 531 | > | > | > | > | > | > | 10 | 883 | 250 | 1-133 | 228 | |
| Ձեզն. մանր խմբերում | > | > | > | > | > | 6-951(*) | > | 6-951 | > | > | > | > | > | > | > | > | > | > | > | > | > | 6-951 | 6-951 | > | |
| | 1-828 | 8-501 | 4-430 | 492 | 13-565 | 35-767 | 19-910 | 55-677 | 5-454 | 2-878 | 8-121 | 614 | 6-527 | 1-392 | 2-570 | 1-100 | 2-500 | 770 | 335 | 27-261 | 19-910 | 47-171 | 8-506 | | |
| | | | | | | | | | 11-453 | | | | 7-919 | | 6-170 | | | | | | | | | | 14-089 |

ԵԱՆՕՔՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշիւը թէև կիսամեայ է, բայց պիտի համարուի մասաւորապէս, որովհետև կան բազմաթիւ որոնց մուտքն ու ելքը վերաբերում է կամ աւելի կարճ, կամ աւելի երկար ժամանակի: Ոսկանապատի հաշիւը չի հակասում սորան, որովհետև ամենամեծ մուտքը եղած է այդտեղ 94/95 թուականների ձմեռը: Հաշուից երևում է, որ իսկական մուտքը հասնում է 35-767 թուրում:

(*) Այս գումարը կազմուած է խմբերի Բիւրոյին ուղարկած հետեւեալ գումարներից. — Բ.ից, Աս.ից եւ Մ.ից 2500, Ղ.մից 800, Իրիսից 700, Ա.քից 500, Ա.ից եւ Ար.ից 300, Արամից 427, Լարիճանից 332, Հայկից եւ Արմենակից 300, Նորաշէնից 200, Գ.ից 200, Կ.բոլից 100, (2), Խ. Ուս. Գր.ից 72, Կալիսիդայից 230, Զ.ից եւ Դ.ից 160 եւ Պատ.ից 100. Ընդամենը 6951 թ.:

Մախքիին իսկական գաղափար կազմելու համար ի նկատի պիտի ունենալուեալ մի քանի հանգամանքները՝ բուն գործողները ու կոմիտեիները, որոնց ձեռքով ծախսուած է 14-089 թր., այս գումարի ամբողջաւոր մասը գործադրուել է նոյնպէս զէնքի, կամ զէնքի փոքրութեան վերայ: Երկրորդ տեղն է բռնում հրոսակային խմբի կամաւորների վերայ գործ դրած ծախքը: Այդ գումարի մէջ նոյնպէս Սասունի սովեակներին բաժանած նպաստը — մօտ 1500 թ եւ մի կարեւոր ու ցանկալի ձեռնարկութեան հա-

մար հանգանակած 2000 թուրում գումարը: Գործողների ապրուստը կամ նրանց համար պատրուակ ստեղծելու ծախքերը բռնում են երրորդական տեղ: Նոյնպէս երրորդական տեղ է բռնում Ընկերութեան մի քանի անհատների ճանապարհածախքը Տաճկաստանից դուրս, որը նոյնպէս մտել է այս գումարի մէջ:

Երկրորդ կիսամեակի սկզբին Հայ Յ. Դաշնակցութեան Ռուսաստանի խմբերը ունեցել են ազատ գումար՝ 8506 թ. (35-767 — 27-261):

(1) Փակագծի մէջ տրուած տեղանունները աւելցուած են մեծ տառերով:
(2) Տեղանուն մը եւ կամապատասխան գումարը՝ անընթացակից:

1բ.— ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. Կ. Ի 1896Ի Ա. ԿԻՍԱՄԵԱԿԻ ՀԱՇՈՒԵՑՈՑՑԸ

ԸՅՔացիկ տնտեսի չափի երկրորդ բուրգի վրայ, երկու երես: Ձեռագիր:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ՎՐԷԺ» ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇԻԻԸ 1896 Թ. Ա. ԿԻՍԱՄԵԱԿԻ (ՅՈՒՆԻ. 1 — 10 ՄՅՍ.)

Մ ա լ տ ֆ

Ն ի ֆ

Table with 2 columns: Description (1-12) and Amount (դր.). Includes items like 'Ոսկանապատից', 'Բիւրոյից', 'Մըջից', etc.

Գումար 29.373 >

Գումար 29.373,00 >

1) Այս հաշուի մէջ չէ մտնում ՍԼ.Ի 1690 դր. հանգանակութիւնը, որի մի մասը (700 դ.) աշնան խմբի հետ է ուղարկուած, իսկ մնացածը գործադրուած է խմբի եւ տեղական այլ ծախքերի վրայ:

1գ.— ԱՐԱՐԱՏԵԱՆ ԿՈՄԻՏԵԻ 1897Ի ՀԱՇՈՒԵՑՈՑԸ

ԸՅՔացիկ տնտեսի չափի երկրորդ բուրգի վրայ, երկու երես: Ձեռագիր:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՑ. ԴԱՇՆԱԿՑ. ԱՐԱՐԱՏԵԱՆ ԿՈՄԻՏԵԻ 1897 ԹՈՒԻ ՀԱՇԻԻԸ

Table with 2 columns: Description (1-17) and Amount (դր.). Includes items like 'Խենթից', 'Անդամավճարներ քաղաքացիներից', 'Աւետիսից', etc.

3.804,51

Գումար եկած ծախքը 3.765,13

Մնում է առձեռն 39,38

(1) Փակագծի մէջ ամբողջացուած տեղամուճները տուած ենք մեզ:

2ա.— ԳԷՈՐԳ Ծ. ՎՐԴ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ (ԸՆԾԱՅՐ) ՆԱՄԱԿԸ

Գրուած Գումարի ընթացիկ (զծուած) բուրգի վրայ (22x27 չափի): Լեզու, հմարայր ու յամախ սխալներով լի, պահած ենք անփոփոխ: Առաջին մասը բովանդակութեամբ այլ մասնաւոր ինքնատուրքի մը չունի. աւելի հետաքրքրական է երկրորդ մասը, ուր Գեորգ Ծ. Վրդ., յետագայ յեղափոխական ընթացքը, կ'ընէ ծրագրային կարգ մը կենտրոն մտածածչումներ (արգիւտ՝ որոշ փոփոխութեանց առաջարկներով, — յստակ չէ):

Առաջին էջին վերջ կը գտնենք ձեռագիր մակագրութիւն մը՝ Ս. 8 Յուլիս 97:

17/29 Յունիս 1897, Ի Վառնա

Մեծապատիւ

Ատենապետ Պատ. Ընդհ. Ժողովոյ

Հայ Յեղ. Դաշնակցութեան

Տի'ար,

Համակրանք կարդացի Հ. Յ. Դաշնակցութեանը ծրագիրը, որ կազմուած է պայմաններով՝ Տաճկահայաստանի ինքնորէնութիւնը ձեռք բերելու նպատակաւ. եւ յուսալից ապագայի խոստմամբ: Այդ կազմուած պայմաններ որչափ իտէլական լինին ըստ սուրբան ծրագրոյն՝ դարձեալ փորձով կը տեսնենք որ այդ բաղձացեալ ազատութեան իրականացումն միանգամայն անկարելի կը թուի, եթէ ընդ մերթ չբարեփոխուին ըստ պարագայից պահանջմանը: Եթէ առանց կռիւի եւ առանց արեան, անաշխատ կերպով սպանուէր այդ պատերազմական ոգին, տապալէր այդ միապետական բռնութիւնը, եւ թօթափէր այդ խայտառակ լուծը, եւ ձեռք բերուէր այն ցանկալի ազատութիւնը, եւ եթէ այն օտար զրկուած կարծեցեալ ազգերն, որք են թիւրք եւ ջիւրտ եւ ասորի հասարակութիւնք, եթէ կարեկից, եւ զործակից գտնուելով աջակցէին այս Ս. Գործին, եթէ երկրին բարեւոյնը, խաղաղութեանը եւ յառաջդիմութեանը եւ եթէ բնակչաց համաձայնութեանը օգուտն ապահովելու համար զոհեր տային, յայնժամ կարելի էր իրենց հաւասար, եւ համերաշխ վարուելու. վստահութիւնը տալ, վասնզի ըստ ծրագրոյն, քանի որ ցարդ կիսավարենի է ջիւրտը, եւ անկարող՝ երկիր մը կառավարելու, եւ սոցա արդիւնքն է Հայաստանի արդի վիճակն, որ միանգամայն հետըզհետէ սարսափելի դրութեան մասնուեցաւ ամէն կերպով:

Տի'ար, ապաքէն յայտնի է այս վերջի կոտորածներէն եւ գաղթականութենէն Տաճկահայաստանը դատարկացաւ Հայ բնիկներէ. մնացեալքն հոն փոքր թիւ կը կազմեն. և մեծամասնութիւնը կազմող թիւն թիւրք եւ ջիւրտ տարրն եղաւ, ըստ որում, եթէ վարչական մարմինը՝ հաւասար քուէով ընտրուի ի պաշտօն, կրկին անգամ նոքա մեծ թիւ կազմելուն համար՝ վարչութեան մարմնոյն մեծ մասը, եւ զեկը եւ ոյժը, անոնց ձեռքը պիտի մասնուի, զորս կիսավարենի, ապուշ եւ ապիկա կը խոստովանինք: Այլեւս ի՞նչ կարելի է, որ մենք մեր խղճի եւ խօսքի եւ մամուլի այն

բաղձացեալ ազատութիւնը կամ ձեռք բերենք, կամ կարողանանք պահպանել: Ո՛չ ապաքէն անոնց այդ անկանոն վարչութեան ձեռքէն ազատուելու համար էր այսքան Յեղ. խումբերու կազմուելն եւ արիւնալի կռիւն ընդդէմ մոլեռանդութեան եւ բռնութեան:

Հետեւաբար ըստ իմ համոզման նախ պէտք է ըլլան Հայ կամ քրիստոնեայ կուսակալ, կառավարիչ, դաւառապետ, գիւղախմբապետ, դատաւոր, եւ ընդհանուր դատախազ, եւ քննիչներ, ժողովներու ատենապետներ եւ ոստիկանապետներ, զորականաց սպայք, եւ պաշտօնական լեզուն Հայերէն. յո՞ր վայր եւ ի՞նչ կրօնքի եւ ցեղի պատկանող ժողովուրդ եւ մեծամասնութիւն կազմող թիւ լինի, թէ ի քաղաքս եւ թէ ի դաւառս պէտք է վերջապէս նախ դայնս լաւ կրթել, եւ ուսմամբ զարգացնել, եւ ապահովուած անոնց հաւատարմութեանը վրայ, ապա անոնց վարչական մարմին կազմուելու համար քուէ տանելու արժանաւոր դատուիլ, բացի վերոյիշեալ պաշտօններէն, որք միայն եւ միայն կրթեալ եւ ուսեալ եւ հաւատարիմ Հայ եւ կամ քրիստոնեայ տարրերուն պէտք է յանձնուիլ, եւ մընացեալ զանազան ժողովներուն անդամ կամ պաշտօններու մէջ պէտք է այլասեռներէն ընտրուին քուէից առաւելութեամբ ի պաշտօն:

Արդէն երկրի ձեռնհաս դատաստանի օրինաց առաջ տարրեր ազգերու եւ դաւանութիւններու հաւասարութիւն պէտք է անխտիր:

Գալով ներկայէն մինչ ցրաղձացեալ ինքնօրէնութեան ժամանելու միջոցին, իւրաքանչիւր տեղւոյն բնիկներէն կազմուած Յեղ. խումբերն ու կոմիտէներն երկրի շրջին ծանօթ ներկայացուցիչներ ունենալու են, եւ անոնց ջննութեամբ եւ խորհրդով կազմուած պէտք է ըլլան քաղաքականութեան պարագային յարմար ապստամբական հրոսակախումբեր, եւ նոցա միջոցաւ բաղձալի նպատակին հասնելու շարժումներ, եւ խումբեր, կոմիտէներ եւ հրոսակախումբեր կազմելու համար չափազանց զգուշութեամբ՝ անբասիր ներկայացուցիչներ, (քուէից առաւելութեամբ ընտրուած), որք Յեղ. Ս. Գործին գիտակօրէն վերաբերուելու եւ փրփականա (քարոզ) ընելու են. այնպէս որ մարդիկ՝ իր անձնական ազնիւ բնաւորութեան վրայ սիրուած՝ սոյն ծրագրոյն համակրին, եւ նորա զործնական օրինակին հետեւին, քան դայթակղին եւ խորհանք մը հեռանան. զի շատ անգամ անհեթեթ ներկայացուցիչք անհամակրելի դառնալով իրենց տաղալիք ընթացքովը, տաղալիցիչ զարձուցած են Յեղ. Ս. Գործն իրենց հետ:

Հուսկ ուրեմն այս բոլորին Ձեր ուշադրութիւնը հրաւիրելով՝ պատշաճն տնօրինելը Ձեր կամաց եւ որոշման կը թողում. մնալով յուէտ կենացդ եւ զործոցդ յաջողութեան Աղօթաբար

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՂԵՍԻԱՅԻ:

Հ. Յ. Դաշնակցութեանը ծրագրոյն մէջ մասնանիշ ըլլալիքն:

| | | | |
|------|-----|------|-----|
| Սրեա | Տոյ | Սրեա | Տոյ |
| 6 | 3 | 7 | 14 |
| 8 | 20 | 9 | 2 |
| 9 | 2 | 11 | 9 |
| 14 | 20 | 15 | 22 |
| 16 | 9 | 17 | 1 |

17 20 սին եւ միեւնոյն ժամանակ անբարոյսականացնել իշխող պոլիտիկոսներին:

Հաստատուած պէտք է ըլլայ ամէն չափահաս բնակչի հաւասար ընտրողական իրաւունքին վրայ, առանց ընտրողական որեւէ սակի (ցենզի), իսկ այդ շահերը իրականապէս պաշտպանելու համար ընտրողական սկզբունքը կառավարական բովանդակ գործողութիւններէն սկսեալ դէպի աւելի նեղ՝ դաւաճականը, եւ համայնականը պէտք է ստանայ:

Տարբեր ազգերու եւ դաւանութիւններու հաւասարութիւն օրէնքի առջեւ:

Ապստամբութեան միջոցաւ իր նըպատակին հասնելու համար կը կազմակերպէ Յեղ. խմբեր, որոնցմէ նեղուած են — թէ Հայ, թէ օտար տարրերը (ասորին, եգիպտացիներ, եւ թիւրք եւն.):

Նաեւ Յեղ. գործին գիտակցօրէն վերաբերութեան համար փրոփականտ ընել (քարոզել):

2Բ.— ՄԻՍԱՔԻ (ԱՌԱՆՁԱՐ, ԿԱՐԻՃ) ՆԱՄԱԿԸ

Գրուած քառալուսի-գծաւոր մամակի փոքր բուլղի վրայ (13,5x20 սմ.): Գիրը Միսաք Գոյումմեմիմն է (Ասամաք) տարբեր բան չեն ըսեր մասն բովանդակութիւնն ու ոճը (տեսնել Մ. Գոյումմեմիմնի մամակները Նիիթմու Ա. հատարիմ մէջ):

Գոյումմեմն ունի մասն երկրորդ օրինակ մը, մոյմ տեսակ բուլղի վրայ բայց մուգ խճամուս գիրով, եւ բառացիօրէն միեւնոյն բովանդակութեամբ: Այս երկրորդ օրինակին տակ աւելցուած է,— Հնամակի մէկ օրինակն ալ ուղղակի Վահագին կը դրկեմ ընդհ. ժողովին ներկայացնելու համար: Նաեւ տեղիս Կոմիտէին տեղեկագրին օրինակը կը դրկեմ ուղղակի իրեն. իսկ ձեզի դրկածնիս կը պահէք ջովերնիս: Մ.Գ.>: Ամենայն հաւանականութեամբ՝ երկրորդ այս օրինակը ուղղուած է Արեւմտեան Բիւրոյին, ժըմն:

Աղեքսանդրիտ, 1898 Մարտ 14/26

Դաշնակցութեան ընդհ. ժողովին

Ծաղկի(1) գործունէութեան մասին կարծիքներու սա կէտերէ կը բաղկանան:

1. Իր ընդհանուր գծերուն մէջ սահմանել Ծաղկի գործունէութիւնը, որչափ որ կարելի է այդ բանը, նախատեսելով ապագայի հաւանականութիւնները. պէտք է որոշել թէ ասկէ վերջը Ծաղկի գործունէութեան բնութիւնը ի՞նչ կրնայ ըլլալ եւ ծանր տեւորական գործողութիւն մը կամ ցոյց մը ի՞նչ պարագաներու մէջ, ինչ տեսակ վարկեանի մէջ ընելու է: Նաեւ բացարձակ արտօնութիւն չտալ Ծաղկի Կեդրոնական Կոմիտէին իր ուղած ժամանակ, առանց մօտի կոմիտէներու կամ պիւրներու հաւանութիւնները առնելու, ցոյցեր կամ ուրիշ կարեւոր գործեր վճռելու. տեւորական ծանր գործողութիւնները մինչեւ անգամ պէտք է մտցնել ասոր մէջ, օրինակի համար պատրիարքի մը, նախարարի մը սպանութիւնը: Շատ անգամ կը պատահի որ առանց ուրիշ կոմիտէներու կարծիքը առնելու եղած որեւէ ծանր գործը կը վնասէ այդ կոմիտէներու հեռաւոր կամ մօտաւոր ծրագրիներուն:

Խմբական կազմակերպութիւն եւ խմբական գործեր անկարելի են ասկէ վերջը Ծաղկի մէջ: Օգոստոս 14ի ցոյցէն(2) վերջը պարագաները շատ փոխուած են: Գաւառացիներու արտաքսումը, ոստիկանական ծայրայեղ խտրութիւնները՝ արգելք կ'ըլլան այդ տեսակ կազմակերպութեան եւ գործերու: Վերջին Օգոստոս 6ի դէպքերէն(3) հասկցուեցաւ որ ոչ-խմբական կազմակերպութիւնը շատ նպատակայարմար ճամբայ մըն է. այս կազմակերպութիւնն էր որ ձեռքարկութիւններու թիւը իր minimumին մէջ ձգեց եւ ոստիկանութեան առջեւ շատ դռներ գոցեց եւ նոյն իսկ զանիկա յաջողեցաւ շուարեցնել:

2. Ծաղկի ցոյցերը կապել ուրիշ տեղի արշաւաններու կամ ցոյցերու ու ապստամբութիւններու:

3. Ծաղկիը ներկայի մէջ նիւթական ուժ մը չի ներկայացներ. 1896 Օգ. 14էն մինչեւ Օգ. 6ը գրեթէ անկարելի եղած էր հարուստներէն դրամ առնել. իսկ առնուածներն ալ շատ քիչ էին: Դրամը դրսէն կը սպասէ ան այսօր: Ատոր պատճառը պէտք է փնտռել հոս. — յեղափոխութեան վարկը կոտորած է հոն, պէտք է բարձրացնել: Անշուշտ ոչ-նուազ կարեւոր պատճառ մըն ալ կը կազմէ ուժի պակասը: Եթէ Դաշնակցութիւնը ունենար այն ուժն ու վարկը որ ունէր Օգոստոս 14էն առաջ, ե՛ւ այսօր Ծաղկի մէջ, այդ քաղաքը ճշմարիտ ոսկեհանք մը կը դառնար:

4. Կեդրոնական Կոմիտէի կազմութեան հարցը: Կեդրոնական Կոմիտէն պէտք է կազմուի երկրորդական կոմիտէներու կողմէ. իւրաքանչիւր երկրորդական կոմիտէ իր կողմէն մէկը ընտրելու իրաւունք պէտք է ունենայ Կեդր. Կոմիտէի մէջ: Մինչեւ հիմա կեդրոնական եւ տեղական կոմիտէներու մէջ կապ մը ըլլալու համար Կեդրոնական Կոմիտէն իր մէջէն մէկը կ'ընտրէր եւ զանիկա կը ներկայացնէր երկրորդականին. բայց այս կերպ ընտրութիւնը շատ անգամ անպատեհութիւններ յառաջ կը բերէր. այդ ներկայացուցիչը (Կեդրոնականի կողմէ ընտրուած) չէր կրնար երկրորդականին տրամադրութիւնները, պահանջները զօրաւոր կերպով Կեդրոնականի մէջ պաշտպանել, քանի որ շատ անգամներ ինքը դրսէն եկած մը՝ չէր կրնար

համոզուիլ եւ չհամոզուած ըլլալով չէր կրնար իր ներկայացուցած կոմիտէին կարծիքները պաշտպանել երբ այդ կարծիքները Կեդրոնականի կարծիքներուն կը հակառակէին: Մինչդեռ երբ երկրորդականը իր մէջէն ընտրէր այդ մարդը աւելի օրինական եւ աւելի տրամաբանական կ'ըլլար: Այս կերպը ընտրութիւնը երկրորդական կոմիտէներու մօտէն մէջ եւ ոչ մէկ կատարածի տեղի կու տայ Կեդր. Կոմիտէ կազմող անհատներու մասին. բան մը որ պատահած է անցեալի մէջ: Ծաղկի պատգամաւորութեան մասին ձայնս պ. Վահագին կու տամ:

ՄԻՍԱՔ

(1) Կուսմաքի կամ Ծաղկի, — Կ. Պոլիս:
 (2) Պամբ Օքսումի գրաւումը:
 (3) Կ'ակմարի 1897 Օգոստոսի Պոլսոյ աւստրիական գործադուրիմներու (տեսնել Նիիթմու, Ա. հատար, էջ 160-170):

2գ.— Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Հնչեմեմ ծանօթ զեկալար, 1897իմ Հնչեմեմ կուսակցութեան հրատարած՝ Յարութիմ ձեռնարկումը կը գրէ Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովին, Յիւր ունեցալով առաւելաւոր Ա. Արփիտեմի եւ Հ. Յ. Դ. — Հնչեմ. կուսակցութեան ըմբռնած ինքնազմը: Գրուած է մամակի քառալուսի-գծաւոր 13,5x21 սմ. չափի բուլղի վրայ: Թուակամ չի կրեր, բայց ըստ խորագրի եւ բովանդակութեան (Վիւրքեմեմ հարցը օրակարգի վրայ էր) ուղղուած է Բ. ընդհ. ժողովին:

2րդ ընդհ. ժողովին.

97 Մարտ 27էն ի վեր հրատարած Հնչեմեմ կուսակցութեանն այսօր եւ ոչ մէկ կուսակցութեան կը պատկանիմ, բայց չէզոքութեանս մէջ միշտ ընդհ. միութեան ջերմ փափաքող եւ համակիր կը մնամ. իմ այս դրութեանս համար բնական է որ իրբեւ անհաս մը կը խօսիմ եւ չեմ կրնար ինծի համախոհ ընկերներու կողմէ ներկայանալ՝ կուսակցութեան գոյն մը չտալու համար խնդրին: Այս մասին նոյն իսկ անկարելի էր Գ. Տամատեանի դիմել, քանի որ անորոշ վիճակ մը ունի ան մինչեւ այսօր եւ նամանաւանդ որ Հնչեմեմ կը մնայ դեռ:

Ահաւասիկ այն կարծիքները որ ես ունիմ միութեան հարցի մասին:

Ընդհանուր հիմնական միութիւնը ժողովրդային պահանջ մը դարձած է այսօր. այսօր ամէն հայ կը խոստովանի թէ միութիւնն է միայն որ մեզի պիտի առաջնորդէ դէպի փրկութիւն եւ մենք ամէն բանէ առաջ անկէ պէտք է յուսանք մեր ճակատագրի փոփոխութիւնը: Բայց մինչեւ հիմակուան եղած բանակցութիւններէն սա եզրակացութիւնը կը հանեմ, թէ այն արգելքները որ միութեան առջեւ պատ կը քաշեն, դիւաւորաբար կը դառնան Արփիտեմի շուրջը եւ կը

կազմեն «Արփիար հարց»։ Ընդունելով հանգերձ թէ Արփիարը սկզբունք չունի, բարոյական նկարագրէ զուրկ է եւ յեղափոխական չի կրնար ըլլալ, չեմ կըրնար հաստատել այն «դաւանան» մակղիբը որ Դաշնակցութիւնը տուած է այդ մարդուն. երբ ժընեւ գացի միութեան համար բանակցելու «Դրօշակ»ի խմբագրութեան հետ, հոն ինծի ցուցուցին այն տղիւմանները, որոնց կոթնած Դաշնակցութիւնը այդ մակղիբը կը հաստատէր։ Բայց ես այս տղիւմանները անբաւական համարեցի եղած ամբաստանութիւնը հաստատելու կամ արդարացնելու համար, հիմնուելով այն կէտին վրայ մանաւանդ, որ Արփիարի հարցաքննութեան իսկական օրինակը չէր իմ տեսածը, այլ անոր հայերէն պատճէնը, որ օրինական եւ ոչ մէկ գոյն կը ներկայացնէր։ Ամէն բանէ առաջ ուրեմն պէտք է Արփիարի հարցը լուծել. մէկ քանի անգամներ Արփիար «Մարտ»ի միջոցով այդ տղիւմաններուն հրատարակութիւնը պահանջեց. «Դրօշակ»ի խմբագրութիւնը լուծեց, այդ լուծութիւնը տկարութեան նշան մը համարուեցաւ ժողովուրդին կողմէն. անկէ առաջ Հնչակեան կուսակցութիւնը պահանջեց երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներէ կազմուած խառն ժողովի մը առջեւ պարզել այդ խնդիրը եւ լուծել. այս առաջարկն ալ մերժուած է Դաշնակցութենէն(1)։

Ուրեմն այս մասին ես կը կարծեմ թէ պէտք է կազմել երկու կուսակցութիւններու կողմէ ընտրուած ներկայացուցիչներէ կամ նոյն իսկ չէզոք վստահելի անձնաւորութիւններէ կազմել ժողով մը որ քննէ Արփիարի հարցը։ Երկու կողմէն եւս պէտք է զիջողութիւններ ըլլան, եւ Դաշնակցութիւնը գոյութիւն ունեցող կուսակցութիւններու ամենէն զօրաւորը ըլլալով պէտք է ինքը առնէ առաջին քայլը եւ այս ընթացքով ապացուցանէ, թէ ինքը միութեան համակիր է եւ անցեալի բանակցութիւններու անյաջողութիւնները իրեն վերագրուելու չեն։

Միութեան հարցն է որ այսօր կը զբաղեցնէ ամենէն աւելի միտքերը. առկէ վերջի մեր կռիւններու համար մեծ գումարներու պէտք ունինք մենք եւ այդ գումարները ունենալու համար պէտք է միութիւնը յառաջ բերենք. ժողովրդային վստահութիւնը դէպի յեղափոխական գործիչները խախտած է վերջերս. պէտք է ամրացնել այդ խարխլած շէնքը եւ այս՝ միութիւնով կարելի է։ Եթէ երբեք սակայն փափաքուած միութիւնը անկարելի ըլլայ գոյացնել, պէտք է ձգտիլ ամբողջ ուժով դէպի համերաշխութիւն. եւ այս պարագային համերաշխութիւնը պէտք է ըլլայ մեր ուղղութիւնը նորէն դէպի միութիւն առաջնորդուելու համար։

Միութեան հարցէն վերջը կը բացուի կազմակերպութեան եւ գործունէութեան ծրագրի փոփոխութիւնները, որոնց կարեւորութիւնը սաստկացած է վերջին դէպքերէն վերջը. մասնաւորապէս կ'ուզեմ ըսել բա-

ցարձակ ապակեղրոնացումի մասին, ինչպէս նաեւ մասնակի ցոյցերէ ու շարժումներէ հրատարակու համար։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

(1) Հարցը պարզ չէ այնքան՝ որքան կը ներկայացնէ ձաճկիւնեան իր այս ամսակի մէջ։ 1/13 Յունիս 1897ին, իմք, ժընեւի մէջ, Արփիարեանի վերաբերեալ փաստաբուհարում ծանօթանալէ ետք, Ռոստոմի, Վասմեանի եւ Արմէն-Գարոյի հետ ստորագրած էր «տեսնագրութիւն»—համաձայնագիր մը, ուր միութեան բանակցութեան համար պայման կը դրուէր Արփիարեանի հետացումը Հնչակեան կեդրոնէն։ Տեսնել Արփիարեանի ամբողջական բեզբածրարը՝ ԳՐՕՇԱԿ, յաւելուած 15 Նոյեմբեր 1899ի համարին։

ՉԳ.— Հ.Յ.Դ. ՆԻԿՈՍԻՈՅ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած նամակի ընթացիկ չափի (21,5x27) քաղաքի վրայ, աւելը՝ տպագրեալ վերտառութեամբ (գիճմեջամ եւ տակը՝ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ, Նիկոսիայի ԿՕՄԻՏԵ)։

Կզգին ընդ. ժողովի ուշադրութիւնը կ'ուզէ կեդրոնացնել կիլիկիոյ վրայ (Լեռնավայր)։ Գիտեմք որ Բ. ընդ. ժողովը յատուկ որոշումներ տուաւ այդ ուղղութեամբ, Լեռնավայրը միատեղով կեդրոնացնել չարս կէտերէն մէկը եւ գայմ օտեղով յատուկ Պատասխանատու Մարմնով (Հրաչ, Մար եւ Արթակ)։

Նամակը ամտարագիր է սակայն, քերես՝ ամաւարտ (քերք մը կընայ կարտուած ըլլալ)։

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. ժողովին

Նախ խօսելով յեղ. ընդհ. գործունէութեան մասին, անշուշտ առաջին հարցն է, թէ արդեօք պէ՞տք է շարունակել այդ գործունէութիւնը, թէ ընդհակառակն, մանաւանդ այնպիսի պարագային, ինչպէս այժմ է, երբ ոչ միայն ոչ-յեղափոխական տարրի որոշ մասի մէջ, այլ նոյն իսկ մի ժամանակ յեղափոխական եղած եւ այդ կեանքի մէջ որոշ դեր խաղացած անձնաւորութեանց շրջաններու մէջ, յամառ կերպով կ'արծարծուի յեղափոխական սուր գործունէութիւնը դադրեցնելու միտքը։

Նկատի ունենալով, որ յեղափոխական գործունէութիւնը դադրեցնելու փոքրիկ փորձն անգամ կրնայ ժողովրդի լաւ տարրը յուսախար ընել եւ ընդհակառակն մեր թշնամին — տանկիւր աւելի լրբացնել,

Նկատի ունենալով, որ կառավարութիւններու համար իսկ մեր այդպիսի մի սխալ քայլը առիթ կու տայ Հայկական Հարցը, եթէ ոչ ընդ միշտ, գէթ ժամանակաւոր կերպով մէջտեղէն վերցնելու,

Եւ նկատի ունենալով, որ մի տարուայ զինադադարն իսկ կրնայ յեղափոխական գործի ապագան երկար տարիներով յետաձգել, մենք կու գանք այն եզ-

րակացութեան, որ առանց ժամ մը իսկ խոստում տալու մեր թշնամույն յեղափոխութեան գործունէութիւնը դադրեցնելու մասին, շարունակել մեր ընդգծած ճանապարհը նոյն ուղղութեամբ, միայն աւելի փորձառու, աւելի խելօք եւ աւելի ուժգին հոսանքով։

Պօսելով այն բոլոր տեղերու մասին, ուր «Դաշնակցութիւնը» որեւէ յեղ. գործ է կատարած, եւ որոնց վերաբերմամբ որոշումներ է տուած 97ի Ընդհ. ժողովին(1), չենք կարող մեր զարմանքը չյայտնել, երբ նկատի առնենք որ մինչեւ օրս «Դաշնակցութիւնը» համարեա մոռացութեան տուեր է Լեռնավայրի պէս տեղը, անցեալ ժողովի արձանագրութեան մէջ մի քանի տողով հոն մի ղեկավար-կազմակերպող ուժ ուղարկելու որոշումը բաւական համարելով։ Մի քանի տարիներու մէջ տեղի ունեցած յեղափոխութեան շարժումներու, ցոյցերու եւ կոտորածներու իբրեւ դիտող եւ հետաքրքրուող Հայ. Յեղ. գործունէութեամբ, սա եզրակացութեան հասած ենք, որ մեր ընտրած բոլոր գործունէութեանց վայրերուն մէջ, Լեռնավայրը բացառիկ մի դիրք բռնած է։

Նկատի ունենալով, որ դարուս մէջ միայն այդ տեղն է եղած Հայի ազատութեան ու անկախութեան ձգտելու օրրանը, որ հերոսներու եւ հերոսուհիներու անմահ յիշատակներով եւ սխրագործութիւններով կը անանին ներկայ լեռնցիք,

Նկատի ունենալով, ապստամբական տեսակէտով անոր դիրքի առաւելութիւնները համեմատուած մեր շարժումների յայտնի այլ տեղերու հետ,

Նկատի ունենալով, որ այս լեռնցիները համեմատաբար աւելի զինուած եւ կռուելու վարժ են. նկատի ունենալով ծովեզրի մօտութիւնը, չուրանալով հանդերձ որ թշնամու ուշադրութիւնը յատկապէս կեդրոնացած է այդ ծովեզրի վրայ,

Նկատի ունենալով, որ Հիւսիսը(2), որչափ եւ մեր ապագայ յաջողութեան չկամ, մի առանձին ցանկութեան նշան չէ ցոյց տուեր նորա տէր լինելու,

Եւ նկատի ունենալով այն յոյսը, որ մենք ունինք կառավարութիւններու վրայ գէթ թշնամական դիրք չբռնելու դէպի ապստամբողները, ինչպէս այդ նրկատուեցաւ վերջին ապստամբութեան միջոցին, կու գանք Ընդհանուր ժողովի ուշադրութիւնը յատկապէս հրաւիրելու այս կէտի վրայ։

Այս կէտի վրայ ուշադրութիւն հրաւիրելով, չէ թէ կ'ուզենք կարճ միջոցում շարժում յառաջ բերել, ոչ, այլ լուրջ կերպով պատրաստութիւն պէտք է, թէկուզ այդ տեւէ 3 տարի իսկ, միայն թէ կարողանանք որոշ չափով կռուող ոյժ եւ զինամթերք ունենալ ապահովելու համար դէթ վեցամսեայ ապստամբական վիճակ ու դիմադրութիւն։

Երեք տարուայ պատրաստութիւն ըսել է մի առ ժամանակ զինադադար, որ հակառակ կը լինէր մեր վերջ գրած տողերուն, թէ «մի տարուայ զինադադարն

իսկ կրնայ յեղափոխական գործի ապագան երկար տարիներով յետաձգել»։ Եւ այդ իրաւացի է։ Հայկական խնդիրը միշտ վառ պահելու եւ յեղափոխական տրամադրութիւնը մեր ժողովուրդի մէջ բարձրացնելու համար, վերջին Արշաւանքի(3) եւ Մարտի 96 թ.ի դէպքի պէս(4) փորձեր պէտք է կարեւոր դատուած ժամանակ կատարել, աշխատելով որքան կարելի է ատոնք յարմարցնել եւ քաղաքականութեան պահանջներուն։ Այս ձեւով, թէ գործը միշտ վառ կը մնայ, թէ Տանկի կառավարութեան ուշադրութիւնը, մասամբ Լեռնավայրէ կը հեռացուի, եւ թէ այդ ժամանակամիջոցի մէջ լուրջ պատրաստութիւններ կը կարողանանք առաջ բերել ապստամբութեան յարմար վայրի մէջ։

Չմոռնանք աւելցնելու նաեւ, որ այդպիսի մի պատրաստութիւն կարելի է յաջողցնել մեծ գումարներով. քանակութիւնը որոշել թէեւ դժուար է, սակայն սա հաւանական է, որ «Դաշնակցութիւնը» ամբողջ կարողութեան կէսէն աւելին, գոնէ կէսը, շարունակ Լեռնավայրի այս ձեռնարկի տրամադրութեան ներքեւ ղնելով, կարելի կը լինի մի լուրջ գործողութիւն առաջ բերել։

Հարկաւոր է նաեւ գործիչներու մասին խիստ ընտրութիւն, որպէսզի այսպիսի ծանրակշիռ խնդրի մէջ՝ Փափազեանի եւ Ալիքի պէս անփորձներ չսպըրդին եւ գործը տակնուվրայ չընեն, ինչպէս որ փորձը մեզ ցոյց տուաւ։

Մեր կարծիքով, քանի որ այս միջոցին կառավարութիւնը ամենախիստ միջոցներով կը հսկէ ոչ միայն ծովափի ամբողջ երկայնութեամբ, այլեւ կարեւոր կէտերը բռնած է զինուորներով, առ այժմ գործը պէտք է առաջ տանիլ բնիկ ժողովրդի մէջ համակիր գտնուող անձերու միջոցաւ, իսկ դրսէն մտցնել ղեկավարներ այն դէպքին, երբ երկրի մէջ մէկ երկու տեղ փոքրիկ կոմիտէներու կազմակերպութիւններ եղած լինին, որ գոնէ կարողանան զանոնք պահել։ Հակառակ պարագային զուր մարդիկ ձերբակալելէ զատ, կառավարութեան հսկողութեան սաստկանալուն միայն պիտի նըպաստենք։

Հոս այժմ «Դաշնակցութեան» կողմէն գտնուած անձինք, Գ. Մար եւ Գ. Սեպուհ(5) շատ յարմար են Երկրի համար, եթէ միայն հոն կառավարութեան աչքէն խոյս տալու միջոցներ լինին։

Գալով միութեան խնդրին, Ընդհ. ժողովը պէտք է այս խնդիրը լրջօրէն նկատողութեան առնէ, ինչ որ մեր եւ ընդհ. ցանկութիւնն է. աստով է որ յեղափոխական ասպարէզը պիտի կարենայ լայն ծաւալ ստանալ ամէն տեղ, յատկապէս Լեռնավայրի մէջ, ուր առանց միութեան ստիպուած պիտի լինենք յաճախակի ընդհարումներ ունենալ Հնչակեաններու (Մարտեաններու) հետ, որոնք հոն խիստ մեծամասնութիւն կը կազմեն. նաեւ աստով է, որ յեղափոխական գործը մեծ

նպատակներ կրնայ ձեռք բերել ժողովրդի ամէն դասա- կարգերէ: Ուստի մեզ ցանկալի է որ Ընդհ. Ժողովը քննելով այս հարցը, դիւրութիւններ ընծայէ նրա լուծման, ի պահանջի հարկին պէտք եղած դիւումները անելով իսկ:

Յանկալի է նաեւ որ Կոմիտէներն ունենային ի- րենց մօտ մի հաշուեցուցակ Դաշնակցութեան ելեւ- մուտքի մասին:

- (1) Արեւելեան Մարմիններու Ռայոնական Ժողով:
- (2) Կակեթարիւի հաւաքօրէն՝ Ռուսաստանի:
- (3) Խամառ:
- (4) Պոլիս, Օսմ. Դրամատան գրաստան:
- (5) Մար-Շիմոն (Միւ. Տէր Մարտիրոսեան) եւ Հրայ (Թի- րաքեան): Տեսնել Նիւրնբերգ, Կ. Կոնստ., Մարթիի քաղաքը (Էջ 6-119):

3) ԱՐԱՄ ՄԱՆԱՎԵԱՆԻ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ՝ ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նամակի գծաւոր մեծ քաղաքի վրայ (21,5x34 սմ.) գրուած այս բազմագիրը (Վառձա, 12 Մարտ 1898) ուղարկած է Հ. Յ. Դ. 2րդ. Ընդհ. Ժողովին:

Բազմի առարկայ վարդ-Պատրիկեանը (Վարդօ, Արվաթի) էր ու սակաւի մտքներն արտի մեծ Բիւրոյի մերկայացուցիչ Պա- տրիկեանը մէջ: Պատրիկեանը 2րդ. եւ 3րդ. Ընդհ. Ժողովնե- րում: Չեմ գիտեր քէ 2րդ. Ընդհ. Ժողովը մեծարժեք կարեւ- րութիւնը սուրճ է այս բազմագիրը, որ ի դէպ, հակառակ ան- կեղծութեան շունչին, չունի յայտնի որ եւ խնդրուած է, յամախ, աւելորդ մեծարժեքութիւններով: Իրազարկելը այն է, սակայն, որ Յանկալի քաղաքում 9 տարիներ հտէ, Հ. Յ. Դ. 4րդ. Ընդհ. Ժողովը (Վիեննա) արտի որոշէր Վարդօն վերջնականապէս ար- տախել Դաշնակցութեան՝ իրեն գեղատար, յեղափոխութիւնը արտաւարտող եւ մեծարժեքութեան ամենաարտաբիւնը:

Եստեղան է ի մտածարի բազմագրի վերջին մասը, որ կը վերաբերի Պատրիկեանի եւ յարակից զեպրուան:

Ստորագրուած է, Ստամբուլի Էնթուրպի, Արամ Մամալեան- Թան սակը՝ փոփոխութիւնը՝ Լրտն, եւ ամէն ինչ, երկու գծիկ- ներու միջեւ, Գաղթի: Ամենայն հաւանականութեամբ երկուստեք իրիւր ժամկետներն են վերջինները:

Պաշտօնակալ
 ԲՈՂՈՔ ԱՌ
 Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՆ

Ճշմարիտ, անկեղծ եւ հաւատարիմ հայրենասէրի մը պարտականութիւնն է անտարբեր չզտնուիլ ոչ թէ միայն արտաքին թշնամույն ըրած անիրաւութիւննե- րուն, այլ մինչեւ իսկ ներքին ընկերներու ի գործ դրած անիրաւութիւններու մասին՝ որոնց առաջին վը- նասը տեսնելու դժբախտութիւնն ունեցանք՝ գիտու-

թեամբ զոհ տալով Խասգիւղը՝ որուն առթիւ վերջը պիտի խօսինք, որ մինչեւ ցարդ մուրթի մէջ մնացած է, եւ յանդիման կերպով պ. Արվաթիի կողմէ ալ ան- պատուուած եւ գործի ասպարէզէն զրկուած եմ իրբեւ անպարտաճանաչ:

1896 Օգոստոս 14 Պանքայի դէպքէն յետոյ, պ. Արվաթի ընտրուած էր Վրացոր ներկայացուցիչը՝ Պա- քանեան երկիրներու, ապակեղորոնացման դրութիւնով գործերը անկախ, ինքնուրոյն կերպով վարելու:

Ի բաց թողնով պ. Արվաթիի բունպետական դրու- թիւնը, որ իր ուսած գիտութիւններու շնորհիւ ձեռք առած է աւելի տարբեր խորամանկութիւն մը՝ Դաշ- նակցութեան Մարզիւրը վարպետ ձեւերով իր ձեռքին մէջ բռնած, իբր թէ կէտ առ կէտ կը գործադրէ այն- պէս՝ ինչպէս «օրէնքը բունաւորին ձեռքին մէջ»: Անց- նինք իրողութիւններուն, որոնք կը լուսարանեն պ. Արվաթիի ընթացքն ու դրութիւն:

1.— Ուսանակներու փոխադրութեան գործը յանձնուած էր (Վառնայի մէջ) պ. Կոզմայի, տրա- մադրութեան ներքեւ դնելով մի քանի տղաներ եւ զիս: Փոխադրութիւնը կատարուելէն յետոյ, վերադարձիս հարկ անհրաժեշտ էր յանձնարարութեան մը համար Կոզման տեսնել. ուստի տունը երթալով տան մէջ գտնուող կնոջը (որ անբարոյական մ'է) հարցուցինք Կոզմային ո՞ւր գտնուիլը: Ուր ըլլալը չգիտնալ ձե- ւացնելէն յետոյ, սկսաւ մի առ մի բացատրել մեր ճամբորդութեան նպատակը, այնպիսի մի եղանակաւ եւ մանրամասնօրէն, իբր թէ ինքը ներկայացուցիչ մը եղած ըլլար եւ ծանր պատասխանատուութիւններ ըս- տանձնած պաշտօնեայ մը... Դաշնակցութեան կողմէ ընտրուած:

Սարսազընցիկ տպաւորութեան տակ, տեսակ մը բարկութիւն զգալով, պարտք համարեցինք պ. Ա. ի տեղեկացնել այս անակնկալ եւ անզաղտնապահ սիս- տեմը՝ իբրեւ Պաքանեան երկիրներու ներկայացուց- չի: Պ. Արվաթի, առաջին անգամ խիստ կերպով մեր- ժեց եւ չուզեց ունկնդրել մեր նպատակը այս տեղե- կութիւնը: Օրեր անցնելէն վերջ, պատեհ առթի մը պարզեցինք, բայց դժբախտաբար, օրօրոցի մանուկ խաբելու մը պէս կարեւորութիւն տալ ձեւացուց եւ գլխէն ճամբեց, առանց հետեւանքներն հետատեսել ուզելու:

Պապ Ալիի ումբը պայթեցաւ: Մի քանի յեղափո- խականներու Վառնա ապաստանիլը՝ տաճիկ կառավար- րութեան կողմէ ծանուցուեցաւ պուլկար կառավարու- թեան: Պուլկար կառավարութեան քաղաքականութիւ- նը փոխուած էր հայերու մասին. սկսաւ յեղափոխա- կան փնտուել Վառնայի մէջ, եւ, Կոզմային օճիկը բըռ- նեցին իբրեւ ծանօթ յեղափոխական (բան մը որ դու- շակել տուած էի պ. Վահան Վարազի հոս եղած ժա- մանակ. «Վառնայի մէջ յեղափոխականները ամէնքն ալ ծանօթ են. եթէ քաղաքականութիւնը փոխուի, ա-

մէնքն ալ առանց դժուարութեան օճիկինն ձեռք պիտի տան» ըսելով): Եշուկը տարաձայնուեցաւ լրտեսներու բոյն դարձած այս քաղաքին մէջ: Ամէն ոք հետաքրքիր էր հասկնալու թէ՛ արդեօք պատճառը ի՞նչ էր Կոզմա- յի ձեռքաւարման: Եւ ոչ մէկը կրնար բան մը հետեւ- ցնել՝ եթէ պ. Կոզման՝ երաշխաւորութեամբ ազատ ձգուելէն վերջ, փառքի հովերէն ուսուցիկ, սրճարա- նին մէջ 10-15 հոգիներու ներկայութեան, անուղղակի կերպով ինքզինքը չմատնէր «իրբեւ թէ ես Պոլիս տի- նամիթ կը փոխադրեմ եղեր, ասոր համար զիս բռնե- ցին եւ երեք օր պայմանաւ ազդարարեցին երկրէն դուրս ելլել» ըսելով:

Այս ալ տեղեկացուցինք ներկայացուցչին: Բայց ի գո՛ւր: Իր համոզումով տղայ եւ ստրուկ կարծուածի մը ճիշդ տեղեկութիւնները եւ միանգամայն ճշմարիտ վկայութիւնները նշանակութիւն եւ կարեւորութիւն չունին իր բարձր խոհականութեան եւ իմաստութեան առջեւ: Ետտ բնական է, որ Կոզմայի եւ իր միջեւ անձ- նական որեւէ սերտ կապ մը կայ, որ չի թոյլատրեր կարեւորութեան արժանի իրողութիւններն ի նկատի առնել... այդ անձնական խնդիրը մերկացուելով չը- խայտառակուելու համար:

Անձնականի վերաբերեալ խնդիրներն ալ մեծ դեր կրնան ունենալ յեղափոխական ասպարէզին մէջ ան- խոհեմութիւններ եւ գիտութեամբ գործուած սխալներ վարադուրելու:

2.— Մանօթ դաշնակցականուհի մը, օր. Եուշա- նիկ Յակոբեան, ընկերներու խորհրդով եւ որոշումով կը մնայ հոս՝ հակառակ իր ազնիւ ձգտումներուն, զգացումներուն եւ նպատակի մը հասնելու փափաքին: Կոզմա, որուն բարոյականի մասին մանրամասն կերպով պարզելու պաշտօնը չունինք, քանի որ զինքը թէ՛ Պոլսէն եւ թէ՛ Վառնայի մէջ ճանչցողներ շատ տխուր կերպով կը նկարագրեն, բուն կերպով կը սի- րահարի ընկերներու բարոյական ձեռնտուութեան զրկուած այս աղջկան, եւ, առաջարկելու միջոցներ կը խորհէր հեշտ նպատակին հասնելու համար:

Աղջիկը մերժած էր Կոզմայի առաջարկութիւնը արհամարհական ձեւի տակ, բայց եւ այնպէս չէր կա- րողացած եւ ոչ ոքի յայտնել իր պատիւը չարատուոր- ուելու համար: Միայն սին երեւակայութիւն մը զինքը կը յուսացնէր ընկերոջ մը անյաղթելի արդար պաշտ- պանութիւնը, որ պիտի փրկէր զինքը օր մը դժոխային այս մթնոլորտէն, եւ անոր շնորհիւ պիտի հասնէր իր ցանկացած նպատակին !!:

Անցան օրեր, ամիսներ, եւ վերջապէս, առիթը ներկայանալով, օր. Եւ չի վարանիր պ. Արվաթիի յայտ- նելու այս աղտոտ իրողութիւնը՝ իբրեւ անկեղծ, ազ- նիւ ընկերոջ եւ միանգամայն լիազօր ներկայացուց- չի...:

Պ. Արվաթի, գաղափարի եւ զգայուն սրտի տէր իմաստուն մի մարդ, կը բարկանայ, կը կատողի, բայց

խնդիրը կը խեղդուի մուրթի մէջ... ինչ որ արդէն մու- թի մէջ դարձած էր... առանց ընկերական պատույ տեսանի:

3.— 1897 Մայիս ամսոյ մէջ պ. ներկայացուցիչը պաշտօն կու տար Նշանի՝ Եուշա երթալ դրամ հաւա- քելու: Հոն, Նշանի մասին խնդիրներ կը ծագին, ո- րուն պատճառը մեզի մուրթ է, միայն սա չափ իմա- ցանք թէ՛ Նշանը ծեծ կերած է հոն. ստոյգ ըլլալը չենք գիտեր. բայց հաւանական կ'երեւի, որովհետեւ պ. Արվաթի այն ատենները Ֆիլիպէ կը գտնուէր, այս խնդիրը իմանալով, անմիջապէս կը հեռագրէ Նշանին դուրս ելլել Եուշայէն ու երթալ Ռուսոնուր:

Ռուսոնուրի Կոմիտէն ալ կը զրկէ Եիշտով, ուր մաքսի բեռնակիրներէն դրամ կը հաւաքէ եւ փոխարէն ընկալադրեր կու տայ:

Ամիսներ անցնելէն վերջ, Գրիգոր Սահակեան ա- նուն անձը, որ Եիշտովէն ելած ու Քառիէնայի քարա- հանքը գացած է աշխատելու, կու գայ Վառնայ, կը ներկայանայ ինծի՝ ձեռքը բռնած մի ընկալադր, ո- րուն վրայ 2 Ֆրանք գրուած է (*), եւ կ'ըսէ. «Թերթին մէջ 1 Ֆրանք գրուած է, այն ատենները Նշանը մեզի Եիշտովի մէջ ըսաւ, որ «Հայտէ քալեցէք ձեզի սահ- մանազուլիս զրկեմ»։ Եկանք Վառնա, թուով (6) վեց հոգի էինք, մեր անձնական ծախքովը պիտի երթա- յինք, տեսանք Նշանը, ըսինք «ո՛ւր է, ե՞րբ պիտի եր- թանք»։ — «Է՛, որչափ որ ես քեզի ըսի նէ... հիմա մարդու պէտք չկայ եղեր. դացէ՛ք ինչ կ'ուզէք նէ ան ըրէք»։ Այն ատեն բաւական օրեր անդործ մնալէ յե- սոյ, գացինք քարահանքը, որ մինչեւ հիմա հոն կ'աշ- խատինք»:

Ներկայացանք պ. ներկայացուցիչին, Գրիգոր Սա- հակեանի ըսածները՝ թէ ընկալադրի մասին եւ թէ Նշանի խօսքերէն համոզուելով խարուած Վառնա գա- լերնին պարզեցինք: Այս պահուն Նշանը Պուլկարիա- յէն դուրս ելած էր: Պ. Արվաթի չուզեց այս խնդիրն ալ նկատողութեան առնուլ եւ մերժեց այնպիսի միա- պետական մի եղանակաւ, որ եթէ տարբերութիւն մը կար՝ այն ալ սուլթանի կոտորածներն էին:

Պաշտօն չունիմ եւ ոչ ալ պարտականութիւն հաս- կրնալու, թէ իրօք Նշանին պաշտօնապէս յանձնարար- ուած էր մարդերը սահմանազուլիս զրկելու համար Եիշտովէն հանել ու Վառնա զրկել:

Չեմ ուզեր հետաքրքիր ալ ըլլալ, թէ արդեօք Նշա- նը իրա՞ւ դրամական զեղծում ըրած է՝ ընկալադրին վրայ (2) երկու Ֆրանք իսկ չուրոնին վրայ (1) մէկ Ֆրանք գրելով եւ ներկայացնելով զայն պատկանեալ մասնախմբին, թերթին մէջ հրատարակուելու համար. ալ խնդիրը սա է որ երբ այս իրողութիւնը, ըլլայ

(*) Այս խնդիրը Վառնայի Կոմիտէին յանձնուեցաւ, որ, «այ- սոր, վաղը» ըսելով պիտի կարգադրէ...

կասկածելի, ըլլայ հաւանական, կը ներկայացնեմ պ. ներկայացուցչին, որ Դաշնակցութեան կողմէ պաշտօն ստանձնած է իրեն ներկայացուած խնդիրները նկատողութեան առնելու, ինչո՞ւ համար կը մերժէ «կարեւորութիւն չունի, նշանակութիւն չունի, եթէ չեն վրաստահում, թող դան ետ առնեն իրենց տուած դրամը. թքել եմ իրենց ալ փողերնուն ալ վրան, նշանը այդպէս բան չէ կարող անել...» ըսելով: Արդեօք քանի՞ Փրանքներ ըլլալու էին որ կարեւորութեան արժանի ըլլային պ. Արվախի քով:

Մենք այս կէտին վրայ աւելի ծանրանալով կը հարցնենք. ի՞նչպէս կրնայ արդարանալ նշանը, երբ ընկալազիր տուած ատենը կը գրէ վրան 2 Փրանք, իսկ իր քով մնացած քուրտնին վրայ՝ 1 Փրանք. բնական է որ Կոմիտէին մէկը չ'երթար եւ չի հարցներ դրամ վրձարողին, թէ այս ինչ մարդուն ո՞րչափ տուիր, հապա, միայն նշանին ներկայացուցած քուրտններուն վստահելով, կ'անցընէ զանոնք իր հաշույ տետրակին մէջ եւ կ'ուղարկէ հրատարակութեան: Այսպէս խնդիրը 1 Փրանքի վրայ չի դառնար, այլ 1000ներու:

Ես ալ ներկայացուցչին համակարծիք ըլլալով կ'ըսեմ. «Նշանը իր գործերուն մէջ միշտ ազնիւ գտնուած է», բայց կարելի է ըրած է այս զեղծումները՝ որ խելքէ վեր չէ: Ի՞նչ պատճառներ կան նկատողութեան չառնուելու:

4.— 9. Արվախի, թէ՛ իրրեւ ներկայացուցիչ եւ թէ անձնապէս մի ժողովրդի անհատ, Կօզմայի վրայ այնպէս հաւատք ունէր՝ ինչպէս մոլեռանդ պարսիկ մը կրօնքին վրայ՝ մինչեւ այն պահուն, երբ Կօզմայի տունը գտնուող կնոջ ծննդաբերութենէն մի քանի օր յետոյ, օր. Շուշանիկ դաղանի կերպով կը տեղեկացնէր Կօզմայի աղտոտ ընթացքը՝ իր մասին:

9. Ա. շատ ո՛ւշ նկատողութեան առարկայ ընելու հաճոյքը ունեցաւ Կօզմայի խնդիրները: Այո՛, շատ ուշ, երբ ամէն բան արդէն ոչնչացած էր եւ բարեւոնական խառնակութիւնը հաստատ հիմ ձգած էր, որոնց հետզհետէ ծայրայեղութեան հասնելու բուն շարժառիթն եղած էր Կօզմա (այս անձին դէմ զանգատողներ ի վաղուց թէեւ շատ եղան, բայց անխելի մնացին):

Գործունէութեան ասպարէզին մէջ Կօզմայի վերջին արարքները տեղի տուին պ. Ա.ի բռնապետական խիստ ընթացք մը բռնելուն: Այլեւս չկար ազնիւ, անկեղծ, ճշմարիտ եւ խելօք յեղափոխական պ. Ա.ի համար. չէր ուզեր եւ ոչ մէկը իր անձին պէս ճանչնալ. ամէնքն ալ, առանց բացառութեան, Կօզմայի հաւասար էին իր հեռատես աչաց առջեւ՝ բացի Մելքոն Կիւրճեանէ եւ Մանուէլեանէ, որոնք, առ ի չզոյ՛ն նիւթականի, ամէն միջոց ի գործ կը դնէին, զի մի գուցէ անոր կարծիքներուն հակառակելով փափուկ զգացումները վիրաւորեն եւ վշտացնեն: Այսպէս յաջողեցան երեքնին միասին բնակիլ, ճաշել, խմել չեմ գիտեր

ի՞նչ կոկիկ եկամուտի ծախքով՝ որ ինծի եւ շատերուն համար մութ է:

Սակայն չ'ուրացուիր որ՝ պ. Արվախի յաջողած է տեղական հարուստներն եւ ազդեցիկներն ձեռք ձգել, բան մը որ եւ ոչ մէկ դաշնակցական կարողացած էր մինչեւ այսօր ընել: Սա է որ պ. Ա.ի յատկութիւնը երեւան կը բերէ գործնական կերպով եւ համակրանքի կ'արժանացնէ զինքը բարձր եւ զարգացեալ դասակարգին մէջ(*):

Բայց աւանակի պէս անտարբեր չգտնուելու համար, պէտք է տեղական գործունէութիւններու մասին գաղափար մը տալ, որպէս զի, երբ որ ապագայ առիթը ներկայանայ, չըսեն թէ՛՝ Վառնայի մէջ գտնուող յեղափոխականները ամէնքն ալ խրտուիլակներ են եղեր, որ եղած դարձածներուն աչք են գոցեր, եւ չեն աշխատեր կարելի եղածին չափ ուղղելու եւ կամ դիմումներ ընելու:

Տեղական գործերը վարող մարմինը՝ ճիշդ թաղական խորհուրդի մը պէս կը պաշտօնավարէ, առանց կարեւորութիւն տալու կազմակերպուած խումբերուն: Չափազանցութիւն չէ ըսածս: Հոս հալածուած է խօսքը, հալածուած է խիղճը, հալածուած է արդարութիւնը, հալածուած է ընկերական գուրգուրանքը, հալածուած է բարոյականը, հալածուած է անկեղծութիւնը, հալածուած է ազնուութիւնը, հալածուած է մինչեւ իսկ (եթէ չեմ սխալիր) կուտէ վերադարձող զինուորը: Անիրաւութիւն, անպատուութիւն, բռնութիւն, անարգանք, անխառնիք, դիւանագիտական աղտոտ խաղեր՝ ձեռք ձեռքի տուած՝ կը տիրապետեն պաշտօնակազմ կերպարանքի տակ: Զկայ որոշ ծրագրի, կանոնագրի գործադրութիւն, չկայ ռամկավարակազմ դրութիւն, չկայ ժամադրութեան յարգում, չկայ խընդիրներու մասին քիչ մը մտիկ ընելու նուաստութիւն: Իրենք՝ իրրեւ բարձր դասակարգի մարդիկներ՝ առանձին շրջանակ մը կազմած, կը փախչին եւ կը խորչին, թրեւս պժգանք իսկ կը զգան իրենցմէ ստորին կարծուած մարդիկներու հետ տեսնուելէ, անոնց խաւերուն մէջ մտնելէ, անոնց հոգեկան, սրտի եւ մտքի արտայայտութիւններն ուսումնասիրելէ, իրրեւ թէ իրենք եղած ըլլային «հայրենիքի սեղանի վրայ» իրենց անձը զոհարերողը, եւ անոնք, որոնք քանիցս արեան եւ կրակներու մէջ մտած են ճշմարիտ հայրենասէրի մը ձգտումով, պարզ «կաստա» մը եւ կամ այս տեսակ ջոջ յեղափոխականներու ձեռքին մէջ դրամագլուխ եղած ըլլային, նման այն եզներուն՝ որոնք «մինչեւ վերջին շունչը» արօրին ու մաճին տակ, կաշի ու ոսկոր կը մաշեցնեն՝ ազարակատիրոջ հանգստութեան համար:

(* Մէկուկէս տարուան մէջ, կ'ընէ կարեւոր անձնաւորութիւններէն մին, 20.000 (քսան հազար) Փրանք հաւաքուած է, ամբողջ Գուկարիոյ մէջ:

Հակայեղափոխական սիստեմով կազմակերպուած այս «առանձին շրջանակ» ունեցող խայտառակ ռեժիմին շուրջ, արդեօք ի՞նչ դառն վտանգներու առջեւ կուրծք կու տային պ. Արվախի ընկերները՝ հեռաւոր վայրերու մէջ: Արդեօք իրենց երեւակայութեան մէջ գոնէ մազի մը չափ գուշակած էին, թէ պալքանեան երկիրներու ներկայացուցիչը՝ Ընդհ. Ժողովի կողմէ գրուած Ծրագիրը առաձգական լասթիքի մը պէս իր ուզած կողմը կը քաշէր «ուզածիս կը վստահիմ, պատասխանատուն ես եմ, ոչ ոք իրաւունք ունի իմ վրայ բռնութիւն բանեցնելու եւ ոչ ալ իմ գործերուս խառնուելու» ըսելով. մինչեւ իսկ եթէ գործին յատկացուած մարդը կարծիք մը յայտնէ եւ կամ խորհրդակցելու պէտքն իսկ զգայ, անմիջապէս գործն կ'առնուի անոր ձեռքէն եւ գաղտնի կերպով կը յանձնուի ուրիշի մը, կոյր գործիքի մը:

Խմբական ապակեղրոնացման դրութիւնն ալ դիւրութիւններ կը շնորհէ եղեր արդարացի ձայներ, գանդատներ, բողոքներ խեղդելու... անիրաւութիւններ երեւան չելլելու համար. այս սիստեմը չէինք գիտեր, այս ալ սորվեցանք:

Յարմար տեղն է յիշել, որ բարձր շրջանակ կազմող մեր այս անուանական ընկերները, խումբերու եւ խմբապետներու հանդէպ իրենց աղայական, եսասիրական ծոյլ, թոյլ եւ ինքնահաւան դրութիւններով պատճառ եղան անոնց ցիրուցան ըլլալուն, յուսահատուելուն եւ անոնց ազնիւ զգացումներուն, ճրգտումներուն ոչնչանալուն:

Յեղափոխական, կատարեալ «կարմիր» յեղափոխական ըլլալու համար պէտք է մարդս հարուստ ըլլայ (??), ապա թէ ոչ կարեւորութիւն չունին աղքատ մարդիկներէ կազմուած խումբերը, որչափ ատեն ալ որ անոնք պատրաստ ըլլան իրենց անձը զոհ բերելու հայրենիքի համար: Հոս մարդուս ծիծաղը կը շարժէ, անձնագոհութեան վրայ եթէ խօսուի: Դրամ պէտք է իրենց, դրամ, եւ ոչ թէ իրենցմէ աւելի մարդ՝ Դաշնակցութեան մէջ իրենցմէ աւելի ուրիշ «տաքի ձեռքի խալապալը» չըլլալու համար: Եւ ճիշդ այս պատճառաւ է որ խումբերը երեսի վրայ մնացած են:

5.— Ծրագրի օրէնքով, ըլլայ Տաճկաստանի մէջ, ըլլայ արտասահման, ամէն կազմակերպուած կոմիտէ պարտի իր թաքստոցը ունենալ: Հոս այս տեսակ բան չկայ... խնայողութեան համար: Հեռաւոր տեղէ եկող ընկերներ, անձնապէս եւ թէ պաշտօնապէս, կը ստիպուին սրճարաններու մէկ մէկ անկիւնները օրերով մը նալ՝ եթէ անոնք պ. Արվախի անձանօթ են... դէմքով: Իսկ եթէ գործիչներ են ծանօթ, այն ատեն երկու Փրանքնոց օթէլներու մէջ կը հիւրընկալուին, տնտեսագիտական նուրբ հաշիւներն իսկ ի նկատի չառնուելով:

Այսպէս օրերով սրճարաններու անկիւնները մնացին ուժանակներու փոխադրութեան ատեն տղաներէն

երկուքը, որոնց անունները չեմ յիշեր: Այսպէս թողուցին, որ ոչինչներու մէջ իր մեղքերը քաւէ Ռուբէն (Կայծակ) անուն երիտասարդը:

Հալածելով հալածեցին եւ մինչեւ իսկ վարպետ ձեւով պառկած սենեակէն ալ դուրս նետեցին Դաշնակցութեան «լրտեսն» եղող եւ միանգամայն թերթերը ցրուողը, որ հազիւ հազ կարողացած էր, իրենց վրայ բռն չըլլալու համար, գիշերները հանգչեցնելու համար իր գլուխը՝ տեղ մը դտնել, որ իրենց վնաս մը երբեք չունէր, առանց զգացնելու տղուն, որպէսզի, չըլլայ որ իրենց անիրաւութիւններուն թափանցէ եւ փորձանք մը ըլլայ իրենց գլխուն վրայ: Զվարանեցան նաեւ միջոցներ ձեռք առնել այդ երկաթէ տղուն ազնիւ զգացումները ջախջախելու, ասոր անոր ձեռքը խաղալիք ընելու, եւ, ստորնացուցիչ դրութեան մը մէջ ձգելով՝ իրենց բռնապետական եւ անճոռնի դրութիւններուն առջեւ խոնարհեցնելու համար, որ, եթէ ի հարկին իրենց անիրաւութիւններուն դէմ բողոքի ձայն մը բարձրացնէ՝ նկատողութեան չառնուի՝ իրրեւ արժանիք չունեցող եւ ստորին մարդու մը կողմէ եղած ճաճոց:

Արդեօք ի՞նչպէս վարուեցան 1898 Մարտ ամսոյ մէջ Խանասորի երկու զինուորներուն հետ, որոնք չեմ գիտեր ինչ պատճառաւ հոս եկած էին: Եթէ ոչ պաշտօնապէս՝ դոնէ անձնապէս արդեօք ցոյց տուին իբրեւ ընկերական պարտականութիւն մը, որոնց մասին անհրաժեշտ էր «բարոյական աջակցութիւն» մը. այս կէտը մեզի անձանօթ ըլլալուն, կ'առաջարկենք այդ անձերէն ստուգել իրենց մասին եղած վարմունքը:

Ո՞ր մէկը թուեմ: «Յեղափոխական ասպարէզին մէջ ամէնքն ալ հաւասար ընկերներ են» կ'ըսեն մեր վարիչները եւ Ա.ի նմանները:

Եթէ «հաւասար ընկերներ են, ինչո՞ւ համար նիւթական եւ բարոյական տեսակետով միմիայն իրենց մասն եւ բաժին կը հանեն, իսկ կը դժկամակին դէժ շնորհել կուոյ դաշտին մէջ արիւն թափող զինուորին բարոյակազմ եւ միութեան աջակցութիւնը, երբ նա ողջ կը դառնայ իր պարտականութիւնը անթերի կերպով կատարած. ինչո՞ւ համար, կ'ըսեմ, երբեք մազի մը չափ ուշադրութիւն չեն ուղեր դարձնել եւ կը թողուն որ ամէն կողմէ հալածուած եւ անպաշտպան ոչնչանայ... իբր բարոյական վարձատրութիւն անոր անկեղծ հայրենասիրութեան:

6.— 1896 Օդոստ. 14ի ցոյցէն յետոյ (պ. Վահան Վարազի, Հրաչի (Սեպուհ) եւ մի քանի ընկերներու հոսկից մեկնելէն վերջ) պ. Արվախի մի քանի անգամներ ինձ յայտնեց ամիս մ'ալ սպասել դործի ուղարկուելու համար, եւ, այսպէս բաւական ատեն սպասելով՝ տեսանք որ վերջը չի գար, պաշտօնական նամակաւ մը տեղական կոմիտէին խնդրեցինք մի անցազիր՝ Ռոտոսթօ երթալու համար. մեր դրաւոր խնդրագրին ի պատասխան, կոմիտէի անդամներէն միոյն միջոցաւ

բերանացի հաղորդեցին ինձ, թէ «անցազիր կը տրուի այն մարդոց՝ երբ պաշտօնապէս որեւէ մի տեղ զրկուին»։ Անուղղակի կերպով սա ալ ըսեմ, որ պ. Արվախի ըսաւ, թէ Պալքանեան կեղծոնական Կոմիտէի գործերուն պէտք պիտի ըլլայ, թող սպասէ»։

Իբրեւ ընկերական որոշումները յարգող յետին ընկեր, հլու գինուորի մը պէս անսպինք, եւ սկսանք աւելի յարգանքով վերաբերուիլ իրենց հետ։ Բայց ամիսներ անցնելէն վերջ, երբ Կոզմայի մասին ծագած խնդիրներն աւելի լուրջ կերպարանք առնել սկսան, այն ատեն պ. Արվախի սկսաւ մեզ դէմ աւելի տարբեր դրութիւն մը բռնել՝ առանց որոշ պատճառի. եւ, օր մը, 1898 Յունուար ամսոյ մէջ, Սամաթիոյ հերոս Արտաշէս Միսաքեանի մօր՝ տիկին Միսաքեանի տունը, ուր կը գտնուէր պ. Արվախի, սկսաւ մեզ դէմ անարգական ոճով եւ ոգւով, տեսակ մը նախատանքի ձեւով ըսել սա բացորոշ եւ շեշտեալ խօսքերը. «Դաշնակցութիւնը քեզ գործ չէ վստահում, գնա՛, ազատ ես ուր որ կ'ուզես, դուն մեր շրջանակին չես պատկանում. Պասգիւղը կոտորել տուիք. ես քո վերայ ոչ հաւատք ունիմ եւ ոչ վստահութիւն, այսպէս համոզուած եմ, եւ ոչ ոք ալ կրնայ իմ այս ազատ համոզմանս վրայ բռնութիւն բանեցնել, այո՛, այսպէս համոզուած եմ ժամանակ մը, մինչեւ որ այդ կոտորածի խնդիրը ընկերակամ ատեսնի մը մէջ պարզուի»։ Միեւնոյն ժամանակ, տիկ. Միսաքեանի եւ անոր աղջկանը ներկայութեան կը յայտնէր Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած ժողովներուն՝ սեղանի վրայ, 150 ուսմբ Պասգիւղի համար ստորագրելը։ Մինչդեռ, 12 ուսմբեր դժկամակելով յանձնուած էր Պասգիւղի ընկերներէն միոյն՝ Պապիկի, Հրաչի եւ Կարոյի կողմէ, իբր թէ կեղծ. Կոմիտէէն վաղտնի կու տային, եւ թէ կը պատուիրէին որ եկեղեցիէն դուրս չհանեն եւ իրենց անձը պաշտպանեն։

Ահա սոսկալի խնդիր մը, որուն ներքեւ դիւանագիտական խարդախութիւն մը դարձած է անշուշտ, եւ այս խնդիրը լուծուելու համար պէտք է սպասել մինչեւ Ընդհանուր Ժողովին գումարուելը, որովհետեւ միմիայն անոր կը վերաբերի եւ ոչ թէ կոմիտէներուն։ Բայց ո՞վ պիտի ներկայացնէ եւ խնդիր ընէ Ընդհ. Ժողովին մէջ եւ պիտի պահանջէ որ անպատճառ նկատուութեան առնուի, քանի որ պ. Արվախի եւ Պասգիւղի ներկայացուցիչ եղող Հրաչեան միայն գիտեն։ Շատ բնական է, որ անոնք ալ միշտ պիտի ջանան Ընդհ. Ժողովէն ծածկելու, խեղդելու... պատասխանատուութեան տակ չիյնալու համար։ Բայց որո՞ւ հոգ, Պասգիւղը կոտորուել է, եւ հոն գտնուող յեղափոխական տղաներն ալ՝ բարոյականի տեսակէտով զոհ դացեր են, բաւական է որ պ. Արվախիի եւ պ. Հրաչի համբաւը չվտանգուի։ Արդեօք Ընդհ. Ժողովը ի՞նչ կարծիք պիտի ունենայ այս ախուր գործունէութեան մասին։

Հարկ անհրաժեշտ է հոս համառօտ կերպով նօթի առնել։

1.— Պասգիւղի մէջ գտնուող տղաքը կոմիտէ չէին կազմեր, այլ՝ հնչակեաններէ նոր դարձած խումբերը կը վարէին, իրենց ներկայացուցիչ ունենալով պ. Հրաչեան։

2.— Քանի քանի անգամներ այդ խումբի մարդոց մասին գանգառներ ըրած էին, բայց նկատուութեան չէին առնուած։

3.— Յոյցէն 4 ամիսներ առաջ խնդրած էին իրենց ներկայացուցչէն գիւղին պատրաստութիւնը եւ այս մասին պատրաստած էին գիւղին քարտէսը, բայց քանիցս գումարուած ժողովներուն մէջ իբր թէ «կարեւորութիւն չունի, նշանակութիւն չունի» որոշում տուած են եղեր։ Մինչդեռ պ. Արվախի իր ձեռքով ստորագրած է 150 ուսմբ!!!

4.— Հրաչեայ 3 օր առաջ (ցոյցէն) գիւղ կ'երթայ եւ հոն գտնուող տղաքը կը գինէ պանքա տանելու համար։

5.— Գագիկ կը հակառակի եւ չ'ուզեր որ խումբը գիւղէն հեռանայ. «Կը փախչին, չեն իգար, մեղք է գէնքերուն» որոշ խօսքերով, որ միշտ հետեւին շրջուելով ուսումնասիրած էր անոնց ամբողջ զգացումները։

6.— 35-40 ատրճանակ Աղասիի յանձնուելը Հրաչի կողմէ։ Աղասի առանց ապաւինելու 35-40 ատրճանակին եւ 12 փոքրիկ ուսմբերուն, բաց է բաց կը յայտնէ իր անկարողութիւնը եւ կը խնդրէ Հրաչէն՝ որ գոնէ իր տեղը մէկը զրկէ, բայց այս ալ կը մերժուի «կարեւորութիւն չունի, ի՞նչ է որ. ահա 12 ուսմբերով եկեղեցին, ինքզինքնիդ պաշտպանեցէք» խօսքերով։

7.— Պասգիւղը Աղասիին յանձնելէն վերջ, Գագիկն ալ կը դնէր առջի երեկոյին Բերայի սենեակներէն մէկէն ուսմբ ձգելու համար։ Բայց տան տիկնոջ կողմէ մերժուելուն բացը կը մնար, որով ոչ օգտակար կ'ըլլար գիւղին եւ ոչ ալ ուրիշ տեղ։

8.— Պասգիւղի տեղեկագիրը գանգառներով, բողոքներով կը զրկուի խմբագրութեան Հրաչի հոն եղած ժամանակ։ Գանգատագիրը կը վերցուի եւ միայն պարզ նկարագրութիւնը կը տրուի «Իրօշակ»ին մէջ։

9.— Հրաչեայ նամակ մը կը գրէ տղոցը՝ որք Վառնա կը գտնուին, եւ այսպէս կ'ուզէ անոնք հանդարտեցնել՝ որոնք զրկուած էին իրենց պահանջներէն. «տղերք, տեղեկագիրնիդ այնպիսի մի յառաջաբանով սկսած էիք որ տեսակ մը գանգատանք էր ինձ դէմ, ես ձեզնից աւելի պահանջած էի Պասգիւղը լաւ վիճակի մէջ դնել, բայց ընկերներ հակառակեցան ինձի դէմ. հիմա փաստ ունիմ անոնց հետ խօսելու հոն եւս»։ Այս տողերը պ. Վահան Վարազ կարգաց՝ երբ կը հարցաքննէր ի՞նչպէս ըլլալը հասկնալու՝ Պասգիւղի կոտորածի մասին։

Թէեւ անցածը՝ անցած է, բայց... պէտք է նկատողութեան առնուլ թէ՛ ի՞նչ եղան այն ստորագրուած 150 խորհրդաւոր ուսմբերը, ո՞ւր զրկուեցան, ինչո՞ւ համար չապաւինեցան եւ չվստահեցան Պասգիւղի մէջ գտնուող յեղափոխական տղաներուն, մինչեւ իսկ զրկելով զանոնք մէկ սանդիմէ, որոնցմէ մէկուն՝ Աղասիի պատուիրակութեամբ բաւական ոսկիներ հաւաքեցին Պոլսոյ հարուստներէն, եւ, կլորիկ գումարներ յանձնեցին Սամաթիոյ, Կէտիկ Փաշայի եւ Իսկիւտարի մէջ գտնուող յեղափոխականներուն։

Պասգիւղի մէջ գտնուող տղաքը, այն սոսկալի օրերուն մէջ գէնքէ, Ֆիգիբական ուժէ, նիւթականէ զուրկ մնալով հանդերձ, այսօր Պալքանեան երկիրներու ներկայացուցիչը, առանց չիկնելու, առանց խղճահարուելու կը նկրտի տակաւին բարոյականէ ալ զրկել զանոնք, որպէսզի, զի մի գուցէ Պոլսոյ մէջ դարձածներուն թափանցելով պատ. Ընդհ. Ժողովին առջեւ բողոքի ձայն բարձրացնեն։ Այո՛, եւ այս պատճառաւ է որ պ. Արվախի կը ջանայ իր ամբողջ խորամանկութիւնները ի գործ դնել հեռի պահելով զանոնք, նամանաւանդ այս տողերը գրողը, ընկերական և գործունէութեան շրջանակէ, չմերկացուելու համար կեղտոտութիւն մը, որուն հետեւանքն եղած է Պասգիւղի կոտորածը, եւ ոչ թէ, իրենց կարծիքով, Պասգիւղի տղայոց անկարողութիւնը։

Պասգիւղի մէջ գտնուող տղաքը մահուանէ վախցողներ չէին։

Թող չկարծէ Պալքանեան երկիրներու արդի ներկայացուցիչը, թէ այս տողերը գրողը հարստանալու դիտաւորութեամբ մտած է յեղափոխական ասպարէզին մէջ։ Եւ երբեք տրամաբանութիւն չէ իր անիրաւութիւնները, բռնապետական դրութիւնը մերկացնողին համար ըսել «զրամ կ'ուզէ, անօթի է մնացեր, Կոմիտէի անդամ ըլլալ կ'ուզէ, ի՞նչ ըրած ունի, Դաշնակցութեան 300 Փրանքը կերեր է»(*)։ Եթէ ինքը չի գիտեր, թէ մարդկային խորամանկութիւնը իր որոշ սահմանը ունի, բախտախնդրութիւնը միշտ անել փողոցներու մէջ կը շրջի, իսկ շահախնդրութիւնը կ'ուզէ օգտուիլ ժողովրդին յուսահատութեան մէջ, իր «անօթի» կարծածը վաղուց տեսեր է եւ կամք ունեցեր է վճռելու ու պէտք եղած տեղը դիմելու, իր արդարացի ձայնը լսեցնել տալու համար։

Սոյն բողոքագիրը կը ներկայացնեմ եւ խոնարհարար կը խնդրեմ Ընդհ. Ժողովէդ, իբրեւ Դաշնակցութեան մի անդամ, ի նկատառում։

Մնամ միշտ յարգանք
Պատ. Ժողովիդ անձնուէր
ԱՐԱՄ ՄԱՆԱՎԵԱՆ
(ԼՐՏԵՍ) — ԳԱԳԻԿ —
1898 Մարտ 12
Վառնա

(*) Իբրեւ թէ 300 Փրանք կերած ըլլածք (???)։

Պատրաստ եմ ամէն պարագայի մէջ բացատրութիւններ տալ, եթէ պաշտօնապէս պահանջուի։

ՆՈՅՆ

4ա.— Յ. ԹԱԴԵՈՍԵԱՆԻ ԲՈՂՈՒԹԻ ԳԻՐԸ

Եկեղեցիի (Մոսկուա) ճեղքայացուցիչ և սառնող Յովսէփը կը բողոքէ Բ. Ընդհ. Ժողովի այն որոշման դէմ, որուն համաձայն՝ յաջորդ Ընդհ. Ժողովին համար Արեւելեան Բիւրօյին եւ իր շքրչաններուն կը տրուէր ընդամենը հիմա ձայն միայն։ Կը շեշտէ Ռուսաստանի մեր կազմակերպութեան հիմնական դերն ու կարևորութիւնը՝ յեղափոխական գործին մէջ։

Ապագայ Ընդհանուր Ժողովի գումարման խնդրի ժամանակ երկար վիճարանութիւնների տեղիք տուեց Ռուսահայքի ունենալիք ձայների քանակութեան հարցը։ Ռուսաստանի ներկայացուցիչներից այդ նիստին ներկայ գտնուող ամենաչնչին փոքրամասնութիւնը հակառակ միւս ներկայացուցիչներից շատերին, որոնք՝ ԱՆԱՐԴԱՐ կերպով նսեմացնելով Ռուսահայքի թէ անցեալ եւ թէ ներկայ գործունէութիւնը, առաջարկում էին տալ այդ ուսյոնում գտնուող բոլոր մարմիններին (սկսած խմբերից մինչեւ Բիւրօն միասին) միմիայն չարս ձայն, — այդ փոքրամասնութիւնը պընդում էր որ Ռուսահայքին անհրաժեշտ է տալ անունուան ուրք ձայն, եւ որպէս արագոյց դուրս բերում էր հետեւեալը.

I. Անցեալի տեսակէտից՝ Ռուսաստանը Դաշնակցութեան օրօրանն է. մեր կազմակերպութիւնը ծնունդ է առել ու զարգացել Ռուսաց երիտասարդութեան շքնորհիւ. նոյն երիտասարդութեան է պատկանում այն պատիւը, որ ներկայումս Դաշնակցութեան հեղինակութիւնը ու ժողովրդի հաւատը դէպի մեր կազմակերպութիւնը անհամեմատ զարգացել, բարձրացել է։

II. Անցեալի ու ներկայի տեսակէտից՝ ա) Ռուսահայքի նիւթական օժանդակութիւնը կազմել է եւ կազմում է մեր կազմակերպութեան տարեկան բիւջէի առնուազն 2/3 մասը, բ) մեր կազմակերպութեան թէ գործադիր եւ թէ նամանաւանդ գործադրող (մատուր, ինտիլիգենտ) ոյժերի մեծամասնութիւնը կազմուած է Ռուսահայքից, գ) մեր գլխաւոր նիւթական ոյժը՝ գէնքը, մատակարարում է նոյն տեղի ժողովուրդը եւ դ) ոչ մի տեղ կազմակերպական մարմինները այնքան բազմաթիւ չեն, ինչպէս Ռուսաստանում։

III. Բարոյական մեծ սխալ է անտես առնել մի երկիր, որ ունի մի միլիոն հայ ազգաբնակիչներ, եւ որին մենք ամէնքս վերագրում ենք մեր յեղափոխական գործունէութեան համար մեծ ապագայ ու պատասխանատու դեր. իսկ այդչափ սահմանափակ ու բացառիկ դրութեան մէջ դնել այդ ժողովուրդը նշանակում է փակել կենդանի գործի դուռերը նորա առաջ եւ այդպիսով անգործութեան մատնել նորան։

IV. Չէ նկատուում այժմ ո՛չ մի անհրաժեշտ դըր-
դիչ պայման եւ դրական պատճառ, որ ստիպէր մեզ
այսքան աննպաստ ու բացառիկ դրութեան մէջ դնել
Ռուսաստանի մարմինները, յատկացնելով նորան մի-
այն չորս կամ հինգ ձայն, զրկելով նորան միեւնոյն
ժամանակ եւ այն արդիւնաւոր պայմաններից, որոնք
յատկացրած են Երկրին ու արտասահմանին, այն է՝
իրաւունք է տրուում Դաշնակցութեան կամքը արտա-
յայտող մարմիններին ժամանակի ընթացքում աւելա-
ցնել այդ տեղերին յատկացուած ձայների թիւը:

Չնայած փոքրամասնութեան այդ պատճառաբա-
նութիւններին ու առարկութիւններին, ժողովը որոշեց
տալ Ռուսաստանին հինգ ձայն:

Համոզուած լինելով, որ այդ որոշումը նախ՝ վը-
նասակար է եւ երկրորդ՝ անարդար, ես բողոքում եմ
այդ վճռի դէմ եւ հրաժարուում եմ մասնակցել ջուէրա-
կութեան:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑ

4Բ.— ԿԱՐԷՆԻ ԵՒ ՇԱՀԷՆԻ ԲՈՂՈՔԸ

Կ'ակնարկուի շահեամերաշխութեան եւ Եփեսոսի վստա-
հութեան պակասը: Արդեօ՛ք հիմնական պատճառը ուսանող Յով-
սէֆի բողոքագրին բնոյթը կազմող վեճն է: Աւագանի (հաւանորէն
Օտեսայի եւ Խրիմի շրջան) եւ Նաւահանգստի (Պաքում) պատ-
գամաւորները հեռացա՞ն արդեօք Բնդի. ժողովէն, — չեմք գի-
տեր: Բայց Կարէնի ստորագրութիւնը կը գտնենք ատենագրու-
թեանց ամփոփման տակ: Յամենայն դէպս Յունիս 21ին ժողովը
իր աւարտին մօտ էր: Ըստ Երեւոյթի՞ն՝ տեղի ունեցած էին արդէն
մարմիններու ընտրութիւնները, եւ Կարէն, ինք եւս, ընտրուած
էր Պատ. Մարմնի մը անդամ (Կառուածադիկ, Պոլիս):

Ընկերներ !
Այլեւս սպասել չենք կարող. ուստի կը մեկնինք:
Ժողովի այսպիսի վերջաւորութեան մը յանդիւր, մեզ
չատ մը տխուր խորհրդածութիւններ ընել կու տայ:

ա) Արդեօք հայ երիտասարդութեան յեղափոխական
ուժը սպառած չէ՞, քանի որ մի ուրիշ կուսակ-
ցութիւն քիչ առաջ բողոքովին կազմալուծուե-
ցաւ, իսկ մերը, որ այնքան պարծանքով միակ

արժանաւորը եւ ամենամաքուրը հռչակած ենք,
կանգնած կը տեսնենք այնպիսի ընկերական հողի
վրայ, որ եթէ նոյնութեամբ շարունակուի՝ ճա-
կատագրաբար պիտի միեւնոյն վախճանն ունե-
նայ՝ թէեւ տարբեր ձեւով:

բ) Արդեօք կարելի՞ է տանիլ մի յեղ. կուսակցու-
թիւն, որի գլխաւոր ուժերը իրար վրայ հարկ ե-
ղած հաւատը չունին եւ իրար նկատմամբ ոչ-գե-
ղեցիկ համոզում ու կարծիքներ ունին:

գ) Արդեօք անխղճութիւն չէ՞ այսպիսի անհամե-
րաշխ տարրերով ներկայանալ հասարակութեան
իրբ «մի մարմին» եւ իր վրայ առնել ահագին
պատասխանատուութիւն՝ մի ժողովրդի գոյու-
թիւնը ապահովելու կոռւին մէջ:

Ահա այս մտածումները իբր «իրական ուրուական»
չեն հեռանար մեր մտքին ու սրտին առջեւէն ու թոյլ
տրամադրութեամբ եւ վատ տպաւորութեան տակ կը
մեկնինք վճռովայրէն:

Գուցէ թուլարտութիւն համարէք մեր մեկնիլը.
ճիշդ է, 2½ ամսուայ ժողովական կեանքը թուլացուց
մեզ, ա՛յնքան թուլացուց, որ կը զգանք, թէ մեր կե-
նալով մի քայլ անգամ գործը յառաջ գալու չէ, մա-
նաւանդ որ ձայնի խնդիր չկայ այլեւս՝ այլ փոխա-
դարձ համաձայնութեան:

Մեր երթալով կը հրաժարինք Ընդհ. ժողովին
մասնակցելէ, հետեւաբար տրուելիք վճիռներուն հա-
մար մեր կողմէ ո՛չ մի լիազօրութիւն տալով մնացող-
ներուն՝ մեզ կը վերապահենք վերջը զանոնք ընդու-
նելու եւ կամ մերժելու իրաւունքը:

Յարգանք՝
Աւագան—Նաւահանգստի պատգ.
ԿԱՐԷՆ
ՇԱՀԷՆ

21 Յունիս 1898
Մեծ-Քաղաք(1)

(1) Թիֆլիս:

Դ.— 1899 — 1903 Տ Ա Ր Ի Ն Ե Ր Ը

Հ. Յ. Դաշնակցութեան Բ. եւ Գ. Ընդհանուր Ժո-
ղովներուն միջեւ ինկող այս ժամանակաշրջանը կը
յատկանշուի Երկրի մէջ յեղափոխական շարժման ծա-
ւալումով, փէտայական սխրագործութիւններով, 1897
-99 թուականներուն ժողովրդական տրամադրութեանց
մէջ յառաջացած տեղատուութեան ետք՝ Յեղափոխու-
թեան նկատմամբ Հայութեան վստահութեան վերա-
հաստատումով եւ ամրապնդումով, եւ Եւրոպայի մէջ,
Արեւմտեան Բիւրոյի քանգերուն շնորհիւ, Հայ Դատի
ուղղութեամբ դրական ու ծաւալուն քարոզութեամբ
(Pro Armenia): Յեղափոխական ու մարտական յարա-
նուն գործունէութեամբ եւ հայ ազատագրական պայ-
քարի նոր ու խանդավառ բռնկումներով հարուստ այս
շրջանին կը պատկանին Սասնոյ փէտայական փառա-
գին կազմակերպումն ու ամրացումը՝ Սերաբի մահէն
ետք Անդրամիկի ու Գէորգի առաջնորդութեամբ, Եր-
կրի ժողովուրդի յեղափոխական դաստիարակութեան
կազմակերպումն ու գիւնումը՝ Հրայրներու եւ վարդ-
գէտներու հետեւողական քարոզութեամբ, Փոքորիկի
գործը՝ նոյնիմեքն Գրիստափորի ղեկավարութեամբ, եւ
հայ եկեղեցական կալուածներու գրաւման ցարական
որոշման դէմ կովկասահայութեան համաժողովրդական
ծառացումը՝ Դաշնակցութեան առաջնորդութեամբ:

Շահեկան կը նկատենք Հ. Յ. Դաշնակցութեան եր-
կու կարեւոր Ընդհանուր Ժողովներուն միջեւ երկարող
այս հինգ տարիներու կուսակցական-յեղափոխական
գործունէութեան մասին տալ հետեւեալ փաստաբու-
թերը, որոնք հաւանորէն այդ ժամանակաշրջանին վե-
րաբերեալ միակ գրաւոր վկայութիւնները չեն (1899-
1903 տարիներու լման արխիւը չունինք ներկայիս մեր
տրամադրութեան տակ), բայց լոյս կը սփռեն Դաշնակ-
ցութեան գործունէութեան քանի մը հիմնական մար-
գերուն վրայ, ինչպէս՝ Արեւելեան Բիւրոյի դերը: Եր-

կրի յեղափոխական կազմակերպման մէջ, Դաշնակցու-
թեան կամքը ներկայացնող Մարմնի Ֆիլիպպի ժողովի
(1901) որոշումներն ու Փոքորիկի գործը, եւ եկեղե-
ցական կալուածներու գրաւման հրամանագրի նկատ-
մամբ Դաշնակցութեան պաշտօնական կեցուածքը:

Առաջին փաստաբու-թեր(1) կը վերաբերի Հ. Յ.
Դ. Արեւելեան Բիւրոյի (Թիֆլիս) 1899 Յունուարի ժո-
ղովին: Հ. Յ. Դ. 2րդ. Ընդհանուր Ժողովի աւարտէն 6-7
ամիսներ ետք տեղի ունեցած Արեւելեան Բիւրոյի այս
ընդլայնուած ժողովը (մասնակցութեամբ կովկասեան
կարգ մը կեդրոնական կամիտներու ներկայացուցիչ-
ներուն), որու ատենագրութեանց ամփոփումը (ցարդ
անտիպ) կու տանք՝ առնելով Հ. Յ. Դ. Կեդրոնական
Դիւանէն, շահեկան է քանի մը տեսակետով:

ա) Ան մեզ կը լուսարանէ ընդհանրապէս՝ Երկրի
յեղափոխական գործի ղեկավարման եղանակին, դըժ-
ւարութիւններուն, յաջընդատներուն, եւ գտնում վե-
րացնելու ուղղութեամբ պատասխանատու մարմիննե-
րու ճիգին եւ վնասակալ աշխատանքին մասին:

բ) Ճշգրիտ տեղեկութիւններ կը հայթայթէ Դաշ-
նակցութեան այդ օրերու նիւթական հնարաւորութիւն-
ներուն, կարիքներուն եւ մտահոգութիւններուն մա-
սին, — մտահոգութիւններ՝ որոնք մէկ-երկու տարի-
ներ ետք ծնունդ պիտի տային Փոքորիկի գործին:

գ) Անգամ մը եւս կը յայտնաբերէ Դաշնակցու-
թեան հիմնադիրներու եւ անոնց շունչին տակ հասակ
նետած ղեկավարութեան բարոյական պայծառ դիմա-
գծութիւնն ու գոհարարութեան անսպառ ոգին («Ան-

(1) Այս, ինչպէս նաեւ Հ. Յ. Դ. Կեդր. Դիւանէն արխիւային
գտնուած այլ փաստաբու-թերու ընտրութիւնն ու պատճէնա-
նումը կը պարտինք Ամերիկայի Կ. Կամիտիէն եւ ընկ. Գէորգ Տօ-
նապետեանին: Մեր շնորհակալութիւնները:

խուսափելի ու անյետաձգելի պարտականութիւն... ամրապնդելու համար»):

Դ) Եւ վերջապէս, Դաշնակցութեան պատմութեան գործնական մարզին մէջ, Բիւրոյի որոշումներու այս արձանագրութիւնը տեղեկութիւններ կը հայթայթէ մեզի Երկրի Պատասխանատու Մարմիններու (Բարձրաւանդակ եւ Վասպուրական) անդամներու ձեռքարկալման (Սաֆօ, Տարֆ), զանազան պատճառներով հրաժարման (Վարդան) եւ զանազան փոխարինելու կոչուած մար ընկերներուն մասին (Տերտիմի Գեոի, Գիսակ — Վարդգէս —, եւն.):

Թէեւ Բիւրոներու եւ պատասխանատու այլ մարմիններու ժողովական ատենագրութիւնները սկզբունքով չեն մտներ Հ. Յ. Դ. Ընդհանուր եւ Ռայնական ժողովներուն յատկացուած այս հատարին մէջ, կու տանք սակայն ներկայ ամփոփում-արձանագրութիւնը անհրաժեշտ ծանօթագրութիւններով՝ վերը նշուած իր բազմակողմանի շահեկանութեան համար, եւ իբրեւ լրացուցիչ (պիտեմեղական բաժին եւ մարմիններու նոր նշանակումներ) Չորս Ընդհ. ժողովի որոշումներուն:

Երկրորդ փաստաթուղթը կը կազմեն Արամ Յակոբեանի կողմէ Ս. Վրացեանի գրաւոր հարցումներուն տրուած պատասխանները (2), որոնք կը վերաբերին առաւելաբար Դ. Կ. Ն. Մարմնի Ֆիլիպէի ժողովին գումարման պարագաներուն, այդ ժողովի որոշումներուն, ինչպէս նաեւ Դաշնակցութեան Պալատը եւ կիլիկիոյ գործունէութեան եւ գործիչներուն: Արամ Յակոբեանը ուրիշ մէկը չէ եթէ ոչ Հ. Յ. Դ. Չորս Ընդհ. ժողովին իբրեւ Պաթուրի պատգամաւոր մասնակցած Կարէնը, որ միեւնոյն ժողովին կողմէ ընտրուեցաւ Պալատը Պատասխանատու Կ. Կոմիտէի անդամ (տեսնել էջ 67)՝ Բարայի (Գարեգին հաժակ) եւ Սեւ-Աշոտի հետ: Պատասխանատու մարմիններու անդամակցած եւ Պաթուր-Հիւս. Կովկաս-Օտեսա շրջանակի Դաշնակցութեան կարեւոր գործիչներէն հանդիսացած ընկեր, ան լաւատեղեակ էր անշուշտ 1895-1903 տարիներու յեղափոխական աշխա-

(2) Գրուած, ամենայն հաւանականութեամբ, Սոփիայէն, 1929ի վերջերք կամ 1930ի սկիզբը:

տանքներուն, դէմքերուն, ժողովական եւ յարակից անցուղարձերուն, դժուարութեանց եւ իրականացումներուն, — բան մը՝ որ կէս-յուշագրական բնոյթի անոր հաստատումներուն կու տայ որոշ չափով վաւերագրական արժէք: Պատմական տուեալ ժամանակաշրջանին աւելի քան երեսուն տարիներ ետք գրի առնուած այդ յիշատակները կը պարունակեն սակայն ժամանակագրական կարգ մը սխալներ, ինչպէս նաեւ դէմքերու եւ դէպքերու վերյիշումին հետ կապուած անորոշութիւններ, գորս պիտի ջանամք մտնանշել եւ ուղղել՝ ներկայի մեր հնարաւորութեանց սահմաններուն մէջ: Անհետացած կարգ մը դէմքերու կապակցութեամբ, — որոնց ամէնօրեայ գործակիցն է եղած ինք, — Կարէն կ'արտայայտէ նաեւ կարգ մը ենթակայական դատումներ եւ գնահատումներ, գորս կու տանք նոյնութեամբ՝ իբրեւ իր անհատական մտածումները, չկտրատելու համար ամբողջութիւնը:

Իբրեւ յաւելում՝ կը կցեմք Արեւմտեան Բիւրոյի 1901 թուականի մէկ շրջաբերականը՝ Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնի կարգ մը որոշումները հազորդող (2 ա.):

Պարզ է որ տուեալ շրջանի եւ գործունէութեան կապակցութեամբ մեր ազդերները կրնան ամբողջանալ եւ գնահատութիւն մը հետաւոր կը դառնայ՝ երբ հրատարակուին Դ. Կ. Ն. Մ. Ֆիլիպէի ժողովին ատենագրութիւններն ու «Փոքորիկ»ի արխիւային թուղթերը (եթէ մնացած են):

Փակելու համար այս բաժինը, կու տանք երկու շրջաբերականներ (3 ա. եւ 3 բ.), որոնք ազգային միասնական ծառայումի կոչեր են՝ Դաշնակցութեան կողմէ ուղղուած հայ ժողովուրդին, ընդդէմ 1903ի ցարական հրովարտակին՝ հայ եկեղեցական կալուածներու յարժուինս գրաւման կապակցութեամբ:

Աւելցնեմք՝ որ, ամենայն հաւանականութեամբ, 1900-1903 տարիներուն Դաշնակցութեան կովկասեան մարմինները շարունակած են գումարել Ռայնական ժողովներ կամ խորհրդակցական հանդիպումներ: Համապատասխան փաստաթուղթերը, սակայն (եթէ մնացած են), չունինք մեր տրամադրութեան տակ:

Հ. Տ.

1.— ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԺՈՂՈՎ

1898 թուականի Ընդհանուր Ժողովի գծած գործունէութեան եւ պարտաւորութիւնների սահմանն ու առհասարակ Սարուստանում(1) տիրող ոչակցիան Արեւելեան Բիւրոյին պարտաւորեցրել են իրա շրջանական անդամների մասնակցութեամբ Ժողով գումարել եւ նրա հայեցողութեանը ենթարկել հետեւեալ հարցերը:

Ժողովի առաջին նիստը կայացաւ 1899 թ. Յունուարի 16ին, եւ յաջորդաբար տասնեւվեց նիստ ունենալուց ու առաջարկուած հարցերը վճռուելուց յետոյ փակուեց այսօր՝ 26 Յունուարի 1899 թ.:

Շրջանական անդամներից ներկայ եղան Ջրաբերդի, Ոսկանապատի Կեդրոնական Կոմիտէների ներկայացուցիչները, իսկ Մովսիս(2) իրա կարծիքները հաղորդել էր զրաւոր, որոնք ուշադրութեան առնուեցան հարցերի ջննութեան միջոցին:

Բիւրոյի ընտրուած անդամներից բացակայում էր միայն Տ. Ը. (3) որը անձնական պաշտօնի պատճառով բացակայում է Մեծ Բաղաքից եւ գտնուում է հեռու Մեծ Բաղաքի շրջանից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԱԾ ՈՒ ՎՃՌՈՒԱԾ ՀԱՐՑԵՐ

1. Որովհետեւ Շամիրամի պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի համար Ընդհանուր Ժողովի ընտրուած անդամներից Տորքը(4) Երկրի մտնելուց յետոյ ձերբակալուել ու բանտարկուել էր, ու նրան յաջորդող դեռ եւս չէ ընտրուած, որովհետեւ Մինարէթից Շամիրամ(5) կատարուած վերջին փոխադրութիւններից մին ու փոխադրիչ խումբը վտանգի ենթարկուած լինելու եւ Մինարէթի Մարմնի լրացուցիչ ընտրութիւնը կատարուած չլինելու պատճառով փոխադրութեան գործը զադարեցուել է Մինարէթի Մարմնի կողմից,

Որոշուեց Շամիրամի Մարմնին լրացուցիչ անդամ առաջարկել եւ ուղարկել Սօսին, եւ յանձնարարել Մինարէթի Մարմնին, որ Երկրի գործօն ընկերների խորհրդակցութեամբ կազմեն Շամիրամի գոնէ առեւմտեանակեայ Պատասխանատու Մարմինը, եւ շարունակել տան փոխադրութեան գործը:

2. Կեդրոնացման վայրերից Բարձրաւանդակի(6) Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի համար Ընդհանուր Ժողովի ընտրուած անդամներից Վարդանը հրատարած ու Սաքօն(7) Երկրում ձերբակալուելով բանտարկուած լինելով, համաձայն Ընդհանուր Ժողովի մշակած կանոնադրութեան «Կազմակերպութիւն Թուրքիայէ դուրս» բաժնի «Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէ»ների կազմութեան պատկանող մասի Երդ յողուածի, Բարձրաւանդակի մնացած ընկերների հա-

ւանութեան ենթարկելու թէութեամբ՝ նոյն Պատասխանատու Կեդր. Կոմիտէի լրացուցիչ անդամ ընտրուեցին

- I Գեոի 4 ձայնով. (2 ձայն հակառակ, մինը ձեռնպահ),
- II Գիսակ 5 > (2 ձայն ձեռնպահ),
- III Ղեւոն (Կ.) 6 > (1 ձայն ձեռնպահ)(8), որոնց ընտրութիւնը, ըստ վերոյիշեալ յողուածի գորութեան, վերջնական կը լինի երբ Երկրի մնացորդ ընկերները իրանց հաւանութիւնը գրաւոր կը յայտնեն:

Բայց աչքի առաջ ունենալով, որ կեդրոնացումի նախապատրաստական գործը արդէն սկսուել է եւ Երկրի մնացորդ ընկերներից շարունակ պահանջ դրուում է իրանց գործակից ղրկելու,

Որոշուեց Բիւրոյի հաւանութիւնը ստացած վերոյիշեալ անձերին որքան կարելի է շուտ ուղարկել Բարձրաւանդակ:

Որոշուեց նաեւ, որ բացի սրանից, երբ հնարաւորութիւն լինի, նոյն Պատասխանատու Կեդրոն. Կոմիտէի հաւանութիւնը ստանալու թէութեամբ, ընտրել եւ ուղարկել մի ուրիշ ինտելիգէնտ լրացուցիչ ընկեր՝ որը գործի մեծութեան եւ դժուարութիւններին համապատասխանող բոլոր յատկութիւններն ու առաւելութիւնները ունենայ:

3. Որովհետեւ Արեւ. Բիւրոյի ընտրուած անդամների անձնական ու ընտանեկան ներթափանցիկ պահանջները ու պայմանները չեն թոյլատրում անձնական պարապմունքներից ազատ լինելով ծանրաբեռնուել կազմակերպութեան միջոցների վրայ,

Որովհետեւ անդամների անձնական զբաղումները գրաւելով ժամանակի կարեւոր մասը՝ եւ երբեմն ուսման բացակայելու ստիպուելով, անդամների մէջ աշխատութեան բաժանումը բաւարար սահմանի մէջ պահել հնարաւոր չի լինում, որով եւ յարաբերութիւնները ձգձգուում ու ընդհանուր գործը տուժում է,

Այս անպատեհութիւններին դարձան տանելու համար առաջարկուած ձեւերից յարմարագոյն համարուեց շրջանների բաժանումը, այն է՝ Արեւել. Բիւրոյի շրջանները բաժանելով անդամների մէջ, ամէն մէկ շրջանի յարաբերական եւ կազմակերպական գործը յանձնել եւ յատկացնել վիճակուած անդամին, բայց յամենայն դէպս, պատասխանատու եւ Բիւրոյի կարգադրութեան վերապահուած հարցերը միշտ ենթարկել Բիւրոյի ջննութեան ու որոշման:

Այս հիման վրայ բաժանումը կատարուեց հետեւեալ կերպով.—

- Ա. ու Վրէժստանի, Շամիրամի շրջանները Սուրէնին,
- Բ. Ջրաբերդի շրջանն ու զինապահապատական գործը Մարտին,

- Գ. Նաւահանգստի շրջանի ու արտասահմանեան բանակցութեան գործը Սմբատ Օհանեանին,
- Դ. Ոսկանապատի, Հիւս. Սարբրի, Եկեղեցիի շրջանները Հալալարձին եւ Նիթրային(9):

Անխուսափելի ու անյետաձգելի պարտականութիւն ընդունուեց, որ մէն մի շրջանի անդամ, ըստ շրջանի պահանջի, տարեկան մաքսիմում մինչեւ երեք տոնոայ համար, իրա անձնականի նիւթական պայմանները զոհելով, իրան վիճակուած շրջանի մէջ շրջի կազմակերպութիւնը ուժեղացնելու, կենդանացնելու եւ ամրապնդելու համար:

Որոշուեց յանձնարարել Սարուստանի բոլոր Կեդրոն. Կոմիտէներին՝ որ նրանք էլ իրանց շրջանի համար սոյն, կամ նպատակայարմար այլ ուղղութեան հետեւելու աշխատին:

Որպէսզի Դաշնակցութեան գործին անդամների թիւը ստուարանայ եւ նրանք փորձառութիւնով պատրաստուին գործին մարմիններին օժանդակելու, եւ ի հարկին նրանց փոխարինելու,

Որոշուեց որ Բիւրոյի անդամներ աշխատին իրանց օժանդակ ընկերներ գտնելու, որոնք կը հրաւիրուին նաեւ Բիւրոյի նիստերին խորհրդակցական ձայնով, եւ միշտ դիտակից կ'անուին կազմակերպութեան ընթացիկ գործառնութիւններին ու հարցերին,

Որոշուեց յանձնարարել Սարուստանի բոլոր Կեդ. Կոմիտէներին, որ իրանք եւս աշխատեն իրազործել սոյն ուղղութիւնը:

4. Դաշնակցութիւնը իրա դոյութեան ընթացքում առիթ չէր ունեցել բիւտժէթ կազմելու, բայց, որովհետեւ Դաշնակցութեան գործունէութիւնը ընդարձակուել ու Երկրի յեղափոխական տարրը բազմապատկուելով հասունացել էր բուն ապստամբական կէտեր որոշելու եւ կեդրոնանալու համար, որի ծրագրուած իրագործումը գոնեա՛ մօտաւորապէս չափուած պէտք է լինի գործի պահանջի նուազագոյն աստիճանի հետ, որի համեմատութեամբ ստիպուած լինելու են Դաշնակցութեան բոլոր Մարմինները իրանց ուժերը սպառելու եւ բաւականութիւն տալու,

Ուստի, ըստ այնմ որոշուեց կազմել բիւտժէթը՝ որը կայացաւ հետեւեալ կերպով. (միայն թուանշանների կազմութեան պարագայում 1ի դէմ 6 ձայնով, իսկ սկզբունքով բիւտժէթ կազմելու վերաբերութեամբ միաձայնութեամբ, կամ որ նոյնն է՝ 7 ձայնով:)

ԲԻՒՏԺԷԹ

Բարձրաւանդակի կեդրոնացման համար ներմուծել առնուազն 1500 հրացան, որոնց մինչեւ կեդրոնացման վայրը հասցնելու համար լինելիք փոխադրութեան եւ

այլ զանազան ծախքերը ու մասնակի կորուստները հաշուելով, կեդրոնացման վայրում մէն մի հրացանի արժէքը մօտաւորապէս 70 բուրլի ենթադրելով՝

1500×70= 105·000 ր.

Նոյն քանակութեամբ հրացանների համար գոնէ մէկ միլիոն (1·000·000) փամփուշտ ներմուծել անհրաժեշտ նկատելով, եւ որոնց փոխադրութեան եւ այլ ծախքերը հրացանների վերաբերմամբ ընդունուած որակի եւ քանակի համեմատութեամբ հաշուելով, կեդրոնացման վայրում ամէն մէկ 100 փամփուշտի արժէքը մօտաւորապէս ենթադրուեց 10 բուրլի, որով՝

10·000×10= 100·000 ր.

Բացի հրացանից եւ փամփուշտից, զանազան կարգի եւ տեսակի անհրաժեշտ ուղամթերքների եւ ծախքերի համար՝

25·000 ր.

Ձինակիցների եւ մարտախմբերի պաշարի համար՝

70·000 ր.

300·000 ր.

Լեռնավայրի կեդրոնացումի համար նոյն հաշուով՝

300·000 ր.

Շամիրի կիսակեդրոնացման համար՝

50·000 ր.

Կոռածաղիկի կեդրոնացման համար(10) 50·000 ր.

Երկրում կազմուելիք թուղցիկ հրոսարմերի եւ առհասարակ ամէն կողմ կազմուելիք մարզական խմբերի կազմութեան նպաստելու համար՝

150·000 ր.

Կազմակերպութեան Մարմինների, գործուն անդամների, խմբագրութեան, զանազան հրատարակութիւնների եւն. ծախսերի համար՝

100·000 ր.

Աննախատեսելի բացառիկ ծախքերի համար 50·000 ր.

1·000·000 ր.

Որովհետեւ ծախքերի այս նախագծից Կոռածաղիկի ու Լեռնավայրի բաժինները պատկանում են Արեւմտեան Բիւրոյի շրջանին, որոշուեց նոյն շրջանի նախադիժը ենթարկել նոյն Բիւրոյի հայեցողութեանը, որ եթէ փոփոխութիւն մտցնի, այդ փոփոխութիւնը առանձինն հաղորդէ Արեւել. Բիւրոյի Կեդ. Կոմիտէներին:

Սոյն նախագիծը Արեւմտ. Բիւրոյին ներկայացնելով հանդերձ, որոշուեց բանակցութեամբ մօտաւորապէս ճշդել ու իմանալ, թէ Արեւմտ. Բիւրոն ի՞նչ չափով պիտի կարողանայ մասնակցել իրա շրջանի կամ Դաշնակցութեան ընդհանուր ծախուց մօտաւորապէս ենթադրեալ նուազագոյն քանակին:

Այնուամենայնիւ անցեալի փորձառութեան վրայ Հիմնուելով ընդունուեց, թէ մարզական ու թուղցիկ խմբերի համար նախադրուած ծախքերից՝

100·000 ր.

Կազմակերպման ծախքերից՝ 50·000 ր.

Չնախատեսուած ծախքերից՝ 25·000 ր.

175·000 ր.

Արեւմտեան Բիւրոյի շրջանի կեդրոնացումի ծախքերից՝

175·000 ր.

350·000 ր.

վիճակուելու եւ ծանրանալու է Արեւել. Բիւրոյի շրջանների վերայ. սոյն գումարի վերայ աւելացնելով Արեւելեան Բիւրոյի երկու կեդրոնացման յատուկ ծախքերը

350·000 ր.

Գումար 700·000 ր.

Հետեւաբար եօթ հարիւր հազար բուրլի Արեւելեան Բիւրոյի շրջանները ստիպուած լինելու են հայթայթելու:

Ուստի սոյն ընդհանուր գումարը միաձայնութեամբ յարմար դատուեց հետեւեալ կերպով բաշխել Բիւրոյի շրջաններին. —

Սարուստանի կեդրոնական շրջանին (Մեծ Քաղաք) 50·000 ր.

Նաւահանգստի > > 50·000 ր.

Ոսկանապատի > > 350·000 ր.

Հիւսիսային Սարբրի > > 100·000 ր.

(Շ) Ապառաժ > > 30·000 ր.

(Ե) Մրգաստան > > 30·000 ր.

Ջրաբերդիկի > > 20·000 ր.

Վրէժստանի > > (11) 20·000 ր.

Եկեղեցիի > > 50·000 ր.

Գումար 700·000 ր.

Որի համաձայն որոշուեց յանձնարարել եւ խնդրել պատկանեալ շրջաններից, որ առաջարկուած յայտնի միջոցներով ամէն ջանք գործ դնեն իրանց մասը հայթայթելու համար:

Սոյն շրջաններից դուրս, մնացած Ամերիկայի, Եւրոպայի, Եգիպտոսի, Բուլղարիայի եւ Արեւմտեան Տաճկաստանի շրջանների բաշխումը կատարելու համար բնականաբար որոշուեց դիմել Արեւմտեան Բիւրոյին:

5. Որովհետեւ մեզանում հայ ժողովուրդի զա-

նազան խաւերի մէջ առհասարակ տիրած ստոնութիւնը կամ ոչակցիան ծնունդ չէ միայն Կազմակերպութեան զանազան աստիճանի Մարմինների թոյլ լինելուց, այլ բնական հետեւանքն է ձախողութիւնների եւ քաղաքական պայմանների՝ որոնք իրանց ազդեցութիւնը ունեցած են նոյնիսկ սիրողներից բաղկացած կազմակերպութեան մի քանի մարմինների վերայ, մինչդեռ այդպիսի ձախողութիւններ ու քաղաքական պայմաններ առաջ են եկել բոլոր ազգերի յաղափոխական կեանքի ու պատմութեան մէջ, որոնք ո՛չ երկարատեւ կարող են լինել՝ եւ ոչ էլ հաւատի կորստեան ու գոյութեան կոուէն հրաժարուելու պատճառ,

ա. Որոշուեց յանձնարարել եւ շեշտել կազմակերպութեան Արեւելեան Բիւրոյի շրջանի բոլոր Մարմիններին, որ սխտեմաբար իրագործեն փրփականտի բոլոր կարելի միջոցները՝ որոնք կազմակերպութեան Հիմնական ծրագրով բնորոշուած են ու ծաղում են տեղական պայմաններից:

բ. Որոշուեց յանձնարարել ու շեշտել այն անյետաձգելի պարտաւորութեան իրագործումի մասին, որով ընդհանուր ժողովը պարտաւորեցրել է Դաշնակցութեան բոլոր Մարմիններին՝ մարզական խմբեր կազմելու եւ ընդհանրացնելու համար:

գ. Աչքի առաջ ունենալով որ հայ-բուրժուազիական դասակարգի մէջ տարաբախտաբար գտնուած է դեռ եւս՝ նիւթապէս ուժեղ մի փոքրամասնութիւն՝ որը ո՛չ միայն ո՛ւրից է կերպով գործնականապէս չէ յայտնած իրա համակրութիւնը կամ օգնութիւնը հայկական յեղափոխական գործին՝ այլ եւ պատրուակներով անարգելու իսկ յանդգնութիւնը ցոյց է տալիս,

Աչքի առաջ ունենալով որ կեդրոնացման երկու վայրերի՝ Բարձրաւանդակի եւ Լեռնավայրի մէջ սով է տիրում,

Աչքի առաջ ունենալով որ այդ սովատանջ վայրերի ժողովրդին ո՛րեւէ կերպով նպաստ հասցնելը ո՛չ միայն կը նպաստէ յեղափոխական գործին՝ այլ եւ ընդհանուր հայկական ինքնաճանաչութեան միտքը մշակելով կ'ազդէ զգացումների վերայ,

Եւ ենթադրելով որ բուրժուազիայի այդ դասակարգը՝ որքան էլ անհամակիր ու աննպաստ լինի յեղափոխութեան, թերեւս չկարենայ զուտ բարեգործական՝ ինչպիսին է սովեալին հաց տալ, դիմումներին անհետեւանք թողուլ,

Աչքի առաջ ունենալով միեւնոյն ժամանակ, որ Դաշնակցութեան Մարմինները չեն կարող ոչ ուղղակի բարեգործական գործի ձեռնարկել եւ ոչ էլ զուտ բարեգործական անունով կամ այլ պատրուակով յեղափոխութեան նպաստի դիմումներ անել, բայց եւ այնպէս Մարմինների մէջ կը գտնուին անհատներ՝ որոնք անձնական կապերի եւ յարաբերութիւնների շնորհիւ

կը կարողանան գտնել միջնորդներ, որոնց թելադրելու ինիցիատիվը(12) կ'ունենան ակնարկուած բուրժուազիական տարրի մէջ սովեալների համար ժողովարարութիւն կատարելու,

Որոշուեց յանձնարարել Արեւել. Բիւրոյի շրջանի բոլոր Մարմիններին, որ իրանց անդամներից վերոյիշեալ յատկութիւնը եւ յարմարութիւնը ունեցողներ անձնապէս հետամուտ լինին այդ ինիցիատիվը իրագործելու:

Գ. Որովհետեւ Դաշնակցութիւնը կեդրոնացման վայրերում եւ ի մասնաւորի Բարձրաւանդակում եւ Լեռնավայրում իրա զինակիցներին եւ մարտախմբերին ոչ միայն ռազմական մթերք՝ այլ եւ երկրի տնտեսական պայմաններից ստիպուած, նրանց պաշարն էլ մատակարարելու, հայթայթելու կամ նպաստելու պարտաւորութիւնն է վերցրած, որը կրկնապատկում է Դաշնակցութեան նիւթական միջոցների սպառումը, եւ որի մասին, հաւանականաբար, միջին ու բուրժուազիական դասակարգերը անտեղեակ են, եւ որոնք թերեւս աւելի համակիր վերաբերուէին Դաշնակցութեան՝ եթէ տեղեկանային գործունէութեան ու նիւթական զոհողութեան այս եղանակի հետ,

Որոշուեց յանձնարարել շրջանի բոլոր Մարմիններին, որ ժողովարարութեան միջոցին պէտք է տեսնուած դասակարգերի եւ անհատների պարզաբանեն Դաշնակցութեան գործունէութեան այս կարգի մանրամասնութիւնն ւ:

Ե. Ինչպէս տեսնուեց իրա կարգին, Դաշնակցութեան եւ յեղափոխական գործի բուն Երկրի մէջ ստացած ծաւալի եւ նպատակի յաջողութեան պահանջի համեմատութեամբ՝ Ընդհանուր Ժողովի ծրագրած կեդրոնացումները ամենանուազագոյն միմիմումի չափով հնգապատիկ աւելի նիւթական միջոցների են կարօտ քան Դաշնակցութեան ամենայնող տարիների մուտքի գումարը,

Եւ աչքի առաջ ունենալով որ կեդրոնացումների գլուխ բերելը որքան էլ ժամանակի կամ տարիների գործ համարուի, քաղաքական պայմաններ կարող են մեզ ստիպել փութացնելու եւ ամենասուղ ժամանակի մէջ իրագործելու,

Աչքի առաջ ունենալով որ նոյնիսկ առանց ժամանակի պայմանի, կեդրոնացումների յաջողութիւնը կախուած է կանխաւ կատարուելիք անյետաձգելի նախապատրաստութիւններից ու նիւթական կարեւոր գումարների սպառումներից,

Աչքի առաջ ունենալով որ այդ նիւթական կարեւոր միջոցների հայթայթումը թերեւս չյաջողուի առաջադրուած խաղաղ միջոցներով,

Դիտաւորաբար Զրաբերդի շրջանի ներկայացուցչի կողմից առաջարկ տրուեց սուր միջոցների դիմել:

Բայց, որովհետեւ մեծամասնութիւնը չէր կարո-

ղանում խղճի հանդարտութեամբ, հաստատել թէ բոլոր հնարաւոր խաղաղ միջոցները իրագործուել եւ անյաջող սպառուել են,

Որովհետեւ սուր միջոցի՝ այսինքն տեռարի գործադրութիւնը վերապահուել է Ընդհանուր Ժողովի կողմից ամենածայրայեղ եւ յուսահատական դէպքում,

Որոշուեց չորսից մինչեւ վեց ամիս անպայման աշխատել ծանուցեալ խաղաղ միջոցների իրագործումին, եւ նոյն ժամանակամիջոցում եթէ Դաշնակցութեան նիւթական միջոցները ցանկացուած ծաւալն ու յաջողութիւնը չեն ստացել, այն ատեն միայն Բիւրոյի շրջանական երկրորդ ժողովը գումարելով կատարել գործունէութեան հաշտուետուութիւնը եւ արդիւնքի համաձայն վճռել յանձնարարել կոմիտէներին Ընդհանուր Ժողովի արտոնած ծայրայեղ միջոցը իրագործելու, ուր որ անհրաժեշտ է համարուում (Յի դէմ 2 ձայն):

Ը. Որովհետեւ լրագիրներում հրատարակուած պաշտօնական յայտարարութիւնից յայտնուեց, որ պետութիւնների սպառազինման սահմանափակումի մասին գումարուելիք կոնֆէրէնցիայում(13) միջազգային հարցեր քննութեան առարկայ լինելու չեն եւ հետեւաբար Տաճկահայաստանի դատի վերաբերմամբ Դաշնակցութեան կողմից եթէ նոյն կոնֆէրէնցիային մի յիշատակագիր մատուցուի քննութեան չի ենթարկուի, եւ մանաւանդ մեր պաշտպանած դատի վերաբերմամբ, առանց քաղաքական որոշ մոմենտների ստիպման, յիշատակադրով տրուելիք պահանջը անուշադիր թողուելու հանգամանքում անհրաժեշտ է բողոքի եւ պահանջի ժողովրդական արտայայտութիւն՝ որը միայն ապրտամբական շարժումով ու շարժումի ծաւալով եւ չափով կը բնորոշուի, որի նախապատրաստութիւնները դեռ նոր են սկսուած,

Առ այժմ անպատշաճ համարուեց Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմին(14) առաջարկել որ պետութիւններին մի այդպիսի յիշատակագիր ներկայացնէ:

Բայց առիթը ներկայացուած ժամանակ անպատրաստ չլինելու, Երկրի եւ ժողովրդի իսկական վիճակէն բխած Դաշնակցութեան լուրջ եւ բանաւոր պահանջները միանգամ ընդմիջտ որոշ կերպով դիւանագիտութեան ուշադրութեանը եւ գնահատմանը արժանացնել կարենալու համար, անհրաժեշտ համարուեց Երկրի քաղաքական, օրէնսդրական, վարչական, տրնտեսական եւ այլ գրութիւնների վերաբերմամբ մի ամփոփ ու բազմակողմանի ուսումնասիրութիւն կատարել:

Իսկ այդ ուսումնասիրութիւնը կատարելու համար որոշուեց խնդրել Արեւմտեան Բիւրոյի Խմբագրութեան (Մարմին) որ նախաձեռնարկ լինի եւ իրազեկ ու ձեռնհաս ընկերների օժանդակութեամբ հնարաւոր սուղ ժամանակամիջոցում առաջադրուած ու-

սումնասիրութիւնը կատարելուց եւ ըստ այնմ Հայկական Դատի պահանջները կազմելուց յետոյ ենթարկի Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմին:

7. Զրաբերդի սահմանից մի քանի փոխադրական կարեւոր ծառայութիւններ մատուցած դաշնակցական ընկերներից Դիմաքսին 1898 թուականի առաջին կիսեակի վերջերում Զրաբերդի Կեդրոն. Կոմիտէի կողմից՝ հաւանութեամբ Բիւրոյի, փոխադրութեան կարեւոր գործ յանձնուել ու այդ գործի նախապատրաստական ծախուց համար իրա պահանջի համաձայն (500) բուրլի կանխավճար իրան է վճարուել: Եւ սակայն Դիմաքսը փողը ստանալուց յետոյ հեռացել եւ ամբողջ վեց ամիս անյայտացած կերպով բոլորովին անտեղեակ է թողել կազմակերպութիւնը իրա ո՛ւր լինելու եւ ի՛նչ արած լինելու մասին, մինչդեռ այդ ժամանակամիջոցում մի ժամանակ Մեծ Քաղաքում էլ եղել եւ սակայն թաքնուած է մնացել. որով Զրաբերդի Կոմիտէն եւ Բիւրոն ստիպուած հետախուզել եւ գտնել տալով Մեծ Քաղաք են բերել տուել՝ նրա ընթացքը քննելու եւ մի որոշում կայացնելու համար, բայց նա՝ նախ քան քննութիւն եւ կարողադրութիւն, վերստին խոյս տալով անյայտացել է:

Բիւրոն՝ համաձայն ցանկութեան Զրաբերդի Կեդ. Կոմիտէի, այս հարցով զբաղուելու ստիպուելով պատշաճ էր դատել Ժողովի հայեցողութեան ենթարկել:

Որովհետեւ նրա Բիւրոյի անդամներից երկուսին անհատապէս տուած բացատրութիւնները եւ վերջին անգամ Մեծ Քաղաքից անյայտանալուց յետոյ՝ իբրեւ արդէն Երկիր անցնելու համար ճանապարհ ընկած, պատ ի պատ իմաստներով գրած երկու նամակները որոշ համոզում գոյացրին, թէ նա հետամտել է խաբելով կազմակերպութիւնը, օգտուել իրեն տրուած գումարից, չարաչար է գործածել իրա վրայ դրուած վրտահաւութիւնը ու չէ կատարել ստանձնած պարտականութիւնը,

Որոշուեց դատաստանի ենթարկել նրան ու իրա եղբորը, ծանօթների միջոցով իրան վերաբերութիւն ունեցող Կոմիտէներին տեղեկացնել, որ նա արդէն ուսած է այժմէն կազմակերպութեան ծառայութիւն մատուցանելուց, որ նա դատաստանի է ենթարկուած եւ պարտաւոր է ներկայանալ Զրաբերդի Կեդ. Կոմիտէին՝ որը դատելու է նրան Բիւրոյի ներկայացուցչի մասնակցութեամբ:

Որոշուեց որ եթէ մինչեւ երկու ամիս նա չպատասխանէ այս հրաւերին ու չներկայանայ դատուելու եւ ինքզինք պաշտպանելու կամ արդարացնելու, սոյն ժամանակամիջոցը օրկանի մէջ հրատարակութեան թուականից սկսած լրանալուց անմիջապէս յետոյ նրան համարել մահուան պատժի դատապարտուած:

Ուստի եւ այդ պայմանաժամը լրանալուց անմիջապէս յետոյ օրկանի միջոցով եւ այլ պատշաճ միջոցներով խնդրել կազմակերպութեան բոլոր մարմիններէց, որ ո՛ւր որ նրան գտնեն, իրագործեն սոյն մահուան պատիժը:

ՆԻՒԹՐԱ ԼԱՎՎԱՐ ՄԵԼԻՔ ՄՄԲ. ՕՉ. ՍՈՒՐԷՆ ՄԱՍՏ. Բազրատուելի յանձնարարութեամբ, նրա փոխանորդաբար՝ ՄԱՍՏ(15)

- (1) Թուսաստան (Արեւելեան Բիւրոյի Ենթակայ Կ. Կոմիտէ-ճերու շրջան):
- (2) Զրաբերդ, Զրաբերդի կամ Բերդիկ, — Կարս: Ոսկանապատ, — Պաք: Մովսիս, — Տրապիզոն:
- (3) Հաւանօրէն Տիգրան Թագուսեանն է, 2րդ. Ընդ. Ժողովին անդամ ընտրուած Արեւելեան Բիւրոյին:
- (4) Ամենայն հաւանականութեամբ՝ Յ. Ալեքիզօզեանը (տեսնել էջ 54):
- (5) Սպարտակ վան:
- (6) Սասուն:
- (7) Վարդանը (Խանաթի) ու Սեւաթի Մաքան, Ալիբեյ-Սեբեթի եւ Գուրգէնի (Պ. Մայրան) հետ, ընտրուած էին անգամ Բարձրաւանդակի Պատ. Մարմին:
- (8) Քեռի, — ամենայն հաւանականութեամբ՝ Տերոսի Քեռին (Թուրքի Շիշմանեան): Գիսակ, — Վարդգէս Սերեմիկեան, որ շուտով պիտի դառնար վասպուրականի գլխաւոր ղեկավարը: Լեւոն Կ. մեզի համար կը մնայ անորոշ:
- (9) Վրէժտան կամ Վրէժ, — Ասրպատական (Թարիք): Հիւս. Սարեբ, — հաւանօրէն՝ Փեթրոսպուրի: Եկեղեցի, — Մուկուտ:
- (10) Լեւոնավայր, — Կիլիկիա: Շամիր կամ Շամիրտ, — վան: Կառնաթիկ, — Պալիս:
- (11) Մեծ Քաղաք, — Փիֆլիս: Նաւահանգիստ, — Պաքուտ: Ապառաժ, — Շուշի: Մրգաստան, — Երեւան (այս երկու կեդրաններու անուան սկզբնատառերը գրուած են փակագծերու մէջ, կուտակցական տեղանուններն առաջ):
- (12) Նախաձեռնութիւնը:
- (13) Խորհրդաժողով:
- (14) Ընդ. Ժողովի բացակայութեան՝ Դաշնակցութիւնը (իր ամբողջութեան մէջ) ներկայացնող մարմին՝ ստեղծուած 2րդ. Ընդ. Ժողովի որոշումով (տեսնել էջ 64) եւ կազմուած երկու Բիւրոյներու եւ չորս Պատ. Կ. Կոմիտէներու ներկայացուցչներով:
- (15) Ստորագրողներէն՝ Մթ. Օհ. (Սմբատ Օհանեան) Միւսն Ջաւահանն է, Նիքոն՝ Յրթ. Շաբիկեանը, Լալվարը, ամենայն հաւանականութեամբ, Աւետի Մահակեանը (Հայր Արքեպոս), Մեյիբը՝ արգիօ՛՛ք Յովհ. Սուտուֆեանը: Ըստ երևոյթի՝ Բազրատուելին ժողովէն բացակայող անդամն է՝ հաւանօրէն Տիգրան Թագուսեանը: Արգիօ՛՛ք Արշակ Թագուսեանն է Մարտը՝ որ կը ստորագրէ Ի՛ւ իբ, եւ, փոխանորդաբար, Բազրատուելին անուանով: Սուրէնը եւս կը մնայ, գործախտաբար, անձամբ:

2ա. — ԱՐԱՄ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ (ԿԱՐԷՆ) ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ Ս. ՎՐԱՑԵԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

Յաւելուածն է Յամակի մը: Գրուած է սեւ մելամազ, Յամակի 11x23 սմ. բուրձի վրայ, մտք տաւերով, 10 էջ:

1.) Իմ մասնակցած «Պորհուրդ»ը Վառնայի մէջ տեղի չէ ունեցել, այլ Ֆիլիպէում, եւ կրում էր «Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմին» տիտղոսը: 1898ին Քիֆլիզում կայացած Ընդհ. ժողովը որոշել էր, Ընդհ. ժողովի ուշանալու դէպքում կամ որեւէ նոր որոշում առնելու կարիք զգացուած պարագայում, Բիւրոնների եւ Երկրի Պատասխանատու Մարմինների ներկայացուցիչներից կազմել մի Պորհուրդժողով, որը վերոյիշեալ տիտղոսը կրելու էր եւ թեքնիք գործերի մէջ փոխարինելու էր Ընդհ. ժողովը: (Յաջորդ Ընդհ. ժողովներում Պորհուրդ անունը կրեց. Պորհուրդի Իրաւասութեան սահմանները աւելի յստակ կերպով դրոշմեցին կանոնադրի մէջ:)

Ահա այդ Մարմինն էր, որ գումարուեց 1900ին Ֆիլիպէում(1): Մասնակցում էին Արեւմտեան Բիւրոյի կողմից Քրիստափորը, Արեւել. Բիւրոյի կողմից Յ. Շահրիկեանը, Լեոնավայրի Պատ. Կ. Կ.ից Հայկ Քիրեաքեանը (Հրաչ) եւ Պետո Սէրէմճեանը, Պոլսոյ Պատ. Կ. Կ.ի կողմից Ռոստոմը, Աշոտը (Սեւ Աշոտ՝ Կարապետ Նիկիեան) եւ ես: Բացակայ էին Շամիրի (Վանի) եւ Բարձրաւանդակի (Սասուն—Մուշ) Պատասխ. Կ. Կ.ների ներկայացուցիչները:

Օրակարգի գլխաւոր առարկան դրամական հարցն էր եւ Պոլսի կազմակերպութեան (Պատկեր ձեւերակառուել էր) ու ցոյցի տեսակը որոշելու խնդիրները:

ա. — Դրամակաւ իտարը.

Դաշնակցութիւնը գտնուում էր սոսկալի դրամական կացութեան մէջ: Մեծ առաջադրութիւններ՝ արտասահմանեան պրոպագանդ (Pro Armenia), Երկրի կեդրոնացած վայրերի միաժամանակ ապստամբութիւն, Պոլսում ուժեղ ցոյց, իսկ սնտուկում՝ դատարկութիւն: Փողի չզոյուութեան պատճառաւ ամէն ձեռնարկ անդամալուծուում էր եւ ընկերների անձնագրուութիւնը բաւական չէր կուսակցական մեքենան շարժելու: Մի քանի կարեւոր ընկերներ դուրսը մնացել էին փող չլինելու պատճառաւ, իսկ Երկրի մտնողները հենց սկզբից վտանգուում էին նոյն պատճառաւ:

Դեռ 1898ի Ընդհ. ժողովում մի քանի պատգամաւորներ (գլխաւորաբար տաճկահայեր) բռնի հանգանակութեան հարցը դրինք, բայց մեծամասնութիւն չլահեց. բուն կերպով դէմ արտայայտուեցին Բազուն, Շուշին եւ Քիֆլիզը: Բայց Ընդհ. ժողովից յե-

տոյ պատգամաւորները չպիտի կարողանային իրենց վայրը վերադառնալ, եթէ մեր (Բաթում—Նաւահանդիստ) Հիւսիս. Կովկասում կէս բռնի հաւաքած փողը չլինէր. իսկ երբ գործիչները մտան Երկիր կամ պատրաստուում էին մտնել, դրամական տագնապը իր դաժնակէտին հասաւ. անել կացութիւն էր ստեղծուել. (կուսակցութեան տարեկան պիւտճէն 40,000 բուրլին չէր անցնում):

Ես այն ժամանակ փախտական էի Քիֆլիզ—Բաթումից, եւ գտնուում էի Ռոստով—Եկատերինոստար շրջանը: Իմ եւ Աշոտի (որ Պոլսից դուրս եկել եւ միացել էր ինձ) նախաձեռնութեամբ, Նաւահանդիստ եւ Աւազանի (Բաթում եւ Օտեսա, այս վերջինն մէջ մտնում էր նաեւ Ղրիմի թերակղզին) շրջանների միացեալ շրջանային ժողով գումարեցինք Նովորոսիսկում 1899ի աշնան, որի մէջ կտրուկ որոշում տրուեց սկսել բռնի հանգանակութեան, եւ այս որոշումը հաղորդուեց Արեւել. Բիւրոյին՝ կէս վերջնագրի ձեւով: (Այդ շրջ. ժողովին Սիմֆերոպոլից մասնակցում էր յայտնի Միքայիլը, որի վրայ վստահութիւն չունենալով, այնպէս արինք որ նա չտեղեկացաւ այս որոշման, նրանից դաղանի ժողովներ գումարելով. բայց դժբախտաբար յետագայում նրան «Փոթորիկ»ի մէջ առին եւ չփացաւ ու դարձաւ Միհրանական շարժման պետը):

Արեւել. Բիւրոն իր կողմից բանակցեց Արեւմտ. Բիւրոյի հետ եւ որոշուեց 1899ի Դեկտ. 25ին(2) «Դաշն. Կամքը Ներկ. Մարմին» ժողով գումարել Ֆիլիպէում, ուր արդէն գտնուում էր Ռոստոմը եւ բաց արած էր մասնաւոր դպրոց՝ իր տիկնոջ հետ:

Ես ու Աշոտն ճիշդ ժամանակին եկանք, բայց ո՛չ Արեւելեան եւ ո՛չ էլ Արեւմտեան Բիւրոյից ներկայացուցիչ կար. Հրաչն էլ բացակայ էր. խոստանում էին դալ, բայց ձգձգում էին: 2 ամիս սպասեցինք Ֆիլիպէում: Աշոտը պարապ չկենալու համար, Պալք. Կ.Կ.ի հրահանգով, աւելի ճիշդը Ռոստովի՝ ձեռնարկեց բռնի հանգանակութեան: Յուսահատած, Վառնայի գծով մեկնում էինք Կովկաս, երբ Վառնայում ստացանք Ռոստովի հեռագիրը, որ չմեկնինք, սպասենք, ժողովը կայանալու է: Վերջապէս Մարտին տեղի ունեցաւ ժողովը եւ որոշեց Կովկասում եւ Ռուսաստանում սկսել բռնի հանգանակութիւնը «Փոթորիկ» մարմնի կազմութեամբ, որին մէջ մտան Քրիստափոր, Ռոստով, Աշոտ, ես եւ մէկ էլ Արեւել. Բիւրոյի նշանակելիք մէկ ընկերը. (Յ. Շահրիկեան Լոզան գնաց բժշկուելու. երբ լաւանալով վերադարձաւ, շատ ուշ մտաւ «Փոթորիկ»ի մէջ):

Գուցէ անհետաքրքիր չէ այստեղ տալ մի մանրամասնութիւն, որը չեմ կարծում ունէ մէկին ծանօթ լինի:

Քրիստափորը հակառակ էր «Փոթորիկ»ին, բայց անել էր կացութիւնը, ուրիշ ելք չկար, գլուխ ծոնց իրականութեան առջեւ (միաձայն էր որոշումը). ար-

դէն ոչ ոք ախորժակով նման առաջարկ չէր բերած. բայց իբրեւ ջոճ պրոֆիտ, առաջարկեց (այդ առաջարկը արձանագրութեան մէջ չմտաւ) որ նախքան «Փոթորիկ»ի գործի ձեռնարկելը «խաղաղ» միջոցներով ձեռք բերել որեւէ կարեւոր գումար եւ այդ պարագայում ձեռնարկել «Փոթորիկ»ին: Բոլորս էլ համաձայնուեցինք:

Իր «խաղաղ» միջոցը այն էր որ Մանթաշեւի որդիներից մին (էն ժամանակ նրանք Եւրոպա գտնուում էին Փիլիպպոս Վարդանեանի հսկողութեան տակ եւ մօտ էին մեր ուսանողների հետ) կամաւոր առեւտր-գումարի ենթարկուի եւ տարուի Իտալիա, ուրկից փրկադինի պահանջ դրուի հօրը (փրկագնից բաժին պիտի հանուէր եւ առեւտրագումարի. որովհետեւ շատ քիչ փող ստանում էին ծախսի համար եւ այդ պարագան յոյս տալիս էր որ պիտի համաձայնուէր): «Փրկագին»ի պահանջը Դաշնակցութեան անունից չպիտի լինէր, այլ իբր մի մասնաւոր կազմակերպութեան կողմից. առեւտրագումարի փախցնողը ? ես պէտք է լինէի: Քրիստափոր մեկնեցաւ ժընեւ. նախապէս հետը պայմանաւորուեցանք թէ Մանթաշեւի տղի համաձայն լինելու կամ չլինելու պարագային ի՞նչ պիտի հեռագրէ ինձ Պուրկազ. ես Պետոյին հետ մեկնեցայ Պուրկազ, այնտեղ զէնքի զեղծումի մի գործ կար, միասին կարգադրելու եւ սպասելու Քրիստափորի հեռագրին, ժընեւ կամ Կովկաս մեկնելու համար: Պուրկազում ստացայ Քրիստափորի հեռագիրը բացասական մտքով եւ մեկնեցի Օտեսայի գծով Կովկաս:

Երկրորդ կէս «խաղաղ» միջոցն էր Պետոյի մակեդոնացիների հետ Թուրքիոյ մէջ բռնի դրամ ձեռք բերելը առեւանգումի միջոցաւ (եւրոպացու կամ մեծ պաշտօնատարի, կալուածատէրի եւն.): Մակեդոնացիները նման յաջող փորձ մը ըրած էին, բայց դժբախտաբար Պետոյի մասնակցութեամբ եղածը անյաջող անցաւ եւ վերջացաւ կախաղանով. (Պետոյի հետ էին Քաթուլ, Օննիկ — ռոտոսթոյններ — եւ Պաշիկ Աւանեան — տրապիզոնցի —, Քահրի փաշայի տեղորոշումներից մին, որ Սիմֆերոպոլից — Կովկասի փախել էին Ղրիմ — իմ միջամտութեամբ եկաւ Բուլղարիա, յատկապէս Պետոյի արշաւախումբին մասնակցելու համար, որովհետեւ «անդործութիւն»ից մեղմում էին» երկու ահաբեկիչները):

Քրիստափորը ուրիշ «խաղաղ» միջոցների էլ դիմեց կուսակցական եկամուտը աւելացնելու համար, բայց չյաջողեց (տեսնել ծանօթութիւն) եւ հարկադրուեց գալ Բագու եւ «Փոթորիկ»ին սկսել:

բ. — Պոլսի կազմակերպութիւնը եւ ցոյցի ձեւը.

Այս հարցը քննելիս պարզուեց, որ մասսայական ձեռնարկ անկարելի է, ուստի որոշուեց խոշոր մահափորձ կատարել, Սուլթան Համիտը ահաբեկումի են-

թարկել, բայց որովհետեւ առնուազն 50,000 բուրլի ենթադրուում էր դաւադրութեան ծախքը, ուստի գործադրութիւնը կապուեց դրամակաւ գործին:

Այս ժողովի արձանագրութիւնը պէտք է որ լինի ժընեւի արխիւում, որքան յիշում եմ ստորագրուեց եւ զրկուեց ժընեւ: Դաշնակցութեան 10ամեակը Ֆիլիպէում տօնեցինք. Քրիստափորը ճառ խօսեց, «Կեանք կայ որ մահ է, մահ կայ որ կեանք է» բնարանով:

2. Այդ ատեն Բալկանում գտնուում էին Վարդոն (Վառնա), Վահան Մանուէլեան, Կարապետ Պրոնեան, Անտոն Գօշ, Երզնկացի Մուրադ (զանձապահ) եւ Ռոստոմը (Ֆիլիպէ). Սլիվէնում Պաշիկ աղա Քօհաֆճեանը, Վառնայում՝ Յակոբ Աղամեան, Վահան Մազմանեան (այս վերջինները աչքի չէին զարնում). Ռուսոնուքում՝ Յարութիւն Փափազեան: Բայց ներգործական դեր կատարում էր Ռոստոմը: Միւսները նրա առջեւ խաւարում էին: Գործունէութեան գլխաւոր առարկան կազմակերպութեան տարածումը եւ նոր ընկերներ ձեռք բերելն էր, մի քիչ էլ դրամական գործը. 1896ի Բանկ Օթոմանի ցոյցից առաջ հրացաններ դնուած են, կարծեմ Հրաչի ձեռքով, բայց չեն զրկուած Պոլիս եւ Պուրկազի մէջ անտէր մնալով չարաշահութեան ենթարկուել են (չարաշահներից մէկը յետոյ սպանուեց):

Իմ տպաւորութիւնս այն էր, որ Բուլղարիայում կազմակերպութիւնը շատ թոյլ էր:

3. Պոլսի հետ կապը կը պահուէր փոստի միջոցաւ: Այդ գործում, եւ առհասարակ Պոլսի կազմակերպական գործերում մըլիւնային աշխատանք եւ շատ կարեւոր դեր խաղացել էր պոլսեցի օր. Գայիանէ Մամիկոնեան (Մոսկուայի Ստեփան Մամիկոնեանի ցեղակից). նա անձնութեամբ օգնում էր դրոյից դնացող գործիչներին եւ երբ վտանգուում էին, դրսի հետ կապը նա էր պահում:

4. Մասնաւոր դեր չունէր Բալկանը երկրի նկատմամբ. որպէս մերձաւոր վայր, կայանի դեր կատարում էր Պոլիս մտնող ելլողների համար:

5. Վարդը, Վարդոն եւ Իսահակ Արվաճի նոյնն են(3): Վարդոն 1898ին Բուլղարիայի կողմից պատգամաւոր եկած էր Ընդհ. ժողովին: Մեր Բուլղարիա գտնուած ժամանակ Վարդոն հրատարակում էր «Շարժում»ը. Վառնայում դիրքը լաւ էր եւ օգնում էր կուսակցական ձեռնարկներին: Օրինակ՝ Աշոտը հանգանակութեան ձեռնարկած էր. Վառնայի մէջ հակառակորդները մեծ աղմուկ բարձրացուցին, փրովոքասիոններ սարքեցին մեղի դէմ (ինձ ալ մէջ խառնեցին, Աշոտի հետ միասին կապրէինք), մինչեւ նախարարապետ Քարախլովին հեռագիրներ տուին, պաշտպանութիւն խնդրելով Հայկ. Կոմիտէի 2 տեղորոշում անդամների դէմ: Հարկ եղաւ հակահոսանք յառաջ բերել եւ այդ առթիւ Վարդոն իր ջանքերով բերաւ անվերապահ հօրէն: Վարդոյի գործունէութեան մասին աւելի լաւ գիտէ Մազմանեանը, թէեւ նա է որ կազմակերպեց է

մահապատժի գործադրութիւնը: Մեր ժամանակ արդէն հաշիւների համար խօսում էին, բայց անխղճութիւն կը լինէր այդ հաշիւների համար նրան մահուամբ պատժել:— Նա իր ուսերին տարած էր կուսակցական մամուլի գոյութիւնը, պայքարած էր հակաուկորդներին դէմ — նա իրրեւ կրթոտ եւ ինքնասէր մարդ, հաւասարակշռութիւնը կորսնցուց եւ դարձաւ հակակուսակցական, դրա համար էլ խփուեց:

6. Ռոստոմը, բացի կազմակերպական ընդհանուր գործից, Բալկանում աշխատեցաւ կազմակերպութիւնը սիրցնել տալ ժողովուրդի բոլոր խաւերին. սերտ յարաբերութիւններ մշակեց մակեդոնացիներու հետ, անոնց հետ պայմանաւորուելով զինավարժութեան կայաններ հաստատեց (յետագայում դպրոցի փոխուեց): Մակեդոնացիներու հետ համաձայնելով բռնի հանգանակութիւն կատարել տուեց, «Փոթորիկ»-ից առաջ: Նեւրոլ-թաթուլ ծանր մեղադրանքներով դատի տակ էին (դրսեցիի-նրսեցիի կռիւներու հետեւանքով). անոնց պաշտպանութիւնը կազմակերպեց եւ աշխատեց նոր ուժեր քաշել կազմակերպութեան մէջ: Մի խօսքով՝ գաղութային գործունէութիւն, Ռոստոմի շունչով:

7. Ինձ բնաւ առաջարկ չէ եղել Կիպրոս գնալ Լեռնավայրի համար: Հետաքրքիր է այդ տեղեկութիւնը ո՞րտեղից քաղել ես:

8. «Բարը Ալիի ուսմբը», աւելի ճիշդը Պոլսոյ ցոյցի գործը(4) ծրագրուած էր 1897ի սկիզբը Թիֆլիզում կայացած ժողովի մէջ, որ թէեւ Բ. Ընդհ. ժողով անունը կրում էր, բայց մի կարգ վայրերի ներդրում անունը կրում էր, բայց մի կարգ վայրերի ներկայացուցիչների չմասնակցելու պատճառաւ, Ընդհ. ժողով անունը առնուեց նրանից եւ Արեւելեան Բիւրոյի շրջանի Ռայոնական ժողով անունը ստացաւ. (մասնակցում էին բացի Կովկասեան մարմիններից, Պարսկաստանի, Վասպուրականի, Տրապիզոնի, Պոլսի ներկայացուցիչները): Այդ ժողովին մէջ էր որ վճռուեց նաեւ Թանասորի արշաւանքը(5):

Թէեւ Ընդհ. ժողով չընդունուեց, բայց տրուած որոշումները ընդհ. բնոյթ ունէին եւ գործադրուեցին: Բորիսի յանձնուեց ցուցական (Պոլսի) գործի կազմակերպումը: Կովկասից Պոլսի գնացին Վարդան Թիրեաքեան (Հրաչի յաջորդ մեծ եղբայրը, այժմ Կուրանում) եւ իմ մօտիկ ընկեր (դպրոցականից մինչեւ վերջը) Յակոբ Գարակէօզեանը, որ ուսմբը ձգուած օրերին անձնասպան եղաւ, ոստիկանութեան դիմադրելուց յետոյ (Սրա կենսագրութիւնը եւ նկարը կայ «Դրօշակ»-ում. ես եմ գրել կենսագրութիւնը)(6):

Ընդհանրապէս Բորիսին(7) քննադատում էին որ լաւ չէ կազմակերպել ցոյցի գործը եւ շուտ հեռացեր են Պոլսից: Ես այն ժամանակ Կովկասում էի (Բաթում — Կուրան — Թիֆլիզ են):

9. Որքան յիշում եմ, Ռոստոմի եւ Բորիսի յարաբերութեանց վատութիւնը սկսում է Ժընեւից: Բո-

րիս ուզում էր «Դրօշակ»ի մէջ ղեկավարի դեր ստանձնել, չէր հաւանում խմբագրութեան. իսկ Ռոստոմ, նրա եւ բոլոր նրա նմանների վրայ նայում էր իրրեւ հիւր եղող ընկերների եւ չէր ձգում, որ տանտիրոջ տեղ անցնին. դրանից էլ առաջ գալիս էին սուր քննադատութիւններ եւ յարաբերութիւնների սառնութիւն:

10. Հրաչը, մեր պնդումների վրայ ամուսնացաւ իր նշանածի հետ (երկար տարիներ նշանուել էին) որ Վառնա էր գտնուում. 1901ին էր, կարծեմ, եկաւ Կովկաս կնոջ հետ եւ յետոյ անցան Ոսկեհանք, այնպէս որ նշանուած վիճակի մէջ չգնացին, այլ իրրեւ ամուսնացան:

11. Լեռնավայր առաջին անգամ մտել էր Մարը(8) եւ բանտարկուել. նրա օգնական Բաթումից ուղարկեցինք Հատիկը (Մկրտիչ Հատիկեան, արապիզոնցի), որ Պոլսից դուրս էր եկել 1894—95ին եւ անձնական գործով էր գրադում (մանր առեւտուր). ուսուսակատակ էր եւ արձանագրուել էր Նիքիթ Պատիկով անունով. լաւ վրացերէն գիտէր, որով կրնար վրացի ձեւանալ. պուրկաներ առինք նրա համար եւ իրրեւ պուրկա վաճառող վրացի, մտաւ Կիլիկիա:

Իսկ 1898ին Ընդհ. ժողովում որոշուեց յատուկ Պատասխանատու Կ. Կոմիտէ. հաստատ յիշում եմ այդ Մարմնի անդամ ընտրուեցին Հրաչ, Պետո Սէրէմեան, դուցէ եւ Մարը: 1898ի Ընդհ. ժողովի արձանագրութեան մէջ պէտք է լինին անունները(9):

Ալեքսանդրիայի Մարտիքը, ընկ. Լալայեանցը պիտի լինի, Մանթաշեի գործի կառավարիչ. նա 1920ի Հոկտ.ին եկաւ Երեւան, կարծեմ փող բերեց(10): Բոլշեւիկների գալով մնաց Կովկասում. տկար էր. ուզում էր անցնիլ Ալեքսանդրիա՝ անցագիր չտրււին, չնայած որ Չեկայի նախագահ Յինցածէի մօտիկ բարեկամն էր: Յինցածէն եղել է Ալեքսանդրիայում քաղաքական փախստական եղած ժամանակ եւ այնտեղ բարեկամացել ու մտերմացել են: 1921ին Թիֆլիզում յաճախ պատահում էինք իրար եւ խօսում. լաւ դաշնակցական էր. լոռեցի էր, կարծեմ Դսեղ գրեւորացի: Նրա կինը Եգիպտոսումն է, անպատճառ պէտք է գիտնայ ամուսնու կեղծ անունը: (Ինք մեռաւ Կովկասում, որքան յիշում եմ 1922ին): Ո՛չ մի նօթ չունեմ. յիշողութեամբ գրում եմ այս բոլորը:

ԱՐԱՄ

Յ. Գ.— ՃՇԻՈՒՄ

Նամակս փակած էի արդէն, երբ ստացուեց «Դրօշակ»ի Նոյ.ի համարը(11), որի մէջ ընկ. Լեռնեանը ի միջի այլոց գրում է հետեւեալ տողերը.— «Բռնի միջոցներով դրամ հանգանակելու գործին դէմ էր Քրիստափորը, բայց երբ Պատասխանատու Մարմինը հակառակ իր ձայնին (ընդ. իմն է) որոշում տուեց, նա ի հարկէ ենթարկուեց մեծամասնութեան որոշման:

Բայց ինչպէս ինքն էր պատմում, չափազանց զայրացած եւ կշտամբանքով, ընտրուած մարմինը մօտ 2-3 տարի մատը մատին չխփեց, իսկ որոշ գործեր, որոնք պիտի կատարուէին այդ գումարներով, բոլորովին կանգ էին առել. Քրիստափորը ստիպուած ինքը գործի անցաւ, որպէսզի յարգած լինի կուսակցութեան որոշումը եւ այդ նպատակով էլ Ժընեւից մեկնեց Կովկաս, սակայն հենց սկզբից գործը գնաց չափազանց անյաշող:

Գործը բոլորովին նոր էր: Անտեղեակ Կովկասում գտնուած ուժերին, Քրիստափորը շրջապատել էր իրեն բաղմապիսի միմիանց անհամապատասխան եւ գործի համար միանգամայն անպէտք մարդկանցով:

Ինչպէս արդէն գրել եմ, Քրիստափորը թէեւ հակառակ էր բռնի դրամ հաւաքելուն, բայց որոշումը տրուած է միաձայն, ուրեմն սխալ է ընկ. Լեռնեանի հաւաստումը թէ հակառակ իր ձայնին որոշում առնուած է:

1900 Մարտ ամսուան մէջ(1) որոշումը առնուեց եւ որոշուեց որ ամառը Քրիստափոր, Ռոստոմ գան Կովկաս եւ սկսենք գործը. Քրիստափոր ցանկանում էր ինք սկզբից ներկայ լինել, որպէսզի «սխալներ չարուեն». Աշոտն ու ես վերադարձանք Կովկաս եւ ամբողջ 10 ամիս սպասեցինք, ո՛չ Քրիստափորը եկաւ եւ ոչ էլ Ռոստոմը (այս վերջինը իր դպրոցի գործին մէջ խրուել էր եւ չէր կարողանում հեռանալ Ֆիլիպպից): Ուշանալուն համար եթէ զայրացող մը կայ՝ Աշոտն ու ես էինք: Էլի Աշոտը կուսակցական միջոցներով ապրում էր, իրրեւ գէնքի պահեստը պահող, իսկ ես անձնական միջոցներով էի գլուխս պահում (անգործ էի եւ ազգականներից, ծանօթներից անձնական փոխառութիւն անելով էի ապրում դէլ վիճակի մէջ). եւ արդէն որոշել էինք պատճառաբանեալ հրաժարական տալ եւ քաշուել: Ուրեմն գործի ուշ սկսելու պատասխանատուութիւնը ընկնում էր նաեւ Քրիստափորի վրայ:

Միայն է նոյնպէս այն «որ 2-3 տարի մատը մատին չխփեց ընտրուած մարմինը եւ Քրիստափորը ստիպուած ինքը գործի անցաւ... եւ այդ նպատակով էլ մեկնեց Կովկաս են»: Մարմինը անգործ նստել է ո՛չ թէ 2-3 տարի, այլ 10 ամիս, որի մեղքը ծանրանում էր Քրիստափորի եւ Ռոստոմի վրայ. Քրիստափորը ո՛չ թէ ստիպուած, այլ իր ցանկութեամբ գործի անցել էր եւ ո՛չ թէ «կուսակցութեան որոշումը յարգելու համար» Կովկաս եկաւ, այլ իրրեւ այդ մարմնի անդամ պարտաւորուած էր գալու: Սկզբից ի վեր, երբ նա 10 ամիս յետոյ 1901 Յունուարին(12) եկաւ Բագու, Աշոտն ու ես իրա մօտ էինք. Աշոտը մինչեւ վերջն էլ մնաց եւ Մատթէոսին ընկերացաւ մինչեւ Մոսկուա. յետոյ ոստիկանութիւնից հալածուելով խոյս տուեց:

Քրիստափորը իմ դէմ զայրացած էր (գուցէ եւ Ռոստոմի, որ բնաւ չեկաւ կամ շատ ուշ եկաւ) որովհետեւ ես դեռ գործը չսկսած, մի քանի շատ լուրջ

պատճառներով, որոնք ինձ վերապահեցի եւ որոնք անծանօթ մնացին Քրիստափորին, հրաժարուեցի Մարմնից եւ հեռացայ Բագուից ու գնացի Սոչի հաստատուելու: Պատճառներից մէկն էլ Լեռնեանի յիշածն է «շրջապատել էր իրեն բաղմապիսի, միմիանց անհամապատասխան եւ գործի համար միանգամայն անպէտք մարդկանցով». ես կ'աւելացնեմ սրա վրայ, գործին անհամապատասխան՝ բռնած տակտիկամ:

Իմ մեկնելուց յետոյ Միհրանին կանչել են (որքան զլտեմ Սաֆոյի թելադրութեամբ): Ես Միհրանին շատ լաւ ճանաչում էի, նա գուցէ չդառնար Միհրանական ժխորը ստեղծող, եթէ իմ հսկողութեան տակ մնացած լինէր, թէեւ սկզբից Փանֆարոն էր եւ յիմար փառասէր:



Ի դէպ, ընկ. Աբրահամից (Գիւլիսանդանեան) ցաւած եմ, որ անցեալ տարի մեր շրջանը եկած ժամանակ, Քրիստափորի իմ դէմ բարկացած լինելը իրրեւ գէնք տուած է հակաուկորդներին բերանը: Սոֆիա եկած երեկոյն պանդոկին մէջ մի քանի ընկերների ներկայութեան երբ իր եւ իմ տարիքի խնդիր եղաւ, նա յայտնեց ի միջի այլոց որ ես աւելի տարեց եմ իրանից, որովհետեւ «դեռ 1901ին Պատասխանատու Մարմնի անդամ էիր եւ Քրիստափորը քեզ մեղադրում էր, իրան մինակ ձուլել հեռացել ես են»: Ես անշուշտ այդ խօսքից չվիրաւորուեցի, ի միջի այլոց ասուած մի խօսք էր մտերիմ ընկերների շրջանում, բայց երբ ընկ. Աբրահամի մեկնելուց յետոյ (Բուլգարիայից), լռեցի որ ուրիշ քաղաքի մէջ հակաուկորդներին մէկը իրրեւ փաստ իմ դէմ ասել էր «որ նրան Քրիստափորն էլ հակառակ էր, ինչպէս մեզ պատմեց ընկ. Գիւլիսանդանեանը», խոր կերպով ցաւեցի, ոչ թէ ինձ դէմ մի գէնք տուած լինելուն համար, այլ ընկ. Աբրահամի լրջութեան պակասի համար: Քրիստափորը հակառակ էր նաեւ Չաւարեանին, Աւետիք Սահակեանին եւ ուրիշներին, բայց ոչ ոք թոյլ չէ տուել իրան այդ հակաուկորդներին խմբանքի առարկայ դարձնելու կամ մէկը միւրը վարկաբեկելու: Քրիստափորը անսխալական աստուած չէր, նա էլ ունէր իր թերութիւնները, մի քանի անգամ սուր ընդհարումներ էլ եմ ունեցել հետը յարաբերական եւ այլ խնդիրների շուրջը գուտ պաղափարական հողի վրայ (ուրիշներն էլ ունեցել են): Բայց իր առաւելութիւնները այնքան մեծ էին իր թերութիւններից, որ միշտ խոր յարգանք եմ տածել դէպի նա եւ այդ յարգանքից էլ դրդուած՝ Բենոյի, Վ. Շահպաղի հետ գլուխ բերի նրա յուշարձանի գործը: Յամենայն դէպս վայելուչ բան չէ 30 տարի առաջուայ ըստուած խօսքեր հակաուկորդներին ասելը: Ես մտածում էի ընկ. Աբրահամին մի քանի խօսք գրել այս մասին, բայց նախամեծար համարեցի լռելը. է՛լ զղուեցի պալքանեան սաէ-կոսէներից. հիմա Լեռնեանի

զբաժնը առիթ տուեց որ այս մի քանի տողը գրեմ ընդ- ուզում ես իրան ասա կամ ոչ:

9 Նայ.

ԱՐԱՄ

Թ. Գ.— Գրիտապոլի (Իրբեւ Բիւրոյի անդամի կամ Բիւրոյի վարչի) հետ հակառակութիւն ունեցեալ ենք, Տրապիզոնի Կոմիտէում, Բաթումի Կոմիտէում և 1898ի Ընդհ. Ժողովում յարաբերական հարցերի շուրջ. իսկ 1901ին «Փոթորիկ»ի սկսելուց առաջ, Բազումից հեռացել եմ և հրատարակել իմ պնդումներով կազմը- ւած մարմնից, ի միջի այլ պատճառների, խուսափելու համար նրա հետ ընդհարուելուց: Յուշերիս մէջ երեւ- ալու են վերի յիշած հակառակութիւնների պատճառ- ները:

Յամենայն դէպս Փոթորիկը փրկարար դեր կա- տարեց և նրան պարտական ենք Հայ-Թաթարական, Եկեղեցիների գրաման, Եփրեմի արշաւանքի ևն. գործերի մէջ կուսակցութեան լայն չափով գործու- նէութիւնը:

Ն.

(1) Երեսուց տարիներ ետ յիշագրութեամբ վերադարձուած այս բուսականը սխալ է: Դաշնակցութեամ կամքը ներկայացնող Մարմնի ժողովը տեղի է ունեցած Ֆիլիպէ՝ 1901ի գարնամ:

(2) Պարզ է որ այս բուսականը եւս կը դառնայ հարցական:

(3) Վարդ Պատրիկեան (չփոքի Ամերիկայէն Իզմիր գործիչ եկած վարդ-Մանուչակի՝ Յակոբ Արքեպիսկոպոսի հետ, — տեսնել Նիիթեր, Ա. հատար, ցուցակ ամսագրումներու, էջ 293): Վարդայի մասին տեսնել Յան, Յարկոյի հատարի մէջ, Ա. Մամուլեանի Թա- մակը Հ.Յ.Դ. 2րդ Ընդհ. Ժողովին):

(4) Կ'ակնարկուի 1897 Օգոստոսի Պոլսոյ տեսարանով գործա- դարձումներում (տեսնել Ա. հատար, էջ 60-171):

(5) Տեսնել 1896 Գեղար. — 1897 Յունուարի Կովկասեան Ռա- յոնական Ժողովի արձանագրութեանց ամփոփումը՝ ներկայ հա- տորիան մէջ (էջ 29-34):

(6) Յակոբ Գարակէօզեանի մասին տեսնել Ա. հատար՝ էջ 172:

(7) Բորիս, — Խաչատրեան Մերսոս: Տեսնել Ա. հատար, ցու- ցակ ամսագրումներու, էջ 295:

(8) Մար, — Մար-Շիմոն, Տէր Մարտիրոսեան Միտայէլ: Տես- նել Ա. հատար, ցուցակ ամսագրումներու, էջ 298:

(9) Բ. Ընդհ. Ժողովին՝ Լեռնավայրի Պատ. Կ. Կոմիտէի ան- ղամ ընտրուած էին Հրաչը, Մարք և Արթակ Ռաւոնիս (Միթրա- յեան Յովակիմ, — տեսնել Ա. հատար, ցուցակ ամսագրումներու, էջ 290): Այս մասին տեսնել ներկայ հատարը՝ էջ 67:

(10) Արգիօ՛՛: Կը մնայ Յիշիլի: Մեր կարծիքով, 1917ին Ամե- րիկա գտնուող և ներկայ տարիներէ ի վեր յեղափոխական աշխոյժ գործունէութեանէ հաշուած Աշոտ Մարքիս Մուրատեանը (տեսնել Ա. հատար, Մարքիսի քաղաքագրը՝ էջ 7-119, և ի մասնաւոր Արտաւազ Համբարձումի Կ 17-1 մասակը՝ էջ 117) և Ա. Համաշ- խարայիս պատերազմի շրջանի Եփրատի ծածկ ընկերներէն՝ Ա. Լալայեանը (տեսնել Ա. հատար ցուցակ ամսագրումներու, էջ 295) չեն կրնար միեւնոյն անձը իրար ըլլալ: Մարքիս Մուրատեան ա- րեւմտահայ է՝ իր քաղաքագրի բովանդակութեանէն դատելով, մինչ Լալայեանը — կ'ըսուի — լուսնի:

(11) Տեսնել ԴՐՕՄԱԿ, 1929 Նոյեմբեր: Այս բուսականը հետեւ- ցուցած եմ որ Արամ Յակոբեանի մասին պէտք է գրուած ըլլայ 1929ի վերջը կամ 1930ի սկիզբը (տեսնել ծանօթագրութիւն, էջ 88):

(12) Բուսականը կը մնայ Յիշիլի, ինչպէս նախորդները:

2ր.— ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ

Նամակի չափի (մեծ) սովորական կրկնակ բուլբուլ վրայ, չորս երես: Ձեռագիր (խմբատիպ):

Ընկերներ՝,

Հայ Յեղ. Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմնի որոշումներէն, որոնք տեղի ունեցան ներկայ տարուայ Մայիսին, կը հաղորդենք ձեզ ի գիտութիւն և ի հարկին նաեւ ի կիրառութիւն հետեւեալ կէտերը.

1.— Հաշուետուութեան վերաբերմամբ Կամքը ներ- կայացնող Մարմինը կարելոր համարեց յիշեցնել բո- լոր մարմիններուն, որ ջանան Ընդհանուր Ժողովին ընդունուած դրութեան համաձայն ներկայացնել իրենց հաշիւները՝ պատկանած Բիւրոներուն:

2.— Ժողովը նկատելով, որ չնայած Ընդհ. Ժո- ղովի վճռին որով Կազմակերպութեան բոլոր անդամ- ները կը պարտաւորուին ամսական կամ տարեկան ո- ռոշ տուրք վճարել Դաշնակցութեան, շատ մը դաշնակ- ցականներ և նոյնիսկ կոմիտէներ չեն կատարեր իրենց այդ պարտականութիւնը, որոշեց յանձնարարել Բիւ- րոներուն իրենց տրամադրելի միջոցներով գործադրու- թիւն տալ այդ տուրքին:

3.— Որոշուեցաւ առաջարկել երկրէն դուրս գլու- նուող կոմիտէներուն, որ իրենց շրջանի պատգ. Ժո- ղովներուն դնեն Կազմակերպութեան օրկանի (Իրօ- չակի) տուրքի հարցը և տեղական պայմաններու հա- մաձայն որոշ կարգադրութիւն ընեն այդ մասին:

4.— Ժողովականներու մի մասի կողմէն տրամա- դրութիւն յայտնուելով ջննութեան ենթարկել Ընդհ. Ժողովի գծած տաքտիկը, Ժողովս, համաձայն Ընդհ. Ժողովի արձանագրութեան 63րդ. յօդուածի, ներկա- յիս մէջ պատերազմի կամ քաղաքական անակնկալ տաքնապի չնախատեսուած բացառիկ պարագաներու մէջ չզտնուելով, իրաւունք չզգաց փոփոխութիւն մտցնել Ընդհ. Ժողովի տաքտիկի վճիռներուն մէջ:

5.— Ժողովը լսելով Բիւրոներու բացատրութիւն- ները Ընդհ. Ժողովը չկարենալ հրաւիրելուն մասին, տեսաւ որ այդ պայմանները իսկապէս արգելք են մինչ- չեւ իսկ մօտ ապագային Ընդհ. Ժողովը գումարելու, ուստի որոշեց այդ հարցը բաց թողնել, մինչև առաջ կուգան աւելի հնարաւոր պայմաններ և կամ պահանջ կը դրուի Ընդհ. Ժողովին ձայն ունեցող մարմիննե- րու մեծամասնութեան կողմէ:

6.— Որոշուեցաւ յանձնարարել Կազմակերպու- թեան բոլոր մարմիններուն, որ, ուր հնարաւորու- թիւն կայ, առանց վնասելու Կազմակերպութեան ընդ- հանուր մուտքին և կամ զուտ յեղափոխական հասոյթ- ներուն, առանձին Ժողովարարութիւններ ընել և ան- դամավճարներ սահմանել «Հայ յեղափոխական կար-

միր խաչ» անունով, և առաջ եկած արդիւնքը՝ առանց երբեք խառնելու Կազմակերպութեան ընդհանուր մուտքին մէջ, յատկացնել Հայ յեղափոխական բան- տարկեալներու և իրենց յեղափոխական գործունէու- թեամբ աշխատութեան անկարող կամ անգործ մնացած կարօտեալներուն օգնելու, խտրութիւն չդնելով կու- սակցութիւններուն միջեւ:

7.— Ի նկատի ունենալով, որ մի քանի շրջաննե- րու մէջ մարտական խումբեր հիմնելու յաջող փորձեր եղած են, որոշուեցաւ վերստին յանձնարարել Կազմա- կերպութեան բոլոր մարմիններուն, մանաւանդ երկ- րի սահմանակից շրջաններուն, աւելի ուժ տալ Ընդհ. Ժողովի այդ վճռին և նոյնիսկ ի հարկին ընդունակ մարդիկներ նշանակել:

8.— Աչքի առաջ ունենալով, որ հակառակ Ընդհ. Ժողովի վճռին, դեռ ևս շատ տեղեր պատգամաւոր. Ժողովներով չեն մշակուած ու սահմանուած կոմիտէ- ներու և խմբերու ներքին կանոնադիրը, որոշուեցաւ ա) այս մասին ևս ստիպողաբար յանձնարարել Կեդր. Կոմիտէներուն և բ) խնդրել որ հնարաւորութեան չա- փով խուսափին տեղական բարդ ծախսերէ և անպայ- ման որոշ քանակութեամբ օժանդակեն կենդանի գոր- ծին:

9.— Ի նկատի ունենալով որ երկրէն դուրս եղած են կոմիտէներ, որ տարիներով ոչ մի շօշափելի գոր- ծունէութիւն և օգուտ չեն ցոյց տուած Դաշնակցու- թեան և ընդհակառակը երբեմն վնասեր են Կազմա- կերպութեան բարոյական հեղինակութեանը, վճռուե- ցաւ յանձնարարել Բիւրոներուն և Կեդր. Կոմիտէնե- րուն, առանձին պահանջներ դնել այդ կարգի մարմին- Ներու վրայ:

10.— Ժողովը ցաւօք սրտի լսեց, որ ի դուր Ժամա- վաճառութեան են յանգած Նոր-Հնչակեան կուսակցու- թեան հետ միանալու համար «Չէզոք» միջոցաւ վե- րսկսուած բանակցութիւնները, որովհետեւ «Չէզոք» ցարդ չէ կարողացած անոնց յարգել տալ կայացուած նախնական պայմանները: Այսպէսով Ժողովին պարզը- ւեցաւ, որ Նոր-Հնչակեան կուսակցութիւնը իր արդի կազմին մէջ յեղափոխական տեսակէտով կը մնայ նոյն անփոփոխելի մարմինը, ինչպէս որ էր առաջ:

11.— Որպէս զի Դաշնակցութեան Ժամանակը ու սուղ միջոցները ի դուր չվաճառուին, որոշուեցաւ առ- կէ յետոյ միութեան կամ համերաշխութեան նոր առա- ջարկներով զբաղուիլ միայն այն Ժամանակ, երբ առա- ջարկն ու առաջարկողները լուրջ և անկեղծ լինելու համոզումը կը ներկայացնեն:

12.— Ժողովը լսելով Պուրկազի մէջ Դաշնակցու- թեան պատկանած զէնքերու դողութեան (100 հրացան և 20.000 փամփուշտ, 8.000 Փր. արժէքով) խնդրի մանրամասնութիւնները, լիազօրութիւն տուաւ Վիշա- պի Պատ. Մարմնին վերջնականապէս ճշգրիտ և յան- ցաւորները և պատիժները տնօրինել: Ժողովը գտնու-

թեամբ տեղեկացաւ, որ ծախուածներէն երեսուն (30) հրացան յետ առնուած է և 5.000 փամփուշտին Կազ- մակերպութիւնը տիրացած է:

13.— Որոշուեցաւ յանձնարարել Արեւելեան և Ա- րեւմտեան Բիւրոներուն, որ իրենց շրջաններուն մէջ եղած կազմակերպութեան ռազմամթերքի և բոլոր դոյքերու մանրամասն ցուցակը կազմեն:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ (Կնիք Արեւմտեան Բիւրոյի)

Ընկերներ՝,

Հրաւիրելով ձեր ուշադրութիւնը ներկայ շրջաբե- րականի կէտերէն 1, 2, 3, 6, 7, 8րդ. ի կիրառութեան վրայ, Բիւրոյի կողմէն հետեւեալը կ'աւելցնենք 9 և 13րդ. որոշումներու մասին.

Երկրէն դուրս «կոմիտէ» կոչուած մարմինները այսուհետեւ Դաշնակցութեան կամիտէ պիտի ճանչը- ւին միայն այն ատեն, երբ բացի տեղական գործերէն՝ այդ մարմինները որեւէ նկատելի օժանդակութիւն ցուցնեն Կազմակերպութեան՝ դրամով, զէնքով կամ կարող գործիչներ հայթայթելով:

Կազմակերպութեան գոյքերու ցուցակը կազմելու ատեն կը խնդրենք խնամքով յիշատակել ոչ միայն կազմակերպութեան սեփականութիւնը եղող իւրաքան- չիւր առարկայ՝ այլ նաեւ անոնց իւրաքանչիւրին ո՞ւր, որո՞ւ քով, որո՞ւ պատասխանատուութեամբ և ե՞րբ յանձնուած ըլլալը:

3ա.— ԿՈՉ ԿՈՎ ԿԱՍԱՀԱՅԵՐԻՆ

Տպագրուած 21x27 սմ. չափի բուլբուլ վրայ, երկու երես:

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ի Ց Ն Ե՛ Ր

Կատարուեց նոր ոճեր... Ռուս կառավարութիւնը, բարձրագոյն հաւանու- թեամբ, առանց մեր եկեղեցու ներկայացուցչի գիտու- թեան անգամ, աւազակօրէն յափշտակեց այն բոլորը, ինչ համարուած էր այդ եկեղեցու անձեռնմխելի սեփա- կանութիւն՝ դեռ 1836ի կանոնադրութեամբ:

Մեր սեւաւոր պատմութիւնը դարձեալ բոլորեց իր այն շրջաններից մէկը, երբ մեր դարաւոր աշխատանքի ու զոհարարութիւնների արդիւնքը յանձնուած ենք օտա- րին: Հին ցաւ է այդ, հին անարգանք... Դարերի ըն- թացում՝ այնքան զիջատիչներ, — արաբ, թաթար, մոնղոլ, սելջուկ, — մին միւսի ետեւից յօշոտեցին մեզ, այժմ էլ տաճկի ու չեխերի հետ՝ երկզլիսեան ար- ծիւն է թառել մեր ուսին, քրքրում է մեր կուրծքը, հրճուում է մեր տանջանքի ճիչով, մեր անզօր հառա- չանքներով:

Ամբողջ մի դար է, մահմետական գորութիւնների

դէմ կռուելու համար՝ մենք տուեցինք ուսին մեր լաւագոյն ուժերը, աջակցեցինք նրան, խաչ ու խաչվառով վազեցինք նրա առջև, նրա սուրը համարուեցինք եւ մեր գլխին դրինք: Եւ ցարերի հանդիսաւոր խոստումներ, հրովարտականք, իրաւունքներ, արտօնութիւններ չսիրելի հայ ժողովրդին... Մեզ ասացին, որ ցարի խօսքը՝ օրէնք է, հրովարտակը՝ սրբութիւն: Արդի՞ւնքը... մեր այժմեան արտասուելի կացութիւնն է. հիւսիսից լոյս ու արդարութիւն էինք սպասում, զալիս է կեղտոտ ջրերի լայնածաւալ մի հեղեղ, որ իր պղտոր ծփանքներով խեղդում է այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է եւ արդար:

Եւ ինչո՞ւ այսպէս: Ինչո՞ւ այս աւերածը, այսքան բռնութիւնները մեր գլխին. ուժի՞ց էր վախենում ուս կառավարութիւնը, ո՞վ սպառնաց նրա իշխանութեանը:

Հայ հոգեւորականութիւնը... բայց կառավարութիւնը վաղուց է վարում նրա հետ, ինչպէս իր կամազուրկ ստորադրեալի հետ:

Հայոց կաթողիկոսը... այդ վատարախտ ծերունին, որ ուխտադրութեան կառավարութեան ճանկերում ոչ թէ բողոքելու, այլ նոյնիսկ արտասուելու իրաւունքից էլ զուրկ է:

Հայոց բուրժուազիան... այդ թուլամորթ ու ունեզատ(1) տարրը, որ մի գերագոյն արհամարհանք է տածում դէպի ազգային-հասարակական պարտաւորութիւնները:

Հայ ժողովուրդը... այդ խեղճ ու անճարակ մասսան, որ յայտնի է իր հաւատարմութեան զգացումներով դէպի կայսերական զահը:

Ոչ մէկը եւ ոչ միւսը:

Ռուս բռնապետութեան ձգտումն է՝ կնքել հայի հարիւրաւոր տարիների պատմութիւնը, վերջ տալ նրա ազգային ինքնուրուութեան:

Միեւնոյն հայաջինջ ծրագիրն է, որ գործադրում է մաս-մաս, անողորմ հետեւողականութեամբ:

Խլեցին դպրոցները — համատարած խաւարի մէջ պլպլացող այդ միակ լոյսը:

Փակեցին բարեգործական, հրատարակչական ընկերութիւնները, փակեցին անգամ գրադարանները:

Ճնշեցին, տրորեցին հայի լեզուն, պատին ու արժանիքը: Ամէն բան անարգուեց, սրբապղծուեց:

Ազգային գրականութիւն չմնաց. անպատում տնկուած բոյսի է նա նման, որի արմատները ամէն օր կրծում են մտքի ուս պարադիտները(2):

Խղճի ազատութիւն չմնաց. դաւանափոխութեան եւ կրօնական զազրելի հալածանքի ասպարէզ դարձրին խաղաղ Արարատեան աշխարհը:

Բաւական չէր այդ. պէտք էր հարուածել ժողովրդի ամենանուրբ, ամենազգայուն ներքին — նրա տնտեսութեանը. հայի արցունքով ոռոգուած հողերը սկսեցին խլել եւ ուս եկուոր զաղթականներին յանձնել: Այժմ էլ ահա տեղի է ունենում ամենածանր եւ

ամենաստոր հարուածը — յափշտակում են մեր Եկեղեցու սեփականութիւնը:

Ի՞նչ պէտք է անել...

Մի անգամ գոնէ համարձակուենք մեզ խեղդող իրականութեանը նայել բաց աչքով, բաց ճակատով, մի անգամ գոնէ ըմբռնենք մեր սեփական պատմութեան տրամաբանութիւնը, հասկանանք մեր շուրջը դարձող իրերի բնական ընթացքը:

Զրոյրեցինք, լուրթեամբ տարանք անարդար հարուածները, սողացինք բռնաւորի ոտքերի տակ, համարուեցինք նրա բիրտ բռնուցքը, եւ մեր գլխին իջնող հարուածները կրկնապատուեցին, մեր կողորդը սեղմող երկաթէ օղակը աւելի նեղացաւ, մենք մեռում ենք անպատիւ, խայտառակ մահով:

Զհասա՞ւ արդեօք անվեհեր բողոքի ժամը, երբ ամենատկար զոհն անգամ, իբրեւ գերագոյն արտայայտութիւն իր անկողոպտելի իրաւունքի, ցասումով ըմբոստանում է իր դահիճների դէմ...

Հերի՞ք է, որքան օրօրուեցինք «խոհմութեան» մեղեդիներով: Խիզախ ու ազնիւ անխոհմութիւնը միշտ աւելի գեղեցիկ ու օգտակար է եղել:

Բողո՞ք հայութեան բոլոր անկիւններում, ուր մը տածող մի գլուխ կայ եւ ըմբոստացող մի հոգի:

Թող իբրեւ բողոքի արտայայտութիւն՝ Ամենայն Հայոց Հայրապետը հրաժարական տայ եւ խզէ ամէն յարաբերութիւն հայ եկեղեցու եւ ուս կառավարութեան միջեւ:

Թո՞ղ հայոց բոլոր եկեղեցիները փակեն իրենց դռները, իբրեւ սզի նշան:

Թո՞ղ ժողովուրդը կազմակերպուած ցոյցերով ու հանրագրերով հասցնէ բողոքի ձայնը կենտրոնական կառավարութեան:

Թո՞ղ, վերջապէս, երիտասարդութեան զգայուն տարրը, իբրեւ արտայայտիչ ժողովրդի ցասման, կազմակերպուի անհաշտ կռուի համար: Կո՞ր՛ւ ամէն տեղ եւ բոլոր միջոցներով բռնապետութեան վայրագ ներկայացուցիչների դէմ, որոնք մի-մի պատուհաս են դարձել մեր դժբախտ երկրի համար:

Յո՞յց տանք ուխտադրութեան բռնապետութեան, որ նա չէ կարող տեւողաբար ու անպատիժ կերպով խաղալ մի ազգի ճակատագրի հետ:

Յո՞յց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգայ ըստրուկներ չենք, որ մենք եւս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարում են մեր անկապտելի իրաւունքները:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Հ Ա Յ Ե՛ Ր

Բողոքը բողոքի արհաւիրքների դէմ անհրաժեշտ է, բայց բաւական չէ: Մենք պարտաւոր ենք, իբրեւ գիտակից ազգ, աւելի հեռուն նայել եւ ներկայի փորձութիւններից քաղել հրահանգներ ապագայի համար:

Մեր գլխին տեղացող վերջին հարուածները աւելի քան երբեւիցէ հրահանգում են մեզ լուրջ անդրադառնալ մեր ընդհանուր ազգային իրականութեան վերայ:

Ո՞րն է այդ իրականութիւնը:

Ասիական դեսպոտներ(3), մինը միւսից ահաւոր, մինը միւսից ջստմեղի, ասես նախնական մի համաձայնութեամբ՝ ձգտում են ջնջել մեզ, իբրեւ ուրոյն, ազգային գոյութիւն:

Ջնջման միջոցները յաճախ տարբեր են, բայց նըպատակը մի է. ցար եւ սուլթան հաւասար խանդով են մղում մեր աւերածի գործը:

Ինուութեան ուժիմը, — տիեզերական ծանօթ օրէնք է, — վաղ թէ ուշ ծնում է հակազդեցութիւն, բողոք ու կռիւ: Սահմանից այն կողմը, Սասունի ու Մուշի բարձրութիւնների վրայ, Տաւրոսի զազաթնբրում, մեր եղբայրները չխուսափեցին այդ դժնդակ օրէնքից, — նրանք վեր բարձրացրին բռնապետութեան նետած ձեռնոցը եւ 15 տարուց ի վեր մղում են սոսկալի, անհաւասար կռիւ՝ այնտեղ, ուր պատմական իրաւունքը կապուած է արդարութեան յաղթանակի եւ վրէժի հատուցման հետ, այնտեղ, ուր անթիւ կորած գերեզմաններ դեռ մոնչալով խօսում են մեր նուիրական դատից...

Նրանք կռոււմ են, սողորուած այն գիտակցութեամբ, որ մի անկիւն է պէտք բազմաչարչար հայութեանը, մի ազատ անկիւն, ուր նա կարողանայ հանգիստ առնել դարերի անդադրում հալածանքներից եւ ի կատար ածել պատմութիւնից ստանձնած՝ քաղաքակրթական իր բարձր միասին(4):

Մի ազատ անկիւն... Ժամանակն է, գերագոյն ժամանակը, որ ամէնքս սողորուենք նոյն գիտակցութեամբ եւ մեր սրտի բոլոր խանդով գրկենք Տաճկահայաստանի արիւնոտ դաշտը:

Տասնըհինգ տարուայ ընթացքում շատ բան կարող էինք անել ի նպաստ այդ դատի, շատ թիչ արեցինք:

Տագնապների, յեղափոխական գոռ պայթիւնների միջոցին թոյլ արձագանք միայն տուինք մեր եղբայրների օրհասական կոչին:

Եւ հայոց ազատութեան կռիւը Թիւրքիայում երբեք չունեցաւ ցանկալի սլացքը, նա մնաց կցկտուր ու անդամալոյծ:

Քաւենք անցեալի մեղքը, այժմ, երբ ասդին այլեւս կորցնելու ոչինչ չի մնում, երբ ուս կառավարութիւնը վայրագ փութկոտութեամբ ջնջում է ազգային ամենանուիրական ստացուածքները:

Քաւենք հին մեղքը, եւ Գալիցիեան խենթ ուժիմի դէմ կռուելով հանդերձ՝ երբեք չմոռանանք, աչքից չթողնենք այն հակայական, արիւնոտ դրաման, որ խաղացում է սահմանի միւս կողմը, երբեք չմոռանանք այն սրբազան կտակը, որ թողել են մեզ մի քա-

նի սերունդ գիտակից հայեր... Այնտեղ եւս, սահմանի միւս կողմը, տարածուած է հիւսիսային բռնապետի մահաբեր թաթը: Այնտեղ էլ ցարիզմը տարիներից ի վեր դաւ է նիւթում հայ ժողովրդի դէմ: Նա՛ է խրախուսում հայերի մասսային(5) սրածութիւնները: Նա՛ է արգելք լինում հայկական ռեֆորմների(6) իրականացման:

Կռիւը, ուրեմն, թիւրքաց լծի դէմ, միաժամանակ կռիւ է ցարի քաղաքականութեան դէմ, նրա հայակործան ախորժակների դէմ:

Քաւենք հին մեղքը, հայրենակիցներ, դէժ այժմ մեկնենք մեր բազուկները կռուող եղբայրներին, խրժբովին ներշնչուենք նրանց իղձերով եւ ոյժ տանք, զօրացնենք հայ յեղափոխական կազմակերպութիւնը, որ անբաւ զրկանքների ու փորձութիւնների միջով առաջնորդում է դէպի յաղթանակ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԿԱՍ ԿՈՄԻՏԷ

Օգոստոս 1903 թ. Կովկաս

- (1) Ֆրանսերէմ բառ, — ուրացող, ուխտադրութ:
- (2) Ֆրանսերէմ բառ, — մտաբայծմբ:
- (3) Ֆրանսերէմ բառ, — բռնակալներ:
- (4) Ֆրանսերէմ բառ, — առաջնորդներ:
- (5) Ֆրանսերէմ բառ, — զանգուածային:
- (6) Ֆրանսերէմ բառ, — բարեփոխումներ:

ՅԲ.— ՈԶՌՈՒՍԱՀՊԱՏԱԿ ՀԱՅԵՐՈՒՆ

Տպագրուած 21x27 սմ. չափի պաշտօնաբարձրի վրայ, երկու երես: Առաջիմ էլիմ վերք՝ զիմաճում եւ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՆ — ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ ՎԵՐԱՊԱՐԻՑ:

18/5 Յունուարի 1904, Ժընև

Յարգելի հայրենակիցներ,

Յայտնի է Ձեզ, որ Ռուսիոյ նախարարական խորհուրդը իր Յունիս 12ի նիստին մէջ որոշած է յարջունիս գրաւել հայ եկեղեցապատկան կալուածները, օրոնք ըստ նոր տնօրինութեան՝ պիտի կառավարուին այսուհետեւ պետական կալուածներու նախարարութեան կողմէ: Իսկ կալուածներէն ստացուած հասոյթները պիտի յատկացուին ծխական եւ ուրիշ կարգի դպրոցներու պէտքերուն եւ այդ ծախքերէն մնացած գումարները միայն պիտի յանձնուին համապատասխան եկեղեցիներուն ու վանքերուն:

Յունիս 12ի կարգադրութիւնը, խլելով հայ կղերի ձեռքէն եկեղեցապատկան կալուածներու վարչութիւնը, ո՛չ միայն կը խախտէ Հայաստանեայց Եկեղեց-

ւոյ իրաւունքները ազգային գոյքերու կառավարութեան խնդրոյն նկատմամբ, այլեւ կը հանդիսանայ իրբեւ նորատեսակ յափշտակութեան ձեւ մը 100 միլիոն ռուբլի արժէքաւոր հայ ազգային ստացուածքներու: Դժուար է ուրիշ կերպ անուանել ռուս նախարարներու որոշումը, քանի որ «հայ ծխական» անուանուած դպրոցները, որոնց գոյութեան պահպանման համար պէտք է ծախսուի կալուածական հասոյթներու մեծագոյն մասը, չունին գրեթէ ո՛րեւէ «հայ» ազգային եւ կրօնական նկարագիր: Բաւական է միայն յիշել, որ այդ վարժարաններու ուսուցիչներէն շատերը չեն պատկանիր հայ ազգութեան, որ հայերու հետ միասին ոչ-հայ երեխաներ եւս կը յաճախեն այդ վարժարաններէն մեծ մասը, ուր հայոց լեզուի ու կրօնի դասուանդութիւնը դարձած է սոսկ ձեւականութիւն մը: Թուսաստանի «հայ ծխական դպրոցները» իրենց ներկայ դրութեան մէջ կը հանդիսանան ո՛չ թէ իբրեւ կրթական հիմնարկութիւններ, այլ իբրեւ ռուսացման նոր ձեւի մը հիմնարկութիւններ, որոնք կը ձգտին ոչնչացնել հայութիւնը իր իսկ սեփական միջոցներովը: Բացի այդ, չկայ ո՛չ մի երաշխաւորութիւն, թէ ռուս պաշտօնեաները չպիտի համարեն «ծխական դպրոցները» համայն պետութեան ուսումնարաններ, ուր կը սովորին նաեւ մի քանի հայ մանուկներ, եւ հետեւաբար ո՛չ ոք կարող է վստահ լինել, որ հայ եկեղեցական կալուածներու եկամուտով ռուսական կառավարութիւնը չպիտի հոգայ իր իսկ սեփական պէտքերը:

Ահա թէ ի՛նչու Յունիս 12ի որոշումը հայերու կողմէն հանդիպեցաւ միահամուռ դիմադրութեան: Ամբողջ հայ հոգեւորականութիւնը, իրեն գլուխ ունենալով Եկեղեցւոյ ալեգարդ պետը, եւ համայն հայ հասարակութիւնը, առանց խտրութեան կուսակցութիւններու, հասակի ու սեռի՝ որոշեցին չընդունիլ այս ապօրինի կարգադրութիւնը եւ բողոքել սանձարձակ կամայականութեան դէմ:

Կաթողիկոսը հեռագրով ու նամակներով աղերսեց կայսեր ի նկատի առնել իր բերած լուրջ բացատրութիւնները եւ յետագայ յիշեալ որոշման իրազործումը: Սինոդի անդամները, թեմակալ առաջնորդները հրատարական տուին, անհնարին գտնելով իրենց պաշտօնավարութիւնը ներկայ պարագաներու մէջ: Թուսաստանի բոլոր քաղաքներուն եւ նոյնիսկ դիւղերուն հայ բնակչութիւնը արիւնհանջ ցոյցերով բողոքեց կատարուած աւազակութեան դէմ եւ մերժեց յանձնել կալուածները: Թուսիոյ դարաւոր տիրապետութեան ընթացքին մէջ առաջին անգամն էր, որ Կովկասի մէջ հազարաւոր հայեր կուսեցան բռնակալութեան դէմ, իրենց թափած արիւնովն ու կեանքի գնովը պաշտպանելու համար հայ ազգային իրաւունքները:

Մերունի հայրապետին աղերսանքները մնացին ձայն բարբառոյ յանապատի: Հայ հոգեւորականութեան «բարոստութիւնը» խորտակելու համար ոստի-

կան Պիւլէի կառավարութիւնը նոր հրաման արձակեց, որով հոգեւորական պաշտօններու մէջ հաստատուելու համար նախապէս կը պահանջուի Կովկասի կառավարչապետին կամ նահանգապետներուն հաճութիւնը. ահա՛ մի պարագայ եւս, որ նոր տեսակի շիռովնի-կուքեան կը վերածէ հայ հոգեւորականութիւնը, զայն կը դարձնէ կառավարութեան ձեռքին մէջ անվրէպ գէնք մը՝ անոր նպատակները իրազործելու համար: Ժողովրդին արդար բողոքը խեղդելու նպատակով՝ հայաբնակ գլխաւոր քաղաքները յայտարարուած են զինուորական դրութեան մէջ. փակուած են քիչ թէ շատ արժանաւոր դիրք բռնող թերթերը, աքսորուած են ու կ'աքսորուին բողոքի նշոյլ ցոյց տուող հայերը, կը հայածուին հայկական դատի կենդանի ներկայացուցիչ՝ տաճկահայերը... Այսպէս, բռնութիւնը ըրաւ, ինչ որ կրնար ընել:

Խաբէութեան միջոցաւ, մտրակի հարուածներու սարսափին տակ, գէնքի ուժով ձեւակերպուեցաւ թղթի վրայ կալուածներու մեծ մասին փոխանցումը: Վարագ պաշտօնեաները խորտակեցին էջմիածնի գանձարանը եւ Մայր Աթոռի գումարները փակեցին Երեւանի նահանգական գանձարանի մէջ:

Չրկուած ու կողոպտուած իր դարաւոր հարստութեան աղբիւրներու հասոյթներէն, հայ բարձր հոգեւորականութիւնը մատնուած է ծանր կացութեան. էջմիածնի ճեմարանը, թեմական դպրոցները պարտքով ու մասնաւոր հասոյթներով է միայն որ կը պահպանուին:

Ոչ ոքի յայտնի է, թէ ուր պիտի յանգի սկսուած պայքարը:

Մերժելով ստանալ տէրութեան յափշտակած կալուածներուն եկամուտը, Թուսաստանի մեր եղբայրները որոշած են շարունակել կռիւր:

Այս պարագաներուն մէջ պէտք է որ ուրիշ երկիրներու հայերն եւս մասնակից լինին ազգային շահերու պաշտպանութեան գործին:

Մէկ կողմ թողլով բողոքի այն ձեւերը, որ մինչեւ այժմ հայ գաղութներու այլեւայլ ժողովներն արտայայտեցին, ինչպէս եւ Կ. Պոլսոյ պատրիարքարանին ռուսաց դեսպանատան միջոցաւ ներկայացուցած դեկուցագիրը, մենք այս դրութեամբ կ'ուզենք առաջարկել բողոքի մի նոր միջոց ոչ-ռուսահայտակ հայերուն, այն է՝ աշխատիլ կալուածական խնդիր դնել, Լաիէի Միջազգային Ատեանին առջեւ:

Թուսաստան գտնուող հայ եկեղեցական կալուածները, ինչպէս կը վկայէ նոյնիսկ ռուս կառավարութեան կողմէ 1836 թուին կազմուած յատուկ կանոնադրութիւնը (Պոլսոյ Գրքեր), կը կազմեն սեփականութիւնը համայն հայութեան լուսաւորչական եկեղեցւոյն, այսինքն բոլոր լուսաւորչական հայերուն: Յիշեալ գոյքերուն մեծ մասը, հայ սրբավայրերուն անունով գնուած են աշխարհքիս բոլոր անկիւնները ցրուած

բարեպաշտ հայերու անձուկ միջոցներովը: Թուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի հայերը նոյնչափ մասնակցած են այդ ազգային եկեղեցական հարստութեան գումարման, որչափ եւ Հնդկաստանի, Եգիպտոսի, Հոլանտայի, Թուամանիայի, Փրանսայի, Ամերիկայի եւ այլ հեռաւոր երկիրներու հայերն ու անոնց նախահայրերը: Հետեւաբար այդ բոլոր հայերն ունին հաւասար իրաւասութիւն պահանջելու, որ յիշեալ գոյքերը դտնուին իրենց վստահութիւնը վայելող մարմնոյ մը հսկողութեանն ու տրամադրութեանը տակ, որպիսին բոլոր հայերու համար կը հանդիսանայ ներկայիս մէջ էջմիածնայ Մայր Աթոռը: Հակառակ պարագային ազգային այդ ամբողջ հարստութիւնը բաժնուելու է բոլոր հայ եկեղեցական համայնքներու միջեւ:

Կալուածներու գրաւման փաստը կատարուելէ յետոյ, ահա այդ դատն է որ պիտի սկսին այսօր ոչ-ռուսահայտակ հայերը ռուս կառավարութեան դէմ. ազո՛ր մասին է որ պէտք է խորհին ու գործեն բոլոր հայերը:

Լուսարանելով խնդիրը իրենց տեղական տեսակէտներով ու փաստերով, հանդիսանալով իբրեւ մի հաւաքական կրօնական մարմին, զանազան երկիրներու մէջ ապրող հայերը պէտք է պաշտպանեն իրենց շահերը, բան մը, որ ներկայ պարագաներուն մէջ կը լինի եւ ընդհանուր ազգային շահերու պաշտպանութիւն: Սակայն, պէտք է մտնալ որ ոեւէ հետեւանքի

հասնելու համար անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր մի երկրում հայերու շահերուն պաշտպանութիւնը յանձն առնէ այդ երկրի կառավարութիւնը, որը միայն կարող է դիմել Լահէի Բարձրագոյն Ատեանին պաշտօնապէս:

Իրազործելու համար այդ՝ անհրաժեշտ է խորհրդակցութիւն ու համաձայնութիւն աճէն մի երկրի հայութեան մէջ. պէտք է լուրջ, փաստարանուած խնդրագիր ներկայացնել երկրի կառավարութեան եւ հաւաքել ըստ կարելոյն շատ ստորագրութիւններ. ազկէ զատ պէտք է նաեւ ընտրել վստահելի մարմին մը, որ կարենայ եռանդուն կերպով հարցն առաջ մղել:

Մեր կողմէն կրնանք հաղորդել, որ միջազգային իրաւաբանական խնդիրներուն տեղեակ անձեր յուսադրած են մեզ, որ յարուցուելիք խնդիրը կրնայ ունենալ որոշ քաղաքական հետեւանքներ, եթէ պետութիւններէն գոնէ մին (Անգլիա, Ամերիկա, Հոլանտա կամ մի ուրիշը) համաձայնի նախաձեռնարկ լինել:

Վստահ ենք, յարգելի հայրենակիցներ, որ ազգային այս հրատապ խնդրոյն առջեւ, մէկ կողմ թողլով կուսակցական բաժանումները, ամէնքդ պիտի գործէք ձեռք ձեռքի տուած, ընդհանուր ուժով պաշտպանելու համար մեր ընդհանուր ազգային շահերը:

Կը յուսայ եւ կը վստահի ձեր շրջահայեցութեան ու անկեղծ հայրենասիրական զգացմունքներուն վրայ՝

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ե.— Լ. Յ. Դ. ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Դաշնակցութեան Երրորդ Ընդհանուր Ժողովէն (Սոփիա, 1904 Փետրուար-Մարտ) Լ. Յ. Դ. Կեդրոնական Դիւանին մէջ մնացած են հետեւեալ փաստաթուղթերը.—

ա.— «Քաղաւածֆներ Երրորդ Ընդհ. Ժողովի Ատենագրութիւններէն» Կամփոխութեան սահմանուած գրք-քննչէն բազմաթիւ օրինակներ.

բ.— Կազմուած մէկ տետրակ՝ «Լ. Յ. Դ. Երրորդ Ընդհ. Ժողովի արձանագրութիւն»։ Տետրակը կը բաղկանայ 16x20 սմ. չափի միագիծ շուրջ 200 էջերէ. Ժողովի արձանագրութիւնը կը գրաւէ 152 էջ։

գ.— Արձանագրութեանց երկու տարբեր սեւագրութիւններ, նախորդի (բ.) բովանդակութեամբ։

դ.— Մէկ փոքր տետրակ՝ «Գ. Ընդհ. Ժողովի ծախսերը», բաղկացած 11x17 սմ. չափի էջերէ։ Զանազան էջերու վրայ կը գտնուին մատիտով արձանագրութիւններ գանձուած եւ ծախսուած գումարներու, պատգամաւորներու հաշուոյն կատարուած վճարումներու (նամբու ծախս, պանդակ, եւն.)։

ե.— Ազգրական արձանագրութիւններ կարգ մը նիստերու, գրուած շատ արագ, հաւանաբար Ա. Վառնիսի Գեորգի 17 մեծադիր էջ, 13/26 Մարտի («Կովկասեան խնդիրներ»)՝ նոյն չափի 36 էջ, Սափայի «Կրօնական դաշնակցութիւն» նաոր՝ 6 էջ։ Առանձին այլ նիստերէ սզագրական արձանագրութիւններ չկան։

զ.— Զանազան լիազօրագրեր՝ պատգամաւորներու տրուած, համապատասխան Մարմիններուն կողմէ (Թարգմանի եւ Կայծակ-Վաղարշակի՝ Սասնոյ Պատասխանատու Կ. Կամփոխէն, Սամանին՝ Ատրպատա-

կանի Կ. Կէն, Պիոններին՝ Պալխանեան Կ. Կամփոխէն, բժ. Կիլիկեանին՝ Ատանայի Կ. Կամփոխէն, եւն.)։

է.— Բազմաթիւ նամակներ՝ ուղղուած Ընդհ. Ժողովին Դաշնակցութեան, բարեկամներու (Իզմիրլեան պատրիարք, Ղարախանեան վրդ.), ինչպէս նաեւ մարմիններու և գործիչներու կողմէ (Մելիք - Յ. Տուսուֆեան, Պիոնեան, Կոմս, Իշխան, Իզմիրի Կամփոխ, բժ. Կիլիկեան, եւն.)։

ը.— Տեղեկագրեր Մարմիններու, — Ատրպատական, Ամերիկա, Պալխաններ, Ոսկեհամֆ (Իզմիր), Ռուսաստանի Ուսանող. Միութիւն, եւն.։ Կը պակսին տեղեկագրերը Երկրի, Պալսոյ և Կովկասի Մարմիններուն։

թ.— Գ. Ընդհ. Ժողովին կողմէ «մշակուած պահանջներ», ձեռագիր, թրքերէն եւ ֆրանսերէն լեզուներով։

ժ.— Հաշուական թուղթեր, զինական պահեստներու ծածկագիր ցուցակներ, նախահաշուի ձեռագիր եւ տպագրեալ տախտակներ, եւն.։

**

Ատենագրութեանց ամփոփումը պարունակող գրք-քննչը եւ Ժողովի ամբողջական արձանագրութիւնը (տետրակ բ.) առանձին տալը պիտի յառաջացնէր աւելորդ կրկնութիւններ, քանի առաջինը քաղաւած է երկրորդէն եւ ամբողջութեամբ կը գտնուի անոր մէջ։ Ուստի առաջին առթիւ պիտի հրատարակեմք Բ. տետրակը՝ «Լ. Յ. Դ. Երրորդ Ընդհ. Ժողովի արձանագրութիւնը», պարզապէս տարբեր տառերով տալով այն մասերը՝ որոնք նոյնութեամբ կը գտնեմք նաեւ հրատա-

րակուած եւ մարմիններուն սահմանուած գրքային մէջ։

Հասկնալի է անշուշտ մարմիններու հնգամսայ տեղեկագրերու կարեւորութիւնը՝ ամբողջական գաղափար մը կազմելու համար համապատասխան շրջաններու 1899-1903 տարիներու գործունէութեան, դժուարութեանց եւ իրականացումներուն մասին։ Եւ այս իմաստով՝ խորապէս ցաւալի է թղթածրարին մէջ բացակայութիւնը Պալսոյ, Դուրան-Բարձրաւեցակի եւ Վասպուրականի նման հիմնական նշանակութիւն մերկայացնող շրջաններու տեղեկագրերուն՝ հաւանաբար կորսուած ի սպառ։ Մնացեալ շրջաններէն (տեսնել բ.) պիտի տանք տեղեկագրեր կամ տեղեկագրերու մասեր, ընտրովի, ըստ նիւթի կարեւորութեան եւ Դաշնակցութեան Պատմութեան համար ներկայացուցած նշանակութեան։

Ընդհանուր Ժողովին ուղղուած կարգ մը նամակներ եւ լիազօրագրեր, իրենց վաւերագրական եւ պատմական արժէքով, պիտի կարեւան յստակացնել ժամանակաշրջանի մը մտայնութիւնը եւ մտածումները՝ Երրորդ Ընդհանուր Ժողովի մասին մեր ծանօթութիւնը դնելով ընդհանուր մթնոլորտի մը հարագատ պարունակին մէջ։

Պարագայարար, կրնանք տալ նաեւ թղթածրարներէն առնուած հաշուական կամ այլ վաւերագրութիւններ։

**

Լ. Յ. Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովը որոշած էր՝ որ Կուսակցութեան գերագոյն յաջորդ համագումարը տեղի պիտի ունենար 1900ի վերջաւորութեանէն առաջ։ Պայմաններու բերումով, սակայն, Բիւրոները չկրցան իրականացնել այդ որոշումը եւ, Ընդհ. Ժողովին տեղ, 1901ի գարնան Ֆիլիպէի մէջ տեղի ունեցաւ Դաշնակցութեան Կամփոխ Ներկայացնող Մարմին Ժողովը, մասնակցութեամբ երկու Բիւրոներու եւ Վիշապի ու Լեռնավայրի Պատասխանատու Մարմիններու ներկայացուցիչներուն։ Գիտեմք՝ որ այդ Ժողովին մէջ որոշուեցաւ ձեռնարկել «Փոքորիկ»ի (քունի հանգանակութեան) գործին, Պատասխանատու Մարմինները լրացուեցան նոր անդամներով, առաջին անգամ՝ տրուեցաւ Սուլթանի մահափորձին սկզբունքային որոշումը (իրականացումը կապուած էր «Փոքորիկ»ի յաջողութեան հետ), եւ ընդհանրապէս՝ Դաշնակցութեան զանազան շրջաններու յետագայ գործունէութեան կապակցութեամբ տրուեցան կարեւոր որոշումներ (տեսնել Արամ Յակոբեանի պատասխանները Ս. Վրացեանի հարցումներուն, էջ 94-98)։

1903ի կէսերուն ժամանակը եկած կը նկատուէր արդէն եւ, Յուլիսի մէջ, մարմիններուն ուղղուած գաղափարի շրջաբերականով մը, երկու Բիւրոները Ընդհ. Ժողովի համար նկատի կ'առնեային նոյն տարուան Հոկ-

տեմբեր ամիսը, զրկելով միաժամանակ Ժողովի օրակարգը։ Գործնական դժուարութիւնները սակայն քիչ մը եւս ուշացուցին Ընդհ. Ժողովի գումարումը՝ որ ի վերջոյ տեղի ունեցաւ Սոփիայի մէջ՝ 1904ի Փետրուար եւ Մարտ ամիսներու ընթացքին։

Ստորեւ այդ շրջաբերականը, որ տպագրուած է 23x30 սմ. չափի բարակ թուղթի մը երկու երեսներուն վրայ։

Գաղտնի

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ (ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ-ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

Համաձայն վերջին Ընդհանուր Ժողովի որոշման՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հետեւեալ Ընդհանուր Ժողովը տեղի պիտի ունենար ոչ ոչ քան 1900 թուի վերջերը։ Սակայն շարք մը աննպաստ եւ արդէլառիթ պայմաններ 1898էն ի վեր արդէլք հանդիսացան Ընդհանուր Ժողովին գումարման, որուն փոխարէն տեղի ունեցաւ 1901ին՝ Կամփոխ ներկայացնող մարմնի նիստը։

Թողնելով Ժողովի այսչափ ուշանալու պատճառները մանրամասնօրէն պարզելը առաջիկայ ընդհանուր համախմբման՝ այժմ, հասունացած պահանջի եւ կարեւորութեան առջեւ, երկու Բիւրոները նախաձեռնութիւն կը ստանան ձեռնարկել Լ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովի գումարման։ Ասոր հետ միասին, նկատի ունենալով որ կազմակերպութեան զանազան մարմիններ՝ սնդելով Ընդհանուր Ժողովի հրաւիրելու կարեւորութիւնը, վերջերս ուղարկեցին Բիւրոներուն՝ Ժողովին առաջարկելիք շարք մը հարցեր, մենք, համաձայն վերջին Ընդհանուր Ժողովի առնագրութեան 63րդ յօդուածի տրամադրութեան, այժմէն իսկ հնարաւոր կը համարենք առաջարկել ձեզի զննուելիք հարցերուն ցանկը։

Վերջին Ընդհանուր Ժողովի առնագրութեան համաձայն, Ժողովի գումարման մասին կոմիտէներուն լուր պէտք է տրուէր գոնէ վեց ամիս առաջ։ Սակայն ի նկատի ունենալով քանի մը ստիպողական եւ յուրջ հանգամանքներ, մանաւանդ որ շատ տեղեր արդէն կայացած են շրջանական Ժողովներ, իսկ միւս տեղերէն ցանկութիւն յայտնած եւ հետեւապէս խօսեցած Ժողովին առաջարկուելիք հարցերի մասին, մենք օղտակար կը գտնենք որ Ժողովը տեղի ունենայ կարելի եղածին չափ շուտով, եթէ հնար է՝ ոչ ոչ քան Հոկտեմբերի սկիզբները։ Ուստի մենք կը խնդրենք երկրի Կեդրոնական Կոմիտէներէն՝ ներկայ Շրջաբերականը ստանալուն պէս՝ իսկոյն եւ եթ զիմել անհրաժեշտ պատրաս-

տուժիւններու եւ իրենց ներկայացուցիչը (եթէ անկարելիութիւն կայ՝ գրաւոր կարծիքները) անյապաղ զրկել թիւրքիայէն դուրս գտնուող մտակայ վայրը, լուր տալով Բիւրոններէն մէկուն իրենց պատգամաւորի կամ կարողադրութեան մասին: Երկրի կոմիտէներուն պատասխանները առնելով՝ Բիւրոնները անմիջապէս կը հաղորդեն ժողովին մասնակցող մարմիններուն՝ ժողովի գումարման տեղը եւ օրը:

Ժողովի որոշումները աւելի արժէքաւոր դարձնելու համար՝ ցանկալի է որ ամէն մարմին, ամբողջութեամբ իր շրջանի բոլոր ձեռնհաս ուժերի խորհրդակցական ցուցմունքներով, ծանրանայ գլխաւորապէս այն հարցերուն վրայ, որոնց մասնակցած է ինքը գործնականապէս, խոյս տալով վերացական այն տեսակ առաջարկութիւններէ, որոնց իրագործումը վեր է յեղափոխական մարմնի ուժերէն:

Բոլոր Դաշնակցականներու անկեղծ ցանկութիւնն է, որ առաջիկայ Ընդհանուր Ժողովը ճշգրտէ պատկերացնէք զինուորական, դրամական եւ կազմակերպական այն բոլոր ուժերը, որոնք անհրաժեշտ են հայկական դատը առաջ մղելու համար:

Հինդ տարուայ պատրաստութենէ յետոյ, ընկերներ, աշխատինք որպէս զի առաջիկայ Համախմբումը լինի շարժական, գործնական, ընդունակ տալու սկզբած կուռին մի նոր եւ ուժգին զարկ:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

13/1 Յուլիս 1903

Հ Ա Ր Յ Ե Ր Ո Ւ Յ Ա Ն Կ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ

- 1) Զեկուցումներ, գրաւոր, որոնք նպատակ պիտի ունենան պատկերացնել իւրաքանչիւր մարմնի գործունէութիւնը 1898 թուէն մինչեւ 1903:
- 2) Դրամական հաշուետուութիւն իւրաքանչիւր շրջանի (1898-1903), նախորոշած ձեւով:
- 3) Ընդգրկու տեղեկութիւններ երկրի վիճակի եւ յեղափոխութեան գործունէութեան ազդեցութեան մասին:

Բ. ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԳԻՈՅ ՄԷՋ

- 4) Ժողովրդական ապստամբական ձեռնարկներ՝ ուժերի կեդրոնացումով (Բ....., Լ..... եւն.) (1):
- 5) Ցուցական գործունէութիւն եւ ատոր համար յարմար կէտեր (Վիշապ, Ոսկեհանք եւն.):

(1) Բարձրաւանդակ, Լեւոնապար, եւն.:

- 6) Կոմիտէ չեղած վայրերում՝ անհատական կոխ: Տեւորական եւ այլ միջոցներ:
- 7) Հրոսակային եւ տեղական ինքնապաշտպանողական խմբեր:
- 8) Ժողովուրդը գործնականապէս պատրաստելու եւ զինելու միջոցներ:
- 9) Թղթակից-ուսումնասիրողներ:

Գ. ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԳԻԱՅԷՆ ԴՈՒՐՍ

I. ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

- 10) Հայկական Դատը պաշտպանող օրգաններ, Pro Armenia-ի նմանողութեամբ, երեք լեզուներով (Ֆրանսերէն, անգլերէն եւ գերմաներէն): Գրքերու հրատարակութիւն օտար լեզուներով:
- 11) Միջազգային մնայուն Բիւրօ եւ տեղական կոմիտէներ եւրոպական մայրաքաղաքներու մէջ: Միտինկներ եւ կոնֆերանսներ:
- 12) Պարլամենտական ազիտացիա, ընդունել տալու եւրոպական դոնէ չորս խորհրդարաններում մէջ՝ յօդուտ հայերու միջամտելու բանաձեւեր:
- 13) Արեւմտեան Բիւրոյին վերաբերեալ հարցեր (լայնացնել Բիւրօ-խմբադրութիւնը, փոխադրել Բիւրօ-խմբադրութիւնը Փարիզ եւն.):

II. ՀԱՅԱՐԱՍՏԱԿ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

(Կովկաս, Պարսկաստան, Ամերիկա եւն.)

- 14) Դրամական խնդիր (տուրք, հանգանակութիւն եւն.):
- 15) Պրոպագանդ (շրջող մշտական պրոպագանդիստներ՝ երկրի մարմիններու եւ Արեւելեան Բիւրոյի կողմէն):
- 16) Հրատարակչական գործունէութիւն (պարբերականներ, թուրքերէն, բրօշիւրներ, պատկերներ եւն.):
- 17) Զինուորական ուժ: Կուուող գնդեր պատրաստելու միջոցներ:
- 18) Զէնք եւ ռազմամթերք ձեռք բերելու խնդիրներ: Զինադրծներ:

Դ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԴԻՐ

- 19) Վերստուգումն Բ. Ընդհանուր Ժողովի որոշումներուն, պարունակուած մանաւանդ 25-45 երեսներու մէջ (տես Մրազիր-Ատենադրութիւն Բ. Ընդհանուր Ժողովի, երկրորդ տպագրութիւն):
- 20) Ներքին կանոնադրութիւն կոմիտէներու, զինուորական խմբերու եւ այլ մարմիններու համար:

- 21) Նուազագոյն պահանջները խմբերէն, կոմիտէներէն եւ այլ մարմիններէն՝ երկրին մէջ եւ երկրէն դուրս. սերտ կապ անոնց մէջ:
- 22) Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմինը աւելի շարժական դարձնելու միջոցները:
- 23) Օրգանի տուրք (միանուագ կամ բաժանորդագրութեան ձեւով):
- 24) «Կարմիր խաչ» բանտարկեալ, աքսորուած ու դատուող ընկերներուն օգնելու համար:

Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀԱՄԵՐԱՇԵ

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 25) Հայ յեղափոխական կուսակցութիւններու հետ:
- 26) Թիւրքիայի մէջ՝ թիւրքերու, մակեդոնացիներու, չորդերու եւ այլանացիներու հետ:
- 27) Ռուսաստանի մէջ՝ բանուորական, սահմանադրական եւ այլ հոսանքներու ու շարժումներու վերաբերմամբ:

Զ. ՆԱԽԱՀԱՇԻՒ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

- 28) Նախահաշիւ. առաջիկայ ձեռնարկների:
- 29) Ընտրութիւն Պատասխանատու մարմիններու:
- 30) Ընտրութիւն Բիւրոններու:

Օրակարգը, — «Հարցերու ցանկ», — ամբողջական գաղափար մը կու տայ այն բոլոր հիմնական խնդիրներուն մասին՝ որոնք 1903ին անմիջական կերպով կը գրադեցնէին Դաշնակցութիւնը, — մարտական եւ ցուցական գործունէութիւն, արտասահմանեան քարոզչութիւն (Pro Armenia, եւն.), կազմակերպական անյետաձգելի հարցեր, դրամական խնդիր, եւ այլն, — եւ որոնց մասին Երրորդ Ընդհ. Ժողովը պիտի գար յստակ բանաձեւումներ տալու եւ վիճակներ արձակելու: Պարզ է նաեւ, անշուշտ, որ Բարձրաւանդակի (Սասուն) աքսորաւորութեան հարցը, որ որպէս իրականութիւն ձեւացած էր 1903 Յուլիսէն 1904 Փետրուար երկարող 7-8 ամիսներուն ընթացքին, Ընդհ. Ժողովը ամենէն աւելի յուզող եւ գրադեցնող խնդիրներէն մէկը պիտի ըլլար:

1904ի Յունուարի վերջերը Սոփիա հաւաքուած էին Դաշնակցութեան առաջին եւ երկրորդ սերունդներու կարկառուն ներկայացուցիչներէն շատեր, կազմակերպական ու մարտական ղեկավարներ՝ ինչպէս Քրիստափորն ու Սիմոնը, Աշոտ-Սրկաքն ու Կայծակ-Վաղարշակը, Աւետիք Սահակեանն ու Սաֆոն, Վարդան-Շահպագն ու Ա. Վաւանթը, Լեւոնապարի Մարթինը, Ռահիլէրն ու Վահրամը (Յ. Գալփայեան) եւ բազմաթիւ ուրիշներ: Խորհրդակցական ձայնով հրաւիրուած էր նաեւ Pro Armeniaի խմբագիրներէն՝ ֆրանսացի Փիէա Քիյառը: Մեծ Բացական Ռաստոմն էր անկասկած, կազմակերպական գործերով գրադուած այլաբ: Ներկայացուցիչ չունեցաւ նաեւ Վիշապը (Պոլիս):

Երրորդ Ընդհանուր Ժողովին մասնակցած կարեւորագոյն դէմքերէն չորսը շուտով պիտի իյնային պարտականութեան նամբուն վրայ, չորսն ալ փաստօրէն «զէնքն ի ձեռքին», — Սրկաքը եւ Կայծակը՝ 1904 Յունիսին, Ընդհ. Ժողովէն քանի մը ամիսներ ետք միայն, Անդրկովկասէն առանձին խումբերով Սասուն անցնելու միջոցին, մօտաւորապէս նոյն օրերուն եւ միեւնոյն պայմաններուն մէջ՝ Վանայ Ֆլէթեան Զոյ-Աղան, եւ Քրիստափորը՝ 1905 Մարտին, Վիտոշի ստորադր, Սուլթանի ահաբեկման ծրագրի ծիրին մէջ՝ ռուսի փորձի պահուն: Թորգոմը (Թուման Թումանց), որ Բարձրաւանդակի ընտրեալ ներկայացուցիչն էր Ընդհանուր Ժողովին, բայց որ, Սասունէն ապահով կերպով Անդրկովկաս անցնելէ ետք, նախընտրեց աւելի մեծ խումբով մը վերադառնալ պայքարի պատրաստուող արծուերոյնը, նահատակուեցաւ նամբուն վրայ, կուռի բռնուելով թուրք գերագանց ուժերու հետ: Կազմակերպական եւ մարտական աւելի անմիջական մտահոգութիւններով գրադուած ոչ նուազ մեծամուն այլ ընկերներ, ընդ որում՝ Հրայրն ու Վահանը (Մանուէլեան), նայնպէս նահատակուեցան, Երրորդ Ընդհանուր Ժողովի աւարտէն հագիւ մէկ կամ երկու ամիս անցած: Գերագոյն ղեկավարներու առաջնահերթ ինքնապաշտպանութեան ամենաժամանակ եւ ամենավտանգաւոր գօտիին մէջ, աւանդութիւն է եղած Դաշնակցութեան համար՝ Բարզէն-Սիւնիներէն մինչեւ Եփրատներն ու Քեռիները, եւ հիմնական գաղտնիք՝ անոր բարոյական ամբաստի դիմագծութեան:

1.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Տնարկի սկզբը մեկ էլէն քիչ մը աւելիմ յատկացում է ստարագրութիւններու: Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. Ժողովի մասնակցողները խորագրին տակ կը գտնենք 19 ստարագրութիւններ, որոնցմէ շատերուն համաձայնէր եւս ճշուած է՝ ըստ երևոյթիմ ենթակայի ձևազարդ: Շարքը հետևեալն է.---

- 1.- Աշտ Երկաթ, պատգամաւոր Պարակի եւ Սալմայ Զորի կեդր. կոմիտէի, ճանի փոխանորդ պատգ. Բարձրաւանդակի.
- 2.- Վաղարշակ-կայծակ, պատգամաւոր Մշոյ կեդր. կոմիտէի.
- 3.- Երուանդ Համալեւեան, պատգամաւոր կարսի եւ Երևանի.
- 4.- Վարդ Պ., պատգամաւոր Խզիքի շրջանի.
- 5.- Տիգրան, պատգամաւոր Բաթումի.
- 6.- Ս. Պարզեւ, Ամերիկայի պատգամաւոր.
- 7.- Աշտ-Մարքիմ.
- 8.- Աշտ Եղիկեան, պատգամաւոր Եգիպտոսի.
- 9.- Թորգոմ.
- 10.- Ան. Գոշ, փոխանորդ պատգամաւոր Պալմանի.
- 11.- Սաֆօ, Ոսկանապոսի ներկայացուցիչ.
- 12.- Վահրամ, Ատանայի եւ Այնթապի պատգամաւոր.
- 13.- Սմբ. Օհանեան (Անտան).
- 14.- Մէլիկի, Երասայի դաշնակցական ռուսաձուլութեան ներկայացուցիչ.
- 15.- Վահաբ, գործիչ Ամերիկայի.
- 16.- Էլլէն, ներկայացուցիչ Արևմտ. Բիւրոյի.
- 17.- Սամսոն, ներկայացուցիչ Վրէժի.
- 18.- Յելիքս, ներկայացուցիչ Գարի.
- 19.- Ռահիկեր, կիլիկիոյ Պատ. կեդր. կոմիտէի ներկայացուցիչ.

Այս ցանկը ամբողջական չէ, քանի որ քիչ մը վարք, արձանագրութեան մէջ, կը կարգանք՝ որ ժողովիմ մասնակցած են 20 պատգամաւորներ ու գործիչներ:

Երկաթը ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Ամերիկայէն Երկիր վերադարձած Արմենակ Ս. Լեւոնեանը (տեսնել Նիւ-Իթիք, Ա. հատոր, ցուցակ անձնանուններու, էջ 295), որ 1902էն ի վեր կը գործէր Ախլարի (Պարակ) եւ Պիքլիսի (Սալմայ Զոր) շրջաններում մէջ՝ իբրև անձամ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի (Հրայրի եւ Վահանի հետ):

Կայծակը (Վաղարշակ Պապասարեան) Տարօնի զինուորական ծանօթ ղեկավարներէն է, գործակցած Սերոբիմ, Անգրամիկիմ եւ Գեորգ Զաւարչիմ. մասնակցած է Ասաֆիոց վանքի կառուին:

Երուանդ Համալեւեանը (Համալեւեան) կարսի շրջանի գործիչներէն է եղած: Արձանագրութեան մէջ կը կրէ Հայկունի անունը:

Վարդ Պարակեանի (Վարդօ) անուն հանդիպած ենք քանիցս, այս հատորիմ իսկ մէջ: Դաշնակցութեան Պալմանեան շրջանի կեդրոնական ղեկավարէն էր եւ խմբագիրը «Շարժում»ի:

Պարզեւի Տիգրանը արդեօ՛ք կապ ունի 1899 Յունուարի Արեւելեան Բիւրոյի ժողովիմ մասնակցած Տիգրանիմ հետ. -- անորոշ է: Մեզի անձանօք է ճան Ամերիկայի ներկայացուցիչ Ս. Պարզեւը (հաւանաբար ծածկանուն մը):

Աշտ-Մարքիմի (Մարտոսեան), լաւ ծանօթ են Նիւ-Իթիքու Ա. հատորի ընթերցողները: Այս հատորիմ մէջ եւս առիթ ունեցանք իր մասին խօսելու, Աբամ Յակոբեանի պատասխաններում առջնութեամբ:

Եգիպտոսի պատգամաւոր Աշտ Եղիկեանը, որուն անունը արձանագրութեան մէջ վերածուած է Աշտ Բագրատունիի, ուրիշ մէկը չէ եթէ ոչ Պալմայ Պատ. Մարմնի երբեմնի անձամ Սեւ-Աշտը (կարապետ Եղիկեան):

Թորգոմը, Պալմայ գործիչներէն (բուն անունով՝ Արտաշէս Սե-

մերձեան), պէտք չէ շփոթել Բարձրաւանդակի բացակայ ներկայացուցիչ Թորգոմիմ -- Թուման Թումանեանի -- հետ:

Համալեւեանը ծանօթ է Անտան Գոշը, Պիտեանի փոխանորդը՝ իբրև Պալմանի շրջանի ներկայացուցիչ, որ Ընդհ. Ժողովէն ետք հաստատուեցաւ ժընեւ, իբրև տեսակ մը զիւսանակիտ ԴՌՕՇԱԿի խմբագրութեան եւ Արեւմտեան Բիւրոյի:

Սաֆօն (կարմրաթշիկ) Մարտիրոս Մարգարեան է, կարսի եւ Պալմանի անձնակիմ գործիչներէն, որ Յուլիան Մարմնիմ մէջ իր ունեցած ոչ-դաշնակցական վայելի կեցածէն համար կուսակցութեան արտաբուսեցաւ 1907ի 4րդ Ընդհ. Ժողովի որոշումով: Վահրամիմ եւս (Յ. Գալփայեան) ծանօթ ենք Նիւ-Իթիքու Ա. հատորէն (տեսնել անձնանուններու ցուցակը, էջ 294):

Գիտենք՝ որ Սմբատ Օհանեանը կամ Անտոնը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ Սիւնն Զաւարչեանը իմքը:

Տարմշատի Ուսանող. Միւրեան հաստատագիրը կը յայտնէ՝ թէ 29 ձայնով պատգամաւոր է ընտրուած Մ. Գոլուսեանը (կարսի, Ասանաք), մինչ 26 ձայն միայն ստացած է Ազատը: Ժողովի արձանագրութիւնը ցոյց կու տայ սակայն՝ որ Ազատէն է ներկայ եղած այնտեղ, իբրև Երասայի Դաշնակցական Ուսանողութեան ներկայացուցիչ: Մէլիկիմ Ազատէն է ուրեմն:

Վահաբը Արշակ Վասեանն է, որ 1898էն ի վեր կը գործէր Ամերիկայ:

Էլլէնը՝ Քրիստափորը:

Սամսոնը, Ստեփան Թադեոսեան, Արտապտակեանի շրջանի ամենահին եւ ամենէն կեդրոնական ղեկավարէն է, Քրիստափորի բոլոր գաւազնը:

Յելիքսի (Զաւեանեան, ըստ արձանագրութեան) բուն ինքնութիւնը անծանօթ է մեզի:

Իսկ Ռահիկերը (բուն անունով՝ Միսաֆ Վարդանեան) ճայնակէ կը ճանչնանք՝ Ա. հատորի կիլիկեան գործունէութեան ճանիւրով:

Վերոյիշեալ 19 անուններէն զատ, արձանագրութեան մէջ կը գտնենք տակաւին հետեւեալները, -- Յովհաննէս՝ պատգամաւոր Վանի (պէտք է ըլլայ Յիլեան Զոյ աղան, որուն մասին կը խօսի Ռուբէն իր Ա. հատորիմ մէջ, էջ 431), Աւետիք՝ ներկայացուցիչ Արեւելեան Բիւրոյի (Ա. Սահակեան, Հայր Արքեպօս, Արտաշէս՝ պատգամաւոր Ռուսաստանի դաշնակցական ռուսաձուլութեան (?), Վարդան՝ գործիչ Վանայ շրջանէն (Վարդան-Շահպազը), Լորիս՝ գործիչ Արտասահմանեան Փոքիկեանի (ամենայն հաւանականութեամբ՝ բժիշկ Լորիս Մելիքեան), եւ, իբրև հիւր, Փրանսոցի ծանօթ ընկերակցական փիլա Քիլաբը (խմբագիր Pro Armenia):

Կու տանք ուրեմն ամբողջական արձանագրութիւնը, Մարմիններուն սահմանուած գրոյկին մէջ տեղ գտած բաժինները՝ հայաստանեան տառերով, *իսկ մնացեալ՝ չհրատարակուած մասերը պարզ (բոլորովոր) տառերով:*

Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովը բացուեցաւ 31 Յունուարի (Ն. Տ.) 1904ին Սոֆիայի մէջ(1):

Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը բացատրեց այն հանգամանքները, որոնք պատճառ եղած էին ժողովին այսչափ ուշ գումարուելուն:

98ի Բ. Ընդհ. Ժողովի տուած որոշումները, տիրող անսպաստ պայմաններու պատճառով, մինչեւ 1900ի վերջը գործադրուած չլլալով՝ ձեռնհաս մարմիններու մէջ տրամադրութիւն չկար ժողով գումարելու: Ատոր փոխարէն կազմակերպութիւնը բաւականացաւ 1901ին

Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմնի Ժողով կազմելով: Այդ ժողովի կողմէ տրուած որոշումներու գործադրութիւնը մօտ երկու տարի եւս յետաձգեց Ընդհ. Ժողովի գումարումը: Յետոյ՝ քանի մը խօսքով հաստատեց առաջին՝ այն առաջընթացները, որ Բ. Ընդհ. Ժողովէն ետքը կը նկատուի թէ՛ ընդհանրապէս հայ ժողովրդի տրամադրութեան մէջ դէպի յեղափոխական գործը եւ թէ մասնաւորապէս Դաշնակցական կազմակերպութեան ծաւալման մէջ, երկրորդ՝ շեշտեց այն ծառայութիւնները, կորս Դաշնակցութիւնը մատուցած է հայկական շարժումին 98էն ի վեր, երբ նոյնիսկ յեղափոխական գաղափարը օրէ օր նստմանալու վրայ էր: Եւ խօսքը վերջացնելով՝ կարդաց անունները այն բոլոր դաշնակցական գործիչներուն, որոնք յեղափոխական վերջին շրջանին մէջ նահատակուած էին: Ժողովը իր յարգանքը մատոյց ազատութեան այդ մարտիկներու յիշատակին՝ յոտնկայս լսելով անոնց խնկելի անունները: Ծանուցանելով ժողովի պաշտօնական բացումը, ձեռնարկուեցաւ դիւանի ընտրութեան: Ժողովին ներկայ էին հետեւեալ ընկերները.

1. Բարձրաւանդակի ներկայացուցիչ -- Թորգոմի փոխանորդ Աշտ-Երկաթ
2. Տարօնի ներկայացուցիչ -- Վաղարշակ
3. Ախլարի ներկայացուցիչ -- Աշտ-Երկաթ
4. Համիրի (Վան) ներկայացուցիչ -- Յովհաննէս
5. Լեոնավայրի (Կիլիկիա) Պատ. Մարմնի ներկայացուցիչ -- Ռահիկեր
6. Հովիտի (Այնթապ) ներկայացուցիչ -- Վահրամ
7. Խոր-Վիրապի (Ատանա) ներկայացուցիչ -- Վահրամ
8. Ոսկեհանքի (Իսպիր) ներկայացուցիչ -- Վարդօ
9. Զրաբերդի (Կարս) ներկայացուցիչ -- Հայկունի
10. Քարի (Ալեքսանդրապոլ) ներկայացուցիչ -- Տեյիքս-Զաւէնեան
11. Մրգաստանի (Երեւան) ներկայացուցիչ -- Հայկունի
12. Ոսկանապատի (Բագու) ներկայացուցիչ -- Սաֆօ
13. Նաւահանգիստի (Բաթում) ներկայացուցիչ -- Տիգրան
14. Վրէժստանի (Պարսկաստան) ներկայացուցիչ -- Սամսոն
15. Բալքանեան թերակղզիի ներկայացուցիչ -- Պիոնեան եւ Գոշ՝ փոխանորդաբար
16. Ամերիկայի ներկայացուցիչ -- Պարզեւ
17. Եգիպտոսի ներկայացուցիչ -- Աշտ Բագրատունի
18. Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչ -- Աւետիք
19. Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչ -- Էլլէն
20. Հիւսիսակերտի (Պետերբուրգ) Ուսանողութ. ներկայացուցիչ -- Արտաշէս (խորհրդակցական ձայն)
21. Երոպայի Դաշն. Ուսանողութ. ներկայացուցիչ -- Մէլիկի (խորհրդակցական ձայն)

Այս պատգամաւորներէն պատ Ընդհ. Ժողովի կողմէ գործիչ ընկերներ հրաւիրուած էին՝

23. Վարդան -- Վանայ շրջանէն
24. Թորգոմ -- Վիշապի շրջանէն
25. Մարթին -- Լեոնավայրի շրջանէն
26. Սմբատ Օհանեան -- Արեւմ. Բիւրոյի շրջանէն Արեւմ. Բիւրոյի եւ Լեոնավայրի Պատ. Մարմնի կողմէ հրաւիրուած էին՝
27. Վահաբ -- Ամերիկայի շրջանէն
28. Լորիս -- Արտ. Բորբազանդի գործիչ
29. Քիլաբ -- P. Armeniaի խմբագիր (խորհր. ձայնով) Ընդամէնը 26 հոգի՝ 29 ձայնով, որոնցմէ 3ը խորհրդակցական(2):

Ծանօթ.-- Թէեւ վերջին Ընդհ. Ժողովի որոշման համեմատ Սարուստանը միայն 4 ձայն պէտք էր ունենար, բայց Քարն ալ կովկասեան Հրջանական (Ռայոնական) Ժողովի որոշումով պատգամաւոր մը դրկած ըլլալով՝ Ընդհանուր Ժողովը հիմնուելով Ծրագրի 70, 71, 72 յօդուածներու իմաստին վրայ եւ յարգելով Հրջանական Ժողովի որոշումը, Քարի պատգամաւորին ձայնը ճանչցաւ:

Նախապատրաստական այս գործերը աւարտելէ ետքը, Ժողովը անցաւ օրակարգի խնդիրներուն:

1.- ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

Ժողովը քանի մը օրուան ընթացքին մէջ լսեց հետեւեալ տեղեկագիրները.-- 1. Նաւահանգիստի, 2. Ոսկանապատի, 3. Եգիպտոսի, 4. Հիւսիսակերտի, 5. Ամերիկայի, 6. Քարի, 7. Մրգաստանի, 8. Զրաբերդի, 9. Վրէժի, 10. Արտաս. Բորբազանդի, 11. Ոսկանապատի, 12. Համիրի, 13. Վիշապի, 14. Լեոնավայրի, 15. Արեւել. Բիւրոյի, 16. Եր. Դաշնակց. Ուսանողութեան, 17. Արեւմ. Բիւրոյի, 18. Պալք. Կեդր. կոմիտէի, 19. Ախլարի, 20. Բարձրաւանդակի:

Այս տեղեկագիրներու ընթերցման միջոցին Ժողովը շնորհակալութիւն քուէարկեց Pro Armeniaի խմբագրական մասնախմբին, պատուոյ նախագահ ընտրելով անոր անդամները, Արտասահմանեան Բորբազանդի ներկայացուցիչին, եւ Բարձրաւանդակի Պատ. Մարմնին, վերջինին՝ հետեւեալ բանաձեւով.-- «Ընդհ. Ժողովը լսելով Բարձրաւանդակի տեղեկագիրը, որոշեց Բարձրաւանդակի Պատ. Մարմնին եւ Զինուորական Խորհրդին բոլոր անդամներուն, այդ շրջանի կռուողներուն ու ազգաբնակութեան իր շնորհաւորութիւնը եւ ընկերական երախտագիտութեան պագումը յայտնել այն ժողովրդական կազմի, ընկերական յարաբերութիւններու եւ համերաշխ գործակցութեան համար, որու շնորհիւ Տարօնի շրջանին մէջ բարձր եւ կենդանի է պահուած յեղափոխական դրօշակը»:

Ժողովը նկատելով որ ներկայացուած տեղեկագիր-

ները որոշ ծրագրով մը չեն կազմուած՝ որոշեց ա) յանձնարարել Արեւմ. Բիւրոյին որ այդ առթիւ հաւաքուած նիւթերէն օգտուելով յատուկ ծրագիր մը կապմէ ապագայ տեղեկագիրներու համար եւ ցրուէ Կեդր. Կոմիտէներուն, ք) Տեղեկագիրներէն ծագած հարցերը անցընել օրակարգի մէջ:

2.- ԺՈՂՈՎԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ

Ժողովին մէջ կարգադրուեցան հետեւեալ նամակները — Ընկեր Իւուսֆեանէ, Բարձրաւանդակի Պատ. Մարմնի անդամ Թորգոմէ, Ատրպատականի Կեդր. Կոմիտէէն, Բաշկանեան Կ. Կոմիտէէն, Լեռնավայրի Բազէ Կ. Կոմիտէի պատգամաւոր Կիլիկեանէն (2 նամակ), Տարմազատի Դաշն. Հայ ուսանողութենէն, Մարմաստէն՝ Շատախի խմբապետ Փոխիկէն, Աղեքսանդրիայէն՝ Ոսկեհանքի նախկին գործիչներ Արշակէն եւ Տիգրանէն, Շամիրէն՝ Կոմսէն եւ Բայանդուրէն, ընկեր Շատիկէն (2 նամակ), Ոսկեհանքի առժամեայ Կ. Կոմիտէի գործադիր վարչութենէն, Նիւ Եորք՝ Գնուներէն, Բարձրաւանդակի Պատ. Մարմնի անդամներ Վահանէն եւ Դոնիքէն:

Գնուներին նամակը անհետեւանք թողուեցաւ. Դոնիքի նամակը անանուն ըլլալուն պատճառով չկարգադրուեցաւ. իսկ միւս նամակներու մէջ յայտնուած խնդիրները մտցուեցան Ժողովի օրակարգին մէջ:

3.- ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿ (ՏԱՔՏԻԿ) — ԱՌԱՋԻԿԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ —

Կարգադրուեցաւ Բ. Ընդի. Ժողովի արձանագրութեան այն մասը, որ կը վերաբերի ցուցական գործունէութեան եւ կեդրոնացումի: Կեդրոնացում բառը անցեալի մէջ թիրիմացութիւններու տեղի տուած ըլլալով՝ անհրաժեշտ համարուեցաւ որոշ սահմանել եւ Ընդի. Ժողովը ընդունեց հետեւեալ բացատրութիւնը.

«Կեդրոնացում կը նշանակէ համախմբում ռազմական, դրամական եւ կազմակերպող ուժերու՝ աշխարհագրական եւ ազգաբնակչական տեսակէտով նպաստատր պայմաններ ներկայացնող սահմանափակ վայրերու մէջ՝ իրենց անհրաժեշտ շրջանակներու հետ»:

«Իւրաքանչիւր շրջանի անհրաժեշտ շրջանակներու, ինչպէս նաեւ ուժերու բաժանման մասին վերջնական որոշումը կու տայ նոյն շրջանի Պատասխ. Մարմինը»: Ժողովը որոշեց շարունակել ցոյց-կեդրոնացումի տաքտիկը, այնպէս ինչպէս որոշած էր Բ. Ընդի. Ժողովը:

Ա.— ԲԱՐՁՐԱՆՈՒԹԵԱՆ

Բարձրաւանդակի Պատ. Մարմնին ներկայացուցիչը նկատելով որ 1) Թուրք կառավարութիւնը արդէն

սկսած է պատրաստութիւններ տեսնել յարձակում գործելու համար Սասնոյ վրայ, 2) Բաղադրական պայմանները նպաստաւոր են ռեւէ շարժում ընելու, քանի որ գարնան մակեդոնական շարժումը պիտի վերսկսի եւ եւրոպական դիւանագիտութիւնը պիտի ստիպուի դադարիլ արեւելեան հարցով, որով հայկական ո՛րեւէ ապստամբական գործ կրնայ մեր հարցը կապել մակեդոնական հարցին, 3) Մակեդոնական եւ հայկական ապստամբութեանց միաժամանակ պայթումին հետեւանքով Թուրք կառավարութեան զինուորական ուժը երկուքի բաժնուելով մեր թշնամին չպիտի կարենայ իր բոլոր ուժովը յարձակիլ Սասնոյ վրայ եւ մարել մեր ապստամբութիւնը. 4) Երբ Սասունը չչարժի, հոն գտնուած ուժերը կրնան ցրուիլ, կարգապահութիւնը այլեւս անկարելի կը դառնայ, հետեւաբար կոխուած անխուսափելի եւ նպատակայարմար կը համարէր: Ընդունելով կռուի անխուսափելիութիւնը՝ Սասնոյ ներկայացուցիչը անհրաժեշտ կը տեսնէր նաեւ յարձակողական տաքտիկի հետեւիլ. որովհետեւ այդ տաքտիկը կարելիութիւն կու տար առաջին րոպէին զինուորական կարեւոր դիրքեր գրաւել, սարսափեցնել թուրք զօրքն ու քիւրտերը, գրաւել վէճը ու ռազմամթերք, տէր դառնալով քանի մը կարեւոր անցքերու՝ անկարելիութեան մատնել քիւրտերու հաստատուիլը Սասնոյ մօտերը (ըզրտերը սովորութիւն ունին ամէն գարնան անցնիլ Սասնոյ շրջանակները եւ հոն մնալ մինչեւ ձմրան սկիզբը), քանի որ այդ քրտերը բնակելով կռուի վայրին վրայ՝ կամաց կամաց պիտի ստուարացնեն մեր թշնամոյն շարքերը, ուժ ցոյց տալով՝ մէկ քանի ցեղերը ստիպել հայ յեղափոխականներու հետ դաշնակցելու:

Ժողովականներու մէկ քանիի կարծիքով թուրք կառավարութեան կողմէ եղած պատրաստութիւնները դեռ որոշ ապացոյց մը չէին կրնար նկատուել որ կառավարութիւնը վճռած է առաջիկայ գարնան անպատճառ յարձակում գործել Սասնոյ վրայ, մանաւանդ որ Սասնոյ Մարմինը վերջին տարիներս քանի մը անգամներ ունեցած է այդ վախը, բայց կառավարութիւնը ոչ մէկ փորձ ըրած է յարձակում գործելու, եւ հետեւաբար առաջիկայ գարնան ալ կրնայ պատահիլ, որ այդ վախը սոսկ վախ մնայ եւ թշնամին յարձակումէ խուսափի:

Գալով քաղաքական պայմաններու, այդ մասին ալ յայտնուեցան հետեւեալ կարծիքները.

1) Մակեդոնական շարժումը կարելի չէ նկատել անխուսափելի առաջիկայ գարնան համար, քանի որ քաղաքական վանապան պատճառներով մակեդոնացիները կրնան իրենց տաքտիկը փոխել եւ առաջիկայ տարին խաղաղ անցընել:

2) Մակեդոնական շարժումը եթէ նոյն իսկ վերսկսի գարնան եւ միաժամանակ Սասունը ապստամբի, հաւանական է որ միայն մակեդոնական հարցը դառնայ դիւանագիտութեան վերաբերի առարկայ, իսկ մերը անտեսուի՝ ինչպէս եղաւ կրետական խնդրին առէն: Ու-

տի այդ տեսակէտով աւելի նպատակայարմար էր մեր կողմէ ապստամբական որեւէ շարժում յետաձգել այնպիսի ժամանակի մը, երբ եւրոպական դիւանագիտութիւնը Թուրքիոյ մէջ ուրիշ գործ չունենալով ստիպուէր միայն մեր հարցով վերադիլ:

3) Թշնամիին զինուորական ուժին բաժանումին համար ալ դիտել տրուեցաւ, որ թուրք կառավարութեան համար այնչափ ալ մեծ դժուարութիւն մը չպիտի ըլլար կռուիլ թէ՛ Մակեդոնիոյ եւ թէ՛ Հայաստանի մէջ, քանի որ Հայաստանի մէջ գտնուած զինուորական ուժը մակեդոնական շարժումի եւ նոյնիսկ Բուլղարիոյ դէմ պատերազմի մը պարագային իսկ պէտք չպիտի ունենար կամ չպիտի ուզէր տեղափոխել: Իսկ թուրք կառավարութեան ելեմտական կացութիւնն ալ ա՛յնչափ գէշ չէ, որչափ մենք կը կարծենք, քանի որ կը տեսնենք թէ ի պահանջել հարկին միշտ դրամ կը գտնէ իր բանակի պէտքերու եւ սպառազինութեանց համար:

Այս առարկութիւնները ընդունելով կը կարծէին, որ եթէ Սասունը տարի մըն ալ պատրաստուի, նոր ուժեր հաւաքէ եւ երկրի միւս վայրերն ալ՝ ինչպէս Կիլիկիան՝ պատրաստուին միաժամանակ ոտքի ելլելու համար, աւելի մեծ շարժում կարելի կ'ըլլայ առաջ բերել, աւելի երկար դիմադրել եւ այդպիսով եւրոպական միջամտութիւնն ալ աւելի հաւանական կը դառնայ. մանաւանդ որ մեր ներկայ ուժերով չենք կրնար մեծ գործեր կատարել Սասնոյ մէջ եւ նոյնիսկ կրնանք պատճառ դառնալ Մշոյ Դաշտի կամ ուրիշ մօտակայ վայրերու կոտորածին: Յայտնուած թեր ու դէմ կարծիքներէ յետոյ Ժողովը միաձայն ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Ընդհանուր Ժողովը որոշեց տալ Բարձրաւանդակի Պատ. Մարմնին լիազօրութիւն ընտրելու այն ուղղութիւնը, որ ինք յարմար կը տեսնէ առաջիկայ գարնան համար, ղնելով անոր տրամադրութեան տակ պէտք եղած միջոցները եւ կռուի տեխնիկական մասի պատասխանատուութիւնը ձգել այս Մարմնին վրայ»:

Ժողովը որոշեց գոհացում տալ այդ շրջանին հետեւեալ պահանջներուն.

1) Անյապաղ լրացնել 2000 ոսկիի պահանջը, զոր դրած էր Բարձրաւանդակի Պատ. Մարմինը, վերջելով այդ գումարէն այն 1300 ոսկին, որ արդէն փոխադրուած է:

2) Յանձնարարել Ջրաբերդի եւ Մրգաստանի կոմիտէներուն կամ ժամանակաւոր Մարմնի մը՝

I Զիւար խմբով կամ ռեւէ ուրիշ միջոցով Սասուն հասցնել ուժանակ, ուժք, հրացանի մասեր, բերդանի գիլվէներ, 50,000 մոսիւնի փամփուշտ եւ բերդանի փամփուշտ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ եւ այս ամբողջը ոչ ուշ քան Մայիսի կէսը:

II Որպէսզի Բարձրաւանդակի շարժումները չներկայանան արտաքին աշխարհի առջեւ իբր տեղական լեռնային բուռն ժողովրդի մը դժգոհութեան արդիւնք, այլ նկատուին ընդի. հայկական բողոքի արտայայտու-

թիւն, Ընդի. Ժողովը պարտականութիւն կը ղնէ Թուրքիոյ սահմանակից մարմիններու վրայ՝ Սասնոյ շարժումները սկսելուն պէս, խորհրդակցութեամբ Բարձրաւանդակի Պատ. Մարմնի հետ եւ բիւրճէի սահմաններուն մէջ, ձայնակցիլ եւ օժանդակել երկրի շարժումին՝ յարձակողական այլեւայլ կռուի կամ տեղորի բնաւորութիւն կողմ ձեռնարկներով, թէ՛ սահմանի վրայ, թէ՛ Տաճկաստանի սահմանակից վայրերու մէջ: Այդ ձեռնարկները պիտի ըլլան յարձակումներ թրքական պահականոցներու եւ փոստերու վրայ, աւերում կառավարական հիմնարկութիւններու, սպանութիւն կամ գերում կառավարական պաշտօնեաներու: Նայելով ձեռնարկներու բնաւորութեան, խմբերը կրնան ըլլալ մեծ կամ շատ փոքր, բայց ցանկալի է որ ամէն մէկ խումբ բաղկացած ըլլայ ոչ աւելի քան 30 հոգի: Այս վերջին որոշումը Ժողովը կարեւոր համարեց այն տեսակէտով, որ կարելի կ'ըլլայ շատ խմբեր կազմակերպել:

Բոլոր այդ ձեռնարկները պիտի դասաւորուին Սասնոյ կռուին տեւողութեան համեմատ եւ տեղի չպիտի ունենան միաժամանակ:

Պարտաւորացնել Պնուսի, Ախլաթի եւ Վանայ կոմիտէները կազմել տեղական պայմաններուն եւ իրենց տրամադրութեան տակ գտնուած ուժերուն համեմատ թուցիկ հրոսակային խումբեր՝ յարձակողական ձեռնարկներու համար:

Այս որոշումը գործադրելու համար Վան եւ Պնուս ունին արդէն որոշ քանակութեամբ զէնք, իսկ Ախլաթ գրեթէ ոչինչ չունենալով՝ որոշուեցաւ ուշադրութիւն դարձնել մասնաւորապէս այդ վայրին: Այս առթիւ առաջարկուեցաւ նաեւ դիւանագիտական ցոյցեր ընել Կարին, Բաղէշ եւ ուրիշ կարեւոր վայրեր. Ժողովը ձգեց այդ խնդրի մասին ո՛րեւէ որոշում տալու գործը Բարձրաւանդակի Պատասխ. Մարմնին:

4) Սասնոյ դիմադրական ուժը աւելցնելու համար որոշեց որ Շամիրի Կ. Կոմիտէն պարտաւոր ըլլայ իր ձեռքին տակ գտնուած 121 հրացաններէն 60ը փոխադրել Ախլաթ մինչեւ գարուն Սասնոյ համար:

5) Վրէժի Կ. Կոմիտէին տրամադրութեան տակ ղնել (5000) հինգ հազար ռուբլի, յանձնարարելով՝ I Մինչեւ գարուն նախապատրաստել Վրէժստան գտնուած 90ի չափ հրացաններու փոխադրութիւնը:

II Գնել նոր վէճը եւ արդէն պատրաստ 90 հրացանի հետ ղրկել երկիր:

III Բարձրաւանդակի ներկայացուցչին տրամադրութեան տակ ղնել 1000 ռուբլի, գնելու համար վանական անհրաժեշտ գործիքներ (դիտակ եւ այլն):

IV Երկու թղթակից հաստատել կռուի վայրէջ դուրս ռեւէ յարմար տեղ լուրեր հաղորդելու համար:

Սասնոյ դրած պահանջներու գործադրութիւնը անհրաժեշտ ըլլալով արագացնել՝ Ժողովը կազմեց յատուկ մասնաժողով մը անմիջապէս գործադրել սկսելու համար տրուած որոշումները: Նոյնպէս կազմուեցաւ մաս-

նաժողով մը՝ ուսումնասիրելու միջոցներ որ ապստամբութեան ժամանակ կարելի ըլլայ արագ տեղեկութիւններ հասցնել արտասահման եւ այդ նպատակով կազմել գաղտնի բառարան, ծածկագիր պայմանագրական հեռագրաձեւեր:

Արեւելեան Բիւրոյի շրջանի այս տարուան ռազմական պահանջները լրացնելու համար Ընդհ. Ժողովը որոշեց կովկասի Հրշանական Ժողովի կողմէն կազմուած՝ ռազմամթերք գնող մարմինն յանձնարարել, դնելով անոր տրամադրութեան տակ 20,000 ռուբլի, գնել՝

200 Բերդան հրացան, իւրաքանչիւրը մօտաւորապէս 25 ռուբլի:

200 Մոսին հրացան, իւրաքանչիւրը մօտաւորապէս 35 ռուբլի:

200 հազար մոսինի փամփուշտ, իւրաքանչիւրը մօտաւորապէս 3 կոպէկ:

Բոլոր հրացաններու համար մասեր, ատրճանակներ եւն., պարտաւորեցնելով որ մինչեւ Յունիս բոլորը փոխադրուած ըլլան սահմանի կէտերը:

Բ. — ԿԻԼԻԿԻԱ

Ժողովականներու մէկ մասը նկատելով որ դիւանագիտութիւնը միայն այն ժամանակ կը միջամտէ կամ կտրուկ քայլ կ'առնէ, երբ յեղափոխական ո'նեւ շարժում երկար կը տեւէ եւ կամ թերեւս Բարձրաւանդակի ապստամբութեան մարտիչն ետքը պէտք ըլլայ լուրջ հետեւանքի մը հասնելու համար վառ պահել յեղափոխական շարժումը, նկատելով նաեւ որ Ալեքսանդրի ամենափոքր շարժումը կապուած Մասնոյ գործին աւելի մեծ նշանակութիւն կ'ունենայ քան Ալեքսանդրի ունէ մեծ շարժում առանձին կատարուած, կը թելադրէր որ կիլիկիան շարժումը պատրաստուի յաջորդելու Բարձրաւանդակին:

Կիլիկիոյ Մարմինն տուած տեղեկութիւններէն երեւցաւ, որ Դաշնակցութիւնը անկարող է տրուած ժամանակամիջոցին մէջ ո'նեւ շարժում առաջ բերել այնտեղ որ լուրջ հանգամանք մը կարենայ ստանալ: Իսկ հապճեպ պատրաստութեամբ Ժողովուրդը ապստամբեցնել շատ դժուար եւ անպատակաբար էր, որովհետեւ նախ Կիլիկիոյ Ժողովուրդը՝ մասնաւորապէս Ալեքսանդրը՝ անցեալի մէջ խաբուած ըլլալով (3) չպիտի համաձայնէր ոտքի ելլել առանց լուրջ պատրաստութեան եւ երկրորդ՝ հապճեպ պատրաստութեամբ մը Կիլիկիան ապստամբեցնելով՝ մենք կը կորսնցնենք լաւ ապստամբավայր մը, որ ապագային կրնայ, նոյնիսկ եթէ Բարձրաւանդակը ընկճուի, մեր ամենէն ամուր կռուանը ըլլալ:

Ժողովը լսելով Կիլիկիոյ ներկայացուցիչներուն կարծիքը, տուաւ միաձայն հետեւեալ որոշումը՝ Կիլիկիոյ առաջիկայ տարուան գործունէութեան մասին.

— Կիլիկիոյ Մարմինը պէտք է ձգտի պատրաս-

տել Կիլիկիան՝ զլրաւորապէս Ալեքսանդրի շարժում մը, որ արձագանգ տայ Մասնոյ կռիւններուն: Ընդունելով հանդերձ այս նպատակը՝ Ժողովը որոշեց այս մասին չպարտաւորացնել Կիլիկիոյ Պատ. Մարմինը:

Գ. — ՎԱՆ ԵՒ ՏԵՐՍՒՄ

Վանի համար Ժողովը տուաւ հետեւեալ որոշումները.

1. Գործիչներ զրկել Վանայ շրջակայքը կազմակերպելու եւ Ժողովուրդը զինելու իր սեփական միջոցներով, այն ծրագրին համաձայն որ դժուած է Բարձրաւանդակի ու Շամիրի ներկայացուցիչներուն կողմէ 1901 թուականին:

2. Երբ Վասպուրականը ներկայացնէ զինուորական կազմակերպութիւն մը, Դաշնակցութիւնը յանձն կ'առնէ կազմակերպական զինուորներու թուին համեմատ զէնք տալ. նոյնիսկ աւելի՛ երբ յարմար նկատուի կամ քաղաքական հանգամանքները պահանջեն:

Արտասահմանէն Վան զրկուած կամ տեղին վրայ գնուած զէնքերու 3/4ը պէտք է ցրուել Վանայ շրջանի զանազան վայրերը, ըստ հայեցողութեան նոյն շրջանի Մարմինն:

Որոշուեցաւ Երզնկա զրկել դործիչ մը, կազմակերպելու այդ շրջանի հայաբնակ զիւղերը, ստեղծելու մարզական-մարտական խումբեր, վերահաստատելու այն կապերը, որոնք անցեալին մէջ գոյութիւն ունէին Տերսիմի քիւրտներուն հետ, ապագայ համերաշխ գործունէութեան մը համար:

Բարձրաւանդակի Պատասխ. Մարմինն իրաւունք տրուեցաւ կապեր հաստատել Տերսիմի հետ:

Դ. — ՑՈՒՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ցույական դործունէութեան մասին եղան հետեւեալ հինգ առաջարկները.

- 1) Ցոյց միայն Իզմիրի մէջ.
- 2) Ցոյց Իզմիրի ու Վիշապի մէջ.
- 3) Ցոյց Վիշապի մէջ՝ կապուած երկրի գործի հետ.
- 4) Ցոյց միայն Վիշապի մէջ՝ անկախ երկրի գործէն.
- 5) Ցոյց ո'նեւ տեղ՝ մակեդոնացիներու հետ:

Այս առաջարկներու մասին յայտնուեցան հետեւեալ կարծիքները: Միայն Իզմիրի մէջ ցոյց ընել առաջարկողները կը հիմնուէին սա կէտին վրայ, որ Պոլիսը՝ ենթարկուած ոստիկանական ամենախիստ հսկողութեան՝ նպաստաւոր հող չի ներկայացնիր. հոն ցոյց մը կազմակերպել, եթէ ոչ անկարելի, գէթ շատ դժուար է: Պոլիսը փակուած ըլլալով նաեւ եւրոպական նաւատորմի առջեւ՝ միջամտութիւն անկարելի կ'ըլ-

լայ. եթէ 96ի ցոյցը, օրինակ, փոխանակ Պոլիս՝ Իզմիր կատարուէր, եւրոպական միջամտութիւն մը անպատճառ տեղի կ'ունենար: Եթէ մենք մեր նոր ցոյցը կատարենք Իզմիր, եւրոպական նաւատորմիցը այդ քաղաքի բաց դուռի հանգամանքէն օգտուելով անմիջապէս կը հասնի եւ մեր հարցը կ'ելլէ դիւանագիտական սեղանի վրայ: Տեխնիկական տեսակէտով ալ Իզմիր աւելի դիւրին է ցոյց ընել քան Պոլիս, որովհետեւ այդ վայրը վտանգուած չէ եւ եւրոպական շահեր այնտեղ ալ կան ինչպէս Պոլիս: Իզմիրի մէջ աւելի դիւրին ըլլալով ցոյց մը կազմակերպել, մանաւանդ որ այնտեղ ընկերներ կան արդէն, կրնանք Մասունի առաջիկայ գործին արձագանգ տալ, մինչդեռ Պոլիսի մէջ այնչափ կարճ ժամանակամիջոցին անկարելի է պատրաստել ունէ ցոյց որ արձագանգ տայ Մասունի:

Իզմիրի ու Պոլիսի մէջ ցոյց առաջարկողները կը դռնէին որ երկու վայրերու ցոյցերը իրար արձագանգ տալով կրնան աւելի մեծ ազդեցութիւն գործել եւ բացի այդ երբ երկու ցոյցերը միաժամանակ պատրաստուին ու ունէ յանկարծական պատճառով մը մէկը վճարուի, գէթ միւսը կրնայ կատարել ինչ որ ծրագրուած էր:

Վիշապի մէջ ցոյց կատարելու կողմնակիցները կը պնդէին սա կէտին վրայ, որ Պոլիսը ըլլալով Տաճկաստանի սիրտը, այնտեղ կատարուած ունէ ցոյց անպայման աւելի մեծ նշանակութիւն կ'ունենայ քան Իզմիր կամ ուրիշ տեղ: Ընդունելով հանդերձ որ Պոլիս գործը կապուած է շատ մեծ դժուարութիւններու հետ, չէին կրնար նկատել բոլորովին անկարելի, եւ այդ դժուարութիւնները որքան ալ մեծ ըլլան՝ կարելի չէ ձեռք քաշել Պոլիսէն, բան մը որ կազմակերպութեան տկարութիւնը պիտի ապացուցանէ: Իսկ բաց դուռի հանգամանքը, զոր Իզմիրի պաշտպանները մէջտեղ կը դնէին, այնչափ մեծ նշանակութիւն չունի, որովհետեւ եւր. պետութիւնները, եթէ ուզեն միջամտել, Վոսիորի մէջ գտնուած դեսպանական պահականերով ալ կըրնան գործել. իսկ եթէ չուզեն միջամտել, բաց դուռի հանգամանքը ոչ մէկ նշանակութիւն չ'ունենար, այնպէս՝ ինչպէս եղաւ Սելանիկի մէջ վերջին դիւանագիտական ցոյցի ժամանակ: Նոյն իսկ եթէ եւրոպական նաւատորմիցը ցոյցի պատճառով մտնէ Իզմիրի նաւահանգիստը, այդ կարող է նպաստել միայն եւրոպական շահերու պաշտպանութեան, այնպէս՝ ինչպէս եղաւ Պէրլուի վերջին խռովութիւններու ժամանակ:

Վիշապի մէջ ո'նեւ գործ մինչեւ առաջիկայ գարուն պատրաստելու անկարելի գտնողները կ'առաջարկէին ցոյց պատրաստել այնտեղ եւ երկրի գործէն անկախ պայթում մը առաջ բերել, պայմանաւ սակայն որ այդ ցոյցը ըլլայ աւելի մեծ քան մինչեւ այժմ եղածները:

Առաջարկուեցաւ նաեւ որ Իզմիրը ըլլալով կարեւոր դուռ մը Կիլիկիոյ համար եւ միանգամայն դրամական աղբիւր, պէտք է այնտեղ ցուցական գործու-

նէութեան ձեռնարկել՝ չվտանգելու համար այդ վայրը:

Ժողովը ի վերջոյ տուաւ հետեւեալ որոշումը: Ընտրել Յուցաչիան Պատասխանատու Մարմին մը, որու նպատակն է.

1) Վիշապի ու Ոսկեհանքի շրջանին մէջ այլեւայլ ձեռնարկութիւններով արձագանգ տալ պատրաստուելիք Բարձրաւանդակի շարժումին եւ ապագային երկրին մէջ տեղի ունենալիք ապստամբական ձեռնարկներուն.

2) Նպատակաբար պարագային, միացած մակեդոնացի յեղափոխականներու հետ՝ առնել այս կամ այն քայլը, մեր մէջ եղած համերաշխութիւնը ամրապնդելու եւ երկու դատերը միացնելու նպատակով.

3) Երկրի շարժումներէն անկախ գործ կատարել Վիշապի մէջ այն պարագային միայն, երբ յոյս կայ հոյակապ ձեռնարկ մը գլուխ բերելու (5):

Ե. — ԿՈՄԻՏԷ ԶԵՂԱԾ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՋ ԱՆՀԱՏ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒ ԴԵՐԸ

Կոմիտէ չեղած վայրերու մէջ անհատներու գործունէութեան մասին առաջ եկան երկու տարբեր ուղղութեամբ կարծիքներ:

Մէկ կողմը կը պահանջէր տալ անհատ գործիչներուն որոշ չափով ապստամբութիւն, որովհետեւ այն ժամանակ միայն կարելի կ'ըլլայ յեղափոխական գաղափարը վառ պահել ժողովրդի մէջ՝ երբ կենդանի գործ կը կատարուի կարելի եղածին չափ շատ տեղեր: Դաշնակցութիւնը ներկայիս մէջ անկարող ըլլալով ամէն վայր կազմակերպել՝ պէտք է սահմանափակել անհատ դաշնակցականներու իրաւունքները եւ այդպէսով մեղմութեան դատապարտել կանոնը: Երբ անհատ դաշնակցական մը կարող է իր շրջանին մէջ յայտնի մասնիչ մը սպաննել, կառավարական չէնք մը օդը հանել, տեղոր կատարել թուրք պաշտօնեայի մը վրայ, ի՞նչ անհրաժեշտութիւն կայ որ հեռուի մարմիններու դիմուի թոյլտուութիւն ստանալու համար:

Ժողովականներու մի մասը տեսնելով այդ ուղղութեան մէջ անհատական ապակեղրոնացում եւ նկատելով այդ Դաշնակցութեան հիմնական սկզբունքին հակառակ՝ անհրաժեշտ կը համարէր անհատ գործիչներու իրաւասութիւնը սահմանափակել: Բացի այդ սկզբունքի խնդրէն, դիտուեցաւ նաեւ ուրիշ գործնական անյարմարութիւն մը, այն է՝ որ անհատ դաշնակցական մը, բոլորովին անտեղեակ դրացի կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի տուած որոշումներուն ու գործունէութեան, կարող է յանկարծ կատարել այնպիսի գործ մը, որ բոլորովին խանգարէ այդ մարմիններու ծրագիրը: Անհատ գործիչները, պաշտպանուելով նաեւ Դաշնակցութեան անունին տակ, կրնան անձնական հակա-

ռակութիւններու պատճառով կատարել այնպիսի տեռորներ, որոնք կազմակերպութեան աւելի վնաս կու տան, քան թէ օգուտ: Այս ուղղութիւնը պաշտպանողները կ'ընդունեն տալ անհատ գործիչներու իրաւունք՝ կազմակերպական գործերով վբաղելու, բայց արգիլել տեռորներ, կառավարական շէնքերու վրայ յարձակումներ ելն. ելն., որքան ժամանակ որ մօտակայ կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի համաձայնութիւնը չէ առնուած: Իսկ երբ կոիւ յայտարարուած է արդէն, ամէն կարգի իրաւունք կարելի է տալ, քանի որ պատերազմական դրութեան մէջ որքան շատ ձեռնարկներ կատարուին երկրի պանապան կէտերու վրայ, այնչափ աւելի կը մեծնայ կռուի նշանակութիւնը:

Այս հարցի մասին ժողովը տուաւ հետեւեալ որոշումը:

Կոմիտէ չեղած վայրերու մէջ ունէ դաշնակցական անհատ, խաղաղ ժամանակ կազմակերպական ընդհանուր գործերէ վատ իրաւունք չունի ունէ սպանութիւն կամ յարձակողական գործ կատարելու, առանց մօտակայ կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի համաձայնութեան: Իսկ եթէ բացարձակ կոիւ սկսած է արդէն, ամէն դաշնակցական անհատ, իր պատասխանատուութեան տակ կրնայ կատարել այն՝ ինչ որ յեղափոխական տեսակէտով նպատակայարմար է:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ(6)

Բացի ֆրանսերէն Pro Armeniaէն, առաջարկուեցաւ հրատարակել նաեւ գերմաներէն (Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ տարածելու համար), եւ անգլերէն (Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ տարածելու համար) լեզուներով, հետեւեալ պատճառաբանութեամբ:

Ֆրանսերէն Pro Armeniaի տուած օգտակարութիւնը անժխտելի է, ոչ միայն այն տեսակէտով որ այդ թերթը դարձած է այսօր մամուլի եւ հասարակական գործիչի համար ամենալաւ դոկիմանը(7) Հայկական Հարցի վերաբերմամբ, շնորհիւ երկրէն ստացուած նամակներու, այլ այդ թերթի շուրջը հաւաքուած են այնպիսի հեղինակաւոր մարդիկ, որոնք անցեալի մէջ մեր դատին տուած են շատ մեծ օգուտներ եւ ապագային համար ալ կարող ենք յոյսեր ունենալ: Բայց ամէն բան միեւնոյն խմբակէն, Pro Armeniaի շուրջը հաւաքուած մարդերէն պահանջել, ամէն առթիւ պանոնք միայն մղել առաջ՝ անկարելի է. անհրաժեշտ է որ նմանօրինակ եւ սխտեմատիկ(8) կերպով աշխատող խմբակներ կազմուին նաեւ եւրոպական ուրիշ երկիրներու մէջ՝ ինչպէս Անգլիա, Գերմանիա, Աւստրիա. իսկ այդ կարելի է այն ժամանակ երբ Pro Armeniaներ ունենանք այդ երկիրներու մէջ, որոնք իրենց շուրջը կարողանան հաւաքել այն գործիչները, որ մեր դատով վբաղիլ յանձն կ'առնեն: Երբ շարք մը դիմումները միաժամանակ կատարուին մէկ քանի երկիրներու ազդեցիկ խմբակներու կող-

մէ, կը ստիպուին որոշ չափով միջամտել, ինչպէս ցոյց տուին Իսկէնտէրուի եւ Մուշի դէպքերը ֆրանսական կառավարութեան մասին, նոյնիսկ եթէ անկարելի ըլլայ անմիջական կարգադրութիւն յուսալ՝ գէթ կարող կ'ըլլանք մեր առօրեայ պահանջներուն զոհացում ստանալ, ստիպելով որ հիւպատոսներ դրկեն վտանգուած վայրերը եւ առաջը առնեն գէթ նախատեսուած շարդերու:

Քանի որ մեր դատի լուծումը կապուած է երկրի շարժումներու ու արտաքին միջամտութեան համերաշխ զուգորդումին, անհրաժեշտ է որ ընդարձակեցք պրոպագանդի շրջանը, գրաւենք բոլոր այն ուժերը, որոնք կարող են մեր դատին օգտակար դառնալ շայս կամ այն երկրի մէջ, մանաւանդ որ այսօր թէ՛ Գերմանիոյ, թէ՛ Աւստրիոյ եւ թէ՛ Անգլիոյ ու Իտալիոյ մէջ կան քաղաքական կարեւոր գործիչներ, որոնք թէեւ մեր դատը իրենց սրտին մօտիկ կը պան, բայց կազմակերպուած գործ մը չըլլալուն՝ անկարող են ունէ լուրջ օժանդակութիւն հասցնել մեզի:

Ճիշդ է որ նոր Pro Armeniaներու հրատարակութիւնը կրնայ մեր բիւզձէն մասամբ ծանրաբեռնել, բայց պէտք չէ վախնալ աղկէ, որովհետեւ propagandeh(9) գործը կարեւոր նեցով մըն է երկրի գործին. եթէ երկրի շարժումներու ժամանակ մենք կարենանք շարժել Եւրոպայի բոլոր հայասէրներու հաւաքական ուժը եւ անոնց միջոցով ազդենք կառավարութիւններու վրայ, մեր դատի յաջողութիւնը աւելի հաւանական կը դառնայ, քան եթէ շարժումներու ժամանակ, եւրոպական դիւանագիտութիւնը նստի հանդարտ եւ կամ Ֆրանսան բոլորովին առանձին մնայ: Նոյն իսկ կարելի է յուսալ, որ նոր Pro Armeniaներու հրատարակութիւնը պիտի բերէ նաեւ նոր հրատարակութիւններ, որովհետեւ մեր ժողովրդի մէջ կան մարդիկ, որոնք յեղափոխական գործի համար թէեւ ոչինչ չեն տար, բայց իրենց դրամական աջակցութիւնը սիրով կու տան եւրոպական պրոպագանդի գործին. իրողութիւն մը, որ Pro Armeniaի հրատարակութիւնը մէջտեղ հանեց:

Գերմաներէն եւ անգլերէն լեզուներով Pro Armeniaներ հրատարակելու առաջարկին հակառակ եղողները կը հիմնուէին հետեւեալ փաստերու վրայ.

Նոր P. A.ներ հրատարակելով կազմակերպութեան ծախքերը զգալի կերպով կ'աւելնան եւ այդ իրողութեան հետեւանքը այն կ'ըլլայ որ երկրի պահանջներուն զոհացում չենք կրնար տալ: Եթէ մենք մեր դրամական ներկայ վիճակին վրայ կռօնած ընդունինք այդ թերթերու հրատարակութիւնը, կրնայ պատահիլ որ մէկ տարի յետոյ ո'ւնէ պատճառով անկարելի ըլլալով բաւականաչափ բիւզձէ ունենալ, ստիպուինք դադրեցնել եւ ատիկա աւելի մեծ ամօթ ու վնաս պիտի պատճառէր մեզի:

Գերմանիոյ մէջ P. Armenia հրատարակելու մասին եղան այն դիտողութիւնները, որ Գերմանիան ըլլալով մեր դատին ամենակարեւոր հակառակորդներէն մէկը՝ իր տնտեսական եւ քաղաքական ծրագիրներուն պատ-

ճառով դէպի Տաճկաստանը, պէտք չէ ունէ յոյս ունենալ այդ երկրէն յօգուտ մեր դատին: Անցեալի ու ներկայի մէջ տեսնուած է որ գերմանացիները Տաճկաստանի մէջ դրական կերպով ցոյց տուին իրենց հակառակութիւնը եւ միշտ ձգտեցան Հայ Դատի տկարացումին, որ ամենաուժեղ էր իրենց դէմ Տաճկաստանի մէջ: Գերմանական կառավարութեան շահերը բոլորովին հակառակ ըլլալով մեր շահերուն, այնտեղ ունէ գործ ձեռնարկել միայն մարդասիրական գաղափարի վրայ յենուած, որ այնչափ ալ սիրելի չէ գերման կառավարութեան, բոլորովին աւելորդ է: Իսկ զալով հասարակական կարծիքին, Գերմանիոյ մէջ այդ կարծիքը այնչափ մեծ նշանակութիւն չունի որչափ Ֆրանսայի մէջ եւ նոյն իսկ սահմանադրական կոչուած Գերմանիոյ մէջ գերմանահպատակ լեհացիները, դանիացիները եւ ուրիշ տարրեր ենթարկուած են ամենախիստ ճնշման եւ հասարակական կարծիքը գրեթէ բոլորովին լուռ է մնացած այդ իրողութեան առջեւ: Գերմաներէն Pro Armenia մը ուրեմն այս երկրի մէջ ոչ մէկ արդիւնք չունենալով, պիտի պատճառէր միայն դրամի մսխում:

Բացի այդ բացասական կողմերէն, դիտուեցաւ նաեւ որ Գերմանիոյ համաձայնութիւնը անհրաժեշտ չէ մեր դատին լուծումին համար, ինչպէս եղաւ կրետական խնդրին մէջ, երբ հակառակ Գերմանիոյ եւ Աւստրիոյ չէզոքութեան՝ միւս պետութիւնները կարողացան ապաւել կրետէն թուրքերու ձեռքէն:

Անգլիոյ համար դիտուեցաւ, որ անգլիական շահերը համաձայն ըլլալով մեր շահերուն, Անգլիան երբ առիթը ներկայանայ ստիպուած պիտի միջամտէ յօգուտ մեզի՝ իր շահերուն սպառնացող վտանգը հեռացնելու համար, նոյնիսկ առանց մեր դիմումներուն: Իսկ թէ առանց Pro Armeniaի հրատարակութեան ալ կարելի է անգլիական կարծիքը ու քաղաքական գործիչները յուզել միայն երկրի շարժումներով, յառաջ բերուեցաւ այն փաստը, որ անգլիական ժողովուրդը եւ իրարու յաջորդող եւ տարբեր ուղղութեան պատկանող երկու նախարարութիւններ Սասնոյ գործի ժամանակ գրեթէ ինքնաբերաբար պաշտպանեցին մեր դատը եւ աւելի մեծ աղմուկ հանեցին քան ինչ որ կ'ընեն Pro Armenia եւ անոր շուրջը հաւաքուած խումբը: Այս առթիւ մէջ բերուեցաւ նաեւ անգլիացի հայասէրներու այն կարծիքը, որ Անգլիոյ մէջ Pro Armeniaի մը հրատարակութիւնը կրնայ նոյնիսկ վնասակար ըլլալ մեր դատին, այն տեսակէտով որ մեր դատի հակառակորդները այդպիսի հրատարակութիւն մը նսեմացնելու եւ մեր դատին վնասելու համար՝ չպիտի վարանին յայտարարելու, որ անգլիական էնթրիկներ կան այս գործին մէջ եւ անգլիացիները իրենց ազգային շահերուն համար է որ Հայկական Հարցը ձեռք կ'առնեն:

Յիշուեցաւ նաեւ այն պարագան որ ֆրանսերէն Pro Armenia կը կարդացուի նաեւ Գերմանիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ եւ Անգլիոյ մէջ ալ, որովհետեւ յայտնի քաղա-

քական գործիչներու մէջ ֆրանսերէն գիտցողները կը կազմեն մեծամասնութիւն՝ եթէ ոչ ամբողջութիւն:

Հակառակ ըլլալով հանդերձ անգլերէն ու գերմաներէն P. A.ներ հրատարակելու, հակառակորդները կ'առաջարկէին շարունակել ֆրանսերէն Pro Armeniaն եւ միւս երկիրներու համար ընդունիլ propagandeh ուրիշ ձեւ, ինչպէս՝ կազմել կոնֆերանսներ, միթինկներ(10), Հայկ. Հարցի վերաբերեալ յօդուածներ վետեղել տալ կարեւոր եւր. թերթերու մէջ, կապեր հաստատել քաղաքական գործիչներու հետ ելն. ելն.:

Այս հարցի մասին ժողովը տուաւ հետեւեալ որոշումները.

«Ընդհ. ժողովը ընդունելով եւրոպական պրոպագանդի օգտակարութիւնը պանապան միջոցներով (միտինկ, կոնֆերանս ելն.) մանաւանդ երեք Արեւմտեան երկիրներու մէջ (Ֆրանսա, Անգլիա, Իտալիա) որոշեց շարունակել ֆրանսերէն Pro Armeniaի հրատարակութիւնը եւ մերժել ուրիշ լեզուով Pro Armenia հրատարակելու առաջարկը»:

Ժողովը նկատելով որ վերջին տարիներս Բիւրոյի ներկայացուցիչներու գոյութիւնը Փարիզի կամ ուրիշ քաղաքական կեդրոններու մէջ օգտակար եղած է՝ 1) Ճշգրիտ տեղեկութիւններ տալու համար Հայ Դատի մասին, 2) Փարատելու համար կարգ մը մեկ համար վնասաբեր եւրոպական նախապաշարումներ, 3) Դարմանելու համար կարգ մը վարկաբեկումներ, որ կրած է Հայկական Դատը անարժան անձերու երեսէն, 4) Սերտ յարաբերութիւններ մշակելու համար խորհրդականներու կամ ազդեցիկ անձերու հետ, 5) Յեղափոխական շարժումի առաջ բերած օրական պահանջներու դիւանագիտական ձամբով զոհացում տալու, 6) Յրուած գաղութներն ու անձնաւորութիւնները շահագրգռելու ու մօտեցնելու համար Դատին՝ որոշեց որ Արեւմտեան Բիւրոն փոխնիփոխ եւ առժամեայ ներկայացուցիչներ ունենայ քաղաքական կարեւոր կեդրոններու մէջ:

Ժողովը նկատի առնելով որ ներկայ 1904 թուականին ծանր դէպքեր կ'ակնկալուին երկրի մէջ, որոնք բացառիկ կերպով շուտափոյթ եւ պատասխանատու գործունէութիւն մը կը պահանջեն Արեւմտ. Բիւրոյէն՝ եւրոպական մամուլին ու դիւանագիտական շրջաններու վրայ ազդելու համար, որոշեց Արեւմտ. Բիւրոյի ընտրութեան ժամանակ կատարել նաեւ երկու պրոպագանդիստներու ընտրութիւն՝ համաձայն 1904 տարուայ բիւզձէին: Այդ ընկերները Արեւմտեան Բիւրոյի վայրը գտնուած միջոցին կը համարուին Բիւրոյի համապօր անդամ:

Մնայուն Բիւրօ.— Արտասահմանեան agitationի(11) պահանջը կանոնաւոր ուղիի վրայ դնելու համար, Ընդհ. ժողովը կը յանձնարարէ Արեւմտեան Բիւրոյին այդ գործը կազմակերպել Պրիւքսի միջազգային Համաժողովի մէջ ընդունուած հիմքերու վրայ՝ որոնց համաձայն Մնայուն Բիւրօ (Bureau Permanent) պիտի հաստատուի Փարիզ եւ պանապան երկիրներու մէջ առանձին կո-

միտէներ՝ հեղինակաւոր հայասէրներէ: Այդ նպատակի համար Արեւմտեան Բիւրոն կարող է իր արտակարգ ծախքերու գումարէն յատկացնել այնքան միջոցներ որքան պէտք կ'ըլլայ մշտական քարտուղար մը պահելու համար:

Զ.— ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐ

Անկախ Սասունի մտակայ ապստամբութեան հետ կապուած արշաւանքներէն, առաջարկուեցաւ կարելի եղածին չափ շուտ-շուտ արշաւանքներ կատարել դուրսէն՝ հիմնուելով հետեւեալ պատճառաբանութիւններու վրայ.

- 1) Արշաւախմբեր կազմելը համեմատաբար շատ դժուար է.
- 2) Կը կրթէ մեր կռուողները եւ յառաջ կը բերէ փորձուած ուժեր.
- 3) Սարսափ կը տարածէ եւ կ'ահարեկէ թշնամին.
- 4) Կը մնասէ թշնամիին, ենթարկուելով համեմատաբար քիչ կորուստի.
- 5) Լարուած կը պահէ թուրք կառավարութիւնը.
- 6) Կենդանի կը պահէ Հայկ. Հարցը արտաքին աշխարհի մէջ.
- 7) Ձի ձգեր որ յեղափոխական ոգին թուլանայ, եւ գործերու անյաջողութեան պարագային հակադրեցութեան նոր հոսանք սկսի.
- 8) Միջոց կու տայ դրամ ճարելու.
- 9) Կը զօրացնէ պրոպագանդի գործը:

Յոյց տրուած սոյն օգուտներու դէմ եղան հետեւեալ առարկութիւնները.

- 1) Արշաւախմբեր կազմելը ունի շատ դժուարութիւններ եւ մեծ ծախք կը պահանջէ, ինչպէս ցոյց տուած է Խանասորի արշաւանքը:
- 2) Արշաւանքները արտաքին աշխարհի համար ոչ մի նշանակութիւն չունին. ամենավերջին արշաւախմբի(12) կռիւները ոչ մէկ նշանակելի արձագանգ չգտան եւրոպական մամուլի մէջ և Բասէնի դէպքերը տեղին վրայ սահմանափակուեցան. թուրք կառավարութիւնը վերջին ժամանակներս կ'աշխատի ապստամբական ունէ գործ տեղին վրայ մարել եւ չձգել որ լուրեր դուրս ելլելով եւրոպական մամուլի եւ դիւանագիտութեան զբաղումին առարկայ դառնայ Հայկական Հարցը. Երկրի մէջ կատարուած ո'նէ գործ այն ժամանակ միայն նշանակութիւն կ'ունենայ եւ կ'ազդէ Եւրոպայի վրայ, երբ այդ դէպքը վաղանցուկ երեւոյթ մը չէ եւ արձագանգը Եւրոպա հասած չի մեռնիր, այլ տեւողական է:

Դրան կատարուած արշաւանքներու հակառակորդները աւելի նպատակայարմար կը գտնէին զօրեղացնել Երկրի հրոսակային խմբերը, որոնք ոչ թէ արշաւախմբերու պէս մէկ քանի օր միայն պիտի կրնան

կռուիլ, այլ Երկրի մէջ, հայրենի հողին վրայ տարիներով կարող են գործել եւ միաժամանակ տալ այն օգուտները՝ որոնք չեղտուեցան դրան կատարուելիք արշաւանքի պաշտպաններու կողմէն:

Ժողովականներու մէկ մասը ընդունելով հանդերձ արշաւախմբերու օգտակարութիւնը կ'առաջարկէր չըպարտաւորեցնել Դաշնակցական Մարմինները այդ կարգի գործունէութեան, որովհետեւ կատարուելիք աւելի մեծ ձեռնարկներ կան եւ կազմակերպութիւնը հազու թէ կարենայ արշաւախմբեր ալ կազմել: Ժողովը տուաւ հետեւեալ որոշումը.

«Զհերքելով առաջիկայ յեղափոխական շրջանի ընթացքին մէջ արշաւանքներու կարեւորութիւնը, երբ անոնք կապուած են Երկրի գործերու հետ ու կրնան ծառայել իբր արձագանգ Երկրի բողոքին, բայց նաեւ նկատի առնելով այն բոլոր ձեռնարկները, որոնք արդէն ծրագրուած են ներկայ Ժողովի կողմէն եւ որոնց գործադրութիւնը պիտի դրակէ կազմակերպութեան ամբողջ ուշադրութիւնը, մերժեց Երկրի գործէն անկախ արշաւանքի առաջարկը»:

Է.— ԹՂԹԱԿԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂՆԵՐ

Ժողովը՝ նկատելով որ Երկիրը պէտք եղածին պէս չէ ուսումնասիրուած, եւ Կանապան վայրերու մէջ բնակող հայ ազգաբնակչութեան, յեղափոխական տրամադրութեան մասին դրական տեղեկութիւններ բոլորովին կը պակսին, սկզբունքով ընդունեց թղթակից ուսումնասիրողներու անհրաժեշտութիւնը, նախ՝ ուսումնասիրելու համար Երկիրը եւ երկրորդ՝ արագ հաղորդակցութեան մէջ պահելու համար արտասահմանեան մարմինները Երկրի դրութեան ու գործի վիճակի մասին:

Առաջարկուեցաւ դիմել Եւրոպայի հայ ուսանողութեան, որուն մէջ կարող են գտնուիլ անհատներ, որոնք ուզեն իբրեւ թղթակից-ուսումնասիրող անցնիլ Երկիր:

Այս առթիւ հարց բացուեցաւ թէ կարելի՞ է արդեօք ոչ-դաշնակցականի մըն ալ տալ դիւրութիւններ՝ Երկիր մտնելու եւ Կանապան վայրեր ճամբորդելով ուսումնասիրութիւններ կատարելու համար:

Ժողովականներու մէկ մասը ոչ մէկ անյարմարութիւն չէր տեսներ որ կազմակերպութիւնը տայ պէտք եղած դիւրութիւնները նաեւ ոչ-դաշնակցական անհատներու, որոնց կարողութեան եւ պնդութեան մասին բացարձակ վստահութիւն կայ, պայմանաւ սակայն որ եթէ այդ անհատները լոկ ուսումնասիրելու համար Երկիր կը մտնեն եւ ոչ մէկ կազմակերպական գործի չեն ուզեր խառնուիլ, կազմակերպութիւնը ազատ ըլլայ այդ պիսիներու նիւթապէս օգնելու պարտականութենէն, այլ բաւականանայ յանձնարարականներով եւ տարբեր դիւրութիւններով կարելիութիւն տալ ճամբորդելու եւ ուսումնասիրելու:

Ժողովականներու միւս մասը, հակառակելով այդ կարծիքին, առաջարկեց բացառապէս դաշնակցականներու վերապահել այդ իրաւունքը, առարկելով որ կազմակերպութիւնը պարտականութիւն չունի օտարներու օգնելու եւ յետոյ ոչ-դաշնակցական մը Երկիրը ուսումնասիրելով կարող է հակուիլ հակայեղափոխական ուղղութեան, ինչ որ Դաշնակցութեան համար ցանկալի եւ օգտակար չպիտի ըլլար: Այս առարկութեան պատասխանուեցաւ որ դաշնակցական մըն ալ կարող է պատահիլ որ հասնի այդ եզրակացութեան, բան մը որ անցեալին մէջ պատահած է արդէն, եւ կազմակերպութիւնը եթէ իր ուղղութեան վրայ հաւատք ունի, պէտք չէ որ այդ տեսակ վախեր ունենայ:

Ժողովը այս մասին տուաւ հետեւեալ որոշումը.

«Նկատելով որ Երկրի մէջ մեծ պահանջ կայ ինտելիգէնդ ուժերու եւ մինչեւ հիմա դրսի մարմինները ազատ չեն եղած փափաքողները Երկիր դրկել, Ընդհ. Ժողովը իրաւունք կու տայ Դաշնակցութեան Խորհուրդին, Բիւրոներուն եւ Կեդր. Կոմիտէներուն (Բիւրոներու գիտութեամբ) ընդունիլ այդպիսի ուժերու առաջարկը եւ փափաքողները դրկել Երկիր՝ իբր թղթակից-ուսումնասիրող, օժանդակ ընկեր կամ գործիչ:

«Պատասխ. Մարմնի շրջանը դրկուողի մասին նախապէս պէտք է տեղեկութիւն տալ այդ մարմնին:

«Թղթակից-ուսումնասիրողները կարող են չըլլալ դաշնակցական, այդ պարագային սակայն դրկող մարմինը պէտք է որ բացարձակ վստահութիւն ունենայ անոնց վրայ: Կազմակերպութիւնը իրեն կը վերապահէ սակայն որոշել այն վայրը կամ շրջանը, որու մէջ պիտի հաստատուի կամ ճամբորդէ թղթակից-ուսումնասիրողը:

«Երբ թղթակից-ուսումնասիրողը ոչ մէկ կազմակերպական գործ յանձն առնել չ'ուզեր, կազմակերպութիւնը կը բաւականանայ միայն դիւրութիւններ տալով անոր՝ Երկիր անցնելու ու ճամբորդելու համար, ոչ մէկ դրամական օժանդակութիւն յանձն չ'առնելով:

«Թղթակից-ուսումնասիրողներու եւ Երկիր գործիչ ու օժանդակ ընկերներ դրկելու համար Ժողովը որոշեց ղնել Երկու Բիւրոներու տրամադրութեան տակ 30,000 ֆրանք»:

Ը.— ԿԱՐԵՒՈՐ ԿԷՏԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ժողովը ընդունելով Մեծ-Հայքի ու Փոքր-Ասիայի Կանապան վայրերը կազմակերպելու անհրաժեշտութիւնը, որոշեց յանձնարարել կազմակերպութեան իրաւասու մարմիններուն թէ՛ ներսի եւ թէ՛ դրսի՝ (տես «Թղթակից-ուսումնասիրողներ») չսահմանափակել իրենց գործունէութիւնը իրենց շրջանով միայն, այլ ամէն ջանք թափել կազմակերպելու նաեւ նոր վայրեր, մանաւանդ անոնք, որ հարեան են եւ ուր դեռ կազմակերպութիւն չկայ:

Թ.— ՄԱՐՏԱԿԱՆ-ՄԱՐԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ

Այս խմբերը, տարածելով յեղափոխական գաղափարը, ստուարացնելով ընկերներու թիւը, վարժեցնելով ժողովուրդը պէնքի գործածութեան եւ պինուելով սեփական միջոցներով՝ նպատակ ունին.

1) Պաշտպանել հայ ազգաբնակչութեան գոյքը, պատիւը եւ կեանքը աւազակներու եւ կառավարութեան յարձակումներու դէմ.

2) Կատարել այլեայլ ասպատակային ձեռնարկներ՝ թշնամիին վնաս հասցնելու համար.

3) Օգնել կազմակերպութեան այլեայլ ձեռնարկներուն.

4) Նպատակայարմար ժամանակ դրամական միջոցներ ձեռք բերել թշնամիին (փոսթ գարնել եւն.) .

5) Խաղաղ ժամանակ հանդիսանալով կազմակերպութեան համար իբրեւ պահեստի բանակ, ապստամբութեան կամ շփոթութեան ժամանակ՝ ստուարացնել Դաշնակցութեան կռուողներուն բանակը:

Զինուորական խմբերու կազմակերպութեան ժամանակ Ժողովը որոշեց ուշադրութիւն դարձնել մասնաւորապէս այն կէտին վրայ, որ խմբերը կամ պինուները պարտաւոր ըլլան ըստ կարելոյն պինուի իրենց սեփական միջոցներով:

Ժ.— ԺՈՂՈՎՈՒՐԻԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՒ

ՋԻՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ժողովուրդը գործնականապէս պատրաստելու խնդրին վերաբերմամբ Ժողովը հասաւ այն եզրակացութեան, որ այդ կարելի կ'ըլլայ այն ժամանակ միայն՝ երբ պրոպագանդով կամ այլ միջոցներով կը համոզենք պինուի եւ օրինակներով կ'ապացուցանենք պէնքին ուժը: Հետեւաբար որոշուեցաւ պարտականութիւն դնել բոլոր դաշնակցական մարմիններու վրայ՝ բոլոր կերպով աշխատիլ ժողովուրդը մղելու իր սեփական միջոցներով պինուելու եւ վարժեցնել պայն պէնքի գործածութեան:

Ժողովուրդին պինուելու դիւրութիւններ տալու համար առաջարկուեցաւ Երկրի եւ Կովկասի Կեդր. Կոմիտէներու տրամադրութեան տակ ղնել շօշափելի գումար մը, որով կազմակերպութիւնը կարենար պէնքի եւ ռազմամթերքի պահեստներ ունենալ՝ յատկապէս ժողովրդին պէնք վաճառելու նպատակաւ: Երկար վիճաբանութիւններէ յետոյ Ժողովը մերժեց այդ առաջարկը հետեւեալ նկատումներով.

ա) Սկզբունքով յեղափոխական կուսակցութիւնը չի կրնար եւ իրաւունք ալ չունի կազմակերպութեան պատկանեալ անոց մ'անգամ տալ կազմակերպութենէն դուրս անհատներու կամ խմբերու, որոնք, ո'վ գիտէ, ինչ նպատակաւ, ինչ անուան տակ, ե'րբ եւ ինչպէ'ս պէտք է գործածեն տրուելիք պէնքերը:

բ) Ձէնք գտնել եւ Երկիր փոխադրելը այնքան դժուար է, որ կազմակերպութիւնը չի կրնար մինչեւ այժմ նոյնիսկ իր մարմիններուն եւ իր դրօշի տակ գտնուող խմբերուն բաւականաչափ պէնք մատակարարել, եւ հետեւաբար լուրջ խօսք չի կրնար ըլլալ աւելորդ պահեստներու մասին:

գ) Ձէնքի գնումը, պահպանումը եւ փոխադրութիւնները, չնայելով կոմիտէներու գործ դրած ամէն ջանքերուն, միշտ կապուած են մեծ կորուստներու հետ եւ հետեւաբար ընդունելով պինավաճառ պահեստներու առաջարկը՝ բայց ոչ փոխ յեղափոխական ձեւի մը տակ, կազմակերպութեան միջոցները վտանգի ենթարկած պիտի ըլլան:

դ) Ժողովուրդը պիտուելու կարիքին համոզուելով՝ գուցէ ինքը կրնայ աւելի ապահով կերպով քրտերու եւ այլ միջոցներով պէնքերու շուկայ ստեղծել:

ԺԱ. ՏՆՈՒՐ

Տեորի մասին Բ. Ընդհ. Ժողովի որոշումները փոխուեցան հետեւեալ կերպով.

1) Տեորի կենթարկուին լրտեսներ, ատուած թուրք պաշտօնեաներ եւ յայտնի թուրք եւ քիւրտ հասակաց չարադրածներ թէ՛ Երկրի մէջ եւ թէ՛ Երկրէն դուրս:

2) Տեորներ կատարելու իրաւունք կը տրուի արտասահմանի մէջ՝ Կեդրոնական Կոմիտէներու, իսկ Երկրի մէջ՝ Կոմիտէներուն, Կեդր. Կոմիտէներուն եւ Պատասխանատու Մարմիններուն՝ հետեւեալ սահմանափակումով, այն է՝ իւրաքանչիւր մարմին թէ՛ արտասահմանի եւ թէ՛ Երկրի մէջ պարտաւոր է իր վճռի վերաբերմամբ ստանալ մօտակայ կամ աւելի բարձր մարմնի համաձայնութիւնը:

3) Տեորի վճիռները պէտք է տրուին իւրաքանչիւր դէպքի համար միաձայն որոշումով:

4) Բացի վերոյիշեալ պայմաններէն՝ հայերի վերաբերեալ վճիռները պէտք է հիմնուին նաեւ պատճառաբանուած արձանագրութեան վրայ, որ կը զրկուի կազմակերպութեան արիւրը:

ԺԲ. — ՄԻՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐ ՏԱՐԵՐՈՒ ԷՑՏ

Հնչակեան երկու հատուածներու հետ միութիւն կամ համերաշխութիւն առաջ բերելու խնդիրը դառնալով Ժողովի վերադումին առարկայ՝ Ընդհանուր Ժողովը տըլաւ հետեւեալ որոշումը.

«Ընդհանուր Ժողովը նկատելով անցեալ բանակցութիւններու անյաջող փորձերը, այն դատապարտելի ոգին, որ արմատացած է հնչակեան երկու հատուածներուն մէջ թէ՛ յեղափոխական ընդհանուր տեսակետով եւ

թէ մասնաւորապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան նկատմամբ, եւ այն ներքին պայքարները, որոնք ի վերջոյ եղբայրասպանութիւններու յանգեցան՝ արատաւորելով հայ յեղափոխութեան եւ հայ ժողովրդի պատիւը, մերժեց ունէ քայլ ընել անոնց հետ միութիւն կամ համերաշխութիւն կնքելու համար:

«Այս որոշումը սակայն չ'արգիլեր, մանաւանդ Երկրի մէջ, դաշնակցական ընկերներուն՝ վերոյիշեալ եւ այլ մարմիններու պատկանող, գործին նուիրուած եւ վստահելի անհատներու ու խմբերու հետ համերաշխօրէն կռիւ մղել ընդհանուր թշնամիին դէմ»:

Ոսկանապատի եւ Լեռնավայրի պատգամաւորները մնացին ձեռնպահ:

Ընդհ. Ժողովը Վերակազմեալ Հնչակեան Կեդրոնի նամակի առթիւ յանձնարարեց Արեւմտեան Բիւրոյին պատասխանել այդ նամակին՝ համաձայն Ժողովի ընդունած որոշումի իմաստին, արգիլելով Արեւմտեան Բիւրոյին ունէ առթիւ բանակցութեան մտնել հնչակեան հատուածներու հետ:

Օտար տարրերու եւ կազմակերպութիւններու մասին Ժողովը ընդունեց հետեւեալ որոշումները.

«Հարունակել թրքահպատակ այլեւայլ տարրերու հետ (քիւրտ, թուրք, ասորի, լիբանանցի, մակեդոնացի եւն.) համերաշխ գործակցութեան տակտիկը, որով դեկավարուած է մինչեւ այժմ Դաշնակցութիւնը՝ յանձնարարելով բոլոր Պատասխանատու Մարմիններուն, Բիւրոներուն եւ Կեդր. Կոմիտէներուն՝ ըստ տեղական հանգամանքի, գործնականապէս մշակել բաղձալի մերձեցումի պահանջը այդ տարրերու հետ:

«Միաժամանակ Ժողովը մասնաւորապէս մատնանիշ կ'ընէ՝

I. Վասպուրականի եւ Պարսկաստանի Մարմիններուն՝ ասորիներուն հետ յարաբերութեանց գործը:

II. Կիլիկիոյ Պատ. Մարմինն լիբանանցիներու խնդիրը:

III. Արեւմտեան Բիւրոյին ու Վիշապի Պատասխ. Մարմինն՝ մակեդոնացիներու հետ համերաշխ գործունէութեան պահանջը մօտիկ ապագայի մէջ:

IV. Կովկասի Պատ. Մարմինն (Ինքնապաշտ. Կեդր. Կոմիտէ) եւ Կովկասեան գաւառական Կոմիտէներուն՝ կը յանձնարարուի ձգտիլ համերաշխութիւն հաստատել Կովկասի մէջ ռուս կառավարութեան դէմ կռիւ մղող ուրիշ կազմակերպութիւններու հետ, որոնցմէ Ժողովը մատնանիշ կ'ընէ յատկապէս «Սոցիալիստ-Ռեւոլուցիոններու կուսակցութիւն»ը(13) որ թէ՛ իր տեսական աշխարհայեացքով եւ թէ՛ կռուի տաքտիկայով՝ աւելի կը համապատասխանէ մեր ծրագրին ընդհանուր ոգուն, եւ Վրաստանի «Սակարտվէօ» կուսակցութիւնը: Պատասխ. Մարմինն եւ գաւառական կոմիտէներու կը թողուի ինքնապաշտպանութեան գործի մէջ օժանդակութեան կամ գործակցութեան հրաւիրել ոչ-դաշնակցական, բայց կարող ու վստահելի խմբեր ու անձնաւորութիւններ:

V. «Քիւրտ ու թուրք տարրերու վերաբերմամբ Արեւմ. Բիւրոյին կը յանձնարարուի ժամանակ առ ժամանակ ինքնուրոյն կերպով կամ համախոհ թուրք ու քիւրտ բարեկամներու միջոցով՝ թուրք ու քիւրտ (ելուներով)՝ այնպիսի հրատարակութիւններ ընել կամ եղածներէն այնպիսիներու նպաստել, որոնք կը պարզեն այդ ժողովուրդներուն մեր Դատի բնոյթը, մեր վերաբերմունքը դէպի օտար տարրերը Երկրի մէջ եւ այդ տարրերու սեփական շահերը»:

ԺԳ. — ԿՈՎԿԱՍ

Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ ընդունելով հանդերձ թէ իր հիմնարկութեան նպատակը եղած է եւ այսօր ալ է Օսմանեան Հայաստանի պատմական դատը, ճանչցուած եւ վաւերացուած միջազգային դաշնագրերով, չի կրնար սակայն անտես ընել հայ ժողովրդի մարդկային իրաւունքներու բռնաբարումի ծանր դէպքերը, որոնք վերջերս տեղի ունեցած եւ սկսած են յաճախակի ըլլալ Թուրքիայէն դուրս եւս, սկսած ընդունեց պաշտպանել այդ կարգի իրաւունքները, տակտիկի վերապահելով որոշել ի՛նչ չափերով կատարել ինքնապաշտպանութեան այդ գործը:

Ներկայիս Դաշնակցութիւնը իր վրայ առնելով Կովկասահայ տարրի ինքնապաշտպանութեան գործը, որոշեց յանձնել այդ՝ Կովկասի Պատ. Մարմինն, որ պահելով իր «Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէ» անունը, պիտի շարունակէ գործել «Դաշնակցութեան» պաշտօնական անուան տակ:

Ժողովը Կովկասի վերաբերմամբ ընդունեց բերանացի եւ գրաւոր պրոպագանդի, տեռորի, ժողովրդական ցոյցերու եւ պինուած դիմադրութեան տակտիկը՝ մնալով պաշտպանողական հողի վրայ:

Դաշնակցական բանուորական խմբերը, այն գործարաններու սահմաններուն մէջ ուր անոնք կ'աշխատին, կը մասնակցին բոլոր բանուորական գործադուներուն եւ շարժումներուն՝ երբ անոնք կապուած են բանուորներու ընդհ. վիճակին հետ այդ գործադուներու մէջ. իսկ ինչ կը վերաբերի գործարանական կեանքէն դուրս ցոյցերուն, որոնք կրնան առաջարկուիլ ուրիշ կուսակցութիւններու կողմէն, բայց որոնց առիթներն ու նպատակը կրնան տարբեր ըլլալ, իւրաքանչիւր դէպքի համար մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը կը վճռէ Պատասխ. Մարմինը:

Այս ընդհ. սահմաններու մէջ Կովկասի Պատասխանատու Մարմինը կը մշակէ իր տակտիկի մանրամասն ծրագիրը Կովկասի Ռայոնական Ժողովին մէջ:

ԺԷ. — ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Վրէժի պատգամաւորը Ժողովի ուշադրութիւնը հրաւիրելով Պարսկաստանի մէջ դաշնակցական կազ-

մակերպութեան թուրքական վրայ՝ առաջարկեց ձեռք առնել պէտք եղած միջոցները՝ նկատի առնելով մանաւանդ որ Պարսկաստանը իբրեւ սահմանակից երկիր անհրաժեշտ է, որ մեծ ուժ ներկայացնէ: Եթէ Պարսկաստանը թոյլ մնայ (ինչպէս է այժմ, երբ անցեալ տարուայ Վրէժի ուսուցչական խումբը ցրուած է), Երկրի հետ յարաբերութիւնները կը կաղան, փոխադրութիւնը չի կատարուիր այնքան արագ եւ կանոնաւոր, որչափ գործի շահերը կը պահանջեն, չենք կրնար արդէն գոյութիւն ունեցած յարաբերութիւնները քիւրտ ցեղերու հետ ապահովել եւ նոր յարաբերութիւններ, — ի միջի այլոց նաեւ Մար-Շիմոնի հետ — հաստատել: Իբրեւ միջոց Պարսկաստանի պատգամաւորը կ'առաջարկէր ընտրել Պարսկաստանի համար Պատասխ. Կեդր. Կոմիտէ կարող ընկերներէ:

Ժողովը ընդունելով այն անհրաժեշտութիւնը, որ պէտք է զօրացնել Պարսկաստանի Դաշնակցական կազմակերպութիւնը, տուաւ հետեւեալ որոշումը.

«Պարսկաստանի Կեդր. Կոմիտէի գործունէութիւնը աւելի զոհացուցիչ դարձնելու համար, որոշուեցաւ մէկ կամ աւելի կարող ընկերներով զօրացնել այդ Կոմիտէն»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ընդհ. Ժողովը Երկրի մարմիններու լուրջ ուշադրութեանը կը յանձնէ հետեւեալ ճշմարտութիւնը.

«Ժողովրդի մը ապատարութիւնը ապահովուած կրնայ համարուիլ միայն այն ժամանակ, երբ այդ ապատարութեան շարժումը իր բոլոր պահանջներով (թէ՛ դրամի, թէ՛ կռուողներու, թէ՛ դեկավարներու եւ թէ՛ պէնքի) կ'ընդգրկուի լայն չափով իրենց՝ տառապողներու կողմէն: Ժողովը համոզուած է, որ առանց ներդաշնակ կապի տառապողներու եւ օժանդակողներու, կազմակերպական մարմիններու եւ ժողովրդական լայն խաւերու, դրսի օգնութեան եւ ժողովրդի գործօն մասնակցութեան ու զոհաբերութեան միջեւ, դժուար է հաւատալ շարժման կանոնաւոր ընթացքին եւ կազմակերպական միջոցներու նպատակայարմար եւ արդիւնաւէտ գործածութեան. ուստի կը պարտաւորացնէ Երկրի մարմինները, որ գործը շանան առաջ տանիլ ներսի ու դրսի միջոցներով ու ուժերով՝ առանց բացարձակապէս յոյս ընելու միայն արտասահմանի վրայ ու նոյն գիտակցութիւնը ներշնչել ժողովրդին»:

4. — ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Դաշնակցութեան Բ. Ընդհ. Ժողովի արձանագրութիւններու մէջ «Կազմակերպութիւն» խորագրին տակ ամփոփուած սկզբունքներու մասին Ժողովը որոշեց «Դաշնակցութեան Խորհուրդին» թողնել հարկաւոր փոփոխութիւնները:

Ա.— ԱՆՀԱՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Կ Ո Մ Ի Տ Ե

Անհատ գործիչները կը բաժանուին երեք կարգի.

- 1) Շրջուն-գործիչ (պրոպագանդիստ).
- 2) Պատուիրակ եւ
- 3) Ներկայացուցիչ

Շրջիկ գործիչներ կը կոչուին այն ընկերները, որոնք Կ. Կոմիտէներու ընտրութեամբ կը զբաղուին բացառապէս այդ Կոմիտէներէ շրջաններու կազմակերպական պահանջներով:

Ծանօթ.— Թէ՛ արեւելեան եւ Թէ՛ արեւմտեան շրջանի մարմիններուն իրաւունք կը տրուի մշտական շրջուն գործիչներ ունենալ:

Պատուիրակ կը կոչուի այն գործիչը, որ դաշնակցական մարմնի կողմէն կ'երթայ որոշ տեղ մը, որոշ առաքելութեամբ մը եւ որոշ ժամանակամիջոցի մը համար, որ կը ճշգուհի անոր վկայագրին մէջ:

Ներկայացուցիչ կը կոչուին Պատասխ. Կեդր. Կոմիտէներու եւ Բիւրոներու այն պատուիրակները, որոնք այդ մարմիններու կողմէն լիազօրութիւն կը ստանան՝ Թուրքիայի մէջ անոնց յայտնի որոշումները ի գործ դնելու կամ Թուրքիայէն դուրս՝ զանոնք ներկայացնելու: (Տես Տակտիկ-Կոմիտէ չեղած վայրերու մէջ անհատ գործիչներու դիրքը):

Բ.— ԽՄԲԵՐ, ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆԵՐ, ԿՈՄԻՏԵՆԵՐ

ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ(14)

ԹՈՒՐԳԻՈՅ ՄԷՁ

Կ Ո Մ Ի Տ Ե

1. Խումբ մը կը կազմուի առնուազն 7 հոգիէ, առաւելագոյն թիւը եւ պարտականութիւնը կ'որոշուին շրջանի ներքին կանոնադրով:

2. Խումբ չեղած տեղը՝ խումբը կը կազմուի դաշնակցական պատուիրակի մը ձեռքով եւ տնօրինութեամբ:

3. Նոր անդամներ կ'ընտրուին խմբի անդամներու փոխադարձ համաձայնութեամբ:

Ե Ն Թ Ա Կ Ո Մ Ի Տ Ե

4. Ենթակոմիտէ մը կը կազմուի 5 խմբերէ կամ առնուազն 35 անդամէ:

5. Ենթակոմիտէն կը վարէ խմբերու ընդհանուր գործերը եւ միջոց կը հանդիսանայ խմբերու եւ աւելի բարձր մարմիններու կամ պատուիրակի միջեւ:

6. Ենթակոմիտէն կը բաղկանայ առնուազն 3 անդամէ:

7. Կոմիտէն կը կազմուի 3 ենթակոմիտէէ կամ առնուազն 15 խմբերէ:

8. Կոմիտէն անկախ է իր զուտ տեղական գործերուն մէջ. իսկ Ընդհ. Ժողովի նախազօած որոշ պարագաներու եւ վճռած ձեռնարկներու գործադրութեան սահմաններու մէջ՝ կոմիտէն պարտաւոր է գործել Կեդր. Կոմիտէի կամ Պատ. Կեդր. Կոմիտէի եւ կամ ներկայացուցչի համաձայնութեամբ:

9. Կոմիտէն իր դրամական հասոյթներէն մի մասը, համաձայն ներքին կանոնադրութեամբ որոշուած տոկոսի, կը յատկացնէ իր վայրի զինման ու ժողովրդի պաշտպանութեան, մնացեալը յանձնելով աւելի բարձր Մարմինի՝ շրջանին ընդհ. պէտքերուն համար:

10. Ուել կոմիտէի կնիք կը տրուի այն պարագային միայն, երբ պէտքն զգացուի եւ երբ շրջանին Կեդրոնական Կոմիտէն ալ յարմար դատէ:

Ծանօթ.— Կեդր. Կոմիտէի քաղաքին մէջ գտնուող Կոմիտէները կնիք երբեք չեն կարող ունենալ:

11. Կոմիտէն կը կազմուի առնուազն 3 անդամէ:

Կ Ե Դ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

12. Կեդր. Կոմիտէն կը կազմուի 3 կոմիտէէ կամ առնուազն 45 խումբերէ:

13. Կեդրոնացման վայրերու մէջ Պատասխանատու Մարմինները շրջանի մը կոմիտէներու համաձայնութեամբ անոնցմէ ամենէն աւելի եռանդուն գործունէութիւն ցոյց տուող եւ պահանջներու նուազագոյն չափին համապատասխանող կոմիտէն կը յայտարարեն Կեդր. Կոմիտէի՝ յայտնելով այդ մասին Բիւրոյին կամ Դաշնակցութեան Պորհուրդին ի դիտութիւն: Իսկ Պատասխանատու շրջաններէն դուրս՝ կոմիտէներու հաւանութեամբ եւ Դաշնակցութեան Պորհուրդի համաձայնութեամբ իրենցմէ ամենէն աւելի գործունէութիւն ցոյց տուող կոմիտէն կը յայտարարուի Կեդրոնական Կոմիտէ:

14. Կեդրոնական Կոմիտէն է արտաքին յարաբերութեան միջնորդը՝ լայն շրջաններու եւ Կոմիտէներու միջեւ:

Ծանօթ.— Բացառիկ եւ կարեւոր պարագաներու մէջ կոմիտէները կրնան անմիջաբար հաղորդակցիլ միեւնոյն մարմիններու հետ:

15. Կեդրոնական Կոմիտէն՝ Պատասխանատու շրջաններէն դուրս՝ կը գործադրէ Ընդհանուր Ժողովի որոշումները, որոնք իր շրջանին կը վերաբերին, խորհրդակցելով տեղական կոմիտէներու հետ:

16. Տարին մէկ անգամ Կեդրոնական Կոմիտէն կը հրաւիրէ շրջանի պատգամաւորական ժողով՝ եթէ դիւրութիւններ կան:

17. Կեդրոնական Կոմիտէն հարկ դատած ատեն՝ կարող է զրկել պատուիրակներ Թէ՛ իր շրջանի կոմիտէներու գործին մօտէն ծանօթանալու եւ Թէ՛ անոնց դրամական ու-ազմական հաշիւները ստուգելու:

18. Կեդր. Կոմիտէն պարտաւոր է կոմիտէներու եւ խումբերու աջակցութեամբ պատրաստել իր շրջանի յեղափոխական քարտէզները եւ տեղական հայ ժողովուրդի վիճակագրութիւնը եւ զրկել իր Բիւրոյին:

19. Կեդրոնական Կոմիտէն տարին մէկ անգամ Հոկտեմբերին կը զրկէ իր Բիւրոյին՝ իր շրջանի գործունէութեան տեղեկագիրը:

20. Կեդրոնական Կոմիտէն տարին երկու անգամներ Բիւրոյին կը ներկայացնէ իր շրջանի հաշիւները Թէ՛ օրագրական ձեւով եւ Թէ՛ այն աղիւսակներու համաձայն, որ ընդունուած է Ընդհանուր Ժողովի կողմէն: Հաշիւները կրելու են Կոմիտէի կնիքը եւ անդամներու ստորագրութիւնները:

21. Այն Կեդրոնական Կոմիտէն, որ գտնէ տարին մէկ անգամ հաշիւ չէ ներկայացուցած, կը համարուի լուծուած:

22. Կեդր. Կոմիտէն կը ստանայ իր Բիւրոյէն Դաշնակցութեան անունով պատրաստուած նուիրադրումներ, կը բաշխէ Կոմիտէներուն եւ հաշուետուութեան պահուն նուիրադրումներուն կազմերը իր հաշուին հետ կը զրկէ իր Բիւրոյին:

23. Կեդրոնական Կոմիտէն ղէթ 3 ամիսը մի անգամ իր շրջանի կոմիտէներու հասոյթի ցուցակը շրջանի անունով հրատարակութեան կու տայ «Իրօշակ»ի մէջ:

Ծանօթ.— Կեդրոնական Կոմիտէի շրջաններէն դուրս գտնուող մարմիններու (կոմիտէ, ենթակոմիտէ եւն.) նուիրատուութեան ցանկը կը տպագրուի «Իրօշակ»ի մէջ այն ժամանակ միայն, երբ իրենց հաշիւը կամ դրամը կը զրկուի Բիւրոյին:

24. Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է պատրաստել իր շրջանի կոմիտէներու եւ խումբերու մանրամասն ցուցակը եւ զրկել Արեւմտ. Բիւրոյին:

25. Կեդր. Կոմիտէն իր բոլոր կարեւոր թուղթերը, տղթիւմանները եւ յեղափոխական պատմական նշանակութիւն ունեցող իրերը կը զրկէ Արեւմտեան Բիւրոյին պահելու՝ մնացածը ոչնչացնելով:

26. Կեդր. Կոմիտէն կը կազմէ իր շրջանի խումբերու, ենթակոմիտէներու, Կեդր. Կոմիտէի քաղաքը գտնուող կոմիտէներու կազմական ներքին կանոնադրը՝ համաձայն ծրագրի եւ Ընդհանուր Ժողովի վճիռներուն:

27. Կեդր. Կոմիտէն ունի իր կնիքը:

28. Կեդր. Կոմիտէն կը բաղկանայ առնուազն 3 անդամէ: Կազմակերպութեան միւս մանրամասները կը զծէ Պատասխ. Կեդր. Կոմիտէն (իսկ բացակայութեան՝ անոր շրջանի Կեդր. Կոմիտէն) ներքին կանոնադրու-

թեամբ, հնար եղածին չափ կիրարկելով ընտրական սկզբունքը:

Յիշեալ ամէն կարգի մարմիններու թուլանալու կամ ուժեղանալու պարագային՝ համապատասխան կերպով պէտք է փոխուին եւ անոնց անունները:

Գ.— ԹՈՒՐԳԻԱՅԷՆ ԴՈՒՐՈ

Կ Ո Մ Ի Տ Ե

29. Եթէ կամ աւելի դաշնակցականներ միասին գալով կը կազմեն խումբ՝ ինքնարեքար կամ պատուիրակի միջոցաւ:

30. Խումբերը կը բաժանուին երկու տեսակի՝ Օ-ժանդակ եւ Մարտական:

31. Օժանդակ խումբը կ'օգնէ կազմակերպութեան նիւթական նպաստներով եւ այլ կարգի ծառայութիւններով:

32. Մարտական խումբերը կը զինուին իրենց միջոցներով եւ պատրաստ են, ըստ պահանջի, գործի գնալու:

33. Նոր անդամներ կ'ընտրուին խումբի անդամներու փոխադարձ համաձայնութեամբ:

Ե Ն Թ Ա Կ Ո Մ Ի Տ Ե

34. Շրջան մը կարող է ունենալ ենթակոմիտէ՝ երբ առնուազն ունի 5 խումբ կամ 35 անդամ:

35. Ենթակոմիտէն կը կազմուի խմբերու առնուազն 5 ներկայացուցիչներու ընտրութեամբ:

36. Ենթակոմիտէն կը վարէ խմբերու ընդհանուր գործերը եւ միջնորդ կը հանդիսանայ խմբերու եւ աւելի բարձր մարմիններու կամ պատուիրակի միջեւ:

37. Ենթակոմիտէն կը բաղկանայ առնուազն 5 անդամէ:

Կ Ո Մ Ի Տ Ե

38. Շրջան մը կոմիտէ կ'ունենայ երբ առնուազն 5 ենթակոմիտէ կամ 25 խումբ ունի:

39. Կոմիտէն իր դրամը կը զրկէ շրջանի Կեդր. Կոմիտէի արկղը, իսկ բացառիկ դէպքերու մէջ, իր Բիւրոյին, կանխաւ իմաց տալով այդ մասին Կեդր. Կոմիտէին:

40. Կոմիտէն կնիք չ'ունենար:

41. Կոմիտէն կը կազմուի առնուազն 5 անդամէ:

42. Յօդուած 8րդ-ը պարտաւորիչ է նաեւ դրոսի կոմիտէներուն համար:

Կ Ե Դ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Ց Է

43. Երջան մը Կեդր. Կոմիտէ կ'ունենայ, երբ առնուազն 5 կոմիտէ կամ 25 ենթակոմիտէ ունի:

44. Կեդր. Կոմիտէն ամէն տարի կ'ընտրուի իր շրջանի պատգամաւորական ժողովին կողմէ:

45. Պատգամաւորական ժողովը կը բաղկանայ իւրաքանչիւր ընտրական շրջանի դաշնակցականներու թուի համաչափութեամբ զրկուած պատգամաւորներէ:

Մանօք.— Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէի շրջանի պատգամաւորական ժողովին կը թողուի որոշել այդ շրջանի ձայներու համաչափութիւնը:

46. Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէ իր ունեցած դրամէն զեղչելով տեղական ծախքերու գումարը, որը չպիտի անցնի ընդհանուր մուտքի 10%ը, մնացածը կը յատկացնէ, իր Բիւրոյի խորհրդակցութեամբ, անոր միջոցաւ կամ ուղղակի, Ընդհանուր Ժողովի որոշումներով գծուած ձեռնարկներուն:

47. «Կեդր. Կոմիտէներ Թուրքիոյ մէջ» վերնագրին տակ յօդուածներ 19, 20, 21, 22, 23, 24, 25 եւ 27 պարտաւորիչ են նաեւ դրոսի Կեդրոն. Կոմիտէներու համար:

48. Թուրքիայէն դուրս ոչ մէկ մարմին առանց իր Բիւրոյի խորհրդակցութեան եւ առանց զէնքը ստացող եւ պահող մարմնի համաձայնութեան, իրաւունք չունի զէնք գնելու:

49. Կեդր. Կոմիտէն պարտաւոր է տարին զէթ մէկ անգամ կոնսորիի ենթարկել իր շրջանի մարմիններու հաշիւները:

50. Վրէժստանի, Բալթանեան Թերակզդի, Եգիպտոսի եւ Ամերիկայի պատգամաւորական ժողովներուն, ինչպէս նաեւ Մարուսաանի Կեդր. Կոմիտէներու պատգամաւորական ժողովին կը վերապահուի Ընդհ. Ժողովի այս որոշումներէն դուրս մնացած կազմակերպական խնդիրները գծել, իւրաքանչիւրն իր ներքին կանոնադրով, առանց հակասելու Դաշնակցութեան ծրագրին եւ Ընդհանուր Ժողովի վճիռներուն:

Դ.— ՊԱՏԱՍԵԱՆԱՏՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

51. Պատասխ. Կեդր. Կոմիտէ կը կոչուի Ընդհ. Ժողովի կողմէն ընտրուած այն Մարմինը, որուն կը յանձնուի վճռուած խոշոր ձեռնարկի մը իրագործման պատասխանատուութիւնը երկրի որոշ շրջանին մէջ:

52. Պատասխ. Կեդր. Կոմիտէի վայրեր որոշուեցան՝ 1) Լեռնավայր, 2) Վիշապ—Ոսկեհանքի շրջան (Յուլիական Մարմին), 3) Բարձրաւանդակ եւ 4) Կովկաս. Վասպուրականը՝ ներկայիս մէջ չունենալով հարկ եղած ուժը Պատասխանատու Մարմին կազմելու համար՝ որոշուեցաւ զրկել հոն գործիչներ՝ յանձնելով առաջիկայ Դաշնակցութեան Խորհուրդին յայտարարել

Վասպուրականի Մարմինը Պատասխանատու Կեդր. Կոմիտէ:

53. Պատասխ. Մարմինը կը կազմուի առնուազն երեք անդամէ, ընտրուած Ընդհ. Ժողովին կողմէ, իսկ Կովկաս՝ Ռայոնական Ժողովին մէջ:

54. Պատասխ. Մարմինները պարտաւոր են ամէն շաբաթ ի գործ դնել իրենց շրջանի տեղացիներէն եւս կարող ընկերներ միացնելու իրենց:

55. Որեւէ պատճառով պակասող անդամին տեղ՝ նորը կ'ընտրուի մնացած ընկերներու եւ շրջանի Բիւրոյի խորհրդակցութեամբ:

56. Պատասխ. Կեդր. Կոմիտէն վարիչ դեր ունի իր գործունէութեան շրջանը կազմող երկրին մէջ:

57. Պատասխ. Կեդր. Կոմիտէի խորհրդակցութիւնը պարտաւորիչ է հարեւան Կեդր. Կոմիտէներու եւ միւս կոմիտէներուն համար ամէն անգամ, երբ վերջիններու կողմէն քիչ-չափ կարեւոր յեղափոխական գործ մը կատարել որոշուի:

58. Պատասխ. Կեդր. Կոմիտէն իր ստանձնած խոշոր ձեռնարկին գործադրութեան վայրկեանը որոշելէ առաջ պարտաւոր է այդ մասին խորհրդակցել, զոնէ իր շրջանի Բիւրոյին եւ մէկ պատասխանատու մարմնի հետ:

59. Պատասխ. Մարմնի անդամը, երբ դտնուի դաշնակցական ունէ մարմնի մէջ, ունի ձայնի իրաւունք:

60. Պատասխ. Մարմնի անդամները պարտաւոր են Երկիր՝ իրենց գործունէութեան վայրը՝ մտնել: Առանց ընկերներու համաձայնութեան դուրս մնացած անդամը կը համարուի հրաժարած:

61. Պատասխ. Կեդր. Կոմիտէները պարտաւոր են տարին զէթ մէկ անգամ կոնսորիի ենթարկել իրենց շրջանի բոլոր մարմիններու հաշիւները:

62. Երկրի Պատասխ. Կեդր. Կոմիտէն կը համարուի Դաշնակցութեան Խորհրդի անդամ:

63. Երկրի Պատ. Կեդր. Կոմիտէները ունին իրենց ներկայացուցիչները պատկանեալ Բիւրոյի կազմին մէջ:

64. Պատասխ. Կեդր. Կոմիտէները, դրամի ազանապի օրերուն մէջ, իրենց անդամներէն մէկը դուրս կը զրկեն՝ հարեւան կոմիտէներու եւ Բիւրոյի կողմէ ընտրուած ընկերներու հետ ժողովարարութեամբ ըզբաղուելու համար:

Ե.— ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

65. Անցեալ 1903 թուէն ի վեր Կովկաս հաստատուած «Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէ» կ'ընդունուի ի շարս Պատասխանատու Մարմիններու:

66. Կովկասեան գաւառական բոլոր կոմիտէները, ինքնապաշտպանութեան գործին մէջ պարտաւոր են գործել Պատասխանատու Մարմնի ղեկավարութեան

տակ, որ կը հետեւի Ընդհանուր եւ Ռայոնական (Շըրջանական) Ժողովներու որոշումներուն:

67. Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէն կը գտնուի Արեւելեան Բիւրոյի գտնուած քաղաքին մէջ եւ կը գործէ անոր հետ համերաշխ կամ միացած:

68. Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէի կազմը կ'որոշէ Կովկասի Ռայոնական Ժողովը:

69. Գաւառական մարմիններու եւ կովկասեան Պատասխ. Մարմնի մէջ փոխադարձ յարաբերութիւնները կը պահուին Բիւրոյի եւ ուրիշ դաշնակցական մարմիններու միջոցով:

Զ.— ԲԻՒՐՈ

70. Բիւրոն գիտակ կը պահէ իր շրջանի Կեդր. Կոմիտէները գործի ընթացքի մասին ամիսը անգամ մը եւ կը հաղորդէ անոնց իր Բիւրոյական հաշիւը՝ առնուազն իւրաքանչիւր 6 ամիս:

71. Ըստ կարիքի՝ Բիւրոն պարտաւոր է, տեղացիներու համաձայնութեամբ, հաւասար ձայնի իրաւունքով ընկերներ զրկելով՝ զօրացնել Կեդր. Կոմիտէները:

72. Բիւրոն կանոնաւորիչ դեր ունի դրամի բաշխումին մէջ, Ընդհ. Ժողովի որոշած նախահաշուի համաձայն:

73. Բիւրոնները կը վերապահուի կնիք պատրաստել տալ ու յանձնել ո'ւր որ անկ է, այդ մասին արդէն պծուած օրէնքներու համաձայն:

74. Բիւրոնները պարտաւոր են տարեկան առնուազն մէկ անգամ իրենց անդամներէն մէկը զրկել այցելելու իրենց շրջանի Կեդր. Կոմիտէները, կամ իրենց իրաւասութեան ենթարկուած մարմինները, եւ ստուգելու նաեւ անոնց հաշիւները:

75. Բիւրոնները պարտաւոր են 3 օրուան մէջ պատասխանել Երկրէն եկած նամակներուն:

76. Բիւրոն պարտաւոր է տարուան վերջը ամփոփել բոլոր իր իրաւասութեան տակ գտնուած մարմիններու հաշիւները եւ ցրուել Կեդր. Կոմիտէներուն:

77. Բիւրոնները պարտաւոր են իրենց կարեւոր որոշումներու մասին արձանագրութիւն պահել:

78. Դաշնակցութիւնը ունի երկու Բիւրո — Արեւելեան եւ Արեւմտեան:

1) ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

79. Արեւելեան Բիւրոյի շրջանը կը կազմեն՝ ա. Երկիր՝ Կիրասոն—Պարբերդ—Տիգրանակերտի գծէն արեւելք.

բ. Ռուսաստան եւ Պարսկաստան:

80. Արեւելեան Բիւրոն կը բաղկանայ հինգ անդամէ, որոնց երեքը կ'ընտրէ Կովկասի Ռայոնական

Ժողովը, իսկ միւս երկուքը կը զրկուին Բարձրաւանդակի եւ Շամիրի մարմիններուն կողմէ:

81. Ռայոնական Ժողովի կողմէն ընտրուած անդամները պատասխանատու են ոչ միայն իրենց ընտրող Ռայոնական Ժողովի եւ Պատասխանատու Մարմիններու, այլեւ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին առջեւ:

82. Երեք ընտրուած անդամներու համար ամէն տարի պիտի կատարուի վերընտրութիւն՝ Ռայոնական Ժողովին կողմէ:

Մանօք.— Անդամները վերընտրելի են:

83. Արեւելեան Բիւրոյի տեղը (քաղաքը) կ'որոշէ Ռայոնական Ժողովը:

84. Արեւելեան Բիւրոյի անդամներէն զէթ երկուքը պարտաւոր են զբաղուիլ միմիայն յեղափոխական գործով, ստանալով կազմակերպութենէն իրենց ապրուստի ծախսը:

85. Մանրակշիռ խնդիրներու լուծման համար՝ Արեւելեան Բիւրոն կը հրաւիրէ արտակարգ Երջանական Ժողով:

2) ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

86. Արեւմտեան Բիւրոյի շրջանը կը կազմեն՝ ա. Փոքր—Ասիա՝ Կիրասոն—Պարբերդ—Տիգրանակերտի գծէն արեւմուտք.

բ. Եգիպտոս, Բալթանեան Թերակզդի, Ամերիկա եւ ամբողջ արտասահմանը՝ բացի Ռուսաստանէ եւ Պարսկաստանէ:

87. Արեւմտեան Բիւրոն կը բաղկանայ 5 անդամէ, որոնց 3ը կ'ընտրէ Ընդհանուր Ժողովը, իսկ երկուքը կը զրկուին Լեռնավայրի եւ Յուլիական Պատասխ. Մարմիններու կողմէն:

88. Եթէ որեւէ պատճառով Արեւմտեան Բիւրոյի անդամներէն մէկը պակսի, նորը կ'ընտրուի Բիւրոյի եւ շրջանի Պատ. Մարմիններու համաձայնութեամբ:

89. Արեւմտեան Բիւրոն իր ընդհանուր կազմակերպական գործերէն դուրս՝

ա. կը հրատարակէ «Դրօշակ»ը, ուղղութեան մասին առաջնորդուելով Ընդհ. Ժողովի կողմէն մշակուած ծրագրով մը, եւ ուրիշ հրատարակութիւններ, Դաշնակցութեան անունով, հայ եւ օտար լեզուներով.

բ. կը հրատարակէ Փրանսերէն լեզուով Pro Armenia թերթը՝ խմբագրութեամբ Փրանսայի մեր բարեկամներու՝ որու նպատակն է եւրոպական հասարակութիւնը մեր դատին ծանօթացնել.

գ. կը վարէ արտասահմանեան պրոպագանդը:

90. Բիւրոյական անդամներու մէջ աշխատանքի բաժանում ընդունելով հանդերձ՝ Բիւրոն in corpore պատասխանատու է իր բոլոր գործերուն համար:

91. Արեւմտեան Բիւրոյի կը յանձնարարուի դաշ-

նակցական ընկերներ հրաւիրել օժանդակելու իրեն՝ ա. խմբագրական, բ. պրոպագանդի, գ. տեղական-վարչական գործերու մէջ: Այդ կարգի ընկերները բիւրոյական ընկերներու հաւասար ձայն կ'ունենան, բայց միայն իրենց ստանձնած գործերու մէջ:

92. Բիւրոն պարտաւոր է ի հարկին իր մէջէն մէկը կամ երկուքը զբաղեցնել իբր շրջան-գործիչ՝ իր շրջանի գործերով:

Է.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

93. Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէներու եւ Բիւրոներու ներկայացուցիչները կը կազմեն Դաշնակցութեան Խորհուրդը:

94. Դաշնակցութեան Խորհուրդը նիստ կը գումարէ պարբերաբար տարին անգամ մը, Դեկտեմբեր ամսուն: Կրնայ արտակարգ կերպով եւս գումարուել, երբ Բիւրո մը եւ իր շրջանի Պատասխանատու Մարմիններէն մէկը համաձայնին իրարու:

95. Դաշնակցութեան Խորհուրդը անձեռնհաս կը համարուի եթէ Երկրի Պատասխանատու Կոմիտէներու ներկայացուցիչներու օրինական թուին 2/3ը բացակայ գտնուի ժողովէն:

96. Դաշնակցութեան Խորհուրդի պարտականութիւններն են՝

ա. Քննութեան ենթարկել Պատ. Կեդրոնական Կոմիտէներու եւ Բիւրոներու գործունէութիւնը Ընդհ. Ժողովի որոշած ձեռնարկներու իրադրոժման սահմանին մէջ:

բ. Յեղափոխական ուժերու եւ դրամի նպատակայարմար բաշխումը կարգաւորել:

գ. Վերակազմել Պատասխ. Կեդր. Կոմիտէներ եւ Բիւրոները:

դ. Դրամական միջոցներ գտնել:

ե. Վարել բոլոր արտաքին յարաբերութիւնները, յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, ուրիշ կուսակցութիւններու եւ տարրերու հետ:

զ. Քաղաքական անակնկալ տագնապի ատեն իր պատասխանատուութեան տակ նոր ձեռնարկ սկսել, առանց հակասելու նախորդ Ընդհանուր Ժողովի որոշումներուն:

97. Երբ յօդուած 93ի մէջ յիշուած մարմիններէն մէկը լուծուի, մնացածները պարտաւոր են անոր ձայնը յանձնել նոյն շրջանի ամենէն ձեռնհաս Կոմիտէին՝ այդ կարգադրութիւնը հաղորդելով բոլոր Կեդրոնական Կոմիտէներուն:

98. Դաշնակցութեան Խորհուրդին կը յատկացուի երկու կնիք՝ հայերէն եւ ֆրանսերէն. վերջինը հետեւեալ ձևով — Conseil de la Fédération Révolutionnaire Arménienne: Այդ կնիքները կը պահուին Արեւմտեան Բիւրոյի քով:

Ը.— ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Ի նկատի ունենալով կազմակերպութեան ծաւալումը եւ դաշնակցական մարմիններու պատասխանատուութիւնները եւ իրաւասութիւնները աւելի որոշակի կերպով ճշդելու կարիքը, Ընդհանուր Ժողովը՝ բացի դաշնակցական մարմիններու կազմի մասին զծած եւ պարտաւորիչ յօդուածներէ՝ անհրաժեշտ կը նկատէ մասնաւորապէս Կեդր. Կոմիտէներու, Բիւրոներու եւ ուսանողութեան վերաբերմամբ հետեւեալ առանձին պահանջները դնել: Այն մարմինը որ այս պահանջներուն գոհացում չէ տուած, կը զրկուի Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունքէն:

Կեդրոնական Կոմիտէ.— Իւրաքանչիւր Կեդրոն. Կոմիտէ պարտաւոր է՝ ա. Տարեկան առնուազն 10,000 Ֆրանքի մուտք ունենալ:

Ծախօք.— 10,000 Ֆր. ի մուտքը նշանակուած ըլլալով ամենաաղքատ երկրի հաշուով, Կեդր. Կոմիտէի շրջանի պատգ. ժողովը պարտի տեղական հանգամանքներու համաձայն բարձրացնել այս գումարը:

բ. Ամէն տարի կազմակերպութեան համար պատրաստել կամ դռնել կազմակերպող, ռազմագէտ կամ յեղափոխական գործի համար պահանջուած ուրիշ կարգի մասնագէտ ընկերներ, համաձայն իւրաքանչիւր շրջանի ներքին պայմաններուն, որոնց քանակը կ'որոշէ շրջանի պատգամաւորական ժողովը:

Ծախօք.— Այն Կեդրոնական Կոմիտէն, որ իր ցէնզովը կը համապատասխանէ երկու կամ աւելի Կեդր. Կոմիտէի եւ իր Շրջանական Ժողովի որոշումով չ'ուզեր բաժանուիլ երկուքի, պարտաւոր է կազմակերպութեան տրամադրութեան տակ դնել տարեկան գոնէ երեք ինտելիգէնտ կազմակերպող ուժեր, որպէսզի իրաւունք ունենայ երկու ձայն ստանալու Ընդհանուր Ժողովին մէջ:

գ. Իւրաքանչիւր տարի պատրաստել ամենապակասը 50 զինավարժ ընկերներ, որոնցմէ 10ը՝ պատրաստ Երկրի մտնելու իրենց հաշուով, եւ 2 հոգի զինուորական զանազան մասնագիտութիւններու վարժեցրնել:

Բիւրոներ.— Երկու Բիւրոները պարտաւոր են՝

ա. Տարեկան առնուազն 10,000 Ֆր. ի մուտք ունենալ, չհաշուելով հրատարակութիւններու հասոյթը:

բ. Պատրաստել կամ գտնել 6 մտաւորական ուժեր, մէկ մասը ռազմագէտ եւ միւս մասը կազմակերպող:

Մասնաւորապէս Արեւմտ. Բիւրոն պարտաւոր է՝ գ. Հրատարակել տարեկան առնուազն 12 թիւ «Դրօշակ»:

դ. Տարեկան առնուազն 500 երես զբժոյցիներ՝ դոնէ 5 տարբեր կարգի թեմաներ շօշափող:

Ուսանողութիւն.— Արտասահմանի եւ Ռուսաստանի դաշնակցական ուսանողութիւնը կը մասնակցի

Ընդհանուր Ժողովին, երբ անդամներու թիւը պակաս չէ քան 50 արտասահմանի մէջ, իսկ 100՝ Ռուսաստանի մէջ:

Թ.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

— Ընդհանուր Ժողովի յաջորդական գումարումներու ժամանակը կ'որոշուի Ընդհանուր Ժողովէն. արտակարգ պարագաներու մէջ կը հրաւիրուի Դաշնակցութեան Խորհուրդի կողմէն(15):

— Առաջիկայ Ընդհ. Ժողովը որոշուեցաւ գումարել 1906ի Դեկտեմբ. 1ին (Ն.Տ.):

— Երկու Բիւրոները կ'որոշեն ժողովին գումարման վայրը եւ կ'ուղղեն հրաւիրագրները:

Ծախօք.— Եթէ նշանակուած ժամանակէն 3 ամիս անցնի եւ ժողով չհրաւիրուի, Սարուստանի Կեդրոն. Կոմիտէները համաձայնելով Երկրի ոեւէ Պատասխ. Կեդր. Կոմիտէի հետ՝ կը հրաւիրեն ժողով՝ իրենք որոշելով տեղն ու ժամանակը:

— Բոլոր ձայնատու մարմինները պարտաւոր են 6 ամիս առաջ Արեւմտեան Բիւրոյին ուղարկել այն հարցերու ցանկը, որ անոնք կը փափաքին ժողովին քննութեան ենթարկել: Այդ ցանկերէն օգտուելով՝ Արեւմ. Բիւրոն կը կազմէ խնդիրներու օրակարգը, որ եւ 4 ամիս առաջ կը զրկէ բոլոր ձայնատու մարմիններուն, որպէսզի անոնց պատգամաւորները ժողովի եկած ատեն իրենց հետ բերեն իրենց ներկայացուցած մարմիններու կարծիքները, հարկաւ լիազօրութիւն ունենալով ցուցակէն դուրս նոր խնդիրներ եւս առաջարկելու ժողովին եւ տեղի ունենալիք մտքերու փոխանակութենէն ետքը՝ ձայն տալու իրենց համոզմունքներու համաձայն:

— Ընդհանուր Ժողովին կը մասնակցին կազմակերպութեան բոլոր Կեդր. Կոմիտէները, որոնց կազմը եւ գործունէութիւնը նուազագոյն պահանջներուն կը համապատասխանեն:

— Բիւրոները եւ Պատասխանատու Մարմինները կ'ունենան մի մի ձայն:

— Դաշնակցական ուսանողութիւնը (Սարուստանի եւ Արտասահմանի) ձայն կը ստանան Ընդհանուր Ժողովին մէջ՝ եթէ ունենան որոշեալ ցէնզը:

— Դաշնակցութեան Խորհուրդին իրաւունք կը տրուի Ընդհ. Ժողովին մասնակցելու հրաւիրել նաեւ Կեդր. Կոմիտէներու շրջաններէն դուրս որոշ դործունէութիւն ցոյց տուող կոմիտէներ:

— Բիւրո մը եւ իր շրջանի մէկ պատասխանատու Կեդր. Կոմիտէն, փոխադարձ համաձայնութեամբ, կարող են Ընդհանուր Ժողովի հրաւիրել հետեւ տեղեր գտնուող այնպիսի ընկերներ, որոնք իրենց յեղափոխական գործունէութեամբ այդ մարմիններուն որոշ երաշխաւորութիւն կը ներկայացնեն Ընդհանուր Ժողովի զբաղումներուն զգալապէս նպաստելու: Իսկ ժո-

ղովին գումարման վայրը կամ անոր մօտ գտնուող այդպիսի ընկերներ՝ անպայման Ընդհ. Ժողովը կարող է հրաւիրել:

— Նախորդ յօդուածի համաձայն, հրաւիրուած ընկերները պատգամաւորի հաւասար ձայնի իրաւունք կ'ունենան Ընդհ. Ժողովին մէջ:

— Ընդհ. Ժողովը որոշ նիստերուն խորհրդակցական ձայնով կը հրաւիրէ նաեւ յօդուած ...ին չհամապատասխանող այնպիսի ընկերներ եւ ուրիշ յեղափոխական կուսակցութիւններու պատկանող կամ չբաւականող անհատներ եւ օտարներ, որոնց մասնակցութիւնը օգտակար կը դատուի այս կամ այն խնդրի առթիւ բացուելիք վիճարանութիւններուն:

— Երկրի ամէն ձայնատու մարմին Ընդհանուր Ժողովին տեղեկագիր կամ պատգամաւոր ղրկելէ առաջ՝ պարտաւոր է (տես Կազմ. յօդ. 16) շրջանի Պատգամաւորական Ժողով գումարել, հակառակ պարագային գոնէ իր շրջանի կոմիտէներու կարծիքներն իմանալ:

— Երկրէն դուրս պատգամաւորները կ'ընտրուին Կեդր. Կոմիտէի Շրջանական Ժողովին կողմէ:

— Ամէն պատգամաւոր պարտաւոր է իր շրջանի ոչ միայն մեծամասնութեան, այլեւ փոքրամասնութեան կարծիքները բերել ժողովին:

— Յօդուած ...ի տրամադրութեանց համաձայն, հրաւիրուած պատգամաւորներու եւ գործիչներու երկու երրորդի (2/3) ներկայութեամբ Ընդհանուր Ժողովը օրինաւորապէս բացուած կը համարուի:

— Ընդհանուր Ժողովը իր բոլոր վճիռները կուտայ ներկայ եղող բոլոր ձայններու 2/3ի մեծամասնութեամբ:

— Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ ձայն ունի, բայց կարող է մէկ ձայն եւս ունենալ այն վայրի համար միայն՝ որուն մօտէն ծանօթ է:

— Պատգամաւորը իրաւունք չունի առանց զինքը ընտրող մարմնի համաձայնութեան իր ձայնը ուրիշին տալու:

— Գործիչ մը երբ շրջանի մը ձայնը կը ստանայ՝ կը համարուի պատգամաւոր եւ կը կորսնցնէ իր գործիչի ձայնը (Յօդ.):

— Ընդհ. Ժողովի նիստերը բացուած յայտարարուելէն ետք պատգամաւորները կը ներկայացնեն ամէն մէկն իր շրջանի համարատուութեան տեղեկագիրը:

— Ընդհանուր Ժողովի վճիռները վերջնական կը համարուին այն ատեն միայն, երբ բոլոր ատենագրութիւնները կ'արձանագրուին եւ Ժողովը փակուած կը յայտարարուի:

— Դաշնակցութեան նպատակի եւ կազմակերպութեան սիստեմի վերաբերեալ ո՛րեւէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհանուր Ժողովը, եթէ կանխապէս այդ խնդիրը չէ ներկայացուած Կեդր. Կոմիտէներուն:

Ժ.— ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ընդհանուր ժողովը կրկին շեշտելով Դաշնակցութեան կազմակերպական այն սկզբունքին վրայ, որը կ'ընդունի խմբական եւ ոչ-անհատական ապակերտնացում, բոլոր մարմիններու լուրջ ուշադրութիւնը կը հրահանգէ այդ պայմանի տրամադրութեան վրայ եւ կը հրահանգէ ամէն դաշնակցականի համակերպիլ իր անձին նկատմամբ իր պատկանած մարմինն ըրած կարգադրութիւններուն: Այս սկզբունքին հիման վրայ երբ դաշնակցական ո'րեւէ մարմնի մէկ անդամը կամ փոքրամասնութիւնը չի համակերպիլ մեծամասնութեան վճռին պարտի կամ չէզոքանալ տեղական գործերու մէջ եւ կամ գործունէութեան ուրիշ վայր ընտրել:

— Դաշնակցական ոեւէ ուրիշ մարմին այս կարգի չհամակերպող անհատի կամ փոքրամասնութեան հետ յարաբերութեան մէջ կը մտնէ տեղական մարմնի համաձայնութեամբ միայն:

Ծանօթ.— Արտասահմանի Երջանական ժողովներուն կը ձգուի այս յօդուածը ընդունիլ կամ յարմարեցնել տեղական պայմաններուն:

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ո Ւ Ա Ր Տ Ա Ք Ս Ո Ւ Մ

— Պատժական բնոյթ ունեցող ամէն վճիռ կը տրուի ձայներու 2/3ի մեծամասնութեամբ:

— Ամէն դաշնակցական մարմին կարող է կարգապահական սլաութներ տնօրինել իր անդամի նկատմամբ:

— Ծանր յանցանքի եւ զեղծումի պարագային ամէն մարմին իր մէջէն կ'արտաքսէ յանցաւոր կամ զեղծարար անդամը, զգուշութեան համար իսկոյն տեղեկացնելով իր անմիջական բարձր մարմնին:

— Արտաքսման ամէն դատավճիռ ժամանակաւոր է մինչեւ Երջանական ժողովէն վերահաստատուիլը եւ Դաշնակցութեան Խորհուրդէն վաւերացուիլը:

— Երջանական ժողովը պարտաւոր է իր ներկայութեանը հրահրել մեղադրեալը՝ միջոց տալու համար անոր ինքզինք պաշտպանելու:

— Երջանական ժողովէն հաստատուելէ եւ Դաշնակցութեան Խորհուրդէն վաւերացուելէ ետքը միայն արձակուած վճիռը վերջնական կը նկատուի եւ դատապարտեալին Դաշնակցութենէն իրապառ արտաքսումը կը յայտարարուի «Իրօչակ»ի մէջ:

Մ Ա Հ Ո Ւ Ա Ն Պ Ա Տ Ի Ժ

— Միմիայն դաշնակցական կոմիտէները, Կեդրոնական եւ Պատ. Կ. Կոմիտէները եւ Բիւրոները ի-

րենց պատասխանատուութեան տակ՝ դաշնակցական ընկեր մը մահուան կը դատապարտեն ապացուցուած դաւաճանութեան եւ ընկերասպանութեան (անիրաւ կերպով, անհատական վրէժխնդրութեամբ եւն.) պարագային, պայմանաւ որ վճիռը միաձայն տրուի:

— Երբ դաշնակցական մարմին մը իր անդամ ընկերը կը դատապարտէ մահուան, պարտաւոր է իրմէ լայն շրջանի համաձայնութիւնը ստանալ:

— Ուրիշ ոճիրներու համար (զէնքի եւ դրամի իւրացում) մահուան պատժի կիրառութիւնը եւս կարելի է միայն այն ատեն, երբ աւելի լայն շրջանի համաձայնութիւնը ստացուի:

Ծանօթ.— Մահուան դատավճռին՝ վերի երեք յօդուածներով () նախատեսուած պարագաներու մէջ վաւերացումը հետեւեալ աստիճանաւորումը կ'ընդունուի. կոմիտէն՝ Կեդր. Կոմիտէին, Կեդր. Կոմիտէն՝ իր շրջանի Պատասխ. Մարմնին կամ Բիւրոնէին, իսկ վերջինները փոխադարձաբար եւ կամ Դաշնակցութեան Խորհուրդին:

— Երբ ամբաստանեալը կը պատկանի ո'րեւէ յեղափոխական կազմակերպուած մարմնի մը, ամբաստանող դաշնակցական մարմինը պարտաւոր է դիմել անոնց՝ իրաւական ատենան մը կազմելու: Եթէ այդ դիմումները հետեւանքի մը չյանգին, դաշնակցական մարմինը ազատ է իր գործողութիւններու մէջ:

— Երբ դաշնակցական մարմնէ դատապարտուած մը փախուստ կու տայ դաշնակցական ուրիշ մարմնի մը շրջանը, վերջինս պարտաւոր է յարգել տրուած վճիռը, այսինքն կրնայ գործադրել այդ վճիռը՝ դատապարտող մարմնին հետ հաւասար պատասխանատուութեան տակ, կրնայ եւ չգործադրել, բայց ստանձնելով գործադրած չլինելուն պատասխանատուութիւնը:

Ջ Ի Ն Ո Ւ Ո Ր Ա Վ Ա Ն Կ Ա Ր Ք Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ն

Ե Ի

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ա Վ Ա Ն Դ Ի Ո Ւ Թ Ի Ն

Այս եւ առհասարակ զինուորական խմբերի ներքին կանոնադրութեան խնդիրներու առթիւ կազմուած էր մասնագործող, որը չկարողացաւ մինչեւ ժողովի վերջը իր գումարումները ունենալ եւ այդ պատճառով ոչինչ ներկայացուց ժողովին: Ուստի ցանկալի է, որ օդտուելով այն կանոնադրութենէն, որ ժողովին ներկայացուած էր Բարձրաւանդակի եւ Շամիրամի Մարմիններու կողմէն, մշակել նորը՝ Դաշնակցութեան Խորհուրդի (գումարման) ժամանակ:

5.— ԴՐԱՄԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ա. ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ

Հաշուեցնել մասնախմբի տեղեկագրի համաձայն՝ ներկայացուած հաշիւները եղած են շատ անկանոն եւ պակասաւոր:

Ոչ մէկ հաշիւ չեն ներկայացուցած Երզնկա, Ծապին Գարահիսար, Խարբերդ, Ապառաժ (Շուշի), Գահիրէ:

Ջրաբերդ.— Պակաս են 98, 99, 900 եւ 901ի հաշիւները (նախորդ կոմիտէի օրերուն): Նոր կոմիտէի կողմէն ներկայացուած է կանոնաւոր հաշիւ 1902 եւ 903 տարիներու համար, կոմիտէի կնիքով վաւերացուած: Օրատետր չէ ներկայացուած: Ներկայացուած է նաեւ Ջրաբերդի քաղաքի եւ գիւղերու ենթակոմիտէներու ցանկը, ինչպէս նաեւ զէնքերու եւ սահմանը անցնող խումբերու ցանկը:

Վրէժ (Պարսկաստան).— Կանոնաւոր հաշիւ տրուած է 1898, 99, 900, 901, 902 թուականներու համար: Կը պակսի 903ի հաշիւը: Օրատետր չէ ներկայացուած: 98-903 շրջանի համար զէնքերու ցուցակ, թէ՛ Երկիր փոխադրուածներու եւ թէ՛ մնացածներու:

Քար (Արեւսանդրապոլ).— Ընդհանուր հաշուեկշիռ 1899-1903 շրջանի համար, առանց օրատետրի: Չէնքի հաշիւ չկայ:

Նաւահանգիստ (Բաթում).— Ընդհանուր հաշուեկշիռ 98-903 շրջանի համար. կան օրատետրեր եւ ընկալագրերու արժուտներ: Պակաս դրամ կայ 697 բուրլի 4 կոպէկ, որ պէտք է ստացուի Կարէնէն, Քէշիշեանէն եւ Շահէնէն:

Արեւմտեան Բիւրօ.— Տարեկան հաշուեկշիռներ 98-903ի համար եւ օրատետրներ:

Ամերիկայի Կեդր. Կոմիտէ.— Ընդհ. հաշիւ 98-903 շրջանի համար. օրատետրներ չկան:

Վասպուրական.— Գիսակի օրագիրը 900-901 շրջանի: Վարդանի հաշիւ 903 Յունուարէն մինչեւ 903 Նոյեմբեր: Պակաս են 98, 99 եւ 902 թուականներու հաշիւները: Կայ Գիսակի ձեռագրերը զէնքերու մասին:

Ոսկանապատ.— Ոչ մէկ հաշիւ չէ ներկայացուած 98, 99, 900 թուականներու համար. իսկ 901, 902 եւ 903 թուականներու համար ներկայացուած են մասնակի հաշիւներ (901 Յունի. — Նոյեմբեր, 902 Յունի. — Յունիս - Դեկտեմբեր, 903 Յունի. — Ապրիլ): Օրատետր չկայ:

Բարձրաւանդակ.— Ներկայացուած է հաշիւ 902 Մայիս — 903 Օգոստ. շրջանի համար: Կայ զէնքերու հաշիւ:

Թմրուկ (Ախալքալաք).— Չեն ներկայացուած 98, 99, 900, 901, 902 (Յունի. — Յունիս) թուական-

ներու համար. կան միայն Յունիս 902-902 Դեկտ. եւ 903ի հաշիւները:

Արեւելեան Բիւրօ.— Պակաս է 98, 99, 900, 901 թուականներու հաշիւը. կան միայն 902 եւ 903 թուականներու հաշիւը, առանց օրատետրի:

Մովսիս (Տրապիզոն).— Ներկայացուած է հաշուեկշիռ 98-901 շրջանի համար. օրատետր 97-99ի շրջանի. կը պակսին 902-903 թուականներու:

Մրգաստան (Երեւան).— Կայ հաշուեկշիռ 901 Սեպտ. — 903 Օգոստ. շրջանի համար. կը պակսին 98, 99, 900 եւ 901 (մինչեւ Սեպտ.) հաշիւները:

Պարակ (Ախալք).— Հաշուեկշիռ 903 Ապրիլ 15 1903 Հոկտ. 1 շրջանի համար, միացած զէնքի հաշուին: Ոսկեհամբ (Իզմիր).— Ներկայացուած են 98, 99, 900, 901 եւ 903 (Մարտ-Դեկտ.) տարիներու հաշիւները: 1902 Ապրիլ — 903 Ապրիլ կը գտնուին եզեր Վարդոյի մօտ: (Այս հաշիւը պիտի ուղարկուի Արեւմ. Բիւրոյին):

Վիշապ (Պոլիս).— 1898 Ապրիլ 1 — 901 Մարտ 31ի հաշիւը ներկայացուած է Պատ. Կեդր. Կոմիտէի միջոցով: 1901 Փետր. 21 — 3 Յունիս 1901ի հաշիւը ներկայացուած է Ռոստոմի կողմէ:

Ալեքսանդրիա.— 1899-1902 Մարտի հաշիւը ներկայացուած է. (1899 Յունի. — 1899 Դեկտ. հաշիւը ստորագրուած է Սեպուհի եւ Պորիսի կողմէ. միւսները կնքուած են միայն կոմիտէի կնիքով):

Pro Armenia.— 1902-903 տարիներու հաշիւը ներկայացուած է. կը պակսի 900-901ը:

Պալմանեան շրջան.— 902-903 հաշուեկշիռ ներկայացուած է. նախորդ տարիներու հաշիւները կը գտնուին տեղեկագիրներու մէջ:

Լեռնավայր.— Կը գտնուի 1898-1903ի 5 տարուայ հաշիւը. ինչպէս նաեւ նոյն Մարմնի Ոսկեհանքի մէջ գործառնութեան հաշիւը՝ առանձին:

Փոքորիկ.— 1901 թուին Ֆիլիպպի մէջ գումարուած Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնի կողմէ ընտրուած դրամական մարմինը («Փոթորիկ» խումբ) տուաւ իր հաշիւը: Այս հաշուի համաձայն՝ խումբը բռնի միջոցով հանգանակած էր 379,500 Փր. (53,000 Փր.) եւս, ընդամենը 5 անձնաւորութենէ: Միւսը ունեցած էր 6000 բուրլի (15,900 Փր.) եւ 3 բանտարկեալ, որոնցմէ մին վերջինս յաջողուած էր փախցնել ժանտարմեններու ձեռքէն: Նոյն մարմնի կողմէն եւ միեւնոյն նպատակով Տաճկաստան անցած խումբը չէ տուած ո'չ մի արդիւնք՝ այդ միջոցին սահմանազրիկ վրայ ծագած խստութիւններու պատճառով:

Ժողովը ուղեւորվ քննել «Փոթորիկ» խմբի հաշիւը, խմբի ներկայացուցիչը յայտնեց, որ խօսք տուած ըլլալով վճարողներուն՝ ոչ ոքի չյայտնել անոնց անունները՝ չի կրնար, մանրամասն տեղեկութիւններ տալով, զրթել խումբի խոստումը. բայց հաշուետու-

թե՛ն է ազատ չմնալու համար կրնար մասնախումբի մը առաջ տալ անուանները այն անձնաւորութիւններու, որոնք իւրաքանչիւր անգամ մասնակցած էին բանակ-ցութիւններու կամ դրամի վճարումին ներկայ էին ե-զած: Ժողովը առաջնորդուելով այն գաղափարէն, որ Դաշնակցութեան ամէն մարմին պարտաւոր է հաշիւ տալ ժողովին, որոնց կազմել երեք անձնաւորութիւն-ներէ բաղկացած մասնախումբ մը՝ ջննելու համար «Փոթորիկ»ի հաշիւները: Այդ մասնախումբի անդամ ըն-տրուեցան Աշոտ-Երկաթ, Վահրամ եւ Ֆելիքս Ջաւէն-եան (Վահան), որոնց բերած հաշիւը կարգաւորվելու քե-րանացի բացատրութիւնները լսելով, ժողովը վաւե-րացուց «Փոթորիկ»ի հաշիւները:

Ոսկեհանգի հանգամանակութիւն.— Կիլիկիոյ Պատ. Մարմնի տուած տեղեկութիւններէն յայտնուեցաւ, որ իր նախաձեռնութեամբ Ոսկեհանգի մէջ կատարուած բռնի հանգանակութեան արդիւնքը եղած է Փրանք, անձնաւորութիւններէ: Խումբը ունե-ցած է մարդու(16) կորուստ՝ զանազան աստի-ճանի պատիժներու դատապարտուած: Հաշիւներու պակասութեան առթիւ պատգամաւորները կու տային այն բացատրութիւնները՝ թէ, ոմանք, շտապ դուրս գալով՝ չեն կրցած հաշիւները բերել կամ ամփոփել, ոմանք՝ թէ այդ անհրաժեշտութիւնը չեն իմացեր եւ ժողովին գալով Արեւմտեան Բիւրոյին ստացեր են ի-րենց հատուկտոր հաշիւները եւ վերջապէս՝ թէ մի քանի տեղեր 98էն ի վեր շարունակական եւ անընդհատ մարմիններ եւ գործունէութիւն չէ եղած:

Սակայն փափաքելով ամբողջ անցեալ շրջանի հաշ-ուետուութիւնը ունենալ, ժողովը կը յանձնարարէ Ա-րեւմտեան Բիւրոյին առանձին-առանձին դիմումներ ը-նել իրենց հաշիւները չներկայացուցած մարմիններուն եւ պահանջել պակաս հաշիւները, որոնց հիման վրայ Դաշնակցութեան Խորհուրդը կարող ըլլայ կազմել կազմակերպութեան ընդհանուր հաշուեկշիւը՝ անցեալ յեղափոխական շրջանին համար:

Բ. ՈՐՈՇՈՒՄ

- Ապագայի համար որոշուեցաւ.
- Հաշիւները պէտք է ներկայացուին՝ տարեկան երկու անգամ.
- ա. Հաշուեկշիւով (բլանկով).
- բ. Չպատուած դրոշմանիշերով.
- գ. Օրատետրով, որու մէջ մանրամասն յիշուած են բոլոր մուտք եւ ծախքերը (թէ՛ բլանկը եւ թէ՛ օրա-տետրը պէտք է կրեն հաշուետու մարմնի կնիքը եւ բոլոր անդամներու ստորագրութիւնը).
- դ. Փոխադրուած զէնքերու եւ ռազմամթերքի հաշիւներով.
- ե. Առձեռն պատրաստ գտնուող զէնքերու եւ ռազմամթերքի հաշիւներով.

զ. Կազմակերպական այլեւայլ գոյքերու ցուցա-կով.

է. Խմբերու կամ ենթակոմիտէներու մանրամասն ցանկով:

ը. Զինուորներու եւ գործիչներու ցանկով:

— Արեւմտեան Բիւրոն պարտաւոր է պահել ա-ռանձին տոմար, ուր պիտի արձանագրուին իւրաքան-չիւր Պատասխ. Մարմնի, Արեւելեան Բիւրոյի եւ Պա-տասխ. Մարմիններու շրջաններէն դուրս գտնուած անկախ կեդր. մարմիններու ելեւմուտքը՝ համաձայն այդ մարմիններէն պարբերաբար ստանալիք հաշիւնե-րուն:

142.—(17) Արեւելեան Բիւրոն եւս պարտաւոր է մասնաւոր տոմար մը ունենալ՝ իր շրջանի մարմիննե-րու ելեւմուտքը արձանագրելու եւ անոր համաձայն Ընդհանուր Ժողովէն ընդունուած նախահաշուով՝ բաշխումի գործը կարգադրելու համար:

143.— Այն մարմինները, որոնք քաղաքական դժուարութիւններու պատճառով վտանգաւոր կը հա-մարեն հաշիւները երկար ժամանակ իրենց քով պահել, պարտաւոր են զազանի թանաքով եւ ծածկազրով պար-բերաբար (կարելի եղածին չափ յաճախ) իրենց հա-շիւները շարժել Արեւմ. Բիւրոյին, որ կ'արձանագրէ այդ հաշիւները ընդհանուր տոմարի մէջ:

144.— Անհատներու տրուած դումարներու, զէն-քերու եւ իրերու համար՝ մարմինները պարտաւոր են ունենալ կամ ընկալազիր կամ ստացողի ստորագրու-թիւնը օրատետրի մէջ այս մասին: Միաժամանակ իւ-րաքանչիւր անհատ գործիչ պարտաւոր է իր ըրած ծախքերու հաշիւը տալ իր պատկանած մարմնին:

145.— Բիւրոնները պարտաւոր են ունենալ հաշ-ուապահ՝ իրենց մէջէն կամ հրաւիրուած դրսէն եւ խստութեամբ պահանջեն բոլոր մարմիններու հաշիւ-ները որոշուած ժամանակամիջոցներուն:

Ծանօթ.— Գործը դիւրացնելու համար փափաքելի է, որ Արեւմ. Բիւրոն հրաւիրէ ժամանակաւոր կերպով մասնագէտ հաշուապահ մը՝ մշակելու համար որոշ սխտեմ մը, որով 904 թուականէն սկսուած պահուին Արեւմտեան Բիւրոյի մէջ ամբողջ կազմակերպական հաշիւները (դրամի, զէնքի, գրքի եւն.):

146.— Արեւմտեան Բիւրոյին յանձնարարուեց բարեփոխել անցեալի մէջ ընդունուած բլանկը հաշ-ուեկշիւի համար եւ ցրուել կոմիտէներուն:

147.— Կազմակերպութեան դրամը արգիւրուած է իրր փոխատուութիւն կամ որեւէ շահադրժական ձեռ-նարկի համար մասնաւոր անձերու տալ:

148.— Արեւմտեան Բիւրոն պարտաւոր է պատ-րաստել տալ եւ ցրուել բոլոր մարմիններուն ընկալա-զրեր փոխարինող դրոշմաթղթեր: Ամէն տեսակի դրա-մական դանձում (նուիրատուութիւն, անդամավճար եւն.) պիտի կատարուի անոնց միջոցով:

Ծանօթ.— Այս դրոշմը կը վերաբերի արտասահ-մանի մարմիններուն: Կովկասեան եւ Երկրի մարմին-ները կրնան դրամ դանձել նաեւ հին ձեւով: Երբ դրոշ-մանիշերը արդէն զրկուած լինին մարմիններուն, «Երօշակ»ի մէջ պիտի յայտարարուի ի դիտութիւն հա-սարակութեան, որ դաշնակցական մարմիններն ու ան-հատները արտասահմանի մէջ, առանց դանձուած դրա-մի համապատասխան դրոշմանիշեր ներկայացնելու եւ նուիրատուի առջեւ ոչնչացնելու, իրաւունք չունին որեւէ գումար ստանալու:

— Բռնի միջոցով ստացուած գումարները եւս պէտք է տպագրուին «Երօշակ»ի մէջ, միայն մաս առ մաս, ըստ հայեցողութեան Արեւմտեան Բիւրոյի եւ ըստ գործերու ընթացքին (կռուի օրերին կարելի է համեմատաբար մեծ գումարներ տպագրել)(18):

— Բիւրոնները եւ Պատասխ. Մարմինները իրար կոնտրոլի ենթարկելու փոխադարձ իրաւունքը ունին:

— Ընկալազրերը փոխարինող դրոշմանիշերէն՝ իւրաքանչիւր դաշնակցական մարմին պարտաւոր է ըստ իր մուտքի ոչնչացնել (երկրորթ, վիճակախաղ, ներկայացում եւն. եւն.) կամ պատուած ձեւով նուիր-ատուին տալ:

— Բիւրոնները պարտաւոր են հաշուապահութեան եւ կոնտրոլի վերաբերեալ ժողովի կողմէն ընդունուած վճիռները գործադրութեան դնել ժողովի փակուելէն մինչեւ վեցամսեայ ընթացքին մէջ:

Գ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՏՈՒՐՔ

— Ամէն դաշնակցական անհատ պարտաւոր է իր եկամուտի 2-10% դնել Դաշնակցութեան տրամադրու-թեան տակ:

Դ. «ԴՐՕՇԱԿ»Ի ՏՈՒՐՔ

— Ընդհանուր Ժողովը, ընդունելով օրգանի տուրք նշանակելու առաջարկը, որոնց Թուրքիայէն դուրս միւս բոլոր վայրերու համար հաստատել «Երօ-շակ»ի բաժնեպիս տարեկան 3 Փրանք, իսկ իւրաքան-չիւր թերթի համար 25 սանթիմ:

Ե. ՎԻՃԱԿԱՆԱՂ

— Դաշնակցութեան մուտքը աւելցնելու համար որոշուեցաւ վիճակախաղ կազմել, եթէ կարելի է ամէն տարի: Այդ նպատակով իւրաքանչիւր անգամ հրապա-րակ պէտք է հանուին 500,000 (հինգ հարիւր հազար) Փրանքի տոմսեր, յատկացնելով այդ գումարի մէկ

հինգերորդ մասը պարգեւներու: Տոմսերու արժէքը պիտի ըլլայ մօտաւորապէս 5, 10 և 100 Փր.: Այս որո-շումի գործադրութիւնը յանձնուեցաւ Արեւմտեան Բիւրոյին:

Զ. ԲՈՒՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Թ. Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնի տուած եւ գործադրած որոշումը բռնի հան-գանակութեան մասին՝ Ընդհանուր Ժողովը կ'ընդունի որոշ, տագնապալի վայրկեաններուն մէջ իբր անխու-սափելի միջոց մը, որը սակայն իբր բացարձակ չարիք՝ պէտք է իր կիրարկութեանը մէջ սահմանափակուի Ընդհանուր Ժողովի կողմէն մասնաւոր որոշումներով: Այդ նպատակով Ընդհանուր Ժողովը կ'ընդունի՝

1) «Փոթորիկ»ի գործը շարունակելու իրաւունքը տալ միմիայն կազմակերպութեան «Ցուցական Մարմ-նին» եւ այն՝ մինչեւ Դաշնակցութեան Խորհուրդի յա-ռաջիկայ նիստը միայն: Այդ Մարմնէն դուրս արտա-սահմանի ոչ մէկ մարմին իրաւունք չունի բռնի մի-ջոցներով դրամ հանդանակելու, 2) Ընդհանուր Ժո-ղովի բացակայութեան Դաշնակցութեան Խորհուրդը միայն կրնայ բռնի դրամ հաւաքող խմբի ձեռք բերած գումարներու բաշխումը կատարել:

Է. ՕԺԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

Դաշնակցական ամէն գործիչ պարտաւոր է իր սեփական աշխատանքով ապրիլ ամէն անգամ՝ ա) երբ մասնաւոր զբաղմունքը չի վնասեր իր ստանձնած գոր-ծը յաջողութեամբ կատարելուն, Բ) երբ իր ստանձնած գործը կատարելէն կամ իր շրջանէն հեռանալէն ետք, անմիջապէս նոր գործի մը չի կանչուիր:

— Նախորդ յօդուածի Բ) պարբերութեան մէջ նախատեսուած պարագային՝ դաշնակցական մարմին-ներն ու ընկերները պարտաւոր են ընկերով համար աշ-խատանք գտնել, եւ Դաշնակցութեան հաշուով անոր ծախքերը հոգալ առ առաւելն 2 ամիս:

Ծանօթ.— Այս յօդուածի տրամադրած երկամսեայ օժանդակութիւնը պէտք է հաշուել ընկերով մը իր գոր-ծէն կամ շրջանէն հեռանալու օրէն սկսած, եւ ոչ թէ ամէն մէկ կոմիտէի շրջանը մտնելու օրէն:

— Գործի մէջ գտնուող ընկերներու ընտանիքնե-րուն ո'չ մի նպաստ չի տրուիր կազմակերպութեան մի-ջոցներէն:

Ը. ՆԱԽԱՀԱՇԻՒ

Դաշնակցութեան զանազան մարմիններու ներկայա-ցուցիչներու տուած տեղեկութիւններու եւ հաշիւներու համաձայն՝ ներկայիս մէջ Դաշնակցութեան տրամադ-

բուժեան տակ կը գտնուին հետեւեալ պատրաստ դու-
մարները.

| | | |
|--|-----|------------|
| Նաւահանգիստ | Փր. | 8000 |
| Թմբուկ եւ Հարեւան (Ախալքալաք եւ Ախալցխա) | > | 3200 |
| Բար (Ալեքսանդրապոլ) | > | 8000 |
| Ջրաբերդ (Կարս) | > | 11500 |
| Մրզաստան (Երեւան) | > | 9000 |
| Ոսկանապատ (Բագու) | > | 12500 |
| Արեւել. Բիւրօ, Այգեւստան եւ Ապառատ | > | 38500 |
| Պարսկաստան | > | 2760 |
| «Փոթորիկ» զբոս | > | 326000 |
| Ամերիկա | > | 15000 |
| Պալքանեան Կ. Կոմիտէ | > | 2000 |
| Եգիպտոս | > | 500 |
| Կիլիկիոյ Պատասխ. Մարմին | > | 16000 |
| Համագումար | | Փր. 452960 |

Ծանօթ.— Չեն հաշուուած ո՛չ Երկրի մարմիննե-
րու առձեռն դրամը եւ ոչ ալ կազմակերպութեան տրա-
մադրութեան տակ եղած զէնք, ռազմամթերք եւ զա-
նազան տեսակի զոյքերը:

1904 թուականի ընթացքին մէջ կը սպասուին.

| | | |
|------------------------------------|-----|------------|
| Նաւահանգիստ | Փր. | 12500 |
| Թմբուկ եւ Հարեւան | > | 10000 |
| Բար | > | 22500 |
| Ջրաբերդ | > | 30000 |
| Մրզաստան | > | 10800 |
| Ուսանողութիւն եւ հիւսիսային Կովկաս | > | 7500 |
| Ոսկանապատ | > | 100000 |
| Արեւելեան Բիւրօ, Այգեւստան, Ապառատ | > | 12500 |
| Արեւմտեան Բիւրօ | > | 27500 |
| Ամերիկա | > | 60000 |
| Պալքանեան Կեդր. Կոմիտէ | > | 8000 |
| Եգիպտոս | > | 2500 |
| Համագումար | | Փր. 303800 |

Այս դումարները Ընդհանուր Ժողովը յատկացուց
հետեւեալ ձեռնարկներուն առաջիկայ տարուան ըն-
թացքին մէջ:

1.— Բանտարկեալ մի քանի կարեւոր գործիչներու
ազատման համար յատկացնել (20,000) քան հազար
Փրանք ղնելով այդ դումարը Բիւրոններու տրամադրու-
թեան տակ եւ իր նպատակին յատկացնելու իրաւասու-
թիւնը յանձնելով Բիւրոններուն եւ Պատ. Մարմիննե-
րուն:

2.— Երկու Բիւրոններու տրամադրութեան տակ
ղնել 30,000 Փրանք, որ պիտի յատկացուի Թղթակից-
ուսումնասիրողներ եւ գործիչ ու օժանդակ ընկերներ
Երկիր զրկելու գործին:

3.— Արեւելեան Բիւրոյի ծախքերուն համար որոշ-
ուեցաւ յատկացնել 10,000 Փրանք:

4.— Կովկասեան Ինքնապաշտ. Կեդր. Կոմիտէին
տրամադրութեան տակ ղնել 50,000 Փրանք:

5.— Բարձրաւանդակի այս տարուան մօտաւորու
չարժուներու պէտքերուն համար ընդունուեցաւ
145,000 Փրանք:

6) Լեոնապայրի համար որոշուեցաւ յատկացնել
200,000 Փրանք, ղնելով այդ դումարը Պատասխ. Կեդր.
Կոմիտէի տրամադրութեան տակ:

7) Շամիր եւ Վրէժի համար որոշուեցաւ 46,000
Փր.:

8) Տուցական Մարմնի եւ «Փոթորիկ» ծախքե-
րուն 150,000 Փրանք:

9) Pro Armeniaի եւ արտասահմանեան պրոպա-
գանդի համար որոշուեցաւ 30,000 Փրանք, որուն
10,000ը մշտական, իսկ 20,000 Փրանքը արտակարգ
այս տարուան համար:

10) Արեւմտեան Բիւրոյին եւ խմբադրութեան յատ-
կացուեցաւ 35,000 Փրանք:

11) Տեղական ծախքերու եկամուտի 10% եւ չնա-
խատեսուած(19):

6.— ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՐՅ

Ընդհանուր Ժողովը՝ կամենալով, որ գրքոյներու
եւ գրքերու ձեւով լոյս տեսնող Դաշնակցութեան (իրա-
տարակութիւնները) բաւարարութիւն տան, մօտիկ ա-
պագային, շարք մը հասունացած խնդիրներու, կարե-
ւոր գտաւ շեշտել քանի մը թեմաներու մշակման անհրա-
ժեշտութիւնը:

Ա. ԿՈՎԿԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Նկատի առնելով, որ Դաշնակցութիւնը իր վրայ
կը վերցնէ այնպիսի գործ մը, ինչպիսին է կովկասա-
հայերու ինքնապաշտպանութեան խնդիրը, եւ որ այդ
գործը թէ՛ իր տեսական կողմով եւ թէ՛ ընթացիկ կողմի
գործնական կարիքներով պիտի տեղ բռնէ եւ լուսա-
բանութի կազմակերպութեան հրատարակութիւններուն
մէջ, առաջարկուեցաւ հրատարակել քանի մը գրքոյի-
ներ պատշաճ խնդիրներու մասին (օրինակ՝ Կովկասի
մէջ առաջ եկած քաղաքական հոսանքները, հայերու
անջատման ձգտում չունենալը, ազգայնական սկզբուն-
քը, ապակեդրոնացման սխտեմը, կովկասահայերու
արդի կացութիւնը եւն.):

Ընդհանուր Ժողովը ընդունելով այդ առաջարկնե-
րու կարեւորութիւնը, բայց եւ նկատի առնելով որ
գրքոյիներով մշակուած այդ խնդիրներէն մի քանիսը,
պոլէմիկ(20) դուռ բանալով, կրնան ստիպել մեզ նո-
րանոր գրքոյիներու հրատարակութեան դիմել, ուստի
եւ գուցէ աւելի նպատակաւոր մար լինէր այդ խնդիր-

ները մշակել երբեմն լուրջ ժողովածուներու հրատա-
րակութեամբ եւ կամ օրուան հարցերու մասին «Դրօ-
շակ» մէջ պայքար մղելով.— Ժողովը կը թողու Ա-
րեւմտեան Բիւրոյին այս կամ այն ձեւով մէկ կամ եր-
կու տարուայ ընթացքին մէջ բաւարարութիւն տալ այդ
պահանջին եւ մասնաւորապէս կը շեշտէ հետեւեալ
խնդիրներուն վրայ.

1) Քաղաքական զանազան հոսանքները Կովկա-
սում.

2) Ռուս կառավարութեան հայերու կլանել ձեռ-
տող ուղղութիւնը:

Ծանօթ.— Այս գրքոյի պիտի գրուի ժողովրդա-
կան լեզուով եւ պարունակէ դոկիւմաններ՝ հայ տարրի
իրաւունքներուն դէմ Կովկասի մէջ եղած ունձգու-
թիւններու մասին:

Պէտք է աշխատիլ, որ այդ աշխատութիւնը, եթէ
կարելի է, կրէ լեզու(21) ձեւ, որպէսզի դիւրին ըլլայ
Տաճկաստանի մէջ անոր տարածումը: Այդ նպատակով
պէտք է ձգտիլ գրքոյի հրատարակել Պոլիս կամ Իզ-
միր:

3) Օտար տարրերու հետ համերաշխութեան օգ-
տակարութիւնը:

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Ընդհանուր յեղափոխական պահանջներու եւ կամ
Տաճկահայաստանի ներկայ պայմաններու տեսակէտէն՝
Ժողովը ընդունեց նաեւ հետեւեալ հրատարակութիւն-
ներու անհրաժեշտութիւնը.

1. Հայկական Հարցին տիրումատիկական(22)
պատմութիւնը կապուած յեղափոխական կեանքի այն
մոմէնտներուն(23), որոնք կապ ունին դիւանագիտու-
թեան գործունէութեան հետ.

2. Տեղեկագրական տեսութիւն՝ տաճկահայ ժո-
ղովրդի արդի կացութեան մասին.

3. Էջեր Հայ Յեղ. Դաշնակցութեան գործունէու-
թենէն.

4. Պարտիզանական եւ այլ հրոսակային խմբերու
տակտիկի մասին, օգտուելով եւրոպական հրատարա-
կութիւններէն եւ մեր կողմէ ընկերներու փորձառու-
թենէն.

5. Պայթուցիկ նիւթեր պատրաստելու եւ գործա-
ծելու պատկերազարդ հրատարակութիւն.

6. Գործիչ ընկերներու կենսագրականները եւ
յիշատակարանները մասնաւոր բրոշուրներով (կամ ա-
նոնցմէ օգտուելի ուրիշ հրատարակութիւններու մէջ).

7. Յեղափոխական գործիչներու արձան:

Գ. «ԴՐՕՇԱԿ»Ի ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

«Դրօշակ»ի բովանդակութիւնը աւելի ճոխացնելու
եւ «Դրօշակ»ը ուրիշ թերթերէ աւելի իրազեկ պահելու

համար՝ Ժողովը որոշեց, որ ամէն մէկ դաշնակցական
մարմին կամ գործիչ պարտաւոր է յեղափոխական
կեանքի վերաբերեալ ամէն մէկ լուր հաղորդել անմի-
ջապէս «Դրօշակ»ի խմբագրութեան:

Քանի մը ընկերներ կը նկատէին, որ «Դրօշակ»ի
մէջ տպագրուող Թղթակցութիւնները, յաճախ շնորհիւ
իրենց միաձեւութեան, կը կորսնցնեն երբեմն իրենց
հետաքրքրութիւնը. Ժողովը՝ ընդունելով այդ նկատու-
ղութիւնը ոչ իբր անհիմն, կ'առաջարկէ խմբագրու-
թեան այդ կարգի Թղթակցութիւնը, ըստ կարելոյն,
մասերու բաժնելով՝ տալ անոնց կարճ տեղեկութիւն-
ներու ձեւ մը:

Դ. ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Նկատելով, որ Գ. Ընդհ. Ժողովի մէջ ընդունուե-
ցան կարգ մը փոփոխութիւններ նախկին Ժողովներու
վճիռներու վերաբերմամբ, Ընդհանուր Ժողովը որոշեց
յանձնարարել Արեւմ. Բիւրոյին՝

ա) Ըստ կարելոյն շուտով ցրուել դաշնակցական
մարմիններուն կազմակերպական փոխուած կանոննե-
րը, եւ բ) մինչեւ ներկայ տարուան վերջը կարգաւորել
նախորդ ու ներկայ Ընդհ. Ժողովներու ատենագրու-
թիւնները, ինչպէս նաեւ յարակից բոլոր նիւթերը, ու
Դաշնակցութեան Խորհուրդի վերջնական խմբագրու-
թենէն յետոյ՝ հրատարակութեան տալ:

Ե. ԿՈՉԵՐ

Ժողովը որոշեց՝ ա. Դիմել առանձին կոչով մը
դաշնակցական հայ ուսանողութեան եւ հաղորդելով
անոնց Ընդհանուր Ժողովի վճիռը Թղթակցութեան
նախորդներու մասին՝ հրաւիր կարգաւ գործին մաս-
նակցելու. բ. Ընդհանուր Ժողովի կողմէն պատճառա-
բանուած կոչ մը ուղղել ընդհանրապէս հայ ինտէլի-
գէնը(24) երիտասարդութեան՝ հրաւիրելով զայն յե-
ղափոխական գործին մասնակցելու:

7.— ԱՅԼԵՆԱՅԼ ՄԱՍՆԱՌՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Արեւմտեան Բիւրոն Փարիզ փոխադրելու
հարց.— Ընդհանուր Ժողովը՝ կարելու համարելով հան-
դերձ Արեւմտեան Բիւրոյի եւ «Դրօշակ»ի խմբագրու-
թեան փոխադրուիլ Փարիզ, որոշեց առկախ թողուլ այդ
խնդիրը՝ ապացուցուած չհամարելով Բիւրոյի ու խմբագ-
րութեան, քաղաքական տեսակէտէ, ապահովութիւնը
Ֆրանսայի մէջ: Այդ խնդիրը նպաստաւոր հանգամանք-
ներու մէջ կրնայ վճռել ինքը՝ Արեւմտեան Բիւրոն:

Բ. Եգիպտոս.— Եգիպտոսի մէջ թերթի մը հրատա-
րակութեան հարցը Ժողովին ներկայացուած ըլլալով՝ թեր
ու դէմ փիճաբանութիւններ տեղի ունեցան, որոնցմէ
ետք առաջարկը ետ առնուած ըլլալով՝ հարցը փակուած
նկատուեցաւ: Ատոր փոխարէն Ժողովը որոշեց յանձնա-

րարել Արեւմ. Բիւրոյին ուժեղացնել Եգիպտոսի կապա- կերպութիւնը՝ ի հարկին շրջուն գործիչ ղրկելով հոն եւ Բուլգարիա:

Գ. Ուսանողութիւն.— Ընդհանուր Ժողովը լսելով Եւրոպայի եւ Ռուսաստանի հայ ուսանողութեան պեկու- ցումները, որոշեց յանձնարարել Բիւրոններուն աւելի սերտ յարաբերութիւններ պահել ուսանողութեան հետ:

Դ. Ընդհանուր Ժողովի գործունէութեան կանոնա- գիր.— Դաշնակցութեան Խորհուրդին կը յանձնարարուի Ընդհ. Ժողովի գործունէութեան համար ներքին կանո- նագիր մըն ալ պատրաստել: Այդ կանոնագիրը առաջի- կայ Ընդհ. Ժողովի վաւերացման ենթարկուելէ ետք կի- րառութեան կը դրուի:

Ե. Տեղեկագրերու ձեւի մը մշակումը.— Տեղե- կագրերու ձեւի մշակութեան համար կազմուած մաս- նաժողովի հաւաքած նիւթերն ու աշխատութեան ար- դիւնքը որոշուեցաւ յանձնել Արեւմտեան Բիւրոյին, խնդրելով կազմել ամբողջական ծրագիր մը եւ ցրուել բոլոր մարմիններուն, որ ապագային իրենց տեղեկագ- րերը այդ ձեւով կազմեն:

Զ. Հեռագրերու եւ ցամաքագրութեան գաղտնի ձեւեր.— Պայմանագրական հեռագրերու եւ նամակ- ներու համար նոր շիֆերու կազմութեան գործը յանձ- նրեցաւ այդ նպատակով կազմուած մասնաժողովի նա- խագահին, որ պատրաստելով պէտք եղածը, պիտի ղրկէ Արեւմտեան Բիւրոյին՝ ցրուելու համար:

Է. «Փոթորիկ»էն անջատ բռնի հանգանակու- քիւն.— Ընդհանուր Ժողովը քննելով մէկ քանի բռնի հանգանակութեան դէպքերը, որոնք (հակառակ այն ո- րոշումին, որ միայն «Փոթորիկ» խումբը իրաւունք ու- նէր Տաճկաստանէն դուրս բռնի դրամ հանգանակելու) տեղի ունեցան 903 թուականին Կովկասի մէջ, ընդունեց հետեւեալ որոշումը.

«Բննելով «Փոթորիկ»ի գործունէութեան հետ կողմ- նակի կերպով կապուած Նաւահանգստի եւ Սարուս- տանի մէկ քանի վայրերու մէջ տեղի ունեցած բռնի հանգանակութեան եւ սպանութեան մը յանգող դէպ- քերը, նկատելով որ այդ յանցանքներու մէկ մասը ա- ռաջ եկած են դէպքերու մասնակից մարմիններու իրենց իրաւասութեան սահմանի թիւր ըմբռնումէն, եւ նախա- տեսելով որ այդ կարգի երեւոյթներ կարող են առաջ բե- րել հասարակական բարոյական անկում, կապակեր- պական կարգապահութեան խորտակում եւ Դաշնակցու- թիւնն ու գործը վտանգի ենթարկող դժուարութիւններ, Ընդհ. Ժողովը որոշեց յանդիմանութեան ենթարկել ընդհանուր կերպով բոլոր այն անհատներն ու մարմին- ները, որոնք այդ դատապարտելի դէպքերուն մասնակից են եղած ուղղակի կամ անուղղակի կերպով, քանի որ Ժողովի համար անկարելի եղաւ, անհրաժեշտ վկաներու

եւ փաստերու պակասութեան պատճառով, ճշդել իսկա- կան պատասխանատուները:

Ժողովը այս որոշումը կը նկատէ իբր նախապու- շուքիւն մը բոլոր մարմիններու համար՝ առաջիկային խստիւ համակերպելու կարգապահութեան օրէնքներուն»:

Ը. Ոսկեհամաձի խնդիր.— Ժողովը ծանօթանալով իզմիրի տեղեկագրին եւ լսելով այդ առթիւ Ժողովի մէջ տրուած բացատրութիւնները, խստիւ ցաւ կը յայտնէ այն այլանդակ, հակաընկերական, հակակար- դապահական դէպքերուն մասին, որոնք տեղի են ունե- ցեր 1902-1903 թուականին Ոսկեհանքի մէջ:

Ոսկեհանքէն Ժողովին ուղարկուած եւ «Ոսկեհան- քի Կ. Կոմիտէի գործադիր վարչութիւն» ստորագրու- թիւնը կրող տեղեկագրի մէջ վճռեց ընդունիլ կազմակերպութեան արխիւին մէջ պահելու համար, սոյն պայմանով միայն՝ որ նախօրօք ճշդուին տեղե- կագրի այն կէտերը, որոնք շարք մը ընկերներու բան- տարկուած ըլլալուն պատճառով, բնականաբար միա- կողմանի կերպով ներկայացուած են: Իսկ ինչ կը վե- րաբերի այդ տեղեկագրի մէջ վերոյիշեալ վարչութեան կողմէ դրուած առաջարկներուն ու սպառնական պա- հանջներուն, Ժողովը՝ նախ՝ որեւէ անպայման, սպառ- նական պահանջ դաշնակցական ունէ մարմնի կողմէն Ընդհ. Ժողովին կը գտնէ խիստ անպատկառ, քանի որ Ընդհանուր Ժողովի որոշումները պարտաւորեցուցիչ են ամէն մարմնի համար, եւ երկրորդ՝ տեղեկագրի ա- ռաջարկներու մասին ունէ կարգադրութիւն ընելու գործը կը թողու Յուցական Մարմնին:

Ոսկեհանքի ընկերները լսելով Ընդհ. Ժողովի այս որոշումները՝ զրկած էին մասնաւոր պատգամաւոր մը բացատրութիւններ տալու համար (25): Ընդհ. Ժողովը կարդալով Ոսկեհանքի մասնաւոր պատուիրակի բա- ցատրութիւնները, ուր կը յայտնուէր՝ թէ Ոսկեհանքի ընկերները պարտաւոր են համակերպելու Ընդհ. Ժո- ղովի որոշումներուն, գտաւ որ այդ յայտարարու- թիւնը պիտի մեղմացնէ Ոսկեհանքի տեղեկագրի սպառ- նական ոճի և պահանջներու մասին ընդունուած վերո- յիշեալ որոշումը, եւ վճռեց կցել այդ բացատրութիւն- ները Ոսկեհանքի տեղեկագրին:

Թ. Դէմոքրալիկասիոն(26) հայդուկներու մէջ.— Հայդուկային քանի մը խմբերու մէջ առաջ եկած դէմո- քրալիկասիոնի հարցը վիճաբանութեան նիւթ դարձաւ Ժողովին մէջ: Ժողովականներէն մին դիտել տուաւ, որ այդ երեւոյթի գլխաւոր պատճառներէն մին է անգոր- ծունէութիւնը, որ շատ անգամ պահեստի պինուորներու բարքերու ապականման եւ անոնց մտքերու մէջ ժող- վրդի հաշտոյն ձրիապէս ապրելու իրաւունքն ունենալու սխալ եւ վնասակար գաղափարին հաստատման պատ- ճառ կը դառնայ: Իր կարծիքով, քոնթրոլի պակասու- թիւնն ալ մեծ դեր ունեցեր է պինուորներու մոլորութիւնը պատճառներու մէջ: Ուստի կ'առաջարկուէր, որ մի քանի

բարոյական սկզբունքներ դրուին Ժողովին կողմէ, — սկզբունքներ՝ որոնք նպաստէին այդ չարիքներուն առ- ջելը առնելուն:

Ժողովը այդ մասին կարծիքներ փոխանակելէ ետքը որոշեց թողնել այդ ընել պինուորական խմբերու համար մշակելի ներքին կանոնադրութեան մէջ: (Տես «Ձինուտ- րական կարգապահութիւն եւ պատերազմական դրու- թիւն»):

Ժ. Ընկեր Մելիքի ցամաքները Ժողովին.— Ժո- ղովը ընկեր Մելիքի (Յուսուֆեան) նամակները կար- դալէ եւ այդ առթիւ կարծիքներ փոխանակելէ ետք ըն- գունեց հետեւեալ բանաձեւը՝

«Քննելով ընկեր Մելիքի բողոքները եւ լսելով այդ առթիւ ընկերներու բացատրութիւնները, Ընդհ. Ժողո- վը որոշեց արձանագրել հետեւեալը.— Գանդատներու այն մասը, որ կը վերաբերի մէկ քանի ընկերներու ան- բարեխղճութեան կամ չարամտութեան մէջ մեղադրուե- լուն՝ հետեւանք է թիւրիմացութեան: Իսկ ոճը, որով գրուած են այդ գանդատները, միանգամայն չի համա- պատասխաներ գրողի սովորական լրջութեանը: Ինչ կը վերաբերի գործի եւ տակտիկի մասին յայտնուած մտքերուն՝ Ժողովը որոշեց, իրբեւ յարգուած ընկերոջ կարծիք, ուշադրութեան առնել զանոնք:

ԺԱ. Օճանեանի հարց.— 1891 թուականին, Կա- րինի Կ. Կոմիտէի որոշման համաձայն, Կարինի մէջ տեղորի ենթարկուեցաւ տեղացի յեղափոխական գոր- ծիչ ճանչցուած Ս. Կէրէկցեանը: Այս սպանութենէն քիչ ժամանակ յետոյ Ս. Կէրէկցեանի եղբայրը, Տիգ- րան Կէրէկցեանը անցնելով Թիֆլիզ՝ կը սկսի սպառ- նալիքներ ընել դէպի տեղորի հեղինակներն ու այն ժա- մանակուայ Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնը: Կեդրոնը կատարուած տեղորի անկարգապահութեան արդիւնք համարելով՝ թուրքիկով մը իր պարսաւանքը յայտնեց փաստի դէմ՝ շեղտելով, որ Կէրէկցեանի սպանութիւնը կատարուած է հակառակ Կեդրոնի փափաքին եւ ար- դեւքին: Այս թուրքիկի երեւնալէն տարի մը յետոյ Կէ- րէկցեանի եղբայրը Թիֆլիզի մէջ կը սպաննէ Օջոնեա- նը ու այդ սպանութիւնը, լուեկայն՝ բնական վրէժ- խնդրութեան արդիւնք համարուելով, սպաննողը կազ- մակերպութեան կողմէ կը մնայ անպատիժ եւ այդպի- սով Օջոնեանը կը մատնուի մոռացութեան: Այսօր Ընդհանուր Ժողովը, նկատելով՝ որ Օջոնեանը եղած է անկեղծ, անձուէր յեղափոխական եւ Ս. Կէրէկցեանի տեղորի կատարուած է ո՛չ թէ Օջոնեանի, այլ Կարինի Կ. Կոմիտէի միաձայն վճռով, նկատելով՝ որ թէ իրօք տեղորի ենթարկուող Կէրէկցեանին պարզ դաւաճան նկատելու համար փաստեր կը պակտին, բայց անոր բռնած ընթացքը դէպի Կարին մտած մեր դաշնակցա- կան ընկերները (սրճարաններու եւ խանութներու մէջ բարձրաձայն, յակնաչ ու անուանէ, հայհոյել նոր յե- ղափոխականներուն՝ ըսելով, որ անոնք եկած են Ժո-

ղովրդի խաղաղ վիճակը վրդովելու եւն. եւն.), որոնք սրտաբայ կերպով մօտեցած էին անոր՝ իր գործակ- ցութիւնը ստանալու նպատակով, եթէ դաւաճանութիւն չէ ըստ ձեւի, սակայն շատ հեռու չէ դաւաճանութե- նէն ըստ հետեւանքներու, նկատելով՝ որ այդ վճիռը արձակողները բոլորովին հեռու են եղած որեւէ անձ- նական դիտումներէ, այլ ղեկավարուած են միայն գոր- ծի շահով, նկատելով՝ որ եթէ այդ վճիռը արձակող- ները դատապարտելի են, դատապարտելի պիտի ըլլար այդ վճռին մասնակցած եւ վճիռը դիտակցօրէն իրա- դործած Արամ Արամեանը, որը սակայն կազմակերպու- թեան առջեւ, մինչեւ այսօր ճանչցուած է անմեղ եւ անոր յիշատակը ոչնչով չէ նսեմացուցած իր ձեռքով կատարած տեղորը,

Նկատելով՝ որ Տիգրան Օջոնեանը արդէն իր ա- րիւնով քաւած է այն յանցանքը, որ ըստ կեդրոնական Դաշնակցութեան հայեացքի ծանրացած է անոր վրայ,

Նկատելով՝ որ այժմեան սպակեդրոնական Դաշ- նակցութիւնը իր պատժական եւ կազմակերպական կա- նոններով շատ տարբեր է հին կեդրոնական Դաշնակ- ցութենէն,

Ընդհանուր Ժողովը որոշեց բաւական համարել Տիգրան Օջոնեանի մոռացութեան մատնուած ըլլալը ամբողջ 13 տարի, եւ ամենայն իրաւամբ համարելով զայն մեր նահատակ ընկերներէն, պարտաւորեցնել Ա- րեւմտեան Բիւրոն՝ առաջին առթիւ, «Երօջակ»ի մէջ ղեկ կենսագրութիւնն եւ լուսանկարը:

ԺԲ. Զալլադի հարց.— Ընդհանուր Ժողովը նկա- տի առնելով ընկեր Զալլադի (Կովկասի խմբապետնե- րէն) անկեղծ զղջումը եւ վերջերս նորէն վտանգաւոր գործերու մէջ նետուիլը, որոշեց յիշեալի մասին «Երօ- շակ»ի 1898 Յունուարի թիւին մէջ տպուած յայտա- րարութիւնը (որով Զալլադը հեռացուած էր Զրաբեր- դի շրջանի դաշնակցական գործերէն՝ իրբեւ անկար- դապահ ընկեր) շեղեալ համարելով, գործի վերաբը- նութիւնը յանձնել Ոսկանապատի Կեդր. Կոմիտէին, եթէ այդ առթիւ Զրաբերդի Կոմիտէին կողմէն հարց բարձրացուի:

8.— ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընտրութիւններու ձեռնարկելէ առաջ, Ժողովը միաձայն որոշեց գործի հրաւիրել Յուսուֆեանը, Նի- կոլը, Վարդանը եւ Սաքոն:

Ա.— Բարձրաւանդակի.— Բարձրաւանդակի Պա- տասխանատու Մարմնի նախկին կազմը վերահաստատ- ուելով ընտրուեցան՝ 1. Ալոտ-Երկաթ, 2. Վահան, 3. Հրայր(27), որոնք արդէն գործին վայրը կը գտնու- ւին:

Բ.— Վասպուրական.— Վասպուրականի շրջանը ուժեղացնելու նպատակով Ընդհ. Ժողովը հրաւիրեց այդ շրջանի համար իբր գործիչներ հետեւեալ ընկեր-

ները՝ 1. Կոմս, 2. Կոստանդին, 3. Բայանդուր(28), 4. Կ. Խորենեան (Ամերիկայէն), որոնք միացած տեղական Կեդր. Կոմիտէին պիտի ջանան՝

1.— Իրագործել Ընդհ. Ժողովի կողմէն այս տարուան համար ընդունուած որոշումները:

2.— Նախապատրաստել Վասպուրականը առաջիկայ տարուան համար Պատասխանատու Կեդր. Մարմնի վայր հռչակելու գործը:

Գ.— Ցուցական Մարմին.— Ցուցական Մարմնի ընտրութեան անցնելիս ընկեր էլլէնը նոյն Մարմնի անդամակցութեան համար իր թեկնածութիւնը դրած լինելով՝ Ժողովականներէն մին հետեւեալը առաջարկեց.

«Ժողովը կազմակերպութեան շահը աչքի առաջ ունենալով, վտանգաւոր կը գտնէ էլլէնի Ցուցական Մարմնի մէջ մտնելու ցանկութիւնը, ուստի եւ կ'առաջարկէ ետ առնել իր թեկնածութիւնը»:

Ժողովը, խորհրդակցելով, միաձայնութեամբ ընտրեց էլլէնը իբր Ցուցական Մարմնի անդամ: Նոյն (Ցուցական) Մարմնի անդամ ընտրուեցան նաեւ հետեւեալները.

2. Մարտիրոս (Կարմրաթշիկ), 3. Թորգոմ, 4. Յովնան, 5. Աշոտ Բագրատունի(29):

Դ.— Լեռնավայր.— Լեռնավայրի Պատասխ. Մարմնի ընտրութեան նկատմամբ Ժողովը ընդունեց հետեւեալ որոշումը.

Ընդհ. Ժողովը նկատելով, որ թեկնածուներու մեծ մասը բացակայ են, իսկ ներկաները պայմանական ձեւով կու տան իրենց համաձայնութիւնը, կ'առաջարկէ Արեւմտեան Բիւրոյին՝ Լեռնավայրի շրջանի մէջ գործող ընկերներու համաձայնութեամբ՝ կազմակերպել Լեռնավայրի գործին համար պահանջուող Պատասխանատու եւ այլ օժանդակ մարմինները, օգտուելով ազոր համար Ընդհ. Ժողովի կողմէն առաջարկուած ընտրելիներու հետեւեալ ցանկէն: Մինչեւ Պատասխ. Մարմնի կազմակերպուիլը այդ շրջանի մէջ գտնուող ընկերները կը շարունակեն գործը Արեւմտեան Բիւրոյի խորհրդակցութեամբ: Ընտրելիներու ցանկը՝ 1. Աղասէր, 2. Կարիճ, 3. Մարթին, 4. Տիրան, 5. Վահրամ, 6. Խղմալեան, 7. Մարթին, 8. Ռահմիբ, 9. Կիլիկեան, 10. Տէր Տէր, 11. Յօլան, 12. Աշոտ-Լեւոն, 13. Երուանդ, 14. Վարդան, 15. Պիոնեան(30):

Ե.— Արեւմտեան Բիւրօ.— Ընտրութիւններու ձեռնարկելու միջոցին, ընկեր Անտոնը (Սիմոն) հետեւեալ յայտարարագիրը հաղորդեց Ժողովին՝ արձանագրուելու խնդրանքով:

«Համոզուած լինելով, որ առանց Արեւմտեան Բիւրոյի նկատմամբ իմ կողմէ պահանջուած եւ վերջը հիմնականօրէն փոփոխուած նուազագոյն պահանջին, կարող է նոյն Բիւրոն կազմուի ոչ-նոկերուած յեղափոխականներէ եւ նոյնիսկ սիրողներէ, որը բնականօրէն կ'ունենայ բացասական ակնյայտնի հետեւանքներ, այն է՝ ա) Կազմակերպութեան ներկայացուցչութիւնը վտրձուած յեղափոխականներու յանձնելու տեղ, միջոց կու տայ Բիւրոն կազմելու աթոռի խնդրով հետաքրքրուող անձնաւորութիւններէ,

բ) Արեւմ. Բիւրոն չի վայելիւր պատշաճ յարգանք եւ զուրկ կը լինի յեղափոխական անհրաժեշտ հմայքէն, որպէսզի գրաւէ հայ յեղափոխական նոր ուժեր, գ) Միջոց կու տայ Բիւրոն կազմել այն տեսակ անդամներէ, որոնք իրենց սրտին մօտ չեն ընդունիր Երկրի եւ բուն յեղափոխական պահանջները եւ հետեւաբար հարկ եղած հաւատքը չեն ներշնչեր Երկրի մէջ աշխատողներուն, — ուստի այս բոլոր եւ այլ քանի մը պատճառներով՝ ես իրաւունք կը համարիմ ինձ ձեռնպահ մնալու Արեւմտեան Բիւրոյի ընտրութեան մէջ»:

Ընտրութիւններու անցնելէ առաջ նոյնպէս փիճաբանութիւն տեղի ունեցաւ թէ արդեօ՞ք պէտք է Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցչներու (պրոպագանդիստ) ընտրութիւնը թողնել իրեն՝ Բիւրոյին, թէ Ժողովին մէջ կատարել:

Ժողովը, նկատի առնելով, որ առաջիկայ 1904 թուականին ծանր դէպքեր կ'ակնկալուին Երկրի մէջ, որոնք բացառիկ կերպով շուտափոյթ եւ պատասխանատու գործունէութիւն կը պահանջեն Արեւմտեան Բիւրոյին՝ օտար մամուլին եւ դիւանագիտական շրջանակներու վրայ ազդելու համար,

Որոշեց Արեւմտեան Բիւրոյի 3 անդամներու ընտրութեան հետ միաժամանակ կատարել նաեւ երկու պրոպագանդիստներու ընտրութիւնը, համաձայն 1904 տարուան համար կայացած որոշման:

Այդ ընկերները Արեւմտեան Բիւրոյի վայրը գտնուած միջոցին կը համարուին Բիւրոյի համագործակցութեան:

Արեւմ. Բիւրոյի ընտրութեան ձեռնարկելով, ընտրուեցան Բիւրոյի անդամ եւ պրոպագանդիստ՝

- 1. Բժ. Լորիս-Մելիքեան
2. Խ. Մալումեան
3. Ռոստոմ
4. Ղարիբ (Ա. Ահարոնեան)
5. Միք. Յովհաննէսեան(31):

Ընտրութիւններու միջոցին բժ. Լորիս-Մելիքեան Ժողովին բերաւ հետեւեալ հրատարական նամակը.—

«Մէկ քանի օր առաջ Ժողովը իր բացարձակ վստահութիւնը յայտնեց ինձ՝ զիս միաձայն Արեւմտեան Բիւրոյի անդամ ընտրելով:

Ես զգացուած յանձն առի կատարել այն պարտականութիւնները, որ կը դնէր իմ վրայ այդ պատշաճը, սակայն ընտրութեան օրէն մինչեւ այսօր Ժողովի մէջ տեղի ունեցած փիճաբանութիւնները եւ որոշուած սնորոշ ակնարկութիւնները իմ ապագայ գործունէութեանս ու դերին մասին՝ կը ստիպեն ինձ վերջնականապէս հրատարիլ Բիւրոյի անդամակցութենէն եւ

ներկայ պայմաններու մէջ որեւէ թեկնածութենէ՝ այդ պաշտօնի համար:

Կը խնդրեմ, որ իմ այս հրատարականը ամբողջովին անցնի Ժողովի արձանագրութիւններու մէջ»:

Ժողովը միաձայն որոշեց մերժել այդ հրատարականը եւ խնդրել անկէ, որ շարունակէ իր ստանձնած գործը Արեւմ. Բիւրոյի միւս ընկերներու հետ համահասարակ պատասխանատուութեամբ եւ իրաւունքներով: Այս որոշումը հաղորդել իրեն եւ Բիւրոյին՝ ատենագրութեան կցելով նաեւ անոր հրատարակիչը:

Նոյն նիստին մէջ որոշուեցաւ խնդրել Սիմոնէն, որ շարունակէ մնալ Արեւմ. Բիւրոյի մէջ՝ մինչեւ Ռոստոմի գալը:

Բժ. Լորիս ի վերջոյ յայտարարեց Ժողովին, որ իր ստանձնած պատասխանատուութիւնը չի կրնար շարունակել, նկատի առնելով Բիւրոյի ամբողջական կազմը, եւ ուրեմն կը հրատարի Բիւրոյի անդամակցութենէն, մնալով պրոպագանդիստ անդամ եւ պատասխանատու միայն պրոպագանդի գործին համար:

ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԻՆ

Նկատելով որ Լեռնավայրի գործերու մասին տրուած որոշումները երաշխիք մը չեն ներկայացներ նոյն շրջանի գործերուն հարկ եղած մղումը տրուելուն, նկատելով որ Ժողովին ներկայ ընկերներէն Սիմոնն ու Աղասէրը ցանկութիւն կը յայտնեն Պատասխ. Մարմին մը կազմել՝ վստահ լինելով Ժողովէն բացակայ քանի մը ընկերներու աջակցութեան վրայ, Ժողովը որոշեց անդրադառնալ եւ փոխել նոյն շրջանի գործերու վերաբերմամբ իր տուած որոշումը եւ նոյն շրջանի Պատասխ. Մարմնի անդամներ ընտրեց 1. Սիմոն, 2. Աղասէր, եւ Ժողովէն բացակայ՝ 3. Միսաք (Կարիճ) և Վարդանը, յանձնարարելով իրենց միացնել ուրիշ ընկերներ՝ ինչպէս Բորիսն ու Իւսուֆը, եւն.(32):

Գ.— ՍԱԶԲՈՒՆՔԻ ԵՒ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ա. Ընդհ. Ժողովը հետեւեալ որոշումը տուաւ.—(33) «Ժողովը Երկրի մարմիններուն լուրջ ուշադրութեանը կը յանձնէ հետեւեալ տարրական ճշմարտութիւնները.

«Ժողովրդի մը ապատագրութիւնը ապահովուած կրնայ համարուիլ միայն այն ժամանակ, երբ այդ ապատագրութեան շարժումը իր բոլոր պահանջներով (թէ՛ դրամի, թէ՛ պէնքի, թէ՛ կոռուղներու եւ թէ՛ դեկլարներու) կ'ընդգրկուի լայն չափով իրենց՝ տառապողներու կողմէն, եւ որ առանց ներդաշնակ կապի տառապողներու եւ օժանդակողներու գործունէութեան եւ զոհաբերութեան միջեւ՝ դժուար է համոզուած լինել կազմակերպութեան միջոցներու նպատակայարմար եւ արդիւնաւէտ գործածութեան,

Ուստի Ժողովը կը պարտաւորեցնէ Երկրի մարմինները, որ գործը առաջ տանին ներսի եւ դուրսի միջոցներովը՝ առանց բացարձակապէս յոյս դնելու միայն արտասահմանի վրայ ու նոյն գիտակցութիւնը ներշնչեն ժողովրդին:

Բ. «Բիւրոնները պարտաւոր են մասնաւոր տոմար մը ունենալ Պատասխանատու եւ միւս Կ. Կոմիտէներու անունով՝ արձանագրելու համար անոնց ելեւժուտքը՝ համաձայն այդ մարմիններէն պարբերաբար ստանալիք տեղեկութիւններուն եւ կատարելու համար բաշխուած գործը Ընդհ. Ժողովէն ընդունուած նախահաշուի համաձայն:

Գ.— Ժողովին ներկայացուեցան նոյնպէս հետեւեալ երկու առաջարկները, որոնք մերժուեցան ձայնբույրութեամբ.

«1. Նկատի ունենալով, որ ամէն մի դաշնակցականի պարտականութիւնն ու դերը, ինչպէս նաեւ ուրիշներու կողմէն վայելած յարգանքը կը չափուի այդ անհատի ձեռնհասութեամբ ու ցոյց տուած զոհաբերութեամբ, կ'առաջարկուին հետեւեալ կանոնները.

ա. Ամէն մի դաշնակցական գործին մէջ մտնելիս ոչ միայն պարտաստ լինելու է վտանգին ենթարկուելու կռուի մէջ, այլեւ անելու է զոհաբերութիւն ամէնօրեայ կեանքին մէջ՝ իր սովորութիւններու համեմատ»:

բ. Դաշնակցութեան այլեւայլ մարմիններուն համար ընտրութիւններ անելիս ղեկավարուելու է այն սկզբունքով, որ ինչքան (աւելի) լայն եւ պատասխանատու է մարմինը՝ այնքան աւելի ձեռնհաս, աւելի անձնուէր եւ աւելի մեծ զոհաբերութեան պարտաստ է լինելու ընտրուող անհատը»(34):

Դ.— Առաջարկ. «Բոլոր դաշնակցական Պատասխանատու Մարմինները (Երկրի եւ դրսի), որոնք Ընդհանուր Ժողովներու բացակայութեանը ուղղութիւն են տալիս կազմակերպութեան ամբողջ գործունէութեան, կազմուած են լինելու այնպիսի ձեռնհաս, անձնուէր եւ ինտելիգենտ անձնաւորութիւններէ, որոնք կը դնեն իրենց՝ կազմակերպութեան տրամադրութեան տակ»:

Վերելի բանաձեւը ընդունուեցաւ մեծամասնութեամբ. բայց հետեւեալ օրը բողոք եւ դիտողութիւններ ներկայացուելով, նոյն որոշման տեղ Ժողովը դարձեալ մեծամասնութեամբ ընդունեց հետեւեալ որոշումը.

«Դաշնակցական բոլոր Պատասխանատու Մարմինները (Երկրի եւ դրսի), որոնք Ընդհ. Ժողովի բացակայութեանը ուղղութիւն են տալիս կազմակերպութեան ամբողջ գործունէութեան, կազմուած պէտք է լինին այնպիսի անձնուէր, ինտելիգենտ եւ ձեռնհաս անձնաւորութիւններէ, որոնք կատարեալ վստահութիւն կը ներշնչեն իրենց դաշնակցական անկեղծ աշխարհահայեցողքը»:

Ե. ԺՈՂՈՎՈՒՐԻՉ ԶԻՆԵԼՈՒ ՀԱՐՑ

Ժողովուրդը զինելու համար Երկրի եւ Կովկասի Կեդր. Կոմիտէներու [տրամադրութեան] տակ զէնքի եւ ռազմամթերքի պաշար ունենալու առաջարկը կրկին ժողովին առաջ բերուած ըլլալով, երկար վիճարանութիւններէ վերջ ժողովը մերժեց առաջարկը՝ հիմնուած հետեւեալ պատճառաբանութիւններու վրայ, ընդունելով անցընել արձանագրութեան մէջ առաջարկը ներկայացնողին պատճառաբանութիւնները։

Մերժման պատճառաբանութիւնները(35)։

ա) Սկզբունքով յեղափոխական կուսակցութիւնը չէ կարող եւ իրաւունք ալ չունի կազմակերպութեան պատկանող մի ասեղ անգամ տալ կազմակերպութեանէ դուրս անհատներու կամ խմբերու, որոնք, ով գիտէ, ինչ նպատակի, ինչ անուան տակ, ե՞րբ եւ ինչպէ՞ս պիտի գործածեն զանոնք։

բ) Զէնք գտնելն եւ Երկիր փոխադրելն այնքան դժուար է, որ կազմակերպութիւնը չի կրնար նոյնիսկ իր մարմիններուն եւ կուսակցութեան դրօշի տակ կրող խմբերուն բաւականաչափ զէնք եւ ռազմամթերք մատակարարել։ Ինչ լուրջ խօսք կարող է լինել ուրեմն ինչ որ աւելորդ պահեստներու մասին։

գ) Զէնք ձեռք բերելը, պահելը եւ փոխադրելը՝ չնայելով կոմիտէներու ի գործ դրած բոլոր ջանքերուն, կապուած է միշտ մեծ կորուստներու հետ։ Մի նոր ձեւի տակ կազմակերպութեան միջոցները վտանգի պէտք է ենթարկած լինէինք, եթէ ընդունէինք զինական պահեստներու առաջարկը։

դ) Ժողովուրդը պահանջ զգալու պէս, զուցէ աւելի դիւրութիւններ ունենայ տեղական ջրգերու միջոցով դրսէն բերել տալ։

Ահաւասիկ «ժողովուրդը զինելու» առաջարկին պատճառաբանութիւնները։

ա) «Ընդունելով, որ միմիայն դուրսեցիներու դրդմամբ եւ դուրսի օգնութեամբ տարուած յեղափոխական շարժումը կը լինի ոչ-յարատեւ եւ կ'ունենայ կիսաարուեստական ու կապալառուական բնոյթ,

Որ հայկական շարժումը կարող է յանգել լուրջ յեղափոխութեան միայն այն ժամանակ, երբ այդ շարժման նուիրուած լինի եւ զինուի իր սեփական միջոցներով՝ հայ ազգաբնակչութեան զէնք զիտակելի մասը, Նկատելով, որ չնայած Հ. Յ. Դաշնակցութեան Մրազրի եւ կազմակերպութեան, այլեւայլ ժողովների մշտական որոշումներու ու ցանկութեան՝ — զինել եւ նպաստել հայ ժողովրդի զինման, մինչեւ օրս այդ ուղղութեամբ արուած է շատ քիչ բան, մասամբ ժողովրդի անտարբերութեամբ եւ մասամբ էլ կազմակերպութեան մարմիններու անկարողութեամբ եւ անուշադրութեամբ, զնելու այստեղ-այնտեղ շուկայ հանուող զէնքերը,

Դիտելով, որ վերջերս, շնորհիւ տեղական կազ-

մակերպութիւններու զարգանալուն, ժողովրդի մէջ առաջ է եկեր լուրջ շարժում մը, — զինուի իր սեփական միջոցներով։

բ) Որ շնորհիւ Ռուսաստանի ձեռք առած խստութիւններուն՝ զէնքի վաճառումը, ինչպէս եւ զինուիլը ստացեր է կիսայեղափոխական գոյն, դժուար՝ անհատներու, վտանգաւոր՝ վաճառականներու եւ համեմատաբար մատչելի ու վայել՝ յեղափոխական մարմիններու համար,

գ) Որ շնորհիւ կազմակերպութեան ունեցած բացառիկ միջոցներուն, խոշոր գումարներ շատ անգամներ լոկ տեսականորէն կը յատկացուին այն տեսակ ծախքերու, որոնց անհրաժեշտութիւնը թէական է, իսկ դրա հետ համեմատած՝ ժողովրդի զինման նպատակը իրեն՝ ազգաբնակչութեան միջոցներով, իր կարելիութեան եւ խոշոր օգտակարութեան հետ միասին չէ սպառնար կազմակերպութեանն ոչինչ, այլ միայն կը զբաղեցնէ անոր միջոցներու մի մասը, որը բացառիկ պարագաներու մէջ ու նեղ օրերու համար կը լինի ամէն մի մարմնի տրամադրութեան տակ, — կ'առաջարկուի՝

Հրահանգել Երկրի եւ Կովկասի Կ. Կոմիտէներուն՝ վստահելի հայ անհատները եւ տեղական մարմինները զինելու համար (ուղղակի կամ կողմնակի) ունենալ իր տրամադրութեան տակ զէնքի եւ ռազմամթերքի որոշ պաշար, հարկ եղած դէպքում յատկացնելով այդ գործին Կոմիտէներու միջոցներուն մէջ մասը։

Այդ զէնքերը ծախուելու են շուկայի կամ զէնքի իսկական արժէքի դնով՝ հաշուելով եւ անակնկալ կորուստները, վաճառումէն դոյացած գումարը միշտ յատկացնելով զէնքի նոր պաշար զնելու համար։

Այս գործունէութեան համար ամէն մի մարմին մանրամասն հաշիւ է ներկայացնելու Շրջանական Ժողովին, Դաշնակցութեան Խորհրդին եւ Ընդհ. Ժողովին։

== Վ Ե Ր Զ ==

- (1) Գրքային մէջ վայրը միայն նշուած չէ։
- (2) Գրքային մէջ մասնակցողներու անունները տրուած չեն, իսկ Մարմինները՝ կուսակցական ծածկանուններով միայն։
- (3) Կ'ակնարկուի Կիլիկիոյ մէջ Հնչակեաններու գործունէութեան եւ ի մասնաւորի Զեյթունի 1895-96ի ապստամբութեան։
- (4) Օսմանեան դրամատան գրաւումը։
- (5) Ակնարկութիւն կայ, անկասկած, Սուլթանի տեսարկման գործին, որ արդէն իսկ նախատեսուած էր, ինչպէս տեսնուած, Գաշակցութեան կամքը ներկայացնող Մարմին ժողովին մէջ (Ֆիլիպտ, 1901)։
- (6) Այս բաժնին տրուած կարեւորութեամբ՝ կը բուրբ 3րդ մասի (Գործունէութեան եղանակ) առանձին գլուխներէ մէկը պէտք է կազմէ ամ, համագործ «Բարձրաւանդակ», «Կիլիկիա», «Յուսկան մարմին», «Արշաւաններ» եւն. բուրգրուած գլուխներուն. սակայն «Եւրոպական Պրոպագանդա», նոյն շարքին մէջ տեղ գտած ըլլալով հանգրծ, համարակալուած չէ։

2.— ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ

ՏԵՂԵԿԱԳԻՐԻ՝

ՆԵՐԿԱՑԱՑՈՒԱԾ Գ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Այս բաժնի վերաբերեալ ներածականին մէջ մեզ շնորհակալ արդէն շրջաններու տեղեկագրերու կարեւորութիւնը՝ 1899-1903 հնգամեակի անցուդարձներու Մարմիններու ունեցած գծաւորութիւններուն, ինչպէս նաեւ անոնց իրագործումներու մասին ասիի յստակ գաղափար մը ունենալու տեսակետէն։ Դաշնակցական կազմակերպական շրջաններու պատկաւ պատմութիւնն է այս, այնքան կարեւոր՝ Հ. Յ. Դաշնակցութեան իրական եւ ամբողջական Պատմութեան ձեւաւորման եւ կերտումին համար։ Ուստի կու տամք այդ տեղեկագրերը հարազատութեամբ և գրեթէ ամբողջութեամբ, գեղջիւղ միայն բարձրակի երկրորդական եւ անկարեւոր կարգ մը մասեր՝ որոնց յապաւումը կը կարենցնէ Թեթեւ, առանց ոչինչ պակասցնելու հիմնական բովանդակութեան։

Հ. Յ. Դ. Յրդ. Ընդհ. Ժողովի քարտեզներին մէջ կը գտնուին հետեւեալ շրջաններու տեղեկագրերը։

- ա.— Ասրպատական (Վրէժի Կ. Կամիտէութիւն).
- բ.— Ոսկեհամ (Իզմիր).
- գ.— Պալմանեան շրջան.
- դ.— Եւրոպական փրփակեցում.
- ե.— Հիւսիսակարտի (Փեթերպուրի) Ուսանող. Միութիւն.
- զ.— Ամերիկա.
- է.— Լեւոնպոլսի Հովտի Կ. Կամիտէ (Այնթապ).
- ը.— Եգիպտոս։

Միւսները, — ու բերեալ ամենակարեւոր շրջաններն ու Մարմինները, ինչպէս երկու Բիւրոները, Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմինը, Պոլիսը, եւն., — կամ գրաւոր տեղեկագիր ունեցած չեն ու գեղուցած են բերանացի (ինչ որ հասկնալի կ'ըլլայ, մասնաւորաբար, պատերազմական գրեթէ մնայուն վիճակ սպարո Քարճաւանդակի պարագային), կամ մեծապէս շահեկան այդ տեղեկագրերը կորսուած են ի սպառ։ Բիւրոներու տեղեկագրերը կրնան նաեւ գտնուիլ այդ Մարմիններու յատուկ քարտեզներուն մէջ, որոնց հրատարակութեան կ'առաջարկենք մեծապէս՝ երբ վերջ գտնէ Հ. Յ. Դ. առաջին տարւոյ Ընդհ. Ժողովներու նիւթերու սպագրութիւնը։

Անշահեկան մասերու մասնակի յապաւումներով, ուրեմն, կու տամք վերոյիշեալ տեղեկագրերէն առաջին վեցը։ Եգիպտոսի եւ Հովտի տեղեկագրերը ոչինչ կ'աւելցնեն այդ շրջաններու մասին Նիւթերու առաջին հատորով տրուած ծանօթութեանց վրայ. շատ ամփոփ են անոնք ու սահմանափակուած՝ գրեթէ միայն օրակարգի շուրջ ընթացիկ տեսակետներով։

Ա.— ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Յ. ԴԱՀՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ Կ. ԿՈՄԻՏԵԻ ՀՆԳԱՄԵԱՑ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆ

1897 թուի Պատաստրի արշաւանքից յետոյ Ասոր-պատականի յեղափոխական գործունէութիւնը ենթարկուեց ամենախիստ հալածանքների, պարսից կառավարութեան կողմից։

- (7) Ֆրանսերէն բառ, — փաստագրեր։
- (8) Կանոնաւորապէս, ծրագրուած ձեւով։
- (9) Գրուած է ֆրանսերէն, — պրոպագանդ կամ, արեւմտեայ հնչումով՝ փրփակեցում, — քարտեզութիւն։
- (10) Խորհրդածողովներ եւ քարտեզական հաւաքութիւններ։
- (11) Գրուած ֆրանսերէն, — շարժում, քարտեզութիւն, գատի մը ի նպաստ տրամադրութիւններ եւ մթնոլորտ ստեղծելու կոչումած աշխատանքներ։
- (12) Կ'ակնարկուի խամի եւ Ներուզի խումբերու արշաւանքին։
- (13) Յեղափոխական — Ընկերակազմներ (Էս - Էր)։
- (14) Ինչպէս ընդհանուր սովորութիւն էր այն օրերուն, այստեղ եւս Կամիտէ բառը գրուած է օ-ով։ Մեզ փոխած ենք ուղղագրական ներկայ ձեւին։
- (15) Այստեղէն սկսեալ՝ յօդուածները բնագրին մէջ բուրգրուած չեն։
- (16) Երեք թիւերը կը պակսին։
- (17) Այստեղ կը վերսկսի յօդուածներու համարակալումը։
- (18) Համարակալումը գործեալ կը գաղթի։
- (19) Գումար նշանակուած չէ։
- (20) Ֆրանսերէն բառ, — բանավէճ։
- (21) Օրինակ։
- (22) Դիւանագիտական։
- (23) Պահերում, կացութիւններում։
- (24) Մտաւորական։
- (25) Ժողովին կցուած քարտեզներէն կը հետեցուի՝ որ Իզմիրի Մարմինն կողմէ ժողովին յաւելեալ բացատրութիւններ տալու համար զինուած անձր Վ. Էսկաբն է՝ Կ. Այվազեանը (տեսնել Նիւթեր, Ա. հատոր, ցուցակ անձանուններու, էջ 293)։
- (26) Ֆրանսերէն բառ, — բարոյաբան։
- (27) Վահան Մանուէլեան (Տարաւանեան) եւ Հրայր-Դժոխք (Արմենակ), որոնք պարտակաւորութեան նման վրայ պիտի իյնային քանի մը ամիս ետք։
- (28) Վանայ իշխանը։
- (29) Մարտիրոսը Սափոն է (Մարտ. Մարգարեան), Յովնանը՝ հաւանորէն Յ. Դաւթեանը, Թորգոմը՝ Պոլսոյ գործիչը եւ Աշոտը՝ Երկեհանը (Ան Աշոտ)։
- (30) Այս անուններու կարեւոր մէկ մասին ծանօթ ենք Նիւթերու Ա. հատորին (տեսնել ցանկ անձանուններու)։ Մարքիին անունը տրուած է երկու անգամ։ Տիրանը՝ հաւանորէն պէտք է ըլլայ Տիրանը։ Խզմանեանը եւ Տէր Տէրը կը մնան անձանոց։ Եւրուանդը, վարդանն ու Պրոնանդը, տրամաբանորէն, Գ. Ընդհ. Ժողովին մասնակցող Երեւանի եւ Կարսի (Երուանդ Համանեան), Վանայ (Շահպապ) ինչպէս նաեւ Պալմանեան բացակայ պատգամաւորը (Պրոնանդ) պէտք է ըլլան։ Յետագայ որոշումէն դատելով, վարդանը կրնայ նաեւ խանսարի վարդանը ըլլալ։
- (31) Մալուսեանը Ալմուսին է, իսկ Միք. Յովնանեանը՝ վարանդեանը։
- (32) Պարզ է ուրեմն՝ որ ժողովին մասնակցող Մէլիկ-Վիլիմ Արաւելն է (տես Ա. հատոր, ցուցակ անձանուններու) եւ ոչ Միսաք Գուլուսեանը (Կարին)։ Վարդանը Ս. Մեհրապեանն է, խանսարի հերոսը։ Բորիսը (Միք. Խաչատրեան) եւ Եւսուփը (Միքիք, Յ. Եւսուփեան) նոյնպէս ծանօթ են մեզի Նիւթերու Ա. հատորին։
- (33) Այս մասը կրկնութիւն է։ Կու տամք՝ արձանագրութեան հաւատարիմ մնալու համար։
- (34) Որեւէ փաստ կ'այ, բայց գրեթէ ապահով կարելի է ըսել՝ որ երկու առաջարկներն ալ կը պատկանին Միւսն Զաւարեանի, ճիշտի ունենալով իր բարոյական կերպարը՝ ընդհանրապէս, եւ Արեւմտ. Բիւրոյի ընտրութեանց կապակցութեամբ իր ձգած արձանագրութիւնն ու թեկնածութիւնը զնելու մերժումը՝ մասնաւորաբար։
- (35) Այս մասը նոյնպէս կրկնութիւն է։

Տաճկաց կառավարութիւնը ամենախիստ սպառնալիքներով պահանջեց, պարսից կառավարութիւնից, մաքրել Սալմաստը յեղափոխականներից. հակառակ դէպքում, ինքը կ'արշաւի Սալմաստի վրայ: Պարսից կառավարութիւնը կասկածելով, որ կարող է տաճկաց կառավարութիւնը զանազան բարդութիւններ առաջ բերել սահմանազլխում, մանաւանդ որ տաճկաց հիւպատոս Բըզա Բէյը ամենախիստ դիմումներ էր անում կառավարութեան, ստիպուած եղաւ Սալմաստը ենթարկել ամենախիստ խուզարկութիւնների, ինչպէս նաեւ, Սալմաստից թաւրիզ ու դէպի Արաքսի ափը տանող ճանապարհները:

Կ. Կոմիտէն, որ այդ ժամանակ գտնուում էր Սալմաստում, միջոցներ ձեռք առաւ ապահով հեռացնելու Սալմաստից բոլոր յեղափոխականներին (այդ ժամանակ դաշնակցականներ էին միայն Սալմաստում), որ եւ յաջողուեց: Այդ ժամանակներում ժողովուրդի մէջ տարածուած էր, որ իբր թէ ջրդերը պիտի արշաւեն Սալմաստի վրայ: Մի կողմից յեղափոխականների բացակայութիւնը, միւս կողմից պարսիկ կառավարութեան հարստահարութիւնները, երրորդ կողմից ջրդերի արշաւանքի լուրը ժողովուրդին դրել էին անել դրութեան մէջ եւ չգիտէր ինչ անէր: Դեռ Սալմաստից չէին հեռացել Կ. Կ. Ի անդամները եւ գինուորների մի մասը, երբ ձերբակալուում են Երուանդը(1) եւ մի քանի գինուորներ, ինչպէս նաեւ գիւղացիներ: Կառավարութիւնը այդ ձերբակալումներից յետոյ փոքր ինչ թուլացնում է իր խտուրթիւնները, մեծ-մեծ տուգանքներ առնելով գիւղացիներից:

Սակայն, ջրդական արշաւանքի լուրը յամառ կերպով պտտուում է: Սալմաստի Մահլամ գիւղի գիւղացիները, վախենալով ջրդական արշաւանքից, մանաւանդ որ գիւղը գտնուում է սահմանին աւելի մօտ, լեռան ստորոտում, դիմում են Կենտրոնական Կոմիտէին եւ խնդրում, որ տրուի իրենց մի խումբ, խմբապետով՝ իրենց պաշտպանութեան համար: Իրենց վրայ են վերցնում նաեւ խմբի ապրուստի ամէն ծախք: Կ. Կոմիտէն Փոխիկի խմբապետութեամբ ուղարկում է Մահլամ՝ 15 հոգի գինուած գինուորներ, որոնք, ցրուելով գիւղացիների մէջ, հաստատում են իրենց բնակութիւնը: Ախպէրն էլ ուղարկուում է Գաղթաչէն(2)՝ հսկելու այնտեղ գտնուած փոքր քանակութեամբ գէնքերին եւ յարմար առիթներից օգտուելով փոխադրելու Վան, եւ խտուրթիւնները վերանալուց յետոյ, եթէ Գաղթաչէնի եւ Վանի գիծը յաջողութիւն ունենայ, այն դէպքում Սալմաստի գէնքերը Գաղթաչէնի վրայով փոխադրել Վան:

Սալմաստում խտուրթիւնները դեռ շարունակուում էին. խուզարկութիւններ եղան նաեւ Թաւրիզում: Այդ խտուրթիւնները ստիպեցին հեռանալ Ասորպատականից բոլոր ընկերներին: Թաւրիզում մնաց միայն մի արհեստաւոր, Սալմաստում՝ Մահլամ եւ Սարամբրիկ

գիւղերում հայդուկներ, գիւղերը պաշտպանելու համար, եւ ուսուցիչ Պ. Պանաղեանը, որին յանձնուում է գինուորների վրայ հսկողութիւնը եւ գէնքերի ապահով պահեստը, մինչեւ նոր ընկերների դալը: Իսկ Գաղթաչէնում(2) մնում է Ախպէրը մի քանի գինուորներով: խտուրթիւնները մի կարճ ժամանակով դադարում են, սակայն չէ դադարում տաճկաց Պոյի եւ Սալմաստի հիւպատոս Բըզա Բէյը, որը կասկածելով որ յեղափոխականները զարնանը նոյնպէս կարող են նոյնանման արշաւանքներ դործել, եւ որպէսզի այդ արշաւանքների առաջն առնի, տարածում էր զանազան լուրեր եւ պահանջում կառավարութիւնից՝ խուզարկութիւններ. օրինակ, տարածում էր որ Կովկասից 50 Ֆետայի է անցել, Դումանը 100 հոգիով եկել է, եւ այլն: Պարսիկ կառավարութիւնը այդ լուրերի վրայ հիմնուելով սկսում էր խուզարկութիւններ: Այդ ժամանակ Սալմաստ է վերադառնում Թորոսը(3), իսկ Թաւրիզ վերադառնում է (արհեստանոցը) Սամսոնը: Բըզա Բէյը չէ հանգստանում: Այս անգամ տարածեց, որ Արշաւանքի գէնքերը գտնուում են Սալմաստում, եւ դուրս. Օհանեանը(4) երկու հարիւր հոգիով եկել է Կովկասից՝ Տաճկաստան անցնելու համար: Այս լուրը այնքան յամառ կերպով պտտուում էր, որ Ասորպատականի Առաջնորդ Սարաչեանը հեռագրում է Բազու՝ Օհանեանին, հարցնելով նրա առողջութիւնը: Օհանեանը պատասխանում է. այդ հեռագիրը ներկայացուում է կառավարութեան, որը համոզուում է որ Օհանեանը չէ եկել եւ, ուրեմն, Բըզա Բէյի շինծու լուրերն են: Բըզա Բէյը չէ դադարում երրորդ անգամ Սալմաստը խուզարկելու մտքից: Իր օգնական Յակոբի տուած ցուցմունքների շնորհիւ յայտնում է կառավարութեան, որ Մահլամ եւ Սարամբրիկ գիւղերում Ֆետայիներ են բնակուում, եւ պահանջում է արշաւանքի գէնքերը: Պարսիկ կառավարութիւնը այս անգամ սկսեց ամենախիստ խուզարկութիւններ, այս անգամ փնտտում էր ոչ միայն յեղափոխականներ, այլեւ գէնքեր:

Առաջանալով այդպիսի խիստ հանգամանքներ՝ Թորոսը չէ կարողանում մնալ Սալմաստում: Ստիպուած է լինում հեռանալ Թաւրիզ, մանաւանդ որ այդ ժամանակում Պոյի տեղացի ընկերներից մէկը նամակ է գրում Թորոսին ու պահանջում մի լրտեսի տեղոր: Այդ նամակը բռնուում է եւ Թորոսի դրութիւնը Սալմաստում աւելի խախտու է լինում:

Պուզարկութիւն լինում է նաեւ Թաւրիզում ու ձերբակալուում են Լիլաւա թաղի բոլոր վանեցի արմենական ուսուցիչները: Սալմաստի խուզարկութիւնները լինում են շատ խիստ. գէնքեր ձեռք բերելու համար քանդում են դռների յատակները, ախոռները, չափում են սենեակները եւ կտուրը, տեսնելու համար արդեօք չէ՞ կտրուած սենեակը: Այդ ձեւի խուզարկութիւնները ի նկատի ունենալով Պանաղեանը փոխում է գէնքերի վաղտնարանը ու ինքն էլ չկարողանալով մնալ Սալ-

մաստում, անցնում է Թաւրիզ, իսկ հայդուկները, որպէսզի կառավարութեան ձեռքը չընկնեն, բաժանուում են խմբերի եւ ցրուում գիւղերը, բայց գիւղացիները վախենալով տեղ չեն տալիս հայդուկներին: Ճարահատ, հայդուկների մի մասը բռնի կերպով մտնում են գիւղերը, միւս մասը մնում է այգիներում, երրորդ մասը ցերեկները բարձրանում են լեռները իսկ գիշերները վերադառնում գիւղերը: Յուրտ եղանակը, անորոշ դրութիւնը, կառավարութեան հալածանքները այնպէս ազդել էին հայդուկների վրայ, որ նոքա սկսել էին տրտուներ դէպի Կազմակերպութիւնը: Չունենալով, մանաւանդ, ազդեցիկ անձնաւորութիւն, ամէն մէկը գործ էր անում այնպէս, ինչպէս ինքն էր հասկանում եւ ցանկանում: Այստեղից արդէն դրուում է այն բոլոր չարիքների հիմքը, որ կամաց-կամաց առաջ եկան: Գիւղացիները վախենալով կառավարութիւնից՝ սկսեցին խորթ աչքով նայել դէպի հայդուկները: Ճիշդ է, խուզարկութիւնները դադարեցին, սակայն, Սարփարարի(5) հարստահարութիւնները շարունակուեցին, «ղաչաղ ես պահում, դաչաղ կայ ձեր գիւղում» անուան տակ գիւղերը եւ անհատներին ենթարկում էին մեծ-մեծ տառապանքների: Այս ժամանակներում գիւղացիների մէջ առաջանում է սառնութիւն դէպի հայդուկը, որ հետզհետէ առաջ գնալով, երբեմն էլ արտայայտուում էր: Սակայն, չնայած այդ յարաբերութեան, հայդուկները ունէին նաեւ իրենց բարեկամները: Նոցա բարեկամները կազմում էին այն գիւղացիները, որոնք այս կամ այն գիւղացու հետ մի որեւէ ուս ունեն լուծելու, կամ այն գիւղացիները՝ որոնք չեն ուզում մասնակցել գիւղական ծախքերին, կամ մի ուրիշ ազդեցիկ մարդու պարտք ունեն տալու, եւ այլն: Եւ այսպէս հայդուկը դառնում է գիւղացու բարեկամ եւ պարտականութիւն է համարում պաշտպանել իր բարեկամին, եւ որովհետեւ այդ պաշտպանութիւնները լինում են ընդհանրապէս գիւղի ազդեցիկ մարդկանց դէմ, այդ պատճառով ե'ւ մի փոքրիկ դէպքը աւելի մեծ ազդու է հանում: Երբեմն պատահում է, որ մի հայդուկի բարեկամ գիւղացին գործ է ունենում միւս հայդուկի բարեկամ գիւղացու հետ. այստեղ արդէն գործին խառնուում են հայդուկները, մէկը միւսի դէմ պաշտպանելու: Պարսպետի միջամտութիւնը նոյն իսկ ի դուր է անցնում եւ առաջանում է հայդուկների թայֆայականութիւնը:

Այդպիսի հանգամանքում ապրելով, հայդուկները Սալմաստում առաջ բերին մի շարք դժուոթութիւններ, որոնց անուշադիր թողնել անկարելի էր: Կովկասից պահանջուեցին մարդիկ, բայց ոչ ոք չեկաւ: Գրուեցին թէ՛ Արեւելեան եւ թէ՛ Արեւմտեան Բիւրոներին, մարդիկ խնդրուեցին, դարձեալ մարդ չեկաւ: Այդ դրութիւնը հայդուկներին աւելի սիրտ էր տալիս երբ տեսնում էին, որ արած չարիքները մնում են անուշադիր, իսկ իրենք՝ անպատիւ:

Ասորպատականի Կ. Կոմիտէն, որ կազմակերպուած էր հինգ անձնաւորութիւններից՝ Թորոսից, Բէկից (տեղացի), օր. Փաղինեանից, Սամսոնից եւ Թափառիկից, նկատելով որ Կովկասից ոչ ոք չէ գալիս, իսկ Սալմաստում բացի հայդուկների չարիքները ունենք բաւական թիւով գէնքեր, փամփուշտ եւ այլն, որոնք գտնուում են անապահով տեղ (փճանալու տեսակէտից) եւ որոնց հարկաւոր է ջոկել, լաւերը փոխադրել Երկիր, իսկ վատերը՝ արհեստանոց, որոշեց՝ ուղարկել այնտեղ արհեստաւոր Սամսոնին, որին յանձնուում է գէնքի հսկողութիւնը եւ փոխադրութիւնը: Այդ ժամանակներում Սալմաստում պատահած մի սպանութեան առթիւ, որ գործել էր հնչակեան գինուոր, դարձեալ սկսել էր խտուրթիւններ Ղալասար եւ Փայաջուկ գիւղերում. հետեւանքը լինում է գիւղացիների 3000 թուման տուգանք տալը: Հենց այդ ժամանակներում գրնում է Սալմաստ Սամսոնը, որին հազիւ յաջողուում է բնակութեան տեղ գտնել Ղալասարում, ուր գտնուում էին գէնքերը: Այդ ժամանակներում Գաղթաչէնից եկել էր նաեւ Ախպէրը, այնտեղ խտուրթիւններ սկսուելու պատճառով: Սալմաստի հայդուկների գործած չարիքների առաջը առնելու համար միջոցներ էր մտածուում, սակայն այնպիսի հանգամանքներ էին առաջ եկել, որ ոչ մի միջոց օգտակար հետեւանք չէր ունենայ բացի Սալմաստից հեռացնելը: Կ. Կոմիտէն որոշեց գիւղերի խումբ ուղարկել դէպի Երկիր, որ գէնքերը յանձնեն Վասպուրականի Կ. Կոմիտէին, իսկ իրենք ցրուեն իրենց տեղերը: Հայդուկները համաձայնուեցին եւ սկսուեցին խմբի պատրաստութիւնները:

Այդ ժամանակում Պ. Պանաղեանը հիւանդութեան պատճառով հեռանում է Սալմաստից: Մնում են Սալմաստում Սամսոնը, Ախպէրը, Փոխիկը: Պումբը կազմակերպուեց 24 հոգուց բաղկացած, Փոխիկի խմբապետութեամբ, տրուեց նոցա 30 հրացան՝ բերդան եւ մօսին, 7833 փամփուշտ եւ 100 փամփուշտաման, ջրամաններ, եւայլն: Պումբը ճանապարհելու համար Թաւրիզից, Կ. Կոմիտէի կողմից եկել էր Թորոսը: 1898 թ. Սեպտ. 1ին խումբը ճանապարհուեց դէպի Վան՝ Գաղթաչէնի դժով: Այդ խմբով Սալմաստը չմաքրուեց. կային նաեւ ուրիշ հայդուկներ, որոնք եկել էին Կովկասից: Որոշուեց՝ պատրաստել երկրորդ խումբը եւ ճանապարհել Ախպէրի խմբապետութեամբ: Թորոսը, առաջին խումբը ճանապարհելուց յետոյ վերադարձաւ Թաւրիզ, իսկ Սալմաստում սկսուեց երկրորդ խումբի պատրաստութիւնը: 1898 թ. Սեպտ. 25ին ճանապարհուեց երկրորդ խումբը 17 հոգուց բաղկացած, տանելով 18 հրացան՝ բերդան ու մօսին, 4872 փամփուշտ եւ 70 փամփուշտաման, ինչպէս նաեւ ջրամաններ, դարձեալ Գաղթաչէնի դժով: Այսպիսով մաքրուեց Սալմաստը չարիքներից: Այդ խմբի հետ անցաւ նաեւ շատախօցի Յովսէփը, որը վերադարձել էր Կովկասից: Պումբը հասնելով Գաղթաչէն չէ շարունակում իւր ճանապար-

հը դէպի Երկիր. գէնքերը պահուում են Գաղթաշէնում, իսկ հայդուկներից մեծ մասը ճանապարհուում է Կովկաս: Երկիր անցնում է միայն Յովհէփը: Երկիր չանցնելու գլխաւոր պատճառը սահմանադրի խստութիւններն էին:

Սալմաստը մաքրուելուց յետոյ, ուր մնացել էին միայն 3 հոգի ամուսնացածներ, Կ. Կոմիտէն կարգադրում է Սամսոնին գնալ Պոյ, այնտեղ ունեցած գէնքերը հաւաքելու, նայելու, որոնք Արշաւանքից յետոյ յանձնուում են վալադ Տիգրանին՝ տանելու Պոյ եւ փոխադրելու Գաղթաշէն: Սամսոնը հասնելով Պոյ անմիջապէս ստանում է երկու հեռագիր՝ վերադառնալ Սալմաստ: Վերադառնում է, առանց գէնքերը նայելու: Սալմաստում իմանում է, որ Փոխիկը Ծ հոգով վերադարձել է Վանից Մահլամ. գիւղացիները ամենախիստ սպառնալիքով եւ գէնքով պահանջում են հեռանալ գիւղից, իսկ Փոխիկը հիւանդ, գտնուում է Հաւթուան գիւղում: Հիւանդներ կային նաեւ գինուորների մէջ: Առանձին մարդ է ուղարկուում Մահլամ, գիւղացիներին խնդրելու որ մի երկու օր թողնեն միան փոքր ինչ հանգստանալու համար, իսկ Սամսոնը գնում է Հաւթուան խմբապետին տեսնելու: Գիշեր էր արդէն, երբ Մահլամից լուր բերուեց, որ գիւղացիները մի ժամ անգամ չեն ուզում պահել. այդպէս պատասխանողները եղել են գիւղի իշխանները: Պորհըրդակցելով խմբապետի հետ որոշուեց՝ առաւօտեան փոխադրել բոլորին ուրիշ գիւղ, որովհետեւ Մահլամի գիւղացիները Պոյի եւ Սալմաստի ընդհանուր դատաւորին յայտնել էին տղաների գալը որպէս դաշաղներ: Տղաները հեռանում են գիւղից այգիները: Առաւօտեան շատ վաղ, դեռ բոլորովին չլուսացած, դատաւորի ձիաւոր եւ հետեակ զօրքը քիւրդ Մէհմէտի ձիաւորների հետ մտնում են Մահլամ գիւղը: Քիւրդ ձիաւորները Պաս Առաքելի առաջնորդութեամբ բարձրանում են մօտակայ լեռը, դիրքեր բռնում, իսկ պարսիկ ձիաւորները եւ գինուորները Անանիայի առաջնորդութեամբ չրջապատում են այն այգին, ուր գտնուում էին տղերքը (նախօրօք լրտեսում են տղաների ուր լինելը): Տղերքը, թուող 10 հոգի (դոցա հետ միացած է լինում մնացած հայդուկներից մէկը), 5 հրացանով կրակի շուրջը նստած նկատում են որ չրջապատուած են. վեր են թռչում տղերից եւ հրացանները ձեռքերին դուրս են գալիս այդուց եւ մի անգամից արձակելով հրացանները պատում են շրթան ու փախչում դէպի լեռը տանող ճանապարհով, անգաղար իրար հետեւից կրակելով հրացանները: Պարսիկ գինուորները շփոթուած յետ են քաշուում առանց հրացան արձակելու: Այդ ժամանակ Անանիան հանում է ատրճանակը, արձակում դէպի տղաները ասելով՝ զօրքի հրամանատարին՝ ՎՐԷՐ էք թողնում դոցա. կա՛մ բռնէք, կա՛մ սպանէք, թէ չէ յետոյ մեզ կը կոտորեն: Չօրքի հրամանատարը հրամայում է դիրքեր բռնել եւ խփել. ընկնում է տղանե-

րից մէկը՝ հրացանով: Այդ ժամանակ տղերքը բարձրանում են լեռը եւ հանդիպում են քիւրդ ձիաւորներին: Ստիպուած դոցա հետ էլ կռուելով վերադառնում են: Լինելով երկու կրակի մէջ, չգիտեն ինչ անել. մտնում են մօտիկ գտնուած բոստանների, ագարակի պահպանութեան համար շինուած բուրգի մէջ: Չօրքը չէ մօտենում բուրգին, դիրքեր բռնած սպասում են: Չօրքի հրամանատարը կարգադրում է Քնդանօթ արձակել: 3 անգամ Քնդանօթ են արձակում եւ ոչ մէկը նպատակին չէ հասնում: Չօրքը սկսում է հրացաններ արձակել. տղերքից 4 հոգի սպանուում են, բուրգի մէջ միւս 5 հոգին վճռում են անձնատուր լինելու եւ դորա համար հրացանի ծայրին կապում են սպիտակ թաշկինակ եւ պարզում: Չօրքը չհասկանալով այդ՝ շարունակում է հրացանաձուլութիւնը. տղերքը հրացանները դուրս են ձգում, զօրքը մօտենում է: Կենդանի մնացածների եւ սպանուածների գլուխները կտրում, բացի մէկից՝ որին ձերբակալում են կենդանի. դա խմբի վալադն էր: Դէպքը սարսափելի ազդեցութիւն թողեց ամբողջ Սալմաստի ազդարձակութեան վրայ եւ սարսափելի նախատում էին մահլամցիներին: Գրգռուած էին նաեւ հայդուկները: Հետեւեալ օրը 4 հոգի, որոնց հետ միացել էր մի հնչակեան գինուոր, Եփրեմի առաջնորդութեամբ, գիշերով մտնում են Մահլամ գիւղը, ուր գտնուում էր դեռ զօրքի առաջնորդ Հաջի Պանը, իր գինուորներով: Այդ փոքրիկ խումբը մտնում է մատնիչներից մէկի տունը — Չաքէի — եւ մատնիչը եւ ընտանիքը սրի անցկացնում: Այդ դէպքը աւելի սարսափ ազդեց. Հաջի Պանը թողնում է անմիջապէս գիւղը, գիւղացիները ահ ու դողի մէջ էին: Հայդուկներին խիստ պատուիրուեց, որ առանց Կ. Կոմիտէի որոշմամբ ոչ մի սպանութիւն չանեն, արածն էլ բաւական է: Սոսկալի դէպքը պատահեց 1898 թ. Հոկտ. 14ին:

Դէպքից յետոյ սկսուեց փաստեր հաւաքել մատնիչների վերաբերմամբ, որոնց թիւը հասնում էր 12ի: Փաստերի եւ մատնիչների ցուցակի հետ Սամսոնը գնում է Քաւրիգ: Կ. Կոմիտէն փաստերը ենթարկելով զննութեան, որոշում է դեր խաղացած 3 մատնիչների տեւորի ենթարկել, իսկ միւսները թողնել առայժմ: Կ. Կոմիտէն նոյն ժողովում որոշեց նաեւ Քորոսին ուղարկել Կովկաս նախ մարդ ուղարկելու համար եւ աշխատելու Սալմաստի արշաւանքի պարտքը վճարել, իսկ արհեստանոցում թողնել Պետրոսին, որ նոր էր եկել: Քորոսը ճանապարհուում Կովկաս, իսկ Սամսոնը՝ Սալմաստ:

Կ. Կոմիտէն կազմակերպում էր աչքի ընկնող անձնաւորութիւններից, որոնք ուսուցիչներ էին Լիւսալի դպրոցում: Անդամներն էին Յոնան եւ Տիկ. Դաւրթեաններ, Սահակ եպ. Ալատեան, դոկտ. Փաշայեան, Տիգրան Ռաշմաճեան, օր. Փազինեան եւ Մարտիրոս Յարութիւնեանց:

Սամսոնը վերադառնալով Սալմաստ՝ Կ. Կոմիտէի

որոշումով կարգադրեց տեւորի խնդիրը: Տեւորը յաջող անցաւ Պաս Առաքելի եւ Մատնիչ Ստեփանի վերաբերմամբ: Առաջինի տեւորը արեց Դարձոն, երկրորդինը կատարեց Լեւոնը. երրորդը, — Անանիայի տեւորը —, որ յանձնուած էր Փոխիկին եւ Վարդանին, անյաջող էր անցել: Անանիան փախաւ Ուրմի: Կ. Կոմիտէն բաւականացաւ այս տեւորներով: Գիւղացիները ահ ու դողի մէջ էին եւ աշխատում էին հաշտուել, զղալով որ իրենց արածը անմարդասէր գործ էր:

1899 թուի ձմեռը, որ փոքր ինչ հանգստութիւն էր տիրում, սկսուեց դէնքի փոխադրութիւն՝ Սալմաստից Պոյ: Փոխադրուեց 6 մոսին, 9 բերդան, 209 մոսինի փամփուշտ, 88 բերդանի փամփուշտ, 6 փամփուշտաման: Արշաւանքից յետոյ Պոյում 2000 մոսինի փամփուշտ գնելու համար Կ. Կոմիտէի որոշումով 100 թուման դրամ տրուեց տեղացի բարեկամ Ալեքսանին, որպէսզի գնի: Բայց փոխանակ փամփուշտ գնելու, դրամը ինքն էր ծախսել: 99 թուին Քորոսը Պոյ եղած ժամանակ Ալեքսանից մուրհակ է առնում միայն:

Փոխադրութիւնը Սալմաստից չարունակուեց, որովհետեւ Գաղթաշէնում գտնուած գէնքերը դեռ մնում էին եւ չէին փոխադրուած: Փոխադրութեան գլխաւոր արգելքը Վանքի վանահայր Յովհաննէս վարդապետն էր, որը յայտնի էր (Ախպէրի եւ այնտեղի ընկերների արած ցուցմունքով) որպէս մատնիչ: Նա վանքում նոյնիսկ խուղարկութեան ժամանակ ցոյց էր տուել երկու հրացանի եւ մի քանի հարիւր փամփուշտի տեղը: Այսպէս, հրացանների ու ծայրերի մի մասը գտնուում էր Վանքում, միւս մասը Պոյ, իսկ մեծ մասը Սալմաստ: Փոխադրութեան անյաջողութիւններից մէկն էլ այն էր, որ Վանքում մարդ չուներինք. գործը տեղացիների վրայ էր մնացել, նոքա էլ շատ դանդաղ էին շարժուում: Ճիշդ է, Արշաւանքից յետոյ առանձին սուրհանդակով միշտ կապ է պահպանուած եւ փամփուշտներ փոխադրուած, սակայն գործը ընդարձակ ծաւալ չէր ստանում, որովհետեւ չկային ո՛չ Վանքում եւ ոչ էլ սահմանապլուխներում ուժեղ մարդիկ:

Սալմաստի վիճակը սկսեց հետզհետէ բարելաւուել: Այդ հանգամանքը առիթ տուեց հայդուկներին նախկին ձեւով շարունակել իրենց կեանքը (հայդուկների թիւը շատ քիչ էր): Այս անգամ գիւղացիները որպէս յանցաւորներ աւելի ընկճուեցին հայդուկների առաջ, իսկ հայդուկները աւելի երես առան եւ սկսեցին կազմակերպել իրենց թայֆայականութիւնը:

1899 թուի Ապրիլին, Կենտրոնական Կոմիտէն Բազուից ստանում է նամակ, որով առաջարկում են 15 հոգու, որ պիտի ուղարկուեն Բազուից, դէնք տրուի եւ ճանապարհուի Երկիր: Կ. Կոմիտէն համաձայնում է եւ կարգադրում է ուղարկել տղաներին: Սալմաստը հակառակ էր խմբի անցնելուն, պատճառաբանելով որ կը վնասուի փոխադրութեան գործը, նորից կը սկսուի

Սալմաստի խուղարկութիւնը, եւ երրորդ՝ Վասպուրականից համաձայնութիւն չենք առել:

Այդ ժամանակ Սալմաստ էր եկել որպէս գործիչ ընկեր բժ. Թաշեանը: Կ. Կոմիտէն պահանջեց Սամսոնին Քաւրիգ գնալ եւ խումբ ուղարկելու համար որոշեցրակացութեան գալ: Կ. Կոմիտէն որոշում է ուղարկել այդ խումբը, առարկելով, որ ինքը արդէն համաձայնութիւն տուել է եւ տղերքը ճանապարհուած կը լինեն. երկրորդ՝ գէնք կը մտցնեն Երկիր, եւ երրորդ՝ խմբի գնալը կը թարմացնի գործը Վասպուրականում: Այս որոշումից յետոյ ստացուում է նամակ Սալմաստից, որով Թաշեանը յայտնում է թէ ինչպէս 4 հայդուկներ, որոնք հեռացուած էին պաշտօնապէս Դաշնակցութիւնից, յարձակուում են Փայաջուկում մի վաճառականի տան վրայ եւ դրամ պահանջում, յետոյ փախչում: Սրանցից երկուսը ձերբակալուում են, յետոյ աղաթուում. մէկը անցնում է Կովկաս, միւսը ընտանիքով Պոյ, իսկ երկուսը՝ թաքնուում են գիւղերում: Ապա գրում է, որ Երկիր անցնող խմբից տղերք եկել են: Կ. Կոմիտէն որոշեց, Սալմաստում թաքնուած երկու հայդուկներից մէկին, վանքի Ալիսահան(5) Գրիգորին, որ յայտնի էր իր գործած չարիքներով, տեւորի ենթարկել, իսկ միւսին հեռացնել Կովկաս, ինչպէս նաեւ ճանապարհել խումբը: Այդ որոշումներով Սամսոնը ճանապարհուում է Սալմաստ:

Թաշեանը չէ համաձայնում մնալ Սալմաստ, հեռանում է: Սկսուում է խմբի պատրաստութիւն, միւս կողմից Գրիգորի տեւորը իրազործել, սակայն Գրիգորը թաքնուած է եւ ձեռք չէ ընկնում: Պումբը պատրաստուեց եւ 1899 թուի Յունիսի 10ին ճանապարհուեց Շաշոյի խմբապետութեամբ, տանելով 18 հրացան, որից 3 վերադարձաւ Սալմաստ, եւ մօտ 400 ծայր:

Գրիգորի տեւորը ձգձգուում էր, եւ ինչպէս վերջը իմացուեց, հայդուկները, որոնց յանձնուած էր, չէին ցանկանում անել:

Պումբը անցնելով Երկիր ունենում է քրդերի հետ մեծ կռիւներ, տալիս է 3 զոհ, եւ պատուելով շրթան կորցնում է հետքը: Դիրքում եղած ժամանակ հայդուկներից մէկը ուղարկուում է մօտիկ գիւղը հաց բերելու, որը եւ ձերբակալուում է:

Պմբի կռիւների լուրը տարածուում է ամէն տեղ, դարձեալ վրդովուում է Սալմաստի խաղաղութիւնը, դարձեալ զօրք, դարձեալ ձիաւորներ, դարձեալ խուղարկութիւններ: Լուր տարածուեց, որ պիտի խուղարկուի Մահլամ գիւղը. անմիջապէս կարգադրուեց տղաներին հեռանալ լեռները, կամ ասորաբնակ գիւղերը: 1899 թուի Յունիսի 12ին առաւօտեան շատ վաղ, չրջապատում են Ղալասար գիւղը եւ Սամսոնի բնակարանը, ինչպէս նաեւ տեղացի մի հայդուկի՝ Սազոյի տունը: Այդ խուղարկութեան ժամանակ գինուորները սպանում են մի գիւղացու, շատերին ծեծելով վիրաւորում են, փճացնում են կալերը, տներից զողովութիւններ

են անում եւ այլն, ձերբակալում են Սապոյին, եղբորը, Հորեղբորը եւ Հորեղբոր որդուն, ապա ձերբակալում են Սամսոնին եւ խուզարկում մի քանի հոգով տունը, — ոչինչ չեն գտնում: Սամսոնը անցազիր ունենալով ազատուում է, իսկ միւսները Ատրպատականի Առաջնորդի միջամտութեամբ ազատուում են: Գիւղը իր կրած բոլոր վնասների հետ 300 թուման էլ տուգանք է վճարում: Այսպիսով վերջացաւ խուզարկութիւնը:

Այդ ժամանակներում Սալմաստ եկաւ Ատրպատականի Առաջնորդ Սահակ Եպիսկոպոսը: Սամսոնը խորհրդակցելով Եպիսկոպոսի հետ, որոշեց հեռանալ Սալմաստից, որի մասին եւ յայտնեց Կ. Կոմիտէին, պատճառարանելով որ նախ պահանջած ուժերը չեն տրուում, կայ դրամի մեծ պակասութիւն, փոխադրութեան գործը խանգարուած է եւ վանում չունենք մարդ: Այդ պատճառարանութիւններով հեռանում է Սալմաստից Քաւրիզ, ուր հանդիպում է Թորոսին, որը նոր էր վերադարձել Կովկասից: Կ. Կոմիտէն նորից ստիպում է Սամսոնին Թորոսի հետ վերադառնալ Սալմաստ: Նախքան այդ որոշումը, պաշտօնական մի որոշում է ուղարկում Սահակ Եպիսկոպոսին՝ զինաթափ անելու հայրուկներին: Հայրուկները զինաթափ են լինում, բայց, որպէս վրէժ, երկու հայրուկի ուղարկում են Ղալասար եւ մօտ 300 թուման դրամ առնում վաճառականներից: Այդ գէպի առթիւ Կ. Կոմիտէն շտապեցրեց Թորոսի եւ Սամսոնի Սալմաստ գնալը: Հասնելով Սալմաստ, ուր եկած էր Գաղթաչէնից Ախպէրը, յաջողուում են հայրուկներից յետ առնել փողերը եւ վերադարձնել տէրերին: Դրամ առնող հայրուկները, որ ծեծել էին Սահակ Եպիսկոպոսի գրագրին, որպէս պատիժ, հայրուկների ներկայութեամբ ծեծուեցին: Մի շարք ժողովներ ունենալով Սալմաստում, որ վերաբերում էր Սալմաստը մաքրելու եւ գործերը կարգի դնելու խնդիրներին, որոշուեց հայրուկներից պահանջել հեռանալ, տալով ճանապարհի ծախք: Բոլորին տրուեց ճանապարհի ծախք եւ հեռացուեց եւ զիւղերում կարողացուեց պաշտօնական գրութիւն, որ Դաշնակցութիւնը չունի ոչ մի զինուոր Սալմաստում. ամուսնացած զինուորները, որոնք մնում են Սալմաստում, չեն ճանաչուում որպէս Դաշնակցութեան զինուորները. այսուհետեւ զիւղացիները իրենք ինչպէս ուզում են կարող են վերաբերուել: Սահակ Եպիսկոպոսը պէտք է գնար Մակու. Թորոսն էլ միացաւ հետը կանոնաւորելու այդ գծի վրայ ունեցած մեր գործերը եւ նայելու գէնքերը: Եպիսկոպոսի եւ Թորոսի հետ միացաւ նաեւ Ախպէրը, որ Գաղթաչէնի գործիչն էր: Նոքա տարան իրենց հետ Փոխիկին եւ Դարմոյին՝ որպէսզի Մակուից ճանապարհեն Կովկաս, հակառակ դէպքում դիմեն ամենախիստ միջոցների: Եպիսկոպոսի կարգադրութեամբ, Մահլաժի համար բերուեց ուսուցիչ մեր ընկերներից Անդրեաս Մելիք Բարախանեանը եւ Հին Քա-

ղաքի համար՝ Ստեփան Վարդանեանը, որը անհաղորդ էր յեղափոխական գործերին: Այդ ժամանակներում Պոյ էին եկել Կուկունեանի խմբի անդամներից երկուսը, որոնք փախել էին աքսորավայրից, Ստեփան Ստեփանեանց (Ծերուկ)(6) եւ Մեհրաբ Դաշեան (Մատոս): Եպիսկոպոսը Ծերուկին նշանակում է Պոյի Սէյդաւար գիւղի ուսուցիչ: Այսպիսով, մենք ունենում ենք Պոյում մի կայարան, որ դիւրացնում է աւելի փոխադրութեան գործը:

Մակուի գործերը յանձնուում են Ախպոր, իրեն օգնական ընկերներ ունենալով Արմենակին (Նժդեհին) եւ Մեսրոբին (Մաշտոցին): Արմենակին(7) յանձնուում են թղթակցութիւնները եւ քրդերի մէջ պրոպագանդա անելու գործը, իսկ Ախպոր եւ Մեսրոբին՝ փոխադրութեան գործը:

Եպիսկոպոսը եւ Թորոսը վերադառնալով Սալմաստ, Թորոսը շտապում է Քաւրիզ: Փոխիկը, Դարմոն(8) եւ Լեւոնը նորից ընդունուում են որպէս Կազմակերպութեան զինուորներ՝ երկար վիճարանութիւններից յետոյ, եւ վերցուում է երդումնազիր: Թորոսը ճանապարհուում է Քաւրիզ: Ստացուում է որոշում Կ. Կոմիտէից, տեղորի ենթարկել Պոյում Տիգրանին, գէնքերը ծախելու եւ գրաւ դնելու պատճառով: Այդ տեղորը յանձնուում է Մատոսին: Մոռացայ վերը յիշել, որ նախքան Եպիսկոպոսի եւ Թորոսի Մակու գնալը, դեռ շատ առաջ, Գաղթաչէնի ընկերների ցուցմունքի հիման վրայ եւ նորա անցեալը ի նկատի ունենալով, վանքի վանահայր Յովհաննէս Վարդապետը ենթարկուում է տեղորի, որպէս մասնիչ:

Մատոսին յանձնուած տեղորը կատարուում է յաջողութեամբ: Մատոսը Պոյում չկարողանալով մնալ, Սալմաստի վրայով անցնում է Քաւրիզ:

Գաղթաչէնում եղած ժամանակ Եպիսկոպոսը եւ Թորոսը 6 հոգուց բաղկացած մի փոքրիկ խումբ (որոնք ցանկանում էին հայրենիք վերադառնալ) ուղարկում են Երկիր, տալով նոցա 6 հրացան, 1245 փամփուշտ եւ 20 փամփուշտաման: Այս խումբը Երկիր մտնելով կուռի է բռնուում ու սպանուում են բոլորը, կորցնելով բոլոր գէնքերը:

Սալմաստը հանդարտուեց. սկսուեց փոխադրութիւնը եւ այդ նպատակով Գաղթաչէնից(2) եկաւ Ախպէրը: Մինչեւ այդ ժամանակ Գաղթաչէնի գէնքերը փոխադրուել էին Երկիր. փոխադրուած էին նաեւ Պոյի գէնքերը: Ձմեռուայ ընթացքում, 1900 թուին, Սալմաստից փոխադրուեց Գաղթաչէն 13 բերդան հրացան: Թէ՛ Պոյի եւ Թէ՛ 13 հրացանները դոնուում էին Գաղթաչէնում:

Ուղիղ այդ ժամանակներում Կ. Կոմիտէի որոշմամբ Լեւոնը ուղարկուում է Ուրմի. Քաւրիզից նոյնպէս ուղարկուում է ուրիշ մի հայրուկ Մահլաժցի Անանիային եւ Շամաշա Վարդանին (Պոյի նախկին լրտեսին) տեղորի ենթարկելու. այդ քայլը անյաջող է

անցնում: Տեղորիսները վերադառնում են. Քաւրիզից եկածին անմիջապէս ուղարկում են Կովկաս:

1900 թուին, Դեկտեմբերին, Գաղթաչէնից եկաւ Սալմաստ՝ Ախպէրը, և սկսուեց և գէնքի պատրաստութիւն փոխադրութեան համար: Մի քանի անգամ փոխադրուեց Սալմաստից Պոյ, այնտեղից՝ Գաղթաչէն փոխադրելու համար 37 հրացան եւ մի արկղ թիթեղից բերդանի փամփուշտ, մօտ 277 հատ: Հրացանները հասնում են ապահով Գաղթաչէն: Այդ ժամանակ վան է դնում Գիսակը(9) եւ գործը աւելի կանոնաւոր ընթացքի մէջ է մտնում, մանաւանդ փոխադրութեան գործը եւ սուբսանդակի միջոցաւ ունեցած յարաբերութիւնը: Կապ էր պահպանուում թէ՛ Սալմաստից եւ թէ՛ Գաղթաչէնից: Գաղթաչէնում քրդական պրոպագանդան աւելի առաջ է գնում շնորհիւ քրդական կոչին, բրոշլերներին եւ լրագիրներին, որ տարածուում էին քրդերի մէջ: Մեզ բարեկամ ունէինք Գաղթաչէնում Մուստաֆա Բէկ անունով քրդը ցեղապետը, որին յաջողուել էր կապուել Բէկը Պան Բէյի որդու հետ եւ մեր միջոցով նոքա նամակադրութիւն ունէին իրար հետ:

1901 թուի ամառը Կ. Կոմիտէի անդամներից 4 հոգի Քաւրիզից եկան Սալմաստ՝ Գետրոսը, Մարտիրոսը, Արշակը եւ Միքայէլը: Գետրոսի հետ, երկու օրից յետոյ, փոխադրուեց Վրէժի արհեստանոցը 35 խողովակ, հրացան պատրաստելու համար, ապա Կ. Կոմիտէի որոշմամբ Սամսոնը եւ Մարտիրոսը պիտի գնային Պոյ եւ Գաղթաչէն գործերի ընթացքը նայելու, իսկ Արշակը եւ Միքայէլը մնացին Պոյում: Մարտիրոսը եւ Սամսոնը Գաղթաչէնում նայելով գործերին եւ հրացաններին մօտիկից ծանօթանալուց յետոյ վերադառնում են Պոյ: Արշակը եւ Սամսոնը անցնում են Կովկաս նախօրօք Սալմաստի գործերը յանձնելով Միքայէլին, իսկ Մարտիրոսը մնաց Պոյում, Ստեփանի մօտ. այնտեղից պիտի անցնէր Նախավկայ եւ ապա Կովկաս:

901 թուի աշնանը Սամսոնը վերադառնում է Կովկասից, Միքայէլը գնում է Քաւրիզ: Այդ ժամանակ Վրէժի արհեստանոցը ուղարկուում է Թիֆլիզից Վարդանը(10), ծանօթանալու հրացանի պատրաստութեան հետ, Երկիր անցնելու համար: Գալիս է Քաւրիզ, ապա Սալմաստ, վահանը՝ Սասունի ներկայացուցիչը(11): Սալմաստում մի քանի օր մնալով, ծանօթանալով գործերի հետ, Ստեփանի հետ ճանապարհուում է Գաղթաչէն՝ վան անցնելու համար: Գաղթաչէնում էլ մի քանի օր մնալով, ծանօթանալով այնտեղի գործունեութեան հետ, անցնում է վան: Ստեփանը վերադառնալով Գաղթաչէնից անցնում է Քաւրիզ, այնտեղ հաստատուելու:

902 թուին փոխադրուում է Գաղթաչէն, այնտեղ գնացողների հետ, միայն 4 հրացան: Փոխադրութիւն չէ լինում, որովհետեւ Գաղթաչէնի գէնքերը դեռ փոխադրուած չէին վան: Նկատելով, որ Դարմոն հեռադ-

հետէ չարիք է դառնում, պահանջուում է նորանից հեռանալ Գաղթաչէն Ախպոր մօտ (նա Ախպէրից աղբուում էր որպէս հին ընկեր եւ որպէս մոկացի): Թէեւ զանազան պատճառարանութիւններով ուզում էր մընալ, բայց ճնշում գործ դնելով հեռացուում է Գաղթաչէն եւ գրուում է Սալմաստից Ախպոր, որ պահի իր մօտ եւ մի որեւէ գործ յանձնի, հակառակ դէպքում, եթէ վերադառնալու լինի պիտի տեղորի ենթարկուի: Մի որոշ ժամանակ Ախպէրը Դարմոյին իր մօտ պահելուց յետոյ Գաղթաչէնից Սալմաստ սուբսանդակի պաշտօնը յանձնում է նորան: Դարմոն մի քանի անգամ այդ պաշտօնը կանոնաւոր կատարելուց յետոյ, վերջին անգամ գալիս է Սալմաստ եւ մի քէֆի ժամանակ հարբելով կուռուում է մի տեղացու հետ եւ ատրճանակով վիրաւորում եւ անցնում Պոյ: Թեմական առաջնորդ Մուրադեանը, որ Սալմաստ էր, այդ մասին բանակցում է Սամսոնի հետ: Սամսոնը յայտնում է, որ որպէս կազմակերպական մարդ մենք կը պատժենք: Համաձայնում է Մուրադեանը, սակայն զաղտնի կարգադրում է ձերբակալել Պոյում, եւ ձերբակալուեց բերուեց Սալմաստ: Մուրադեան վարդապետը ամբողջ մի ամիս մնալով Սալմաստ, ամէն կերպ ապացուեց, որ ջերմ հակադաշնակցական է եւ աշխատում է դաշնակցականներին մաքրել Սալմաստից: Թէ՛ ջարդոններում, թէ՛ զիւղացիների մէջ եւ թէ՛ ժողովներում շարունակ հակադաշնակցականութիւն էր քարոզում:

1902 թուին ամբողջ ձմեռուայ ընթացքում Գաղթաչէնից ստացուում էին նամակներ, որոնք զանգատուում էին վանահայր Գէորգ Վ. Նալբանդեանի(12) բռնած ընթացքի վրայ: Գէորգ վարդապետը 901 թուին էլմիաժիւնից նշանակուում է վանահայր, իսկ մինչեւ այդ ժամանակ վանքը կառավարում էր մեր ընկեր Մեսրոբը: Գէորգ վ. բուլղարացի էր եւ եղել էր դաշնակցական կոմիտէում եւ այդ մասին ստացուեց Ծիլիպէի Կ. Կոմիտէից յանձնարարական. այդպիսով վարդապետը նոյնպէս ճանաչուեց դաշնակցական ընկեր եւ յանձնարարուեց Գաղթաչէնի ընկերներին: Առաջանալով Գաղթաչէնի ընկերների եւ վարդապետի մէջ անհամաձայնութիւններ՝ Կ. Կոմիտէն Մարտիրոսին ուղարկում է ջննելու եւ վերջացնելու առաջացած դժգոհութիւնը: Մարտիրոսը Սալմաստի վրայով անցնում է Գաղթաչէն: Գննելով գործը, նկատում է, որ այդ դժգոհութիւնները առաջացել են թիւրիմացութիւններից. վերջացնում է խնդիրը, բաժանում է աշխատանքը, թղթակցութիւնները եւ քրդերի միջի պրոպագանդան յանձնում է Արմենակին, գէնքերի պահեստը՝ վարդապետին, իսկ փոխադրութիւնը՝ Ախպոր եւ Մեսրոբին. այդ ժամանակ Ախպէրը արդէն հիւանդ էր: Վերջացնելով գործը վերադառնում է Քաւրիզ:

Մարտիրոսի Քաւրիզ վերադառնալուց յետոյ գալիս է Վարդանը(10) Սալմաստ, վան անցնելու համար: Մի քանի օր ծանօթանալով Սալմաստի գործերին անց-

նում է Գաղթաչեն եւ ապա ապահով անցնում է Երկիր՝ Վան:

1902ի ամառուայ սկիզբներին Կովկասից անցնում է Գաղթաչեն Սարգիս Օհանջանեանը փոխադրելով իր հետ նաեւ փամփուշտ, ապա Գաղթաչենից անցնում է Վան, բայց ճանապարհին ձերբակալուում է: Գաղթաչենից Սարգիսը գրում է նամակ Սալմաստ, ուր նկարագրում է Ախպոր ծանր վիճակը. թէեւ սկիզբներում էլ Կ. Կոմիտէն կարգադրել էր գնալ Թաւրիզ բժշկուելու, սակայն ձի չկարողանալով նստել չէ կարողանում գնալ: Կարգադրուեց Խոյից ուղարկել բժիշկ. բժիշկը գնում է, սակայն անօգուտ: Ախպէրը մեռնում է, որով պակասում է Գաղթաչենի մի կարեւոր ուժը: Այդ ամառը Գաղթաչենի վրայով ապահով Վան է հասնում նաեւ Երկաթը: Այդ նոյն ամառը Կ. Կոմիտէի որոշումով Խոյ է գալիս Սիրակը, որպէս ներկայացուցիչ: Կազմակերպելու համար, ամբողջ ամառը Խոյ մնալով, դռկտ. Փաշայեանի հետ անցնում են Գաղթաչեն, որովհետեւ դարձեալ վարդապետի եւ ընկերների մէջ անհամաձայնութիւններ էին առաջ եկել: Սիրակը վերացնելով անհամաձայնութիւնները վերադառնում է Թաւրիզ, իսկ դռկտ. Փաշայեանը վերադառնում է Սալմաստ՝ ապա Թաւրիզ:

1902 թուականի աշնանը Մակուի Սարգարը յարձակուում է ջիւրդ ցեղապետ եւ մեզ բարեկամ Մուստաֆա Բէկի վրայ, խլում նրա հողերը եւ գիւղերը: Թէեւ Բէկը գնաց Թաւրիզ բողոքելու Բարձր Կառավարութեան, սակայն ի զուր անցաւ բողոքը եւ ստիպուած եղաւ քաշուել սահմանազուխ եւ յարձակումներ գործել: Այդ կռիւները վտանգաւոր դրութիւն առաջ բերին Գաղթաչենի ընկերների համար: Արմենակը հեռացաւ Սալմաստ, Մեսրոբը քաշուեց Մակու (նա տեղացի էր): Սալմաստում Արմենակը շատ դանդաղուում էր վարդապետի ընթացքի վրայ: Նախքան Արմենակի Սալմաստ գալը եկաւ վարդապետը եւ բողոքում էր Արմենակի եւ Մեսրոբի բռնած ընթացքի վրայ. այստեղից անցնում է Թաւրիզ, ուր դարձեալ ներկայացնում է իր բողոքը, ապա փամփուշտ, զէնքեր եւ թերթերի մեծ քանակութիւն վերցնելով փոխադրում է Գաղթաչեն:

Մուստաֆա Բէկի հեռանալով, հեռանում է նաեւ զէնք փոխադրող սուրհանդակը, որին փոխադրելու համար նախօրոք տրուած էր մօտ 2290 նոր, 2000 հին ծայր եւ 2 հատ նոր խողովակ: Սուրհանդակը չի փոխադրում. դորա համար միջոցներ ձեռք առնուեց յետ ստանալու, բայց ապարդիւն: Ինչպէս լուեց, սուրհանդակը սկսել է ծախել փամփուշտները:

1902 թուականի վերջերին Կ. Կոմիտէն կանչում է Սամսոնին Թաւրիզ: Թաւրիզում լինում են մի շարք ժողովներ. այդ ժողովներում որոշուում է նաեւ Դարձոյի տեղորդ, որ սկսել էր վտանգաւոր ընթացք: Նա միացել էր մի քանի ջիւրդ եւ թուրք աւազակների հետ

եւ անում էր ամէն բան: Կասկածելով Կազմակերպութիւնից, միանում է դոցա հետ եւ կտրում բոլոր յարաբերութիւնները հայդուկներից եւ Կազմակերպութեան անձնաւորութիւններից:

Այդ ժողովում խօսուում է նաեւ Գաղթաչենի ընկերների մէջ առաջ եկած տարաձայնութեան մասին: Խօսուում է նոր գիծ հաստատելու փոխյարաբերութեան համար, որովհետեւ Գաղթաչենի գիծը արդէն փճացել էր եւ այլն:

Ժողովներից յետոյ Սամսոնը վերադառնում է Սալմաստ: Այդ ժամանակներում լուրեր էին տարածուել, որ Վանում խուզարկութիւններ են տեղի ունեցել եւ մարդիկ են ձերբակալուել: Սալմաստի սուրհանդակը ճանապարհից վերադարձել էր, ձիւնի շատ լինելու պատճառով առաջ գնալ չէր կարողացել:

Մոռացայ վերը յիշել, որ 902 թուականի գարնանը, որպէս գործող ընկեր, Թաւրիզից եկաւ Սալմաստ, յանձնարարականով, Հայկ Սերեմճեանը: Երկու ամիս Սալմաստում մնալուց յետոյ, Կ. Կոմիտէի համաձայնութեամբ, անցնում է Գաղթաչեն, այնտեղից ցանկութիւն է յայտնում Երկիր անցնելու, բայց Կ. Կոմիտէն համաձայնութիւն չէ տալիս, ի նկատի ունենալով նրա անփորձութիւնը: Գիսակը(9) որ նոյնպէս ծանօթ էր, եւ որին Հայկը ինքը նամակով տրամադրութիւն էր յայտնել գնալ, նոյնպէս անփորձութիւնը ի նկատի ունենալով, խորհուրդ է տալիս մի տարի փորձուել Պարսկաստանում, եւ ապա անցնել Երկիր:

Կ. Կոմիտէի որոշմամբ Սերեմճեանը մնում է Խոյում ուսուցչական պաշտօնով պահպանելով կապ Սալմաստից, Թաւրիզից, Գաղթաչենից եւ հակառակը: Մի տարի մնալուց յետոյ, ընտանեկան հանգամանքների շնորհիւ, հեռանում է դէպի հայրենիք՝ Բուլղարիա:

Գիսակի ձերբակալման լուրը կցկտուր կերպով պտտուում էր. ոչ մի լուր չէր ստացուում: Մարտի վերջերին Վանից Գաղթաչենի վրայով եկան երկու յատուկ սուրհանդակ, նամակներով: Նամակները գրել էլ Վարդանը(10), որ նկարագրում էր Գիսակի(9) ձերբակալուելը, դրամի պակասութիւնը ու իրենց դժուար դրութիւնը: Սալմաստից Բաչկալայի վրայով հնարաւոր եղաւ դրամ փոխադրել իսկոյն հեռագրով: Այդ լուրի մասին անմիջապէս գրուեց ամէն տեղ, որ ինչպէս Վարդանը գրել էր, աշխատուի իսկոյն մարդ ուղարկել Գիսակի տեղը. երկուր ժամանակ ոչ մի տեղից մարդ չեկաւ: Որպէսզի Գաղթաչենի գիծը եւ գործերը նորից սկսուեն, Կ. Կոմիտէի կարգադրութեամբ, Թաւրիզ է գալիս Խանը Գաղթաչեն գնալու համար: Խանը եւ Արմենակը Թաւրիզից գալիս են Սալմաստ եւ անցնում Գաղթաչեն, բայց դարձեալ մնալ չեն կարողանում այնտեղ, վերադառնում են Խոյ, որովհետեւ կառավարութեան խստութիւնները շարունակուում էին:

Կ. Կոմիտէն այդ ժամանակներում ստանում է Կովկասից Բիւրոյի անդամների եւ Ոսկանապատի Կ. Կո-

միտէի անդամների ստորագրութեամբ մի պաշտօնական գրութիւն, որով պահանջում են մաքրել Սալմաստը բոլոր շարիք դարձած հայդուկներից, որոնք ենթադրի անունն էին կրում, եւ դորա համար առաջարկում էին 500 ռուբլի եւ երկու անձնաւորութիւն: Ի նկատի ունենալով որ Դարձոյի տեղորդից յետոյ կարող են բարդութիւններ առաջանալ եւ այնտեղի ներկայացուցիչի կեանքը վտանգի ենթարկուել, Կ. Կոմիտէն պահանջում է որոշուած երկու մարդկանց: Սալմաստում որոշ ծրարով աշխատում են յաջողեցնել Դարձոյի տեղորդ, սակայն Դարձոն նոր մարդկանց պալը լսելով զգուշանում է եւ ինչպէս իմացուեց՝ նոյնիսկ ուղեցել է ջրը դանալ: Այդ հանգամանքը ի նկատի ունենալով, տեղորդը յանձնուում է հայդուկներից մէկին. երբ առաջարկուեց նորան, նա պատասխանեց. «Ե՛՛՛՛՛՛ ինչ է Դարձոյի հետ ես հաշտ չեմ, բայց նա եղել է ինձ հետ կռուի ընկեր: Ինձ համար դժուար է կատարել այդ տեղորդ, բայց որովհետեւ դա Կազմակերպութեան որոշումն է, ես հպատակուում եմ այդ որոշման եւ խոստանում եմ կատարել»: Հայդուկին (Յակոբին) տրուեց 3 օր ժամանակ: Այդ ժամանակ Խոյից Սալմաստ եկան Խանը եւ Սիրակը: Վերջինս Կ. Կոմիտէի որոշմամբ գնացել էր Խոյ Արմենակին համոզելու Վան գնալու համար եւ Խոյում խմբակներ կազմակերպելու: Արմենակը խոստանում է գնալ:

Դարձոյի տեղորդը կատարուում է յաջողութեամբ: Իսկոյն թուցիկներ ցրուեց, որ այդ տեղորդը կատարուած է Կ. Կոմիտէի որոշմամբ: Սիրակը ճանապարհուեց Թաւրիզ: Կ. Կոմիտէից ստացուեց պաշտօնական գրութիւն ժողովուրդի եւ հայդուկների մէջ կարգալու, որով յայտնում է նախ Դարձոյի մատուցած ծառայութիւնները եւ ապա շարիքն ու պատիժը եւ ապա աւելացնում է «նոյն վիճակին կ'ենթարկուի ամէն ոք, ով նոյն ընթացքը կը բռնէ»: Այս գրութիւնը կարգացուեց գիւղում, որ թողց իր որոշ տպաւորութիւնը: Արմենակը Վան գնալը ձգձուում էր, Խանը եւ Միսսը ցանկանում էին անցնել Վան. Կ. Կոմիտէն որոշեց ուղարկել, որպէս փորձ, նոր գիծ բացելու Սալմաստից ուղղակի Վան: Գտնուեց մի ջիւրդ վալադ, որը խոստացաւ տանել: Կարգադրուեց եւ Խանը, Միսսը ու մի վանքի հայուկ երկու ջիւրդ վալադի հետ ճանապարհուեցին, սակայն սահմանազուխից վերադարձան կասկածելով ջիւրդ վալադի վրայ: Նորից Սալմաստ գալով՝ Խանը եւ Միսսը յանձնարարականով գնացին Երեւան այնտեղից անցնելու: Մնաց միայն Գասպարը: Մի որոշ ժամանակից յետոյ Գասպարը ցանկութիւն յայտնեց ջիւրդ վալադի հետ, որը տանում է մի քանի հայեր իրենց հայրենիքը, անցնել Վան. որոշուեց եւ ուղարկուեց: Ճանապարհին այդ փոքրիկ խումբը, որ գնում էր առանց զէնքի, նկատուում է ջրդերից: Քրդերը յարձակուում են այդ խմբի վրայ: Քիւրդ վալադներից մէկը փախցնում է Գասպարին, իսկ միւ-

ները միւս ջիւրդ վալադի հետ սպանուում են: Այս դէպքը առիթ տուեց համոզուելու, որ ջիւրդ վալադը վստահելի էր եւ կարելի էր օգտուել:

Այդ ժամանակում Կ. Կոմիտէն յայտնեց Սալմաստ, որ Բագուից պահանջուած մարդիկը եկել են եւ Սամսոնը գնաց Թաւրիզ:

Թաւրիզում տեղի ունեցան ժողովներ: Առաջ դրուեց Սալմաստը մաքրելու հարցը եւ հետեւեալ որոշումը կայացուեց. «Որովհետեւ Դարձոյի տեղորդից յետոյ դաշնակցական հայդուկները իրենց շատ լաւ էին պահում, սպասել, եթէ դարձեալ մի շարիք գործեցին իսկոյն կամ հեռացնել, կամ տեղորդ ենթարկել»: Նոցա հեռացնելը միանգամից դժուար էր, որովհետեւ բոլորն էլ ամուսնացած էին:

Որոշուեց նաեւ Երուանդին ուղարկել Խոյ, պահանջել Արմենակից հեռանալ Թաւրիզ, որովհետեւ նորա եւ Գէորդ վարդապետի մէջ առաջացել էին ծայրայեղ դժգոհութիւններ, ապա գնալ Գաղթաչեն, ցուցակագրել զէնքերը, գործը յանձնել վարդապետին եւ յայտնել Մեսրոբին, որ Կ. Կոմիտէն ընդունել է իր հրատարականը: Հրատարուել էր նաեւ Արմենակը. դոքա հրատարուել էին, որովհետեւ վարդապետի հետ լարուած էին:

Երուանդը, Սամսոնը, Խաչոն եւ Նեւրուզը(13) գնում են Սալմաստ, եւ որովհետեւ Նեւրուզը եւ Խաչոն դեռ անծանօթ էին Փայաջուկ գիւղին, իսկ հնչակեանների գալու լուրը պտտուում էր եւ հաւատացուում էր որ տեսել են, ուստի Խաչոն եւ Նեւրուզը մնացին Ղալասար, բայց պատուիրուեց գիւղացիներին, որ եթէ մի փոքր ցոյց անելու լինեն՝ իսկոյն յայտնեն մեզ: Երուանդը ճանապարհուեց Խոյ: Այդ ժամանակ եկել էր Գաղթաչենից Մեսրոբը անձնական գործով. դա էլ Երուանդի հետ գնում է: Երուանդը Արմենակին համոզում է գնալ Թաւրիզ, որը եւ գնում է. Մեսրոբը անցնում է Մակու: Մի քանի ժամանակից յետոյ Երուանդը գնում է Գաղթաչեն, ստուգում է զէնքերի եւ ծայրերի հաշիւը, գործը յանձնում է վարդապետին եւ Սալմաստի կարգադրութեամբ բերում է հետը 1000 մոսիւնի ծայր: Նախ քան Երուանդի գալը Թաւրիզից գալիս են Մարտիրոսը եւ օր. Մեծբայեանը, որոնց հետ Թաւրիզ է փոխադրուում՝ նորոգելու համար 20 խողովակ եւ կարողակայ: Հնչակեանների գալը, յետոյ պարզուեց որ սուտ է, իսկ գիւղացիները խնդրում էին տղերքը գնել իրենց գիւղում: Նեւրուզը եւ Խաչոն տեղափոխուեցին Փայաջուկ եւ մի քանի օրից յետոյ յայտնեցին, որ իրենք տրամադիր չեն մնալու այնտեղ եւ ցանկանում են անցնել Կովկաս. ամիսից աւելի է, որ եկել են Սալմաստ բայց ոչինչ չեն արել: Թէեւ նոցա դեռ Թաւրիզում յայտնուած էր որոշումը, բայց այս անգամ էլ յիշեցուեց, սակայն նոքա չհամաձայնուեցին եւ ճանապարհուեցին Թաւրիզ, ապա՝ Կովկաս: Սամսոնը Սալմաստ էր, նաեւ դռկտ. Փաշայեանը: Ա-

շունը կամաց-կամաց մօտենում էր, պէտք էր մտածել փոխադրութեան համար: Խոյից Երուանդը Սալմաստի վրայով անցնում է Քաւրիզ: Փաշայեանը հեռանում է Ատրպատականից Ալեքսանդրիա: Նորա հեռանալով Կ. Կոմիտէն զրկուում է փորձուած եւ բարեխիղճ գործիչից: Այդ ժամանակներում (նախքան Փաշայեանի գրանալը) Վանից քրդերի հետ գալիս է խոյ՝ Օհաննէսը: Նա ուղարկուում է որպէս փորձ քրդերի հետ զէնք տանելու: Օհաննէսը քրդերին թողնում է խոյում, ինքը գալիս է Սալմաստ՝ բերելով Վարդանի(10) նամակը, եւ որովհետեւ այդ փոխադրութիւնը փորձ էր, ուստի 5-6 հատ որոշուեց ուղարկել եւ անմիջապէս փոխադրուեց խոյ: Քրդերը չեն համաձայնուում տանել: Ուղիղ խոյից նշանակում է տեղ Օհաննէսը: Փոխադրում են նշանակած տեղը, ուր չեն հանդիպում քրդերին, վերադառնում են Սալմաստ, այդպիսով անյաջող է անցնում փոխադրութիւնը: Սալմաստում որոշուում է կանչել Տիգրանին տանող զիւրդ վալադին՝ Մուստաֆային, պայմանաւորուել նորա հետ, տալ 3-4 հոգի տղերքից եւ զէնքի հետ ճանապարհել Վան: Այդպէս էլ անում են: Քիւրդը եւ երեք հայուկ, որոնց հետ նաեւ Վանից եկած Օհաննէսը: Յանձնուում է զոցա 18 հրացան եւ 60) ծայր եւ ճանապարհուում են: Գրուում է Վարդանին՝ արդեօք սահմանին մօտ գտնուած Քոնի(5) հայաբնակ գիւղում կա՞յ կազմակերպութիւն. որպէսզի փոխադրութիւնը արագացուի, Սալմաստից փոխադրուի Քոնի, իսկ այնտեղից՝ Վան: Պատասխան ստացուում է, որ կարելի է փոխադրել, կան կազմակերպուած խմբակներ, որ կարող են օչնել: Չէնք փոխադրող խմբակի հետ փոխադրուում են նաեւ բաւականին թերթեր, բրոշուրներ, նկարներ եւ այլն: Խումբը Վանի մօտ կուուի է բռնուում եւ կորցնում 6 հրացան եւ Կարոյի նկարները. մնացածը տեղ է հասնում եւ վերադառնում են: Յովհաննէսը մնում է Վան: Նորա տեղը գալիս են 3 հայուկ: Հինց այդ ժամանակ խոյից վարդապետը գրում է Սալմաստ, որ քրդեր են Վանից եկել եւ նամակներ են բերել եւ պիտի զէնք տանեն: Սամսոնը գնում է խոյ, ստանում է նամակները: Վանից գրում են, որ անպատճառ զէնք տանք տանելու, բայց ջիշ, որովհետեւ փորձ է: Տրուում է քրդերին 6 հրացան եւ ճանապարհուում, որոնք ապահով տեղ են հասնում: Խոյից Սամսոնը վերադառնում է Սալմաստ: Վանից եկած խմբակը նամակ էր բերել, ուր գրուած էր որ երկրորդ փոխադրութեան համար ուղարկում են օգնական ընկեր երկու հոգու, իսկ երրորդը՝ որ տեղացի է, հեռացուում է իւր փնասակար ընթացքի համար: Սալմաստից հեռադրուեց այդ մասին Կովկաս. երկրորդ՝ փոխադրութեան համար հեռադրուեց Քաւրիզ զէնք բերելու: Եկաւ Երուանդը, Յովսէփեանի(14) հետ, որոնք բերեցին 14 հրացան: Այդքանը ջիշ էր. հեռադրուեց որ նորից բերեն. դարձեալ ուղարկուեց 14 հատ: Պատրաստուեց երկրորդ խումբը եւ 23 հատ

ճանապարհուեց զէպի Քոնի, սակայն խումբը եւ վաղը ճանապարհի ապահովութիւնը ի նկատի ունենալով, գնում են ուղղակի Վան, ապահով տեղ հասնում: Երուանդը եկաւ ուսուցիչ Փայաջուկ գիւղի համար. իսկ Յովսէփեանը, թէեւ ուսուցչական պաշտօնով էր կանչուած, Արեւելեան Բիւրոն ի նկատի ունենալով որ Ատրպատականում ընկերները դպրոցից հեռացել են եւ մարդու կարիք կայ, որոշել էր առանց պաշտօնի մնայ եւ զբաղուի կազմակերպական գործերով: Վաղուց մտադրութիւն կար Ուրմիի վրայ ուշադրութիւն դարձնել եւ փոխադրութեան դիժ ստեղծել, որի հետ համաձայն էր նաեւ Վանը, որովհետեւ Ուրմիից զէպի Երկրի սահմանի վրայ բնակուում էր Շէյխ Իբրահիմը որդին, որը իւր ձեռքի տակին ունէր մեծ ուժ: Նա նախապէս ցանկացել էր միանալ կամ բարեկամանալ հայ յեղափոխականների հետ: Այդ նպատակով, նա դէմ էլ էր արձեանականներին, որոնք խարել էին եւ 50-60 թուման էլ կերել էին: Մեր նպատակն էր այդ Շէյխի հետ էլ միանալ եւ պրոպականդա սկսել քրդերի մէջ: Բացի այդ, բարեկամական կապեր հաստատել սահմանի վրայ բնակող Մաւանա կոչուած ասորի զիւղի հետ եւ զոցա միջոցով բարեկամանալ Մար Շիմոնի հետ: Հինց այդ նպատակով էլ որոշուեց Յովսէփեանին(14) ուղարկել Ուրմի: Յովսէփեանը ամիս ու կէս մնալով Սալմաստում, ծանօթանալով տեղական գործերի հետ, ճանապարհուեց Ուրմի: Չէնք փոխադրող խումբը վերադարձաւ ապահով, որի հետ եկել էին Երկաթը, Վարդանը(10) եւ Վասպուրականի Կ. Կոմիտէի ներկայացուցիչը(15). մի քանի օրից ճանապարհուեցին Քաւրիզ եւ այնտեղից Կովկաս: Երրորդ անգամ փոխադրել չէինք կարող, որովհետեւ ցարս էր եւ լեռները ձիւն. փոխադրութիւնը յետաձգուեց պարնանը: Քիւրդ վալադը ամէն զնալուց տանում էր բերդան հրացան՝ ծախելու: Նորան պատուիրուեց ծախել Վան մեր ընկերներին. այդպէս էլ արել է: Ատրպատականի Կ. Կոմիտէն ամբողջ հինգ տարուայ ընթացքում արել է երբեմն հանգանակութիւն, թէ՛ Քաւրիզում, թէ՛ Սալմաստում եւ թէ՛ խոյում, ցրուել է երկու անգամ թուցիկ, մէկը տասնամեակի առթիւ, միւրը Նոր Տարուայ առթիւ. ունի՞ խմբակներ կազմակերպելու համար ներքին կանոնադրութիւն, կազմակերպուած են Քաւրիզում թէ՛ երիտասարդների եւ թէ՛ կանանց շրջանում խմբակներ: Խմբակներ կազմակերպուած են նաեւ Սալմաստում: Քրդական պրոպականդա փորձուեց նաեւ Սալմաստում, կապ հաստատուեց մի զիւրդ ցեղապետի հետ, ստացուեցին նամակներ: Այդ բարեկամութիւնը թէեւ մնում է, բայց զիւրդը շատ չէ մօտենում, վախենալով կառավարութիւնից: Կ. Կոմիտէն կապ է պահպանել եւ նպատակներ ստացել շարունակ Քահրանից, Ռաշտից,

Ղազուրից, Շահրուրից, Նոր Զուլայից, Արզաբիլից եւ այլն: Վերջացնելով Ատրպատականի Դաշնակցութեան 5 տարուայ պորձուեցութեան տեղեկագիրը, որ կազմուած է շատ կարճ բովանդակութեամբ եւ շտապ, խնդրուում է ժողովականներից մութ կէտերը լուսաբանելու համար զիմել ներ ներկայացուցիչին: Արհեստանոցը ամբողջ հինգ տարուայ ընթացքում նորոգել է Արշաւանքից վերադարձած փճացած հրացանները: Արհեստանոցը, արհեստ սովորելու եւ Երկիր անցնելու համար, եկել են շատերը, սակայն սովորել է միայն Վարդանը(10) ու անցել Վան, եւ ներկայումս սովորում են երկու հոգի, որոնք պատրաստ են Երկիր անցնելու: (1) Արդեօք Երուանդ Քեօւեանը (Սեպուհ, — տեսնել Մարտի Վարդանի մասին, Բ. տիպ, էջ 186) — Քէ՛ Երուանդ Յրէմեանը՝ այդ օրերում պարզ ուսուցիչ Ատրպատականի մէջ: Ամբողջ է: (2) Ամենայն հաւանականութեամբ՝ Քաղէս Ասաֆուի վանքը (այլ անունով՝ Մեծաւար): (3) Գալուստ Ալոյեանը: (4) Քրիստափոր Օնանեան, եմաւոսի արշաւանքի բժիշկը: (5) Դժուար ընթանալի յատուկ անուններ: (6) Արդեօք Բալա-բանը: ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Բ. հատորին մէջ (էջ 19), Կուլումեանի արշաւանքում մերթապառնալով մէջ կը կարգաւորուէին Ստեփան Յարութեան (նշ Ստեփանեան) — Երուանի, եւ վերապ Դաշնակցութեան: Ամենայն հաւանականութեամբ ներկայ թեքութիւն մէջ յիշուող երկու անուններ են: (7) Արմենակը կրթայ ըլլալ Սլաքը (Արմ. Օիսիկեան), որ այդ շրջանին կը գործէր Պարսկաստան: (8) Փոսիկ, Աթաբ, Գարսո, Շաշո, եւն. — բալոս ալ եւաւոսի արշաւանքին մասնակցած անուններ հայալեզուներ են. — տեսնել ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ, Բ. հտր., էջ 74-87 (ցանկ անուններու): (9) Վարդգէս Արեւիկեանը, Դաշնակցութեան ներկայացուցիչ՝ Վասպուրականի շրջանին համար: (10) Վարդան-Շահապազ: (11) Վահան Մանուկեանը, Դաշնակցութեան ներկայացուցիչ՝ Դաշնակցութեան մասնակցած անուններ հայալեզուներ են. — տեսնել ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ, Բ. հտր., էջ 74-87 (ցանկ անուններու): (12) Յեղափոխութեան մէջ ծանօթ՝ Ղեմայր անունով (տեսնել էջ 75): (13) Ըստ երևոյթի՝ Կովկասէն նոր կեդանքը ետան (դաշնակցական ետնո ?) ու ներառու են: (14) Պետ է ըլլալ Մարտի Արտաշէս Յովսէփեան (տեսնել իր Վարդանի մասին): (15) Գ. Ղեմ. Փաղովի պատգամաբան. երբորք Յիւնեան Զուլայում է:

Բ. — ՀՆԳԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՍԿԵՀԱՆՔԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԱՍԻՆ 1898 թուէն ցվերը 1903ի

ՆԻՒԹԵՐՈՒ Ա. հատորին ծանօթ ընթացքին համար մեծ նշանակութիւն պիտի չընդհանրուի Սեպուհի (Իզմիր) այս տեղեկագիրը: Կու տանք սակայն, իրեն կիսապաշտօնական գրութիւն (կազմուած տեղւոյն վրայ յառաջացած զեպր. Կոմիտէի առժամայ գործադիր վարչութեան մը կողմէ) եւ մամուլայ յաւելուած միւր՝ զեպր. ժամանակագրութեան յստակացման նպատակով: Տեղեկագրի առաջին էջին վրայ, վերը, ձախիմ, մակագրուած է: — շնորհակցուած Գ. Ղեմ. Փաղովի: Այս տեղեկագիրը Ղեմ. Փաղովի կողմէ ղառապարտուած է (տես արձանագրութիւն): Իբօք, գիտեմք որ տեղեկագրի եւ մամուլայ անոր շնորհակցութեան եւ պատմութեան բաժնի ոմն ու մօտեցման միակողմանի եղանակը վրդովում յառաջացուցին Ղեմ. Փաղովի մէջ (տեսնել արձանագրութիւն, էջ 132). մամուլայ որ էրայն ու վարդ-Մանուկը բանտ էին եւ փաստօրէն անկարող պատգամուելու: Ղեմ. Փաղովի ղառապարտութեան բանտներին վրայ, Իզմիրի շտաբայտայ գործադիր վարչութիւնը պետ տեսաւ Սոփիա փութագրելու Վ. Կոկարը (Կար. Այվազեան)՝ յաւելուած բացարձակութեամբ տալով Դաշնակցութեան Ղեմ. Փաղովի ոչ-գրական տպարարութիւնը (Իզմիրէն) որոշ շափով մեղմացնելու համար: Տեղեկագրէն ետք կու տանք նաեւ Կոկարի գրութիւնը (Բացարձակութեան Սեպուհի ներկայացուցիչի կողմէ ղեկուած մտաւար ղառապարտութիւնը): Կեցի արձանագրութեան:

Ոսկեհանքի սկզբնական կազմակերպական գործը Աշոտ-Մարթիի կառուցուելով հեռանալէն յետոյ 1898ին կ'անցնի Խոտուարի ձեռքը(1), որը խաղաղ փոփականտիտի ղերով կ'աշխատի մշակել նորարարող ոյժերը եւ միաժամանակ ընդլայնել յեղափոխութեան գաղափարը երիտասարդութեան մէջ: 1900ին տեղս կը հասնի Վարդ (Իբր պարզ ընկեր) ու յարմար տեղ մը կը հաստատուի ղերմակութիւնով պարապելու(2). սակայն հազիւ 8-10 ամիս անցած, մտածուած կ'ունենայ հրապարակի վերայ խանութ մը ունենալու. հակառակ Խոտուարի ու ընկերների անյարմար դատելուն՝ կը բանայ ուզած խանութը, միեւնոյն ատեն բանալով իր գաղափարի վարագոյրը, որը սակայն ի վերջոյ կարելի չեղաւ թաքցնել հետաքրքիր շուկայինը: Այդ 8-10 ամիսների ընթացքին մէջ Վարդ յարաբերութեան կը մանչ Որոտ խմբի անդամներէն երկուքին հետ ու հեղհեռէ սերտ մտերմութիւն մշակելով կը փորձէ քամահրել Խոտուարը: Որոտ խումբ՝ որ իր գիտակցութեան անցուկ սահմանին մէջ չէր կարող ըմբռնել, թէ փրփականտը կարեւոր դեր մ'է ինքնին, կը հաւատայ Վարդի թելադրութիւններին ու ինք ալ իր կողմէ կը սկսի հարկի անհարկի դիտողութիւններ անել Խոտուարի վերայ: Այդ պարագան պատճառ կը դառնայ, որ Խոտուար սովորականէն տարբեր, խիստ

վարուի Որոտ խմբի հետ, որոնք այլևս — ըստ իրենց մտածման — անհանդուրժելի գտնելով էտուարի ընթացքը, Վարդի խորհրդով կ'որոշեն տեղեկագրական մը զրկել Արեւմտ. Բիւրոյին, ուր բացի Ոսկեհանքի վիճակէն՝ նկարագրուած լինի էտուարի խիստ վարքը: Տեղեկագրականը կը պատրաստուի ու կը ներկայացուի Վարդին, իր դիտողութիւններն ընելու. բայց Վարդ այս անգամ հակառակ թելադրութեամբ կը համոզէ ընկերները ետ կենալ այս որոշումէն: Վարդի այս խորհրդաւոր ընթացքը կը խախտէ Որոտ խմբի վստահութիւնը, որը սաստիճանաբար աւելնալով խզումն առաջ կը բերէ Որոտ խմբի եւ Վարդի միջեւ:

Իրերի այս վիճակին մէջ կու գայ Պարհատ(3) եւ ապա Չոհրայ. Պարհատ միանալով էտուարի, կը կադմեն Ոսկեհանքի Կեդր. Կոմիտէն. կը կազմեն եւ տեղական կոմիտէն՝ հետեւեալ անձերով, — Չարեհ, Չոհրայ եւ Վարդ:

էտուար Կեդրոնականի ընկեր դառնալէ յետոյ կ'որոշուի, որ այլևս Վարդը պահէ խմբերի յարաբերութիւնը. այս մասին կը ծանուցուի Որոտ խմբին, որը արդէն ըմբռնած լինելով Վարդի տղայական եւ անվայել տրամադրութիւնները, վերջնականապէս կը դնէ իր վէճոն: Պարհատ չի համոզուիր այս պատճառաւորութեանց ու կը պահանջէ, որ էտուար Վարդը պատճառաւոր ներկայացնէ Որոտ խմբին. Վարդ կը ներկայացուի, սակայն կրկին կը մերժուի: էտուար ապօրինի գտնելով Որոտ խմբի վարմունքը, բացատրութիւն կը պահանջէ իրենցմէ, Որոտ խմբի ընկերները կը պատասխանեն հետեւապէս. «Վարդ մեզ հետ յարաբերութեան մտած օրէն սկսած ու շարունակած է չոր հասցէին ուղղել ստախօս, խաչագող, զեղծարար եւն. որակականներ, եւ եթէ մենք այսօր անոր հետ յարաբերութեան մտնենք դարձեալ, օր մ'ալ մեր հասցէին պիտի ուղղէ այդ կարգի որակականներ, գուցէ եւ կասկածելիներ ալ ներկայացնէ մեզ Կեդրոնականի հանդէպ»:

էտուար կը լռէ այս տխուր ամբաստանութեանց դէմ: Բայց երբ Որոտ խմբի տեղեկագրականն ալ կը վերագրաճուի Արեւմտ. Բիւրոյին, հոն ալ Վարդի դատադրութիւնը տեսնելով, ընկերական ատեան մը կը պահանջէ. ատեանը կը կազմուի եւ Վարդ խոստովանելով իր սխալները՝ ներողութիւն կը խնդրէ էտուարէն, Պարհատի ու Չոհրայի ներկայութեան:

Ապա Կեդրոնականը կ'որոշէ ձեռնարկել դիմումներ, եւ որովհետեւ տեղիս ջոջերէն Ձիլինկրոֆ, էտուարի(4) Ոսկեհանք գտնուած ժամանակ իրեն եղած դիմումի մը առթիւ, մատնելու աստիճան ստորմութեամբ վարուած ու յեղափոխութեան հարուած մը հասցնել փորձած էր, հին արատը սրբելու եւ նոր դիմումներին ազդուութիւն մը տալու նպատակաւ կ'որոշուի յիշեալը ենթարկել տեղորի. տեղորը կը գործադրուի եւ հակառակ վրիպումին՝ կը թողու սակայն

իր բարեբար ազդեցութիւնը ջոջերի վերայ: էտուար ուղեւոր օգտուել բարեպատեհ առիթէն, խորհուրդ կու տայ Պարհատին անմիջապէս ձեռնարկել դիմումներին. Պարհատ չի համաձայնիր ու այլևս աւելորդ նկատելով էտուարի ներկայութիւնը, կը ստիպէ զինքը մեկնել իր գործերովայրը: էտուար որ տակաւին ոչ մի դիւրութիւն եւ մանաւանդ պատճառ ալ չունէր մեկնելու, կը հակառակի. Պարհատ տեսնելով էտուարի ընդդիմադիր տրամադրութիւնը, Ոսկեհանքէն անոր իրաւասութիւնը բարոյապէս ջնջելու համար, կը թելադրէ Չոհրային որպէսդի կազմակերպութեան բոլոր գոյքերը բռնի ուժով առնէ էտուարէն. եւ որովհետեւ յիշեալ գոյքերը ի պահ դրուած էին մշտի Գետրոսի մօտ, Չոհրայ կը դիմէ անոր ու գինու սպանալիքով կ'առնէ գոյքերը ու կը յանձնէ Պարհատին:

Այս ձախակեր տնօրինութեան կը յաջորդէ էտուարի վտարման մասին պատրաստուած ամբաստանագիրը, որը կը զրկուի Հուր-Երկաթ(5). իսկ տեղացի ընկերներին Վարդի միջոցաւ կը յայտարարուի բերանացի:

Ամբաստանագրի ամփոփումը.—
«Ոսկեհանքի Կեդր. Կոմիտէն նկատելով, որ Վիշապի մէջ Շահրազի տեղորիտներին ձերբակալման պատճառ դարձած է էտուար, նկատելով որ տեղական խմբերը դժգոհ են իրմէ (Որոտ խ.ի տեղեկագրականը հիմ բռնելով) եւ մանաւանդ նկատելով որ հակընկերական ընթացք մը կը պահէ միշտ Կեդրոնականիս հանդէպ, որոշած է վտարել զինքը Կեդրոնականի ընկերակցութեանէն»:

(Ստորագրութիւն եւ կնիք)

Այս իրերայաջորդ տխուր եղելութիւններու հանդէպ՝ էտուար կ'որոշէ մեկնել, բայց 5-6 տարիներ ընթացքին մէջ բոլոր ընկերական շրջանակների համար ալ լինելով վստահելի ընկեր մը, առժամապէս կը ստիպուի մնալ ու պղտորուած միտքերը հանդարտեցնել, չէզոք վիճակ մը պահելով հանդերձ:

Պարհատ կը հակառակի այս բանին եւս ու շրջաբերական նամակով մը նոր պահանջ կը դնէ խմբերի վերայ, որ միայն եւ միայն Վարդի հետ յարաբերութիւն պահեն: Որոտ խումբը, որ կանխաւ խզած էր իր յարաբերութիւնը յիշեալին, կը մերժէ դարձեալ, ու իրենցմէ վստահելի ու լաւագոյնը ճանչցուած ընկերի վտարման պատճառներին իրազեկ դառնալու համար ընկերական ատեան մը կը պահանջէ Կեդրոնականէն: Կեդրոնականը կը մերժէ: Լեւոնեան(6) այս ժամանակները Ոսկեհանք եկած լինելով (ըստ ոմանց քննիչի պաշտօնով), կը ներկայանայ Որոտ խմբին թէ՛ իբր առժամապէս յարաբերութիւն սլահող եւ թէ՛ իբր հաշտարար միջնորդ, եւ երկու պաշտօնական հաւաքումներէ յետոյ մի որոշ եւ դրական փաստ չի գտնու էտուարը դատա-

պարտելու. բայց միւս կողմէ չկրնալով Պարհատի կամքին հակառակ որոշում մը տալ, կը մեկնի Ոսկեհանքէն, առանց նուազագոյն մերձեցում մը կարենալ գոյացնելու լարուած ընկերակառութեան միջեւ:

Պարհատ այլևս վերջնականապէս համոզուած Որոտ խմբի անդառնալի անջատումին, Վարդի միջոցաւ ձեռք կ'առնէ Արիւն խումբը, ու անմիջապէս կը ձեռնարկէ շրջաբերականների ցրուումին. երկու օրուայ մէջ կը ցրուուին 72 շրջաբերականներ. կառավարութիւնը նկատելով այս նոր երեւոյթը կը կրկնապատկէ հակողութիւնները. Արիւն խմբի ընկերները ինքնապաշտպանութեան համար գէնք կը պահանջեն Կեդրոնականէ, Կեդրոնականը կը մերժէ, չվստահելով իստարակ պատճառի մը համար(!!!) թանկագին գէնքերը անոնց յանձնել: Այս պարագան ներքին դժգոհութիւն մը կ'առաջացնէ Արիւն խմբի մէջ, որ այլևս ինք ալ կը դադարեցնէ յարաբերութիւնները Կեդրոնականի հետ:

Պարհատ կը մնայ անօգնական. մնացեալ շրջաբերականները կ'ուղարկէ Գարդանէլ, ուրկէ Փրանսական փոստի միջոցաւ կը զրկուին Ոսկեհանք՝ իրենց հասցէներին: Շրջաբերականների ցրուումը կը լրանայ: Հերթը կու գայ դիմումներին. Վարդ առաջին առթիւ կը դիմէ Առաջնորդարան, ուր այն պահուն ներկայ կը լինի Գարեգինը: Առաջնորդը երկդիմի պատասխանով մը Վարդը կը ճամբէ, որուն անմիջապէս կը հետեւի Գարեգին՝ Մաքսուտի ընկերակցութեամբ, բայց չի յաջողիր բռնել: (Հոս արժէ յիշատակել Գարեգինի ու Մաքսուտի լրտեսութեան պարագաները. տեղիս ջոջերը Գալիօզեանի հետ կը դիմեն առաջնորդին — շրջաբերականները ստանալէ յետոյ — ու անոր խորհրդով կառավարութեան կը յանձնեն իրենց ուղարկուած շրջաբերականները, եւ ոստիկանութեան ձեռքով կը ստիպեն Տէր Աբրահամի տղան Գարեգինը՝ յեղափոխականների հետքը գտնելու, ընկերակցութեամբ Բարթողիմէոս եպիսկոպոսի եղբորորդուն՝ Մաքսուտի, որ Ձիլինկրոֆի դէպքէն յետոյ Մուրատեան եպիսկոպոսի ներքին համաձայնութեամբ եկած էր Իզմիր՝ լրտեսի պաշտօնով, ըստ իր յայտարարութեան):

Մի քանի օրեր յետոյ Վարդ դարձեալ դիմումի դործով կարգ մը պաշտօնական գրութիւններով բեռնաւորուած Բոնովա արուարձանը մեկնած պահուն կը նշմարուի լրտես Գարեգինէ ու Մաքսուտէ, որոնք այս անգամ կը յաջողին զինքը բռնել ու յանձնել ոստիկանութեան:

Իրերի այս վիճակին մէջ կը սկսին նորանոր ձերբակալումներ, որի շարժառիթները բացատրելու համար հարկ է որ յետադարձ ակնարկով մը անդրադառնանք Չոհրայի վախտեան ու ստանձնած դերին պարագաներուն վրայ:

Պարհատի Ոսկեհանք հասնելէն յետոյ Կեդր. Կոմիտէի կողմէ Չոհրայ կը կանչուի տեղորիտի պաշտօնով. Չոհրայ կու գայ, բայց Ոսկեհանքի պարա-

գաները փոխուած լինելով՝ Չոհրայի դերն ալ կը փոխուի. իրմէ կը պահանջուի փրփականտիտի պաշտօնն ստանձնել, որի մէջ թէեւ անհարակ, սակայն Պարհատի կամքը յարգելու համար կ'ընդունի ու կը սկսի իր գլխացած ու հասկցած եղանակով փրփականտիտը: Չոհրայի երկրորդ օրը կը հանդիպի իր ծանօթներէն մշտի Գետրոսին եւ Սափրիչ Օհաննէսին, որոնց հետ միասին կը զնայ գինետուն մի քիչ ժամանակ անցկացնելու. հոն կ'աւելնան հետզհետէ Պալլարսը Կարապետ եւ Գոյաճի Մատուր: Խմբիչքը կը սկսի, գաւաթները կը փոխանակեն մէկգոյնի, մինչեւ Չոհրայ գլուխը կորցրած կը հանէ ծոցէն իր յեղափոխականի տոքիւմանները (թէ ինչո՞ւ՝ չգիտենք). այս բանը նկատելով Պալլարսը Կարապետ յաջորդ օրը անմիջապէս կ'իմացնէ ոստիկանութեան. ոստիկանութիւնը՝ չզրտնելով Չոհրայը, կը ձերբակալէ իր ընկերները՝ պահանջելով որ Չոհրայի տեղը ցոյց տան. Չոհրայ կը լսէ իրողութիւնը ու իսկոյն կը փախչի Ոսկեհանքէն:

Այս պարագաներու մէջ հետզհետէ կը ծանրանայ Ոսկեհանքի վիճակը: Որոտ խումբը, տեսնելով այս բոլորը, անմիջական դարձան մը գտնելու խորհրդով կը դիմէ էտուարին, ու կը պահանջէ իր օժանդակութիւնը: էտուար բոլոր ապագայ պատասխանատուութեանց մասին Որոտ խմբէն ազնիւ խօսք առնելէ յետոյ, կը սկսի պործի: Կ'որոշուի Մաքսուտը տեղորի ենթարկել. տեղորը կը գործադրուի ամենայն յաջողութեամբ, տեղորիտներն ալ ապահով կը պահուին:

Կառավարութեան գայրոյթը կատաղութեան կը հասնի ի տես յեղափոխականների յաջողութեան: Հրապարակը կը լեցուի յայտնի ու վաղտնի ոստիկաններով: Վտանգը կը հասնի մինչեւ ընկերական շրջանակը, մանաւանդ երբ Գարեգին կառավարութեան պակասը ինք լրացնելու միտումով բան գործ կ'ընէ կըրկնապատկել իր ոյժերը, հրապարակային սպանալիքներ ալ տեղալով յեղափոխականների դիմին: Որոտ խումբը ասոր նկատմամբ եւս անտարբեր չի մնար. կ'որոշէ Գարեգինը եւս տեղորի ենթարկել. այս անգամ եւս յաղթանակը կը մնայ յեղափոխականների կողմը, օր ցերեկով կը սպաննուի Գարեգին եւ տեղորիտները ազատ կը մնան: Ընդդ նոյն օրուայ նախորդ պիչերը դժբախտաբար պատահականօրէն կը ձերբակալուի էտուար իր տան դրան առջեւ, անտեղեկ մընալով վերջին տեղորի գործադրուած լինելուն մասին:

էտուարի ձերբակալումէն գրեթէ մի ամիս յետոյ — Պարհատի պահանջով — կու գայ Ալիգոֆ, 1-2 շաբաթ անցած՝ կը հասնի Մարգար, որի դուրս բերուելու մասին ուշ տեղեկութիւն տրուած լինելով տեղացի ընկերներին՝ առանձին դուրս կ'ելլէ ու անմիջապէս կը ձերբակալուի: Մարգարէն յետոյ կու գայ Մինաս, որը տեղացիների միջոցներով ազատ կ'ելլէ:

Այս անցողակի պարագաներէն յետոյ տեղական խմբերը միահամուռ ուժով կ'որոշեն դիմումի ձեռ-

նարկել եւ, իրենց յարաբերութիւնը Կեդրոնականի հետ խզուած լինելուն, նամակով կը դիմեն Արեւմտ. Բիւրոյին, որպէսզի Բիւրոն պէտք եղած վաւերականութիւնը ու միջոցները տայ իրենց: Բիւրոն իր պատասխանով ի համաձայնութիւն կը հրաւիրէ տեղական խմբերը Կեդրոնականի հետ, խմբերը չեն ընդունիր ու նորէն կը դիմեն Բիւրոյին: Բիւրոն այս անգամ եւս կը բացատրէ խմբերի պահանջին եւ կը յայտարարէ, թէ չեթէ տեղացի ընկերները չուզեն համաձայնիլ Պարհաւորի հետ, Բիւրոն ստիպուած Ոսկեհանքը պիտի փակէ յեղափոխութեան առջեւ: այսպիսով Բիւրոյի յարաբերութիւնն ալ կը դադարի տեղացի ընկերների հետ:

Շատ չանցած Պարհաւոր կարգադրութեամբ, Աղիզոֆի ձեռքով, անյարմար վայրի մը մէջ տեղորի կ'ենթարկուի Մասթէոս Պալեօզ. սպանութիւնը թէեւ յաջող կ'անցնի, բայց Աղիզոֆ չկարենալով փախչիլ, կը ձերբակալուի ու անմիջապէս կը խոստովանի իր կատարած սպանութիւնը Պարհաւորի թելադրութեամբ ըրած լինելը: Ոստիկանութիւնը Աղիզոֆէն կ'իմանայ մինչեւ իսկ Պարհաւոր բնակած տունը, ու նոյն գիշերուայ լուսադէմին յարձակելով Պարհաւորի տան վրայ՝ կը ձերբակալէ զայն եւս Մինասի հետ, որ այդ գիշեր պատահամբ Պարհաւորի տանը կը գտնուէր:

Պարհաւորի ձերբակալուելէն յետոյ Կեդրոնականը այլեւս ջնջուած, տեղական ընկերները կը խորհին կապուիլ ունէ Մարմնի. փոխադարձաբար հետզհետէ մերձեցում մը գոյացնելով Լեւոնավայրի Պատ. Մարմնի հետ, կը սկսին յարաբերութեան՝ պահանջելով միաժամանակ, որ նոր ուժեր զրկեն Ոսկեհանք. Պատ. Մարմնը կը փորձէ նախ Մարթինը եւ ապա Տիգրան Օհաննէսը զրկել, որոնց երկուքն ալ կասկածուած լինելուն՝ անյարմար կը նկատուին:

Յետ այսու սկսուած լինելով արտասահմանեան դիմումը, Պատ. Մարմինը նամակով մը կ'ազդարարէ պատրաստ լինել (տեղացի ընկերներին) Ոսկեհանքի ջոջերէն Մերկեր Մերկերեանը տեղորի ենթարկելու, որը հետեւելով իր նմանների օրինակին, շատ վատ վերաբերուել է դիմումի առթիւ: Անհրաժեշտ միջոցները ձեռք կ'առնուին, սակայն երկրորդ նամակով մը կ'ազդարարուի ետ կենալ այդ որոշումէն. տեղացի ընկերները չհասկանալով այս հակառակ որոշման նպատակը՝ բացատրութիւն կը պահանջեն Պատ. Մարմինէն, բայց ունէ պատասխան չի տրուի իրենց. այս անգամ տեղացի ընկերները կ'որոշեն տեղորի ենթարկել Խայրաբըզ Կարապետ եւ Պոյաճի Մատուրը, նախ դիմումների վարկը բարձր պահելու եւ ապա՝ երկու վնասակար անձ մէջտեղէն վերցնելու նպատակով: Այս մասին կանխաւ համաձայնած լինելով Պատ. Մարմնի հետ, տեղորը կը կատարուի ամենայն յաջողութեամբ, բայց տեղորիստները մի քանի օր պահուելէ յետոյ նաև փոխադրուած պահուել, մակոյկավարի մատնութեամբ կը շրջապատուին ոստիկաններէն. կռիւր կը սկսի. ոստի-

կաններէն մին կը սպանուի, որմէ յետոյ տեղորիստներէն մին կը դիմէ ինքնասպանութեան, իսկ միւսը այլեւս անկարող լինելով փախչիլ, կը ձերբակալուի:

Ընկերների աստիճանական նուազումով՝ Ոսկեհանքի շրջանը կը սկսի տակաւ առ տակաւ տկարանալ, մանաւանդ ներթական սնանկութիւնը աւելի քան երբեք կը շեշտուի. ընկերները կը խորհին վերստին դիմումի ձեռնարկել Հուր-Երկաթի մէջ: Դիմումը կը սկսի, որմանք անտրտուն կը վճարեն, իսկ ոմանք — մեծամասնութիւնը — որոնք կանխաւ գիտակցութիւն ունէին կազմակերպութեան ներքին երկպառակութիւններին, վաւերականութիւն կը պահանջեն. ընկերները այս մասին կը գրեն Պատ. Մարմնին, որը կ'ուղարկէ երկու ամիս միայն գործածելի վկայական մը. ընկերները կը բողոքեն այս կարգադրութեան դէմ ու պատուիրակի քարտ մը կը պահանջեն, որին ի փոխարէն կ'ուղարկուի նոր վկայական մը՝ մինչեւ 1903 Դեկտ. 31 գործածելի: Մինչ այս մինչ այն՝ ժամանակը կը սահի, դիմումն ալ սպասուած արդիւնքի 1/3ը միայն կու տայ, եւ որով հազիւ կարելի կը լինի բանտարկեալ ընկերների պէտքը ու տեղական ծախսերը առժամապէս հոգալ:

Ապա տեղացի ընկերները վերստին կը դիմեն Պատ. Մարմնին՝ նոր ընկեր պահանջելով: Պատ. Մարմինը 903 Դեկտեմբերին կ'ուղարկէ Վ. Էտկարը, որը իր հետ առնելով մաս մը տեղացի ընկերներէն եւ Վիշապի ընկերներէն Անդրանիկը, Պատ. Մարմնի տնօրէնութեան համեմատ՝ կը կազմակերպէ Ոսկեհանքի Կեդր. Կոմիտէի առժամեայ գործադիր վարչութիւնը, ցնոր տնօրէնութիւն:

ՈՍԿԵՀԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Ոսկեհանքի շրջանը ներկայ վիճակի մէջ ունի ընդամէնը եօթը խումբեր, որոնք կը գտնուին հետեւեալ վայրերու մէջ.—

- Իզմիր 4 խումբ
- Հուր - Երկաթ 2 խումբ
- Նոր - Դիւղ 1 խումբ

Ի բաց առեալ այս խումբերէն մէն մի կէտի վրայ կան եւ բաւական թուով համակիրներ, զորս տեղական արդի մարմինը մօտիկ ապագային պիտի աշխատի կազմակերպութեան դրօշին տակ առնել:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Ոսկեհանքի 1898-1903 տեղեկագիրը, որ բացի տեղական մարմիններու հնդամեայ ընդհանուր գործունէութեան պատկերացումէն, ներքին երկպառակութիւններու ու անոնցմէ առաջ եկած տխուր հետեւանքներու մանրանկարը պիտի ներկայացնէ Ընդհ. Ժողովիդ, արդի առժամեայ Մարմնի կողմից հարկ դատ-

ուած է նկարագրել մասնաւորապէս երկու հիմնական պատճառի համար, որպէսզի անգամ մը եւս չկրկնուին այնպիսի տնօրինութիւններ, որոնք ոչ մի կերպ համապատասխան չեղան անցեալում՝ երկրի ընկերական թէ քաղաքական պահանջներին հետ:

Անշուշտ հասկանալի է, որ երկու հիմնական պատճառներ ըսելով, կ'ուզենք մատնանշել՝ I. Ոսկեհանքի Կեդրոնական Կոմիտէն, II. Լեւոնավայրի Պատ. Մարմինը, որի հետ կապուած է Ոսկեհանքի շրջանը(7):

Առաջինը գտնուելով հանդերձ երկրին մէջ, չուզեց կամ աւելի ճիշդ ասած չկարողացաւ ուղղութիւն մը տալ իր ընդհ. քայլերուն, եւ փոխանակ տեղական պատրաստ ուժերի հետ համերաշխօրէն գործելու, աւելի ընդարձակ տեղ տուաւ տիրակալն գաղափարին, այլապէս իր եսին: Կառավարութեան միջամտութիւնը (մատնիչների ձեռքով) հարուած հարուածի հասցնելով յաջողեցաւ վերջապէս ջլատել մեր ոյժերը, — ուժեր՝ որոնք համաձայնութեամբ թերեւս հրաշքներ յաջողէին գործել այն յուսատու եւ խաղաղ ժամանակների մէջ:

Ոստիկով Պատ. Մարմնի մասին, մենք բացարձակապէս ապարդիւն եւ նոյն իսկ ապօրինի կը գտնենք, որ ունէ շրջանի Պատ. Մարմինը ազատ միջավայրի մը մէջ նստելով վարել փորձուի իրեն կապուած շրջանը, առանց ի մօտուստ կարենալ ըմբռնելու երկրի յարափոփոխ վիճակը, ու ունէ ձեռնարկի հանդէպ առաջ եկած հարկւրաւոր խոչընդոտ-անակնկալները (որոնց դիմադրուելու ծանր հարկը ու այժմէութիւնը — ներթապէս թէ բարոյապէս — կը պահանջեն, որ միեւնոյն կէտին վրայ գտնուի շրջանի մը Պատ. Մարմինը):

Արդ՝ մենք մանրամասնօրէն ուսումնասիրած լինելով շրջանին մէջ անցեալում գործուած սխալները իրենց յարակից պատճառներով, յօգուտ եւ ի բարւոքումն Ոսկեհանքի ապագային, կը պահանջենք:

I. Որ տեղական արդի մարմնոյն տրուի կատարեալ իրաւասութիւն վարելու Ոսկեհանքի յեղափոխական բոլոր գործառնութիւնները, — իր բացարձակ պատասխանատուութեան տակ — հաշտեցնելով զայն շրջանին ներքին թէ արտաքին պայմաններին հետ եւ կապելով ընդհանուր յեղափոխական քայլին:

II. Ոսկեհանքի հանգանակութենէն գոյացած գուժարին կէսը ընդհուպ տրամադրել տեղական մարմնին, նախ իր գոյութիւնը, եւ ապա իր ձեռնարկների սկզբնաքայլը ապահովելու համար, ըստ կարելիութեան:

III. Առաջիկային նոր ոյժերու յաւելման հարկը ներկայացած պահուել, քեւէ ընկեր չուղարկել Ոսկեհանք, եթէ կանխաւ վերցնական համաձայնութիւն չէ կայացել նորեկի եւ տեղական Մարմնի միջեւ:

Հակառակ վերոնշանակեալ երեք կենսական պայմաններին, դժուարին, գուցէ եւ անկարելի պիտի լինէր մեզ՝ շարունակել տեղիս յեղ. գործառնութիւնները, կառավարուելով վերստին այս կամ այն մարմնի փափաքին համաձայն, որպիսիք անցեալին մէջ ինչպէս տեսանք, անկարող ըմբռնելու երկրի վիճակը, բացարձակապէս անգիտակ իրենց պարտականութեանց փափկութեան, սխալէ սխալ առաջնորդելով տարին հասցուցին քայքայման եզրը, հազար ու մի դժուարութիւններով ու գուրգուրանօք պատրաստուած Ոսկեհանքի կազմակերպութիւնը:

Թերեւս մի քիչ խիստ են մեր դիտողութիւնները, բայց չպիտի ցաւինք այդ մասին, առաջնորդուելով խղճի ու պարտաւորութեան ձայնէն եւ որի առաջ ուխտել ենք մեր կարողութեան ներած չափով ծառայել ազգային դատին, նոյնիսկ իբր անկախ յեղափոխականներ, եթէ զլացուին մեզ մեր իրաւացի պահանջները, զորս կը յանձնենք Ընդհ. Ժողովիդ ուշադրութեան:

ՆՊԱՏԱԿ ՈՍԿԵՀԱՆՔԻ

Ոսկեհանքի տեղական արդի մարմինը, ուսումնասիրելով տեղիս ապագային ունենալիք օգտակարութիւնները մեր յեղափոխական գործին, համոզուած ու նպատակ ընտրած է՝ I. Տուրական, II. Դրամական, III. Յարաբերական օժանդակութիւններ, բացարձակապէս իրեն վերապահելով գործելու եւ միջոցների տեսակներու ընտրութեան իրաւունքը, հիմնուելով այն փաստի վերայ, թէ Ընդհ. Ժողովոյ մէջ որոշուած եւ ընդունուած որեւէ ձեւ կամ միջոց, ապագայի մէջ մեր հանգամանքների առաջ կրնայ արգելքների համադիպիլ եւ որի մասին բարձրագոյն մարմնի հետ նորանոր բանակցութեան մասնել, կարենալ հասկացնելու համար արդէն ընդունուած միջոցի անդործադրելիութիւնը, ի գուր ժամանակ պիտի խլէ մեզմէ, որը անփոխարինելի կորուստ մ'է գործի համար:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ոսկեհանքի Կեդրոնական Կոմիտէի Առժամեայ Գործադիր Վարչութիւն

| | | |
|---------------------------|----------|-------------|
| ՀՐԱԶ | ԱՆԴՐԱՆԻԿ | ՍՈՒՐԷՆ |
| ՎԱՐՊԵՏ | | Վ. ԷՏԿԱՐ(8) |
| ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՍԿԵՀԱՆՔԻ | | |
| ՀՆԳԱՄԵԱՑ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՄԱՍԻՆ | | |

902 — 903 պատահած ներքին երկպառակութիւնների մասին Ոսկեհանքի ներկայ տեղեկագրով տրուած բացատրութիւնները միակողմանի չեն.

Ա.— Անոր համար, որ Ոսկեհանքի տեղեկագրի կազմութեան մասին պէտք եղած տեղեկութիւնները հաւաքուած են ո՛չ թէ Որոտ խմբի ընկերներէն (Որոտը որչափ որ յիշատակուած է խմբի անունով, սակայն անիկա եղել է Ենթակոմիտէ) որը արդէն գոյութիւն չունի, այլ՝ կազմակերպութեան պատկանող հին ընկերներէ (Արիւն խումբ եւ մշեցիներ) որոնք ժամանակին պորձակցած են աւելի ծարհատին՝ քան Որոտ խմբին:

Բ.— Անոր համար, որ եթէ Ոսկեհանքի ընկերները կուտարար լինէին, ատոր ապացոյցը պիտի տային էտուարի հետ ունեցած հինգամեայ յարաբերական շըրջանի մէջ:

Գ.— Անոր համար, որ էտուար-Պարհատի միջեւ ծագած անհամաձայնութեանց մէջ չկայ մի այնպիսի կարեւոր պատճառ, որի հետեւանքով Պարհատ իրաւունք համարէր վտարել էտուարը, առանց նոյնիսկ Արեւմտ. Բիւրոյի կանխաւ համաձայնութեան:

Դ.— Անոր համար, որ էտուարի անպայման վտարումը յայտարարող պաշտօնական ամբաստանագրի պատճառած ազմուկը մի անգամ ընդ միշտ խեղդելու, ու յետագայ չարեաց առաջին անգամ ընկալուած համար, Որոտի կողմէ պահանջուած ընկերական ատեանը — որ իրենց տարրական իրաւունքն էր — անպայման կերպով մերժուած է Պարհատի կողմէ: (Աստ իբր ծանօթութիւն հարկ է յիշել թէ՛ ճիշդ այդ նպատակաւ Արեւմտ. Բիւրոյի կողմէ ուղարկուած էր ընկեր Լեւոնեան(6), որը՝ Ոսկեհանք հասնելով, փոխանակ անմիջական միջոցների դիմելու, մի տասն ու հինգ օր Պարհատի մօտ անցընելէ յետոյ, պատահաբար կը հանդիպի էտուարի, որը՝ կը յիշեցնէ իրեն ինչ պաշտօնով եկած լինելու անկէ ետք ընկեր Լեւոնեան պաշտօնապէս երկար տեսակցութիւն կ'ունենայ Որոտ խմբի հետ, որոնց իբր բաւարարութիւն, կ'առաջարկէ հրաժարիլ ընկերական ատեանի պահանջէն ու հնազանդիլ Պարհատի:)

Ե.— Անոր համար, որ Որոտի միջոցաւ կատարուած տեւորները (պորձադրողներ) փախստեան բացարձակ արդեւիք ջանացած է հանդիսանալ Պարհատ, մշեցիներ ի հաւաքած ճանապարհածախսի դրամը դրաւելով:

Երկպառակութիւններ յայ ամենախոշոր պատճառները կը բերեն մեզ այն եզրակացութեան, որ խմբական կամ խմբապետական ընկերների կողմէ տեսնուած թերութիւնները չի կարելի համեմատել այն սխալների հետ, զորս պորձուած են Պարհատի կողմէ, որը՝ ներկայացնելով վարիչ եւ պատասխանատու մարմնի մի անդամը, պարտէր վարչական շրջանացութեամբ չարիքը իր ծագման մէջ խափանել, քան

մրցման ելլել աւելի ստորադաս ընկերների հետ, որոնք գուցէ իր չափ գիտակցութիւն չունէին, շատ մը տեսակէտներով:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐԿԱՅ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ոսկեհանքի մարմնոյն իր գործերուն մէջ անկախ լինելու տրամադրութիւնը առաջ եկած է. Ա. անցեալ դէպքերի տխուր ազդեցութենէն. Բ. Կեդր. Կոմիտէի Գործ. Վարչութեան թոյլատրած աւելի լայն իրաւաստական հանգամանքէն եւ Գ. Դաշնակցութեան կողմէ արդէն ընդունուած ապակեդրոնացման սկզբունքէն: Իսկ այդ իրաւաստութիւնները խնդրելով Ընդհ. Ժողովէն, նա նպատակ ունեցած չէ բնաւ՝ բովանդակ Դաշնակցութենէն անկախ լինել, որովհետեւ իր ըմբռնումով յեղափոխութիւն ըսելով, դաշնակցական յեղափոխութիւն կը հասկնայ եւ այլ կերպով ալ պատճառ չունի հասկանալու, քանի որ ներկայիս Դաշնակցութիւնն է միայն յեղափոխական կոչման բարձրութեան վրայ եւ որին արիւնով կապուած է Ոսկեհանք, զոհարեւելով բաւական լաւ ուժեր անցեալի մէջ:

Գալով դրամականին, Ոսկեհանքի մարմինը յուսալով թէ կը տրուի իրեն կարեւոր ձեռնարկների իրաւորման արտօնութիւնը Ընդհ. Ժողովոյ կողմէ, համարձակած է խնդրիլ Ոսկեհանքի գլխումներէն գոյացած գումարին կէսը, որի ամենանուազ մասէն պիտի օգտուէր ապրելու տեսակէտով, (ինչ որ արդէն ընդունուած օրէնք մ'է ամէն շրջանի համար), մնացեալ մեծ մասը յատկացնելով գործին:

Նկատի առնելով նոր ընկերի մը մուտքի մասին — ինչ պաշտօնով որ ալ ըլլայ — մեր կանխաւ համաձայնութեան առաջարկը, դա՛ արդէն Դաշնակցութեան հիմնական սկզբունքներէն մին է. եւ մենք երբեք խոչընդոտ չպիտի հանդիսանանք այն եկուորին, որ բռնօրէն չի ձգտիր խեղդելու մեր տեղացիական իրաւունքը. մանաւանդ որ առանց փոխադարձ կատարեալ համաձայնութեան ճամբայ ելլող ընկերներ շատ քիչ անգամ կը յաջողին ըստ արժանւոյն գործ մը գլուխ բերել:

Ոսկեհանք իր ընդունած ցուցական, դրամական եւ յարաբերական օժանդակութեան նպատակի մասին կատարեալ անկախութիւն պահանջելով, երբեք նպատակ ունեցած չէ շնանչնալ Դաշն. Գերազոյն Մարմնոյ իրաւաստութիւնը, այլ նկատի առնելով երկրի յարափոփոխ վիճակը՝ ուղած է նաեւ այդ արտօնութիւնը, որովհետեւ եթէ ժամանակի պահանջին հետ չհաւասարակուէ իր քայլերը, պորձը արդիւնաւէտ վախճան չ'ունենար:

Սուսելով տեղեկագրի խիստ ոճի ու անկախ գործե-

լու սպանալիքի մասին, դա ալ արդիւնք է, Ա. այն յոռետեսութեան որպիսին թէեւ աստիճանաբար բայց խոր արմատ ձգած է ոսկեհանքիների մէջ անցեալ դէպքերի ու անոնց յարակից մանր-մունք պատահարների պատճառաւ, եւ Բ. այն տաքարիւնութեան, որով չէին կարողացել կշռել յարգանքի աստիճանը Ընդհ. Ժողովոյ հանդէպ: Իսկ վերջին պահուն ընկեր մը՝ դիտուարակելով Ընդհ. Ժողովոյ կողմէ իրենց մասին որոշուած դատապարտութեան մեղմացումը խնդրելին, ամենապարզ ապացոյցն է Դաշնակցութենէ երբեւիցէ բաժանուելու տրամադրի չլինելուն, — ինչ որ չպիտի ընէին եթէ վճռած լինէին բաժանուել:

Արդ այս բացատրութիւնները ներկայացնելով Պատկառելի Գ. Ընդհ. Ժողովոյը իմ ընկերների կողմէ (որոնք ինձ 904, 12 Մարտ, 24 թուահամար վկայագրով կատարեալ իրաւաստութիւն էին սուել ներկայանալ Պատկառելի Ընդհ. Ժողովոյը եւ ճշլրիտ բացատրութեամբ բառնալ իր տեղեկագրի պատճառած թիւրիմացութիւնները), զարժանն տնօրինել կը խընդրեմ:

Յարգանք

Վ. ԷՏԿԱՐ

904, 16/29 Մարտ, Սոֆիա

(1) Էտուար կամ Եղվարդ, Իզմիր գործիներէ՝ Սմբատ Պանանը (այլ ծածկանունով՝ Սիսակ): Տեսնել ՆՌՈՒԹԵՐՈՒ Ա. հատորին մէջ՝ Աշոտ Մարքիի քաթածարը, «Կարգ մը ճշգումներ» բաժինը՝ էջ 290 եւ անճանճանքաւ ցուցակը՝ էջ 294:

(2) Վարդ-Մանուշակ (Յակոբ Արքախմբան), Ամերիկայէն Իզմիր եկած գործիչ: Տեսնել Ա. հտոր., ցուցակ անճանճանքաւ՝ էջ 293:

(3) Պարհատ եւ Սեպուհի՝ Հրաչի (Հայկ Թիրեաքեան, Պանօայի Հրաչը) ծածկանուններն են: Տեսնել Ա. հտոր., էջ 290-291 եւ ցուցակ անճանճանքաւ՝ էջ 295:

(4) Նայս գրուած է ՎՄԻՐԹԻՆ ՈՍԿԵՀԱՆՔ ԳՄՈՒՆԱԾ ԺԱՄԱՆԱԿ, ինչ որ քերես աւելի տրամաբանական է. ապա՝ Մարքիի անունին վրայ զի՞մ քաշուած եւ, այլ ձեռագրով մը, տեղեցուած է՝ «Էտուարի»:

(5) Մանիսայի կուսակցական տեղանունը:

(6) Աշոտ-Երկաթ (Արմենակ Ս. Լեւոնեան):

(7) Գ. Ընդհ. Ժողովի արձանագրութիւններէն կը տեղեկանա՞մ, որ ճախապէս Լեւոնակայի Պատասխանատու Մարմինը կազմուած Ոսկեհանքի շրջանը ժողովի որոշումով այնուհետեւ կազմուեցաւ մորթմտիք Ցուցական Մարմինը՝ որ կազմակերպուելու եւ ղեկավարելու Պոստը եւ Իզմիրի յեղափոխական թաղապետական աշխատանքները:

(8) Անուններուն համար՝ տեսնել Ա. հատորի անճանճանքաւ ցուցակը եւ «Կարգ մը ճշգումներ» բաժինը (էջ 290-291): Վ. Էտուարը (Կարապետ Այվազեան) Ընդհ. Ժողովին յաւելալ բացատրութիւններ տալու համար Մարտին Իզմիրէն Սոֆիա հասնող զեմատար պատգամաւորն է, մինչ Ընդհ. Ժողովին մէջ Ոսկեհանքը կը ներկայացնէր Վարդը (Վարդ-Պատրիկ): Այս մասին տեսնել Յուս. Ա. հատորի էջ 290ի ծածկագրութիւնը:

Գ.— ՏԵՂԵԿԱԳՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ 1898 — 1904

Պալքանեան շրջանի դաշնակցական կազմակերպութիւնը շատ տկար եղած է 1898ի Ընդհ. Ժողովէն յետոյ եւ հետզհետէ միայն կրցած է ծաւալիլ ու զօրանալ եւ հասնիլ ներկայ վիճակին, որ նախկին տկարութեան հետ համեմատած՝ թէեւ զօրաւոր կրնայ համարուիլ, սակայն դեռ շատ հնարաւորութիւն կայ աւելի զօրացնելու:

1898ի Ընդհ. Ժողովէն յետոյ երբեք Կ. Կոմիտէներ յաջողած են իրարու: Առաջինը կազմուած է 1897 Սեպտ. 1ին եւ դադարած է գործելէ 1899 Մարտ 6ին:

Այս Կ. Կոմիտէի հրաժարումէն յետոյ 6-7 ամիս պորձերը բոլորովին անխնամ մնացած են եւ եղած փոքրիկ ու տկար կազմակերպութիւնն ալ գրեթէ բոլորովին ջնջուած է, որովհետեւ այս միջոցին դաշնակցական գործիչներու պակասը, կոտորածներու հակադրեցութիւնը, հակայեղափոխական պրոպագանտան, միութենականներու յիմար քարոզները ընդհանրապէս, իսկ Պուրկալի զէնքերու խնդրին երեւան գալը մասնաւորապէս՝ մնասած են Պալքանեան շրջանի կազմակերպութեան վարկին:

Ռոստոմ յարմար ատենին, նոյնիսկ քիչ մը ուշ եկաւ Պուրկարիա: Բիւրոյի խորհրդով՝ Տիլիպէի կոմիտէն ստանձնեց Առժամանակեայ Կեդր. Կոմիտէի դերը. մանաւանդ Ռոստոմի ընկերակցութիւնը իրեն ուժ մը եւ գրաւական մըն էր:

Կազմակերպական որեւէ գործ յաջողցնելու համար նախ պէտք էր ցրուած ընկերները հաւաքել, Պուրկալի խնդրին առթիւ չարամտօրէն հրապարակը ազմուկով եւ ամէն տեսակ ամբաստանութիւններով լեցնող հակառակորդներու յառաջացուցած շփոթութիւնը դարմանել: Ռոստոմ իրկու անգամ շրջեցաւ Պուրկարիոյ հայաշատ քաղաքները, նախկին ընկերները հաւաքեց, նոր ընկերներ ձարեց եւ ամէն տեղ քիչ շատ ուժ գոյացուց, որպէսզի ամէն տեղի մէջ մշտական յարձակումներու դէմ տեւական ընդդիմութիւն ցոյց տուող եւ կազմակերպութիւնը զօրացնելու աշխատող ընկերներ ունենանք:

Ռոստոմ Պուրկալի զէնքերու խնդիրը քննեց գրեթէ հրապարակաւ. ու թէեւ յանցաւորներու համար որոշուած պատիժը հնարաւոր չեղաւ շուտով գործադրել, բայց քննութեան ձեւը արդէն ապահովութիւն կը ներշնչէր միախճանին համար. այդ պատճառաւ գայթակղիւններէ շատեր զոհացում գտան եւ հակառակորդներու յարձակումները իրենց ազդեցութիւնը կորուսին:

Հարկ էր Կեդր. Կոմիտէի քաղաքի կազմը զօրացնել

ուրիշ տեղերու օրինակ ու խթան ըլլալու համար: Այդ նպատակաւ շարք մը օգտակար ձեռնարկներով, հիմնարկութիւններով, ժողովուրդը մեզ մօտեցնելու և սիրաշահելու աշխատուեցաւ:

Այսպէս նախ սարքուեցան խառն կամ զուտ դաշնակցական բազմաթիւ լսարաններ, օրիորդաց, տիկնանց և երիտասարդներու համար առանձին լսարաններ, յետոյ կազմուեցան երգեցիկ ու թատերասէր երկսեռ խումբերը և հետզհետէ զինավարժական-մարմնամարզական խումբերը, առանց հաշուելու զուտ յեղափոխական 3-4 օժանդակ խումբերը՝ որոնք նոյնպէս այդ ժամանակ կազմուեցան: Այս եղանակաւ քաղաքի գրեթէ բոլոր երիտասարդ ու տրամադրելի ուժերը գրաւուեցան և շատ չանցած՝ բոլորը դաշնակցական դարձան:

Տիկին և Տիար Զօրեանց(1) հաստատած էին փոքրիկ տղոց մանկապարտէզ մը և չափահաս օրիորդներու համար դասընթացք մը: Եստ չանցած տեղական հասարակութեան և դաշնակցական ընկերներու մէջ այն տեսակ պահանջներ ստեղծուեցան՝ որ անհրաժեշտ եղաւ այդ հաստատութիւնը կանոնաւոր ուսումնարանի մը վերածել: Մենք ունեցանք ուրեմն վարժարան մը, որ մեզի հետ կապեց բազմաթիւ ընտանիքներ, շահեցուց բազմաթիւ համակիրներ և ծառայեց մեր ազդեցութիւնը զօրացնելու, ինչպէս նաեւ եղաւ կեդրոնատեղի բոլոր դաշնակցական խումբերու հաւաքումներուն և վարժութեանց:

Ֆիլիպէի կազմի զօրանալը ազդեց ուրիշ տեղերու վրայ ևս. բայց ամենէն աւելի՝ ընկեր Ռոստոմի շնորհիւ Առժամանակեայ Կեդր. Կոմիտէի մակեդոնական կազմակերպութեան հետ սերտ բարեկամական յարաբերութիւնը նպաստեց ամբողջ շրջանի մէջ Դաշնակցութեան վարկն ու ազդեցութիւնը բարձրացնելու:

Մակեդոնացոց հետ մեր բարեկամութիւնը պաշտօնական անձերու տեսակցութեան մէջ չէր ամփոփուեր, այլ կ'արտայայտուէր երկու բարեկամ կազմակերպութեանց միասին ըրած ձեռնարկներով, հանդեսներով ու նոյնիսկ թուրքիոյ մէջ յեղափոխական կենդանի գործով: Այդ բոլորի կեդրոնը Ֆիլիպէն էր, ուր երկու ազգերու մեծած յեղափոխական ընկերներու համար երկու կազմակերպութեանց հաւասար մասնակցութեամբ հոգեհանգիստներ եղան, սզահանդէսներ տրուեցան, լսարաններ, հանդէսներ եղան: Զուտ հայկական հանդէսներու իսկ պուլկարները ոչ միայն բանախօսներով կը մասնակցէին, այլ նոյնիսկ իրենց երգեցիկ խումբերու սորված հայերէն երգերով մեր հանդէսներու փայլը կ'աւելցնէին: Անմոռանալի են ի միջի այլոց հայ և պուլկար ընդհ. յեղափոխական նահատակներու համար եղած հոգեհանգիստն ու սզահանդէսը, Pro Armeniaի օգտին կատարուած հանդէսը և մանաւանդ Էտրիքի մօտ կուռի մէջ ինկող և քաղաքը կախաղան բարձրացող(2) կէս առ կէս հայ և պուլկար

ընկերներու յիշատակին եղած հոգեհանգիստը և ժողովրդական ահազին ցոյցը, որ ամբողջ քաղաքն տակն ու վրայ ըրաւ, այնպէս որ թուրք հիւպատոսը ոստիկանութեան պաշտպանութեամբ միայն կրցաւ ծայրայեղութիւններէ ազատիլ:

Այս բոլորը կուսակցական տեսակէտով մեծ օգուտ ունեցան. ամբողջ Պուլկարիոյ մէջ Դաշնակցութեան վարկն ու ազդեցութիւնը բարձրացուցին. իսկ հայ հասարակութեան շահեցուցին զինքը հիւրասիրող ժողովուրդի ընդհանուր համակրութիւնը, այնպէս որ պուլկար և հայ շատ բարեկամացան իրարու հետ: Մեր ունեւոր և ամենէն աւելի պահանջողական տարրն անգամ գոհ էր այդ արդիւնքէն և Դաշնակցութեան համակիր կ'երեւէր, մանաւանդ այն ատեն երբ Սարաֆովի կոմիտէն ամէն ազգէ բռնի հանդանակութիւն կ'ընէր և մեր հայերը Դաշնակցութեան միջամտութեան շնորհիւ ազատեցան ծանր տուրքերէ ու խստութիւններէ:

Առժամանակեայի խիստ օգտակար գործերէն մէկն ալ եղաւ զինավարժական ու մարմնամարզական խումբերու հաստատումը: Պ. Ռոստոմ կրցաւ Մակ. կազմակերպութեան պատկանող քանի մը սպաներ համոզել որպէսզի մարմնամարզական ընկերութիւններու քով զինավարժական կամ նշանառութեան խումբեր ալ կազմուին: Գործը յաջողեցաւ և հայերը, որ մինչեւ այն ատեն իրենց վարժութիւնները պաղտնի կ'ընէին, կըրցան ազատ և սպաներու առաջնորդութեամբ արդիւնաւորապէս կատարել: Ֆիլիպէն տարածուելով՝ զինավարժական խումբեր կազմուեցան Պուլկարիոյ գրեթէ բոլոր քաղաքներու մէջ և ամէն տեղ փափաքող հայերը անխտիր մասնակցեցան: Այդ վարժութիւնները շարունակուեցան մինչև որ կառավարութիւնը արգիւնց: Քանի մը քաղաքներու մէջ հայերը վաղտնի կը շարունակեն իրենց վարժութիւնները: Այս վարժութիւնները բացի տեղական կազմակերպութեան տուած օգուտէն, երկրի ալ օգուտ բերին կուռղներ պատրաստելով: Մեր շրջանէն տասնի մօտ երկիր մտնող ընկերներ՝ բոլորն ալ նշանառութեան վարժութիւններ ըրած էին, Էտրիքի մօտ այնքան քաղութեամբ կուռղ ընկերները մեր ամենէն յաջողակ զինավարժներն էին. անոնցմէ մին՝ Օննիկ Թորոսեան՝ առաջին մրցանակի արժանացած էր, երբ Ֆիլիպէի մէջ պուլկար սպաները հանդէս մը սարքեցին նշանառութեան մէջ առաջին հանդիսացողները վարձատրելու համար:

Առժամանակեայ Կեդր. Կոմիտէն կանոնաւորապէս կազմուած և գործել սկսած է 1900ի սկիզբները, թէև Ֆիլիպէի կոմիտէին հաշիւներն ալ միասին առնելով՝ 1899 տարուայ Յունուար 1էն հիմնեալ կը համարուի: Առժամանակեայի օգտակարութիւնը բաւական կարեւոր է ոչ թէ գրամական մեծ հասոյթ ստեղծելուն համար (բան մը որ անհնար էր եթէ նկատի ունենանք իրեն տրուած աննպաստ պայմանները), այլ Պուլկար

իոյ մէջ դաշնակցական քայքայուած կազմակերպութիւնը վերահաստատելն ու անոր վարկը բարձրացնելն եղած է իր գլխաւոր գործը: Նկատելով որ այդ տեսակէտով բաւական յաջողած է, պաշտօնէ հրաժարեցաւ 1901 Դեկտ. 31ին, որպէսզի Երջանական Ժողովով օրինական Կեդր. Կոմիտէ մը կազմուի: Առժամանակեայ Կեդր. Կոմիտէն ներկայացուցած է հետեւեալ հաշուեկէտը իր ունեցած ելեւմուտքին համար, որմէ կը տեսնուի թէ նոյնքան ժամանակի համար նախորդ Կեդր. Կոմիտէի կրկինը հասոյթ ունեցած է:

Ընդհանուր մուտք

| | |
|--------------------------|---------|
| Անդամավճարներէ | 2620.70 |
| Կամաւոր նուէրներէ | 588.00 |
| Տիկնանց Եաքէ Ընկերութիւն | 493.60 |
| Լսարանի հասոյթ | 11.85 |
| Հանգանակութիւն արծաթ | 2736.05 |
| Հանգանակութիւն ոսկիք | 810.00 |

Ընդհ. գումար 7260.20

Ընդհանուր ելք

| | |
|-----------------------------|---------|
| Վիշապ զրկուած(3) | 2625.85 |
| Այլեւայլ ծախքեր | 564.95 |
| Չէնքերու տրուած | 154.70 |
| Մարդիչներու | 166.80 |
| Արեւելեան Բիւրոյին | 2736.05 |
| Արեւելեան Բիւրոյին ոսկի Փր. | 810.00 |
| Կոմիտէի մօտ պատրաստ | 201.85 |

Ընդհ. գումար 7260.20

Երջանական Ժողովը գումարուեցաւ Ֆիլիպէի մէջ, քննեց Առժամանակեայի հաշիւները, ծանօթացաւ շրջանի կազմակերպութեան վիճակին և արդիւնաւոր եղաւ մանաւանդ անով՝ որ կազմական շատ մը հարցեր որոշեց. իւրաքանչիւրը մօտէն ծանօթանալով Ֆիլիպէի կազմին ու գործունէութեան, վերադարձին նոր ուժ տուաւ իր տեղի կազմական գործերուն, որով կազմակերպութիւնը Երջանական Ժողովէն յետոյ աւելի ծաւալեցաւ ու զօրացաւ:

Նոր Կեդր. Կոմիտէի ընտրութիւնը եղաւ ձայներու մեծամասնութեամբ տեղի վրայ, այսինքն ընդունուեցաւ՝ որ շրջանի ամենէն զօրաւոր կոմիտէն վարէ Կեդր. Կոմիտէի պաշտօնը: Այդ ձեւ ընտրութեան համարիտ չէին միայն Վառնայի և Ֆիլիպէի պատգամաւորները, որոնք կ'ուզէին անձեր ընտրել այլեւայլ քաղաքներու մէջ: Ֆիլիպէն ըլլալով շրջանի ամենէն աւելի զօրաւոր կէտը, նշանակուեցաւ Կեդր. Կոմիտէի վայր և Առժամանակեայի անդամներն եղան նոր Կեդր. Կոմիտէի կազմողները:

Նորընտիր Կեդր. Կոմիտէն գործի սկսաւ 1902

Յունվ. 8ին ունենալով հինգ անդամ, որոնցմէ Պ. Մուրատ և Պ. Ռոստոմ վեց-եօթը ամիս յետոյ մեկնելով քաղաքէն՝ դադարեցան անդամակցութենէ. մնացեալ երեք անդամներէն մին ալ տեղական խնդիրներու պատճառաւ թէև հրաժարեցաւ, սակայն իր հրաժարականը չընդունուեցաւ: Այս երրորդ անդամը գործօն դեր մը չուզելով ստանձնել, գործերը ծանրացան միայն երկու անդամներուն վրայ. վերջերս միայն անոնց գործակից եղաւ Պ. Վարդոն: Այս Կեդր. Կոմիտէի թուլութեան միակ պատճառը անդամներուն պակսին էր և եթէ մնացեալները այդ վիճակի մէջ շարունակեցին պաշտօնավարել, որովհետեւ ուրիշ ճար չունէին: Իրենց ընկերները ժամանակի ընթացքին մէջ հետզհետէ միայն հրաժարեցան, իսկ Ռոստոմի մեկնումէն յետոյ անոր տեղ կարող ընկեր մը ունենալու յոյս տրուած էր, որը երբ չիրականացաւ, Երջանական Ժողով գումարել և նոր ընտրութիւն ընելու ձեռնարկուեցաւ, բան մը որ նոյնպէս իրենց կամքէն անկախ պատճառներով յետաձգուեցաւ և մինչև տարւոյն վերջը իրենք ստիպուեցան գործերը շարունակել: Սակայն հակառակ այս անպատեհութեանց Կեդր. Կոմիտէի անդամները կրցածին ըրած են շրջանի կազմակերպութիւնը աւելի զօրացնելու և Դաշնակցութեան վարկը բարձր պահելու համար:

Այս շրջանին, ամէն տեղ, կազմակերպութիւնը շատ զօրացաւ, այնպէս որ ոչ մի ժամանակ պալքանեան շրջանի կազմակերպութիւնը այնքան բազմաթիւ խումբեր և համակիրներ չէ ունեցած:

Ֆիլիպէի նախորդ շրջանի գոյութիւն ունեցող խումբերը իրենց թուով ու անդամներով կրկնապատկուեցան և շահուեցան բազմաթիւ նոր համակիրներ: Պետոյի և իր ընկերներու մահէն յետոյ(1) մինչև իսկ Դաշնակցութեան հակառակորդ եղող, Պետոյի և իր ընկերներու դէմ կուռած անձերն իսկ փոխուեցան և դաշնակցական դարձան: Այն տեսակ ժամանակ էր որ չէինք կրնար խիստ ըլլալ և ընտրութիւն ընել, այնպէս որ մեր երէկուան հակառակորդները յանկարծ դաշնակցական շարքերու մէջ մտցուցինք ու թէև շատ մը խնդիրներ ունեցանք, բայց գոհ ենք որ նոյնիսկ այդ խնդիրներու պատճառաւ մարդիկը զտուեցան, խումբերու կանոնադրութեան համար գործնական կեանքը մեզ շատ բան ցոյց տուաւ:

Ֆիլիպէն այժմ ունի եօթը արական խումբ և երկու իգական խումբ, մին Եաքէի ընկերութիւնը և միւսը օրիորդաց Վարժար. Թաշը: Երկուքն ալ իրենց տեսակին մէջ շրջանի միակ իգական խումբերն են. վերջերս միայն Սլիվէն անոնց օրինակին հետեւելով կազմակերպեցին իրենց օրիորդաց կանոնադրութիւնը: Այս խումբերէն զատ կան երգեցիկ և թատերասէր երկուսն խումբեր ևս, մարզական և զինավարժական խումբերը առայժմ գոյութիւն չունին, բայց վարժութեանց համար արտօնութիւն կամ հնարաւորութիւն ըլլալուն պէս կը կազ-

մուկն, որովհետեւ միւս խումբերու փափաքող անդամներն են որ այդ խումբերը կը կազմեն եւ իրենց մէջ կ'առնեն ուրիշ փափաքողներ եւս առանց կուսակցական խտրութեան: Խումբերէն զատ Ֆիլիպէի մէջ ունինք ժողովուրդի ամէն դասակարգի պատկանող բազմաթիւ համակիրներ, որոնք ոչ-նուազ կ'աւելցնեն մեր ուժն ու վարկը: Ֆիլիպէի մէջ ժողովրդական շատ մը հաստատութիւններ մեր ընկերները կը կառավարեն. Բնչպէս Գթասիրաց Եղբայրութեան ընթերցարանը, Աղքատախնամ Ընկերութիւնը: Ֆիլիպէի յեղափոխութեան տուած օժանդակութիւնը ամենէն աւելի եղած է:

Ֆիլիպէէն յետոյ Պուլկարիոյ մէջ ամենէն զօրաւոր կէտերը անոր մօտիկ եւ անոր ազդեցութիւնը կրող քաղաքները եղած են, հակառակ իրենց սակաւաթիւ հայութեան, այնպէս որ հարաւային Պուլկարիան հիւսիսայինէն զօրաւոր է: Սոֆիա ունի շուրջ խումբ բազմաթիւ անդամներով, տեղւոյն հայութեան մեծ մասը դաշնակցական է: Ֆիլիպէէն յետոյ՝ Ռուսնուքի հաւասար անդամավճար տուած է, չնայելով որ Ռուսնուքէն անհամեմատ քիչ հայութիւն կայ Սոֆիայի մէջ:

Պուրկազ գաւառացիներու մեծամասնութիւնը խմբական ձեւով կազմակերպուած է եւ Ֆիլիպէէն յետոյ ամենէն շատ անդամավճար տուած են: Մինչեւ օրս զինավարժական խումբ մը կայ, որու անդամներէն շատերը բազմիցս դիմած են Երկիր մտնելու համար: Պուրկազը շրջանիս կազմակերպութեան ամենէն զօրեղ կէտերէն մին է: Զէնքերու խնդիրը պատահելէն յետոյ լքուած էր, որեւէ կապ չէինք ուզեր պահել, մինչեւ որ ինքնաբերաբար դիմողները շատցան եւ մեր ընկերները մի քանի անգամ այցելելով՝ զանոնք կազմակերպեցին: Կարճ ժամանակի մէջ Պուրկազ այնքան զօրացաւ, որ մինչեւ Երկրի կուռողներ հասցուց եւ այսօր ալ շատեր կան պատրաստ՝ որոնք կը թախանձեն երթալ:

Սիլվէն Թէեւ փոքրիկ զիւղաքաղաք մըն է, բայց բաւական լաւ գործունէութիւն ունեցած է, չըջակայ կայարաններն ալ կազմակերպելով: Այստե՛ղ միայն կիները Եաքէի նման ընկերութիւն կրցած են հաստատել:

Ֆիլիպէէն մինչեւ Պուրկազ կայարանները աշխատող գաւառացիները մեծամասնութեամբ դաշնակցական են. Թէեւ շատ քիչ հայութիւն կայ, բայց բաւական նպաստած են յեղափոխութեան: Ամենէն աչքի զարնող կէտերն են Պորիսովկրատ, Գարա-Բուենար, Գայաճը, Սթրալճա:

Հիւսիսային Պուլկարիոյ ամենէն զօրաւոր կէտն է Ռուսնուք, ուր հայութիւնը համեմատաբար աւելի բարեկեցիկ է ու լաւ երիտասարդութիւն կայ, սակայն գործող մարդու պակասը տեղական կազմակերպութեան թոյլ մնալուն պատճառ եղած է: Ունի երեք խումբ. Սոմովիտ եւ Ճուրճովա ալ իրեն կը պատկանին. բայց եւ այնպէս Սոֆիայի չափ անդամավճար

միայն ունեցած է, եթէ չհաշուենք հանգանակութեամբ ստացուած գումարները:

Վառնան Պուլկարիոյ ամենէն հայաշատ քաղաքն է. ունինք շատ համակիրներ, սակայն խմբական ձեւով կազմակերպուած չեն եւ յեղափոխութեան գրեթէ ոչինչ չեն վճարած ինքնաբերաբար: Սպաթար խումբ մը կար որ այժմ քայքայուած է: Վառնան Դաշնակցութեան դրամ տուած է հանգանակութեամբ միայն, զոր Պ. Վարդը ըրած է եւ արդիւնքը ուղարկած Արեւմտեան Բիւրոյին: Վառնայի մէջ երիտասարդները կը պահեն ընթերցարան մը, որ դաշնակցական հաստատութիւն կը համարուի եւ դաշնակցական պրոպագանդային կը ծառայէ:

Շամլա շատ տկար մնացած է: Տեղական կամ անձնական կոիւններով իրարու դէմ լարուած մարդիկ իրենց թշնամութիւնները կուսակցական անուշով կը մղեն եւ 4-5 հոգի քանի մը անգամ խմբուելով ինքզինքնին կոմիտէ կոչելով դիմած են մեզի, բայց մենք զիրենք չենք ուզած ճանչնալ այդ անուշով, այլ իբր դաշնակցական ընկերներ ընդունած ենք: Ասոնք հակառակութեան համար «Գետո-Պուլկարացի» ընթերցարանը հիմնած են, որու համար կը մտնեն իրենց բոլոր միջոցները: Ամբողջ երկու տարուան մէջ 68 լեւ վճարած են եւ կը պարտին 50 լեւ՝ իրենց զրկուած եւ ծախուած «Կարմիր-Պաշ» տոմսակներու գինը:

Սիլիստրէի հայութեան մեծամասնութիւնը նոյնպէս մեզի համակիր է. խմբական կազմակերպութիւն չկայ. քանի մը դաշնակցական ընկերներ մէկ-երկու տարին անգամ մը Դաշնակցութեան օգտին ներկայացում կու տան: Մինչեւ այժմ ցոյց տրուած օժանդակութիւնը այդքան եղած է: Եթէ աշխատող ըլլայ կողմը կարելի է բաւական զօրացնել: Հոս ալ մեր դաշնակցական ընկերները կելրոնատեղի մը ունենալու համար սենեակ մը վարձած են եւ թերթեր ալ բերել կու տան, որով իրենց անդամավճարները իրենց համար կը ծախսեն:

Ռուսմանիոյ հետ մեր կանոնաւոր յարաբերութիւնները այս շրջանին միայն սկսած են, բայց եւ այնպէս կարգ մը քաղաքներ ուղղակի Արեւմտեան Բիւրոյի հետ յարաբերութիւն ունին: Ռուսմանիոյ ամենէն զօրաւոր կէտը Սուլինան է, ուր հայաստանցիներու մէջ խմբական կազմակերպութիւնը շատ զօրացած է: Ունին տասնեւմէկ խումբ, որոնց մէկը զինուորական է եւ առանձին իրաւունքներ վայելել ուզելուն համար գօտուութիւններու պատճառ եղած է: Պալքանեան շրջանի ամենէն շատ նիւթական օժանդակութիւն տուող տեղն է Սուլինան՝ Ֆիլիպէէն յետոյ:

Ռուսմանիոյ ընկերներու աշխատութեամբ խումբեր կազմուած են Պրայլա եւ Թուլլա քաղաքները:

Ռուսմանիոյ երկրորդ զօրաւոր կէտն է Գոստանցան, ուր տասնական հոգինոց եօթը խումբեր եւ ենթակոմիտէ մը կայ:

Պուքրէշը այս շրջանին կազմակերպուեցաւ, ունի չինէն Անդրանիկ խումբ մը, այժմ նոր խումբեր ալ կազմուելու վրայ են:

Շրջանիս կազմակերպութեան զարգացման աստիճանը այս է, որ Թէեւ նախկին վիճակէն անհամեմատ աւելի ծաւալած ու զօրացած է, սակայն տակաւին շատ հող կայ եղած կազմակերպական ուժը կրկնապատկելու եւ եռապատկելու: 1903 Դեկտ. 31ին հրատարակեցր. Կոմիտէն իրեն տրուած միջոցներով այսքան միայն կրցած է ընել եւ աւելին ընելու հնարաւորութիւն չունէր, որովհետեւ իրեն կը պակսէր հարկ եղածը:

Այս շրջանիս մէջ Կեդր. Կոմիտէն մակեդոնական կազմակերպութեան հետ իր բարեկամական յարաբերութիւնները առաջուն պէս պահած է, միայն Թէ ուրովհետեւ անոնք երկպառակեցան եւ մէկզմէկու դէմ թշնամութիւններ կ'ընէին, Կոմիտէն լաւ համարեց այս կամ այն կողմին յարած չերեւալու համար քիչ մը վերապահութեամբ վարուիլ եւ աւելի շատ իր յարաբերութիւնները Սարաֆովականներու կամ երկրի կազմակերպութեան վերաբերող անձերու հետ պահել: Այս շրջանին շատ չունեցանք մակեդոնացոց հետ միասին հանդէսներ կամ ուրիշ գործեր, որովհետեւ կառավարութիւնը ջնջած էր եւ անոնք պաշտօնական կազմակերպութիւն չունէին: Գործիչներու հետ էին մեր տեսակցութիւնները եւ Արեւմտեան Բիւրոն գիտէ արդէն, Թէ անոնց ներքին կազմակերպութեան մարդիկ առաջուց մեզի իմացուցին իրենց ապստամբութիւնը եւ մեզմէ Խոխիւնի շրջանին համար հայ ընկերներ ալ խնդրեցին, որոնց սակայն վերջը պէտք չունեցան, որովհետեւ այդ շրջանի համար իրենց ծրագրածը չիրականացաւ:

Զինավարժական խմբերն ալ կառավարական հրամանաւ կազմալուծուած ըլլալով, նշանաուութեան վարժութիւններ չկրցանք կատարել տալ բացի մի քանի տեղերէ, Պուրկազ եւ կայարանները, ուր վարժութիւնները գաղտնի կ'ըլլային:

Պալք. Կեդր. Կոմիտէն ճիշդ երկու տարի պաշտօնավարելէ յետոյ, յաջողելով Շրջանական Ժողով գումարել Վառնայի մէջ, կը դադարի պաշտօնավարելէ:

Ինչպէս կը տեսնուի մեր հաշուեկշիռէն(4)՝ Կեդր. Կոմիտէի ձեռքը հասած գումարը երկու տարուան շրջանի մէջ եղած է 7796 լ. 10 արծաթ ֆրանք եւ 4189 ոսկի ֆրանք, առանց հաշուելու այլեւայլ տեղերէ ուղղակի Արեւմտեան Բիւրոյին ուղարկուածները, կամ պ. Ռոստոմի եւ պ. Վարդի ըրած հանգանակութիւնները՝ որոնք զրկուած են ուղղակի Բիւրոյին, եւ որոնց դումարը 3500-4000ի կը հասնի:

Եկամուտի ամենէն խոշոր տոկոսը խումբերու ամսավճարներն են եղած: Հանգանակութեան զատ ոչ մի տեղ ուրիշ տեսակ հասոյթ եղած չէ բացի Ֆիլիպէէ,

ուր ներկայացուէ, լսարանէ եւ նուիրատուութեամբ ալ 1500 ֆրանքէ աւելի մուտք եղած է:

Գործնական կեանքը համոզած է մեզ, հաշուեկշիւներն ալ արդէն պարզ ցոյց կու տան, Թէ կազմակերպութեան համար շատ շահաւոր է ամէն տեղի մէջ խմբական ձեւով համակիրները ուղղակի դաշնակցական շարքերու մէջ առնել: Ինչպէս ըսինք, մեր շրջանի մէջ խումբերու անդամավճարները հասոյթի մեծ տոկոսը կը կազմեն, ուրեմն պէտք է աւելի ուժ տալ եւ բազմապատկել խումբերը՝ որպէսզի ժողովուրդը ինքնաբերաբար եւ սիրով վճարել վարժուի: Հանգանակութեամբ, ներկայացումով եղած հասոյթները պատահական բաներ են: Խումբերու շատութիւնը նիւթակալութիւնը, որքան ալ համակիր ըլլայ մեզի, կրնայ չուտով ազդեցութիւններու ենթարկուիլ եւ փոխուիլ, չըփոխուած սլարագային ալ մեծ օգուտ մը չունի, ո՛չ դրամ կը վճարէ, ոչ ալ յեղափոխական պրոպագանդայով կը զբաղի, մինչդեռ՝ քանի որդէն դաշնակցական կը համարուին խումբի անդամները, պարտականութիւն կը զգան դործելու, կազմակերպութեան նիւթապէս ու բարոյապէս օժանդակելու: Անոնք դժուար կ'ենթարկուին ազդեցութիւններու եւ դժուար կը փոխուին, իսկ կազմակերպական գործի մէջ հետզհետէ վարժուելով՝ ընդունակները գործի մէջ հետզհետէ վարժուելով՝ ընդունակները գործի մէջ հետզհետէ Զէզոք եւ համակիր հասարակութեան դժուար Թէ նոյնքան լաւ գործիչներ դուրս գան:

Այս եւ ասոնց նման կարգ մը նկատումներով՝ Կեդր. Կոմիտէն զարկ տուած է շրջանիս մէջ խմբական կազմակերպութեան զօրանալուն, եւ նկատի ունենալով՝ Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմնի Ժողովին մէկ յօդուածը, որով առանձին պահանջներ կը դրուէր արտասահմանի մէջ կոմիտէ կոչուած մարմիններու վրայ, Կեդր. Կոմիտէն շրջանիս մէջ ոչ մի տեղ կոմիտէ չէր որոշած, բացի ամենէն աւելի զօրաւոր տեղերէն՝ Սուլինա, Գոստանցա, Ռուսնուք, Պուրկազ՝ որոնք ենթակոմիտէ կամ մասնաճիւղ կը կոչուէին: Ամէն քաղաքի մէջ խմբապետական Ժողովներ կային, որոնք իրենց տեղական գործերը կը կառավարէին: Այդ Ժողովները աւելի արդիւնաւոր եղան, որովհետեւ խմբապետներով՝ խումբերը իրենք էին տեղական ամէն գործ կարգադրողը եւ մէկզմէկու խթան կ'ըլլային, չունէին իրենց գլխուն հսկիչ եւ կարգադրիչ կոմիտէ կոչուած առանձին մարմինը, որմէ սպասէին ամէն բան: Փորձը ցոյց տուած է Թէ, ուր որ կոմիտէներ կային, հոն կազմը թոյլ եղած է, խումբերու եւ կոմիտէին միջեւ անհամաձայնութիւններ ծագած են, իսկ ընդհակառակը, ուր որ գործերը կարգադրուած են խմբապետական Ժողովով, հոն կազմը աւելի զօրացած է եւ քիչ խնդիրներ պատահած են:

Կեդր. Կոմիտէն սակայն հին դրութիւնը չէ կրցած բուրդովին փոխել, որովհետեւ որոշ կանոնադրութիւն

մը կամ ծրագիր մը չունէր իր ձեռքը: Եստ անգիր Հին կոմիտէի անդամներ շարունակած են իրենց պաշտօնը նոյն անունով, նոյնիսկ ուզած են կնիք ունենալ. տեղեր ալ եղած են, ուր կոմիտէ անունը պահած են մէկ երկու հոգի, առանց խումբ կամ հետեւորդ ունենալու. ուրիշ տեղեր նոյնիսկ քանի մը հոգի միանալով առաջին անգամով ինքզինքնին կոմիտէ հռչակած՝ կը դիմեն մեզ ընկալազիր, պաշտօնական թուղթ եւայլն ուղղելու, եւ ինչպէս շուտով կը կազմուին այդ տեսակ զկոմիտէները, նոյնպէս ալ շուտով կը լուծուին:

Այս բոլոր անպատեհութեանց առաջը առնելու համար անհրաժեշտ է ամէն քաղաքի տեղական գործերը խմբապետական ժողովներու ձգել եւ այդպէսով խումբերը գործօն վիճակի մէջ դնել. միայն շատ բազմաթիւ կամ ստուար անդամներով խումբեր ունեցող քաղաքներու մէջ առանձին մարմին մը կամ կոմիտէ մը հաստատել: Բայց ամէն բանէ առաջ պէտք է ճշդել արտասահմանի մէջ կոմիտէի կազմութեան պայմանները եւ կոմիտէի գործունէութեան կանոնադրութիւն մը գծել, որպէսզի թիւրիմացութիւնները վերանան:

Երջանիս մէջ կազմակերպութիւնը զօրացնելու համար անհրաժեշտ պահանջներէն մէկն ալ դաշնակցական գործիչ ընկեր մը ունենալն է: Կեդր. կոմիտէ մը որքան կարող եւ աշխատող անձերէ կազմուած ըլլայ, երբ անոր անդամներէն ոչ ոք իր տեղէն չի կրնար ելլել՝ ուզուած քաղաքը երթալու, գործերուն հոգ տանելու համար, պէտք եղած օգուտը չի կրնար յառաջացնել: Կեդր. կոմիտէի անդամները թղթակցութեամբ պիտի վարեն գործերը եւ բաւականանան միայն իրենց քաղաքի կազմին ուժ տալով: Այժմ շրջանիս մէջ ամէն տեղ հող պատրաստուած է արդէն, շրջուն գործիչ ընկեր մը կրնայ կազմակերպութիւնը կրկնապէս եւ աւելի զօրացնել: Ամէն տեղէ պահանջ կայ արդէն եւ Երջանական ժողովի պատգամաւորներն ալ գրեթէ ամէնքն ալ նոյն պահանջը դրին: Երջուն գործիչ ընկերի մը պէտքը շատ զգալի է 1) Երջանի կազմակերպութիւնը զօրացնելու համար, 2) Մակեդոնական կազմակերպութեան հետ յարաբերութիւն պահելու համար, 3) Պուսոյ եւ Եւր. Թուրքիոյ գործերը վարելու համար: Այդ երեք կէտերն ալ կարեւոր են եւ այդ բոլորին գոհացում տալու համար՝ անհրաժեշտ է որ դուրսէն եւ բաւական հեղինակաւոր դաշնակցական ընկեր մը ըլլայ, կարենայ շրջանիս մտաւորականութիւնը գոհացնող ուժ ըլլալ եւ յեղափոխական պրոպագանտը առաջ տանիլ, եւ երբորդ՝ Երկրի գործը վարելու պատասխանատուութիւնը ստանձնելու կարող ըլլայ:

Դ. — ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՅԻՐՈՊԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆՆԻ ՄԱՍԻՆ

Բժ. Յ. ԼՅԱՆՍ ԵՒ ԻԽԻԿԵՄԱԹԻ ՄԵԾԱՊԷՆ ԶԱՆԿԻԱԿԱՅԻՔԸ ԿԱՆ ՄԱՅԷ ԵՐԻ:

Մեր հարցը այս պահուս կը դտնուի ճշմարտամային կացութեան մը մէջ եւ հետեւեալը այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է ունենալ պարզ ու յստակ ծրագիր մը, որ մեթոտիկ ու սիստեմատիկ կերպով գործադրուի: Այս ծրագիրը երկար տարիներու փորձառութենէ մը յետոյ պէտք է ունենայ մեր առանձնաշատուկ պայմաններուն համապատասխան ուղղութիւն մը, բոլորովին անկախ միջազգային կամ օտար զանազան գաղափարներու ազդեցութենէն:

Ամէն բանէ առաջ անհրաժեշտ է ի մի հաւաքել մեր ունեցած բոլոր կենսունակ ուժերը, որքան ալ որ անոնք իրարմէ տարբերին երկրորդական զանազանութիւններով:

Այս անհաւասար կուտին մէջ հարկաւոր է նախ ճշգրտապէս սահմանել մէկ կողմէ մեր բարեկամներն ու թշնամիները եւ միւս կողմէ մեր մօտաւոր յաջողութեան պայմանները: Այս սահմանումը իբր հիմք պիտի ծառայէ մեր կազմակերպութեան եւ ընդհանուր գործունէութեան:

Ինքնին հասկանալի է որ մենք կը հետապնդենք Հայ ժողովուրդի քաղաքական եւ տնտեսական ազատագրումը եւ ոչ թէ Հայկական Թագաւորութեան վերականգնումը, որ քաղաքական ներկայ պայմաններու մէջ բացարձակապէս ցնորք է: Այն բոլոր Հայերը եւ օտարները, որոնք անկեղծօրէն կ'ընդունին այս ծրագիրը եւ կ'օժանդակեն անոր իրադրութեան՝ մեր բարեկամներն են, ինչ կուսակցութեան ալ որ պատկանին եւ ինչ գաղափարներ ալ որ դաւանին:

Այս ընդհանուր գաղափարներով էր որ 1900 թուականին սկսանք Եւրոպայի մէջ մեր դատին համար պրոպագանդ ընել:

Մինչեւ 1900 թուականը Պրանսայի մէջ Հայերու նկատմամբ միմիայն մասնաւոր համակրութիւններ կը յայտնուէին: Անգլիոյ մէջ ալ Գլատատոնի եւ իր բարեկամներու կողմէ եղած ջանքերը ապարդիւն մնացին գլխաւորաբար Ռուսաստանի հակառակութեան եւ Հանոտոյի ստոր քաղաքականութեան պատճառով, որով անգլիական կառավարութիւնը՝ հակառակ իր բարեկամեցողութեան առանձին մնաց եւ ստիպուեցաւ նահանջել: Միւս կողմէ Եւրոպայի մէջ Հասարակական կարծիք գոյութիւն չունէր մեզի համար, որովհետեւ մամուլը՝ մասամբ կաշառակերութեամբ եւ մասամբ անտարբերութեամբ Հասարակութիւնը տգէտ կը պահէր Հայաստանի մէջ խաղցուած արիւնալի տուածին: Մեր հարցին լուծումը կախուած է երկու ազգայններու կապակցութենէն, որոնցմէ մէկը Երկրի մէջ ներքին

(1) Ռուսում եւ իր կնիք:
 (2) Կ'ակնարկուի Պետրոս Սերեմեմաթի եւ իր ընկերներուն:
 (3) Պալես:
 (4) Տեղեկագրիմ կցուած է մանրամասն հաշուեկշիռ, զոր գտնց կ'ընենք:

յուզումն է, իսկ միւսը Եւրոպայի համակրութիւնը: Մեր տուած հարիւր հազարաւոր զոհերը ապարդիւն մնացին, որովհետեւ այն միջոցին կը պակսէր այս երկու անհրաժեշտ ազգայններէն մէկը, Եւրոպայի համակրութիւնը: Միայն կրօնական զգացումներէ դրդուած մարդասիրական շարժում մը կար Գերմանիոյ, Դանըմարկայի, մասամբ Պրանսայի եւ Եւրոպական միւս երկիրներուն մէջ, որ արտայայտուեցաւ դրամական նպաստներով, որբանոցներու բացումով եւայլն: Իսկ զանազան երկիրներու մէջ մեր դատին համակիր գործիչներու ջանքերը պէտք եղած արդիւնքը չտուին, որովհետեւ գոյութիւն չունէր քաղաքական պրոպագանդի կազմակերպուած սիստեմ մը, որ այդ ցրուած ուժերը միացնէր եւ օգտակար դարձնէր: Վստահօրէն կարելի է ըսել, որ եթէ այդպիսի կազմակերպեալ պրոպագանդ մը գոյութիւն ունենար, կոտորածները այդչափ ահուկի համեմատութիւն չէին առնար եւ կամ գէթ քանի մը տարրական իրաւունքներ կրնայինք ձեռք բերել անոնց դեմով:

Դժբախտաբար բաւական ուշ, միայն 1900 թուականին հիմնուեցաւ այդ կազմակերպութիւնը(1), որ հետզհետէ ընդարձակուելով եւ սիստեմատիկ ուղղութիւն մը ստանալով՝ համեմատաբար կարճ ժամանակի մէջ փայլուն արդիւնքներ տուաւ: Եւ հակառակ Եւրոպայի դիւանագիտական շահերուն մեր նկատմամբ ստացած հետզհետէ աննպաստ հանգամանքին ու չնայելով Երկրի մէջ յեղափոխական գործունէութեան տկարացումին եւ ներքին յուզումներու նուազումին՝ այս Հայաստան պրոպագանդան այսօր կը տալիսպեցնէ դիւանագիտութիւնը եւ մտածել կը ստիպէ Հասարակութիւնը: Եւ հոս պէտք չէ մոռնալ որ այս միջոցին մէջ զանազան ուրիշ խնդիրներ կու գային դժուարացնել մեր պրոպագանդը, զոր օրինակ՝ Դրէյֆուսի խնդիրը Պրանսայի մէջ եւ բօէրական պատերազմը Անգլիոյ մէջ: Միւս կողմէ ստիպուած էինք կուտիլ ուրիշ անխորժ դժուարութիւններու դէմ, որոնց հեղինակները նոյնիսկ մեր՝ Հայերու մէջ պէտք է փնտռել: Փարիզ Հաստատուած քանի մը Հայեր, որոնք սկիզբէն ի վեր ինքզինքնին իբր Հայ ժողովուրդի ներկայացուցիչները ցոյց տալով Եւրոպացիներուն՝ իրենց տեսակ մը մենաշնորհը կը կարծէին պրոպագանդի գործը(2), չվարանեցան ամենաստոր միջոցներու դիմել մեր սկզբած ձեռնարկութիւնը դժուարացնելու համար: Եւրոպացի գործիչներու մտքերը կը պղտորէին Հ. Յ. Դաշնակցութեան նկատմամբ, զայն ներկայացնելով իբրեւ ռուսական յորժակալներու կազմակերպութիւն մը: Բարբախտաբար այն անձնաւորութիւնը, որուն Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ յանձնուած էր այս գործը կազմակերպելու պաշտօնը(3), տասը տարուան բաժանումէ մը յետոյ իսկ իր նախկին համալսարանական ընկերներուն մէջ կը գտնէր մարդիկ, որոնք իրենց բոլոր յարաբերութիւնները անոր տրամադրութեանը տակ

կը դնէին՝ հետզհետէ գործին շուրջը հաւաքելու առաջնակարգ դիրքի տէր անձնաւորութիւններ: Երախտագիրտութեան պարտք ունինք յիշելու այդ մարդերէն մէկը, որ դժբախտաբար մեռաւ կանխահաս մահով մը: Այդ մարդը բժիշկ եւ նշանաւոր գործիչ Ժակլարն է, որ շատ դիւրացուց մեր մուտքը ականաւոր անձնաւորութեանց շրջանին մէջ: Դարձեալ այդ նախկին ընկերներու ավակցութեան շնորհիւ էր, որ 1900ի Փարիզի ցուցահանդէսին կրցանք մեր հարցը արծարծել տալ սոցիալիստական, խաղաղութեան եւ ուրիշ համատեղողներու մէջ: Այդ միջոցին արդէն դրուած էր մեր դատին նուիրուած Պրանսերէն թերթի մը խնդիրը: Հոս շատ երկար պիտի ըլլար թուել այն բազմատեսակ դժուարութիւններն ու արդեւիքները, որոնց կը բախէր այս անհրաժեշտ գաղափարին իրագործումը. երկար ջանքերէ եւ բանակցութիւններէ ետքը վերջապէս նոյն տարուան Նոյեմբեր ամսուն լոյս տեսաւ առաջին թիւը, որ շատ լաւ ընդունելութիւն գտաւ Եւրոպական ամենալուրջ թերթերու կողմէ, ինչպէս՝ Temps, Times, Frankfurter Zeitung եւն.: Թուրքիոյ ամէն կողմերէն մեր ընկերներու զրկած թղթակցութիւնները շատ բարձրացուցին այս թերթին արժէքն ու նշանակութիւնը եւ զայն բողոքի պաշտօնական ու վաւերազրական օրգանը ըրին ոչ միայն Հայոց, այլեւ Թուրքիոյ բոլոր Հարստահարուած եւ իրաւազուրկ ժողովուրդներուն:

Pro Armeniaի տարածումը առջի օրէն կարելի եղածին չափ դիւրացնելու համար, սկիզբը անոր հրատարակութիւնը յանձնուեցաւ Փարիզի Հրատարակչական ընկերութիւններէն մէկուն, սակայն անկաշխարհ պրոպագանդի գործը ամէն մասամբ անկախութիւն պահանջելով՝ հարկ տեսնուեցաւ մասնաւոր խմբաբաժնու մը բանալ: Մանաւանդ որ կարճ միջոցի մէջ արդէն յաջողած էինք ձեռք բերել մեր փափաքած երկու գլխաւոր առաւելութիւնները. ա) թերթին ընդարձակ տարածումը, բ) աժան գինը:

Այսօր Pro Armenia կը հրատարակուի 2000 օրինակ, ունի 200-300 բաժանորդ, իսկ մնացածը ձրի կը զրկուի մամուլին, գրադարաններուն, քաղաքական գործիչներուն եւն.: Տարեկան ծախքն է 8000-10,000 Փր.:

Pro Armeniaի հիմնարկութեամբ տեսակ մը կեդրոն ստեղծուեցաւ Եւրոպայի մէջ Հայաստան պրոպագանդի, եւ սիստեմատիկ ուղղութեամբ գործը օրէ օր ընդարձակուելով՝ մեծ յաջողութիւններ գտաւ: Անկարելի ըլլալով այս համառօտ տեղեկագրի մէջ պատմել այդ բոլոր յաջողութիւնները իրենց մանրամասնութիւններով՝ մենք կը բաւականանք յիշատակելով դլխաւոր դէպքերը.—

ա) 1901ին Գլատոյի խաղաղութեան համաժողովի որոշումը:
 բ) 1901 Նոյ. 4ի Հարցապնդումը Պրանսական Երեսփոխանական ժողովին մէջ:

գ) 1901 Դեկտ. 7՝ Հոլանդայի երեսփ. ժողովի մէջ, 1902 Յունի. 20՝ Փրանսական ծերակոյտի եւ երեսփ. ժողովի մէջ: Նոյն միջոցներուն՝ գերմանական առաջատարի մէջ:

դ) Նոյն թուականի Փետր.ին միտինգներ Փարիզ եւ Ժընև:

ե) 1902 Մարտին Մոնակոյի խաղաղութեան համաժողովի որոշումը:

զ) Դանքարկացի հայաստանցի առաջարկը Եւրոպայի բոլոր հայաստանցի մասնակցութեամբ միջազգային համաժողով մը գումարելու: Այս առաջարկը անգլիացի քանի մը հայաստանցի Փարիզ այցելութեան առթիւ տրուած հասցեւորութի մը մէջ ընդունուելով՝ որոշուեցաւ Բրիւսէլի համաժողովը:

է) Այս համաժողովի առթիւ Անգլիա այցելութեան նորոգեց եւ ամրապնդեց մեր յարաբերութիւնները տեղին հայաստանցի հետ:

ը) Բերլին կազմակերպուեցաւ հայաստանցի մասնախումբ մը:

թ) Բրիւսէլի համաժողովին առթիւ, որուն բնականաբար չէին կրնար մեր բոլոր համակիրները մասնակցել, հազարաւոր ստորագրութիւններ հաւաքուեցան զանազան երկիրներու մէջ:

Բրիւսէլի համաժողովին մէջ երկու տարբեր ուղղութիւններ յայտնուեցան. մէկը՝ մարդասիրական, որուն գլխաւոր ներկայացուցիչներն էին զանքարկացիները, միւսը քաղաքական, զոր գլխաւորաբար Փրանսացիները կը պաշտպանէին: Այդ համաժողովին մէջ կը պահպանէին Անգլիոյ եւ Գերմանիոյ ներկայացուցիչները: Անգլիացիները խրտչեցնողը հաւանորէն Դաշնակցութեան հակառակորդներուն կողմէ այն շարժումը տարածանութիւններն էին՝ թէ Pro Armenia դաշնակցական օրգան մըն է. իսկ գերմանացիք չեկան, թերեւս դրամ եւ ժամանակ չվատնելու համար:

Համաժողովի կողմէ որոշուած միջազգային մասնախումբի կազմութիւնը անկարելի եղաւ, այն պատճառով որ նշանաւոր հայաստանցիները ատոր համար անհրաժեշտ եղած ժամանակը չունէին. հետեւաբար դարձեալ գործը մնաց Pro Armeniaի շուրջը խմբուած անձնաւորութեանց վրայ:

ժ) 1902ի վերջերը մակեդոնական խնդիրը օրուան հարց դառնալով, մենք առիթէն օգտուեցանք մեր խնդիրը անոր հետ կապելով դարձեալ հրապարակ հանելու:

1903 Փետր. 3ին Փարիզ Շատո Դոյի թատրոնին մէջ գումարուեցաւ մեծ միտինգ մը, ուր զանազան կուսակցութեանց պատկանող նշանաւոր գործիչներ խօսեցան ի նպատակ հայաստանի եւ Մակեդոնիայի, եւ որ մեծ տպաւորութիւն առաջ բերաւ ամբողջ Եւրոպայի մէջ:

Այս միտինգէն յետոյ Պրեսանսէ հարցապնդում մը

ըրաւ երեսփ. ժողովին մէջ եւ միտինգներ տեղի ունեցան Բրիւսէլ, Ժընև, Բերլին:

Անգլիոյ մէջ միտինգներ տեղի չունեցան, որովհետեւ մեր անգլիացի բարեկամները այն կարծիքը յայտնեցին, թէ մեզի աւելի նպատակաւոր պիտի ըլլար եթէ առայժմ Անգլիան չէզոք մնար, քաղաքական կասկածներու տեղի չտալու համար եւ երբ միւս երկիրներու հասարակաց կարծիքը արդէն պատրաստուած ըլլար՝ այն ժամանակ աւելի նպատակաւոր պիտի ըլլար Անգլիոյ մէջ ալ ժողովուրդի ձայնը բարձրացնել:

Ճա) Մինչեւ այն ատեն հայաստան շարժումի ոչ մէկ փորձ չէր եղած Իտալիոյ մէջ: 1903 Ապրիլին հոն ալ գործի սկսանք եւ քանի մը ամսուան մէջ կարելի եղաւ մեծ միտինգներ կազմակերպել Միլանի, Հոմի, Ճենովայի եւ ուրիշ քաղաքներու մէջ եւ ամբողջ իտալական մամուլը առանց բացառութեան մեծ համակրութեամբ վերաբերուեցաւ:

Ծբ) Այսպէս այս երկու երկիրներու հանրային կարծիքը պատրաստել ետքը կը մնար ընդհանուր ուժերը միացնելու փորձ մը ընել: Այս նպատակով Անգլիա գնացի եւ այնտեղի մեր բարեկամները հաւանութիւն յայտնեցին վալ Փարիզ եւ Փրանսացի ու իտալացի հայաստանցի հետ խորհրդակցութիւն մը ունենալ: Այս խորհրդակցութիւնը տեղի ունեցաւ Հոկտ. 25ին և միեւնոյն ժամանակ գումարուեցաւ նաեւ մեծ միտինգ մը: Եւ այս հաւաքումն ու միտինգը մեծ նշանակութիւն ունեցան ոչ միայն հասարակական այլեւ դիւանագիտական տեսակէտէ, որովհետեւ առաջին անգամ ըլլալով յայտնուեցաւ Եւրոպայի երեք ազատական երկիրներու համերաշխ գործունէութեան պաշտպարը՝ արեւելեան խնդրին մէջ:

Այժմ Ֆրանսայի մէջ «Ligue des droits de l'homme» ընկերութեան նախաձեռնութեամբ, որու նախագահն է Պրեսանսէ, ջանքեր կ'ըլլան բոլոր նահանգներէ ներկայացուցիչներ հաւաքելով Փարիզ մեծ ժողով մը գումարել ի նպատակ հայաստանի եւ Մակեդոնիայի Փրանսական կառավարութեան վրայ հզորապէս ազդելու համար: Նոյն բանը կը պատրաստուի նաեւ Իտալիոյ եւ Անգլիոյ մէջ եւ անգլիացի հայաստանցիները մտադիր են Փրանսացի հայաստանցիները հրաւիրել Լոնդոն՝ խորհրդակցութեան եւ հաւաքական գործունէութեան համար:

Այսպէս ուրեմն երեք տարուան միջոցին մէջ կըրցանք գլուխ հանել այն կարեւոր գործը, որ մեր դատին յաջողութեան գլխաւոր ազդակներէն մէկն է եւ որ դժբախտաբար ասկէ առաջ բոլորովին անտեսուած էր մեր կողմէ: Այսօր կրնանք վստահօրէն ըսել, թէ մեր դատին համար արդէն երաշխաւորուած է Եւրոպայի երեք ազատական մեծ երկիրներու հանրային կարծիքին ուժը: Կը մնայ միայն այդ ուժէն օգուտ քաղել եւ այդ կարելի պիտի ըլլայ միայն այն պարագային, երբ յեղափոխական զօրաւոր շարժումներ կ'ը-

կին օրուան խնդիր դարձնեն մեր հարցը եւ մեր եւրոպացի բարեկամներուն առիթ ընծայեն խնդրին այժմէութենէն օգտուելով հրապարակ իջնելու:

Եւրոպական պրոպագանդի մասին այս հակիրճ գիտցումը փակելէ առաջ՝ շնորհակալութեան մեծ պարտք մը ունինք հասուցանելու մասնաւորապէս Քիլառին, որ սկիզբէն մինչեւ այսօր անձնուիրաբար կը խմբագրէ Pro Armeniaն եւ գրեթէ իր ամբողջ ժամանակը մեր դատին նուիրած՝ անխնայ եռանդով կ'աշխատի մեր ազատագրութեան գործին:

Ինչպէս նաեւ Պրեսանսէին, որ թէ՛ խօսքով, թէ՛ գրքով եւ թէ՛ իր խորհուրդներով հզոր աջակից մը եղաւ մեր գործին: Եւ վերջապէս Ժոզէպին, Անատոլ Ֆրանսին եւ միւս այն բոլոր ականաւոր անձնաւորութեանց, որոնք ամէն առթիւ իրենց հեղինակաւոր ձայնը բարձրացուցին մեր դատին պաշտպանութեանը համար:

Յ. ԼՈՒՌՈՒ ՄԵԼԻՔԵԱՆ(4)

23 Յունուար 1904

- (1) Արմատ. Բիրայի կազմակերպած «Եւրոպական Փրոֆակտ» գործը:
- (2) Կ'ակնարկուի Արշակ Զոպանսիի եւ իր ջանք մը համախմբում:
- (3) Իմքը՝ բժ. Յ. Լառու Մելիքեանը, Հ. Յ. Դ. Եւրոպական Փրոֆակտի գլխաւոր գործիչը:
- (4) Դաշնակցութեան ամենաինքն գործիչներէն է բժիշկ Յ. Լառու (կամ Լորիս) Մելիքեանը, մասնակցած 1890ի Հիմնադիր ժողովին եւ անգամակցած Հ. Յ. Դ. անդամիկ ներքինի: Կարգաւ իր մասին՝ «Եւրոպական Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 121-122:

Ե. — ՀԻՒՍԻՍԱԿԵՐՏԻ (ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ) Հ. Յ. ԴԱՇՆ. ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Մարուստանի(1) ուսանողական ժողովներն ընդհանրապէս եւ Հիւսիսակերտինը մասնաւորապէս շարունակում են մնալ դաշնակցական, եւ հայ-յեղափոխական գործին ունեցած մասնակցութեան համար ինչպէս միշտ, այժմ էլ ունին 3 ընտրուած անդամից բաղկացած «յեղափոխական կոմիտէ»: Վերջին 5 տարիներ ընդհանուր լքման եւ բէկեցիայի(2) ալիքները հասնելով եւ Հիւսիսակերտի ուսանողութեան, առաջ բերին ընդհանուր յոռետեսութիւն:

Շարունակելով իր նիւթական աջակցութիւնը, տարեկան 150-200 ր. նպաստներով, Հիւսիսակերտի ուսանողութեան պակասում էր դէպի գործն անհրաժեշտ հաւատը, որ անհրաժեշտ է կենդանի գործի թարմ կարապետներին նախաձեռնութիւն եւ ոգևորութիւն ներշնչելու համար: Լինելով աւելի թէրթատիկ(3) մարտնչողներ քան այդ թէրթատիկ(3) մարմնացումն տուող գործիչներ, ուսանողութիւնը թուում էր թ. 95ի սարսափներէ ազդեցութեան տակ կորցրել

էր իրա խառնուածքին եւ դիրքին համապատասխան գլխաւոր յենարանը եւ խախտուած համոզմունքով մինչեւ վերջին ժամանակներս ներկայացնում էր միանկերպարան դրութիւն, որ եւ իրաւունք էր առկա թէ՛ կովկասեան եւ թէ՛ արտասահմանեան գործիչներին մեղադրել նրան թուլամորթութեան, յետամտացութեան եւ գաղափարից զուրկ լինելու մէջ: Սակայն՝ որ ուսանողութիւնը, չնայելով արտաքին անտարբերութեան, դեռ պահում էր իր մէջ կուսակցութեան, բայց մի կը փնտռող եռանդ, դրան զուցէ ապացոյց լինեն բազմաթիւ հանգամանքներ, որոնցից այստեղ կը յիշեմ մի քանիսները. — այսպէս օր.՝ սոցիալ — դեմոկրատիական շարժումը, որ ուսանողութեան ազգային ոգևորութեան շրջանում ոչ մի յաջողութիւն չէր գրանցում, վերջին բէկեցիայի(2) ժամանակ գտաւ բաւական պարարտ հող՝ ուսանողութեան աւելի արմատական խաւերում: Ոչ ոքի համար գաղտնիք չէ եւ այն հանգամանքը, որ հայ ուսանողութիւնը մերժելով հանդերձ պաշտօնապէս միանալ ուսուսանողական շարժումներին, հայ ուսանողներ խոշոր մեծամասնութիւնը՝ թերեւս իր բողոքող բնազդներին եւ կուսակցութեան եռանդին որեւէ գործադրութիւն տալու համար՝ ունենում է զգալի մասնակցութիւն համալսարանական շարժումներին:

Մրան պակաս ապացոյց չէ եւ այն հանգամանքը, որ մինչդեռ Հիւսիսակերտի քաղաքացիներէ դաշնակցական կազմակերպութիւնը բէկեցիայի ազդեցութեան տակ այնպէս չբացաւ, որ իր գոյութեան եւ ոչ մի հետք չթողց, ուսանողութիւնը շարունակում է մինչեւ այժմ էլ թէեւ թերի, բայց եւ այնպէս իր գոյութիւնը զգացնել տալ հաւատալիորոյս մարմինն մատչելի շարժումով. եւ պէտք է ուրախանալ այն ամէն մի երեւոյթի համար, որ ուսանողութեան վերակենդանանալու նշան կարող է համարուել: Այս տեսակէտից մեծ խթան էին վերջին կովկասեան շարժումները, որոնք անկասկած սթափեցրին ուսանողութեան զգայուն մասը եւ գործելու հեռանկարներ բացին նրա առաջ:

Ի նկատի ունենալով վերակենդանանալու և սթափման նշանները, պէտք է ամէն կերպ աջակցել ուսանողութեան՝ տալով նրանց իրանց ոյժերին համապատասխան կենդանի գործ եւ առաջարկութիւններ, եւ մաստակարարելով գլխաւորապէս հայ յեղափոխական գրականութիւն, որի բացառիկութիւնը մինչեւ այսօր չափազանց նպաստել է լքման եւ ապաթիայի(4): Զբաղեցէ՛ք մտաւալ այն հանգամանքը, որ ուսանողութիւնը ապրելով իր ուսու ընկերներէ ճշող մեծամասնութեան կողքին՝ իւրացրել է նրանից ի միջի այլոց եւ տեսական վերաբերմունքի անհրաժեշտութեան պահանջը, գործի գրականութեան տեղը, մի խօսքով իտալոպիայի(5) կարիքը: Բայց դժբախտաբար մինչեւ այժմ դաշնակցական կազմակերպութիւնը չնայելով ուսանողութեան դիմումներին, չէ բաւականացրել այդ

պահանջը: Պէտք է յուսալ, որ կազմակերպութիւնը, քանի որ չէ հանել իր տեսողութեան եւ յուսոյ շրջանակից Սարուստանի(1) ուսանողութիւնը, լուրջ ուշադրութիւն կը պարտի այս կէտի վրայ եւ բաւարարութիւն կու տայ ուսանողութեան միանգամայն արդարացի պահանջներին:

Փալով Հիւսիսակերտի ուսանողութեան բռնելիք դիրքին եւ պատասխաններին դէպի հարցերի ցանկում առաջադրուած խնդիրները, շտապում եմ հաղորդել, որ ուսանողութիւնը յայտնում է իր բացարձակ պատրաստութիւնը ամբողջապէս ընդունելու Ընդհ. Ժողովի ծրագրած խնդիրները եւ իր բոլոր թէ՛ բարոյապէս եւ թէ՛ մտաւոր ոյժերով աջակցելու տաճկահայ եղբայրների պատմական դատին: Միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով, որ կովկասահայերի վերջին շարժումները Դաշնակցութեան առաջ դրին նոր հոգսեր եւ խնդիրներ, որոնք հենց թէկուզ տեղագրական պայմանների շնորհիւ ի մօտոյ չահագրդեցին Սարուստանի ուսանողութիւնը, վերջինս իր պարտքն է համարում իր պատգամաւորի միջոցով յայտնել իր կարծիքը կովկասահայերի հարցի եւ Դաշնակցութեան բռնելիք դիրքի մասին: Այս կարծիքը առ այժմ լինելով մեծ մասամբ տեսական, անկասկած կ'ունենայ որեւէ նշանակութիւն միայն սկզբունքի տեսակէտից. պէտք է յուսալ, որ առաջիկայ Սարուստանի Հայ Ուսանողութեան Համագումարը կը դնի այդ խնդիրը աւելի գործնական ուղիների վրայ, անշուշտ յարմարուելով Ընդհանուր Ժողովի մշակած կազմակերպութիւններին:

Հիւսիսակերտի ուսանողութեան կարծիքով որքան Յունիսի 12ի օրէնքը(6) տրամաբանական հետեւանք էր ռուս միապետութեան ռեֆորմի ընդհանրապէս եւ հայերի վերաբերմամբ նրա ունեցած քաղաքականութեան մասնաւորապէս, նոյնքան բնական եւ հասկանալի պիտի լինին եւ ռուսահայերի ուժեղ թափով արտայայտած վերջին շարժումները: Եթէ այս կարծիքը դեռ որեւէ ապացոյցի կարիք պիտի զգայ, այս դէպքում բաւական է հենց մատնացոյց անել թէկուզ «Կովկասեան վերքերը», որ Դաշնակցութեան օրգանից Հիւրընկալուած եւ նրա բարոյական պատասխանատուութեամբ հրատարակուած լինելով, ձեռք է բերում նոյն կուսակցութեան ներկայացուցիչների համար կրկնակի համոզեցուցիչ արժէք:

Այս այսպէս լինելով հանդերձ, Յունիսի 12ի օրէնքը եւ հայկական վերջին շարժումները Կովկասում այն պատմական առաւելութիւնը միայն ունին, որ նրանք ամբողջապէս ցնցելով հայի բարոյական աշխարհը, առաջ բերին մի անհրաժեշտ եւ անյետաձգելի պահանջ. — մի կողմից ձեւակերպելու հայ մարդու ցանկուկութիւններն ու բողոքները, որոնք առ այժմ արտայայտուում են միայն բնազդմամբ, եւ միւս կողմից

ստեղծելու համապատասխան մի կազմակերպութիւն, որ լինէր մասսայի(7) տրամադրութեան թէ՛ արտայայտութիւնը եւ թէ՛ ղեկավարը:

Եթէ ուրեմն ճիշդ է, որ Ռուսաստանի հայկական վերջին շարժումները իրանց պատմական անհրաժեշտութեան, իրենց ծաւալի կամ մի այլ պատճառով առաջ են մղել տեսականապէս ձեւակերպուելու եւ գործնականապէս կազմակերպուելու պահանջներ, ապա ուրեմն նրանք ունեն ամէն մի այսպէս կոչուած քաղաքական կամ ազգային հարցի բոլոր անհրաժեշտ նշանները: Եթէ ընդունելի են բոլոր վերեւ ասածները, ընդունելի պիտի լինի եւ հետեւեալը, որ այժմ Ռուսաստանում գոյութիւն ունի Հայկական Հարց, որ պիտի ձեւակերպել տեսականապէս եւ կազմակերպել գործնականապէս:

Ի՞նչ է Հայկական Հարցը Կովկասում: Դա հայի ազգային ինքնուրոյնութեան փաստը եւ նրա յառաջխաղաց դարգացման օրինականութիւնը ճանաչեցնել տալու խնդիր է մի կողմից, եւ այդ պահանջի իրականացման ուղղակի թէ՛ անուղղակի խոչընդոտների դէմ այս կամ այն կերպ կուտելու հարց է միւս կողմից:

Հայութիւնը իբրեւ մի ամբողջութիւն Կովկասում՝ այսօր ունի պատմական խիստ որոշ կուլտուրական աւանդներ, ինչպէս կրօն եւ նրա ներկայացուցիչները — եկեղեցին ու հոգեւորականութիւնը, լեզու, խոհերի եւ զգացմունքների մի աշխարհ, որի արտայայտութիւնն է նրա գրականութիւնը, եւ պատմական պայմաններից խիստ ազդուած որոշ տնտեսական կացութիւն. հայը մի խօսքով ունի իր ազգային ուրոյն կեանքը Կովկասում, ինչպէս անուրանալի կերպով ունի կուլտուրապէս յառաջդիմելու եւ տնտեսապէս բարեւոքուելու արդարացի պահանջները:

Թողնելով առ այժմ մի կողմը տնտեսական խնդիրը, վերջին շարժումները իրենց շարժառիթով, այն է եկեղեցական կայուածների գրաւումով, ցոյց տուին թէ որքան զօրեղ է հայի կուլտուրական ջիւղը եւ որքան նրբութեան է հասել նրա ազգային պատուասիրութեան զգացմունքը: Յանուն ըստ երեւոյթի վարկազուրկ հոգեւորականութեան եւ նրա պետի պրեստիժի(8), յանուն ըստ երեւոյթի մոռացութեան տրուած կրօնի եւ էջմիածնի՝ հայը նետուեց քաղաքական անհաւասար կոիւր, որ իր յայտնի հետեւանքներով եւ մանրամասնութիւններով ձեռք բերեց մարդկութեան լաւագոյն մասի համար փաստի, նոր ապացոյցների կարիք չունեցող ակսիոմայի(9) ոյժ:

Այն թէ՛ կազմակերպուած, բայց ընդհանուր մի ներքին դործունէութիւնը, որ դպրոցների փակուելուց յետոյ նկատելի է Կովկասի հայաբնակ վայրերում եւ ուղղուած է մայրենի լեզուն տարածելուն եւ գրականութիւնը տարրալուծելու մեր ժողովրդի լայն խաւերի մէջ, նոյնպէս անժխտելի ապացոյց է թէ՛ հայի կուլ-

տուրական(10) պահանջների եւ թէ՛ դրանց խոչընդոտների դէմ ձեռնարկուած կոիւնների:

Այս դէպքում էլ վերջին հայկական շարժումների պատմական նշանակութիւնը կայանում է նրանում, որ նրանք վերջնականապէս պարզեցին երկու բան. — նախ՝ որ ռուս միապետութիւնը իր հուժեղութեամբ թշնամի է հայի կուլտուրական(10) զարգացման եւ երկրորդ՝ որ անհրաժեշտօրէն նրա դէմ մղած կոիւր ընդունում է քաղաքական կուլտուրականութիւն:

Բայց ամէն մի հասարակական շարժում քաղաքական տարրի հետ իր մէջ միշտ եւ անհրաժեշտօրէն պարունակում է եւ սոցիալական(11) սաղմեր: Այս կարծիքն եւս համոզեցուցիչ դարձնելու համար միանգամայն նպատակաւոր մար է յիշեցնել Դաշնակցութեան օրգանի յանձնարարած հռչակաւոր հասարակարան Չոմբարտի այն համեմատութիւնը՝ թէ եթէ ամէն մի հասարակական շարժման մի ոտը կազմում է քաղաքական կոիւր, նրա միւս ոտն է սոցիալական(11) կոիւր: Եւ սա հասկանալի է միանգամայն, եթէ ի նկատի առնուի այն հանգամանքը, որ ռուս միապետութիւնը եւ հասարակական կողմի ներքին հակասութիւնները իրենց տնտեսական ծանր լուծով՝ կամաց-կամաց տարիներ շարունակ ամբարել էին հայի մէջ այն խորին ատելութիւնը, որին Յունիսի 12ի օրէնքը հնարաւորութիւն տուաւ այդպէս ուժովն արտայայտուելու: Եթէ ռուսացման վայրենի քաղաքականութեան աւելացել է հայ դիւզացու հողային տաղանապալի հարցը, կամ խոչոր գործարանավայրերում՝ բանուորի սոցիալական անարդար վիճակը, այն ժամանակ անշուշտ պատկերը կը լրացուի թէ՛ իր կուլտուրական եւ թէ՛ տնտեսական կողմերից: Քայքայում է արդեօք կամ ուզում է քայքայել ռուս միապետութիւնը հայ դիւզացու տնտեսական դրութիւնը՝ թէ՛ հողի շրջանը տարածելու դէմ խոչընդոտներ հանելով, թէ՛ ռուս դաղթականներով լեցնելով հայի երկիրը եւ թէ՛ հայերին իրենց պատմական հայրենի հողից ու ջրից ջրելու ծրագիրներով:

Տանջուում է արդեօք բանուորը քաղաքում բուրժուազիայի եւ նրա հովանաւոր ռուս միապետութեան կրկնակի լծի տակ: Գոյութիւն ունե՞ն արդեօք այս փաստերը: Եթէ այո՛, ապա ուրեմն հայկական հարցը Ռուսաստանում ոչ միայն քաղաքական է այլ եւ սոցիալական(11):

Ուրեմն ի՞նչ է Հայկական Հարցը Ռուսաստանում. դա հայի կուլտուրական անկախութեան [խղճի, խօսքի ազատութեան] եւ տնտեսական բարեփոխութեան [ազար(12) բանուորական] խնդիրն է: Այն հանգամանքը, որ «ազգային հարց» ասելով այստեղ հասկացում է թէ՛ կուլտուրական եւ թէ՛ տնտեսական խնդիրների շաղկապումը, երբեք չի կարող չփոթեցնել նրանց, որոնք տեսականապէս ընդունելով հանդերձ գիտական սոցիալիզմի կամ մարքսիզմի դաւանանքը, պնդում են միեւնոյն ժամանակ նրա միակողմանիու-

թիւնը եւ նոյնիսկ ժխտում են նրա փիլիսոփայական բնաւորութիւնը, որ կոչուում է մատերիալիզմ(13):

Չնախորոշելով հանդերձ «ազգային հարցի» գիտական մասը եւ թողնելով, որ ապագայում գրական մտքերի փոխանակութիւնը առաջ բերի մի որոշ, տեսականապէս պատճառարանուած աշխարհահայեացք, առ այժմ կարելի է եւ անհրաժեշտ է կանգնել ազգային հողի վրայ վերեւ բացատրուած մտքով, առանց վախենալու, որ միակողմանի տեսարանը կը շտապի այդպիսի ուղղութիւնը մկրտել «էկլէկտիկ»(14) մականունով:

Կա՞ն արդեօք ոչ միայն մեզ մօտ, այլ եւ ամէն մի ուրիշ քաղաքակիրթ բայց ճնշուած ազգի մօտ այս մտքով ազգային հարցեր: Արդարացնո՞ւմ է արդեօք գիտութիւնը յանձին իր լաւագոյն ներկայացուցիչներ՝ փոքր, բայց կուլտուրական ազգերի ազգային յանձնարարականութիւնը. ստիպուած է նոյնիսկ եւրոպական Սոցիալ Դեմոկրատիան ճանաչել փոքր ազգերի համար նրանց ազգայնութեան խնդրի արդարութիւնը (աւստրիական Սոցիալ Դեմոկրատների 1896ի համագումարը, ռուսաց սոցիալ դեմոկրատների օրգան «Իսկրան» եւ «Սոցիալ Ռեվոլյուցիոննայի Ռասսիան») . վերջապէս ակամայ դիմումներ անո՞ւմ են նոյնիսկ հայ ուղղափառ սոցիալ դեմոկրատները՝ ազգայնականութեան վերաբերմամբ: Անու՞ւմ են այս բոլորը. ապա ուրեմն կարելի է ապաւինել կեանքի եւ գիտութեան եւ հայկական հարցը ձեւակերպել իբրեւ ազգային հարց — կուլտուրական եւ տնտեսական մտքով:

Այժմ խնդրի գլխաւոր հետաքրքիր կողմը հետեւեալն է. — ընդունելով հանդերձ Ռուսաստանի հայերի հարցի դոյութիւնը, արդեօք այդ հարցը գոյութիւն ունի՞ր եւ Դաշնակցութեան համար, իբրեւ մի կազմակերպութիւն, որ ունի իր անցեալը, ներկան եւ դեռ չլուծած ապագայ:

Այս հարցին ճիշդ պատասխանելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ վերաբնել հետեւեալ հարցերը. ի՞նչ է Դաշնակցութիւնը ինքն ըստ ինքեան, եւ ի՞նչ է Դաշնակցութիւնը Կովկասում՝ իր դաւանանքներով եւ կազմակերպութեամբ:

Որքան էլ որ չսփազանց պարզ եւ հասկանալի լինի տաճկահայի մղած կուլտուր քաղաքական բնաւորութիւնը, որչափ էլ կարիք չզգացուէր տեսականապէս ձեւակերպելու թշնամու ձեռքին խողխողող մի ժողովուրդի օյնութեան ազդակը եւ նրա լաւագոյն օրգանը: արդար ցատումն ու վրէժը, այնուամենայնիւ իբրեւ մի կազմակերպութիւն, Դաշնակցութիւնն էլ տուել է իր «հաւատոյ հանդանակը», որ իբրեւ յառաջաբան կըցուած է 1892 թ. Ընդհ. Ժողովի ծրագրին: Ենթադրելով, որ այդ ծրագրի մանրամասնութիւնները ընդհանուրին ծանօթ են, միանգամայն տրամաբանական մի հետեւողութիւն կը լինի, եթէ այդ հաւատոյ հանդանակը ձեւակերպուի իբրեւ հայի ազգային հարց՝ իր

կուլտուրական և տնտեսական շահերով, որի լուծու- մը տաճկահայոց վերաբերմամբ միանգամայն արդա- րացի կերպով տեսնում է կուսակցութիւնը՝ բուն յի- ղափոխութեան միջոցով ազատ հայրենիք ընձեռելով: Որ դա մի համահայկական հարց է եղել սկզբից մինչև այժմ, դրան ապացոյց՝ ի միջի այլոց և կովկասահայ- յերի ունեցած անժխտելի մասնակցութիւնը տաճկա- հայերի դատին. որ դա համազգային մի հարց էր, դրան ապացոյց՝ այն հանգամանքը, որ դաշնակցական կազմակերպութիւնը իր ցանցերի մի խոշոր մասը տա- րածել է ե՛ւ ռուսահայերի մէջ: Եւ եթէ ամբողջ հա- յութիւնը լարելով իր բոլոր բարոյական և նիւթա- կան ոյժերը մինչև այսօր զբաղուել է և զբաղուում է միայն տաճկահայի դատով, դա պէտք է բացատրել նախ՝ Տաճկահայաստանի անտանելի կացութեամբ և երկրորդ՝ ռուսահայի մինչև այժմ ունեցած քաղա- քական և տնտեսական համեմատաբար լաւ պայման- ներով: Այնպէս որ Դաշնակցութիւնը Կովկասում մին- չև այժմ էլ եղել է միայն ընդհանուր ազգային դատին նուիրուած կազմակերպութեան մի առողջ արտայայ- տութիւն: Եթէ Դաշնակցութիւնը մինչև այսօր կա- րողացել է յաջողութիւն գտնել կովկասահայերի մէջ, դա անշուշտ պիտի վերագրել ռուսահայի կուլտուրա- կան(10) յառաջխաղացութեան, ազգային ինքնագի- տակցութեան զարգացման և տնտեսապէս բարեւել- ձակին: Եթէ ուրեմն Դաշնակցութիւնը օրգանապէս կապուած է եղել մինչև այժմ վերոյիշեալ երեւոյթ- ների հետ, ապա ուրեմն ռուսահայի կուլտուրական և տնտեսական դրութիւնը նրա համար ոչ միայն այն հետաքրքրութիւնը պիտի ունենայ, ինչ որ ունի առ- հասարակ ամէն մի դեմոկրատ հայի համար, այլ և պիտի ունենայ գոյութեան՝ լինել չլինելու նշանակու- թիւն: Մինչև այսօր Դաշնակցութիւնը իր բարոյական և նիւթական աշակցութիւնը քաղել է այն գաղափա- րական ոյժից, որ տալիս էր կովկասահային նրա ազ- գային համեմատաբար լաւ կացութիւնը. եթէ այժմ առաջ է եկել տաճկահայի ազգային հարցը Կովկա- սում, եթէ ռուսահայի ազգային դիտակցութիւնը կանգնած է կոպիտ ոյժի, լքման կամ հակառակ դէպ- քում կենտրոնախոյս ազգեցութիւնների վտանգի ա- ռաջ, ապա ուրեմն վտանգուում է Դաշնակցութիւնը Կովկասում. ապա ուրեմն պէտք է ոչ միայն պահել, այլ և զարգացնել ակտիւ կերպով(15) ռուսահային, հենց թէկուզ իրրեւ մի ազրիւրի՝ յօգուտ տաճկահա- յոց դատի:

Եթէ մինչև այժմ եղած հայութիւնը Կովկասում իր ազգային դիտակցութեան նախկին մակերեւոյթով ընդունակ էր անժխտելի մասնակցութիւն ունենալու տաճկահայոց դատին, պէտք է ենթադրել, որ այդ ազգային դիտակցութեան — այսինքն կուլտուրական զարգացման և տնտեսական բարեւոյժման մակերեւոյ- թի — ցածրանալուց կամ բարձրանալուց կախուած կը

լինի ե՛ւ ռուսահայի ունենալիք մասնակցութիւնը տաճ- կահայոց դատին՝ նուազելու կամ աւելանալու հարցը: Պէտք է հաւատալ, որ ապագայի կուլտուրապէս բար- ձրը, քաղաքական կուրի շաւիղով անցած և տնտեսա- պէս աւելի բարեւել լինելու տէր ռուսահայը աւելի՛ սերտ կապով կը կապուի իր տաճկահայ եղբայրների հետ, քան թէ այդ մինչև այժմ եղել է: Եթէ ճիշդ են այս բոլորը, ապա ուրեմն ճիշդ պիտի լինի և այն, որ Դաշնակցութեան համար, այո՛, գոյութիւն ունի և Ռուսաստանում Հայկական Հարցը:

Թողնելով տեսականը և դիմելով կեանքի փաստե- րին, ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ վերջին շար- ժումները գրաւեցին Կովկասի բոլոր դաշնակցականե- րին և նոյնիսկ ամբողջ կազմակերպութիւններ, որոնք իրականապէս կանգնեցին շարժման առաջին շարքե- րում:

Այս երեւոյթը որքան էլ բացատրելու լինենք առ- հասարակ դաշնակցականի, իրրեւ յեղափոխականի տեմպերամենտով(16) մարդու անհատականութեամբ, որ չի կարող արձագանգ չտալ հայրենի դժբախտու- թեան, օրտոնք և ինչ ձևով էլ նա արտայայտուելու լինի, այնուամենայնիւ այդ երեւոյթը կատարելապէս լուսաբանուած չի լինել, եթէ չլիչուի այն օրգանական կապը, որ կայ դաշնակցական կազմակերպութեան և կովկասեան հայերի հարցի մէջ:

Այսպէս ուրեմն Դաշնակցութեան համար նոյնպէս գոյութիւն ունի Ռուսաստանում Հայկական Հարցը, որ բխում է կազմակերպութեան դաւանած սկզբունք- ներից, այդ հարցի համազգային բնաւորութիւնից և վերջապէս ռուսահայ դաշնակցականների անհատական և մասսայական հոգեբանութիւնից: Այս վերջին հան- դամանքը մանաւանդ պէտք է աչքի առաջ ունենալ, ի նկատի առնելով այն վերջին պատակուման նշաննե- րը, որոնք ռուսահայերի շարժման ժամանակ առաջ ե- կան դաշնակցական կազմակերպութիւններից մի բա- նիսի մէջ: Թէ որքան ստիպողական և օրգանական է Դաշնակցութեան հոգեբանական պահանջը իր վրայ վերցնելու ռուսահայերի դատը, դրան ապացոյց է մի վերջին փաստն էլ. դա կուսակցութեան օրգանի՝ «Երօ- շակ»ի բռնած դիրքն է, որ այսօր հաւասար հետաքրք- րութեամբ, և աւելին կարելի է ասել՝ հաւասար բա- րոյական պարտականութեան եթէ ոչ դիտակցու- թեամբ, գոնէ բնազդմամբ՝ տաճկահայոց դատի հետ նուիրում է իր թերթերը և ռուսահայոց խնդրին:

Տեսականապէս պարզելուց և կեանքի պահանջ- ներն իրրեւ փաստ ընդունելուց յետոյ, ռուսահայոց խնդիրը պահանջում է ի հարկէ և որոշ կազմակերպը- ւած գործունէութիւն:

Կասկած չկայ, որ մասնակցելով ռուսահայոց գա- տին, իրրեւ համազգային մի մարտի, Դաշնակցութիւ- նը ստիպուած պիտի լինի Կովկասի վերաբերմամբ ի նկատի առնել և հասարակական կազմի ուրոյն պայ-

մանները, եղած կազմակերպուած կամ չկազմակերպը- ւած տրամադրութիւնները: Քանի որ հայկական խըն- դիրը Ռուսաստանում պատմական հանգամանքների շնորհիւ ընդհանուր քաղաքական շարժման միայն մի մասը կարող է կազմել, այդ պատճառով բնական է, որ Դաշնակցութիւնն էլ իր դրօշակի վրայ կարող է արձանագրել իրրեւ լօզունգ(17), — «Կովկասը Կովկասի համար՝ իրրեւ սահմանադրական Ռուսաստանի ազատ Ֆեդերացիաների մի ազատ մարմին»: այս քաղաքա- կան նպատակին հասնելու համար անկասկած է, որ կազմակերպութիւնը մի կողմից առաջ մղելով հայ տարրի ազգային կուլտուրական յառաջխաղացութեան դործը — գաղտնի դպրոցներով, թերթերով, գրքերով, բանաւոր պրոպագանդայով և այլն և նոյնաման պրոպագանդա անելով հարեւան թուրք և վրացի ցե- ղերի մէջ, մի և նոյն ժամանակ պէտք է նախապատ- րաստէ հայ ժողովուրդը՝ համառուսական կամ կով- կասեան յեղափոխութեան համար:

Գալով ազրար(12) շարժման, բնական է, որ հայ դիւզացու տնտեսական կարիքները թէ՛ արտաքին ճնշման և թէ՛ ներքին հոլովոյթի ազդեցութեան տակ միշտ առաջ կը մղեն դործնական պահանջներ, որոնց իրականացման համար հայ տարրը կ'ունենայ այնպի- սի մի ապակէն, ինչպէս ամբողջ կովկասեան դաշնակ- ցական կազմակերպութիւնը իր բոլոր թէ՛ բարոյական, թէ՛ մտաւոր և թէ՛ մարտիկ ոյժերով:

Իսկ ինչ վերաբերում է գործարանական քաղաքնե- րում ունենալիք գործունէութեան, անկասկած որ այս- տեղ այս կամ այն կերպ պէտք է որոշել դէպի սոցիալ — դեմոկրատներն ունենալիք վերաբերմունքը, ընդունե- լով այդ կուսակցութիւնը իրրեւ կեանքի առաջ բերած մի անուրանալի փաստ:

Ներկայ գեկուցման մէջ յիշած պատճառներով հա- զիւ թէ հնարաւոր լինի ուրանալ սոցիալ — դեմոկրատ- ների գործունէութեան կա՛մ դաւանած սկզբունքի պատմականօրէն ճիշդ և բարոյապէս արդար լինելը: Նոյն դիտողութիւններով անհրաժեշտ է միայն՝ լրա- ցնել մարքսիզմի վերոյիշեալ միակողմանիութիւնը, ազգայնացնելով սոցիալ — դեմոկրատիական շարժումը հայերի մէջ: Պատմականօրէն մեծ նշանակութիւն ունի ոչ միայն բանուորի տնտեսապէս քայլ առ քայլ բար- ւոյնուելը՝ շնորհիւ գործադուլների և օրավարձի յա- ւելման, այլ և մեծ կարեւորութիւն ունի թէ ի՛նչ է ներկայացնում բանուորը իր ներքին աշխարհով իրրեւ քաղաքացի, հասարակութեան կամ ազգի մի անդամ:

Դաշնակցութիւնը համազգային գաղափարի մարմ- նացումը պիւղում տեսնելով դիւզացու և ոչ թէ նրա տղրուկ աղայական դասակարգի մէջ, նոյն հետեւողու- թեամբ համազգային գաղափարը. պիտի մարմնացնի քաղաքներում ոչ թէ բուրժուազիայի, ալ անկասկած բանուորի մէջ: Նրա նպատակը պիտի լինի, յանուն քաղաքական լուսւոյն ապագայի, ոչ միայն Ռուսաս-

տանում, այլ և Տաճկաստանում տեսնել դիւզացու և բանուորի իրրեւ հայ ազգի գերակշռող տարրի ազգա- յին դիտակցութեան և տնտեսական բարեւոյժման յա- ռաջխաղացութիւնը:

- (1) Ռուսաստանի (կուսակցական տեղաձում):
- (2) Հակազգեցութիւն, յետաշրջում:
- (3) Թէորտիկ՝ տեսական. քէորթա՝ տեսութիւն (բայթթ ալ աուսերէն բառը են, ֆրանսերէնէ առնուած):
- (4) Անտարբերութիւն, անզգայութիւն:
- (5) Գաղափարաբանութիւն:
- (6) Կ'ակնարկուի եկեղեցական կայուածներու գրումն ցա- րական երովաբանութիւն:
- (7) Զանգուած:
- (8) Վարկ, երգիծակութիւն:
- (9) Ինքնաշայտ՝ ապացուցման պէտք չունեցող ճշմարտութիւն:
- (10) Մշակութային:
- (11) Ընկերային:
- (12) Հոգային:
- (13) Նիւթապաշտութիւն՝ իմաստասիրական, գիտական իմաս- տով:
- (14) Ընտրական՝ ֆիլիսոփայական իմաստով:
- (15) Աշխոյժ, գործնական կերպով:
- (16) Խառնուածով:
- (17) Բնաբան, կոչ:

Զ. — ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Ընկերներ,

Յանուն Ամերիկայի տասնեակ մը հարիւր դաշնակ- ցական ընկերներուն, կ'ողոնենք ձեզ որ կը մասնակ- ցիք այս պատկառելի ժողովին:

Վեց տարուայ ժամանակամիջոցին մէջ Ամերիկա- յի Դաշնակցութիւնը անդադրում գործեց իր Շրջանին վերաբերած գործերուն լայն վիճակ մը ստեղծելու. և ուրախ ենք հաղորդելու ընդհ. ժողովին՝ թէ Միացեալ Նահանգներուն մէջ այսօր Դաշնակցութիւնը անբաղ- դատելիօրէն խոշոր ծաւալ ստացած է, լայն հող ունի իր ձեռքին տակ, և ուրախառիթ է մանաւանդ այն պարագան՝ որ հետզհետէ աւելի ու աւելի մեծ չափե- րով գործը իր սահմանները կ'ընդարձակէ:

Ձեռք կարծեր, թէ հարկ կայ այս յաջողութեան պատճառներուն վրայ երկար կանգ առնելու, զայն վերլուծելու համար: Անոր վերլուծումը երկու բնորոշ բառերու մէջ կարելի է ամփոփուած համարել: — Եր- կրի գործերուն յաջող ընթացքը, և այստեղի ընկեր- ներուն եռանդուն ջանքերը: Վերջնոյն մէջ պարունակ- ուած պէտք է սեպել այն կարեւոր դերը որ կատարած են «Հայրենիք» թերթը և գործիչ ընկերները: Եւ ա- սոնց հետ պէտք է աւելցնել՝ թէ տասնեակ մը տարի- ներու Դաշնակցութեան յարաճուն, շիտակ գործու- նէութիւնը, որ ժողովուրդը քայլ առ քայլ դիտակցու-

Քեան առաջնորդած էր, այսօր մեր Շրջանը իր այս վիճակին հասցուց:

Որպէսզի խճողուած չըլլայ աւելորդաբանութիւններով այս տեղեկագիրը, հոս անմիջապէս կ'անցնինք վեց տարուան մեր ունեցած գործերու դասական ընթացքին եւ համեմատական հաշուետուութեան:

Ա. Կամխուձներու եւ ընկերներու համեմատական քիւերը

Ամերիկայի Դաշնակցութիւնը ունէր.—

| | | | |
|--|---|-------|---|
| 1898ին, 12 կոմիտէներ, մտաւորապէս 70 ընկերներով | | | |
| 1899ին, 18 > | > | 165 > | > |
| 1900ին, 20 > | > | 200 > | > |
| 1901ին, 24 > | > | 280 > | > |
| 1902ին, 28 > | > | 600 > | > |
| 1903ին, 40 > | > | 900 > | > |

Եւ այսօր 1904ի սեմին վրայ, ունինք 1000է աւելի ընկերներ:

Բ. Դրամական հաշուետուութիւն

Ամերիկայի Կեդր. Կոմիտէին գանձը մտած է իրբեւ զուտ հասոյթ.—

| | | | | |
|------------------|------|-------|----|------|
| 1898ին | 561 | Տոլար | 52 | Սէնթ |
| 1899ին | 572 | > | 32 | > |
| 1900ին | 842 | > | 75 | > |
| 1901ին | 1520 | > | 11 | > |
| 1902ին | 6779 | > | 74 | > |
| 1903ին | 9836 | > | 57 | > |

Եւ նայելով կոմիտէներու կատարած հանգանակութիւններու գումարներուն ներկայ տարուան մէջ, — օրինակ. Լինի Կոմիտէն, որ անցեալ տարի հանգանակեց 650 տոլարի չափ, այս տարի Յունուարին մէջ իր կատարած հանգանակութեան գումարը հասաւ 1075 տոլարէ աւելի, — 1904ին Կեդր. Կոմիտէի հասոյթը հաւանաբար կը հասնի 15000 տոլարի համեմատ գումարին:

Կեդր. Կոմիտէի գանձին ելած է.—

| Ցատկացուած գուտ յեղափոխական գործի | Ցատկացուած ճամպարհածախսի, ուրիշ զիւսման ծախսերու եւ գործիչներու ապուստի: |
|-----------------------------------|--|
| 1898ին 26 տոլ. 25 ս. | 169 տոլ. 1 ս. |
| 1899ին 429 > 47 > | 96 > 94 > |
| 1900ին 440 > 74 > | 298 > 87 > |
| 1901ին 271 > 38 > | 344 > 90 > |
| 1902ին 4299 > 37 > | 641 > 37 > |
| 1903ին 8645 > 3 > | 1511 > 86 > |

Կեդր. Կոմիտէի գանձը մնացած է մտաւորապէս 3000 տոլար: Այս գումարը Երկիր զրկելէ առաջ պիտի սպասենք Ընդհ. Ժողովի որոշումներուն:

ՄԱՆՕԹ.— Ասիկա չի ներկայացներ Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէներուն ընդհանուր հաշուեկշիռը: Կոմիտէներու տեղական ծախսերը չեն պարունակուիր ո՛չ ելքի եւ ո՛չ ալ մուտքի հաշիւներուն մէջ:

ՄԱՆՕԹ.— 1903ին Ամերիկա եկող նոր գործիչ ընկերներու ճանապարհածախսն է որ բաղադրատարր բարձրացուցած է այդ տարուան ընթացիկ ծախսերու դումարը:

Կեդր. Կոմիտէի մուտքի գումարները գոյացած են գլխաւորաբար ընկերներու տարեկան կանոնաւոր տուրքերով: Իւրաքանչիւր դաշնակցական ընկեր որ կը գործէ եւ հիւանդ չէ՝ պարտի վճարել տարեկան 6 տոլար իբրեւ ամսավճար եւ 10 տոլար «Ձէնքի դրամ»: Ընկերներէն ոմանք մինչեւ 100 տոլարով մասնակցած են «Ձէնքի դրամ»ի հանգանակութիւններուն:

Ոչ-դաշնակցականներ, մանաւանդ վերջերս, սկսած են մասնակցիլ այս հանգանակութիւններուն: Միւրթաբական է ու միանգամայն պատուաբեր, Դաշնակցութեան համար, այն պարագան՝ որ ոչ-դաշնակցականներ ինքնաբերաբար նուէրներ կը զրկեն ուղղակի Կեդր. Կոմիտէին, Երկրի կոռուզներուն հասցնելու համար:

«ԴՐՕՇԱԿ»ը Ամերիկայի մէջ

Ամերիկայի մէջ, ինչպէս ամէն տեղ, ԴՐՕՇԱԿ թերթը կը ճանչցուի իբրեւ միակ «թարգմանը հայ յեղափոխական կեանքին»: Անիկա ամերիկահայուն համար ընդհանրապէս, եւ դաշնակցական ընկերներու համար մասնաւորապէս, Յեղափոխական Աւետարանի դերը կը կատարէ: Այսօր 1500 օրինակ չի բաւեր Ամերիկայի համար, շնայելով որ իւրաքանչիւր օրինակը մէկէ աւելի ընթերցողներ ունի: Ամերիկայի ընկերները կը փափաքին որ աւելի յաճախ լոյս տեսնելը կարելի ընեն Երկրի եւ արտասահմանի այն ընկերները, որոնց յանձնուած է անոր նիւթ մատակարարելու գործը: Մեր կողմէն պիտի ջանանք աւելի կանոնաւոր նուիրատուութիւններով թեթեւցնել նիւթական դժուարութիւնները:

«Հ Ա Յ Ր Ծ Ն Ի Ք» ը

Ամերիկայի Հայութեան այն մեծամասնութիւնը, որ իր մէջը չունի կուսակցական նեղ ու դձուած նկատումներ, ՀԱՅՐԵՆԻՔ թերթը կը ճանչնայ իբրեւ ազգային յեղափոխական լուրջ թերթ: Ասոր ապացոյցը այն է որ այս վերջին տարուան մէջ, մանաւանդ, Հրակայ քայլով մեծցաւ անոր ընթերցողներու թիւը: Մօ-

տաւորապէս 2000 օրինակ կը սպազորուի. եւ այս թիւը օրէ օր ալ կ'աճի: Թերթին ծաւալը մօտ օրերու մէջ կը յուսանք մեծցած տեսնել, երբ 6ի տեղ 8 երեսներով պիտի հրատարակուի ան:

Մեր նախորդ Պատգ. Ժողովը, օգտուելով ՀԱՅՐԵՆԻՔի բաժնետէր ընկերներու մէկ հին առաջարկէն, որով բաժնետէրերը կը յօժարէին իրենց իրաւունքներէն զրկուիլ, եթէ միայն ոչ-բաժնետէր ընկերներն ալ փոքրիկ նուէրներով դրամագլուխ մը կազմէին ու նւիրէին ՀԱՅՐԵՆԻՔին, որոչեց այդ դրամագլուխը գոյացնել ընկերներու 50ական սէնթի բացառիկ նուէրներովը, եւ այդպէսով դարձնել ՀԱՅՐԵՆԻՔը Դաշնակցութեան սեփականութիւն: Հոս չենք կրնար չյիշել Ամերիկայի բոլոր ընկերներու զնահատուած բաժնետէր ընկերներու այն մեծ զոհողութիւններուն, որոնք կարելի ըրին ՀԱՅՐԵՆԻՔի լոյս տեսնելը եւ այսքան առաջ երթալը:

Հնչակեանները Ամերիկայի մէջ

Այս ազատ երկրին մէջ չէ կարելի որ չզտնուին Ժողովուրդին Հայրենասիրական անկեղծ զգացումները շահագործողներ: Հնչակեան կուսակցութեան «Հին» եւ «Նոր» հատուածները կը ճանչնանք մենք — ու մեզի հետ ստուար մեծամասնութիւն մը ազգային խնդիրներով հետաքրքրուող Հայրենակիցներու — իբրեւ արգելքներ յեղափոխական գաղափարին տարածմանը: Նոր օրուան հետ նոր փորձանք մը կը յարուցուի անոնց կողմէն, որ կը ծառայէ յեղափոխական տեսակէտէ ժողովուրդը յուսահատեցնելու ու զանոնք ետ պահելու Գործին մասնակցելէ: Եւ մենք ստիպուած կ'ըլլանք յաճախ մեր ուժերը բաժնել, մէկ կողմէն ջանալով առաջին տեղը տալ զուտ յեղափոխական գործերուն, ու միւս կողմէն անոնց ցանած յուսահատական սերմերը չբացնել եւ արգելք դառնալ այդ հակայեղափոխական ձգտումներուն:

Ուրախ ենք ըսելու, թէ մեր ջանքերը ապարդիւն չեն ըլլար. օրէ օր Ժողովուրդին մէջ յեղափոխական գիտակցութիւնը կը զարգանայ, որով կը սկսին ճանչնալ յեղափոխականին ու յեղափոխութիւնը շահագործողներուն տարբերութիւնը: Պատճառ ունինք խորհելու թէ ասոնց բոյնը ու ամբողջ ուժը Ամերիկան է: Վերջերս, ինչպէս կ'երեւի, «Նոր»երու կեդրոնը Ամերիկա տեղափոխուած է, եւ իրենց «Հնչակ»ն ալ Պոսթընի մէջ կը հրատարակուի: «Հին»երու կեդրոնի անդամներն ալ Ամերիկայի մէջ կը գտնուին հիմա:

Բոլորովին գոհ սրտով մը չենք կրնար նայիլ, սակայն, անցեալի այս յաջող ընթացքին վրայ: «Կրնայինք աւելի ընել» մտածումը կարելի չէ հեռացնել մեր մտքերէն: Ամերիկան հոգ ունի յեղափոխական գաղափարի տարածման եւ Երկրի ընկերներու և անոնց գործին օժանդակութեան ձեռնարկներու ընդարձակուելուն

համար: Ընդհ. Ժողովին ուշադրութեանը յանձնելով այս կէտը՝ կը սիրենք յուսալ թէ Ամերիկայի համար այնպիսի տնօրինութիւններ պիտի ընէ, որ մեր յոյսերը յաջողութիւններով պսակուին:

Աւելորդ չենք սեպեր հոս արտագրել 1903ի Արտակարգ Պատգ. Ժողովին հետեւեալ որոշումը.— «Նկատելով որ Ամերիկայի Դաշնակցութիւնը ապագային ալ պիտի կարօտի ընկեր Ա. Վոսմեանի գործունէութեան, իր շրջանի գործերը բաղձալի բարձրութեան մը հասցնելու համար, ներկայ արտակարգ Պատգ. Ժողովը որոչեց առաջարկել Ընդհ. Ժողովին որ տարբեր որոշում մը չընէ ընկեր Ա. Վոսմեանը ուրիշ վայր մը զրկելու կամ անոր ուրիշ գործ մը յանձնելու մասին, որպէսզի ան վերստին Ամերիկա դառնայ»:

Թողելով որ մեր պատգամաւոր ընկերները լրացնեն տեղեկալրին մէջ պակասած մանրամասնութիւնները, կը մնանք Ձերը ընկերական ջերմ բարեկենդով՝

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

(կնիք)

3.— ԱՅԼ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

Երկրորդական բազմաթիւ այլ փաստաթուղթերու կողմէ, Երրորդ Ընդհ. Ժողովի թաքածաթիւ մէջ կը գտնենք հետեւեալ կարգ մը վաւերագրերը՝ որոնց հրատարակութիւնը կը նկատենք շահեկան.—

Ա) Հ. Յ. Դաշնակցութեան 1904 տարուան նոյնամասին, տպագրուած 28x45 սմ. չափի մեծ թուղթի վրայ, մէկ երես: Հետաքրքրական է, թէ եւ զարմանալի, որ բոլոր շրջաններուն մէջ գոյամալի կուսակցական եկամտաւորներու կարեւորագոյն բաժինը սահմանուած է յատկացուելու Բարձրագոյնագի գործին (Մասնայ ապստամբութեան): Նայեալով ինչ կու տամք նոյնամասին՝ ընդհ. Ժողովին:

Բ) Ընդհ. Ժողովի ընթացքին պատրաստուած եւ Դաշնակցութեան անուանով զետպաններու եւ հիւպատոսներու յայտի յուշագր մը, խմբագրուած փրանսիէով եւ օսմանիէով, որ կը վերաբերի Մասնայ մտայնութեան ապստամբութեան պատճառներուն, եւ հայութեան պահանջները կը բանաձևէ: Կու տամք այդ յուշագրի փրանսիէի թւերը:

Գ) Ոսկանապատի (Բագու) պատգամաւոր Մոֆոյի ճառը՝ ուր կ'առաջարկուի զիւսման զաշնակցութիւնը կնքել Ամիլիան Երկրի հետ, Ռուսաստանի եւ Կովկասի մէջ՝ ցարական հայաւելի քաղաքացիականութեան եւ Հայաստանի սկզբնական ռուսազափառութեան կապելու ճիգն ղէմ պայտարելու, եւ Տանկա-յաստանի մէջ՝ Անգլիոյ քաղաքական աւելի ազգու միջամտութեանը ապահովելու մտահոգութեամբ: Առաջարկը մերժուած է Ընդհ. Ժողովին կողմէ. կու տամք պարագագէտ՝ իբրեւ պատմական փաստաթուղթ:

Բ. — ՅՈՒՇԱԳԻՐ

ՍԱՍՆՈՅ ԱՊՍԱՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Կու տանք փրանսերէն թէքոթը՝ նոյնպէսմք:

Monsieur le Consul,

Les Arméniens de Sassoun sont obligés de recourir aux armes pour résister par la force à une intolérable oppression : ils se révoltent par nécessité.

Il y a un quart de siècle, les nations européennes signataires du traité de Berlin nous ont reconnu des droits, ont assumé le devoir d'en imposer la reconnaissance à l'Empire Ottoman et se sont aussi solennellement engagées avec nous.

Cependant, depuis cette date, nos malheurs et notre détresse se sont aggravés d'année en année : au vieux système des vexations turques s'est ajoutée la méthode d'extermination hamidienne. Dès que nous avons osé croire que les promesses de l'Europe n'étaient pas de vaines paroles inscrites sur le papier, à nos légitimes revendications le Sultan à répondu par de pires violences. Après les massacres partiels du Sassoun qui auraient dû avertir l'Europe, si elle avait voulu être avertie, est venue l'effroyable période des grandes tueries et trois cent mille créatures désarmées ont été égorgées, sans qu'il fût fait un geste pour les sauver. Depuis, par l'interdiction de circuler, par les impôts toujours plus pesants, par l'éviction des biens communaux des villages, par les meurtres isolés ou en masse, par les conversions forcées à l'islamisme, l'extermination de notre peuple se poursuit sournoisement, lentement et sûrement.

Ici même (Énumération des violences les plus récentes qui ont nécessité l'insurrection). (1)

Nous ne faisons donc pas la révolution pour elle même, mais parce que nous y sommes obligés et contraints par la force des choses. Nous ne sommes point séparatistes : nous demandons à avoir, dans l'organisme de l'Empire Ottoman, une autonomie locale où soient sauvegardés les droits élémentaires de l'homme, où ses biens, sa personne, son honneur soient en sécurité.

Ces garanties élémentaires, nous sommes décidés à les revendiquer par tous les moyens en notre pouvoir. Elles n'excèdent pas ce que la diplomatie européenne jugeait le minimum de réformes nécessaires, en mai 1895 (2), avant l'effroyable hécatombe qui suivit la promulgation des soi-disant réformes. Les révolutionnaires arméniens ont déjà formulé ces revendications à maintes reprises, lors de l'attaque de la Banque Ottomane et plus récemment dans le

projet remis au ministre français des affaires étrangères le 19 septembre (3) 1901, et que nous annexons, avec quelques amendements de détail, à la présente lettre.

Voici sous une forme sommaire l'énumération des réformes nécessaires, pratiques et immédiatement exécutables, qui constituent nos très modestes mais irréductibles exigences :

1) Institution d'un contrôle européen permanent. Nomination d'un gouverneur indépendant du Palais, assisté d'une assemblée élue par la population.

2) Réforme de l'impôt. Suppression des impôts vexatoires (énumération).

Exemption d'impôt pendant dix ans. Extinction des impôts arriérés. Non intervention de l'armée dans la perception de l'impôt.

3) Création dans les communes rurales et urbaines, en nombre proportionnel à celui des habitants, de gardes champêtres et urbains, munis d'armes d'ordonnance, qui défendront la population contre tous actes de violence et de brigandage.

4) Réforme des tribunaux conformément au memorandum de mai 1895.

5) Restitution des terres usurpées sur les villages ou enlevées aux Arméniens émigrés. Rentrée des émigrés qui seront remis en possession de leurs biens.

6) Amnistie générale pour tous les crimes et délits politiques et faits connexes. Abolition des lois et règlements vexatoires établis contre les Arméniens (loi sur les passeports, etc.).

7) Égalité réelle des droits et des devoirs pour toutes les nationalités de l'Empire.

8) Liberté de la presse. Liberté de réunion.

Nous sommes décidées à ne pas poser les armes tant que satisfaction ne nous aura pas été donnée sur tous ces points.

Le ministre français des affaires étrangères a reconnu dans une déclaration publique que nous ne pouvions en effet supporter plus longtemps le sort épouvantable que nous ont fait la cruauté du Sultan et l'inertie de l'Europe; il nous a tracé notre devoir quand il a dit à la Chambre des députés.

«Il semble fatal que des populations dont on continuerait à laisser impunément piller les biens ou qui ne cesseraient pas de se voir exposées à des attentats, à des meurtres trop souvent impunis, finissent par se dire que tout vaut mieux que la vie sous le cauchemar d'une hécatombe».

L'heure annoncée par ces paroles est venue. Ici

et partout où il y a des Arméniens, en Asie, en Turquie d'Europe, à Constantinople, nous continuerons la lutte quelles qu'en doivent être les conséquences pour nous mêmes, pour l'Empire et même pour la paix générale. Ce n'est pas ici un mouvement isolé, mais le suprême effort d'un peuple qui veut vivre d'une vie vraiment humaine. Nous ne faisons ici ni vaines menaces, ni prières inutiles: nous affirmons notre droit et nous pouvons redire avec les héros de la Banque Ottomane : «Nous mourrons, nous le savons, mais la révolution qui a pénétré dans les os de la nation arménienne continuera à menacer le trône des sultans, tant que nous n'aurons pas conquis nos droits humains, tant qu'il restera un seul Arménien».

(1) «Թուում նորագոյն խժոճութիւններում՝ որոճ անխուսփելի դարձուցին ապստամբութիւնը, — էջին կէսը ձգուած է պարսպ: Հաւանաբար աւելցուած է աւելի ուշ, հրատարակութեան սիրջին (եթէ հրատարակուած է):
(2) Կ'ակնարկուի Մայիսեան ծրագրին (1895):
(3) Անորշ, — կրնայ նաեւ ըլլալ «le 1er septembre».

Գ. — «ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»

Թագածրարին մէջ պահուած է չորս մեծագիր քերթերու ուրք երեսներուն վրայ արձանագրուած (հաւանթեմ վաւանանի անագրով)՝ Սաֆոյի (Մարտիրոս Մարգարեան, Բագուի մերկայացուցիչ) մէկ նառը, խօսուած 12 փետրուարին: Համաձայն լուսանցի արձանագրութեան, նառը տեսած է մէկուկէս ժամ: Թէ ինչու մնամ նառեր — եւ ապահովաբար աւելի լաւերը — ասոր մնամ առանձին գուրգուրանքով պահուելու բախտին արժանացած չեմ, — չեմք գիտեր: Կու տանք Սաֆոյի նառին կարեւորագոյն մէկ բաժինը, իրրեւ ցարական հայակալ քաղաքակառուցեամ ղէմ կովկասահայու ծայրայեղ բայց հասկնալի հակազդեցութեան մէկ արտայայտութիւն, զանց ընելով մուսուլմանութիւնը, որ պատմական կ'ընէ բրբալան հայաժողովներուն, եւ անոնց իրրեւ հետեւանք՝ հայ յեղափոխութեան պոթելումին:

Թոյլ ենք մենք, աղքատ եւ անզոր՝ կրուելու համար երկու մեծ պետութիւնների ղէմ: Մինչեւ այժմ մեզ սպառնացողը տաճկի բռնակալութիւնն ու սպիտակութիւնն էր, ու քիւրդի նիզակն ու սուրը: Դրանց վերայ աւելացաւ եւ ուսում միապետութեան հայերիս ձուլելու բացարձակ տրամադրութիւնը, որը մինչեւ այժմ չտեսնուած անպատկառութեան հասարակ 1903 թ. Յունիս 12ի օրէնքով: Կասկած չկայ այժմ, թէ ինչ է ուսում միապետութեան ցանկութիւնը, այն է՝ իսպառ ձուլել հայ ժողովուրդը, համասլաւոնութեան մէջ միացնելով եկեղեցիները: Եթէ բաւարար ապացոյցներ չհամարուին այդ նկատմամբ՝

դպրոցների փակումը,
փակումը Հրատ. Ընկերութեան,
փակումը Բարեգ. Ընկերութեան,

փակումը Մարդասիր. Ընկերութեան գրադարանի (Բագու),

Հայոց լեզուի եւ կրօնի դասերի կրճատումը եւ գաղտնի հրամանագրերով տեղ տեղ ի սպառ վերացնելու փորձերը.

Եթէ բաւարար չհամարուի, նոյնիսկ Յունիսի 12ի օրէնքի գործադրութիւնը եւ նրա հետեւանք ժողովուրդի միահամուռ բռնկումը, ապա այս դոկումենտը(1) պիտի միանգամայն փարատէ ունէ կասկած ուսում ցանկութիւնների նկատմամբ ղէպի հայ լուսաւորչական եկեղեցին: (Կարգաց ուսում սինդի պաշտօնական նամակը, տպագրուած «Եկեղեցական լրատու»(2) ամսաթերթում, ուղղուած տիեզերական պատրիարքին, որը խօսելով օրթոտոքս եկեղեցու ղէպի այս կամ այն օտար եկեղեցիները բռնելիք ընթացքը, վերջացնում է նամակը, որը պարունակում է իւր մէջ Ռուս. վերջին կրօնական համազումար ժողովի որոշումները, հետեւեալ բառերով. «... Իսկ ուսաց եկեղեցու անմիջական նպատակն է ուղղափառութեան դարձնել ի վազուց անտի ուղղափառութիւնից հեռացած համայնքները, ինչպիսիք են նեստորականները, հայերը եւ զպոլները»):

Ահա թէ ինչ է ուսում սինդի, յենուած պետութեան ամբողջ ուժի վերայ, անմիջական նպատակը, որի իրագործման ինչ որ անմիջականութիւնը ապացուցեց կրօնական ժողովից մի ամիս ղեռ չանցած՝ Յունիսի 12ի օրէնքի հրատարակութիւնը, հայ եկեղեցիների թալանը արտօնող: Եւ կողոպտուեցին նոքա: Այսօր, Պոլսեանին էլ ջննութեան առարկայ է: Երէկ էլ մի նոր օրէնք՝ հայ քահանան ու սարկաւազը պիտի հաստատուին իրենց պաշտօնի մէջ նահանգապետից կամ գաւառապետից: Արդէն մեր եկեղեցին, 1500ամեակը տօնող եկեղեցին, թաթարներ, արաբներ տեսած եկեղեցին, այսօր տատանուում է եւ սասանուում հիմքից՝ 5 միլիոն զինուոր ունեցող պետութեան հարուածների տակ...:

Արդէն հայոց եկեղեցիում հնչում է ուսաց լեզուն. հայ քահանան ուսերէն է ստիպուած այսօր երդուեցնելու հայ զինուորին, աստիճանաւորին, դարձեալ նոր սինդի հրամանով: Այլեւս ինչ կարող ենք սպասել վաղը. միթէ՞ անհաւանական պիտի թուի ձեզ եթէ ասեմ, թէ շատ չի անցնի ու մենք, Կովկասի հայերս, աստամներս պիտի կրճատեցնենք անզոր զայրոյթից, կարողով նոյն սինդի երկրորդ նամակը, — «Կրօնական համազումար ժողովը ջննելով այսպէս անուանուած հայ լուսաւորչական եկեղեցու ծագման եւ զարգացման հարցը, գտաւ, որ նա, այդ եկեղեցին, ուղղափառ օրթոտոքս եկեղեցու բեկորն է, ինչ ինչ պատճառներով անջատուած օրթոտոքսութիւնից եւ թէ, հիմնուելով այսինչ եւ այնինչ հեղինակաւոր աստուածարանների այսինչ ու այնինչ խօսքերի վերայ,

որոշեց՝ ճանաչել հայ լուսաւորչական եկեղեցին օրթոտոքս ուղղափառ եկեղեցի»։ Ահա՛ որոշում, որի տակը «Թագաւոր կայսրը բարեհաճեց հաստատել եւ ստորագրել իւր սրբազան ձեռքով», — ու ամէն բան պրծաւ։ Անհաւանական չէ մի այսպիսի բան սպասել ոուս սինոդից, երբ նա համարել է մեր եկեղեցին կլանելու հարցը «անմիջական», երբ նոյն սինոդը կաթոլիկ վրացիների վերաբերութեամբ նմանօրինակ մի բան սրանից 15 տարի առաջ կատարել է, յայտարարելով, որ վրացի կաթոլիկները վրացի չեն, այլ՝ հայեր, հայ կաթոլիկներ. եւ մեր թեթեւամտ մամուլը իրա ժամանակ այդ առթիւ թեթեւամտօրէն իր ուրախութիւնը յայտնեց օրագրութեան էջերում, փոխանակ զգալու գալիք արհաւիրքը։ Մենք թոյլ ենք եւ անօգնական, իսկ թշնամիներս՝ ահաւոր եւ ուժեղ։ Ներկայ դարը քաղաքական դաշնակցութիւնների դար է, եռապետեան, երկպետեան դաշնակցութիւնների։ Անգլիան նոյնիսկ, իր անպարտութեան վերայ վստահ Անգլիան՝ դաշնակցեց Ճապոնիայի հետ։ Բուլղարները ազատուեցին՝ ունէին կրօնակից սլաւոնները ոուս։ Կրետը՝ Յունաստանը։ Հայերս ենք միայն, որ մենակ ենք, բոլորովին մենակ...։ Քաղաքական դաշնակից ունենալ չենք կարող։ Մեր դատը ինքնուրոյն կերպով տանել եւ վերջնական լուծում տալ չենք կարող, ինչպէս եւ արձանագրուած է մեր 2րդ Ընդհ. Ժողովից ի վեր, քանի որ Ֆիդիքայէս անկարելի է որ մէկը հազարին յաղթէ։ Մեծ պետութիւնների բարենորոգութիւնը, շուրի վրայ յոյս դնելն էլ տեսանք, խիստ սուղի նրստաւ, շահ, շահ չունեն մէջը...։ Որքան էլ որ ծանր է, պիտի առաջարկեմ այստեղ, այնուամենայնիւ միակ միջոցն է մեզի համար, — ես պարտական եմ աչքերս չփակել օրթոտոքսութեան վտանգի առաջ եւ առաջարկել, յանուն եկեղեցու փրկութեան եւ տաճկահայ ժողովուրդի ազատութեան, որ մենք պիտի աշխատենք եւ գլուխ բերենք կրօնական դաշնակցութիւն՝ անգլիկանական եկեղեցու հետ։ Այդպիսով, միանգամից երկու նպատակի հասած կը լինենք. առաջին՝ պատուար քաշած կը լինենք սպառնացող օրթոտոքսութեան, բունի ոուսացման առաջ, երկրորդ՝ մեր դատը Տաճկաստանում այդպիսով կը մտնի մի նոր փուլի մէջ։ Տաճկահայաստանում ամէնուրեք նորանոր անգլիական հիւպատոսութիւններ կը հաստատուեն, մենք ապահոված կը լինենք Անգլիայի, դաշնակից Անգլիայի համակրանքն ու պաշտպանութիւնը իբր կրօնակից ժողովուրդ։ Անգլիան, որը Աստուածաշնչական Ընկերութեան միջոցաւ միլիոններ է ծախսում իւր ազդեցութիւնը ամէնուրեք տարածելու եւ ոուսաց առաջադաց շարժման առաջն առնելու համար, թէ՛ մօտակայ եւ թէ՛ հեռու արեւելքում, կարծում եմ, զրկաբաց կ'ընդունի մեր առաջարկը, եթէ Կաթոլիկոսի միջոցաւ դիմելու լինենք Լոնդոն, Քինտրբերիի եպիսկոպոսին։ Այս ծանր հարցը ունի երեք ծանրագոյն դժուարութիւններ, որոնց լուծելն է հարցի ամբողջութեամբ լուծելը։ Հարցի դժուար կողմերն են.

ա.— Ի՞նչպէս կը նայէ հայ ժողովուրդը այս դաշնակցութեան վերայ. արդեօք չի՞ ընդդիմանայ։
 բ.— Ի՞նչպէս գաղտնի պահել նախնական քայլերը ոուսաց կառավարութիւնից, որպէսզի փաստը կատարուելուց վերջը միայն նա իմանայ։ Եւ
 գ.— Կաթոլիկոսն եւ մեր հոգեւորականութիւնը կը համաձայնի՞ն մեր այդպիսի քայլ առնելուն։ Հաւատացած եմ, որ եթէ լրջօրէն գործի ձեռնարկուի, այս երեք կէտերն էլ յաջողութեամբ կարելի կը լինի իրագործել առանց մեծ դժուարութիւնների։
 Ամենից առաջ, կարծում եմ, ոչ մի կասկած չի կարող լինել, որ Անգլիան ուրախութեամբ պիտի ընդառաջ գայ մեր կողմից անելիք այս առաջարկին. ո՞ր պետութիւնը եւ ե՞րբ է եղել որ չուզենայ իւր պրեստիճի(3) բարձրացնել եւ տարածել լայնութեամբ եւ խորութեամբ։ Մեր ժողովուրդը, մէկ կողմից տաճկաց լծի ծանրութեան տակ հիւժուած եւ արնաքամ եղած՝ այն դրութեան է հասել, որ ինքնաբերաբար խմբաբան կրօնափոխութեան է դիմել եւ վերջերս էլ Մշոյ դաշտում հազարաւոր ստորագրութիւններով պատրաստ էր դիմելու՝ օրթոտոքսութեան անդունդը դրուելու, եւ նրան այդ անդունդից հանեց Անգլիան իւր ժամանակաւոր յաղթութիւններով Առաքելոց վանքի պաշարման շրջանում։
 Նոյնիսկ թուրքանալու դէպքերը սակաւ չեն Երկրում, ուր մինչեւ այդ աստիճան ծանր է քրիստոնեայ ապրելը։ Ապա ուրեմն որքան աւելի մեծ ուրախութեամբ նրանք պիտի ընդունենին ամէն մի բարեփոխութիւն իրենց անտանելի դրութեան, եթէ նա զար բարձրից, էլ միաժամից, աւետելու նրանց փրկութիւնը, գոնէ դրութեան թեթեւութիւնը, թէկուզ մենակ նոր հիւպատոսների ներկայութեան շնորհիւ, որոնցից, մանաւանդ անգլիականներից, սովորել է ակնածել տաճկական սանձարձակութիւնը։ Իսկ ոուսահա՞յը։ Յունիսի 12ի օրէնքից վերջը, Սեպտեմբերի 2ի թալաններից վերջը, ոուսահայը ուրախութեամբ հոգին սատանային բաժին կ'անէ, միայն թէ ոուսացումից ապահովէ, ինչ գնով էլ որ ձեռք բերուի այդ ապահովութիւնը։ Իսկ ի՞նչ գին է առաջարկուում, ի՞նչ գոհեր է պահանջելու հայ եկեղեցուց՝ եկեղեցական այդ դաշնակցութիւնը։ Ես կարծում եմ որ ոչինչ, կամ համարեա ոչինչ. մէկ երկու դոկիմատիկ(4), ժողովուրդի համար գոյութիւն չունեցող եւ նոյնիսկ աստուածաբանների համար ներկայումս զուտ վերացական գիշումներ, դոկիմատիկ համաձայնութիւն, օրինակ այսպիսի հարցերի, թէ մարդկայնութիւնը, որ կար Քրիստոսի մէջ, խառնուած էր աստուածայինի հետ՝ թէ անխառն էր. այս ինքն ըստինքեան անմիտ հարցին այո կամ ոչ պատասխանելով, կամ սրա նման մէկ երկու նոյնպիսի ժողովուրդի համար անհասկանալի եւ

անհետաքրքիր հարցերի մասին համաձայնութեամբ, եւ կամ լուրջ թղթի վերայ դրուած՝ անգլ. եկեղեցու հովանաւորութիւնը ընդունելով՝ կը վերջանար ինդիքը, որը ոչինչով չէր էլ կարող յայտնի լինել ժողովուրդին ըստ էութեան, մանաւանդ որ լեզուն, ծէսերը, արարողութիւնները, մէկ խօսքով ամբողջ եկեղեցին կը մնար անխախտ եւ անփոփոխ, որոնք կազմում են ժողովրդի եւ ոչ աստուածաբանների եկեղեցին։ Ոչինչ, ոչինչ չէր փոխուի եկեղեցուց, որ նրա սրտի եւ հոգու հետ կապուած է դարերի ընթացքում։
 Մէսերը, լեզուն, առանձնայատկութիւնները, մեղեդիներն ու շարականները, ընտրողական սկզբունքն ու լայն համբերատար ոգին, բոլորը, եկեղեցական ամբողջ ինքնուրոյնութիւնը կը մնային անձեռնմխելի, եւ դաշնակցութիւնը կը կայանար զուտ դոկիմատիկ(4) մի երկու հարցերի շուրջը՝ զուտ թուղթի վրայ։
 Թուս կառավարութիւնը ի հարկէ դժուարութիւններ, դուցէ անյաղթելի դիմադրութիւն ցոյց տայ այս հարցում, սակայն չպէտք է մոռանալ, որ նախապատրաստական շրջանը կատարել պէտք է դաւադրական ձեւով, լուրջ գաղտնապահութեամբ։ Հայրիկը մէկ հոգեւորականի եւ մէկ աշխարհականի կ'ուղարկէ իր կողմից Լոնդոն, այնտեղ բանակցութիւն սկսելու եւ Անգլիայի տրամադրութիւնը եւ ցոյց տալիք երաշխաւորութիւնները ստուգելու, եւ եթէ հասկացուեց, թէ Անգլիան այդ սկստի շնորհիւ կը խոստանայ կատարեալ ազատութիւն մեր եկեղեցու՝ մէկ կողմից, միւս կողմից ապահովութիւն օրթոտոքսութեան առաջադաց ընթացքի դէմ, ահա՛ այն ժամանակ, նախապէս ստացած լինելով ե՛ւ Պոլսի Պատրիարքի եւ կրօնական ժողովի միջոցաւ մեր հոգեւորականութեան համաձայնութիւնը, կը ստորագրէ դաշնագիրը եւ այդպիսով վերջնականապէս կ'ապահովէ մեր եկեղեցին օրթոտոքսութեան վտանգից եւ զարկ կը տայ տաճկահայ դատին, խլելով նրան ոուսաց ճանկերից, որի ցանկութիւնները ամբողջ Հայաստանի եւ մեր վերաբերութեամբ՝ այլեւս գաղտնիք չեն բոլորովին։
 (Թեր ու դէմ կարծիքներու փոխանակումէ ետք, կրօնական Դաշնակցութեան առաջարկը ես անուշեցաւ առաջարկողի կողմէ։
 Ի նպաստ խօսեցին Պարզեւ, բժիշկ Լորիս, Աշոտ, Թահեր։
 Ընդդէմ խօսողներն էին՝ Սիմէոն, Քրիստափոր, Վահար, Վաղարշակ)։

4.— ԼԻԱԶՕՐԱԳՐԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Ինչպէս ներածական բաժնի մէջ ըսուեցաւ, Հ. Յ. Դ. Երրորդ Ընդհանուր Ժողովի քաղաքական մէջ կը գտնուին մեծ պատգամաւոր ընկերներու տրուած լիազօրագրեր, գործի ընկերներու քե Դաշնակցութեան բարեկամ անձնաւորութիւններու կողմէ Ընդհ. Ժողովին ուղարկուած նամակներ, հաշուեկամ եւ այլ բուլղար։
 Ներկայ բաժնի մէջ կու տանք լիազօրագրերն ու կարեւորագոյն նամակները։ Իրբեւ ճուշակ շահեկամ (իրբեւ ազդար կամ որոշ տրամադրութեանց արտայայտութիւն՝ ներքին շրջան), գանց կ'ընենք խմբակայ ֆոնիկի (Ատրպատական), Արամ-Սամուելի, Արշակի եւ Տիգրանի (Արշակունիքի), Երեւանի նամակները եւ կարգ մը ուրիշ երկրաբանական գրութիւններ։

Գ.Ը.Ժ. 1.— ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՂԻ. ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՕՐԱԳՐԸ

Գրուած սեւ մելամով, Հ. Յ. Դ. Ատրպատական կեղ. Կոմիտէի երկրորդ պաշտօնաբուլղարի (22x27 սմ.) մը առաջին էջի վրայ։ Կմտուած է Ատրպատականի Կ. Կոմիտէի կարմիր կնիքով։

Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներին։

Յատակցութեամբ կայանալիք Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին կեղ. Կոմիտէի կողմից առաջարկուած ենք լիազօր պատգամաւոր ճանաչել մեր ընկեր Սամսոն Ղարիբեանին։

Հ. Յ. Դ. Ա. Կ. ԿՈՄԻՏԵ

1903 թիւ,
 1 Դեկտեմբերի

Գ.Ը.Ժ. 2.— ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ

Այս նամակը եւս գրուած է Ատրպատականի կեղ. Կոմիտէի պաշտօնաբուլղարի մը առաջին էջի վրայ։ Ուղարկուած է Արեւմտեան Բիւրոյին, բայց մեղադրութեամբ կ'ընդհանուր ժողովին։

Յունուարի 5ին, 1904 թ.

Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրոյին

Սիրելի ընկերներ !

Ընդհանուր Ժողովին մասնակցելու համար Ատրպատականի կենտրոնական Կոմիտէն որոշել է ունենալ երկու ներկայացուցիչներ, որոնց մէկը որպէս խորհրդատու անդամ։

Արդէն պաշտօնական նամակով ներկայացրել ենք Սամսոնը որպէս ներկայացուցիչ «Վրէժ» կենտր. Կոմիտէի կողմից. այս նամակով էլ շտապում ենք տեղեկացնել Ձեզ մեր երկրորդ ներկայացուցիչ Մարտիրոս Յարութիւնեանի մասին, որ այժմ գտնուում է Բերլինում։

(1) Այս փաստաբուլղար։
 (2) Թուսերէն գրուած, — «Ներքովը վերաբեր»։
 (3) Վարկը, ներքինաբանութիւնը։
 (4) Վարդապետական, տեսական՝ կրօնական իմաստով։

Մեր որոշման համաձայն, Սամսոնը Կովկասում տեսնուելով Մ. Յարութիւնեանի հետ, միասին պիտի գային Ընդհանուր Ժողովին, բայց որովհետեւ Մարտիրոս Յարութիւնը ժամանակից առաջ արդէն Կովկասից մեկնել էր Բերլին, հնարաւոր չեղաւ միասին գալը: Ուստի, խնդրում ենք (որ) դուք միջոցներ ձեռք

առնէք իմացնելու նրան ժողովի տեղը եւ հոգաք ճանապարհածախսը:

Ընդունեցէք մեր ընկերական բարեւանները:

Հ. Յ. Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ. ԿՈՄԻՏԷ (Կնիք)

Գ.Ը.Ժ. 3.— ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ՊԱՏԱՍԵԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԵԱՄԱԿԸ

Գրուած է գրեթէ ամբողջութեամբ ծածկագիր, 13x20,5 սմ. նամակի երկրորդ քուարթի մը առաջին էջին վրայ, կարմիր մեկանով, ստորագրուած՝ Հրայրի (Դժոխք) եւ վահանի (Մամուլէիան) կողմէ, եւ կնքուած՝ Բարձրաւանդակի կեդր. կոմիտէի կնիքով (ԻԿԱԴՆԱԽԱՐՁՐԱՐ, — կարգալ շքուած): Ծածկագիրը վերծանուած է սեւ մեկանով:

Երկրորդ էջին վրայ, վերը, սեւ մեկանով, գրուած է թորգոմի կողմէ.—

Հ. Յ. Դ. IIIրդ Ընդհ. Ժողովին, — իմ ձայնը կու տամ Երկաթին:

ԲՈՐԳՈՄ»

Հայ յեղափոխութեան պատմութեան ամենէն pathétique փաստաբուրքերէն մէկն է անկասկած՝ այս փոքր երկտողը: Ընդհ. Ժողովին հազիւ մէկ քանի ամիսներ ետք, Սասնոյ կռիւներու ընթացքին կամ կառուցման օգնութեան հասնելու ճամբուն վրայ՝ նահատակուած էին արդէն եւ լիազորող Հրայրն ու վահանը, եւ լիազորուող թորգոմն ու կայծակ-վազարշակը, եւ թորգոմէն փոխանորդագիր ստացող՝ Սայնոյ Զորի պատգամաւոր Աշոտ-Երկաթը:

Կու տամք ճանաչում էջի սղագրական պատճենը:

Հայ Յեղ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. Ժողովին

Սիրելի ընկերներ, Մեր ընկերներէն թորգոմ եւ Կայծակ ընտրուած են պատգամաւոր՝ առաջինը Բարձրաւանդակի Պատ. Մարմնոյս կողմանէ եւ երկրորդը Տարօնոյ կեդր. կոմիտէի կողմէն, մասնակցելու Ժողովին: Ասոնց միջոցաւ կ'ուղարկենք մեր գործառնութեանց տեղեկագիրը, ռազմական եւ դրամական հաշուեկշիւը եւ տեղեկագրութիւններ:

1903 Նոյ. 9 Բ. Ի Պատ. Մարմին Բարձրաւանդակ ՀՐԱՅՐ ՎԱՀԱՆ

(Կնիք)

Հոսոյ 3 էջ. Դոյն 2 մղ զ ու-Քէ մղ
14.4.17-17.19.11... 27.4.31.5.4.6.36.1.7.19.4.5-
Գր. 22.5.27... 29.1.11.1.18.15.5.

Ա ի ռ է շ ի Ը Ն Ե Ր Յ Ե Ն
16.15.2.19.29.15-23.5.6.19.2.5.19.2-

Ը Ն Ե Ր Յ Ե Ն Ե Ն Բարձր
23.5.6.19.2.5.19.2.9.5-10.1.2.22-
1.20 եւ 6.6.17.31.4.6- ընդհ. առ եւ 24.4.25.22-
4.30.4.7.1.2- 4.35.4.24.15.5.20- 26-... 24.4.25-
20.4.2.20.5.1.19.16- Գր. Մարտիրոս Լ 19.9.6.2.1.2.27.22-
25.4.2.1.5.1.17- 6-... 6.1.20.15, 27.9.18- 6.1.18.20,
9.5- 20.4.16.5.4.6.36.19.29.1.7- 29.1.11.1.18.15.27-
4.16.1.5.26- 20.18.34.1.26.1.19- 6.1.7.18.4.2.6.18,
5.2- 20.19.2.31.4.35.5.1.7.16.19.4.5.26- Կնիք-Վազարշակ
25.4.7.20-4.6.4.5 Լ 27.2.4.20.4.6.4.5- 14.4.21.1.7

6.21.15.25.22 Լ առջին Գր. Մարտիրոս Բարձր
1903 Նոյ 9 26-ի . 24.4.25... 20.4.2.5.25.5



Գ.Ը.Ժ. 4.— ՊԱՒԲԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՎԿԱՅԱԳԻՐԸ

Գրուած սեւ մեկանով, Պալեանեան Կ. Կ. Ի երկրորդ պաշտօնաբուրքի մը (21.5x27 սմ.) առաջին էջին վրայ, եւ կնքուած մանրակազոյն կնիքով:

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

Հ.Յ.Դ. Պատգամաւորական Ընդհ. Ժողովին

Ընկերներ, Ներկայով կու գանք Ձեզ յայտնել, որ Պալե. Շըր-Ջանական Ժողովը Ընդհ. Ժողովի համար պատգամաւոր ընտրուած է ընկեր Գ. Վարդոն, եթէ ան ուրիշ տեղէ ձայն չստանայ, իսկ ուրիշ տեղէ ձայն ստանալու պարագային՝ Ժողովը իր ձայնը տուած է ընկեր Գ. Պրոնեանին:

Այսու կը հաստատենք նաեւ, որ վերջերս Ոսկեհանքի կեդր. կոմիտէն իր հաշուեկշիւըր եւ տեղեկագիրը կրկնակի առաջարկներով միասին ղրկելով Գ. Վարդոյին, Ընդհ. Ժողովի համար պատգամաւոր ընտրուած է նոյնպէս Վարդոն:

Ընկերական բարեւաններով (Կնիք Պալեանեան կեդրոնական կոմիտէի)

14 Յունուար 04 (հ.տ.)

Գ.Ը.Ժ. 5.— ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԳԻՐԸ

Գրուած կապտաւուն-սեւ մեկանով, նամակի 14x22,5 սմ. երկրորդ քուարթի մը առաջին էջին վրայ: Ուսանող Միութեան ներկայացուցիչ ընտրուած է Ասանաբը (Կարիս), սակայն, ինչպէս ի յայտ կու գայ արձանագրութիւններէն (տեսնել էջ 108ի ծանօթագրութիւններ), ժողովին մասնակցած է Ազատքը՝ ձայներու բաւ տեսակէտէն յարգ քիցմածուն:

Բոլոր թեկնածուները ընդհանուր ցանկի միջից ձայների մեծամասնութեամբ ընտրուեց Միւնխենի ուսանող Պրն. Գուլուսեան (Ասանաբ):

- Թեկնածուներն են. 1.— Պրն. Գուլուսեան — 29 ձայն (15 ձայն Լայպցիգից, 11 ձայն Բերլինից, 2 Ժընեւից եւ 1 Դարմաշտայից): 2.— Պրն. Ազատք — 26 ձայն (8 ձայն Փարիզից, 7 Դարմաշտայից, 6 Լոզանից, 3 Ժընեւից եւ 2 Բեռնից): 3.— Պրն. Սաղեան — 8 ձայն (5 ձայն Զիւրիխ, 2 Ժընեւ եւ 1 Դարմաշտայից): 4.— Պրն. Ղասարեան — 6 ձայն՝ Լոնդոնից:

5.— Պրն. Յակոբեան — 5 ձայն՝ Ժընեւից: Պրն. Գուլուսեանին մենք արդէն գրեցինք իր ընտրութեան մասին:

ԴԱՐՄՇՏԴԱՏԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

6. Գ.— Անյապաղ հաղորդեցէք՝ ե՞րբ է կայանալու Ժողովը:

Գ.Ը.Ժ. 6.— ՀՈՎԻՏԻ (ԱՅՆՔԱՊ) Կ. ԿՈՄԻՏԷԻ ԼԻԱԶՕՐԱԳԻՐԸ

Գրուած նամակի սովորական միաքերք քուարթի մը առաջին էջին վրայ: կնքուած չէ, բայց ստորագրուած Կ. Կոմիտէի երեք անդամներու կողմէ՝ որոնցմէ առ նուազն Յոյան անուան ծածկ է մեզի (տեսնել Ա. Խատր, ցուցակ անձանցներու, էջ 206): Հովիտի Կ. Կոմիտէն իր ձայնը տուած է վահանին (Յ. Գալփայեան, — տեսնել նոյն, էջ 204):

Լեոն. Ի Հովտի կեդր. կոմիտէն, Հ. Յ. Դաշնակցութեան 3րորդ Ընդհ. Ժողովին մասնակցելու եւ սոյն Արեւին. Շըջանի իրաւունքները պաշտպանելու համար՝ ներկայացուցիչի ձայնը տուաւ ԼեոնաՎայրի ընկերներէն Գ. Վահրամիս:

ՀՈՎԻՏԻ Կ. ԿՈՄԻՏԷ ՆԵՄՐ(?) ԳՈՒՐԳԷՆ ՅՕԼԱՆ

904, Յունվր. 1/14

Գ.Ը.Ժ. 7.— ԱՏԱՆԱՏԻ («ԲԱԶԷ») Կ. ԿՈՄԻՏԷԻ ԼԻԱԶՕՐԱԳԻՐԸ

Գրուած սեւ մեկանով, նամակի ընթացիկ տիպի (գծուար) երկրորդ քուարթի մը առաջին էջին վրայ: Ստորագրութիւնները, բացի Անի-էն, մանրակազոյն մեկանով են: Լիազորուած է Բժ. Կիլիկեանը, քեւ գրութեան մէջ յստակօրէն կը կարգաձէ՛ Պրն. Կիլիկային:

Ատանա, 25 Դեկտ. 1903

Տեարք, Հ. Յ. Դաշնակցութեան Ատանայի Կ. Կոմիտէն ստացած լինելով Դաշնակցութեան Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոններու կազմակերպութեամբ ղուժարուելիք Երրորդ Ընդհ. Ժողովին հրաւեր-չըջարեակաւոր եւ նկատի առնելով չըջարեականի շօշափած հարցերը, իր մասնաւոր շըջանական ժողովներու մէջ աւանդ վրայ խորհրդակցելի եւ վիճարանելի վերջ, միաձայնութեամբ իր պատգամաւորի ձայնը յանձնեց իր ընկերներէն պարոն Կիլիկային, որը պիտի կրէ ներկայ վիկայականը, որպէսզի իբր լիազոր ներկայացուցիչ նոյն ժողովի ընդհ. խորհրդակցութեանց եւ որո-

չուճներուն մասնակցելով՝ պաշտպանէ մեր շրջանի իրաւունքները եւ պահանջները:

ԱՏԱՆԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ ԸՆԿԵՐՆԵՐ՝ ԱՐԱՔ ԾՈՎ ՓՈՔՈՐԻԿ ՎԱՀԻ ՇԱՀԻՆ ԱՆԻ ՇԷՅԻԱՆ

Գ.Ը.Ժ. 8.— ԲԺ. ԿԻԼԻԿԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Առաջին գրուած է սեւ մելմով, միաքերք եւ միագիծ մասնակի բուլղի մը (14,5x20 սմ.) մէկ էջին վրայ: Երկրորդը՝ մասնակի փոքր չափի (13,5x20,5 սմ.) սովորական երկքերք բուլղի մը առաջին երեսին վրայ, մամիշակագոյն մելմով:

Բացայտօրէն, ՌԱՋԷ Կ. Կոմիտէի Առաջնայի Մարմինն է, որոն պատգամուած էր Կիլիկիան: Արձանագրութեամբ մէջ, սակայն, Առաջնայի շրջանը կոչուած է եւր-վիրայ:

Գէյրուք, 20 Յունուար, 1904

Գ. Ընդհ. Ժողովին

Սիրելի ընկերներ,

Ընդհ. Ժողովին խորհրդակցութեանց մասնակցելու համար Լեւոն-ի Բաղէ Կ. Կոմիտէի կողմէն պատգամուած ընտրուած լինելով չուս եկայ արտասահման անցնելու համար, բայց դժբախտաբար այլ եւ այլ պարագաներու տակ հարկադրուած լինելով չկարենալ ներկայ գտնուիլ Ընդհ. Ժողովոյ խորհրդակցութեանց, իմ ձայնս կը յանձնեմ Լեւոն-ի Պատ. Մարմնի անդամներէն Պրն. Վահրամիին եւ կը խնդրեմ, որ այս գրութիւնս բաւական համարէք հաստատելու եւ վաւերացնելու համար իր ներկայացուցիչի պաշտօնը:

Ընկերական բարեւանքով՝
Լեւոնավայրի Բաղէ Կ. Կոմիտէի
պատգամաւոր անդամ՝
ԿԻԼԻԿԵԱՆ

Գէյրուք, 26 Յունուար 1904

Ընդհ. Ժողովին

Տէր Նախագահ,

Նախորդ նամակս կը հաստատեմ, որով Ձեզի ծանուցած էի ինչ ինչ պարագաներու բերմամբ Ընդհ. Ժողովի նիստերուն իմ անձամբ ներկայ գտնուելու անկարելիութիւնը եւ իմ պատգամաւորի ձայնը Լեւոնավայրի Պատասխանատու Կոմիտէի անդամներէն Պրն. Վահրամիին յանձնելու: Այժմ այս գրովս Ձեզի կը տեղեկացնեմ, որ եթէ Պրն. Վահրամը այնպիսի կա-

ցութեան մը մէջ գտնուի որ իրեն անկարելի լինի որբէջ ձայն մը ունենալ, որ իր անձին վրայ զանի մը ձայններու կուտակուածը եւ այլն, ես իմ ձայնս կը յանձնեմ Լեւոնավայրի Պատասխ. Կոմիտէին:

Ընկերական բարեւանքով՝
ԿԻԼԻԿԵԱՆ

Պատգ. Լեւոն-ի Բաղէ Կոմիտէի

Գ.Ը.Ժ. 9.— ՈՍԿԵՀԱՆՔԻ (ԻԶՄԻՐ) ԱՌԺԱՄԵԱՅ ՄԱՐՄՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Գրուած սեւ մելմով, մասնակի փոքր չափի (11x17,5 սմ.) անգիծ երկքերք բուլղի մը առաջին երեսին վրայ: Կը բացատրէ քէ ինչու Մարմինը Վ. Էսկիպը կը նստի Սոփիա, Ընդհ. Ժողովին ներկայացուցու եւ բացատրութիւններ տալու համար:

2/28 — 3/12 904, Ոսկեհանք

Հ. Յ. Դաշնակցութեան
Սոփիայի մէջ գումարուած
Յրդ Ընդհ. Ժողովի նախագահին.

Ոսկեհանքի Կ. Կոմ. Առժամեայ Գործ. Վարչութիւնս, տեղեկանալով որ իր Պատգ. Ժողովիդ ներկայացուցած տեղեկագիրը Գ. Վարդոյի միջոցաւ, իր մտքերը եւ իսկական եղելութիւնները եւ վիճակը պատկերացնելու չյաջողելէ զատ, հիմնովին տարբեր եւ տխուր գաղափար մը յառաջ բերած է, տեղիս համար այդ անակնկալ եւ կենսական թիւրիմացութեան առաջ՝ անմիջապէս Մարմնոյս կողմէն ընկեր մը ճամբայ կը հանենք, լիայոյս լինելով, որ Ոսկեհանքի տեղեկագիր թիւրիմացութեան հանդէպ տալով ամէն բացատրութիւն՝ պիտի յաջողինք իսկական գաղափար տալ իր մասին: Ուստի կը խնդրեմք, որ եթէ կարելի է, յետաձգելով մեր խնդիրը, ժամանակ շահեցնէք մեզի, որ ընկերը հասնելով չզոցուած գտնէ մեր մասին բացատրութեանց կարգը:

Ի դիմաց Ոսկեհանքի Առժամ. Կեդր. Կոմ. Ի Գործ. Վարչութեան՝
ՍՈՒՐԷՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐՊԵՏ

Գ.Ը.Ժ. 10.— ՎՃԻՌՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ ՆԱՄԱԿԸ՝ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ (ՎՐԷԺ) Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Գրուած սեւորակ-մամիշակագոյն մելմով, մասնակի 13,5x21 սմ. չափի երկքերք բուլղի մը ա. եւ գ. երեսներուն վրայ: Ընդհ. Ժողովին՝ շրջաններէն մէկուն ուղղուած միակ մասնակի է:

Բովանդակութիւնը յստակ է եւ բացատրութեամբ չի կարողորգեմք: Բոլոր փոխադրութեան արագացման մտահոգութիւնը յառաջընթացը Բարձրաւանդակի մօտայուս կախումն են անշուշտ:

26 Յունուարի 904, Սոփիա

Վրէժի Կեդրոնական Կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Ընդհանուր Ժողովը, իր մի շարք վճիռների դործադրութիւնը չուսացնելու նպատակով, հաստատել է մի մասնախումբ, որի պարտականութիւնն է Ժողովի ընդունած որոշումները անյապաղ հաղորդել պատշաճ մարմինների եւ ընկերների: Ահա այդ մասնախումբի կողմից է, որ գրուում է ձեզ այս նամակը:

Պէտք է աշխատել ճշմարտայ ընթացքում, որքան ծայր կամ կոթ կը լինի պատրաստ, փոխադրել Միւնաթ(1). իսկ եթէ յարմարութիւններ կան Միւնաթից էլ Շամիր(2) փոխադրելու (սուրհանդակների միջոցաւ), պէտք է ջանալ փոխադրել ծայրերը:

Հարկաւոր է հոգալ նաեւ Գաղթաշէնից(3) գիծ պատրաստել եւ այնտեղի իրերը փոխադրել Շամ(2): Խորհրդակցեցէք Շամի ընկերների հետ եւ գործը առաջ մղէք:

Այսօր գրում ենք Մեծ Բաղաք(4), որ ձեզ փոխադրեն 1200 բուլղի: Այդ գումարից 1000 բուլղիով պէտք է դնել նոր տեսակի ծայրեր եւ փոխադրել Միւնաթ, իսկ մնացած 200 բուլղին յատկացուում է տեղիդ արհեստաւորների ապրուստին:

Ամերիկայից այդտեղ ստացուած 540 թումանը պէտք է գործածել այսպէս, — գնեցէք 1000 նոր տեսակի ծայրեր, իսկ մնացած գումարով հին ձեւի կոթեր: Խմբադրութիւնից Միւնաթ է ուղարկուել 1500 Փր., գրանից 1000 Փր. փոխադրելու է Շամ(2), իսկ մնացած 500 Փր. ստացէք այդտեղ եւ ձեռք բերէք նոր տեսակի ծայրեր:

Ժողովը խնդրում է ոչ մի կերպ չնեղուիլ այս կարգադրութիւններից եւ ջանալ արագացնելու դրանց գործադրութիւնը:

Ընկերական բարեւանքով՝
Մասնաժողով ՍԻՄՈՆ ՄԱՄՕ ԻԼԼԷՆ ԳԱՐԵԳԻՆ(5)

- (1) Սայմաստ:
- (2) Վան:
- (3) Թաղէի վանքը (Մեծաւոր):
- (4) Թիֆլիս:
- (5) Սիմոնը եւ Էլլեմը (Քրիստափոր) ծածօք են: Գաբրիելը Սամսոնի ծածկանունն է: Մամոն, քէն յստակօրէն գրուած (արդեօ՞ք Սափօ՞) Մարտիրոս Մարգարեանը), կրնայ ճանաչուիլ ըլլալ չամօ:

Գ.Ը.Ժ. 11.— ԿՈՄՍԻ ՆԱՄԱԿԸ՝ ՎԱՆԷՆ

Գրուած մամիշակագոյն մելմով, մասնակի գծաւոր (19,5x25,5 սմ.) բուլղի վրայ, վեց էջ: Ձեռագիրը մամր է, եւ, մելմի տարածման հետեւանով, կարգ մը տեղեր՝ դժուար ընթեռնելի: Որոշ բաներ ծածկագրով են, ու վերծանուած՝ սեւ մելմով:

Գրուած ըլլալով Ընդհ. Ժողովին բաւական առաջ, պէտք է ուղղուած ըլլայ Բիրոններէն մէկուն (ամենայն հաւանականութեամբ Արեւիկեան Բիրոնի), եւ ամբողջ միջոցաւ՝ ներկայացուած Ընդհ. Ժողովին:

№ 1

28 Հոկտ., 1903, Շամ(1)

Սիրելիք,

Բաւական նեղութիւններ կրելուց յետոյ, վերջապէս հասանք: Շատ եմ ցաւում միայն, որ ձեզանից խնդրածս իրերը եւ թղթերը չկրցայ բերել հետս. ներանց անհրաժեշտութիւնը զպացուում է այստեղ եւ յոյս ունեմ, որ ցայժմ ուղարկած կը լինիք. բայց յամենայն դէպս, եթէ դեռ չէք ուղարկել, աշխատեցէք տեղափոխել Միւնաթ(2), որտեղի հետ կայ կանոնաւոր դիւ: Երկիր մտնելուց անմիջապէս, այսպէս ասած հենց երկրի սեմի վրայ, դէպի ինձ պարզուած տեսայ հաղարաւոր ձեռքեր, որոնք տեղորէն զէնք(3) են պահանջում, հակառակ դէպքում մի ամենաթեթեւ խրտման պիտի սկսուի կորստաբեր գաղթականութիւնը, որին այնքան յաճախ դիմել է Ժողովուրդը իր բեւ փրկութիւն: Մանր ու սեւ մտքերով համակուած քայլում էի թշուառութեան ու յուսահատութեան երկրով, ու հսկայ կարիքը սարսափեցնում էր ինձ: Միւնաթարական էր միայն մի փոքրիկ անկիւն, որը ոգեւորեց ու մասամբ յուսադրեց ինձ: Մեր պաշտօնատեղիի մօտ կայ մի կղզի(3), որին դեռ չմտեցած կարծեցի գտնել կրօնի սեւ թանձրութեան տակ մթազնած դէմքեր, սակայն որքան լաւ էր երբ գտայ ոգեւորուած, լմբոստ ու եռանդով լի մենակների մի խումբ, որոնց հոգին սերտ կերպով շողկապուած է մեծ գործի հետ: Գիսակը(4) կրցել է անել այն, որ ոչ ոք դեռ չէր արել. նա ոչնչից կարողացել է առաջացնել մի սերունդ, որ այժմ երիտասարդական հրով լի կուրծքերը դուրս նետած կանգնել է պատնէջի պէս. միւնաթարական է: Գիսակից յետոյ թեմը թափուր մնալով տեղ-տեղ ջրլատուել է, ցրուել ամբողջութիւնը եւ թուլացել առհասարակ: Տեղս գրեթէ չկայ գորեղ մի մարմին, թէեւ զուրկ չենք անհատներից. գաւառները շատ տեղեր կղզիացած են մնացել ու այդպէս ոչնչացել են: Այդ բոլորը սակայն ոչինչ. մեզ թուում է, որ պիտի կարենանք նորից վերականգնել բոլորը: Գիսակը(3) դրսի հետ կանոնաւոր թղթակցութիւն ունի. կ'աշխատեմ օգտուել այդ առիթից եւ խորհրդակցել նրա հետ: Շատ ուրախ եմ, որ հետս կայ մի ընկեր, որին կ'ուղարկենք պաւառները ընդմիջ: Դա Միւնակի ընկեր Բայանդուր Իշխանն(5) է, վերջերս ձեզ հետ տեսնուած. իսկ ես կը մնամ եւ տեղականների հետ պուցէ կարողանամ մի

բան անել: Միայն այժմէն իսկ գտէք կրթուած ուժեր, որոնք յարմար առթիւ կարողանան գալ: Առ այժմ հարկաւոր են չորս մասնադէմներ, որոնց աչքի առաջ ունեցէք յամենայն դէպս. — մի արհեստաւոր, մի էլէկտրո-տեխնիկ, մի տոպոգրաֆ(6) ու մի ռազմագէտ ուժ: Սրանք, կրկնում եմ, ամենակարեւորն են, որոնց գըտնելու համար, յոյս ունեմ կ'աշխատէք: Դոցա հեշտ է գտնել Ամերիկայից, Ռուսիանից եւ մայրաքաղաքներից, որոնց խնդրում եմ դիմէք («գտնել» բառի վրայ չծիծաղէք. ցանած չեն, — այդպէս չէ՞): Դեռ Տառեխնոցից(7) մի նամակ գրեցի Վահանին(8) ... մոռացայ ասել, որ մենք հենց այդտեղից մտադիր էինք նախ անցնել այն կողմ, տեսնուել, խորհրդակցել, ապա իջնել, բայց վերահաս ձմեռը կարող էր ամբողջ 3-4 ամիս բանտարկել միզ անդործ թողլով: Մարգարէ չպիտի լինէի նախատեսելով, որ դարնան(3) անխուսափելի է բռնկումը(9). ահա ես կանչ առայ զլիւսաւորապէս այդ կէտի վրայ: Գրեցի նոցա, որ մեր կողմերում չկայ զբեթէ ամենանհրաժեշտ պատրաստութիւնը գոնէ պաշտպանուելու համար: Ահապէն չըջաններ թողնուած են դրեթէ առանց մի հատ գէնքի(3), եւ երեւակայեցէք, եթէ նոքա սկսին մի բան՝ ի՞նչ պիտի լինի մեր կողմերը: Գրեցի մեր դիտողութիւնների արդիւնքը եւ նրանց վրայ հիմնուած եզրակացութիւնը — որ, ամէն կերպ պիտի խուսափել աղմուկից մինչեւ աշուն: Եթէ կարողանանք դիմանալ մինչեւ այդ ժամանակը մենք կ'ունենանք զբեթէ մի անընկճելի ուժ: Այս բոլորը գրեցի նրանց եւ այժմ էլ ձեզ եւ Արեւմտ. Իււրոյին եմ դիմում նոյն առաջարկով. աշխատեցէք ձեր կողմից գրել, որ տեղի չտան, եթէ ոչ բոլոր միւս մասերը ոտքի տակ կը տրորուեն եւ իրենք էլ. չեմ կարծում երկար դիմանան, որովհետեւ թշնամին այնքան թոյլ չէ որքան կարծում ենք: Նա իր ուժով կարճ ժամանակում կը ոճնչացնի այնտեղ էլ եւ այս անգամ սարսափելի կը լինին հետեւանքները...: Գիտեմ, քաղաքական զրուիւնք կարող է նպաստաւոր լինել, կամ կառավարութիւնը՝ ինքը կ'արշաւէ, նախապարձակ կը լինի... չգիտեմ ճշմարիտ. միայն իմացէք, որ բացի այնտեղից, ոչ մի տեղ չունենք լուրջ պատրաստութիւն եւ ինչպէս գիտէք (դառն, սարսափելի իրողութիւն) դուք չունիք այդտեղ ուժ. եթէ այդ լինէր, գոնէ այդպիսի վայրկեաններու յուսահատ մի քայլ կ'անէինք, մի քանի դժերից ներս կ'արշաւէինք(3) զօրեղ խմբերով(3): Մօտիկ ժամանակներում կ'աշխատենք հասցրնել ձեզ մեր թեմի (որը շատ մեծ է եւ կարեւոր) վիճակացոյցը, — որը պիտի լինի շատ ընդարձակ եւ մանրամասն, — որից փաստացի կը տեղեկանաք բոլոր մեր իրողութիւնը: Նախապէս խնդրում ենք վիճակացոյցը ներկայացնել Ռիդ. Փողովին(3): Զգիտեմ դուք տեղեկութիւն ունէ՞ք, որ այլեւս ոչ մի գէնք(3) չունենք ոչ Զրաբերդ, ոչ Մրգաստան եւ ոչ Մինարէթ(10): Այնտեղ եղածս միջոցին ես խօսեցի տղանե-

րի հետ. Դարվիշը(11) դիւրութիւններ էր գտել. չգիտեմ որքան դիւրին եւ իրադրո՞ծելի են: Այսպէս թէ այնպէս դա ամենալուրջ հարցն է, որով պիտի զբաղուի յատուկ ընտրուած մի խումբ. — դարունը մօտ է: Ես չկարողացայ տեսնուել ոչ Երկաթի եւ ոչ Վարդանի(12) հետ. շատ տարօրինակ ու անհասկանալի մնաց ինձ նրանց մեկնելը: Իմ պալոյս միայն մի օր առաջ հեռացել են գիտնալով հանդերձ, որ մենք եկել ենք. ափսոս. կարեւոր էր տեսակցել նոցա հետ: Գիտակի այժմեան դրութիւնը վատ չէ, բայց նա պաշտօնական անձանց մէջ ունի մի քանի թշնամիներ, որոնք, ինչպէս լսել են թէ՛ ինքը եւ թէ՛ տեղացիք, կամենում են թռնաւորել(3) նրան: Մտածում ենք դիմումներ անել հիւպատոսներին(3). տեսնե՛նք: Նա եւ Մուշեղը բանտարկուած են մէկտեղ:

Այժմ մի քանի հարցերի մասին կ'ուզէի խորհրդակցել ձեզ հետ: Դա քիւրտերի(3) վերջերս նկատուող ցանկութիւնն է եւ շարժումը, մօտիկնալու ձգտումը դէպի մեզ: Արդէն 5-6 յայտնիներ կան, որոնք զանազան ժամանակներում ցանկութիւն են յայտնել աջակցել մեզ. եւ ծանօթանալ: 2-3ը արդէն Չեքո մասնակցութիւն ունեն եւ բարեկամական շօշափելի ապացոյցներ են տուել: Այսպէս շարունակել՝ պարզ է, որ միտք չունի. անհասկանալի բան դուրս չի գալ: Հարկաւոր է նրանցից ամբողջութիւններ կազմել կամ կապել որոշ կապերով մեզ հետ: Այժմ հարց է ծագում՝ ի՞նչ սկզբունքների վրայ պիտի հիմնել մեր բարեկամութիւնը եւ վարել բանակցութիւնները, ի՞նչ ստել նոցա, ի՞նչ յոյսեր տալ ապագայի վերաբերմամբ: Նոքա մեծ համարում ունեն մեր ուժի վրայ, այդ համարումը ի հարկէ կ'աշխատենք պահել, բայց հարցը հասունացել է, ծաւալել է եւ պիտի օր առաջ որոշ հիմքերի վրայ դնել: Մտածեցէք դորա մասին, մշակեցէք մի ծրագիր յանձնելով մեր քննութեան: Դոցանից մէկը մօտ օրերս ցանկութիւն էր յայտնել տեսնուելու մեզ հետ, բայց մենք դեռ չենք վճռում, որովհետեւ չգիտես ի՞նչ ասել: Այստեղ տեղացիներին յաջողուում է երբեմն կոթեր գնել(3), բայց առ այժմ փոքր ինչ թանկ են: Հինի ծայրերը շատ քիչ են այստեղ: Մեր բերած ուժերը(3) եւ խմորը ահապէս ուղեւորութիւն առաջացրին. աշխատեցէք ի սէր Աստուծոյն զոնէ զրանից մեծ քանակութեամբ ձեռք բերել եւ վրէժստանոյ անցկացնել: Մի ուրիշ կարեւոր հարց եւս.

Թերթեր, զրքեր եւ օտար թերթեր անկանոն են ստացուում այստեղ, որ շատ է պաղծնում գործը: Բացի դրանից մեր մօտ բարեկամներին հարկաւոր է պաշար տալ, մօտեցնել մեզ. այդ բոլորի եւ ուրիշ արագապահանջ կարիքների համար յարմար տեսնուեց պահանջել մի մամուլ, թող լինի փոքր (3-4 փութ) հայերէն եւ տաճկերէն տառեր(3): Դրա համար մենք գտել ենք մի շատ յարմար վայր, որտեղ կարող ենք

ազատորէն գործել: Եթէ կայ որեւէ արդելք, կամ հրահարուութիւն չկայ, անպատճառ ուղարկէք մի սեմինիստ(3) (բանդատներ(?) գործածելու հրահանգի հետ), միայն պիտի պատուիրել հայերէն եւ տաճկերէն տառեր(3): Զեզ պարզ ասեմ, դուք զանդաղ էք եւ ձգձող. խնդրում ենք, տղերք ջան, այս անգամ ըստ սովորութեան ականջի յետեւ չձգէք: Դա կ'ուղարկէք Մինարէթ, որը հեշտութեամբ կ'անցկացնի այս կողմ. մենք նրանց էլ ենք գրել: Մօտ օրերս Ամերիկայից ըստացուած էր 100 լիրա: Այդ դրամը կարծեմ ուղարկուած էր Բարձրաւանդակի(13) համար. այստեղից երկու կարեւոր մարդկանց հետ դրած ուղում էին ուղարկել, բայց ես յետ պահեցի նոցա եւ իսկոյն գրեցի տղոց խնդրելով, որ եթէ հնարաւոր է՝ կէսը յատկացնեն մեզ, եթէ ոչ՝ իսկոյն թող ստանան որոշ տեղից, տեսնենք: Մեզ դրամ այժմ հարկաւոր է մի քանի ձեռնարկութիւնների համար: Յոյս ունենք, որ մեր կարիքը կը ստիպէ ձեզ շուտով ուղարկել 80-100 լիրա:

Առայժմ ոչինչ չկայ գրելու: Խնդրում ենք կրկին, ըստ ձեր խոստման, անյապաղ կատարէք մեր պահանջները: Սպասում ենք նամակներիս պատասխանին: Նամակս խնդրում ենք ուղարկել եւ Ռուսիան: Այս անգամ նրանց եւ Խմբագրութեան չենք գրում:

Մոռացայ գրել, որ այժմ եւ եթ, այստեղ հարկաւոր է 10-15 հատ մատուցել(3) եւ նազան(3), թէ՛ քաղաքի եւ թէ՛ նամակատարների համար: Այստեղ եղել են, բայց գնացողները վերցրել ու տարել են առանց վերադարձնելու: Համբոյրներ եւ բարեւներ:

Ի դիմաց Շամի Կենտր. Կոմիտէի՝ ԿՈՄՍ

Ե. Գ.— Այդտեղ տեսէք զրո՞ղ Փափագեանին(14) եւ նրա միջոցով տեսնուեցէք մի վանցի պատանու հետ, որին ես յանձնարարականով ուղարկեցի իրեն: Այդ պատանու տանը պահուած կայ մի կոթ, որ չեն տալիս ասելով թէ առանց այդ պատանու թոյլտրութեան չեն կարող. տեսէք նրան եւ պահանջէք մի երկտող տոմսակ, որ կարողանան ստանալ:



Երկիրը այժմ խաղաղ է: Նեղութիւններ, կեղծքումներ ու ճնշումներ առաջացնելուց կարծես զգուշանում են: Դա կարծես մի սպառնական լուրիւն լինի, բայց չէ, կարծում եմ երկու պատճառ ունի. — ա. Մակեդոնական խնդիրն է, որ մեծ ուժեր է խլել կառավարութիւնից եւ այդ ուժերը բեւեռել ընդմիջա: Յետոյ նա չէր ցանկանալ, ի հարկէ, բռնկուած տեսնել մեր կողմը՝ չլլատելու համար իր ուժերը: Բ. Ռուսական բռնած զիբն է դէպի կովկասահայերը: Տաճիկ կառավարութիւնը աշխատում է վստասակել մեր արա-

մադրութիւնը լաւամարդի դիմակ դնելով. եւ ի՞նչ, մասամբ հասնում է իր նպատակին: Ապացոյց՝ Պոլսի հայերի ցոյցը, ուրս դեսպանի տան առաջ, — եւ հատուկտոր, դեռ մութ ու անորոշ արտայայտուող կարծիքներ, որոնց լուր եմ ենք այստեղ:

Մոռացայ գրել, որ մեր Բարձրաւանդակի(13) ընկերները երկրի վերաբերմամբ կենտրոնացում սխալ են ըմբռնում: Այդ ասել էր ինձ արտասահմանում Անտոնեանը(15) եւ ձիւղ էլ է. նախ բացի իրենց չըջանից կարծես չեն ուզում լսել ուրիշ տեղերի մասին, այդ հայեացքը պէտք է փարատել: Զէ՞ որ մեր չըջանումն էլ կան այնպիսի վայրեր, որոնք չեն զիջում նրանց վայրերին. մենք ունենք եւ առաւելութիւններ...:

Մեր նշանաբանն է վերջապէս՝ որ մեռնում եմ քաջի մտքով, կռիւ տալով միջեւ վերջ(16):

Մոռացայ գրել, որ գնէք մեզ համար մի արկղ կեղծամներով, ներկերով, մատիտով եւ իր հարկաւոր պարագաներով: Դա շատ կարեւոր է մեզ եւ մերոնց զանազան պարագաներում, մանաւանդ այս վայրկեանիս մի ծրագիր գլուխ բերելու համար: Խնդրում ենք չյետաձգէք թէ այս եւ թէ միւս խնդրածներս:

Նամակս կցկտուր եղաւ, կը ներէ՛ք. հարցերը խճճել են ինձ: Ախր մինչեւ այժմ ես չունեմ մի մարդավարի յանձնարարական. ի՞նչ պիտի լինի: Արեւմտ. Իււրոյից պիտի գրէին, դուք պիտի տայիք ու մինչեւ այժմ ոչինչ չկայ: Լաւ է դեռ, որ տեղացիք ճանաչում են ինձ եւ չպահանջեցին. այնուամենայնիւ ուղարկեցէք իրերիս հետ:

- (1) Վան, ուր մեր հասած էին Վ. Փափագեանը (Կոմս) եւ Իշխանը (Բայանդուր)՝ իրքեւ գործիչներ:
- (2) Մալմաս:
- (3) Մածկագիր գրուած բառեր:
- (4) Վարդգէս Սերէկիւլեանը, ամգամ Երկրի Պատասխանատու Մարմնի, որ այդ օրերում Վանայ բաժնի էր:
- (5) Յետագայ Վանայ Իշխանը (Նիկոլ Պոզոսեան):
- (6) Յրաճ. բառ՝ topographe, — երկրի մակերեսային չափումներու մասնագետ:
- (7) Արմէշի կուսակցական տեղամուկը (Վանայ ծովու հիւսիս):
- (8) Վանայ Մեծաւայտ, ամգամ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի:
- (9) Կակապիւնի տեղուտ Մասնայ ազատամարտիչներ:
- (10) Ոչ կարս, ոչ Երեւան եւ ոչ Մալմաս:
- (11) Գալուստ Ալոյեանը (Յարսոս):
- (12) Վարդաճ-Շահպազ:
- (13) Մասուն:
- (14) Վրթաճե Փափագեան, որ կոմսի մեծ եղբայրն էր:
- (15) Համալորէ՛՛ Անտոնը (Միսն Ջուրաբեան):
- (16) Ո՞ր մեռնում ... միջեւ վերջամախառնութիւնը ծածկագրի բաժանի է պարագալս: Կը բաւէ իւրաքանչիւր տառի տալ բաւաճան մը՝ 1 - 2 - 3 ... բնական կարգով: Յնափոխական շրջանի գործածուած են գամգամ ծածկագրեր, բայրթ ալ մոյճաճ տարբարան (մասնագէտ՝ մերկայ ըմբռնուող): Լեռնակայրի ծածկագրի բաժանի էր ՎՄայր Արաբի փոխարկչ երգը. գործածուած է մասն ՎՄեր Հայրենիքը:

Գ.Ը.Ժ. 12.— ԻՇԽԱՆԻ ՆԱՄԱԿԸ՝ ՎԱՆԵՆ

Թուրքն ու միւսք յար եւ նման են կոստի մամակին: Գրուած է բացայայտօրէն նոյն օրերուն, եւ գրուած՝ միսմամակի, միւսնայն Մարմին (Բիւրաներէն մէկուն): Մէկ բերք, երկու երես:

Ընկերներ, Երկար ճամբաներին ստանձանիքներում ստուպիւց յետոյ հասանք տեղս: Եւ անմիջապէս կը սկըսինք Գիտակից(1) յետոյ քայքայուած գործերը կանոնաւորել. այսպիսի կուռի տեսակէտից նպաստաւոր (կէտ) յանցանք է մեր կողմից անուշադրութեան մատնել: Մինչեւ այժմ միայն մի Բարձրաւանդակ(2) մեր գործունէութեան կենտրոնատեղի արած՝ բոլոր ճիգ ու ջանք թափել ենք նրա վրայ: Սակայն, դա միանգամայն սխալուած քայլ է: Բարձրաւանդակի մի բուն ժողովուրդը միացած կուռուղիների հետ՝ չի կարող այնքան էլ երկար դիմադրութիւն ցոյց տալ: Ընդհինի, որպէս ուղղակի մի վայր, նա քաջ է իւր ժողովուրդով եւ անընկճելի ու ըմբոստ, սակայն մի ծաղկով զարուն չի գալ: Մինակ Բարձրաւանդակի գինելով մենք մի լուրջ հետեւանքի չենք կարող հասնել: Պէտք է աշխատել, պատրաստութիւններ տեսնել հայաշատ գաւառներում: Մեր ներկայ թեմը կարիք ունի լուրջ պատրաստութեան: (3) կորստաբեր փորձերը եւ թէ ներկայ դառն իրականութիւնը ստեղծել են. (3) փափաքով տողորուած եւ վրէժխնդրութեամբ գինուած (մի) դասակարգ, որ մեր նպատակների համար, մեր իղձերի իրազորման մէջ հակայական դեր կարող է կատարել: Ամբողջ ժողովուրդը բերանարաց զէնք է աղաղակում, չի կարելի այլևս օրօր կարողալ: Պէտք է լուրջ գործի ձեռնարկել եւ աշխատել որքան կարելի է բաւարարութիւն տալ նրանց պահանջներին: Այլապէս, ինչպէս ընկերս է գրել, ամենաթեթեւ դէպքը անգամ ահապէս զաղթականութեան դուռ պիտի բանայ, իւր դառն եւ կորստաբեր հետեւանքներով: Միակ դրա առաջ կարող ենք առնել կանոնաւոր պատրաստութեամբ, եւ զէնքի փրկարար փայլը յետ կը կանգնեցնի նրանց այդպիսի միտումներից: Ուրեմն, կանոնաւոր նախապատրաստութիւն է հարկաւոր: Մեր միակ երկար դիմադրող յոյսը պիտի լինի գաւառս իր նպաստաւոր դիրքերով: Իսկ այնինչ ոչ մի պատրաստութիւն չկայ մինչեւ այժմ: Գարնան, որ անխուսափելի են դէպքերը(4), մարդ սարսափում է, — ի՞նչ պիտի լինի մեր վիճակը, եթէ մինչեւ գարնան(4) էլ նոյն դրութիւնը մնայ:

Դրսում ոչ մի զէնք(4) չունենք, ներսում եղածներն էլ կենտրոնացրել ենք մի քանի տեղերում, իսկ մնացածները: Ընկերներ. ժողովրդի արեան ծանր պատասխանատուութիւնը ընկնում է մեր վրայ, որովհետեւ նրա յոյսն ու ապակէնը մենք ենք: Մի՞թէ մենք թոյլ պիտի տանք նրա անհուն հաւատքի ընկճման դէպի մեզ: Եթէ ոչ լուրջ գործ սկսելու, զոնէ կարիքը

(կայ) մի թեթեւ նախապատրաստութեան մինչեւ գարուն, որ հիմնաքար կը լինի ապագայի ընդհանուր գործերին եւ զալիք օրերին դրան: Վերջապէս, մեղքը մեր շինքին կը փաթաթենք եւ մենք կը բարձրանանք լեռները, երբ այս դրութիւնը շարունակուի: Գարունը(4) բացուեց թէ չէ, ոչ թուրքն է հանգիստ մնացողը եւ ոչ մենք. այսուհետեւ դուք գիտէք: Մինարէթի(5) գիծը կանոնաւոր է: Այնտեղից ամէն բան կարելի է ներս անցընել: Ընդհանուր ժողովրդ(4) մօտ է կանոնաւորեցնէք այդ բոլորը, որ ապագային դուք մեզ մօտ (3) մնաք, մենք էլ մեզ մօտ: Կրկնում եմ, ներկայիս դրութիւնը անմիթաբ է, յուսահատական է, պէտք է (3), անհուն եռանդ, որ կարողանանք զալիք վտանգների եւ չարիքների առաջն առնել: Անհրաժեշտ է մի գինուորական ոյժ, եթէ հնարաւոր է զրկել, թողէք դայ, մինչեւ ժամանակը գաւառիս հետ մանրամասնաբար ծանօթանայ եւ ուսումնասիրէ լուրջ կերպով: Մենք կ'աշխատենք մանրամասն, զուտ ուղղակի եւ վիճակագրական տեղեկագիրներ կազմել եւ զրկել: Կոմսը տեղույս գործերի համար կը մնայ քաղաք, իսկ ես կը շրջեմ գաւառները: Մեր պահանջները որքան կարող էք աշխատէք աչքիթող չանել եւ շուտ իրագործել: Քարում(6) եղած բերդանի փամփուշտները(4), ի՞նչ միջոցներով դուք գիտէք, փոխադրեցէք Մինարէթ, տեղս հասցընելու համար. գործիքները առանց դրանց քանի՞ փայլ արժեն:

Երեւի մինչեւ 2-3 ամիս անկարող կը լինեմ մեզ նամակ գրելու:

Սիրոյ Համբոյններով՝ ԲԱՅՆԵՆԻՈՒՐ-ԻՇԽԱՆ(7)

- (1) Վարզգէտ Սէրէնիլիւն: (2) Մասուն: (3) Պատուածքի մը հետեւանով՝ անընթացի գարած բանք: (4) Ծածկագիր: (5) Մայմաստ: (6) Ալեքսանդրապոլ: (7) Իշխանի (Նիկոլ Պոզոսեան, որ կոչուած էր շուտով գաւառս լեռնապարհի հերոսը՝ վաճայ Իշխան Ծածկաճառով) Ծածկաճառներէն մէկը կը բուր ըլլալ Բայնեզուր կամ Բայնեզուրը:

Գ.Ը.Ժ. 13.— ՍԵՐԳԵՑԻ ԵՒ ՄԱԼԽԱՍԻ ՆԱՄԱԿԸ

Ամբողջութեամբ կը բաղկանայ 12,5x20 սմ. չափի նամակի երեք անգամ բազմաբեր: Մալխասի (Ա. Յովսէփեան) երկաթը, գրուած սեւ միւսնով եւ բաւական լաւ ընթացիկի, կը գրուէ մէկ էջ, իսկ Սերգէի նամակը, գրուած կապտաւուն միւսնով մը՝ որ, ժամանակի ընթացքին բացուելով, գրիթ անընթացիկի է գարած (բազմաբ մզլուած է), կը գրուէ մնացեալ հինգ էջերը: 1904 փետրուարին Մալխաս Պարկաստանէն ժամանակաւոր կերպով վերադարձած էր Թիֆլիզ (տեսնել իր ԱԳՐՈՒՄՆԵՐ-ը):

Իսկ քէ ա՛վ է Սերգէյը, — կը գծարածմեմ բնիւս: Արդե՛՛ք Արածը, որ սակայն 1904ի սկիզբը սակաւիմ Կարս պետ է գտնուած ըլլալ: Թուրքն յուշերէն կարելի է հետեւեցնել՝ որ, երբ Արած եւ Թուրքն Կարսէն կ'անցնին Ալեքսանդրապոլ, Գ. Շնչի. Ժողովը վերջացած էր արդէն (այնուհետ էին Ջուարթանն ու Երկաթը): Սերգէյը արդե՛՛ք վաճայ Սարգիսն է (Բարսեղեան):

Թիֆլիզ, Փետր. 11, 904

Սիրելի Քրիստոսփոր, Երկար առնէ՛ ի վեր կը սպասէի չու նամակիդ, որ մինչեւ այժմս էլ չեկաւ. կ'երեւի հեռացողը կը ժողացուի: Ես հոս եկած եմ ջիջ մը ապրանք գնելու. փառք Տիրոջը այս տարի գործերս լաւ են. ընտանիքս ալ ժամանակաւոր կերպով Ուրմիէն տեղափոխած եմ թաւրիզ: Մասնաւոր բարեւներ ունիս կնոջէն եւ փոքրիկներէն, նոյնպէս եւ բարեկամներէ: Ետապով կը գրեմ այս երկտողը. նորէն կը գրեմ: Դուն ալ գրէ. հին բարեկամները ժողովուրդ չէ:

Համբոյններ ջո՛ Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հ. Յ. Դ. Ընդհ. ժողովին.

Որովհետեւ ես ինձ գրել եմ ժողովիդ արամադրութեան տակ, ուստի պէտք եմ համարում յայտնել հետեւեալը.—

Փետրուարի 3ին, ժամը 12.30ին, ես եւ մեր ընկերներից Թուրքիլը գտնուում էինք Բագուում, Վակգալի մօտ մի խանութում, որտեղ կարգաւոր այդ օրուայ լրագիրը, իմացանք՝ որ հայոց եկեղեցիում այդ օրը ժամը 1ին մաղթանք պէտք է կատարուի ուստաց զօրքի յաջողութեան համար: Մենք յանկարծակիի եկանք, զարմացանք, եւ շտապեցինք եկեղեցու բակը, որ եկեղեցի կողմ հասարակութիւնը համոզենք վերադառնալու, հաւատացած լինելով միեւնոյն ժամանակ, որ հազիւ թէ 10-20 հոգի եկած լինեն: Մտնում ենք եկեղեցու բակը յետեւի կողմից եւ, ի զարմանս մեր, տեսնում ենք լցուած ինտելիգենտ հասարակութեամբ. դուրս ենք գալիս միւս կողմից դէպի պարապետ՝ նոյնպէս լիքը. խօսացնում ենք մի երկու ծանօթի, պատասխանում են, որ սա շատ լաւ է, «պոլիտիկա» է, եւն.: Մեր զգուանքն է գալիս. ի՞նչ պոլիտիկա եւ ինչո՞ւ համար: Մեզ հետ է միանում մեր ընկերներից, այդտեղ Կ. Կոմ.ի անդամ Մրաւը: Ժողովուրդը քանի գնում շատանում է, հայերի խանութները փակուում են, չորս կողմից մեծ հոսանքներով լցուում են պարապետ: Չանգահարութիւնը սկսուած էր եւ շարունակուում է: Բակում են դրօշակները եւ կայսեր պատկերը պսակի մէջ՝ ձողի վրայ ամրացրած: Թափօրը դուրս է գալիս եկեղեցուց դրօշակներով եւ ուղղուում դէպի պարապետ: Մեր յիշողութեան առաջ է գալիս 3 ամիս առաջ այդ նոյն տեղում կատարուած կուրս ուսու զօրքի դէմ եւ այդտեղ ընկած նահատակները: Մենք յի-

շում ենք մեր՝ հայերիս արեւնով ձեռք բերուած պատիւը ամբողջ աշխարհում, որպէս մի հերոս ազգաշքերիս առաջ է գալիս նահատակների դիակները: Մեզանից ամէն մէկը զգում է, որ անպատուում է մեր ամբողջ ազգը: Հաւաքուած ինտելիգենտ, կիսա-ինտելիգենտ, բուրժուա եւ խանութպան ամբողջ սըրբապղծում է նահատակների գերեզմանները եւ հայհոյում նոցա յիշատակը: Առաջ է գալիս վրէժխնդրութեան կարիք. հարկաւոր է պատժել այս լիբր ամբողջ նորա դաւաճանութեան համար, նորա սարսափելի ոճ-բազործութեան համար, եւ պէտք է պատժել սարսափելի կերպով: Եւ որոշեցինք երեքս զցել ուումը: Այդ միջոցին այդտեղից անցնում էր մէկը, որ կարող էր մեզ շուտով տալ ամէն ինչ: Մնորեցինք. սկզբում նա չեմուշում արաւ, բայց երբ իմացաւ ինչու համար է եւ երբ տեսաւ ահապէս ամբողջ հաւաքուած հայհոյելիս իւր նահատակ ընկերներին, շտապեց կատարել մեր խնդիրը: Տասը բողբոս ամէն ինչ պատրաստ էր: Վերեւում ասացի, որ թափօրը արդէն դուրս էր եկել եկեղեցուց ու դէպի պարապետ էր գնում. հետեւապէս ժամանակը կարճ էր. խորհրդակցել տեղական ընկերների հետ՝ չէինք կարող ժամանակ չլինելու պատճառով: Կարգապահութիւնը պահանջում էր նախ խորհրդակցել մեր տեղական միւս ընկերների հետ, որոնց խանութները գտնուում էին բագարում, իսկ միւսները որտեղ կը լինէին այդ բողբոս չէինք կարող իմանալ:

Բայց պատժել այդ լիբր ամբողջ, որ հաւաքուած աղօթում եւ համակրական ցոյցեր է տնում զօրքին՝ որ 3 ամիս առաջ ջարդում էր այդ նոյն տեղում հայ երիտասարդներից ամենալաւերին, անհրաժեշտ էր: Չպատժել դոցա, զգում էինք՝ կը նշանակէր շուռնալ պատուի զպայմանք, չլինել հայ եւ յեղափոխական եւ հաւասարուել այդ լիբր ու դաւաճան ամբողին: Չըպատժել դոցա սարսափելի կերպով այդ մեծ ոճի համար, կեղծ կերպով հանգստացնելով մեր խիղճը, որ չենք խորհրդակցել Մարմնի հետ, մեզանից ամէն մէկը զգում էր, որ դա կեղտոտութիւն է, փոքրագութիւն է, կեղծ է, եւ մենք որոշեցինք իրագործել մեր միտքը առանց դիմելու Մարմնին, որովհետեւ նոցա փնտուելը միայն հաւասար էր անպատիժ թողնելուն: Ժամանակը շատ կարճ էր: Եկաւ ուումը, պատրաստուեց եւ զցուեց երեքիցս մէկի ձեռքով: Թուրքը պայթեց եւ պայթեց, ինչպէս ուրիշներն են պատմում, այն ժամանակ, երբ այդ լիբր ամբողջ ողեւորուած օրկեսարի ի(1) եղանակով՝ «ուսում» էր ազդեցուում: Չոհեր եղան. ամբողջ սկսեց դուրս խուժել պարապետից:

Իբր տեղեկութիւն աւելացնում եմ, — Մենք հաւատացած էինք, որ խանդարուեց ամէն ինչ ուումը պայթումից: Բայց եւ կրկին ու կրկին խայտատակութիւն մեզ՝ հայերիս: Մնացած հասարա-

կուրթիւնը զլուր ունենալով իրանց հոգեւորականներին, թողնելով այդ տեղ թափուած դիակները եւ վերաւորները, գնում են չուսուսող աղաղակներով դէպի նահանգապետը եւ խնդրում են նրանից՝ յայտնի կայա-րին իրենց հաւատարիմ հպատակութեան զգացմունքները:

12 Փետրուարի Մ. Գ.

ՍԵՐԳԷՅ

(1) Ռուսերէն գրուած, — Վեցցէ Յարք:

Գ.Ը.Ժ. 14.— ՄԵԼԻՒԲԻ (Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ) ՆԱՄԱԿԸ

Ինչպէս ի՞նչ կը բացատրէ Ընդ. Ժողովին ուղղուած իր գրու-թեամբ, առաջին մասը պատճեն է այն ճամբարին՝ որ Մելիք 17 Յունուար 1901ին ուղղած է Արեւելեան Բիւրոյին, իրբու երաժա-րակամ:

Այս ցոյց կու տայ ճան՝ որ Արեւելեան Բիւրոյի 890 Յուն-ուարի Ժողովի արձանագրութեամբ տակ ստորագրող Մելիքը ու-րիշ մէկը չէր, եթէ ոչ Յովհաննէս Եւսուփեանը:

Ընկերներ,

Ձեր հրաւերը ստացայ, բայց փոխանակ ինչո՞ւ գալու ժողովի, լուսագոյն համարեցի երկտողս ուղարկել Ձեզ. նախ՝ որ մեր ժողովները իմ մուխս մարում են, մանաւանդ որ վերջին ժողովի մուխը դեռ չբխեց չէ դուրս եկել:

Երկրորդ՝ որովհետեւ սիրողները երեսից մեր խեղճ ազգը շատ չարիքներ տեսաւ, մեծ զրկանքներ կրեց, անհունօրէն տուժեց եւ շարունակուած է տուժել ցարդ, նոյնիսկ արնաքամ եղաւ: Ուստի ես, որ միշտ դէմ եմ եղել մեր գործում սիրողներին, հետեւարար եւ չեմ կարող սիրող լինել, հրատարուում եմ սիրող լինելուց:

Երրորդ՝ եւ որ ամենազլաւորն է, գոնէ նուա-տիս համար, առնուազն անբարեխղճութիւն եմ համա-րում տարեկան 1-2 անգամ ժողովի գալ, տաքուկ սեն-եակում բազմել, տաք տաք վիճել եւ ազգին ճակատա-զիրը լուծել:

Գիտեմ, որ սիրամարդեան փետուրներով չմեծա-նուն յեղափոխական մը իմ երկտողս պիտի բացատրէ ճնաֆթի հոտովն... — Հող չէ, դրան էլ կը դիմա-նամ...

Առայժմ այսքան:

ՏԻԳՐԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ (ՄԵԼԻՒԲ)

17 Յունուարի, 1901 թ.

Ներկայ նամակը ուղղուած է եղել Արեւելեան Բիւրոյին, որը ստանալուց յետոյ թողել է առանց ու-րեւէ քննութեան եւ ոչ էլ հաղորդել միւս մարմիննե-րին: Լսելով՝ որ Կամքը ժողով է ունենալու, խնդրել էի թուղթս ուղարկել Կամքին, որին ոչ միայն նամակս չէր ուղարկուած, այլ ինչպէս ինձ Արեւել. Բիւրոյի անդամն ասաց, որ յանձնարարուած է բերանացի յայտնել, այդ էլ չէ արուած: Իսկ Կամքին ներկայա-

ցող անդամը վերջերս ինձ յայտնեց, որ Արեւել. Բիւ-րոն իրեն այդպիսի մի յանձնարարութիւն չէ արած:

Այժմ երկտողս ներկայացնում եմ Ընդհանուր Ժո-ղովի քննութեան եւ տնօրինութեան, որովհետեւ 1901 թ. Յունուար 17ից ես քաշուած եմ Դաշնակցութեան գործունէութիւնից, եւ պիտի մնամ քաշուած, քանի որ իմ յարուցած խնդիրը կը մնայ առանց լուծուելու եւ քանի որ սիրողները ամբողջ գործերը կը վարեն:

ՄԵԼԻՒԲ

Ես սիրողներին դէմ չեմ երբ նրանք իրենց տեղումն են, բայց դրանց երբեք չպէտք է յանձնել ու չպէտք է ստանձնեն պատասխանատու գործեր:

ՆՈՅՆԸ

11ին Դեկտ. 904(1)

(1) Թուակամի ակնյայտ շփոք մը կայ: Պետ է ըլլայ 11 Դեկտ. 903 կամ՝ 11 Յունուար 904:

Գ.Ը.Ժ. 15.— ՄԵԼԻՒԲԻ (Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ) ՆԱՄԱԿԸ

Եւսուփեանի այս նամակը կու տամ ամբողջական հարգա-տուրքամբ, եակաակ ամբ պարուկով սուր քննադատութիւն-ներում, որովհետեւ եմ առնուազն վիճելի տուեալներու վրայ՝ քանի Մելիք երբ տարիներ է վեր քաշուած կը մնար կու-սակցական գործն կեանքէ: Ամէն քննադատութիւն մտեցմամ իւ-րայատուկ եղանակ ու հոգեբանութիւն կ'արտայայտէ սակայն, եւ ատով իսկ օգտակար է ժամանակաշրջանի ամբողջական պատկերի ծանօթացման տեսակետէ՝ իրբու անկեղծ արտայայտութիւնը Դաշնակցութեան ամենաինքն եւ ամենէն երկարատեւ գործիչնե-րէն մէկուն:

Երրորդ Ընդհանուր Ժողովին

Թէեւ ես հրաւեր չէի ստացել, բայց հողով շատ փափաքում էի այս ժողովին ներկայ լինել խորհրդա-կից ձայնով: (Երանի՜ հին ու նոր գործիչներէից շա-տերը ներկայ լինէին այդ ձեւով, մանաւանդ որ Ընդհ. ժողովները մեզանում շատ ուշ ուշ են տեղի ունե-նում): Բայց, դժբախտաբար, հակառակ իմ բուն փափաքին, անկարող եմ ներկայ լինել, այդ պատճա-ռով ստիպուած եմ ներկայիւս գոհանալ: Եթէ սրանով մի թիչ էլ օգնած լինեմ մի քանի կարեւոր խնդիրների լուծմանը, անչափ դո՛հ պիտի լինեմ:

Վերջին Ընդհանուր Ժողովը եւ նրանից յետոյ վեց տարուայ ընթացքում Դաշնակցութեան ապրած կեան-քը (թէեւ հեռու գտնուած եմ, բայց միշտ հետաքրք-րուած ըստ կարելւոյն, եւ դիտած կատարուածները) ի նկատի ունենալով՝ Ընդհ. ժողովի ուշադրութիւնն եմ հրաւիրում հետեւեալ կէտերի ու առաջարկների վը-րայ:

Ա.— Որեւէ մարմին առնուազն մի տարի գոյու-թիւն ունեցած լինելու է, եւ գործով ապացուցած իր գոյութիւնը, որպէսզի չուէի իրաւունք ունենայ թէ՛ Ընդհ. ժողովում եւ թէ՛ միւս պատասխանատու մար-

մինների մէջ: Հակառակ պարագայում պէտք է մա-նակցի միայն խորհրդակցական ձայնով:

Բ.— Ընդհ. ժողովին գալով՝ կարող են մասնակ-ցել միայն Ընդհանուր Ժողովով որոշուած մարմիննե-րը, եթէ կազմակերպուած են, իսկ անոնք որ պահան-ջուած կազմը չունին, կազմալուծուած են, չուէի ի-րաւունքից զրկուում են. իսկ անհասանելի մասնակցում են խորհրդակցից ձայնով: Այդ տեսակէտով Կամքի ո-րոշումները կատարելապէս ապօրինութիւն էին եւ հա-կառակ Դաշնակցութեան ոգուն եւ դատապարտելի՝ Ընդհանուր Ժողովով: Տողերս չեն վերաբերում այլեւս անցեալին, որ անվերադառնալի է, այլ ապագային՝ որը հիմնելու եւ կազմակերպելու ենք անցեալից փոր-ձուած ու խրատուած:

Գ.— Ընդհ. ժողովին մասնակցելու եւ ջուէ տա-լու իրաւունք պիտի ունենան միմիայն դաշնակցական ակտիւ, իսկական յեղափոխականները, որոնց համար Ընդհ. ժողովի դժած օրէնքները ոչ միայն պարտաւո-րեցուցիչ են, այլ եւ նրանք ի պահանջել հարկին պար-տաւորուում են տեղափոխուել գործի վայրը, Երկիրը, կուրի դաշտը: Սիրողները միայն խորհրդակցից ձայն են ունենալու:

Ընդհ. ժողովի ամենալուրջ ուշադրութիւնն եմ հրաւիրում այս ամենակարեւոր կէտի վրայ: Բ. Ընդհ. ժողովին սիրողները ջուէով մասնակցելով անցկացրին այնպիսի հարցեր, որ երբեք չէին անցնել, եթէ միայն գործն յեղափոխականները մասնակցած լինէին: Երկ-րորդ՝ յիշեալ սիրողները գալով եւ ամենակարեւոր, ծանրակշիռ խնդիրները իրենց ջուէով լուծելուց յե-տոյ իրենց ջմաջքին համաձայն, թէ՛ գործից բոլորո-վին քաշուեցան, թէ՛ պատճառ եղան (ուրիշների) ակ-տիւ գործից քաշուելուն, եւ թէ այդ սխալ որոշումնե-րից՝ վեց տարուայ ընթացքում Դաշնակցութիւնը սոս-կալի տուժեց:

Դ.— Պատասխանատու, — մանաւանդ շեշտում եմ, — Երկրի Պատասխանատու Մարմինների կազմի վրայ ամենալուրջ ուշադրութիւն դարձնելու է. ջա-նալու է ըստ կարելւոյն այդ Մարմինները կազմել մեր լուսագոյն, կարող, փորձուած ուժերից եւ չվարուել այնպէս, ինչպէս վարուեցաւ Բ. Ընդհ. ժողովը: Բ. Ընդհ. ժողովում Երկրի Պատասխանատու Մարմիննե-րը կազմուեցան մի նիստում, իսկ Խմբագրութեան կազմը տաս նիստում էլ հազիւ վերջացաւ: Կարծես Խմբագրութիւնը միւս մարմիններից աւելի առաւել պատասխանատու եւ կարեւոր մարմին լինէր: Ընդհա-կառակը. Խմբագրութիւնը ոչ միայն աւելի չէ, այլ նոյնիսկ պակաս կարեւորութիւն ունի միւս Պատաս-խանատու Մարմինների համեմատութեամբ, որովհե-տեւ արտասահման ապրելու եւ գրելու համար միշտ կարող ենք մարդ գտնել եւ միշտ միշտ գտնուում են մարդիկ որ կարող են տանել Խմբագրութիւնը:

Ե.— Երկու Բիւրոնների կազմը բոլորովին փոխ-ու է:

Բիւրոնները չեն լուծ մի մի խողովակներ, ինչպէս փաստարանում են մեր ընկերներից ոմանք, այլ իս-կապէս ղեկավարող մարմիններ են եւ Երկրի վերաբե-րութեամբ նոյնիսկ մի մի կենտրոն են եղած, հակա-ռակ Դաշնակցութեան ապակենտրոնացման սկզբուն-քին: Ով ինչ ուզում է թող ասի, բայց իրական կեան-քը, տասնեակ տարիների փորձը այդպէս է եղել, ուս-տի ջանալու է այնպէս կազմել Բիւրոնները, որ մնաս չլինելուց դատ, ինչպէս ցարդ, մանաւանդ Երկրի նը-կատմամբ, այլեւ օգտակար լինեն: Իմ առաջարկած կազմը մի կենտր. Կոմիտէ, որը բաղկացած էր 13 հո-գուց, 11 ձայնով ընդունեց: Ես առաջարկում եմ, որ Երկրի Պատասխանատու Մարմիններից մի մի անձ հա-մարուի Բիւրոնների անդամ, իսկ երկու հոգի ընտրեն Բիւրոնների Ռայոնական Ժողովները, բայց պայմանով, որ այդ երկուսն էլ լինեն Երկրին ծանօթ, Երկիրը տե-սած մարդիկ, իսկ եթէ չգտնուի այդպիսի մէկը եւ նա ընտրուի, պարտաւորիչ պիտի լինի նրա համար դէժ վեց ամիս ապրել Երկրում:

Զ.— Ամերիկան Ընդհ. ժողովում ունենալու է 2 ձայն եւ մի հոգի մասնակցելու է Արեւմտեան Բիւրո-յին: Խմբագրութեան մէկ անդամը ընտրում է Ընդհ. ժողովը, որը Արեւմտեան Բիւրոյի միւս անդամների հետ վարում է Խմբագրութիւնը: Արեւմտեան Բիւրոն է արտասահմանում Դաշնակցութեան ներկայացուցի-չը: Արտասահմանում կենտրոնացած մեր ուժերը Եր-կիր ջանալու է ուղարկել: Այնտեղ մարդի պահանջը աւելի մեծ է եւ աւելի կարեւոր՝ քան թէ արտասահ-մանում:

Է.— Ըստ իս Կիլիկիայի խնդիրը ամենեւին կապ-ուած չէ Երկրի վեց նահանգների հետ, այլ երկուսն էլ իրարից անջատ, առանձին առանձին խնդիրներ են եւ մէկը միւսի վրայ մագաչափ իսկ չի ազդել ցարդ եւ չի էլ ազդելու ապագայում. ուստի առայժմ, մինչեւ վեց նահանգների խնդրի լուծումը, պէտք է թողնել Կիլիկիան հանգիստ, որի համար ոչ պահանջուած դը-րամը ունենք ու ոչ պահանջուած մարդիկը, եւ մեր բոլոր ուշադրութիւնը դարձնելու ենք վեց նահանգնե-րի վրայ: Վեց նահանգներում պէտք է ստեղծենք կազ-մակերպութիւններ, ուժեր առաջ բերենք եւ մեր կուրի դաշտը բնորոշենք: Ափսոս, այս առթիւ չեմ կարող ա-ւելի երկար գրել, շտապում եմ, գրաբերս դուրս է դալիս շտապով: Առանց այդ էլ մեր ուժերը թիչ են, լուս խորհելու է այս առաջարկի վրայ: Ոմանք առա-ջարկում են նոյնիսկ Վասպուրականի Պատասխանատու Մարմինը լուծել, միացնել մի ուրիշի հետ, իսկ, ընդ-հակառակը, ես առաջարկում եմ բոլոր վեց նահանգնե-րումն էլ ստեղծել, կազմակերպել Պատասխանատու Մարմիններ. չեմ հասկանում, ինչ մի շար բախտով Դաշնակցութիւնը ցարդ այդ չէ ըմբռնել, ինչպէս եւ միւս յեղափոխականները:

Ը.— Դիպլոմատիա. վերջին Ընդհ. ժողովից յե-տոյ Դաշնակցութիւնը մի խոշոր սխալ գործից եւ Ե-Յ

տարուայ ընթացքում աւելի մեծ տեղ արուեստը դիպ-
լոմատիային եւ արտասահմանեան գործունէութեան,
գործունէութեան՝ որը մինչեւ Բ. Ընդհ. ժողովը նոյ-
նիսկ դատապարտուած էր Դաշնակցութեան օրգանի
կողմէ: Օր. Գրուսացիներ(1), Սվաճեհաններ եւ Չե-
րազներ գործունէութիւնը: Յ տարուայ ընթացքում
Դաշնակցութեան եկամուտներէ մեծագոյն մասը ծախ-
ուած է արտասահմանում, իսկ ամենամեծն մասը՝
Երկրում, այն Երկրում՝ ուր իբր թէ կենտրոնացում
ենք առաջ բերում: Օրինակ՝ լսեցի, հաւատալի չի դա-
լիս, այդ կը ստուգէ Ընդհ. ժողովը հարկաւ, թէ անց-
եալ տարուայ 34 հազար եկամուտից 700 (եօթ հարիւր)
ուրբի է ծախուել Երկրում, իսկ մնացածը ծախուել
է արտասահմանում: Եւ դեռ սրանից յետոյ շարունա-
կում են պոռալ՝ կենտրոնացում, կենտրոնացում՝ որին
ես այլեւս չեմ հաւատում, ինչպէս չէի հաւատում եւ
Բ. Ընդհ. ժողովի ժամանակ:

Դրամի 10% մասը անգամ շատ է արտասահմանի
համար: Յարդ մեր ուժերը միշտ ձգտած են կա՛մ ար-
տասահման, կա՛մ Գարսիաստան եւ կա՛մ կովկասեան
զանազան քաղաքները եւ խոյս են տուած Երկրից,
կուռի դաշտից, ասպարէզը թողնելով մեր թարմ, ան-
փորձ, վառվառն պատանիներին, որոնք եթէ փորձ,
հմուտ, լուազոյն ուժերի հետ լինէին՝ կարող էին
կարճ ժամանակից յետոյ իրենք էլ մի մի լուս, փոր-
ձուած ուժեր լինել եւ հնարին փոխարինել: Անձամբ
ինչ ինչ պատճառներով Երկիր չզնալ, խոյս առլ Եր-
կրից, բայց եւ այնպէս գործը ղեկավարել եւ ուրիշնե-
րին, անփորձներին իրենց չզնացած տեղերը ուղարկել,
ես առնուազն համարում եմ անբարեխղճութիւն:

Ինչո՞ւ օրինակ չենք առնում մակեդոնացիներէ:
Մի՞թէ Սարաֆոյները, Տոնչեպները, Անաստասները
Եւրոպա են նստում: Սոֆիա, Ֆիլիպպէ, Ռուսուլզ
չեն կենտրոնանում, այլ իրենց գործունէութեան ի-
կական ասպարէզը ընտրում են Մակեդոնիան, կուռի
դաշտը: Արդեօք մենք սրանից յետոյ պիտի հետեւե՛նք
Սարաֆոյներին, Տոնչեպներին եւ լսենք Երկրի մեր
ընկերներէ կողմ, որ նահատակ ժողովուրդի կողմն է,
թէ պիտի կոյր, խուլ ձեւանանք եւ շարունակենք նա-
հատակ ժողովուրդի անուանով բարձրագոյն ճառեր ար-
տասանել, շողշողուն, ճոճոճան Ֆրազներով օդը թնդա-
ցընել, թերթեր մրտակել, արտասուքներ թափել... կո-
կորդիլոսի, երբ մեր Երկրի ընկերները մարդիկ են ու-
զում, մարդիկ՝ կարող, փորձուած, հմուտ:

Եթէ այս Ընդհանուր ժողովից յետոյ էլ գործի
գլուխ չանցնին մեր հմուտ, փորձառու, լուազոյն ու-
ժերը, արձագանք չտան մեր Երկրի կողմն եւ շարունա-
կեն թուխ նստել արտասահմանում եւ պատասխանա-
տու գործեր հետուից ղեկավարեն պատանիներին, ան-
փորձներին եւ անկարող ուժերի ձեռքով, ես հաստա-
տապէս եւ համարձակ կարող եմ գոչել, — մենք կո-
րած ենք, մենք խարում ենք ազգին, խարում ենք ամ-
բողջ աշխարհը, ու ես կը հետանամ ընդմիշտ Դաշ-

նակցութիւնից:
Բայց, հաւատալով՝ որ մեր ընկերներէ վերջին
կողմ արձագանք կը գտնի իրենց արտասահմանեան ըն-
կերներէ սրտում, ինչպէս արձագանք գտաւ իմ սրը-
տում, ես իմ տկար ձայնը միացնելով իմ ընկերներէ
ձայնին գոչում եմ, — ընկերներ, զնա՛նք, միանանք
մեր Երկրի ընկերներին, կուրճը կըծքի տուած ապ-
րենք կամ մեռնենք ազգի հետ, լուս իմանալով որ մեր
մահով կը ծագի Հայաստանի վրայ ազատութեան ա-
րեղակը:

Ես պատրաստ եմ գնալ Երկիրը, այնտեղ՝ ուր ա-
ւելի օգտակար կը լինեմ, ուր աւելի պահանջ է զգաց-
ւում ինձ նման ուժերի, բայց ոչ մինակ, այլ ձեզ հետ,
միասին, ընդհանուր ուժով, խմբովին:

Եւ արդեօ՞ք կ'արժանանամ այդ ցանկալի օրուան,
որ միասին, խմբովին դիմենք կուռի, արեան դաշտը...
Այն ժամանակ, այն ժամանակ՝ միայն Հայաստանը
կ'ազատուի, տարակոյս չունենմ... Ախ ո՞ր էր, որ ա-
սածս երազ չլինէր, այլ իրականութիւն...

Դաշնակցութեան վերածնութեանը
ակնդէտ սպասող՝
տանջուած ՄԵԼԻՔ

28 Դեկտ. (2)

- (1) Դժուար ընթեանի. կրճա՛յ այլ անձ մը ըլլալ:
- (2) Պէտք է ըլլայ 1908: Տարբերը գրուած չէ:

Գ.Ը.Ժ. 16.— ՄԵԼԻՔԻ (Յ. ԵՈՒՍՈՒՑԵԱՆ) ՆԱՄԱԿԸ

Գրուած, Յայրազներում նման, նմանի ընթացիկ չափի եւ
տեսակի (գծուոր) բուլքի վրայ, սեւ մելամով: Կու տամք ան-
բազարեամբ:

Յրդ Ընդհանուր Ժողովին Դաշնակցութեան

ԵՔի սիրում եմ, բայց հշտառութեանը
չեզանից աւելի եմ սիրում:

ՊՂԱՏՈՆ

1901 թուի Յունուար 17ին մի նամակով ուղղուած
Արեւելեան Բիւրոյին, ես հրատարուեցայ սիրող լինե-
լուց ու քաջուեցայ գործից, սպասելով իմ նամակի
արդիւնքին (*): Իմ յիշեալ պատճառաբանեալ հրատա-

(*) Իմ յիշեալ հրատարակած Երկաթի ձեռքով ուղարկած եմ
Ընդհ. ժողովին: Շտապելով՝ անկարող եղայ եւ ներկայ բացա-
րազերը յանձնել Երկաթին, որը ուղարկուած եմ այժմ: Ահա թէ
ինչու ես հրատարուած եմ Ամերիկայից, Գարսիաստանից, Գոլտեյ
եւ ուրիշ տեղերից ինձ եղած հրաւերներէ: Իմ հրատարակածով
ես իմ մասը դրի Դաշնակցութեան հիւանդ մասի, մի վերջի վե-
րջինը եւ կամ այժման սկիզբներէ, թուլացնել, որ, ըստ իս, հա-
տար է կըրծանման: Իմ հրատարակածով ես ուզում էի, ձեզ
տուած էի վերանորոգել, կենսե ներշնչել ու գործունէութեան գա-
տասխանառութեան մասը սիրողներէ ձեռքից հանել եւ սու-
րուն յեղափոխականներին, սիրողներին աւելի իրենց պատշաճ
տեղը:

րականի խնդրով ոչ միայն Արեւել. Բիւրոն ինքը չըզ-
բաղուեց, այլեւ նոյնիսկ այդ մասին չբարեհաճեցաւ
զէթ ի գիտութիւն հաղորդել միւս Բիւրոյին եւ Դաշ-
նակցութեան այլ պատասխանատու կարեւոր մարմին-
ներին. նա ձմեռէր ալթի» արեց իմ պատճառաբանեալ
մտածողականը: Այդ էլ բաւական չէ. Արեւել. Բիւրոն
ոչ միայն խնամքով ծածկեց, թաքցրեց իմ հրատարա-
կանի խնդիրը, այլեւ անբարեխղճաբար, գիտակցաբար
խեղաթիւրեց եւ լուր տարածեց ամէնուրեք, թէ ես
հիւանդութեանս, յոգնութեանս պատճառով քաշուած
եմ գործից, հրատարուած՝ ինչպէս Ս.ն, միայն այն
զանազանութեամբ, որ Ս.ն բերանացի է յայտնած իր
մտածողութիւնը, իսկ ես՝ գրաւոր:

Արեւելեան Բիւրոյի այդ վարժունքից ի սրտէ
խոցուելով ու ցաւելով՝ ես խնդրեցի, որ իմ հրատա-
րականը ուղարկուէր Կամքին: Ինձ պատասխանուե-
ցաւ, որ իմ նամակը չէ ուղարկուած, բայց յանձնա-
բարուած է իրենց ներկայացուցչին, որ բերանացի իմ
հրատարականը հաղորդէ Կամքին: Ես գոհ մնացի ու
անհամբերութեամբ սպասում էի... Կամքին մասնակ-
ցող անդամներից յետոյ իմացայ, որ իմ հրատարա-
կանի մասին ոչ գրաւոր եւ ոչ իսկ բերանացի ակնարկ
անգամ չի եղել ժողովում Արեւել. Բիւրոյի ներկայա-
ցուցչի կողմից: Եւ Կամքը անգիտակ այս բոլորին՝
միաձայն ինձ ընտրած են եղել Արեւել. Բիւրոյի ան-
գամ, ինչպէս եւ Արսէնին: Մոռացայ յիշել, որ Արե-
ւել. Բիւրոյի ներկայացուցչիչը նոյնիսկ այդ ընտրու-
թեան ժամանակ իրեն քուէն տալով ինձ, ամենեւին
ծպուտ անգամ չէ հանել իմ հրատարականի մասին:
Իսկ ընտրութիւնից յետոյ Արեւել. Բիւրոն, ոչ Արսէ-
նին եւ ոչ ինձ, իրենց որդեգրած ամենազեղեցիկ, ա-
ւանդական սովորութեան համաձայն, չեն բարեհաճել
եւ մինչեւ ցարդ հաղորդել: Արեւել. Բիւրոյի անգամ
ընտրուած լինելու ես իմացայ միայն Վարդոյից, երբ
ընտրութիւնից մի քանի ամիս յետոյ իրար հանդիպե-
ցինք, եւ յետոյ Կամքի միւս անդամներից: Վերջերս,
ամսիս 10ին, Արեւել. Բիւրոյի Կամքին մասնակցող
ներկայացուցչիչը ընկերներէ ներկայութեան ինձ հա-
ղորդեց, թէ Արեւել. Բիւրոն իրեն այդպիսի յանձնա-
բարութիւն չէր արել: Ընդհանուր ժողով, դու դատիր
դրանց...

Մի բուպէ ենթադրենք անգամ, թէ պաշտօնապէս
իրեն այդ մասին ոչ մի յանձնարարութիւն արած չէր,
բայց իրեն քաջ յայտնի էր իմ հրատարականը, ինքը
խոմ անձամբ կարգացած էր, գիտէր, ինչո՞ւ մինչեւ
իսկ իմ ընտրութեան ժամանակ չէ բարեհաճել Կամ-
քին հաղորդել, որ ես հրատարական եմ տուած Արե-
ւել. Բիւրոյին եւ լուս ու մնջիկ թոյլ է տուել ինձ
քուէարկել եւ ինքն էլ անօք-փառօք քուէ է տուել: Իսկ
անօք-փառօք միաձայն ընտրութիւնն էլ, իմ հրատա-
րականի բախտին է արժանացել եւ ձմեռէր ալթի» է
եղել... Հետեւելով իր որդեգրած նշանաբանին՝ «Լ'Ե-

tat, c'est mois (պետութիւնը ես եմ)... Ահա քեզ ա-
պակեմտրոնացում:

28 Դեկտեմբերի, 1903 թ.

ՄԵԼԻՔ

Գ.Ը.Ժ. 17.— Պ. ՇԱՏԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Թարածարքիս մէջ՝ Յայիկիմ մարտի Գ. Շատիկեան կը գրա-
նենք երկու գրութիւններ, որոնցմէ առաջինը, խնայալատ արտա-
յայտութիւններու շարք մը միայն, գոնց կ'ընենք: Աւելի շանկեմ
է ներկայ՝ երկրորդ նամակը, ուր Շատիկեան կը ներկայանայ
կազմակից՝ բռնի համգամակութեամբ:

Գրուած է սեւ մելամով, փռք չափի (11,5x18 սմ.) երկրորդ
բուլքի մը առաջին երեք երեսներում վրայ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Ընդհանուր Պատգամաւորական
Երրորդ Ժողովին

Մերիւի ընկերներ,

Սոստացած էի գրել կարծիքս յեղափոխական ա-
մենակարեւորագոյն հարցի նկատմամբ:

Այդ հարցն, որու մասին կու գամ կարծիքս յայտ-
նելու, շատ պարզ ու հասկանալի է ժողովականներէդ,
որովհետեւ՝ ով ծանօթ է մօտից Հայ Յեղափոխու-
թեան, նորա քաջ յայտնի է մեր անյաղութիւնների
բուն պատճառը: Օրինակներ առաջ բերել աւելորդ եմ
գտնում:

Եւ քանի որ բուպէն կրիտիկական է, հայութեան
լինել չլինելու պատկերը նկարագրուած է մեր աչքի
առաջ՝ մօտ ապագայում, մեզ հարկաւոր է այդ գրա-
մական համգամակութեան հարցում շատ լուրջ կերպով
վերաբերուել եւ անցեալի նման առկալի չթողնել:

Մեր անցեալի դառն փորձերից յետոյ, շատ հա-
կանալի է որ՝ Հայ Հարուստը ոչ թէ չհասկանալով Հե-
ոի է պահում ինքն իրան այդ պարտականութիւննե-
րից, այլ գգալով հանդերձ որ պարտական է, չէ ու-
զում մասնակցել, որովհետեւ ստիպող չկայ...

Շատեր կը պատասխանէք ՍՏԻՊԵԼ...:
Շատեր կը պատասխանէք հանրային կարծիք...:
Շատեր կը պատասխանէք մարդասիրական սերգ-
բունք...:

Ահա՛ իմ կտրուկ պատասխանը.—

Ոչ մի հանրային կարծիք իրաւունք չունի մեզ դա-
տապարտելու, քանի որ Մայր Երկիրն է պահանջողը:
Եթէ այդ Երկիրը գոյութիւն չունենար, այդ Հայ Հա-
րուստների գոյութիւնը լինելու չէր. քանի որ կան, եւ
քանի որ դոցա գոյութեան պատճառը այսօրուայ տա-
նապող Երկիրն է, այսպէս թէ այնպէս, այդ հարուստ-
ների պարտականութիւնն է իրենց գոյութիւն տուող
մի Երկրի գոյութիւնը պաշտպանել:

Ոչ մի մարդասիրական սկզբունք չի կարող ար-
գելք լինել մեզ:

Չարը սպաննել բարին ստեղծելու գործում:
Մի խօսքով՝ բաւական է որքան սպասեցինք Հա-
րուսանների ու այդ մետաղապաշտների անտարբերու-
թեան:

Դուք պարտական են վճարելու, իսկ եթէ չեն ու-
զեր պարտականութիւններին կատարել, մենք յանուն
Հայրենիքի, յանուն Ազատութեան մեծ զազափարի,
մեր պարտականութիւնները կատարելուց յետոյ, ա-
զատ իրաւունք կ'ունենանք ստիպել նոցա եւս, որ պար-
տաճանաչ լինեն, հետեւելով այն համոզմունքին՝ որ
ասում է Laurent Vailhade, — «Qu'important les vic-
times, si le geste est beau!» (1):

Խմբագրատի օգնական՝

24/1/1904, Փարիզ

Գ. ՇԱՏԻԿԵԱՆ

(1) «Ե՛րբ փայլ գեղեցիկ է արարքը»:

Գ.Ը.Ժ. 18.— Կ. ՊԻՈՆՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Դրանք սեւ միւսնով, մամակի ընթացիկ շափ գծուր բար-
բի մը մէկ երեսն վրայ:

15/28 Յունուար, 1904, Ֆիլիպէ

Յարգելի՛ ընկերներ,

Վարդին հեռագրեցի, որ շտապեցնէ իր դաւը, կամ
յայտնէ մտադրութիւնը. սակաւին պատասխան չու-
նիմ: Թերեւս մեզ գրած է, կամ արդէն ճանապարհ ե-
լած՝ Սոֆիա դաւու համար:

Ստեփան Ստեփանեան անուն մէկը հոս շատ կը
յարժարի հաստկով, կազմութեամբ, մեր նկարագրած
ընկերովը, մանաւանդ անունի նոյնութիւնը ամենէն
նպաստաւոր պարագան է: Ինքը առեւտրական է. խոս-
տացաւ Վրիննայի համար անցազիր մը առնել, յետոյ
դուք կրնաք այնտեղէն վիզէ ընել տալ Պարսկաստանի
համար:

Մեր շրջանի կազմի նկարագրութիւնը, եղած գոր-
ծունէութիւնը, բարոյական ու նիւթական վիճակը
պատկերացնող դրաւոր տեղեկագիրը կը ստանաք շու-
տով:

Ներքեակ կ'ուղարկենք Ռոստոմի մեկնելէն յետոյ
մեզի եղած յանձնարարութեան համեմատ Վիշապ ու-
ղարկուած գումարներու բոլոր փոստի ընկալագրերը:
Այդ ընկալագրերու մէջ է նաեւ Խմբագրութեանն ու-
ղարկուած 500 Փրանքի մեր ձեռքով Վիշապ ղրկուելը
յայտնող թուղթը: Վերջին 400 Փրանքի ընկալագիրը
մեր թիւ 282 նամակին հետ ժընեւ ուղարկած ենք,
երբ մեզմէ այդ գրածը փոխադրուած ըլլալու մասին
տեղեկութիւն ուզուած էր:

Ընկերական բարեւանքով՝

Կ. ՊԻՈՆՆԵԱՆ

Յ. Գ.— Ընկալագրերու ցոյց տուած գումարէն
զատ, գնացած ատենին կամ հոս եղած միջոցուն՝
ձեռքէ Վիշապի հաշուոյ թորգոմին յանձնուած է ըն-
դամէնը 365 Փրանք եւ Քրիսթին՝ 399 Փրանք:

ՆՈՅՆ

Գ.Ը.Ժ. 19.— ՆԱԿԻՆ ՊԱՏՐԻԱՐԳ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ
(ՏԱՐԱԳԻՐ) ՆԱՄԱԿՆԵՐԸ

Երբոր ընդ. ժողովի բարեբան մէջ կը գտնեմ իզմի-
լեան մայրիկն Պատրիարքի կողմէ (այդ օրերուն՝ աֆոսուած Ե-
րուսաղէմ) Տաք. Կ. Փաշայեանի ուղղուած երկու մամակներ:
Ըստ երեւոյթի՝ Տաք. Փաշայեան ուզած է իզմիլեանի գրաւոր
տեսակետները ունենալ՝ գտնեմ զրկելու համար ընդ. ժողովին:
Առաջին մամակի երկրորդ քերթի վարի մասը պատուած ըլլա-
լով, ստորագրութիւն մնացած չէ: Երկրորդը՝ ստորագրուած է
Տարազի, որուն տակ այլ մտազգրով մը աւելցուած է՝ իզմի-
լեան մայրիկն Պատրիարք:

Երկու մամակներն ալ գրուած են սեւ միւսնով, մամակի ըն-
թացիկ շափի եւ տիպի (գծուր) բարբի վրայ:

Իզմիլեանի եւ Խարախանի մամակները բէւե անտիպ չեն
(տեսնել Ս. Վրացեան, շիզմիլեանի եւ Խարախանի գրու-
թիւնները Հ. Յ. Դաշնակցութեան, ՀԱՅՐԵՆԻՔ ամս., Թ. տարի,
քիւ 9, Յուլիս 1931), սակայն Գ. ընդ. ժողովի Յիւրթու ամ-
բողջականութեան համար գտնեմ այս աքթի կը երատարկեմ
վերստին:

Ս. Երուսաղէմ, 27 Յունուար, 1904

Վեհաճուք ասքթէօր Կարապետ Խան Փաշայեան
Աղեքսանդրիա, Եզրիպոստ.

Գերազնիւ բարեկամ,

Ստացայ Ձեր Վեհմութեան 6 Յունուար, 1904 թը-
ւակիր կարեւոր նամակը. անմիջապէս հաղորդեցի
զայն Գեր. Տ. Ներսէս վարդապետ Խարախանեանի եւ
օր մ'ալ իր քով թուղթի: Կոհանքի որ Նորին Գերա-
պատուութիւնը տաքութեամբ չի վերաբերիր իմ պատ-
րաստած տեղեկագրին, եւ կ'ուզէ ինք զատ, բայց ա-
ռանց իմ գիտնալուն, գրել: Ասոր վրայ առաջարկեցի,
որ ինքն ալ բան մը պատրաստէ եւ տեսնենք, սակայն
մերժում եղաւ պատասխանը. ուստի եւ վերջին անգամ
յայտարարեցի, թէ աղէկ կ'ըլլայ որ զատ զատ գրենք,
որուն առանց զիտողութեան համակերպեցաւ անմիջա-
պէս: Հետեւաբար փոխանակ մէկի՝ երկու տեղեկագիր
պիտի ստանաք սա թէութեամբ, որ Ներսէս վարդա-
պետ իր ազնուութեամբ գիտէ իմ տեղեկագրի պարու-
նակութիւնն, իսկ ես, իմ անկեղծութեամբ, չգիտեմ
անոր տեղեկագրին մինչեւ իսկ համառօտութիւնը: Ինչ
որ է, փակենք այս խնդիրը:

Ներքեակ կը ստանաք իմ տեղեկագիրը «Տարազի»
ստորագրութեամբ, որ թէեւ համառօտ՝ բայց կը յու-
սամ որ պարզած է արդի տիրող քաղաքական եւ ազ-
գային հանգամանաց և իրաց, որչափ հնար է, ճշգրիտ
կացութեան էական կէտերը:

Այլեւս բացարձակապէս յայտնի է այսօր, դերագ-
նիւ բարեկամ, որ Հայկական Խնդրոյն եւ մեր գոյու-
թեան իսկ սպառնացողն ուս-թրքական միացեալ ուժն
է, որու հանդէպ ազգային զօրաւոր պատրաստութեան
եւ շարունակելի ընդդիմութեան հետ՝ մեծ պետու-
թիւններէն գոնէ մէկուն, — Անդղիոյ կամ Գաղղիոյ,
— ի պահանջել հարկին Հայկական Դատը գործնակա-
նապէս պաշտպանելու պատրաստակամութեան պէտքն
անհրաժեշտ կը նկատեմ. — ինչ որ Մակեդոնիան, իր
ծանօթ ամէն առաւելութիւններուն հետ, Ռուսիոյ կող-
մէ կը վայելէ այսօր: Անդղիան բաւական կը համարէ
որ Ռուսիան Հայաստանի չտիրէ եւ Միջերկրականին
չձօտենայ. անկէ անդին չիւնչ որ ալ ըլլայ՝ ըլլայ՝
քաղաքականութեան յարած է: Իսկ Գաղղիան, իբրեւ
Ռուսիոյ դաշնակիցը, չ'ուզեր անոր քաղաքականու-
թեան հակառակել, որ եթէ անկեղծօրէն կամենար, իմ
կարծեօք, կրնար համոզել Ռուսիան եւ միացնել Հայ-
կական Խնդիրը Մակեդոնական Հարցին, եւ այդ եր-
կու խնդիրները մէկ տեղ, մէկ յոգնութեամբ լուծելու
առաջնորդել քաղաքական աշխարհը. բայց, մարդաօր-
րական ամէն ազնիւ ջանքերու հակառակ, չըրաւ, եւ
յոյս մ'ալ չ'երեւիր որ ասկից ետքն անանկ գործնական
քաղաքականութեան մը հետեւի: Ուստի, ուս-թուր-
քական միացեալ ամենի ոյժին դէմ միայնակ պիտի
մնանք: Այլ խնդիր է՝ եթէ ազգային ընդդիմութիւնն
այնչափ զօրաւոր եւ այնչափ տեւական պիտի կրնայ
ըլլալ, որ պարտաւորէ Եւրոպան միջամտել եւ Հայ-
կական Խնդիրը վերջնականապէս եւ հիմնապէս լուծել
այն պայմաններով՝ ինչ պայմաններով որ լուծումն
պիտի ստանայ Մակեդոնական Խնդիրը:

Հարկ կը համարեմ ամենայն անկեղծութեամբ
կրկնել՝ որ հակառակ պարագային ազգին վիճակն
այժմեանէն շատ աւելի աղետալի պիտի ըլլայ, եւ պա-
տասխանատուութիւնը՝ ահաւոր:

Սոյն նամակն ստորագրելուս հետ այրեցի Ձեր
յիշեալ նամակն, ապահով եղէք: Նոյնպէս ապահով
կրնաք ըլլալ, որ ոչ ոք չի կրնար իմանալ մեր միջեւ
փոխանակեալ թղթակցութիւնները: Հաճեցէք եւ դուք
մեր սոյն նամակն այրել, անհետացնել:

✱

Գերազնիւ բարեկամ,

Ձեր Ազնուութիւնն 6 Յունուար 1904 թուակիր
մէկ նամակովը կը հրաւիրէր մեզ պարզել՝

- 1.— 1895էն առաջ եւ անկէ ետքի ազգային ընդհա-
նուր վիճակը.
- 2.— Երկրին ընդհանուր կացութիւնը եւ տնտեսա-
կան ու իրաւաբանական փոփոխութիւններն, և
- 3.— Յայտնել մեր կարծիքն ձօտիկ ապագային՝
նկատմամբ ազգային արդի կացութեան՝ բըռ-
նելուիք դիրքին:

Սոյն երեք կէտերու մասին հետեւեալ հակիրճ
ընդհանուր տեսութեամբ կու գամ յայտնել իմ հայ-
եսացն եւ կարծիքը:

Յայտնի է, որ թուրք կառավարութիւնը չ'ինչ Հա-
րիւր տարիէ ի վեր իր իսլամ եւ քրիստոնեայ հպա-
տակաց նկատմամբ իսլամական սա սկզբունքն եւ ուղ-
ղութիւնն ունեցած է, թէ ամէն իրաւունք եւ առաւել-
ութիւն իսլամին, իսկ անպայման իրաւագուրի ստոր-
կութիւն՝ քրիստոնէին: Ասի այնչափ ընդարձակ սահ-
մանի մէջ, որ իսլամ մը, երբ ուզէ այս կամ այն քրիս-
տոնէին ինչքը, պատիւը եւ կեանքն իբրեւ իր իրաւուն-
քը, կրնայ ինչ միջոցով ալ ըլլայ, իւրացնել եւ վայն-
ելի համարձակ եւ անպատիտ:

Թուրք կառավարութիւնը թէպէտեւ վերջ ի վերջոյ
եւրոպական մեծ պետութեանց բուն ուժով ստիպում-
ներէն պարտաւորեալ արդարութեան գործադրման,
երկրին եւ հպատակաց անդորրութեան եւ բարգաւաճ-
ման համար վարչական, իրաւաբանական, տրոց բաշխ-
ման ու հաւաքման եւ ոստիկանական եւրոպական օ-
րէնադրութիւններ եւ այլ ինչ ինչ բարենորոգումներ
ընդունեց, թէպէտ քրիստոնէից եւ իսլամաց անխախ-
հաւասարութիւնն հռչակող 1839ի եւ 1856ի հրովար-
տակները հրատարակեց, եւ մասնաւորապէս քրիստո-
նէից վիճակին բարւոքման համար դաշնադրական
պարտաւորութիւններ յանձն առաւ, բայց այդ ամէնը
նկատմամբ քրիստոնէից լուր արտաքին ձեւակերպու-
թեանց սահմանին մէջ մնացին. իսկ իրականն ու իս-
կականը՝ նոյն իսլամական սկզբունքն եւ ուղղութիւնը
գործադրուեցան շարունակաբար: Այլեւս տիեզերական
դարձած ճշմարտութիւն մէ թէ թուրք կառավարու-
թիւնը իր հպատակ քրիստոնեայ այս կամ այն ազգին
համար յանձն առած եւ գործադրութիւնն իրեն թող-
ուած ամենէն տարրական բարենորոգումներն անգամ
ոչ միայն չի գործադրեր, այլ ահռելիօրէն ջնջել կը
մեռնարկէ այն քրիստոնեայ ազգն, որուն համար պար-
տաւորեալ յանձն առած է բարենորոգումներ գործադ-
րել:

Թուրք կառավարութիւնը Պերլինի Դաշնադրու-
թեան, ի միջի այլոց, Հայոց համար 61րդ յօդուածը
ստորագրած թուականէն — 1878էն — Հայաստանի
մէջ բարենորոգումներ գործադրելու պատրուակին
տակ սկսաւ աստիճանաբար սաստկացնել խստութիւն-
ները, — մտաւորական ամէն արտադրութիւններն ու
հրապարակադրութիւնը գրաքննական արտաքոյ կարգի
օրէնքներու եւ կամայականութեանց ու քմահաճոյից
ենթարկուեցան եւ կաշկանդուեցան: Հայոց դարաւոր
հարստահարիչ պաշտօնեաներն եւ շարք-շարք Շէյխ
ձէլալէտտիներ, Մուսա բէկեր, թուրք եւ քրիստոնե-
ւորներ, հարկահաններ եւ նորակազմ լրտեսներն եւ
համիտիէ զօրագունդերը թոյլատրուեցան ու քաղա-
քներուցան Հայոց վրայ ամէն տեսակ հարստահարու-
թիւններ, կեղեքումներ... գործել. իսկ հայերն ընդ-

հանրապէս իբրև սննդամթերք ու եղեռնադրժներ բանտերու, բանտային սոսկալի տանջանքներու, աջարի եւ մինչև իսկ կախազանի կը մատնուէին: Երկրին մէջ դրեթէ չէր մնացած ոչ իրաւունք, ոչ արդարութիւն եւ ոչ կենաց, ընչից եւ պատուոյ ապահովութիւն: Աւելորդ է ընդհանուր ընդթ ստացած հարստահարութեանց այն ամէն քառմանի տեսակները եւ որակը մանրամասնել ու պարզել, որոնք արդէն աշխարհահռչակ եղած են իրենց ամբողջութեամբը: Տես 1870ի, 1876ի եւ 1895 Փետրուար 8ի Բ. Դրան մատուցուած հարստահարութեանց ազգային վարչական տեղեկագրերն եւ շարք մը անդրիական կապոյտ գրքերը:

Այս հայաջինջ հալածանքին հետեւանօք՝ երկրին ընդհանրապէս, իսկ հայոց մասնաւորապէս, առեւտրական եւ անտեսական վիճակը սկսաւ հետզհետէ փճացման եւ քայքայման դիմել: Աղքատութիւնն ու չքաւորութիւնն առ հասարակ ամէն տեղ տիրեց (էին) եւ կեանքի պայքարն ու թշուառութիւնն իր գագաթնակէտին հասեր: Այս ամենուն յաջորդեց անցադրային ձեւակերպեալ խտուրթեամբ մը թոյլատրուած հայոց դաղթականութիւնը կամ հայերն իրենց հայրենիքէն վտարելու շարանները քաղաքականութիւնը:

1895էն առաջ Հայաստանի մէջ իրերն այս ամենատարու վիճակն ունէին, երբ Գարնոյ եւ Կ. Պոլսոյ գէպքերէն ետքը 1894ի Օգոստոսին տեղի ունեցաւ Սասունի կոտորածը: Այդ կոտորածին պատճառաւ Անդրիոյ նախաձեռնութեամբ անդրիական, Ֆրանսական եւ ռուսական կառավարութիւնները միջամտեցին եւ այդ կոտորածի ջնուութիւնէն ետքը Յուլի 10-ու Կոնստանտնուպոլսոյ վրայ հայկական վեց նահանգներու համար 1895 Մայիս 11ի բարենորոգմանց ծրագիրն եւ անոր յարակից յիշատակագիրը մշակեցին եւ մատուցին թուրք կառավարութեան:

Թուրք կառավարութիւնն երբ այդ ամենատարական եւ առանց եւրոպական գործնական հսկողութեան, ուղղակի իր կամայականութեան թողուած, ծրագիրն իսկ մերժելու համար աներեւակայելի հնարքներով եւ անհասանում դիտողութիւններովն քաղաքական աշխարհը կը զրազեցնէր, ահա լորդ Սալիզբորի 1895 Օգոստոսին, խօսքի սահմանին մէջ մնալու համար միայն ըրած ծանօթ բանախօսութիւնէն անմիջապէս ետքը՝ Ռուսիան պաշտօնապէս թուրքիոյ ինամակալ պաշտպանն իսկ հայկական բարենորոգմանց ոխերիմ թշնամին դարձաւ, եւ 1895 Սեպտեմբեր 18/30ի Կ. Պոլսոյ գէպքին հետ սկսան երեք հարիւր հազար հայերու նմանը չտեսնուած ահաբեկի կոտորածը, Հայաստանի ընդհանուր աւերն, աւարը, հրդեհները, հայոց բռնի թրջացումները, ձերբակալութիւնները, բանտային զարհուրելի խոշտանգանքները, սպանութիւնները, բերդարդելութեան, աջարի եւ կախազանի անդատատան ու անվճիռ դատապարտութիւնները: Այս սարսափներուն մէջ 40-50 հազար հայեր Հայաստանի

կեդրոնէն Կովկաս, եւ Օսմանեան Պանքայի գէպքին յաջորդող կոտորածներու հետեւանօք՝ Կոստանդնուպոլսէն ալ բազմաթիւ հայեր հապճեպ խուճապով Եւրոպա, Ամերիկա, Եգիպտոս, Պուրկարիա եւ այլուր փախան, եւ ամէն ջանից հակառակ այս դաղթականաց հայրենիք վերադարձն անհնարին ըլլալով՝ ցիրուցան տարադուռեցան ամէն տեղ: Քանի մը տասնեակ հազար որբեր ու այրիներ թշուառութեան դառն բաժակը ցլետին մրուր քամեցին: Կ. Պոլսոյ բանուոր, արհեստաւոր, մանրավաճառ եւն. հայ գաղթականները բռնի, անհաց, անջուր հայրենիք վտարուեցան, որոնք նիւթական ծանր վնասներ կրելէ զատ, իրենց ընտանեաց օրապահիկը ճարելու միջոցներէն ալ զրկուեցան:

Այնքան յայտնի է երկրին անտեսական վիճակին կրած փոփոխութիւնն ու հիմնապէս գրեթէ քայքայուած ու կործանուած, եւ հայոց դրամական, հողային եւ այլ ստացուածոց հսկայ կորուստն ու թշուառութիւնն, որ հարկ չկայ երկարօրէն պարզելու: Նոյնպէս հարկ չկայ փաստարանելու թէեւ լռելիայն, բայց աւելի ծայրայեղօրէն, քան ինչ որ էր 1895էն առաջ, հայոց համար գործադրութեան դրուած նորանոր տեսակներով եւ նորասահման տուրքերով բազմապատկեալ՝ արդի հարստահարութիւններն, որոնց տակ կը հեծէ այսօր բովանդակ Հայաստան, առանց երբեք ճիշդ ու ճայն կարենալ հանելու, վասն զի այլեւս հայոց համար արդարութիւն, իրաւունք, դատաստան իսպառ սպուռ բարձուած պարզ դիտողութիւն մը՝ ոճիւր, բողոք մը՝ եղանակ կը համարուի...:

Պէտք է եւ պարտք՝ փրկել հայրենիքն այդ ամենատեսակի կացութիւնէն եւ տալ հայոց իբրև մարդու՝ խղճի ազատութեան, մատուրական անարգել զարգացման, կենաց, ընչից ու պատուոյ անվթար պահպանման եւ քաղաքակրթութեան բարիքները վայելելու պայմաններով պարելու իրաւունքը:

Սակայն այդ նուիրական բարձր նպատակին հասնելու համար որեւիցէ կարելոր ձեռնարկէ առաջ հարկ է, ինչպէս կը կարծեմ, նկատողութեան առնել.

ա. — Այսօր տիրող սա անվիճելի ճշմարտութիւնը, թէ Մակեդոնիոյ ազգաբնակչութիւնն իր թուական առաւելութեան հետ՝ իր ցեղակից ու կրօնակից եւ անմիջական սահմանակից պուրկարական իշխանութեան օգնութիւնը կ'ընդունի, եւ մանաւանդ, իբրև սլաւ եւ իբրև օրթոքոս, Ռուսիոյ բացարձակ հովանաւորութիւնը եւ գործնական պաշտպանութիւնը կը վայելէ: Իսկ Հայաստանի սահմանակից միակ ջրիտանայնոյն այն ռուս պետութիւնն՝ ամէն ժամանակէ աւելի ամբողջ հայոց անողոք թշնամին եւ հայկական բարենորոգմանց կատաղի հակառակորդը դարձած է:

բ. — Այն իրականութիւնը թէ Հայկական Հարցը Մակեդոնականին կցելու համար խորհրդարանական

հարցումներով եւ հարցապնդումներով, եւրոպական միթիզներով եւ հրապարակագրութեամբ առ մեծ պետութիւնս կոչերն ու դիմումներն եւ այդ նպատակին նուիրուած այլ ամէն ազնիւ եւ մարդասիրական եռանդուն ջանքերը՝ մինչև ցարդ անհետեւանք մնացին:

գ. — Ահռելի կոտորածներուն եւ Հայաստանի մէջ տիրող արդի սոսկալի կացութեան հանդէպ մեծ տէրութեանց մինչև ցարդ սառն անտարբերութեամբ հանդիսատես մը ըլլալուն հայոց վրայ ընդհանրապէս թողած լքման եւ յուսախարութեան ծանր տպաւորութիւնը, եւ նմանօրինակ պարագայից մէջ հայոց դաղթելու հետզհետէ զօրացած գրեթէ անդիմադրելի տրամադրութիւնն եւ ասով Հայաստանի մէջ հայոց թույն նկատելի նուազումը:

դ. — Ռուսիոյ հայոց նկատմամբ ձեռք առած անողոք քաղաքականութիւնը չէզոքացնող ուժի մը այսօրեայ բացակայութիւնը, եւ

ե. — Հայաստանի ռուսական սահմանալիքն մինչև Կիլիկիա հայկական նահանգներուն ընդարձակ տարածութեան վրայ, իրարմէ այնքան հեռաւոր, մէկ երկու կէտերու մէջ եղած պատրաստութեանց ոչ նուազ նկատելի անբաւականութիւնը:

Արդի տիրող այս եւ այլ ասոնց յարակից հանգամանքներն՝ լուրջ, հեռանկատ եւ նրբին ուսումնասիրութեամբ վերլուծելով միայն, ըստ իմ կարծեաց, կարելի է ճշգրտել, որոշել այն դիրքն, զոր բռնել, կամ այն ընթացքն՝ որուն հետեւիլ պէտք է այսօր կամ վաղը: Հակառակ պարագային ազգին վիճակը այժմեանէն շատ աւելի աղետալի կ'ըլլայ, եւ պատասխանատուութիւնն՝ ահաւոր:

Մնամ յարգալից սիրով՝
ՏԱՐԱԳԻՐ
(ԻԶՄԻՐԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐԳ)

27 Յունուար, 1904

Գ. Լ. Ժ. 20. — ՆԵՐՍԷՍ ՎՐԻ. ԽԱՐԱԽԱՆՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՂ՝ ԸՆԴՉ. ԺՈՂՈՎԻՆ

Ուղղուած է ուղղակի Ընդ. Ժողովի դիւանին: Գրուած՝ սեւ միւսնով, Յամակի ըմբացիկ չափի եւ տիպի (գծաւոր) բուրձրու վրայ (23x29 սմ.), 10 էջ:
Շահեկամ է ձկատել՝ երկու կրօնաւորներու (Իզմիրլեանի եւ Խարախանեանի) խառնուածքի եւ կեցուածքի տարբերութիւնը:

Երուսաղէմ, 1/4 Մարտ 1904

Առ
Պ. Նախապահ Հ. Յ. Դաշնակցութեան
Ընդհանուր Ժողովոյ,
Ինձ ալ հրաւէր եղած էր տեղեկութիւններ տալ

Երկրի վիճակի մասին 95 թ. առաջ եւ անկէ վերջ եւ յայտնել իմ կարծիքս ապագայ գործունէութեան մասին, որ տանջուող հայ ժողովուրդին մարդկային վիճակ մը պատրաստելու կը ճգնի:

Պարագանքը չեն օգնիր ինձ եւ անժամանակ կը համարեմ մանրամասն եւ բազմակողմանի տեղեկագիր մը պատրաստել թուրքիոյ բռնաւորական լուծին ներքեւ հեծող հայ ժողովուրդի ամենադառն վիճակի վերայ, որ ամէն հայու ալ ծանօթ է ու յայտնի նոյնիսկ Եւրոպայի դահլիճներուն պաշտօնական տեղեկագրութիւններով եւ հրատարակութիւններովը: Միայն թէ ես ծնած ու սնած լինելով Տարօնոյ պէս մի բազմահայ գաւառի մէջ, որ ի հնումն քաղերու օրրան եւ վերջին ժամանակներն ալ խժոճութիւններու եւ հարստահարութիւններու թատերաբեմ մը եղած էր, ուր զրկուածներու եւ շարչարուածներու թափած աղի արցունքներուն ակննատես եղած եմ, պարտք կը համարիմ ակնարկ մը ձգել անոնց այն վիճակին եւ յայտնել իմ հայեացքս:

Դժոխային են տանջանքներն, որոնց ենթարկուած էր այդ պատմական գաւառի, ինչպէս նաեւ նորասահմանակից միւս հայկական գաւառներու հայ ազգաբնակչութիւնը շատ տարիներէ ի վեր: Գողութիւններ եւ աւազակութիւնները ընդարձակ չափերով, յայտնի կեղեքումներ եւ յափշտակութիւնները, բռնաբարութիւններ եւ առեւանգութիւնները, ցորենի, գարիի եւ խոտի դէզերու ու մարագներու այրումները, հարկերու ահաւոր ծանրութիւնները եւ բաշխումները սովորական էին այդ գաւառներու համար, մասնաւորապէս դիւղացի հայերն էին շարչարանաց ծանրութիւնը կըրողները:

Հարստահարիչ եւ աւերիչ տարրի մէջ առաջին տեղը կը բռնէին միշտ ջիւրտերը: Քառասունական թրւականէն առաջ Հայաստանի այլ եւ այլ կողմերը իրենց բռնապետական անսահման շահատակութիւններով անուանի տէրէպէյիներու ժամանակ հայերը անոնց մէջ բաժնուած էին, բայց սա առաւելութիւնը կար, որ անոնք կը պաշտպանէին իրենց հայերը ուրիշ ջիւրտ ցեղերու դէմ ու շատ տեղեր հայն ու ջիւրտը կը զինակցէին թշնամիի դէմ կռուելու համար: Տէրէպէյին միշտ պատրաստ էր վրէժը լուծելու իր հայերու կրած վընտաններուն: Սակայն անոնց մէջտեղէն վերցուելովը կացութիւնը փոխուեցաւ եւ մէկ պէյի կամ ազայի տեղ շատերը բուսան ու սկսան իւրաքանչիւրը իր կողմէն կողոպտել ու հարստահարել անպաշտպան հայերը, որոնք շուարած չգիտէին թէ որո՞ւ դիմեն: Հին, ազդեցիկ տէրէպէյիները այլեւս չկային, կառավարութիւնն ալ չէր կրնար կամ աւելի ճիշդ չէր ուզեր հայերը պաշտպանել. թէեւ երբեմն երբեմն ջիւրտերը կը ձերբակալուէին ու կը բանտարկուէին, բայց շուտով կ'արձակուէին կաշառքի շնորհիւ: Գառագեղէն կրած զաղանները շարաշար վրէժ կը լուծէին իրենց դէմ բո-

դոքող Հայերէն եւ իրենց տուած կաշառքի տանապա-
տիկը կը հանէին: Իսկ երբ համիտիէ հեծելագորու
կազմակերպութեան ձեռնարկուեցաւ, ջիւրտերը այլ
եւ: առանձնաշնորհեալ դասակարգ մը համարուեցան
ու անոնց դէմ որեւէ բողոք կամ դանպատ բացարձա-
կապէս մերժուեցաւ: Նոյնիսկ թուրք քաղաքային եւ
գիւնուորական պաշտօնեաները սկսան դանդաւորի ու
ակամայ կը խոստովանէին, թէ այդ շփացած աւա-
զակներու սանձարձակ շարագործութեանց երեսէն եր-
կիրը բոլորովին կ'աւերուի եւ կառավարութեան ազ-
գեցուցութիւն չէ մնացած: Մինչեւ իսկ լուեցաւ, թէ
քանի մը տեղեր քաղաքային եւ ոստիկանական պաշ-
տօնեաները խիստ պատիժներու ենթարկուած էին
ջիւրտերու հետ դէշ վարուած լինելուն համար: Սա-
կայն, հակառակ այս դժգոհութիւններուն՝ քրտասի-
րութիւնը հետզհետէ հող կը պտնէր թէ՛ կառավարա-
կան շրջաններու եւ թէ թուրք ժողովրդեան մէջ. ա-
մէնքն ալ բարձրէն եկած ներքին հրամաններուն ու
հրահանգներուն կը համակերպէին: «Բիւրտերը զայ-
րացնելու չէ, անոնք մեզի պէտք կու գան, մանաւանդ
Հայերու դէմ», — ըսած էր Չէքի փաշան: Բայց միւս
կողմէն ուրախառիթ էր տեսնել, որ հակառակ ամէն
կողմէ Հայերու վրայ ծանրացած բռնութեան եւ զըր-
կանաց, հակառակ թուրք կառավարութեան հայալինջ
դժոխային քաղաքականութեան՝ ազատասիրութեան
կենդանի շունչ մը սկսած էր փչել բազմամեայ չորաց-
եալ ոսկորներուն, փրկարար շարժում մը տեղի կ'ունե-
նար եւ ոսկոր ոսկորի կը մօտիկնար...: Հայ յեղափո-
խական գործիչներու եւ ուրիշ աշխատողներու ջանքե-
րու արդիւնքը սկսած էր երեւնալ, ցանուած սերմերը
կը սկսէին ծլիլ, նախապաշարունակներով կապուած,
կաշկանդուած դարաւոր ստրուկը ինքնապաշտպանու-
թեան միջոցներու կը դիմէր եւ միայն արօրին ու մա-
ճին կապուած գիւղացին զէնքի ալ պէտք ունենալուն
կը համոզուէր, ու իր սիրած իրը, ձին կամ կովը վա-
ճառելով՝ հրացան կը գնէր ու իր դարաւոր կեղեքիչ-
ներուն դէմ կ'ելլէր խրոխտարար: Այդ միջոցներուն էր
(1889-90), որ Տարօնոյ ու շրջակայից սարսափ ազդող
Մուսա բէկը իր 60 ձիաւոր ջիւրտերով խայտառակու-
թեամբ Վարդենիսէն ետ կը դառնար չկրնալով գիւղը
մտնել, զի Մարգար Վարժապետի առաջնորդութեամբ
վարդենիսցի խումբ մը հայ երիտասարդները անոր
առջեւ ելած էին մարթինի հրացաններով զինեալ. ու
Մուսան այլևս բախտ չունեցաւ այդ գիւղը մտնել,
կինք ու ազդիկներ գիտել ու անառակութիւններ ի
գործ դնել: Հետզհետէ Մշոյ Գաշտի միւս գիւղերն ալ
նոյն բաջութեամբ ոգևորուեցան, կայծակի արագու-
թեամբ մէկզմէկու օգնութեան կը հասնէին. երբ յար-
ձակումներ տեղի կ'ունենային, այդ պարագային եկե-
ղեցոյ դանդակները պատերազմական փողի տեղ կը
ծառայէին: Քիւրտերը այլևս պահանջուէ, կեղեքե-
լու ու վնասելու համար հայ գիւղերը չէին համարձա-

կիր մտնել: Երջանի՛կ ժամանակ: Բայց ափսոս որ
չատ կարճատեւ եղաւ: Նոր եռանդն ու ոգևորութիւնը
չկրցան տոկալ սոսկալի հալածանքին, զոր կառավա-
րութիւնը ի պորձ դրաւ Վարդենիսի ծանօթ դէպքէն
ետք: Գիւղացիները աչք առած էին ջիւրտերու դի-
մադրել իր արագակներու, բայց չհամարձակեցան ա-
ւազակարարոյ զարթիւններու եւ օսմանեան զօրքերու
ալ դիմադրել: Կանխահաս էր այդ փորձուիլ, ու ա-
նոնք ըստ արժանւոյն պատրաստուած չէին: Նոր զըն-
ւած եւ ձեռք բերուած զէնքերը նմանը չտեսնուած
բարբարոսութիւններով հաւաքուեցան, ու երբ համո-
զում առաջ եկաւ թէ այլևս դիմադրելու միջոցներ չեն
մնացած, ջիւրտերուն հրահանգ տրուեցաւ ու անոնք
սկսան իրենց նորօրինակ շահատակութիւնները, ինչ-
պէս կ'ընէին ի հնումն՝ թշնամի երկրի մէջ, մեծամեծ
խումբերով, նոյնիսկ օր ցերեկով յարձակեցան հայոց
գիւղերու վրայ, կողոպտեցին ու աւերեցին, տեղ տեղ
սպանութիւններ ու առեւանգութիւններ ալ ըրին, այ-
րեցին ու փճացուցին ցորենի ու խոտի դէղերը, ու թէեւ
կառավարութիւնը վերջէն ծայրայեղութիւնը տեսնե-
լով ստիպուեցաւ միջամտել եւ կողոպուտներն ու ա-
ւարները մասամբ ետ դարձուց, բայց հալածանքն ու
հարստահարութիւնը չյաղքեցան, մանաւանդ որ նոր
պատրուակ մ'ալ՝ յեղափոխականներու երեւումը, կա-
ռավարութեան ձեռք իրբեւ զէնք սկսած էր գործած-
ուիլ: Ի՛նչ չարիքներ, ի՛նչ խժոժութիւններ բնա որ
չպորձուեցան այդ անունով ալ: Ժանտարմաններու ձիա-
ւոր խումբեր, կանոնաւոր զօրաց խումբեր զատ զատ
գիւղերը կը շրջէին ունէ յեղափոխական մը հետապըն-
դելու պատրուակաւ, գիւղացիներ ու թաղականները
անխնայ կը քանակոծէին, սիւներու կը կապէին, աղ-
բերու մէջ կը թաղէին, բերանին մարդու եւ անասու-
նի կղկղանք կը լեցնէին, շատերն ալ քաղաք կը դրկէին
բանտարկուելու, ու վերջապէս դումար մը կաշառք
առնելով կը մեկնէին: Բայց անոնց շուտ կը յաջողէին
ուրիշ խումբեր ալ, որոնք միեւնոյն գործողութիւնը կը
կրկնէին: Հարկահաններն ալ այս գործողութիւնները
կը կատարէին իրենց պաշտօնին առթիւ: Վերջապէս ա-
նողոք ու վայրենի խժոժութիւններու ընդարձակ առ-
պարէզ մը բացուած էր ու ատոր երեսէն բազմաթիւ
երիտասարդներ տուն ու տեղ, կին ու զաւակ թող տա-
լով կը փախչէին: Պաշտօնատուները, դատարանները
եւ ոստիկանութիւնը հայերով զրազած էին ու իրարու
հետ կը մրցէին «անհաւատարիմ կեաւուրները» խոշ-
տանդելու, կեղեքելու եւ իրաւազուրկ ընելու համար:
Կը զրպարտէին, սուտ վկաններ կը պատրաստէին եւ ա-
նարդար վճիռներով կը դատապարտէին, որը 15 տարի
առժամակիր աշխատութեան, որը մահուան եւ շատերն
ալ մշանջնաւոր բերդարգելութեան: Կային որ բան-
տարկութեանէ կ'ազատուէին կանխաւ կաշառքներ տա-
լով: Այնքան առաջ գացած էր հայերը քաղաքական
յանցանքով ամբաստանելու եւ բանտարկելով կաշառք

առնելու դրութիւնը, որ 1892-94ին Բաղէշի կուսակալ
Հասան-Քահսին փաշան, չբաւականանալով Բաղէշ
քաղաքի վաճառականներէն, խանութպաններէն եւ ար-
հեստաւորներէն 20 հազար օսմանեան լիրայէն աւելի
առած կաշառքներով, պաշտօնեաներ ցրուեց կուսա-
կալութեան ամէն կողմը՝ Մուշ, Սղերդ, Պուլանուխ
եւ այլն տեղերը ու Բաղէշ տանիլ տուաւ շատ մը հա-
յեր, որոնք կը կարծուէին թէ բան մը ունին, բանտար-
կեց ու տանջեց եւ կաշառք առնելով արձակեց: Նոյն
իսկ Կարնոյ կուսակալութեան պատկանող Քղիէն ալ
Ամրիկեան երկու եղբայրները բերել տուաւ Բաղէշ ու
բանտարկեց եւ 400 լիրա առնելով արձակեց: Օսման-
եան դատարանները կատարեալ գործիք մ'էին այս տե-
սակ կաշառակեր պաշտօնեաներուն ձեռքը: Պուլանու-
խէն Խօշկերտի գիւղացի Միրզոյեան Գասպար վաթ-
սունամեայ ծերունի մը իր Սաղաթէլ որդւոյն հետ
Բաղէշի մէջ բանտարկած էին: Երկար բանակցութեանէ
միջ, երբ համոզուեցան որ դրամ չունին, քառասուն
քիչ ցորենի մուրհակ մը առին ու թողուցին: Իսկ
բանտարկուած տարարախտ հայերու կրած չարչա-
րանքներն ու մարտիրոսութիւնը ես չեմ կարող նկա-
րողել, ժամանակին այդ մասին բաւական մանրա-
մասնութեամբ հրատարակութիւններ եղած են արտա-
սահմանի ազգային եւ օտար թերթերու մէջ: Ո՛րչափ
հայեր այդ դժոխային վայրերու մէջ չկրնալով տոկալ
վայրագ տանջանքներու՝ տակաւին առոյգ հասակի մէջ
կնքեցին իրենց կեանքը: Աչքովս տեսայ 10-12 կորովի
տալուրիկցիները, որոնք ազատ լեռներէն ի բանտ ա-
ռաջնորդուած էին, հետզհետէ կ'մախք դարձան ու վեր-
ջապէս ծաղիկի պէս թառամեցան ու գերեզման իջան:
Տեղական կառավարութեան, եւ առաջնորդարան-
ներու միջոցաւ Պատրիարքարան տրուած բողոքները
չկրցան դարման մը բնել հայ ժողովուրդի ցաւերուն.
վերջերը Աչքեան պատրիարքն ալ Բ. Դրան հետ հա-
մաձայն տեսակ մը անվստահութիւն ցոյց կու տար
յաճախուած բողոքներու ստուգութեան մասին, ուստի
դարմանալու չէ որ թուրք կառավարիչներն ալ առաջ-
նորդներէն կը պահանջէին իրենց ժողովուրդը հաւա-
տարմութեան եւ հնազանդութեան յորդորել եւ սուր-
թանին զոհուանակութեան եւ շնորհակալութեան հեռա-
դիրներ ուղղել, անոնց խաղաղ ու հաւնախտ կացու-
թեան համար:

Երկրի մէջ այս անցքերը կ'անցնէին 95 թուակա-
նէն ստալ, իսկ անկէ սողին վիճակը աւելի եւս ծան-
րացաւ: Մէկ կողմ թողուեք 95 եւ 96 թուականներուն
տեղի ունեցած կոտորածներու ահուկի դէպքերը, որք
հայ ժողովուրդը իր առոյգ եւ բնտիր շատ մը զաւակ-
ներէն զրկեցին: Մի՛թէ կոտորածէն պակաս աղետարեր
են վաղթականութիւնն ու պանդխտութիւնը, որ տա-
կաւին կը շարունակուին հակառակ պաշտօնական ար-
պիւններու, այնպէս որ մարդ քստմնելով կը տեսնէ
Երկրին հետզհետէ դատարկանալն ու Հայաստանի հա-

յերէն թափուրնալը: Բայց աստի մեծ չափերով առաջ
կ'երթայ բռնութիւնն, հայոց հողերու յափշտակու-
թիւնը, սպանութիւնը եւ առեւանգութիւնը, որոնց
մասին խստիւ արգելուած է բողոք ընելն ու աղմուկ
հանելը: Կը շարունակուին ոստիկանական խոտութիւն-
ներն ու երթեկուցութիւններու արգելքները: Հարկա-
հաւաքութիւնը կը կատարուի անողոք ու անվայել չար-
չարանքներով, չբաւարներու օրական սարէնը անգամ
կը յափշտակուի ու կը վաճառուի, տուրքերն արդէն
նոր ի նորոյ յաւելուածներով ծանրացած են ու ան-
տանելի եղած մեր աղքատ ու թաւանուած գիւղացիին,
որ այլևս անտանելի կը դառնէ կացութիւնը ու յուսա-
հատական միջոցներ կը խորհի, այն է՝ եթէ թոյլ տան՝
յաղթել ու հեռանալ այն դրախտավայրերէն, որք
թուրք կառավարութեան շնորհիւ կատարեալ դժոխքի
փոխուած են, եւ կամ մահու ու կենաց յուսահատ
կոխ մը մղել թշնամուոյն դէմ ու իր աւերակներու տակ
թաղուիլ:

Հիմա պանք այն հարցին թէ ի՛նչ պէտք է ընել մեր
հայ ժողովուրդի այս կացութեան հանդէպ: Եթէ այս
դարնան, եւ կամ ուրիշ ատեն մը, Մակեդոնիա վերըս-
տին ապստամբութեան դրօշ բանայ եւ Պուլկարիա ու
Սերպիա ալ թուրքիոյ հետ պատերազմի բռնուին, ըստ
իս, շատ ցաւալի պիտի լինի եթէ մենք ձեռքերնիս
ծալլած նստինք ու սպասենք օգտուիլ օտարներու թա-
փած արիւնէն. — դա յիմարութիւն է: Իրաւ է թէ հայ
արիւն ալ շատ թափուեցաւ, բայց հանգամանքները
զայն սպարդիւն թողուցին: Մարդու պէս արիւն չթա-
փեցինք, հապա ոչարներու պէս, անմոռնչ կեցանք
յանակի առջեւ: Օր մը պէտք է որ ցոյց տանք թէ դի-
տենք քաջի մահով մեռնիլ: Ինչ որ անհաստապէս մեր
անմահ նահատակները կը հաստատեն, ազգովին ալ
հաստատենք: Ո՛վ որ ժամանակի հետ չի քալեր ու պա-
տեհութիւնէն չի դիտեր օգտուիլ, վերջը շարաշար կը
ղղջայ: Յաջողութիւնը ու ձախորդութիւնը եղբայրներ
են, վերջինէն վախցողը առաջինը չի կրնար ձեռք բե-
րել: Եթէ կը ցանկանք որ Հայոց Հարցն ալ Մակեդո-
նականին հետ իր լուծումն ստանայ, զէն ի ձեռին պա-
հանջելով միայն կարող ենք յոյս ունենալ յաջողու-
թեան: Այդ վիճակն ալ սակայն առաջ բերելու համար
կարեւոր պատրաստութիւններ պէտք են, զէնքի, ռազ-
մամթերքի եւ պաշարի կողմանէ: Կռիւներու եռանդ ու
յօժարութիւն ունեցող այրուած սրտեր շատ ունինք,
բայց Սամսոնի պէս մէկ իշու ծնօտով հազար մարդ
ջարդելու հրաշքի դարն անցած է. կոտորի համար
զէնք պէտք է որպէսզի գործն Սասունի 1894ի նման
խեղճ ու սղորմելի վիճակ մը չունենայ: 1892ին խոր-
հուրդ յղացուած էր Մշոյ քաղաքի զօրանոցի վրայ
յարձակում մը փորձել զինարանը զբաւելու համար:
Դժուար բան մը չէր թուեր, սակայն նկատուեցաւ որ
չատախցի հայերը, որոնցմէ պիտի կազմուէր յարձա-
կող զունդը, միայն չազմազլի հրացաններ ունէին եւ

Յրօնք գիւղէն ելած վառօդն ալ քիչ բան մը: Մինչ, Մշոյ թուրքերը գրեթէ առանց բացառութեան նոր գէնքեր ունէին, իսկ զօրանոցի մէջ կը գտնուէր վաշտ մը (թապուր) հետեւակ եւ վաշտ մ'ալ ձիաւոր զօրք, քաղաքի եւ Մշոյ դաշտի հայերու քով դանակ մը անգամ չէին թողուցած: Երկու տարի վերջ Սասունի դէպքի ժամանակ հայերը նոյն չազմազլի հրացաններով կրուեցան քրտական ահագին բազմութեան ու զօրաց հետ, միայն 6-7 հատ մարթին գտնուած էր: Ասոր համար սասունցիներու դիմադրութիւնը շատ կարճատեւ եղաւ ու վախճանը՝ աղիտալի: Պէտք է դիտնալ որ յիշեալ կռուին չէին մասնակցած Սասունի գիւղերու ահագին մեծամասնութիւնը եւ Մշոյ դաշտի բոլոր հայ գիւղերը, այլ գլխաւոր կռուողները եղած են Շատախի երեք գիւղերը՝ Կելիէկուզան, Շէնիկ եւ Սէմալ ու Տաւրորիկը, որ 5 ժամէն աւելի հեռու է անոնցմէ: Դժբախտաբար այս երկու հատուածները թշնամիի դէմ չեն կրցած միանալ, այլ հատ հատ կռուած են իւրաքանչիւրը իր դիրքը պաշտպանելով: Ուստի, վեր ի վարոյ պէտք չէ՛ նայիլ մեծ գործին վրայ, որու պիտի ձեռնարկուի: Գաւառներու մէջ հայերը իրենցմէ թուով քանի մը պատիկ աւելի թշնամի տարրերէ շրջապատուած են: Անոնք արդէն առիթի կը սպասեն ջարդի եւ աւարառութեան սկսելու, ուստի մեր կողմէն ալ գէթ պաշտպանողական դիրքի մէջ լաւ դիմադրութիւն մը ընելու համար՝ գէնքի, ռազմամթերքի եւ պաշարի պատրաստութիւնը ըստ կարելւոյն անթերի լինելու է: Բաց աստի հոգ տանելու է քիչ շատ գինեւ այն գիւղացիներն ալ, որոնք կռուոյ կեդրոններու մօտերն ու շուրջը կը գտնուին, որպէսզի փոթորիկի ժամանակ ինքզինքնին կարող ըլլան պաշտպանել յարձակումներու դէմ: Պատրաստութիւնները գոնէ 5-6 ամսուայ դիմադրութեան բաւելու չափ ըլլալու են, որպէսզի ըստ արժանւոյն ուշադրութիւն գրաւէ: Հարկ անհրաժեշտ է որ գտնուին հմուտ ռազմավարներ ալ զօրավարի պաշտօն կատարելու համար, ինչպէս նաեւ զինուորական կրթութիւն ստացողներ, որոնց միջոցաւ տեղացիներն ալ կրթուին որչափ հնար է:

Ասոր համար ամէն հայու վրայ նուիրական պարտականութիւն մը կը ծանրանայ օգնել իր եղբայրներու փրկութեան սուրբ դործին: Եկեղեցիներ, վանքեր, հիւանդանոցներ, նոյնիսկ վարժարաններ կառուցանելէն աւելի փառաւոր, աւելի աստուածահաճոյ եւ նուիրական է այս դործը, Քրիստոսի իսկական եկեղեցիի շինութիւնն է, ուստի միահամուռ եւ համազգային լինելու են ջանքն ու ուժերու թիւնը, անձնուրութիւններն ու նուիրուածութիւնները. այս պայմաններու մէջ վստահ ըլլանք թէ Աստուած մեզի հետ է:

Այս առթիւ չէ կարելի չցաւիլ յեղափոխական կու-

սակցութեանց բաժանումներու եւ մէկգմէկ վարկաբեկ ընելու համար թափած ջանքերու մասին ալ: Եթէ միութիւնը անկարելի է առոնց մէջ, գէթ այսպիսի ճշգրտած մը մէջ, կարգադրութիւն մը ընե՞լն ալ կարելի չէ՝ մէկգմէկ չխանգարելու համար: Դէպի Լ. Յ. Դաշնակցութիւնը տածած անկեղծ համակրանքս յայտնելով հանդերձ ջերմապէս կը փափաքեմ, որ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը այս մասին ալ, եթէ հրնար է, հաճի կարգադրութիւն մը ընել:

Ուրիշ խնդիր մ'ալ քիւրտերու հետ միանալն է: 95-96ին ի Պոլիս յայտնի Բազրիսան պէյի հոն գտնուող տղաներէն մին՝ քիւրտերու եւ հայերու միջեւ համաձայնութիւն մը առաջ բերելու համար բանակցութեան մտնելու լուր դրկեց, կը խոստանար իր կողմէն ջանքեր նուիրել յաջողութեան համար եւ վստահութիւն ունէր թէ պիտի յաջողի: Սակայն անոր անկեղծութեան մասին կասկածներ յայտնուելով ու Պոլսոյ մէջ հետզհետէ առաջ եկած շփոթութիւններն ալ արդեւ եղան խնդիրը ըստ արժանւոյն մշակելուն: Հիմա ալ պիտի ըսուի թէ ժամանակ չկայ ու իրաւ է, բայց եթէ մեծ գործը պիտի յետաձգուի՝ ի հարկէ պատրաստութիւնները պիտի շարունակուին. այդ պարագայի մէջ Դաշնակցութիւնը կրնայ այդ խնդիրն ալ ի նկատի առնել ու մշակել: Քիւրտերու ամէն ցեղերը միեւնոյն չեն, անոնց մէջ կան որ ճշմարիտ գայլեր են, միշտ կեղեքող, միշտ յափշտակող ու արիւնհարու: Այդպիսիները դժուար կ'ընդունին ան, ու մեզի չեն մօտենար. բայց կան ցեղեր ալ, որոնք մեզի չափ ու մեզմէ աւելի թուրքէն կը զգուին ու եթէ քիչ շատ ուժ մը տեսնան մեր մէջ, մեզի կը յարին: Այդպիսեաց կարգէն են Տարօնոյ Պաշնցիներն ու Տերսիմի Գըրլպաշները: Այս վերջիններուն հայերու հետ միանալու ձգտումին մօտէն տեղեկութիւն ունիմ: Երբեմն (82-83 թուականներուն), յայտնի Շահ Հիւսէյնի հետ երկար խօսակցութիւններ ու խորհրդակցութիւններ ունեցած եմ, մարդը շատ լաւ տրամադրութիւն ունէր. Տերսիմի ամբողջն ալ իր հետն էր, բայց մենք պատրաստ չէինք: Հիմա Հիւսէյն պէյը մեռած է. տղան՝ Հայտար պէյը, հօր զլացումները եւ ազդեցութիւնը չունի կ'ըսեն, բայց Տերսիմը միշտ մոլեռանդ թրքատեաց մը կը մընայ: Այդ ցեղէն կը գտնուին Քզլի, Դերլանի, Խնուսի եւ այլ կողմեր ալ, որոնց հետ կարելի է յարաբերութիւն մշակել:

Կը մաղթեմ որ երկնային իմաստութիւնը առաջնորդ լինի Ձեր խորհուրդներուն եւ յաջողութիւն շնորհէ Ձեր ազգօրուտ գործերուն:

Ողջունիւ եւ համակրանաց անկեղծ հաւաստեօք, մնամ անձուէր Ձերդ՝

Ն. Վ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆ

Զ.— 1904 — 1905 ՏԱՐԻՆԵՐԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Սասնոյ կոիւնքերու ընթացքին թէ անոնցմէ ետք, 1904-1905 տարիները Դաշնակցութեան կովկասեան մարմիններուն համար կը յատկանշուին բազմաթիւ նակատներու վրայ մզուած տեղագրին գործունէութեամբ մը:

Ծանօթ է համապարփակ խանդավառութեան այն պիքը, զոր կովկասի հայութեան մօտ ստեղծեցին Բարձրաւանդակի փետայական փոքրաթիւ բանակին սիրագործութիւնները(1): Լ. Յ. Դ. Երբորդ Ընդհ. ժողովէն անմիջապէս ետք, Ալեքսանդրապոլի մէջ տեղի կ'ունենար ղեկավար ընկերներու, Լ. Յ. Դ. կովկասեան մարմիններու եւ մարտական դասի ներկայացուցիչներու ընդարձակ խորհրդակցութիւն մը(2), ուր կը գործնականացուէին Ընդհ. ժողովի որոշումները՝ Սասուն օգնական ուժեր եւ զինամթերք հասցնելու, ինչպէս նաեւ այլ արշաւախումբեր կազմակերպելու ուղղութեամբ (տեսնել էջ 111 եւ 116): Ապա իրարու կը յաջորդէին Թորգոմի (Թուրան Թումանյան), Աշոտ-Երկաթի, Կայծակ-Վազարշակի, Նիկոլ-Դումանի, Գայլ-Վահանի, Միքիանի եւ ուրիշներու անցքը Երկիր, փոքրաթիւ զինատար խումբերով թէ ցուցակեան մեծ արշաւախումբերով, իրենց հերոսական սլացքով ու յանախ՝ անխուսափելի, եղբրական վախճանով:

Օգնական խումբերը չհասան Սասուն, ուր ակընկալուած թուականէն առաջ յարձակման անցած էր թուրք բանակը՝ փետայիները ստիպելով կռիւ մղելու իրենց սահմանափակ ուժերով եւ ազգական անբարար պատրաստութեամբ, եւ ապա քաշուելու Բարձրաւանդակէն՝ Ախլաթի եւ Վասպուրականի գծով դէպի Պարսկաստան ու Կովկաս:

Տանկահայաստանի ազատագրական պայքարին առընթեր, կովկասահայութիւնը, մասնաւորաբար եկե-

ղեցական կալուածներու գրաւման ցարական հրամանագրէն ետք, շատ բնական կերպով մտաեղ էր մտնել իր սեփական իրաւունքներու կապտումով եւ ազատութեանց բռնաբարումով: Այդ մտաեղութիւնները յըստակօրէն արտայայտուած էին արդէն Յրդ. Ընդհ. ժողովին մէջ (տեսնել էջ 119), ուր Դաշնակցութիւնը որոշած էր «իր վրայ առնել կովկասահայ տարրի ինքնապաշտպանութեան գործը, յանձնելով այդ՝ կովկասի Պատասխանատու Մարմինը, որ, պահելով իր «ինքնապաշտպանութեան կեդր. Կոմիտէ» անունը, պիտի շարունակէ գործել Դաշնակցութեան պաշտօնական անունով տակ»:

Ընդհանուր ժողովէն ետք, սակայն, դէպքերը կովկասի եւ ամբողջ Ռուսաստանի մէջ ընթացան գահավէժ արագութեամբ: Ռուս յեղափոխական շարժումը, Սոցիալ-Դեմոկրատ եւ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեանց առաջնորդութեամբ, ծաւալեցաւ ու բռնկեցաւ, ցարական բռնակալութեան դէմ անհաշտ պայքարի համառուական բովին մէջ առնելով մտնել Լ. Յ. Դաշնակցութիւնը՝ իր Արեւելեան Բիւրոյով, կովկասի եւ Ռուսաստանի բոլոր մարմիններով, շարքերով ու համակիր գանգուածներով: Դաշնակցութիւնը մասնակցեցաւ Ռուսաստանի կուսակցութեանց համաժողովներուն, խորհրդակցութիւններուն, կազմակերպչական ու դաւադրական գաղտնի աշխատանքներուն: Եւ անկասկած՝ շատ աւելի կարեւոր պիտի ըլլար իր մարտական մասնակցութիւնը համառուական յեղափոխական շարժման, եթէ 1905 Փետրուարին չսկսէին հայ-թաթարական կռիւները՝ որոնք Դաշնակցութեան զինեալ ուժերը գրադեցուցին աւելի քան տարի մը(3):

Այս պայմաններուն մէջ բնական է տեսնել, որ

1904-1906 տարիները Դաշնակցութեան կռիւներն մարմնակերպում համար կը յատկանշուին տեղագրի գործունէութեամբ մը՝ թէ՛ ժողովական, թէ՛ կազմակերպչական եւ թէ մարտական գոտիներում մէջ: Իրարու յաջորդած են բազմաթիւ անպաշտօն (խորհրդակցական բնոյթի) թէ պաշտօնական Ռայոնական ժողովներ, որոնցմէ մէկ ֆանիլէն միայն՝ մեզի հասած են գրաւոր վաներական արձանագրութիւններ: Ուրիշներու մասին կը վկայեն յաշտութիւններ(4):

Բնական է նաեւ նկատել, որ կռիւներու շրջանում եւ ընդհանրապէս՝ Հ. Յ. Դաշնակցութեան համար, ցարական հալածանքներու խստացման իրրեւ հետեւանք՝ համառուսական յեղափոխական հնգին մէջ նետուիլը կ'առաջացնէր ծրագրային նոր ու հիմնական հարցեր, նոր ու հիմնական պահանջներու բանաձեւման եւ գործունէութեան նոր դաշտին յատուկ գործելակերպի յատկացման անհրաժեշտութիւն: Արեւելեան Բիւրոն, կռիւների Պատասխանատու Մարմինը (Ինքնապաշտպանութեան կեդր. կոմիտէ)՝ որ 1904ին փաստօրէն կը նշանակար Ռուսաստանի (Պաբու) Կ. կոմիտէին հետ(4) եւ կռիւներու յաջորդական Ռայոնական ժողովները գրադեցան ծրագրային նոր պահանջներու եւ գործունէութեան եղանակներու ձեւակերպումով: Ընկերակցութեան ամբողջապէս յարելու կամ ռուս բռնապետութեան դէմ հայութեան ծառայումը գուտ ազգային-ազատագրական պայքարի հուսին մէջ պահելու հակոտնեայ երկու ձգտումները բախեցան իրարու, յաճախ ստեղծելով բուռն վեճեր(4): Ի վերջոյ, 1905ի գարնան, Հ. Յ. Դ. հարհուրդն էր որ Դաշնակցութեան գործունէութեան նոր դաշտին յատուկ տեսական եւ ծրագրային բանաձեւումը՝ կռիւներու Գործունէութեան Նախագիծը կազմեց, երբ արդէն կուսակցութեան կռիւներու մարմիններն ու մարտական ուժերը ամբողջութեամբ կը գտնուէին հայ-թաթարական պատերազմի ամենաբուռն շրջանի թռուտի մէջ:

Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնական յարումը ընկերակցութեան՝ տեղի պիտի ունենար 1907ին միայն, Վիեննայի 4րդ. Ընդհ. ժողովի որոշումով եւ անկէ անմիջապէս ետք:

••

Այս բաժնին մէջ յաջորդաբար պիտի տանք.

1) 1904 Ապրիլի Ալեքսանդրապոլի ժողովի գրաւումներն ու որոշումները, ինչպէս նաեւ Սասնոյ կռիւներուն եւ 1904ի արշաւախումբներուն հետ կապուած կարգ մը փաստաթուղթեր:

2) Արիւսիային մեր ներկայ հնարաւորութեանց սահմաններուն մէջ՝ 1904ի ընթացքին կայացած կռիւներուն մարմիններու որոշական թէ խորհրդակցական կարգ մը ժողովներու մասին ամփոփ տեղեկու-

թիւններ, ինչպէս նաև Արեւմտեան Բիւրոյի 1904 Դեկտեմբերի երկու շրջաբերականները՝ տարուան ընդհանուր կացութիւնն ու մտքերը յուզող հարցերը յստակօրէն պարզող:

3) 1904 Դեկտեմբերի կռիւներուն 4րդ. Ռայոնական ժողովի որոշումներու արձանագրութիւնները, եւ Հ. Յ. Դ. Ինքնապաշտպանութեան կեդր. կոմիտէի (կռիւների Պատ. Մարմին) ու Արեւմտեան Բիւրոյի շրջաբերականները՝ գուտ կռիւներուն ընկերային եւ յեղափոխական մտահոգութիւններ ու տեսակետներ արտայայտող:

4) 1905ի Հ. Յ. Դ. հարհուրդի օրակարգը, գլխաւոր որոշումները, կռիւներուն Գործունէութեան Նախագիծը եւ երկու Բիւրոներու հաւաքական մէկ շրջաբերականը՝ 1905ի վերջը ընդհ. ժողով գումարելու անհրաժեշտութեան մասին:

5) 1905 Նոյեմբերի կռիւներուն Ռայոնական ժողովի ատենագրութեանց ամփոփումը եւ որոշումներու արձանագրութիւնը: Օրուան ամենաերատապ խնդիրը կը կազմեն բնականաբար հայ-թաթարական կռիւները: Արձանագրութեանց ամփոփման կցուած է Ս. Զուարեանի պատրաստած Ուղեցոյցը՝ «կռիւների եւ Ռուսաստանի գործունէութեան համար», որ արտացոլումն է Ալիսարիիկ Սուրբին բարոյական ներշնչանքին եւ ընկերային ըմբռնումներուն, եւ որ, իրրեւ Հ. Յ. Դաշնակցութեան համար առաջնորդող աշխարհայեացքի եւ կուսակցական-բարոյական դիմագծութեան հայելի՝ մեր կուսակցութեան մնայուն փառքերէն մէկը կը կազմէ, անժխտելիօրէն:

Բոլոր մասերուն եւ ենթարձանումներուն մասին պիտի տանք, անշուշտ, առանձին ծանօթագրութիւններ:

Հ. Յ.

(1) Տեսնել Մ. Վարանդեան, «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւն», — գլուխ XV, «Սասնոյ պատերազմը եւ կռիւներուն Հայութեան հիգը», էջ 285-301:

(2) Վեկավարներու եւ խմբակցութեան այս հաւաքոյթին մասին Ռուսիոյ եւս կը գրէ իր «Հայ Յեղափոխականի մը յիշատակներ» մէջ, առանց մտնելու օրակարգի եւ որոշումներու մանրամասնութեանց մէջ: Տեսնել Ա. տպագրութիւն, Ա. հատոր (Կարսի հնգին մէջ), գլուխ Զ., էջ 199-240: Ռուսիոյ մաս պիտի կազմէր Նիկոլ-Դուսմանի խումբին, եւ իր կրկնի միջոցով պիտի տանար Ռուսիոյ կողմէ: Նոյն խումբին մաս պիտի կազմէր նաեւ բժիշկ Զարիբեց:

(3) Տեսնել այս մասին՝ Մ. Վարանդեան, «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւն», եւ ի մասնաւորի XIX («Համառուսական շարժումները եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը»), XX, XXI, XXII, XXIII, եւ XXIV գլուխները («Հայ-թաթարական պատերազմը»):

(4) Տեսնել ի մասնաւորի՝ Ա. Գիւլեանցանեան, «Բազում դերը մեր ազատագրական շարժման մէջ», «Հայրենիք» ամսագիր, Գ. տարի, Բիւ 5 (Մարտ 1925):

1. — ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

1904 Ապրիլի Գարի (Ալեքսանդրապոլ) մէջ կայացած ժողովին մասին, որուն կը մասնակցէին մարտական ղեկավարներ, սահմանային Կ. կոմիտէներու (Գար, Զրաբերդ-Կարս — եւ Մըրզասուս — Երեւան) եւ Երկրի մարմիններու ներկայացուցիչները, Սիմոն Վրացեանի թուղթերուն մէջ կը գտնենք արձանագրութեանց թէեւ հակիրճ, սակայն ըստ բաւականին յստակ, ու հետաքրքրական տեղեկութիւններ պարունակող ամփոփում մը, գործի տանք նոյնութեամբ(1ա):

Ս. Վրացեանի թուղթերուն մէջ կը գտնենք նաեւ Ռայոնական եւ այլ ժողովներու ուրիշ ամփոփ արձանագրութիւններ, գործ պիտի տանք հետզհետէ, ամէն անգամ որ համապատասխան ժողովին պաշտօնական ատենագրութիւնը չունենանք մեր արձանագրութեան տակ: Կարգ մը պաշտօնական արձանագրութեանց եւ Ս. Վրացեանի կատարած ֆառուածներու բազմաթիւները ցայց կու տայ, որ մեր ողբերգելի ընկերը իր բոլոր ամփոփումները կատարած է ամենայն հարազատութեամբ, առնելով հիմնական նշանակութիւն ունեցող բոլոր հարցերն ու համապատասխան որոշումները, եւ ամենայնով անկարելի մտքամտանքութիւնները միայն: Թուական բոլոր տուեալներու վերաբարձրութիւնը հարազատ է եւ ճշգրիտ:

Գարի խորհրդակցութիւնը կը կատարուէր ճիշդ այն օրերուն, երբ Սասնոյ նոր էր բռնկուած: Մեր տրամադրութեան տակ ունենք օրին տպագրուած երեք բառերիկ-շրջաբերականներ, առաջին երկուքը հրապարակ համարած Ռուսաստանի (Պաբու) Կ. կոմիտէին կողմէ եւ բացառաբար՝ Սասնոյ կռիւներուն վերաբերելով: Կու տանք ժամանակագրական կարգով, — 1բ եւ 1գ: Երկրորդը կը ներկայացնէ Վանայի (Մամուլեան) մէկ նամակը՝ որ կը գումարէ Հրայրի մտքը (առնուած է սեւ շրջագծի մէջ): Իսկ վերջին՝ երրորդ փաստաթուղթը ներառէ Կ. կոմիտէի (Հ. Յ. Դ. Յրդ. Կ. կոմիտէ) մէկ բառերիկն է, որ կը նկարագրէ Սասնոյ-Զորի արշաւանքը — 1դ.՝ «Բազումայի կռիւները» — Գայլ-Վանի եւ Միւրանի ղեկավարութեամբ, 1904 Յուլիսին:

Երեք բառերիկներն ալ հրատարակուած են օրաթերթի թուղթի վրայ, առաջին երկուքը փոքր չափի (13x23 սմ.), երրորդը՝ մեծ (23x32 սմ.):

1ա. — ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԺՈՂՈՎԸ

1904 թ. Ապր. 5-12 Գարուն գումարուում է մի խորհրդակցութիւն, որին մասնակցում էին Բիւրոյից՝ Սիմոնը, Երկրից՝ Թորոսը, Երկաթը, Կայծակը, Մըրզասուսից՝ Թորոսը, Դրախտը, Թոխմախը, Զրաբերդից՝ Դ. Հայկունի, Տուրքախ, Ա. Հայկունի, Գարից՝ Վաղո, Մ. Զաւէնեան եւ ?(1):

Բնութեան են դրուում Երկրին վերաբերող խնդիրներ: Որոշուեց, որ սահմանադրութի 3 կոմիտէները (Գար, Զրաբերդ, Մըրզասուս) իրենց միջից կամ զըրրից ձեռնհաս մարդիկ նշանակեն զինուորական գործերի համար (զէնք գնել, պահել, տեղափոխել, խմբեր կազմել): Որպէսզի այս նշանակուած մարդկանց միջեւ սերտ կապ լինի, մէկին նշանակել շրջիկ:

Փոխադրութիւնները կատարել՝ ա) ժողովրդի միջոցով՝ հանդրուանէ հանդրուան, ք) օտարների միջոցով՝

ցով՝ վճարով, գ) սպարանքների միջոցով, դ) Ֆետտայական խմբերով:

Գծեր. — Տաք Աղբերի գիծը վտանգուած չէ եւ Ապրիլ 20ից Յունիս 15 կարելի է ժողովրդական ու Ֆետտայական միջոցներով փոխադրել 90.000 փամփուշտ, (որից 30.000ը՝ գիւղի), 50 կոթ, 100 ատրճանակ, իւղ, գործիքներ, մանրուքներ, խնձոր, թերթեր: Իւրաքանչիւր փոխադրող խմբի հետ պէտք է ներս անցնեն հինգ հայրուկներ եւ գնան մինչեւ Պուրակ եւ Բարձրաւանդակ(2): Հայրուկները պէտք է լինեն ընտրովի, զինավարժ, ենթարկուող եւ առողջ:

Դրախտ, Թոխմախ եւ Զաւէնեան նշանակուեցին (պատասխանատու)՝ այս գծի փոխադրական գործը վարելու:

Տաք Աղբերից գիծը գնալու է Տառնիկոնց: Փոխադրութեան ծախսերի համար պիտի տրուէ մանրամասն հաշիւ Մըրզասուսի Կ. Կ. Ին:

Երկաթին յանձնուեց (պարտականութիւն)՝ պարզելու Թոխմախի եւ Զաւէնի միջեւ եղած թերթի մտացութիւնները եւ այդ գծի վրայ կարգադրութիւններ աշխատելու:

Զրաբերդի գծերը վտանգուած են: Զրաբերդի Կ. Կ. ն անմիջապէս մարդիկ ուղարկէ ուսումնասիրելու եւ բանալու հին ու նոր գծերը: Այս գործը յանձնուեց Տուրքախին եւ Որոսորդին:

Որովհետեւ զարնան գիւղերները կարճ են եւ հետեւակները չեն կարող մի գծից միւսը հասնել, որոշուեց Ֆետտայական փոխադրութիւնները անել ձիւտը խումբերով: Իւրաքանչիւր խումբ բաղկանալու է 20-25 ձիւտերից: խումբերը ջանալու են տարբեր գծերով միաժամանակ անցնել: Զամբայ հանել որքան կարելի է շուտ:

Փոխադրութեան եւ խմբերի կազմակերպութեան գործը ենթարկել ամենախիստ զաղտնապահութեան:

Խմբի իւրաքանչիւր զինուորը ունենալու է հետեւեալ իրերը, — պայուսակ, ջրաման, բանդիչ, իւղաման, հրացանի մասեր (կատու, սանդի զսպանակ, կողքի զսպանակ եւայլն), ատրճանակ կամ խանչալ, փոքր տեսակի ումար՝ մէկ հատ իւրաքանչիւրին, լեցուած, բայց փոշին ու կապուելը չդրուած, վերականգն, իտտոֆորմ, բամպակ, հացի պաշար («չեզէր լոխումի», «հալա», զիչ աղ, 4 միտալ ճոպաթ չեզէր» ծառաութեան համար եւայլն) եւ մի կարգ դեղորայք, որոնց կարգին ոչլի դեղ:

Հազուատ. — Լաւ տակով ծուղայ(?) մէկ տակ կըրուակ տրուած, սպիտակեղէն, Ֆայջա, իչլիկ, շալաբ (վարի մասը նեղ, վերը լայն, առանց խոնջանի), գօտի, սիւմա, պաշլո-փափախ, ձեռնոցներ, երեք զոյգ գուլպայ եւ մի թիթեւ վերարկու կամ ուտերին տանելիք շալ:

Ոչ մի խումբ չպէտք է հաւաքել, մինչեւ որ հարկ

եղած բոլոր իրերը չառնուեն ու գծերի վրայ չփոխադրուեն:

Արշալախմբեր.— Մրանց անելիք գործերն են՝ զօրանոց-պահականոցների ոչնչացում թէ՛ սահմանի վերայ եւ թէ ներքը, առեւանդումն պաշտօնեաների, ըսպանումն ատուած պաշտօնեաների կամ կեղեքիչ զիւրտ ու թուրք բէյ-աղաների, պատժումն թշնամի զիւրտ ցեղապետների, յարձակում փոստերի վրայ, գաղտնի յարձակում բանակների վրայ, պաշտպանումն ժողովրդի՝ կոտորածի վտանգների ժամանակ: Այս գործողութիւնները պէտք է սկսուեն երբ Բարձրաւանդակը կոռուի բռնուի, եւ դասաւորուեն ժամանակի ընթացում(3):

Արշաւոզ կամ թուրքիկ խմբերը մասնաւոր հագուստ չունեն եւ իւրաքանչիւր զինուոր, ըստ կարելուոյն, ինքը պիտի հոգայ իր հագուստները, կօշիկն ու ճերմակեղէնը: Իրենց հետ կ'ունենան նոյն իրեղէնները, ինչ որ փոխադրող խմբերը: Իւրաքանչիւր զինուոր հրացանի հետ կը վերցնէ (եթէ բերդանի է) 220 եւ (եթէ մոսինի է) 300 փամփուշտ: Կոմիտէները պարտաւոր են այս խմբերի համար պատրաստ ունենալ 200 հրացան՝ փամփուշտներով, 50ի չափ ատրճանակներ, 100 խանչալ եւ ումբեր:

Կազմակերպում.— Կոմիտէները ամենազաղտնի կերպով պիտի ցուցակագրեն եւ ընտրեն զինավարժ, հպատակուող ու քաջ զինուորներ եւ գործի սկսելուց մի քանի օր առաջ զօրակոչի ենթարկեն: Պէտք է փութ-կոտուրեմա պատրաստեն եւ սահմանազուլու ուղարկեն 200 հոգու համար հարկ եղած իրերը: Անմիջապէս պէտք է դիմել կոմիտէներին եւ պահանջել խմբապետ-ցուններ եւ վերելի որոշումները իրագործելու ձեռնհաս մարդիկ, որոնք չուտով պիտի անցնեն սահմանազուլու, պիտի ուսումնասիրեն վայրերը եւ ձեռնարկների տեխնիկական կողմերը, պիտի փորեն թաքստոցներ, մանրամասն մշակեն անելիքները, կազմեն ծրագրերներ, վարժեցնեն զինուորներին, մօտից ծանօթանան զինուորներին եւ այլն: Բոլոր խմբապետները պիտի սովորեն ումբի գործածութիւն եւ վարժեցնեն խմբի ճարտիկներին: Մինչեւ վերջ պահել խիստ դաղտնապահութիւն:

Զինուորական նախապատրաստութիւններ.— Որոշուեց ունենալ մի կարգին մարզիչ դասախօսութիւնների եւ փորձերի միջոցով պատրաստելու խմբապետ-ցուններ եւ տասնապետներ: Այս նպատակով մի ամսուայ համար հրաւիրել վարդանին, իսկ եթէ նա չկարողացաւ՝ Նիկոլին:

Թանձարարուեց թորգոմին, որ գտնէ մի քանի տղայ եւ յանձնէ Պաշիկին, որ յարմարագոյն փչելու գործիքով նշաններ տալ սովորեն:

Հրահանգել բոլոր Կ. Կոմիտէներին, որ անմիջապէս զինուորական խմբեր կազմեն եւ մասնաւոր մարտիչների միջոցով վարժեցնեն:

Իրրեւ խմբապետ-տասնապետները աչքի առաջ ունենալ հետեւեալներին, — Հայկ, Թուրքիկ, Անուշաւան, Մատթէոս, Մկրտիչ (Կղզի գիւղացի), Արշաւիր (Ոսկանապատցի սպայ), Խէչօ (Ոսկանապատցի), Պաշիկ (Պուլկարացի), Հմայեակ եւ Երկաթ:

Ինտելիգենտ ուժ.— Տրամադրելի ունենք Ս. Յ. (Թորգոմի գտածը), Ռուս (Ջրաբերդում), Հմ. Պաշ. (Քարում):

Արհեստաւորներ.— Միհրան (Մեծ Քաղաքում). մէկն էլ Վրէժտանի վրայով անցնելու գնացել է:

Թղթակիցներ.— Թանձարարուեց Սիմոնին՝ ուսանողական շրջանից ճարել:

Արշաւոզ-թուրքիկ խմբերի անելիքները ուսումնասիրելու համար ի նկատի առնուեցին հետեւեալ անձնաւորութիւնները, — Սերգէյ, Ջալլաղ, Արամայիս, Յակոբ, (Տուրքախ եւ Որսորդ):

Ժողովրդական զենքեր.— Որոշուեց, որ Կ. Կոմիտէները պատրաստի ունենան մի քանի տասնեակ զենքեր ժողովրդին ծախելու համար: Ժողովուրդը ինքը գնելու եւ փոխադրելու է. խաչագողութիւնների եւ շահագործումների առաջն առնելու համար զէնք գնողները Երկրի գործիչ ընկերներից յանձնարարականներ պիտի բերեն:

Որոշուեց նաեւ, Տաք-Աղբիւրի գծի վրայ փոխադրող ժողովրդական խումբերին տալ մի քանի ատրճանակներ, իսկ Պան-Արագից եթէ գան փոխադրեն՝ 15 զէնքից մէկը կարող են պահել իրենց շրջանում:

(1) «Բիւրոյից Սիմոնը», — կը գրէ Ս. Վրացեան: Իրականութեամբ մէջ, գիտեմք որ Զուարեան Յրդ. Ընդհ. Ժողովին մերժած էր Բիւրոնմերձ մէկուս մաս կազմել եւ մտած՝ Լեռնավայրի Պատմամիջ մէջ: Սակայն ճիշդ է ասել՝ որ Ընդհ. Ժողովը որոշած էր «Եթե Սիմոնը Սիմոնն, որ շարունակէ մեզ Արեւմտ. Բիւրոյի մէջ՝ մինչեւ Ռոստոմի գալը» (տեսնել էջ 185, ա. սիւնակ): Մնաց որ բարոյական այդպիսի հեղինակութիւններու համար խորքի մէջ ձեւակամ իսկ էր այս կամ այն մարմին մաս կազմելը.— Գրիտափորները, Ռոստոմներն ու Սիմոնները գերագնացապէս Բիւրո էին ուր ալ որ գտնուէին, կուսակցական ուժի խորհրդակցութեամբ ընթացին, ուժի ժողովի մէջ:

Մասնակցող մնացեալ ընկերներէն՝ Թորգոմը (Թ. Թումանյան), Երկաթը եւ Կայծակը (Վաղարշակ) ծանօթ են: Հայկուճիներն մէկը Յրդ. Ընդհ. Ժողովին մասնակցած էր. Համալեռնը պէտք է ըլլայ, իսկ Մ. Զուարեանը՝ հաւանորէն Ֆելիքսը (տեսնել էջ 108): Թորքաք (Գ. Ալոյեան), Տուրքախը եւ Թախախը մոյժպէս ծանօթ անուններ են:

(2) Կուսակցական տեղամուտներու համապատասխան վայրերը տուած ենք զանազան առիթներով: Տեսնել, ի մասնաւորի, էջ 100 (Յրդ. Ընդհ. Ժողովին մասնակցող շրջաններ):

(3) Իրականութեամբ մէջ, Ապրիլ 5ին Մասնոյ կառուցող սկսած էին արդէն (առաջին ընդհարումները՝ Մարտ 30-31ին, — տեսնել Սոզոմանի նամակը՝ 1ր.): Մասնոյ պատասխանութեամբ մասին, ընդհանրապէս, տեսնել նաեւ Վահանի քաղաքակառուցողութեան ԿՐՕՄԱԿ-ներում մէջ (1904 Ապրիլ-Մայիսի քիւր) եւ Մ. Վարդապետ, Հ. Յ. Գ. Պատմութիւն, էջ 205-284:

1ր.— ՆԱՄԱԿ ՄՈՒՇԵՆ
(ՔԱՂՈՒՍԹ ՄԱՄԱՒՈՐ ՆԱՄԱԿԻՑ)

Ապրիլի 12/25, 1904 թ.

Տարօնոյ եւ Մասնոյ աշխարհ արեան լիճ է դարձած: Հայ ժողովուրդը յոյս ունէ ազատուել այդ լճէն:

Տաճիկ կառավարութիւնը Համիտի լակոտներով լեցուցեր է Մշոյ քաղաքը, գիւղեր ու լեռներ: Մարտի 31ին սարսափելի կոռու մը ծագեցաւ Մասնոյ գաւառի Կելիէկուզանի մէջ. ս. Մուրատ, Եսօն եւ Իսրայէլ գերացած էին հոն՝ հայդուկներով. լաչըկանցաց զիւրտեր, 400 հոգիէ բաղկացած, կը յարձակեն նրանց վերայ. կը սկսի կոռու: 32 զիւրտ կը սպաննուի եւ 20էն աւելի կը վիրաւորուին, իսկ հայ քաջերէն միմիայն մակուռացի քաջ Իսրայէլ կը նահատակուի եւ երկու չէնկիցի տղայ կը վիրաւորուին. այս լուրը զանկողքի մուլլայ Ապտուլլայի ձեռքով կը հեռագրուի Կիւնճէն՝ Մշոյ կառավարչին եւ Բաղէշու կուսակալին:

Մշոյ կառավարութիւնը 1000էն աւելի հեծեալ ոստիկաններ հանեց, զիւրտ ցեղապետներ եւ զիւրտեր հաւաքեց՝ 1500 մարդէն աւելի. իսկ կուսակալը 4000 զօրք, 6 թնդանօթներ հետը առնելով՝ Խողուաճի եւ Քիւրտ Մէյրանի ճանապարհով ուղղակի Խողուաճ լեռան վրայով կը մտնէ Մասնոյ գաւառ. իսկ Տիգրանա-կերտի կողմէն Սետի բէյ եւ Սլվանայ Հաճի Թաշիր ազան, ամէն մէկը 4000 զօրքով, Մասնոյ եւ Խողուաճ գաւառներ չորս կողմ պաշարած են:

Այս առաւուտ նամակ առինք ս. Հրայրէն (Գոթիք)՝ անկեղծ գործիչէն. մեծայեղ ու փառաւոր կոռու մը ծաղած է Ապրիլ 1ին, առաւուտ ժամը 3էն մինչեւ 11ը, անչափ ու անթիւ զօրք ջանակաւոր եւ աշխրաթ ջարդուած՝ յետ փախած, յաղթութիւնը մերն է. իսկ մերիններէն միայն 7 տղայք դաշտէն սուրհանդակ բերած են եւ կոռույ մէջ ինկած են, որոնց անուններին տակաւին տեղեակ չենք...: Նամակս աւարտելէն զինի լուր առինք որ 1300 զօրք ջանակաւոր եւ աշխրաթ վրաստուած են կոռույ մէջ, թէ՛ հրացանի գնդակներով եւ թէ ուժանակի (ումբի) հարուածով:

ՍՈՂՈՄՈՆ

Հ. Յ. Գ. ՈՍԿԱՆԱՊԱՏԻ
Կ. ԿՈՄԻՏԷ

19.— ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՒԿ

Ապրիլի 14, 1904 թ., Մասնոյ

Միտելիք!

Ապրիլի 12ի երեկոյեան կուսակալը Սեմալ զրկեց իր պատգամաւոր Ս. Յովհաննու վանահայր Առաքել վարդապետը, որը իւր հետ կը բերէր պատրիարքի նա-

մակը, Մշոյ ու Բաղէշու առաջնորդներու եւ Մշոյ գլուխաւորներու դիրքերը: Պատասխանելու համար յաջորդ առաւուտ գնացի Գեղաշէն, ուր պիտի հաւաքուէինք: Ժամը 1ին, ապրիլի 13ի առաւուտը, հոն հասայ. մենակ կը սպասէի Հրայրի գալուստ. յանկարծ կոռուի հաւարի ձայներ հասան: Կուսակալի բանակցութեանց խնդիրը կեղծ է եղեր. զմեզ իրարու վրայ հաւաքելով եւ ապահով համարելով՝ կ'ուզէ եղեր մէկ հարուածով ամէն ինչ վերջացնել: Առաւուտեան ժամը 1ին զօրքերը եւ աշխրալ կը յառաջանան դէպի Շէնիկ եւ անկէ ալ Սեմալ: Հրայր (Գոթիք) իր խմբով կը գտնուէր Սեմալ. կը նմարէ անոնց յարձակողական դիրքը եւ անմիջապէս կրակի կու տայ Դաշտակը եւ Սեմալը. իսկ ժողովուրդը կ'ելլէ դէպի սար: Մերինները սպասելով, որ գան ժողուուին՝ կ'ուշանան վերեւ դիրքեր բռնել. Սեմալի հրդեհն ալ կ'արգելու զիրենք թշնամի շարժումները տեսնելու: Թնդանօթի 15 հարուած կը պարպեն Սեմալի վրայ եւ չորս կողմէ կը խուժեն: Մերինները տեղի կու տան եւ կը նահանջեն մինչեւ Ջայ. կը սպաննուին մեր թանկագին ընկեր Հրայրը (Գոթիք) եւ զինուոր Մատոն (ախալցիացի), Սեմալայ Կրպոն եւ ուրիշ քանի մը ժողովուրդ: Թշնամին կը յառաջանայ Կելիի (Կելիէկուզան) վրայ: Հող տղայք օգնութեան կը հասնին եւ վերէն կը յարձակին զօրաց վրայ. ասոնք կը յաղթուին եւ փախուստ կու տան կոռուելով. մերայիններ բաւական տեղ յետ կը մղեն զանոնք: Սեպուհ եւ քանի մը ուրիշ տղայք վիրաւորուած են, իսկ թշնամիէն՝ 100է աւելի մարդ է սպաննուած եւ բազմաթիւ վիրաւորուած. 17 մարդէր բերինք: Այսօր նոր զօրքեր եկան Մուշէն. վաղը թերեւս նոր կոռու ունենանք:

Նոր նամակ առի Շամիրէն, թէ՛ Պան ստուար խմբով մը ապահով է եւ քիչ ատենէ հոս պիտի մտնէ:

Համբոյրներով
ՎԱՀԱՆ

Հ. Յ. Գ. ՈՍԿԱՆԱՊԱՏԻ
Կ. ԿՈՄԻՏԷ

19.— ԲԱԳՐԵՒԱՆՆԻ ԿՈՒՒԿ

Ա.

Թուրք զօրքերի եւ զիւրտ աշխրաթների ձեռքով տւերուած ու թալանուած Ուշքիլիսէ, Ղուլմուլուճազ, Ղարաբազար, Սէյդօ եւ Շուշան հայ գիւղերի վրէժը առնուեց:

Հաղորդում ենք մի քանի մանրամասնութիւններ այդ գործի մասին, որ այս տարի կատարուած յեղափոխական քայլերի ամենափայլուններից մէկը պիտի համարուի:

Յուլիսի 11ին, լուսարացին, աշևոր Մասիսի փէ- շերում հանդէոդ Ձնգլներ բարձունքներէ, Ռէսի-Գոմիբ բլուրի վրայ ծածանուեցին երկու դաշնակցական դրօ- շակներ:

Այդ բլուրից դէպի արեւմուտք, մի սիրուն տա- փարակի վրայ, երեւում է Մոսուներ, — հայկական մի մեծ գիւղ, որի մի ծայրում, հեռադիտակի միջոցով կարելի է նկատել այդտեղի զօրանոցը. իսկ դէպի հա- րաւ, բլրի ստորոտում, մի ձորակի մէջ ընկած էր Ձօրի պահականոցը:

Մոսուների զօրանոցը եւ Ձօրի պահականոցն էին, որ պիտի պատժուէին անգէն ժողովուրդի դէմ կատար- ուած բարբարոսութիւնների համար:

Վրէժխնդիր խմբերը երկու էին՝ «Արտաւազդ» 50 հոգուց եւ «Մասիս» 35 հոգուց բաղկացած: Առաջինը Վահանի հրամանատարութեան տակ, երկրորդը՝ Միհ- րանի:

Յուլիսի 11ի ցերեկը խմբապետները, նրանց օգ- նականները եւ տանապետները զբաղուած էին տեղի ու դիրքերի ուսումնասիրութեամբ եւ միւսօրուայ ար- շաւանքի ծրագրի վերջնական որոշումով:

Յուլիսի 12ին, գիշերուայ ժամը 2ին, խմբերը ոտի կանգնեցին եւ առաջ շարժուեցին: Բլրի ստորոտում նրանք բաժանուեցին. «Արտաւազդ» բռնեց Մոսուների ճանապարհը, իսկ «Մասիս»-ը ուղեւորուեց դէպի Ձօր:

Մոսուների մի ծայրում, Քորուն տանող ճանապար- հի վրայ, ընկած էր անշուք զօրանոցը իւր ցածիկ պա- րուպապատ բակով, որտեղ բացօթեայ, Ուշքիլիսէի դէպքերի պատճառով աւելացրած զօրքերը, սենեակ- ների փոքրութեան պատճառով գիշերում էին: — Այս- տեղ եղող զօրքի թիւը ճիշդ հաշուով 160 էր, որոնցից 50ը նորակոչներ: Ձօրանոցից մի փոքր հեռու գիւղա- կան ջրաղացի մօտ ցցուած էին երկու սպիտակ վրան- ներ՝ օֆիցերների համար:

Երկու ժամուայ ճանապարհ կտրելով՝ Յուլիսի 12ին, առաւօտեան ժամը 4ին, «Արտաւազդ» խումբը երեք կողմերից պաշարեց զօրանոցը եւ վրանները: Եր- կու հոգի կտրեցին Բայազետի հեռազրական թելը: Ձորս ուղիով գնացող խմբից բաժանուելով աննկատելի կերպով իրենց ձգեցին զօրանոցի կտուրը: Այդ ժա- մանակ միայն զօրանոցի շուքը հաջաց եւ հրացանի փողին կրթնած պահապան զինուորը սթափուելով ձայն տուեց՝ «օ ջիմ», այն ո՞վ է: Պահապանի ձայնը խեղդուեց կոկորդի մէջ. Ֆէդայիի գնդակը ցած գլո- րեց պահապանին: Վայրկենապէս զօրքը ոտքի կանգ- նեց եւ զօրանոցի մէջ եղողները դուրս թափուեցին՝ շատերը շապկանց: Այդ վայրկենին երկու ումբ միա- ժամանակ պայթեց ուղիղ խոնուած զօրքի մէջ աջ ու ձախ թափութուեցին դայարուող դիակներ: Կենդանի մնացած զօրքը սարսափահար զօրանոց մտաւ եւ գի- ուեւելով, ներսի հրամանների սարսափի տակ, փորձեց դուրս գալ, բայց երրորդ եւ չորրորդ ումբերը չէժքի

մէջ աւերում գործեցին՝ ջարդ ու փշուր անելով դու- ուր, ցած թափուող դիակների կոյտերի հետ միասին:

Իսկ այդ տեղից մի փոքր հեռու, պարիսպների վե- րայից տեղում էր գնդակների տարափը՝ աջ ու ձախ թշնամու դիակներ սփռելով: Ձօրանոցի բակի մէջ ի- րարանցում էր տիրում: Վրաններից դուրս թռած 16 զինուորները, որոնք պարսպի յետեւից կրակ էին տե- ղում, բուպէսպէս յետեւից պաշարուեցին եւ տեղն ու տեղը ջարդ ու փշուր եղան. հենց նոյն վայրկեանին, մի փոքր հեռու, մթերանոցի մօտ, մի խումբ զինուոր- ների մէջ պայթեց Համոյի ձգած ումբը. զինուորնե- րից միայն մէկը մնաց կենդանի:

Երկու ժամ շարունակ տեղացող ումբային եւ մո- սինի հրացաններից արձակած կրակից յետոյ տիրեց մի գերեզմանային լուսթիւն. զօրանոցում այլեւս կենդա- նի մարդ չէր մնացել: Մի փոքր թիւ միայն յաջողեցրել էր զօրանոցի յետեւի մի փոքրիկ դռնակից դուրս թափ- ուել եւ գիւղի մէջ պատսպարան գտնել: Այդ էլ իս- կոյն յայտնի եղաւ: Սկսուեց գիւղի մէջ, փողոցներում եւ տներում խուզարկութիւն, բաւականին զինուորներ հենց այդ տեղ ընկան: Գիւղը միանգամայն մաքրուեց տաճիկ զինուորներից:

Այդ կուում հայ Փիդայու գնդակներին զոհ գնա- ցին 120-130 տաճիկ զինուորներ, իսկ հայ զինուորնե- րից ընկաւ մէկը եւ վիրաւորուեցին երկուսը:

Բ.

Պարսպ չէր մնացել եւ «Մասիս» խումբը: Ձնգլ- ներ կոչուող բարձունքների ստորոտում՝ արեւելքից դէպի հիւսիս-արեւմուտք ընկած է մի ձորակ, որը ձգուելով եւ սղմուելով գնում Ռէսի Գոմիբ սարի բլու- րի մօտ վերջանում է մի կիրճով, որի բաւականին նեղ անցքից դուրս գալով մի ճանապարհ տանում է դէպի Մոսուներ սպա Բայազետ:

Ահա այդ ձորակի մէջ ընկած է Ձօրի պահականո- ցը, իւր 45-50ի չափ զինուորներով: Բացի այդ՝ ձո- րակի երեք ճիւղերի միացման արձակ տեղում փոռուած ջրտական փոքրիկ աշիրաթի՝ Ջիւանցիների մի օբան 60ի չափ վրաններով եւ 100ի չափ կրակելու ընդունակ տղամարդկանցով:

Յուլիսի 12ի դեռ եւս աղջամուղջին խմբի տա- նակները կարգով դիրքեր գրաւելով՝ կիրճի մուտքից սկսած մինչեւ վրանների թիկունքի ժեռուտները, ըս- պասում էին խմբապետի նշանին, որը իր հերթում ըս- պասում էր Մոսուների վրայ սպառող յարձակման ըն- թացքին:

Մոսուների յարձակումը երկար սպասել չտուեց: Ա- ռաջին իսկ ումբերը արձագանգ գտան ամէնուրեք: Ձօրի պահականոցի պահապանը սարսափեց այդ ան- սովոր պայթիւնի ձայնից եւ բուպէսպէս հրացանը ոտի մէջ ուղղեց եւ արձակեց: Այդ ձայնի վրայ զօրքերը

դուրս թռան գէնքը ձեռքներին, վազեցին նոյնպէս ջրտերը, որոնք, միանալով զօրքերին, գրոհ տուեցին դէպի կիրճի մուտքը: Յարմար բուպէն պատրաստ էր. փողը նշան տուեց եւ միաժամանակ ամէն կողմերից տեղաց գնդակների կարկուտը: Դիակները ճօճացին միմիանց վրայ, սարսափը տիրեց ձորակին, որի մէջ գլուխ կորցրած զօրքերը եւ ջրտերը, այս եւ այն քա- րը, այս եւ այն թուփը վազվզելով, գլորուում էին հարիւրաւոր գնդակների տարափից: Թափուող կրակը տեւեց մինչեւ առաւօտ. լոյսը բացուեց, յոխորտա- ցող զօրքերի տեղ դիակներ էին փոռուած այս եւ այն տեղ:

Այդ կոտորածից համարեա թէ ազատուողներ չե- դան, բացի մի քանիսից, որոնք Ռէսի-Գոմիբ սարի վրայ դիրք բռնած հատ ու կտոր պայթիւններով ի- րանց դոյուլութիւնն էին ցոյց տալիս: Այդտեղ կային կանայք եւ երեխաներ, որոնք վրաններից դուրս դա- լով քաշուել էին հակառակ կողմի բլուրները. նրանց հրամայուած էր խնայել: Այստեղ սպանուեց նաեւ իր քաջութեամբ անուն հանած էլքաշին իր տղայի հետ միասին:

Երկու ժամ տեւող կոռուից յետոյ ձորակը լռեց, եւ նրա մուտքն ու դիրքերը դրաւող տասնեակները քաշուեցին, որից յետոյ սկսուեց ծանր օրուայ յամառ ու երկարատեւ կռիւը:

Գ.

Առաւօտ էր արդէն: Մոսուների եւ Քորունի փախստական հայ ժողո- վուրդը առաջ առաջ բարձրանում էր դէպի Ձնգլի դիր- քերը՝ զբաղեցնելով մի երկու տասնեակ, (որոնք) գնդակների տակ պահպանում էին 500ից աւելի կին ու երեխաների նահանջը: Գիշերային յարձակումները եւ սոսկալի կոտորածը ոտի էր կանգնեցրել շրջակայ ջրը- տական աշիրէթները եւ զօրքը: Տղաները շրջապատ- ուեցին միաժամանակ մի քանի կողմերից: Արշաւեցին ջրտական աշիրէթները, որը գէնքով եւ որը անգէն: Արշաւեց զօրքը հետեւակ եւ հեծեալ հարիւրակներից կազմուած: Նորից երեւացին ջրտեր եւ բաշիրողուկ- ներ, դաշտի վրայ երեւաց երկու թնդանօթ, սակայն որոնք մի որոշ տարածութիւնից առաջ այլեւս շարժ- ւել չկարողացան: Ռմբակոծութիւնն աննպատակ էր: Մոսուների առաջ տարածուող դաշտը ծածկուեց ա- նօրէն խուժանով:

Գաղթող ժողովուրդին ուղեկցող մի երկու տաս- նեակ, ինչպէս Ձօրի վրայ յարձակուող տասնեակները սկսեցին բարձրանալ եւ փոքր առ փոքր դիրքեր գրա- ւել, միւս կողմից անընդհատ կրակ տեղալով թշնամու վրայ, ամէն անգամ թափթփելով նրանցից բազմաթիւ դիակներ:

Այդ օրուայ կռիւները նշանաւոր են թշնամու ու-

նեցած զոհերի քանակութեամբ եւ մեր տուած մի եր- կու զոհերի անասելի քաջութեամբ եւ հերոսական մահուամբ:

Քրտական մի շէյխ, գլուխը անցած կատաղի ա- հագին մի խուժանի, սալաւաթ կանչելով եւ խրախու- սանքներ կարդալով յարձակուում էր Վահանի, Բաբ- գէնի, Համոյի եւ Գարեգինի դիրքերի վրայ եւ նորից յետ մղուում՝ կոտորածներ տալով:

Բարգէնի եղած դիրքի վրայ իշխելու համար 12 հեծեալ ջրտեր փորձեցին մի պտոյտ գործել եւ գրաւել մի բարձր դիրք, բայց Բարգէնի անվրէպ գնդակները մէկիկ-մէկիկ ցած բերեցին նրանց ձիերից:

Թշնամու ուշադրութիւնը դարձաւ այս կէտի վը- րայ: Դիրքի անյարմարութիւնը եւ պաշտպանողների փոքրաթիւ լինելը մի կողմից, կոռուողների յոգնածու- թիւնը եւ անընդհատ ու լարուած ուշադրութեամբ կռուելը միւս կողմից եւ թշնամու անվերջ խուժումը այդ դիրքի վրայ երրորդ կողմից, ստեղծեցին օրհա- սական դրութիւն. բայց այդտեղ էլ չորս կտրիճներ՝ Բարգէն, Վահան, Համօ եւ Գարեգին կոռուում էին մի անխելի քաջութեամբ, գլորելով իրանց վրայ գրոհ տուող ահագին խուժանից բազմաթիւ դիակներ, մին- չեւ որ իրանք եւս ծանր կռուի մէջ ընկան հերոսական մահով: Ձորս հերոսների նահատակման տեղում, շա- տերի ասելով, թշնամին թողեց աւելի քան հարիւր յե- տուն դիակներ:

Մի ոչ պակաս յամառ կռիւ տեղի ունէր այդ բո- պէնի մի այլ դիրքում: Քրտերի մի բազմութիւն հիւ- սիսից եւ զօրքերի մի հարիւրեակ արեւմուտքից յար- ձակուում եւ մեծ կորուստներով յետ էին նահանջում մի դիրքից, որտեղից այդ յարձակման դիմադրում էին հինգ հայդուկներ՝ Սուրէնը, Հաջին, Միմոնը, Պետ- րոսը եւ Մինասը: Կռիւը ծանր էր եւ անհաւասար: Դիրքի վրայ յարձակուում էին մի քանի ուղղութեամբ նոր կոռուող ուժերով: Դիակները գլորուում էին ան- ընդհատ. բայց յարձակումը չէր դադարում: Հինգ հո- գու խումբը ստիպուած էր դիրքը թողնել. քաջ Սու- րէնը եւ ալեխառն Հաջին առիւծի պէս դուրս թռան դիրքից կրակ տեղալով եւ ընկան տեղացող գնդակնե- րի տարափից. մի վայրկեան եւս՝ եւ երեք կտրիճներ կարողացան դիրք պահել. թշնամու առաջին շարքից գլորելով մի քանիսը միանգամից:

Այս օրուայ թշնամու կորուստը 250ից անց էր: Արեւը թեքուում էր, տղաները գրաւում էին բար- ձր դիրքեր. թշնամին յետ էր նահանջում ամօթահար: Հոչակաւոր Ձնգլի բարձունքների վրայ շուտով նորից ծածանուեց Դաշնակցութեան յաղթական դրօ- շակը:

Դ.

Յուլիսեան արեւը, թեքուած դէպի հորիզոն, իր բոլոր ջերմութեամբ դեռ եւս շարունակում էր այրել

ջրից եւ բուսականութիւնից զուրկ Ձնդլի ժեռուս բարձունքները: Ամէն ինչ խաղաղ, օդի մէջ ոչ մի շարժում նկատելի չէր:

Ահա այդ բարձունքների մի թեք հարթութեան վրայ շունչ էր առնում ծծի երեխաներով եւ լացող մանուկներով ծանրաբեռնուած եւ տուն ու տեղ ձգած Մոսուկի եւ Քորուկի գաղթող ժողովուրդը: Դառն ճակատագրից հալածուած կենդանի էակների այդ տեսարանը աւելի քան յուզիչ էր:

Շուտով յայտնուեցին արչաւախձերը. մի օրուայ ծանր կուռից յետոյ յողմած ու դադարած տասնակները դանդաղ քաշուում էին դէպի վերջին դիրքերը:

Նրանց հոգսը գաղթող ժողովուրդն էր, տեղազուրկ, հալածուած, տանջուած մասսան: Յոգնածութիւնը, քաղցն ու ծարաւը ուժասպառ էին արել այդ թշուառ մասսային. իսկ քերծուած, արիւնջուայ եղած մանկական ոտերի կսկիծը աշխարհ էր լացացնում:

Նրանք սահմանի միւս կողմում ունէին հարազատներ, որոնց մօտ կարելի էր պատսպարան գտնել: Ահա այդ ծանր խնդրի լուծմամբ զբաղուած էր Փիդային, երբ յանկարծ տեղացող զնդակների տարափից մի քանիսը զարկուեցին:

«Տղայ՛ք, սահմանից կը տեղան զնդակները, համբերեցէ՛ք»: Այս ձայնի վրայ հայեացքները այն կողմը դարձան: Յիրաւի սահմանի վրայ կանգնած էր ոռուսահպատակ զերտ Համիդ բէկը՝ իր երկու հարիւրից աւելի հրացանաւորներով. իսկ նրանցից աւելի էլ բարձր դիրքեր բռնած՝ երեք հարիւրից աւելի պլաստուն կողակներ եւ սահմանապահ զօրքեր կրակ էին տեղում: Ծնշուածների համար արիւն թափող հայդուկի կրծքում զայրոյթը սոսկում առաջացրեց:

Այնտեղ ջրտի հետ միացած տաճիկ զօրքն էր հային կոտորում, իսկ այստեղ՝ ոռուսը: Երկու տեղում էլ զիրան էր դաշնակից, արիւնարբու գազան, քաղաքակիրթ աշխարհին ամօթանք բերող զերտը:

Ռուսի իբր ազատարար զէնքը պղծուած, կեղտոտուած էր. նա ջրտի, տաճիկի զէնքի անարգանքին հասած, կրակ էր թափում ճնշուած ժողովուրդի վրայ:

Այդ կրակի տակ էր նաեւ գաղթող ժողովուրդը, վայնասուն բարձրացրած կին ու երեխաների բանակը: Կուռելը անմտութիւն էր: Կուռի շրջանը անցել էր, այժմ պէտք էր հոգալ անզէն ժողովրդի մասին: Որոշուեց եւ բարձրացաւ խաղաղութեան դրօշը — միջազգային նշանը: Բայց ի զո՛ւր: Քրտի հետ միասին նրա դաշնակից ոռուս զինուորը արհամարհեց զէնքը վայր դնելու նշանը եւ շարունակեց կրակ տեղալ: Այն ժամանակ երբ ոռուս կառավարութեան Պուլսի դեսպանը Սուլթանին առաջադրում էր հայկական ռեֆորմների ծրագիրը, հէնց այդ նոյն ժամին ոռուս զինուորը ջրտի հետ միացած կրակ էր տեղում նոյն հալածուած հայի վրայ:

Դրութիւնը անելանելի էր: Կամ պէտք էր կուռի բռնուել ոռուսների հետ եւ զէնքով պատասխանել, կամ փառաւոր յաղթութիւնից յետոյ զէնքերը վար դնել եւ անձնատուր լինել կողակներին: Բայց ոռուս զօրքի հետ կուռի բռնուելը խմբերի ծրագրից եւ նոյնիսկ նրանց լիազօրութիւնից դուրս էր, միւս կողմից թշնամական դիրք բռնել դէպի ոռուս սահմանապահները՝ նշանակում էր վերջնականապէս անկարելի անել գաղթականներին սահման անցնելը եւ ոռուսաց հողի վրայ ապաստան գտնելը: Վճուռեց խոյս տալ կուռից եւ, ծայրայեղ դէպքում, զինաթափ լինել: Դառն էր այդ վճիռը, բայց եւ անխուսափելի. դա պահանջում էր Դաշնակցութեան ընդհանուր տակտիկան. դա պահանջում էր եւ 78 տուն գաղթականների ապահովութիւնը:

Մութը արդէն կոխել էր սար ու ձոր: Կուռը վերջացել էր: Մերոնցից 34 մարդ հարկադրուած եղան անձնատուր լինելու ոռուսներին. միւսները կարողացան ցրուել եւ անյայտանալ մթութեան մէջ:

Գաղթականներից մի քանի հարիւր հոգու յաջողուեց անցնել սահմանը. միւսները հարկադրուած եղան մնալ տեղում: Նրանց մասին որոշ տեղեկութիւններ առայժմ չուենեց:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՅՐԴ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

2.— ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ
1904 ԹՈՒԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Ինչպէս ներածական բաժնի մէջ ըսուեցաւ, 1904 թուականի կովկասի մէջ տեղի ունեցած են Ռայոնական ընթացիկ թէ արտակարգ բազմաթիւ ժողովներ: Կու տամ ամենմէ երեքին մասին ամփոփ տեղեկութիւններ, օգտուելով Ս. Վրացեանի կատարած ֆազուածներէն: Զորքաքը, 1904 Դեկտեմբերի Ռայոնական Դ. ժողովը, որու արձանագրութեանց պատճէնը ունիմք, յաջող բաժնի մէջ պիտի տամ ամփոփում:

Առաջին (2ա) թուականը որոշ չէ, բէւ, տրուած ըլլալով որ այնտեղ տակաւին օրակարգի միւս են Բարձրաւանդակի կռիւները, պէտք է ենթադրել՝ որ թիֆլիսի այդ ժողովը գումարուած է Ապրիլ-Մայիս ամիսներում, ամենէն ուշը՝ Յուլիսի սկիզբները:

Երկրորդ (2բ) եւ երրորդ (2գ) արտակարգ Ռայոնական ժողովներ են, գումարուած Յուլիսի վերջերք՝ Բարձրաւանդակի եւ Մշոյ Դաշնի կռիւներու աւարտէն ետք, եւ Սեպտեմբերի կէտրում՝ Ռուսաստանի պահեստի սպաներու գորակառն ունեւալով իր բնի գլխաւոր օրակարգ:

Ժողովներու մասին վերաշնչալ ֆազուածներէն ետք, կու տամ մասն Արեւմտեան Բիւրոյի կողմէ 1904 Նոյեմբերին եւ Դեկտեմբերին Հ. Յ. Դ. Կեդրոնական կոմիտէներու ուղղուած երկու շքերթերակամներ (2գ եւ 2ե), որոնք, ինչպէս ներածական բաժնի մէջ ըսուած է, յստակօրէն կը պարզեն 1904 թուականի ազգային-յեզափոխական ընդհանուր կացութիւնը եւ մտքերը յուզող ընկերային մտք ինքնակարգը, ու մախտեսել կու տամ Հ. Յ. Դ. երեքուրդի յառաջիկայ գումարումը եւ կովկասեան նախագծի պատրաստութիւնները:

2.— 1904 ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍԻ(?)

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1904 թ. Մեծ Քաղաքում (Թիֆլիս) կայացաւ Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյի (չրջանի) Ռայոնական Ժողովը, առաջինը՝ Ընդհ. Ժողովից յետոյ: Ժողովին մասնակցում էին 12 ձայնատու եւ մի քանի խորհրդակցական ընկերներ: Քննուելիք հարցերն էին՝ 1) Բարձրաւանդակի ներկայ դրութիւնը եւ մեր բռնելիք դիրքը, 2) Զրաբերդի եւ Ռուսաստանի համակրական ցոյցերի քննութիւնը, 3) Դաշնակցութեան ազատ ազնտներ՝ վարձով, 4) Կովկասեան գործունէութիւն, 5) Տեւորներ, 6) Ընտրութիւն Բիւրոյի եւ Ինքնապաշտպանութեան Կոմիտէի, 7) Հաշուետուութիւն եւ հաշուապահութեան սխտեմը, 8) Կովկասում թերթ հրատարակելու խնդիր, 9) Ժողովուրդը զինելու եւ առհասարակ զէնք եւ ուղղամթերք հայթայթելու մարմին եւ 10) Եկեղեցական կալուածների խնդիրը:

Ժողովի հարցերին անցնելուց առաջ մէկը (պ. Օ.) առաջարկում է էջմիածնից մի հոգեւորական հրաւիրել, որ տեղեկութիւններ տայ էջմիածնի իրական դրութեան մասին. բայց Բիւրոն յայտնում է, որ ինքը սպասի տեղեկութիւններ ունի եւ առաջարկը մերժուում է:

Բարձրաւանդակի մասին ժողովը բաժանուում է երկու կարծիքի. ըստ ոմանց՝ եթէ Բարձրաւանդակը ընկճուի դեռ միւս խումբերը չչարժած, վերջիններին շարժուելու աւելորդ կը դառնայ, քանի որ սրանց նպատակը պիտի լինէր շփոթ առաջ բերել թուրքերի թիկունքում, ջլատել նրանց ուժերը եւ թուլացնել Բարձրաւանդակի դէմ ուղղուած հարուածը: Ուրիշներ՝ թէ անգամ եթէ Բարձրաւանդակը ընկճուած էլ լինի, նոր խմբերը պէտք է ուղարկել կուռ երկարատեւ դարձնելու համար, «մինչեւ որ դորա ձայնը հարկաւոր չափով զարկի Եւրոպայի ականջին եւ եւրոպական մամուլը յեղյեղուի մեր կուռի լուրերով»: Բացի այդ, Բարձրաւանդակի ընկճումը սառը ջուր կը լեցնի «ժողովրդի այս լարուած եւ ոգեւորուած յեղափոխական տրամադրութեան վրայ, տրամադրութիւն՝ որպիսին չէ եղել երբեք», մինչդեռ կուռը շարունակելով կարելի է վառ պահել այդ տրամադրութիւնը: Ժողովի մեծամասնութիւնը յանգեց երկրորդ կարծիքին եւ որոշեց շարունակել իրագործել Ընդհանուր Ժողովի վճիռները եւ հաւանութիւն տուեց Զրաբերդի, Քարի եւ Մրզաստանի գործողութիւններին այդ ուղղութեամբ, միայն չեղանելով այն հանգամանքի վրայ, որ «ամէն ինչ պէտք է շատ արագ կատարել»: Որոշուեց նաեւ, որ խմբերը «Երկիր ոտք դնեն նախագծուած յարձակողական ծրագրով՝ ընտրած լինելով այս կամ այն յարմար կէտը»:

Որոշուեց, որովհետեւ «խիստ կարեւոր եւ անհրաժեշտ է բոլոր մեր այդ շարժումների եւ բողոքի ձայնը Եւրոպային հասցնել», «անընդհատ թղթակցութիւններ ուղարկել եւրոպական թերթերին»: Այդ նպատակով մի խմբագրական յանձնաժողով էր կազմուած Մեծ Քաղաքում. մէկն էլ կազմուեցաւ Ռուսաստանում (Բագու)՝ երեք հոգուց բաղկացած: Դէպքերի մասին հեռագիրներ պիտի տրուին Մեծ Քաղաքից, Ռուսաստանից եւ Պարսկաստանից:

Որոշուեց շարունակել գնել հրացաններ՝ միայն արքունական, հին թէ նոր:

Ընտրուեց 5 հոգինոց Բիւրօ, որի 2 անդամը պէտք է լինեն ազատ:

Ընտրուեց 12 հոգինոց Ինքնապաշտպանութեան Կոմիտէ:

9 ձայնով ընդդէմ 1ի՝ որոշուեց Կովկասում թերթ հրատարակել եւ յանձնուեց Ինքնապաշտպանութեան Կոմիտէին Բիւրոյի հետ միասին հրատարակել:

Եկեղեցական կալուածների պայքարին մասնակից դարձնել եւ ոչ-դաշնակցական հասարակութիւնը: Այդ նպատակով խոսն ժողովներ գումարել Երեւանում, Թիֆլիսում եւ Բագուում:

Միւս հարցերը՝ սովորական լուծում ստացան:

2.— 1904 ՅՈՒԼԻՍԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԸ

Յուլիս 25-26ին Մեծ Քաղաքում գումարուեց Արեւելեան Բիւրոյի շրջանի արտակարգ Ռայոնական Ժողովը: Բարձրաւանդակը արդէն ընկճուել էր, բայց հարցը, որ կայուած է Բարձրաւանդակի հետ, դեռ չէ վերջացած, այլ շարունակուում է ուղարկութիւնը գրաւել թէ՛ դիպլոմատիայի եւ թէ՛ Սուլթանի, ահա թէ ինչու՞ ժողովը որոշեց (5 ձայն 1ի դէմ), որ հարկաւոր է սահմանների վրայ շարունակել գործունէութիւնը, որքան էլ այդ գործունէութիւնը անկասկած աւելի թիչ արժողութիւն ունենայ Երկրի ներսում շարժման հետ համեմատած: Միւս կողմից ժողովը որոշեց Երկրի ներսը ուղարկել ինչ ճանապարհներով որ կարելի կը լինի՝ ուղղամթերք (մանաւանդ նորի ծայրեր) ու կարող անհատներ: Այս որոշումը գործադրելու համար ընտրուեց զինուորական մասնախումբ՝ 2 Զրաբերդի ընկերներից (Ե. եւ Ս.), մի Բիւրոյի անդամից, Մըրզաստանում լրացնելով սոցա թիւը՝ պ. թորոտով: Մասնախումբը գործելու է մինչեւ Դեկտեմբեր, երբ կայանալու է Դաշնակցութեան Խորհուրդի գումարումը:

Ապա քննուեցին մի շարք ընթացիկ հարցեր:

29.— 1904 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎՃ

1904 թ. Սեպտ. 15ին Մեծ Քաղաքում գումարուեց Կովկասեան Երջանական Արտակարգ Ժողովը: Օրակարգ.

1) Պահեստկոչի խնդիր (մորիլիզացիա)(1).— Կառավարութիւնը պահեստի զինուորներ էր տանում հրետիս-արեւելք: Զինուորները դիմում են Հ. Յ. Դաշնակցութեան, որ միջոց տայ հեռանալու. դնում են իրենց՝ Հ. Յ. Դ. տրամադրութեան տակ: Ժողովը որոշեց «խորհուրդ տալ բոլոր պահեստի զինուորներին՝ որքան հնարաւոր է փախուստ տան. միեւնոյն ժամանակ յայտարարել նրանց, որ Դաշնակցութիւնը չի կարող յարմարութիւններ տալ, միայն խոստանում է գրել իր ընկերներին որ ինչքան կարող են՝ աջակցեն փախչողներին»: Միայն Կարսի շրջանից տարուելու էր 1600 պահեստի զինուոր, որոնցից 1000ը՝ հայեր: Այս առթիւ դիմում է լինում ե՛ւ վրացիներին՝ սոցիալ-դեմոկրատներին եւ Ժորժիստներին. վերջինները յայտնում են իրենց համաձայնութիւնը:

2) Գաղթականների խնդիր.— Ռուս կառավարութիւնը որոշել է գաղթականները փոխադրել Ռուսաստանի ներքին նահանգները: Որոշուեց հակառակել այս որոշման եւ ջանալ գաղթականներին տեղաւորել Մակուի շրջանը:

3) Եկեղեցական եւ դպրոցական դրամների խնդիր.— Անցել են սրա-նրա ձեռքը: Որոշուեց հաւաքել եւ պահել բանկում(2) եւ առհասարակ ջանալ, որ ազգային միջոցները չփճանան:

4) Երկիր նոր խումբ անցկացնելու խնդիր.— Քաղաքական պայմանները ի նկատի ունենալով՝ խումբ չուղարկել, բայց սահմանի վրայ դիմադրող ցոյցեր անել, եւ ռազմամթերք ու այլ նիւթեր հասցնել Երկրի ընկերներին՝ Վրէժստանի գծով:

Եւ մի շարք ուրիշ երկրորդական հարցեր:

(1) Զօրակոչ:
(2) Դրամատան մէջ:

29.— ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆՃ

28x28 սմ. երկրորդ քաղաքի մը շքու նրբանրում վրայ խնորհատիկ:

Հայ Յեզափոխական Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէին

Ընկերներ, Ընդհանուր տախտիք.— Հ. Յ. Դաշնակցութեան Երրորդ Ընդհանուր Ժողովից յետոյ թէեւ քիչ ժամանակ է անցել, բայց այս կարճ միջոցում տեղի ունեցան այնպիսի խռչումներ, որ անհրաժեշտ է դառնում, առաջիկայ «Պորհուրդ»ի ժողովում, քննութեան ենթարկել տաքտիքի(1) վերաբերեալ մի քանի հարցեր, որոնք կապ ունեն Սասունի ապստամբութեան եւ նրան յարակից շարժումների հետ:

Ինչպէս ձեզ յայտնի է, Սասունը ընտրուած էր իբրեւ մէկը կենտրոնացման վայրերից: Վերջին Ընդհանուր Ժողովում որոշուած էր նոյնպէս, որ երբ կառավարութիւնը յարձակուելու լինի Սասունի վրայ, եւ վերջինը ստիպուած դիմադրելու, Վասպուրականը պիտի արձագանգ տայ եւ սահմանագծից զինուած խմբեր պիտի ներս խուժեն, աշխատելով հասնել կռուի վայրը: Դա արուած էր շարժմանը ընդհանուր կերպարանք տալու նպատակով, ինչպէս նաեւ թոյլ չտալու համար, որ թշնամու ուժերը կենտրոնանան Սասունի վրայ: Սակայն կառավարութեան յարձակումը սպասածից աւելի կանուխ սկսուեց, եւ Սասունը ստիպուած եղաւ ընդունել կռիւլ՝ ոչ բոլորովին պատրաստ վիճակում. նրա համար սահմանուած ռազմամթերքը եւ զինուորական ուժերը տեղ չհասան. դուրսը մնացին նոյնիսկ Ընդհանուր Ժողովի պատճառով Երկրից ելած կարեւոր ուժերը՝ Թորոզմը, Երկաթը եւ Վաղարշակը. խումբերը սահմանը անցան շատ ուշ, եւ անցածներից ոչ մէկը տեղ չհասաւ:

Նոյն պատճառով էլ Վասպուրականը անկարող գտնուեցաւ ժամանակին արձագանգ տալու: Սասունը ընկճուեց մեր ընկերների սպասածից շատ առաջ. կռոււր անցաւ այնուհետեւ Դաշտը, այնտեղից Ախլաթ եւ ապա միայն Վասպուրական: Պմբերի ընդհարումները տեղի ունեցան բոլորովին անջատ թէ՛ իրարից եւ թէ՛ դրսի կռիւներից: Այսպիսով Ընդհանուր Ժողովի որոշումը՝ — տալ բոլոր կռիւներին ամբողջական շարժման կերպարանք, — չիրականացաւ եւ այս արիւնոտ տարին չտուեց հայկական դատին այն մղումը, որ ըստ պատուում էր, շնայած ներսի կռուողների անուրանալի հմտութեան եւ արշաւախմբերի ինքնամոռացման հասած անձնուիրութեան:

Եթէ այս տարուայ շարժումները եկան թշնամու եւ օտարի առջեւ հաստատելու յեղափոխական տարրի կորովը, մի հանգամանք, որ անշուշտ կարեւորութիւն ունի ապագայի տեսակէտից, — դէպքերի բացասական հետեւանքները միւս կողմից ստիպողաբար ծնում են մի շարք հարցեր, որոնց լուծումը անհրաժեշտ է՝ մեր ընթացիկ կռուի շարունակութեան համար:

Կովկասեան խնդիր.— Մի ուրիշ կարեւոր հարց, որով առանձնապէս պիտի զբաղուի «Պորհուրդ»ը, դա կովկասահայերի հարցն է:

Ինչ եկեղեցական կալուածների գրաւման հրամանից շատ առաջ դաշնակցական մարմինները անպաշտօն կերպով կռուի էին մղում ռուսական միապետութեան

Ընդունների դէմ: Փորձ եղաւ նաեւ ստեղծել նոր մարմիններ՝ յատկապէս այդ կռիւը վարելու համար թէ՛ օրինական եւ թէ՛ յեղափոխական ճանապարհներով, որպէսզի Դաշնակցութիւնը առանց տարուելու նորանոր խնդիրներով, ամբողջապէս նուիրուի իր բռն նրպատակին: Յատուկ մարմին ստեղծելուն այն նշանակութիւնն էր տրուում, որ նրա մէջ կարելի կը լինի ամփոփել բոլոր այն յեղափոխական ուժերը, որոնք այս կամ այն պատճառով չէին յարել թիւրքահայերի դաշնում՝ պայթեց կալուածների գրաւման խնդիրը, եւ դաշնակցական մարմինները հարկադրուած եղան ուժգնապէս միջամտելու: Իրաւունք չհամարելով ասպարէզ գալ Կազմակերպութեան անունով՝ նախքան Ընդհանուր Ժողովը այդ արտօնէր պաշտօնապէս, մեր ընկերները կազմեցին նոր մարմիններ՝ «Ինքնապաշտպանութեան Կոմիտէներ» անուն տակ, որոնք ղեկավարեցին ժողովուրդական շարժումները եւ շարունակում են գործել մինչեւ այժմ:

Յետագայում գումարուած Ընդհանուր Ժողովը ընդունեց որ ինքնապաշտպանութեան կոմիտէները ճանաչուեն իբրեւ դաշնակցական մարմիններ, որոնց ընդհանուր գծերով նրանց ուղին, թողնելով մանրամասն ծրագրի մշակումը «Պորհուրդին»:

Դաշնակցութեան երեք գլխաւոր սկզբունքները՝ սոցիալիզմը(2) իբրեւ առաջնորդող ուղղութիւն, ապախնորհակամ – առավելապարական կարգերը իբրեւ ապահովութիւն ազգերի ազատ զարգացման, կարող են կիրառուել եւ Կովկասում: Սակայն աչքի առաջ ունենալով Կովկասի տնտեսական համեմատաբար բարձր զարգացումը, նրա վերաբերեալ գործնական ծրագիրը պահանջում է յատուկ մանրամասներ: Եւ հենց այս աշխատանքն է, որ ընկնում է բոլոր այն ընկերների վրայ, որոնք մասնաւորապէս շահագրգռուած են կովկասեան խնդրի մէջ:

Առանձին ուշադրութեան արժանի է նոյնպէս համերաշխութեան գաղափարը Ռուսաստանի բոլոր յեղափոխական եւ ընդդիմադիր կուսակցութիւնների միջեւ: Համերաշխ գործակցութեան պայմանները ճշդելու փորձը տեղի ունեցաւ Եւրոպայում կայացած մի համաժողովում, որին մասնակցելու հրաւիրուած էր եւ մի ներկայացուցիչ՝ Դաշնակցութեան կողմից: Հետեւանքները միութարական են: Կարգադիր յանձնախումբը մի երկու կէտերի պարզուելուց յետոյ, հրապարակ կը հանի համաժողովի կողմից ընդունուած պրոկլամատիոնը(3):

Այս համառոտ ծանօթութիւնից յետոյ առաջ ենք բերում վերոյիշեալ երկու կարեւոր խնդիրները՝ հետ կապուած հարցերի շարքը: Աւելացնում ենք դրան նաեւ այն բոլոր կէտերը, որոնք վերաբերուում են կազմակերպական գործերին: Եւ առաջարկելով ձեզ այս բոլորը, խնդրում ենք յայանել ձեր կարծիքները

այն հարցերի մասին, որոնց վերաբերմամբ դուք ձեզ ձեռնհաս էք համարում:

- I. Հայաստանի արդի կացութիւնը, ժողովուրդի տրամադրութիւնը եւ դիմադրելու կարողութիւնը:
- II. Քաղաքական դրութիւնը: Ռուս-ճարնական պատերազմի եւ քաղաքական այլ հանգամանքների ազդեցութիւնը մեր դատի վրայ:
- III. Երկրի զանազան վայրերում գործունէութեան եղանակը. մասնաւորապէս կենտրոնացման տաքտիքը(1):
- IV. Տնտեսական գործողութիւնների տարածումը Երկրի ներսերը. նրա նպատակայարմարութիւնը եւ հնարաւորութիւնը զանազան կէտերում: Գործադրութեան միջոցներ, ուժանակային գործողութիւններ:
- V. Արշաւախմբերի նպատակայարմարութիւնը զուանգան պարագաներում:
- VI. Քրտական հարեան ցեղերի հետ համերաշխութեան յարաւերութեան պայմանները. պրոպագանդի(4) հնարաւորութիւնը հեռաւոր ցեղերի մէջ:
- VII. Պրոպագանդ(4) թիւրք ազգաբնակչութեան՝ մասնաւորապէս քաղաքային բնակիչների շրջանում:
- VIII. Միացած ձեռնարկներ մակեդոնացիների հետ՝ իբրեւ իրականացում արդէն կայացած համաձայնութեան:
- IX. Եւրոպական պրոպագանդ(4) և նրա ծաւալը՝ ներկայ հանգամանքներում:
- X. Գործունէութեան վայրերի հիմնական ուսումնասիրութեան միջոցները՝ ռազմական տեսակէտից:
- XI. Ռազմամթերքի գնման եւ փոխադրութեան դիւրութիւնները:
- XII. «Ինքնապաշտպանութեան Կոմիտէներ»ի ծրագրի Կովկասի համար:
- XIII. Ռուսական ներկայ ռեժիմի(5) դէմ բողոքող տարրերի համաժողով. մեր դիրքը՝ միւս կողմող տարրերի շարքում:
- XIV. «Դրօշակ»ի եւ միւս հրատարակութիւնների վերաբերեալ խնդիրներ: Յեղափոխական գրականութեան փոխադրութեան հարցը:
- XV. Թղթակիցներ եւ շրջիկ գործիչներ:

1904, Նոյեմբեր 30 Հ. Յ. Դ. Ժրնեւ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

(1) Գործունէութեան եղանակ:
(2) Ընկերակցութիւն:
(3) Պաշտօնական յայտարարութիւն:
(4) Քարգաւաքիւն:
(5) Վարչակարգ:

2b.— ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ

Եւ յայն շափի եւ տեսալի բուրքի վրայ. խմորատիպ:

Հ. Յ. Դաշ. Կեմտ. Կամիտեմբրիճ

Ընկերներ, Զեզ ուղարկած մեր շրջաբերական նամակի մէջ արդէն շոշափուած են Դաշնակցութեան Հերթական խնդիրներէ կարեւորագոյնները: Այսօրուայ մեր նամակով ուղղւած ենք աւելացնել մի քանի տեղեկութիւններ եւս:

ՏԱՐՕՆ.— Մեր ուշադրութիւնը կենտրոնացած է մնում Սասունի եւ Դաշտի վրայ: Ինչպէս յայտնի է, զինուորները եւ ջիւրտերը պարտութիւն կրելով յեղափոխական խմբերէջ՝ իրենց վրէժի թոյնը թափում էին անգէն զիւղերի վրայ, եւ ներկայումս մեծ թուով կարօտեալներ սպասում են դրսի օգնութեանը ու նպաստին: Վահանի եւ Հրայրի վաղաժամ կորուստի պատճառով — նրանց էին ճանաչում դրամ յանձնողները — փոխադրութեան միջոցները շատ դժուարացան: Հարկաւոր էին նոր կապեր, նոր պայմաններ: Մինչդեռ՝ աղէտի մեծութեան դիմաց անհրաժեշտութիւն էր զգացուում միանգամից մի խոշոր գումար տեղ հասցընել, եւ այդ պատճառով էր, որ կազմակերպութիւնը դիմեց Փարիզի մեր բարեկամների միջնորդութեան՝ 30.000 Ֆր. Ֆրանսական կառավարութեան ներկայացուցչի ձեռքով կարօտեալներին բաշխելու համար: Մինչսոր(1) Դէլիասէի համաձայնութիւնը առնելուն պէս՝ յանձնուեցաւ նրան այդ գումարը, որին աւելացրին նաեւ մի հայ հարուստի ձեռքով Պրեսանսէի տրամադրութեան տակ դրուած 5.000 Ֆր.: Դժբախտաբար այդ ճանապարհը շարժարացրեց մեր յոյսերը: Չնայած որ վաղուց ստացուել է Վանայ հիւպատոսի հաղորդագրութիւնը՝ դրամը Վան հասնելու մասին, բայց Մշից ստացուած մեր վերջին նամակին նայելով, նըպաստները տակաւին չեն բաշխուում: Կայ սակայն մի հանգամանք, որ մեզ յոյս է տալիս: Անգլիական հիւպատոսը, որ նոր է վերադարձել Վանից եւ պտտել է Սասնոյ եւ Դաշտի գիւղերը, յայտարարել է, թէ նըպաստներ է բաժանելու: Մշոյ մեր ընկերները հաւանական են կարծում, որ բաժանուելիք գումարների մէջ կարող է լինել եւ Ֆրանսական հիւպատոսի տրամադրութեան տակ դրուած 35.000 Ֆր.: Այս յապաղման մասին մեր բարեկամները ուղղակի եւ անուղղակի կերպով յայտնել են մինչսորին(1): Պիէռ Բիյաոի վերջին նամակից իմանում ենք, որ Պրեսանսէն բացատրութիւն է ուղղելու մինչսորից, եւ եթէ բաւարար պատասխան չստանայ, հարցապնդում է անելու խորհրդարանում: Հարկ ենք համարում աւելացնել, որ միաժամանակ շարունակել ենք մեր ձեռքի տակ եղած միջոցներով փոքրիկ նպաստներ հասցնել: Օժանդակ-

ուցութիւն եղել է նաեւ պատրիարքից եւ հիւպատոսներից: Մեր ընկերներից Սարհատը(2) եւ Կորիւնը(3) իրենց խմբերով այն կողմերն են գտնուում եւ զաղտնի կերպով հսկելու են բաշխման կանոնաւորութեան վերջայ: Չմոռանանք աւելացնել, որ Վանայ հիւպատոսի առաջարկի եւ Դէլիասէի Բիյաոին գրած նամակի հիման վրայ, համաձայնութիւն է տրուած, որ ստացուած նպաստի մի փոքրիկ մասը, 2.000 Ֆր., յատկացուի Վանայ թշուառների պէտքերին, եւ պակասը լրացնելու համար անմիջապէս յանձնուում է մինչսորութեան մի նոր գումար:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ.— Դրութեան մէջ առանձին փոփոխութիւն չի եղել: Այն պաշտպանողական դիրքը, որ բռնել էին մեր ընկերները, չի մնաց փոխուէր Ադրամարի եւ Նարեկայ կոիւններով եւ Վանայ մէջ առաջ եկած խլրտումներով: Բայց յեղափոխականների հաստատ եւ զգուշաւոր ընթացքի, ինչպէս նաեւ հիւպատոսների միջամտութեան շնորհիւ, կառավարութիւնը զսպեց թէ՛ իրեն եւ թէ՛ ջիւրտ ցեղերը: Ընթացիկ գործերից ուշադրութեան արժանի են վերջերս կատարուած տեւորները: Տեւորի են ենթարկուել ի միջի այլոց Ադրամարի կաթողիկոսի տեղապահը եւ նրա քարտուղարը: Սրանք են եղել Ադրամարի մատնութեան հեղինակները եւ Նարեկայ կառուի մասին աննպաստ հեռագիրներ տուողները: Գիսակի(4) դատավճիռը յետ է եկել Պոլսից. երեւի նախագահ Լուրէի միջամտութեան շնորհիւ: Խնդիրը նորից պիտի ջննուի: Ցաւելով պիտի հաղորդենք, որ զէնք փոխադրող խմբերից մէկը՝ յայտնի Փոխիկի առաջնորդութեամբ կուռի է բռնուել Ճիչո նոյն կէտում, ուր Դումանի խումբն էր ընդհարուել այս ամառ(5), եւ մեծ կորուստ է կրել: Լուր կայ նոյնիսկ որ խմբից ազատուող չի եղել: Խումբը բաղկացած էր 14 հոգուց:

ՊԱՐՍԱՍԱՍԱՆ.— Գործերը յաջող վիճակի մէջ են: Տեղական տարրը աւելի է մտերմանում կազմակերպութեան հետ: Խմբեր են կազմուել եւ կանանց շրջաններում: Միխիթարական է տեսնել, որ յեղափոխական մարմիններ առաջ են եկել նաեւ ամենահեռուոր անկիւններում: Հայաշատ վայրերում կազմակերպութիւնը վայելում է բարոյական հեղինակութիւն, եւ կառավարական պաշտօնեաներն իսկ այլ եւ այլ զէպքերում արտայայտում են ձգտում՝ յեղափոխականների աջակցութեան դիմելու:

ԿՈՎԿԱՆ.— «Ինքնապաշտպանութեան Կոմիտէներ»ը յաջողութեամբ շարունակում են սկսած պայքարը: Կազմակերպութիւնը մեծ ծաւալ է ստանում գաւառներում: Ժողովրդի տրամադրութիւնը բարձր է, չնայած անվերջ բանտարկութիւններին ու քաղաքներին: Տեւորները այնքան սովորական երեւոյթ են դարձել, որ այլեւս աւելորդ են համարում նրանց մասին տեղեկագրել: Նորակազմ կոմիտէներից շատերը, ինչպէս տեղեկացնում են մեզ Կովկասի ընկերները, պարաք-

են համարում անպատճառ սպանել մի լրտես կամ կեղեքիչ պաշտօնեայ: Արեւելեան Բիւրոյն ստիպուած է յատուկ միջոցներ ձեռք առնել՝ տեւորի գործադրութիւնը սահմանափակելու համար: Առանձին ուշադրութեան արժանի են այն ճիգերը, որ անում են Կովկասի մեր մարմինները համերաշխութիւն հաստատելու համար տեղական բոլոր միւս կուռուղ տարրերի հետ: Զեզ արդէն յայտնի է, որ մորթիլիցացի(6) մը տաղութեան առթիւ հայ, վրացի, ռուս կազմակերպութիւնների կողմից կոչ է եղել պահեստի զինուորներին՝ չներկայանալ եւ դիմադրել: Դորա արդիւնքը պէտք է համարել այն, որ զօրաշարժը Կովկասում յետաձգուեց: Կովկասեան գործունէութեան յատկանիշ պծերից մէկն է կոմիտէական դատարանը, սանձահարումը պաշտօնեաների հարստահարութեանց, վաշխառութեան, դողութեան եւ աւազակութեան: Կոմիտէները իրենց պաշտպանութեան տակ են առել ոչ միայն ճնշուած եւ կեղեքուած հայերին, այլեւ պատեհ զէպքերում՝ դրացի թուրքերին եւ ջիւրտերին: Սահանքերի ապացոյց է կազմակերպութեան բարձր հեղինակութեան եւ ժողովրդի ինքնազիտակցութեան: Սրանով՝ բռնակալութեան հարուածների տակ, կազմակերպուում է նոր ինքնավարութեան սկզբունքը, որ դուրս գալով ազգային նեղ շրջանից, հիմք է ծառայելու ապագայ դաշնակցական կառավարութեան: Կովկասեան մեր Մարմիններին պակասում է մշակուած ամփոփ ծրագիր, որ ընդհանուր ուղղութիւն տար ամբողջ գործունէութեան եւ հիմք ծառայէր ապագայ աշխատանքի: Ինչպէս արդէն յիշել էինք մեր վերջին շրջաբերականում, առաջիկայ «Պորհուրդ»ի գլխաւոր աշխատանքներից մէկը այդ ծրագրի մշակումն է լինելու:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ.— Ընդհանուր ժողովից յետոյ մի քանի ընկերների նախաձեռնութեամբ եւ Արեւելեան Բիւրոյի հաւանութեամբ որոշուում է դիմել կաթողիկոսին, որ նա իր կողմից պատուիրակներ ուղարկի Եւրոպայի կառավարութիւնների մօտ՝ հրաւիրելու նրանց ուշադրութիւնը Հայկական Հարցի վրայ, այն յոյսով, որ ամենաանյաջող զէպքում՝ պատուիրակութեան ուղեւորութիւնը կը ծառայէ իրեն միջոց պրոպագանդի(7): Ֆրանսիայի եւ Ամերիկայի ընդունելութեան մանրամասները յայտնի են: Աւելացնենք, որ պատուիրակութիւնը նորից Լոնտոն ուղեւորուեց՝ ներկայանալու անգլիական թագաւորին: Յոյս կայ ընդունուելու, Կենտրոնների Եպիկոպոսի միջամտութեան շնորհիւ: «Պրո-Արմէնիայ»ի խումբը, առաջուայ պէս շարունակում է իր գործունէութիւնը: Բացի դրանից՝ մենք ունենք այժմ մեր հարցի մի նոր եւ ուղղակի պաշտպան, մեծ հեղինակութիւն վայելող «Européen» շաբաթաթերթը, որ սըրանից յետոյ խմբագրուելու է Պրեսանսէի և Պիէռ Բիյաոի ձեռքով: Հայկական Հարցը միշտ հրապարակի-

վրայ պահելու համար, «Դրօշակ»ի խմբագրութիւնը Երկրից ստացուած բոլոր կարեւոր տեղեկութիւնները կոիւնների, կոտորածի մասին՝ հեռագրով հաղորդում էր Եւրոպայի կարեւոր թերթերին եւ պաշտօնական հիմնարկութիւններին: Հեռագիրներ ուղարկում էին նրանց նոյնպէս Պարսկաստանի եւ Կովկասի ընկերները: Միջոցներ են ձեռք առնուած՝ Հայաստան ուղարկելու Եւրոպայի ճանապարհորդ-թղթակիցներ:

«ԻՐՕՇԱԿ».— Մտադրութիւն կայ ամիսը երկու անգամ հրատարակելու: Սա ի հարկէ կ'իրագործուի այն դէպքում, երբ փոխադրութեան միջոցները աւելի կանոնաւորուեն: Յունուարին աւելանալու է մի ընկեր եւս Բիւրոյի կազմի մէջ: Այս օրերս կը վերջանայ տըպագրութիւնը մի հատորի, նուիրուած կալուածների խնդրին եւ կովկասեան վերջին շարժումներին: Պատրաստուում է կենսադրական բրոշուրների(8) մի շարք, որոնցից մէկը՝ «Ա. Գոյօշեանը» արդէն պատրաստ մամուլի տակ է:

Ուրիշ մանրամասնութիւնների եւ հարցերի մասին՝ «Պորհուրդ»ից յետոյ:

Ընկերական բարեկերպով՝ Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ժընեւ, 1904 Դեկտ.

- (1) Նախարար:
(2) Գեորգ Չաւուշ:
(3) Գոմայ Խոսի:
(4) Վարդգէսը (Մերձկիլիսեան):
(5) Կակմարկուի Թագի կառիճ:
(6) Զօրակաչ, գործաւաճ:
(7) Քարգալուքիւն:
(8) Գրքոյկներ, պրակներ:

3.— Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ 1904 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4ԴԴ. ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Արեւելեան Բիւրոյի շրջանի Ռայոնական «չարքաք» ժողովէ մնացած են գրաւոր երկու փաստաթուղթեր: Առաջինը 22x28 սմ. չափի տասը էջերէ բաղկացած խմորատիպ գրաւոր մըն է (3ա.— Չարքաք Երթամայի ժողովի որոշումների արձանագրութիւնը), հաւանաբար ժողովէն հտն ուղղուած Հ. Յ. Դ. մարմիններուն: Երկրորդը (3բ.— Ռայոնական ժողով 1904 Բ.—), 21x31 սմ. չափի 13 էջերէ բաղկացած, միտերաւ արձանագրութիւն մըն է, գրուած սեւ միւրաւով, մամբատա: Գրութեան մտքաբանէն զատուելով՝ կարելի է ենթադրել որ սեւագրութեան մը մտաւոր եւ վերջնական արտագրութիւնն է: Երկու փաստաթուղթերը գրաւոր կը լրացնեն. սեւ քէ իկ'աւ, եւկառակ մտածակի կարգ մը կը կնիւնարկուեն, կու տանք եր-

կուսն ալ: Առաջինը ունի շրջաններու եւ անոց գործունէութեան մասին բազմաթիւ տեղեկութիւններ, որոնք տեղ գտած չեն երկրորդին մէջ, մինչ երկրորդի՝ անտարաբնակ ընթերցումով, աւելի լայնօրէն կարելի է ծանօթանալ որոշումներուն տուած տուած տեսակետներուն, շրջաններու կարծիքներուն, անհատական արտայայտութիւններուն, եւն.:

Հարց է թէ ինչո՞ւ շրջաններու մէջ Ռայոնական (Շրջանային) ժողովը կը կոչուի «չորրորդ»: Կովկասի Ռայոնական միւս ժողովները կարգաբար չունին: Նման քանի մը ժողովներու ծանօթեմք արդէն 1895-97 տարիներէն (տեսնել էջ 17-44), մինչ միւսներու ընթացքին արտակարգ թէ ոչ-արտակարգ ժողովներու հանդիպումները արդէն 1904 տարուան ընթացքին: Ամենէն հաստատուածը այն է՝ որ «չորրորդ»ը բնութեամբ է լիարժեք Ռայոնական ժողովի 4րդ հանգիստը՝ իմաստով, յարաբերական այդ ժողովները ճիշտով՝ մէկը միւսին շարունակութիւնը: Այդպէս երբեք չի կու տայ ճշտ տարածագրութեան առաջին տողը:— Եւ ժողովը շարունակուող գրառուի կովկասեան խնդրով: (Ընդգծուած մեզմէ):

Այդ երկու փաստաբանութիւններէն ետք, կու տամք անի երկու շրջանայինները, — առաջինը (3գ)՝ Հ. Յ. Դ. Ինքնապաշտպանութեան կեդր. կոմիտէին կողմէ 19 Դեկտեմբերին (ամենայն հաստատուածներէն 1904) ուղարկած «Հայ բանուորներին», եւ երկրորդը (3գ)՝ Արեւմտեան Ռիւսիոյ 10 Յունուար 1905ի մէկ շրջանային-համայնք՝ ուղարկած Հ. Յ. Դ. կեդր. կոմիտէներուն, Ռուսաստանի յեղափոխական միւս կուսակցութիւններուն հետ գործակցութեան վերաբերելով:

3ա.— ԶՈՐՐՈՐԿ ԵՐԶԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մեծ Քաղաքում 1904 թ. Դեկտ. 10ից տեղի ունեցան Երջանային Ժողովների մի շարք նիստերը: Ժողովին մասնակցելու հրահրուած էին՝ Արեւել. Բիւրոյի, Ինքնապաշտ. Կոմիտէի, Մրզաստանի, Քարի, Զրարերդի, Մեծ Քաղաքի, Ոսկանապատի, Ոսկանապատի II Կոմիտէի, Ժլատի, Նաւահանգստի, Ուսանողութեան, Ապառաժի, Այգեատանի, Նալբանդի, Եկեղեցու եւ Վրէժստանի ներկայացուցիչները(1):

Ընտրուեց նախագահ, որ առաջարկեց ժողովականներին յոտնկայս յարգել ներկայ տարուայ մեր նահատակների յիշատակը: Ապա ժողովն անցաւ հերթական խնդիրներին:

Իւրաքանչիւր Կոմիտէի ներկայացուցիչը նախագահի առաջարկութեամբ ներկայացրեց իրենց գործունէութեան տեղեկագիրը, որի արդիւնքը համառոտակի հետեւեալն է.

ԶՐԱԲՐԿ (ԿԱՐՍ).— Անցեալ Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն՝ կազմակերպել են Երկիր մշտնող խմբեր, ձիւտուր «Կայծակ» եւ «Որսկան» խումբերը: Երկուսն էլ զանազան պատճառներով իրանց նպատակին չհասան. առաջինը սահմանազխին վրայ կուտի բռնուեց, իսկ երկրորդը զոհ գնաց պատահականութեան հնց սահմանի վրայ: Երկիր է փոխադրուած 225 լիւր, որից ստացուել է միայն 25ը, իսկ մնացածը յետ է եկել: Զրարերդի շրջանում ներկայումս կան 112

պատրաստի մոտիմներ, որից միայն 41ը անփայտ է, 49 հատ բերդան, մի մասն անպատրաստ. մոտիմի ծայրեր՝ 30.000, բերդանի՝ 32.000, գաղի(?) մոտիմի առանց զլխարկի՝ 15.000, 27 ձի՝ որ ծառայելու է շրջիկների, վերատեսուչների եւ դաշնակցական տասն զինուորների տեղական պէտքերի համար. 40 ձեռք տաճկ. զինուորական համազգեստ: Տարուայ ընթացքում զնուած են 18.000 մոտիմի ծայրեր: Ունի Կեդր. Կոմիտէ, Ղեկավարող Մարմին եւ 121 դաշնակցական խմբեր. միջին թիւը իւրաքանչիւր խմբի հաշուելով 15 հոգի՝ մօտ 2000 հոգի յեղափոխական անհատներ կը լինեն զանազան խաւերից. վաճառականներից՝ 13 խումբ, 5-30 ուսուցիչներով. կայ նաեւ Կարմիր Պաշտպանութիւն, որն ունի 13 խումբ: Ութ ամսուայ ընթացքում 25.000 ուրբի մուտք է ունեցել: Քաղաքի եւ Կ. Պաշտպանութիւնի միայն եղել է 10.461 ուրբի: Քաղաքում կայ նաեւ Գրասիրաց Ընկերութիւն, որը Դաշնակցութեան կրթական Փոնկիցիան է կատարում. ունի 28 դպրոց: Ժողովրդի մասնաւոր դասերը կարգի դնելու համար քաղաքում գոյութիւն ունի Դատաստանական Մարմին: Երջանում կայ 4 կոմիտէ: 1) Ա.— 12 խմբով, Կ. Պաշտպանութիւն. ունի երկու գիւղ. 2) Կ.— 28 խումբ, Կ. Պաշտպանութիւն եւ 8 գիւղ. 3) Ս.— 23 խումբ եւ 2 գիւղ. 4) Օ.— 13 խումբ եւ 11 գիւղ: 4 կոմիտէների մուտքը եղել է՝ 5000 ուրբի: Գիւղերում կան նաեւ գիւղական զինուորական խմբեր, գիւղերի շահերը պաշտպանելու համար:

Այդ շրջանում հինգ ահաբեկութեան դէպքեր են եղել: Մուտքը ընդհանուր գծերով հետեւեալն է.— 8 ամսուայ ընթացքում 31.600, որից գիւղերը տուել են 16.000, կոմիտէները՝ 5000, Կ. Պաշտպանութիւնը՝ 10.600: Ծախս ուղարկութեան 6500, մարտական եւ մարզական պէտքերի՝ 5000, Երկրից եկած գործիչներին՝ 450, տեղական՝ 3300, զէնքի գնման, պահպանութեան եւ փոխադրութեան ծախս՝ 2084 ու., դիւանական՝ 117, տպագրական՝ 272, կորուստ՝ 176, Կարմիր Պաշտպանութիւնի ծախսը՝ 1700 ու., ուրիշ մարմիններին փոխադրած՝ 10.000 ու., կանխիկ փող՝ 13.000: Կատարուել է նաեւ վիճակագրութիւն՝ թէ որքան զէնք կայ ժողովրդի ձեռքին.— Ծարայի շրջանում՝ 121 դափաղու, 203 ատրճանակ, 233 դաշոյն, 26 սուր, 5 չախմախու, մի մոտիմ, մի այնալու: Ծամբորդի շրջանում՝ 50(?) գիւղում 16 բերդան, 37 դափաղու, 70 ատրճանակ, 3 այնալու, 8 չախմախու: Կալուածական խնդրի առթիւ բանտարկուել եւ որոշ ժամանակից արձակուել են՝ 300 հոգի, 7 շրջիկ, Թումանի խմբից 20 հոգի, որոնցից 13ը ազատուել են. միւսները ղեռ բանտումն են: Աքսորուել են 53 հոգի:

ՄՐԳԱՍԱՆ (ԵՐԵՒԱՆ).— Կազմակերպուել է երկու խումբ, — Երկաթի եւ 102 հոգուց կազմած արշալուստ. գրադուել են նաեւ ուղարկութեան փոխադ-

րութեամբ, ունեն քաղաքում «Գիր» կոչուած ընկերութիւն, որն ունի քաղաքում եւ դաւառում 12 մեծ եւ փոքր գրադարաններ, պահում է 16 դպրոց 800 աշակերտներով: Ունեցել են 6 ահաբեկութեան դէպքեր: Այդ շրջանում տեղի է ունեցել երեք տեղերում կառավարչական էկզեկուցիա(2):

Աքսորուել են կալուածական խնդիրների պատճառով՝ Դ.ից 10 հոգի, բանտարկուել են 13 հոգի, աքսորուել են 28 հոգի. Ն.Բ.ից 10 հոգի, Գ.ից 2 հոգի: Ունեն քաղաքում մի Կեդրոնական Կոմիտէ 7 հոգուց բաղկացած: Խմբերը 7-30 հոգուց են կազմած: Այդ շրջանում կայ 27 կոմիտէ, 150 ենթակոմիտէ, 2398 խմբերով, կազմակերպուած գիւղերի թիւը հասնում է մինչեւ 272ի: Մուտքը եղել է մօտաւորապէս 60.000 ուրբի, որից 50.000ը գիւղերիցն է, իսկ 10.000ը՝ քաղաքից: Ծախս եղել է 40-45.000: Կանխիկ փող կայ ներկայումս՝ 13.000 ուրբի:

ՈՍԿԱՆԱՊԱՍ (ՊԱՔՈՒ).— Ոսկանապատն ունի 185 խումբ, մօտ 5000 անդամներով. զուտ ամսավճարից դոյանում է՝ ամսական 3000 ուրբի. վիճակախաղից արդիւնք ստացուել է՝ 2000 ուրբի: Մանրամասն հաշիւ չունենալու պատճառով, ներկայացուցիչն անկարող եղաւ հաշիւ ներկայացնել ժողովին:

ՈՍԿԱՆԱՊԱՍԻ II ԿՈՄԻՏԷ.— Ներկայացուցիչը գեկուցեց հետեւեալը.— Կոմիտէն ընտրուած է Մայիսից. ունի 80 խումբ. մուտք ունեցել է 10.000 ուրբի, 4500 ու. պատահական աղբիւրներից, իսկ մնացածը՝ զուտ ամսավճարից: Այդ շրջանը բաժանուում է 5 ռայոնի, որոնք ունեն իրանց ենթակոմիտէները: 30 խմբերի համար ունեն 2 շրջիկ: Այդ շրջանում կազմակերպուել է «Սահակ-Մեսրոպեան Գրասիրաց Ընկերութիւն»ը, որը պահում է գաւառներում դպրոցներ, ունի գրադարաններ: Կայ նաեւ գրադիտութիւն տարածող ընկերութիւն, որը պահում է 800 աշակերտներ, 35 ուսուցչով. ունեն Կարմիր Պաշտպանութիւն, 7 խմբով. ունեն կազմակերպած նաեւ «Անյաղթ» անունով զինուորական խումբ՝ յատկապէս Երկիր ուղարկելու համար: Երկու ահաբեկութեան դէպքեր են ունեցել. մէկը ինքնազուլիս, իսկ միւսը Կոմիտէի որոշմամբ:

ՔԱՐ (ԱԼԵԿՍԱՆԴՐԱՊՈԼ).— Գլխաւորապէս օգնել է հարեան կոմիտէներին արշալուստներ եւ ուղարկութեան պատրաստելու գործում. գրադուել է նաեւ փոխադրութեամբ: Պատրաստուել է Զալլաղի խումբը, որը քաղաքական անյաղող հանդամանքների շնորհիւ Երկիր չի մտել: Ունի տեղական զինուորական 4 խմբեր. քաղաքում մի Կեդրոնական Կոմիտէ՝ 3 անդամից կազմած(3). կայ նաեւ Ղեկավարող Մարմին՝ 161 խմբով: Ունին երեք կոմիտէ, — Ծահմուտ, Թումբ եւ Անտան:

Թումբը 60ից աւելի կազմակերպած գիւղեր ունի, իսկ ընդհանուր շրջանի գիւղերը, որոնք զուրս են երեք կոմիտէների շրջանից, հասնում է մինչեւ 110ի. բաժանուած են 3 ռայոնի: Ունին նաեւ Կարմիր Պաշտպանութիւն, 8 կանանց խմբերով: Մուտք եղել է 27.421 ու., խմբերի ամսավճարներից՝ 9691 ու., երկու խմբերից եւ այլ աղբիւրներից՝ մօտ 2000 ուրբի, ենթակոմիտէներից եւ կոմիտէներից՝ 10.782 ու.: Ծախս ուղարկութեան գնման համար՝ 20.305, ենթակոմիտէների ծախսը՝ 1344. ընդամէնը ծախս կարելի է հաշուել 21.600. կանխիկ կայ 5770 ու.: Բիւրոյի գիտութեամբ մեր միջոցով Բարձրաւանդակ է փոխադրուած 3300 ու.: Վերջին ամիսներում աքսորուել են 10 հոգի: Ահաբեկութեան 4 դէպքեր են եղել:

ԺԼԱՍ (ՀԻՒՍ. ԿՈՎԿԱՍ).— Ունի մի կոմիտէ, 8 ենթակոմիտէ զանազան վայրերում: Խմբերի թիւը հասնում է 31ի. ունի նաեւ 10 հոգուց կազմած զինուորական խումբ: Մինչեւ հիմա զնուած է 36.242 ծայրեր, որի մեծ մասը փոխադրուած է Մրզաստան, Մեծ Քաղաք եւ Ոսկանապատ. վտանգուել է 1300 հատ. կայ ներկայում 3780 ծայր. ունեն նաեւ մի մոտիմ, 22 բերդան, մի նազանի ատրճանակ, 3 բերդան, 3 բրաունիք, 2 դաշոյն: Ունին երկու գաղտնի դպրոց եւ գրադարան: Մուտք ունեցել են 12.000 ուրբի:

ՄԵՇ ՔԱՂԱՔ (ԹԻՖԼԻՍ).— Այստեղ հազիւ մի երկու ամիս է, որ կազմակերպութիւն է մտել, այնպէս որ մի առանձին աչքի ընկնող գործունէութիւն չի ցոյց տրուել: Ունի մի Կեդրոնական Կոմիտէ՝ 30 խմբերով: Քաղաքում կայ նաեւ 300 հոգուց կազմած զինուորական խումբ, մի հմուտ մարզիչի ղեկավարութեամբ: Ունի պրոպագանդիստներ պատրաստելու մի շիօլա(4), ուր 8-10 միջնակարգ կրթութեան տէր մարզկանց դասախօսուում է կարեւոր նիւթերի մասին: Ունեն Կարմիր Պաշտպանութիւն: Մուտք ունեցել է 4231 ու. 53 կոպ.: Ծախս ուղարկութեան 2790 ու. 57 կ., զէնքի փոխադրութեան՝ 155 ու. 83 կ., մարտական-մարզական՝ 83 ու. 67 կ., տեղական՝ 574 ու. 55 կ., դիւանական՝ 5 ու. 10 կ., տպագրական՝ 58 ու. 10 կ., Կարմիր Պաշտպանութիւնի ծախս՝ 173 ու., Երկրի գործիչներին՝ 64 ու., զանազան մարմիններին փոխադրած՝ 2116 ու. 41 կ., փոխարինարար տրուած՝ 325 ու. 33 կ.: Կանխիկ՝ 882 ու. 37 կ.:

ՆԱԻԱԼԱՆԳԻՍ (ՊԱԹՈՒՄ).— Զբաղուել են գլխաւորապէս տեղափոխման խնդրով. ունեն 12 խառն (ուսահայ եւ տաճկահայ) զինուորական խմբեր, մօտ 300 հոգուց կազմած: Ներկայումս ունեն մօտ 30.000 փամփուշտ նորի եւ 10 հրացան: Ունի մի Կեդրոնական Կոմիտէ եւ զանազան կէտերում 8 կոմիտէ եւ 5 ենթակոմիտէներ. ունի 70 խումբ, որոնցից ոմանք բաւական բազմամարդ՝ 60-70 հոգի: Այս տարուայ մուտքը

Հասնում է մինչև 70.000 ու. : Ունի մի գաղտնի ուսումնարան 30 աշակերտներով :

ԱՊԱՌԱԺ (ՇՈՒՇԻ). — Ունի ներկայումս 24 խումբ եւ Կարմիր Պաշտի Ընկերութիւն՝ 6 խմբերով. նաեւ ուրիշ նուիրատու անդամներ : Իւրաքանչիւր խումբ տալիս է 2 զինուոր : Գաւառներում ունեն մօտ 240 խումբ : Այս շրջանն ունի 4 ենթակոմիտէներ. ձեռք են բերած մօտ 40 բերդան : Մի տարուայ ընթացքում տուել են 53 երեկոյթ : Քաղաքում վաճառականներից ստացուում է ամսական՝ 300 ուրբի եւ 2 գաւառներից՝ 300-340, Ձ.ից մինչև 500(5) : Ընդհանուր մուտքը մօտաւորապէս կարելի է հաշուել տարեկան 9000 ու. : Ձ.ում ինքնազուլիս 6 ահարեկութեան դէպքեր են եղել :

ՎՐԷԺ (ԱՏՐՊԱՏԱԿԱՆ). — Ձբաղուած է եղել փոխադրութեամբ եւ զինակիր խմբեր Վասպուրական փոխադրելով : Անցել են 4 խմբեր. — 1) Յովհաննէսի առաջնորդութեամբ 6 հոգուց կազմած մի խումբ(6), որոնք դէպքի են բռնուում, սպանուում է խմբապետը եւ մի զինուորը, Հինգը տեղ են հասնում. 2) Դուսանի խումբը՝ 18 հոգի, սահմանի մօտ տաճիկ զինուորների հետ կռուի են բռնուում(7), սպանուում են 2 զինուոր մերոնցից (մէկը վալադ), եւ անյաջողութեան հանդիպելով, ետ են դառնում : 3) Վարդանի զեկավարութեամբ երրորդ խումբը(8) տանում է 1800 փամփուշտ. ապահով տեղ են հասնում : 4) Փոխիկի խումբը՝ ձիաւոր 15 հոգուց կազմած : Այս աշան փոխադրուած է 30.000 փամփուշտ, 22-23 հազարը նորի, մընացածը Հնի. մնում է ճանապարհի վրայ Հնի փամփուշտ 14.000 հատ. իսկ Ա.ի 12.000 եւ 20 խնձոր : Քաղաքում մօտիկ 7 հրացան է գնուած, 15 բերդան, փամփուշտ նորի՝ 38.000 : Ներկայումս կայ մօտաւորապէս 50-60 զէնք : Ունեն Կեդրոնական Կոմիտէ եւ 11 խումբ : Ներկայացուցչի մօտ պատրաստի ելեւմտի հաշիւ չունենալու պատճառով, անկարող եղաւ ներկայացնել ժողովին :

ՏԱԿՏԻԿԱՑԻ ԽՆԻՒՐԸ. — Երկրում ապագայ գործունէութեան, տակտիկայի խնդրի վերաբերմամբ բաւական երկար վիճարանութիւններ եղան, ապա առաջարկուած երեք բանաձեւերից եօթ ձայնով անցաւ հետեւեալ բանաձեւը. — «Ընդունելով ռազմաթիւրքի եւ մասնագէտ ուժերի Երկիր մուծելու անհրաժեշտութիւնը, ժողովը յարմար է գտնում այդ ուժը կեդրոնացնել Լեռնապարում(9), ի նկատի ունենալով, որ վերջինս ամենահաւանականօրէն ապագայ կռուի բազան(10) կարող է լինել. սակայն նախ քան կռուի ձեւը որոշելը, անպայման ձեռնարկել յիշեալ վայրի լուրջ ուսումնասիրութեանը ձեռնհաս մասնագէտների ձեռքով : Ժողովը նաեւ միաձայն ընդունեց Ոսկանապատի առաջարկը հետեւեալ ձեւակերպութեամբ. — «Հրաւիրել յայտ-

նի ռազմագէտներ, պարտիզանական կռիւների մասնագէտ անհատներ : Նոյնիսկ օտարազգի, փորձուած ընկերներ եւ այդ բոլորից կազմել մի զինուորական շտաբ — զննելով նրանց տրամադրութեան տակ 20.000 ու. իրանց ծախսի եւ Լեռնապարի փոխադրական զօծերի ուսումնասիրութեան համար, — որ նրանք կազմեն ապագայ տակտիկային վերաբերեալ գործողութիւնների մանրամասն ծրագիրը եւ ստանձնեն զեկավարութիւնը» :

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԻՒՐՆԵՐ. — Հաշուետուութիւնն ընդհանրապէս անկանոն է կատարուում. այդ կողմից աւելի աչքի են ընկնում առանձնապէս Ոսկանապատի, Քարի եւ Նաւահանգատի կոմիտէները : Ժողովը որոշեց յանդիմանութիւն կարգաւ նրանց եւ յանձնարարեց Բիւրոյին եւ Կեդր. Կոմիտէներին, որպէսզի մինչեւ ամսիս վերջը բոլոր հաշիւները ներկայացնեն Բիւրոյին՝ Խորհրդին ներկայացնելու համար : Ներքին կազմակերպութեան մասին թեր եւ դէմ կարծիքներից յետոյ վերջնական եզրակացութեան չյանգելով, ժողովը թէեւ գերադասելով համայնական կազմակերպութիւնը, բայց այդ խնդիրը դեռ եւս հասունացած (չըզանելով) եւ վաղաժամ՝ այդ մասին դրական կարծիք կամ որոշում արձակելը, որոշեց առայժմ եղած բոլոր կազմակերպութիւնները յարմարեցնել Ընդհ. Ժողովի կանոններին :

Հարց էին բարձրացրել մի քանի կոմիտէներ Կեդրոնականի իրաւունք ստանալու մասին. ի միջի այլոց եւ ժլատը, որի առթիւ առաջարկուած երեք բանաձեւերից անցաւ միաձայն երրորդը, այդ է՝ «Ժլատ»ի առաջարկը իրանց պատճառաբանութեամբ ներկայացնել Խորհրդին, թողնելով նրանց բարի հայեցողութեան. իսկ մինչեւ այդ ժլատը թողնել կոմիտէի իրաւունքների սահմանում :

ԿԱՐՄԻՐ ԽԱԶ. — Կազմուել է հետեւեալ վայրերում, — Ոսկանապատ, Ջրաբերդ, Քար, Մրգաստան, Մեծ-Քաղաք եւ Ապառաժ. չուտով կազմուելու են Նաւահանգիտ եւ ժլատ քաղաքներում : Այս խնդրի շուրջը բաւական երկար թեր ու դէմ կարծիքներ եղան եւ վերջ ի վերջոյ ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան. —

- 1) Կարմիր Պաշտ օգնում է միայն վնասուած դաշնակցական գործիչներին եւ նոցա ընտանիքներին, իւ տաճկահայ ժողովրդին տառապանքների ժամանակ ամէն կերպով. — դատաստանական, դրամական, բժշկական եւն. :
- 2) Կարմիր Պաշտ կազմը պիտի լինի խմբական. խմբերն ընտրուում են տեղական վարչութիւն. այդ վարչութիւնը գործում է տեղական կոմիտէի զեկավարութեամբ : Կեդր. Կոմիտէի հետ Կարմիր Պաշտ վարչութիւնը յարաբերութիւն է պահպանում անմիջապէս,

երբ տեղում Կեդր. Կոմիտէ կայ, իսկ հակառակ դէպքում՝ տեղական կոմիտէի կամ ենթակոմիտէի միջոցով :

3) Օգնութեան կազմակերպութիւնը եւ նրա բաշխումը Կարմիր Պաշտ վարչութիւնը կատարում է Կեդր. Կոմիտէի առաջարկութեամբ կամ նրա համաձայնութեամբ :

4) Կարմիր Պաշտ բոլոր վարչութիւնները իրանց մուտքի 10%ը ամէն ամիս ուղարկում են Բիւրոյին՝ Կեդր. Կոմիտէի միջոցով :

Ծանօթ. — Ամիսը մի անգամ Կարմիր Պաշտ վարչութիւնները հաշիւ պէտք է ներկայացնեն Բիւրոյին (Կեդր. Կոմ.ի միջոցով), որպէսզի վերջինս իրազեկ լինի կատարուած օգնութիւնների մասին եւ ըստ այնմ հնարաւորութիւն ունենայ տնօրինելու իրան հասցրած գումարները :

Կարմիր Պաշտ մանրամասն ծրագիրը արդէն մըշակուած պատրաստ է :

ԲԻՒՐՈՑԻ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆԸ. — 1904 թ. Յունուարի 1ից մինչև 1905 թ.(11) Յունուարի 1ը ընդհանուր մուտք եղել է 82.783 ու. 47 կ., որից դաշնական Մարմիններից՝ 72.949 ու. 41 կ., իսկ 1903 թ.ից(11) մնացորդ՝ 11.412 ու. : 1904 թուի ընթացքում իր ուսյոնից մուտք է ունեցել՝ 5422 ու. 6 կ. : Միսոռազմաթիւրքի, մարտական-մարզական՝ 30.170 ու. 35 կ., տեղական՝ 8686 ու. 1 կ., դիւանական՝ 263 ու. 28 կ., տպագրական՝ 1827 ու. 20 կ., Կարմիր Պաշտ ծախս՝ 3247 ու., ինքնապաշտպանութեան ծախս՝ 1871 ու. 71 կ., Երկրի գործիչներին՝ 932 ու., փոխադրուած զանազան Մարմիններին՝ 16.304 ու. 5 կ., փոխարինարար տրուած Մարմիններին՝ 828 ու. 10 կ. : Պատրաստի կանխիկ դրամ՝ 25.653 ու. 18 կ. : Ընդհանուր ելք կարելի է հաշուել՝ 64.130 ու. 29 կ. :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ. — Վերջնորոշեց նախկին Բիւրոն : Կովկասի Պատասխ. Կեդր. Կոմիտէի համար բաւարար թուով թեկնածուներ չունենալով, Բիւրոյին առաջարկուեց եօթն թեկնածուներից կազմել վերոյիշեալ մարմինը. լիազօրութիւն տրուեց նաեւ դրսից հրաւիրել յարմար անձնաւորութիւններ, կազմը լրացնելու համար :

Ապա ժողովը անցաւ ԾԱԽՍԵՐԻ ՔՆՆՈՒԹԵԱՆԸ. — Երջանային ժողովը առաջարկում է Խորհրդին Կովկասեան Երջանի ամբողջ մուտքի 30%ը յատկացնել կովկասեան գործին, որից 10%ը թողնել տեղական կազմակերպութեան ծախսերի համար Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն, 10%ը Կովկասի Պատ. Կեդր. Կոմ.ի տրամադրութեան տակ, 10%ը Կեդր. Կոմիտէներին՝ կովկասեան գործի համար :

ՀՆԶԱԿԵԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ. — Ժողովը երկար վիճարանութիւններից յետոյ ցանկութիւն յայտնեց ուսումնասիրութիւնը Հնչակեանների գործունէութեան վերաբերմամբ՝ կատարել գաղտնապահութեան ամենաճարայեղ միջոցները գործ զննելով, նոյնիսկ մեր Մարմիններին յանձնարարելով՝ որ այդ գաղտնի ուսումնասիրութիւնը կատարուի միմիայն Կեդր. Կոմիտէների անդամների միջոցով, այն էլ կողմնակի ճանապարհներով, երբ վերոյիշեալներից շրջոյններ կը լինեն իրանց շրջանի կոմիտէների եւ ենթակոմիտէների վայրերը. կայացրեց նաեւ որոշում, — շայն բոլոր անհատները, որոնք մեր Կեդր. Կոմիտէների հայեցողութեամբ դաշնակցական կը ճանաչուեն, կազմակերպութիւնը պատրաստ է այդպիսիներին պաշտպանել հնչակեանների դէմ, բոլոր խաղաղ միջոցները գործ զննելուց յետոյ միայն դիմելով ծայրայեղ միջոցներին :

Ընդունեց նաեւ իբրեւ սկզբունք՝ գործ զննել նըրանց դէմ լայն ծաւալով պրոպագանտ եւ հասարակական միջնորդ դատարաններ, իսկ բարդութիւնների եւ ընդհարումների դէպքում նաեւ խիստ միջոցներ, բայց որովհետեւ կրքերի զրգուած ժամանակ մեր Մարմինները կարող են սուր միջոցների դիմել, ուստի միաձայն ընդունուեց երկու հարեւան Կեդր. Կոմիտէների խորհրդակցութեամբ գործել համաձայն հետեւեալ որոշման. — «Բոլոր խաղաղ միջոցները սպառելուց յետոյ, եթէ ծայրայեղ միջոցների կարիք զգացուի, Կեդր. Կոմիտէն պարտաւոր է ժողովի հրաւիրել երկու Կեդր. Կոմիտէների ներկայացուցիչներին, որոնք հարցը բազմակողմանի քննելով, տեղական Կեդր. Կոմիտէի լիակատար կազմի հետ միասին կարող են վճիռ արձակել ձայների մեծամասնութեամբ, տեղական կազմին տալով մի ձայն, որ դրսի երկու ձայների հետ միասին անում է 3 ձայն» :

Ժողովը նաեւ միաձայն հաւանութեամբ արդիւում է մեր բոլոր դաշնակցական Մարմիններին որեւէ դրամական եւ ռազմական օժանդակութիւն ցոյց տալ այլ եւ այլ Մարմիններին, առանց Բիւրոյի եւ Կովկասի Պատ. Կեդր. Կոմ.ի նախօրօք համաձայնութեամբ :

ԱՀԱԲԵԿՈՒԹԻՒՆ. — Քաղաքական տեղորոշների եւ ընդհանրապէս պետական պաշտօնեանների ահարեկման իրաւունքը վերապահուած է միայն եւ միայն Կովկասի Պատ. Կեդր. Կոմիտէին, իսկ մասնիչներին եւ լրտեսներին պատժելու եւ նոյնիսկ տեղորոշ ենթարկելու իրաւունքը թողնուեց Կեդր. Կոմիտէներին, համաձայն Ընդհ. Ժողովի որոշման, տալով ապատուութիւն իրանց որոշումների մէջ՝ որ ըստ յանցանքի ծանրութեան եւ որակի պատժներ գործ զննել վերոյիշեալների դէմ :

ԲՈՆԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐԱՄ ՀԱՒԱՔԵԼԸ. — Երբջանային ժողովը որոշեց միանգամայն արդիւմ մեր

Մարմիններին այսուհետև ուղղակի կամ անուղղակի կերպով ստիպող միջոցներով դրամ ժողովելը, վերապահելով այդ իրաւունքը Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուած յատուկ ստիպողական միջոցներով դրամ ժողովող «Կոուսաճարիկ» Մարմին(12), խնդրելով՝ որ վերոյիշեալ Մարմինը իր դիմումներին մասին իմացում տայ համապատասխան շրջանի Կեդր. Կոմիտէի անդամներին մէկին, թիւրիմացութիւնների եւ հակասութիւնների տեղիք չտալու համար:

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԽՆԻՒՐ. — Այս խնդրի վերաբերմամբ մի քանի նիստերից յետոյ Շրջանային Ժողովը ձայնների մեծամասնութեամբ որոշեց. — Կովկասեան գործի վերաբերեալ հիմնական սկզբունքի հարցերը թողնելով անփոփոխ, ինչպէս ընդհանուր Մրազրումն է, մինչեւ Ընդհ. Ժողովը, (իրաւունք տալ) Բիւրոյին եւ Կովկասի Պատ. Մարմինն մշակել մի շարք գործնական միջոցներ, որպէս մօտաւոր պահանջներ, ղեկավարուելով Դաշնակցութեան ընդհ. Մրազրով: Վերոյիշեալը վերաբերում էր տնտեսական ծրագրին: Գալով կովկասեան ծրագրի քաղաքական մասին, ժողովը միաձայն ընդունեց Կովկասեան Ֆեդերացիա(13) ուսկալարական հիմունքներով: Ժողովը որոշեց ընդդէմ մի ձայնի՝ Կովկասեան Ֆեդերացիա, կանգնած ազատ Ռուսաստանի հետ. իսկ այն հարցն, թէ Ֆեդերացիան պէտք է լինի ազգային թէ տեղական, յանձնուեց մշակելու Բիւրոյին եւ Կովկասի Պատ. Մարմինն, որոնք խնդրել մշակելուց յետոյ, պիտի ուղարկեն Կեդր. Կոմիտէներին, ջննութեան ենթարկելու համար:

Անցնելով Կովկասեան գործունէութեան միջոցներին՝ Ժողովը ձայների մեծամասնութեամբ ընդունեց այն համաձայնութիւնը, որ կայացուել է արտասահմանում Ռուսաստանի 9 յեղափոխական կուսակցութիւնների մէջ: Համաձայնութեան նպատակը եղել է 1) Տապալել ռուսաց միապետութեան ռեժիմը(14). 2) Տալ ազգերին ինքնորոշման իրաւունք:

Ժողովը, անցնելով տնտեսական կուռի միջոցներին, որոշեց. —

- 1) Ամէն կերպ մաքառել ռուս գաղթականութեան հոտանքի դէմ դէպի մեր երկիրը:
- 2) Հարկերի վերաբերմամբ՝ Ժողովը մերժեց անուղղակի հարկերի սխտեմը եւ որոշեց պահանջել անող եկամտային հարկի սխտեմը:
- 3) Դիւրութիւններ տալ զիւղացիներին հողերը սեփականացնելու եւ ճնշում գործ դնել կալուածատէրերի վրայ, եթէ նրանք այդ բանում արգելք հանդիսանան:
- 4) Գիւղական բանկերը(15) շատացնել, վաշխառուների դէմ մաքառելու համար:
- 5) Կօօպերատիւ(16) միջոցները կամ ձեռնարկութիւնները խրախուսել ժողովրդի մէջ:

6) Պահանջել կառավարութիւնից, որ վերացնի ամէն մի արտօնութիւն(17). բոլոր քաղաքացիները հաւասար (պիտի) լինեն օրէնքի առջ: Աւելի մանրամասնութիւնները թողնուեց մշակելու Բիւրոյին եւ Կովկասի Պատ. Կեդր. Կոմիտէին:

Որոշուեց ինքնապաշտպանութեան Կոմիտէն այսուհետև անուանել Հ. Յ. Դ. Կովկասի Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէ(18):

Որոշուեց նաեւ, որ մինչեւ Ընդհանուր Ժողովի կայանալը, Բիւրոն եւ Կովկասի Պատ. Կեդր. Կոմիտէն սոցիալ-քաղաքական հարցերի մասին օրեկտիւ(19) կերպով դրամ բրոշուներ(20) հրատարակեն, որոնցով հասարակութիւնը կարողանայ ծանօթանալ վերոյիշեալ խնդիրների հետ:

(1) Կուսակցական տեղամասերում համար, տեսնել ի մասնաւորի էջ 109 (Արձանագրութիւն Գ. Ընդհ. Ժողովի): Նոր եմ՝ Ժլատը (Հիւս. Կովկաս), Ապառաժը (Շուշի, Ղարաբաղ), Այգեստանը (Գամակ), Նալբանդը (Նոր Նախիչեւան) եւ Եկեղեցիք (Մոսկուա): Մեծ Քաղաքը Թիֆլիսն է: Տեղեկագրի մէջ, կուսակցական տեղամասերում քով, փակագծի մէջ տրուած իսկական անունները մեծ տառերով:

(2) Կրճալ մշակուել գործադրում, կատարում, կամ՝ սպառում: Ըսուած է հաւանորէմ՝ կառավարական պաշտօններում դէմ ի գործ գրուած ահաբեկութեանց մասին:

(3) Թուսմալը դժուար ընթացիկ է, — կրճալ մասն Ըլլալ Զ. ից կամ Ա. ից:

(4) Բուսերէն բառ, — գարոց:

(5) Գլխագիր գրուած տառը յստակ չէ. կրճալ մասն Ըլլալ Զ. ից կամ Ա. ից:

(6) Կ'ակնարկուի վանքի Ֆլեւան Յովհաննէսի (Ջոյ ազա), պատգամաւոր Գ. Ընդհ. Ժողովին, որ սպանուեցաւ վերադարձի ճամբում վրայ:

(7) Կ'ակնարկուի Ռագիի կուռի (տեսնել Բուսերէն յաշիւրը, Ա. հատոր (ա. տպագրութիւն), էջ 190-240):

(8) Վարդան Շահպագ, որ Յոյնպէս Վասպուրական կը գառնար Գ. Ընդհ. Ժողովին ետք:

(9) Վանայ Ծովու հարաւային շրջանը (Ռշտունեաց լեռներ), ուր սկսած էր գործել Վանայ իշխանը եւ ուր շուտով պիտի գործէր Բուսերէնը:

(10) Խարիսիք, պատուանդանը:

(11) Բնագրի մէջ՝ կը կարդանք 1804, 1805, 1808, եւն., բայց սխալը բացայայտ է:

(12) Գ. Ընդհ. Ժողովին կողմէ ընտրուած Յուսէպի Մարմինը, Քրիստոֆորի գլխաւորութեամբ:

(13) Համադաշնակցութիւն:

(14) Վարչաձեւ, վարչակարգ:

(15) Դրամատունները:

(16) Համագործակցական:

Յր. — ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ 1904 Թ.

Ա. ՆԻՍ

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ՀԱՐՑ. — ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ. — ԴԵՄՈՒՐԱՏԻԿ ՖԵԴԵՐԱՏԻՍ. — ՏՆՆՆՆՆԱԿԱՆ-ԳՈՐԾՆԱԿԱՆ. — ՄՕՏԱԻՈՐ ՊԱՆԱՆՔՆԵՐ:

Ժողովը շարունակելով զբաղուել Կովկասեան խնդրով, լսեց Նաւահանգստի կարծիքը այդ մասին, որ հետեւեալն էր — զործունէութեան մէջ պիտաւոր տեղ տալ ազգայնական հարցին, նպատակ դնելով պահպանել ազգայնական ինքնորոշութիւն եւ առանձնայատուկութիւններ: Ձգտել ստեղծելու Կովկասում քաղաքական-կուլտուրական(1) այնպիսի պայմաններ, որոնց մէջ մեր ազգայնութիւնը չի կորուսի: Իսկ ռուս միապետութեան ռեժիմը տապալելու գործում Դաշնակցութիւնը օժանդակ դեր պիտի կատարէ միայն:

Մեծ-Քաղաքի ներկայացուցիչը զեկուցանելով իրանց Կ. Կոմիտէի կարծիքը այդ մասին, յայտարարեց, որ իրանք շատ երկար կանգ են առել այդ հարցի վրայ եւ երկար վիճարանութիւններ ունենալով՝ այսուհետև մի որոշ եղրակացութեան չեն կարողացել դալ հետեւեալ պատճառներով: Կովկասը եւ Տաճկաստանը այժմ իրանց կուլտուրական(1), տնտեսական եւ քաղաքական պայմաններով ներկայացնում են տարբեր երկրներ, հետեւաբար տարբեր էլ ծրագրներ պիտի կազմել. օրինակ, եթէ Կովկասի համար առանձին կազմէինք, պէտք էր հիմք ընդունել սոցիալիզմը(2): Մական մէկ կուսակցութիւնը չի կարող երկու տարբեր ծրագրերով առաջնորդուել Իսկ եթէ կազմենք երկու տարբեր ծրագրեր եւ ըստ այդ էլ պառակտուենք երկու կուսակցութեան, այն դէպքում Դաշնակցութիւնը շատ կը թուլանայ, կը կորցնէ այն մեծ ոյժը որ ունի նա այժմ ժողովրդի մէջ, տաճկահայկական դատի հողի վրայ. իսկ դա ամենեւին ցանկալի չէ, որովհետև դրանով մենք ծանր հարուած կը տանք Տաճկահայաստանի ազատութեան հարցին: Մինչեւ այժմ Դաշնակցութեան գործունէութիւնը համարուել է ազգային ազատագրական մի գործ. դրա համար է, որ նրա դրօշի տակ անխտիր թէ՛ բանուոր, թէ՛ բուրժուազի(3), թէ՛ պիւղաջի, թէ՛ կալուածատէր, թէ՛ հողատիրական համախմբուել են:

Նախագահը կրկին կարգաց Ընդհ. Ժողովի Մրազրից մի քանի կտորներ եւ ցոյց տուեց, որ երբ Կովկասեան ծրագրի հիմքը վերցնենք սոցիալիզմը(2), դրանով նորութիւն կամ հակասութիւն մտցրած չենք լինի մեր Մրազրի մէջ, որովհետև նրա մէջ արդէն կայ սոցիալիզմի դադափարը եւ ծրագրի բացատրութիւնը, յառաջարանի մէջ, սոցիալիզմի ոգով եւ հի-

մունքներով է տրուած. բացի այդ, քանի քանի անգամներ «Դրօշակ» խմբագրութիւնը հեռագրներ է ուղարկել սոցիալիստների կոնֆերանսներին(4) ողջունելով սոցիալիզմի յաջողութիւնը, որպէս սոցիալիստ(5) կուսակցութիւն: Հարցը միայն նրանումն է, որ Մրազրի ճակատին պարզ կերպով չէ դրուած սոցիալիզմ խօսքը եւ այժմ մէկ խնդիր կարող է լինել, — պարզ դրոշմէլ ծրագրի ճակատին այդ խօսքը թէ թողնել այնպէս, ինչպէս կայ: Գալով այն հարցին, թէ կազմելով Կովկասի համար առանձին ծրագիր եւ ձեռնարկելով գործունէութիւն այստեղ, մենք կը թուլացնենք Տաճկահայաստանի գործունէութիւնը, պէտք է ասել, որ իրականութիւնը այդ չապացուցեց. ընդհակառակն, երբ տեղական գործունէութիւնը սկսեցինք, ժողովուրդը աւելի մօտեցաւ մեզ եւ նոր նպաստներն ու ջակցութիւնը աւելի լայն ծաւալ ստացան: Տաճկահայաստանին մեր անելիք օգնութիւնը լինելու է այն, ինչ որ եղել է մինչեւ այժմ, այն է՝ փող, գէնք եւ մարդ ուղարկել. սակայն դրանից դուրս շատ բաներ կան անելու Կովկասում, որ տեղական բնաւորութիւն ունեն: Ձէնքի ու փողի ոյժն էլ այն չափերով չի զլացուել(?), ինչպէս կարծուում է, որովհետև հազիւ թէ երկու տեղի գէնքի եւ փողի գործադրութեան պահանջը այնպէս զուգորդուի միաժամանակ, որ մէկն ու մէկը տուժի:

Մեծ-Քաղաք, Քար, Նաւահանգիստ, Մրազաստան առարկում էին, թէ Մրազրի առաջարանի սոցիալիստական ոգին եւ բացատրութիւնը չի կարող ծրագրի հիմնակէտ համարուել, որովհետև որպէս հիմնակէտ, նա պէտք է աւելի պարզ շեշտուած լինէր եւ ժողովուրդն էլ մինչեւ այժմ սոցիալիզմ չէ ենթադրել Դաշնակցութեան մէջ, այլ Դաշնակցութեան նայել է որպէս մի գործնական, ազգային ազատագրական կուսակցութեան վրայ եւ դրա համար է, որ նա խորշնով շնչակեաններից՝ աւելի յարել է Դաշնակցութեան: Իսկ տնտեսական դիմումները(6) նա սպասում է քաղաքական ազատագրութիւնից յետոյ դնել եւ լուծել:

Ոմանք պնդում էին, որ չի կարելի Մրազրի տնտեսական հիմունքները այդպէս մուր եւ վիճելի դրութեան մէջ պահել. պէտք է պարզել եւ պարզ կերպով յայտարարել տնտեսական որոշ դաւանանք եւ ըստ այնմ մշակել որոշ ծրագրեր: Կամ պիտի ընդունել սոցիալիզմը եւ պարզապէս յայտարարել, կամ մերժել ու առաջարկել առաջիկայ Ընդհանուր Ժողովին, որ դուրս ձգէ Մրազրից:

Նախագահը ժողովի ուշադրութիւնն էր հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ եթէ Դաշնակցութիւնը այսքան զօրեղացել է, ոչ թէ շնորհիւ նրան է, որ ունեցել է հոյակապ տեսական ծրագրերն օղում կախուած, այլ շնորհիւ այն հանգամանքի՝ որ նա կանգնելով գործնական հողի վրայ, իւր ծրագիրը քաղել է իրական կեանքի պահանջներից: Դաշնակցութիւնը

գլխավորապես մի քաղաքական կուսակցութիւն է, որի նպատակն է ուսման արդիւնքներով Ֆեդերացիա(7) թէ՛ Տանկահայաստանում, թէ՛ Կովկասում: Տնտեսականի նկատմամբ ինչքան էլ մենք տեսական դաւանանքներ յայտարարենք, այնուամենայնիւ գործնականապէս մենք, ինչպէս եւ բոլոր սոցիալիստական կուսակցութիւնները, շատ հեռու չենք գնալու քան մի շարք մտաւոր պահանջները՝ որպէս մտաւոր նպատակ: Մակայն, այդ կոնկրետ(8) պահանջները մշակելիս, մենք պէտք է ունենանք մի ղեկավարող հայեցակէտ, եւ ահա սոցիալիզմով մենք ուզում ենք միայն բնորոշել այն հայեցակէտը, որով պիտի առաջնորդուենք մեր մտաւոր պահանջները դնելիս կամ կեանքում հանդիպած խնդիրները լուծելիս. ուստի առաջարկում է առանց երկար ծանրանալու թէորիայի(9) եւ չսոցիալիզմ վերնագրի պարզութեան կամ անորոշութեան վրայ, թողնել ընդհանուր Ծրագիրը այնպէս, ինչպէս որ կայ եւ անցնել մի շարք, թէ՛ քաղաքական եւ թէ՛ տնտեսական ծրագրի համար, գործնական հարցերի մշակութեան, Ընդհ. Ժողովի Ծրագրի սահմաններում:

ՋՐԱԲԵՐՒ.— Ջրաղուելով քաղաքական կուուի խնդիրներով, մենք չենք կարող անտես անել այն բազմաթիւ տնտեսական հարցերը, որ օր աւուր դնում է մեր առաջ կեանքը: Մեր գործունէութեան ընթացքում մենք միշտ ընդհարուում ենք տնտեսական հարցերի հետ, որոնք մեզինք լուծում են պահանջում եւ որոնք լուծելիս (թէկուզ ի միջի այլոց) մենք պէտք է մի որեւէ տեսակէտով ղեկավարուենք: Օրինակ տեսնում ենք, որ զիւղի կալուածատէրը կամ կապալառուն հարստահարում է զիւղացուն, զիւղացին գալիս կազմակերպութեան է գանգատուում եւ նրանից է սպասում իր պայմանների թեթեւացումը. արհեստաւորը հարստահարուելով իր վարձողից՝ կազմակերպութեան պաշտպանութեան է դիմում, նոյնպէս կազմակերպութեան պաշտպանութեան է դիմում զիւղացին իւր վաշխառուների, վատ պաշտօնեաների եւ այլ հարստահարիչների դէմ: Այդպիսի դէպքեր բազմաթիւ են բոլոր գաւառներում. ինչպէ՞ս վարուել. անուշադրութեան մատնելով յարուցանում ենք մեր դէմ զիւղացիների, արհեստաւորների դժգոհութիւնը, որովհետեւ դրանք Դաշնակցութեան մասին այն կարծիքն ունեն, որ նա պաշտպան է ճշուող ուսմիկ ժողովրդի շահերին. իսկ բաւարարութիւն տալով՝ յարուցանում ենք հակառակ կողմի դժգոհութիւնը, որոնց նպատակները եւ աջակցութիւնը նոյնպէս կարեւոր են մեզ՝ մեր քաղաքական կուուի համար. հետեւաբար, քանի որ այժմ դասակարգային պարզ կուու յայտարարելով մենք պիտի զրկուենք մեր զգալի մասից եւ մեր դէմ յարուցանենք ներան, մինչդեռ Տանկահայաստանի հասունացած հարցի լուծումը պահանջում է ուժերի համախմբումը եւ միահամուռ գործունէութիւնը, ուստի լաւ է առ այժմ տ-

նորոշ թողնել այդ խնդիրը, խնդրի նկատմամբ առաջնորդուելով եղած ընդհանուր Ծրագրով:

(10).— Կարծում էք, որ Ջրբ. ներկայացուցիչի բերած դէպքերը ամէնուրեք տեղի են ունենում եւ եթէ ամէն տեղ չեն լսուում բողոքներ ու տրտունջներ, դրա պատճառը զիտակցութեան պակասութիւնն է. ահա այդ զիտակցութիւնը պէտք է զարթեցնել եւ զարգացնել սոցիալիստական հողի վրայ:

Նախագահ.— Տնտեսական խնդիրները պէտք է երկուսի բաժանել՝ ա) զուտ տնտեսական եւ բ) քաղաքական աստառ ունեցող: Չուտ տնտեսականի մէջ ընդհարուում են դասակարգերի շահերը, իսկ քաղաքական բնաւորութիւն ունեցողների մէջ՝ ընդհարուում են տեղացիների շահերը պետութեան քաղաքական դիտումների հետ: Վերջին դէպքում, որպէս քաղաքական կուուում, մենք կարող ենք միանալ հարեւան ազգութիւնների եւ նոյնիսկ կապիտալիստների հետ՝ ընդդէմ կառավարութեան քաղաքականութեան: Իսկ առաջին դէպքի համար դարձեալ կրկնում է՝ մշակել մի շարք գործնական միջոցներ, որոնցով զիւղացիութեան եւ բանուորութեան դրութիւնը լաւանայ եւ նրանք ազատ մնալով այլ եւ այլ հարստահարութիւններից, կարողանան զարգանալ մտաւորապէս եւ տնտեսապէս:

Բ. ՆՒՍ

Ժլատի ներկայացուցիչը կարծելով, որ դեմոկրատիկական(11) ծրագրի իրագործումը ինքն ըստ ինքեան մի նախադուռն է տնտեսական սոցիալիստական ծրագրի, առաջարկում էր մի կողմ թողնել տնտեսական ծրագիրը եւ բաւականանալ միայն քաղաքական ծրագրով եւ առաջ տանել պործը: Գ. Գ. Նախ. Նաւ.(12) եւ այլ առարկում էին, թէ քանի որ մենք անխուսափելի կերպով հանդիպում ենք կեանքում այդ հարցերին, չենք կարող երես դարձնել ու աչքներս փակել պատասխանելով, թէ դա մեր դործը չէ, մենք դրանով չենք հետաքրքրուում. այդպիսով մեզինք կը հեռացնենք ժողովուրդը եւ եթէ մենք ժողովուրդի շահերի պաշտպանի հաւանականութիւն(13) ունենք պէտք է ուշադրութեան առնենք այդ խնդիրները եւ որոշ ղեկավարող հայեցակէտ ունենանք. իսկ այդ հայեցակէտից ամենաարդարը եւ ուղղամիտը սոցիալիստականն է:

Որովհետեւ դեմոկրատիկ(11) սկզբունքի իրագործումը ինքն ըստ ինքեան բաւական է սոցիալիստական սկզբունքների իրագործման, ուստի մի կողմ թողնելով տնտեսական սոցիալիստական ծրագիրը՝ բաւականանանք ուռ այժմ քաղաքական ծրագրով, իսկ տնտեսական ծրագիրը թողնենք հեռու ապագային:

Ոսկանապատի ներկայացուցիչը առաջարկում էր՝ ընդունելով որպէս քաղաքական ծրագիր Ֆեդերատիւ-դեմոկրատիկ սկզբունքը, դնել որպէս տնտեսական ներպատակ՝ սոցիալիստ դեմոկրատների minimum(14)

իրեւ մեր maximum(15) եւ բաւականանալ դրանով: — Մի քանի նիստերում շարունակելով վիճարանութիւնները՝ Ժողովը վերջապէս եկաւ այն եզրակացութեան, որ Կովկասեան ծրագիրը եւ մանաւանդ նրա տնտեսական մասը նոր լինելով, բաւականաչափ չէ արժարժուած գաւառներում, որպէսզի կարելի լինէր մի վերջնական եզրակացութեան գալ. նա դեռ խակ է եւ շատ պարզարանութիւնների եւ ծեծուելու կարիք ունի: Ուստի, քանի որ դա այնպիսի ծանրակշիռ հարց է, որի այսպէս կամ այնպէս լուծումը կարող է զգալի ազդեցութիւն ունենալ Դաշնակցութեան բախտի վրայ, չչտապել, այլ յետաձգել դրա վերջնական լուծումը հետաւայ(16) Ժողովին, որպէսզի այդ ժամանակաշրջանում գաւառները ուսումնասիրեն, զբաղուեն այդ հարցով եւ նրանց ներկայացուցիչները դան արդէն որոշ տրամադրութեամբ եւ որոշ հայեացքներով ու կարողանան հանդիստ խղճով ձայն տալ այս կամ այն կողմին: Իսկ մինչ այդ, Ժողովը ձայների մեծամասնութեամբ որոշեց՝ Կովկասեան գործի վերաբերեալ, թողնելով հիմնական սկզբունքային հարցերը անփոփոխ ինչպէս Ընդհանուր Ծրագրումն է՝ մինչեւ Ընդհ. Ժողովը, (պարտականութիւն) յանձնել Բիւրոյին եւ Կովկասի Պատ. Մարմինն՝ մշակել մի շարք գործնական միջոցներ որպէս մտաւոր պահանջներ, Դաշնակցութեան Ընդհանուր Ծրագրով:

Անցնելով Կովկասեան ծրագրի քաղաքական մասին, Ժողովը միաձայն ընդունեց Կովկասեան Ֆեդերացիա(7) ուսմակավարական հիմունքներով: Այնուհետեւ հարց դրուեց 1) թէ արդեօք Ֆեդերացիա ազգային թէ տեղական եւ 2) Ֆեդերացիա անկախ թէ Ռուսաստանի հետ կապուած:

Երկրորդ կէտի վերաբերմամբ շատ երկար վիճարանութիւններ տեղի չունեցան եւ բոլորը, բացառութեամբ Ժլատի, ընդունեցին Ֆեդերացիա՝ ազատ Ռուսաստանի հետ կապուած: Իսկ առաջին կէտի վերաբերմամբ, այսինքն ազգային եւ տեղական Ֆեդերացիայի մասին շատ թեր ու դէմ կարծիքներ յայտնուեցան, որոնցից յետոյ հետեւեալ եզրակացութեան եկան, թէ քանի որ Ֆեդերացիայի սկզբունքը իւր մանրամասնութիւններով չի արժարժուել Կ. Կոմիտէներում եւ ներկայացուցիչները չունեն դրա համար մշակուած պատրաստի մի եզրակացութիւն, ուստի այդ հարցն եւս յետաձգել հետագայ Ռայոնական Ժողովներին, սակայն յանձնել Բիւրոյին եւ Կովկասի Պատ. Մարմինն՝ մշակել այդ հարցի մանրամասնութիւնները եւ ուղարկել Կ. Կոմիտէներին ի քննութիւն, որպէսզի հետագայ Ժողովին ներկայացուցիչները դան որոշ եզրակացութիւններով:

Անցնելով Կովկասեան գործունէութեան միջոցներին՝ նախագահը հարցուեց Ժողովին այն համաձայնութեան մասին, որ կայացել է արտասահմանում Ռուսաստանի բոլոր յեղափոխական կազմակերպու-

թիւններին, ի թիւս նոցա եւ Դաշնակցութեան մէջ: Ըստ այդ համաձայնութեան, առաջին նպատակը պիտի լինի ուսական միապետութիւնը տապալել, տալով ազգերին ինքնորոշման ազատ իրաւունք: Այդ առթիւ Ոսկանապատի ներկայացուցիչը յայտնեց, որ եթէ մենք համաձայնութիւն կայացնելով նրանց հետ խոստանանք ակտիւ(17) գործունէութիւն եւ ոչ օժանդակութիւն, այն ժամանակ մենք կարող ենք շատ շեղուել Տանկահայաստանի հարցից, մեր ոյժերի մեծագոյն մասը կը տարուի այդ հարցով ի վնաս տանկահայկական գործի:

Նախագահ.— Մենք կարեւոր ուշադրութիւն դարձնելով տանկահայկական խնդիրն, միեւնոյն ժամանակ չենք կարող անուշադրութեան տալ Կովկասը, քանի որ այստեղ եւս արդէն բաւական հրատապ է դառել խնդիրը եւ շափազանց զգալի՝ ճնշումները: Ուստի պէտք է երկուսի վրայ էլ ուշք դարձնենք ըստ կարեաց պահանջի, մանաւանդ որ այստեղի կուուի համար մեզ հարկաւոր կը լինի տեսնել եւ շատ այնպիսի պատրաստութիւններ, որ պէտք չեն լինելու Տանկահայաստանի կուուի համար: Բացի այդ, հենց նոյն տանկահայկական հարցի յաջող լուծման համար էլ նպատաւոր է ուս միապետական ռեժիմի թուլանալը եւ տապալու-

մը: Վերջ ի վերջոյ ձայների մեծամասնութիւնը ընդունեց այն համաձայնութիւնը, որ կայացրուել է արտասահմանում յեղափոխական կազմակերպութիւնների հետ:

Անցնելով տնտեսական կուուի միջոցներին, Ժողովը կանգ առաւ այն խոշոր շարիքի վրայ, որ է ուս գաղթականութեան ուժեղ հոսանքը դէպի Կովկաս՝ կառավարութեան հովանաւորութեամբ: Բոլորը միաբերան վկայում էին, որ Կովկասի հողերը հազիւ հազ բաւականութիւն տան տեղացի ազգաբնակչութեան, եթէ հասարակութեամբ եւ արդարութեամբ բաժանուեն, մինչդեռ կառավարութիւնը տեղացիներին թողնում է հողազուրկ կամ սակաւահող, իսկ ուս գաղթականներին բերում է եւ առատ հողեր բաժանում. դա ամենամեծ անարդարութիւնն է, որի դէմ կուուելը կովկասցիների ամենաարդար իրաւունքն է: Գաղթականներին Կովկասում բնակեցնելիս երկու տեսակ դէպք է պատահում. ա) Կառավարութիւնը խլում է տեղացիների հողեր, որոնցով նրանք օգտուելիս են եղել տարիներից ի վեր այս կամ այն պայմանով եւ տալիս է գաղթականներին. բ) Ազատ հողերը, որ խնդրում են սակաւահող տեղացիք՝ օգտուելու համար, կառավարութիւնը մերժում է եւ պահում է յատկապէս գաղթականներ բնակեցնելու համար: Այս ծանրակշիռ հարցը նոյնիսկ պետական շրջանների մտածմունքի նիւթ է եւ նոյնիսկ այստեղ կան արդարամիտ մարդիկ, որոնք պնդում են, թէ պէտք է նախ զոհացումն տալ տեղացիներին, ապա եթէ աւելանան հողերը, տալ եւ ուս գաղթականներ-

րին: Ժողովը անհրաժեշտ դատաւ այս շարքի դէմ ամէն կերպ մաքաւել: 2) Հարկերի վերաբերմամբ, Ժողովը մերժեց անուղղակի հարկերի սխտեմը(18) եւ որոշեց պահանջել անող կեամտային հարկի սխտեմը: որոշեց նաեւ՝ 3) դիւրութիւններ տալ գիւղացիներին հողերը դնել ի սեփականութիւն եւ ճնշում գործ դնել կալուածատէրերի վրայ եթէ նրանք արգելք հանդիսանան: 4) Տեղական բանկերը(19) շատացնել վաշխառուների դէմ մաքաւելու համար: 5) Կօօպերատիւ(20) ձեռնարկութիւնները խրախուսել Ժողովրդի մէջ: 6) Պահանջել կառավարութիւնից, որ վերացրի ամենայն մի արտօնութիւն(21) եւ բոլոր քաղաքացիները հաւասար լինեն օրէնքի առաջ: Աւելի մանրամասնութիւնները կը մշակեն Բիւրոն եւ Կովկասի Պատ. Մարմինը:

Որոշուեց Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէն այսուհետեւ անուանել Հ. Յ. Դ. Կովկասի Պատասխանատու Կեդր. Կոմիտէ («Քաւքասկի Օղվըպ-թէթվէնըյ Յենթրաւնըյ Քամիթեթ Արմանս». Ռեվոլուց. Փարթիի Դ. »): Երեք ձայն ընդդէմ հինգի ցանկութիւն յայտնեցին որ Բիւրոն եւ Կովկասի Պատ. Կեդր. Կոմիտէն միացուին: Միաձայն որոշուեցաւ, որ Կովկասի Պատ. Կ. Կոմիտէի մէջ մի ազատ անդամ լինի:

Որոշուեցաւ, որ մինչեւ առաջիկայ Ընդհ. Ժողով կայանալը Բիւրոն եւ Կովկասի Պատ. Կ. Կոմիտէն սոցիալ-քաղաքական հարցերի մասին բորչիւրներ, օրակառ կերպով գրած(22), հրատարակեն, որոնցով Ժողովուրդը կարողանան ծանօթացնել այդ հարցերի հետ: Այդ հրատարակութիւնների մէջ... (23):

Գ. ՆԻՍ, 12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

ԵՐԿՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ (ՏԱԿՏԻԿԱ)

Նախագահը Ժողովը բացեց, նկարագրելով համառօտ կերպով Երկրի այս տարուայ գործունէութիւնը եւ քաղաքական այն հանգամանքները, որոնք անհրաժեշտ են դարձնում որեւէ փոփոխութիւն մտցնել մեր տակտիկայի մէջ: Նախ քան բուն խնդրին անցնելը, նախագահը առաջարկեց Կ. Կոմիտէների առաջարկները այդ հարցի վերաբերմամբ դնել Ժողովի առաջ եւ ապա դասաւորելով, անցնել վիճարանութեան: ՈՍ-ԿԱՆԱՊԱՍԸ առաջարկում է իրբեւ ընդհանուր սկզբունք՝ Դաշնակցութեան ամբողջ բարոյական եւ նիւթական ոյժը մի որոշ ժամանակաշրջանում (2-3 տարի) կեդրոնացնել միմիայն մի խոշոր ձեռնարկի վրայ, մի շօշափելի եւ խոշոր գործ ստեղծելու համար (Կեդրոնացում գործի — հակառակ մինչեւ այժմ ընդունուած կեդրոնացում վայրի), եւ իրբեւ կոնկրետ(8) առաջարկ դնում է Սպայի ծրագիրը(24), որոշ փոփոխութիւնների ենթարկուած, առաջարկելով միաժամա-

նակ ընտրել մասնագէտ եւ փորձուած ընկերներից մի մասնախումբ, յատկապէս այդ ծրագիրը ուսումնասիրելու համար, դնելով նրանց տրամադրութեան տակ մինչեւ 10.000 ռուբլի: Իսկ այն վայրերում, որտեղ որ արդէն ձեռնարկած են որեւէ գործ, տալ նիւթական ոյժ այնքան՝ որ կարողանան մնալ միայն:

ՄԵԾ ՔԱՂԱՔԸ նախ բողոքեց Արեւել. Բիւրոյի դէմ, որ մինչեւ այժմ Երկրի գործունէութեան մասին իրանց գիտակ չեն պահել եւ այդ իսկ պատճառով, չունենալով Երկրի դրութեան մասին որեւէ տեղեկութիւն, անձեռնհաս են համարում իրանց՝ տակտիկայի մասին որեւէ բան ասել:

ՋՐԱՒԵՐԴ ԵՒ ՔԱՐ.— Չունենալով ճիշդ տեղեկութիւններ Երկրի տեղագրութեան եւ այժմեան դրութեան, անձեռնհաս են համարում տակտիկայի վերաբերմամբ մի դրական բան ասել, դրա համար առաջարկում են այդ գործը յանձնել Շտաբին (առանձին առաջարկ) Ընդհ. Ժողովի ընդգծած սահմաններում, ուսումնասիրել եւ գործի ծրագիր կազմել. իսկ մինչ այդ ռազմական ոյժ ներմուծել Շ. Իրբեւ յարմար վայր կեդրոնացման(25):

ՄՐԳԱՍՏԱՆԸ առաջարկում է առանձին ուշք դարձնել Ընդհ. Ժողովի այն որոշումների վրայ, որոնք մինչեւ այժմ չեն գործադրուել, այսինքն տեւորիստական գործողութիւններ Երկրում՝ թուրք պաշտօնեաների դէմ, խմորային(26) ցոյցեր ծովափնեայ քաղաքներում եւ ռազմածրագրի տեղափոխութիւն Երկիր, գլխաւորապէս Շ., իրբեւ մէկը յարմար վայրերից, — պարտիզանական կռիւներ Երկրի զանազան վայրերում՝ յեղափոխական ոգին վառ պահելու համար. անհրաժեշտ են համարում Պարոյրի(27) վերադարձը Երկիր:

Թեթեւ վիճարանութիւնից յետոյ, վերոյիշեալ առաջարկները նախագահը բաժանեց հետեւեալ երեք տեսակի.— 1) Գործունէութեան կեդրոնացում մի ձեռնարկի վրայ. 2) Չուտ ցուցական գործունէութիւն ծովափնեայ քաղաքներում՝ եւրոպական շահերը վնասելու նպատակով եւ 3) Հին տակտիկը — կեդրոնացում Երկրում եւ ծովային ցոյց իբր արձագանգ:

Ոսկանապատի առաջարկութիւնը զնոդները պնդում էին, որ մեր 15 տարուայ յեղափոխական գործունէութիւնը մինչեւ այժմ մի բանի է միայն յանգել, — վառ պահելու յեղափոխական ոգին տաճկահայ Ժողովրդի մէջ եւ ոգեւորելու դրսի ուժերին: Այժմս բաւ պէտք է համարել այդ եւ անցնել ուղղակի ազատագրութեան բուն գործին. դա վեհ նպատակ է եւ մեծ ձեռնարկ է պահանջում. մեր ուժերը այնքան քիչ են, որ մենք անկարող ենք զանազան ձեռնարկների վրայ գործ դնելով մի վեհ գործ ստեղծել(28). անհրաժեշտ է մեր բոլոր ուժը թափել մի ձեռնարկի վրայ միայն՝ դրական արդիւնքի հասնելու համար: Մեր յեղափոխական անցեալը ցոյց է տալիս, որ փոքր ի շատ յաջողութիւն

ենք գտնում այն ժամանակ, երբ ուժերս մի ձեռնարկի վրայ ենք գործադրում (Բանկ Օտոման, Պանասոր): Մի որեւէ ձեռնարկի յաջող իրագործումը ունի նաեւ ուղեւորող, գործը կենդանացնող նշանակութիւն: Քանի որ մինչեւ օրս Դաշնակցութիւնը սխտեմով է գործել, անհրաժեշտ է այդ սխտեմը փոխել, նոր դիժ մտցնել գործի մէջ, դրա համար ի նկատի ունենալով վերոյիշեալը եւ այլ հանգամանքներ, առաջարկում են ընդունել Սպայի ծրագիրը որոշ փոփոխութեամբ, այսինքն Շ եւրոպական միջամտութիւնը առաջ բերել(29): Ի հարկ է, սա չէ կարող մշտական տակտիկան լինել, այլ մի որոշ ժամանակաշրջանի (3-4 տարի) դործ: Վերոյիշեալ առաջարկ ձեռնարկը ուսումնասիրելու, գործի տեսնիկական բոլոր պայմանները քննելու եւ այդ ձեռնարկը ի կատար ածելու համար, պէտք է ընտրել մի մասնախումբ (շտաբ) նոր մասնագէտ եւ հին փորձուած ուժերից, որոնց տրամադրութեան տակ պէտք է դնել մի որոշ գումար, անմիջապէս ուսումնասիրութեան գործին ձեռնամուխ լինելու համար:

Վերոյիշեալ առաջարկութեան հակառակորդները, չխտելով հանդերձ, որ մեր երկիրը անհրաժեշտ է պատերազմական տեսակէտից զուտ մասնագէտների ձեռքով ուսումնասիրել (ո՛չ միայն Սպայի ծրագիրը, այլ եւ Մեծ-Հայքի բոլոր այն վայրերը, որտեղ կուռի համար անհրաժեշտ կը համարուի) ուրեմն ե՛ւ շտաբի(30) ընտրութեանը եւ փող յատկացնելուն համաձիտ լինելով, մերժում են մեր բոլոր ուժերի կեդրոնացումը մի ձեռնարկի վրայ այն առարկութեամբ, որ մեր թշնամու հետ համեմատած՝ մենք անհամեմատ թոյլ լինելով, անկարող պիտի լինենք այնքան ոյժ ստեղծել, որ ճակատ առ ճակատ թշնամու դէմ դնենք: Մենք թոյլ լինելով՝ ճկուն պէտք է լինենք եւ թշնամուն հարուածելու մի քանի կէտեր ընտրենք եւ քանի որ մեր դատի լուծումը մեծ մասամբ կախուած է եւ դիպլոմատիայից(31), պէտք է միշտ պատրաստ գործ ունենանք օպտուելու դիպլոմատիայի տրամադրութիւնից. այն ինչ՝ եթէ մեր բոլոր ուժերը մի ձեռնարկի վրայ կեդրոնացնենք, միւս կէտերը պիտի թողնենք: Եւ քանի որ յիշեալ առաջարկը չունի պատճառարանուած հիմքեր եւ լուրջ ուսումնասիրութիւն, եւ մեր հին գործիչների փորձառութիւնը չի տալիս առողջ արգումենտներ(32) այդպիսի մի խոշոր ձեռնարկի յաջող իրագործման, մեծ ռիսկ(33) կը լինի կազմակերպութեան կողմից իւր բոլոր նիւթական եւ բարոյական ուժերը թափել մի ձեռնարկի վրայ, որը 50% շանս(34) չունի յաջող իրագործման, դա կարող է մեծ ռեակցիա(35) առաջ բերել եւ մահացու հարուած տալ գործին. այն ինչ միւս դէպքում, եթէ մի տեղ գործը անյաջող գնայ, մի ուրիշ տեղում յոյս կ'ունենայ:

Բոլոր Ժողովականները շեշտում էին ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը, գտնելով որ մինչեւ

այժմս մեր երկիրը կուռի տեսակէտից չէ ուսումնասիրուած եւ մեր բոլոր ձեռնարկների վիժման զլխաւոր պատճառներից մէկն է (այդ). դրա համար պէտք է ընտրել մի մասնախումբ, տալով նրանց հարկաւոր նիւթական եւ բարոյական աջակցութիւն՝ այդ գործը յաջողութեամբ գլուխ բերելու համար:

Բիւրոյի ներկայացուցիչը յայտնեց, որ թէեւ այդ ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը վաղուց զգալի է, բայց չէ գործադրուել Երկրի դժոխային պայմանների եւ մարդիկ չլինելու պատճառով եւ յայտնեց, որ այդ նպատակով Պարագրութիւնը մի օտար գիտնականի հետ պայմանաւորուել է արդէն եւ շուտով գուցէ ձեռնարկի: Բայց մինչ այդ, մենք յայտնելու ենք մեր կարծիքը Երկրի գործունէութեան մասին առաջիկայ տարուայ համար, աչքի առաջ ունենալով մեր անցեալ գործունէութիւնը եւ առաջարկեց անցնել երկրորդ առաջարկութեան —(36) գործունէութեան: Այս առաջարկը զնոդները շեշտում էին, որ մեր դատի լուծումը կախուած լինելով եւրոպական քաղաքականութիւնից, պէտք է այնպիսի ձեռնարկներ անել, որոնք վնասէին եւրոպացոց անմիջական շահերը եւ գտնում էին որ միայն այդ ճանապարհով հնարաւոր է մեր դատը յաջողութեամբ տանել: Սրան հակառակորդները պնդում էին, որ նախ՝ այդ ձեռնարկները չեն վնասի եւրոպական շահերին, որովհետեւ տաճիկ կառավարութիւնից իրանց բոլոր վնասները կը ստանան եւ երկրորդ, դա անկախ Երկրի գործունէութիւնից՝ կը համարուի մի քանի տաք-գլուխ երիտասարդների գործը, որոնց աջորմամբ էլ գործը կը վերջանայ: Այս առաջարկը բացարձակապէս մերժուեց:

Երրորդ առաջարկը դրուեց վիճարանութեան, Ժողովականների մեծամասնութիւնը առարկեց, որ իրենք անկարող են որեւէ դրական բան ասել, որովհետեւ Երկրի այժմեան դրութեան, անցեալ գործունէութեան եւ տեղական պայմաններին անծանօթ են. ուստի առաջարկուեց Բիւրոյին՝ մի տեղեկագիր ներկայացնել, որով առաջնորդուելով կարողանան մի հետեւանքի հասնել: Այդ իսկ պատճառով Ժողովը որոշեց մի օրով դադարեցնել, միջոց տալով Բիւրոյին եւ միւս մասնախմբերին տեղեկութիւններ ներկայացնելու համար:

20 / XII ԵՐԵՎԱՆ

Բիւրոյի տուած մանրամասն տեղեկութիւններից՝ Ժողովը ծանօթանալով Երկրի ուժերի կեդրոնացման ու մինչեւ օրս ունեցած գործողութիւնների հետեւանքի հետ, անցաւ ապագայում ունենալիք տակտիկայի ուսումնասիրութեանը:

Պատգամաւորներից (Ստ.) առաջարկում էր նախկին կեդրոնացման վայրը թողնել եւ ուժերը կեդրոնացնել Շ.(25) շեշտելով սահմանակից Վրէժից սպարանքների տեղափոխութեան համեմատական դիւրու-

թիւնը, տեղի անտառապատ եւ լեռնոտ դիրքը, համեմատելի քիւրտերից հետո լինելը եւ ռազմական տեսակէտից Երկրի ընկերների տուած կարեւորութիւնը:

Մրգաստանի պատգամաւորը կասկածում է վերոյիշեալ լեռնավայրի կեդրոնացման յաջողութեան եւ Երկրի ընկերների տուած ցուցմունքների — իբրեւ ոչ մասնագէտների —, եւ առհասարակ մեր անզաղանապահութեան մասին:

Ոսկանապատի պատգամաւորը ծանրանալով այն հանգամանքների վրայ, որ ժողովականներից ոչ ոք մօտիկ ծանօթութիւնը չունի առաջարկուած վայրին, որ չի կարելի հիմնուել Երկրից եկած մի երկու ընկերների կարծիքների ու տուած տեղեկութիւնների վրայ, որ տեղացիները հմուտ չեն ղեկավարութեան, որ Երկրի ընկերների առաջարկած վայրը չի համարուել ամենանպատակաւոր կեդրոնատեղին, որ գործողութիւնների դադարեցումն էլ կարող է ժողովրդին ոչակցիայի(35) ենթարկել եւայլն, առաջարկում է վարձով հրաւիրել նոյնիսկ օտարազգի հմուտ ու ռազմական տեսակէտից մասնագէտ գիտնորականներ, ուսումնասիրելու Երկիրը եւ յատկապէս առաջարկուած վայրը, տեղափոխութեան գործերը ու առհասարակ ռազմա-մթերքի գնման տեսակն ու քանակը, եւ կազմել ապագայում ունենալիք գործողութիւնների մանրամասն ծրագիրը — տակտիկան —, եւ մինչեւ այդ մասնագէտների կանգնելը՝ շարունակել ռազմա-մթերքների գնումը, մինչեւ որ ունեցած միջոցներով (հնարաւոր լինի) տեղափոխութիւնը Երկիր, առաջարկուած վայրի մօտակայ շրջաններում. նաեւ ուղարկել Երկիր, ուսումնասիրութեան համար, վերոյիշեալ մասնագէտներին հետ միասին՝ ե՛ւ մեր հին փորձուած ընկերներից մի քանիսին:

Մեծ Քաղաքի պատգամաւորը մասնացոյց անելով Երկրից եկած հակասական տեղեկութիւնները եւ մեր անծանօթ լինելը Երկրին, ու մինչեւ օրս ունեցած կեդրոնացման անյաջողութիւնը, եւ տեղափոխութեան գործերի անյարմարութիւնը, եւ չցանկանալով տաճկահայ ժողովրդի վիճակի ու ճակատագրի հետ խաղալ, անխորհուրդ է համարում կեդրոնացման միջոցով որեւէ գործ անել, թէկուզ իբրեւ արձագանգ Լեռնավայրի եւ Վիշապի գործողութիւններին, այլ առաջարկում է ոյժ տալ միմիայն վերոյիշեալ կէտերի գործողութիւններին, ու ռազմա-մթերք ներմուծել Մեծ Հայք՝ լոկ ժողովրդի ինքնապաշտպանութեան համար: Մրգաստանի պատգամաւորը հիմնուելով ժողովականների անձեռնհասութեան վրայ, մինչեւ օրս ունեցած կեդրոնացման տակտիկայի եւ ապագայի համար առաջարկուած վայրերի առհասարակ ունենալիք գործողութիւնների մասին՝ առաջարկում է հետո մընալ տակտիկայի վերաբերեալ պատասխանատու խընդիրների մասին խօսելուց, այլ շարունակել ռազմա-մթերքի եւ մասնաւորապէս ծայրերի տեղափոխութի-

ւնը, ուսումնասիրել ամառուայ Ռայոնական ժողովին առաջարկուած Սպայի ծրագիրը եւ Ոսկանապատի առաջարկած մասնագէտների խմբին յանձնել տակտիկային վերաբերեալ բոլոր խնդիրները:

Ջրաբերդի պատգամաւորը ծանրանալով կեանքի դառն իրականութեան վրայ, որ հասարակութիւնը չէ տալիս ձեռնհաս մասնագէտներ, միւս կողմից ապացուցեց որ մեր յեղափոխութեան զարգացումը առաջ է գնում իր բնական ընթացքով, որ մեր յեղափոխութիւնը ունեցել է երկու պատմական շրջաններ, որ ինչպէս պատմութիւնը թռիչքներ չի անում՝ նոյնպէս եւ մեր յեղափոխութիւնը հետզհետէ զարգանալով ունեցել է առաջին եւ երկրորդ շրջաններ. այժմ ոտք է դրնում երրորդ շրջանը, որի ժամանակ կարեւոր են աւելի մեծ չափով պատրաստութիւններ ու անհամեմատելի ձեռնհաս մասնագէտ-ղեկավարներ, քան ունեցել ենք նախկին երկու շրջաններում, որի համար եւ կարեւոր է համարում մասնագէտներ հրաւիրել ու գործը նրանց յանձնելը. միւս կողմից նա շեշտում է ե՛ւ այն հանգամանքը, որ մեր դատը կախում ունի ե՛ւ եւրոպական դիպլոմատիայից(31), ուստի անհրաժեշտ է համարում Մեծ Հայքի մի յարմարագոյն վայրի կեդրոնացումը, որպէսզի վերջինս, Լեռնավայրի հետ միասին, յարմար մոմենտից(37) օգտուելով կռուի դրօշը պարզեն քաղաքական նպատուղ հանգամանքների ժամանակ, իսկ առ այժմ զբաղուել ռազմա-մթերքի ներմուծումով՝ առաջարկուած վայրի շրջանակից տեղերում՝ մինչեւ մասնագէտների գործի սկսելը:

Նախագահը (Բ.ի ներկայացուցիչ) վերջինիս լրացնելու համար աւելացնում է, որ Դաշնակցութիւնը իր բոլոր գործողութիւնների համար ունեցել է քննադատողներ, որոնք շատ օգտակար են եղել, սակայն երբ ժողովականների քննադատութիւնը չափից անցնում է լքման կարող է հասնել, այլ Բիւրոն համաձայն ընդհ. ժողովի ընդունած կեդրոնացման ուղղութեանը, եւ աչքի առաջ ունենալով որ մեր գործերը կարգադրողները ու Երկրի ներկայացուցիչները անբարեխիղճ մարդիկ չեն, հետեւողական լինելով ընդհ. ժողովի որոշումներին ու ղեկավարուելով Երկրի ներկայացուցիչների ցուցմունքներով, առաջ է տարել կեդրոնացման ուղղութիւնը եւ ինչպէս ցոյց են տալիս մեր յեղափոխական գործողութիւնները, որ առաջ են գնացել կեանքի պահանջների համեմատ(38):

Մեծ Քաղաքի պատգամաւոր.— Եւրոպական դիպլոմատիայի օժանդակութիւնը որ առաջ գտնում էր օղտակար, այժմ նոյնիսկ միասակար է համարում եւ Երկրի դրութիւնը անորմալ(39) համարելով՝ առաջարկում է Տաճկահայերին թողնել որ նրանք մտածեն ու ստեղծեն ղեկավարներ իրանց ազատութեան համար, եւ գործողութիւնների ինքնիշխան(40) առաջ գնալը եւ տեղացի ուժերի չառաջանալու պատճառը համարելով Կովկասահայերիս՝ առաջարկում է թողնել

ղեկավարութիւնը Տաճկահայերին, իսկ (մեզ) վերապահելով նիւթական և բարոյական օժանդակութիւնը:

Ոսկանապատի պատգամաւորը պնդում է, որ յեղափոխութեան ամենամեծ ցանկութիւնն է եղել Երկրից ուժեր ստեղծելը, որը եւ յաջողուել է բացառութեամբ հմուտ ղեկավարների, եւ որի համար առաջարկում է հմուտ մասնագէտներին հրաւիրել. հիմնուելով իրականութեան վրայ՝ ժողովրդի լքումը բացատրում է աչքի առաջ ունենալով կազմակերպութեան լայն ծաւալ ստանալը. առաջարկում է հետեւեալը, — որովհետեւ անձեռնհաս ենք մի որեւէ վայրի գերակշռութիւն տալու, 1) նախ աշխատենք ռազմա-մթերքը տեղափոխել Ե.ի շրջանը, 2) ոչ-գիտնորական մասնագէտ (ղրկենք) մեր այնտեղի ընկերներին գործակցելու, 3) այժմանից ամէն միջոց գործ առնենք մեր անխիղճները անպայման գաղտնի պահելու եւ 4) բռնենք առ այժմ պահպանողական ուղղութիւնը մինչեւ մասնագէտների գործելը:

Ժլատի պատգամաւորը մեր գործողութիւնների անյաջողութեան պատճառը համարում է անժամանակ սկսելը եւ եւրոպական դիպլոմատիայի վրայ յոյս դնելը. առաջարկում է մեծ քանակութեամբ Երկիր ներմուծել ռազմա-մթերք եւ քաղաքական յարմար մոմենտին(37), փոխանակ Եւրոպայի՝ Եսպոնիային(41) դիմել:

Բիւրոյի անգամ Ս. բացատրում է Ժլատի պատգամաւորին՝ Բարձրաւանդակի կռուի պատճառը, որ տաճիկ կառավարութեան յարձակումն է եղել, եւ եւրոպական դիպլոմատիային(31) դիմելը (78ից սկսած հայկական հարցը միջազգային բնաւորութիւն է կրել):

Ժողովը երկար քննադատութիւնից եւ վիճարանութիւնից յետոյ յանգեց հետեւեալ բանաձեւերին, որոնք ձեւակերպուեցին՝

- 1) Ի նկատի ունենալով որ Երկիրը գտնուում է բոլորովին տարբեր քաղաքական եւ տնտեսական պայմանների տակ, որ Կովկասը համարեա թէ կտրուած է Երկրից եւ բոլորովին անծանօթ՝ նրա պայմանների ու դրութեան հետ, որ մասնաւորապէս Սասունի վիժման Բիւրոյի ցոյց տուած պատճառները ներկայում եւս չեն վերացուած և հաւանականութիւն չկայ, որ այդ պատճառները մօտիկ ապագայում կը վերանան, — հրաժարուել կեդրոնացման եւ առհասարակ որեւէ խոշոր ձեռնարկութիւններից Մեծ Հայքում եւ բաւականաւ ժողովրդին զէնք մատակարարելով՝ ինքնապաշտպանութեան համար: Ստացաւ + 1:
- 2) Լեռնավայրերից ոչ մէկում կեդրոնացում չանել, այլ ամբողջ ժողովուրդը գինել ընդհանուր ապրտամբութեան համար: Ստացաւ + 1:
- 3) Ընդունելով ռազմա-մթերք ու մասնագէտ ուժեր Երկիր մուծելու անհրաժեշտութիւնը, ժողովը յարմար է գտնում այդ ուժերը կեդրոնացնել Լեռնապարում, ի նկատի ունենալով որ վերջինս ամենահաւանական-

րէն ապագայ կռուի բազան(42) կարող է լինել. սակայն նախ քան կռուի ծաւալը եւ ժամանակը որոշելը՝ անպատճառ ձեռնարկել վայրի լուրջ ուսումնասիրութեանը ձեռնհաս մասնագէտների ձեռքով: — Անցաւ 7 ձայնով:

Ժողովը ցանկութիւն է յայտնում որ Լեռնավայրը եւս լուրջ պատրաստուելուց միայն մարտի նշան տայ:

Ժողովը միաձայն ընդունեց Ոսկանապատի պատգամաւորի առաջարկը հետեւեալ ձեւակերպութեամբ, — հրաւիրել յայտնի ռազմագէտներ, պարտիզանական(43) կռիւներին մասնագէտ անհատներ, նոյնիսկ օտարազգի, եւ նոյնանից մեր փորձուած ընկերների հետ կազմել մի գիտնորական շտաբ, դնելով նրանց տրամադրութեան տակ 20·000 ռուբլի իրենց ծախսերի եւ ընտրուելիք Լեռնապարի (կամ ուրիշ վայրի) ու փոխադրութեան գծերի ուսումնասիրութեան համար, — առաջարկելով որ նոքա կազմեն եւ ապագայ տակտիկայի վերաբերեալ գործողութիւնների ծրագիրը եւ ստանձնեն ղեկավարութիւնը:

Հ. Յ. Դ. «Ժլատ» Կոմիտէի ներկայացուցչի առանձին կարծիք.—

«Հ. Յ. Դ. Կովկասեան Երջանային ժողովը 16/XII - 904 թ. նիստում մերժեց «Ժլատ» Կոմիտէի թախանձանքը՝ նոյն Կոմիտէին Կեդրոնականի իրաւունք տալու վերաբերմամբ եւ որոշեց ներկայացնել այդ խնդիրը, իւր բոլոր մանրամասնութիւններով, «Խորհրդի» ժողովի բարի հայեցողութեան, առաջարկելով ինձ միւսնոյն ժամանակ յայտնել իմ կարծիքը նոյն որոշումին կցելու համար: Օգտուելով այդ հանգամանքից՝ համարձակուում եմ ներկայացնել Խորհրդի ժողովին յօգուտ իմ արծարծած հարցի այն բոլոր պատճառաւորութիւնները, որոնց հիման վրայ սակայն ես գտնում եմ անհրաժեշտ յարգել «Ժլատ» Կոմիտէի խնդիրը:

Այն առարկութիւնները, որոնցով առաջնորդուում էր Երջանային ժողովը «Ժլատ» Կոմիտէի խնդիրը մերժելիս՝ հետեւեալներն էին.—

- ա) «Ժլատ» Կոմիտէն բաւարարութիւն չէ տալիս այն ցնդին եւ մի քանի նուազագոյն պահանջներին, որոնք նախատեսուած են 1904 թ. Ընդհանուր ժողովի որոշումների թուում, այն է՝ 50 զինավարժ մարդիկ եւ երեք ինտելիգենտ(44) ուժեր տարեկան:
- բ) Չկայ ոչ մի անհրաժեշտութիւն տալու Կեդր. Կոմիտէի իրաւունքները «Ժլատ»ի Կոմիտէին, քանի որ նա առանց Կեդր. Կոմիտէի դառնալու էլ կարող է եւ պէտք է ձգտի լայնացնել, ընդարձակել իւր գործունեութեան ասպարէզը, մանաւանդ երբ նա առանց այդ էլ օգտուում է մի քանի արտօնութիւններից՝ համեմատած միւս կոմիտէների հետ:
- գ) Եթէ բաւարարութիւն տրուի «Ժլատ» Կոմիտէի պահանջներին, այն ժամանակ տարրական արդարութիւնը պահանջում է Կեդրոնականի իրաւունքներ տալ

եւ միւս շատ կոմիտէներին, որոնք ցննդի տեսակէտից գտնուում են նոյն եւ գուցէ աւելի բաւարար դրութեան մէջ, քան «Ժլատ»ի կոմիտէն:

դ) Որ Կեդրոնական կոմիտէները շատացնելը Կովկասում կը շատացնի Ընդհ. Ժողովում կովկասեան ներկայացուցիչները՝ ի վնաս տաճկահայկական հարցի, որովհետեւ կովկասցիք շատ ձայն ունենալով կարող են Ընդհ. Ժողովում խեղդել Երկրից եկողների ձայնը՝ յօգուտ կովկասեան գործունէութեան:

ե) Որ Արեւելեան Բիւրոն ինքն եկաւ այն կարծիքին, որ անհրաժեշտ է ստեղծել Անդրկովկասից դուրս մի Կեդր. կոմիտէ, բայց չգտաւ Հիւսիսային Կովկասում մի յարմար վայր կեդրոնացման համար:

զ) Որ «Դրօշակ»ի էջերում «Ժլատ» կոմիտէին իբրեւ Կեդրոնական կոմիտէ յայտարարելը (դրամական հաշիւների բաժանմունքում), նոյնպէս Արեւել. Բիւրոյի պատուիրակի նոյն իմաստով յայտարարութիւնը, որը նա արել էր (պաշտօնապէս) «Ժլատ»ի 4 Դեկտեմբերի Երջանային Ժողովում, հասարակ թիւրիմացութիւն է, եւ որ Բիւրոն երբեք չի ճանաչել «Ժլատ» կոմիտէն իբրեւ Կեդրոնական կոմիտէ եւ ոչ ոքի չի յանձնել անել այդպիսի յայտարարութիւն:

Հիմնուելով վերոյիշեալ բոլոր առարկութիւնները վրայ՝ Կովկասեան Երջանային Ժողովը մերժեց բաւարարութիւն տալ «Ժլատ» կոմիտէի այդ պահանջին եւ միայն համաձայնուեց այդ խնդիրը իւր բոլոր մասնաբաժանութիւններով յանձնել Խորհրդի Ժողովի բարի հայեցողութեանը:

Իբր պատասխան այս բոլորի, ես «Ժլատ» կոմիտէի ներկայացուցիչ՝ ասել եմ եւ կրկնում եմ.—

ա) Նախ, չնայելով, որ «Ժլատ» կոմիտէն կարող է եւ պէտք է ձգտի առանց Կեդր. կոմիտէի անուան լայնացնել իւր գործունէութեան ասպարէզը, սակայն նրա գործունէութեան յաջողութիւնը միանգամայն պայմանաւորուած է նրա աւելի անկախութեամբ եւ աւելի լայն իրաւունքներից օգտուելուց. որ եթէ յաջող գործունէութիւնը տալիս է մի որեւիցէ յեղափոխական մարմնին որոշ եւ լայն իրաւունքներ, բայց և այն լայն ու ազատ իրաւունքները առաջ են բերում ինքնաբերաբար մեծ յաջողութիւն եւ ծառայութիւն. իսկ այն հանգամանքը, որ «Ժլատ» կոմիտէն օգտուում է արդէն մի քանի արտօնեալ իրաւունքներից՝ համեմատած ուրիշ կոմիտէների հետ, միայն ապացուցանում է, որ Արեւել. Բիւրոն զգացել եւ զիտակցել է Ժլատում մի յեղափոխական կեդրոն ստեղծելու անհրաժեշտութիւնը:

բ) Երկրորդ՝ եթէ կան այնպիսի կոմիտէներ, որոնք իրանց գործունէութեամբ բաւարարութիւն են տալիս կանոնադրութեամբ պահանջուած ցննդին՝ դրանք ամենայն իրաւամբ կարող են իրանք իրանց յայտարարել Կեդրոնական կոմիտէ, առանց սպասելու Երջանային Ժողովի ճանաչելուն: Այդ իրաւունքը տա-

լիս է իւրաքանչիւր կոմիտէին՝ նոյն կանոնադրութիւնը Ընդհ. Ժողովի:

Ընդհակառակը՝ մի որեւիցէ կոմիտէ Անդրկովկասում, որը ցանկանում է ձեռք բերել Կեդր. կոմիտէի իրաւունքները, (բայց որ) իւր գործունէութեամբ լրացում եւ բաւարարութիւն չի տալիս ցննդի պահանջներին, — չկայ ոչ մի անհրաժեշտութիւն այդպիսիներին տալ Կեդրոնական կոմիտէի իրաւունքներ, որովհետեւ Անդրկովկասի կոմիտէները գտնուում են Կեդր. կոմիտէներից ոչ հեռու, մինչդեռ «Ժլատ»ը կտրուած է ամբողջ Անդրկովկասից: Արծարծելով խնդիրը, «Ժլատ» կոմիտէն բոլորովին չէր ուզում կանգնել կանոնադրութեան հողի վրայ, նա միայն մատնացոյց էր անում այդ քայլի քնական անհրաժեշտութիւնը եւ ապացուցանում էր, որ ներկայ կախումը Բիւրոյից եւ Ոսկանապատի Կեդր. կոմիտէից՝ դժուարացնում եւ նոյնիսկ անհնարին է դարձնում նրա առաջադիմութիւնը:

գ) Երրորդ՝ Ժլատի շրջանը շատ լայնատարած է եւ հեռու թէ՛ Մեծ Քաղաքից եւ թէ՛ Ոսկանապատից. այդ իսկ հանգամանքը ներկայ պայմաններում պահանջում է մեծ կորուստ թէ՛ ժամանակի եւ թէ՛ դրամական, եւ տալիս է այդ քաղաքների հետ յարաբերութեանը պարտականութեան եւ դանդաղութեան քննարկութիւն. որ յիշեալ երկու քաղաքների Մարմինները առանց այն էլ ծանրաբեռնուած են իրանց գործերով և չունեն նոյնիսկ Ֆիզիքապէս ոչ մի հնարաւորութիւն «Ժլատ»ի պահանջները ճշգրտեմամբ եւ անթերի կատարելու, ինչպէս այդ երեւաց անցեալ տարուայ դառն փորձերից. եւ որ վերջապէս նրանք կոմպետենտ(45) չեն կարող լինել մի վայրի գործերում, որի տեղական պայմանների հետ կամ բոլորովին ծանօթ չեն եւ կամ շատ քիչ են ծանօթ:

դ) Չորրորդ՝ որ եթէ նոյնիսկ Կովկասում Կեդր. կոմիտէների թիւը շատացնելը կարող է կովկասեան ներկայացուցիչների ձայների թիւը եւ հետեւապէս ուժը շատացնել Ընդհ. Ժողովում, բայց այդ գերակաշուկութիւնը չէ կարող միայն «Ժլատ»ի մի աւելորդ ձայնը տալը. որ յամենայն դէպս այդ գերակաշուկութեան առաջը չէ կարելի առնել սահմանափակումներով, որը առաջարկում է Բիւրոն հպատակեցնելով Դաշնակցութեան կանոնադրութեան միտքը նրա տառին. որ մինչեւ անգամ, նրա տառացի հասկացողութեամբ, չէ կարելի արգելել, որովհետեւ Դաշնակցութեան կանոնադրութիւնը երկու ձայնի իրաւունք է տալիս այն բոլոր Կեդր. կոմիտէներին, որոնք պահանջածից երկու անգամ աւելի ոյժ են արտադրում, բայց չեն ուզում երկուսի բաժանուել:

Որ Տաճկահայաստանի ձայնի խեղդուելու երկիւղը ի դուր է, որովհետեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը իւր գլխաւոր եւ նոյնիսկ բացառիկ ուշադրութիւնը դարձրել է եւ դարձնում է հենց տաճկահայութեան դատի

վրայ, որ նա շատ լաւ է հասկացել եւ հասկանում հարցի այդ մասի կարեւորութիւնը եւ նրա տրամադրութիւնը այդ տեսակէտից փոփոխութեան ոչ մի տենդենցիա(46) չի ցոյց տալիս:

ե) Վերջապէս ինքը Բիւրոն խոստովանում է, որ Հիւսիսային Կովկասում անհրաժեշտ է մի Կեդր. կոմիտէ ունենալ. ինչ վերաբերում է տեղի յարմարութեան, ճիշդ է, որ «Ժլատ»ը կեդրոնացման վայրի բոլոր նպատակայարմար պայմանները չի ներկայացրել. բայց չպէտք է մոռանալ, որ ինչ էլ որ արուած է Հիւսիսային Կովկասում, արուած է հենց «Ժլատ»ի շնորհիւ, որ ամբողջ այդ վայրում ամենաուժեղ կէտը հենց «Ժլատ»ն է եւ հենց դրա համար էլ նա միայն պէտքական է այդ կեդրոնացման համար. եթէ միաժամանակից յետոյ, Հիւսիսային Կովկասի մի որեւիցէ ուրիշ կէտը աւելի առաջադէմ է «Ժլատ»ից, այդ տեսակէտից եւ կեդրոնացման աւելի յարմար վայր ներկայացնի, ոչ ոք չի խանգարի տեղափոխել կեդրոնը «Ժլատ»ից այդ վայրը: Զէ՞ որ նոյն մտքով առաջարկութիւններ կան հենց Բիւրոյի վերաբերմամբ:

զ) Ինչ վերաբերում է ցննդին, ես արդէն յայտարարել եմ, որ ես արծարծում եմ այդ խնդիրը ոչ թէ Հիմնուելով իրաւունքի վրայ, այլ միայն ստիպուած լինելով անհրաժեշտութիւնից. իսկ եթէ կանգնեք իրաւունքի հողի վրայ, քնականաբար հարց է առաջ գալիս, — արդեօք շատ կան Կեդրոնական կոմիտէներ, որոնք իրանց ոյժով համապատասխանում են ցննդի բոլոր պահանջներին. ուրեմն եւ ինչո՞ւ զիջող չլինել այն Կեդրոնական կոմիտէներին, որոնք ըստ կանոնադրութեան այդ կոչումը եւ իրաւունքը չպիտի ունենան:

Հիմնուելով բոլոր վերը դրածներին վրայ՝ Դաշնակցութեան Խորհրդի առանձին ուշադրութիւնն եմ հրաւիրում հետեւեալների վրայ.—

- ա) Ժլատի բացառիկ եւ առանձնայատուկ պայմանների վրայ.
- բ) Այդ վայրի նիւթականի կարեւորութեան վրայ.
- գ) Այն հանգամանքի վրայ, որ այդ վայրը ներկայացնում է ամենայարմար տեղ ուղղամթերք և զէնք ձեռք բերելու համար.
- դ) Այն հանգամանքի վրայ, որ այդ վայրի հայ ազգաբնակչութիւնը կանգնած է այլասերման եւ ուրիշ տարրերի հետ ձուլման հիմքի վրայ եւ որ անհրաժեշտ են շուտափոյթ եւ կտրական միջոցներ այդ շարիքի առաջն առնելու համար. մի բան, որը կարելի է անել միայն մեր առաջարկած միջոցով.—
- Պոնարհաբար խնդրում եմ, որ Խորհրդի Ժողովը բեկանի
 - ա) Երջանային Ժողովի վերոյիշեալ որոշումը.
 - բ) Ծանաչի Ժլատի կոմիտէի խնդիրը օրինաւոր եւ համապատասխանող Հ. Յ. Դ. շահերին եւ

զ) Տայ Ժլատի կոմիտէին Կեդր. կոմիտէի կոչումը, նրա բոլոր իրաւունքներով եւ արտօնութիւններով:

Հ. Յ. Դ. ԺԼԱՏԻ ԿՈՄԻՏԷԻ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒԹԻՉ՝

Մեծ Քաղաք Դեկտ. 24, 1904 թ.

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13Ի ԱՌԱՊՕՏԵԱՆ ԺՈՂՈՎ

Ներկայ էին համարեա բոլոր ներկայացուցիչները: Ժողովը վճռում է զբաղուել Կարմիր Պաշտի խնդրով: Նախագահի առաջարկութեամբ ներկայացուցիչներից իւրաքանչիւրը պատմում է իւր շրջանում եղած Կարմիր Պաշտի մասին, որից երեւում է, որ «Կարմիր Պաշտ»ի ճիւղեր գոյութիւն ունեն հետեւեալ վայրերում.— Ոսկանապատ, Ջրաբերդ, Քար, Մրգաստան, Մեծ Քաղաք եւ Ապառաժ. շուտով կազմուելու են՝ Նաւահանգստում եւ Ժլատում:

Այդ պատմութիւններից պարզուում է, որ չնայելով «Կարմիր Պաշտ»ը ամէն տեղ համարուում է Դաշնակցութեան ճիւղ, սակայն մի ընդհանուր մշակուած ծրագիր չունի եւ այդ պատճառով չի նկատուում գործունէութեան միօրինակութիւն: Երջանային Ժողովը վճռում է մշակել մի ընդհանուր ծրագիր «Կարմիր Պաշտ»ի բոլոր մասնաճիւղերի համար: Նախագահն առաջարկում է Ժողովին կարծիք յայտնել հետեւեալ սկզբունքի հարցերի մասին.—

- ա) Ինչպէ՞ս պէտք է կազմել «Կարմիր Պաշտ»ը.
- բ) «Կարմիր Պաշտ»ը ո՞ւմ միջոցով պէտք է Ժողովի տեղեկութիւններ վնասուածների եւ օգնութեան կարօտութիւն ունեցողների մասին:
- Այս մասին Երջանային Ժողովը լսելով բոլոր թեր եւ դէժ կարծիքները՝ եկաւ հետեւեալ եզրակացութեանը.—
- Ա) «Կարմիր Պաշտ»ը օգնում է միմիայն վնասուած դաշնակցական գործիչներին, նոցա ընտանիքներին, եւ տաճկահայ Ժողովրդին տառապանքների ժամանակ ամէն կերպով — դատաստանական, դրամական, բժշկական եւ այլն, եւ այլն:
- Բ) «Կարմիր Պաշտ»ի կազմը պէտք է լինի խմբական. խմբերը ընտրում են տեղական վարչութիւն. այդ վարչութիւնը գործում է տեղական Կեդր. կոմիտէի ղեկավարութեամբ: Կեդր. կոմիտէի հետ Կարմիր Պաշտի վարչութիւնը յարաբերութիւն է պահպանում անմիջապէս, եթէ տեղում Կեդր. կոմիտէ կայ, իսկ հակառակ դէպքում՝ տեղական կոմիտէի կամ ենթակոմիտէի միջոցով:
- Գ) Օգնութեան կազմակերպութիւնը և նորա բաշխումը «Կարմիր Պաշտ»ի վարչութիւնը կատարում է

Կեդր. Կոմիտէի առաջարկութեամբ կամ նրա համաձայնութեամբ:

Դ) Հիարմիր Խաչի բոլոր վարչութիւնները իրանց մուտքի 10%ը ամէն ամիս ուղարկում են Բիւրոյին՝ Կեդր. Կոմիտէի միջոցով:

ՄԱՆՕԹ.— Ամիսը մի անգամ Կարմիր Խաչի վարչութիւնները հաշիւ պէտք է ներկայացնեն Բիւրոյին (Կեդր. Կոմիտէի միջոցով), որպէսզի վերջինս իրազեկ լինի կատարուած օգնութիւնների մասին եւ ըստ այնմ հնարաւորութիւն ունենայ տնօրինել իրան հասցրած դուժարները:

Ընդունելով այդ սկզբունքի հարցերը, Երջանային Ժողովը ընտրում է երեք հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որին յանձնարարում է մշակել Կարմիր Խաչի համար մանրամասն ծրագիր եւ ներկայացնել Ժողովի քննութեան: Դրանից յետոյ սկսուում է Բիւրոյի հաշուետուութիւնը, որի ժամանակ նախազահ է ընտրուում ոչ Բիւրոյի անդամ մի ընկեր:

Հաշիւներից պարզուում է հետեւեալը.— 1904 թ. Յունուարի 1ից մինչեւ սոյն թուի Դեկտեմբեր 1ը, այսինքն 11 ամսում Բիւրոն ունեցել է հետեւեալ մուտքը՝

| | ոսր. | կոպ. |
|-----------------------|--------|------|
| Չանազան Կոմիտէներից | 62.749 | 41 |
| Անդամավճարներից | 506 | 10 |
| Աւետիսից | 118 | — |
| Վիճակախաղ եւ նուէրներ | 15.724 | 96 |

Ընդամէնը մուտքի եղել է՝ 79.098 47(47)

Նոյն ժամանակի ընթացքում հետեւեալ ծախսերն են եղել՝

| | | |
|------------------------|--------|---------|
| Ռազմավթերք, նոր ծայրեր | 40.350 | Հատ(48) |
| Նոր կոթեր | 163 | > |
| Հին կոթեր | 180 | > |
| Ատրճանակներ | 8 | > |
| Իւղ | 18 | > |
| Ատրճանակի ծայրեր | 1000 | > |
| Կոթի մասեր | 130 | > |
| (զատուոր եւ մասեր) | | |

ընդամէնը՝ 29.900 ուրբլի:

Բացի Ոսկանապատ ծախսուած 5000ից, տեղափոխուած է Երկիր եւ Եւրոպա 14.797 ուրբլի, որից Եւրոպա՝ միայն 2175 ու.: Հեռագրի եւ այլ ծախսեր՝ 772 ու. 93 կ., գործիչների ճանապարհածախս՝ 2982 ու. 50 կ., անցագրի եւ ապրուստի՝ 3713 ու. 53 կ., պրոպագանդիստների 42 հոգու... (49), 15 զինուորի՝ 800 ու., ահաբեկութեան (3 հատ)՝ 574 ու. 70 կ., տպարանական ծախս՝ 1580 ու., օժանդակութիւն 6 հոգու՝ 430 ու., նպաստ ընկերներին՝ 825 ու., ինքնապաշտպանութեան՝ 1504 ու., իրաւաբանների՝ 1070 ու., բանտար-

կուած ընկերների՝ 180 ու.: Ընդամէնը 11 ամսում ծախս եղել է 61.051 ու. 21 կ.: Մնում է կասուում(50)՝ առ 14 Դեկտեմբերի 1904 թ.՝ 18.047 ու. 26 կ.:

Այս հաշիւները յանձնուեցին քննիչ յանձնաժողովին քննութեան:

Բիւրոն ունի երկու ազատ անդամ համաձայն նախկին Երջանային Ժողովի ցանկութեան: Անդամներից մէկը մէկ ամիս է, որ ստանձնել է գործը, իսկ միւսը վաղուց է, եւ նա չըջել է ամբողջ Կովկասը, բացի Ռուսաստանից:

Այս տարուայ ընթացքում Բիւրոն առաջ է բերել Մեծ Քաղաքում՝ յեղափոխական կազմակերպութիւն եւ Կեդրոնական Կոմիտէ:

Ուղարկել է շրջիկներ հետեւեալ վայրերը՝ Նաւահանգիստ՝ 4 մարդ, Ջրաբերդ՝ 2 մարդ, Հիւսիսային Կովկասի շրջան՝ 3 մարդ, Ժլատ՝ 2 մարդ, Քար՝ 1 մարդ, որը յետ է վերադարձել: Արտասահման ուղարկուած է զինուորական մասնազիտութիւն սովորելու համար 2 մարդ, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման. Երկիր ուղարկել է մի ընկեր, մէկը՝ Վրէժստան եւ մի մարդ էլ Կոուածաղիկ(51):

Այս տարի կատարել է երեք ահաբեկութիւն, բոլորն էլ յաջող (երկու լրտես եւ մի պաշտօնեայ):

Մեծ կարիք է զգացուում մասնագէտ զինագործների. այդ պահանջը բոնելով շատ յարգելի՝ Երջանային Ժողովը ցանկալի է համարում պատրաստել մասնագէտ զինագործներ:

Երջանային Ժողովն առաջարկեց Բիւրոյին ունենալ մի ընկեր քարտուղար, որովհետեւ գրագրութեան գործը այնքան շատ է, որ այն անդամը, որ զբաղուած է դորանով միանգամայն անկարող է բաւականութիւն տալ բոլոր կարիքներին: Երջանային Ժողովը յանձնարարում է Բիւրոյին հրաւիրել մի ազատ ընկեր՝ որին կարելի լինի վստահել բոլոր գրագրութիւնը:

Այնուհետեւ հարց է յարուցուում պրոպագանդիստների(49) պահանջը լրացնելու. դաւառներից ամէն կողմից պրոպագանդիստներ են պահանջում եւ Բիւրոն անկարող է այդ կարիքներին բաւականութիւն տալ: Երջանային Ժողովը այդ հարցը գտնում է շատ կարեւոր, ուստի եւ լինում են մի քանի առաջարկութիւններ:

Առաջարկուում է կազմել ընդհանուր ծրագիր եւ յանձնել այդ ծրագիրները ձեռնհաս մարդկանց մշակութեան. կարելի է յանձնել նաեւ ուսանողութեան, որը աւելի յարմարութիւն ունի գաղափարական հարցեր մշակելու. մշակուած հարցերը ստանալով՝ կարելի է ցրել կոմիտէներին, որպէսզի շրջիկները դրանցով զեկավարուեն: Բիւրոյի անդամներից մէկին ասում է, որ այդ ուղղութեամբ քայլերն արդէն արել են. ուսանողական վերջին համագումարում անցել է մի որոշում, որով եւ ուսանողութիւնը պարտաւորուում է պրոպագանդիստներ ուղարկել Կովկաս:

2րդ Կոմիտէի ներկայացուցիչը յայտնում է, որ իրանք արդէն օգտուել են ուսանողներից՝ կազմելով բանուորների համար դասախօսութիւններ:

Պրոպագանդան(52) լաւ առաջ տանելու համար ցանկալի էր ունենալ հայ յեղափոխութեան պատմութիւնը, որից կարողանային մեր շրջիկներն օգտուել պրոպագանդի ժամանակ:

Ժողովում պարզուում է, որ դաւառներում պրոպագանդիստների պակասութեան պատճառներից մէկն էլ այն է, որ շատ չնչին վարձատրութիւն են առաջարկում նոցա, ուստի ցանկալի է համարուում պրոպագանդիստների վերաբերմամբ շատ էլ ժլատ չլինել:

Բիւրոյի ներկայացուցիչն առաջարկում է ներկայի պահանջը մասամբ լրացնելու համար կազմակերպել Մեծ Քաղաքում կամ մի այլ տեղ պարբերական դասախօսութիւններ՝ մի քանի հարցերի մասին, մեր դաւառական պրոպագանդիստների համար, որտեղ 10-15 օրուայ ընթացքում նոցա կ'աւանդուի մի քանի կարեւոր առարկաներ. իսկ ապագայի համար նա անհրաժեշտ է համարում լուրջ ուշադրութիւն դարձնել մեր ուսանողութեան վրայ, աշխատելով կապել նրան մեր իրականութեան հետ. այն ուսանողութեան, որի մեծամասնութիւնը կարող է հակուել Սոցիալ Դեմոկրատիայի կողմը: Այդ նպատակին հասնելու համար կարեւոր է, որ մենք ուշադրութիւն դարձնենք բարձր դասարանի աշակերտների վրայ. դեռ ուսումնարաններում նոցա մտցնենք մեր կազմակերպութեան մէջ, որպէսզի նոքա ծանօթանալով մայր երկրի պահանջների հետ՝ ուսանող ժամանակն էլ յինակէտ ունենալով այդ կարիքները՝ չբաժանուեն մեր իրականութիւնից: Ժամանակը ուշ լինելով՝ փակուում է Ժողովը:

19/XII ՆԻՍ

ԱՀԱՐԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲՈՒՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐԱՄ ՀԱՍՏԱԲԸ

Ժողովը լսելով ահաբեկումների առթիւ ընտրուած յատուկ յանձնաժողովի զեկուցումը քաղաքական եւ սովորական (մատնիչ, լրտես) տեղորների մասին, կարծիքների փոխանակութիւնից յետոյ եկաւ հետեւեալ եզրակացութեանը, որ քաղաքական տեղորը իբրեւ բողոքի եւ զայրոյթի սուր արտայայտութիւն կառավարութեան ծայրայեղ ճնշումների եւ վնասակար ուղղութեան դէմ, նպատակ պիտի ունենայ սարսափ ազդել կառավարութեան եւ առհասարակ նրա պաշտօնեաների վրայ, միաժամանակ բարձրացնելով Ժողովուրդի յուսահատ եւ լքեալ տրամադրութիւնը, — ահաբեկման ենթարկելով միմիայն ազդեցիկ ու նշանաւոր պաշտօնեաներին, որոնք աչքի կ'ընկնեն իրենց առանձնակի գործ դրած եռանդովը ի վնաս Ժողովրդեան: Ահաբեկման որոշման իրաւունքը վերապահուած

է միմիայն Կովկասեան Պատասխան. Կեդր. Կոմիտէին, իսկ մատնիչներին ու լրտեսներին պատժելու եւ նոյն իսկ տեղորի ենթարկելու իրաւունքը թողնուեց Կեդր. Կոմիտէներին, համաձայն Ընդհ. Ժողովի որոշումների, տալով ազատութիւն իրենց որոշումների մէջ, որ ըստ յանցանքի ծանրութեան ու որակի՝ պատիժներ գործ դնեն վերոյիշեալների դէմ:

Յանձնաժողովի զեկուցումից եւ Ժողովականների ցուցումներից պարզուեց, որ շնորհիւ յեղափոխութեան անունից հասարակութեան մէջ տարածուած ահ ու սարսափի, մեր Մարմինները իրենց շրջաններում օգտուելով վերոյիշեալ տրամադրութիւնից նպատակներ են հաւաքել երբեմն նոյնիսկ սպառնալիքի դիմելով, ուստի Երջանային Ժողովը որոշեց միանգամայն արգելել մեր Մարմիններին այսուհետեւ ուղղակի եւ կամ անուղղակի կերպով ստիպողական միջոցներով դրամ հաւաքելը, վերապահելով այդ իրաւունքը Ընդհ. Ժողովի կողմից ընտրուած յատուկ, ստիպողական միջոցներով դրամ Ժողովող Մարմին(53), խնդրելով որ վերոյիշեալ Մարմինը իր դիմումների մասին իմացում տայ համապատասխան շրջանի Կեդր. Կոմիտէի անդամներից մէկին, թիւրիմացութիւնների ու հակասութիւնների տեղիք չտալու համար:

22/XII ՆԻՍ, ԵՐԵՎԱՆ

Ժողովը զբաղուեց ընտրութիւնների հարցով. ումանք առաջարկում էին Բիւրոն եւ Կովկասեան Պատասխանատու Կեդր. Կոմիտէն փոխադրել Ոսկանապատ, (ուր) երկու Մարմնի համար եւս մարդիկ կան, սակայն Ժողովականների մեծամասնութեան ցանկութեամբ՝ Ոսկանապատը հեռու համարուելով դաւառական կեդրոններից, կարեւոր համարուեց թէ՛ Արեւելեան Բիւրոն եւ թէ՛ Կովկասեան Պատասխ. Կեդր. Կոմիտէն թողնել Մեծ Քաղաքում եւ ուժեր հրաւիրել դրսից, եթէ Մեծ Քաղաքում չլրացուի կազմը: Ժողովը, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման՝ յարմար համարեց բացի Բիւրոյի երկու ազատ անդամներից, ազատ անդամներ ունենալ եւս Կովկասի Պատ. Կեդր. Կոմ.ի համար, ուստի վերընտրեց նախկին Բիւրոյի կազմը, եւ Կովկասի Պատ. Կեդր. Կոմիտէի ընտրութեան համար բաւարար թուով թեկնածուներ չունենալով՝ առաջարկուեց Բիւրոյին եթէ թեկնածուներից կազմել վերոյիշեալ Մարմինը, եւ եթէ յիշեալ եթէ հնարաւոր չլինի՝ հինգ հոգուց բաղկացած Կովկասեան Պատաս. Կեդր. Կոմիտէ կազմել. արուեց Բիւրոյին լրագրութիւն՝ ըստ իր հայեցողութեան դրսից եւս հրաւիրել ձեռնհաս անհատներ Կովկասի Պատ. Կեդր. Կոմիտէի կազմը լրացնելու:

Ապա Ժողովն անցնելով տեղական ծախսերի քննութեան ու Կովկասեան Պատասխան. Մարմնի տրամադրութեան տակ դնելիք դուժարի գործադրութեան

նը, երկար վիճաբանութիւններից ու շրջաններից առաջարկուած տեղական ծախսերի (պրոպագանդատիւններ, շրջիկներ, ազատ անդամ, գինուոր, եւայլն) բիւրճէներէ քննադատութիւնից յետոյ եկաւ հետեւեալ եզրակացութեանը.— Ի նկատի ունենալով, որ ծրագրում մտնելու է կովկասեան ակտիւ(17) գործունէութիւն, կազմակերպութեան ունեցած լայն ծաւալը եւ պրոպագանդի(52) միջոցով նրանց աւելի գիտակցական հիմքերի վրայ դնելու կարիքը եւ ժողովրդի ամենարեւակաւ կարիքները (ինքնապաշտպանական, դատավարական եւայլն), Ժողովն առաջարկում է Խորհրդին՝ Կովկասեան Երջանի ամբողջ մուտքի 30%ը յատկացնել կովկասեան գործունէութեան համար, որից 10%ը թողնել տեղական ծախսերի համար, համաձայն Ընդհ. Ժողովի որոշման, 10%ը թողնել Կովկասի Պատասխանատու Մարմնի տրամադրութեան տակ եւ 10%ը՝ Կ.Կ.ների տեղական ինքնապաշտպանութեան համար: Վրէժի պատգամաւորը ամբողջ 30% էր պահանջում իր տեղական ծախսերի համար, յենուելով իր շրջանի աղքատութեան, որի պատճառով եւ թիչ մուտք է գոյանում, մինչդեռ ծախսերը բազմազան են:

20/XII ՆԻՍ

Հնգուկեաններէ Խնդիրը.— Հնչակեաններէ եւ մեր Մարմիններէ մէջ յաճախ տեղի ունեցած ընդհարումներից առաջ եկած անսխորժ դէպքերի ուսումնասիրութեան առթիւ ընտրուած յանձնաժողովը տուեց իր զեկուցումը. պատճառաբանելով՝ որովհետեւ հիմնովին ծանօթ չեն նրանց կազմակերպութեան, ուժի, ծաւալի ու առհասարակ գործունէութեան հետ, ուստի անհրաժեշտ են համարում, որ մեր Մարմինները մանրամասն քննութեան եւ ուսումնասիրութեան ենթարկեն Հնչակեաններին, եւ այդ առթիւ առաջարկում էր յանձնաժողովը մի շարք հարցեր, որոնք պէտք է լուստարանէին նրանց ուժը, քանակն ու որակը եւ առհասարակ նրանց բռնած ընթացքը իւրաքանչիւր շրջանում, առանձին-առանձին Բիւրոյի միջոցով հասցնել Խորհրդին՝ մինչեւ եկող Յունուարը:

Ժողովականներից ոմանք անյարմար եւ նոյնիսկ վտանգաւոր էին համարում այդպիսի մանրամասն ուսումնասիրութիւնը, որպէսզի տեղիք չտրուի Հնչակեաններին աւելի զբաղուելու Դաշնակցութեան դէմ եւ վերոյիշեալներին եւս փոխադարձաբար զբաղուելու Դաշնակցութեան ուժերի ուսումնասիրութեամբ, որով թերեւս կառավարութեան նպաստած լինէին մեր ուժերի քանակի մասին գիտակից անելու, չնորհիւ մեր ամենաթոյլ կողմի — անզաղտնապահութեան: Ուստի Ժողովը երկար վիճաբանութիւններից յետոյ ցանկութիւն յայտնեց ուսումնասիրութիւնը կատարել զաղտնապահութեան ամենածայրայեղ միջոցները ի գործ դնելով, նոյնիսկ մեր կոմիտէներից (գաղտնի), յանձ-

նարարելով, որ այդ գաղտնի ուսումնասիրութիւնը կատարուի միմիայն Կեդր. Կոմիտէների անդամների ձեռամբ, այն էլ կողմնակի ճանապարհներով, երբ վերոյիշեալներից շրջողներ կը լինեն իրենց շրջանի կոմիտէների, ենթակոմիտէների վայրերը:

Ապա ժողովականներից իւրաքանչիւրը մի առ մի տեղեկացրին իրանց շրջաններում տեղի ունեցած այն դէպքերի մասին, երբ Հնչակեանները անտեղի դիմումներ են արել Դաշնակցութեան պատկանող անհատներին, երբեմն յարգելով վերջիններիս ցոյց տուած նուիրատոմար եւ կամ դաշնակցական լինելու յայտարարութիւնը հեռացել են, եւ երբեմն էլ ապօրինաբար պնդել են իրանց պահանջների վրայ եւ ստիպողաբար իրանց պայմանների բաւարարութիւն տուել, իսկ երբեմն էլ լուկ սպառնալիքով են բաւականացել, երբ տեսել են դաշնակցականների պաշտպանութիւնը: Տուած տեղեկութիւններից երեւաց, որ զանցառութեան դէպքեր եղել են եւ Դաշնակցութեան կազմից, որոնք անմիջապէս ուղղել են իրանց սխալը, երբ պարտուել է թիւրիմացութիւնը: Պարզուեց նաեւ, որ երբեմն չէզոքներից եւս եղել են Դաշնակցութեան անուր շահագործողներ:

Երկար վիճաբանութիւններից յետոյ Ժողովը աչքի առաջ ունենալով, որ Հնչակեանները ներկայումս համարեա ամէն տեղ ունեն կազմակերպութիւններ, որ նրանք ունեն նաեւ նիւթական ու մարտական ոյժ, որ նրանք իրանց յեղափոխական կուսակցութիւն են համարում, թէեւ ոչ-յեղափոխական բարձրութեան վրայ կանգնած, որ անպայման նրանց շարքերում եւս կան մաքուր տարրեր, Ժողովը ցանկութիւն յայտնեց ամենատեղ պրոպագանդայի եւ միջնորդ դատարանների միջոցով ամէն տեղ աշխատել նրանց արարքները հասարակութեան առաջ դնել, եւ ի պաշտպանութիւն դաշնակցականների որոշեց հետեւեալը.— Այն բոլոր անհատները, որոնք մեր Կեդր. Կոմիտէների հայեցողութեամբ դաշնակցական կը ճանաչուեն՝ կազմակերպութիւնը պարտաւոր է այդպիսիներին պաշտպանել Հնչակեանների դէմ, բոլոր խաղաղ միջոցները գործ դնելուց յետոյ միայն դիմելով ծայրայեղ միջոցներին:

Ապա պատգամաւորները շարունակեցին իրանց զեկուցումները Հնչակեանների գործած սխրագործութիւնների եւ վերաւորանքների մասին, որից պարզուեց հետեւեալը.— Հնչակեան խմբերին պատկանող անհատներ երբեմն թոյլ են տուել, անձնական հաշիւներից դրդուած, դաշնակցականների դէմ զէնք գործ դրնելու. Հնչակեան զինուորները երբեմն մասնաճիւղերի (որոշմամբ) եւ երբեմն էլ անկախ մասնաճիւղերի որոշումներից՝ զինուած յարձակումներ են գործել դաշնակցական զինուորների, նոյնիսկ Մարմնի անդամների վրայ ու վերջ դրել նրանց կեանքին: Ետ աւելում էլ Դաշնակցութեան պատկանող անհատներից դաւադրու-

թեամբ են վրէժ լուծել. երբեմն նոյնիսկ բարբարոսաբար, Հնչակեան զինուորները, սրախողխող են արել հայ հասարակութեան զանազան անդամներին: Քրտական սովորութեան յատուկ՝ փախցրել են հայ օրիորդներ, արտատուրել կանանց պատիւը, շատ անգամ գողութեան են դիմել, ոչ մի միջոց չեն խնայել դաշնակցականներին ամէն կերպ վնասելու համար: Նրանք իրանց շարքերը խտացրել են Դաշնակցութեան պատժից փախած եւ արտաբուրած անհատներով, եւայլն:

Ժողովը երկար վիճաբանութիւններից յետոյ՝ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ արտաքին աշխարհի եւ հասարակութեան վրայ վատ կ'ազդէ եղբայրասպան միջոցների դիմելը, որ թուցիկների միջոցով նրանց արած սխրագործութիւնները ու սպանութիւնները (հրապարակելը), նրանց կրքերն աւելի պիտի զրգռեն Դաշնակցութեան դէմ, մի հանգամանք, որ կարող է նրանց առիթ տալ առաւել եւս ստոր միջոցներ դիմելու՝ ընդունեց իրբեւ սկզբունք գործ դնել նրանց դէմ լայն ծաւալով պրոպագանդան ու հասարակական միջնորդ դատարանները, իսկ բարդութիւնների եւ ընդհարումների դէպքում՝ նաեւ խիստ միջոցներ: Բայց որովհետեւ կրքերի զրգուած ժամանակ մեր Մարմինները կարող են սուր միջոցների դիմել, ուստի միաձայն ընդունուեց երկու հարեւան Կեդր. Կոմիտէների խորհրդակցութեամբ գործել համաձայն հետեւեալ որոշումի.— Բոլոր խաղաղ միջոցները սպառելուց յետոյ՝ եթէ ծայրայեղ միջոցների դիմելու կարիք զգացուի, Կեդր. Կոմիտէն պարտաւոր է ժողովի հրահրել երկու Կեդր. Կոմիտէների ներկայացուցիչներին, որոնք հարցը բազմակողմանի քննելով տեղական լիակատար կազմի հետ միասին, կարող են վճիռ արձակել ձայների մեծամասնութեամբ, տեղական կազմին տալով մի ձայնի իրաւունք միայն, որ երկու դրսի ներկայացուցիչների հետ միասին կ'անի երեք ձայն:

Որովհետեւ մեր Մարմինների մի քանի շրջաններում այս կամ այն կերպ օժանդակութեան փորձեր են եղել զանազան յեղափոխական մարմինների, որն էական նշանակութիւն ունի Դաշնակցութեան արտաքին գործունէութեան համար, ուստի Ժողովը միաձայն հաւանութեամբ արգելում է մեր բոլոր դաշնակցական Մարմիններին՝ որեւէ դրամական եւ ռազմական օժանդակութիւն ցոյց տալը այլ եւ այլ մարմիններին, առանց Բիւրոյի կամ Կովկասեան Պատ. Կեդր. Կոմիտէի նախօրօք համաձայնութեան:

- (1) Մշակութային:
- (2) Ընկերակցութիւն:
- (3) Բազմեմի դասակարգը:
- (4) Խորհրդածոզովներում, համաժողովներում:
- (5) Ընկերակցական:

- (6) Երկուութիւնները՝ հակասութեան իմաստով. Կրկնութիւն:
- (7) Համազարնակցութիւն:
- (8) Ատարկայական, շօշափելի: —
- (9) Տեսութիւն:
- (10) Կրճատուած անուց մը, անքնքրանքի:
- (11) Ժողովրդավարական, ասկավարական:
- (12) Հաւանորէմ՝ նախագահն ու նաւահանգստի մերկայացուցիչը:
- (13) Հաւանորէմ սխալ գրուած. պէտք է ըլլայ՝ յաւակցութիւն:
- (14) Նուագադոյն (պահանջներ):
- (15) Ատարկայական (պահանջներ):
- (16) Մէկ բառի միջոց՝ բաց ձգուած:
- (17) Աշխոյժ, գործօն:
- (18) Դրութիւն:
- (19) Դրամատուներ:
- (20) Համագործակցական:
- (21) Պէտք է բուրած ըլլայ առանձնաշնորհաւմի իմաստով:
- (22) Երկրան եւ Կ. Պ. Կ. ընկերային քաղաքական հարցերի մասին առարկայականորէն գրուած պրակներ (գրքայիկներ) հրատարակեմ:
- (23) Տոյ մը՝ պարագ ձգուած:
- (24) Անորոշ: Արդեօ՛ք զինուորական վարժարանի ծրագրն է: Բոլոր պարագաներում, յեղափոխական որոշ ծրագրի մը ծածկանումն է անկասկած:
- (25) Ե., — Ետմ, Ետմիք, — վաստակական:
- (26) Ուժեղակային:
- (27) Պարայր, — Անքրանքի յեղափոխական ծածկանումը:
- (28) Տուած եմք անփոփոխ.— արդեօ՛ք պէտք է ըլլայ ըյայտ դնելով:
- (29) Տուած եմք անփոփոխ:
- (30) Սպայակոյտ, զինուորական զեկավար մարմին:
- (31) Դիւանագիտութիւն:
- (32) Փաստարկութիւններ, պատճառաբանութիւններ:
- (33) Վտանգ:
- (34) Հաւանականութիւն:
- (35) Հակազդեցութիւն:
- (36) Մէկ բառի միջոց՝ բաց ձգուած:
- (37) Պահ:
- (38) Անջողորէն կը կիրարկեմք, ինչպէս միշտ, փաստաբանութեան ամբիւրակն եւ հարագատ վերաբարդութեան սկզբունքը, մոյնիսկ երբ հայերէնը այնքան անաւար է, իբրև շարագատական կառոյց թէ բաւարքեմք, որքան մերկայ արձանագրութեան մէջ:
- (39) Անքանական:
- (40) Դանդաղութեամբ, կենդանութեան պակասով:
- (41) Զափոմի:
- (42) Խարխալ, կեղծանկար:
- (43) Հրոսակային, ոչ-կանոնաւոր գործի յատուկ:
- (44) Մտաւորական:
- (45) Զեւանաս:
- (46) Զգուում:
- (47) Յա շրջաբերական գրութեամբ տրուած մուտքի հաշիւը — 82783 հուրի եւ 47 կոպէկ — 12 մտաւում համար էր (1-1-004է՛՛ 1-1-005): Տարբերութիւնը հասկնալի է:
- (48) Թիւր կարելի է նաեւ կարգալ շ710850 հասա:
- (49) Քարոզիչներու: «Հոգու» բառէն ետմ մէկ բառի միջոց ձգուած է:
- (50) Դրամարկի մէջ:
- (51) Պարակական Արագատական եւ Պալիս:
- (52) Քարոզչութիւն:
- (53) Յուցական Մարմին:

39.— ՀԱՅ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Կուչ-ըրջարեթի քաղաքում 17384 սմ. չափի բուլբուլի մը վրայ:

Հ. Յ. Դաշնակցութեան Ինքնապաշտպանութեան Կոմիտէն միանգամայն համակրելով բանուորական ամէն մի շարժման, նոյնպիսի համակրութեամբ վերաբերուում է նաեւ ներկայ տեղական գործադուլին: Ուստի նա վերցնում է իրա վերայ այդ բանուորական դատի կազմակերպումը եւ պաշտպանելու է բանուորական անտեսական շահերը ամէն միջոցներով, ներպատեխու է նրա դատի դրական վճռմանը:

Իսկ իւր բանուորներին առաջարկում է, իրբեւ յաջողութեան կարեւորագոյն պայման, լինել համերաշխ բոլոր բանուորներին հետ՝ առանց ազգութեան եւ կուսակցութեան խտրութեան:

Բանուոր դասակարգի անունով մինչեւ այժմ այլ կուսակցութեանց կողմից դրուած պահանջների հետ ընդհանրապէս համաձայն լինելով՝ աւելացնում է կուսակցութեանս ոգուն յատուկ պահանջներ:

Այսպիսով բանուորութիւնը պահանջելու է.

1. 8 ժամեայ աշխատանք:
2. Պայմանագրերի դուրս աշխատանքի վերացում:
3. Երեսները վախտ անընդհատ աշխատութիւնների համար:
4. Սովորական գիշերային աշխատանքների վերացում:
5. Տօների նախընթաց օրը աշխատանքը դադարեցնել ժամը 2ին:
6. Շաբաթուայ մէջ մէկ օր ազատ:
7. Կապալով եւ կապալառուների միջոցով վերցրած աշխատանքները վերացնել:
8. Իւրաքանչիւր դարբին աշխատում է մի ջուրայի վրայ եւ իւրաքանչիւր տօկար մի դադարայի վերայ(1):
9. Վարձատրութեան աւելացումը առնուազն 25 տոկոսով:
10. Աշակերտի օրավարձը լինելու է առնուազն 70 կոպէկ:
11. Արհեստաւորը վեցօրեայ աշխատանքի համար ստանալու է եօթ օրուայ վարձ:
12. Աշխատութեան համար դուրս ուղարկուած բանուորը ստանալու է մէկ ու կէս օրավարձ:
13. Բանուորները հիւանդութեան ժամանակամիջոցում ստանալու են լրիւ վարձատրութիւն:
14. Բոլոր բանուորները անպայման բժշկուելու են նախարդիւնաբերողների խորհրդի հաշուով:
15. Մահացած կամ վնասուած բանուորը կամ նրա ընտանիքը ստանալու է վարձատրութիւն նոյն չափով, ինչքան նա ստանում էր առաջ:

16. Աչքի առաջ ունենալով պետութեան կողմից ձեռնարկելիք բանուորական ապահովագրութիւնը՝ պահանջել, որ այդ անպայման լինի արդիւնաբերողների հաշուից:

17. Ամէն տեսակ տուգանքների անպայման վերացում:

18. Արդիւնաբերողների եւ բանուորների մէջ ծագած վէճերի քննութիւնը յանձնել միջնորդ դատարանին՝ կազմուած երկու կողմի ներկայացուցիչներից, իսկ արձակուած վճիռները պարտաւորեցուցիչ համարել երկու կողմի համար էլ:

19. Բանուորի արձակումը կարող է տեղի ունենալ միմիայն միջնորդ դատարանի որոշմամբ:

20. Խիստ վայելուչ վերաբերմունք դէպի բանուորները: Ծանր պատասխանատուութեան ենթարկել այն անհատներին, որոնք կը վիրաւորեն բանուորի անձնական կամ ազգային պատիւը:

21. Բանուորներ վարձելու եւ արձակելու ժամանակ ազգային խտրութեան միանգամայն վերացում:

22. Առողջապահիկ եւ յարմար բնակարաններ՝ տալով վառելիք, լուսաւորութիւն եւ ջուր:

23. Ձրի եւ բնակարաններին մօտ բազանիք:

24. Բաւարար քանակութեամբ առողջապահիկ կառքեր՝ վիրաւորներ եւ հիւանդներ տեղափոխելու համար:

25. Արհեստանոցները դնել լրովին առողջապահիկ պայմանների մէջ:

26. Ձրի եւ պարտաւորեցուցիչ ուսումն բանուորների եւ արհեստաւորների երեխաների համար. տեղացիների համար՝ դասատուութիւնը մայրենի լեզուով:

27. Իւրաքանչիւր Ֆիրմա պարտաւոր է ունենալ դրադարան, ընթերցարան բանուորների համար, նաեւ ճաշարաններ:

28. Բանուորը ստանալու է լրիւ վարձատրութիւն անգործ մնացած դէպքում, եթէ այդ առաջ է եկել իրանից անկախ պատճառներից, նաեւ գործադուլների ամբողջ ժամանակամիջոցում:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑ.

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆ. ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷ

Բազու, 19 Դեկտեմբերի

(1) Կու տամ ամփոփել: «Պայմանագրեր եւ շահեր» բառերու քով, փակագծի մէջ, աւելցուած է համապատասխան աւսերէն բառը:

39.— ԵՐԱՍԻՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

22x28 սմ. բուլբուլի 5 էջերու վրայ, ձեռագիր, խմբարտիք:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ

Ընկերներ,

Ռուսաստանում գործող կուսակցութիւնների II խորհրդաժողովի մասին ընդհանուր ծանօթութիւն տրուած է «Իրօչակ» Ծրու համարում, ուր եւ բերուած են նրա կողմից ընդունուած քաղաքական եւ սոցիալական(1) պահանջների ծանուցումները: Յառաջիկայում կը հրատարակուեն ընդհանրութեան գիտութեան համար եւս մի քանի շրջաբերականներ եւ որոշումներ: Բայց որովհետեւ կան կէտեր, որոնց մասին չի կարելի հրապարակօրէն մանրամասն խօսել, ներկայ գաղտնի շրջաբերական-նամակով գալիս ենք դրանց վրայ առանձնապէս կանգ առնելու:

Միջկուսակցային Բիւրօ

Դեռ Պարիզում կայացած I Խորհրդաժողովում, որին մասնակցում էին Ռուսաստանի բոլոր յեղափոխական եւ ընդդիմադիր կուսակցութիւնների ներկայացուցիչները (բացի Սոցիալ Դեմոկրատներէից), որոշուած էր ունենալ մի Բիւրօ, որ կապ պիտի պահպանէր բոլոր դաշնակից կուսակցութիւնների միջեւ, եւ գիտակ պահելով իւրաքանչիւրին իր ընդհանուր ընթացքի մասին, պիտի նպաստէր համերաշխ գործակցութեան:

Բիւրօն պիտի կազմուած լինէր կուսակցութիւնների ներկայացուցիչներից եւ գտնուէր Ռուսաստանի N. քաղաքում: Այդ մտադրութիւնը չիրագործուեցաւ այլ եւ այլ պատճառներով, որոնցից զխաւորն այն էր, որ կուսակցութիւնները դեռ իրար լաւ չէին ճանաչուած եւ համերաշխ գործակցութեան պահանջը այնքան հասունացած չէր երեւում, որպէսզի դրա համար յատուկ մարմին պահուէր որեւէ տեղ:

Երկրորդ խորհրդաժողովում միջկուսակցային Բիւրօյի խնդիրը նորից դրուեցաւ, այս անգամ աւելի գործնական հողի վրայ: Բիւրօն մնայուն մարմին չէ՝ մի վայրում ժողովուած, ինչպէս առաջ էր ենթադրուում: Ամէն մի կուսակցութիւն իւր անդամները միջից ընտրում է մի ներկայացուցիչ, որի անունը եւ հասցէն յայտնուած է Բիւրօյի սէկրետարիատին(2):

Սէկրետարիատը կազմում են Բիւրօյի այն անդամները, որոնք գտնուում են X քաղաքում: Նա վարում է ընթացիկ գործերը: Ամէն մի կարեւոր խնդրի համար գրաւոր դիմում է լինում Բիւրօյի բոլոր անդամներին: Անհրաժեշտ դէպքերում որոշուած է հրապարակել Բիւրօյական ժողովներ:

Օժանդակ Կամիտէ

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ վերջերս երրորդական հասարակութեան որոշ խաւերի մէջ տրամադրութիւն կայ գործնականապէս նպաստելու Ռուսաստանի յեղափոխական շարժման, Բիւրօյին յանձնարարուած է կազմակերպել մի օժանդակ Կոմիտէ, որի մէջ պիտի մտնեն նոյնպէս յայտնի դիրք ունեցող եւ հասարակութեան վստահութիւնը վայելող Ֆրանսիացի գործիչներ: Կոմիտէն նպատակ պիտի ունենայ հանդանակութիւն բանալով դրամական նպաստ հայթայթել կուսակցութիւններին, ցարիզմի զոհերին կամ նրանց ընտանիքներին: Նա պիտի աշխատի նաեւ աջակցել զէնք եւ ռազմամթերք ձեռք բերելու գործի մէջ: Երբ Կոմիտէն կազմակերպուի, դրա մասին կը յայտարարուի մի յարմար ձեւով:

Մարտական Կամիտէ

Այս մարմնի առաջարկը արուած է Գապոնի(3) կողմից, որի կարծիքով միապետութիւնը խորտակելու համար անհրաժեշտ է բոլոր կուսակցութիւնների ուժերը համախմբել եւ նրանց մէկ ուղղութիւն տալ: Այդ ուղղութիւն տուողը, նրա ծրագրով, պէտք է լինի Մարտական Կամիտէն:

Խորհրդաժողովը կանխաժամ գտնելով այդ տեսակ մի կենտրոնական մարմնի հաստատութիւնը, բաւականացաւ միայն նրանով, որ ընդունի Գապոնի առաջարկը սկզբունքով: Առաջմ դաշնակից կուսակցութիւնները պէտք է ձգտեն համերաշխ գործակցութիւն հաստատելու այն վայրերում, ուր իրար հետ նրանք չբիւրուում են: Մարտական Կոմիտէի կազմակերպման պէտք է գիմեն այն ժամանակ միայն, երբ դրա անհրաժեշտութիւնը զգացուի գործնական կեանքում:

Գալով ուժերի կենտրոնացման, համերաշխ գործակցութեան եւ փոխադարձ օգնութեան խնդիրներին, պէտք է ասել, որ դրանց մասին խօսուել էր առաջ էլ, եւ աւելի հանգամանօրէն, մի այլ ժողովի մէջ, որ կազմուել էր ներկայ խորհրդաժողովի հրաւերները ուղարկելուց առաջ: Այդ մասնակի խորհրդակցութեան մասնակցում էին, բացի Գապոնից, ուսու Սոցիալիստ Յեղափոխականների, Լեհ Սոցիալիստ Կուսակցութեան եւ Դաշնակցութեան ներկայացուցիչները:

Գապոնը եւ Ռուս. Սոց. Յեղափոխականները այն կարծիքի էին, որ բոլոր կուսակցութիւնները իրենց ուժերը պէտք է կենտրոնացնեն՝ բռնապետութեան դժուարեւորութեան տալու համար: Կեդրոնացած ուժերը ղեկավարելու համար էր, որ Գապոնը առաջարկում էր կազմել Մարտական Կոմիտէ: Լեհ ներկայացուցիչը ուժերի կեդրոնացումը համարեց աննպատակաւարժար՝ լեհական պայմանների տեսակէտից: Նրա համոզմամբ ամէն մի կուսակցութիւն իւր վայրում կուսակցութիւն պիտի ջլլատի բռնապետութեան ուժերը եւ դրանով նը-

պատի յեղափոխական գործին: Մեր ներկայացուցիչները յայտարարեցին, որ Դաշնակցութիւնը խոշոր շարժումների չի դիմի Կովկասում, մինչեւ որ Ռուսաստանի այլ վայրերում հիմնական պատրաստութիւններ տեսնուած չլինեն: Նա առանձին կարեւորութիւն է տալիս բուն Ռուսաստանի կուսակցութիւններին, որոնք գործում են Կենտրոնում: «Կենտրոնական կուսի» Դաշնակցութիւնը պատրաստ է ամէն կերպ աջակցել: Ձի կարող սակայն խոստանալ օգնել մարդկանցով, որովհետեւ մեր կուսակցները իրենց ընդհանրապէս անգոր կը զգան մի անսովոր միջավայրում: Իբրեւ մի կուսակցութիւն, որ որոշ փորձառութիւն ունի գէնք եւ այլ ռազմամթերք ձեռք բերելու գործի մէջ, նա ամէն կերպ կ'աջակցէ միւսներին՝ իւր ունեցած կապերով: Մեր այս վերապահումը պարզելու համար առաջ բերուեցան հետեւեալ հանգամանքները. 1) Դաշնակցութիւնը, իւր գլխաւոր գործունէութիւնը կենտրոնացած պահելով Տաճկահայաստանում, Կովկասին կարող է յատկացնել իւր ուժերի համեմատաբար փոքրիկ մասը: 2) Կովկասում իր դէմ նա ունի մի կատաղի թշնամի, մահմետական ազդարանութեան կոյր տարրերը, որոնց դէմ ստիպուած է լուրջ պատրաստութիւններ տեսնել ինքնապաշտպանութեան տեսակէտից: 3) Կովկասեան Պատասխանատու Կենտրոնական Կոմիտէն, Դաշնակցութեան ապակեղրոնացման սխտեմի հիման վրայ, չպիտի կարողանայ անպայման ենթարկուել Մարտական Կոմիտէի հրահանգներին, եթէ դա գլուխ գալու լինի: Վերջինիս հրահանգները մեր Կոմիտէն պիտի ընդունի իբր առաջարկ:

Հարկ ենք համարում արձանագրել նաեւ մի հանգամանք, որ կայացաւ դաշնակից կուսակցութիւնների միջեւ, — ամէնքը պատուոյ խօսք տուին ցած չղնել գէնքերը, մինչեւ բոլոր կուսակցութիւններն էլ չհասնեն իրենց գլխաւոր նպատակին: Այս խնդիրը դրուած էր Կովկասեան մեր Ռայոնական Ժողովում, ուր որոշուել էր պահանջել մեզ հետ համաձայնութիւն կայացնող կուսակցութիւններից՝ մեզ մենակ չձգել, եթէ իրենք այս կամ այն ձեւով բաւականութիւն ստանան ապագայում: Այն ժամանակ երկիւղ կար մեր ընկերների մէջ, որ կառավարութիւնը կարող է կարեւոր գիշումներ անելով միայն ներքին, ուսական նահանգներում, թուլացնել նրանց ընդդիմադիր ուժը եւ այդպիսով կտրել նրանց ընդհանուր յեղափոխական շարժումից: Իսկ Խորհրդաժողովում Գապոնը վախ յայտնեց, որ չլինի թէ Լեհաստանը, Ֆինլանդիան եւ Կովկասը, իրենց յեղափոխական աւելի մեծ պատրաստականութեան շնորհիւ, ձեռք ձգեն որոշ արտօնութիւններ եւ թողնեն բո՛ւն Ռուսաստանի ճակատագրին: Գապոնի առաջարկին՝ համերաշխութեան դատը պահպանել մինչեւ վերջը, միացան Դաշնակցութեան ներկայացուցիչներն էլ եւ նա ընդունուեցաւ բոլորի կողմից խանդավառութեամբ:

Վերջացնելով մեր տեղեկագիրը, հարկ ենք համարում աւելացնել նաեւ, որ դաշնակից կուսակցութիւնները յոյս ունեն մօտիկ ապագայում իրենց գործնական աշխատանքով միացնել Ռուսաստանում գործող բոլոր յեղափոխական տարրերը: Այն հանգամանքը, որ սոցիալ դեմոկրատ կազմակերպութիւնները բացակայ էին խորհրդաժողովից, չպէտք է կտրի մեր յոյսը ընդհանուր համերաշխ գործակցութեան գաղափարի իրականանալուց: Առանց նպատակ ունենալու կանպ առնել նրանց չմասնակցելու պատճառների վրայ, կ'ասենք միայն այն, որ այս պարագայում քիչ դեր չխաղացին ուս Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան մէջ ծագած ներքին երկպառակութիւնները եւ կուսակցութեան բաժանումը երկու մասերի՝ «Մեծամասնութեան» եւ «Փոքրամասնութեան»(4), որոնցից իւրաքանչիւրը իրեն է համարում օրինականը: Բացի այդ, չպէտք է մոռանալ, որ առաջին խորհրդաժողովին նրանք բոլորովին չէին եկել, իսկ երկրորդին՝ նրանց մեծ մասը գտնէ առաջին նիստին մասնակցեց: Սա արդէն մի քայլ առաջ է սոցիալ դեմոկրատական կազմակերպութիւնների համար: Խորհրդաժողովը որոշած լինելով համերաշխ կալ հաստատել եւ բացակայ կազմակերպութիւնների հետ, յոյս կայ, որ ներկայումս համախմբուած ուժերը կազմեն այն կորիզը, որի շուրջը պիտի հաւաքուի հետզհետէ ցարիզմի դէմ կուսող ընդհանուր յեղափոխական բանակը:

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ (Կնիք)

10 Յուն. 1905 թ.

- (1) Ընկերային, հասարակական:
- (2) Քարտուղարութեամբ:
- (3) Յայտնի աու յեղափոխական բանակայ:
- (4) Թու սոցիալ-դեմոկրատ հօք կուսակցութեան վերջնական պառակտումով, շուտով պիտի յառաջանային պոլշեիկ (մեծամասնական) եւ մեմշեիկ (փոքրամասնական) առանձին կուսակցութիւնները:

4.— Հ.Յ.Դ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎՈՒԹԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Ինչպէս գիտեմք, Գ. Ընդհ. ժողովի որոշմամբ, Դաշնակցութեան Խորհուրդը, կազմուած Բիւրոներու եւ Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու մերկայացուցիչներէն, կը փոխարինէր Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմինը, բացառիկ իրաւասութիւններով ու լիազօրութիւններով (տեսնել էջ 124):

1905ին գումարուած Խորհուրդի միտքերում մասին մոյզպէս մտքեր կը գտնեմք ոչբացեալ Սիմոն վրացեանի բուրձնեան մէջ: Կու տամք մոյզպէս, հետեւեալ կարգով.—

4ա.— Առանձին բուրձնի մը վրայ, մէկ էջեան գրութիւն մը՝ Հ. Յ. Դ. Խորհուրդը վերագրով: Կ'ակնարկուի 1905 Փետրուարի վերջը գումարուած միտքերու եւ կը տրուի հիմն վերականգնու

նաւ միայն (Թոստոմ, Մեք — Օհանջանեան —, Մալլ — ? —, Անդրանիկ — Սաճոյ երեսը — և վաերամ — Լեւոնալայի վաերամը՝ Յ. Գալփայեան —):

4բ.— Յարգալից վեց էջեր գրուող բազումգնիք՝ Խորհուրդի արձանագրութիւններէն, 1905 թ. Խորհուրդը խորագրով: Այստեղ սակայն կը խօսուի 1905 Ապրիլի մասին, եւ մերկայանք աւելի բազմաթիւ են: Առաջինն աւելի քան ամիսով մը բաժնուած մեր մտաշարքում մը արդեօք, թէ՛ պարզապէս բուսկաններու շարքէն: Դժուար է ճշդելը: Գրքայի ձեւով առանձին հրատարակուած կովկասեան Նախագծի յառաջաբանը («Կովկասեան Խորհրդ» կը կրէ Յունիս 1905 բուսկանը: Արդ, կովկասեան Նախագիծը իր վերջնական ձեւին մէջ պատրաստուող 1905ի Հ. Յ. Դ. Խորհուրդի էր, որու միտքերը կրեմն ուրեմն տեսած ըլլալ միջեւ 1905 Մալլ (կամ, ամենէն ուրը, միջեւ Յունիս):

4գ.— Ս. վրացեանի մտքերէն ետք, կու տամք «Կովկասեան Գործունէութեան Նախագիծը» ամբողջութեամբ, առնելով 1906ին ժընն տպուած (երկրորդ տպագրութիւն) պաշտօնական գրքայից:

4դ.— Վերջացնելու համար այս բաժինը, կու տամք նաեւ երկու Բիւրոներու 20 Օգոստոս 1905ի հուաբանակ շրջաբերակները, որ Մարմիններում կը հարգուէր Խորհուրդի որոշումը՝ 1905ի վերջը Ընդհանուր ժողով գումարելու մասին: Պայմաններու բերումով, Խորհուրդի այդ որոշումը պիտի չիրականանար, եւ Հ. Յ. Դ. 4րդ. Ընդհ. ժողովը պիտի գումարուէր Յրդ. Ընդհ. ժողովի ճախատեամ բուսկանէն (1906 Դեկտեմբեր) աւելի՛ եւս ուշ, 1907ի Փետրուար-Մարտ-Ապրիլ ամիսներում, Վիեննա:

4ա.— Հ. Յ. Դ. ԽՈՐՀՈՒՐԴԻ

3րդ. Ընդհ. ժողովը որոշել էր Խորհուրդը գումարել 1904 թ. Դեկտեմբերին, բայց որովհետեւ հերթի էր դրուած Կովկասեան Մրազրի մշակման խնդիրը, եւ (նկատի ունենալով) այդ առթիւ Կովկասի կեանքին ծանօթ մի շարք պատասխանատու ընկերների ներկայութեան անհրաժեշտութիւնը, Արեւելեան Բիւրոն խնդրել էր Արեւմ. Բիւրոյին Խորհուրդը գումարել Կովկասում: Այդ առթիւ Երկրի ընկերների մէջ սկսուեցին բանակցութիւններ, որոնք ձգձգուեցին, եւ Խորհուրդը կարելի եղաւ գումարել միայն 1905 թ. Փետրուարի վերջին, ժըննուած: Ներկայ էին.—

- Արեւմտեան Բիւրո՝ Ռոստոմ,
- Արեւելեան Բիւրո՝ Մհեր (1),
- Կովկ. Ինքնապաշտպ. Կոմիտէ՝ Մալլ,
- Սասունի շրջան՝ Անդրանիկ,
- Լեոնավայրի Պատ. Կ.Կ.ից՝ Վահրամ(2):

Խորհուրդը խմբագրեց եւ ցրուեց երեք վայրերի կարծիքն առնելու համար մի շարք հարցեր, որոնց մէջ առաջին տեղը՝ կովկասեան գործունէութեան հարցը.

«Ի նկատի ունենալով Երրորդ Ընդհ. Ժ.ից յետոյ Ռուսաստանի մէջ տեղի ունեցած քաղաքական-յեղափոխական զօրեղ շարժումները, բռնակալութեան թուլանալը, բոլոր հպատակ ազգերի քաղաքական ընդհանուր պահանջների առաջ դալը, Դաշնակցութեան եւ այլ յեղափոխական մարմինների համերաշխ գործունէութեան փորձերը եւ Կովկասի մայրի անհրաժեշտութիւնը համառուական շարժման մէջ, անհրաժեշտ կը

համարենք նախ քան մի որոշման յանգելը, հարցնել եւ ձեռք կարծիքը հետեւեալ հարցերի մասին.—

1.— Արդեօ՞ք Դաշնակցութիւնը Կովկասի մէջ պէտք է մնայ զուտ ինքնապաշտպանութեան հողի վերայ, ինչպէս կը տրամադրեն Ընդհանուր Ժողովի որոշումները, թէ՛ նա պէտք է այնտեղ եւս հանդիսանայ որպէս մի յեղափոխական կուսակցութիւն, որ յեղափոխական միջոցներով պիտի հետապնդէ որոշ քաղաքական իտէալներ:

2.— Եթէ այո, համաձայն էք արդեօք հետեւեալ բանաձեւին.

ա.— Դաշնակցութեան նպատակն է ձեռք բերել Կովկասում ռաժկավարական դաշնակցութիւն (fédération démocratique), կապուած Ռուսաստանի հետ՝ Կովկասի Դաշնակցութիւնը ապահովող օրէնքներով.

բ.— Տնտեսականի վերաբերմամբ՝ սոցիալիզմը(3) ընդունել որպէս ղեկավարող սկզբունք եւ բանուորութիւնը ու գիւղացիութիւնը կազմակերպել նոյն ուղղութեամբ:

Խորհուրդը զբաղեցնող հարցերն էին Հայ-Թրքական ընդհարումները, Վանի, Փոքր Հայքի գործերը եւ այլն:

Կազմուեց յատուկ Մարմին՝ Կովկասին գէնք մատակարարելու համար, — Հայկունի, Մուս, Սաքո(4), Ֆելիքս եւ Յակոբ, — որի տրամադրութեան տակ դրուեց, շրջանառութեան համար, 20.000 ռուբլի:

- (1) Բժիշկ Լամ Օհանջանեան:
- (2) Յարութիւն Գալփայեան (տեսնել Ա. հատար, ցուցակ ամսագրումներում, էջ 294):
- (3) Ընկերավարութիւնը:
- (4) Երրորդ տարը՝ ամբողջ կրեայ Գալ Եւսոյ Սաքո:

4բ.— 1905 թ. ԽՈՐՀՈՒՐԴԻ

1905 թ. Ապրիլին, ժըննուած, Խորհուրդի գումարում.

Մասնակցում էին՝ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների, Վիչայի (Պոլիս), Բարձրաւանդակի (Սասուն), Կովկասի Պատասխ. (Ինքնապաշտպանութեան) Մարմնի ներկայացուցիչներ եւ Լեոնավայրի (Կիլիկիա) ներկայացուցիչը՝ կիսապաշտօնական.

Ռոստոմ, Համո (Մհեր) Օհանջանեան (Կովկ. Ինքնապ. Մարմին), Սաքո (Ցուցական Մարմին), Լորիս (Թացիկեան?), Անդրանիկ (Բարձրաւանդակ), Վարանդեան, Սարգիս, Ղարիբ (Արեւել. Բիւրո), Վահրամ (Լեոնավայր), Ակունի(1):

Օրակարգի գլխաւոր հարցերն էին «Տաճկահայաստանի տակտիկը», «Կովկասեան նախագիծը» եւ մի շարք այլ հարցեր:

Քննութեան առնուեց տաճկահայկական նախորդ գործելակերպը, — արշաւախուժներ, գինատար խում-

բեր, սահմանից անցնելու դժուարութիւնը, ընդհարումներ, մարդկային, նիւթական եւ բարոյական մեծ զոհեր. անյաջողութիւնները ճնշիչ տպաւորութիւն են անում ժողովուրդի վրայ: Միւս կողմից, ընդհարումներն ու ապստամբութիւնները Եւրոպայի միջամտութիւն առաջ չեն բերում: Սասունը ապստամբեց, արիւն հոսեց, բայց Եւրոպան տեղից չշարժուեց:

Այսպիսի պայմաններում հին տակտիկը խիստ քըննդատուութեան է ենթարկուում (Սաֆօ, Լորիս, Ղարիբ, Համօ, Վարանդեան):

Պաշտպանում են Ռոստոմը, Անդրանիկը, Սարգիսը, որոնք առաջարկում են Վասպուրականը դարձնել կենտրոնացման վայր:

Ռոստոմը գտնում է, որ պէտք է Վասպուրականում պատրաստուել ինքնապաշտպանութեան հողի վերայ, յարձակում չանել եւ սպասել պատեհութիւններին: Հնարաւոր է թուրք-բուլղարական պատերազմ կամ նման մի դէպք. ա՛յն ժամանակ միայն ոտքի ելնել: Պաշտպանում է պայթուցիկ նիւթերով գործունէութիւնը. «ուժ տալու ենք խնձորների պատրաստութեան, ուժանակային գործունէութեան»:

Սաֆոն կարծում է, որ պէտք է հանդիստ թողնել Մեծ Հայքը. պէտք է մեր ուժերը տանել Կիլիկիա եւ ուժ տալ այս շրջանին, տեւական կռիւ առաջ բերել: Ուժ տալ նաեւ ցուցական գործունէութեան: Միաժամանակ զոհանակից փնտռելու ենք Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, կրօնական դաշնակցութիւն կապելու ենք եւրոպական եւ ամերիկեան եկեղեցիներու հետ... մեր երկիրը կը լեցուի եւրոպական եւ ամերիկեան միսիոնարներով եւ մեր գործունէութիւնը կը դերանայ»(2):

Սարգիսը վրդովուում է Սաֆոյի այս «կրօնական դաշնակցութիւնից». «բարոյական սնանկութիւն է ժողովրդի մը համար, որ իր ամենանուիրական զգացումները կը ծախէ»:

Համոն Կիլիկիայի կարեւորութեան համաձայն է, բայց Կիլիկիան չի լուծի Հայկական Հարցը: Կիլիկիայում ապստամբութիւն ծագած դէպքում Հայաստանի որեւէ մասում պէտք է շարժում առաջ բերել: Իսկ գլխաւորը «մեր տակտիկը փոխելու ենք. ցարդ աշխատեցինք թուրքի դէմ կռուիլ, իսկ Եւրոպայի շահերը այնքան ալ վտանգուած չէին, տեղէն չէին շարժած: Կռիւր Եւրոպայի դէմ Տաճկաստանի մէջ՝ քաղաքականապէս եւ տնտեսապէս, — ա՛յն է լինելու մեր տակտիկը»:

Անդրամիկը համաձայն է կեդրոնացումների եւ շարժումների, պայմանով՝ որ իւրաքանչիւր վայրում 200ական հրացան եւ 200-000ական փամփուշտ լինի, այլապէս ձեռնպահ է:

Վիճաբանութիւնները տեւում են մի քանի նիստ, երբեմն շատ բուռն:

Հին տակտիկի քննադատները ասում էին, որ 6-7 տարուայ եւրոպական պրոպագանդը անզօր գտնուեց

դէ՞թ կռուին մասնակցութիւն չունեցող խաղաղ հայ ազգաբնակչութիւնը կոտորածից ազատելու,

որ մեր եւ ուրիշ կուսակցութիւնների երկար փորձերը ժողովուրդը զինելու՝ անցան դրեթէ անյաջող, որ հարեւան քրտերի հետ համերաշխութիւնը անհնար է,

որ Կիլիկիան միակ վայրն է, ուր կարելի է տեւական կռիւ եւ արտաքին աշխարհի միջամտութիւն առաջ բերել,

ուստի հրաժարուել Մեծ Հայքի կենտրոնացման գաղափարից, այնտեղ զբաղուել միայն ինքնապաշտպանութեամբ եւ կենտրոնանալ Կիլիկիայում, որի ուժեղ եւ տեւական ապստամբութեան ժամուն միայն Մեծ Հայքը արձագանգ տայ:

Ոմանք էլ ընդունելով այս պատճառաբանութիւնները՝ առաջարկում էին առ այժմ բաւականանալ միայն Մեծ Հայքի մի քանի կարեւոր վայրերի (Վասպուրական եւ շրջանը) ուսումնասիրութեամբ եւ ամէն կերպ ջանալ վնասել Եւրոպայի շահերին Տաճկաստանում, որով միայն կարելի է առաջ բերել Եւրոպայի միջամտութիւնը:

Այս կարծիքների հակառակողները պնդում էին, որ Մեծ Հայքում ժողովրդական ընդհանուր ապստամբութիւն կարելի չէ եւ կազմակերպութիւնը նման միտք չի էլ ունեցել, բայց հնարաւոր է այնտեղ որոշ կենտրոնացում առաջ բերել,

որ անցեալի մեր անյաջողութիւնները որոշ չափով արդիւնք են մեր միջոցների անբաւականութեան,

որ միայն կիլիկեան շարժումը անկարող է լուծել Հայկական Հարցը,

որ մեր անյաջողութիւնները հետեւանք են ոչ միայն մեր կռուի անտեւականութեան եւ անուժգնութեան, այլ եւ արտաքին միջապային պատճառների. կան մոմենտներ, երբ թոյլ շարժումն էլ կարող է տալ ցանկալի արդիւնքներ, ուստի պէտք է պատրաստ լինել օչտուելու համար յարմար պահից:

Ուստի՝ ամէն կերպ ոյժ տալ Վասպուրականի եւ Մոկսի, Ծատախի, Կարկառի պատրաստութեան գործին, աշխատել այնտեղ ստեղծել դիմադրական ոյժ, անկախ Կիլիկիայից:

Պորհուրդը լսելով այս ամէնը եւ կարդալով ընդհանուր տակտիկի վերաբերեալ էլլէնի, Սիմոնի(3), Վրէժի Կ. Կոմիտէի, Ամերիկայի եւ Եզրիպտոսի ընկերների գրաւոր կարծիքները՝ որոշեց. —

Ա.— «Ի նկատի ունենալով, որ եւրոպական ազդու միջամտութիւններ առաջ բերելու եւ Հայկ. Հարցը լուծելու համար անհրաժեշտ է երկարատեւ ուժեղ դիմադրութիւն, իսկ այդպիսի դիմադրութիւն հնարաւոր է միմիայն լուրջ պատրաստութիւնից յետոյ, Պորհուրդը որոշեց՝

Պոյս տալով ամէն տեսակ կանխաժամ եւ վտանգող որեւէ ընդհարումէ, գլուշաւոր, լիակատար եւ ի-

բական պատրաստութեամբ հայ կռուող ազգաբնակչութեան զգալի մասը գէնքով դիմադրելու կարողութեան մէջ դնել յետոյ, ընդհանուր շարժում առաջ բերել Վասպուրականում եւ Լեռնավայրում:

Ամէն կերպ աշխատել յիշեալ երկու վայրերու շարժումը համաձայնեցնել իրար հետ:

Բ.— Ի նկատի ունենալով Վիշապի ձեռնարկի ահազին կարեւորութիւնը(4) եւ այն վտանգը նրա յաջողութեան դէմ, որ կարող է առաջ բերել Ոսկեհանքում (Իզմիր) առաջ գալիք ցոյցը,

Պորհուրդը որոշում է՝

Ոսկեհանքի ձեռնարկութիւնը կատարել անպատճառ Վիշապի ձեռնարկից յետոյ եւ յատկապէս այն դէպքում, երբ առաջինից սպասուած հետեւանքները յօգուտ մեր Դատի ի դերեւ ելնեն՝ չնորհիւ եւրոպական պետութիւնների անտարբերութեան:

Այս որոշման մասին Յուցական Մարմնի միջոցով յայտնել ի գիտութիւն Ոսկեհանքի գործադիր Կոմիտէին:

Թուրքիոյ եւ որեւէ ուրիշ պետութեան միջեւ պատերազմի դէպքում փութացնել շարժումը Լեռնավայրում՝ Հայկական Հարցը առաջ մղելու համար, նախապէս համաձայնութիւն կայացնելով երկու Բիւրոների եւ նոյն վայրերի Պատասխանատու Մարմինների հետ»:

Համոն առանձին կարծիք է մտցնում, որ «Դաշնակցութեան բոլոր ուժերը եւ միջոցները գործածուեն» եւրոպական շահերի դէմ, «աշխատելով այնպիսի մի դրութիւն առաջ բերել, որ Եւրոպան այլեւս հնարաւորութիւն չունենայ տնտեսապէս եւ քաղաքականապէս օչտուել Տաճկաստանից մինչեւ այն ժամանակ, երբ Հայկական Հարցը կը ստանայ իր լուծումը»:

Սաֆոն, «իբրեւ Յուցական Մարմնի ներկայացուցիչ», բողոքում է «Ոսկեհանքի եւ Վիշապի ձեռնարկների յաջողականութեան վերաբերմամբ» եւ գտնում է, որ այս հարցը Պորհուրդի իրաւասութեան մէջ չէ:

Գ.— 1.— Նկատելով, որ Սեբաստիոյ նահանգը աշխարհագրական եւ տեղադրական տեսակէտից, անտառների եւ լեռների առատութեամբ առանձին յարմարութիւններ է ներկայացնում ռազմական ձեռնարկների համար,

2.— Որ այդ նահանգը հայկական վեց նահանգներից մէկն է եւ ամենից աւելի մօտ է գտնուում Եւրոպային, հետեւապէս այնտեղի անջգերը աւելի հեշտութեամբ կը դառնան քաղաքական աշխարհի սեփականութիւն,

3.— Որ ծովափնեայ դիրքը եւ ծովային յարաբերութիւնների հեշտութիւնը աւելի հնարաւոր է դաճնում ընդհանրապէս կապ պահպանելու եւ մասնաւորապէս անհրաժեշտ անձանց եւ մթերքներու ներմուծումը,

4.— Որ այդ նահանգում կան զուտ հայաբնակ վայրեր, որոնք անմասն չեն մնացել յեղափոխական

պրոպագանդայից, եւ համեմատաբար ազատ մնալով յայտնի հարստահարութիւններից եւ կոտորածներից՝ այժմ էլ յուսատու տրամադրութիւն ունեն,

5.— Որ այնտեղ հայաբնակ վայրերի շուրջը չկան այն բարբարոս քրտական ցեղերը, որոնք այն աստիճան վտանգաւոր են հանդիսանում հայ երկրի միւս վայրերի յեղափոխական գործին,

6.— Որ, վերջապէս, ապագայ որեւէ շարժման ժամանակ որեւէ կէտում ցանկալի է, որ հայաբնակ որոշ վայրեր եւս արձագանգ տան թշնամու ուժերը ջլատելու եւ աւելի մեծ տպաւորութիւն թողնելու համար քաղաքական աշխարհում,

Պորհուրդը որոշում է՝

Սեբաստիոյ նահանգը համարելով որպէս ապագայ շարժման վայր, առանձին ռազմութիւն դարձնել նրա վրայ եւ ուղարկել մէկ կամ մի քանի ձեռնհաս ընկերներ՝ յեղափոխական տեսակէտից ուսումնասիրելու, ինչպէս եւ անհրաժեշտ կազմակերպութիւններ առաջ բերելու յարմարաւոր տեղերում:

Մակեդոնացիների հետ միացած ձեռնարկ

Նկատելով, որ Մակեդոնական Հարցը արդէն զարկ է ստացել՝ չնորհիւ մակեդոնացոց շարժումների, իսկ ընդհակառակն մեր հարցը աւելի նուազ հմայք ունի, նկատելով, որ միացած ձեռնարկը կարող է մեր հարցը նսեմացնել, եւ այլն, Պորհուրդը որոշեց մերժել մակեդոնացոց հետ միացած ձեռնարկ:

Կովկասահայ խնդիր

Ընդունուեց Ռոստոմի կազմած հետեւեալ բանաձեւը, որոշ յաւելումներով.

«Նկատելով,

1.— Որ վերջին Ընդհ. ժողովից յետոյ Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծաւալ,

2.— Որ բռնապետութիւնը արտաքին թշնամու եւ յեղափոխական ու ընդդիմադիր տարբեր հարուածների տակ զգալապէս թուլացել է,

3.— Որ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխութիւնների սկզբում Կովկասը պէտք է բարձրացնէ իր ձայնը,

4.— Որ ներկայ պատմական բոլոր ստիպողականութիւնը թոյլ չէ տալիս սպասել նոր Ընդհ. ժողովին Կովկասի գործունէութեան ծրագիրը մշակելու եւ հաստատելու համար,

5.— Որ, բացի այդ, կովկասեան գործունէութեան որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կռուի ներկայ պայմաններում, համաձայնութեան գալու համար միւս գործող կուսակցութիւնների հետ,

Պորճուրդը որոշեց՝
 ա.— Կովկասեան շարժման հարցում իմքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական Ժողովում արտայայտուած արամադրութեան, ուղարկել դաշնակցական կովկասեան մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական հաստատումը առաջիկայ Ընդհանուր Ժողովին:

բ.— Հրատարակելով ներկայ նախագիծը՝ առաջարկում ենք դաշնակցական բոլոր Մարմիններին եւ ընկերներին ուղարկել մեզ իրենց դիտողութիւնները, որպէսզի Ընդհանուր Ժողովը՝ վերջնական վաւերացում տալու համար, ունենայ իր ձեռքի տակ բոլոր տեսակետների արտայայտութիւնը(5):

Տեղեկանքներ մասին

Պորճուրդը նկատելով՝
 1.— Որ կատարուած տեղորոշումների շարքին մէջ կան այնպիսիներ, որոնք բաւականաչափ չեն հիմնաւորուած,

2.— Տեղի են ունեցել մեծ շեղումներ Ընդհ. Ժողովի տեղորոշումների ընդունած օրէնքներէն,

Կը յանձնարարէ նախ՝
 ձեռնարկել ընդհանուր Ժողովի այս մասին տուած որոշումները, եւ երկրորդ՝

Բիւրոններու եւ Պատասխանատու Մարմիններու միջոցով խիստ քննութեան եւ պատասխանատուութեան ենթարկել շեղումներ կատարող Մարմիններին:

«Իրամ» կամիտէ

Պորճուրդը որոշեց դադարեցնել «Իրամ» կոմիտէի կողմէ նոր դիմումները, մաքրել հին հաշիւները՝ առանց ծայրայեղ միջոցների դիմելու(6):

Ձեռնարկ

— Արտօնել Խմբագրութեան եւ Բիւրոյին՝ «Իրազակ» դարձնել երկշաբաթեայ: Ձեռնարկել մի հանդէսի հրատարակութեան՝ եռամսեայ: Ոյժ տալ բրոշուրների հրատարակութեան յեղափոխական եւ սոցիալական բովանդակութեամբ՝ պատասխանելու այն մեծ պահանջին, որ կայ Ժողովուրդի մէջ:

— Մերժել Ղարիբի հրատարականը եւ իր ապրուստի մասին կանգնել Ընդհ. Ժողովի Բիւրոյի պրոպագանդիստ անդամներու թոշակի մասին տուած որոշումներու վրայ:

— Նկատի ունենալով Կովկասի դէպքերու արտակարգ բնավիճակները, Պորճուրդիս մշակած նախագիծի վաւերացման կարեւորութիւնը եւ Տանկահայաստանի վերաբերեալ հաւանական փոփոխութիւնը՝ Պորճուրդը որոշեց արտակարգ Ընդհ. Ժողով հրաւիրել 1905 տարուայ վերջին:

— Պորճուրդը ծանօթանալով Պալքանեան Կ. Կոմիտէի անդամ պ. Վարդոյի վերաբերմամբ նոյն Կոմիտէի կազմած տեղեկութիւններին՝ որոշեց.

Գտնելով Պալքանեան Կեդր. Կոմիտէի եղբակացութիւնը կատարելապէս արդարացի՝ յայտնել պ. Վարդոյին, որ նա ոչ մի իրաւունք չունի իր մօտ պահել Դաշնակցութեան պատկանող գումարը եւ պահանջել նրանից՝ անմիջապէս հասցնել Արեւմտեան Բիւրոյին:

— Պորճուրդը յանձնարարեց Արեւմտ. Բիւրոյին մղում տալ Յորդանանեանի կտակի հարցին:

— Յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝ խմբագրել եւ հրատարակել Ընդհ. Ժողովի արձանագրութիւնները:

— Վաւերացնել կոմիտէի վերածել Կ. Կոմիտէի(7):

— Վասպուրականի Պատ. Մարմին կազմելու հարցը յետաձգել յաջորդ Ընդհ. Ժողովին:

Վանի Կ. Կոմիտէն լրացնել՝ Սարգիս (Գրիգոր Վարդանեան), Սամսոն եւ Սարգիս Տէր Յովհաննէսեան, որոնք Կոմիտէի հետ տեղում պիտի լրացնեն Կ. Կ. ի կազմը:

Բիւրոն(8) իր կազմից 2 անդամ անց է կացնում Կովկասի Պատասխ. Մարմնի մէջ եւ փոխադարձ պատասխանատուութեամբ վարում Կովկասի գործը:

Բիւրոն(8) իր կազմից 2 անդամ անց է կացնում Կովկասի Պատասխ. Մարմնի մէջ եւ փոխադարձ պատասխանատուութեամբ վարում Կովկասի գործը:

| | պատրաստ կայ | սպասելի | գումար |
|------------------|-------------------|-------------------|----------------|
| Ջրաբերդ | 13.214,23 | 25.000 | 38.214,23 |
| Քար | 6.014,41 | 23.000 | 29.014,41 |
| Մրգաստան | 28.181,35 | 40.000 | 68.186,35 |
| Մեծ Քաղաք | 882,57 | 10.000 | 10.882,57 |
| Նաւահանգիստ | 7.765,78 | 30.000 | 37.765,78 |
| Ոսկանապատ | 15.000 — | 30.000 | 45.000 — |
| Արեւել. Բիւրո | 25.653,18 | 2.159 | 27.813 — |
| Արեւմտ. Բիւրո | 5.000 — | 5.000 | 5.000 — |
| Այգեստան | 82,45 | 5.000 | 5.082,45 |
| Ժլատ | 15.000 — | 15.000 | 30.000 — |
| Նալբանդ | 73,67 | 5.000 | 5.073,67 |
| Եկեղեցի | 1.347,89 | 10.000 | 11.347,89 |
| Հիւսիսակերտ | — | 3.000 | 3.000 — |
| Ապառատ | 3.619,52 | 10.000 | 13.619,52 |
| Վրէժ | — | 5.000 | 5.000 — |
| Պալքան | — | 6.000 | 6.000 — |
| Ամերիկա | 40.000 — | 40.000 | 40.000 — |
| Եպիպոսոս | 4.000 — | 4.000 | 4.000 — |
| Գումար(9) | 116.840,05 | 263.159,95 | 385.000 |

| | |
|-----------------------------|----------------|
| Ելք | |
| Վասպուրական | 80.000 |
| Շամի Մարմին | 20.000 |
| Լեոնավայր | 75.000 |
| Յուլիական (Մարմին) | 30.000 |
| Կովկասի զէնք | 25.000 |
| Ինքն. Պատ. Մարմին | 20.000 |
| Կովկ. Տեղական | 40.000 |
| Արեւել. Բիւրո | 10.000 |
| Արեւմտ. Բիւրո | 22.000 |
| Կարմիր Պաշ | 15.000 |
| Բանտարկեալներ | 10.000 |
| Թղթակից — ուսումնասիրող | 10.000 |
| Պարտ. կոխ. Սերաստիա, Երզնկա | 3.000 |
| եւ Ե. Գարահիսար | 25.000 |
| Զնախատեսուած | — |
| Գումար | 385.000 |

- (1) Սափան կամ Կարմրաքիչը Գ. Ընդհ. Ժողովին Ոսկանապատ — Պաֆու — ներկայացուցիչ Մարտիրոս Մարգարեանն է, որ նոյն Ժողովին ընտրուած էր Յուլիական Մարմնի անդամ: Ղարիբը Ա. Անարանեանն է, Սարգիսը՝ Խաւանթըն Բարսեղեանը (Շամի, Վանայ Սարգիս): Մնացեալները ծանօթ անուններ են, բացի բերեալ Լարիսէն՝ որոնք անուան իր, փակագծի մէջ, գրուած է Թաղանթան կամ Թայիթեան. այսպէս՝ կրնանք տարբերել Երզնկայի՝ որ երբեք չէր Լարիս Միլիթեանն է, Դաշնակցութեան Արտաստեանեան Գործակալութեան ծանօթ գործիչը:
- (2) Տեսնել Սափայի «Կրօնական դաշնակցութեան» առաջադիւրսը: Ընդհ. Ժողովին (էջ 171-173):
- (3) Գրիգորիսի եւ Ս. Ջաւարեանի:
- (4) Կ'ակնարկել Սուլթանի մահափորձին:
- (5) Բաազիօրէն նոյնն է՝ ինչ որ տրուած է շախմատի կովկասեան գործունէութեան գրքի կրկնադրոյցի էջը գրաւոր «Կովկասեան խնդիր» յառաջաբանով: Միակ ապրիլաբանը՝ գրքի կից մէջ ա. որոշման վերջին տողը կ'ըսէ, — «... նրա վերջնական մշակումը եւ հաստատումը...»:
- (6) Բազմաթիւ Յրդ. Ընդհ. Ժողովի «Գործարկի» անդամ բանի հանգանակութիւն» արձանագրութեան հետ (էջ 132):
- (7) Տեսնել այս մասին «Ժլատ» (Հիւս. Կովկաս) կամիտէի դիմումը Խորհուրդին՝ 1904 Դեկտեմբերի Կովկասեան Ռայոնական Ժողովի արձանագրութեան մէջ:
- (8) Պետ է ըլլայ, անշուշտ, Արեւելեան Բիւրոն:
- (9) Թիւրքը տուած ենք նոյնութեամբ, անմիջապէս Ս. Վ. ի նախընտրութեամբ մէջ, որ պետ է ըլլայ 185.835,05, եթէ վերջ տրուած քիւրքը ճիշդ են: Բ. սիւնակի (սպասելի) գումարը պետ է ըլլայ 268.159: Վերջապէս, Արեւմտեան Բիւրոյի, Ամերիկայի եւ Եպիպոսոսի համար, երբեք սիւնակին մէջ տրուած քիւր գումարը չէ առաջին երկու սիւնակներու քիւր: Եթէ այդ երեք անուններու դիմաց ա. սիւնակի քիւրքը գեղեցիկ (ընտանքար՝ 49.000 անրի) 185.835,05 են, կ'ունենանք մտաւորապէս Ս. Վ. ի սիւնակին համար տուած գումարը՝ 116.835,05 անրի: Այդ պարագային նաեւ, ա. եւ Բ. սիւնակներու ընդհ. գումարը կ'ընէ մտաւորապէս 268.159+116.835=384.994 անրի, այսինքն շուրջ 385.000 անրի, ինչ որ կը համապատասխանէ մուսթի եւ Ելքի ընդհանուր արժէքին, մինչ Ս. Վ. ի տուած քիւրքը գումարելով կ'ունենանք՝ 116.840.05+268.159,95=385.000 միայն:

49.— ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Ամբողջութեամբ կու տանք 1906ին ժընեւ հրատարակուած պրակը (բ. տպագրութիւն): Զափ՝ 13.3x19,6 սմ., տպագրեալ 15½ էջ: Կողմի քուրքը՝ կամայ: Կողմն ու ա. էջը կը կրնէ Հ. Ծ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՆ ՎԵՐԱՊԱՐԻՄԵՆ. Կեդրոնը, գիտնական տակ՝ ՆԱԽԱԳԻԾ ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ. վարը՝ «Միթի» Տպարան Հ. Ծ. Դաշնակցութեան, եւ այլն՝ ժընեւ, 1906:

ԿՈՎԿԱՍՍԱՀԱՅ ԽՆԴԻՐ

Հ. Ծ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովը՝ կայացած 1904 թ. սկզբին, ընդունելով մեր կազմակերպութեան մասնակցութեան անհրաժեշտութիւնը կովկասեան յեղափոխական կռուի մէջ, որոշեց այդ վարել առայժմ ինքնապաշտպանութեան հողի վրայ: Ներկայ 1905 թ. գումարուած Հ. Ծ. Դ. Պորճուրդը, նկատելով,

- 1) Որ վերջին Ընդհանուր Ժողովից յետոյ Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծաւալ,
- 2) Որ բնապետութիւնը արտաքին թշնամու եւ յեղափոխական ու ընդդիմադիր տարրերի հարուածների տակ գգալապէս թուլացել է,
- 3) Որ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխութիւնների սկզբում Կովկասը պետ է բարձրացնել իր մայրը,
- 4) Որ ներկայ պատմական բազմի ստիպողականութիւնը թույլ չէ տալիս սպասել նոր ընդհանուր Ժողովին՝ Կովկասեան գործունէութեան ծրագիրը մշակելու եւ հաստատելու համար,
- 5) Որ, բացի այդ, Կովկասեան գործունէութեան որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կռուի ներկայ պայմաններում, համաձայնութեան գալու համար միւս գործող կուսակցութիւնների հետ,

Որոշեց՝
 Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական Ժողովում արտայայտուած տրամադրութեան, ուղարկել Կովկասեան դաշնակցական մարմիններին, ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական մշակումը եւ հաստատումը առաջիկայ Ընդհանուր Ժողովին:

Հրատարակելով ներկայ նախագիծը, առաջարկում ենք դաշնակցական Մարմիններին եւ ընկերներին ուղարկել մեզ իրենց դիտողութիւնները, որպէսզի Ընդհանուր Ժողովը՝ վերջնական վաւերացում տալու համար, ունենայ իր ձեռքի տակ բոլոր տեսակետների արտայայտութիւնը:

Հ. Ծ. Դ. ԱՐԵՎԻՍՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Յունիս, 1906

ՆԱԽԱԳԻԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ

Կովկասեան հայութեան եւ միապետական կառավարութեան միջեւ սկսուած կռիւը մի բնական, անխուսափելի հետեւանք է հայ տարրի առաջադիմութեան եւ այն վայրենի հալածանքներէ, որ ցարիզմը երկար տարիներէ ի վեր մղում է հայ ժողովրդի, իբրեւ ուրոյն, կուլտուրական մի(1) համայնքի դէմ:

Հալածողական այդ քաղաքականութիւնը ամենացայտուն յատկանիշն է այժմեան ռուսական բռնապետութեան. — «Ռուսացման» անուան տակ նա ճարակում է կայսրութեան բոլոր Մայրերը, նաեւ Կովկասը:

Կովկասեան բազմաթիւ ցեղերի շարքում հայ տարրին յատկացուած է մի բացառիկ վիճակ, — նա ամենից աւելի է ենթակայ դիշատիչ ուժերի յարձակումներին. և այդ այն պատճառով, որ հայութիւնը՝ տրնտեսական եւ ընդհանուր կուլտուրական ասպարէզում ցոյց տուած իր թռիչքներով ու մրցման ուժով՝ վաղուց ի վեր դիտուում է իբրեւ առանձնապէս վտանգաւոր տարր ցարիզմի տիրապետութեան համար Կովկասում:

Քսան տարուց ի վեր ռէակցիայի(2) աւերիչ հողմը անզուսպ կատաղութեամբ փչում է մեր դժբախտ երկրի վրայ, հարուածելով ժողովրդի ամենանուիրական ստացուածքներին, ոչնչացնելով ազգային-հասարակական հիմնարկութիւնները, թունաւորելով մտաւոր ու հոգեկան մթնոլորտը, ցամաքացնելով ժողովրդական աշխատանքի բոլոր աղբիւրները:

Եւ հարուածները մնում էին անպատիժ: Կովկասահայ երիտասարդութիւնը, զբաղուած թիւրքահայոց դատով՝ հնարաւորութիւն չունէր որեւէ ձեւով հակազդելու այդ բացառիկ օրէնքներին:

Հայ եկեղեցական գոյքերի յափշտակումը, իբրեւ ուժեղ, ցնցող շարժառիթ, եկեւ խախտելու այդ ձեռնպահութիւնը: Ըմբոստութեան ոգին, տասնեակ տարիների ընթացքում խտացած, կենտրոնացած յեղափոխական գիտակից շրջաններում՝ արտայայտուեց ժողովրդական դիմումը ու անդէն շարժումների ձեւով, 1903 թուի աշնան:

Կեանքը միանգամից փոթորկուեց: Յեղափոխական կազմակերպութիւնը այնուհետեւ ձեռնարկեց լուրջ, սիստեմատիկ աշխատանքի: Հայկական շարժումը Կովկասի մէջ՝ կարճ ժամանակամիջոցում դարձաւ մի շօշափելի Ֆակտոր(3) ամբողջ կայսրութեան ազատագրութեան գործում: Նա այսօր ունի իր զոհերն ու հերոսները, ունի իր յուզիչ մարտիրոսութիւնը: Նա առաջ է դնում անդիմադրելի կերպով, ստանում է յարատեւ, քրոնիկական կերպարանք եւ դառնում է միշտ աւելի ու աւելի յարձակողական: Բռնկուելով մի այնպիսի ժամանակ, երբ չկար պատերազմ, երբ Պլեւէյի երկաթէ ձեռքով՝ բռնակալութեան մեքենան հասել էր իր վերջին ծայր կատարելագործման, երբ լայնատա-

րած կայսրութեան մէջ գերեզմանական անդորրութիւն էր, մերթ ընդ մերթ ընդհատուած ուսանողական ու բանուորական խաղաղ ցոյցերով կամ տեւորական մասնակի փորձերով՝ նա այժմ խրախուսուում է ազատագրական այն վիթխարի հոսանքից, որ այսօր բռնել է ամբողջ Ռուսաստանը, ամբողջ Ահաստանը, Ֆինլանդիան, Կովկասը եւ որ մօտալուտ յաղթանակի խրոխտ գիտակցութեամբ՝ նախագծում է արդէն վաղուան հոյակապ ռամկավարական շէնքը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որ ստանձնել է հայկական շարժման գլխաւոր պատասխանատուութիւնը, մտնում է սերտ յարաբերութեան մէջ Ռուսաստանում ու Կովկասում գործող յեղափոխական սոցիալիստական կազմակերպութիւնների հետ՝ համերաշխ ուժերով մղելու ընդհանուր ազատագրական գործը և իր քաղաքական ու սոցիալական(4) դաւանանքի հետ՝ առաջադրում է իր գործունէութեան նախագիծը:

Յեղափոխական կռուի միջոցով՝ նա ձգտում է դաշնակցական (Ֆէդարատիւ) ռամկավարական մի կազմակերպութեան — ամբողջ Անդրկովկասի համար — ամենադայն տեղական ինքնավարութեամբ: Լինելով բացարձակ հակառակորդ ամէն տեսակ առանձնանորհումների, ազգայնական ամէն տեսակ գերիշխանութեան ու ճնշումների, Դաշնակցութիւնը համոզուած է, որ միմիայն այդպիսի ռամկավարական կազմակերպութեան մէջ՝ կովկասեան այլատարր, այլակրօն եւ այլաբարբառ ժողովուրդները կարող են ապահովուած տեսնել իրենց ուրոյն, ազատ ու անարգել առաջադիմութիւնն ու բարգաւաճումը:

Սակայն այդ քաղաքական պահանջի իրագործումը մեր նպատակի մի մասն է միայն: Մեծ, անգնահատելի վաստակ լինելով հասարակական ընդհանուր առաջադիմութեան տեսակէտից՝ նա չէ կարող, այնուամենայնիւ, սպասել Դաշնակցութեան բովանդակ ծրագիրը: Կայ տնտեսական անհաւասարութեան ոյժը, որ քաղաքական ազատ ուժերի տակ եւս չպիտի թոյլ տայ աշխատաւոր մարդուն՝ վայելելու իր աշխատանքի բովանդակ արդիւնքը:

Պատմական էվոլուցիայի(5) եզրակացութիւնն է այդ:

Կար ժամանակ, երբ մարդկութեան առաջադէմ տարրերը հաւատում էին, որ քաղաքական բռնապետութեան լուծը խորտակուելով՝ կը տիրէր մարդկանց մէջ կատարեալ ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն: Իրերի ընթացքը դառն հիասթափութիւն բերեց այդպէս մտածողներին:

Քաղաքականապէս ազատուած երկրներում եւս ստրկութեան ուժերը յարատեւեց, — եւ տնտեսական անհաւասարութեան ոյժն էր դրա պատճառը: Միապետական Ֆէդերալիզմ(6) ընկաւ, բայց նրա տեղ բարձրացաւ մի այլ դասակարգ, փողատէր-դասակարգը —

բուրժուազիան: Կեղեքման մենաշնորհը վայրենի, բիրտ ուժից անցաւ աւելի քաղաքակիրթ ուժին — կապիտալիզմ(7):

Եւ առաջ եկան արեւմտեան հասարակութիւնների մէջ երկու բանակներ — բուրժուազիա եւ պրոլետարիատ (գործաւոր դասակարգ) — որոնք, թէեւ միացած ազգի, հայրենիքի ընդհանուր շահերով, բայց միեւնոյն ժամանակ տողորուած էին տնտեսական շահերի հակառակութեամբ: Մինը նրանցից՝ տէր արդիւնագործութեան միջոցների — հողի, դրամի, մեքենաների, միւսը՝ զուրկ սեփականութիւնից: Հակամարտութիւնը երկու դասակարգերի միջեւ միշտ աւելի եւ աւելի բորբոքուեց, շնորհիւ օր աւուր առաջադիմող արդիւնագործութեան:

Դա մի նոր շրջան էր քաղաքակրթութեան պատմութեան մէջ, որ կոչուում է կապիտալիստական(8): Կապիտալը, դրամազուլը միշտ աւելի և աւելի աճում է — մանաւանդ քաղաքային, արդիւնագործական աշխարհում — համեմատաբար փոքրաթիւ արտօնեալներին ձեռքում, որոնք յենուելով իրենց ծագման, նիւթական ուժի եւ պետութեան գործօն հովանաւորութեան վրայ՝ ձգտում են յաւերժացնել իրենց դիրքը, իբրեւ իշխող ու կեղեքող դասակարգի:

Կապիտալիստական արդիւնագործութիւնը, մեծ զարկ տալով քաղաքակրթութեան ընդհանուր առաջադիմութեան, միեւնոյն ժամանակ իր ստուերային կողմերով — արդիւնաբերութեան անկանոնութեամբ, պարբերական ճղնաժամերով, անաշխատութեան մըլտական երեւոյթով, բանուորական ուժերի հրէջային շահագործումով եւայլն, եւայլն — այդ բոլոր բացասական յատկութիւններով անդրադառնում է աշխատաւոր դասին նիւթական եւ Ֆիզիքական, մտաւոր ու բարոյական կացութեան վրայ: Արդիւնագործական կեանքի առաջխաղացութեան հետ շեշտուում է ամէն տեղ, քաղաքների ու գիւղերի մէջ, աշխատաւոր դասի քայքայումն ու թշուառութիւնը: Եւ այդպիսով ստեղծուում է վիճակների մի ցայտուն հակապատկեր, մի կողմից՝ մասսային(9) քաղց ու մերկութիւն, միւս կողմից՝ առասպելական հարստութիւններ, պերճանք ու վայելքներ: Այսպէս է ներկայումս քաղաքակիրթ աշխարհի ընդհանուր պատկերը:

Այդ վիճակը չէր կարող հարստահարուած բանուորական մասսաների մէջ շարտադրել դժգոհութեան փրկարար հոսանքը: Նա ծնունդ առաւ եւ արդէն իսկ վերջին դարու երեւոյթական թուականներից արտայայտուեց խոշոր յուզումներով ու կռիւներով:

Սկսուեց մի նոր տեսակի քաղաքացիական շարժում, — սոցիալական շարժում: Նա անդրադարձաւ ժամանակի մտածող գլուխների մէջ: Ասպարէզ եկան ազնիւ, մարդասէր դէմքեր, որոնք փորձեցին դարձանել հասարակական մտանգաւոր կացութիւնը, կոչ աւելով — ապարդիւն, ի հարկէ — հարուստ, ազդեցիկ

անհատների մարդասիրական զգացումներին: Սոցիալական խնդրի խաղաղ, անպայքար լուծումն էր առաջարկուում, — անհնարին բան: Սոցիալիզմը իր ուսուպիական շրջանի մէջն էր(10):

Այնուհետեւ մին միւսի ետեւից երեւան եկան տրնտեսագէտներ ու սոցիոլոգներ(11), որոնք լցուած ատեւութեամբ դէպի տնտեսական անարդար կարգերը՝ յետ մղեցին խաղաղ ճանապարհը եւ ջատագովեցին կռուի սկզբունքը, որով միմիայն կարելի էր լուծել կապիտալի ու աշխատանքի դարաւոր հակառակութեան վիթխարի հարցը: Նրանք յարձակուեցին հասարակութեան հիմքերի վրայ, դատապարտեցին մասնաւոր սեփականութեան հաստատութիւնը, մահացու հարուած տուին կապիտալիստական տնտեսութեան սիստեմին: Նրանք ցոյց տուին, թէ ինչպէս կապիտալիզմը իր սլաոմական առաքելութիւնը յաղորդութեամբ կատարելով՝ այժմ իր կատարեալ սնանկութիւնն է յայտարարում. նա արգելք է լինում քաղաքակրթութեան հասարակութիւնների նորմալ, բնականոն առաջադիմութեանը, նա ստրկացնում է ամբողջ դասակարգեր, այլապետութեան համար յանգում է անբոլոր սերունդներ՝ նետելով նրանց թըշուառութեան անդունդը:

Եւ ահա մի շարք տնտեսագէտների, սոցիոլոգների ու փիլիսոփաների երկարամեայ ուղղակի եւ անուղղակի աշխատանքը, միացած տնտեսական էվոլուցիայի օրէնքների հետ՝ առաջ բերին ու կազմակերպեցին այն մեծ շարժումը, որ յայտնի է աշխարհին Սոցիալիզմ անունով: Նա հռչակուեց որպէս հակադրութիւն կապիտալիզմի եւ նրա հետ կապուած բոլոր շարիքների: Նա զարգացաւ անսովոր արագութեամբ, նուաճեց թըշուառութեան մէջ խրուած բանուորական ու գիւղացիական մասսաները, թափանցեց երկրագնդի բոլոր անկիւնները, ուր մտել է կապիտալը իր կեղեքումներով ու աւերումներով:

Սոցիալիստական շարժումը իր էութեամբ միջազգային է: Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրեւ դառն ճակատագրի եղբայրակիցներ, միանում են, ձեռք ձեռքի տալիս եւ գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ յաղթանակի վրայ՝ դիմում են կազմակերպութեամբ պայքարի ճանապարհով դէպի մի սոցիալական կազմակերպութիւն, ուր չպիտի լինին կեղեքողներ ու կեղեքուողներ, իշխաններ ու հպատակներ, ուր արդիւնաբերութեան միջոցները, դրամագլուխը պիտի լինին համայնական, ուր աշխատանքը, քաղաքակրթութիւնը եւ նիւթական վայելքները հաւասարապէս բաժին պիտի լինին իւրաքանչիւրին:

Այդ ուղղութեամբ է դնում հասարակական էվոլուցիան արեւմտեան աշխարհում: Տեսնենք, թէ ի՞նչ է ներկայացնում մեր իրականութիւնը:



Ինդուստրիալիզմ(12), խոշոր-արդիւնաբերական

Հոսանքի ալիքները հասան նաև Անդրկովկասին: Նրանք կամաց-կամաց փոփոխեցին հինաուրաց տնտեսութեան ձևերը, ուր դասակարգային բաժանումներն ու անհաւասարութիւնը հազիւ նշմարելի էին, ուր պարսից տիրապետութեան արհաւիրի յիշողութիւնները գրեթէ իսպառ մոռացնել էին տալիս մանր-մունր տղորուներէ — աղաների ու վաշխառուների — կեղեքումները:

Հայ առեւտրական տարրը, որ նախնի վիճակում եւս քաղաքակրթութեան տարածողն էր թէ՛ մեր եւ թէ հարեւան երկրների մէջ՝ զգալի զարկ տուեց ամբողջ կովկասեան արդիւնաբերութեան: Եւրոպական ու ռուսական կապիտալիստներն եւս շահագրգռեցին Կովկասի բնական հարստութիւններով եւ համեմատաբար կարճ միջոցում երկիրը դարձաւ ընդարձակ ու արգասաւոր շահագործման վայր:

Մեքենայական խոշոր ինդուստրիայի(13) ներմուծումը, ինչպէս Եւրոպայում ու Ռուսաստանում, այնպէս եւ մեզ մօտ ունենում է իր անխուսափելի հետեւանքները՝ արհեստների անկում եւ գաղթը դէպի արդիւնաբերական վայրերը:

Որքան աւելի է ծաւալուում արդիւնաբերութիւնը, այնքան աւելի է ընդարձակուում պանդխտութեան հոսանքը, որը առանձնապէս ուժեղանում է ներկայումս շնորհիւ գիւղերի սակաւահողութեան: Այդ վերջինը միշտ աւելի եւ աւելի շեշտուում է մասնաւորապէս պետական հողերի վրայ ապրող գիւղացիների շրջանում՝ շնորհիւ «ռուսացման» հովերով տարուած կառավարութեան ռեֆորմին, որը պահում է ազատ հողերը ռուս գաղթականների համար եւ նոյնիսկ յաճախ խլում է տեղացու աննշան հողաբաժնից:

Հայ շինականը իր մի թիզ հողով եւ նահապետական մշակման ձևերով՝ քարշ է տալիս մի կիսաքաղց, յուսահատ գոյութիւն: Աւելացրէք դրան՝ հարկերի ծանրութիւնը, կալուածատէր աղաների ու վաշխառուների յարածուն կեղեքումները եւ այն ժամանակ դիւրին կը լինի ըմբռնել հայ միջին գիւղացու աննախանձ լինող անտեսական վիճակը, նրա մշտնջենական մըղումը դէպի արդիւնաբերական կենտրոնները, ուր վաստակը համեմատաբար առատ է, թէեւ աշխատանքը՝ տաժանելի: Այդ նոյն երեւոյթը, ընդհանուր առմամբ, տեղի ունի նաև կովկասեան ուրիշ ազգութիւնների մէջ:

Արդիւնաբերութեան առաջխաղացութեան հետ ծնունդ է առնում Անդրկովկասում եւրոպական մտքով փողատէր դասակարգ՝ բուրժուազիա, որը իւրացնում է կապիտալիստական շահագործման բոլոր ձևերը եւ որը պիտի աւելի եւս ուժեղանայ վազուամ կարգերի մէջ, երբ կը վերանան միապետութեան կողմից առեւտրի ու արդիւնաբերութեան դէմ հանուած բազմաթիւ խոչընդոտները:

Ծնունդ է առնում մեծ քաղաքներում եւ այդ բուր-

ժուագիտի անբաժան ստուերը — պրոլետարիատը(14), որը թէեւ, մեծ մասամբ կազմուած լինելով մանր սեփականատէր գիւղացիներից, կատարելապէս չէ համապատասխանում բառի եւրոպական իմաստին — այնուամենայնիւ իր նիւթական, մտաւոր, կուլտուրական վիճակով շատ աւելի թշուառ է, քան արեւմտեան որեւէ երկրի պրոլետարիատը: Դրա հետ միասին աշխատող ժողովրդի մեծ զանգուածը մնում է սակաւին գաւառների մէջ, կապուած իր հողին ու խղճուկ տընտեսութեան, ենթակայ այլեւայլ հարստահարիչների կամայականութիւններին, նոյնպէս տղէտ, նոյնպէս տանջուած եւ իրաւագուրկ: Նրա մի զգալի տոկոսը, զրկուած արդէն աշխատանքի անհրաժեշտ սեփական միջոցներից, հարկադրուած է ունեւոր դրացիների տրամադրութեան տակ դնել իր ու իր ընտանիքի աշխատող ձեռները եւ իր բաժին կտոր հողը, եթէ նա դեռ մնացել է:

Մեր հայկական կեանքում՝ անտազոնիզմը(15) հարստահարող եւ հարստահարուող տարրերի միջեւ մինչեւ օրս հրապարակ չէր գալիս զգալի շարժում եւ չէր էլ կարող գալ: Յարիզմը՝ ընդհանուր հայութեան դէմ ուղղած իր արշաւանքով՝ միմիայն համերաշխութեան ոգին է արծարծում հայ ազգաբնակչութեան բոլոր խւերի մէջ, եւ զարգացնելով ընդհանուր ազգայնական կապը՝ առժամապէս նսեմացնում է դասակարգայինը:

Սակայն կռիւր սկսուած է արդէն նաև դասակարգային հողի վրայ, — եւ բնական հակառակութիւնը հայ աշխատաւոր ընդհանրութեան ու շահագործող փոքրամասնութեան միջեւ՝ հետզհետէ պիտի սաստկանայ թէ՛ քաղաքներում եւ թէ՛ գաւառներում, եւ նա կը հասնի իր լիակատար զարգացման շրջանին, երբ միապետական ռեֆորմը տապալուելով՝ բուրժուագիտան, խոշոր սեփականատէր տարրը, իր ձեռքը կ'առնէ կառավարութեան ղեկը, եւ ազատ, անկաշկանդ թուրք կը հաղորդէ արդիւնաբերութեան ու կապիտալիստական շահագործման:

Տնտեսական անհաւասարութեան այդ ուժի դէմ եւս Հ. Յ. Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր աւանդական ոգուն, իրրեւ է ապէս ժողովրդական կուսակցութիւն, պիտի մաքառէ բոլոր պատշաճ միջոցներով: Քաղաքական եւ տնտեսական խնդիրներում՝ նա աշխատաւոր ընդհանրութեան տեսակէտի ու շահերի պաշտպան կը կանգնէ եւ միաժամանակ կը դաստիարակէ նրան սոցիալիստական իդէալների ոգով, կը պատրաստէ նրան քաղաքական եւ սոցիալական մեծ պայքարի համար:

Գիւղական աշխարհում Դաշնակցութիւնը դիմում է իր պրոպագանդով ազգաբնակչութեան այն խաւերին, որոնք իրենց տնտեսական դրութեամբ մատչելի են կազմակերպութեան դաւանած գաղափարներին: Կռիւ մղելով կալուածատէրերի եւ վաշխառուների դէմ՝ նա պիտի կազմակերպէ իր դրօշակի տակ հողագործի

եւ սակաւահող գիւղացիներին, պիտի ձգտէ ըստ կարելոյն բարձրացնել նրանց նիւթական ու հողեկան վիճակը եւ մերկացնելով մասնաւոր տնտեսութեան բոլոր աննպաստ, բացասական կողմերը, պիտի աշխատէ ժողովրդականացնել համայնական տնտեսութեան ձևերը, պատուաստել գիւղական կեանքին արդիւնաբերող ու սպառող ընկերակցութիւնների արգասաւոր սկզբունքը, որը ճանապարհ է հարթում դէպի ապագայ մեծ, համայնական, սոցիալիստական կազմակերպութիւնը:

Մեկնելով նախընթաց հիմնական հայեացքներից եւ աչքի առջեւ ունենալով այն կարեւոր հանգամանքը, որ հայ տարրերի հետ միասին Անդրկովկասի միւս ժողովուրդներն էլ գտնուում են քաղաքական եւ տնտեսական համանման պայմաններում եւ որ հետեւաբար, անդրկովկասեան բոլոր աշխատաւորների հիմնական ձգտումները պէտք է մէկ լինեն, Հ. Յ. Դաշնակցութիւնը առաջադրում է հետեւեալ պահանջները.

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

- 1) Դաշնակցական ռամկավար հանրապետութիւն Անդրկովկասի համար, հիմնուած ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ զաղտնի ձայնատուութեան վրայ:
- 2) Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերի եւ կրօնական համայնքների, որոնք մտնում են Դաշնակցութեան մէջ: Ոչնչացումն դասակարգային բոլոր առանձնաշնորհումների:
- 3) Անդրկովկասը կազմում է ազատ Ռուսաստանի անբաժան, դաշնակից մասը, կապուած Ռուսաստանի հետ ընդհանուր պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստեմի ու ընդհանուր քաղաքականութեան խնդիրներում: Նա ուղարկում է վերոյիշեալ սկզբունքներով ընտրուած իր ներկայացուցիչները Ռուսաստանի ընդհանուր պարլամենտին(16):
- 4) Անդրկովկասը անկախ է իր բոլոր ներքին խնդիրներում՝ վարչական, տնտեսական եւլն.:
- 5) Անդրկովկասեան Դաշնակցութիւնը ունի իր կենտրոնական պարլամենտը Քիֆլիսում: Բնակչութեան իւրաքանչիւր 25.000 ընտրում է մէկ պատգամաւոր: Իւրաքանչիւր անդրկովկասցի, որ անցել է 20 տարին, առանց սեռի խտրութեան, իրաւունք ունի ընտրելու:
- 6) Պատասխանատու միջխտրական մարմինը վարում է, համաձայն պարլամենտի որոշումների, երկրի վարչական, տնտեսական եւ կուլտուրական բովանդակ քաղաքականութիւնը:
- 7) Անհատը եւ բնակարանը անձեռնմխելի են:
- 8) Մամուլի, խօսքի, խղճի, գումարումների, բանուորական սինդիկատների(17) եւ զործադուլների կատարեալ ազատութիւն:

9) Ընդհանուր, պարտադիր եւ ճրի սկզբնական կրթութիւն մայրենի լեզուով, կատարելապէս համապատասխան իւրաքանչիւր ազգի կարիքներին եւ զարգացման: Միջնակարգ դպրոցները — մայրենի լեզուով. մնացած գլխաւոր տեղական լեզուները՝ իրրեւ անհրաժեշտ առարկաներ: Ռուսերէնը, իրրեւ ընհանուր պետական լեզու՝ պարտադիր է:

10) Անդրկովկասեան ռամկավար Դաշնակցութիւնը չէ ճանաչում պետական եկեղեցի: Կրօնը անհատական խղճի գործ է:

11) Անդրկովկասը բաժանուում է գաւառների, որոնք վայելում են ամենալայն տեղական ինքնավարութիւն: Գաւառների սահմանները գծազրկու՝ ի նկատի պիտի առնել ազգաբնակչութեան ցեղազրական եւ կուլտուրական կազմը (ըստ կարելոյն միաձույլ համախմբումներ կազմելու համար):

12) Գաւառների մէջ առանձին համայնքները նոյնպէս վայելում են ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներում: Ազգաբնակչութեան կողմից վերջ յիշած սկզբունքով ընտրուած Գաւառական Խորհուրդը իր օրգաններով վարում է գաւառի ներքին գործերը: Նոյնը՝ համայնքի մէջ:

13) Համայնական եւ գաւառական բոլոր պաշտօնեաների համար պարտադիր է՝ տեղական երկու գլխաւոր լեզուներն իմանալը, իսկ Անդրկով. Դաշնակցութեան ընդհանուր պաշտօնեաների համար՝ երեք զըլխաւոր լեզուները:

14) Բոլոր պաշտօնեաները ընտրուում են ժողովրդի կողմից, վերջ յիշած ընտրողական սկզբունքով:

15) Գաւառի եւ Անդր. Դաշնակցութեան բարձրագոյն դատաւորները անկախ են եւ անփոփոխելի: Նըրանց ընտրութեան սկզբունքները որոշում է Անդրկովկասի Սահմանադիր ժողովը: Դաշնակցական ընդհանուր դատարանի մէջ երեք գլխաւոր լեզուները պարտաւորական են:

16) Անդրկովկասի ինքնապաշտպանութեան սիստեմը ժողովրդական միջիցիան է, ընդհանուր գինաւորումը: Ամէն մի առողջ քաղաքացի պարտաւոր է որոշ ժամանակով ծառայել իրրեւ միջիցիական: Անդրկովկասի միջիցիան ծառայում է Անդրկովկասի սահմաններում: Նա ենթարկուում է Ռուսաստանի ընդհանուր հրամանատարութեանը եւ զործադրուում է միմիայն այն դէպքում, երբ ընդհանուր պետութեան կամ Անդրկովկասեան Դաշնակցութեան ազատութեանն ու ամբողջութեանը վտանգ է սպառնում:

17) Անդրկովկասեան սահմանադրութիւնը մասամբ կամ ամբողջութեամբ փոփոխելու որոշումը կարող է կայացնել Անդրկովկասի ինքնավար ժողովուրդը, ընդհանուր քուէարկութեամբ եւ ձայների 2/3ի առաւելութեամբ: Սահմանադրութիւնը փոփոխելու առաջարկը կարող են անել եւ որոշ թիւ քաղաքացիներ:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

- 1) Հողերի աստիճանական համայնացում:
- 2) Վերացում անուղղակի հարկերի: Մտցնել պրոդրէսիւ(18) տուրք եկամտի ու ժառանգութեան վճարայ և բոլորովին ազատել զբանից՝ որոշ չափից պահանջներ եկամուտները:
- 3) Սահմանել օրէնքով ութամեայ աշխատանքի օր բանուորների համար:
- 4) Սահմանել նուազագոյն օրավարձ՝ այլևայլ դրադուներին համար՝ զազաբում և գիւղում:
- 5) Պետական ապահովագրութիւն դժբախտ պատահարներից, հիւանդութիւնից, ծերութիւնից և աշխատութիւնից՝ պետութեան ու գործատէրերի հաշուով:
- 6) Ազատութիւն տեղափոխութեան և արհեստներին:
- 7) Աշխատանքի բորսաներ(19), որոնք պիտի մասնակցեն բանուորական օրէնսդրութեան մշակմանը:
- 8) Աշխատանքի օրէնսդրական հովանաւորութիւն, համաձայն գիտական առողջապահութեան պահանջներին:
- 9) Վերացում գիշերային աշխատանքի, բացի այն գործառնութիւններից, որոնց տեխնիկական բնոյթը թոյլ չի տալիս ընդհատումներ: Անպայման վերացնել գիշերային աշխատանքը կանանց և անչափահասների համար:
- 10) Արդիւլել երեխաների աշխատանքը մինչև 15 տարեկան հասակը, իսկ 15ից մինչև 18 տարեկան հասակում սահմանափակել վեց ժամով:
- 11) Բանուորական վերատեսչութեան ընտրութիւն:
- 12) Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն:

- (1) Մշակոյթով օժտուած:
- (2) Յետադիմութեան:
- (3) Ազգակ:
- (4) Ընկերային:
- (5) Բնաշրջան, հոլովոյթի:
- (6) Աւտոագետութիւնը:
- (7) Դրամագլուխ:
- (8) Դրամատիրական:
- (9) Զանգուածներ (ժողովրդական):
- (10) Ընկերավարութիւնը իր ցնարկում, նրապատեանքը շրջանի մէջ էր:
- (11) Ընկերաբաններ:
- (12) Ճարտարարուեստական գրութեան:
- (13) Ճարտարարուեստ, արհիւմտարարութիւն:
- (14) Ընկերային գրասիրտը:
- (15) Հակառակութիւնը, բռնաճարտութիւնը:
- (16) Խորհրդարանին:
- (17) Արհեստակցական կազմակերպութիւններ:
- (18) Յառաջատուական, աստիճանաբար անոց:
- (19) Մակարաններ(?)

47.— ԲԻՒՐՈՆԵՐՈՒ 1905 ՕԳՈՍՏՈՍԻ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Տպագրուած 16x23 սմ. բուլբոլ վրայ, բարակ շրջանակի մէջ: Վերը, կեղծագր՝ գիծաձեւով:

Հ. Յ. Դաշնակցութեան Մարմիններում

Ընկերներ, ընդհանուր ժողովի որոշմամբ առաջիկայ Ընդհանուր ժողովը պիտի գումարուէր 1906 տարուան Դեկտեմբերին: Սակայն «Դաշնակցութեան Խորհուրդը»՝ նկատի ունենալով Տաճկահայաստանի մէջ ակնկալուած ապագայ դէպքերէ վերջ տակտիքի հաւանական փոփոխութիւնը, Կովկասեան անցքերու արտակարգ բնաւորութիւնը և «Խորհուրդի» մշակած Կովկասեան նախագծի վաւերացման կարեւորութիւնը՝ որոշեց Ընդհանուր ժողով հրաւիրել ներկայ տարուան վերջը:

Հաղորդելով «Խորհուրդի» ներկայ որոշումը Արեւելեան և Արեւմտեան շրջաններու Մարմիններուն՝ կ'առաջարկենք, կազմակերպական կանոններու 101 յօդուածի տրամադրութեան համաձայն, շուտով ուղարկել Արեւմտեան Բիւրոյին այն հարցերու ցանկը, որ կը փափաքէ ժողովին ջննութեան ենթարկել: Կը խնդրենք ըստ կարելոյն շուտ ձեռնարկել նախապատրաստական գործին, որպէսզի Արեւմտեան Բիւրոն Հնարաւորութիւն ունենայ ժամանակին հաւաքել, կազմել հարցերու ամփոփ ցանկը և ուղարկել Դաշնակցական մարմիններուն խնդիրներու օրակարգը:

Ընկերական բարեւանքով՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

20 Օգ. 1905 թ.

5.— 1905 ՆՈՅՄԲԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Արեւելեան Բիւրոյի շրջանի ճախարհ Ռայոնական ժողովն տասըմէկ ամիսներ և Խորհուրդի ճիւղերէն հազիւ կէս տարի ետ գումարուած Ռայոնական այս ժողովը հասկնալի կերպով իբրև հիմնական օրակարգ կ'առնեայ Փետրուարէն ի վեր ծայր տուած հայ-թաթարական կռիւնքը, ինչպէս նաև, անշուշտ, Դաշնակցութեան գործունէութիւնը համառոտապէս ծիրէն մէջ: Համաձայն ժողովի անձագրութիւններէն Սիմոն Վրացեանի կատարած Բաղուած-արտագրութիւններուն, գորս կու տամք ամբողջութեամբ, ժողովին մասնակցած են խմբապետ Համազասպը՝ Ասիբեանի հերարը, Գուստը (բանաստեղծ Ա. Իսահան), Իշխան Յովսէփ Արարեանը, Յարութիւն Եսիբեանը, Արմէն-Գարսն, Համօ Օհանջանեանը, Նիկիտ Բոսնեանը, Գարեգին Խոսեանը, Յովհ. Գալագուսեան, Հայր Արարեանը (Անիէֆ Սահեան), Ար-

բահամ Գիւլստանեանը, Ա. Անարանեանը (Ղարիբ) և ուրիշներ: Մէկ խօսքով՝ ամբողջ հոյս մը մտաւորական և մարտական զինավարձեցում: Ուսման ժողովն մեկնած են յանկարծակի կերպով՝ Անիից Կովկասի այս կամ այն շրջանին մէջ կռիւնքը վերսկզբած ըլլալով: Ժողովը վերջնական կերպով գրուած է Դեկտեմբերին, հայ-թաթարական ընդհարումները ծայր տուած ըլլալով Քիֆիոսի մէջ ևս:

Ս. Վրացեանի բուլբոլում մէջ, կովկասեան ժողովներու մասին իր նախընտրած կերպով, կը գտնենք տասը էջոց այլ գրութիւն մը՝ «Ուղեցոյց Կովկասի և Ռուսաստանի գործունէութեան համար»: Վրացեանի ձեռագրով, առաջին էջի վերի մասին մէջ կը գտնենք երկու մակագրութիւններ, — աջին՝ «Պատմէն — Ս. Զաւարեանի գրածը», և ձախին՝ «Արտագրեց Մաթն»: Ըստ երևոյթի, 1905 Նոյեմբերին Ս. Զաւարեանը տակաւին վերագրած չէր Միջերկրական և Կովկասի իր գործիչային երկարատեւ շրջապատայտէն (Կիլիկիա, Լիբանան, Եգիպտոս, ևն.), բռնի Ռայոնական ժողովին մասնակցողներու կարգին չենք հանդիպիք անոր անունին: Ան այս գրութիւնը, որու վերջաբանը, մասնաւորաբար, պատիւ կը բերէ Հ. Յ. Դաշնակցութեան՝ իբրև արտայայտիչը անոր բարոյական ամբաստանքի, կրթային զինուած ըլլալ Խորհուրդի ժողովին, կամ 1904 Դեկտեմբերի թէ 1905 Նոյեմբերի կովկասեան Ռայոնական ժողովներէն մէկուն. կրթային անունները մերկայացուցած ըլլալ 1906 Մարտ-Ապրիլի կովկասեան ժողովին, որու ամբողջական արձանագրութիւնները պիտի տամք յաջորդ բաժնին մէջ և որուն Զաւարեան կը մասնակցէր:

Ժողովի արձանագրութեանց քաղաքագրութիւնը (Տա) և Ս. Զաւարեանի գրութիւնը (Յր) կու տամք յաջորդաբար:

Տա.— 1905ի Հ. Յ. Դ. ԿՈՎԿԱՍԵԱՆ

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

(1905 թ. Նոյեմբ. 13, Քիֆիոս)

Ժողովը բացուեց Նոյ. 13ին: Հրաւիրուած 15 պատգամաւորներից ներկայ էին 12ը:

Ժողովները տեղի էին ունենում Հայ-թաթարական ընդհարումների աղոթելիքեան տակ: Հենց սկզբի օրը Գանձակի ներկայացուցիչը ընդմիջում է ժողովը՝ յայտնելով, որ իրենց շրջանում 2 գիւղ շրջապատուած է թուրքերով և խնդրում է ժողովի օգնութիւնը: Ուրուից, որ ժամանակաւորապէս շրջանը կառավարէ և զինուորական ոյժը կազմակերպէ Ա.ն(1), իսկ ապառաջի համար վրէժստանից կանչել հեռագրով Սեպուհին:

Ի նկատի ունենալով ինքնապաշտպանութեան անմիջական կարեւորութիւնը, Հենց սկզբից դուրս գրամի խնդիրը: Շրջաններից տրուած տեղեկութիւններից երևաց, որ 1905ին Հ. Յ. Դաշնակցութիւնը մուտք է ունեցել 500.000—600.000 ու., որից զէնք է դնուել 200.000 ու., առանց հաշուելու ճանապարհահասան ու կորուստը՝ մօտ 40%: Կուսակցութիւնը Կովկասում ունի մօտաւորապէս 1.800 մասին և բերդան, 640 մասնակցի ատրճանակ, մօտ 100.000 ծայր, — ինչ որ չափազանց անբաւարար է:

Շրջանի ընկերները յայտնեցին զէնքի և դրամի պահանջի քանակը:

Ապառաժ (Շուշի, Ղարաբաղ)՝ խմբապետ Համազասպ.— Կարիք կայ 600.000 ծայրի, 5000 հրացանի և 50.000 ու. դրամի՝ ընթացիկ ծախսերի համար:

Քար (Ալեքսանդրապոլ)՝ ընկ. Գուստը.— Քարը մի տեսակ միջնորդ է Հ. Յ. Դ. միւս մարմինների և զէնք վաճառողների միջև. վերջին տարին զնել են մօտ 500 հրացան. անհրաժեշտ է, որ իրենց ձեռքի տակ լինի մշտական Փոնդ՝ 20.000 ու., զէնք զնելու համար: Եւ մի ձեռնարկութեան համար հարկաւոր է 50.000 ու.:

Ռայոնապատի (Պաքու) ներկայացուցիչը պնդում է.— Հ. Յ. Դաշնակցութեան համար հարկաւոր է ճարել անուուզն 2 միլիոն ու., թէ չէ կը խայտառակուենք:

Որոշուում է նախ ծանօթանալ շրջանների վիճակին: Պարզուեց հետեւեալը.

Մրգաստան (Երևան) (պատգամաւոր չկայ).— Նախիջևանում կոտորածներից առաջ կազմակերպութիւն համարեա չկար. միայն զաղաքում կար: Ամբողջ գաւառում հազիւ 50 կտոր զէնք լինէր: Հայերը, որ բնակչութեան 35-40% էին, խմբուած չէին և կարող էին միայն պաշտպանուել, բայց ոչ յարձակուել: Շարուրն էլ նոյն վիճակում էր. 6-7 հայ գիւղեր շրջապատուած էին 50-60 թուրք զիւղերով: Հայկական զիւղերը այստեղ լաւ դիրք ունէին և կարող էին պաշտպանուել:

Աննպաստ պայմաններում էր և Սուրմալուն, ուր թուրք-զիւրտ բնակչութիւնը աւելի էր, քան հայերը. բայց հայերը աւելի լաւ են զինուած և ինքնազգացումը բարձր է:

Կողբը, Վաղարշապատը, Սարղարապատը ապահով են:

Այգեստան (Գանձակ).— Այնտեղ, ուր թուրքերն իրենց ուժեղ են զգում, յարձակուում են. թոյլ տեղերը հաշտութեան մասին են խօսում:

Ապառաժ.— Թուրք բէկերն են յարձակումների զրդիչը. օրինակ, Սաչէնի 23 հայ գիւղերից 13ը բէկական են: Այժմ բէկերին գուրս են արել և տուրք չեն վճարում: Բէկերը զրդուում են թուրքերին հայերի դէմ: Ուր հայերը յարձակուել և ջարդել են, թուրքերը հաշտութեան են դիմում, իսկ ուր հայերին թոյլ են տեսել՝ յարձակուել են: Քաղաքում զրուութիւնը անտանելի է. թուրքերը սպառնական դիրք ունեն. դաւառում համեմատաբար տանելի է:

Այգեստան.— Թէեւ ցարդ ընդհարում չի եղել, բայց զրուութիւնը շատ լարուած է և ամէն րոպէ ըստպասուում է բախում: Թուրքերը տեղազին պատրաստուում են և առ այժմ համերաշխութիւնից են ճառում: Այգեստանում շարժման զրուիս են կանգնած բէկերն ու վաճառականները: Ամառը եկել էին Հալիքենդ

Ազայեւր եւ թոփշիրաշեւր՝ համխլամական քարոզներ անելու:

Ոսկառաքաւտի ներկայացուցիչը յայտնում է, որ փետրուարեան ընդհարումը պատրաստուած էր ոստիկանութեան ձեռքով եւ թուրքերի համար էլ անակնկալ էր: Յետոյ միայն շարժումները ստացան համխլամական բնոյթ: Այստեղ էլ թուրքերի գործելակերպը նոյնն է ինչ որ գաւառներում. զօրաւոր տեղը յարձակուել, թոյլ տեղը՝ հաշտութիւն քարոզել: Արդիւնաբերական շրջաններում հայ չէ մնացել: Թուրքերը երազում են միացած տեսնել ապագայ Սահմանադրական Ռուսաստանում 30 միլիոն թրքութիւնը, որ յետոյ զէնքը դարձնեն ուստի դէմ: Հայ-թրքական ընդհարումների մէջ ուստարը բացարձակապէս թշնամի է հայերին. միւս օտարազգիներն էլ կարծես ուրախանում են հայերի տուժելով:

Պօսուում են մի շարք ճառեր, որոնց բոլորի իմաստն այն է, որ հայ-թրքական ընդհարումների զբոխաւոր պատճառներն են.

1) Կառավարութեան պրովոկացիան(2) յանուն ընդհանուր պետական շահերի. հայերին որպէս յեղափոխական ժողովուրդ ընդունելով՝ նրանց թափը կոտրելու համար ուստ կառավարութիւնը աշխատում է առաջ հանել թուրք խուժանին: Այսպիսի կրիտիկական մոմենտում(3), Ռուսաստանի ընդհանուր յեղափոխութեան, մանաւանդ կովկասեան յեղափոխութեան ոյժը թուլացնելու համար թուրք-հայկական խռովութիւնները մի լաւ միջոց են:

2) Համխլամիզմը, որ ծնունդ է առել Նըղզրդից եւ Կովկասում ղեկավարուում է մի քանի ազդեցիկ մարդկանցով:

3) Թուրք խուժանի թալանի ախորժակը:

4) Ուշադրութեան առնուեց եւ թուրքերի քաղաքականութիւնը — որտեղ ուժեղ են՝ յարձակուել, իսկ որտեղ իրենք թոյլ են՝ համերաշխութեան մասին խօսել:

Երկար վիճարանութեան նիւթ եղաւ տակտիկայի հարցը հայ-թրքական ընդհարումների խնդրում, արդեօք հայերը ի դէմս Հ. Յ. Դաշնակցութեան թուրքերի վերաբերմամբ ինչ դիրք պիտի բռնեն: Ժողովականների մի մասը — Համազասպ, Գուսան, Ծահրիկեան, Գարօ եւ այլն — համոզուած են, որ թուրքերը պատրաստութիւնից յետոյ յարձակուելու են հայերի վրայ, ուստի պէտք է կանխել եւ նախադրական լինել, եւ չթողնել՝ որ ամառը սար բարձրանան: Ուրիշներ — Իշխան, Համօ եւ այլն — հակառակն են պնդում. պէտք է դիմել հաշտութեան, խաղաղութեան, թոյլ տալ զոչը(4): Վիճարանութիւնները ամփոփուեցին հետեւեալ 3 կէտով. —

1.— Նախադրական չլինել եւ պատրաստուել հակահարուած տալու ու յարձակուելու, եթէ թուրքերն են սկսում:

2.— Նախադրական լինենք, երբ նկատենք, որ նրանք են յարձակուում:

3.— Հայերին համախմբել եւ կոմպակտ մասսա(5) կազմել:

Վերջին պահանջը սուր կերպով դրեց Գուսանը. — «Աչքի առաջ ունենալով, որ մենք ցրուած ենք եւ ապրում ենք թուրքերի հետ խառն, որ թուրքերը դամոկլեան սրի պէս մեր գլխի վերեւը կանգնած են՝ պատրաստ ամէն րոպէ ցած ընկնելու, որ ցրուած ու խառն ապրելը ամենից շատ է փոխադարձ դժգոհութեան առիթներ տալիս, մենք պէտք է դիմենք համախմբման գաղափարին, պէտք է մեր մէջ ցրուած թուրքերին դուրս քշենք, գուցէ եւ նրանց հետ փոխադարձ համաձայնութեամբ՝ գիւղեր փոխանակելով, եւ այդպիսով՝ մի հայկական կոմպակտ մասսա(5) ստեղծել, որը կարողանայ մշակել ու պահպանել իր սեփական կուլտուրան(6)»:

Այս գաղափարը պաշտպանում են Ծահրիկեանը, Գարոն: Սաստիկ դէմ է Իշխանը:

Դրուում է 2 բանաձեւ՝ Իշխանի, որ բոլորովին դէմ է նախադրական, եւ Քաջազնունիի, որ ընդունում է: Երկու բանաձեւերից մշակուում եւ ընդունուում է հետեւեալ բանաձեւը.

ա) Ընդունում ենք, որ մեր իղձը հաշտութիւն է եւ ոչ կռիւ թուրքերի հետ: Ընդունում ենք, որ այս կռուի պատճառներից մէկն էլ ուստ կառավարութեան պրովոկացիան(2) է: Ընդունում ենք, որ մենք կռուի ենք բռնուել յակամայից եւ պէտք է աշխատենք, որքան կարելի է շուտ, վերջ դնել նրան: Ընդունում ենք, որ իսկական եւ հաստատ հաշտութիւնը չի կարող կայանալ, մինչեւ թուրքերը չհամոզուեն, թէ իրենց դէմ մի ոյժ ունեն, որն ընդունակ է ինքնապաշտպանութեան եւ որ յարձակման դէպքում՝ պատրաստ է խրստիւ պատժել յարձակուողին: Ընդունում ենք, որ այդ պայմաններն ստեղծելու համար մեզ անհրաժեշտ է միշտ կռուի եւ ընդդիմութեան պատրաստ լինել: Բայց պատրաստ լինելով ընդդիմադրութեան՝ մենք երբեք նախադրական չպէտք է լինենք այն տեղերում, ուր թուրք տարրը թոյլ է կամ իր բռնած դիրքով մեզ վրտանդ չի սպառնում: Միանգամայն մերժելով նախադրական տակտիկան՝ ընդունում ենք, որ այն տեղերում եւ դէպքերում, ուր մեզ պարզէ ի պարզ վտանդ է սպառնում թուրքերի բռնած դիրքից, դիրք՝ որ այսօր-վաղը կարող է բացարձակ յարձակման վերածուել, այդ տեղերում եւ այդ դէպքերում ոչ միայն ընդունում ենք նախադրական ինիցիատիւր(7), այլ եւ պարտաւորական ենք համարում:

բ) Ամենախիստ պրոպականդ անել աշխատաւոր թուրք դասակարգի մէջ, բարձրացնելու նրա գիտութիւնը, հասկացնելով՝ որ երկու ազգերի աշխատաւոր մասսաների(8) շահերը կատարելապէս համապատասխան են իրար»:

բ) Ամենախիստ պրոպականդ անել աշխատաւոր թուրք դասակարգի մէջ, բարձրացնելու նրա գիտութիւնը, հասկացնելով՝ որ երկու ազգերի աշխատաւոր մասսաների(8) շահերը կատարելապէս համապատասխան են իրար»:

Իշխանը մտցնում է արձանագրութեան մէջ իր բողոքը, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ծրագրի մէջ մտցնում է յարձակողական տակտիկան:

Ապա հարց է տրուում, թէ ո՞վ պէտք է որոշէ նախադրական մոմենտը(9): Վիճարանութիւնից յետոյ միաձայն որոշուում է.

«Կենտրոնական Կոմիտէները եւ կենտրոնականի իրաւունք վայելող կոմիտէները հրաւիրում են իրենց ռայոնի(10) կոմիտէներին եւ աշխատաւորական մարմիններին եւ խորհրդակցելով նրանց հետ՝ նրանց համաձայնութեամբ բաժանում են իրենց ամբողջ ռայոնը գիւղուորական շրջանների եւ իրաւունք են տալիս այս կամ այն մարմինն նախադրական լինելու Ռայոնական ժողովի ընդունած պայմաններում: Նախադրական լինելու մոմենտի(9) որոշումը իրաւասու մարմինները վճռում են գաղտնի քուէարկութեամբ՝ ժողովականների ձայների 2/3ի մեծամասնութեամբ»:

Յաւելում. —

«Ապառաժի եւ Այգեւստանի Կոմիտէներին ժամանակաւորապէս գիւղուորական գործում Կենտր. Կոմիտէի իրաւունք տալ»:

Ապա քննութեան է առնուում գիւղուորական ուժերի կազմակերպման եւ պահպանման հարցը Կովկասում, — զօրք թէ միլիցիա(11): Երջանների զեկուցումներից երեւաց, որ Հ. Յ. Դաշնակցութեան ձեռքի տակ Կովկասում կայ երեք տեսակ գիւղուորական ոյժ.

ա) Ջօրֆ, — կազմուած ամբողջովին գիւղուորական գործին նուիրուած անհատներից: Ապրում են Կազմակերպութեան հաշուով, ստանում են հազուստ, զէնք, ծի եւ այլ գիւղուորական եւ կենսական պիտոյքներ: Կազմակերպութեան վրայ ամէն գիւղուոր նայում է 10-20 ու. ամիսը՝ նայած տեղին ու պայմաններին: Կան հետեւեալ եւ ձիւտոր գիւղուորներ: Հետեւեալը կրուող ոյժ է, դիւղերը պահպանող, հետախոյզ եւ այլն, ձիւտորը՝ սահմանսպահ, աւազակներ բռնող, թալանը յետ խլող, յարձակումների դիմադրող, յարձակուող, սուրհանդակ, նաեւ հետախոյզ եւ այլն:

բ) Միլիցիա(11), — Կազմուած տեղական ուժերից՝ երիտասարդներից, ուսուց ծառայութեան մէջ գտնուած գիւղուորներից: Սրանք ունեն սեփական զէնք, չունենորները՝ կազմակերպական զէնքով: Կազմակերպութիւնից ծախս չեն ստանում, ապրում են իրենց գիւղերում Հ. Յ. Դաշնակցութեան տրամադրութեան տակ, որի հրահանգով, իրենց ընտրած խմբապետների կամ տասնապետների ղեկավարութեան տակ, դուրս են գալիս ժողովրդին պաշտպանելու կամ միւս ուժերին օգնութեան հասնելու համար: Միլիցիան ծանրութիւն չէ ժողովրդի համար, ինչպէս զօրքը. միլիցիան բարոյապէս աւելի բարձր է, քան զօրքը, բայց եւ այնքան շարժուն եւ ռազմունակ չէ, ինչպէս զօրքը, որ շարունակ զէնքի տակ է: Միլիցիան կատարում է նոյն գործը, բայց իր պիւղի սահմաններում:

գ) Պահեստ. — Գիւղերում կան գիւղուորագրուած երիտասարդներ, որոնք դեռ գիւղուոր չեն: Նրանց հաշուում են պահեստում եւ երբ զօրքն ու միլիցիան պակաս են, պահեստը գործածուում է որպէս օգնական եւ լրացուցիչ ոյժ:

Սրանցից զատ, Կազմակերպութեան տրամադրութեան տակ կան եւ գիւղացիներից կազմուած կամաւոր կոուղներ, որոնք ո՛չ գիւղուոր են համարում իրենց, ոչ միլիցիա, բայց անհրաժեշտ դէպքում դուրս են գալիս կոուելու:

Միաձայն որոշուեց, կարճ վիճարանութիւնից յետոյ. —

«Ռայոնական ժողովը ինքնապաշտպանութեան համար որոշեց.

1) Իբրեւ սիստեմ(12) ընդունել միլիցիան, որի կազմակերպութեանը դիմել անմիջապէս պարտաւորեցուցիչ կերպով ամէն տեղ:

2) Պատրաստի ազատ գիւղուորներ ունենալ, կարիք զգացուող դէպքերում՝ պահանջի minimumի(13) չափով»:

Ապա ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

«1) Պատերազմական դրութեան ժամանակ Դաշնակցութեան իւրաքանչիւր Մարմինն կից կազմուած է համանուն գիւղուորական մարմին (Բիւրոյին կից՝ Ձինուորական Բիւրօ, Կենտր. Կոմ.ին՝ Կենտրոնական Ձինուորական Մարմին եւ այլն):

2) Ձինուորական Բիւրոյին է վերապահուում զէնքի եւ գիւղուորական ուժի կանոնաւոր բաշխումը եւ ընդհանուր տակտիկայի հարցը՝ Ռայոնական ժողովի որոշումների սահմաններում:

3) Ձինուորական Բիւրոյին են ենթարկուում Ձինուորական Մարմինները:

4) Որոշումները լինելու են վարչական մարմինների հետ համաձայնութեան գալով»:

Նոյեմբեր 20ից Այգեւստանի եւ Ապառաժի պատվամաւորները բացակայ են. շտապ մեկնեցին իրենց տեղերը՝ սկսուած հայ-թրքական ընդհարումների պատճառով:

Ռուս զօրքի հակահայ ընթացքի համար որոշուեց.

«Նկատելով, որ շատ անգամ զօրքերը՝ միացած թուրք եւ ուստ խուլիգանների(14) հետ՝ կոտորում են խաղաղ հայ բնակչութիւնը եւ կողոպտում նրանց ունեցուածքը, Ռայոնական ժողովը որոշեց՝ այդպիսի դէպքերում սկզբունքով ընդունել նաեւ կռիւր զօրքերի դէմ, եթէ տեղական Մարմինները կը գտնեն նպատակայարմար ու կարելոր»:

Եկեղեցական կալուածների խլելուց յետոյ, երբ հարց ծագեց Ռուսաստանում աշխոյժ գործունէութիւն ունենալու, ինքնապաշտպանութեան Կոմիտէն վերածուեց Պատասխանատու Մարմնի, որին յանձնուեց ժամանակաւոր կերպով կովկասեան գործի ղեկավարութիւնը մինչեւ Ռայոնական ժողով: Այնուհետեւ դէպ-

քերն այնպէս ընթացան, որ Դաշնակցութիւնը իր բոլոր Մարմիններով մասնակցեց կովկասեան հակակառավարական պայքարին, որով Պատասխանատու Մարմինը դարձաւ աւելորդ:

Ուստի Ռայոնական Ժողովը որոշեց (Կովկասի) Պատասխանատու Մարմինը լուծել:

Բանաձեւ տեսարի մասին

«1) Ընդունուում է տեւորը՝ պաշտօնական եւ ոչ-պաշտօնական անհատների դէմ, որոնք մեզ համար աննպաստ դեր են կատարում թուրք-հայկական ընդհարումների խնդրում:

2) Տեսուչի կարող են ենթարկուել բոլոր պաշտօնեաները՝ առանց պաշտօնների եւ աստիճանի խտրութեան:

3) Տեսուրը կատարուում է «Հայկական Ահաբեկիչ Մարմին» անուան տակ:

4) Պրիստաւին եւ նրանից ցածր պաշտօնեային տեսուրի կարող է ենթարկել միմիայն տեղական Կենտրոնական Կոմիտէն:

5) 6) 7) աւելի բարձր՝ տեղեկանալ Բիւրոյից:

Փոքորիկ

«1) Ներկայ պատերազմական ժամանակամիջոցում բացարձիկ միջոցներով հանգանակութիւն անելու համար ժամանակաւորապէս վերականգնուում է «Փոքորիկ»:

2) «Փոքորիկ» վերականգնելը յանձնուում է նախկին «Փոքորիկ»ին:

3) «Փոքորիկ»ից դուրս Հ. Յ. Դաշնակցութեան բոլոր Մարմիններին խստիւ արգելուում է որեւէ ձեւով եւ անունով՝ հանդանակութեան համար բռնի միջոցներ դիմել, բայց «Փոքորիկ» իր դիմումների մասին վաղորօք յայտնուում է, ի գիտութիւն, տեղական Մարմիններին:

4) Այս արգիւման հակառակ գործող թէ՛ Մարմինները, թէ՛ անհատները պատժի են ենթարկուում «Փոքորիկ»ի կողմից, ըստ վերջինիս հայեցողութեան:

5) Կովկասի եւ Ռուսաստանի բոլոր Կենտր. Կոմիտէները պարտաւոր են «Փոքորիկ»ի պահանջած ամէն տեսակ աջակցութիւնն ու գիտութիւնը ընծայել:

6) «Փոքորիկ»ի դիմումներն ուղղուած պէտք է լինեն որոշ դասակարգի չափազանց սահմանափակ շրջանի եւ ամէն միջոց պէտք է գործ դրուի ծայրայեղ միջոցներից խուսափելու համար:

7) «Փոքորիկ»ի ձեռք բերած գումարները յանձնուելու են «Փոնդ»ի Մարմինին, միմիայն ընդհանուր գինման եւ ինքնապաշտպանութեան գործին յատկացնելու համար:

8) «Փոքորիկ»ն իր գործունէութեան համարաւորութիւնը ներկայացնում է Ռայոնական Ժողովին՝ իրեն ընտրող Մարմնի միջոցով՝ առնուազն տարին մէկ անգամ»:

Պետերբուրգից մի խումբ բուրժուաներ եւ մտաւորականներ դիմել էին Ոսկանապատի Կ.Կ.ին՝ խնդրելով մի ներկայացուցիչ ուղարկել իրենց ժողովին, ուր պիտի քննուեն ազգային կարեւոր հարցեր: Կ.Կ.ը ուղարկում է Քաջազունուն: Արդուում են մի շարք ժողովներ, ուր որոշուում է հիմնել կէս-յեղափոխական կուսակցութիւն՝ պարփակելով իր մէջ հայկական ազգային, մշակութային, տնտեսական ու քաղաքական բոլոր պահանջները: Որոշուում է զանազան քաղաքներից, 2 ամիս յետոյ, ներկայացուցիչներ հրաւիրել եւ ծրագիր մշակել, իսկ առ այժմ, ի նկատի ունենալով հայ ազգի տաղնապալի վիճակը, կազմել մի խոշոր ֆոնդ(15), որի մի մասով հայերէն եւ ռուսերէն պրոպագանդի(16) թերթեր հիմնել, իսկ մեծ մասը՝ 80-90% (չուրջ երկու միլիոն ռուբլի) տրամադրել Դաշնակցութեան, իբրեւ ճամնակատահելի եւ ձեռնհաս մարմնի», պայմանով, որ այդ գումարով գէնք առնուի ինքնապաշտպանութեան համար, եւ «Դաշնակցութիւնը պարտաւորուի առ այժմ կանգնեցնել ազրեսի(17) յեղափոխական գործունէութիւնը՝ մինչեւ հանգամանքների փոխուելը, հայ-թրքական յարաբերութիւնների հաշտ կերպարանք ստանալը եւ Ռուսաստանում նոր կառավարութիւն հաստատուելը»:

Այս առթիւ բուռն եւ երկար վիճաբանութիւններ եղան Ռայոն. Ժողովում. սաստիկ յարձակումներ հայ բուրժուազիայի(18) վրայ: Երկար խօսուում է դասակարգային համագործակցութեան եւ պայքարի մասին. մանաւանդ անհաշտ է Համոն:

Որոշուում է «ընդունել մի խումբ կազմակերպւած հարուստների առաջարկած աջակցութիւնը ինքնապաշտպանութեան գործի համար, առանց որեւէ պայմանի յեղափոխական կուռի կամ ինքնապաշտպանութեան տակտիկայի վերաբերմամբ»:

(Ի հարկէ, ոչ մի հետեւանք էլ չստացուեց այս առաջարկութիւնից. Ս.Վ.)

Նոյեմբեր 15ի նիստում Արեւելեան Բիւրոն յայտնեց, որ Պետերբուրգից հեռագրով Դաշնակցութեան մի ներկայացուցիչ են հրաւիրում՝ մասնակցելու Ռուսաստանում ապրող ազգերի յեղափոխական կուսակցութեանց համագումարին, Նոյեմբեր 19ին: Այս առթիւ քննութեան է առնուում «Մեր տակտիկը Ռուսաստանում»: Պատուում են շատ երկար ճառեր՝ մի քանի նիստ. (խօսք են առնում) համարեա բոլոր ներկաները — Պատակ, Շահրիկեան, Իշխան, Թոփչեան, Գարօ, Համօ, Աբրահամ, Քաջազունի, Գուսան, Մանսեան, Ղարիբ, Հայր Աբրահամ եւ այլն:

Թէ՛ Մարմինների ներկայացուցիչները եւ թէ՛ անհատ ընկերները՝ ամէնքն էլ շեշտոււմ են Ռուսաստանի գործունէութեան անհրաժեշտութիւնը, ոմանք աւելի վճռական, ուրիշներ պակաս, բայց ոչ հակառակ արտայայտուող: Մասնաւորապէս բուռն կերպով պաշտպանոււմ է Համոն:

Բնական կերպով առաջ է գալիս Տաճկահայկական խնդիրը, որը Ժողովին բաժանոււմ է երկու բանակի: Ոմանք վախ են յայտնոււմ, թէ Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան գործունէութիւնից կը տուժէ Թրքահայ Դատը եւ խորհուրդ են տալիս զոյշ լինել, շատ առաջ չնետուել եւ յեղափոխութեան միանալ, երբ այլեւս անվիճելի լինի ցարական ուժի(19) անկումը: Դրա դէմ ընդվզում է Համոն. — «Ներկայ մոմենտում ոչակցիան(20) չի կարող յաղթել. զօրքը, ժողովուրդն իր ամենամեծ խաւերով, չինովնիկներն(21) իսկ, գիւղացիութիւնը ոտքի են կանգնել»: «Մենք չենք կարող առ այժմ, մեր պայմաններում, Կովկասեան Ֆեդերացիան(22) իրադրծել: Պէտք է կանգնենք ընդհանուր ռուսական օրէնսդիր ժողովի վրայ եւ Ֆեդերացիայի(22) սկզբունքներն ընդունել տանք այդ ժողովում: Ինչպէ՞ս գործենք: Ես խօսում եմ իբր մարդ եւ ոչ իբր ռուս քաղաքացի կամ հայ: Ես ասում եմ՝ մեր հայրենիքում կան տեղեր, ուր յեղափոխութեան մասին չի կարող խօսք լինել: Մեր աւելի ուժեղ թշնամին թուրքն է, քան ռուսը: Մենք կարող ենք կուռը կառավարութեան դէմ տեղափոխել աւելի յարմար տեղ՝ Թիֆլիս, նոյնիսկ Պետերբուրգ, բայց թուրքականը՝ հեշտ չէ: Պէտք է այնպիսի կառավարութիւն ստեղծենք, որ թուրքական վտանգից ապահով լինենք»:

Համոն համոզուած է, որ երկու-երեք շաբաթից յետոյ, պատմական ժամանակի անխուսափելի օրէնքով, առաջ կը դայ նոր, յեղափոխական կառավարութիւն: «Փաստերն այդպէս են ասում»:

Համոյին ուժգնօրէն հակաճառոււմ է Շահրիկեանը. — «Շատ առաջ չպէտք է ընկնել. կայ թուրքական վախ. ռուս կուսակցութիւնները թոյլ են: Թող առաջ ռուսները շարժուեն, յետոյ մենք»:

Ի վերջոյ ամէնքը համաձայն են մասնակցութեան: Նպատակը, — դեմոկրատիկ, Ֆեդերատիւ(23) Ռուսաստան, սոցիալիզմ(24) եւ այլն: Շատերը առարկում են Ֆեդերացիայի(22) դէմ:

Գարօ. — «Ֆեդերացիան նպատակ ընդունողները՝ վրացիները, լեհերը, մալորոսները, Ֆինները իրենց որոշ, առանձին տերիտորիան(25) ունեն եւ յոյս ունեն, որ Ֆեդերացիայի մէջ ամէն ազգ իր տերիտորիայի վրայ անկախութիւն կը վայելէ: Դրա փոխարէն մենք առաջարկում ենք Ռուսաստանում աւտոնոմ(26) Կովկաս եւ Կովկասում՝ Ֆեդերացիա: Բայց Կովկասի 57 գաւառներից միայն հինգի մէջ մենք մեծամասնութիւն ենք կազմում: Հենց այս հանգամանքի շնորհիւ ոչ աւտոնոմիա(27), ոչ Ֆեդերացիա մեզ օգուտ չեն

բերի, այլ միայն առաջ կը բերեն ազգային կուռներ»:

Համօ. — «Կարելի է ընդունել կովկասեան Ֆեդերացիան իրրեւ հեռաւոր նպատակ, իսկ անմիջական պահանջ՝ Կովկասի աւտոնոմիան(27): Կարծիք կայ ընկերների մէջ, որ Կովկասի աւտոնոմիան կարող է հայերիս համար վտանգաւոր լինել. դա սխալ է, որովհետեւ նախ՝ մահմետականներն Անդրկովկասում անկուլտուրական(28) ժողովուրդ են եւ յետոյ՝ թուով միայն 2½ միլիոն են: Բացի դրանից՝ թուրք-հայկական ընդհարումները ցոյց տուին, որ սիւննիները եւ շիաների մէջ թշնամութիւնը աւելի մեծ է, քան քրիստոնեաների եւ մահմետականների: Ապաւայում դասակարգային ինքնազիտակցութիւնն էլ աւելի կը թուլացնէ ազգային-չովինիստական(29) ձգտումները: Մահմետական գիւղացիութիւնը կը բաժանուի բեկերից: Վրացիների մէջ արդէն պարզ կերպով կայ այդ բաժանումը, եւ մեր աչքի առաջ տեսնում ենք դասակարգային կուռները վրացի գիւղացիների եւ ազնուականների միջեւ: Ուրեմն, ապաւայում ազգային անտաղնիզմ(30) աւելի եւս տեղի կը տայ դասակարգային անտաղնիզմին: Տերիտորիայի(25) խնդրին կարելի է առ այժմ նշանակութիւն չտալ: Կարելի է Անդրկովկասն այնպիսի մասերի բաժանել, որ ոչ մի խումբ՝ կազմուած միւլենոյն ազգին պատկանող անդամներից՝ չկորչի, օրինակ, ամէն մի 25-3000 հոգուն մի պատգամաւոր ընտրելու իրաւունք տալ: Դրանով խառն ազգաբնակչութիւն ունեցող տեղերն անգամ, ցրուած ազգայնական խմբերն իսկ ձայնից չեն զրկուի եւ իրենց շահերը պաշտպանող ներկայացուցիչ կ'ունենան ընդհանուր Կովկասեան Աէյում»:

Շահրիկեան. — «Ֆեդերացիան եւ սոցիալիզմը մեր անմիջական պահանջը չպէտք է լինեն, որովհետեւ Անդրկովկասում եւ ոչ մի ժողովուրդ այդ բանին չէ պատրաստուած: Մեզ համար Ֆեդերացիան անիրաւործելի է, քանի որ թուրքերն անհաւասար են կուլտուրապէս(31): Կովկասը՝ Ռուսաստանի անբաժան մասը, նրա նահանգներից մէկը՝ լայն կուլտուրական իրաւունքներով»:

Թափնեանը, ընդհակառակը, ընդունում է «Ֆեդերատիւ Ռուսաստան»՝ աւտոնոմ Կովկասով: Կովկասն էլ իր հերթին՝ ազգերի Ֆեդերացիա»:

Քաջազունի. — «Որպէս հեռաւոր իդէալ ինձ համալ էլ ցանկալի է Ֆեդերացիան, բայց կովկասեան պարլամենտի(32) հաւաքման օրը կը լինի եւ ընդհանուր կովկասեան պատերազմ յայտարարելու օրը: Որպէս իրաւականօրէն փաստակար՝ մեզ համար չպէտք է ցանկալի լինի ոչ Ֆեդերացիան, ոչ աւտոնոմիան: Մեզ հարկաւոր է լայն տեղական ինքնավարութիւն եւ մանր զեմստուոյական(33) միութիւն»:

Ղարիբ. — Կողմնակից է Ֆեդերացիային, որպէս սոցիալիզմ իրագործելու ամենանպատաւոր պետական-քաղաքական կազմ: Ապացոյց՝ նաեւ Բերելի խօս-

քերն այդ մասին...: «Դժուար թէ թուրքերն էլ այդպէս անկուլտուրական(28) մնան, ինչպէս ներկայումս, այնպէս որ նրանց մէջ էլ առաջ կը դասակարգային շահերի դիտակցութիւն եւ մերձեցման յաւելեալ հաւանականութիւններ կը տայ հայ աշխատատեղերի հետ»:

Խաժախ.— «Ամբողջ Կովկասը հանքային երկիր է: Հենց այդ պատճառով էլ Ֆեդերատիւ ատոնոմ Կովկաս պէտք է պահանջենք, որպէսզի Ռուսաստանի ներքին՝ երկրագործական նահանգների քայլերով չյառաջադիմենք... Զեմսուլո(33) պահանջողները ըստ իս, Ֆեդերացիայի դէմ չեն, որովհետեւ զեմսուլո առաւել Օրէնսդիր Ժողով՝ հաւասար է Ֆեդերացիային: Նոյն պէս եւ ներքին լայն ինքնավարութիւն+Օրէնսդիր Ժողով՝ հաւասարում է Ֆեդերացիային»:

Սաստիկ վէճեր են լինում Տաճկահայ Հարցի, Ֆեդերացիայի եւ սոցիալիզմի շուրջ: Ի վերջոյ ընդունուում է հետեւեալ բանաձեւը.

«Հ. Յ. Դաշնակցութիւնը ընդունում է Անդրկովկասի համար Ֆեդերատիւ կազմ, իբրեւ քաղաքական նպատակ, իսկ իբրեւ անմիջական պահանջ՝ Անդրկովկասի ատոնոմիա(27)՝ հիմնուած ռազմակալարական սկզբունքների վրայ եւ կապուած Ռուսաստանի հետ՝ Ֆեդերատիւ ձեւով»:

Ապա տակտիկայի վերաբերեալ ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

«Հ. Յ. Դաշնակցութիւնը լինելով սոցիալիստական(34) կուսակցութիւն՝ իր վերջնական նպատակին հասնելու համար ձգտում է ռամկավար Ֆեդերատիւ կառավարութեան թէ՛ Ռուսաստանի եւ թէ՛ ծայրագաւանների համար: Կովկասեան ներքին Ֆեդերացիայի մանրամասնութիւնները պիտի որոշէ Կովկասի համար հրահրուած յատուկ Սահմանադիր Ժողովը՝ անպայման ընդունելով Կովկասը անբաժան մասն Ռուսաստանի:

Իսկ ներկայումս, աչքի առաջ ունենալով շրջապատող պայմանները, Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում է ընտրողական հինգ սկզբունքներով համառուսական Սահմանադիր Ժողով, որը պէտք է մշակի հիմնական օրէնքներ՝ ամբողջ Ռուսաստանի համար:

Դրա հետ միասին, ցանկանալով օր առաջ իրականացած տեսնել խօսքի, մամուլի, ժողովների լիակատար ազատութիւնը, անձի եւ բնակարանի անձեռնմը-խելութիւնը եւ ռամկավարական սկզբունքների գործադրութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը չի դիմադրի Պետական Դումայի ընտրութիւններին, եթէ միայն այդ ընտրութիւնները կատարուեն ընդհանուր, հաւասար, գաղտնի եւ ուղղակի ձայնատուութեամբ: Այդ դէպքում՝ Դաշնակցութիւնը իր պատգամաւորներին կը յանձնարարի Պետական Դուման դարձնել Սահմանադիր Ժողով» (9 ձայնով՝ մէկի դէմ):

Ընտրուում է մի պատգամաւոր՝ մասնակցելու Պե-

տերբուրդի, ծայրագաւանների եւ ազգերի համագումարին:

Բուռն վիճարանութիւններ են լինում եւ «մեր յեղափոխական գործունէութիւնն ի՞նչ ձեւով պէտք է լինի» նիւթի մասին: Ոմանք պահանջում են վճռական գործելակերպ.— Հաւո՝ «եբր լսենք, որ այս ինչ կամ այն ինչ տեղը դուրս է եկել յեղափոխական կառավարութիւն, մենք պէտք է պատրաստ լինենք մեր տեղերում եւս յայտարարել ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւն՝ զօրքերի հետ միացած»: Ուրիշներ դէմ են առաջ ընկնելու եւ յախուռն քայլերի. Եսահրիկեան՝ «հիմն համար հարց է, թէ արդեօք զօրքի մեծադոյն մասը ո՞ր կողմը կը լինի. հի՞ն կառավարութեան, թէ՞ նոր՝ ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան: Արդեօք մի վիճակ չի՞ ստեղծուի, որի ժամանակ մենք ոտքի տակ կ'երթանք»:

Որոշուում է.

«Ռայ. Ժողովը հարկաւոր է համարում առաջարկել իր բոլոր մարմիններին՝ հիմնականից պատրաստուել, որպէսզի յարմար դէպքում կարողանան յայտարարել ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւն: Իսկ այն տեղերում, ուր կան ուրիշ յեղափոխական կուսակցութիւններ, այդ հողի վրայ միանան վերջիններին»: Աւելցուած է՝ «Այս որոշումը կ'ունենայ միայն բարոյական նշանակութիւն եւ ոչ իրաւական»:

ՆախաՎերջին ճիստ, Նոյեմբեր 22

Բացի Այգեստանի եւ Ապառափի պատգամաւորներից, հեռացել են եւ Զրարերդի ու Նաւահանգիստի պատգամաւորները հայ-թրքական ընդհարումների հետ կապուած գործերով: Քննուում է «Ազգային Բիւրօ»ի խնդիրը:

Ռուս կառավարութեան պետիցիա(35) ներկայացնելու համար ամէն քաղաքներից եւ հայաբնակ տեղերից հրահրուել էր մի «Ազգային Ժողով», մշակելու համար պետիցիան: Պատգամաւոր էին եւ մեր ընկերներից ոմանք: Յրուելիս՝ Ժողովը ընտրել է «Բիւրօ», որին յանձնարարել է անել մի քանի ազգային-կուլտուրական ձեռնարկներ: Բիւրոյի անդամ են ընտրուել Հ. Յ. Դ. Մարմինների մի քանի անդամներ: Վերջերս այդ Բիւրոյի անունից հայ մամուլի մէջ լոյս է տեսել մի յայտարարութիւն, որով ազգային ներկայացուցիչներին համագումարի են հրահրում, ի միջի այլոց, նաեւ «նոր քաղաքական կուսակցութիւն» կազմելու համար: Յայտարարութեան տակ դրուած է եղել եւ մեր ընկերների անունները, որպէս Ազգ. Բիւրոյի անդամներ: Հայր Աբրահամը, իբրեւ անդամ Ազգ. Բիւրոյի, յայտնեց Ռայոնական Ժողովում, որ ինքը ամենեւին տեղեկութիւն չի ունեցել Բիւրոյի քաղաքական կուսակցութիւն կազմելու վճռի մասին, որ ինքը դէմ է դրան եւ այդ մասին կը յայտարարէ թերթերում:

Այս առթիւ Ժողովը միաձայնութեամբ որոշեց.— «Աչքի առաջ ունենալով, որ «Ազգային» կոչուած «Բիւրոն» ազգային-կուլտուրական նպատակներով է եղել կազմուած, իսկ այժմ իրեն նպատակ է դրել նաեւ մի նոր «քաղաքական» կուսակցութիւն կազմելու հարցը՝ առաջարկել մեր այն ընկերներին, որոնց անունը յայտարարուում է «Բիւրոյի» անդամների թուում, դուրս գալ յիշեալ «Բիւրոյի» կազմից եւ մամուլի մէջ դրա մասին յայտարարել, որովհետեւ մի որոշ քաղաքական կուսակցութեան՝ Դաշնակցութեան պատկանելով հանդերձ՝ նրանք չեն կարող միաժամանակ նաեւ քաղաքական այլ կուսակցութեան կազմակերպողներ հանդիսանալ»:

Ռայոնական Ժողովը քննութեան առաւ նաեւ Ազգ. Բիւրոյի հրահրել՝ համագումարի եւ քաղաքական կուսակցութիւն կազմելու մասին: Ընդհանուր առմամբ արտայայտութիւնները եղան դէմ. մեծամասնութիւնը պնդում էր, թէ պէտք է բոյկոտ(36) յայտարարել համագումարի ընտրութիւնների դէմ եւ թոյլ չտալ, որ կայանայ: Բանաձեւի քուէարկութիւնը թողնուեց յաջորդ նիստին:

Յաջորդ՝ վերջին նիստը, Դեկտ. 1ին, եղաւ շատ կարճատեւ: Նոր էր բացուել, երբ լուր հասաւ, թէ Քիֆիսում, թուրքերի թաղում, սկսուել են հայ-թուրքական ընդհարումները: Ժողովականները անմիջապէս ցրուեցին քաղաքի զանազան մասերը՝ որոշ յանձնարարականներով ինքնապաշտպանութեան վերաբերեալ: Դրսի պատգամաւորները պատրաստուեցին մեկնել իրենց վայրերը: Ժողովը մնաց կիսատ, եւ չընձնուած հարցերը յետաձգուեցին հետեւեալ Ռայոնական Ժողովին:

- (1) Պէտք է ըլլայ Ալեքսանդր (Բալասան) կամ Աբրահամը (Գիւլիսանգանգ), — տեսնել Մ. Վարաճեան, «Հ. Յ. Դ. Պատմութիւն», էջ 418:
- (2) Ցանած գրգռութիւնները:
- (3) Ճգնաժամային պահուն:
- (4) Որոշ եղանակի լեռ բարձրանալու կամ ընդհանրապէս՝ պարբերաբար տեղափոխուելու գործադրութիւնը:
- (5) Միակտուր գանգուած:
- (6) Մշակույթը:
- (7) Նախաձեռնութիւնը:
- (8) Զանգուածներու, բազմութեանց:
- (9) Պահ, վայրկեան:
- (10) Շրջանի:
- (11) Տեսակ մը՝ քաղաքային սոսիալապետութիւն կամ սոսիալապետութիւն:
- (12) Դրութիւն:
- (13) Նուագազոյնի:
- (14) Սրիկաներու, առաջադրարայ մարզիանց:
- (15) Դրամագլուխ. որոշ ճղատակի սեփմանուած հիմնադրամ:
- (16) Քարազուրթիւն:
- (17) Ցարձակապետ:
- (18) Քաղցնի գոտակարգ:
- (19) Վարչակարգ:

- (20) Հակազգայնութիւնը (հակայնապետութիւնը իմաստով):
- (21) Պաշտօնանկութիւն:
- (22) Համադաշնակցութիւն:
- (23) Ժողովրդավար-դաշնակցային:
- (24) Ընկերավարութիւն:
- (25) Հոգամտք, երկիրը:
- (26) Ինքնավար:
- (27) Ինքնավարութիւն:
- (28) Մշակույթ, գարգացում գութի:
- (29) Մայրաքաղաք, այլամերձ ազգայնական:
- (30) Հակառակութիւն, թշմամբութիւն:
- (31) Մշակութապէս, գարգացման սոսիալապետ:
- (32) Խորհրդարանի:
- (33) Զեմսուլո, անտերէն բառ, — տեղական կամ գաւառական վարչութիւն, ինքնավարութիւն:
- (34) Ընկերավարական: Հետաքրքրական է 4րդ Ընդհ. Ժողովին շուրջ տարիուկէս առաջ Դաշնակցութեան պաշտօնագլու տրուած այս անկումը, որով առաջին անգամ ըլլալով է որ կը համարուէին ժողովներու տեսնագրութեանց մէջ (զէք՝ պաշտօնական բանաձեւի մէջ):
- (35) Ցուլագիր, բազմագիր:
- (36) Պոյկոտ, — արգելի, չտեսնակցելու որոշում՝ որիւէ նախաձեռնութեան, աշխատանքի կամ գործի նկատմամբ:

ՅԻ.— ՈՒՂԵՑՈՑԵՑ ԿՈՎԿԱՍԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ղեկավարուելով Հ. Յ. Դաշնակցութեան նպատակով, հիմնական սկզբունքներով ու յեղափոխական կեանքի առաջ բերած աւանդութիւններով: Ընդունելով որ ամէն մի քաղաքական կուսակցութիւն առողջ և կենսունակ է միայն այն ժամանակ, երբ իր իդէալը (թէկուզ վերջինիս փոքրագոյն մասերով) մարմնացնում է կեանքի մէջ հենց այսօրուանից իր առօրեայ գործունէութեան ընթացքում, —

Կովկասում ու Ռուսաստանում գործելիս Դաշնակցութիւնը նպատակ է դնելու եւ իրականացնելու է հետեւեալ հասունացած պահանջները.

Ա.

Երբեք աչքից չթողնել տաճկահայերի դրութիւնը, որ՝ համեմատած այլ վայրերում ապրող հայերի վիճակի հետ, անհերքելիօրէն շատ աւելի ծանր և նոյնիսկ անտանելի է: Ինչպէս անցեալ տարուայ ընթացքում հայութեան բոլոր գզայուն տարրերու ուշադրութիւնը կենտրոնացած է եղել այս պատմակառնութիւնը և քաղաքական հասունացած հարցի վերայ, նոյնպէս եւ ներկայումս համայն հայութեան պարտքն է համարելու ձեռք բերել Տաճկահայաստանում այնպիսի բարեփոխութիւններ, որոնք ապահովեն հայի կեանքը, դոյքը, աշխատանքը, նրա լեզուի, քաղաքացիական իրաւունքների կատարեալ հաւասարութիւնը թուրքերու հետ, եւ եւրոպական հեղուկութեան տակ. տան երաշ-

խաւորութիւնը հայի մարդկային եւ ազգային առաջադիմութեան:

Մեր այս ազգային պատմական նպատակին հասնելու համար, կովկասի եւ Ռուսաստանի բոլոր Դաշնակցական Մարմինները պարտ են՝

1) Տարածել տեղեկութիւններ տաճկահայերի արդի կացութեան եւ նրանց պահանջներու մասին. պրոպագանդ ընել թուրքիայի այժմեան ուժիմի դէմ. հաստատել բարեկամական յարաբերութիւններ այն ոչ-հայերու հետ՝ որոնք կարող են մեզ դառնալ դաշնակիցներ թուրքիայում:

2) Յատկացնել իրենց դրամական հասոյթներու մեծազոյն մասը տաճկահայերի ինքնապաշտպանութեան, գինման, նրանց դատի պաշտպանութեան: Կատարել զէնքի գնումներ, փոխադրել վերջիններս հարկ եղած վայրերը: Ռուսահայերից պատրաստել զինուորներ, որոնք — զինուելով, վարժուելով ու պաշտպանելով իրենց կեցած վայրն ու հարեւանները աւագակների եւ այլ տեսակ թշնամիների (դէմ) — հարկ եղած դէպքում գնալու են Տաճկահայաստան, կամ մասնակցելու են նրա դատի համար կազմակերպուած այլ եւ այլ ձեռնարկներուն (Տես № 3 գին. խմբերու ծրագիր)(1):

3) Օգնել թուրքաց բարբարոսութիւններից հեռացած փախստականներուն ու գաղթականներուն, գտնելով նրանց համար աշխատանք, հասցնելով բարոյական սփոփանք: Լայնացնել կովկասում ապաստանած տաճկահայերի գիտակցութիւնը, վարժեցնել զէնքի եւ այլ պաշտպանուելու միջոցների գործածութեան եւ այդպիսով կազմակերպել այն ազգային փրկութեան զինուորական բանակը, որ միակը կարող է պաշտպանել հայ ժողովուրդը նորանոր կոտորածներից, որը միայն կարող է խորտակել թուրքիայի ուժը:

Բ.

Պաշտպանել ու զարգացնել մեր ազգային առանձնայատկութիւնները — լեզուն, գրականութիւնը, պեղարուեստը եւ այլն — որոնք չեն վնասուած մեր հարեւաններուն, հետաքրքիր են մարդկութեան՝ բազմակողմանիութեան տեսակէտից եւ թանկ ու սուրբ են մեզ համար: Ապահովել հայ ազգաբնակչութեան բարեկեցութիւնը, մաքառել ու պատնէշներ կանգնեցնել կառավարութեան այն բացառիկ միջոցներու դէմ՝ որոնց շնորհիւ հայն զրկուում է ուսնների վայելած առանձնաշնորհումներից, եւ բացի ընդհանուր մարդկային ու քաղաքացիական ճշուններից՝ նա ենթակայ է նորանոր ճշուններու իրեն հայ, իրեն փոքրամասնութիւն կազմող տարր:

Ատոր համար.

1) Ամէն հայ մի ուրիշ հայու հետ յարաբերութիւն ունենալիս պործ է ածելու հայոց լեզուն: Չզիտ-

ցողը սորվելու է հայոց գիրը, իսկ գիտցողը տարածելու է վերջինս, ինչպէս եւ հայ գրականութիւնը, թէ՛ անձնականապէս եւ թէ՛ դասատուութեան, գրադարաններու, ընթերցարաններու, դպրոցներու, երեկոյթներու եւ այլ եւ այլ միջոցներով:

2) Պահպանելու եւ զարգացնելու է տեղական-ժողովրդական, ազգային կամ պատմական գոյն ունեցող սովորութիւնները, ճարտարապետութիւնը, տարազը:

3) Հաստատելու է գանազան գոյնի տնտեսական ու արդիւնարեական հիմնարկութիւններ ուս տարրին շնորհուած արտօնութիւններուն դէմ մաքառելու, հային աշխատանք եւ հաց գտնելու եւ ազգային հաւասարակշռութիւնը պահպանելու համար:

4) Յատուկ ուշադրութիւն է դարձնելու հայ մանուկ սերունդի եւ ուսանողութեան մտաւոր ու բարոյական զարգացման վերայ՝ մեր արդի ազգային պայմանների եւ մանկավարժութեան պահանջների համեմատ (տես Գ., ուղեցոյց աշակ-ուսանողական խաւերի համար):

Գ. — Աւղեցոյց հայ ուսանողական-աշակերտական խաւերու համար

Աշակերտական-ուսանողական խաւերում, ինչպէս եւ այլ կրթական գոյն ունեցող շրջաններում (որոնց նպատակն է լայնացնել մարդու գիտակցութիւնը եւ պատրաստել գաղափարական մարդուն եւ հայ յեղափոխականին վայել յատկութիւններով օժտուած ընկերներ), առաջնորդուելու է հետեւեալ հիմքերով.

1) Չարգացումը տանել քայլ առ քայլ, մօտիկից հեռուն, տարրականից դէպի բարձր. բնական-թուաբանական, դրական, անհերքելի ճշմարտութիւններից՝ անցնել դէպի աւելի դժուար ըմբռնելի եւ ոչ հաստատուն պատահականը, քաղաքական-փիլիսոփայականը. եզրակացութիւնները ընել ճիշդ, քննադատութեան դիմացող փաստերի հիման վրայ, վերցուած մանաւանդ հայ ժողովուրդի կեանքից: Լայնացնելով դէպի ընտանիքը, ընկերը ունեցած սէրը, հասցնել դա մինչեւ հայրենի երկիրը, ազգը, մարդկութիւնը: Այցելելով հայկական վայրերը, ապրելով հայ աշխատաւոր ազգաբնակչութեան հետ եւ տեսնելով, շօշափելով, ուսումնասիրելով նրա պէտքերը միայն, կազմել ծրագիր ու աշխատել նրա վիճակի բարելաւման համար: Մեզ շրջապատող պայմանները բռնելով իրեն հիմք, նոյնպէս դիմել այլ երկրների եւ ուրիշ ազգերի տուած խրատական դասերին:

2) Պոյս տալ լոկ վերացական ըմբռումներից, քարոզներից, փայլուն բայց օղային ծրագրերներից: Պօսքը առանց պործի մեռեալ է եւ համոզումներն ու սկզբունքները արժէք ունեն եւ հաստատուն կարող են մնալ միայն այն ժամանակ, երբ մարմնացուում են կեանքի մէջ: Ընկերասէր լինելու համար, ոչ այնքան

քարոզելու է «ընկերասիրութիւն», ինչքան միշտ եւ բոլոր միջոցներով օգնելու է աւելի թոյլ եւ կարօտ ընկերներին. հայրենասէր լինելու է ոչ այնքան «ա՛խ Հայաստան» պոռալով, ինչքան ճանաչելով այդ հայրենիքի սարերն ու դաշտերը, դիտնալով նրա անցեալն ու ներկան, ապրելով հայ ժողովրդի հետ, ուրախանալով նրա առաջադիմութեամբ, ցաւելով նրա թշուառութիւններով. ազնուութեան ու մարդկութեան շահերն է պաշտպանելու՝ անձամբ լինելով ազնիւ, օգնելով ու ծառայելով այդ մարդկութեան այն փոքրիկ մասին՝ որը ամենէն շատ կարօտ է օգնութեան, որի մէջ մարդս ապրում է...

3) Չարգացնել անհատի գիտակցութիւնը, քննադատական ընդունակութիւնները, անհատականութիւնը ամենալայն եւ ամենաազատ կերպով: Չքաշուել այդ քննադատութիւնից առաջ եկող ըստ երեւոյթին «անցանկալի» հետեւանքների. հայրենիքի եւ մարդկութեան լայն շահերի տեսակէտից աւելի լաւ է ունենալ զարգացած, ուղղամիտ եւ ազնիւ «հակառակորդ», քան թէ անկամք, երկդիմի ու թուօթական «հետեւորդ»:

4) Գիտական, հասարակական եւ բարոյական հարցեր քննելիս ճշմարտութիւնը պարզելու է ազատ ջրնադատութեամբ ու համոզումով, եւ ոչ թէ քուէարկութեամբ ու ձայներու թուով:

Եթէ ճիշդ է որ կուռի մէջ կարգապահութիւնն ու խմբապետին հնազանդուելը հանդիսանում է յաղթութեան պայմաններից մին, իսկ առօրեայ գործնական կեանքում «ամբոխի ձայնը» շատ անգամ լինում է «Աստուծոյ ձայն», ոչ պակաս ակնհայտ է՝ որ անհատ հերոսներն ու մարգարէներն են, ըմբոստ ու անձուէր փոքրամասնութիւնն է, որ, փոթորկելով հասարակական լճացած մթնոլորտը, վառած են, առաջ են տարած ճշմարտութեան, Արդարութեան եւ Ազատութեան ջահերը...

Ամէնուրեք եւ մանաւանդ հայերի ապրած վայրերում պահանջել եւ ուժով ձեռք բերել խղճի-խօսքի ազատութիւն, անհատի եւ ազգութիւններու կատարեալ հաւասարութիւն, ապակենտրոնական-դաշնակցական(2) վարչական կարգեր, որոնք միայն կարող են թուլացնել ազգային ու դասակարգային կոիւնները, որոնք միայն ընդունակ են թոյլերն ու փոքրամասնութիւնը ապահովել ուժեղների ու մեծամասնութեան ճնշումից:

Ուստի ցոյցերի, տետրների, կուռի եւ այլ միջոցներով՝

1) Ոչնչացնելու է ազնուականների, Հոգեւորականների, ուսուղաւանների, քրիստոնեաների վայելած յատուկ արտօնութիւնները, կամ տարածելու է այդ իրաւունքները ազգաբնակչութեանց բոլոր խաւերի վերայ:

2) Տարրական, միջնակարգ եւ այլ կրթական հիմնարկութիւններում՝ դասատուութիւնը կատարելու է երկխոյն մայրենի լեզուով:

3) Ոչնչացնելու է ուսու տարրին ուղղակի կամ անուղղակի կերպով արուած առանձնաշնորհումները, դադարեցնելով ուսու գաղթականները դէպի կովկաս եւ վերջինիս ազատ Հողերը յատկացնելով Հողազուրկ կամ Հողապակաս տեղացիներին:

4) Պառն ազգաբնակչութիւն ունեցող վայրերում — շրջան, նահանգ, պաւառ, համայնք — վարչական, դաստատանական եւ այլ հասարակական հիմնարկութիւններում գործածական եւ հաւասար(ապէս) պաշտօնական է համարելու այն բոլոր լեզուները, որոնցով խօսող ազգաբնակչութիւնը կազմում է ժողովուրդի գոնէ 1/5 մասը: Վարչական եւ այլ հիմնարկութիւններում ծառայողների թիւը լինելու է շրջանի այլ եւ այլ ազգութեանց թուի համեմատ:

5) Սահմանափակելու է կեդրոնական վարչութեան իրաւունքները, ուժեղացնելով ատոր փոխարէն աւելի փոքր տեղական մարմինների իրաւասութիւնները: Վերջիններիս եւ մանաւանդ միապաղաղ ազգութիւններից կազմուած համայնքներին է վերապահելու լուսաւորութեան, արդարադատութեան, կրօնական պէտքերու, հաղորդակցութեան, առողջապահութեան, տէրունական գոյքերի հսկողութիւնն ու ղեկավարութիւնը:

Գ.

Ոչ միայն քարոզելով ու օրէնսդրութեան փոփոխութիւնով, այլ եւ առօրեայ անձնական կեանքի մէջ եւ օրինակով պաշտպանելու է աշխատաւոր դասակարգի եւ մանաւանդ նրա զրկուած մասերի շահերը, մաքառելու է «պատահականութեան» առաջ բերած անարդարութիւններին դէմ: Համայնական կարգերու, ընկերական ձեռնարկներու պահպանութեամբ, զարգացումով եւ նոյնիսկ պատուաւարութեամբ՝ մեղմացնելու է մրցման պայքարի դերը եւ քայլ առ քայլ մօտենալու է հաւասարութեան ու եզրայրական կարգերու իրականացման:

Գիւղական ազգաբնակչութեան մէջ

1) Համայնական-թաղական գործերի աւելի նպատակայարմար ղեկավարութեան համար, գիւղը կազմող այլ եւ այլ թաղերից, ցեղերից, կուսակցութիւններից ընտրելու է խորհուրդ (երեք անձն ոչ պակաս), որը մշակելով համայնքին վերաբերեալ այլ եւ այլ կարիքները եւ ներկայացնելով զայն ի հաստատութիւն համայնական ժողովին՝ կ'իրականացնի այդ առաջարկները:

Համայնական Պորհուրդին է վերապահուում, ի միջի այլոց՝ գնել համայնքի համար նոր Հողեր, կառուցանել ջրանցքներ ու աղբիւրներ, բանալ ճանապարհներ, համայնական գրադարաններ, բազնիքներ,

կրթական-կրօնական հիմնարկութիւններ, աչքաբաց գիւղերում հաստատել համայնական կամ ընկերական խանութներ, գինու պահեստներ, պանիրի եւ իւղի գործարաններ, գինի եւ շահագործել համայնքին օգտակար՝ հնձելու, հատիկներն ու բամբակը մաքրելու մեքենաներ. միացած հարեւաններու հետ կամ միայնակ՝ հաստատել գիւղական դրամարկղ-բանկներ, հրաւիրել բժիշկ, բանալ դեղատուն եւ առ հասարակ իրականացնել այլ եւ այլ տնտեսական ձեռնարկներ, որոնք կարող են օգտակար նկատուել համայնքի բարեկեցութեան համար:

2) Ազնուական, բէկական եւ այլ կալուածատիրական գիւղերում — օրինական թէ բռնի միջոցներով — համայնքի եւ հողագործներու սեփականութիւն է դարձնելու բոլոր հողերը՝ որոնցից օգտուում են աշխատակորները: Հողագործութեամբ պարապող այսօրուայ հողատէրերին, հանելու է բաժին հասարակութեան միւս անդամներու հաւասար, իրենց ընտանիքի անդամներու թուի համեմատ:

3) Պաշտպանելու է համայնական հողատիրութեան սկզբունքները, մտցնելու է հողաբաժանման մէջ կանոնաւորութիւն, հողաբաժանութիւնը կատարելու է ջանի (նաֆարի) համեմատ(3):

Այն հողերը, որոնց բարելաւման համար պործ է դրուած անհատական-ընտանեկան մեծ աշխատանք (տնիւր, այգիները եւ այլն), հողաբաժանման դէպքում թողնելու է աշխատանք թափող ընտանիքի ձեռքում, կամ վճարելու է թափած աշխատանքի արժէքը:

Բանջարանոցները, ջրուող կամ գիւղին կից մեծ արժէք ունեցող հողերը կարող են բաժանուել աւելի ուշուշ, քան թէ հեռու գտնուած վայրերի հողերը, մանաւանդ խոտհարքները:

Անտառները, արօտները, հանքերը, ջրերը, ճանապարհները բաժանման ենթակայ չեն եւ մնում ու բարեփոխուում են համայնքի հսկողութեան տակ:

Կալուածատիրական գիւղերում, ուր 1866 եւ 1870 թուականներից վարելահողի բաժինները յատկացուած են ոչ թէ համայնքին այլ մասնաւոր ընտանիքների, համայնքի իրաւասութիւնը պահպանուելու է արօտների, անտառների եւ այլ կարգի մշակուած հողերի վերայ, եթէ ցանկութիւն չկայ համայնքի տրամադրութեան տակ դնել բոլոր հողերը:

4) Տուրքերն ու գիւղական ծախքերը վճարել հարստութեան բոլոր ճիւղերի արժէքի համեմատ (հող, շինութիւն, անտառ, առձեռն կամ վաճառականական դրամ), դուրս ձգելով հարկաւ պարտքերը:

Տուրքից ազատ համարել հողագործի անկախ գոյութեան համար անհրաժեշտ աշխատանքի միջոցների նուազագոյն մի մաս (հողագործի մի ջուրու եզր, մի կովը, մի սենեակը, մի քանի ամսուայ պաշարը), կամ ընդհանրապէս՝ կարողութեան առաջին 200-300 ուրբլին...

Տուրքից ազատ համարել նոյնպէս այն սակաւաթիւ ընտանիքները, որոնց անդամը գինուոր է, կամ գտնուում է Տաճկահայաստանում իբրեւ կամաւոր, եւ որոնք այդպիսով զրկուում են գինուոր-կամաւորի աշխատանքից:

5) Ամէն տարուայ վերջ, իսկ բացառիկ պարագաներում նոյնիսկ տարուայ ընթացքում, կատարել յատուկ հանդանակութիւն (գլխաւորապէս յաջողութիւն ունեցած ընտանիքների մէջ), օգնութեան գնալու համար այն թոյլ ու չքաւոր համայնքի անդամներին ու հարեւաններին, որոնք տուժած են բնութեան կամ պատահականութեան հարուածներից (հիւանդութիւններից, հրդեհներից եւ այլն...):

Քաղաքային բանուորութեան խաւերում

Դաշնակցական բանուորական մարմինները, Ա. Բ. Գ. կէտերում նշանակուած պահանջներու իրականացման նպատակու հետ միասին, համերաշխ միւս բանուորական տարրերու հետ ձգտելու են՝

1) Եւրօրացնել իրենց աշխատանքի վարձատրութեան չափը եւ իջնցնել աշխատանքի ժամանակամիջոցը:

2) Բարելաւել իրենց աշխատանքի վայրի առողջապահական եւ կենցաղապարական պայմանները:

3) Մարդկային եւ ազգային գիտակցութեան հետ միասին, ձգտել իրենց մասնագիտական առաջադիմութեան:

4) Կազմակերպել սպառողական եւ արդիւնաբերական հաստատութիւններ ընկերական հողի վրայ:

5) Հիւանդութեան, անպործութեան, գործադուրների, դէպքերի համար ունենալ ընկերական դրամարկղ:

6) Իբրեւ արտադրող ապրանքների ստեղծագործներից մին՝ նպատակ դնել մասնակից դառնալ գործարանի զուտ արդիւնքին, համապատասխան բանուորների «աշխատանք-կապիտալ»ի արժէքի(*), արդիւնաբերութեանը մասնակցող միւս տեսակ կապիտալներուն կից (հող, շէնքեր, մեքենաներ, առձեռն դրամ) եւ հետեւաբար ունենալ ներկայացուցիչներ գործարանի վարչութեան մէջ:



Այս բաղձակողմանի նպատակին հասնելու համար՝

(*) Իբրեւ չափ ապրանքը արտադրող այլ եւ այլ միջոցներու (աշխատանք, հող, հիմնական ու առձեռն դրամ) ընդունելու է կամ այդ մասերու տարեկան ծախսը (բանուորի վարձ, հողի վարձ, դրամապլուրի տոկոս), կամ դրանց արժէքը: Վերջի դէպքում՝ աշխատանքը ներկայացնող կապիտալի չափը գտնուելու է բանուորի տարեկան աշխատանքը արժէքի վերածելով (capitalisation ընկելով), այսինքն բաղձապահելով 16 2/3, 20% եւ այլ թուերի վերայ, նայած սեզոնական 9/0% չափին:

1) Անհրաժեշտ է, որ նրա իրականացման ծառային ոչ միայն այս կամ այն իրաւասութիւն ունեցող Դաշնակցական Մարմինները, որոչ վայրում եւ սահմանափակ օժանդակութեամբ, այլ եւ ամէն մի դաշնակցական անհատ իսկ, ուր որ ալ գտնուի եւ իր ուժի ամբողջ կարողութեամբ: Անհատի ցոյց տուած անձնուիրութեան, զոհարերութեան եւ կարողութեան չափից է կախուած լինելու նրա անդամակցութիւնը փոքր թէ մեծ պատասխանատուութիւն ունեցող Մարմիններում մէջ:

2) Անհրաժեշտ է, որ ամէն մի դաշնակցական տագորուած ըլլայ ազնիւ մարդուն յատուկ եւ յեղափոխականին վայել բարոյական-հասարակական յատկութիւններով: Հետեւաբար այս կամ այն կերպով ադատուած անհատները չեն կարող համարուել Դաշնակցութեան անդամ:

3) Անհրաժեշտ է, որ ամէն մի դաշնակցական իր առօրեայ կեանքի մէջ մօտեանայ իր դրած իդէալին կազմում է մեր Մրազրի հիմքը(4):

Հետեւաբար՝
Ա) Ամէն մի դաշնակցական իր կենաց հացը հայթայթելու է իր ազնիւ աշխատանքով(*):

Բ) Գործին ամբողջովին նուիրուած գործիչներն ու գինուորներն իսկ իրենց առօրեայ կեանքի ապրուստի մէջ ընկելու են նիւթական զոհարերութիւն, ամէն մէկը իր դուրսը գտնուած ատեն ունեցած աշխատանքի համեմատ(5):

Գ) Ամէն մի դաշնակցական գինուոր ու գործիչ աշխատելու է (թէկուղ այդ աշխատանքը չզնահատուի ու չվարձատրուի), քաջ գիտակցելով, որ «ամենացած» համարուած աշխատանքն իսկ չա՛տ աւելի պատուաբեր է քան «մաքուր»... պարապութիւնը:

(*) Այդ հիման վրայ Դաշնակցութեան անդամ չեն կարող լինել տոկոսով ապրողները, վաշխառուները, խոշոր կապիտալիստներն ու հողատէրերը եւ առհասարակ այն բոլոր անհատները՝ որոնց ապրուստի մեծագոյն մասը ստացուում է ոչ անձնական աշխատանքից:

(1) Կ'ակնարկուի քերիս պատրաստուած այլ ծրագրի մը, կամ ակնարկուած բաժնի մէկի ձգում է արտագրութեան առիթով:

(2) Գործածուած է զաշնակցային(ի) (ֆեդերատիւ) խմատով:

(3) Մեզի համար ամեալեմայի: Կ'ակնարկուի հաւաքութիւն ըստ ընտանիքի բաւին համեմատական բաշխումի մը:

(4) Բացայայտօրէն՝ պակաս մաս մը կայ այս թախազատութեան մէջ, հաւանաբար մնացած՝ արտագրութեան միջոցին:

(5) Իր «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան» մէջ, Միքայել Վարաճեան արդար հպարտութեամբ կը մէջընդմիջ հատուած մը Սիմոն Զուարթեանի կողմէ Սոֆիայի (Յրդ) Ընդի. ժողովին մերկայացուած «մէկ երկար բաժանել, որ զիարգապատեալեան» խորագրին տակ կը պահուի կուսակցութեան արշիվներում: Կու տամք տարբի՝ առ ի բազմապատկան մերկայ գրութեան հետ եւ առ ի ամբողջացում դաշնակցական Զուարթեանական-բարոյական տիպարի պատկերացումին:—

«ԿԱՏՅԵԼՈՎ ՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԳՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՄԵՐ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐԻՑ ՄԷԿԸ, ԻՍԿ ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԱՐԿԱՆՑ ԱՆՔԱՐՈՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՊՐՈՒՍՏԻ ԹԵՄԵՒ, ԲԱՅՑ ԾՈՒՌ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՄԵԼՈՒ, ՈՐ ԳՅՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐԿԸ, ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝ ա) ՈՐ ԱՄԷՆ ՄԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՕԺՏՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ԱԶՆԻՒ ՄԱՐԿԻՆ ՎԱՅԵԼ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՈՒ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, բ) ՈՐ ԱՄԷՆ ՄԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ, ՈՒՐ ՈՐ ԵՎ ՆԱ ԳՏՆՈՒԻ, ՏԱՐԱՅԵԼՈՒ ԵՎ ԻՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՔԱՐՈՂՈՎ ԵՎ ՄԱՆԱՍԻ ԿՈՆԿԵՏ ԳՈՐԾՆԵՐՈՎ, գ) ՈՐ ԱՄԷՆ ՄԻ ԶՆՆՈՒՈՐ, ԿԱՄ ԱՅԼ ԿԱՐԳԻ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԿԱՄ ԵՐԿՐՈՒՄ, ԵՐԲ ՆԱ ԱՄՐՈՂՋՈՎԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԶԵ, ԻՐ ԱՊՐՈՒՍՏԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԻՐ ԱԶՆԻՒ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ»...:

ՅԱՒԵԼՈՒՄ I

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմանակ Մարմիններու 1904-1906 բուսականներու գործունէութեան, հայ-քաքառական կռիւներու եւ ի մասնաւորի Պաֆուի շրջանի աշխատանքներուն ու գործի մասին բուսական մանրամասն անդրադարձ է Արքեպիսկոպիտան Վաչագանի «Հայրենիք» ամսագրի գանազան քերական մէջ հրատարակութեան տուած իր յօդուածաշարքինով: Հետաքրքրուող բնիկները յայտնուի կրկն օգտուի ի մասնաւորի՝ ամօր «Բագուի գործ մեր պատագրական շարժման մէջ» (Բ. տարի քիւ 3էն՝ միջնի Գ. տարի քիւ 5), «Հայ-քաքառական ընդհարումները Բագուի մէջ» (Ժ. տարի քիւ 8էն՝ միջնի ԺԳ. տարի քիւ 1), «Բագուի կրկնոր ընդհարումները» (ԺԳ. տարի, քիւ 4էն միջնի քիւ 8), «Հայ-քաքառական կռիւները Ազրիկովկասում» (ԺԳ. տարի, քիւ 10էն միջնի քիւ 12), «Բագուի մեր գործիները» (ԺԳ. տարի, քիւ 3), «Յեղափոխական գիւղերը» (ԺԳ. տարի, քիւ 5 եւ 6, ապա Յանի ԺԵ. տարի՝ քիւ 1էն 3) եւ այլ յօդուածաշարքներէ:

Արքեպիսկոպիտանի գործերէն աւելով, կու տամք հետեւեալ կարգ մը փաստագրութեան, որոնք կը վերաբերին Դաշնակցութեան տունայ ժամանակաշրջանին՝ ի մասնաւորի 1905 եւ 1906 տարիներու կողմանակ գործունէութեան:

Ա. — ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՎ Հ. Յ. Դ. ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿԵՐԻ. ԿՈՄԻՏԵՒԻ ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆԸ

Յաջորդաբար կու տամք Ա. Գ. ի բացատրական-մերածական եւ կեդրոնական կամուրջի շրջաբանականը (Բագուի կրկնոր ընդհարումները, Հայրենիք ամս., ԺԳ. տարի քիւ 8 — Յունիս 1905, էջ 132-134):

1905 թուի օգոստոսի 1ին կայսերական յատուկ հրամանով վերադարձուցին հայերից խլուած կալուածները:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ երկու տարի առաջ կեկեղեցական կալուածները դրաւելու ժամանակ հերոսական պայքար մղեց ցարական կառավարութեան դէմ, այսօր տեսնում էր իր պայքարի պտուղները: Մի մեծ գիջում էր, որ բունկալական Ռուսաստանը անուժ էր պայքարող Հայ ժողովրդին...:

Չնայելով որ հայութիւնը Անդրկովկասի բոլոր վայրերում արին էր թափում եւ գրազուած էր թաթարական վճռակների դէմ անդադար պայքարելով, այնուամենայնիւ կալուածների վերադարձի հրովարտակը ընդունուեց նմանը չտեսնուած ցնծութեամբ բոլոր հայերի կողմից անխտիր:

Հայ հոգեւորականութիւնը եւ բուրժուական մտաւորականութիւնը, որ արդէն մեծ յոյսեր էին կապել նոր Փոխարքայի հետ, անշուշտ որոշ ներշնչումներ ստանալով Վորոնցով-Դաշկովի պալատից, այդ յազ-թանակը վերադրեցին նոր Փոխարքայի քաղաքականութեան, նրա պետական հասունութեան եւ հոտառութեան: Նրանք իրենց տեսակէտները աշխատում էին տարածել նաեւ հայութեան այլ խաւերի մէջ՝ ներշնչելով այն միաքը, թէ հայութիւնը այլեւս ոչ մի պահանջ չունի եւ չի էլ կարող ունենալ Ռուսաստանում:

Հայոց կաթողիկոսը, որ մի ժամանակ յեղափոխականի համբաւ ունէր, այդ ծերունի Խրիմեանը, որին երկու տարի առաջ նոյն ցարի զինուորները սուրիններով արգիլում էին էջմիածնի վանքը մտնելը, այժմ յատուկ կոնզակով կարգադրում էր հայ եկեղեցիներում գոհարանական մաղթանքներ կատարել կայսեր արեւշատութեան համար եւ շնորհակալական հեռագրեր զրկել ցարին եւ Փոխարքային՝ յայտնելու երախտագիտութեան զգացումներ: Եղան մինչեւ անպամ որոշ զիրք ունեցող հայ անհատներ, որոնք չմոռացան ամենաքծնող հեռագրեր հասցնել Փոխարքային եղած մեծ «շնորհի» համար:

Բոլորովին այլ կերպ էր հասկանում կացութիւնը Դաշնակցութիւնը:

Դեռ եւս մի քանի օր առաջ միայն պայթել էին ուռմբեր Կովկասի քաղաքներում եւ Երևանում մէջ՝ կարմիր սուլթանի դէմ:

Թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր կերպով Դաշնակցութիւնը դուրս եկաւ հրապարակ՝ հայ ժողովրդին բացատրելու որ եղած զիջումը ոչ թէ հետեւանք է Փոխարքայի հեռատես և իմաստուն քաղաքականութեան, այլ միայն հայ ժողովրդի անգուց կայքարին:

Բազուի Կենտրոնական Կոմիտէն, որ կանգնած էր այդ պայքարի առաջաւոր դիրքերում, բնականաբար չէր կարող լռել:

Կարեւոր ենք համարում առաջ բերել Բազուի Հ. Յ. Դ. եան Կ. Կոմիտէի այդ առթիւ բաց թողած թուղթիկը, որ իրական արտայայտութիւնն էր այն ժամանակուան Դաշնակցութեան հոգեբանութեան.—

Հայ ժողովուրդ,

Հեռագիրը հաղորդեց, որ բարձրագոյն հրամանով վերադարձուում են եկեղեցուց յափշտակուած կալուածները: Նոյն բարձրագոյն հրամանով վերաբացուած են հայ-թաթարական ուսումնարանները, 1874 թուին հաստատուած ծրագրով:

Ի՞նչ պատահեց: «Թաղաւոր-կայսրը բարեհաճեց

զիջանել հայոց կաթողիկոսի աղերսանքներին եւ կովկասեան փոխարքայի միջնորդութեանը», — տեղեկացնում է մեզ հեռագիրը: Տարիներ առաջ թաղաւոր կայսրը բարեհաճեց փակել հայոց ուսումնարանները, եւ որովհետեւ շատ ուսումնարաններում երեխաները, խմբուած դասատուների մէջ, չէին ցանկանում դուրս գալ, թաղաւոր-կայսրը բարեհաճեց հրամայել իր կողակներին պոկ տալ երեխաներին նստարաններից, նազայկաներով վռնտել ուսումնարաններից: Երկու տարի առաջ թաղաւոր-կայսրը բարեհաճեց գրաւել հայ եկեղեցու դարաւոր սեփականութիւնը. եւ որովհետեւ հայերը փակեցին կայսերական պաշտօնեաների առաջ եկեղեցու դռները, թաղաւոր-կայսրը բարեհաճեց հրամայել կոնզակներին գնդակահարել այդ մարդկանց: Այս նոյն թաղաւոր-կայսրը բարեհաճում է վերաբանալ ուսումնարանները եւ վերադարձնել եկեղեցական սեփականութիւնը:

Սա ի՞նչ տարօրինակ, ապշեցնող բարեհաճումներ են: «Հայոց կաթողիկոսը աղերսեց, Կոմս Վորոնցով Դաշկովը միջնորդեց եւ ահա թաղաւոր-կայսրը բարեհաճեց», — բացատրում են մեզ:

Բայց մի՞թէ հայոց կաթողիկոսը չէր աղերսում սրանից տասնեւհինգ տարի առաջ, երբ հազարաւոր երեխաներ թաղաւոր-կայսեր «բարեհաճութեամբ» ուսումնարաններից փողոց շարտուեցին, եւ ինչո՞ւ այն ժամանակ կովկասեան կառավարչապետը միջնորդ չըհանդիսացաւ կաթողիկոսի աղերսանքների եւ կայսերական բարեհաճութեան միջեւ. կամ ինչո՞ւ թաղաւոր-կայսեր այն օրուայ «բարեհաճումը» այնքան անբարեհաճ եղաւ: Հրա՞ջը կատարուեց արդեօք: Արդեօք թաղաւոր-կայսեր բարձրագոյն սիրտը յանկարծ գթով եւ սիրով վառուեց հայ ազգի համար, կամ կաթողիկոսի աղերսանքները այսօր մի դիւթական ո՞յժ ստացան, որ առաջ չունէին. թէ կայսերական ծառայութեան մէջ ծերացած Կոմս Վորոնցով-Դաշկովը յանկարծ իրաւունքի եւ արդարութեան ասպետի վերափոխուեց:

Ոչ, կատարուեց մի այլ բան, — ժողովուրդը բողոքեց: Բողոք — այդ մի բառի մէջ պէտք է որոնել գաղտնիքը:

Հայ ժողովուրդը ցոյց տուեց, որ նա ընդունակ է զիտակեցել — ոչ միայն զիտակեցել, այլ եւ ցանկանալ — ոչ միայն ցանկանալ, այլ եւ պահանջել: Եւ հրաշքը ինքնըստինքեան կատարուեց. կաթողիկոսի աղերսանքները յանկարծ մի անսովոր ոյժ ստացան, պաշտօնական միջամտութիւնը անհրաժեշտ դարձաւ, իսկ բարձրագոյն «բարեհաճումը» վայրկենապէս փոխեց իր կերպարանը:

Երբ տարիներ առաջ թաղաւոր-կայսրը, «բարեհաճեց» դնել իր «խնամակալ» թաթը մեր ուսումնարանների վրայ, նա գտաւ այնտեղ միմիայն երեխաներ — տղայք եւ աղջիկներ, որոնց միակ զէնքը արտասուքն էր: Բայց տարիներ անցան, երեխաները մեծա-

ցան, տղամարդիկ դարձան: Ուսումնարանների բակերում սերմանած երեխաների մաքուր արտասուքները եկեղեցիների գաւիթներում արճիճ-դնդակներ դարձան, մանկական աղիողորմ լացուկոծը այրական զայրոյթի փոխուեց:

— Խնայեցէք մեզ, աղերսում էին այն ժամանակ երեխաները, ուսումնարաններում իրենց նստարանները գրկած:

— Միք յանդգնիլ մօտենալ, սպառնացին այժմ տղամարդիկ, եկեղեցիների շեմքերը բռնած: — Մի՛ խլէք, լալիս էին այն ժամանակ երեխաները: — Չե՛նք տայ, գոչեցին այժմ տղամարդիկ եւ այդ սուրբ չէնք տայն իրենց արիւնով դրոշմեցին:

Սա է պարզ իրողութիւնը: Եւ այսօր մենք տօնում ենք մեր առաջին յաղթանակը: Ո՞ւմ ենք պարտական մենք, ո՞ւմ պիտի բերենք մեր շնորհաւորումները, ո՞ւմ պիտի ուղղենք մեր երախտագիտութեան զգացմունքները:

Քե՛զ, հայ ժողովուրդ, եւ միայն Քեզ: Դու էիր, որ պաշտպան կանգնեցիր Քո նուիրական իրաւունքներին, Դու քաջութիւն ունեցար չհնազանդուել դահիճ կայսեր բարձրագոյն «բարեհաճման», Դու Քո արիւնով բողոքեցիր բռնութեան դէմ եւ տարաբ յաղթութիւնը:

Հ. Յ. Դ. IV ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Բազու

Բ.— 1905 ՅՈՒՆԻՍԻ ՔԱՐԻ (ԱԼԵԲՍԱՆԻՐԱՊՈԼԻ) ԺՈՂՈՎՐ

Կը քաղնիք Ա. Գ. ի «Հայ-թաթարական կռիւնքը Անդրկովկասում» յօդուածաշարէն (Հայքնիք տմ., ԺԳ. տարի քիւ 10 — Օգոստոս 1905 —, էջ 134-135):

Դաշնակցութեան մէջ եւս աստիճանաբար զարգանում էին երկու միմեանց հակառակ հոսանքներ: Առաջինը, որ սկզբից տիրապետող էր, ցանկանում էր ամէն գնով խաղաղութիւնը պահպանել եւ թաթարների յարձակման դէպքում միայն պաշտպանուել: Երկրորդը, որ սկզբները չափազանց թոյլ էր եւ ժամանակի ընթացքում միայն ուժեղացաւ, կանգնած էր այն տեսակէտի վրայ, որ նախապարձակ պէտք է լինել քաթարների վրայ և ճնշել նրանց, որպէսզի նրանք այլեւս փորձեր չանեն յարձակուելու իրենց հարեւան հայերի վրայ:

Դեռ եւս 1905 թ. Ապրիլ-Մայիս ամիսներին Բազուի Զինուորական Մարմինը այդ ուղղութեամբ որոշ տակտիկական հարցեր էր դրել Հ. Յ. Դ. Բիւրոյի առաջ: Դժբախտաբար, այդ գրութիւնները, ինչպէս եւ առաջարկների մանրամասները չկան այժմ. Դաշնակցութեան Կենտրոնական Դիւանի մէջ այդ մասին կայ

միայն Քարի Կ. Կոմիտէի (Ալեքսանդրապոլի) Ռայոնական Ժողովի արձանագրութիւնից մի հատուած, որից մօտաւորապէս կարելի է գաղափար կազմել Բազուի առաջարկների մասին:

1905 թ. Յունիս 21ին Քարի մէջ տեղի է ունենում մի ժողով, որին մասնակցում էին Հ. Յ. Դ. Բիւրոյի, Մեծ-Քաղաքի, Ապառաժի, Քարի եւ Զրաբերդի Մարմինների ներկայացուցիչները, բացակայ էին Բազուն, Երեւանը եւ Գանձակը:

Այդ ժողովում է, որ քննուում է Բազուի առաջարկը: Որովհետեւ այդ ժողովում եղած արտայայտութիւնները չափազանց բնորոշ են այն ժամանակուան Դաշնակցութեան մէջ տիրող տրամադրութիւնների համար, այդ պատճառով առաջ եմ բերում ժողովի արձանագրութիւնը որոշ յայտարարութեամբ:

«Օրակարգի միւթն է՝ Բազուի առաջարկը:

«Մեծ ՔԱՂԱՔ.— Գաւառներում մենք չպէտք է նախապարձակ լինենք: Մի շրջան չունենք, ուր վստահութեամբ առէինք, թէ յաղթութիւնը մեր կողմը կը լինի: Ամէն տեղ թաթարը լաւ է զինուած եւ թուով աւելի շատ է: Կը սկսուի ամէնուրեք կռիւ, եւ Անդր-կովկասը կը դառնայ արեան ծով: Ես հակառակ եմ նախապարձակ լինելուն որեւէ տեղ:

«ԱՊԱՌԱԺ.— Նախքան Ոսկանապատի (Բազուի) առաջարկի քննութիւնը, մենք պէտք է լաւ ծանօթանանք նրա հիմքերի եւ պատճառարանութիւնների հետ: «ՅԻԻՐՕ.— Նրանց գլխաւոր հիմքը այն է, թէ փոքր խմբերով չենք կարող պաշտպանուել:

«ԱՊԱՌԱԺ.— Թաթարը վերջ է վերջոյ պիտի դառնայ դեմոկրատ եւ իբրեւ հպատակ ազգ (Ռուսաստանի) հայի հետ միասին պիտի կռուի ընդհանուր թշնամու դէմ (միապետութեան): Մենք չպէտք է նախապարձակ լինելով խորացնէինք այն անդունդը, որ բացուած է հայի եւ թաթարի միջեւ: Երկրորդ՝ մենք կուլտուրական ազգ ենք. երրորդ՝ կառավարութիւնը ինքը կը սկսի յարձակուել մեր վրայ: Ռուսը (կառավարութիւնը) այժմ հրճուում է՝ յեղափոխական տարրերը խեղդելով: Նա համիլաժութիւնից չի վախում, որովհետեւ իր ժամանակին նա այդ կը զսպէ: Համաձայն չլինելով նախապարձակ լինելու մտքին, ես առաջարկում եմ, որ Բազուում, ուր թաթարների լրբութիւնը ծայրայնութեան է հասնում եւ ուր նա միշտ առիթներ է որոնում մեզ հետ կռուելու, կենտրոնացնենք մարտական ուժեր եւ մի մեծ հարուածով կտորենք թաթարների ամբարտաւանութիւնը, որովհետեւ Բազուն է տոն տալիս կովկասեան բոլոր թաթարներին:

«ԶՐԱԲԵՐԴ.— Նախապարձակ լինելը կարող է լաւ եւ վատ հետեւանքներ ունենալ: Եթէ մի որեւէ տեղ մենք յարձակուենք եւ ջարդուենք, թաթարները կարող են միւս վայրերում, ուր իրենք լաւ են զինուած

և և՛ ժամանակներն են կազմում, ելնել հայերի դէմ և ընդհանուր ջարդ կազմակերպել:

ՃԻՒՐՈ.— Նախաարձակ լինելը կարող է մեծ կոտորած առաջացնել թուրքիայի և Պարսկաստանի փոքրաթիւ հայերի մէջ: Մեր կուլտուրական կեանքը տասնեակ տարիներով յետ կը մնայ: Մեր նպատակը պէտք է լինի հանգցնել կրակը և ոչ թէ այս ու այն կողմը կոտորած առաջացնել: Անարատ վայրերում մենք պէտք է ամէն կերպ պահպանենք խաղաղութիւնը ու միաժամանակ պատրաստութիւն տեսնենք ինքնապաշտպանութեան համար: Յարձակուելով, մենք երեք թըշնամու հետ պիտի գործ ունենանք՝ ուստի, թաթարը և մասամբ վրաց քաղաքականութիւնը: Ես հակառակ եմ Բազուի առաջարկին: Դա մեր կողմից անխոհեմութիւն կը լինի:

ԱՊԱՍՏ.— Բազուն Կովկասի սիրտն է, կապուած է բոլոր վայրերի հետ սերտ կերպով: Մենք ոչ մի կարիք չունենք Բազունում ուժեր կենտրոնացնելու: Մարտիկներ միշտ կը գտնուին այնտեղ: Սակայն, այնպէս պէտք է անել, որ նրանք յաղթող հանդիսանան: Ապա թէ ոչ՝ նաւթի արդիւնաբերութիւնը կ'անցնի թաթարների ձեռքը և Կովկասի հայերը կը զրկուին ահագին հարստութիւնից: Եզրակացութիւն. մենք նախաարձակ չենք լինի: Բայց եթէ առիթ տան, մենք պիտի անխնայ կոտորենք, վրէժխնդիր լինենք մէկին տասը: Այս է լինելու մեր ընդհանուր սկզբունքը:

Այս ժողովի տրամադրութիւնից պարզ էր, որ երբեք մենք նախաարձակ չպիտի լինէինք: Սակայն, մի քանի ամիս անց, դրութիւնը սկսուում է աւելի ևս ծանրանալ, և այն վայրերը, ուր կռիւնք չէին եղել, նոյնպէս կռիւնքի թատերաբեմ դարձան:

Գ.— 1906 ՓԵՏՐՈՒԱՐԻ(?) ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Նոյն, «Հայ-թաթարական կռիւնքը Անդրկովկասում» յօդուածաբեկ, գրքէ ամբողջութեամբ կու տամք Հայքիմք ամսագրի ԺԳ տարուամ 11րդ. համարին մէջ տեղ գտած մասը (էջ 129-133), որ կը վերաբերի Հ. Յ. Դ. գիտնորական վարիչներու խորհրդակցութեամբ մը, ամենայն հաւանականութեամբ տեղի ունեցած 1906 Փետրուարին, թիֆլիս: Հետաքրքրական է բազմատեղի գիտնորական վարիչներու որոշումները — ընդհանրապէս աւելի մտադրական և անգիշտ — 1906 Մարտ-Ապրիլի Կովկասեան Ռայոնական Ժողովին մէջ տեղ գտած տեսակետներուն և եզրակացութիւններուն հետ: Ռայոնական այս ժողովի արձանագրութիւնը պիտի կարգէ մերից հետոյի յարգը գլուխը:

Հ. Յ. Դ. գիտնորական գործերի վարիչները անհրաժեշտ դասն մի խորհրդակցութիւն ունենալ վերագնահատման ենթարկելու համար մեր մինչև այդ ունեցած գիտնորական գործերի վերաբերյալ:

Այդ խորհրդակցութեան պիտի մասնակցէին չորս կարեւոր շրջանների գիտնորական գործերի վարիչները՝ ա) Դուստանը՝ Երևանի շրջանից, բ) Վարդանը՝

Շուշուց, գ) Արմէն-Գարօն Արեւելեան Բիւրոյի և Թիֆլիսի շրջանից և դ) ես՝ Գանձակի և Բազուի կողմից:

Մեր նպատակն էր այդ խորհրդակցութիւնը յարմարեցնել 1905 թուի Նոյեմբեր ամսին կայանալիք Կովկասի Հ. Յ. Դ. Ռայոնական Ժողովին, որովհետեւ ենթադրում էինք, թէ մեր խորհրդակցութեան նիւթ կարող էին լինել այնպիսի առաջարկներ, որոնք անհրաժեշտ պիտի լինէին ներկայացնելու Ռայոնական Ժողովին: Բայց ղեկավարները չկարողացան թողնել իրենց շրջանները և որոշուեց այդ խորհրդակցութիւնը անել ձմեռը, երբ կռիւնքը համեմատաբար պակաս կը լինէին: Չնայելով որ այդ մտահոգութիւններով յետաձգուեց խորհրդակցութիւնը, այնուամենայնիւ Վարդանը կրկին չկարողացաւ մասնակցել խորհրդակցութեանը, որ տեղի ունեցաւ երեքիս մէջ:

Այդ խորհրդակցութեան ճիշտ ժամանակը անկարող եմ յիշել, որովհետեւ ոչ մի գրաւոր նիւթ չգտայ Դաշնակցութեան Կենտրոնական Դիւանի մէջ: Սակայն, Շուշուայ պահեստում մի նամակ էր բռնուել, գրուած ընկեր Արտէմ Տէր Մարտիրոսեանի(*) ձեռքով: Այդ նամակը Արտէմը գրում էր Վարդանին Թիֆլիսից, թէ շուտով կայանալու է այստեղ գիտնորական Ժողովը («Դաշնակցութեան դատական գործ», էրես 3793):

Ելնելով այդ նամակի թուականից, ժողովը տեղի ունեցած պէտք է լինի 1906 թ. Փետրուարի մէջ:

Մեր ժողովի առջև դրուած էին հետեւեալ խնդիրները.—

Ա.— Ի՞նչ պէտք է լինի մեր կուսի տաքտիկական այսուհետեւ.

Բ.— Ռազմամթերքի բաշխման կանոնաւորում.

Գ.— Տեղացիների մասնակցութիւնը ինքնապաշտպանութեան գործին:

ՏԱԳՏԻՎԱԿԱՆ ԽՆԻՒՐ

Քննելով բոլոր վայրերում տեղի ունեցած Հայ-թաթարական կռիւնքը, մենք գտնում էինք, թէ մի տարի տեւող կռիւնքը ամբողջապէս քայքայել են Անդրկովկասի Հայկական և թաթարական գաւառները, թէ մեր մէջ կանգ է առել ամէն մի կուլտուրական աշխատանք, թէ Հայ մտաւորականների, մանաւանդ մեր ընկերների բոլոր արտադրող և ընդունակ ուժերը գրադուած են միայն կռիւնքով և թէ այսպիսով միանգամայն կանգ է առել Հայ կեանքի յառաջդիմութեան թափը:

Դրա հետ միասին մենք գտնում էինք, թէ հակառակ մեր բոլոր գործ դրած խաղաղասիրական ցան-

(*) Արտէմ Տէր Մարտիրոսեանը Շուշուայ եւանգելիստներէից էր և գրադուած էր Շուշուայ շրջանի համար զէնք Հայթաթիւս գործով: Սպանուեց Շուշուայ շրջանի կռիւնքի ժամանակ:

կուլտուրաներին և ջանքերին՝ թաթարները չեն մտածում վայր դնել իրենց զէնքերը և ոչ մի նշան չկայ, թէ երբ և իցէ պիտի վերջանան այս կռիւնքը, թէ դժբախտաբար անյուսալի է և աւելորդ է սպասել, որ թաթարները ինքնաբերաբար խաղաղուեն կամ դիտակցեն թէ ինչ պատուաբեր դեր են կատարում՝ դառնալով ստոր գործիքներ ցարական զանազան պաշտօնեաների ձեռքին:

Մեզ համար միանգամայն պարզ էր, որ որքան ուղևակաւ կառավարութիւնը շարունակէ գաղտնի կամ յայտնի կերպով քաջալերել թաթարներին, այնքան այդ կռիւնքը պիտի շարունակուին: Այն վայրերում, ուր թաթարները իրենց ուժեղ են զգում, պիտի յարձակուին մեզ վրայ, մանաւանդ որ թաթարական որոշ տարրեր իրական շահ ունէին այդ կռիւնքի մէջ, ամենք թալանի և կողոպտուի տենչանքով, իսկ համախառնական հովերով տարուած թաթարների համար այս կռիւնքը մի միջոց էին իրենց դադափարները մարմնացնելու թաթար ժողովրդի մէջ:

Ահա այդ, ըստ երեւոյթին, միմեանց հակասող ուժերը միացել էին իրար՝ Հայ ժողովրդի հաշուին և, բնականաբար, պիտի նոյն ձեւով շարունակէին իրենց կռիւնքը:

Մենք տեսնում էինք, որ ուղևակաւ կառավարութիւնը և նրա զանազան պաշտօնեաները, Փոխարքայից սկսած մինչև յետին ոստիկանը, ինչպէս և զօրքի ղեկավարները, ոչ միայն չէին ցանկանում խաղաղեցնել երկիրը, այլ գրգռում էին թաթարներին՝ աշխատելով որ նրանք մինչև վերջը զէնքը վար չդնեն:

Թաթար ժողովրդի ղեկավարութիւնը գտնուում էր համախառնական տարրերի ձեռքին, որոնք իրենց ազդեցութիւնը յարատեւ դարձնելու միակ միջոցը համարում էին այդ ազդամիջեան կռիւնքը և կարծում էին որքան այդ կռիւնքը շարունակուեն, այնքան իրենց ազդեցութիւնը պիտի ուժեղանայ թաթարական զանդուածների վրայ:

Չնայելով Հայերի և թաթարների միջև գոյութիւն ունէին զանազան խաղաղաբար յանձնաժողովներ, բայց այդ յանձնաժողովները ոչ մի կերպ չկարողացան իրական խաղաղութիւն ստեղծել և այսուհետեւ ևս անկարող պիտի լինին մի որեւէ դրական գործ կատարել:

Այս բոլոր շարիքների առաջն առնելու և կռիւնքին վերջ տալու նպատակով մեմք միակ միջոցը համարում էինք այն, որ թաթարները պիտի սանձաւարուեն և երկիւղ ունենան մեզմից, որպէսզի նախ այլևս չհամարակալուեն յարձակուել հայերի վրայ, այլ ամէն անգամ հաշուի առնեն հայ ժողովրդի դիմադրական ոյժը. այս դրութիւնը թաթարներին պիտի ստիպէր սպրել Հայերի հետ իբրև արի և խաղաղ հարեւաններ, ինչպէս այդ եղել է անցեալում:

Մեր համոզմամբ այդ բոլորը հնարաւոր էր միայն

այն ժամանակ, երբ մենք փոխէինք մեր մինչև այժմս գործադրած կուսի եղանակը: Մինչև այժմս մեր կուսի ձեւը այնպէս էր, որ մենք միշտ մնացել էինք պաշտպանողական դրութեան մէջ, որով թաթարներին հնարաւորութիւն էինք տալիս լաւ պատրաստուել և յարձակուել հայերի վրայ: Բացի այդ բոլորից, այդ ձեւի պայքարը թաթարներին բերել էր այն եզրակացութեան, որ հայերը երբեք չեն համարձակուել նախաարձակ լինել և նոքա իրենք են, որ կարող են իրենց ձեռքին պահել կուսի նախաձեռնութիւնը, որով միշտ հնարաւորութիւն պիտի ունենային իրենց ուժերը այն ձեւով դասաւորել և շարժման մէջ դնել, որ մի վայրում հայերին պարտութեան մատնելուց յետոյ անցնեն միւս շրջանները:

Մենք գիտակցում էինք, որ այլևս ժամանակն է, որ հայերը կարեւորութիւն չտան այն հարցին, թէ իրենք հաջողաւու և բաւարարի խաղաղ են և թաթարներն են, որ միշտ յարձակուում են հայերի վրայ, — ինչպէս այդ արուում էր ամէն անգամ, երբ հայերը ուզում էին իրենց դատը պաշտպանած լինել կառավարութեան առջև կամ մամուլի մէջ: Մենք այլևս կարիք չէինք զգում դիմելու այդպիսի արդարացումների: Ո՞ւմ առաջ պիտի արդարանայինք. այն ստոր պաշտօնեանքս՝ որը իմքն էր կազմակերպում այդ կռիւնքը: Այդ բոլորը մեզ ստիպում էր փոխել մեր կուսի տաքտիկը, և խլելով թաթարների ձեռքից նախաձեռնութեան իրաւունքը, պէտք եղած ժամանակը ոչ միայն պաշտպանուել, այլ և յարձակուում գործել թաթարների վրայ: Մենք միաժամանակ թորոշեցինք պաշտպանողական տաքտիկայից անցնել յարձակողականի: Բայց որպէսզի այս որոշումը չդառնայ մի վրէժխնդրութիւն, որոշուեց ձեռք չտալ այն շրջանների թաթարներին, որոնք քիչ կամ թոյլ լինելու պատճառով փորձ չեն արել յարձակուելու հայերի վրայ. բացի այդ, որոշուեց հնար եղած բոլոր միջոցներով բացատրել թաթարներին, թէ որպիսի աղիտաբեր հետեւանքներ ունեն այս կռիւնքը ոչ միայն հայերի, այլ և թաթարների և ընդհանրապէս Անդրկովկասի բոլոր ժողովրդների համար:

Որոշուեց նախաարձակ լինել և ջնջել այն բոլոր որջերը, լինեն դրանք մեծ կամ փոքր, որմք աւագակային կենտրոններ էին: Բացի այդ, անհրաժեշտ համարուեց վերացնել խաչընդատ հանդիսացող այն թաթարական դիւղերը, որոնք խանգարում էին Գանձակից Շուշու, Շուշուց՝ Գորիս և Նոր Բայազետից՝ Գորիս հաղորդակցութեան:

ԳՈՅԻ ԱՐԳՆԻՔԸ

Թաթարներին նեղելու կարեւոր միջոցներից մէկը համարուում էր ֆոշի արգելքը: Անդրկովկասի թաթարների մի խոշոր հաստատածը պարապում էր խաչարածութեամբ:

Բաւական է յիշել, որ միմիայն Գանձակի եւ Երեւանի նահանգների աւելի քան 3·500·000 ընտանի անասունների մեծագոյն մասը պատկանում էր թաթարներին, որոնց հսկայական հօտերը վաղ գարնանից, կրտսերով հայկական սարալանջերը, բարձրանում էին հայկական Չանգեզուրի եւ Նոր Բայազետի շրջանի արօտավայրերը եւ ուշ աշնան վերադառնում էին դէպի դաշտ: Թաթար զոչուրները մեծ մասը ձմեռում էր իրենց անասունների հետ Կուր գետի հովիտներում՝ պատմական Փայտակարանում, ուր կլիման անհամեմատ մեղմ էր, յաջորդ գարնան նորից բարձրանալու համար հայկական խոտաւէտ սարահարթերը:

Դարեր շարունակ այս երթևեկը մի կատարեալ պատուհաս է եղել այն շրջանի ազգաբնակչութեան համար, որտեղից անցնում է զոչը: Ամիսներ տեւող այդ վերելքի եւ վայրէջքի շնորհիւ ոչ միայն փճանում եւ ոտնակոխ էին լինում հազարաւոր բերրի արտեր, այլ եւ յաճախ վերջանում էին արիւնայի ընդհարումներով եւ սպանութիւններով: Ծիչդ է, ուստական տիրապետութեան ժամանակ փորձեր եղան աւելի կանոնաւորելու թաթարական այդ զոչերը եւ ամէն անգամ յատուկ ոստիկանական ուժեր (էլ աղասիներ) էին տրամադրում ուղեկցելու զոչին, բայց այդ միջոցները անկարող եղան վերջ տալ այն վնասներին, որոնց ամէն տարի գարնան եւ աշնան ենթարկուում էին հայ գիւղացիները: Եւ քաջի խնդիրը միշտ էլ մնաց մի կատարեալ պատուհաս հայ գիւղացու համար, որը կարող էր վերջանալ միմիայն այն ժամանակ, երբ թաթար խաչնարածը կը դառնար նստակեաց եւ ամէն տարի հարիւրաւոր կիրճերները չէր կտրի պարարտացնելու համար իր անասունները հայկական արօտներով եւ ի վնաս հայ գիւղացու անասունների: Չանգեզուրի եւ Նոր Բայազետի արօտավայրերը պատկանում էին ոչ թէ այդ շրջանների հայ գիւղացիութեան, այլ հարիւրաւոր կիրճերները հեռու ընկած Մուղանի անապատի թաթարաբնակների կամ Թիֆլիսի նահանգի Բորչալուի թաթարին...

Քոչի խնդիրը Անդրկովկասի միջնդային յարաբերութիւնների ամենածանր խնդիրներից մէկն էր, իսկ ուստաց կառավարութիւնը չէր կարողանում կամ չէր կամենում վերջնականապէս լուծել այդ խնդիրը եւ զոչի հարցը միշտ դամոկլիան սուրի պէս, իբրեւ մի պատուհաս, կախուած էր հայ գիւղացու գլխին:

1905 թուին, չնայելով տեղի ունեցող հայ-թաթարական արիւնայի ընդհարումներին, թաթար խաչնարածներից շատերը, ըստ ընկալելի սովորութեան, նորից բարձրացան հայկական սարալանջերը եւ հայ գիւղացին, շատ վայրերում, յանուն միջնդային բարեկամութեան, ոչ միայն արգելք չհանդիսացաւ, այլ եւ շատ վայրերում նպաստեց զոչի յաջող վերելքին եւ վարէջքին...

Զինուորական խորհուրդը գտնում էր, որ թա-

թարների ամենախոցելի կէտերից մէկը զոչի խնդիրն էր, որին ամենայամառ կերպով արգելք պիտի հանդիսանալ: Դրանով ոչ միայն կարելի պիտի լինէր նեղել թաթարներին, այլ եւ ընդմիշտ ազատագրել հայ գիւղացու սեփականութիւնը կազմող հարիւր հազարաւոր հեկտար տարածութիւն ունեցող արօտատեղեր:

Որովհետեւ դժուար չէր արգիլել զոչի բարձրացումը, այդ իսկ պատճառով որոշուեց ամէն կերպ արգելք համդիսանալ քոչի վերելքին եւ քոչի շտապարները իրենց ամառուներին հետ անցնել հայկական արօտատեղերը:

Մեր այս որոշումները զուտ մեր անձնական ցանկութիւնների արդիւնք չէին, այլ այդպէս էին մտածում, կարելի էր ասել, գրեթէ մեր բոլոր ընկերները, իրենց թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր արտադրութիւնների ժամանակ:

ՈՒԹԵՐԻ ԴՅՍՍՈՐՈՒՄ

Ուժերի դասաւորման տեսակէտից բաւարար էինք համարում այն բոլոր ուժերը, որոնք արդէն անցել էին գաւառները. բայց որպէսզի ուժերի պակաս երբ եւ իցէ չզգացուի, որոշուեց կարողաբել որ Բաթումի, Թիֆլիսի եւ Բազուի աւելորդ ուժերը ուղարկուեն գաւառները:

Քիչ չէր պատահում, որ մի շրջանի մարտիկները, երբեմն ձանձրացած կամ այլ պատճառներով, թողնում էին իրենց շրջանը եւ ամիսներ յետոյ նորից երեւում: Քննութիւնից պարզուում էր, որ այդ ժամանակամիջոցում մարտիկ մը կարողացել էր օրինակ, Գանձակից անցնել Երեւան, Երեւանից Չանգեզուր, Չանգեզուրից Շուշի եւ այլն եւ եղել էր համարեա թէ բոլոր խմբապետների մօտ: Այդպիսի շրջագայողները, եթէ հաւանում էին իրենց հանդիպած խմբապետին, մնում էին մօտը, եթէ ոչ մի կամ երկու շաբաթից յետոյ անցնում էին միւս շրջանը եւ այսպէս շրջագայելով նորից վերադառնում էին իրենց նախկին տեղը: Քիչ չէր պատահում, որ զանազան խմբապետներ կամ միջնի. իսկ փոքրիկ տասնապետներ զանազան վայրերից իրենց մօտ էին հրաւիրում այս կամ այն մարտիկին եւ մի շրջանի մարտիկը թողնում էր իր շրջանը եւ անցնում միւս վայրը: Այդպիսիները յաճախ տանում էին իրենց մօտ եղած ատրճանակները, որովհետեւ անկարելի էր այդ ժամանակներում առանց զէնքի բաց թողնել այս կամ այն մարտիկին: Իսկ այդ ձեւով զէնքերի հաշուապահութիւնը խանգարուում էր եւ առիթ էր դառնում երկար գրազրուութիւնների: Բացի այդ բոլորից, մարտիկները սովորում էին թափառաշրջի կեանքի եւ որոշ ծախս էին նստում կուսակցութեան սնտուկին:

Այդ բոլոր երեւոյթներին վերջ տալու համար որոշուեց խստիւ արգիլել այդ ձեւի շրջագայութիւնները. իսկ փոխադրուել ցանկացողներին, պաշտօնական նամակներով ուղարկել այն վայրը, ուր նրանք պիտի

անցնէին: Առանց այդպիսի յանձնարարութեան, ոչ մի շրջան իրաւում չուներ ընդունելու այդ մարտիկներին:

ԶԻՆԱԿԱՆ ԵՆՈՒՐՆԵՐ

Բազուի փետրուարեան դէպքերից յետոյ, երբ գաւառներում եւս լարուեցին հայերի եւ թաթարների յարաբերութիւնները, անակնկալի եկած թէ՛ հայ ժողովուրդը եւ թէ՛ մեր մարմինները ամէն կերպ աշխատում էին զէնք ձեռք բերել: Գործը դեռ նոր էր եւ ամէն մի շրջան առանց կարեւորութիւն տալու միւս շրջանների կարիքին, իր շրջանն էր միայն զինում: Թէպէտ նորակազմ Կենտրոնական Զինական Մարմինը աշխատեց որոշ բարեփոխութիւններ մտցնել, բայց նրան չէր յաջողուել ամբողջապէս կանոնաւորել այդ գործը եւ այն շրջանները, որոնք կամ երկաթուղու գծի մօտ էին կամ դրամ ու դործիչ ընկերներ շատ ունէին, միշտ էլ կարողանում էին, համեմատաբար, մեծ քանակութեամբ ռազմամթերք ունենալ: Այդ կողմից ամենից շատ տուժում էր մանաւանդ Չանգեզուրի շրջանը, որ կտրուած էր բոլոր կողմերից: Ռազմամթերքի քանակութիւնն այդ շրջանում բաւական քիչ էր լինում: Իսկ ընդհակառակը Շուշու շրջանը, շնորհիւ այն հանգամանքի որ թէ՛ Բազուում, թէ՛ Թիֆլիսում եւ թէ՛ առհասարակ Ռուսաստանի քաղաքներում մեծ քանակութեամբ զարարողիներ կային, կարողանում էր որոշուած չափից աւելի ռազմամթերք ձեռք բերել եւ պահել իրեն մօտ, առանց միւս շրջանների մասին հոգալու: Այդ եւ այլ տեսակի անպատեհութիւնների առաջն առնելու համար մեր ղեկավարները որոշուեցին ամենից կանոնաւորելու համար բաշխման գործը:

Որոշուեց որ Բաթումի, Թիֆլիսի եւ Բազուի դժերը շարունակեն օգտագործուել առաջուան պէս: Բազուի գծով ստացուած ռազմամթերքը ամբողջապէս յատկացնել Գանձակի նահանգին եւ հասցնել Գանձակ կայարանը: Թիֆլիսի ու Բաթումի գծերով ստացուած ռազմամթերքի երեք չորրորդը ուղարկել Երեւանի նահանգը, իսկ մնացած մէկ չորրորդի մի մասը հասցնել անմիջապէս Ղազախ, միւս մասը Գանձակ: Գանձակում կինտրոնացած զէնքն ու ռազմամթերքը բաժանուում էր այսպէս.— Գանձակի շրջանը պահում էր իր մօտ իր ստացած զէնքերի եւ ռազմամթերքի միայն մի երրորդը, մնացած երկու երրորդը ուղարկում էր Շուշի, որ իր հերթին միջոցների պիտի դիմէր իր ստացած ռազմամթերքի որոշ մասը հասցնելու Չանգեզուր: Որովհետեւ հնարաւորութիւն կար զանազան մասնաւոր զինագործարաններին պատուէր տալ եւ օրինական ճանապարհով ստանալ որսորդական հրացաններ ու փամփուշտներ, և որովհետեւ Գանձակի փորձը արդէն ցոյց էր տուել, որ այդ որսորդական հրացանների փամփուշտները կարելի է յարմարեցնել բերդան հրացաններին, որոշուեց նորից պատուիրել երկու միլիոն որ-

որդական պարապ փամփուշտներ եւ յարմարեցնել դրանց բերդան հրացաններին: Այդ նպատակով Գանձակից զատ ուրիշ տեղեր եւս պիտի բացուէին գաղտնի արհեստանոցներ, ինչպէս կազմակերպուած էր Գանձակում:

ՅԵՂԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՆ ԳՈՐԾԻՆ

Նկատի ունենալով, որ գաւառները անդադար պահանջ էին դնում, իսկ իրենց շնչին աջակցութիւնը շատ անգամ զլանում էին, եւ որովհետեւ դրամական աջակցութիւնը համարեա ամբողջապէս ծանրացել էր Ռուսաստանի, Հիւսիսային Կովկասի, Թիֆլիսի եւ մանաւանդ Բազուի հայութեան վրայ եւ այս շրջանների հայերը արդէն սկսել էին դժկամակել եւ առաջուան պէս առատութեամբ չէին աջակցում ինքնապաշտպանութեան գործին, որոշուեց, որ գաւառների հայ ազգաբնակչութիւնը, ինչպէս եւ մեր կազմակերպութիւնները աշխատեն դրամական հանգանակութիւններ կատարել իրենց շրջաններից եւ ստացուած գումարները յատկացնեն զէնքի, նոյն այդ շրջանների համար:

Սրանք էին ահա Զինուորական ժողովի որոշումները, որոնք նոր կորով եւ թափ ներշնչեցին, ինչպէս եւ հնարաւորութիւն տուին մարտական խմբերին աւելի ազատ շարժուելու եւ յարմար ու կարեւոր ժամանակները յարձակուելու թաթարական որջերի վրայ:

ՅԱՆԵԼՈՒՄ II

Արեւելեան Ռիբոյի հետեւեալ շրջաբերականը, սպաւած 16x34 սմ. երկար քուլքի վրայ, բաւական չի կրեր: Կը վերաբերի «Ջէմստոյ» ինքնավարութեան հարցին (գաղափայն, համայնգալի ինքնավարութիւններ): 1905-1906 թ. եզակատեան Ռայոնական ժողովները յաճախ եմ գրազուած այդ ետքով: Շրջաբերականը պէտք է հրատարակուած ըլլայ այդ տարեկանը:

Շ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Արեւել. Բիւրոն եւ Մեծ Գ. ի Կ. Կ. իրենց վերջին միացեալ նիստում խորհրդակցութեան նիւթ դարձրին զէմստոյի խնդիրը եւ երկարատեւ ուսումնասիրութիւնից յետոյ եկան հետեւեալ եզրակացութեան:

Նախ եւ առաջ Դանակցութիւնը որպէս քաղաքական կուսակցութիւն՝ ունենալով իր քաղաքական աւելի արմատական պահանջները ու աւելի բարձր իդէալները՝ ոչ մի կերպ չէ կարող ողջունել կառավարութեան կողմից կովկասեան ժողովրդին զիջած այդ փոքրիկ, աննշմարելի շնորհը:

Մեր կազմակերպութիւնը որոշակի եւ դրականապէս արտայայտել է իր ծրագրի մէջ այն, ինչ նա ուզում է ստանալ զէնքի ուժով բռնակալ Ռուսաստանից:

Նրա ուղածը գէժատվոյի պէս ողորմելի եւ խղճուկ հիմնարկութիւնը չէ, մի հիմնարկութիւն, որի լաւագոյն ձեւն անգամ ամբողջովին ենթարկուում է նահանգապետի իշխանութեանը: Նա իբրեւ ժողովրդի մեծագոյն մասի քաղաքական բարձր իդէալների ներկայացուցիչը՝ չէ կարող որեւէ մասնակցութիւն ունենալ գէժատվոյի շնչին եւ խարուսիկ վերանորոգութիւնների հարցերում: Սակայն որովհետեւ հայ հասարակութիւնը կամայ թէ ակամայ պիտի մասնակցի գաւառներում կայանալիք խորհրդակցութիւններին՝ ուստի կը կամենայինք որոշ ցուցմունքներ տալ նրան գէժատվոյին հիմնարկութիւնը հնարաւոր եղածին չափ ձօնացնելու համար ժողովրդական պէտքերին ու պահանջներին:

Ամենից առաջ պէտք է աշխատել ամբողջ ժողովրդին՝ ունենոր թէ չունենոր, դիւղացի թէ բանուոր մասնակից անել գէժատվոյի գործին: Ամէն մի անհատ, անկախ իր պարապմունքից, իւր կայքի քանակութիւնից, ընդունում է իր վրայ իրերի ընդհանուր անտեսական եւ քաղաքական կեանքի այս կամ այն ազդեցութիւնը: Հասարակական ամէն մի երեւոյթ իր արձագանգներն ունի հասարակութեան բոլոր խաւերում, բոլոր վայրերում: Եւ որովհետեւ չկայ մինը, որ ուղղակի թէ անուղղակի կերպով չահագրդուած չլինի հասարակական ամէն կարգի խնդիրներում՝ ուրեմն եւ չպէտք է գտնուի մէկը, որ զուրկ լինի ներկայացուցիչ ընտրելու իրաւունքից: Արտայայտութեան տեսակէտը, որին պէտք է ենթարկուի ամէն մի օրէնք — հարկադրում է մեզ ընդունել եւ առաջարկել ընդհանուր ձայնատուութեան սկզբունքը: Ուրիշ խօսքով վերացնել ամէն տեսակ ցենզի գործադրութիւն: Եւ որպէսզի այս ընդհանուր ձայնատուութեան մէջ մեծամասնութիւնը անկարող լինի ճշել փոքրամասնութեան՝ պիտի մացնել մանր համաչանական միութիւնների սկզբունքը, այսինքն պիտի աշխատել որքան կարելի է հասարակութիւնը փոքր մասերի բաժանել՝ իւրաքանչիւրին տալով իր ուրոյն կանոնադրութիւնը եւ կառավարուելու իրաւունքը:

Ռուսաստանում մինչեւ այժմ գոյութիւն ունեցող գէժատվոյին հիմնարկութիւնները գտնուելով ոստիկանական իշխանութեան ներքոյ եւ ամէն կերպ կախում ունենալով կառավարութիւնից՝ չէին կարողանում մագաչափ անգամ առաջ տանել ժողովրդական ապահովութեան գործը. ուստի ամէն կերպ պէտք է աշխատել, որ գէժատվոնքը որեւէ կախում չունենան ադմինստրատիւ (վարչական) մարմիններից:

Վերջիններս միջամտութիւնը գէժատվոյին հիմնարկութիւնների մէջ՝ իբրեւ միանգամայն վնասակար միջամտութիւն՝ անպայման կերպով պէտք է ժխտել եւ դրա փոխարէն պիտի պահանջուի գէժատվոյին հիմնարկութիւնների համար պետական օրէնսդրական իրաւունք: Իւրաքանչիւր գէժատվոյին համայնք պիտի իրաւունք ունենայ իր տեղի համար օրէնքներ մշակել

եւ այն գործադրել: Առանց այս նախապայմանների գէժատվոն կը լինի մի մեռած հիմնարկութիւն, մի ծանր բեռ ժողովրդի արիւնքոտ ու յոգնած թիկունքին, մի աւելորդ մտահոգութիւն իրա հազարաւոր մտահոգութիւնների շարքում:

Այս բոլորին պիտի կցել նաեւ այնպիսի պահանջներ՝ որոնք թէեւ զուտ գէժատվոյին չեն, բայց որոնք ներկայութիւնը անհրաժեշտ է գէժատվոյին գործունէութիւնը արդիւնաւէտ դարձնելու համար: Պիտի անպայման կերպով առաջ տանել խօսքի, մտքի եւ ամէն տեսակ ժողովների ազատութեան պահանջները, որպէսզի ամէն մի անհատ կարողանայ ազատօրէն իր կարծիքը արտայայտել գէժատվոյին ենթարկուած բոլոր խնդիրների մասին:

- Ամփոփենք մեր պահանջը:
- 1) Ընդհանուր եւ հաւասար ձայնատուութիւն:
 - 2) Ամէն տեսակ ցենզի վերացում:
 - 3) Մանր հողային միութիւններ (Մելքեա գեմաքիա էտիւնիցը):
 - 4) Զէժատվոյին հիմնարկութիւնների կատարեալ անկախութիւն:
 - 5) Օրէնսդրական իրաւունքներ:
 - 6) Խօսքի, մտքի եւ ժողովների ազատութիւն:

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

ՅԱՒԵԼՈՒՄ III

Սիւնն վրացեանի քաղքերում մէջ եւս կը գտնենք կարգ մը շահեկան նպաստ: Հ. Յ. Դաշնակցութեան 1905 բաւական գործունէութեան մասին: Կու տանք մոյժութեամբ, արիւնքով եւ արագ կերպով քաղաքում ամփոփումներու ձեւից տակ:

Ա.— Վարդանի եւ Սաքոյի զեկուցումից՝ Վիեննայի Ընդհ. ժողովին: Կը վերաբերի հայ-քաղաքական կոնկրետ բանկումն հոս ժողովարդի զիմնում եւ իմֆապաշտպանութեան գործին:

Բ.— Արեւմտ. Բիւրոյի տեղեկագրից (1905ի գործունէութիւն): Ընդհանուր եւ ամփոփ պատկեր մը Պոլսոյ, Երկրի, Կիլիկիոյ եւ Կովկասի մէջ դաշնակցական Մարմիններու գործունէութեան՝ 1905 տարւումը ընթացքին:

Գ.— Սուլթանի մահափորձը եւ իդիքը (խորագիրը մեզմէ է).— Ռուստամի զիտազուքիւնները՝ Ռուսիանի ընկերներում, որոնք ըստ երկուքիս անհամար էին եւ հակամտ՝ ձկնորս չունեցաւ 3րդ. Ընդհ. ժողովի եւ 1905ի նարնարդի յստակ արշաւանները:

Դ.— Պոլսոյ մահափորձը մեծապէս շահեկան է այն երկար մէջքումներով, գործ Ս. Վ. Կընէ Արեւմտեան Բիւրոյի մէկ մասակէն, ուր կը տրուի մեծաքանակ տեղեկութիւններ Սըլսոյի դժոխայն միջնային, եւ մահափորձի մոյժարքեան հաւանական պատճառներում մասին:

Ստորեւ՝ Ս. Վ. Ի նախքը:

Ա.— ՎԱՐԴԱՆԻ ԵՒ ՍԱՔՈՅԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԻՑ ՎԻԵՆՆԱՅԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Մինչեւ հայ-թաթարական ընդհարումները Դաշնակցութիւնը ոչ մի ուշադրութիւն չէր դարձրել Կով-

կասի հայութեան զինման եւ ինքնապաշտպանութեան գործի վրայ: Առանձին առիթ էլ չկար այդ բանի համար, քանի որ ուսու իշխանութեան ներկայութիւնը որոշ ապահովութիւն էր ժողովրդի համար: Առաջին անգամ հայ-թաթարական ընդհարումները մէջտեղ դրին կովկասեան ինքնապաշտպանութեան խնդիրը եւս, յատկապէս 1905 թ. Փետրուարի Բազուի արիւնահեղութիւններից եւ Նախիջևանի մայրիւնան կոտորածներից յետոյ: (Դաշնակցութիւնը) անմիջապէս գաւառները ուղարկեց իր ձեռքի տակ եղած փորձուած ուժերը, ժողովրդին կազմակերպելու եւ զինելու համար:

Ժողովուրդը զժուարութեամբ էր ընդառաջ դնում կազմակերպութեան կոչերին. չէր հաւատում, թէ թուրքերի կողմից լուրջ վտանգ է սպառնում: Եւ պէտք էր լինում դանազան միջոցների դիմելու, համոզելու կամ ստիպելու համար դիւղացիներին, որ զէնք ձեռք բերեն: Դաշնակցական գործիչները ծախել էին տախի կովը, խալիչան, որ զէնք առնեն: Բայց հետզհետէ դարգացող զէնքերը համոզեցին ժողովրդին, թէ սպառնացող վտանգը շատ մեծ է. եւ սկսուեց զինուելու ուժեղ հոսանք:

Կուսակցութիւնն աշխատում էր, որ 1) իւրաքանչիւր դիւղացի իր սեփական զէնքն ունենայ. ունենորները մէկից աւելի զէնք գնեն զինուորների տրամադրութեան տակ դնելու համար. չքաւորները ազատ էին զէնք գնելու պարտականութիւնից, կամ պարտաւոր էին դնել աւորձանակ կամ փամփուշտ՝ ժողովրդական զէնքերի համար:

2) Գիւղացիների ընդհանուր հանգանակութեան միջոցով զէնք եւ ուղղամթերք գնուի իբրեւ ամբողջ գիւղի համայնական սեփականութիւն. դրանք կոչուում էին «ժողովրդական զէնքեր», որոնք արուում էին գիւղի շքաւոր քաջ զինուորներին: Այս զէնքերի մէջ էին մտնում եւ հարուստների գնած աւելորդ զէնքերը:

3) Դիւրութիւններ ստեղծուին ժողովրդի համար՝ հեշտութեամբ զէնք ձեռք բերել կարողանալու կուսակցական մարդկանց կամ մաքսանենդների միջոցով: Մաքսանենդները ենթակայ էին Դաշնակցութեան հրահրութեան, որպէսզի ժողովրդին չհահագործեն՝ վատորակ զէնքեր թանգ վաճառելով: Նման շահագործումներ շատ էին պատահում, եւ կուսակցութիւնը խիստ պատժում էր յանցաւորներին:

Զէնքի գները առաջապահական չափերի հասան, որովհետեւ հայ ու թուրք Ռուսաստանի ղոնազան քաղաքներն ընկած՝ իրար հետ մրցում էին զէնքեր գնելով: Կովկասի ժամանակ մոսինը արժէր 300 ռուբլի, բերդանը՝ 150 ռ., փամփուշտը՝ 20-50 կոպէկ: Բայց եւ այնպէս թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ կուսակցութիւնը կանգ չէին առնում ոչ մի արգելքի առջեւ:

Կովկասից յետոյ՝ ինքնապաշտպանութեան գործը յանձնուեց իրեն՝ ժողովրդին: (Այս հարցի մասին շատ վէճեր եղան Վիեննայում):

Բ.— ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՈՑԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ (1905Ի ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆ)

Երբորդ Ընդհանուր ժողովը որոշել էր կատարել Սուլթանի մահափորձը: «Այդ ծրագրին կցուած էր Ռուս կենանքի ծրագիրը, որը պիտի լինէր առաջինին մի տեսակ լրացուցիչ եւ նպատակ պիտի ունենար՝ ալեկոծելով մեծ, վաճառաշահ, կոսմոպոլիտ քաղաքի անդորութիւնը, նոյնիսկ եւրոպական շահերին հարուածելով, — պետութիւնների վճռական միջամտութիւնը հրաւիրել այն դէպքում, երբ Վիշապի ձեռնարկը անգոր լինէր այդպիսի միջամտութեան հրաւիրելու եւ միայն տեղի տար կոտորածներէ:»

Վիշապի անյաջող ձեռնարկից յետոյ Ռուս կենանքում էլ խստութիւններ եղան: «Համարեա բոլոր պայթուցիկ նիւթերը բռնուած են այնտեղ եւ բազմաթիւ անմասն հայեր տակաւին պահուում են բանտերում»:

«Այդ աղէտի հետեւանքներից մինը եղաւ մեր դժբախտ Պետրոսի (Սերէմճեան) կախաղան հանուելը»:

Հ. Յ. Դաշնակցութիւնը Փրանս. կառավարութեան միջոցով փոխադրեց Տարօն 35.000 Փր., որ Գէւորդ Չաւուշի եւ ընկերների ձեռքով բաշխուեց կարօտեաներին:

Չաւրեանի միտան, Պետերբուրգից, մի քանի տասնեակ հազար ռուբլիով եւ Պոլսի ուսուց դեպտանի Հովանաւորութեամբ երկու ամիս բժշկեց եւ նպաստներ բաժանեց Տարօնի կարօտեաններին: Այս միտան բարձրացրեց ժողովրդի տրամադրութիւնը, որ ընկած էր: Թուրքերի պահանջով Չաւրեանը հեռացաւ՝ այցելելով էրզրում, Բիթլիս, Մուշ:

Վասպուրականում՝ ոչ մի կարեւոր գործ: Ազդում է Կովկասի խառնակ վիճակը:

Լեռնավայրում՝ ոչ մի աչքի ընկնող գործ: Չկայ Պատասխ. Մարմին. Աղասէրը եւ Կարիճը հրաժարուել են մտնել: Սիմոնն ու Վարդանը միայն այնտեղ եղան: Վարդանը մեկնեց այն համոզումով, որ միայն տեղացի կարող է յաջողութիւն ունենալ: Վարդանը դուրս էր եկել ձեռնհաս թրքահայ գործիչ գտնելու համար, բայց Կովկասի դէպքերը նրան հարկադրեցին գնալ՝ վարել Շուշու ինքնապաշտպանութիւնը:

Բազուի փետրուարեան ինքնապաշտպանութիւնը

կազմակերպեց եւ վարեց Դուժմանը: Երեւան՝ Դուժման, Երևան՝ Վարդան, Զանգեզուր՝ Մուրառ, Ղարաբաղում էր եւ Համազասպը:

Դաշնակցութեան թելադրանքով եւ միջոցներով՝ կաթողիկոսը դիմումներ արաւ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին. միայն Ֆրանսիայի եւ Ամերիկայի նախագահները սիրալիր ընդունելութիւն արին:

Հ. Յ. Դ. Արեւմտ. Բիւրոյի նախաձեռնութեամբ Հայաստանը փարիզում ունեցան ժողով նախկին նախարար Բէթթլոյի մասնակցութեամբ: Որոշուեց դիմել Ամերիկայի նախագահին՝ Ռուզվելթին, որ նա Հայկական խնդիրը յարուցանէ Լահէյի համաժողովում:

Գ.— ՍՈՒԼՔԱՆԻ ՄԱՀԱՓՈՐՁԸ ԵՒ ԻԶՄԻՐԸ

Պուլի մահափորձի հետ՝ Իզմիրում էլ պատրաստուում էին ցուցական գործողութիւններ: Պուլում Հարուածը պիտի ուղղուէր թուրք կառավարութեան, Իզմիրում՝ եւրոպական շահերին. բանկերը եւ այլ եւրոպական հաստատութիւնները օդը պիտի հանուէին:

Բայց գործերը այնտեղ լաւ չէին գնում: Բացրեւորները, անտեղի, չալլ ծախսեր, անկարգապահութիւն: Ուզում են փորձ կատարել անկախ Երկրի շարժումներից, մինչդեռ Ընդհ. Ժողովի որոշումն էր «պատրաստուել եւ Երկրի շարժումներին արձագանգել»: Այս առթիւ 1905 Յուլիս 26ին Ռոստոմը գրում է Ռակեհանք՝ Արեւմտ. Բիւրոյի կողմից.

«Ընդհ. Ժողովի որոշումը ձեզ ոչ մի իրաւունք չի տալիս բռնելու այն ընթացքը, որին դուք յամառաբար դառնում էք ամէն անգամ: Ի դուր էք պնդում ձեր տեղական պայմանների ստիպողականութեան վրայ: Ամէն մի յեղափոխական մարմնի համար ստիպողական կարող են լինել միմիայն գործի ընդհանուր շահերը եւ ոչ թէ այլ եւ այլ տեղական պայմաններ: Մարմինը հենց նրա համար է Մարմին, որ տեղական պայմանները յարմարեցնի եւ ծառայեցնի գործի ընդհանուր պահանջներին եւ ոչ թէ ենթարկուի նրանց:

Ինչ տեսակետից էլ նայելու լինենք խնդրին՝ ընկերական, թէ իրաւարանական, դուք անպայման պէտք է ենթարկուիք «Պորհրդի» որոշումներին, ձեր պայմանները նրան յարմարեցնելով, թէ չէ ձեր տատանուող տրամադրութիւնը աւելի եւս կը խառնէ գործի

կանոնաւոր ընթացքը: Մի՛ շփոթուէք, մի՛ կորցնէք ձեր պաղարիւնութիւնը: Մի՛ թէ կարծում էք, որ եղել են կամ կարող են լինել դաւադրական գործողութիւններ, որոնց պատրաստութեան շրջանը ապահովուած լինի պատահարներից: Կամ չէ՞ են վտանգուել գործեր, բոլորովին պատրաստ, սպասելով յարմար բոլորից: (Ռակեհանքի պնդում էին, որ գործը անեն անմիջապէս Վիշապից — Պուլից — յետոյ):

Դ.— ՊՈՒՍՈՑ ՄԱՀԱՓՈՐՁԸ

Պուլի մահափորձի առթիւ, 1905 Յուլ. 17ին Ռոստոմը Արեւմտ. Բիւրոյի կողմից գրում է Վիշապ.

«Քանի ժամը աւելի է մօտենում, այնքան աւելի ենք անհանդատանում նժոյգի հետեւանքների մասին: Անաջողութիւնը մեզ կը սպանի: Ձի՛ կարելի արդեօք, իբր պահեստ, ունենալ մէկին՝ խնձորով, որը անաջողութեան դէպքում, վրայ հասնի: Տեղի ունեցած իրանցումից բոլորը գլուխները կը կորցնեն, եւ նա կարող կը լինի իր գործը կատարել անարգելք, նոյնիսկ ամենահասարակ խնձորով: Դէպքից յետոյ Արեւմտ. Բիւրոն մի երկար նամակ է գրում, յայտնի չէ թէ ում, բայց չի ուղարկում: Քաղում ենք միջից.—

«Պայթումը եղել է շատ զօրեղ. ճեղքուել է մզկիթի աշտարակը, կոտորատուել են մօտակայ տների (300 400 մետրի վրայ գտնուող) լուսամուտների ապակիները. սպանուած են 24 եւ վիրաւորուած ծանր 60 հոգի, 30 կառք օդն են բարձրացել եւ ոչնչացել. սպանուած են 55 ձի. վերջին տեղեկութիւններին նայելով՝ սպանուած եւ վիրաւոր մարդկանց թիւը — բացառապէս տաճիկ զինուորներ, պաշտօնեաներ — 200ի է հասնում: Նրանց մէջն են երկու փաշաներ, մէկ ազիւտանդ Սուլթանի եւ Սուլթանի որդեբրանց դաստիարակ Բեհաբէյը. միայն մի օտար՝ գերմանուհի է սպանուած: Բայց Սուլթանը մնացել է դժբախտաբար ողջ, շնորհիւ այն հանգամանքի, որ կէս բոլոր ուշացել է մզկիթում. խօսքի է բռնուել պալատականներից մէկի հետ եւ այդպիսով հազիւ դուրս է եկել մզկիթի սանդուխների առաջին աստիճանի վրայ, երբ պայթումը տեղի է ունեցել մօտաւորապէս 35 մետրի վրայ. այն ինչ եթէ այդ խօսքի բռնուելու պատահականութիւնը չլինէր, պիտի գտնուէր պայթումի վայրկեանին 25 մետրի վրայ եւ այդ դէպքում աւելի հաւանականութիւն կը ստանար նրա ընկնելը: Յամենայն դէպս, մի շարք նշաններից երեւում է, որ 120 քիլօ նիւթը ամբողջովին չէ պայթել շնորհիւ երկաթեայ արկղի թուլութեանը: Եթէ արկղ աւելի ամուր լինէր շինուած եւ հաստ երկաթեայ, այն ժամանակ ամբողջը կը պայթէր եւ այդ դէպքում անպայման սոսկալի կը լինէր կոտորածը: Երկաթէ արկղի ծանրութիւնը եղել է 55 քիլօ. կրկնակի պատերի մէջ լեց-

ուած է եղել 16 քիլօ ծանրութեան երկաթի կտորներ (վինտի գլուխներ). նիւթը՝ 124 քիլօ, կապսիւլներ՝ 430 հատ—1200 կրամ պայթող սնդիկ: Բռնկեցնողը եղել է Երկաթեայ երկու կապսիւլներ, երկու տարբեր տեղից վայրկեանաշարժով սարքուած: Երկու մարդ են եղել կառքում. զսպանակը սեղմելուց յետոյ՝ 1 բոլոր 30 վայրկեան են ունեցել ժամանակ, որից յետոյ պայթումը պէտք է առաջ գար, եւ այդ հաշիւը ճիշդ կատարուել է: Երկու ընկերները օգտուելով այդ 1 ր. 30 վ.ից, հեռացել են կառքից եւ ապահով տուն հասել: Երբորդը մնացել է կառքի վրայ եւ օդը բարձրացել: Այդ վերջինը (տաճիկ) ոչնչից խաբար չէ եղել ի հարկէ: Մի ենթադրութիւն կայ, որ կապսիւլների շատութիւնը թերեւս նոյնպէս կարելի է նկատել իբրեւ բացասական գործօն, քանի որ արկղը կարող էր ժամանակից առաջ պայթել հենց շնորհիւ 430 կապսիւլի ահպին ճնշման: Իսկ թէ ինչո՞ւ է եղել երկաթեայ արկղը այդքան թոյլ, դրա մասին երկար կը լինի գրել: Դրութիւնը եղել է այնպէս, որ երկու արկղ «բրակ» անելուց վերջը, վերջ ի վերջոյ ստիպուած են եղել գործը երկար չձգձգելու համար եւ այդպիսով զանազան պատահարների շնթարկուելու համար, հաշտուել արկղի պակասների հետ, յոյս դրած նիւթի ուժի վրայ: Ընկերները բոլորն էլ ազատ են: Չայնը լսուել է 1 կիլոմետրի վրայ Ստամբուլում: Ընկերներից չորսը դուրս են եկել գործից վերջը, նոյն օրը երեկոյեան, հաւատացած թէ սպանուածների մէջ է անպատճառ Սուլթանը: Շնորհիւ տիրող շփոթութեան եւ կառավարութեան գլուխը կորցրած լինելուն, նրանց յաջողուել է անարգել դուրս գալ: Միայն Սոփիայում նրանք լսել են դժբախտութեան լուրը՝ Սուլթանի կենդանի լինելը»:

Պուլի մահափորձից անմիջապէս յետոյ, Պուլի ընկերները յայտարար են յանձնում դեսպաններին՝ յայտնելով՝ թէ այդ իրենց գործն է եւ պահանջելով բարենորոգումներ: Այնուամենայնիւ երկար ժամանակ թէ՛ կառավարութիւնը եւ թէ՛ ուրիշներ չէին հաւատար, որ դա հայերի գործն է, այլ ենթադրում էին՝ որ արաբներն են կամ մակեդոնացիք, կամ նոյնիսկ բուլղարներ ու յոյներ, կամ երիտասարդ թուրքեր:

Արեւմտ. Բիւրոն էլ սկզբում հակառակ էր, որ իմացուի թէ հայերն են. չէր ուզում, որ մի անյաջող գործ վերադրուի Դաշնակցութեան: Աւելի լաւ էր համարում՝ թողնել երիտասարդ թուրքերի կամ պալատական ինտրիգները վրայ եւ այդպիսով թուրքիոյ մէջ պառակտում ձգել: Այս Ռոստոմի ծրարներն էր. Սաֆոն հակառակն էր պնդում: Բայց, վերջ ի վերջոյ, մնաց հայերի վրայ:

Հիմնական սխալը նրանում էր, որ պայթիւնը կազմակերպուած էր մեքենայով, մինչդեռ ուղեբերով կարելի էր աւելի շեշտակի հարուած տալ: Ինչպէս վճռուած էր ողբացեալ Քրիստափորի ժամանակ եւ ինչպէս Ռոստոմն էլ էր խորհուրդ տալիս ու պնդում, պէտք էր յանձն առնել զոհ: Սաֆոն պատասխանում էր. ինչպէ՞ս վստահել այդպիսի մի գործ մարդու ջղերին, մանաւանդ Ռուբինայի, որը պահանջում էր, որ իրեն յանձնուի ուղեբերի պայթեցումը. մեքենան աւելի ամուր էր եւ աւելի վստահելի: Բայց մեքենան էլ չէր կարող պատահականութեան առաջն առնել:

1905 Օգ. 1ին Արեւմտ. Բիւրոն (Ռոստոմ) գրում է Արեւել. Բիւրոյին, պայթիւնի առթիւ. «Եւրոպական մամուլը հարկ եղած ուշադրութիւնը չդարձրեց, մանաւանդ Քրիստափորի. գերմանացիք աւելի գրեցին»:



Է.— Լ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

1906 ՄԱՐՏ—ԱՊՐԻԼԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ըսած ենք ասկէ առաջ՝ որ Լ. Յ. Դաշնակցութեան կովկասեան Ռայոնական ժողովներէն մէկ քանիսն, քննուած հարցերու հիմնական կարեւորութեամբ, Երկրի գինման ու գործունէութեան կապակցութեամբ իրենց տուած կարգ մը շատ կարեւոր որոշումներով, ու յաճախ՝ մասնակցողներու տիրական անհատականութեան շնորհիւ, փաստօրէն ունեցած են Ընդհանուր ժողովի արժէք եւ տարողութիւն: Այդպիսի ժողովներ էին 1895ի (տեսնել էջ 18-21), 1896-97ի (էջ 29-34) եւ 1897-98ի (էջ 36-44) Ռայոնական ժողովները, ինչպէս նաեւ 1904 Դեկտեմբերի կովկասեան Ռայոնական ժողովը, որու արձանագրութիւնը տուինք նախորդ բաժնին մէջ (էջ 205-233):

Ե՛ւ ժողովականներու անճանական հեղինակութեամբ, ե՛ւ քննարկուած հարցերու կարեւորութեամբ, նախորդներէն ետ չի մնար նաեւ 1906 թուականի Արեւելեան շրջանի Ռայոնական ժողովը, — տեղի ունեցած Մեծ-Քաղաքի մէջ (Թիֆլիս)՝ Մարտ 28էն մինչեւ Ապրիլ 8, — որու մանրամասն ատենագրութիւնները կու տանք ներկայ բաժնին մէջ:

Ատենագրութիւնները, ձեռագիր եւ խմբատիպ, կը գրուեն 22,5x36 սմ. չափի մեծագիր 172 էջեր: Պահպանուած է բաւական լաւ վիճակով: Կարգ մը էջեր համեմատաբար գունատած են կամ ժանգի երանգներով ծածկուած, սակայն կը մնան լիովին ընթեռնելի: Ձեռագիրը մաքուր է (սեւագրութիւն չէ)։ Խմբատիպի մեկանը՝ մանիշակագոյն: Էջերը թուագրուած են (1էն 172): Մեր կողմէ մեքենագրուած պատճէնը գրուած է ընթացիկ չափի 130 էջեր:

Ժողովին ներկայ են ամբողջ փաղանգը Դաշնակցութեան անուանի առաջնորդներուն եւ կարեւոր դէմ-

քեր՝ մարտական ղեկավարներէն, — Սիմոն Զաւարեան, Ռոստոմ, Արմէն Գարօ, Յովնան Դաւթեան, Յովհ. Եուսուփեան (Մելիք), բժ. Համօ Օհանջանեան, Աւետիս Ահարոնեան (Ղարիբ), Գարեգին Խաժակ, Աւետիք Սահակեան, Եղիշէ Թոփչեան, Արքաշապ Գիւլխանդանեան, Միքայէլ Վարանդեան, Մարտիրոս (Սաֆօ), Սեբաստացի Մուրատ, Վանայ Սարգիս (Բարսեղեան), Խմբապետ Համազասպ, Ստեփան Տէր Մկրտչեան, Կոմս եւ ուրիշներ:

Օրակարգի գլխաւոր հարցերն են.
ա) Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի Պետական Դուման, — «պայքոք»ի հարցը:

բ) Հայ-թաթարական ընդհարումները. — Կը շեշտուի վերջնական դադարեցման անհրաժեշտութիւնը, կը ճշդօրին անրագործներու պատուհասման պայմաններն ու չափը, մանրամասն քննութեան կ'ենթարկուի թուրք ֆոնդներու շարժումները արտօնելու կամ արգիլելու հարցը, կը ճշդօրին հայերու եւ թուրքերու կրած վնասները՝ ընդհարումներուն հետեւանալով, եւ կը քննուին փոխադարձ հատուցումներու, ինչպէս նաեւ ընդհանրապէս՝ կովկասի մէջ հայ-թաթարական յետագայ յարաբերութիւններու խնդիրները:

գ) Տանկահայաստանի կացութիւնը, Երկրի գործունէութեան եղանակները եւ կովկասահայութեան ունենալիք դերը՝ այդ գործունէութեան մէջ: Մանրամասն քննութեան կ'ենթարկուի տանկահայ եւ ռուսահայ դատերու փոխ-յարաբերութեանց (միացման կամ անջատման) հարցը, եւ այդ առթիւ տեղի կ'ունենան բուն վիճարանութիւններ:

դ) Դաշնակցութեան կովկասեան գործունէութիւնը. — Տեղի կ'ունենան լուրջ քննադատութիւններ՝ կով-

կասեան Նախագծի կապակցութեամբ, վիճարանութիւններ՝ «ընկերվարական» թէ ազգային» խնդիրն շուրջ, և, ի վերջոյ, վերստին իրարու կը բախին Թուրքիոյ եւ կովկասի հայութեանց դատերու անջատման, կամ միատեղ՝ իբրեւ համահայկական դատ հետապնդման տեսակէտները: Մարմինները ընդհանուր ամամբ, ինչպէս նաեւ Զաւարեան, Ռոստոմ, Խաժակ, Թոփչեան, Սարգիս եւ Կոմս՝ շերմ պաշտպան են միութեան տեսակէտին:

Ժամանակաշրջանի մտայնութեան ու յաճախ իրերամերձ տեսակէտներու արտայայտութեան դաշտ մը՝ 1906ի Ռայոնական այս ժողովը: Ըլլա՛յ աջակողմեան (Միերանականութիւն), ըլլա՛յ ձախակողմեան ծայրայեղ թեֆումները այդ օրերուն սկսած էին արտայայտուիլ կովկասեան մեր շարքերուն մէջ, ու պէտք պիտի ըլլար սպասել տարի մը եւս՝ որպէսզի Վիեննայի 4րդ Ընդհ. ժողովը տար իր վերջնական ու անառարկելի վճիռները:

ե) Հոգային (ագրարային) եւ բանուորական հարցերը: Ընկերային խնդիրները՝ ընդհանրապէս, — աշխատուոր դասակարգի ապահովութիւն եւ պաշտպանութիւն, պայքար՝ վաշխառուներու եւ կեղծքիչներու դէմ, են.:

զ) Դաշնակցական կազմակերպական կառայքը՝ կովկասի մէջ, նուագագոյն պահանջները (մարմիններու եւ ընկերներու պարտաւորութեանց եւ իրաւունքի սահմանները) եւ գտումի հարցը:

է) Թիֆլիսի «Յառաջ»ը կը յայտարարուի կովկասեան մարմիններու պաշտօնական օրգամ:

ը) Ընտրութիւն Արեւելեան Բիւրոյի: Կընտրուին Անտոն (Սիմոն Զաւարեան), Ռոստոմ, Համօ Օհանջանեան, բժ. Յ. Տէր Դաւթեան, Աւետիք Սահակեան (Հայր Արքաշապ), Յով. (արդեօ՛ք Յովնան Դաւթեան) եւ Ստեփան Տէր Մկրտչեան:

Արձանագրութիւնը կու տանք ամբողջութեամբ, կատարելով ուղղագրական կարգ մը փոփոխութիւններ միայն: Չենք դպած անգամ լեզուին, որ փաստօրէն խօսակցական է եւ յաճախ՝ ֆերականապէս շատ խոցելի: Փակագծի մէջ առած ենք կրճատուած կարգ մը անուններու կամ բառերու մեր կողմէ կատարուած լրացումները, ինչպէս նաեւ, երբեմն, դժուար հասկնալի բառի մը բացատրութեան փոքր՝ անորոշութեան պարագային հարցման ոչանով: Կարեւոր թիւով ծանօթագրութիւններ կը նպաստեն ժողովականներու ծանօթացման կամ իմաստի ամբողջական ընկալման:

Որոշումներու պաշտօնական բանաձեւումները կու տանք առանձին տառերով (հայաստանեան): Անոնց ամբողջութիւնը հրատարակուած է առանձին, օրուան դաշնակցական մամուլին մէջ (թղթածրարին մէջ պահուած են կտրօններ, ամենայն հաւանականութեամբ Լ. Յ. Դ. Թիֆլիսի պաշտօնաթերթ «Յառաջ»էն), ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿ. ԲԱՅՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ Խորագրով, եւ հետեւեալ շարքով. — Պետական Դումա — Դատաւարութիւն — Պատժի Խնդիրը — Հայ-թուրքական ընդհարումների մասին — Վեցաների փոխադարձ հատուցումը — հաղադարձիւն հաստատելու միջոցներ — Տանկա-հայկական հարցը — Ագրարային հարցը — Բանուորական հարց — Ցեղի հարց:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՆՈՍ, 28/III ԵՐԵՎԱՆԻ

1906 թ. Մարտի 28ին կայացաւ Հ. Յ. Դաշնակցութեան Ռայոնական Ժողովի առաջին նիստը:

Բիւրոյի ներկայացուցիչը՝ բանալով ժողովը, տեղեկացրեց ժողովին այն որոշումներէ մասին, որոնք անցել էին նախապատրաստական ժողովում. ժողովին ներկայ էին հետեւեալ ներկայացուցիչները. — Արեւել. Բիւրոյի, Մեծ-Քաղաքի, Նաւահանգուտի, Ռսկանապատի, Մրգաստանի, Քարի, Զրարերդի, Ապառաժի, Փլատի, Նալբանդի, Այգեստանի, Եկնդեցու եւ Զիֆոնի(1): Նախապատրաստական ժողովում դրուած էր մի խոշոր հարց, այն է՝ արդեօք վճռողական ձայն տալ միայն ներկայացուցիչներին, թէ՛ նաեւ դաշնակցական հին գործիչներին: Այդ հարցը նախապատրաստական ժողովը թողեց առկախ եւ յետաձգուեց աւելի բազմամարդ ժողովին: Քանի որ դաշնակցական ընկերներից շատերը ցանկանում են ներկայ լինել Ռայոնական նիստերին, աւելի մօտէն ծանօթանալու յեղափոխական գործի դրութեան հետ, առաջարկուում է վճռել՝ արդեօք կարելի՞ է թոյլ տալ ներկայ լինելու, որոնց և ի՞նչ պայմանով: Ապառաժի եւ Քարի ներկայացուցիչները պնդում են, որ պէտք է առ հասարակ սահմանափակել ներկայ եղողներին թիւը, նախ քանի որ տեխնիքական յարմարութիւնները թոյլ չեն տալիս բազմամարդ ժողովներ անել, եւ երկրորդ՝ որ իրանք միշտ յանդիմանուում են իրենց ներկայացրած ընկերներից այն բանում, որ ժողովների վճիռների վրայ աւելի մեծ ազդեցութիւն են ունենում կողմնակի մարդիկ, քան Մարմինների ներկայացուցիչները:

Այգեստանի ներկայացուցիչ(2). — Տեխնիքական յարմարութիւնների համար մենք չենք կարող զրկել մեր ընկերներին ներկայ լինելուց:

Ար. — Գ.(3). — Կենտրոնական Կոմիտէն իր վրայ է վերցնում տեխնիքական բոլոր յարմարութիւնները: Վճռուեց թոյլ տալ ներկայ լինելու ցանկացող ընկերներին՝ Կ. Կ.ի հրաէրով, միայն ներկայ լինելու պայմանով, առանց որեւէ ձայնի:

Գալով դաշնակցական հին գործիչների ձայն տալու հարցին, Հ. Օ.(4) առաջարկում է վճռողական ձայն տալ այդպիսի ընկերներին, քանի որ (նրանց մէջ) կան գործիչներ, որոնք տասնեակ տարիներ աշխատել են կազմակերպութեան մէջ. մանաւանդ որ կան այնպիսի խոշոր սկզբունքային հարցեր, որոնք Դաշնակցութեան) համար կ'ունենան վճռողական նշանակութիւն:

Ա. — Գ.(3). — Քանի որ գործիչներ բառը շատ առածգական հասկացողութիւն է, մենք դրանով առիթ

կը տանք զանազան թիւրիմացութիւններ. հարկաւոր է միայն ձայն տալ Պատգամաւորներին:

Հարցը դրուում է չուէարկութեան: Եւ քանի որ չուէարկութեամբ հարցը չի վճռուում, մնում է բաց: Ի տեղեկութիւն ժողովին Հ. — ն(4) յայտնում է, որ ժողովները (տեղի կ'ունենան) առաւօտեան ժամը 10-2, եւ երեկոյեան 7-10: Մեծամասնութեան ցանկութեամբ երեկոյեան ժողովները նշանակուում են 6-10: Նախապահը իրաւունք ունի փակելու խօսողների ցուցակը եւ ոչ ոք չպէտք է բողոքէ դրա դէմ: Վճռուեց ուշացող անդամների մասին յայտնել իրենց ներկայացրած Մարմիններին:

Վարժ.(5). — Առաջարկում է հարցերը նախ քան ժողովների բերելը, յանձնել մի բիւրոյի կամ մասնա-ժողովի՝ մշակելու, ստորաբաժանումներ մտցնելու եւ բանաձեւեր մշակելու համար: Այդ առաջարկը ընդունուեց միաձայն. ընտրուեցին Մասնաժողովի անդամներ՝ Վարժ., Հ. Օ. և Անտոն(6): Առաջարկուում է նախագահ ընտրել: Ընտրուեց Հ. Օ.(4):

Հ. Օ.(4). — Առաջին հարցը, որ դրուած է օրակարգի մէջ, դա մեր վերաբերմունքն է դէպի Պետական Դուման: Նախկին Ռայոնական Ժողովը որոշել է պահանջել Սահմանադիր Ժողով, իսկ եթէ յեղափոխական ոյժերի համաչափութիւնը չի թոյլ տայ այդ պահանջը իրականացնելու, այդ դէպքում մասնակցել Պետական Դումային, միայն եթէ վերջինս կազմուած լինի քառանգամ ընտրողական սկզբունքի վրայ: Իսկ քանի որ ներկայ գումարուելիք Պետական Դուման այդ սկզբունքով չի կազմուում, ուրեմն մենք չպէտք է մասնակցենք: Սակայն նախկին Ռայոնական Ժողովը չէր որոշել թէ մեր ոչ-մասնակցութիւնը կամ բոյկոտը(7) ի՞նչ ձեւով պէտք է արտայայտուի: Ահա այդ վերջին հարցն է, որ դրուած է մեր ժողովի քննութեան:

Ա. — Գ.(3). — Յայտնում է որ Մեծ-Քաղաքի Շըր-Ջանային Ժողովը որոշել է բոյկոտի ենթարկել, բայց ոչ զինուորական ուժով, այլ պրոպագանդայով(7):

Քարի ներկայացուցիչ(2). — Կառավարութիւնը այժմեանից ամէն կերպ աշխատում է իր թեկնածուներին անցկացնել եւ թերեւս նրան յաջողուի այդ աւելի լու. է բոլորովին չմասնակցել և բոյկոտի ենթարկել:

Վարժ.(5). — Մեզանում երեք տեսակի տրամադրութիւն կայ, —

1. Պանդարել ընտրութիւնները վերջին աստիճանում. 2. Չեռնպահ մնալ եւ 3. Բոյկոտ սկզբից եւեթ: Ընդունուեց վերջին բանաձեւը, քանի որ մենք չենք հաւատում, որ վերջին աստիճանում մենք հնարաւորութիւն եւ մարդիկ կ'ունենանք այնտեղ՝ խանգարելու պատգամաւոր ընտրող ժողովը:

Հ. Օ. — Արդեօք եթէ մենք սկզբից եւեթ բոյկոտ

յայտարարենք եւ ժողովուրդը մեզ չհետեւի, կազմակերպութեան վարկը չի՞ ընկնի:

Վարժ. — Եղել են դէպքեր, երբ մեզ չեն լսել, այնուամենայնիւ մեր վարկը չի ընկել: Մանաւանդ որ մենք բոյկոտ կը յայտարարենք ոչ թէ չըջարեալաններով, այլ բացատրելով եւ լայն պրոպագանդայով:

Սարգիս(8). — Բոյկոտը աւելի ազդեցիկ կը լինի, եթէ մենք թողնենք մինչեւ վերջին աստիճանը, մինչեւ նահանգական քաղաքը զայ եւ այնտեղ ազդել, թէկուզ ուժի միջոցով, խանգարել ընտրութիւնը: Միւս ներկայացուցիչներն եւս բացատրելով իրենց շրջանների պայմանները գալիս են այն եզրակացութեան, որ պէտք է բոյկոտի ենթարկել:

Հ. Օ. — Բոլորի տրամադրութիւնը, որքան երկուում է, հակուած է դէպի բոյկոտ. այժմ հարց է առաջ գալիս, արդեօք ակտիւ թէ՞ պասսիւ(9) բոյկոտ անել:

Քարի ներկայացուցիչ(2). — Գաւառների տրամադրութիւնը աւելի պասսիւ է. եթէ կազմակերպութիւնը ակտիւ բոյկոտ յայտարարէ, այն ժամանակ ժողովուրդը կարող է կանգնել կազմակերպութեան դէմ:

Վարժ. — Ճիշդ է, մենք յեղափոխական ժողովուրդ չունենք, յեղափոխական գործ չենք ունեցել եւ ժողովուրդը վախենում է կառավարութիւնից, բայց եւ այնպէս մեր յաջողութիւնը մեծ չափով կախուած է մեր կազմերի եւ պրոպագանդիստների տակտիկայից: Ակտիւ բոյկոտ յարմար է միայն քաղաքներում, որտեղ մենք ունենք ուժեղ բազա(7):

Նալբանդի ներկայացուցիչ(2). — Աւելի նպատակաւոր մար է պասսիւ բոյկոտ:

Երկար վիճարանութիւններից յետոյ ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը. —

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ռայոնական Ժողովը, քննելով Պետական Դումայի ընտրութիւններին վերաբերեալ հարցը եւ ի նկատի ունենալով որ՝

1. նախկին Ռայոնական Ժողովը որոշել էր «Մասնակցել Պետական Դումային միայն եթէ նա կազմուած լինի քառանգամ ընտրողական սկզբունքի վրայ»,

2. որ կառավարութեան ընթացքը այդ որոշումից յետոյ փոխուել է ճիշդ դէպի վատը. դէպի բոնութիւնների, դէպի անիրաւութիւնների դաժան քաղաքականութիւնը եւ ժողովուրդի ամենատարրական իրաւունքների ճնշումը,

3. որ այդ Դուման բոլորովին համապատասխան չլինելով ժողովրդական ներկայացուցչութեան գաղափարին, ընտրուելով փնտրական եւ բռնակալական խտրութիւնների ամենադաժան հարուածների տակ, կարող է ծառայել միայն բիւրոկրատիայի շահերին, նպաստելով նրա փոխառութեան եւ այլ նպատակներին,

4. եւ ի նկատի ունենալով ընկերների բերած կարծիքները իրենց ներկայացրած շրջանների տրամադրութեան մասին, վճռուեց հենց սկզբից եւեթ բոյկոտի

ենթարկել լայն պրոպագանդայով, գիտակցութեան հրաւիրել ժողովուրդը եւ ընդհանրապէս բոլոր յեղափոխական պահանջների թոյլ տուած հնարաւոր միջոցներով՝ խանգարել բոլոր աստիճաններում: Մի քանի Մարմիններն, որոնք առաջարկել են ժողովրդին՝ մասնակցել առաջին աստիճաններում, կարող են պատճառ բռնել նորանոր փաստերով կառավարութեան բռնած դիրքի նկատմամբ եւայլն: Ընտրել մի մասնաժողով, Ռայոնական Ժողովի անունից կազմելու մի շարք իրար հետեւող թուցիկներ եւ պրոպագանդայի ինստրուկցիաներ(7) մշակել ու ուղարկել բոլոր Մարմիններին: Ամէն մի դաշնակցական ընկերը պարտաւոր է իր գործունէութիւնը յարմարեցնել այս բանաձեւին»:

Ժամանակի սղութեան պատճառով, ժողովը յետաձգելով օրակարգի 2րդ կէտը, անցնում է 3րդ կէտին, այն է՝ դատաւարութիւնը, ծեծը եւ այլ պատիժները վերացնելու քննութեան:

Թմբուկի(10) ներկայացուցիչ(2). — Դատաւարութիւնը պէտք է վերացնել, որովհետեւ դա մեր ուժերից վեր բան է, չունենք օրէնսդրքեր, փաստաբաններ, հասարակական սովորութիւններին ծանօթ մարդիկ. ծաղում են զանազան թիւրիմացութիւններ, եւ ծեծի ու այլ անվայել պատիժների պատճառ դառնում: Ահա հրաժեշտ է ընդունել միայն զուտ յեղափոխական եւ ընկերական դատարաններ:

Հ. Օ.(4). — Յիշեցնում է նախկին Ռայոնական Ժողովի վճիռը. — Թողնել դատաւարութեան վերացնելու հարցը Կենտրոնական Կոմիտէներին:

Վարժ.(5). — Զրարերդի այդ առթիւ կայացրած մի ժողովում աչքի էր ընկնում այն հանգամանքը, որ դատաւարութիւնը պաշտպանում էին ոչ իսկական յեղափոխականներ, այլ հարուստ վաշխառուների շահերը պաշտպանող մարդիկ, որոնք միաժամանակ վարիչ մարմինների անդամներ էին: Դրանից առաջ դարձեալ եղել է մի ժողով, բայց դատաւարութեան վերացնելու հարցը չի անցել, որովհետեւ կազմի անդամներ եղել են բուրժուաներ եւ վաշխառուներ: Մեր շրջանը դատաւարութեան դէմ է եւ առաջարկում է բոլորովին վերացնել:

Փլատի ներկայացուցիչ(2). — Մեր շրջանային ժողովումն էլ քննուեց այդ հարցը եւ վճռուեց այն մըտքով, որ վերցնել միայն կազմակերպչական դատեր, այլապէս մենք միանգամայն չեղուում ենք յեղափոխական գործունէութիւնից:

Թմբուկի(10) ներկայացուցիչ(2). — Մեր ժողովուրդը ինքը սիրում է դատաւարութիւնը, եւ ասում է թէ, եթէ դատաւարութիւն չլինի, հապա ի՞նչ յեղափոխական կազմակերպութիւն է: Պատճառն այն է, որ նա տաղուած է զանազան օրլախատների ձեռքին: Բայց դժբախտաբար մենք չկարողացանք տալ մի իտէալական դատաւարութիւն, որ ուզում էր եւ ժողովուրդը: Մենք իբրեւ կազմակերպութիւն հրաժարուում ենք դա-

տավարութիւններ(ից) եւ միշտ առաջարկում ենք ընտրել միջնորդ դատաւորներ, թէկուզ մեր միջից:

Գանձակի անր(կայացուցիչ).— Աչքի առաջ ունենալով դատավարութեան բացասական կողմերը, մենք ժամանակաւորապէս դադարեցրել ենք դատավարութիւնը եւ աշխատում ենք գիւղական դատաւորների ընտրութեան ժամանակ անցկացնել մեր մարդոց:

Քարի անր(կայացուցիչ).— Դատավարութիւնը հակադատութեան գործ չի կարելի համարել, բայց մեր դժբախտութիւնը նրանումն է, որ չենք կարողանում այդ գործը լաւ հիմքերի վրայ դնել: Դա է գլխաւոր պատճառը, որ ստիպում է մեզ վերացնել դատավարութիւնը: Քաղաքներում եւ գիւղերում, հարկաւոր է միանգամայն վերացնել, եւ միայն ներգործական դեր խաղալ գիւղական պետական դատաւորների ընտրութեան (մէջ) եւ հսկել նրանց գործունէութեան եւ հարկաւոր դէպքում դատի ենթարկել:

Ապառաժի անր(կայացուցիչ).— Մեզ մօտ դատավարութիւնը այնքան էլ վատ հիմքերի վրայ չէ դրուած, ինչպէս օրինակ Զրաբերդի շրջանում: Գործը երբ լաւ մարդոց ձեռքն է, միշտ էլ լաւ է դնում, հարկաւոր է միայն այդ գործը յանձնել ընդունակ եւ բարեխիղճ մարդոց:

Հ(ամօ) Օ(հանգանեան).— Երկու կողմերն էլ դատավարութեան մասին խօսելով ծայրայեղութեան մէջ են ընկնում: Դատավարութիւնը եղել է իբրեւ մի բոլոր կառավարութեան դէմ եւ իր այդ պատմական միասնական կատարել է՝ չէզոքացնելով կառավարութեան նշանակութիւնը: Սկզբներում ամէն յեղափոխական դատավարութիւն առաջ է դնացել շատ լաւ, իսկ ժամանակի ընթացքում այդ գործը անցել է ժողովրդի տղրուկ մասի ձեռքը, որը եւ շահագործել է այդ իշխանութիւնը: Դրան ապացոյց՝ Զրաբերդի եւ Ապառաժի ներկայացուցիչների ցուցմունքների տարբերութիւնը: Առաջինում վաղուց արդէն մտցրած է դատավարութիւն եւ անբաւական են, իսկ երկրորդում՝ մտցրած է նոր եւ լաւ հիմքերի վրայ է դրած:

Յ(իշտ)(11).— Եստե՛րը առաջարկում են դատավարութիւնը թողնել ժամանակաւորապէս գիւղերում, փոքր կամ մեծ շափերով: Եթէ մենք համաձայնենք այդպիսի մի կոմպրոմիսի, այդ դէպքում ժամանակի ընթացքում կ'ընդունի այնպիսի շափեր, որ կը գերազանցէ ներկայից: Դատավարութիւնը հարկաւոր է միանգամ ընդմիշտ վերացնել:

Ամբաստ(12).— Բացասական կողմերը մի կողմ թողնելով, ուշադրութիւն եմ դարձնում մի կարեւոր կէտի վրայ. այն է՝ որ Դաշնակցութիւնը իբրեւ մի ուժեղ կուսակցութիւն յանձն է առնում ի կատար ածել այն բոլոր վճիռները բռնի միջոցով, քանի որ նա չի կարող այլ կերպ վարուել: Դաշնակցութիւնը պէտք է հրաժարուի ամէն մի դատավարութիւնից՝ իբրեւ մի գործադիր Մարմին, եւ թողնի գործը միջնորդ դատաւորներին:

Վերջի վերջոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւը.—

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 1906 թ. Ռայոնական Ժողովը, քննելով դատավարութեան վերաբերեալ հարցը, եւ աչքի առաջ ունենալով անցեալի դառն փորձերը, գիտակից յեղափոխական ուժերի սակաւութիւնը եւ ապագայի անհրաժեշտ կարելոր գործունէութիւնը, ծրագրային եւ յեղափոխական սկզբունքների բացատրութեան եւ պրոպագանդայի նպատակով, որոշեց՝

1. Բոլոր Հրջաններում միանգամայն վերջ դնել Հ. Յ. Դ. Մարմինների դատավարութեանը:
2. Արծարծել միջնորդ դատարանների սկզբունքը կազմակերպութիւնից անկախ:
3. Ներգործական դեր խաղալ գիւղական պետական դատաւորների ընտրութեան գործում, պաշտպանելով բուն ժողովրդի շահերին նուիրուած անձերի թեկնածութիւնը:
- Եւ 4. Դաշնակցական կենտրոնական Մարմինները կարող են միջամտել միայն խոշոր հասարակական հարցերի եւ յեղափոխական գործերի հետ անմիջական կապ ունեցող խնդիրներում:

Ա. Բողոքը փակուեց գիշերուայ ժամը 11:30ին:

ԵՐԿՐՈՒԴ ՆՒՍ, 29/III ԱՌԱՌՕՏԵԱՆ.

Նախագահ ընտրուեց՝ Անտոն(6): Քննութեան էր դրուած օրակարգի 2րդ. հարցը այն է՝ «Մեր տակտիկական հայ-թրքական ընդհարումների վերաբերմամբ ներկայ պայմաններում, քոչի(13) հարցը, ոճրադորների պատժի եւ փոխադարձ հատուցման հարցը»:

Գանձակի անր(կայացուցիչ).— Առ հասարակ քոչի(13) ժամանակ հայ ազգաբնակչութիւնը ահազին վրնասներ է կրում, խլում են նրա տուարը, արտերը փճացնում եւ այլն: Այս տարի, մանաւանդ, լարուած յարաբերութիւնների շնորհիւ վնասները անպայման զարհուրելի կը լինեն: Քանի որ կառավարութիւնն էլ ամէն կերպ կ'աջակցի քոչի բարձրանալուն, թուրքերը կ'օգտուեն այդ հովանաւորութիւնից՝ վնասելու հայերին: Թուրքերը այժմեանից կազմակերպում են աւազակային խմբեր, ինչպէս օրինակ Դալի Ալիի խումբը (մօտ 300 մօսիներով) զինուած, Նազիի խումբը (մօտ 70՝ նոյնպէս մօսիներ), որոնք պէտք է պահուեն անտառներում եւ յարձակումներ դործեն հայերի վրայ: Այդ հրոսակային խմբերն էլ պէտք է մաքրեն քոչուորների ճանապարհը: Առանց այդ հրոսակախմբերի՝ թուրքերը չեն համարձակուի քոչ բարձրանալ: Ուստի մեր Երջանային Ժողովը ձայների մեծամասնութեամբ վճռեց թողնել քոչ բարձրանալու, միայն թէ ապահովութեան համար կազմել նոյնպիսի հրոսակախմբեր՝ նրանց հրոսակախմբերին հետեւելու համար, առանց խաղաղ ազգաբնակչութեանը ձեռք տալու:

Սարգիս(8).— Քանի որ այս բոլորիս թէ՛ թուրքերի եւ թէ՛ մեր տրամադրութիւնը հակուած է դէպի խաղաղութիւն, մենք պէտք է աշխատենք ընդհարումների, թէկուզ տարածայնութիւնների առիթ չտալ: Այդ տեսակէտից մեր Երջանային Ժողովը վճռեց չխանգարել քոչին, մանաւանդ որ կառավարութիւնը ամէն կերպ պէտք է նպաստէ այդ հարցում թուրքերին: Սպանութիւնների եւ ամէն մի անարդարութեան եւ աւազակութեան դէպքում թուրքերի կողմից՝ չպատասխանել նոյն եղանակով, այլ դիմել կառավարութեան: Բայց եթէ դրանից յետոյ էլ կրկնուեն այդպիսի դէպքեր, այն ժամանակ միայն պատասխանել թուրքերին՝ ամէն տեսակ միջոցներով: Քոչի(13) ո՛չ բարձրանալու եւ ոչ էլ իջնելու ժամանակ թուրքերը չեն համարձակուի յարձակում գործել, միայն թէ լեռներում եղած ժամանակ կարող են ասպատակութիւններ անել. այդ պատճառով հարկաւոր է միայն վտանգաւոր վայրերում ուժեղացնել մեր խմբերը:

Մուրատ(14).— Ձանկեզուրի պայմաններն զոնէ այնպէս են, որ մենք չենք կարող խանգարել քոչը, այլ պէտք է զօրացնենք մեր զինուորական ուժերը՝ պաշտպանուելու համար:

Անտոն(6).— Ես առաջարկում եմ այդ հարցի մասին խօսելիս չսահմանափակուել քոչի հարցով միայն, այլ խօսել աւելի լայն սահմաններում՝ հայ-թուրքական ընդհարումների պատճառների եւ այդ ընդհարումներին վերջ տալու միջոցների մասին:

Վարժ(ապետ).— Մեզ մօտ քննութեան առնուեց այդ հարցը եւ եկանք այն եզրակացութեան, որ այդ ընդհարումներին, իբրեւ մի վնասակար երեւոյթի, պէտք է անպայման վերջ տալ: Այդ ընդհարումների պատճառները շատ խորն են: Բացի համիլայնականութիւնից, կառավարութեան պրոպագանդայից(7), կայ եւ մի ուրիշ պատճառ. — այն է՝ թուրք մասսայի տընտեսապէս ճնշուած դրութիւնը, եւ դժգոհութիւնը, որը նրանց իդէոլոգիան(15) շնորհիւ սխալմամբ ուղղուել է մեր դէմ: Մինչդեռ նրանց եւ մեր աշխատաւոր եւ ճնշուած մասսաների համերաշխութիւնը հնարաւոր է, օրինակ՝ հողային հարցում: Եղել են դէպքեր, երբ թուրքերը միացել են մեզ հետ թուրք բէկերի դէմ: Այնպէս որ որքան հարկաւոր է գէնք ունենալ, նոյնքան էլ հարկաւոր է պրոպագանդ անել: Ձինուորական ուժով մենք միայն ժամանակաւորապէս կարող ենք ճնշել թուրքերին, որոնք մի 5 տարուց յետոյ կարող են նորից ուժեղանալ եւ մեզ ջարդել:

Գանձակի անր(կայացուցիչ).— Մենք չենք բացասում, որ պէտք է միանալ թուրք աշխատաւոր մասսայի հետ. միայն թէ նրանց ղեկավարները ձգտում են մեզ ուղղակի դուրս մղել որոշ նահանգներից, ինչպէս օրինակ Գանձակի նահանգից, որ նրանք համարուեն զուտ թուրքական (Պետերբուրգի համագումարի եզրակացութիւնը). ուստի մենք ոյժ պէտք է ունենանք մի-

եւնոյն ժամանակ դէմ դնելու այդպիսի ոտնձգութիւններին:

Արշակ(?).— Բոլորիս համար ցանկալի է վերջ տալ այդ ընդհարումներին, որոնք չնայելով մեր ունեցած յաջողութիւններին, ահազին վնաս են հասցնում մեզ: Ես կ'ուզէի միայն ուշադրութիւն դարձնել այն մասնակի բացասական կողմերի վրայ, ինչպէս են թալանի տենչը, եւ օտար զինուորների վատ ազդեցութիւնը: Դրանք հիմնական չեն, բայց հարկաւոր է դրանց դէմ էլ միջոցներ ձեռք առնել: Եթէ թուրք ժողովրդի 90%ը ղեկավարուել է թալանի տենչով, մենք էլ պակաս ետ չենք մնում այդ բանում: Մեր մէջ էլ թալանի տենչը կարող է տարածայնութիւնների պատճառ դառնալ եւ խանգարել խաղաղութիւնը:

Մելիք(16).— Պէտք է աչքի առաջ ունենալ նաեւ ժողովրդի հոգեբանութիւնը. թուրք ժողովրդի վրայ չի կարելի վստահել, նրանց վրայ չի կարելի ազդել ազդեցիկ տարրով(17), եւ գոնէ հրաժարուում եմ այդ բանից: Ի հարկէ ժամանակի ընթացքում մենք հնարաւորութիւն կ'ունենանք այդ ճանապարհով էլ ազդելու, բայց ներկայումս այդպէս դատել չենք կարող: Այս բոլորիս, թէ մեր եւ թէ՛ թուրքերի մօտ պրոլետարատը(18) բուրժուազիայի հետ ձեռք ձեռքի տուած է գընում: Իբր թէ թուրք ամբողջ անբաւական է բէկերից, — ես դրան չեմ հաւատում: Թուրք մասսան պատմութեան ամբողջ ընթացքում աշխատել է սպանել եւ մեղցնել կուլտուրապէս աւելի բարձր ժողովուրդներին, — դա նրա միասնական(19) է եղել: Այժմ էլ նա իր դերի մէջն է: Մենք պէտք է զինուենք անվերջ. ամէն կերպ ցոյց տալ թուրք ամբողջին, որ մենք ոչ միայն համարձակուում ենք գէնք առնել ձեռքերս, այլ եւ յաջողութեամբ գործածել: Ձէնքի (չ)դիմել ինչ որ անկախ, ազատ Հայաստանի համար, ինչպէս շատերը կարծում են եւ մեղադրում մեզ, այլ այն կուլտուրական եւ յեղափոխական գործի համար, որը չեչտեչին մեր ընկերները: Թալանը, ճիշդ է, եղել է, բայց ոչ իբրեւ նպատակ, այլ մի անցողական բան: Այդ տեսակէտից նայելով, մենք պէտք է աշխատենք անվնաս դարձնել քոչը: Կառավարութիւնը ձգտում է թուրքացնել ուժեղացնել թուրքներով այն տեղերը՝ որոնք ձգտում են քոչի ճանապարհի վրայ: Այսպիսի դրութեան մէջ մեզ մնում է երկուսից մէկը, — կամ կռիւ յայտարարել կառավարութեան, կամ կայսեր պատկերով դուրս դալ զօրքի առաջ: Երկրորդի մասին խօսք անգամ չի կարող լինել, առաջինն էլ անելու մենք հնարաւորութիւն չունենք: Մնում է միայն թողնել քոչը, անվնաս դարձնելով նրան՝ մեր զիւղերի համար:

Սարգիս(8).— Բացի այն պատճառներից, որոնք թուրքին մեր ընկերները, կայ եւ ուրիշ պատճառ, որ ստեղծել եւ այդպիսի թափ է տուել հայ-թուրքական ընդհարումներին: Թուրքերի մէջ սկսուել է մի նոր շրջան. — դա նրանց վերածնութեան շրջանն է: Հոր-

դայապան կեանքը նրանց մօտ փոխարինուում է նրա-
տակեաց կեանքով, որի շնորհիւ առաջ է դալիս մի ազ-
դային կեանք ստեղծելու ձգտում: Դա է շարժման իս-
կական նպատակը:— միայն թէ թուրք իդէոլոգի-
րը(15) այդ շարժումը դրել են սխալ հողի վրայ եւ
ուղղել մեր դէմ: Փոխանակ կողմանում կազմելու մի
առանձին խմբակցութիւն՝ այլազգիների հետ համե-
բաշխութեամբ ապրելով, նրանք ձգտում են միանալ
Տաճկաստանի հետ: Բայց շարժումը ինքնաբերական
առաջադիմական գոյն է կրում: Միայն թէ սխալ հողի
վրայ դրուած լինելով, մենք ստիպուած ենք ընդդիմադ-
րել նրանց զէնքի ուժով: Ես չեմ բացասում պրոպա-
գանդայի անհրաժեշտութիւնը, մանաւանդ որ այդպի-
սի տրամադրութիւն նկատուում է եւ նրանց մէջ:

Հ(ամօ) Օ(համբարանան).— Ես կ'առաջարկեմ մի-
ջոցներ, առանց պատճառաբանութեան. հարկաւոր է
վերջապէս դադարեցնել ընդհարումները, միայն ոչ այն
միջոցով, որով մինչեւ հիմա ենք աշխատել դադարե-
ցնել: Այդ միջոցները իրենց միասին(19) վերջացրին.
— նրանք սարսափեցրին թուրք ամբոխին: Հարկաւոր
է պրոպագանդ անել, այն էլ ոչ թէ խօսքով, այլ գոր-
ծով. յեղափոխական ակտերով, — ազգաբային եւ
բանուորական շարժումներ առաջ բերելով, թէկուզ
խառն աւազակային խմբեր կազմելով:

Վարժ(ապիտ).— Ես կ'ուզէի մի հանգամանքի վը-
րայ էլ ուշադրութիւն դրաւել, — այն է՝ որ մենք
ճակատագրաբար ստիպուած ենք գործ ունենալ 3 պե-
տութիւնների թուրք ամբոխի հետ: Երբ մենք ամբողջ
15 տարիներ խօսում, մտածում եւ գործում էինք,
քիւրտի եւ թուրքի դէմ, շատ բնական է, որ մենք դրա-
նով կասկածներ յարուցեցինք թուրք ամբոխին մէջ,
մի կասկած, որը փոխուել է զինուած յարձակումների,
շնորհիւ պրովոկացիայի(20) եւ այլ առիթների: Հար-
կաւոր է պրոպագանդ եւ այն էլ ոչ թէ խօսքով, այլ
գործով:

Անտոն.— Անկասկած է, որ մենք իբր կոտորելով
չենք կարող շարիքի առաջն առնել: Մեզ ամբողջ դա-
րեր կոտորել են աւելի վատ պատմական պայմաննե-
րում, բայց թէ մեզ չեն կարողացել ի սպառ ջնջել:
Այդ պատճառով մենք պէտք է հրաժարուենք այդ փո-
խադարձ ջնջման միջոցից: Եստեղը առարկում են թէ
մենք տնտեսապէս աւելի բարձր ենք կանգնած քան
թուրքերը եւ մենք կարող ենք աւելի երկար դիմանալ:
Դա էլ սխալ է, որքան աւելի բարձր ենք տնտեսապէս,
այնքան աւելի շատ ենք միասուում: Պրոլետարիա-
տը(18), որ ոչինչ չունի, նա կուրի դէպքում ոչինչ չի
կորցնում: Գալով այդ ընդհարումների պատճառնե-
րին, մենք պէտք է մատնացոյց անենք այնպիսի պատ-
ճառների վրայ, որոնք մենք կարող ենք վերացնել: Իսկ
օրինակ կրօնական տարբերութիւն, իբրեւ մի պատ-
ճառ՝ մենք ոչ մի կերպ չենք կարող վերացնել: Նրանց
կուլտուրական յետամնացութիւնը մինչեւ հիմա հնա-

բաւոր չէր դարձնում պրոպագանդը, — մինչեւ հիմա,
բայց ոչ այժմ: Այժմ նրանք դառնում են նստակեաց
եւ երկրագործ ժողովուրդ, աւելի են բարձրանում
կուլտուրապէս եւ աւելի արագ քայլերով քան նրանցից
բարձր կանգնած ժողովուրդները: Այդ բանը աչքի ա-
ռալ ունենալով եւ կարծում եմ, որ հնարաւոր է միաց-
եալ խաղաղ յեղափոխական գործունէութիւն: Բայց եւ
այնպէս ես չեմ բացասում, որ պէտք է պատրաստ լի-
նենք հարկաւոր դէպքում դիմադրել ամէն մի յարձակ-
ման:

ԵՐՐՈՒ ՆԻՍ, 29/III ԵՐԵՎԱՆԻ

1906 թիւ Մարտի 29ի երեկոյան 8-30ին կայացաւ
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ռայոնական
ժողովի 3րդ նիստը, նախադահութեամբ ընկ. Անտո-
նի:

Քննութեան էր դրուած ջոշի(19) հարցը:
Անտոն.— Ի՞նչ գործնական միջոցներով կարելի է
վերջ դնել Հայ-թուրքական ընդհարումներին: Բայց
նախքան այս հարցը քննութեան առնել, մի որոշում
կայացնենք ջոշի մասին:

Գանձակի որոշումն է՝ «խանգարել ջոշը, միայն
ոչ բացարձակ դիմադրութեամբ, այլ այնպիսի գործ-
ղութիւններով, որոնցից չտուժեն Հայ գիւղերը»:

Մրգաստանի որոշումն է՝ «Բողոք արգելել անհնա-
րին է, հայերը ամէն կերպ պէտք է աշխատեն ընդհա-
րումների առիթ չտալ: Քոչի ճանապարհին, վտանգա-
ւոր տեղերում եւ ջոշի կենտրոններում պատրաստել
յեղափոխական բազաներ»:

Անտոն.— Քոչի հարցի վերաբերմամբ Երեւանի եւ
Գանձակի որոշումները միեւնոյնը լինելով, ես միան-
գամայն նպատակաւորմար եմ գտնում, — ինչպէս երե-
ւում է ընդհանուր տրամադրութիւնն էլ այն է, — խոյս
տալ ընդհարումներից եւ ամէն կերպ աջակցել խաղա-
ղութեանը:

Իլիկո(?).— Այս դրութեան մէջ չենք կարող դի-
մանալ, պէտք է հաշտուել ինչ գնով էլ որ լինի: Թուր-
քերի ջոշը արգելելու մասին խօսք չի կարող լինել,
քանի որ դա նրանց համար կեանքի եւ մահուան խն-
դիր է, մանաւանդ ի նկատի պիտի առնել եւ կառա-
վարութեան բռնած դիրքը այդ հարցում: Թուրքերը
բաժանուում են երկու մասի, — բէկեր, խաներ եւ
խաշնարածներ: Պէտք է ստել, որ այդ երկրորդ մասը
միշտ բարեկամարար է վերաբերուել դէպի հայերը, եւ
եթէ նոքա յարձակում են դործել մեր վրայ, այդ էլ
շնորհիւ իրենց բէկերի: Օրինակ՝ Ղազարի դէպքը մի
պարզ ապացոյց է. մինչեւ վերջին ժամանակները նոքա
հաշտ էին հայերի հետ, եւ քանիցս անգամ զուլայցրել
էին հայերին, բայց երբ նրանց մօտ էլ երեւացին այդ
գործող բէկերը, մանաւանդ մէկը, որ Պարսկաստանից
էր եկել, այն ժամանակ միայն, նրանց ազդեցութեան
տակ, նոքա էլ մասնակցեցին: Հետեւապէս, ինչպէս

տեսնում էք, մեր միակ թշնամին եղել են այդ բէկերը,
որոնց դէմ պէտք է կուրել եւ ոչ խաղաղ բնակիչ-
ների: Եթէ մենք ջոշը արգելենք, դորանով մենք մեր
դէմ կանգնեցրած կը լինենք մի ահուկի ոյժ, որի դէմ
ոչ մի հնարաւորութիւն չպիտի ունենանք կուրելու:
Հետեւապէս պիտի թողնենք որ ջոշը անցնի: Իսկ ընդ-
հարման առաջն առնելու համար պիտի այդ խաղաղ եւ
խաշնարած ժողովուրդին առաջնորդող աւազակներին ո-
չընչացնել: Պէտք է ոչնչացնել այն աւազակներին, ո-
րոնց աջակցութիւն է ցոյց տալիս ատմիկաւորա-
ցիան(21) եւ որի կողմից աւազակներին բաժանել են 2
մասի, ձիաւոր եւ հետեւակ, նշանակելով առանձին
հարկեր ամէն մէկի վրայ: Քոչի վերաբերմամբ ես ա-
ռաջարկում եմ կազմել մի յանձնաժողով, հետեւեալ
ծրագիրը մշակելու եւ իրագործելու:—

1. Ստիկանութիւնից հեռացնել թուրք եւ Հայ
պաշտօնեաներին, որոնց հեշտ է կաշառել. թող լինեն
չէրք ազգից, օրինակ ոււս. 2. Կազմել մի յանձնա-
ժողով, բաղկացած 3 հայից եւ 3 թուրքից, որոնք ջոշի
հետ պիտի գնան եւ զուլայցնեն որ ընդհարումներ տե-
ղի չունենան, իսկ եթէ պատահին, այդ դէպքում որո-
շն վնասը: Այդ բոլորը պէտք է կատարել որքան կա-
րելի է շուտ, որովհետեւ ջոշը արդէն Ապրիլին պիտի
սկսուի:

Անտոն.— Ի՞նչ դիրք պէտք է բռնէ Դաշնակցու-
թիւնը այդ դէպքում:

Իլիկո.— Նախ Դաշնակցութիւնը պէտք է որոշէ թէ
ո՞վ է իր թշնամին եւ ապա նրան հալածէ, եւ ոչ թէ
խաղաղ բնակիչներին:

Ապառաժ.— Չպիտի կարծել, որ եթէ մենք առիթ
չտանք, թուրքերը խաղաղ կը մնան, ո՛չ. եւ ի՞բր թէ
ջոշը միասակար չէ: Հարցը նրանումն է, թէ ի՞նչ մի-
ջոցներով պիտի կարողանանք զսպել այդ վտանգաւոր
տարրին: Չանդեզուրի աշխարհագրական դիրքը տարբեր
լինելով քան Գանձակինը, նոքա այնտեղ ուրիշ կերպ
կը վարուեն: Եւ եթէ բարձրանալու ժամանակ նոքա
միաս չտան, զոնէ ի՞նչելու ժամանակ նոքա իրենց յե-
տեւը կը թողնեն ձիաւոր խմբեր, որ մեծ աւերած կա-
րող են անել: Մեր բոլոր ջանքը պիտի լինի այդ խմբե-
րի առաջն առնել, բայց ինչպէ՞ս: Արդեօք ամէն գիւ-
ղում բազանե՞ր ստեղծենք, բայց չէ՞ որ մթերք չու-
նենք: Ցանկալի է որ այս ուղղութեամբ խօսուի թէ
ինչ գործնական միջոցներով (կարելի է) նրանց առաջն
առնել:

Անտոն.— Ապառաժի ընկերոջ հարցերին պատաս-
խանել աւելորդ է, քանի որ մենք եկանք այն որոշման
որ ոչ մի դէպքում ջոշը արգելել չենք կարող, բայց
պէտք է որոշենք այնպիսի միջոցներ, որով այդ ընդ-
հարումները սահմանափակենք, եւ աշխատենք ոչ մի
ընդհարման առիթ չտալ: Այն տակտիկան որ որոշել են
Երեւանի եւ Գանձակի ընկերները, այս դէպքում միան-
գամայն նպատակաւորմար է:

Ջրաբերդի ընկեր.— Միթէ հնարաւորութիւն
կա՞յ, որ եթէ թուրքերը իրենց վերադարձին ընդհա-
րում առաջ բերեն, մենք էլ նրանց հարուածենք:

Հ(ամօ) Օ(համբարանան).— Արեւել. Բիրո.— Եթէ
Ապառաժի ընկերոջ ասածից դուրս է դալիս, որ միայն
ջոշի վերադարձին կարող է վտանգ լինել, այդ դէպ-
քում պիտի աշխատել ջոշը խանգարել, մի բան որ ան-
հնարին է. իսկ վերադարձի վերաբերմամբ մենք կարող
ենք պատրաստուել, մանաւանդ որ մինչեւ 5 ամիս մենք
բաւական ժամանակ ունենք, եւ եթէ կառավարութիւ-
նը իր տակտիկան փոխէ, մենք կ'աշխատենք այն գիւ-
ղերում, որտեղով պիտի վերադառնան, զորքեր դնել
եւ այդպիսով կ'ապահովենք այդ գիւղերի դրութիւնը:

Իլիկո(?).— Թուրքերը ջոշում են երեք տեղեակ:
Նոքա, որոնք ջոշում են սարը՝ անցնում մօտ 200
վերստ, դրանց մի մասը վերադառնում է ամառուայ
սկզբին հուլիս անելու. յետոյ նորից վերադառնում են,
իսկ հովիւները ամենից վերջն են վերադառնում ոչ-
խարների հետ: Թուրքերը, ճիշդ է, զինուած են լի-
նում, բայց ոչ այնպէս, ինչպէս այստեղ են մտածում:
Գալով բէկերի ազդեցութեանը, ես կ'ասեմ որ նոքա
միանգամայն կորցրել են իրենց ազդեցութիւնը, բայց
միայն ժողովուրդը վախենում է, մանաւանդ որ բէկերը
կատարելով զանազան չինովիկներ, պրիստաների
պաշտօն, դորանով էլ նոքա վախեցնում են: Գալով
ջոշի ժամանակ ընդհարումների առաջն առնելուն, ա-
ռաջարկում եմ մի թուղիկ խումբ կազմել, որ հալա-
ծէ այն աւազակներին, որոնք դալիս են ջոշուորների
յետեւից, քանի որ դոքա մեծ ամբոխ չեն:

Արշակ.— Արդեօք կարելի՞ է Չանդեզուրի գաւա-
ռում ջոշը արգելել:

Ապառաժի ընկ(եր).— Մենք ոչ մի հնարաւորու-
թիւն չունենք ջոշը արգելելու, բայց ոչ մի դէպքում
չպիտի լաւատես լինել. ուստի անհրաժեշտ է միշտ
պատրաստ լինել, քանի որ թուրքերը լաւ զինուած լի-
նելով եւ մեծ խմբերով արշակելով՝ ոչ մի հնարաւո-
րութիւն չպիտի ունենանք առաջն առնելու:

Մրգաստանի ընկ(եր).— Մրգաստանի նահանգում
ջոշը արգելել անկարող ենք, հետեւապէս պիտի թուլ
տալ որ բարձրանան, իսկ մի քանի տեղեր պէտք է բա-
զաներ ունենանք ինքնապաշտպանութեան համար: Ար-
դէն այդ բազաները կազմակերպելու համար Մրգաս-
տանում գործի են ձեռնարկած, եւ պիտի ուժեղացնել
այդ կէտերը որ պաշտպանեն Հայ գիւղերը:

Անտոն.— Հարցը ջոշի մասին, պիտի սպասուած
համարել: Չանդեզուրի գաւառում կարող է պատահել
որ մի քանի խմբեր կազմուին: Ի՞նչ պիտի անենք, ի
հարկէ պիտի պատրաստուենք եւ գալիք շարիքի առաջն
առնենք, այնպէս ինչպէս արել են Մրգաստանի ընկեր-
ները: Ուրիշ ոչ մի ելք չենք կարող գտնել քան միայն
լաւ ուժով պատրաստուել: Առաջարկում եմ Մրգաս-
տանի, Գանձակի եւ Ապառաժի ընկերներին՝ որ նոքա

առանձին ձեւակերպեն այդ որոշումները քոչի վերաբերմամբ. մանաւանդ առանձին ուշադրութիւն դարձրեն Չանդեզուրի դաւառին: Անցնենք հետեւեալ հերթական հարցին, այն է՝ ոճրագործների պատժի մասին:

Մրգաստանի ընկ(եր).— Ոճրագործ ստեղծվ հասկանում ենք թուրք ոճրագործներին եւ պաշտօնեայ ոճրագործներին: Առաջինների վերաբերմամբ չարժէ առանձին ուշադրութիւն դարձնել եւ պիտի աշխատենք մոռացութեան տալ, եթէ միայն խաղաղութիւն լինի: Իսկ եթէ ընդհարումները նորից սկսուեն, այդ դէպքում այդ ոճրագործներին պիտի ահաբեկել եւ տեղորի ենթարկել: Գալով չինոֆիլիկներին, մենք եկանք այն եզրակացութեան՝ որ եթէ նորից ընդհարումներ սկսուեն, այն ժամանակ այդ ոճրագործ չինոֆիլիկներին (պէտք է) տեղորի ենթարկել:

Ջրաբերդի ընկ(եր).— Նոյնանման մի որոշում եղել է եւ Կարսում, միայն թէ՛ եթէ այն տիրահոջակ աւազակներն այսուհետեւ էլ կը շարունակեն իրենց գործունէութիւնը, այդպիսիներին հենց այժմեանից ոչնչացնել:

Ստեփան(22).— Գանձակում էլ կան այնպիսի յայտնի ոճրագործներ, որոնց պատժելը շատ ցանկալի է, բայց կարծում եմ, որ դրանով կարող ենք տեղիք տալ նոր ընդհարումների: Բայց կարելի է՝ երբ նոքա իրենց ռայոնից դուրս են. այդպիսի հետու տեղում ըստ պանելը չի գրգռի մասսային: Իսկ եթէ ընդհարումներ պատահեն, այն ժամանակ այդ գլխաւոր ոճրագործներին հենց տեղն ու տեղը սպաննել: Իսկ կառավարութեան ոճրագործներին որոշել ենք յարմար առիթ զբտնել եւ պատժել. իսկ որպէսզի այսպիսի պայմաններում, որպիսին է զինուորական դրութիւնը, առիթ չըտանք նոր ընդհարումների, նրանց վերաբերմամբ էլ տեղորը կատարել իրենց պաշտօնէութեան տեղերից դուրս:

Նալբանդ.— Անպատճառ պատժել, ոչ միայն անցեալ չինոֆիլիկներին, այլ եւ ներկայ, եւ իրագործման մոմենտը ու տեղը թողնել տեղական Մարմինների որոշման:

Իլիկո.— Պէտք է ոճրագործներին բաժանել երկու մասի, որոնց որ կարելի է տանել (հանդուրժել), եւ որոնց որ իսկոյն պէտք է պատժել:

Ընկ(եր) Արքառամ(23).— Միանալով Մրգաստանի եւ Գանձակի որոշումների հետ, ես կարծում եմ որ այն պաշտօնեաները, որոնք այժմ պաշտօն չունեն, նրանց չպատժել:

Ապառաժի ընկ(եր).— Դրանով մենք այն համոզմունքը կը մտցնենք նրանց մէջ, որ նրանք կարող են ամէն տեսակ ոճիրներ գործել եւ ապա պաշտօնաթող լինելով հանգիստ ապրել. ուստի որպէսզի նրանց մէջ այդ համոզմունքը չմտնի, պէտք է նրանց եւս պատժել:

Թմբուկի ներ(կայացուցիչ).— Պէտք է անպատճառ պատժել այդ պաշտօնեաներին, լինեն նոքա գործի մէջ թէ ո՛չ, միեւնոյնն է:

Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).— Սկզբունքով, ցանկալի է, որ ոճրագործը պատժուի, հետեւապէս ոչ մի խտրութիւն չպէտք է դնել թէ՛ անցեալի եւ թէ՛ ներկայի: Եթէ նա վտանգ է սպառնում եւ նրան սպաննելը առիթ չի տայ նոր ընդհարումների, անպայման սպաննել: Միայն ուշադրութիւն դարձնել թուրքերից սպաննել այնպիսիներին, որոնք թէ թուրքերին են ճնշում թէ հայերին. դորանով մենք մեր յեղափոխական բարձրութեան վրայ կը լինենք կանգնած, ցոյց տալով որ մենք չովիխիստներ (24) չենք եւ որ ճնշումների շահը բարձր է մեզ համար բոլորի շահից: Պէտք է բացառապէս այսպիսի ոճրագործների սպաննել, իսկ կառավարութեան պաշտօնեաների վերաբերմամբ՝ որքան հնարաւոր է եւ որպիսի պայմաններում ուզում է լինի, լինի զինուորական դրութիւն թէ ո՛չ, այլ միմիայն պէտք է ի նկատի առնել տեղը եւ մոմենտը:

Ս. — Պա. — Յ(?) .— Մեծ-Քաղաքի ընկերոջ տեսակէտը շատ վտանգաւոր է. ցանկալի է պատժել հայ-թուրքական ընդհարումները կազմակերպող եւ ղեկավարող անհատներին; լինեն դոքա թուրք թէ ուս պաշտօնեաներ, ի նկատի ունենալով տեղը եւ մոմենտը:

Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).— Եթէ մենք չինոֆիլիկներին տեղորի ենթարկենք, արդեօք մենք դորանով կառավարութեան դէմ կոխ չենք յայտարարում: Արդեօք այնքան ոյժ ունենք որ մի այդպիսի քայլ անենք: Իսկ գալով թուրք ոճրագործների սպանման, արդեօք մենք դորանով նոր առիթ չենք տայ ընդհարման: Հետեւապէս ոչ մի պայմանում նոցա տեղորի չենթարկել:

Մարտ(2).— Ոճրագործների շարքում են դասուում Աղայեւ եւ ընկ., որոնք կազմակերպող եւ ղեկավարող էին հայ-թուրքական ընդհարումների, հետեւապէս նրանց էլ պիտի սպաննել, ինչ հետեւանք ուզում է ունենայ:

Անտոն.— Աղայեւ եւ այլք թուրքերի համար համարեա նոյն դերն են կատարում, ինչ որ մի ժամանակ Գր. Արծրունին մեր մէջ. նոքա ոչ մի ոճիր չեն կատարում քարոզելով իրենց սկզբունքները: Հայ-թուրքական ընդհարումների հարցում, պէտք է տարբերել թուրքերի կազմակերպելն ու կոխը կատարող քստմունքի ոճիրներից խօսքի(?) հողի վրայ: Երբ նրանք կրուում են իրենց դէմ ունենալով կոուուղներ, դա զազրելի չէ, բայց երբ նոքա ի շարն են գործ դնում եւ յարձակում, կոտորում անգէներին, կատարում վայրագութիւններ, դա ոճիր է: Մեր ընկերների ասածների մէջ, նկատելի է մի բան, — որտեղ ընդհարումներ չեն եղած, օրինակ Նալբանդում, այնտեղ աւելի տրամադիր են տեղորի, քան թէ այնտեղ՝ որտեղ կոխ է եղած: Ընկերների տրամադրութիւնն այն է, որ պիտի կարելոյն

չափ սահմանափակել տեղորը. բոլորովին մերժել պատիժ թուրքերի վերաբերմամբ՝ անկարող ենք, քանի որ նրանց մէջ կան եզակի ոճրագործներ, որոնց անպատիժ մնալը կը լինի ամենամեծ խրախուսանք եւ անարդարութիւն: Պիտի կարելոյն չափ սահմանափակել, ի նկատի առնելով խաղաղութեան շահը: Իսկ պաշտօնեաների վերաբերմամբ տեղորը կատարել, ի նկատի ունենալով տեղը եւ մոմենտը: Երկու դէպքերում էլ ընտրելու է այն տեսակ անձնաւորութիւններ, որոնցից դժգոհ են մասամբ եւ թուրքերը, ինչպէս եւ հասարակութեան լաւագոյն խաւերը:

Մրգաստանի ընկ(եր).— Առաջարկում եմ նոր բանաձեւ, քանի որ խաղաղութիւն է առ այժմ, թուրք ոճրագործների վերաբերմամբ տեղոր չկատարել. իսկ ինչ վերաբերում է չինոֆիլիկներին, լինեն ուս, թուրք կամ հայ, տեղորը անպայման կատարել: Եթէ ընդհարումները նորից սկսուեն, թուրք ոճրագործների վերաբերմամբ տեղորը անպայման կատարել:

Ընկ. Անտոնի եւ ընկ. Մրգաստանի ներկ(այացուցիչ) բանաձեւերը տեղորի վերաբերմամբ դրուեցին քուէարկութեան եւ անցաւ վերջինիս բանաձեւը 6 ձայնով, այն յաւելուածով, որ տեղորին աշխատեն ենթակայ դարձնել գլխաւորապէս այն տեսակ անձնաւորութիւնների, որոնց դէմ դժգոհութիւն կայ եւ թուրքերի մէջ, կամ դոնէ աշխատաւոր հասարակութեան խաւերում:

Ընդունուած բանաձեւը տեղորի մասին.—

«Ի նկատի առնելով որ ներկայումս խաղաղ է դրութիւնը(25), Հայ Յեղ(ափոխական) Դաշնակցութեան Ռայոնական Ժողովը որոշեց՝ առ այժմ թուրք ոճրագործների նկատմամբ տեղոր չկատարել. իսկ ինչ վերաբերում է պաշտօնեաներին, լինեն ուս, թուրք կամ հայ, անպայման տեղորի ենթարկել: Բայց եթէ ընդհարումները նորից սկսուեն, թուրք ոճրագործներին եւս անպատճառ ենթարկել տեղորի, ընտրելով գլխաւորապէս այնպիսի անձնաւորութիւններ, որոնց դէմ դժգոհութիւններ կան նաեւ թուրք ժողովրդի աշխատաւոր խաւերում»:

IVԻ ՆԻՍ, 30/III ԱՌԱՌՕՏԵԱՆ

1906 թ. Մարտի 30ին բացուեց Հ. Յ. Դ. Ռայոնական Ժողովի IV նիստը, ժամը 10-30ին առաւօտեան: Կարդացուեց II Ժողովի արձանագրութիւնը:

Նախագահում էր Հ(ամոն):

Անտոն.— Կարդում է իւր կազմած բանաձեւը հայ-թուրքական ընդհարումների վերաբերեալ, որը ընդունուում է միաձայն(ութեամբ): «Համոզուած լինելով որ հայ-թուրքական ընդհարումների ամենաշոշափելի եւ ամենամօտ պատճառները եղած են միապետական վարչութեան պրովոկացիան ու աններելի անգործութիւնը, կոպտուրապէս ցած թուրք տարրի վայրենի

հակումներն ու թալանի տենչը, ֆէտտալ - ձրիակեր բեկերի ցանկութիւնը՝ պահպանելու իրենց նսեմացող վարկը.

Գիտակցելով՝ ա. որ յիշեալ ընդհարումները վայրենացնում ու տնտեսապէս քայքայում են երկու կողմերն էլ, բ. որ ընդհարումները հանդիսանում են ամենամեծ խոչընդոտ, երկու կողմերի համար էլ հասունացած հասարակական եւ տնտեսական հարցերի լուծման ինչպէս եւ երկու կողմերի գիտակից տարրերի մասնակցութեան ընդհանուր ռուսական ապատագրական շարժման, գ. որ հարեւան ազգերի կուլտուրան կամ վարդացումը կովկասում կարող է դրական հետեւանքներ ունենալ միմիայն դրացի ազգերի համերաշխ գործակցութեամբ, ու կատարեալ հասարակութեան իրաւունքների պայմանով, ապահովուած ռամկավար - դաշնակցական սկզբունքը ու փոքրամասնութեան իրաւունքները ապահովող կարգերով, — Ռայոնական Ժողովը որոշում է՝ բոլոր հնարաւոր միջոցներով աշակցել խաղաղութեան հաստատուելուն եւ ոչ մի դէպքում առիթ չտալ ընդհարումների: Դիմադրելով թուրքերի բոլոր յարձակումներին, անհատական սպանութիւնների դէպքում թուրքերի կողմից՝ չպատասխանել եւ սպասել կառավարութեան ու թուրք բանիմաց դասի բռնած դիրքին: Փոխադարձաբար անցնել նախկին տակտիկային (յարձակողական-պաշտպանողական) այն դէպքում միայն, երբ կառավարութիւնը կամ թուրքերի բանիմաց մասը չպատժեն յանցաւորներին: Սրա հետ միասին շարունակել ինքնապաշտպանութեան համար ձեռք առնուած անհրաժեշտ պատրաստութիւնները, դարձնելով առանձին ուշադրութիւն Ապառաժի Հրջանի վրայ: Կազմակերպել թուրքիկ խմբեր Դալի Ալիի նման աւազակային խմբերի գործունէութեան առաջն առնելու համար»:

Հ(ամո) Օ(համբաւան).— Առաջարկում եմ անցնել հերթական հարցերի քննութեան, այն է՝ վնասների փոխադարձ հատուցման խնդրին:

Գանձակի ներ(կայացուցիչ).— Գանձակը ահազին վնասներ կրեց այդ ընդհարումների ժամանակ թուրքերից, բայց հայերն էլ փոխադարձաբար վնաս հասցրին թուրքերին: Հայերի կրած վնասը Գանձակում կը լինի մօտ 2,50 միլ(իոն), իսկ թուրքերի վնասը կը լինի մօտ 1 միլ(իոն), այնպէս որ Գանձակ քաղաքի մէջ հայերը նիւթապէս աւելի են վնասուած, նոյնպէս եւ դաւառում, քան թուրքերը. օրինակ, 400 տուն ունեցող հարուստ Բաղա պիւղի վնասը հաշուուած է մօտ 2 միլ.: Գետաբէզում նոյնպէս հայերը մեծ վնաս են կրել, բայց ընդհանուր կարծիքը այն է, որ վնասների հատուցումը չպահանջեն, քանի որ կառավարութիւնը կը միջամտի եւ հայերից էլ կ'առնի թուրքերի կրած վնասը, որովհետեւ թուրքերը կառավարութեանը աւելի են ցոյց տալիս իրենց կրած վնասը քաղաքում, քան թէ կայ իսկապէս: Եւ եթէ վնասները պահանջեն, այդ դէպքում տուժելու է աւելի արհեստաւոր դասը:

իսկ փողերը ստանալուց կ'օգտուեն հարուստները: Կասկածելի է (հարց է ?), որ եթէ հարուստները այդ փողերը ստանան, արդեօք կազմակերպութիւնը չի՞ կարող (կարող է) միջամտել եւ հաւասար կերպով հատուցանել(7) . այդ դէպքում ոչ մի հնարաւորութիւն չկայ, քանի որ նոքա հեշտութեամբ կը ծածկեն: Եւ քանի որ մասսան աւելի կը տուժէ, ուստի ընդհանուր կարծիքը այն է, որ վնասների հատուցումն չպահանջուի. իսկ ինչ վերաբերում է զաւառին, այնտեղ պիտի պահանջուի քանի որ հայերը ոչ մի վնաս չեն տուել, իսկ թուրքերը տուել են ահագին վնասներ:

Ոսկանապատի ներկայացուցիչը.— Սեւ քաղաքը ընդունել է վնասների հատուցումը, իսկ Կենտրոնական Կոմիտէն կարծում է, որ դա յեղափոխական գործ չէ, ուստի որոշումը թողել է ժողովին: Առարկում եմ Գանձակի ներկայացուցչին, նոքա աւելի գործնական աչքով են նայում խնդրին, քան թէ սկզբունքով: Հատուցման խնդիրը լինելով ոչ-յեղափոխական գործ, ոչ մի դէպքում չպիտի պահանջենք եւ մինչեւ անգամ մեզ անվայել է, մե՛զ, դրանով պարագայի:

Ջրաբերդի ներկայացուցիչը.— Միանալով Ոսկանապատի կարծիքի հետ, ըստ իս վնասների հատուցման խնդիրը մի քանի տեսակ կարելի է քննել.— 1. Եթէ վնասները պահանջենք, որպիսի՞ հետեւանք կ'ունենանք. պէտք է մատնանիչ անել եւ կառավարութեան վերաբերմունքը: Արդեօք ի՞նչ չափ կարելի է իրականացնել: Անցեալի վերաբերմամբ, եթէ հնարաւոր է՝ այդ հատուցումը պահանջել կառավարութիւնից եւ ո՛չ թէ փոխադարձաբար հատուցանել: Թող կառավարութիւնը նպաստէ: Իսկ ինչ վերաբերում է փոխադարձ հատուցման, այդ դէպքում մենք մի դրդիչ կը տանք ժողովրդի կազմակերպուելուն: Ձեռք կարող յայտ դնել կոմիտիաների(26) վրայ, քանի որ նրանք անընդունակ լինելով թողնում են հատուցման իրականացումը ուստիկանութեան, եւ հետեւանքը այն է լինում, որ ուստիկանութիւնը սուտ զեկուցում է տալիս եւ պահանջում է այնպիսի հատուցում վնասի, որ իրապէս չի եղել: Հետեւապէս այդ միջոցով առաջ կը դան հազար եւ մի տեսակ կեղծիքներ, եւ առիթ կը տանք որ այդ ժողովուրդը նորից բարոյապէս ընկնի փոխանակ (նրան) բարձրացնելու: Իսկ ինչ վերաբերում է թուրքերին, մենք մի լաւ դրդիչ Փակտոր(27) կը տանք նրանց որ կազմակերպուեն: Իսկ անտեսութիւնը վերականգնելու համար, մենք ամէն միջոցով պիտի (պահանջենք?) կառավարութիւնից, որ նա օժանդակ գումարներ տայ, իսկ եթէ կառավարութիւնը չտայ, այդ դէպքում հասարակական ուժերով կարելի է վերականգնել ժողովրդի անտեսութիւնը:

Նալբանդ.— Քանի որ վնասների հատուցման օժանդակ միջոց օգտուողը հարուստը կը լինի, իսկ արհեստաւորը պիտի տուժէ, եւ միանգամայն հակառակ եմ վնասների հատուցման:

Մրգաստան.— Առարկելով Այգեստանի ընկերին, եւ միանգամայն անհրաժեշտ եմ գտնում վնասների հատուցումը եւ նա կ'իրականանայ այնպէս, ինչպէս եղել է Նախիջեւանում: Նախիջեւանում կազմուել է մի խառն կոմիտիա, որը որոշել է երկու կողմերի վնասները, եւ պէտք է ասել որ հասարակութիւնը գո՛հ է կոմիտիայի գործունէութիւնից: Հայերի վնասները հաշուած է մօտ 2-3 միլ(իոն), իսկ թուրքերինը՝ 200 հազար: Եւ այս դէպքում կառավարութիւնը ինքն է օժանդակում, տալով 50 հազար ուրբի «Փրատոք վող-քափիթալը»(28) եւ խոստացել է տալ կրկին 100 հազար ուրբ. եւ եթէ այդպէս լինի այդ շրջանը կարող է վերականգնել իր քայքայուած անտեսութիւնը: Ժողովրդի անտեսութեան վերականգնման տեսակէտից մեր կարծիքն այն է, որ անհրաժեշտ է վնասների հատուցումն. մանաւանդ որ հայերը ամէն տեղ նիւթապէս աւելի են տուժել քան թուրքերը: Գալով թէ վրնասների հատուցման օժանդակ կարող են օգտուել միայն հարուստները եւ չքաւորը կը տուժի, դա սխալ ենթադրութիւն է եւ իրականութեան մէջ այդպիսի բան չկայ: Ասել թէ դա յեղափոխական գործ չէ, նոյնպէս սխալ է. մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք աշխատաւոր դասի սեփականութեան անձեռնմխելութեանը: Հենց այս դէպքում կազմակերպութիւնը պիտի միջամտէ եւ մեր կարծիքով պիտի այդ վնասները առնել, միայն թէ չզիտենք ի՞նչ միջոցներով կարելի է առնել:

Ժլաւ.— Ես կարծում եմ, որ պիտի ուշադրութիւն դարձնենք այն հարցերի վրայ, որոնք զուտ յեղափոխական գոյն ունեն. հենց վնասների հատուցման խնդրումն էլ այդ տեսակէտով պիտի առաջնորդուենք: Ասում ենք թէ ո՞վ է շատ տուժել, հա՞յը թէ թուրքը, հիմնուելով ազգային հողի վրայ: Բայց պէտք է որոշել, արդեօք հայ եւ թուրք բանուորութիւնն է շատ տուժել, թէ՞ բուրժուազիան եւ ըստ այնմ էլ դատել: Ընդհանրապէս թուրք գիւղացիութիւնը աւելի է վնասուել, քան թէ հայ գիւղացիութիւնը: Մինչդեռ քաղաքում բուրժուազիան է տուժողը: Հետեւապէս գիւղացիութիւնը աւելի է տուժել, քան հարուստները եւ եթէ վնասները առնենք, մենք պիտի առնենք գիւղացիութիւնից, ուրեմն նորից նա պիտի տուժէ եւ առիթ կը տանք նոր ընդհարումների: Իմ կարծիքով մեր գործը չէ՛ դրանով զբաղուելը, մանաւանդ որ իրականութեան մէջ անիրազործելի է:

Անտոն(6).— Մենք չենք կարող կանգ առնել թէ արդեօք այդ վնասների հատուցումը յեղափոխութեան գործն է թէ ոչ. սա ուղղակի մի թալան է եղել: Գասակարդային տեսակէտից էլ չենք կարող նայել այդ խնդրին, ամբողջ երկիրը տուժել է, ամբողջ ազգաբնակչութիւնը տուժել է, լինի հարուստ թէ աղքատ, ամբողջի հարստութիւնն է կորել, հետեւապէս բոլորն էլ տուժել են: Եթէ մենք մինչեւ այժմ 1% մասն էինք

տալիս այս աղքատութեան օրով, մենք 20% կը տանք: Եթէ մենք հաշուելու լինենք երկու կողմերի վնասները, կը տեսնենք որ հայերը ընդհանրապէս ունեցել են 15-20 միլ(իոն) վնաս, մինչդեռ թուրքերը 7-8 միլ(իոն). իսկ եթէ Բագուն չհաշուենք, այն օժանդակ կը տեսնենք որ հայերը ունեցել են 14-15 միլ(իոն) վնաս, իսկ թուրքերը 7-8 միլ(իոն): Ինչպէս տեսնում էք հայերինը ճիշդ կրկնապատիկ է եղել. գիւղերումն էլ նոյնն է եղել, հայերի վնասը աւելի է քան թուրքերինը. օր(ինակ)՝ վերցնենք Ղազարի Գաւառը, ուր հայերը ունեցել են մօտ 350 հազ(ար) ուրբ. (վնաս?): Մեր ընկերները պարծենում են թէ բազմաթիւ թուրք գիւղեր են փճացրել, բայց եթէ հաշուելու լինենք ընտանիքների թուով, կը տեսնենք որ մենք նորից աւելի ենք տուժել: Նկատելի է մի բան, որ հարուստները ամէն տեղ ամենաթուղ կերպով հակառակ են եղել վրնասների հատուցման, ինչո՞ւ, որովհետեւ այստեղ տուժում են միայն աղքատները: Բէկերն էլ են հակառակ հատուցման, որովհետեւ հատուցումից նրանք էլ պիտի տուժեն: Գալով բաժանումներին, թէ աղքատները այս դէպքում էլ կը տուժեն, սխալ է. նոյնիսկ արդարութեան տեսակէտից այն է լաւ՝ որ մի քանիսը տուժեն, քան թէ մենք ձեռքներս լուանանք եւ հեռանանք: Եթէ թոյլ տանք, որ թալանը մարտուի, այն օժանդակ ժողովուրդը աւելի կ'անբարոյականանայ, քան եթէ հատուցումն պահանջենք: Ընդհանուր խաղաղացման տեսակէտից էլ անպայման ամենամեծ միջոցն է վնասների հատուցումն, որով թալանի ախորժակն էլ կապած կը լինենք: Ազգային տեսակէտից էլ, որովհետեւ մենք ենք աւելի տուժողը, հետեւապէս մենք պէտք է աւելի պահանջենք: Գալով դասակարգերի երկպառակմանը, կ'ասեմ, որ երբ Բորչալուի գաւառում վնասները պահանջեցին, այն(տեղի) թուրք գիւղացիութիւնը մի սոսկալի բողոք բարձրացրեց բէկերի դէմ, եւ եթէ վնասների պահանջը կատարուի եւ ուրիշ տեղերում, այդպիսով մենք երկպառակութիւն կը ձգենք նրանց մէջ: Եւ այս միջոցով մենք կը նպաստենք թուրքերի գիտակցութեանը, որով աշխատաւորը կը բաժանուի աւազակներից եւ կը միանայ մեզ հետ: Եթէ այժմս չպահանջենք վնասների հատուցումն, այն օժանդակ, ապագայում էլ քոչի առեն չենք կարող պահանջել վնասները բէկերից: Իսկ հատուցման պահանջը կը լինի մի միջոց, որով խրատած կը լինենք այդ աւազակներին: Գալով իրականացման՝ կան յանձնաժողովներ, ուր պիտի վերահասու լինենք եւ նոյնիսկ ընտրուենք եւ մենք կարող ենք այսպիսով ճշտումն գործ դնել: Վերջապէս մենք կարող ենք դիտարկել եւ ըստ այնմ էլ պահանջել, կամ տեղական յանձնաժողովները մի ընդհանուր դժբերով կարող են որոշել վնասները: Գալով բաժանման իրականացման, կ'ասեմ՝ նախ տէրութիւնը իբրեւ պրովոկատոր(29) պիտի մի մասը ինք վճարէ, մի մասը թալանչիներից պէտք է

առնել, իսկ միւս կէտն էլ կարելի է ապագայ տուրքերի վրայ բաժանել, կամ վնասների միւս մասը կարելի է դրել այն ազգաբնակչութեանց վրայ, որք չեն մասնակցել. չէ՞ որ դա մի ազգային շարիք է: Օր(ինակ)՝ հայերի կողմից Ալեքսանդրապոլը, իսկ թուրքերի կողմից Լէնքորանը եւ այլն: Վերջապէս տէրութիւնից պահանջել որ մի 10 տարով որոշ հարկը (հարկեր?) վերացնէ: Միջոցները կան եւ պէտք է միայն շուտափոյթ անել, վայնասուններ բարձրացնելով պահանջել որ ժողովուրդը սոված է եւ պահանջում է հատուցումն: Տէրութիւնը կ'աշխատի որ չիրականանայ, մինչ մենք ընդհակառակը պիտի աշխատենք որ իրականանայ, մանաւանդ որ կառավարութեան նպատակն է մեզ տրտեսապէս քայքայել:

Քար.— Վնասների հատուցման խնդրում մենք ոչ մի որոշում չենք կայացրել:

Նաւահանգիստ.— Արդեօք ինչո՞ւ Ոսկանապատը սկզբունքով ընդունել է Տաճկաստանի եւ Կովկասի դատը, եւ չէ ուզում սկզբունքով ընդունել մի այնպիսի հարց, որպիսին է վնասների հատուցումը, պատճառարանելով թէ՛ դա անիրադրածելի է: Սկզբունքով, իմ կարծիքով, պիտի անպատճառ պահանջել, որպէսզի կարողանանք զսպիլ բէկերին եւ ես միանգամայն միանում եմ ընկ. Անտոնին:

Ջրաբերդ.— Ամէն մի յեղափոխութիւն ունի իր սխտեմը, եւ եթէ մենք որոշել ենք որ բոլոր հասարակական գործերի մէջ պիտի միջամտենք, դա ուրիշ հարց է: Ինձ թուում է թէ՛ երկրի հարստութիւնը չի աւելանայ, եթէ հայը թուրքին տայ եւ ընդհակառակը: Հատուցման դէպքում գիտենք թէ ինչեր են լինում. օրինակ, եթէ տուրքերի ձեւով էլ պահանջեն, այս դէպքում էլ տուժողը նորից կը լինի աշխատաւորը եւ ոչ թէ հարուստը: Գալով այն բանին, թէ օր(ինակ) Լեւեցիին արդար կերպով է բաժանում, ես ոչ մի դէպքում չեմ հաւատում կառավարութեան արդարադատութեանը: Այդպիսի օրինակներ շատ ունենք, օր(ինակ)՝ Ղարսում է պատահել: Հետեւապէս եթէ վրնասները պահանջենք, մենք նորից աշխատաւորներից պիտի պահանջենք, որովհետեւ թալանողից ոչինչ չենք կարող ստանալ: Այն հարցին՝ թէ վնասների հատուցումն պահանջելով մենք երկպառակութիւն կը ձգենք թուրքերի մէջ, ես միանգամայն համաձայն չեմ: Եւ քանի որ մենք ոչ չունինք հասարակական բոլոր գործերով զբաղուելու, հետեւապէս չենք կարող այդ վրնասների խնդիրն էլ ընդունել իբրեւ մի յեղափոխական գործ:

Ոսկանապատը պատասխանելով Նաւահանգիստին, առարկում է՝ քանի որ վնասների հատուցման գործը իրականացնելու համար մենք պիտի կառավարութեան (կառավարութիւնից ?) խնդրենք, իսկ մի յեղափոխական կուսակցութիւն պետիցիա(30) կամ խնդիր չի ներկայացնում, այլ պահանջում է. հետեւապէս մենք

միանգամայն սկզբունքով պիտի հակառակ լինենք:

Անտոն.— Վնասների հատուցման մասին խօսելիս, միանգամայն մոռանում են կառավարութեան դիրքը: Երբ նրա շահերին նպաստաւոր է, նա կ'ընդունէ. իսկ հակառակ դէպքում, նա միանգամայն կ'ընդդիմանայ: Այն հարցը (տեսակէտը), թէ վնասների հատուցման պահանջով մենք երկպառակութիւն կը ձգենք եւ տեղիք կը տանք նոր ընդհարման, սխալ է, քանի որ կառավարութիւնը ձեռքերը ծալած չի նստել, այլ իր բոլոր ոյժը կը թափէ գիւղացիութեան վրայ ու հայերից կ'առնէ կը տայ թուրքերին:

Մեծ-Քաղաք.— Ցանկալի չէ որ վնասները ստացուեն, որովհետեւ գիւղացիութիւնը ոչ մի դէպքում հրնարաւորութիւն չունի վճարելու. աւելի լաւ է պահանջներ դնել կառավարութեանը:

Հ(աւօ) Օ(տանգանեան).— Ոնդիրը բաժանուում է երկու մասի. առաջին մասը կարծում է, որ կարող ենք վնասները պահանջել եւ ապագայում կողոպուտի տենչից ազատուած կը լինենք եւ պարզած թուրք գիւղացիութեան գիտակցութիւնը: Երկրորդ մասը պնդում է, որ չպիտի պահանջենք, որպէսզի առիթ չտանք նոր ընդհարման եւ անբաւականութիւնների: Կայ եւ մի երրորդ կարծիք, որ վնասների հատուցման պահանջը յեղափոխական գործ չէ:

Անտոն.— Բոլոր յեղափոխական կուսակցութիւնները իրենց իտէալ են համարում ստեղծել կուսակցական տիկտատուրա: Մենք էլ մեր դրոշմը, կուսակցական տեսակէտը կը դնենք այդ գործերի մէջ. ես չեմ ասում թէ ուղղակի կերպով, օր. դպրոցական գործով գրադուենք, այլ պէտք է անկողմնակի (?) կերպով գրադուենք: Նոյնիսկ Եւրոպայում, երբ խնդիր է լինում հասարակական խոշոր հարցերի մասին, ամբողջ Եւր(ոպայի) Ս. Գ. կուսակցութիւնը(31) իր պաշտպանութիւնն է ցոյց տալիս. օր(ինակ)՝ ինչպէս Դրէյ-Փուսի գործ(ի մէջ), յանուն արդարութեան, չնայած որ յեղափոխական գործ չէր: Մեր երկրի յառաջիկայ մասին տեսակէտից, մենք դաւանանած կը լինենք, եթէ չմասնակցենք այս գործին: Պէտք է մասնակցել, որովհետեւ գոյութեան խնդիր է. այս ընդհարումներին վերջ դնելը մեր գոյութեան կոխն է: Հետեւապէս պիտի մասնակցենք ուղղութիւն տալով ու ճնշումն գործ դնելով եւ ո'չ մի դէպքում դաւանանած չենք լինի մեր սկզբունքին: Իսկ ինչ վերաբերում է թալանչիներին, չենք կարող գտնել գուցէ մի կամ երկու դէպքում, բայց ընդհանրապէս գիտենք թէ որո'նք են թալանչիները, որ գիւղերն են մասնակցել թալանին: ձիւղ է, սուտով կը լինի, բայց դա չի նշանակում թէ մենք դաւանանած կը լինենք մեր սկզբունքին: Բոլոր հասարակական երեւոյթները պատճառ են լինում խոշոր հասարակական ընդհարումների, նոյնը եւ թալանների համար, — այս ընդհարումները շատ մեծ նեցուկ են նրանց համար եւ մի մեծ արթնացում է,

մասնաւոր որ եթէ վնասների հատուցումը պահանջենք մենք դորանով իւր անած կը լինենք կրակի վրայ եւ կ'ապահովենք մեր ապագան(?): Կան ընդհանուր շահեր, ուր տէրութեան հետ կարող ենք ձեռք ձեռքի տուած լինել: Տէրութեան շահերը համարժեք են(?) երբ միայն միակողմնակի պաշտպանելու համար է: Եւ քանի որ միայն մի որոշ դասակարգ է կորցնում այդ խնդրում, հետեւապէս նա գիջում է անում: Տէրութիւնը ինքն է ուզում բէկական խնդրին վերջ դնել. հենց համարումարի ժամանակ, փոխարքան ինքը շեշտեց, թէ բէկերն էլ անպատճառ պիտի վճարեն վնասները, եւ մինչեւ անգամ տեղ-տեղ նա անկեղծ է, եւ չի կարելի ասել, թէ տէրութիւնը հակառակ կը լինի վրնասների հատուցմանը: Ի հարկէ բաժան-բաժան անելով, ինչպէս վերեւ շեշտեցի, այդ վնասները, որոշ չափով կարելի է իրականացնել: Իսկ ինչ վերաբերում է միջոցներին, ահաւասիկ մենք պիտի այդ յանձնատողութիւնի միջոցով նպաստենք եւ կարելոյն չափ աղ-ժուկ բարձրացնենք, եւ այդպիսով կարող ենք մենք մի որոշ չափով իրականացնել: Պօսելով պրոպագանդայի մասին, մենք արդէն որոշել ենք գործնական հողի վրայ անել. հենց այս դէպքում էլ, վնասների հատուցման խնդրում, մի լաւ փորձ է՝ ուր աշխատաւորները կը միանան առանց խորութեան ընդդէմ թալանիչների: Ոսկանապատ.— Քանի որ նախկին յանձնատողութիւնների մէջ մենք կողմնակի կերպով մասնակցել ենք եւ գտել ենք կատարեալ Ֆրանսիո, պէտք է վերջապէս ընդունել այս կամ այն ուղղութիւնը, եւ զուր չէ որ ուրիշները մեզ յանդիմանում են, ասելով որ՝ մենք յեղափոխական կուսակցութիւն չենք: Իսկ ինչ վերաբերում է ազնուականութեանը, թէ կառավ(արութիւնը) որպիսի՞ դիրք կը բռնէ նրանց վերաբերմամբ, դա դեռ հարց է: Նա այստեղի հարցումն էլ նոյնպէս կ'անի, ինչպէս եւ Ռուսաստանում, յամենայն դէպս կառավ(արութիւնը) ազնուականութեան շահերը միշտ կը պաշտպանէ: Նոյնը եւ այս հատուցման հարցում. նա աւելի շատ գիւղացիութիւնից կը վերցնէ, քան ազնուականութիւնից: Գործնական պրոպագանդայի մասին, իմ կարծիքով, պէտք է մի փոքրիկ շարժում առաջ բերել, թէկուզ հենց էջմիածնապատկան կառուածքներում, ցոյց տալով որ մենք խորութիւն չենք դնում, եւ այդպիսով գիտակցութեան կը բերենք գիւղացիութիւնը: Իսկ եթէ թուրք գիւղացիներից պահանջենք վնասները, մենք նորից կուրին կը տանք ազգային բնաւորութիւն: Այս հարցի մասին իմ կարծիքով, մենք պիտի միայն ոյժ տանք գործնական պրոպագանդային. իսկ ինչ վերաբերում է վնասների հատուցման՝ թողնենք ժողովրդին:

Ջրարեք.— Կառավարութեան վերաբերմունքը դէպի զանազան ազգաբնակչութիւններ տարբեր լինելով, նա նոյն աչքով չի նայի եւ թուրք ազնուականների վրայ, որպէս (ինչպէս) ուսու կամ լեհ ազնուա-

կաններին է նայում: Ուշադրութիւն դարձրէք եւ այն բանին՝ որ չնայած թուրք ազնուականութիւնը ստեղծել է կառավարութիւնը, բայց մինչեւ այժմ ոչ մի արտօնութիւն չի տուել: Նա տեսնում է մի բացարձակ անտազոնիզմ նրանց եւ իր շահերի մէջ. հենց այդպէս էլ դրանք մինչեւ այժմ եղել են կառավարութեան ձեռքին իբրեւ մի գործիք: Կառավ(արութիւնը) աշխատում է որ նոքա չկազմակերպուեն, հետեւապէս նոյն վերաբերմունքը չի կարող ցոյց տալ դէպի թուրք ազնուականները, որպիսին տալիս է ուսու կամ լեհ ազնուականին: Իսկ գալով հատուցման խնդրին, ես միանգամայն հակառակ եմ, որովհետեւ գործնականում չպիտի կարողանանք պահել (պաշտպանել ?) աշխատաւոր դասակարգի շահերը: Քանի որ մենք գիտակից յեղափոխական ուժեր շատ քիչ ունենք, ի՞նչպէս կարող ենք վստահանալ մեր ուժերի վրայ: Հետեւապէս ոչ մի դէպքում չենք կարող մտածել մեր կուսակցութեան տիկտատուրայի մասին:

ՆՈՍ V, 30/III ԵՐԵՎԱՆԻ

Նիստը բացուեց Մարտի 30ին, երեկոյան 7 ժամ 15 րոպէին: Նախագահ ընտրուեց ընկ. Գարեգին Ստեփան, բայց փոխադարձ հատուցման հարցը վերջացած չլինելով, նախընթաց նիստի նախագահ ընկ. Հ(ամօ) Օ(հանջանեան) շարունակեց նախագահել մինչեւ վերոյիշեալ հարցի լուծում ստանալը:

Ընկ. Հ(ամօ) Օ(հանջանեան).— Առաջարկում եմ կարդալ ընկ. Արրահամի(23) բանաձեւը եւ քուէարկել: Ոսկանապատ.— Առաջ որոշենք՝ արդեօք Դաշնակցութիւնը պէ՞տք է մասնակցէ այդ խնդրում, թէ ո'չ, սպա անցնենք բանաձեւին:

Մարտ(14).— Իիցուք մենք վճռեցինք փոխադարձ հատուցման հարցը չընդունել, իսկ եթէ կառավարութիւնը ձեռնարկէ հաւաքելու, մենք կարո՞ղ ենք խանգարել:

Արրահամ(23).— Կարող ենք:

Թմբուկի ընկեր.— Պէտք է մասնակցել եւ միաժամանակ աշխատել կառավարութեան ներկայացուցիչներին ինչպէս էլ լինի մեր կողմը թեքել եւ յօգուտ մեր շահերի ծառայեցնել:

Ալ. - Պ.(32).— Որովհետեւ հատուցման հարցը շատ ու շատ վայրերի հետ(?) կապուած է որոշ կապերով, ուստի թողնել այդ խնդրի լուծումը լիբերալներին, իսկ կազ(մակերպութիւն)ը թող ձեռնպահ մնայ:

Մարտ(?).— Կառավ(արութիւնը) հատուցման հարցին մօտենում է միայն այն նպատակով, որ իր կորցրած վարկը ժողովրդի աչքում բարձրացնէ. ուստի մասնակցել կը նշանակէ խորխորատի մէջ ընկնել:

Գարեգին Ստեփան.— Կառավարութիւնը հատուցման խնդրին մօտենում է այն նպատակով, որ կարո-

ղանայ ոչնչացնել դիմադրող ուժերը, ուստի պէտք է ձեռնպահ մնալ:

Անտոն.— Ձեռնպահ մնալով ոչ մի գործ առաջ չէ գնացել. չի էլ գնայ: Մեզ կոտորեցին՝ լուեցինք, մեզ անպատուեցին՝ լուեցինք, այժմ էլ աղքատացրին՝ դարձեալ լուեց: Եթէ լուեց, ազգային պատիւը խառնառակած կը լինենք. պէտք է ցոյց տալ, որ ամէն մի ազգ իրաւունք ունի պահպանելու իր պատիւը, գոյքը եւ այդ մենք արած կը լինենք՝ պահանջելով վնասների հատուցումը: Եթէ չենք ուզում կառավարութեան միջոցով ստանալ, աչքի առաջ ունենալով որ վերջինը դազանային միջոցների կարող է դիմել, այն ժամանակ կը պահանջենք ինքներս: Պէտք է ասել որ վերջնական խաղաղութեան կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ կը ստացուի վնասների հատուցումը:

Քուէարկութեան ենթարկուեց(ին) ընկ. Անտոնի եւ Արրահամի հետեւեալ բանաձեւերը.—

Ընկ. Անտոնի(6) բանաձեւը.— «Ի նկատի ունենալով, որ վնասների փոխադարձ հատուցումը հանդիսանում է ամենապարզագոյն միջոցը ընդհարումներին վերջ դնելու համար, ինչպէս եւ առաջն առնելու երկու կողմերի անբարոյականացման, Ռայոնական Ժողովը ցանկալի է համարում կուսակցութեան կողմնակի միջամտութիւնը՝ սուտօճ գիւղացի եւ աշխատաւոր դասակարգի կրիտիկական վիճակին նպաստելու համար: Այս հարցի հետ կապուած գործնական միջոցների մշակումն ու առաջ մղելը (Ռայոն. Ժողովը) թողնում է Կենտրոնական Կոմիտէներին»:

Արրահամի բանաձեւը.— «Ի նկատի առնելով որ փոխադարձ հատուցման վնասներ հաւաքող լինելու է ստիկանութիւնը, որի ժամանակ պէտք է տուէ կրկնակի եւ եռակի մեր աշխատաւոր ժողովուրդը, համարել փոխադարձ հատուցումը վնասակար մեր ժողովրդի շահերին եւ աշխատել ըստ կարելոյն որ դա չիրականանայ»:

Ընդունուեց առաջին բանաձեւը 6 ձայնով, ընդդէմ 4ի, իսկ 1 ձայն մնաց ձեռնպահ:

Նախագահ Գարեգին Ստեփան.— Այժմ անցնենք ընդհարումներին վերջ տալու միջոցների խնդրին:

Արեւ(ելեան) Բիւրօ.— Որովհետեւ մեր օրակարգի 3րդ կէտում կայ թուրք գիւղացիութեանը կիսաճորտական դրութիւնից ազատուելու (ազատելու?) միջոցների հարցը, ուստի առաջարկում եմ այդ հարցի քննութիւնը թողնել հետագայ ժողովին:

Անտոն.— Իբրեւ միջոց ընդհարումներ(ին) վերջ տալու, առաջարկում եմ թուրք բանիմաց երիտասարդութեան մարտիկ դարձնել մեր ծրագիրը, եւ գալ համաձայնութեան՝ ապակենտրոնացման սկզբունքի հիման վրայ:

Ոսկանապատ.— Ընկ. Անտոնի առաջարկութիւնը իրականացնելու համար պէտք է մօտենալ թուրք Յեղ(ափոխութեան) Իֆտիֆաքին, որոնք կազմում են

Թուրք ինտելիգենցիան(33) : Պէտք է աշխատել նրանց հետ միասին գործել (Թերթ հրատարակել, միասին պրոպագանդ անել եւ այլն) :

Բախր(?) — Իֆտիֆաբի ներկայացուցիչների հետ գործ ունենալ չի կարելի, որովհետեւ նրանք աւազակներ են :

Վարժապետ — Թուրք ինտելիգենցիան ինտելիգենցիա(33) չէ. նրանց ինտելիգենցիայի պատկերացումը Ազալան է. ուստի պէտք է մտնել յարաբերութեան մէջ ժողովրդի՝ հետ :

Եղիշէ(11) (Մեծ-Քաղաք) — Թուրք յեղ(ափոխական)ներին անուանել յեղափոխականներ՝ շատ դժուար է (ապացոյց՝ Բագուում բաց թողուած հայերէն, Թուրքերէն և ուսուերէն թուղիկը). իսկ երիտասարդութեան մէջ կան այնպիսիները, որոնք բաւականին բարձր են եւ կարելի է նրանց հետ գործ ունենալ : Վերջինների հետ պէտք է սկսել ոչ թէ պաշտօնական կերպով, այլ պրոպագանդայով :

Ոսկանապատ — Թուրք յեղ(ափոխական) կազմակերպութիւնների մէջ կան մարդիկ, որոնք կարող են լինել օգտակար(34), ուստի պէտք է սկսել բանակցութիւններ դոցա հետ, բաց չթողնելով ձեռքից զգուշութիւնները :

Սմբատ — Այդ կուսակցութիւնների այժմեան անդամները առաջուանները չեն, այլ նոր երիտասարդութիւնը, որոնք հաւատ են ներշնչում եւ որոնց հետ կարելի է յարաբերութեան մէջ մտնել, միասին աշխատել՝ աշխատաւոր դասի մէջ համերաշխութիւն մտցնել(34) :

Մրգաստանի ընկ(եր) — Պէտք է աշխատել Միութեան ուղղութեամբ գործել, բարձրացնել Թուրք ժողովրդի կրթութիւնը եւ բարելաւել նոցա տնտեսական դրութիւնը : Այդ նպատակին հասնելու համար պէտք է դիմել լեռնական մահմետական տարրերի աջակցութեան :

Յո. - Դ.(35) — Թուրք կուսակցութիւնները ընդունում են ամէն տեսակ զաղափարի մարդիկ, ուստի դոցա վրայ յոյս դնել չի կարելի :

Արրահամ(23) — Արհամարհել Թուրք յեղ(ափոխական) կուսակցութիւններին եւ կազմակերպել Թուրքերին մեր դրօշի տակ, ընդհանուր Ֆետերացիայի սկզբունքով : Նպատակին հասնելու համար դիմել լեռնական մահմետականների աջակցութեան :

Արեւ. Բիւրօ — Միանում եմ Արհամարհի հետ, միայն այն նկատողութեամբ, որ ասածները չթողնել լոկ խօսքեր, այլ իրադրծել :

Ալ. - Պ.(?) — Մոմենտը պատմական լինելով, պէտք է շահագործել բոլոր միջոցները. միանգամից մտնել ժողովրդի խաւերը՝ շատ դժուար է, այլ պէտք է միջնորդներով հասնել նպատակին : Պէտք է համոզուած լինել որ Թուրք ժողովուրդն էլ այնքան է ցանկանում համերաշխութիւն, որքան եւ մենք եւ ապա սկսել գործել համերաշխութեան համար(33) : Թուրքե-

րի մէջ սկսուել է վերածնութիւն եւ սաղմերը երկուսն են, — բուրժուա ֆէտալիզմներ(36) եւ սոցիալիստական կուսակցութիւններ : Առաջինը միանգամայն վնասակար է եւ մեզանից շատ հեռու. մեզ աւելի մօտ պէտք է համարել վերջինը եւ պէտք է մտցնել նրա մէջ սոցիալական սկզբունքներ՝ հենց տակտիկայի տեսակէտից, եւ դրա համար ամենալաւ շրջանը, դա Բաւուսն է :

Վարժապետ — Եթէ ուզում ենք սոցիալական սկզբունքներ առաջ տանել, պէտք է օտար ազգերի հետ միասին գործել եւ հենց այժմեանից սկսել :

Գար(եզիմ) Խ(աժախ) — Թուրքերին այդքան կծու վերաբերուելով պէտք է մի փոքր էլ դէպի մեր շովինիստութիւնը կծու վերաբերուել, եւ մեղմացնել վերջինը՝ պրոպագանդայի միջոցով :

Անտոն — Մեր ծրագիրը երկու կողմ ունի, տնտեսական եւ քաղաքական : Պէտք է աշխատել գալ համաձայնութեան Թուրքերի հետ, թէ՛ տնտեսական եւ թէ՛ քաղաքական հարցերում :

VI-ԴՆ ՆԻՍՍ, 31/III ԱՌԱՍՈՏԵԱՆ

Ժողովը շարունակեց քննադատել (քննել) նախընթաց նիստում չլուծուած հայ-թուրքական ընդհանրումներին վերջ դնելու հարցը : Կարդացուեցին երկու բանաձեւեր, Եղիշէի(11) եւ Արհամարհի(23) . երկուսով էլ առաջարկուում է հնարաւորութեան չափ սերտ յարաբերութիւնների մէջ մտնել Թուրքերի հետ, գործել նրանց հետ միասին քաղաքական եւ տնտեսական հողի վրայ, կազմակերպել նրանց բանուորութիւնը եւ գիւղացիութիւնը, նոյնիսկ մեր դրօշակի տակ : Եղիշէն առաջարկում է անել այդ Թուրք յեղ(ափոխական) կուսակցութիւնների եւ արժանաւոր ինտելիգենտ անհատների աջակցութեամբ, նրանց հետ ձեռք ձեռքի տուած, իսկ Արհամարհ չէ ընդունում այդ, համարելով Թուրք ինտելիգենցիան ու յեղ(ափոխական) կուսակցութիւնները դեռ չհասունցած այդպիսի գործունէութեան համար, ոչ արժանի իրենց կոչման. նա առաջարկում է անմիջական յարաբերութիւններ սկսել Թուրք բանուորութեան ու գիւղացիութեան հետ, եւ կազմակերպել նրանց մեր դրօշակի տակ :

Արեւ. Բիւրօ — Թուրքերի հետ այդպիսի բազմակողմանի սերտ յարաբերութիւնների մէջ մտնելու համար՝ հարցը դեռ բոլորովին նոր հարց է. հասունցած չէ բնաւ : Նախքան քաղաքական ծրագիրներ առաջ բերելը, պէտք է տնտեսական ծրագրով մտնել Թուրքերի մէջ ու աշխատել համերաշխութեան զաղափարը իրագործել տնտեսական հողի վրայ, որի յաջողութիւնը աւելի անւանական է :

Անտոն — Պէտք է միաժամանակ սկսել գործել թէ՛ տնտեսական եւ թէ՛ քաղաքական հողի վրայ, օգտուելով այդպիսի գործունէութիւնից՝ յաջող հետե-

ւանքների հասնելու համար, բոլոր նպատաւոր պայմանների՝ թէ՛ կազմակերպութիւնների եւ թէ՛ անհատների աջակցութեամբ. որտեղ նրանք անընդունակ կը դառնան աջակցել մեզ, կամ չեն ցանկանալ այդ, այդպիսի տեղերում պէտք է ուղղակի մտնել Թուրք աշխատաւոր տարրերի խաւերը՝ քաղաքական եւ տնտեսական պրոպագանդայի համար :

Ոսկանապատ, Մարտիրոս(37) — Առանց Թուրք ինտելիգենտ ուժերի հետ աշխատակցելու, առանց նրանց աջակցութեան, անկարելի է Թուրք բանուորութեան խաւերը մտնել. եթէ մտնենք էլ, արդիւնաւէտ յաջողութիւն ձեռք բերել չենք կարող, այդ բանը կը պահանջի մեզանից երկար տարիների յամառ աշխատանք : Եթէ մենք ցանկանում ենք շուտ հասնել մեր նպատակին, պէտք է գործենք Թուրք ինտելիգենտ մաքուր տարրերի հետ ձեռք ձեռքի տուած :

Արաւի(38) — Ձեռ հաւատում Թուրքերին, նրանց թէ՛ ինտելիգենտները եւ թէ՛ հասարակ դասի մարդիկը, այժմ ինձ ոչ մի հաւատ չեն ներշնչում : Նրանց յեղ(ափոխական) կոչուող կազմակերպութիւնները, որոնց մէջ կան Աշուրովի ու Բաֆրէզովի պէս մարդիկ, անկեղծ չեն ու բռնկուած են շովինիզմով : Կան Թուրքերի մէջ շատ երիտասարդ, նոր ձուլուող, դեռ պատանի համարեա, սոցիալ-դեմոկրատներ, որոնք ինձ որոշ չափով յոյս են ներշնչում. նրանք ապագայ ունեն. ըմբռնում են իրենց կոչման պատասխանատուներ. անկեղծութիւնը նկատուում է նրանց մէջ. նուիրուած են ժողովրդի շահերին : Տարաբախտաբար դրանք դեռ հասունացած չեն, իսկ միւսների հետ անկարելի է քաղաքական հողի վրայ գործել : Պէտք է աշխատել միմիայն տնտեսական ծրագրով մօտենալ Թուրք աշխատաւոր տարրին(34) :

Սարգիս — Կան տեղեր, որտեղ կարող ենք հենց այժմեանից արդիւնաւէտ կերպով գործել Թուրքերի հետ. այդ այն տեղերն են, որտեղ Թուրքերը փոքրամասնութիւն են կազմում : Գործենք, որտեղ հնարաւոր է, ցոյց տանք իսկական անկեղծ սրտցաւութիւն դէպի Թուրք աշխատաւոր ամբոխը. եթէ քաղաքներում էլ հնարաւորութիւն գտնուի, գործենք Թուրքերի հետ միասին, գործենք առանց տատանուելու :

Գիգո(?) — Պէտք է ամենալայն պրոպագանդա մղել Թուրք ժողովրդի բոլոր խաւերում, ներկայ մոմենտում խաղաղեցնելու նպատակով, յետոյ համերաշխ գործունէութեան՝ թէ՛ քաղաքական եւ թէ՛ տնտեսական հողի վրայ :

Ջրաբերդ — Պրոպագանդան բուն ժողովրդի մէջ պէտք է մղուի : Նա դուցէ մեզ հասկանայ, մեր ետեւից պայ : Ի՞նչու բուրժուազիայի եւ մասամբ ինտելիգենցիայի(33) հետ անհնարին է մեզ գործել. պէտք է Թուրք բուրժուազիան, որին մեծ մասամբ պատկանում են ինտելիգենտները, բաժանել ժողովրդից :

Անտոն — Անհնարին է բաժանել Թուրք ինտելի-

գենցիան ժողովրդից : Ողբելով ի սպառ մեր յարաբերութիւնը ինտելիգենցիայի հետ, մենք գործնական նպատակների չենք հասնի Թուրք ժողովրդի խաւերում, նրա ինտելիգենցիայից առանձին գործելով : Թուրքերի հետ գործելով, մենք պէտք է հետեւենք դաշնակցութեան ու հաւասարութեան սկզբունքին, այդ սկզբունքը պէտք է ընդունուի իրրեւ միակ ելք ներկայ վիճակից : Մենք բնաւ չենք ձգտելու դերիշխանութեան Թուրքերի վրայ : Ես առաջարկում եմ ժողովին ընդունել հետեւեալ բանաձեւը, իրրեւ եղրափակում մեր վիճաբանութիւնների :

«Ի նկատի ունենալով Կովկասի ընդհանուր կուտուրական շահերը, ինչպէս եւ բարեացակամ դրացիութեան պահանջները, որոնք կարող են ապահովուած լինել միմիայն Կովկասի բոլոր ազգերի համաձայնութեամբ եւ համերաշխ գործակցութեամբ, ի նկատի ունենալով՝ որ աշխատաւոր դասակարգի շահերը կարող են ապահովուել միմիայն այն ժամանակ, երբ բոլոր աշխատաւորները, առանց խտրութեան կրօնի ու ցեղի, կը լինեն համամիտ միմեանց հետ, — Ռայոնական ժողովը յանձնարարում է Դաշնակ(ցութեան) բոլոր Մարմիններին ու դաշնակցական ընկերներին՝ յարաբերութեան մէջ մտնել բանիմաց ու վստահելի թուրք անհատների ու խմբակների հետ, համաձայնութեան գալ համակովկասեան քաղաքական այն մասայական պահանջների կէտերի նկատմամբ, որոնք յիշուած են մեր նախագծի(39) մէջ : Թուրք աշխատաւոր շրջանների նկատմամբ հետեւել գործնական ուղղութեան, բացառել բոլոր աշխատաւորների շահերի ընդհանուր լինելը, անել որոշ դրական քայլեր ձեռք ձեռքի տուած՝ տնտեսական հողի վրայ, համապատասխան նախագծի(39) ... կէտերի» :

Անտոնի բանաձեւը ընդունուեց միաձայն : Ջրաբերդ — Այդ բանաձեւի իմաստով գործելու համար, հարկաւոր է ընտրել մի յանձնաժողով բոլոր Կեդրոնական Կոմիտէների կողմից՝ մշակելու համար մի գործնական ծրագիր :

Ժողովը անցաւ Տաճկահայկական հարցի քննութեան : Նախ քան այդ հարցի քննութեան ձեռնամուխ լինելը, ժողովականները հարց բարձրացրին տաճկահայ ընկերներին ձայն տալու մասին : Յայտնուեցին կարծիքներ, — ընդդէմ՝ Նալբանդը, Ոսկանապատը եւ Սմբատը, յօգուտ՝ Համոն, Արհամարհ եւ Սարգիսը : Ժողովը որոշեց ձայնի իրաւունք տալ Կովկասից դուրս գտնուող Կենտ. Կոմ.երի ներկայացուցիչներին. այն է՝ Մշու Դաշտի, Վասպուրականի, Պարսկաստանի, Լեռնաբերդի, Շամի եւ Կիլիկիայի(40) : Վերջինիս ներկայացուցիչը ներկայացուցիչ է նաեւ Նաւահանգստի, ունի այդպիսով 2 ձայն : Ժողովը որոշեց, որ ապագայում 2 ձայնի իրաւունք ոչ ոքի չարուի :

Այնուհետեւ ժողովը անցաւ Տաճկահայ հարցի քննութեան :

Արեւ(ելեան) Բիւրօ.— Ռայոնական Ժողովը իրաւունք չունի տակտիկա որոշել Տաճկահայաստանում գործելու համար. այդ իրաւունքը պատկանում է Ընդհանուր Ժողովին: Ռայոնական Ժողովը կարող է միայն կարծիք յայտնել տակտիկայի մասին: Տեսականապէս Ռայոնական Ժողովը կարող է որոշել՝ թէ ի՞նչ մասնակցութիւն պէտք է ունենայ Կովկասը Ընդհանուր Ժողովի որոշած տակտիկայի իրագործման մէջ:

Ամ.—Ա(?)— Պէտք է իրարից դատել կովկասահայերի եւ տաճկահայերի դատը ու առանձնակի վարել: Գործունէութիւնը Տաճկահայաստանում պէտք է տեղական ուժերին թողնել: Կովկասահայերը պէտք է նիւթականով նպաստեն. կարող են նոյնիսկ աւելացնել այն նպաստը, որը տրուում է այժմս. Կովկասահայ մասսան չպէտք է մղել դէպի Տաճկահայաստան: Կովկասահայերից կարող են զբաղուել տաճկահայ գործով իտէօրոզները(15), որոնք ամբողջովին նուիրուած են տաճկահայ գործին: Նուիրուելով ամբողջովին ազգայնական գաղափարին, մենք բուրժուական ոգով ենք առաջ ընթանում: Տաճկահայ գործը կենսական նշանակութիւն չունի կովկասահայերի համար, մենք գնում ենք այնտեղ իբրեւ սիրողներ:

Փլատ.— Մեր ընկերներ այն կարծիքին են, որ տաճկահայ գործին պէտք է նիւթապէս նպաստել, հրահարուողութեան չափ մեծ ծաւալով, իսկ տակտիկայի իրականացումը Տաճկահայաստանում՝ թողնել տեղական ուժերին(41):

Ոսկանապատ.— Մեւքաղաքի ընկերները Ամ.ի կարծիքին են, նրանք գտնում են, որ գործը այսուհետեւ աւելի յաջող տանելու համար հարկաւոր է յատուկ Տաճկահայ Մարմին(41): Ոսկանապատի Կենտրոն. Կոմիտէն այս կարծիքին է: Պէտք է Երկրի մասերը կազմակերպել ամենալայն չափերով, Ժողովրդին զինել, ակտիւ ձեռնարկութիւնից ձեռնպահ մնալ, նիւթապէս (զբամով, գէնքով եւ մարդկանցով) նպաստել ամենալայն չափերով, գործունէութիւնը այդ ձեւով վերսկսել, պատրաստել Թուրքահայերից խմբապետներ ու մասնագէտներ: Անել այդ՝ առանց ի նկատի առնելու Կովկասի հանգամանքները:

Մրգաստամ.— Տաճկահայ դատին յատկացնել նշանաւոր (կարեւոր) դրամական ու այլ միջոցներ: Քանի որ Արեւ(ելեան) Բիւրօն չափից դուրս ծանրաբեռնուած է տեղական գործերով, նրանցից ստեղծել մի յատուկ Յանձնախումբ՝ տաճկահայ դատը վարելու համար: Կազմակերպել Մարմիններ եւ ուժեր Երկրում: Դիպլոմատիային ոյժ տալ:

Թմբուկ.— Նպաստել նիւթապէս, ուղարկել մասնագէտներ, Երկրում մթերել ուժեր՝ գործի համար: Խմբեր չանցկացնել. տաճկահայ գործից չխնայել առհասարակ ոչ մի նիւթական օժանդակութիւն:

Նալրանդ.— Նիւթապէս նպաստել մեծ ծաւալով, գէնք աշխատել հայթաթել Երկրում. դրսից էլ ներս

մուծել, երբ Երկրում դժուար կը լինի ձեռք բերելը: Տեղական ուղղակի ուժերը ստուարացնել՝ զինելով Ժողովուրդը:

Այգեխումբ.— Տաճկահայ դատը պէտք է ընդունել իբրեւ ընդհանուր Հայկական դատ, այդ պատճառով պէտք է նպաստել նրան ամէն կերպ ու ամենալայն չափերով, պէտք է ուղարկել դրամ, գէնք, պրոպագանդիստներ ու մասնագէտներ: Հնար եղած դէպքում գէնք ձեռք բերել Երկրում, զինել Ժողովուրդը. այժմեան պայմաններում ակտիւ յեղ(ափոխական) քայլեր չանել: Հարկը պահանջած դէպքում՝ ցոյցեր կազմակերպել Պոլսում ու Զմիւռնիայում. ընդհանուր ղեկավարութեան համար Երկրի ներսում ունենալ մեր ատանակարգ կազմակերպող ուժերից մինը, եւրոպական պրոպագանդը չթուլացնել. եթէ նիւթական միջոցները ներեն՝ ուժեղացնել նոյնիսկ:

Քար.— Ընդունում ենք Մրգաստամի ծրագրերը, համաձայն ենք նրանց:

Մեծ-Քաղաք.— Հարցերը չեն քննուել, կարծիքները որոշակի յայտնի չեն:

Նաւահանգիստ.— Մեծ մասը Թուրքահայեր են Նաւահանգստի մեր ընկերները, ուստի ամենաեռանդուն պաշտպաններ են Թուրքահայ դատի:

Արեւ(ելեան) Բիւրօ.— Տաճկահայ դատը պէտք է շարունակել ամենաեռանդուն կերպով, նա մի առանձին տեղական դատ չէ, այլ ընդհանուր Հայկական Դատ:

Զրաբերդ.— Ընդունում ենք Մրգաստամի բանաձեւի մի մասը. տաճկահայ դատը առաջ մղելու համար պէտք է ստեղծել առանձին Յանձնախումբ՝ Բիւրօյին կից, ու գործի ղեկավարութիւնը ամբողջովին յանձնել այդ Մարմնին: Զրաբերդը որոշել է տակտիկայով չզբաղուել. այդ պէտք է թողնել առանձին Մարմնին ու տեղական ղեկավարող օրկաններին(41):

Անտոն.— Այդ սխալ կարծիք է, տաճկահայ դատը հանուր Հայկական Դատ է, այլ ոչ տեղական: Այդ դատը առաջ պէտք է մղեն Դաշ(նակցութեան) բոլոր Մարմինները՝ միահամուռ ուժերով, նրանց ուղղակի կամ կողմնակի մասնակցութեամբ: Տակտիկան պէտք է որոշուի Մարմինների փոխադարձ համաձայնութեամբ: Գործել պէտք է ամենալայն չափերով:

Կոմս.— Տեղական, բուն Երկրի ընկերների կարծիքները միմիայն էական նշանակութիւն ունենալ գործի համար՝ չեն կարող. աւելի գնահատելի են փորձուած, յեղափոխական պատրաստութիւն ու անցեալ ունեցող ընկերների կարծիքները. պէտք է լայն տեսակէտից նայել գործին, այնպէս՝ ինչպէս նայում է ընկեր Անտոնը:

Պարսկաս(տան).— Ընկեր Կոմսի կարծիքին է: Մուրատը կարծիք չէ յայտնում:

Զրաբերդ.— Տեղի ունեցած վիճարանութիւններից ու ընկերների կարծիքները լսելուց, ես այն սպաւորու-

թիւն եմ ստացել, որ մենք տակտիկա որոշել չենք կարող:

Յովհաննէս(?).— Այս Ժողովը տակտիկա որոշել չի կարող, ցանկալի լիազօրութիւն ու ձեռնհասութիւն այդ բանի համար չունի:

Արեւ(ելեան) Բիւրօ.— Ռայոնական Ժողովը կարող է զբաղուել տակտիկայով. Մարմինները գտնում են, որ նա կարող է ձեւակերպել ապագայ տակտիկան, որի սանկցիան կախուած է Ընդհանուր Ժողովից:

Ալ(եխամդր) Պ(ապովիան).— Ռայոնական Ժողովի կարծիքը տակտիկայի մասին կարեւոր է իմանալ մեզ. բայց բաւական չէ իմանալ միմիայն Ռայոնական Ժողովի կարծիքը, պէտք է իմանալ բոլոր աչքի ընկնող Մարմինների կարծիքը, հարկաւոր է իմանալ նոյն իսկ հասարակական խաւերի կարծիքը:

Նախագահն առաջարկում է քննել մանրամասնօրէն հետեւեալ հարցերը, իբրեւ ստորաբաժանումներ տաճկահայ դատի.

- ա. Մեր վերաբերմունքը տաճկահայ դատին.
բ. Այդ վերաբերմունքից բխած տակտիկան.
գ. Ի՞նչ պէտք է անենք այդ դործում.
Անտոն առաջարկում է քննել՝

Մեր վերաբերմունքը տաճկահայ դատին ու այն միջոցները, որոնցով կարող ենք առաջ մղել այդ դատը՝ Ռուսաստանի ներկայ բացարձիկ հանգամանքներում:

Ընդունուեց վերջինը:

VIIրդ ՆՈՍ, 31/III ԵՐԵՎԱՆԻ

Սմբատ(?).— Նախ քան քննութիւնը ցանկալի է, որ տաճկահայ ընկերները մանրամասն տեղեկութիւններ տան Երկրի արդի դրութեան մասին:

Սարգիս.— Պէտք է քննել հարցը առանց ի նկատի առնելու ներկայ պայմանները Երկրում. հարցը քննելուց, պարզաբանելուց, որոշ հայեցակէտ ընդունելուց յետոյ միայն կարելի է ի նկատի առնել ներկայ պայմանները: Կան այնպիսիները, որոնք ներկայ պայմաններում առհասարակ չեն ընդունում տաճկահայ դատը, իբրեւ ընդհանուր Հայկական Դատ:

Գարեգին Խաժակ.— Խօսք չէ կարող լինել այն մասին, թէ արդեօք պէ՞տք է տաճկահայ դատով ըզբաղուել, թէ ոչ. այն ընկերը որ այդ դատը ուրանում է, նա դաշնակցական չէ, նա չպէտք է նստի այս Ժողովում. նա, այդ դատը, մեզ ծնող մայրն է. նրան մոռանալը յանցանք է:

Ոսկանապատի ընկերը խնդրում է որ տաճկահայ ընկերները տեղեկութիւն տան Երկրի դրութեան մասին:

Յով(նա)նը հարկաւոր չի գտնում այդ. Երկրի արդի դրութիւնը բոլորիս յայտնի է:

Ռոստոմ.— Մինչ(եւ) հայ-Թուրքական ընդհանրումները Տաճկահայաստանի մասին կայացած են յայտնի որոշումներ, յատկացուած է եղել այդ որոշումների համար որոշ գումարներ. որոշումները չեն իրագործուել շնորհիւ (պատճառաւ) Թուրք-Հայկական ընդհանրումների, որոնք վերջին տարուայ ընթացքում կլանեցին Դաշնակցութեան համարեա բոլոր միջոցները: Դաշնակցութեան միջոցները այսուհետեւ նշանաւոր (կարեւոր) չափով պէտք է նուիրուեն այդ որոշումների իրագործման, նրանք չեն կարող փոխուել. նրանք պէտք է ի կատար ածուեն: Ներկայ Ժողովը կարող է քննել միայն այն՝ թէ ինչպէ՞ս պէտք է կատար ածուեն այդ որոշումները՝ ներկայ պայմաններում: Նրանք ընդունուած են Ժողովի (Ընդհանուր) կողմից. ի կատար պէտք է ածուեն մինչեւ ապագայ Ընդհանուր Ժողովը, որը միայն կարող է փոխել նրանց:

Ամիր(?).— Այս Ժողովում պէտք է քննել թէ՛ մենք անմիջապէ՞ս պէտք է առաջ տանենք տաճկահայ դատը, թէ օժանդակենք միայն նրա առաջ մղուելուն:

Անտոն.— Այս Ժողովը պէտք է վերաքննէ միմիայն մեր գործունէութիւնը: Տաճկահայ հարցը նոր հարց չէ. այն դրուած է վաղուց, տասնեակ տարիներ է ինչ նա դրուած է ամբողջ հայութեան առաջ. նա մեծ, առաջնակարգ պատմական դատ է: Մեր Ժողովուրդը ձգտում ունի ինքնուրոյն կեանքի, նա պատրաստ է ամէն տեսակ զոհողութիւններ անել իր այդ մեծ իտէալին հասնելու համար: Քանի որ ինքնուրոյն կեանքի պայմաններ ստեղծելը դիւրին է Տաճկահայաստանում, ուստի համայն հայութիւնը իր մեծ իտէալի իրագործումը այնտեղ է փնտրում: Այնտեղ փոփոխութիւն առաջ չէ եկել, այստեղ եւս առաւել: Մենք ոչ մի բաւարարութիւն չենք ստացել, մեր վլխաւոր դատը մընում է տաճկահայ Դատը եւ մենք պէտք է միահամուռ ոյժերով առաջ մղենք այն՝ ինչպէս էլ լինեն մեր արդի կացութեան պայմանները: Դասակարգային շահերը չպէտք է խոչընդոտ լինեն այդ մեծ գործին. կը լինեն մարդիկ, որոնք կը զբաղուեն դասակարգային շահերով ու պայքարներով, այդ մեզ չի խանգարի մեր մեծ Դատը առաջ մղել, եթէ մեր ուժերի ու միջոցների մեծ մասը նուիրած լինենք նրան:

Զրաբերդ.— Դատը չպէտք է մղել այնպէս, ինչպէս մղուում է. ես գտնում եմ, որ մեր դատը պէտք է առաջ մղել ոչ առանձին, այլ տաճկահայ (Տաճկաստանի?) բոլոր ազգերի հետ, նրանց ընդհանուր դատի հետ միասին, թե թեւ տուած: Տաճկական պրոլետարիատը աւելի ստուար է, քան մերը: Եթէ մենք մղենք մեր դատը նրա դատի հետ միասին, այն ժամանակ անկասկած յաջողութիւն կ'ունենանք:

Գարեգին Խաժակ.— Մեր դատը պէտք է ընդունենք իբրեւ առանձին բուն Հայկական Դատ. մեր նպատակը պէտք է մնայ նոյնը: Փոխել կարելի է միայն

տակտիկան, — ընդունում եմ որ պէտք է հնարաւորութեան չափ տաճկական ազգերի հետ համերաշխ գործել: Մենք Ռուսաստանում կարող ենք բարւոքել մեր կեանքը, առանձին, իսկ ինքնուրոյն կեանքի ձգտել Տաճկահայաստանում: Պէտք է Երկիր ուղարկել մասնագէտներ, պրոպագանդիստներ, պէտք է զօրեղացնել Երկրի ներքին կազմակերպութիւնը, որին յանձնել պէտք է գործի ղեկավարութիւնը: Ինչպէ՞ս ընդունուած է այդ Մակեդոնիայում, դրսի ոյժերը կարող են միայն օժանդակող լինել:

Արսէն(?) — Բուրժուա ինտելիգենցիան յանուն տաճկահայ դատի մտնում է ժողովրդի խաւերը ու կեղեքում նրան: Մարմինների կազմը մեծ մասամբ բաղկացած է բուրժուա դասակարգի մարդկանցից. այդ պատճառով մեր դատը աւելի վնասել է մեզ, քան օգնել: Մեր կազմակերպութիւնը դարձել է բուրժուա ինտելիգենտների կազմակերպութիւն: Մեր կազմակերպութիւնը պէտք է լինի մաքուր յեղափոխական: Ես չեմ ընդունում ակտիւ գործունէութիւն Տաճկահայաստանում յանուն տաճկահայ դատի(?):

Ոսկանապատ. — Մեզ մինչեւ այժմ ոչինչ չէ յաջողուել դեռ, էական գործ Երկրում չենք կատարել դեռ: Ժողովուրդը անհեթեթ հասկացողութիւն է կազմել մեր շարժման մասին, կարծելով թէ մենք ձգտած ենք հայոց թաղաւորութիւն եւ թագաւոր ունենալու: Մեր կազմակերպութիւնը ժողովրդականութիւն ունի, բայց ժողովուրդը չի ըմբռնում նրա ծրագիրն ու նպատակները: Եթէ Դաշ(նակցութեան) գործունէութիւնը դրուի դասակարգային հողի վրայ, այդ մեծ յառաջդիմութիւն կը լինի մեր գործի համար: Պէտք է տաճկահայ գործի համար առանձին գանձարան հիմնուի, իսկ ռուսահայ գործի համար՝ առանձին: Տեղական Մարմիններին կից պէտք է հիմնուեն առանձին մասնաժողովներ, որոնք պարտաւոր են յատկապէս զբաղուել տաճկահայ դատով: Մեր կազմակերպութիւնը պէտք է համակովկասեան դաշնակցութեան մէջ լինի ու գործի Կովկասում դասակարգային հողի վրայ, պաշտպանելով աշխատաւոր ու կեղեքուող մասսաների դասակարգային շահերը:

Ռաստամ. — Կովկասը իսկապէս մինչեւ օրս աջակցել է տաճկահայ դատին. բուն դերը տարել է ինքը Երկիրը, Տաճկահայաստանը. այսուհետեւ էլ գործը պլանաւորապէս պէտք է առաջ տանեն տաճկահայերը, մենք եղել ենք ու մնալու ենք իսկապէս օժանդակողներ. թէև ձգտել ու ձգտում ենք մենք՝ ռուսահայերս ղէպի Տաճկահայաստան այն յոյսով, որ այնտեղ մի անկիւն ունենանք, որտեղ կարողանանք ազատ օգտուել մարդկային իրաւունքներից: Այդ սեփական անկիւնը եղել է ու է՝ հեռաւոր ապագայ: Մեր գործին ու կոչման չափ արժանի ծառայելու համար, պէտք է ոյժ տալ մեր կազմակերպութեան, զտել նրան ոչ-յեղ(ափոխական) տարրերից, մաքուր, համոզուած յեղափո-

խականների կազմակերպութիւն դարձնել Դաշնակցութիւնը: Այժմեան ինքնապաշտպանութեան խմբերի մէջ մտել են ամէն դասակարգի մարդիկ, որոնք իրենց յեղ(ափոխական) են համարում: Այդ երեւոյթը կը վերանայ, երբ մենք կարիք չենք ունենայ այլևս ինքնապաշտպանութեան Կովկասում:

Սմբատ. — Վանի ու շրջակայ ուրիշ երկու վիլայէթում մեծամասնութիւն կազմում են ոչ-հայերը, — աւելի շատ են քրտերը: Ամենահայաշատ գաւառներում հայերի թիւը հազիւ է հասնում 60%: Հայերը ամբողջ Տաճկահայաստանում մեծամասնութիւն չեն կազմում: Ազգաբնակչութիւնը պարապում է պլանաւորապէս անասնապահութեամբ ու երկրագործութեամբ: Առաջինով պարապում են մեծ մասամբ քիւրտերը, իսկ երկրորդով՝ հայերը եւ տաճիկները: Քաղաքներում գոյութիւն ունի առեւտուր. գտնուում է հայերի ձեռքին, բայց խղճուկ է, զարգացած չէ: Աչքի ընկնող արդիւնաբերութիւն չկայ. եւրոպական կապիտալը այնտեղ գոյութիւն չունի, գործարաններ, յարմար ճանապարհներ չկան: Քաղաքներում հայերը անտարբեր են ղէպի Հայկական Հարցը, նրանց համար այդ Հարցը համարեա գոյութիւն չունի: Գիւղերում այլ է, բայց գիւղացիներ իրենց յոյսը դնում են ոչ թէ իրենց վրայ, այլ Աստուծոյ: Իւրաքանչիւր տեղ կան մի քանի հոգի հետաքրքրուողներ, ակտիւ գործիչները շատ քիչ են. — միմիայն դիպլոմատիան(42) կարող է փրկել, նա կարող է բարեփոխումներ մտցնել, նրան պէտք է սպաւիկներ: Երբ է այդ լինելու՞ Կովկասի անկարելի է, մենք այդ չգիտենք: Այդպիսի պայմաններում ժողովուրդը պէտք է պահպանի մի կերպ իր դոյութիւնը, որ վերջապէս ռեֆորմները(43) մտցուեն, գան նրան փրկեն: Նա պէտք է իր ուշքն ու միտքը դարձնէ իր ինքնապաշտպանութեան վրայ, պահպանի մի կերպ Ֆիզիքական դոյութիւնը:

Ձայներ. — Սխալ է, սխալ... Արրախամ. — Բոլորն էլ ընդունում են, որ բոլորն էլ պէտք է մասնակցեն տաճկահայ դատի առաջ մղման. ես ամենից շատ եմ համոզուած, որ բոլոր հայերն էլ պէտք է մասնակցեն: Առաջ մենք կարծում էինք, թէ մի քանի խիզախ ձեռնարկներով կը լուծենք Հարցը. — արինք, բայց ցանկալի հետեւանքների չհասանք: Արինք տակտիկային սխալներ, տասը տարում հազիւ 200 հրացան հասցրինք Սասուն, ու կռիւ սկսեցինք մի բանակի հետ, որին Ռուսաստանն անգամ 77 թուին դժուարութեամբ յաղթեց: Միամտաբար յոյսեր էինք դրել Եւրոպայի վրայ, որ կերակրում է մեզ խօսքերով միմիայն. ես չեմ հաւատում Եւրոպային, նրա միջամտութիւնը ինձ անհաւանական է թուում: Մի երկրում ապստամբական շարժումն յաջողցնելու համար, պէտք է ամբողջ ժողովուրդը մասնակցի նրան, դրա համար՝ ամբողջ ժողովուրդը գինուած լինի: Ամբողջ ժողովուրդը գինուելու հնարաւորութիւն

մենք երբեք չենք ունենայ: Ես այն կարծիքին եմ, որ մենք այսուհետեւ ոչ մի դրական քայլ չպէտք է անենք Երկրում, զէնք եւ հայդուկներ, մի հատ հրացան նոյն իսկ չպէտք է անցկացնենք Երկիր: Մենք պէտք է աշխատենք որ ուսները գնան նուաճեն Փոքր-Ասիան, նախկին հայեցակէտը պէտք է թողնենք: Մենք պէտք է պրոպագանդայի միջոցով համոզենք ռուս ժողովուրդին, որ նրա ապաղայ յաջողութիւնների վայրը Փոքր-Ասիան է. այդ պրոպագանդայի համար պէտք է յատուկ լրագիր հրատարակել Պետերբուրգում: Վերանորոգուած ազատ Ռուսաստանում հայութիւնը կարող է առաջդիմել, զարգանալ ու ստեղծել իր համար երջանիկ վիճակ:

ՆԻՍՏ VIII, 1/IV, ԱՌԱՍՈՏԵԱՆ

Ղարիբ(44). — Հայկական Հարցը այսքան տարիներ մեր ամենալուրջ մտախոհումների եւ զբաղումների առարկան եղած է: Ինչքան էլ մենք այդ Հարցը անվիճելի համարենք, ինձ համար փաստ է, որ այդ Հարցի հիմնաւորութեան վերաբերող լուրջ, խոշոր Հարցեր են ծագել մեր ընկերների մի մասի մէջ: Մենք երէկ այն եզրակացութեան եկանք՝ որ պէտք է այդ Հարցը մնայ Հայ Յեղ(ափոխութեան համար) կենսական Հարց: Բայց այնուամենայնիւ մենք պիտի ծանրանանք այդ Հարցի շուրջը, յայտնենք մեր բոլոր կասկածները, անկեղծօրէն նայենք այդ Հարցի վրայ, քննենք եւ ըստ այնմ որոշ եզրակացութիւնների յանգենք: Ուրանալ անկարելի է՝ որ քաղաքական հանգամանքները փոփոխուել են, որ այն միջոցները, այն ձեւերը որ գործադրուում էին մինչեւ այժմ, անպէտքացել, հնացել են: Պէտք է այլ ձեւեր, այլ տակտիկա մտցնել: Ուրախալի է որ այդ Հարցը էապէս վիճելի չէ համարուում, այնուամենայնիւ լուրջ պէտք է ծանրանանք դրա վերայ: Անտոնը երէկ ասաց, որ թէ Երկրում եւ թէ այստեղ փոփոխութիւններ չեն եղել, իսկ Մարտիրոսը (Ոսկանապատ) թիւր հասկանալով, նկատեց որ այդպէս չէ: Ինձ թուում է թէ Մարտիրոսը սխալ է հասկացել Անտոնին: Անտոնի խօսքը զազափարական հոսանքի մասին չէր: Նա խօսում էր հայի ազգաբնակչութեան տեսակէտից: Եւ այդ տեսակէտից իսկապէս փոփոխութիւն չէ եղել, չկայ: Ի՞նչ է այդ խոհալը, — մենք ծածկում ենք, վախկոտութեան հետեւանքն է. մենք չողարկում ենք. այո՛, ինձ համար ամէն մի քաղաքական հասարակական հոսանք, բացի մատերիալիստական բովանդակութիւնից, ունի եւ աւելի վեհ բան՝ խոհա: Սոցիալիզմը միայն ստամոքսի հետ չէ կապուում: Մենք այժմ զոհեր ենք տալիս եւ դրա պատճառը՝ մեր յեղափոխական երեւնալու տենչը, մեր վախկոտութիւնը, ռուսական հովերով տարուելը: Թուրք-հայկական դատը ընդհանուր տեղեր զբաւելու հարց չէ

եւ որպէսզի նա այդպիսի տեղեր բռնէր, պէտք է լինէր մարդասիրական գործ. բայց նա մարդասիրական գործ չէ լուր, չէ եղել եւ չպիտի լինի: Դա ազգային հարց է, հայ ժողովուրդը բնազդով զգացել է այդ եւ հետեւում է: Մարտիրոսը ասում է թէ մասսան անպատրաստ լինելով, Հայկական Դատ ասելով հասկանում է հայկական թագաւորութիւն, թէ՛ մենք ենք սխալեցրել: Բայց հայ ժողովուրդը չի՛ սխալուում, նա թագաւոր է ասում, որովհետեւ առանց թագաւորի չի հասկանար ազատ, ինքնուրոյն կեանք: Եթէ ուղիղ հասկացայ Մարտիրոսին, հայ ժողովուրդը միշտ ձգտել է առանձնայատուկ ինքնուրոյնութեան, ձգտել է այնպիսի պայմանների, որտեղ ազատ կ'արտայայտուէին (պիտի արտայայտուէին) նրա ընդունակութիւնները, կուլտուրան. նա իր արեան գնով պաշտպանել է իր ցեղային ինքնուրոյնութիւնը: Իսկապէս այդ տեսակէտից դրութիւնը չէ փոխուել այստեղ, սահմանադրական կարգերը բաւական չեն: Այսպէս մենք պիտի շարունակենք զբաղուել այդ խնդրով, որովհետեւ Թուրքիայում չի ապրում մարդկային մի խումբ, այլ ապրում է մի մասսա, որի մօտ պահուում է հայկական պատմական կուլտուրան: Ազգ: Ես չեմ հասկանում բուրժուայի մտքով, այլ մի մասսա, որը ստեղծել է մի (իր) ուրոյն պատկերը: Հայ ժողովրդի մասերը՝ ուր եւ լինեն՝ պէտք է փրկեն այդ կուլտուրան: Այդ կուլտուրան փրկելու համար մեզ գուր են անուանում պանարմենիստ. մենք պանարմենիստ կը լինէինք եթէ ունենալով մի տեղ, ուր կարելի էր ապաւինել, միւս մասերն էլ համեմատական բարեխաւութեան մէջ լինելով, մենք ձգտէինք միացնել այդ մասերը: Եթէ մտածող եւրոպացիները համակիր են մեզ, ա՛յս աչքի առաջ ունեն, ոչ թէ պանարմենիզմը, այլ այն՝ որ այդ ցեղը իր դոյութիւնը պահելով կարող է օգտակար լինել: Եւր(ոպայի) սոցիալիստական կազմակերպութիւնների մէջ Հայկական Հարցը արդարացի հարց է: Երէկ այստեղ եղած առարկութիւնները ինձ յիշեցրին Մարտիկոյի խնդրի վերաբերմամբ Ժօրէսի արտասանած ճառը, որի դէմ ոչ մի սոցիալիստ չառարկեց: Նա ասաց՝ որքան բանուորը լինի յեղափոխական, այնքան նա կը ձգտի իր ցեղի ազատագրութեան: Եւ ինչպէ՞ս կարող է ազատութիւն լինել անհատի, երբ ազգը ստրկութեան մէջ է: Մի բռնէք այն բառերից՝ որտեղ ասուած է «բանուորները հայրենիք չունեն». ո՛չ, ունեն: Բէքէլը ասում է, — «մի ստրուկ ցեղ, որ տանում է բռնութեան լուծը, չի կարող յեղափոխութեան յարել մինչեւ չազատուի այդ ստրկական շղթաներից: Նա չի կարող անհատական ազատութեան մասին մտածել»: Ցեղային ազատութիւնը նոյնիսկ անհրաժեշտ է համարող մարդկային ընտանիք ստեղծելու տեսակէտից: Ասում եմ, եթէ այլ խոհողները հնարաւոր են գտնում, մեզ մօտ ինչո՞ւ անհնարին է համարուում, ինչո՞ւ դասակարգային պայքարը պէտք է խոչընդոտ հանդիսանայ,

ինչու պէտք է մեր ցեղի մի մասը թողնենք սարկու-
թեան մէջ: Մենք ուսումնական սոցիալիզմի ազդեցու-
թեան տակ ենք, ինձ թուում է սոցիալիզմն էլ Ռու-
սաստան մտնելով՝ որոշ փոփոխութեան է ենթա-
կուել, նիհիլիզմը(45) ազդել է սոցիալիզմի վրայ եւ
մենք էլ ազդուում ենք դրանից: Այլ կերպ եւ բացատ-
րել անկարող եմ, որ այստեղ ժխտում են ազգային
գաղափարը, (գաղափար՝) որին ոչ մի եւր(ոպացի)
սոցիալիստ չի առարկում: Այժմ ինչպէ՞ս անենք որ
այդ ազատագրութիւնը հնարաւոր լինի, առանց մեծա-
մեծ զոհերի կարողանանք գլուխ բերել:— ահա՛ խնդի-
րը, որ պէտք է գրադեցնէ մեզ: Նրան մօտենալ կարելի
է տարբեր ձեւերով: Մերաւոր դասախօսութեան մէջ
իբրեւ հետաքրքիր հայեացք մնաց այն՝ որ Հայկական
Հարցը դիպլոմատիկական(42) հարց է:— Համաձայն
եմ որա հետ: Արբանձի՛ք թէ մենք դաշնակից չենք
ունեցել, մինակ ինչպէ՞ս կարող ենք տանել: Մերաւոր
ասածը պատասխանն է դրան: Մենք չէինք էլ մտա-
ծում մինակ, մենք հենց ուզում էինք եւր(ոպական)
դիպլոմատիայի միջոցաւ: Մենք աշխատել ենք տեւո-
ղական պետրուսացիայի(?) մէջ պահել թուրքիան, որ-
պէսզի Եւրոպան վնասուի ու միջամտէ: Ես միշտ այդ
հայեացքին կը մնամ, որ եթէ մենք շարունակենք աղ-
մրկել, նա պիտի միջամտէ: Թուրքերի հետ գործակ-
ցութեան մասին, — ո՞վ է դրա դէմ: Նոյնիսկ զեր-
տերի հետ. նրանց մէջ մտել ենք յարաբերութեան հա-
մար: Իմ կարծիքով նոքա չեն սխալուում դէմ լինե-
լով, որովհետեւ նրանք զգում են՝ (թէ) տալով հայ
ժողովրդին ազատ կացութիւն, իրենք չպէտք է կա-
րողանան մրցել, ինչպէս այդ լինում է այսպիսի (ներ-
կայ) պայմաններում: Հիմա նոր հովեր են նկատուում
թուրքերի մէջ, այդ էլ կը փորձենք: — Ինչքա պէտք է
ասեմ որ չափազանց սկիստիկ եմ, չեմ հաւատում.
Իմ Եւր(ոպայի) երիտասարդ թուրքերի հետ ունեցած
տեսակցութիւնը ողբալի էր: Գրանք Կովկաս: Որքան էլ
այստեղի թուրքական շարժմանը տանք տնտեսական
պլանֆորմ(46), կը մնայ նախ պրոպոկացիան եւ ա-
պա՛ թուրքերի յետամնացութիւնը: Նրանք կարող են
մինչեւ կուլտուրա ստանալը մեծ շարիք լինել մեզ հա-
մար: Մինչեւ անգամ հայ-թուրքական համագումար-
ում դպրոց էին ուզում. ո՞վ էր արգելում այդ ցեղին
իրենց երկրում դպրոցներ ունենալ:— կան ուրիշ
պատճառներ: Թէօրիա եթէ տանք կը լինի, բայց շատ
ուշ(?): Ինձ համար պարզ է, որ թուրք ժողովրդի ներ-
կայ կացութիւնը անբարեբեր հող է, որի վրայ մենք
կարողանայինք տնկել յեղ(ափոխութեան) ծառը, ուս-
տի կրկին մնում է որ հայը լինի աւանդաբար(47), Հայ
Դատը մնայ ինքնուրոյն: Մենք յոյս չունենք դէպի
թուրքերը: Ես համոզուած եմ, որ թրքահայկական
դատը պիտի մնայ հայկական ինքնավարութեան դատ.
այո՛ւ, մենք չպէտք է հրաժարուենք դրա ինքնուրոյ-
նութիւնից: Մենք պէտք է աջակցենք այն բոլոր շար-

ժամներին՝ որոնք կը լինեն թուրքիայում, սակայն
միշտ մենք պէտք է աշխատենք որ որեւէ վնաս չհասնի
մեր Դատի ինքնուրոյնութեանը: Ընկ. Մերաւոր բե-
րում է այն առարկութիւնը՝ թէ հայերը չբի են. հենց
այդ առարկութիւնը ոչ մի ուշադրութեան արժանի
չէ: Թուրք կառավարութիւնն էլ ասում է, թէ չբի են.
մի՞թէ 800.000ին պէտք է թողուլ որ ոչնչանան: Անգ-
լիական կապոյտ գիրքն ասում է, որ եթէ հայկական
նահանգների սահմանները վերածենք նախկին ձեւին,
հայը մեծամասնութիւն կը կազմէ: Դա նշանակութիւն
չունի. այստեղ կան շատ հայեր եւ նրանց դատը մեզ
համար սուրբ է: Թէ Կովկասի հայը մասնակցութիւն
չէ ունեցել, սխալ է: Մենք իտէլոյզներ(ս) ժողովրդի
կողմից շատ բան ենք ասում(?): Ո՞վ կարող է ասել
թէ հայերը Կովկասում մասսայական մասնակցութիւն
չեն ունեցել: Դեռ 80ական թուականներին, երբ Դաշ-
նակցութիւնը գոյութիւն չունէր, երբ պրոպագանդ չը-
կար, ես յիշում եմ մի ոմն Սենեքերիմ, որ կամաւոր-
ներ վերցրած գնում էր: Եթէ իրօք ապստամբութիւն
ժայթքի, կարծում էք որ այստեղի ժողովուրդը մաս-
սայական մասնակցութիւն չի՞ ունենայ: Ես պնդում եմ
որ ուսուհայերը մինչեւ այժմ տուել են իրենց կարո-
ղութիւնից եւ պիտի տան: Դա չպիտի լինի տաճկա-
հայկական հարց, այլ ընդհանուր Հայկական Հարց:
Ձեւակերպութիւնը այստեղ դժուար է անել, հարկա-
ւոր է մի յանձնաժողով կազմել, որ ծրագիր մշակէ,
բերէ եւ տայ մեզ քննելու:
Մեծ-Քաղաք(ի ներկայացուցիչ).— Երէկուայ վի-
ճարանութիւնների ժամանակ թրքահայկական դատը
քննելիս, շեշտում էին դասակարգային տեսակէտ պահ-
պանելու մասին եւ պալիս էին այն եզրակացութեան,
որ Դաշնակցութիւնը ընդունելով աշխատաւորների շա-
հերի պաշտպանութիւնը այստեղ, երկու տեղում էլ ո-
չինչ չի կարողանայ անել: Թէ դասակարգային տեսա-
կէտը ընդունելով՝ մենք չպէտք է մասնակցենք թրքա-
հայկական դատին, պէտք է տանք միայն փող եւայլն.
պուցէ ես խիստ եմ ասում, բայց տենդենցը(48) այդ
էր: Ես կարծում եմ դասակարգային հոսանքը մի այն-
պիսի տարերային բնոյթ ունի որ ոչ մի պատնէչի ա-
ռաջ չի կանգնի: Երբ Դաշնակցութիւնը սկսել է իր
գործունէութիւնը այստեղ, այդ տեսակէտը խիստ նկա-
տելի չէ եղել: Այժմ եթէ կայ դասակարգային հոսանք,
դա չի նշանակում թէ պէտք է բացասել ազգայինը:
Բացասումը հետեւանք է Ռուսաստանի սոցիալ-դեմոկ-
րատիայի ազդեցութեան: Մենք կանգնելով դասակար-
գային տեսակէտի վրայ, ոչ մի վնաս չեմ գտնում
պաշտպանելու ազգային դատը: Ոչ մի իտէլոյզ կարող
չէ դադարեցնել (ազգային դատը): Դեռ 90ական թուա-
կաններին՝ Ռուսաստանում սկսուում է մարքսիստա-
կան թէօրիա ընդունողների հոսանքը: Ստրուկ է լի-
նում առաջինը(?), բայց նա յետ է մնում, իսկ դասա-
կարգային հոսանքը առաջ է գնում: Եթէ հենց վեր-

ցնելու լինենք դասակարգերի շահերի տեսակէտից,
պէտք է պաշտպանենք ազգային հարցը: Կուլտուրան
կը բարձրանայ երբ բանուորը իր մայրենի լեզուով կա-
րող է կարգալ եւ հասկանալ, երբ նրա ազգային ա-
ռանձնայատկութիւնները ազատութիւն ունենան: Դաշ-
նակցութիւնն այդ տեսակէտից պէտք է վերցնէ ազգա-
յին դատի պաշտպանութիւնը: Աւետիան(44) յիշեց եւ-
րոպական սոցիալիստներին. տարօրինակ բան, եւրո-
պացիները աւելի լաւ վերաբերմունք են ցոյց տալիս,
քան մեր ընկերներից նրանք՝ որոնք ասում են պէտք է
օժանդակել, ակտիւ չլինել: — Դա դիտել է նշանա-
կում: Մենք Ռուսաստանում կանգնելով դասակարգա-
յին տեսակէտի վրայ — դա չի նշանակում թէ չպէտք
է մասնակցել ազգային դատին: Մեր կուլտուրան մէկ
է. ստեղծել այստեղ ազատ կարգեր, առաջ տանել
կուլտուրան, այդ կ'ազդէ այստեղի վրայ. իսկ այս-
տեղիներ՝ այստեղիներ վրայ: Պրոլետարիատի տեսա-
կէտն ընդունելով, դարձեալ պիտի պաշտպանենք (Հայ
Դատը): Մենք այստեղ թագաւորութիւն չենք ուզում,
ժողովրդի հոգեբանութիւնը, տրամադրութիւնն (է),
որ Անդրանիկին համեմատում է թագաւորի հետ: Ըն-
կերները այդ մասին զոյշ թող լինեն, որովհետեւ մեր
հակառակորդները շահագործում են այդ: Թագաւորու-
թեան մասին հարց չկայ, մենք ուզում ենք ուսուցիչ
սկզբունքներով ինքնավարութիւն. այդ ձեռք բերելու
համար մենք պէտք է աջակցենք ճիշդ այնպէս, ինչպէս
տարբեր երկիրների պրոլետարները՝ իրար: Պարտաւոր
ենք, որովհետեւ այստեղի դատը տնտեսական հողի
վրայ դրուած մի դատ է եւ ոչ չովինիստական: Ասում
են, որ մենք թրքահայկական դատն ընդունելով, մո-
ռանում ենք այստեղիներ: Ինչու՞մն է կայացել սկզբից
մեր մասնակցութիւնը, հենց եղել է այնպէս՝ ինչպէս
ներկայումս մենք ընդունում ենք, որ պիտի լինի:
Մենք ասում ենք օժանդակել դրամով ու Ֆիդիքապէս:
Եթէ մենք խմբեր ենք ուղարկել, դա չի նշանակում,
որ ուսուհայը ակտիւ մասնակցութիւն է ունեցել: 10-20
խումբ, այն էլ մեծամասնութիւնը թուրքահայեր են
եղել: Դա ի՞նչ է: Նոյնիսկ սոցիալ-դեմոկրատները
այդպէս Բոյերներին օգնում էին: Սա պասսիւ է եւ ոչ
ակտիւ: Մենք չէինք կարող դրսից նստած այդ մեծ
գործը առաջ տանել: Մենք մօտենում ենք բուրժուա-
կան հայեացքին, որ եթէ կովկասահայերը չլինէին,
Դաշնակցութիւնը չլինէր, դատը չէր լինի: Այդպէս չէ:
Տեղական ուժերն են եղել, թող փոքր շափերով լինեն,
բայց որ երկրում մասսայական են եղել: Թուրքահա-
յերի դատը ունի իր պատճառները, որ նրան կենսու-
նակութիւն են տալիս: Եւ եթէ այստեղ ու այստեղ
կայ գործ, մենք չենք կարող տեսակի փոփոխութիւն
մտցնել, որ եղել է ճշուածների պաշտպանութիւն.
այլ պէտք է մենք սրանից յետոյ ուժերի համաչափու-
թիւն մտցնենք, տակտիկայի մէջ փոփոխութիւն կարող
է մտնել: Երկու խոշոր փոփոխութիւններ են տեղի ու-

նեցել թուրքիայում.— ա. Եւրոպական կապիտալը
խոշոր շափերով մուտք է գործել թուրքիա եւ ք. Թուրք
մասսայի տնտեսական դրութիւնը փոխուել է. նա
արթնացել է: Դիպլոմատիայի վրայ կանգ չեմ առ-
նում, դա խաղ է, կարող է փոխուել: Ղարիբը սխալ-
ւում է, թէ թուրքերի վրայ յոյս դնել չի կարելի: Ես
գտնում եմ որ կարելի է. նա կարինում գործադուլ է
անում, էրզրումում օր(ինակ՝) թուրքերը ասել են հա-
յերին, թէ մենք այժմ հասկացանք թէ դուք ինչու էիք
կուլում. մենք պէտք է մօտենանք թուրք ժողովրդին,
պէտք է քարոզենք համերաշխութիւն, մինչեւ այժմ
մեր յարաբերութիւնը եղել է բուրժուա ժէօն-թուրքե-
րի հետ: Ընկերը հարցնում է թէ Հայկական Հարցը ա-
ռանձի՞ն պէտք է տանել, թէ միասին. մենք տեսնում
ենք, որ պէտք է տանել հարցը եւ հետեւաբար պարզ
է որ իւրաքանչիւր մասսա իր ինքնուրոյն առանձնա-
յատկութիւններն ունի. ի հարկէ մենք պէտք է պաշտ-
պանենք ընդհանուր բարեփոխութիւնները, բայց պիտի
աւելացնենք նաեւ մի պլիւս: Եթէ թուրքիայում լինի
մի կազմակերպութիւն, հայերը դարձեալ պիտի լինեն
առանձին կազմակերպութիւն, որպէսզի պաշտպանեն
դասակարգային ու կուլտուրական ազգային առանձ-
նայատկութիւնները: Ուրեմն մենք եղել ենք օժանդա-
կող եւ ոչ ակտիւ մասնակցող, տեսակէտի փոփոխու-
թիւն չի կարող լինել, պէտք է մշակել միայն տակտի-
կան: Միանում եմ Ղարիբի առաջարկին՝ կազմել յանձ-
նաժողով տաճկահայերից եւ ուսուհայերից, 3-7 հո-
պի. թող նրանք մշակեն եւ ներկայացնեն Ընդհանուր
ժողովին:
Գարեգին Խաժալ.— Համահայկական Դատ կայ,
կայ Հայկական Դատ, ասում են, — ես դրան դէմ եմ:
Ես կ'ասեմ, կայ ուսուհայկական դատ եւ կայ տաճ-
կահայկական դատ: Այստեղ ազատագրական է, այս-
տեղ՝ դասակարգային: Մի ընդհանուր կէտ որ կայ,
դա ազգային կուլտուրան է. առանց պանրամիստա-
կան միտումների, ստեղծել այնպիսի դրութիւն, որ-
տեղ ժողովուրդը ազատ արտայայտէ իր կուլտուրան,
ընդունակութիւնը: Այստեղ ընդունելով դասակարգա-
յին կոիւ, մնում է ազգային կուլտուրայի խնդիրը.
պէտք է եւ ուշադրութիւն դարձնել այն կողմ. ընդ-
հանուր կէտն է կուլտուրան: Եթէ զուտ մարքսիստա-
կան տեսակէտով նայենք, այնքան կը հետաքրքրուենք
որքան Ձեւանդիայի վիճակով.— բայց այդպէս չի կա-
րելի ասել, այստեղ ազգային է: Դիպլոմատիան միշտ
էթնոգրաֆիայի(49) վրայ է ուշք դարձնում.— Ղարի-
բը սխալուում է, անվերջ կարելի է վիճել, մանաւանդ
մեծամասնութիւնս գիլիստաններ(50) ենք: Թողնում
եմ թէօրիաթեականը(51) եւ անցնում գործնականին:
Այստեղ ասում են կովկասահայերը պասսիւ են եղել.
սխալ է չափազանց: Մենք ոչ միայն ակտիւ ենք եղել,
այլ եւ խեղդել ենք տեղացիների ձայնը, նրանք նոյնիսկ
բողոքում էին: Մենք ունեցել ենք շատ զօրեղ ակտիւ

մասնակցութիւն. ներսի ձայնը միշտ խեղդուել է: Վճիռներ կայացնողը միշտ եղել են ուսուսանողները: Ես պնդում եմ՝ կենսունակ Մարմինը պէտք է լինի այնտեղ: Ակտիւ գործունէութիւն կովկասահայերն են արել, գործադրել են տաճկահայերը. այստեղից գնացողը գործիչ է կոչուել: Նիւթական ոյժ այստեղ լինելով, ձայնի ոյժն էլ այստեղ է եղել.— չես անի, չեմ տայ: Պէտք է փոխել տակտիկան. տեսակէտը փոխելը դուրս է Դաշնակցութեան սահմանից: Պէտք է ծանրութեան կենտրոնը փոխել, ներս տանել(41): Մենք մատակարարող պէտք է լինենք, որպէսզի Երկրի պահանջի իսկական արդիւնք լինի: Եթէ քննադատողների վրայ յարձակուում ենք, դա չի նշանակում ճշմարտութիւն չկայ: Մենք պէտք է փոխենք տակտիկան. կովկասը կը (պէտք է) գրկուի հրամայող լինելուց եւ ներսից կը լինի: Այժմ՝ թէ ինչպէ՞ս կարող էք աշխատաւորների պաշտպան լինելով, կարեւոր միջոցները մատակարարել: Ես կ'ասեմ, — եթէ աշխատաւոր դասակարգը չի կարող այնքան միջոց մատակարարել, այն ժամանակ տեղորոշողական միջոցներով փող հաւաքող մի Մարմին կը ստեղծենք. — սա մի պրակտիկական առաջարկ:

Ազ(Եֆսամիր) Պ(Ապովեան).— Ոնդիրն այն չէ, թէ կա՞յ արդեօք տաճկահայերի դատ՝ թէ ոչ, դրա մասին ոչ ոք չի վիճում: Քանի գոյութիւն ունեն տաճկական պայմանները, քանի կեանքի, գոյքի եւ պատուի անապահովութիւնը կը մնայ պետական սխտեմ՝ տաճկական դժոխքի, միշտ էլ պատմական անհրաժեշտութիւն կը լինի յեղափոխել կեանքի պայմանները եւ ստեղծել մի իրաւակարգ, որ ապահովի մարդու տարրական իրաւունքները: Այսպիսով տաճկահայական դատը պատմականօրէն անհրաժեշտ եւ արդար դատ է, որի գոյութիւնը այստեղ ոչ ոք մտադիր չէ կասկածի ենթարկել, եւ որը կարեւորութիւն (կարիք) չունի որեւէ պատճառաբանութեան: Ոնդիրը նրանումն է թէ այդ հարցը գոյութիւն ունի՞ կովկասեան դաշնակցականների համար եւ եթէ ունի՞ ի՞նչ ծաւալով: Մինչեւ այժմ տաճկահայական խնդիրը ծանօթ է եղել մեզ այն խտէրողությամբ, որի արտայայտչներն եղել են անլիզալ գրականութեան մէջ Դրոշակը, իսկ այստեղ Ռուսաստանում՝ Ահ.ը (Ղարիբ)(44): Այդ իտէրոգիան նոյնքան պարզ է, որքան պարզ է Տաճկահայաստանի իրականութիւնը: Այնտեղ՝ Երկրում, բռնաբարուած մարդկային իրաւունքներ եւ յեղափոխական բողոքներ, այստեղ՝ գրականութեան մէջ՝ լացող եւ բողոքող բանաստեղծութիւն եւ քստմնելի փաստեր արձանագրող հրապարակախօսութիւն: Գալով այն միջոցներին, որով պէտք է ազատուի մեր ժողովուրդը բռնապետական լծից, դրանց մասին էլ մեզ ցոյց են տուել միայն մի միջոց.— դիպլոմատիա(42), որի միջամտութիւնը առաջ բերելու համար շեշտել են յեղափոխական բռնկումների եւ եթէ հնարաւոր է ընդհա-

նուր ապստամբութեան անհրաժեշտութիւնը: Ահա այս մտաւորական ու բարոյական մթնոլորտում կովկասահայերը կլանուած են եղել Երկրի դատով եւ դժբախտաբար վկայ են եղել անընդհատ անյաջողութիւնների, որոնք չմտեցնելով խնդիրը իր լուծման, միեւնոյն ժամանակ վատթարացրել են մեր ժողովրդի վիճակը: Այս երեւոյթը բնականաբար առաջ պիտի բերէր ոչ միայն ընդհանուր լքումն, այլեւ՝ մինչեւ հիմա եղած գործունէութեան թէ՛ ծրագրի, թէ՛ տակտիկայի (փոփոխութեան) անհրաժեշտութիւնը: Այդ վերաքննութեան անհրաժեշտութիւնը, բնականաբար պիտի ըզզացուէր մանաւանդ կովկասահայ դաշնակցականների համար, որովհետեւ անկասկած է որ անյաջողութիւնների պատասխանատուութեան ամենախոշորագոյն մասը ընկնում է նրանց վրայ, քանի որ նրանք են զլխաւորապէս ղեկավարել այդ շարժումը, նրանք են տոն տուել: Իսկ եթէ հաւատանք նոյնիսկ մեր շարժեցում լուրջ կարծիքներին, նոյնիսկ նրանք են առաջ բերել այդ խնդիրը: Այսպիսով առաջ է գալիս պարզ ի պարզոյ մեր հասարակական-յեղափոխական խղճի հարցը: Վերաքննութեան խնդիրը հասունացաւ մանաւանդ շրջանօրէն այն պատմական նոր Փազիսի(52), որի մէջ մըտաւ Ռուսաստանը եւ մասնաւորապէս կովկասահայերի կեանքը: Մենք մինչեւ այժմ ղեկավարում էինք տաճկահայական ծանրակշիռ խնդիրը՝ մնալով en masse(53) սոսկ դիլեմատիաներ(50), ապրելով իսկապէս յեղափոխական անհատների, գնահատելի հերոսների հովանու տակ. իսկ այժմ երբ յեղափոխական ալիքը ծաւալեց մեր աչքերի առաջ ամբողջ Ռուսաստանում, երբ հայ-թուրքական ընդհարումները ամբողջ մի տարի դառն իրականութիւն դարձրին այն երեւակայութիւնները, որ ունէինք սահմանից այն կողմը ապրող մեր եղբայրների կեանքի մասին, այժմ, երբ եւ մեր ժողովրդին տեսանք իրական գործի մէջ, — այժմ այս փորձերից յետոյ բնականաբար աւելի բարձրացել է երեւոյթները քննելու մեր կրիտիկիան(54), մենք աւելի խստապահանջ ենք դարձել զէպի մեզ: Եւ այդ է պատճառը որ 904 թուի Ընդհանուր ժողովից սկսած ամէն մի Ռայոնական ժողովում՝ քանի գնում այնքան աւելի որոշակի է շեշտուում այն միտքը, որ դնալ այնպէս, ինչպէս մինչեւ հիմա գնացել ենք, անկարելի է: Պէտք է յանուն ուսուսանողների եւ թէ տաճկահայերի շահերի՝ վերաքննենք մեր դիրքը: Այդ է պատճառը, որ ասում ենք, թէ փաստօրէն դիլեմատիաներ(50) մնալով եւ տաճկահայերի խնդիրը դարձնելով եթէ ոչ միակը, գոնէ ամենազլխաւորը, մենք մի կողմ ենք թողնում այստեղ մեր ունենալիք սոցիալիստական գործունէութիւնը: Տաճկահայ խնդրի պատրուակով մեր կազմակերպութեան շարժերը լցնում են եւ կը լրցեն բուրժուական տարրերը, որոնք հայ-թուրքական համագումարում արտասանած իրենց ճառերում մի անգամ էլ անկեղծութիւն ցոյց տուին, որ կ'աշխատեն

մօտ լինել Դաշնակցութեան, նրա գործունէութիւն փոխելու(?) Տաճկաստան եւ այսպիսով հեռացնելու իրենցից սոցիալիզմի ուրուականը: Այդ պատրուակալ յաջողութեամբ կը խանգարեն եւ զտման հարցը, մեր շարժեցում գտնուած մանր-բուրժուական եւ այլ ոչ-սոցիալիստական տարրերը, որոնք արդէն փորձեր են անում գաւառներում(?): Տաճկահայերի աստիճանաբար վտանգուող դրութիւնը եւ մեր բռնած դիրքի վերաքննութեան անհրաժեշտութիւնը ստիպում է մեր ընկերներից շատերին այս կամ այն կոնկրէտ բացասական առաջարկութիւնն անել: Դուք լսեցիք, որ մէկն առաջարկեց դադարեցնել զէնքի փոխադրութիւնը, որի պատճառով կարող են ամբողջ դիւղեր աւերուել, — իմ կարծիքով նրա մէջ խօսում է մի յեղափոխական, որ լաւ դիտակցելով հանդերձ զէնքի կարեւորութիւնը, այնուամենայնիւ անհրաժեշտ է համարում կանխ զննել այն ներքին ձայնին, որ հնչեցնում է նրա մէջ Ռուսաստանիների(55) սխտեմը եւ մանաւանդ շարքաստիկ սոլտասուկի(56) բազարը: Մօտիկ անցնելի դառն փորձերը, որ ունեցանք Ռուսաստանում, համոզուած եմ՝ մեզանից ամէն մէկին կը ստիպեն մի մի այդպիսի կոնկրէտ առաջարկութիւններ անել եւ տաճկահայերի դատի վերաբերմամբ, մի դատի, որի մասին մինչեւ այժմ այնքան հեղինակաբար էր դատում ամէն մի դաշնակցական: Բայց խնդիրը վերաբերում է ոչ թէ կոնկրէտ առաջարկութիւններին, այլ ամբողջ սխտեմին եւ վերաքննութիւն պիտի կատարուի ոչ թէ մեր այստեղի փորձերի անալոզիայով, այլ հենց Երկրի իրականութեան փաստային և բազմակողմանի ուսումնասիրութեան (վրայ): Ասում են դիպլոմատիան պիտի լուծի այդ խնդիրը. ես դիպլոմատ չեմ եւ չեմ ուզում չզիտցած բանիս մասին խօսել, միայն հարցնում եմ, ինչո՞ւ մինչեւ այժմ չմիջամտեց եւ ի՞նչ պայմաններում նա կը միջամտի. արդէն շարունական է այն միտքը, թէ կը միջամտի Եւրոպան միայն իր շահերի համար. որո՞նք են այդ շահերը այն երկրում, որ իր բնական տնտեսութեամբ մի չնչին շուկայ է ներկայացնում եւ այն էլ միայն Ռուսաստանի համար: Ի՞նչ է լինելու Ռուսաստանի դերը տաճկահայական խընդրում: Եթէ փրկութիւնը միայն Ռուսաստանի առաջխաղացութեան մէջ է, մի միտք, որ անհաւանական չի թուում մեզանից շատերին, այդ զէպընք ի՞նչ դիրք պիտի բռնէ սոցիալիստական Դաշնակցութիւնը, որ միեւնոյնն է՝ երբեք հաշտուելու չէ թէկուզ ազատ Ռուսաստանի կառավարութեան հետ, որ լինելու է թէեւ սահմանադրական, բայց բուրժուական: Մեզ ասում են, որ տաճկահայերի ազատագրութիւնը ապահովելու համար, անհրաժեշտ է եւ հարեւան ժողովուրդների գործակցութիւնը եւ մատնացոյց են անում այն, որ Դաշնակցութիւնը իր 15 տարուայ գործունէութեան ընթացքում թէ՛ իր ծրագրի եւ թէ՛ ընդունած տակտիկայի հիման վրայ քարոզել է Երկրի բոլոր ժո-

ղովուրդների համերաշխութիւնը: Մի բոլոր անգամ չեմ կասկածում, բայց հարցնում եմ ինչո՞ւ դժբախտ անհրաժեշտութիւն ունենք մեր ուժերի մի մասը սպառելու քրտերի հետ ընդհարման գործում: Պրոպագանդայի պակասութիւնն է պատճառը, թէ այն հանգամանքը, որ հարեւան ցեղերը չնորհիւ իրենց տնտեսական իրաւական դրութեան, չեն կարող դաշնակցել մեզ եւ հետեւաբար անհրաժեշտ է որ մի անգամ ընդմիշտ հրաժարուենք իլիւզիաներից(56) եւ յեղափոխական ձեռնարկների պատրաստուելիս եւ հասարակական ոյժերը չափելիս այդ խոշոր միևնույն էլ նկատի ունենանք իրրեւ փաստ: Գուցէ այստեղ էլ դեր է կատարում այն դժբախտ տրագիկը, որի մէջ ընկել ենք եւ այստեղ, վրացիների վերաբերմամբ, որոնցից ընտրել ենք մեզ դաշնակից հենց այն տարրերը, որոնց հետ ունենալով ծրագրային նոյնութիւն, ամէն օր ստիպուած ենք սպասելու հրաթափութեան նորանոր անակնկալների: Ընկ. Անտոնը երէկ ակնարկեց ի միջի այլոց եւ այն, որ երիտասարդ թուրքերը այժմ աստիճանաբար վերածուում են կարեւոր ընդդիմադիր ուժի, որին մեր ընկերները լուրջ ուշադրութիւն են դարձնում իրրեւ դաշնակիցների խմբի: Ընկ. Անտոնը բացատրեց, որ արդէն կարողացել են մեր ընկերները երիտասարդ թուրքերի հետ փոխադարձաբար հասկանալ միմեանց եւ գոնէ բարոյապէս կապուել, եւ թէ դժուարութիւն է առաջ գալիս միայն Ֆեդերացիայի պատճառով, քանի որ նրանք ցենզրալիստներ լինելով՝ պահանջում են ամբողջ երկրի Սահմանադրութիւն, իսկ մենք ապակենդրոնացումն՝ Ֆեդերատիւ սկզբունքներով: Եթէ իրաւ երիտասարդ թուրքերը կարեւոր ընդդիմադիր ոյժ են եւ դժուարութիւնը միայն Ֆեդերացիայի մէջն է, ապա ուրեմն ես գոնէ անհատականապէս կ'առաջարկէի հրաժարուել դրանից եւ միանալ երիտասարդ թուրքերին, որովհետեւ մեր ժողովրդին օդի չափ անհրաժեշտ է սահմանադրութիւնը, իսկ տիրապետելուն սովոր ու սուլէտ, արտօնեալ վիճակ ունեցող թուրք ժողովրդից պահանջել, որ նա միանայ մեզ հետ Ֆեդերատիվ սկզբունքով, անիրագործելի է եւ ոչ անհրաժեշտ: Սրանք բոլորը հարցեր են որոնք ես դնում եմ առանց լուծելու, որովհետեւ կրկնում եմ, ես չեմ ուզում չուսումնասիրած եւ ինձ անծանօթ խնդիրների մասին վճռողական կարծիքներ յայտնել: Միայն կ'ասեմ, որ անհրաժեշտ է հնար եղածին չափ ծանօթանալ ոչ միայն մեր յեղափոխական ընկերների կարծիքների հետ, որոնք իրրեւ խիստ անհատական տեմպերամենտների(57) արտայայտութիւն, յաճախ սուբեկտիւ(58) են լինում, եւ որոնք շատ յաճախ չեն արդարացել իրականութեան մէջ, այլ եւ կարեւոր է իմանալ եւ մեր ժողովրդի կարծիքը, մանաւանդ որ չունենալով դատակարարային խոշոր տարրերութիւններ եւ տանչուելով միեւնոյն ցաւով, այդ կարծիքը ճիշդ է (որ) կը լինի ժողովրդի ձայն: Պէտք է կազմակերպել այդ կարծիքը, լինի նա

ընդհանուր մամուլի, մասնաւոր ուսումնասիրութիւնների, թէ նոյնիսկ մի հայկական համազումարի միջոցով: Իսկ դրա հետ միասին պէտք է Կովկասահայ Դաշնակցութիւնը գրադուի իր քաղաքական եւ տնտեսական պայմանների առաջ մղած սոցիալիստական - դասակարգային խնդրով: Սոցիալիստական աշխատանքը կը բարձրացնէ աշխատաւոր մասսաների գիտակցութիւնը, նրանց յեղափոխական տեմպերամենտը եւ, թէեւ մենք կը գրկուինք տաճկահայ դատի պատուակով Դաշնակցութեան շարքերում մնացող ոչ-սոցիալիստական տարրերից, բայց դորա փոխարէն մեզ մօտ կը մնան իրենց տաճկահայ եղբոր դատին աւելի ակտիւ եռանդով նուիրուած բանուորութիւնն ու գիւղացիութիւնը:

Ռոստոմ. — Խոշոր թիւերի մարտիկներն են Ալ(եքսանդր) Պ(ապովեա)նի ամէն մի միտքը: Բոլոր մեր անցեալ ժողովներում նկատուելի են երկու հոսանքներ, — մէկը դրանից միշտ պէսսիմիստ(59) է եղել, իսկ միւսը կողմնակից, յօգուտ: Այն կարծիքները որ այստեղ յայտնուած են՝ նորութիւններ չեն: Օր.՝ Օփոհանը (Օքոյեան?) առաջ ասում էր, որ ընդհանուր ապստամբութիւն անհնարին է, պէտք է տեռորիստական լինի. ասում են զէնք չպէտք է փոխադրել. — նշանակում է չեն հաւատում այն կերպին, որ մենք ընդունել ենք: Ասում են ժողովրդի կամքը պէտք է հարցնել. — բայց մասսան միշտ հակայեղափոխական է: Մենք պէտք է հարցնենք յեղափոխական մասսային: Իփայրմատիա, որ ասում են, դա չպիտի լինի ժօրէաներ, Բէրէլներ, այլ պէտք է լինեն հենց մեր թշնամիները, գուցէ ինք՝ Վիլհելմը: Սմբատն ասում է՝ եւրոպական կապիտալը մուտք չէ գործելու, մուտք չէ գործել, որովհետեւ չկայ հանգիստ, չկայ ապահովութիւն, կարգ. բայց նա կը մտնի: Բացի դրանից նա նախադուռ է, նա միակ ճանապարհն է Ռուսաստանի համար, դէպի Միջերկրական ծով: Ռուսաստանը այժմ, եսպոնական պատերազմից յետոյ, չունի ոչ մի ծով, որ ձմեռը սառած չլինի: Ռուսաստանը պէտք է առաջ մղուի, նրան պէտք է դիմադրեն. — մենք պէտք է օգտուենք շահերի այդ հակադրութիւնից:

Ասում են փոփոխութիւն չի եղել. — սխալ է: Ներկայումս մեր ձեռք բերած ոյժը Տաճկաստանում այն չէ, ինչ եղել է առաջ: Եթէ մենք մեր յեղափոխական ընթացքով չկարողացանք թուրքերին դաշնակից դարձնել, բայց մենք կ'ունենանք հենց նրանց մէջ յեղափոխական ոյժ, որից պիտի օգտուենք: Երիտասարդ թուրքերը իրենք են ասում, որ իրենք իրենց ամբողջ շարժման մէջ պարտական են մեզ: Յետոյ թէ կովկասահայերի դործունէութիւնը Տաճկահայաստանում ակտիւ է թէ պասիւ. — ես կ'ասեմ՝ ակտիւ թէ պասիւ, եղել է. ես եկել եմ այն եզրակացութեան, որ գերակշռող դեր կատարել են տաճկահայերը: Ծիշդ է, այդ շարժման մէջ տարուած է եղել մեր ամբողջ ին-

տելիգեցիան. — եւ դա է (որ) ասում են մասսայական: Կովկասը կարող է արտադրել ոյժեր, որոնք տաճիկներին մէջ կը մղեն պրոպագանդան: Մենք անհրաժեշտութիւն չենք գտնում, որ կովկասահայերը գնան, բայց եւ այնպէս Դաշնակցութիւնը պէտք է տայ ռազմական ղեկավարներ: Իրողութիւնը ցոյց տուեց, որ այստեղի կուրի ժամանակ ղեկավարները տաճկահայեր էին, ուստի հարկաւոր է տալ միայն պրոպագանդայի մարդիկ: Ասում են բուրժուաներ են մտել. բուրժուաներ առաջ էլ կային, բայց ոչ մեր շարքերում, այլ լոկ իրրեւ օժանդակողներ, այժմ էլ նոյնն է. եթէ վերջերս նրանք մտան, դրա պատճառը ինքնապաշտպանութեան հարցն էր: Մենք, ի հարկէ չենք ասել՝ որ դրանք պէտք է մնան, մենք նրանց առաջ կը դնենք մեր ծրագիրը եւ այդպիսով կը կատարուի զտուժը առանց արգելքի: Ասում են թիչ տոկոս ենք կազմում. — բայց դա նշանակութիւն կ'ունենար, եթէ մենք մեր գործունէութիւնը դրած լինէինք ազգայնական հողի վրայ: Բայց մենք այդպէս չենք դնում: Մենք մեր գործունէութիւնը դնում ենք 6 վիլայէթներում բոլոր ազգութիւնների համար: Մենք ձգտում ենք (գործի մէջ) քաշել ոչ միայն թուրքերին, այլ եւ քիւրտերին:

Ստեփան. — Այստեղ խնդիր են դնում թէ մեր շարքերում բուրժուաներ կան, ասում ենք՝ կը գտնենք: Այստեղ, ես կ'ասեմ՝ մեր սխալը մեր ընդհանուր գործունէութեան սխալ սիստեմի վրայ է: Ամէն մի ժողովուրդ իր քաղաքական իտէալներով պիտի հասունանայ այն չափով, ինչ չափով հասունացած են նրա տնտեսական պայմանները: Երբ մի ժողովրդի, ցեղի դոյութեանը վտանգ է սպառնում, այդ դէպքում քաղաքականը առաջին տեղն է բռնում, այդպիսին շարունակ դիմում է զինուած ապստամբութեան: Մեր դատը հայ ժողովրդի Ֆիզիքական գոյութեան դատն է. ուստի եւ մենք պիտի պարզենք այդ դրօշակը: Ամէն մի կուսակցութիւն պիտի ունենայ որոշ պլատֆորմ(46) եւ շարքեր, մեր շարքերը պիտի լինեն բանուորները եւ արհեստաւորները: Մասսան մասնակցել է, սխալ է թէ նա չէ մասնակցել, բայց թէ ինչ ձեւով է մասնակցել, դա այլ բան է: Մենք ապրել ենք այդ դատով, բայց գործել չենք. չենք գործել, որովհետեւ յեղափոխականներ չենք եղել. սովորաբար մեր գործը ծանրացած է եղել փոքր բուրժուաների վրայ: Մենք ժողովուրդը հպատակեցրել ենք, չենք պատուաստել մաքուր յեղափոխական իտէալներ. Տաճկաստանում չկայ յեղափոխական դիտակցութիւն ժողովրդի մէջ: Եթէ չենք ուղում տողմատիկ լինել, ապա պէտք է ամէն ինչ անալիզի ենթարկենք: Արել ենք զանազան ցոյցեր, բայց դրանց մէջ որոշ սիստեմ չէ եղել: Մենք չենք ունեցել մի ելակէտ՝ որով չափէինք մեր գործունէութիւնը: Մենք ուշադրութիւն ենք դարձրել միայն փողի վրայ եւ տուել ենք ջոռ աշուղներ:

Ասում են՝ 6 վիլայէթների անջատման խնդրում,

երիտասարդ թուրքեր հակառակ են. ես կ'ասեմ, ոչ միայն դռքա, այլեւ այստեղի թուրք ինտելիգենցիան նոյն կարծիքին է: Նրանք ուզեցել են մի խոշոր պետութիւն ունենալ, եւ այդ վիլայէթների հարցին նախում են իբր իրենց ցանկութիւնը կտոր-կտոր անող երեւոյթի վրայ: Ասում են՝ թուրք ժողովուրդը մի ցեղ է, որը չի կարելի վերածնել. — դա ի հարկէ սխալ է: Մենք պիտի թողնենք ամէն ինչ, պիտի սկսենք տնտեսական կուր, պրոպագանդ մղենք. թէեւ չկայ այնտեղ պրոլետարիատ, բայց կայ մասսա, որը ունի իր տնտեսական կուրը, եթէ մենք այդպէս անենք, բաժանում առաջ չի գայ: Եթէ ամբողջական կուր անելու լինենք, նա առաջ կը գայ, եւ բաժանման խնդիրը կ'արժարծուի:

Կոմս. — Այստեղ արտայայտեցին մի շարք ճշմարտութիւններ, բայց աւելի շատ սխալ հիմքերի վրայ դրած հայեացքներ եւ տեսակէտներ, դրանց մասին երկար կը լինէր խօսել: Ի հարկէ Դաշնակցութիւնը կը գտուի ինքնստիչեան, երբ հալածանքը սկսուի. նա գուցէ եւ բաժանուի, երբ խնդիրը հասունանայ: Բայց ես կ'անցնեմ իրականութեան. բաւական ժամանակ չէ որ թողել եմ Երկիրը, այնպէս որ կը խօսեմ իրականութիւնը, որը թէպէտ դառն, անհաճոյ կը լինի, սակայն այնուամենայնիւ իրականութիւն է:

Դաշնակցութեան գործունէութիւնը Երկրում արտայայտուել է մի քանի ֆակտորների(27) մէջ. ես տեխնիկայի մասին չեմ խօսի, այլ կը խօսեմ դադափարի մասին: Դաշնակցութիւնը առաջին անգամ այնտեղ ձեւակերպեց միտքը, դադափարը: Դաշնակցութեան դերն է եղել ըմբոստներին ի մի հաւաքել, կազմակերպել, դնել մի որոշ հողի վրայ: Նա հանեց կայծերը մոխրի տակից: Դաշնակցութեան օրօրոցը եղել է Տաճկաստանը, եւ այստեղից մղուել են այնտեղ, որովհետեւ արիւնոտ երկիրը ողբերում, կապում է հայերին — ռուսահային: Այո, սա եւս չունենալով իր սեփական գործը, միշտ ձգտել է լեռներից այն կողմ, տաճկահայկական արնոտ երկիրը: Դաշնակցութեան ծրագրի եւ իրականութեան մէջ տարբերութիւն կայ: Մրագրի մէջ ունենք քաղաքական, տնտեսական, մտաւոր եւ հեռաւոր նպատակներ: Ենթահիւ իրականութեան մենք չեղուել ենք նրանից: Ես կանգ կ'առնեմ չեղուած իրականութեան վրայ: Մեր նպատակներին հասնելու համար վարել ենք պրոպագանդա, սակայն շատ նեղ չափերով: Մենք մեր քաղաքական նպատակների մասին չենք կարողացել խօսել, մի բան չենք ասել: Մեր գործունէութիւնը Երկրում բաժանուած է եղել մի քանիսի, տեռոր, պարտիզանական կուր, ցոյցեր եւ կենտրոնացումներ: Տեռորներ կատարել ենք օտար պաշտօնեաների դէմ, մեր մասնիչների դէմ, սըրանք իրենց կողմից առաջացրել են բէպրէսիաներ եւ մենք ստիպուած ենք եղել մեղմացնել, թողնել, — այդպիսով մենք չենք կարողացել վերացնել շարիքը:

Պարտիզանական կուրներ մենք ունեցել ենք մեր առաջին տարիներում. նրանք ունեցան իրենց լաւ եւ վատ հետեւանքները, նրանք վերջը աննպատակ համարուեցին եւ դուրս ձգուեցին: Յոյցեր դաւառներում չենք կազմակերպել, արել ենք միայն այն վայրերում, որտեղ եղել են եւրոպական շահեր: Գլխաւորապէս ուշադրութիւն է դարձուել կենտրոնացումների վրայ. կենտրոնացումներ եղել են աշխարհադրական եւ այլ պայմաններով յարմար վայրերում, սակայն հետեւել խստութիւնների(?), — սա էլ անհնարին է դարձել: Այս բոլորը կատարուել են ռուսահայերի ղեկավարութեամբ գլխաւորապէս: Մենք չգիտէինք թէ արդեօք երկրում կա՞ն տարրեր, որոնք ղեկավար կարողանային հանդիսանալ: Դաշնակցութեան մասին ժողովուրդը մեծ կարծիք ունի, Պետոյի օրից նա եղել է հզօր կազմակերպութիւն: Միւս կազմակերպութիւնները եղել են խօսքի կազմակերպութիւններ միայն — իսկ Դաշնակցութիւնը դիմել է գործին: Այդ հաւատն է պատճառ, որ նրանք Դաշնակցութիւնից շատ են պահանջում, քան սա կարող է տալ: Նրանք ունեն քաղաքական իտէալ, սակայն նրանք թագաւորութիւն չեն ուզում: Թագաւորութիւն ունենալ նրանք համարում են երազ, որին չի կարելի հասնել, — նրանք ուզում են միայն իրենց դրութեան բարելաւումը: Նա (Երկրի ժողովուրդը) այդ բանին հասնելու համար իր յոյսը տածում էր Ռուսաստանին. յետոյ երբ Ռուսաստանը թոյլ, եսասէր երեւաց, նա իր յոյսը դրեց իրեն, կովկասահայի եւ ապա դիպլոմատիայի վրայ: Նա հակառակ է այս կամ այն վայրերի բռնկումներին: Նա յանդիմանում է, որ բռնկումներ էք յառաջացնում, իսկ յետոյ թողնում էք իրեն մենակ: Զինեցէք, կը մնանք մի տեղ, միասին կը կուռենք, տարրական իրաւունքներ ձեռք (կը) բերենք: Նա դադատուկ պահանջում է բացարձակ ապստամբութիւն: Այո, նրանք մեզ մեղադրում են, թէ զէնք ունենալով մեզ պաշտպանում էք եւ մեզ թողնում (վան եւ Սասուն): Յեղափոխական տեմպերամենտը թոյլ է մեր ժողովրդի մէջ: Տեսականի մէջ համաձայնում է, իսկ իրականութեան մէջ սարսափում ու ընկճում է: Սակայն իրականութիւնը ժողովուրդը չի կարող արհամարհել. նրա մէջ կան յեղափոխական տարրեր, որոնց վրայ մենք պիտի հիմնենք մեր գործը, — դա նոր սերունդն է, երիտասարդութիւնը, որի մէջ վառ է ըմբոստութեան ոգին, նա սպառնում է բոցեր դառնալ: Կոտորածները տարան երիտասարդութիւնը, իսկ այժմ դրանց ծիւրը՝ երիտասարդ սերունդը կանգնած է առաջնորդելու: Կազմակերպութիւնները մտել են այն օրից, երբ առաջին գործիչն է մտել: Ես կազմակերպութիւնների պատմութիւնից չեմ խօսի. — ասում են կազմակերպութիւնները ծիւր չեն տալիս, այո, չեն տալիս, որովհետեւ դրանք կապուած են լինում գործիչի հետ, որովհետեւ դրանից իւրաքանչիւրը անհատական, իր սիս-

տեմով է կազմակերպում: Օր(ինակ՝) Վազգէնը(60) ընդունում էր պարտիզանական կռիւ, իսկ Գրիգորը՝ խաղաղ(61): Այնտեղ մենք միապաղաղ պրոպագանդայով չենք կարողանում պարապել, որովհետեւ այնտեղ մեր առաջ դրուած է ինքնապաշտպանութեան հարցը: Ընկերները դատապարտում(?) են, որ մեր մէջ մտնում են ամէն տեսակի էլէմէնտներ, — դա բնական է, նոյնը եւ այնտեղ: Ի՞նչ է եղել կովկասահայերի մասնակցութիւնը. — մի մասը պնդում է ակտիւ, միւս մասը՝ պասիւ, երկու կարծիքն էլ ինձ թուում է՝ ծայրայեղ (են): Ակտիւ է եղել, որովհետեւ ռուսահայի սիրտը, հոգին ամբողջովին եղել է այնտեղ, հետեւապէս եւ պիտի արտայայտուէր: Ակտիւ գործադիր՝ պարզ է, չէր էլ կարող լինել: Ի՞նչ վերաբերում է տակտիկային, իսկապէս դժուարանում եմ ասել, տակտիկա չէ եղել, եղեր են փորձեր, հիմնուած բիւրոկրատիայի խաղերի վրայ: Այլ կերպեր էլ կարող են լինել: Դիպլոմատիան մեր գործում մեծ դեր է խաղացել. մեր մէջ թոյլ է եղել դիւանագիտութիւնը, գուցէ հնարաւորութիւն չենք ունեցել, սակայն իրողութիւն է որ տակտիկան եղել չէ եւ մեր ամբողջ գործունէութիւնը, եթէ ջըննենք կը տեսնենք, որ մի միայն ունեցել ենք փորձեր դէպի դիպլոմատիկական աշխարհը: Մեր տակտիկան յարմարեցրած է եղել օրուայ պահանջին: Ես կը խօսիմ միայն Վասպուրականի մասին, գուցէ 6 վիլայէթներից երկուքի մէջ չունենանք զուտ յեղափոխական գործունէութիւն: Մեր գործունէութիւնը եղել է որոշ վայրերում, մնացածները աչքաթող են արուել: Ներկայումս ժողովրդի տրամադրութիւնը վառ է, նա չգիտէ ընկճուել: Ժողովուրդը պահում է իր հերոսին, գուցէ այն հերոսին, որ իր արեան պատճառն է եղել: Յեղափոխական միտքը հասունացած է եւ չի ընկճուել, չնայած քաղաքական ու տնտեսական ճնշումներին: Վերջերս, երբ Կրան-Ալի բէկ հաւաքում էր ժողովրդից գէնքերը, թէեւ ժողովուրդը տալիս էր, բայց եւ այնպէս չորը ծախում՝ նորն էր առնում: Երբ Սասունը քայքայեցին, նա իջաւ դաշտ, սակայն չուտով նա նորից խնդիրներ տուեց, որ թառի վերին կատարներում: Յեղափոխական ոգին իլաթում, Մուշում, Սասունում շատ բարձր էր: Կազմակերպութիւնները այնտեղ ներկայումս դարձել են ժողովրդական: Սասունի ապստամբութիւնը զգացրեց, որ ով չի կազմակերպուում, չի գինուում, նա կ'ոչնչանայ: Նա (ժողովուրդը) ոգի առաւ: Միանում է մեզ հետ, թէեւ Սասունը ընկճուած է: Միտքը հասունացած է, պէտք են ոյժեր, կազմակերպողներ՝ գործը առաջ տանելու համար: Հարկահաւաքներ երբ մտնում են, նրանք զայրացած ուզում են յարձակուել նրանց վրայ. սակայն եթէ նրանք գիտնան, որ կովկասահայերը տարուելով իրենց նեղ մատերիախտական շահերով, չպէտք է մտածեն իրենց մասին, նրանք կը յուսահատուեն. դրանց թելը, դրանց շոքը(?) կը կտրուի:

Տակտիկան այնքան դժուար հարց է, որ այժմեանից որոշել անհնարին է, նա պէտք է յարմարեցուի ժամանակին: Մենք յոռետես ենք, բայց դուք պէտք է դիտենաք թէ ինչպիսի՞ թոյլ պատրաստակամութիւն ունեցողներ են եղել Երկիր մտնողները: Այնպիսի ջարդեր եղան, որ Երկիրը իրանից գործողներ չի կարող տալ: Վասպուրականում եղան 300-400 զոհեր, դրանից յետոյ եկաւ ընկալիքան՝ ջնեց: Այժմս առաջ է գալիս նորահաս երիտասարդութիւնը: Մենք պէտք է տանք գործիչներ, պէտք է հիմնենք մեր գործը ժողովրդի վրայ: Հնարաւոր տակտիկան գտնում ենք ժողովրդի գինման, պրոպագանդայի եւ օտար տարրերի հետ համերաշխ գործելու մէջ: Պայմանները փոխուել են, առաջ յեղ(ափոխական) թուրքերին աքսորում էին Եւրոպա, նրանք զնալով անբարոյականանում էին. իսկ այժմ նրանց աքսորում են ներքին նահանգները, սրանք տանում են պրոպագանդ: Ասում են մենակ ենք գործել, գործակցութեան փորձեր չեն եղել. դրա մասին չեմ խօսի, որովհետեւ բոլորն էլ գիտեն, որ եղել են: Մի քանի խօսք հարեան ազգերի մասին: Գիւրաբերը մի հորդայական ժողովուրդ է եւ կապուած են ցեղապետների հետ: Յեղապետների մէջ հակակառավարական տրամադրութիւն կայ: Նրանք հաւատում են, որ մենք մեր թագաւորութիւնը պիտի ձեռք բերենք: Հայ ժողովրդին նայում են՝ իբրեւ ռաջայի, սակայն դէպի յեղափոխականները մեծ ակնածութեամբ են վերաբերում: Տաճիկները, երբ մշտնում են քիւրտերի մէջ հարկ հաւաքելու, դիմում են նոյն միջոցներին, ինչ որ գործ են դնում հայերի վերաբերմամբ: Եթէ նրանք չեն միանում, դրա պատճառն այն է, որ ցեղական կռիւներ են պատահում, որ թոյլ չեն տալիս բոլորին միանալու ընդդէմ մէկի: Մենք պէտք է աշխատենք մօտեցնել նրանց: Յեղապետների վրայ ես յոյս եմ տածում, նրանց մէջ համակրութիւն գտել ենք: Նրանցից մի քանիսը ցոյց են տալիս գործակցութիւն ուղղակի եւ անուղղակի ճանապարհներով: Գիւրտերի համակրութիւնը այն ժամանակ կարող ենք գրաւել, երբ մենք ցոյց կը տանք մեր ոյժը: Ասորիները, ապրելով մի ապահով տեղ եւ լինելով կուլտուրապէս բարձր, ըմբոստ են եւ կռիւ են մղում կառավարութեան դէմ: Տրամադրութիւն են ցոյց տալիս մեզ հետ միանալու: Հարկաւոր է մղել պրոպագանդա:

Մոմէնտներից պէտք է օգտուենք: Ընկ. Ռոստոմը լաւ նկատեց, որ պետութիւնները ունեն նաեւ աշխարհակալական միտումներ, դրանից պէտք է օգտուել: պէտք է լինել գիտակ: Մեր ցուցական եւ ապստամբական գործողութիւնները պէտք է միատեղ եւ միաժամանակ անել: Ռուսահայ ընկերները անպայման մասնակցութիւն պէտք է ունենան. ձայն, ոչ միայն գործակցութիւն: Մենք պահանջում ենք այն՝ ինչ որ հնարաւոր է, — ուժեղ անձնաւորութիւններ՝ կազմակերպելու համար: Այստեղի շարժումները ոչ ոք չի կարող ժխտել: Հարկաւոր է այդպիսի ուժեղ օժանդակութիւն, որպէսզի երբ Մարտիրոսի (Ռսկանապատ) ասած բաժանումը գայ, Երկիրը պատրաստ լինի:

IXԻՊ ՆԻՍՍ, 2/IV ԱՌԱՌՈՏԵԱՆ

Նախագահում է Արշակ(?):
Արշակ. — Ժողովը բացուած է: Չայնը Սարգսին է: Սարգիս. — Թէպէտ հարցը տաճկահայկական խնդրին է վերաբերում, բայց առ հասարակ խօսում են կազմի մասին. ասում են, որ նրա մէջ բուրժուական էլէմէնտներ(62) կան: Իմ կարծիքով, նրանք խնդրի էութեան մէջ չեն մտնում եւ չիոթում են ժամանակաւորը ընդհանուրի հետ: Մեր կազմակերպութիւնը սկզբից եւեթ ղեկավարել են զատ սոցիալիստ տարրեր. օր(ինակ՝) Խրիստ(63), Սիմոն եւայն: Նրանք են տոն տուել ամբողջ Դաշնակցութեանը եւ գործել յանուն ճնշուածների: Թրքահայաստանի իրականութիւնն է պատճառ՝ որ նրանք սոցիալիստներն չեն գործել: Դաշնակցութեան մէջ երկու կազմակերպութիւն կայ, — յեղափոխական եւ ինքնապաշտպանական. վերջինիս թիւրմացութեամբ Դաշնակցութիւն անունն են տալիս: Դրանց միացումը ընդհանուր ազգային տաղանապի պատճառներով է. տաղանապի բացակայութեան ժամանակ՝ բուրժուական տարրերը առաջ են գալիս եւ ընդհակառակը ոչ-յեղափոխական տարրերը հեռանում են իրաւական(?) կարգերի ժամանակ: Ուրիշ կերպ էլ լինել չէր կարող. — օրգանական ատելութիւն կայ այդ երկու տարրերի մէջ. եւ միանում են դրանք միմիայն բացառիկ պայմաններում: Պնդում են որ կովկասեան մասսան չի կարող մասնակցել տաճկահայկական խնդրում. ճիշդ է, ինձ համար դոնէ ոչ մի կասկած չկայ, — ուզենար, չուզենար՝ չէր կարող մասնակցել: Կովկասեան ներքին խնդիրները քանի գնում ուժեղանում եւ այրող են դառնում, մենք ապագայ Ռուսաստանի բոլոր խնդիրներում՝ պիտի ակտիւ դեր կատարենք, ուրիշ կերպ լինել չի կարող: Կովկասի գործունէութիւնը Տաճկահայաստանում ակտիւ չէ. բայց դրա փոխարէն մենք յեղ(ափոխական) տարր ենք դառել այստեղ: Կովկասի ժողովուրդը օգտուել է տաճկահայ դատից. նա ցոյց տուեց եկեղեցական կալուածների յափշտակման ժամանակ, նա էր որ արեց այն մասսայական ցոյցերը եւ անհատական տեղորոշները, եւ այն էլ այնքան օգտաբեր: Օգուտը շատ մեծ էր, պնդում եմ, հակառակ դէպքում՝ չէինք կարողանայ մինչեւ անդամ պաշտպանուել հայ-թուրքական ընդհարումներին ժամանակ, մենք չէինք ունենայ այն գինուորները ու խմբապետները, որոնք այնքան խոշոր դեր կատարեցին ընդհարումների ժամանակ: Եւ որովհետեւ կովկասեան մասսան չի կարող ակտիւ դեր կատարել տաճ-

կահայկական խնդրում, ասում են, ուրեմն պէտք է բաժանումն առաջ գայ: Սխալ է, արդեօք կովկասեան բանուորութեան շահերը մնաստու՞ւմ են տաճկահայկական խնդրի պատճառով: Եթէ նրան սոցիալիստներն կազմակերպենք, չէ՞նք կարող նրա հոգեբանութեան գոնէ մի մասնիկը պահել արեան աշխարհի ճնշուած հայրենակիցների համար: Ընկերներ, մենք չենք կարող պերմանական սոցիալիստ բանուորի նման զգուշիկ մատերիալիստներ(64) ստեղծել, որոնց բացի սեփական կաշուից ուրիշ ոչինչ չի հետաքրքրում: Մեր բանուորը-աշխատաւորը պիտի դիտնայ ե՛ւ ճնշուածին ձայնակցել, ամենաուժեղ թափով: Հայկական տարրը պէտք է օրինակ լինի բոլորի համար: Թէեւ մենք կրուում ենք երկու Փրոնտում, մի տեղ դասակարգային, միւսում՝ քաղաքական, մարտական, բայց այդ երկուսը կ'ունենան իրենց փոխադարձ ցանկալի ազդեցութիւնը: Ռոսում են պառակտման, Փրակցիայի մասին. պառակտում առաջ բերելը դժուար բան չէ, ամէն մարդ էլ կարող է, ուզում էք ես մի քանի օրում մի Փրակցիա առաջ բերեմ: Ամենայնմար խօսքին անգամ լինում են մարդիկ, որ հետեւում են: Բայց կա՞ն հիմնական կէտեր Փրակցիա առաջ բերելու. — չկան: Մենք աշխատում ենք մի այնպիսի սերունդ ստեղծել, որը բացի իր նեղ կաշուի շահերից, դիտենայ եւ ըմբռնել ընդհանուրը, — պէտք է լայն համամարդկային տեսակետից կրթենք ժողովուրդը: Մենք բոլորս էլ մտածում ենք սոցիալիստներին (սոցիալիստներն ?). սկզբունքային տեսակետներս միեւնոյնն է: Եթէ մեր մէջ կան ընդհարումներ, դա մեր տեժպերամենտների(57) մէջ է: Պէտք է բաժանել(65) ընդունակութիւնները. — տեղական եւ դրսի գործ: Պէտք է ունենանք այնպիսի Մարմիններ, որոնց մի մասը Երկրումն է, միւսը Կովկասում: Երկրորդները պէտք է նպաստեն առաջիններին: Այդպիսիները պէտք է հոգով կապուած լինեն Երկրի հետ: Իսկ մի ուրիշ Մարմին Կովկասում՝ Կովկասի համար:

Ասում են՝ Երկրում մեր տակտիկան պէտք է լինի ինքնապաշտպանողական. դա հակայեղափոխական կարծիք է, — ի՞նչպէս գինել եւ չկոտուել: Ռայան, երբ գինուեց, կը յեղափոխականանայ, կ'ապստամբուի, — դա պարզ է: Գալով Աբրահամին, որ ասում էր. «Մեր գոյութիւնը պահպանում ենք, որ ասենք Ռուսաստանին՝ արի տիրի մեզ», — դա աւելի քան հակայեղափոխական միտք է, ամօթ է: Ընկերներ, չէ՞ որ մենք հաճախն առաջադիմութիւն ենք արել տաճկահայկական խնդրում: Հիմա Երկրում գէնք չեն ծախում, չեն փճացնում, այլ իրենք են գնում, հիմա ստրուկը յեղափոխականացել է, գիտակցական տարր է դառել, ուրեմն մեր օգուտը շատ հսկայական է: Դիպլոմատիայի մէջ նոյնպէս շատ յառաջադիմական քայլեր ենք արել, — յիշեցէք 97 թուականի(?) Ձէյթունի դէպքերը, 904ի Սասնոյ դէպքերը. առաջինում՝ դէպքերից

վեց ամիս անցնում է նոր են ուշադրութիւն դարձնում, իսկ վերջինում՝ դեռ ապստամբութիւն չսկսած անդ- լիական եւ Ֆրանսական կոնսիւլներին կարգադրուում է իսկոյն գնալ Սասուն եւ դէպքերի հետ տեղն ու տեղը ծանօթանալ: Բացի դորանից, չէ՞ որ եւրոպական հա- սարակական կարծիքը յօգուտ մեզ՝ հսկայական քա- յեր է արել: Ընկերներ, 98 թուականից է որոշուել Սասուն զէնք մտցնել: 3-4 տարի, ոչակցիա է եղել: Ընդամէնը 1 տարի ենք միայն աշխատել, եւ դորա հա- մար է որ գործը վիժել է:

Ներկայացութիւնն այս է.—

1. Տաճկահայկական դատը շարունակել նոյն ուժեղ թափով:
2. Տակտիկայի մէջ ուժեղ սխալներ չեն եղել, — շարունակել նոյնը, գլխաւոր ուշադրութիւնը դարձնելով Ներկրի վրայ, իսկ իբր արձա- դանդ՝ նաւահանդստային կենտրոններում ցոյ- ցեր եւայլն:
3. Կովկասի եւ Ներկրի շահերի մէջ հակասութիւն չկայ, — այստեղ էլ կը տարուի, այստեղ էլ: Ինչ վերաբերում է այն երէկուայ առարկութեա- նը, որ մենք մեր մասնակցութեամբ տակտիկայի խնդրում, ճշուում ենք մեր ձայներով՝ Ներկրի ձայնե- րին, դա սխալ է: Միշտ տակտիկան որոշել են իրենք: Ոսկանապատի ներկ(այացուցիչ).— Այստեղ մի տեսակ դժգոհութեամբ են լսում Դաշնակցութեան հասցէին կպած քննադատութիւնը. բայց հարկաւոր է այդ վերաբերմունքը թողնել եւ լսել բոլոր քննադա- տութիւնները ամենալայն շափով:

Ճիշդ է, որ մեր այստեղի գործունէութիւնը պաշ- տօնապէս սկսուեց Յունիս 12ի օրէնքից յետոյ. բայց դեռ 1898 թուին, երբ Խմբագրութիւնը փոխուեց եւ Դրօշակում սկսեցին հրատարակել «Կովկասեան խապ- րիկներ»-ը, դա արդէն ցոյց էր տալիս, որ դաշնակցա- կան շրջաններում մի փոփոխութիւն էր առաջ եկել, Ռուսաստանում գործելու տեսակէտից, — եւ ես մեր տկտիւ գործունէութիւնը Ռուսաստանում համարում եմ 1898 թուից: «Կովկասեան խապրիկներ»-ը արդէն սկսեցին մտքեր պատրաստել դրա համար, եւ եթէ եկեղեցական կալուածքների գրաւումը մենք դիմաւոր- րեցինք այդպիսի բուն ցոյցերով, պատճառը Ընդ- հանուր Դաշնակցութեան երկարատեւ յեղ(ափոխական) գործունէութիւնն էր, իսկ մասնաւորապէս «Կով- կասեան խապրիկներ»-ի ազդեցութիւնը: Սա իմ անհա- տական կարծիքն է:

Յեղափոխական կուսակցութիւնը իր ծրագիրը եւ տակտիկը յարմարեցնում է այն երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմաններին, որտեղ նա գործում է:

Թուրքիայում տնտեսութիւնը շատ վայրերում եւ գլխաւորապէս հայկական նահանգներում, դեռ գտնու- ւում է այն շրջանում, որ կոչուում է բնական տնտե-

սութիւն: Ազգաբնակութեան մի խոշոր տոկոսը դեռ գտնուում է հորդայական վիճակում: Դասակարգային զիջֆերենցիացիա(66) դեռ չէ կատարուել: Այդ պատ- ճառով մենք մերժեցինք թրքահայկական դատը դա- սակարգային հողի վրայ դնել. նա ընդունեց ընդհա- նուր ազգային ազատագրութեան գոյն:

Մենք սկսեցինք կուռել եւ այստեղ եւս գործու- նէութեան նախագիծ մշակեցինք, բայց մենք նկատե- ցինք որ պայմանները այստեղ նոյնը չեն: Այստեղ ո- րոշ վայրերում ինդուստրիան(67) հասել է զարգաց- ման ամենարարձր աստիճանին՝ եւրոպական մտքով: Որոշ կերպով աչքի են ընկնում հայ բանուոր դասա- կարգ եւ խոշոր կալուածատիրութիւնից կախուած դիւղացիութիւն: Մենք ընդունեցինք որ այստեղ թէեւ ընդգրկելու է ե՛ւ ազգային ընդհանուր շահերի պաշտ- պանութիւնը, բայց սոցիալական հարցերը բռնելու են կարեւորագոյն տեղերից մինը: Մենք որոշեցինք ստանձնել հայ բանուորութեան եւ դիւղացիութեան տնտեսական կուռի ղեկավարութիւնը, ընդդէմ դրա- մատիրութեան եւ կալուածատիրութեան: Ուրեմն տարբեր տնտեսական սոցիալական պայմանների շնոր- հիւ՝ մենք կուռը դրինք տարբեր սկզբունքների վրայ: Այնտեղ՝ համազգային, այստեղ դասակարգային: Եւ ստացուեցին երկու տարբեր ծրագիրներ: Բանուորու- թիւնը կազմակերպելով՝ մենք չենք կարող այլեւս բուրժուայից դրամական օժանդակութիւն ստանալ կուռի համար: Իսկ մեզ հարկաւոր է նրա դրամական օջակցութիւնը տաճկահայկական դատի համար: Ո- մանք ասում են, որ տեւորով բուրժուայից փող կը վերցնենք. ոմանք էլ ասում են, որ նրանց կ'ասենք թէ ձեզնից առած փողը տաճկահայկական հարցի հա- մար ենք ծառայեցնելու: Ուրեմն մենք ունենալու ենք տարբեր կասսաներ Ռուսաստանի եւ Թուրքիայի գոր- ծունէութեան համար: Այդ տարբեր կասսաների՝ ե- կամուտների ազդիւրը տարբեր է, իսկ փող հաւաքե- լու ձեւերը՝ նոյնպէս տարբեր, — մի դէպքում կա- մաւոր սուրբ, միւս դէպքում՝ տեւոր:

Տեսնում էք, որ հենց միայն փողի գործում նոյն իսկ, մենք ստիպուած ենք այդ երկու դատը բաժանել իրարից:

Այսպէս, կը գայ մի օր, որ մենք կովկասեան կուռ- կը տանենք պարլամենտական ճանապարհով, իսկ Թուրքիայում, այդ նոյն բոպէին, ստիպուած կը լի- նենք զինուած ապստամբութիւն հրատարակել (հուշա- կել):

Ուրեմն կուռի տակտիկան եւս տարբեր է այստեղ եւ այնտեղ:

Մեր ընկերներից ոմանք առաջարկում են Արեւել- եան Բիւրոյին կից, մի յատուկ Մարմին ունենալ, որ միայն տաճկահայկական դատով զբաղուի, — մարդիկ որ այդ առաջարկը անում են, հենց մեր Թուրքահայ ընկերներից, չեն նկատում, որ դրանով արդէն ստեղ-

ծում են սաղմը, որով թրքահայկական Մարմինները զատուում են: Նրանք անգիտակցարար կուսակցու- թիւնը դնում են անջատման ճանապարհի վրայ:

Ուրեմն, ինչպէս տեսնում էք, մեր գործում ստեղ- ծուել է մի սոււալիզմ: Տարբեր պետութիւնների մէջ մենք գործում ենք, տարբեր քաղաքական, տնտեսա- կան եւ սոցիալական պայմաններում, տարբեր սկզբ- բունքների վրայ դրուած ծրագրով, տարբեր տակտի- կայով, տարբեր գանձարաններով եւ տարբեր Մար- միններով. պարզ է որ իրերի բնական ընթացքով գոր- ծը բաժանուում է երկու մասի: Բայց ես դեռ հասու- նացած չեմ գտնում բաժանման հարցը, եւ չեմ առա- ջարկում այժմեանից եւեթ այդ անել: Ես տեսնում եմ ապագայի հեռանկարը այդ ուղղութեամբ, իսկ այժմ մատնանիչ անում այդ հանդամանքը:

Մեզ ասում են, որ մենք հակայեղափոխականներ ենք, եւ թոյլ չեն տալիս ոչ մի քննադատութիւն: Դա փտած հասկացողութիւն է, դա նոյն դուժմատիկու- թիւնն է(68), որով սոցիալ-դեմոկրատիան նեղորսո- րէն մերժում է ամէն մի քննադատութիւն եւ իր շար- քից հեռացնում է քննադատներին, իբրեւ հերետիկոս- ների, նրանց հակայեղափոխական հռչակելով:

Կումս.— Իմ խօսքս քեզ չէր վերաբերում, ես հա- կառակ չեմ քննադատութեան:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Ասում են, որ մենք ենթարկուած ենք Ռուսաստանի սոց. — դեմոկ- րատներին: Դա ինձ համար միեւնոյնն է, — սոցիալ- դեմոկրատից ազդուած, թէ բուրժուայից ազդուած լինեմ՝ իմ խօսքերը — եթէ նրանք ճշմարտութիւն են — դա է կարեւորը:

Ղարիբ.— Իմ խօսքերս քեզ չէին վերաբերում:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Չգիտեմ ին- չու յիշուեց Մարքսի խօսքը՝ «բանուորը հայրենիք չունի», եւ ընկ. Ղարիբը աշխատում է ապացուցել ընդհակառակը: Ինձ գոնէ այդ հարկաւոր չէր ապա- ցուցել, ես վաղուց համոզուած եմ: Բայց ասացէք ինդրեմ. — ինչո՞ւ պիտի մի նուխեցի, մի շամխեցի, մի շաքալթացի բանուորի հայրենիքը Վանը եւ Բիթ- լիսը համարուի: Մենք ուզում ենք հայրենիքը կապել ամբողջ ազգի բնական տերրիտորիայի հետ եւ դրա համար թիւրիմացութիւնների մէջ ենք ընկնում: Յիւ- րիսի գերմանացին երբեք Բերլինը իր հայրենիքը չի համարում: Իսկ Ամերիկայի գերմանացին հպարտ է իր հայրենիքով եւ բոլորովին չի երազում Պրուսիայի մասին:

Թրքահայկական դատը ինձ համար ոչ թէ ազգա- յին պատուի դատ է, այլ հայ ազատագրութեան եւ հայ ժողովրդի աշխատաւոր դասակարգերի մեծ մասի հարստահարուած աշխատանքի դատ: Նրան պարտա- ւոր են օգնել բոլոր աշխատաւորները, բոլոր ազատու- թեան կողմնակիցները: Իսկ մենք՝ կովկասեան հայերս եւ դաշնակցականներս՝ պարզ է, որ աւելի գործօն ա-

ջակցութիւն պէտք է ունենանք այդ դատին, նաեւ այն պատճառով, որ մենք հայեր ենք եւ կապուած ենք նրանց հետ ցեղական եւ այլ կապերով:

Ասացին, որ կովկասեան բանուորութեան հոգու մի մասնիկը զբաղեցնենք տաճկահայկական հարցով. իսկ ես ասում եմ, ոչ թէ մի մասնիկը, այլ ամբողջա- պէս նա պիտի համակրի այդ դատին, որովհետեւ դա նոյն հարստահարուած աշխատանքի դատն է:

Կովկասեան մարմինները պարտաւոր են իրենց գործօն աջակցութիւնը ցոյց տալ դրամով, զէնքով եւ ընկերներով: Մենք պիտի զինենք Ներկրի ժողովուրդը, որ նա ինքնապաշտպանութեան համար եւ պէտք եղած դէպքում նաեւ յարձակողական քայլերի համար պատ- րաստ լինի: Շուտով կը դադարին Կովկասում հայ- Թուրքական ընդհարումները: Մենք մեր զէնքերի հըս- կայական պաշարից կարող ենք սոււար բաժին հանել թրքահայերին:

Պօսք եղաւ Վարանդայի մասին, եւ ես ա'յն ժա- մանակ ուզում էի ասել, որ ինչո՞ւ չընդդիմադրե- ցին մերոնք կողակների վայրագութիւններին, ինչո՞ւ չկրակեցին նրանց վրայ: Վախենում ենք, որ դիւղեր կ'աւերուեն, հա՞. ապա ի՞նչպէս Թուրքիայում մենք շարժումներ ենք անում առանց այդ հաշիւների: Ա- սում ենք՝ կողակը անգիտակից գործիք է կառավա- րութեան ձեռքին, պէտք է պատժել դէպքի հեղինակ- ներին: Կողակը ոչ թէ անգիտակից գործիք է, այլ նա իբրեւ մի դաս, ունի իր հաշիւները՝ լոյսով լինելու հա- մար, եւ այդ է պատճառը, որ բռնակալութեան միակ ուժեղ նեցուկը ամբողջ Ռուսաստանում միայն կողակ- ներն են մնացել: Եւ նրանց աղաղակող վայրագութիւն- ները հնչում են ամէն կողմից: Մենք պարտաւոր ենք թոյլ չտալ որ անպատիժ կերպով շարունակուեն նոյն բարբարոսութիւնները: Մենք պիտի խփենք, որպէսզի համոզենք մարդկանց, որ մենք կուռում ենք նաեւ կա- ոավարութեան դէմ, մանաւանդ որ դա մի սխտեմ է եւ նոյն դէպքերը կատարուելու են եւ ուրիշ հայաբնակ վայրերում: Միակ ջլախլախուած յեղ(ափոխական) կուսակցութիւնը Ռուսաստանում Դաշնակցութիւնն է մնացել, եւ մենք պարտաւոր ենք օր առաջ սանձ դնել կառավարութեան ոտնձգութիւններին:

Ամփոփում եմ ասածս: — Ժամանակ է որ Թուրքա- հայերը գիտակցեն, որ այսուհետեւ մենք չենք կարող նախկին ձեւով միայն թրքահայկական հարցով զբաղ- ուել: Կուսակցութեան զարգացումը տանում է դէպի Դաշնակցութեան բաժանումը երկու մասի, տարբեր ծրագիրներով (գոնէ մօտաւոր). յեղ(ափոխական) տարբեր տակտիկայով եւ մարմիններով: Դա ինձ չէ յուսահատեցնում. մենք պարտաւոր ենք շարունակել մեր գործօն աջակցութիւնը Թուրքահայերին, իբր աշ- խատաւոր մասսաների, որոնք իրենց ազգային եւ արե- տեսական ազատագրութեան համար են կուռում. պի- տի զինել Ներկրը ինքնապաշտպանութեան եւ յարձա-

կողական գործողութիւնների համար: Իսկ թուրքա-
հայկական շարժման ներկայ տակտիկայի մշակու-
թեան հարցում, ես անձեռնհաս եմ համարում Ռայո-
նական ժողովը, եւ առաջարկում եմ թողնել դուժար-
ուելիք Խորհրդին:

Հ(աւօ) Օ(հաւնցանեան).— Շատ են խօսել, ես
ճառ չեմ ասի... ես մի քանի թէզիսներ կ'ասեմ միայն:
— Դաշնակցութիւնը կուսակցութիւն է, ժողովուրդ
չէ: Դաշնակցութիւնը աշխատաւոր ժողովրդի շահերն
է պաշտպանում: Դաշնակցութիւնը այժմ Տաճկաս-
տանում քաղաքական կուր է մղում, այնպէս՝ ինչպէս
սոցիալ-դեմոկրատները Ռուսաստանում: Քաղաքական
կարգերի փոխուելուց յետոյ Տաճկաստանում Դաշ-
նակցութեան կուրը կը դառնայ նոյնպէս դասակար-
գային: Աշխատաւոր ժողովուրդը այստեղ կարող է
ազգային շահերի համար չկուրել, որովհետեւ այլեւս
ազգային ճնշումներ չեն լինելու, իսկ այնտեղ կուրել.
բայց աշխատաւոր մասսայի համար ազգային գոյու-
թեան հարցը այնքան կարեւոր է, որքան եւ նրա դա-
սակարգային շահերը՝ եթէ ոչ աւելի: Բուրժուաները
օժանդակելու են, որովհետեւ նրանք էլ մասամբ ճնշը-
ւած են, այնպէս՝ ինչպէս ամէն մի հայ ճնշուած է ոչ
իրրեւ հայ(?). նրանց պէտք է իրրեւ օժանդակչների
վրայ նայել: Մի քանի խօսք ասեմ Տաճկահայաստանի
ներկայ տակտիկայի մասին, — մի յայտնի է պոխա
(ժամանակաշրջան ?) անցել է ոչ միայն դիպլոմատիա-
յի այլ եւ ներքին (ինչպէս է էրզրումի թուրքական
շարժումը): Մի քանի տարի յետոյ արդէն ընդհանուր
Օսմանեան Պետութեան հարց կարելի է դնել, որովհե-
տեւ իրենք թուրքերն եւս սկսում են զգալ: Հիմնական-
նից պէտք է ամենաեռանդուն պրոպագանդա մղել նը-
րանց մէջ եւ յետոյ կազմակերպել Դաշնակցութեան
դրօշի տակ:

Նախագահ.— Հարցը սպառուած է:

Ժողովակազմները.— Այո', այո':

Արսէն(?).— Որպէսզի հասկանանք մեր կուսակ-
ցութիւնը, պէտք է մի հայեացք գցենք ընդհանուր
պատմութեան վրայ: Խօսում է Փրանսական յեղափո-
խութեան մասին — բուրժուազիան միացած բանուո-
րութեան հետ եւ յեղափոխութիւնից յետոյ՝ բաժան-
ուած: Ժողովակազմները բողոքում են, որ նա բրոշի-
րային տեղեկութիւններ է տալիս, առարկելով որ բո-
լորը գիտեն այդ ամէնը:

Արսէն.— (շարունակում է). Երբ Սուլթանը ջախ-
ջախեց մեզ, բուրժուաները յետ կացան, որովհետեւ
ռէակցիայի տարիներում շահագործելու ոչինչ չկար:
Հիմա բուրժուա ինտելիգենտների թիւը մեզանում
հսկայական է: Ասում են սոցիալիստ ենք եւ միեւնոյն
ժամանակ ազգայնական, — սայթաքման քարը հենց
դա է: Ասում են մենք ազգայնական ենք եւ ունենք
ինչ որ ազգային իտէալներ:

Ժողովակազմներ.— Ոչ ոք այդպէս չի ասում, ամ-
փոփեցէք ում զէմ էք խօսում:

Արսէն.— Մենք կարող ենք տաճկահայկական
դատին օչնել, ինչպէս մինչեւ հիմա օչնել ենք, միայն
տեսակէտն է վրիստորը: Մեր միջոցը օժանդակութիւն
է: Այստեղի կազմակերպութիւնները պէտք է առան-
ձին լինեն, ներքնապէս աւտոնոմ(69): Ուրեմն աւտո-
նոմ կազմեր Ռուսաստանի եւ Տաճկաստանի:

Իւսուֆ(16).— Ընկերներ, հիւանդ եմ, կարճ կը
խօսեմ: Չարաբաստիկ 98 թուականի Ընդհանուր Ժո-
ղովից յետոյ հեռացայ ես. հենց այն ժամանակ ասում
էի, որ տաճկահայ տակտիկան պէտք է որոշեն միայն
եւ միայն տաճկահայ գործիչները, եւ իմ առաջարկս
չանցաւ: Այդ գործին պիտի մասնակցեն դիտակից եւ
հասուն գործիչներ եւ ոչ թէ դիլետանտներ(50). Հա-
կառակ զէպքում կը վիժի, ինչպէս եղաւ: Գործի ղեկը
անպայման եղել է ռուսահայերի ձեռքը, նրանք են
ստն տուել, նրանք են հրամայել, տիկտատուրա է ե-
ղել, թէեւ հրամայողները իրենք Երկրում չեն եղել:
94 թուականին Պոլսում էի, փող չունէի, փող ուզեցի՝
ուղարկեցին: Մարդ էի ուզում, մարդ չէի ուղար-
կում. միմակ կազմակերպեցի: Մի գիտակից եւ կարող
ընկեր չունէի: Պետոյից յետոյ մի կանոնաւոր մարդ
չի գնացել Երկիր. ռուսահայերը տաճկահայ խնդրում
ոչ միայն ակտիւ դեր են կատարել, այլ եւ շատ ու շատ
զէպքերում չեն հարցրել Երկրի կարծիքը: Տրապիզոնի
Չէքի փաշային տեղորի ենթարկելու համար, առանց
հարցնելու տեղական մարմինն, այստեղից մարդ են
ուղարկում տեղորը կատարելու համար: Տրապիզոնի
մարմինը ապագայ բարդութիւնների առաջն առնելու
համար, սպառնում է սպանել տալ եկած տեղորիստին:
Տաճկահայ գործը եղել է սիրողների ձեռքում: Անջատ-
ման հարցը նոր չէ. 98 թուականից կայ այդ հարցը:
Ես յիշում եմ ինչպէս, երբ Խմբագրութիւնը կազմելու
հարցի մասին երեք շաբաթ խօսեցին, իրական գործը,
ինչպիսին էր Պատասխանատու Մարմիններ կազմելը,
մէկ օր միայն տեւեց: Այն էլ Ընդհանուր Ժողովից
ընտրուած մարդոց չընդունեցին Խմբագրութեան մէջ,
այլ այնպիսիներին, որոնք ոչ մի յեղափոխական անց-
եալ չունէին:

Ղարիբը բողոքում է, որ ճառախօսը խնդիրը մաս-
նաւորում է: Այո', դուք եւս նոյն մարդկանց շար-
քումն էք:

Ժողովակազմները բողոքում են այդ տեսակ խօ-
սակցութեան դէմ:

Իւսուֆ.— Այո', տաճկահայկական եւ Ռուսաս-
տանի խնդիրներից մէկն ու մէկը անպայման կը տու-
ժէ: Տաճկահայկական դատում պիտի մասնակցին մի-
այն եւ միայն նրանք, որոնք հաւատում են նրան: Ես
էլի կրկնում եմ, մինչեւ հիմա ոչ մի կանոնաւոր յե-
ղափոխական չի գնացել այնտեղ: Բաժանումը անպայ-
ման տեղի կ'ունենայ, եթէ դրութիւնը այսպէս շարու-

նակուի: Չէ՞ որ Ինքնապաշտպանութեան կոմիտէն չը-
կարողացաւ դիմանալ եւ խառնուեց միւս կոմիտէների
հետ: Տաճկահայկական դատը պահանջում է որ նրա-
նում մասնակցեն բոլոր հայերը, իսկ այստեղի կուրը
զուտ դասակարգային է, եւ եթէ այդ երկուսը միա-
ցենք, այդ զէպքում ո՛չ այստեղ եւ ոչ այնտեղ գործ
կը կարողանանք անել, կը վնասուեն երկուքն էլ: Նը-
րանք, որոնք չեն ուզում տաճկ(ահայ) խնդրով զբաղ-
ուել այնպէս, ինչպէս հարկաւոր է, պէտք է բաժան-
ուեն. այստեղի դասակարգային կուրը կը վնասի այն-
տեղի կուրին: Տաճկահայկական խնդիրը պէտք է մղել
բոլորովին առանձին կազմով, որովհետեւ այդ կրու-
ւում անհրաժեշտ է ամբողջ ազգի համակրութիւնը:
Բուրժուաները անհրաժեշտ են տաճկահայ գործում:

Ստեփան (Գաճաղ).— Ընկերները ասում են՝ դա-
սակարգային կուր այստեղ եւ ազգային՝ այնտեղ: Ա-
սում են, որ պէտք է Դաշնակցութիւնը բաժանուի եր-
կուի: Իմ կարծիքով Դաշնակցութիւնը մի պետութիւն
է, որը իր տիրապետութիւնը տարածում է ամբողջ
հայութեան վրայ եւ դրա համար նրա ձեռնարկութիւն-
ների մէջ բոլորը պիտի մասնակցեն: Եթէ մենք այս-
տեղ դասակարգային կուր մղենք, այդ զէպքում բուր-
ժուազիան մեզ ոչինչ չի տայ — բուրժուազիան հայ-
րենիք չունի — նա մեզ փող չի տայ, պէտք է տեղորի
դիմենք ամբողջ հայ ազգի դատի համար, այն է՝ Տաճ-
կա(հայաստանի դատի համար): Որպէս գործնական
միջոց տակտիկայի մէջ՝ երէկ առաջարկեցին միանալ
երիտասարդ թուրքերի հետ. ես կ'ասեմ տակտիկայի
վերաբերմամբ մեր չըջանի կարծիքը: «Պէտք է զինել
տաճկահայ ժողովուրդը եւ հեռու մնալ ակտիւ գոր-
ծունէութիւնից, որովհետեւ տաճկական պետութիւնը
խրախուսուած Ռուսաստանի օրինակից աւելի հրէշա-
յին միջոցների կը դիմէ, քան դիմել է մինչեւ հիմա:
Եւրոպայում պրոպագանդան շարունակել, եւ մասնա-
ւորապէս շեշտել այդ Անկլիայում, չնորհիւ նրա որ
(քանի որ) այնտեղ ազատամիտները ջարդեցին(?) ու-
նիոնիստներին: Աշխատենք որ առաջ գայ անդիլական
միջամտութիւն»: Ընկեր Մարտիրոսը (Ոսկանապատ)
լաւ խօսեց որ ոչինչ չարինք Վարանդայում: Ես համա-
ձայն եմ նրա հետ եւ առաջարկում եմ որ Ռայոնական
ժողովը քննի այդ հարցը, որովհետեւ դա ընդհանու-
րին է վերաբերում տակտիկայի տեսակէտից:

Գիգուշ(?).— Երեք օր է՝ խօսում ենք, բայց բո-
լորն էլ կանոն են առնում սխալ տեսակէտի վրայ: Տաճ-
կաստանն առանձին են վերցնում, Ռուսաստանն ա-
ռանձին: Հարցը սրանումն է թէ մե՞նք պիտի վարենք,
թէ իրենք:

Եթէ Ռուսաստանի հարցը ընդունած չլինէինք,
հարցը շատ պարզ էր, մնում էր միայն տակտիկան ո-
րոշել: Մեր մասսան անդիտակից է եւ երբեք սոցիա-
լիստ չէ եղել, թէեւ այդ պնդում են միւսները: Պէտք
է հրաժարուել կամ Ռուսաստանից կամ Տաճկաստա-

նից, հակառակ զէպքում առաջ եկած տուալիզմը կը
վնասէ ե՛ւ առաջինին ե՛ւ վերջինին:

Մեծ-Քաղաք.— Ասում են որ մեր յեղ(ափոխա-
կան) գործում բուրժուազիան դեր է կատարել. եթէ
նայէք մեր յեղ(ափոխական) պատմութեանը, կը տես-
նէք որ 91 թուականից սկսած մինչեւ հիմա կազմի
հիմը եղել է մասսան, իսկ եթէ բուրժուազիան մաս-
նակցել է, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհե-
տեւ իրականութիւնը եւ բացառիկ պայմաններն են,
որ այդպիսի երեւոյթներ են առաջ բերել: Ինքը Բէքբըն
է ասում, որ երբ հայրենիքին վտանգ կը սպառնայ,
ինքը առաջինը կը լինի որ դուրս կը գայ հայրենիքի
անկախութիւնը պաշտպանելու:

Կուկուեանից անմիջապէս յետոյ, էկզէկուցիաներ
արուեցին այն տեղերում, որտեղ ենթադրուում էր որ
նպաստել են Կուկուեանին. բայց չնայած այդ վտա-
տերին, ժողովուրդը շարունակում էր գործել: Բուր-
ժուական էլէմէնտները հեռանում էին: Ես չեմ հաս-
կանում, եթէ դուք բաժանման մասին էք խօսում եւ
ուզում էք, որ տաճկահայկական դատը եւս տարուի,
ուրեմն մասսային այստեղով միայն զբաղեցնելով,
այնտեղի դատը թողնում էք բուրժուաներին տանելու.
բայց բուրժուազիան ո՞ր աշխարհում է յեղափոխական
եղել: Դաշնակցութիւնը թէ՛ այստեղ եւ թէ՛ այնտեղ
պէտք է հիմնուած լինի աշխատաւոր մասսայի վրայ,
ինչպէս մինչեւ այժմ եղել է: Ասում են, դիլետանտ-
ներին է մնացել տաճկահայկական գործը. իմ կարծի-
քով, դիլետանտներ ամէն մի գործի մէջ էլ կան, դը-
րանից խուսափել այնքան էլ հեշտ չէ: Բուրժուազիա-
յի մասին 97 թուականին Բազուի պատգամաւորները
բերել էին մի պայման, չընդունուեց:

Չայնեթ.— Ընդունուեց այնպէս, ինչպէս ցանկա-
նում էին Բազուի բուրժուաները:

Նիլիշ(11).— Ոչ, չընդունուեց: Այն ժամանակ
ես էի քարտուղարը եւ շատ լաւ յիշում եմ:

Ջրաքերդ (Ստեփան).— Մենք բուրժուաների թե-
ւադրութեամբ մանիֆէստացիաներ(70) ենք կազմել,
պատեկ ենք այն ումբ գցողին, որը բողոքող էր հան-
դիսացել բուրժուաների կծու վարմունքի դէմ:

Նիլիշ (Մեծ-Քաղաք).— Եթէ կարելուր նշանակու-
թիւն էք տալիս տաճկահայկական դատին, չպէտք է
բաժանման հարց դնել. ես հիմնաւորապէս հակառակ
եմ անջատմանը, հենց նոյն աշխատաւոր մասսաների
շահերի տեսակէտից:

Կարօ(?).— Մեզանից ամէն մէկը մի առանձին
կարծիք ունի Դաշնակցութեան մասին: Իմ կարծիքն
այս է. 15 տարուայ ընթացքում Դաշնակցութիւնը տը-
ւել է հայ ժողովուրդին արժանապատուութիւն եւ ինք-
նագիտակցութիւն: Առաջ, այդ ժողովրդի ղեկը թող-
նած վարդապետների ձեռքին էր, այժմ յեղափոխական
ինտելիգենցիայի, թէեւ մենք որոշ դրական հետե-
ւանքների դեռ չենք հասել. հայր դեռ արեւի տակ ապ-

րկյու իրաւունք չունի Տաճկաստանում, եւ դրա համար Դաշնակցութիւնը պիտի լինի հայ ազգային մի կուսակցութիւն, որը պէտք է գործէ միմիայն ազգի գոյութեան համար: Դասակարգային կուսակարգի չէ, որովհետեւ դրանով մեր կուսակցութեան ոյժերը կը ջլատուեն: Կովկասը մի այնպիսի երկիր է, որտեղ ազգայնական կրքերը նոր են զարթնում, որովհետեւ մենք չենք կարողանայ առաջ գալ եւ պաշտպանուել իրքեւ մի ամբողջութիւն: Փոխադարձ օգնութիւնը միշտ կայ Տաճկահայաստանի հետ. այստեղացիք ոգեւորուում են, երբ տեսնում են տաճկահայ զինուորներ՝ պաշտպանելիս այստեղի հայութեան շահերը: Այնտեղ նոյնպէս ոգեւորուում են ռուսաստանցի գործիչներով: Մենք այստեղ դասակարգային կուս չենք կարող մղել: Օր(ինակ)՝ մի թուրք բէկի դէմ դնալու դէպքում, ազգայնական կուս առաջ կը դայ, որովհետեւ թուրքերը կուլտուրապէս մեզանից ցած են: Ծիւղ է որ մեր մէջ բուրժուականներ են մտել, բայց ոչ մի բուրժուական չէք գտնի, որ մերի նման յեղափոխականների ձեռքում դառնաւ լինի:

Անտոն.— Կարդում է Նաւահանգստի շրջանային ժողովի կարծիքը, որով առաջարկուում է՝ 1. Ոչ մի ջանք չխնայել Երկրում կազմակերպելու մարտական խմբեր, զլիսաւորապէս տաճկահայ(այերի) միջոցով: 2. Նպաստել ժողովրդի զինման, պատրաստել մասնադէմներ, ուղարկել վարժ կազմակերպողներ, հաւաքել երկրում ռազմական եւ տեղ-տեղ ուսեստի պաշար: Եարունակել եւր(ոպական) պրոպագանդը: Մինչեւ թուրք-հայկական ընդհարումների վերջնալը Կովկասում, ներսը ակտիւ ձեռնարկներ չանել, իսկ յետոյ ձգտել կազմակերպելու խոշոր ձեռնարկներ, մտցնելով մեծ ոյժ դրսից: (Տես Նաւահանգստի Երջանային ժողովի արձանագրութիւնը):

Ամբաստը եւ միւս ընկերները հակառակ են թուրքահայերի դատին առաջնակարգ տեղ տալուն, ընկնում են մի շարք սխալների մէջ: Նախ ազգաբնակչութեան թուի մասին: Թուրք-հայկական նահանգներում հայերը կազմում են ամբողջ ազգաբնակչութեան մօտ 1/3ը, սակայն ի նկատի ունենալով միւս ազգութիւնների ստորաբաժանումները (այն՝ որ թուրքերը բաժանուած են այլ եւ այլ կրօնական հատուածների, ջրտերը՝ աշիբէթների եւայլն), 1/3րդ թիւ կազմող հայերը երկրին տալիս են իրենց տիպը: Բացի այդ, ընդհանուր ազգային գոյութեան տեսակէտից աչքից թողնելու չէ երբեք՝ որ ամբողջ Թուրքիայի 18 միլիոն ազգաբնակչութիւնից հայութիւնը հաշոււրուում է 2-3 միլիոնով, այսինքն՝ 1/6րդ, 1/9րդ մասը: Թուրքիայի վարչական կենտրոններում (Պոլիս), ինչպէս եւ միւս քաղաքներում, որ զեկ են հանդիսանում ամբողջ երկրի համար, հայերը կազմում են խոշոր տոկոս: Ամբողջ ազգաբնակչութեան մէկ չորրորդը, մէկ հինգերորդը: Դա է պատճառը, որ յոյների հետ միասին Թուրքիայի մը-

տաւոր զեկը հայերը ունեցել են իրենց ձեռքին: Բոլորովին այլ դրութիւն է Ռուսաստանում, ուր հայերը հազիւ կազմում են տէրութեան ամբողջ ազգաբնակչութեան մէկ հարիւրերորդը: Բացի այդ, այս տեսակ հարցեր լուծելիս, ի նկատի է ունենալու ոչ այնքան քանակը, որքան որակը, ոչ այնքան թիւը, որքան ամէն մի ազգութեան ունեցած կշիռը, տնտեսական հասարակական գործերում: Եւ եթէ մենք անցնենք այդ հողի վրայ, կը տեսնենք որ հայը Թուրքիայում բարձր է միւս բոլոր ազգերից. թէ՛ Պոլսում եւ թէ՛ այլ քաղաքներում հայերը կազմում են արհեստաւոր, մանաւանդ ստեղծագործող տարր. այն ժամանակ երբ քաղաքների թուրքերը պաշտօնեաներ, ձրիակերներ են, յոյները, իտալացիք՝ վաճառականներ, օղակաճառներ, հայերը կազմում են աշխատաւորների խումբը: Ամբողջ առաջաւոր Ասիայում հայերը եղել են կուլտուրայի, առաջընթացի գործակիւնները, մնում են այդ դերում մինչեւ օրս էլ, մնալու են ե՛ւ ապագայում: Եւրոպացիք, դիպլոմատները, հասկանում են դա շատ լաւ կերպով եւ հենց այդ պատճառով է որ մեզ տալիս են այդքան նշանակութիւն: Սակայն կայ եւ մի այլ հանգամանք: Թիֆլիսում մենք կազմում ենք ամբողջ ազգաբնակչութեան 40-50 առ հարիւրը, իսկ վրացիները 20 առ հարիւրը. եւ չնայած նրան, որ մենք Թիֆլիսում վրացիներից 2 անգամ բազմաթիւ ենք, երբ հարցը դալիս է ազգային շահերին Թիֆլիսի վերաբերմամբ, մենք բոլորս զգում ենք, որ վրացիները այդ հարցում աւելի մեծ ձայն ունեն, բոլորս էլ զգում ենք որ Թիֆլիսը նրանց նախկին մայրաքաղաքն է եւ որ հետեւապէս նրանք մի քիչ աւելի իրաւունք ունեն, քան թէ դա տալիս է իրենց ազգայնութեան(?) թիւը: Նոյնն է եւ Տաճկահայաստանի վերաբերմամբ: Ես Եփրատի ափին Հռոմկլայ մի նախկին հայկական ամբոցում էի, որտեղ գտնուում է Ներսէս Ենորհալու եկեղեցին: Մեզ առաջնորդող պիւղացիք, թէ՛ հայ, թէ՛ ջիւրտեր զգում էին, որ հայերն են, որ աւելի բարոյական իրաւունք ունին այդ վայրում, քան եկուորները: Գեաւուր-Դաղի մահմետականները ճնշուած են զգում իրենց, որոչ չափ հենց Գեաւուր-Դաղ անունից: Տեսնելով հայկական աւերակները, գործածելով հայկական անուններ, բոլորն էլ զգում են, որ դա հայերի հայրենիքն է, զգում են նրանք իրենց օտար լինելը եւ միշտ բնականօրէն ընկճուում են: Այս մի նոր կշիռ է ի նպաստ հայերի: Խօսում են Հայաստանի տնտեսական սակաւ նշանակութեան մասին, չեշտում են, որ արտահանութիւնը կենտրոնացած է նաւահանգստային քաղաքներում եւայլն: Բայց նշանակում է արդեօք դա թէ հետաքրքրում չէ Հայաստանը, կամ քիչ է գրադեցնում դիպլոմատիային. — երբե՛ք: Հայերով բնակուած երկրի աշխարհագրական դիրքն այնպէս է, որ ով որ այդ երկրին տիրէ, նա կը դրաւէ եւ Պարսից ծոցին, առաջաւոր Ասիային եւ Միջագետքին ու Մի-

ջերկրական ծովին: Հայաստանի ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս, որ շնորհիւ իր դիրքի նա կռուածադիկ (է հանդիսացել) հարեւան խոշոր պետութիւնների մէջ՝ Իրանի, Միջագետքի, Փոքր-Ասիայի. համարեա թէ երբեք նրան չի կարողացել տիրել ոչ մի հզոր պետութիւն, եւ թէ պարսից ու հռոմայեցաց, պարսից ու բիւզանդացաց, արաբների եւ բիւզանդացաց, թուրքերի եւ պարսիկների սահմանները անցել են Հայաստանի կիրճերով(?): Այլ կերպ անկարելի էր. թէեւ ամէն միւր տեսչում էր տիրել Հայաստանի բարձունքներին, բայց եւ ամէն միւր իր ապահովութիւնից հարկադրուած՝ չէր կարող թոյլ տալ, որպէսզի առաջաւոր Ասիայի այդ միջնաբերդին տիրէ որեւէ մէկը, որ բնականօրէն եւ անխուսափելիօրէն կը դառնայ տէր բոլոր հարեւան երկիրների: Հայաստանի ռազմական դիրքը ամենից շատ նման է Եփեցարիայի դիրքին, որին յաջողուել է չհզոթութիւն պահպանել: Մենք եւս օգտուելով առաջաւոր Ասիայում դեր կատարող խոշոր քաղաքական ուժերի՝ Ռուսաստանի, Անգլիայի, Գերմանիայի եւայլն մրցակցութիւնից, որ ուժեղանում է զուտ տնտեսական-վաճառականական Փակտորով, քանի որ Զինաստանից յետոյ Թուրքիան միակ բաց չուկան է Եւրոպայի համար, ձգտելու ենք հաստատել տալ այնտեղ միջազգային հսկողութիւն, որ կը տանի չէզոքութեան ու հայ ժողովրդի ապահովութեան: Մեր առջաւորականութեան թիւը, ինչպէս տեսնում էք, առանձին նշանակութիւն չունի այստեղ: Հայերը եթէ մինչեւ անգամ 1 առ 10 մասը կազմեն, այնուամենայնիւ դա նշանակութիւն չունի մեզ համար, քանի որ հայկական միջնաբերդի հարցը ամենամեծ քաղաքական խնդիրն է եղել անցեալում, նոյնն էլ կը մնայ ապագայում: Ահա այդ բոլոր պատճառներից դրդուած ես կարծում եմ, որ հայի ազգային ապագան Թուրքահայաստանում է եւ Դաշնակցութեան ընդհանուր ուղղութիւնը չէ եղել սխալ: Իսկ ցոյց տուէք ինձ մի կուսակցութիւն, որ այսքան կարճ ժամանակամիջոցում, այսքան սակաւ ուժերով, այսպիսի աննպաստ պայմաններում, աւելի դրական հետեւանքների հասած լինէր, քան թէ մենք: Մենք տուել ենք շատ զոհեր, բայց եւ մօտեցել ենք մեր նպատակին: Միթէ՞ եւ միւս ազգերը տուած են աւելի սակաւ զոհեր. յիշեցէ՛ք Յուսաստանը, Կրետէն, որ հարիւր տարուայ ընթացքում 7 անգամ ապստամբուեց եւ որի ազգաբնակչութեան թիւը կէս դարձաւ: Ասացէք խնդրեմ, եթէ մենք տուած չլինէինք 40-50 հազար զոհեր եւ 200 հազար կորուստ դաղթական, կարծում էք զինուորական տեսակէտից աւելի՞ ուժեղ կը լինէինք, քան թէ հիմա ենք: Այժմս թէեւ 200.000ով թուով պակասել ենք, բայց զինուորական տեսակէտից անհամեմատ աւելի ուժեղ ենք: Սկզբում մեզ դժուար էր կազմակերպել Արարոյի նման փոքրիկ խմբակներ իսկ, հասարակ ցոյցեր: Ժամանակը մեզ մարդից, առաջ եկան Օտոմանեան բան-

կեր, Վաներ ու Պանասորի արշաւանքներ. իսկ վերջին մեր ձեռնարկները — Պոլսոյ եւ Սասնոյ — թէեւ անյաջողութիւններ են, բայց կիսով չափ հաւասար են յաղթութեան: Եթէ Պոլսոյ ռուսերի մի փոքրիկ սխալը — մի վայրկեան առաջ, կամ յետ — չլինէր, եթէ Սասնոյ փամփուշտների թիւր աւել լինէր՝ 40-50.000, մենք ահապէս դրական հետեւանքների հասած կը լինէինք: Կրկնում եմ, Թուրքիան իրա դիրքով եւ բնական հարստութիւններով ամենամեծ ապագայ ունեցող երկիրներից է, եւ Եւրոպան շատ լաւ է հասկանում այդ Հայաստանը ունի առաջնակարգ զինուորական դիրք եւ նրան Ռուսաստանին թոյլ չեն տայ տիրելու: Երբ այժմս Ռուսաստանը ոչ մի շտապելի ծով չունի, նա այսպէս կամ այնպէս, պիտի ձգտէ Միջերկրական ծովին: Եւրոպայի շահերին, ինչպէս ասեցի, դէմ է այդ եւ դրա համար մեծ պետութիւնները շահադրդուած են Հայաստանում ռեֆորմները(48) իրագործման մէջ: Գերմանիան, երկաթուղին լինելուց յետոյ, կարգ ու կանոնի կողմնակից կը լինի: Տաճկահայկական դատը, ինչպէս անցեալում, պէտք է տանել ամենաուժեղ կերպով: Այս տեսակ խոշոր հարցերին նայելու է շատ լայն աչքով: Արդեօք մեր նպատակը միայն ժողովրդի տնտեսական բարւոքումն է, սոցիալիզմն է: Կարծում եմ ոչ, — սոցիալիզմը միջոց է. հայ ժողովրդի, մարդկութեան անսահման զարգացման նպատակը՝ մարդկանց Աստուածացնելն է: Առանց ազգայնական կեանքի մարդս չի կարող լայն չափով զարգանալ. մի քանի ազգեր պետութիւն չունեն, բայց ինքնուրոյնութեան խնդիրը բոլոր ազգերում կայ, եւ նրանք պատրաստ պիտի լինին եւ պատրաստ են ազգային հասարակութեան համար ամենազօրեղ զոհաբերութիւն անել: Հաւասարութիւն՝ որ կեանքի հիմքն է կազմում, բարոյական ամենամեծ սկզբունքը: Մեր ժողովուրդը պատմական անբարեյաջող պայմաններից ցեխոտուել է, խարերայ, ստրուկ է դառնել. պէտք է դրանից մաքրել նրան. իսկ հայ ժողովուրդը մաքրելու, բարձրացնելու համար, նրա առաջ դնելու է մի այնպիսի նպատակ, որը կարողանար ոտքի կանգնեցնել նրա մեծ մասը: Այդպիսի նպատակ կարող է լինել միայն ազգային կատարեալ հաւասարութեան եւ Թրքահայաստանի հարցը: Նեղ դասակարգային, բանուորական հարցը կը բռնէ միշտ երկրորդական տեղ: Աւստրիայից, Գերմանիայից մենք յետ ենք 40-50 տարով, Անգլիայից, Բելգիայից՝ 100 տարով: Դա բաւական չէ, Ռուսաստանը իր արդիւնաբերական զարգացմամբ չի կարող երբեք Եւրոպայի աստիճանին հասնել, շնորհիւ Ռուսաստանի չուկաներ չունենալուն: Արդիւնաբերութիւնը չի զարգանայ Անգլիայի եւ Ֆրանսայի չափ, ուրեմն մեր տեսակէտները Անգլիայի չափ պրոլետարական երբեք չեն կարող լինել: Եթէ Անգլիան եւ Բելգիան չեն կարողանում յենուել միմիայն դասակարգային հիմքերի վրայ, ապա մենք ինչպէ՞ս կարող ենք

այդ անել: Բացի այդ, մեր տնտեսական պայմանները տարբեր են. զուտ Եւրոպայի տեսակէտով կանգնել նոյնիսկ բանուորական հարցի նկատմամբ՝ չենք կարող: Մեր բանուորները 99 առ հարիւրը հող ունեցող գիւղացիներ են, նրանք անցնում են բարձր աստիճանների, հարկադրուած մրցում են պարտիկ համալսարանների հետ, չեն ընդուն(ու)ում օտարների գործարաններում, պետական ձեռնարկներում: Հայ ամբողջ աշխատաւոր ժողովրդի շահերը ընդհանուր են բացի մի քանի հազար ձրիակերներէից եւ կապիտալիստներից: Բայց այդ բոլորը չի նշանակում, որ կազմակերպութիւնը պիտի լինի մի քարանասարայ, ուր ամէն մի մարդ մտնի ու դուրս գայ. Դ(աշնակցութիւնը) կանգնած է լինելու աշխատաւորների շահերի պաշտպանութեան հողի վրայ:

Պաշտպանելով հին ուղղութիւնը եւ չեմ ուզում ասել, որ սխալներ չենք արած: Ամէն մի դաշն(ակցական) Ընդհանուր Ժողով որոշ չափ(ով) քննութեան է ենթարկել մեր ծրագիրը եւ աւելի է ուղղել նա (նրան): Մենք, օրինակ, սկզբում շատ էինք շեշտում նեղ ազգայնական, քաղաքական նպատակի վրայ. 1901ի Ընդհանուր Ժողովը(71) շտկեց դա, ընդունելով որ մենք սեպարատիստներ(72) չենք: Ուժերի քրութեան պատճառով մենք անկարող էինք աշխատել Ռուսաստանում. հիմա հակառակն է եւ յանցանք կը լինէր մեր կողմից՝ մնալ ձեռնպահ: Վերջապէս Ռուսաստանի ներկայ յեղ(ափոխական) շրջանում մենք չենք մնալու չէզոք, — դա կը լինէր գաղափարական ինքնասպանութիւն: Ուրեմն իմ կարծիքով շարունակելու է թրքահայերի դատը աւելի լուրջ կերպով, իսկ Ռուսաստանում զբաղուել՝ հասունացած եւ այրուող հասարակական-քաղաքական հարցերի լուծմամբ:

ՄԻՒՔԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նախագահ Հ(ամօ) Օ(հանգամանակ).— Հարցը պէտք է լուծուած համարել: Պնդում եմ ներկայացնել բանաձեւեր: Ներկայացուում են երեք բանաձեւեր.

1. Հ(ամօ) Օ(հանգամանակ)ի բանաձեւը.—

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ռայոնական Ժողովը իր չորս նիստերում մանրամասն քննելով տաճկահայկական հարցը, երկար վիճաբանութիւններից յետոյ եկաւ այն եզրակացութեան որ՝

ա. Հ. Յ. Դ(աշնակցութիւնը) իր ամբողջ էութեամբ ու գործունէութեամբ հայ աշխատաւոր ժողովրդի կուսակցութիւն է եղել եւ այդպիսին էլ պէտք է լինի այսուհետեւ.

բ. Իբրեւ այդպիսին նա իր նպատակն է դրել պաշտպանել հայ աշխատաւոր մասսաների շահերը ամէն տեղ, թէ՛ Թուրքիայում եւ թէ՛ Ռուսաստանում:

գ. Հայ աշխատաւոր ժողովրդի շահերը գերազանցօրէն պահանջում են ապահովել հայի ազգային եւ քա-

ղաքական գոյութիւնը Թուրքիայում, ուստի այսուհետեւ էլ թրքահայկական դատը պէտք է լինի Դաշնակցութեան ամենազխաւոր հարցերից մէկը(73):

Այդ բոլորը աչքի առաջ ունենալով, Ռայոնական Ժողովը գտնում է, որ Դաշնակցութիւնը իբրեւ մի եւ անբաժան կուսակցութիւն պէտք է շարունակէ վարել տաճկահայկական ձայնը(74) իր ծրագրի ու կանոնադրութեան համեմատ: Այդ նպատակով նա պէտք է աշխատի միշտ արձագանգ տալ Երկրի պահանջներին, ներմուծելով ըստ կարելոյն մեծ չափով դրամ, ռազմամթերք եւ ինտելիգենտ ու փնտորական կազմակերպող ոյժեր, նպատակայարմար ձեւ տալով ներքին եւ արտաքին պրոպագանդային, իսկ ակտիւ ձեռնարկութիւնների հարցը լուծել ժամանակի պայմանների եւ յեղափոխական պահանջների համեմատ, գերակշռող նշանակութիւն տալով բուն Երկրի յեղափոխական տարրերի տրամադրութեան եւ տեղական ակտիւ գործիչների կարծիքին»:

2. Անտոնի բանաձեւը.—

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ռայոնական Ժողովը Թուրքահայերի դատը համարում է հայութեան ամենախոշոր հասունացած հարց եւ որոշում է Դաշնակցութեան գործունէութեան մէջ նրան տալ նոյն առաջնակարգ տեղը, ինչ որ անցեալում: Թուրքիայի գործունէութեան ընթացքում յենուել ազգային հասարակութեան եւ դաշնակցական կազմի ու բոլոր աշխատաւորների ու ճնշուածների համբերաշի գործունէութեան վրայ: Մօտակայ տակտիկայի մշակումը, ինչպէս եւ ուժերի բաշխման գործը թողնել գումարուելիք Պորհրդին:

Կովկասեան գործունէութեան մէջ, իբրեւ յեղափոխական եւ հայ-սոցիալիստական կուսակցութիւն կանգնած լինելով աշխատաւորների եւ ճնշուածների պաշտպանութեան հողի վրայ, Դաշնակցութիւնը կատարելու է իր կուսակցական պարտականութիւնները հանդէպ խոշոր արգիւնաբերութեան առաջ բերած փոփոխութիւնների եւ Ռուսաստանի ներկայ բացառիկ արթնացման շրջանի պահանջներին»:

3. Մարտիրոսի(37) բանաձեւը.—

«Նկատելով որ ա. Թուրքահայկական դատը հայութեան ազգային ազատագրութեան եւ Թուրքահայ աշխատաւոր ժողովրդի կեղեքող աշխատանքի դատն է, եւ բ. Կովկասեան փոխուած իրականութիւնը եւ կովկասահայ աշխատաւոր դասակարգի կազմակերպութիւնը եւ կոիւր, պահանջում են կովկասեան դաշնակցական Մարմինների ուժերի լարումը, — Հայ Յեղ(ափոխական) Դաշն(ակցութեան) Ռայոնական Ժողովը որոշեց՝

1. Դաշնակցութեան կովկասեան Մարմինները շարունակում են իրենց գործօն աշակցութիւնը Թուրքահայ դատին՝ դրամով, ռազմամթերքով եւ ընկերներով:

2. Կովկասում հաստատել մի յատուկ Մարմին, որ կովկասեան գործերից բոլորովին ազատ լինելով՝ ամբողջապէս զբաղուում է թրքահայկական գործով, եւ 3. Թրքահայկական դատի տակտիկան վերապահուում է Պորհրդին»:

Առաջին բանաձեւը ստացաւ 10 ձայն+և 7 ձայն —: Երկրորդ բանաձեւը ստացաւ 7 ձայն+և 11 » —: Երրորդ բանաձեւը ստացաւ 5 ձայն+և 13 » —: Ժողովականների մի քանիսի ցանկութեամբ առաջին բանաձեւը դրուեց երկրորդ անգամ քուէարկութեան: Հետեւանք եղաւ՝ 9 ձայն + 8 ձայն — եւ 1 ձեռնպահ:

XIՐԴ ՆԻՍՏ, 3/IV ԱՌԱՌՕՏԵԱՆ

Նախագահ.— Հ(ամօ) Օ(հանգամանակ):

Տեղեկութիւններ Շրջաններից

Բալախանուց տեղեկութիւններ: Պօսում է Բալախանու պրոպագանդիստը: Բանուորներ կազմակերպուեցին Յունուարից, տարուեց պրոպագանդ եւ այժմ մօտ 1.000 հոգի բանուոր կազմակերպուած են: Բանուորական գործը մեղանում բաժանուում է 2 մասի՝ քաղաքական եւ տնտեսական: Քաղաքականը վերապահուած է կոմիտէին, իսկ տնտեսականը՝ բանուորներին: Կազմուած է բանուորական ներկայացուցչական խորհուրդը, որ վարում է բանուորական գործը, գործադրուներ եւայլն: Գործադուր եւ նման հարցեր, նախ գործադուրային կոմիտիան է որոշում, ապա յանձնուում է կոմիտէին: Աւտոնոմիան (բանուորական) օգտակար է բանուորների վերակցութիւնը զարթնեցնելու համար: Պէտք է ասել, որ դաշն(ակցական) բանուորները շատ անդիտակից են եւ մենք ընկերներին վրաւոր պահանջ ենք դնում, որ այդ ուղղութեամբ միջոցներ ձեռք առնուեն: Մի բան եւս՝ դասակարգային կուուի մասին.— պրոպագանդը վրդովում է դաշն(ակցական) կամաւորներին, ինչպէս՝ գործակատարները, պրասենեկային ծառայողներն են(?): Դրանց ազդեցութիւնը վերացնելու համար, սուսուցիչների մի կազմ ստեղծելու պահանջ է դրուած այժմս. դրանք պէտք է լինեն միեւնոյն ժամանակ պրոպագանդիստներ: Երեք Ֆիլիմաներ արդէն համաձայնել են եւ յատկացրել են որոշ գումար: Ինչ վերաբերում է Հայ Ս. Դ.երի(31), նրանք բանուորներին պիտակցութեան բերելու համար մեծ զոհողութիւններ են անում եւ դա է որ հանդիսանում է ամենանպատակայարմար միջոց մեր դէմ պայքարելու: Կրկնում եմ, Բալախանում, ինչպէս եւ միւս տեղերում, մեծ պահանջ է զգացուում կարող ուժերի: Զգացուում է թերթի անհրաժեշտութիւն՝ նախագիծը ժողովրդականա-

ցընելու համար: Հարցնում էք ընդամէնը քանի՞ հայ բանուոր կայ Բալախանում, — կայ մօտ 2.200 հոգի, որոնցից 1.000ը արդէն կազմակերպուած են: Սոց. Դ(եմոկրատ)իան մեծ ազդեցութիւն ունի բանուորների վրայ, մի բնորոշ փաստ՝ որ նրանք Ս. Դ.ներին(31) ասում են թէ մենք միշտ ձեռն ենք եղել ու ձեռք լսել, թող մեզ պաշտպանեն, իսկ յետոյ ձեռն ենք ու ձեռք(?): Օպոստոսեան դէպքերից յետոյ Դաշնակցութիւնը մեծ պաշտպանութիւն է ցոյց տուել բանուորներին. օր.՝ Մանթաշանին 150 բանուորի ընդունել տալը: Պէտք է ասել, որ կապիտալիստները Դաշն(ակցութեան) պահանջները կատարում են մի տեսակ բարոյական ընկճման տակ: Մի հանդամանք եւս, կազմակերպութեան մէջ կան մարդիկ, որոնք բանուորական հարցի վրայ ի միջի այլոց են նայում: Անհրաժեշտ է որ բանուորներից ապիտատորներ պատրաստելու ուղղութեամբ միջոցներ ձեռք առնուեն:

Ստեփան.— Ենթակոմիտէներ գոյութիւն ունեն ե յետոյ բանուորները չեն բողոքում, որ իրենցից կազմի մէջ չկայ:

Բալախ. պրոպ(ագանդիստ).— Չկան, պէտք է նկատել, որ կենտրոնացումը բանուորական գործի համար աւելի լաւ է: Կազմի մէջ կան երեք բանուոր:

Եղիշէ.— Հայ Ս. Դ.ները(31) ունեն հայ բանուորներ կազմակերպուած:

Բալախ. պրոպ.— Ոչ, ոուս Ս. Դ.ները յատուկ երկու պրոպագանդիստ ունեն, իսկ Դաշնակցութիւնը՝ մէկ. նրանք այժմս բանուորներին ասում են՝ դուք մեզ լսէք, իսկ փողը տուէք Դաշնակցութեան:

Կոմս.— Թուրք բանուորութիւնը կազմակերպուում է, թէ ոչ:

Բալախ. պրոպ.— Չի նկատուում:

Ոսկանապատի ցերկ(այացուցիչ).— Այդ հարցի մասին ասեմ, ժողով ուէինք պետ. Դումայի առթիւ: Երկու Թուրք կազմակերպութիւնների ներկայացուցիչներն էլ այնտեղ էին: Հումմէթի ներկայացուցիչը ասում էր, որ ունին կազմակերպուած 2.000 հոգի (միայն սեւ աշխատանքի), իսկ ԻՖթիֆազը չէր հաւատում այդ թուին, ասելով՝ 5-600 հոգի կարող է լինել, — այդ ես պնդում եմ: ԻՖթիֆազը մասսա չունի, ինտելիգենտներ շատ են: Պետ. Դումայի վերաբերմամբ նրանք պահանջում էին, որ Հայ եւ Թուրք բանուոր միասին բոյկոտ անեն: Նրանց բանուորները չիա են (համաձէրի): Կօալիցիայի հարցում ոուս. Ս. Դ.ներ(31) ներկայացուցիչը ասում էր՝ կարելի է միանալ, բայց թէ նայած ու՛մ հետ: Նրանք մեր կազմակերպութիւնը ընդունում են ոչ-յեղափոխական: Մեզ նրանք հայ-Թուրքական ընդհարումներում տեսնում են զուտ նացիոնալիստական, նոյնը եւ Հայ Ս. Դ.ները: Այսպէս եւ Սեւ Քաղաքում:

Սեւ Քաղաքի պրոպ(ագանդիստ).— Բանուորները սկսեցին կազմակերպուել հայ-Թուրք ընդհարումների

ժամանակ. բաւական գործարաններ այժմս դաշնակ-
ցական են: Սեւ Քաղաքում հաշուում է 500 հոգի, իսկ
Բալխանում շոսէյուս(?) 150 հոգի — 650 հոգիի
մօտ: Պրոպագանդայի եւ բանուորների գիտակցութեան
մասին նոյնն են շեշտում, ինչ որ ընկերս: Ս. Դեմ(ոկ-
րատ)իան յաջողութիւն գտնում է: Մեր բանուորների
մեծ մասը չգիտեն էլ թէ նախապիծ ունենք: Հայ Ս.
Դեմ(ոկրատ)իան Սեւ Քաղաքում եւ Բալխանում մօտ
50 հոգի հայ բանուոր ունի: Ռուս. Ս. Դեմ(ոկրատ)իան
չունի: Տաճկահայկական դատով նրանք հետաքրքր-
ւում են իբրեւ էպոսի(75) հետ, էութիւնը չեն ըմբռ-
նում:

Արեւ(ելեան) Բիւրոյի ներկայացուցիչը.— Ու-
րեմն եւ Բազուի բանուորութիւնը գիտակցութեան ե-
կել է, եւ այդ ուղղութեամբ առաջ պէտք է տանել,
որպէսզի չհեռանան:

Նաւահանգիստ (Արտաշէս)(76).— 3·180 բանուոր
կայ, դրանցից 1·000ը գործակատարներ եւ խոզէիներ
են: Բանուորութեան մեծամասնութիւնը տաճկահայեր
են: 850 հոգի ուսուսհայ կայ դրանց մէջ միայն: Պրո-
պագանդիստ չկայ: Զինուորները խոչընդոտ են հանդի-
սանում նախազօծի ուղղութեամբ գործունէութեան:
Պրոպագանդը ազգային է: Հնչակեաններից մեր կողմն
են անցել 150 հոգի: Դէպի նախազօծը թշնամարար են
վերաբերուում ոչ միայն եւ ոչ բոլոր տաճկահայերը:
Ս. Դեմ(ոկրատ)իայի մէջ հայեր չկան: Հնչակեաններ՝
մօտ 50 հոգի են: Բանուորների մի մասը (մեր) դրող-
ճիներ են, սրճարանի բանուորներ եւայլն:

Շարաֆ(?).— Սոխումի եւ Սոչու շրջանում կայ
մօտ 30·000 հայ զիւղացիութիւն գաղթական, այժմ էլ
այդ գաղթականութիւնը շարունակուում է. գրաղուում
են ծխախոտի արդիւնաբերութեամբ: Աշխատում են
15-16 ժամ օրական, այն էլ 4 տարեկան երախայից
սկսած մինչեւ 80 տարեկան ծերը: Վերցնում են ընդ-
հանրապէս 4-5 տեսետին հող, 50 ուրբլի արենդ(?) են
տալիս: Բաթումը ընդհանրապէս անտառուտ տեղերում
լաւ է ոյժ ունենում: Գիւղացուն ուրեմն մնում է մաք-
րել անտառը: Մի խօսքով իւրաքանչիւր տեսետինը
նստում է 250 ուրբլի: Յետոյ պէտք է յիշեմ, որ միեւ-
նոյն հողի վրայ թուփուներ (ծխախոտը) միայն 4 տարի
կարելի է ցանել եւ այդ է պատճառը, որ նրանք շա-
րունակ տեղափոխուում են: 1 տեսետինից ստացուում
է 30 փութ. այնտեղի թուփուներ Սամսոն եւ Տրապի-
զոն թութու են, լաւ տեսակի, այժմս մրցում է նոյնիսկ
ամերիկեան թութուների հետ: Ամենալաւը ծախուում է
20 ուրբլով: Եթէ 1 տեսետինը հաշուենք 450 ուրբլի,
դուրս գալով աշխատաւոր մարդոց վարձը, ճանապար-
հածախսը եւ այլ ծախսեր, կը մնայ ոչ աւելի (քան)
200 ուրբլի տարեկան: Փոլլիքաններում ուս աշխատա-
ւոր ձեռքերը աւելի լաւ պայմանների մէջ են, 1 ուրբ.
50 կոպէկից էլ աւելի են ստանում: Հարուստներ չը-
կան, անհասներ որ 150 առ հարիւրով փող են տալիս:

Կայ 18 Փարբիկա միայն Սոխումում, որոնք տալիս են
օրինակ 200 ուրբլի կանխավճար, եւ փոխանակ, որ
թութուներ պիտի առնէին 20 ուրբլուց, այժմս առնում
են 17 ուրբլով, ուրեմն 4 ամսուայ մէջ 200 ուրբլու
համար ստանում են մօտ 90 ուրբ. տոկոս: Ինչպէ՞ս
բարելաւել դրութիւնը, կալուածատէրերի դէմ գնալը
գժուար էր, — այն ժամանակ տեղափոխելու հարցը
հերթական էր. որպէսզի Փարբ(իկա)ների ներկայա-
ցուցիչներից ազատուեն, առաջարկեցի մի ամբար հիմ-
նել, հաւաքել թութուներ այդտեղ եւ ծախել միաժա-
մանակ: Ա(ռաջ)ին տարին ի հարկէ Փարբիկանտները
բոյկոտ կանեն: Սոխումի շրջանում 52 խումբ կայ
կազմակերպուած, որ տալիս են 6-700 ուրբլի տարե-
կան, դոքա գիւղացիներն են: Սրանց դրութեամբ
մենք՝ ասում եմ, չենք հետաքրքրուել, պրոպագան-
դիստներ չեն եղել, եղել են Տաճկաստանից տիրացու-
ներ-չրջիկներ, որ գիւղացիների կանխավճարների մի
մասը զինուորներով վերցրել են: Ես առաջարկել եմ
Նաւահանգստի Կ.ին, — գիտէի որ 50·000 ուրբլի ու-
նեն, — 10·000 ուրբ. եթէ տալին 2/3 տոկոսով, և եթէ
մենք վերադարձնէինք, մեզ կը մնար 3-4·000 ուրբլի,
բայց գիտնալով կազմի հակա-յեղափոխականութիւնը,
ես չառաջարկեցի: Սկսեցի Փոնտեր գիւղերում կազ-
մակերպել՝ որ օչնէի, բայց իմ ընկերները սկսեցին իմ
դէմ պնակ, խանդարել: Պէտք է ասեմ, որ 30-35 խումբ
հնչակեաններ կային, բայց հենց որ կազմակերպեցի
տնտեսական հողի վրայ, բոլորը անցան մեր կողմը:
Այժմ Հնչակեանները պարապում են աղջիկ փախցնելու
գործով: Այս շրջանի հայ գաղթականութիւնը կապ-
ուած է Թ. Հ. ու(77), սակայն ես բացատրում եմ հող
չունենալու պատճառով: Կալուածատէրերի դէմ առ
այժմս շատ վտանգաւոր է խիստ միջոցների դիմել:

Ջրաբերդի ներկայացուցիչը.— Բանուորական
կասսան գոյութիւն ունի՞, թէ ոչ. եւ եթէ ունի, որ-
քա՞ն շրջանառութիւն ունի:

Արտաշէս, Նաւահանգստի.— Կա՛յ: 3·000 ուրբլի
է ընդհանուր գումարը:

Ջրաբերդի ներկայացուցիչը.— Եթէ չեմ սխալ-
ուում թութուի է թողնուել, թէ մենք ուս կառավա-
րութեան դէմ ոչինչ գործ չունենք: Ծի՞ղդ է:

Արտաշէս, Նաւահանգստի.— Եղել է, դրա դէմ
բողոքուել է, բայց անուշադիր են թողնել. դա թիւ-
րիմացութիւն է եղել, թէպէտ թողնուել է ամբողջ
կազմի կողմից:

Մեծ-Քաղաքի ներկայացուցիչը.— Մեր շրջանում
(աշխատանքը) դասակարգային հողի վրայ սկսուած է
վերջերս: Շրջանում գիւղական հարց կայ: Եղել են
դիմումներ: Ինչ վերաբերում է պրոպագանդային՝
սխտեմատիկ չէ եղել, հարկաւոր է ուշադրութիւն
դարձնել:

Արթուր(?).— Ծագոնի շրջանում կազմակերպու-
թեան օձակցութեամբ եղել է գործադուլ երեք հայ

գիւղերի կողմից՝ Օրալի, Սուզէլի եւ Խակի (սա՛
թուրքախառն) կալուածատէր ինտելիգենտ Աղա Ստ.
Մալխասովի դէմ, որ յաջողութեամբ է վերջացել:
Գործադուլին մասնակցել են Խակի թութուները:

Թմբուկի ներկայացուցիչը.— Վրացական շար-
ժումների ազդեցութեան տակ մեր շրջանում էլ սկսուեց
յուզում գիւղացիների մէջ, բայց կոմիտէն միջամտեց
եւ թողեց ծայրայեղութիւնների հասնելու, համա-
ձայնեցրեց: Հողերը հկեղեցապատկան, թութու բէկերի
եւ հայ աղայախներին(?) սխտեմատութիւն են: Այդա-
րային շարժման պարարտ հող կայ: Մենք դէմ ենք
ազրար շարժման «էրթորա» ձեւին(?): Մենք ուզում
ենք սխտեմատիկ կոիւ մղել վաշխառուական միջոց-
ների դէմ:

Լոսի.— Լոսուայ շրջանում որոշ յաջողութիւններ
են տեղի ունեցել հողային խնդրում. առաջ գիւղացիք
տալիս էին 5-6, իսկ այժմս՝ 4 ուրբլի:

Արեւ(ելեան) Բիւրոյի ներկայացուցիչը.— Մեծ-
Քաղաքի շրջանում եղել են գործնական քայլեր. եւ
հարկաւոր է, ընդհանուր, սխտեմատիկ դրութեան
մէջ դնել այդ շարժումը:

Անտոն.— Պէտք է բաժանել ուս շարժման ազ-
դեցութիւնը եւ Դաշնակցութեան կատարած դերը: Ե-
ղել են տեղեր, որտեղ գիւղացիները նոյն կերպ են
վարուել, ինչպէս Գուրիայում, բայց դաշն(ակցական)
կազմակերպութիւնը դէմ է գնացել, մեղմացրել:

Մեծ-Քաղաք.— Մեծ-Քաղաքը, որպէս արդիւնա-
բերական կենտրոն, շատ աննշան է, այստեղ բանուոր-
ների թիւը հազու հասնի մի քանի հազարի, բացի եր-
կաթուղային բանուորներից: 700 բանուոր կը լինեն
մեր կազմակերպութեան մէջ: 2 պրոպագանդիստ ու-
նինք, որ տանում են պրոպագանդ դասակարգային գի-
տ(ակցութեան) տեսակետից. բայց դա չի՛լ է, մեր
բանուորները յետամնաց են: Միւս խմբերում հասնում
է 400 հոյու: Հայ-թութուական ընդհարումները երկու
նշանակութիւն ունեցան, — նախ՝ որ նրանց գիտակ-
ցութիւնը բթացաւ, միւս կողմից՝ նրանք իրենք եկան
կազմակերպուելու: Եղել են գործադուլների մի քանի
դէպքեր, որոնք յաջող են անցել: 700 բանուորների
մեծ մասը ուսահայեր են:

Մամաս.— Արդէն գտելը սկսուած է: Վրացի Ս.
Դ.ների(31) տենդենցիոզ(78) լինելը, բանուորներին
միատեսակ աչքով շնայելը, դրդեցին հայերին՝ թող-
նել Ս. Դ(եմոկրատ)իան եւ մեզ յարել:

Ոսկամապատի ներկայացուցիչը.— Կանայք, բան-
ուորուհիները ի՞նչպէս են կազմակերպուում:

Ժեմ(?).— Առանձին, օրինակ Ատելխանովի գոր-
ծարանում՝ 70 հոգի:

Անտոն.— Չնայելով որ հայերը սակաւահողութեան
մէջ ամենաառաջին տեղն են բռնում, բայց երկաթու-
ղային) ծառայողների մէջ միայն 10 առ հարիւր են
կազմում. այստեղ բանուորների մէջ էլ ազգային կը-

րեւն է որ արտայայտուում է: Նոյնը կը լինէր, եթէ
Բազուում հայ գործարանատէրեր չլինէին: Նոյնը Բա-
թումում, — վրաց Ս. Դ(եմոկրատ)իան թողնում է
չնորհիւ այն բանին, որ կայ Մանթաշեանի գործարա-
նը:

Արշակ.— Երկաթուղային ծառայողների վերա-
բերմամբ Անտոնի եզրակացութիւնը արդիւնք չէ կազ-
մակերպութիւնների, այլ կառավարութեան քաղաքա-
կանութեան:

Ռոստոմ.— Շուշում իսկական բանուորութիւն
չկայ, այնտեղ արհեստաւորներ են: Այժմս այնտեղ
գտում են, դարձնում են արհեստակցական: Շրջանում
կան բաւական գործարաններ — այդ գործարաններում
օրական մինչեւ 10 կոպէկ օրավարձ կայ, աշխատեցը-
նում են նոյնիսկ 4 տարեկան երախաներին: Պէտք է
ասել սակայն, որ այդ գործարանները պահպանուում
են շնորհիւ այդպիսի օրավարձի: Օրավարձ բարձրա-
ցնելը նշանակում է փակել գործարանները, իսկ փակել
գործարանը՝ քաղցածացնել բանողներին: Գալով գիւ-
ղացիութեան՝ Դաշնակցութիւնը այդտեղ մեծ գործ է
կատարել. ի հարկէ պարզ ձեւով չէ դրուած եղել, սա-
կայն ոչ էլ ըստ Անտոնի ազդեցութիւն է եղել, այդ
կատարուել է կոմիտէական դատարանների միջոցաւ:
Սրան դիմում են նոյնիսկ թութուները, մանաւանդ Վա-
րանդայում. այստեղ Դաշն(ակցութիւնը) մի յատուկ
չրջիկ է պահել թութուների համար: Կոմիտէական դա-
տարանը կուուել է աւատական իշխանութեան դէմ եւ
մեղադրանքները թութու բէկերի բերանում բնորոշ են,
որովհետեւ զգում են որ դրա ազդեցութեան տակ ի-
րենց մէջ էլ ստեղծուել կարող է նման կազմակեր-
պութիւն: Բնորոշ է մանաւանդ այն՝ որ թութու բէկե-
րը դիմել են հայ վաճառականներին, թէ թերթ մի
տաք կարդալու մեր գիւղացիներին: Գիւղացիները ազ-
րեսիւ գործողութիւն են ունեցել կալուածատէրերի
դէմ, Զիրբայիլում (թութու), Սաչէնում (թութու) եւ
Վարանդայում (հայ): Այս տեղերում հայ կալուածա-
տէրերը չի՛լ են, թութուները գերակշուում են: Թութուների
դէմ մեր տարրը կարուկ վարուեց Նազէնում. այստեղ
շատ խիստ էր: Հայ կալուածատէրեր զիջող են լի-
նում, նրանք հրաժարուում էին 1/10ից:

Պէտք է նկատել, որ ազրբային(19) շարժում բը-
նական է, որ մեզանում աւելի ուշ պէտք է սկսուէր,
քան թէ Գուրիայում: Մեզանում տալիս են 1/10, իսկ
Գուրիայում՝ 1/4: Հայ բէկերի ճնշումը թոյլ է. Դու-
միում եղել է շարժում, բայց յետոյ երեւաց որ դա
կուլակների կողմից է կազմակերպուած եղել եւ ոչ
գիւղացիների, կուլակների՝ իբր ճնշուածների կոմի-
տէական դատարաններից: Մեր շրջանում կազմակեր-
պուած են ամբողջովին եւ ոչ խմբերով: Մետաքսա-
գործարաններում աշխատանքները լինում են մեքենա-
յի միջոցաւ եւ յետոյ արդէն ձեռքի աշխատանք:

Մեծ-Քաղաքի ներկայացուցիչը.— Կարո՞ղ էր

պատահել, որ հայ-թուրքական ընդհարումներ չլինէին եւ հայ գիւղացիները խմբական յարձակումներ գործէին, եւ յետոյ եղե՛լ է որ բէկերին սպանած լինեն, իսկ գիւղացիներին ոչ:

Ռոստոմ.— Անպայման կը լինէր, եւ կարելի է՝ լինէր թուրք գիւղացիների հետ միարան — դա կոմիտէական դատարանի հետեւանքն էր: Պաշտօնում չէր կարող լինել, որովհետեւ բոլորը բէկեր են, բայց որիչ տեղ եղել է, օր՝ Առաջաձորում ոչինչ չեն արել:

Փանձակի ներ(կայացուցիչ).— Քաղաքում գիւղացի բանուորների թիւը այժմ հասնում է 1.000ի: Բանուորներ պալիս էին եւ Դադստանի շրջանից, բայց այս տարի չեկան: Գաւառի բանուորների թիւը կրկնակի է, դրանք աշխատում են մեծ այգիներում: Կոտորածների ժամանակ թուրքերը այդ այգիների վրայ յարձակուեցին, այժմ այդտեղ իսկ հայ բանուորները չկան: 1.000-2.000 հողի Մայիսի 20ից մինչեւ Յունիս 20ը սնում էին (թուրքերի հետ միասին) չունց(?) տափարակը թուրքերի համար աշխատելու, այս տարի հաւանական է՝ ոչ ոք չլինայ: Քաղաքում մանր արհեստաւորներ են: Գրանց մէջ գործադուլներ եղան: Վերջերս ուզում էին բոլորը դարձադուլ անել, որպէսզի բազարը տեղափոխուէր, բայց այժմ այդ բանը թողնուած է: Գէորգեանի բամպակի գործարանը ընդհարումների ժամանակ հայերը թողին եւ թուրքերը ստիպմամբ մտան իրենք, այժմ այրուած է: Երկաթուղու դադուլում (սլահեստ ?) առաջ բաւական թուով կային, բայց այժմ քիչ են: դրանք կազմակերպուած չեն, բայց այժմ կազմակերպելու ենք: Երջանում էլ բոլորը դաշնակցական են: Հիմա մեր ջանքերով քաղաքին կից, բանուորներին բնակեցնելու համար հիմնուած է մի գիւղ՝ Կորիւնապատ, տեղը բաւական ընդարձակ է: Այժմ կազմակերպութիւնը ինքնապաշտպանական հողի վրայ է դրուած պաւառում, հայ-թուրքական ընդհարումների պատճառով: Թուրք կալուածատէրեր աւելի շատ կան, քան հայ: Հայ կալուածատէրերը պաւառի արեւմտեան մասումն են: Հայ եւ թուրք գիւղացիների յարաբերութիւնը սրուած չէ: Թուրք կալուածատէրերի հողի վրայ հայեր չկան, բայց վերցնում են կապալով: Պատմամետոյի հողերի վրայ թուրքերը շարժում սկսեցին: Հողի պակասութիւն է զգացուում, արօտավայրերի նշանաւոր (մեծ) մասը տրուած է ուս պաղթականներին, մի մասն էլ թուրքերին ծառայում: Անցեալ տարի հայ եւ թուրք գիւղացիները պէտք է միացեալ բողոք ներկայացնէին, բայց բէկերը խորհուրդ չէին տուել թուրքերին եւ սրբանք հրատարակեցին ստորագրելուց: Ռուս գաղթականներին դիմադրելու դէպքում՝ նրանք խոստացան օգնել հայերին (Գալի Ալին էլ): Կոմիտէն դէմ է պետական անտառներ կոտորելուն:

Մրգաստան.— Սկսում ենք այժմ պրոֆեսիոնալ խմբեր կազմել: գործակատարները մեծ տոկոս են կազ-

մում, այժմս արդէն գտում ենք: Գաւառը կազմակերպուած է հին ձեւով: Այժմս որոշուած է գիւղ(երը) ամբողջովին ինքնապաշտպանութեան տեսակէտից կազմակերպել, իսկ առանձին ուշադրութիւն դարձնել երիտասարդները վրայ: Հողերը երկու տեսակ են, պետական եւ բէկական, 1.500 տես. քիչ. 1/7(?). բէկերի մեծ մասը թուրքեր են: 402 կալուածատէրերից 10-12 հողի միայն հայեր են: Ազրար շարժման մասին եղել է խորհրդածութիւն (խորհրդակցութիւն ?). որոշուեց թողնել մասնապէսներին: Բէկերը իրենց արդիւնքը ստանալու համար տալիս են կապալով, մի քանի տեղ կարգադրուած է որ կապալառուներ իրաւունք չունենան կապալով փերցնելու, բէկը չի կարող հաւաքել, կը մնայ գիւղացիներին: Գիւղացիները բաժանուած են հարուստի եւ աղքատի: Կան գիւղեր, որտեղ 20 տարուց աւել է՝ հողաբաժանում չի եղել, այժմս պէտք է ստիպենք որ հողաբաժանում անպայման անեն: Արջուական հողերի վերաբերմամբ էլ նոյնն է արուած, նոյնիսկ բռնի միջոցաւ, որուն հետեւում է Դաշնակցութիւնը ապապայ համայնական տեսակէտից. իսկ եթէ անհատական վերցնելու լինենք, մթնացնում է(?): Հետաքրքիրը այն է, որ այժմս բոլոր գիւղերից խնդիրներ են պալիս այդ առթիւ, մի մասը թողնուած է անուշադիր, իսկ միւսը աշնան պէտք է անենք: Մետաքսագործարանները կային, այժմս դադարեցուած են. մետաքսագործարանները պատկանում էին Ազուլիսի շրջանին: Վանքական (վանքապատկան) հողերի մասին ուսումնասիրութիւն չէ եղած:

Քարի ներկ(այացուցիչ).— Արհեստաւորները կազմակերպուած են արհեստակցական-համաբարական սկզբունքով. իրենք՝ արհեստաւորները առաջ բերին: Տեղական Կ(ոմիտէն) նկատելով, որ նեղ կերպարանք է ստանում, քանդեց. այժմս խմբական է: Հողաբաժանումը մեծ պահանջ է. 50-60 տարի է՝ չէ եղել:

Ջրաբերդի ներկ(այացուցիչ).— Առանձնակի ուշադրութիւն է հարկաւոր դարձնել արհեստաւորական շրջանների վրայ. երկու տեսակի արհեստաւորութիւն կայ, — մէկը մրցում է արդիւնաբերութեան հետ, միւսը՝ ոչ. դերձակներ, կօշիկակարներ եւայլն: Արհեստաւորները կազմակերպուեցին, բայց դրա դէմ բողոքեցին իրենց աշակերտները. այժմս մենք աշակերտներին, խալֆաներին կազմակերպում ենք իրենց վարպետների դէմ, իսկ վարպետներին զանազան այլ ճնշող հիմնարկութիւնների դէմ: Աշակերտները եւ խալֆաները թերահաւատութեամբ են վերաբերուում, օր՝ որմնադիրների եւ այլ դէպքեր: Կազմակերպութիւնը գիւղացիների վերաբերմամբ մի գործ կատարեց: Բայրան փաշա եւ Դրոյի թաղ(?). այդտեղ գիւղացիներ կան՝ բնիկներ, վերաբնակներ եւ գաղթականներ, որոնք քաղաքից էին վերցնում կապալով հողեր: Գաղթականները դժուարանում էին վերցնել, հարուստները այդպիսով շահագործում էին: Կազմակերպութիւնը

այդ գործը իր վրայ վերցրեց ընդդէմ մեծ կապալառուների, ի հարկէ ոչ-գիւղաւորական ուժով: Այդպիսով գիւղացիները այս տարի շահուած են 11 հազար ուրլի: Թուրքերը, բնիկները ստացան նոյնպէս համաձայն գունչի(?): Մեծ դեր խաղացին այդ գործը պլուս բերելում մի քանի հասունացած գիւղացիներ: Սա լաւ պրոպագանդայի միջոց ծառայեց:

Մի ուրիշ հողի վերաբերմամբ, որ պատկանում էր պետութեան, այդ հողի վրայ կային եւ գերմանացիներ, մենք անպատճառ ուզում էինք մեր ձեռքը վերցնել. յաջողուեց մասնաւոր կապալառուներին հեռացնել՝ 2 մալական, 1 գերմանացի եւ 1 հայ: 917 ուրլով մնաց մալականներին, որոնք ստիպուած եղան գիւղել մեզ: Միայն 100ական ուրլի վերցրին իրենց խեղձերի համար: Նրանց մեզ օգնելու պատճառը մեր առաջուայ նրանց օգնելն էր: Երբ նրանց եզները ծախում էր կառավարութիւնը, մենք բոյկոտ արինք, սա գոհունակութիւն առաջացրեց գերմանացոց մէջ: Հողաբաժանման համար մեծ չափով խնդիրներ են դրուում: Մենք առաջարկում ենք համայնական բերքը բաժանելու պայմանով(?): Գաղթականութիւնը մեծ բեռ է տեղացիների համար, — հող չունեն, կորիւներ, բողոքներ: Հարկաւոր է տեղական հողերը ձեռք բերել ինչ միջոցով էլ որ լինի, մօտ 27.000 տեսետին հող է: Գործարանական բանուորութիւն չկայ:

XIIՐԴ ՆՌՍ, 3/IV ԵՐԵՎԱՆԵԱՆ

Նախագահ Հ(ամօ) Օ(հանգստեան).— Նախքան օրակարգին անցնելը նախագահն յայտնում է ժողովին, որ նիստին ներկայ է ձայնների խմբապետների ներկայացուցիչը, որը խնդրում է լսել խմբապետների բողոքը՝ Արեւելեան Բիւրոյի, Մեծ-Քաղաքի Կենտրոնական Կոմիտէի եւ Երջանային Ժողովի դէմ, որոնք լուծել են ձայնների Մարմինը, նրանց հակադեմոկրատիկական գործունէութեան պատճառով: Ժողովը որոշեց մտցնել օրակարգի մէջ՝ ընդհանրապէս կազմակերպական հարցը, որին նուիրել վերջին նիստը եւ այնտեղ լսել ձայնների ներկայացուցչի բողոքը, եւ այնտեղ էլ վճռել թէ Ռայոնական Ժողովը ուզո՞ւմ է արդեօք քննել այդ բողոքը՝ թէ ոչ:

Այնուհետեւ նախագահը անցնում է հերթական ազրարային(79) խնդրին եւ առաջարկում է ժողովին նախ եւ առաջ որոշել թէ ի՞նչ ուղղութեամբ պիտի խօսել դրա մասին: Միայն գործնական, թէ միեւնոյն ժամանակ սկզբունքային տեսակէտից:

Մեմ.ն(?)— Ազրարային հարցի վերաբերմամբ անհրաժեշտ է մշակել ընդհանուր տեսակէտ եւ ոչ թէ քննել գործնական խնդիրներ, մանաւանդ որ Ռայոնական Ժողովի մշակած տեսակէտը կը ծառայի իբրեւ հիմք խորհրդին եւ Ընդհանուր Ժողովին, որոնց վճիռ-

ները էական նշանակութիւն կ'ունենան ծրագրի համար:

Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).— Տեսակէտը որոշակի չեղտուած է նախագծի մէջ(39). եթէ ընկերներից ոմանք ունին տարակուսանքներ ծրագրի այս կամ այն տեսակէտի նկատմամբ՝ նրանք ի հարկէ կարող են խօսել: Բայց հարցը պիտի դնել գործնական հողի վրայ, եւ խնդրեմ պարզաբանութիւնը եւ վիճարանութիւնը կանոնաւորելու համար հարցը պիտի, իմ կարծիքով, հետեւեալ մասերի ստորաբաժանել.— բանուորական, արհեստաւորական եւ գիւղացիական: Հարցն այսպէս դնելով, մենք մօտենում ենք խնդրի գործնական լուծման եւ միեւնոյն ժամանակ ընդհանուր տեսակէտի վերաբերմամբ տարակուսանքներ ունեցող ընկերներին չենք զրկում հնարաւորութիւնից՝ յայտնելու իրենց կարծիքները:

Միքայէլ Վարանդեան.— Նախագծի(35) վերաբերմամբ մենք իրաւունք չունենք որեւէ փոփոխութիւն ընդունելու: Մարմինների զեկուցումները ազրարային հարցի վերաբերմամբ Ռայոնական Ժողովին պիտի ծառայեն նիւթ քննելու եւ որոշելու թէ նախագծի ընդհանուր վճիռները ի՞նչ կոնկրէտ ձեւեր պիտի ընդունեն գործնական կեանքում: Այս տեսակէտից ես թերի եմ համարում Մարմինների ուղարկած տեղեկութիւնները, որոնք չեն ցոյց տալիս թէ ի՞նչ տնտեսական ստորաբաժանումներ արդէն գոյութիւն ունեն մեր գիւղացիների մէջ:

Ռոստոմ.— Այս հարցը պիտի դնել ընդհանուր ձեւով. պիտի թոյլ տալ եւ սկզբունքների՝ քննութիւն, քանի որ նախկին Ռայոնական Ժողովը ծրագրի այդ իսկական կէտ ընդունել էր ձայների մեծամասնութեամբ, իսկ այդ ձեւով ընդունուած տեսակէտը, բնական է որ կարող էր մէկ տարուայ ընթացքում փոփոխութեան ենթարկուել:

Մեծ-Քաղաքի ներկ(այացուցիչ).— Կրկնում եմ, որ հարցը պիտի դնել գործնական հողի վրայ եւ այս հանպամանքը թէ՛ հարցը կը մօտեցնէ իր լուծման եւ թէ՛ բաւարարութիւն կը տայ այն ընկերներին, որոնք ուզում են խօսել եւ սկզբունքի տեսակէտից:

Ժողովը ձայների մեծամասնութեամբ, առանց երկուքի, ընդունում է հարցի գործնական քննութիւնը:

Ա. Ս.—ն.(80).— Գաւառները բողոքում են ծրագրի դէմ, պէտք է լսենք այդ բողոքները եւ քննութեան առնենք նրանց. առաջարկում եմ ընկերներին լրացուցիչ տեղեկութիւններ տալ, թէ ինչպէ՛ս են վերաբերում պաւառներում մեր նախագծին:

Ղարիբ(44).— Դժգոհութիւն հենց կուսակցութեան մէջ էլ գոյութիւն ունի եւ մենք չենք կարող հաշուի շառնել այդ դժգոհութիւնները:

Այնուհետեւ պատգամաւորները տալիս են լրացուցիչ տեղեկութիւններ իրենց շրջանների արամադրութեան մասին:

Քարի ներկ(այացուցիչ)։— Ժողովուրդը դժգոհ է, որովհետեւ չի ուզում. նախ՝ ցարիզմի դէմ կռուել, երկրորդ՝ սոցիալիստ լինել եւ երրորդ՝ Հնչակեան դառնալ, որովհետեւ սոցիալիզմի հետ ժողովուրդը կապում է Հնչակեան դաղափարը։ Գալով կուսակցութեան անդամներին, նրանցից 120 խումբ ենթակոմիտէներին հետ միասին բողոքում են ծրագրի դէմ. նախագիծը ընդունում են միայն 15 խումբ եւ տեղական կոմիտէն։ Նախագիծի դէմ է եւ Կ. Կ. ի մի մասը։ Դըժգոհները մասամբ բուրժուական տարրեր են, բայց մեծամասնութիւնը դժգոհ է, որովհետեւ համոզուած է որ մենք չենք կարող կռուել ցարիզմի դէմ եւ որ եկեղեցական կալուածքները ու դպրոցները վերադարձնելուց յետոյ մեզ մնում է միայն թուրքահայերի դատը։

Ռոստոմ.— Քարի շրջանի բողոքը զլիաւորապէս Կ. Կ. ի դէմ է եւ ոչ նախագիծ(39)։

Բաճառտեղ(81)։— Կ. Կ. ի դէմ են իրրեւ նախագիծի կուսակիցներին դէմ։ Ես համոզուեցով սոցիալիստ չեմ, բայց Դաշն(ակցութեան) պրեստիժի(82) համար ես իմ ձայնս տուի։ Հասարակութեան մէջ մի հոսանք կայ, որ ձգտում է տապալել Կ. Կ. ի կազմը, որպէսզի դրանով տապալին նախագիծը։

Նախագահ.— Մեծ-Քաղաքից ուղարկուած երկու պրոպագանդիստները ժողովրդի տրամադրութեան մասին հակառակ կարծիք էին յայտնում, նրանք նոյնիսկ հիացած էին։

Վարժապետ.— Ջրաբերում նախագիծի դէմ եղած հակառակութիւնը սկզբում պայմանաւորուած էր իմ անձնաւորութեամբ. երբ հարցը դրուեց սկզբունքի հոգի վրայ, սկզբում նկատելի էին երկու հակասող հոսանքներ, բայց այժմ բոլորն էլ սոցիալիստական են։

Քարի ներկ(այացուցիչ)։— Ջրաբերողի ներկայացուցչի կողմից դա չափազանցութիւն է, որովհետեւ այնտեղի բողոքները նախագիծի դէմ հասնում էին մինչեւ Քարը։

Մրգաստան.— Այնտեղ միայն հիմա(?) նախագիծի դէմ դժգոհութիւն չէ եղել։ Տեղական եւ Կ. Կ. ի անդամները նախագիծի կողմնակիցներ են։ Յաջողութիւնը որոշ չափով պիտի վերագրել մեր պրոպագանդիստներին տակտիկային, որոնք առանց անմիջապէս արտասանելու սոցիալիզմի խօսքը, իրապէս մղել են սոցիալիստական պրոպագանդ։

Բաճառտեղ(81)։— Մրգաստանի լուսթիւնը արդիւնքն է ոչ թէ համոզմունքների, այլ պրոպագանդի բացակայութեան։ Ամբողջ ժողովուրդը եւ նոյնիսկ տեղական Մարմինը, անցեալ Նոյեմբեր ամսին, երբ ես այնտեղ էի, զաղափար իսկ չունէին նախագիծ(39) մասին։

Ժլատ.— Կազմակերպուած աշակերտութիւնը գործակալներ են Մոզզոկի շրջանում։ Այգիներում աշխատող մշակները, շնորհիւ պրոպագանդի, նախագիծի կուսակից են։ Կ. Կ. ն սոցիալիստական է։

Նալբանդ.— Թէպէտ եւ Նալբանդի շրջանը խոշոր արդիւնաբերական կարեւոր վայրերից մէկն է, բայց եւ այնպէս այնտեղ մենք չունենք «հայ բանուորութիւն», ինչպէս եւ արհեստաւորների դասակարգ. կան տեղ-տեղ գործարաններում եւ ուրիշ ծառայութիւնների մէջ հայ բանուորներ, բայց դոքա պատահական մարդիկ են եւ շատ չնչին թուով։ Դրա փոխարէն հայ գիւղացիական մասսա, որ անխառն բնակչութիւն կազմելով կարող է յաջող կազմակերպման հնարաւորութիւն տալ յատկապէս յենուելով հողային խնդրոյ վրայ. այս առթիւ պիտի նկատել, որ առ հասարակ այս երկու տարուայ ընթացքում, ինչպէս քաղաքներում, այնպէս եւ շրջանի մնացեալ մասերում գիտակցութեան արթնացումը ցանկալի չափով տեղի չէ ունեցել։ Այս ուղղութեամբ միայն այս տարուայ սկզբից արուել են որոշ քայլեր եւ հրաւիրուած են յատուկ շրջիկներ։

Թմբուկ.— Նախկին կազմը նախագիծի հակառակորդ էր։ Ներկայ կազմը ինքը ընդունում է, բայց դեռ ժամանակ չէ եղել մասսաների մէջ պրոպագանդ մղելու։

Նաւահանգիստ.— Կ. Կ. ն ոչ մի տեղեկութիւն չունի նախագիծ(39) մասին։ Եալթայում չեն ընդունում նախագիծը, որովհետեւ անգիտակից են։

Անտոն.— Նաւահանգստում ծանօթ չեն ոչ միայն նախագիծին, այլ եւ հիմնական ծրագրին։ Եթէ ստանային, դարձեալ դժուարութիւններ անխուսափելի են, որովհետեւ նրանք չէին յարմարուում մեր երկրի պայմաններին։

Մեծ-Քաղաք.— Նկատելի է որ թուրքահայերը ընդհանուր առմամբ դէմ են նախագիծին, որովհետեւ վախենում են, որ դա ամբողջովին կը խլի Դաշնակցութեան ուշադրութիւնը եւ կը հեռացնի նրան թրքահայկական դատից։

Ոսկանապատ.— Թէ՛ Մարմինը եւ թէ՛ անդամները բոլորն էլ նախագիծի կողմնակիցներ են։ Նկատելի է այն, որ նախագիծը ընդունելով մենք ոչ միայն ստուարացնում ենք աշակերտութիւնը եւ ուսանողութեան շարքերը, այլ մինչեւ անգամ տատանուողները դառնում են դէպի մեզ։

Ապառաժ.— Երջանը կլանուած է եղել ընդհանրումներով։ Մարմինները Եուզում եւ Գանձակում նախագիծի կողմնակիցներ են, բայց զբաղուած լինելով հնարաւորութիւն չեն ունեցել պրոպագանդ մղելու։

Ալ(ետիք) Սահ(ակիս)Յ.— Գաւառների տրամադրութեան մասին այստեղ խօսուածները անհամապատասխան են իրականութեան։ Մրգաստանում, օր(ինակ), պրոպագանդիստների ստացած տպաւորութիւնը չափազանց ծանր է։ Օրդուրաթում ժողովուրդը նոյն իսկ ուրախ է հայ-թուրքական ընդհարումների (համար)։ Նրանց կարծիքով, եթէ այդ ընդհարումները չլինէին, Դաշնակցութիւնը պիտի նետուէր յեղ(ափո-

խական) կռուի ասպարէզը եւ նրանց կրակի մատնէր։ Արեւսանդրապոլում բացարձակ ասում են, որ չարիքը վերացնելու համար հարկաւոր է մէկ-մէկ բռնել սոցիալիստներին եւ դուրսնելը կտրել։ Մեծ-Քաղաքի Կ. Կ. ի հրատարակած թուցիկը միւս կուսակցութիւնների հետ միասին՝ դժգոհութիւն առաջ բերեց։ Ժողովուրդը մեզ ճանաչում է իբրեւ մի համազգային կուսակցութիւն, որ պաշտպանում է ազգային շահերը թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ Տաճկաստանում։ Նոյնը մտաւորապէս կարելի է ասել եւ Մարմինների վերաբերմամբ։ Կան գիտակից անհատներ, բայց en masse(53) մեր կազմերը նախագիծի հետ այսօր էլ ծանօթ չեն։ Մեր կազմերի մի քանիսը թէեւ տեսականապէս ըմբռնել են ծրագիրը, բայց նրա գործնական կողմը մեր կեանքին համապատասխանելու չափ պարզ չէ եւ նոյն իսկ վիճելի։ Օր(ինակ) թէ՛ որքան իրագործելի է մեզ մօտ Ֆետերացիան, որքան սոցիալիզմը. — այս խընդիրները նրանց մօտ մութ են, հետեւաբար մենք պէտք է ծանրանանք գործնականի վրայ։

Այնուհետեւ ժողովը անցնում է գիւղացիական հարցի քննութեան։

Ջրաբեր.— Ջրաբերող ազրար պրոգրամ(83) է մշակել։ Ըստ այդ պրոգրամի՝ հողերը պէտք է պետականացնել, կարգաւորել հարկային սիստեմը, տասանորդ բնական բերքերից վերածել դրամականի, որ թէ՛ կը պարզէ հողագործի եւ հողատիրոջ յարաբերութիւնը եւ թէ՛ կը հեշտացնէ յեղափոխական գործը։ Տասանորդը ստեղծել է մեզ մօտ այսպէս կոչուած Սուբաշիների ինստիտուտը, որոնք իրենց քմահաճոյքով եւ կաշտակերութեամբ հարստահարում են հողագործին։ Հաւաքած տուրքերը երկար ժամանակով մնում են Հաւաքուած, մինչեւ որ կաշառքով կարողանան Սուբաշուն ստիպել, որ պայ ժամանակին յանձնի հողատիրոջը, որպէսզի բերքը չփախի եւ ստիպուած չլինեն մէկը երկուսով վճարել։ Պէտք է միեւնոյն ժամանակ աշխատել վերացնել բոլոր միջնորդ էլէմենտները(62) եւ հողագործին և հողատիրոջը կանգնեցնել դէմ առ դէմ։

Յովնան(35) ու Եիւ-Սը(84)։— Հարցապնդումներով իրենց տարակուսանքն են յայտնում, թէ ինչո՞ւ պէտք է հողը նախ պետականացնել, յետոյ համայնացնել, երբ կարելի է ուղղակի համայնականացնել. երբ պետութիւնը իր ձեռքին առնէ հողերը՝ կարող է ծառայեցնել ուսացման նպատակին, տալով նրանց ուսուցողականներին։

Ալ(ետիք) Ս(ահակեա)Յ.— Պէտք է ազրարային հարցը բաժանել մի քանի մասերի. նախ այն հարցերը, որոնց լուծումը կախուած է անմիջապէս մեզից եւ երկրորդ՝ որոնք կապուած են արտաքին պայմանների հետ։ Այնուհետեւ պիտի վերցնել հետեւեալ կատեգորիաները՝ եկեղեցական հողերը, միւլթապատկան եւ պետական հողերը։ Առանձնապէս հասունացած է մանաւանդ միւլթապատկան գիւղացիների հարցը, որոնք

30ից տալով 4ը, տարիների ընթացքում արդէն յետ են դնել իրենց հողերը եւ որոնց համար ազրարային հարցը միանգամայն մատչելի կը լինի։ Նոյնպէս պիտի քննենք թէ ի՞նչ միջոցներով կարող ենք աւելացնել հողի չափը սակաւահող գիւղացիներին, լինեն նրանք կալուածատիրական թէ՛ արքունական։

Ռոստոմ.— Մենք պիտի ձգտենք յեղափոխական ճանապարհով համայնացնել հողը. բայց կան եւ լեզալ միջոցներ, որոնք մենք չպիտի արհամարհենք։ Եկեղեցական հողերը մենք կարող ենք եւ պէ՛տք է համայնացնել։ Հեշտ է նոյնպէս փոխադարձ համաձայնութեան գալ եւ հայ կալուածատէրերի հետ, որոնք վերջին դէպքերի տպաւորութեան տակ մի տեսակ բարեացակամ տրամադրութիւն են ցոյց տալիս դէպի գիւղացիները։ Բէկական հողերի վերաբերմամբ մենք պէտք է դիմենք այլ սիստեմի, քանի որ բէկերից չատերը փախել են հայերով բնակուած իրենց կալուածներից եւ ուրախ կը լինեն եթէ կալուածների փոխարէն ոտանային դրամական վարձատրութիւն եւ յարաբերութիւնները կտրէին։ Կարծում եմ, որ օր(ինակ) Թաշէնի բէկերը, որոնք փախել են եւ չեն կարողանում վերադառնալ, ուրախութեամբ կը ծախէին իրենց հողերը եւ այդ դէպքում մենք պիտի օգտուենք եւ գիւղական բանկով։ Յեղ(ափոխական) ակտերը ազրար շարժման մէջ կ'ունենան պետական նշանակութիւն եւ մենք պէտք է այդ դէպքում ներդաշնակենք մեր գործունէութիւնը համառուական յեղ(ափոխական) կուսակցութիւնների հետ։ Բայց առ այժմ մենք հնարաւորութիւն ունենք վերեւ յիշած միջոցներով որոշ չափով լուծել բէկական հողատիրական հարցը։ Պէտք է շրջաբերականով հարցնել, թէ ո՞ր համայնքը որքան հող ունի եւ ո՞ր հողի վրայ աչք ունի։ Դա կը ծառայի իբրեւ նիւթ եւ փոխաբայի կից գումարուած ազրարային կոմիտիայի համար։ Ճիշդ է, սա յեղ(ափոխական) միջոց չէ, բայց ի նկատի ունենալով օրուայ կարիքը, մենք պէտք է շահագործենք եւ այդ միջոցը։ Ես առհասարակ համաձայն եմ Ղարսի առաջարկած սեկցիաների սիստեմին, որտեղ կը լինի եւ հողային սեկցիա։ Գալով համայնական աշխատանքին, պէտք է ասել որ հայ-թուրքական ընդհարումները մի քանի հայ գիւղերի համար վտանգաւոր դարձնելով անհատական դաշտային աշխատանքը, պատճառ դարձան այն երեւոյթին, որ այժմ մի քանի տեղեր գիւղացիք միասին են դուրս գալիս եւ համայնականօրէն են տանում դաշտային աշխատանքը։ Համայնական աշխատանքի փորձեր պէտք է անել մանաւանդ նոր հիմնուող գիւղերում, առանձնապէս Գանձակի դաւառում, որտեղ ունեն դուխորոնների(?) նման համայնական ձեւերով տնտեսութիւն վարող հարեւաններ։

Գարօ.— Հողային հարցը մեր ապագայ գործունէութեան կենտրոնական մասն է լինելու եւ պահանջում է լուրջ վերաբերմունք. ներկայ Ռայոնական Ժո-

զոյր նրան չի կարող լուծել: Անհրաժեշտ է կազմակերպել հարցի ուսումնասիրութիւնը. քանի որ խնդիրը ոչ միայն յեղ(ափոխական)-գործնական է, այլ եւ գիտական, եւ յաջորդ Ռայոնական Ժողովին պիտի ներկայացնել ուսումնասիրուած զեկուցում: Ներկայումս կարող ենք խօսել, բայց ոչ վճիռներ կայացնել: Նախագահ.— Նախ լսենք մեր կոմպետենտ(85) ընկերների կարծիքները եւ յետոյ միայն խօսենք, թէ մեր ունեցած տեղեկութիւնները բաւական են արդեօք վճիռներ կայացնելու համար:

Մրգաստան.— Հողային հարցը Ռուսաստանում ոչ մի տեղ այնքան լաւ չէ լուծուած, ինչպէս մեզ մօտ: Հենց այն հանգամանքը, որ մեզ մօտ հնարաւոր է հարց դնել թէ գիւղացու համար ո՞րն է դերադասելին, կալուածատիրակա՞ն թէ արքունական պայմանները, մի բան որ Ռուսաստանում անպայման եւ դրականապէս վճռուած է յօգուտ արքունականի, ցոյց է տալիս որ մեզ մօտ կալուածատիրական գիւղացիութեան վիճակը այնքան անտանելի չէ, որ կարողանար ուսական խոշոր ագրար շարժման համար յարմար հող լինել: Հողերի համայնացման մասին Մրգաստանի շրջանում խօսք կար, եւ իրականութեան մօտէն ծանօթ ընկերները այնքան էլ կարեւորութիւն չէին տալիս այդ հարցին ներկայ ռեժիմում, քանի որ հարկերը, միեւնոյնն է, դնալու են նոյն կառավարութեան գանձարանը: Միւլքատարները Երեւանի նահանգում ունին ոչ աւելի քան 10-15.000 տես. հող եւ այն էլ բաժանած չափազանց մանր հողաբաժինների եւ ընկած անջրդի վայրերում: Այսպիսի պայմաններում դժուար է ագրարային շարժում առաջ բերել, կը լինեն մասնակի բարեփոխումներ. օր.՝ տասանորդի չվճարելը, մասնակի բռնկումներ, բայց ոչ լայն եւ խոր ագրարային շարժում: Յամենայն դէպս անհրաժեշտ է շուտով հրատարակել ագրարային հարցի ուսումնասիրութեան համար հարցերի ցանկը:

Թմբուկ.— Մեր շրջանի պայմանները չափազանց ծանր են: Կալուածատէրեր վերցնում են նոյնիսկ գիւղացոց 1/2-ը. ընդհանրապէս տուրքերը հսկայական չափերու են բարձրանում, շնորհիւ հողի սակաւութեան: Գիւղացին հետուութեամբ կը հասկանայ որ 60 տարուայ ընթացքում վճարել է կալուածատիրոջ հողի թերեւս կրկնապատիկը, բայց եւ այնպէս մենք դժուարանում ենք նրան կանգնեցնել հողը սեփականացնելու ճանապարհին, որ կարող է նրան արեան մատնել: Մենք գերադասեցինք քայլ առ քայլ թեթեւացնել գիւղացու վիճակը: Մենք միջամտում ենք նրա եւ կալուածատիրոջ վիճերին եւ աշխատում խնդիր լուծել յօգուտ գիւղացու: Գարնանից աշխատում ենք տուրքը հասցնել 9-ից 1-ի: Նախ քան հարցի լուծումն՝ հարկաւոր է նրա ուսումնասիրութիւնը:

Աւ(ետիֆ) Ս(ահակեան)Յ.— Կարելոր չէ ուսումնասիրութիւնը, որովհետեւ առանձին նշանակութիւն

չունի, թէ ո՞րքան միւլքատարներ կան, օր.՝ Երեւանում եւ Գանձակում, ո՞րքան են նրանց հողերը, 30,000 թէ 50,000. կարելորն այն է՝ միւլքատարական գիւղացիների կէս ճորտական դրութիւնը վնասակար եւ անորմալ է, եւ պէտք է վերացնել այդ դրութիւնը, բայց ի՞նչպէս. կարո՞ղ ենք արդեօք անել այդ յեղափոխական) ճանապարհով եւ ասել բէկերին, թէ այլեւս չենք վճարելու 10 առ հարիւրը մի հողի համար, որի վրայ աշխատում ենք մենք եւ որի վարձագինը իրեն տուրք վաղուց արդէն վճարել ենք: Կը լինի ի հարկէ կառավարութեան միջամտութիւն եւ դա էլ անշուշտ աչքի ասած պէտք է ունենանք: Նախիջեւանում, օր(ի-նակ), այս տարի չեն տալիս տուրքերը, պատճառ բերելով ջարդերը եւ տնտեսութեան քայքայումը, բայց ի՞նչ անել միւս տարին, երբ ջարդերի պատճառաբանութիւնը կը վերանայ: Տա՞ն գիւղացիք տասանորդը եւ եթէ ոչ, ի՞նչ յեղափոխական միջոցներով: Ահա՛ այն հարցը, որ առանց ուսումնասիրութեան էլ պիտի լուծենք:

XIIIԻՐ ՆՒՍ, 4/IV ԱՌԱՍՏԵԱՆ

Նախագահում է Ոսկանապատի ընկ. Մարտիր(ոսր):

Անցնում են ագրարային հարցի քննութեան: Նախագահը յիշեցնում է ընկ. Աւետիքի բերած ստորաբաժանումները, որոնք են՝ 1. միւլքատարական 2. բէկական եւ 3. պետական հողերը, ու միջոցներ՝ լեզալ եւ անլեզալ:

Ջրաբերդի ներ(կայացուցիչ).— Ես ցանկանում եմ նկատել Աւ(ետիք) Ս(ահակեան)ին, որ անհնարին է սեփականացնել հողը, պատճառաբանելով, որ 60 տարուայ ընթացքում վճարուած է այդ հողերի գինը. նոյնն էր Գուրիայում: Եթէ մենք յայտարարենք հողը սեփականութիւն եւ գործնական որեւէ լուծման չենք հասել(?):

Անտոն.— Ես ցաւում եմ, որ առանձին հետաքրքրութիւն չէ նկատուում դէպի այդ հարցը. դա մեր պլխաւոր հարցն է: Անցեալ անգամ տուած տեղեկութիւններից հաւաքած իմ ստատիստիկան(86) ցոյց տուեց, որ այդ հսկայական գիւղացիութիւնը ամենավատթար դրութեան մէջ է եւ եթէ մենք պաշտպան ենք աշխատաւորների շահերի, մեր պլխաւոր հարցը ագրարային(79) հարցը պիտի լինի: Ըստ իսկ եթէ կուրոզացու Դ(աշնակցութիւն)ը կանոնաւոր կերպով գոհացում տալ մի շարք հասունացած խնդիրների, մենք կ'ընդգրկենք ամբողջ հայութիւնը: Իմ կարծիքով Բիւրոն եւ ընկերները պատրաստ բան կ'ունենան. ես կ'ուզենայի առաջ մեր ղեկավար Մարմինների կարծիքը իմանալ:

Մրգաստան.— Ես համաձայն եմ(?) ընկ. Անտոնի հետ. (սխալ կը լինի) եթէ կանգնենք մեր փիլիսոփա-

յական հայեացքի վրայ: Ներկայումս պէտք է կանգ առնել միայն գործնական միջոցների վրայ, իսկ խնդրի տեսական լուծումը թողնել գումարուելիք Ռայոնականին:

Նախագահ.— Ես ընկ. Անտոնի կարծիքը այսպէս եմ հասկանում, որ «Յառաջը» պէտք է իր կարծիքը յայտնէր այդ հարցի առթիւ:

Գարեգին Խաժալ.— Երբ ընկ. Հ(ամօն) նախագահ էր, ես նկատեցի որ նախադժու պակասութիւններ կան, որոնք պէտք է պարզել. կան հարցեր, օր.՝ համայնացումն, որ մութ են. պէտք է պարզել, թէ ի՞նչպէս է Դ(աշնակցութիւն)ը հասկանում այդ «Յառաջ» չի կարող առանց այդ պարզաբանութիւնների իր կարծիքը յայտնել:

Արեւել(եան) Բիւրո.— Ես անցեալ օր, իմ նախագահութեան միջոցին, ցանկանում էի հարցը քննել ընդհանուր առմամբ մեր ուղղութեան տեսակէտից, իսկ Անտոնը հակառակ էր. ես գտնում եմ այսօրուայ առաջարկը հակասական եւ խնդրում եմ Ժողովը շարունակել:

Ժողովը 10 ձայնով ցանկանում է զբաղուել միմիայն հարցի գործնական լուծմամբ:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).— Խըմբաւորութեան մէջ չեմ եղել. բայց կարող եմ Բիւրոյի կարծիքը յայտնել. — մենք ըստ էս-էների(81) այն կարծիքի ենք՝ որ հողը սեփականութիւն լինել չէ կարող եւ յաւելեալ արժէք չպէտք է լինի, իսկ մանրամասնութիւններ բերել անհնարին է, որովհետեւ Կովկասը դեռ չէ ուսումնասիրուած այդ տեսակէտից:

Նախագահ.— Տուած տեղեկութիւններից եկայ այն եզրակացութեան, որ մեր ընկերները մտադիր են այդ հարցը վերանորոգչական կերպով վերջացնել, ինչպէս արել են մի քանի տեղ: Իմ կարծիքով պէտք է դուրս մղել սեփականութեան գաղափարը գիւղացիութեան միջից. գալով գործնականին՝ պէտք է նկատեմ, որ հարկաւոր է չէզոքացնել կապալառուներին եւ տեղը դնել համայնքը. վերջինս հողը պիտի վերցնէ համայնական ձեւով եւ օգտուի այն կերպ: Կալուածատիրական հողերի նկատմամբ պէտք է դիմել յեղ(ափոխական) միջոցների, կալուածատէրերից հողեր խլելու համար: Այժմեան ռեժիմը խիստ պաշտպան կը հանդիսանայ դրանց: Այստեղ հրաժարուում էին որեւէ կտրուկ միջոցից, պատճառաբանելով որ մեր գիւղացոց դրութիւնը լաւ է այդ հողերի վրայ եւ չարժէ այդպիսի զոհարարութիւններ անել: Ես կ'ասեմ, բացի օգուտներից, այստեղ կայ մի ուրիշ բան, — մեր պրէստիժի, գիւղացիութեան գիտակցութեան եւ թուրքերի համերաշխութեան տեսակէտից՝ անհրաժեշտ է այդ բոլորը: Պետական հողերի վերաբերմամբ մերոնք հրաժարուեցին յեղ(ափոխական) միջոցներից եւ որոշեցին կազմակերպել դիմումներ, իսկ ընդհանուր իմ տեսակէտով մօտենում են Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներկա-

յացուցին: Ամփոփելով առանձինրս՝ դալիս եմ հետեւեալ եզրակացութեան.—

1. Պրոպագանդայի միջոցաւ գիտակցութիւն մըտցնել գիւղացիութեան մէջ:

2. Դիմել ակտիւ յեղ(ափոխական) միջոցների՝ հողերը համայնացնելու համար:

Ջրաբերդի ներ(կայացուցիչ).— Ես կ'ուզենայի մի քանի առարկութիւններ անել Անտոնին: Մենք քննելով այդ հարցերը կարծես մօտենում ենք իրրեւ երկրաչափներ: Կան մի շարք մոմենտներ, — օր(ինակ՝) մարդը իր հողերանութեամբ, իբր սեփականատէր եւ հողագործ. հողը իր բնոյթով, եւ սոցա փոխադարձ յարաբերութիւնը: Երկրորդ՝ հողի վրայ աշխատողների փոխադարձ յարաբերութիւնը եւ այլն... ուստի լաւ է անցնել գործնական կատեգորիաների ալֆան եւ օմեկան կազմող անհրաժեշտ բարեփոխութիւններին, մինչ(եւ) այդ եւ նման հիմնական խնդիրների տեսականօրէն լուծումը: Իրրեւ գործնական բարեփոխութիւններից մէկը, առաջարկում եմ տասանորդը փոխանակ բունական բերքով վճարելու, վճարել փողով, իմ անցեալ օրուայ բերած պատճառաբանութեան հիման վրայ:

Ռաստամ.— Մեր գործունէութիւնը պիտի լինի երկու տեսակ միջոցներով, — յեղափոխական եւ լոյալ: Մենք իրրեւ յեղափոխականներ, ի հարկէ պէտք է դիմենք յեղ(ափոխական) միջոցների բայց ներկայ պայմաններում պէտք է մտածել լոյեալ միջոցների մասին եւ դրա շուրջը խօսել:

Արքուն.— Ինձ թուում է, որ մենք երբ խօսում ենք գիւղական հարցի այս կամ այն գործնական միջոցների մասին, պէտք է նախ եւ առաջ ի նկատի առնենք այն իրականութիւնը, որի մէջ ապրում է մեր գիւղացին եւ այդ իրականութիւնից, այդ կեանքից բխող հետեւողական պահանջներին բաւարարութիւն տանք միայն: Խնդիրը, այսպէս, նրանում չէ թէ ի՞նչը լաւ է գիւղացու համար, այլ այն՝ թէ ի՞նչը հիմնական պահանջ, հետեւանք է նրա կեանքի, ի՞նչը հակառակ չէ նրա կեանքի իսկական պրոպրետին(88): Մենք պէտք է աշխատենք ըմբռնել այդ եւ միայն աշխատենք ուղղութիւն, զարկ տալ նրա յառաջխաղացման: Այսպէս մեր գիւղացին 50-60 տարով հողաբաժանում չէ պահանջում, նա ջերմ կողմնակից է — որքան ինձ յայտնի է որոշ վայրերում — հողային սեփականացման, եւ մենք այստեղ դնում ենք համայնացում: Որքա՞ն, հարց է, սա համապատասխան է պրոպրետին, եւ յետադիմական քայլ չէ՞ արդեօք: Պատասխանելուց, այս կամ այն կերպ, ձեռնպահ եմ մնում եւ չեչտում՝ որ հարկաւոր է լուրջ կերպով ծանօթ լինել իրականութեան:

Վախան.— Ես ուզում էի նկատել Ջրաբերդին իւր առաջարկած գործնական միջոցների համար: Այսպիսի պայմաններում, երբ տնտեսութիւնը ինկած է եւ երթեկութիւնը գիւղերից դէպի քաղաք՝ վտանգուած եւ

առ հասարակ աննպաստ, փաստակար է բերքի տասանորդը փողի վերածել. մենք այդպիսով գիւղացիութեան մասնած կը լինենք այն վիճակին, ինչ որ է Տաճկահայաստանում 40ական թուականներին, բնական բերքից տասանորդ վերցնող զիւրտ Դէք-Բէհրի(?) անկուճից յետոյ, տիրապետող փողոյսին սիստեմի շնորհիւ: Աւելի լաւ է գիւղացին իր տեղում վճարէ բնական բերքով, քան թէ հազար ու մի շարժարանքներով անպայման եռակի ծախսերով արտահանի եւ փողով վճարէ: Ես վախենում եմ որ գիւղացին, հնարաւորութիւն չունենալով արտահանել, ստիպուած լինի վճարել ոչ թէ ցորենով, որը այդպիսի պայմաններում չեն վերցնի, այլ այնպիսի անհրաժեշտ բաներով, որը աւելի շուտ փող է դառնում, քան ցորենը, օր(ինակ) տան կարասիքը, խալիչայ, արծաթեղէն եւայլն:

Ջրաբերդ.— Վահանը չի լսել երէկուայ իմ բերած պատճառարանութիւնը, — մենք փողի վերածելով, յեղափոխական միջոցներով կազմակերպում ենք նաեւ շուկայ. մենք պէտք է արգիլենք վախառուներին եւ այլ մեծ քանակութեամբ ցորեն գնողներին:

Գարօ.— Գանում եմ որ լուրջ տեղեկութիւններից յետոյ (պէտք է) անցնենք գործի: Մեր ընկերը ճիշդ է նկատում, որ փողոյսին սիստեմը փաստակար է:

Ալ(եքսանդր) Պ(ապովեա)ն.— Ես միանում եմ Գարոյին, — քանի որ պէտք է լինի Ռայոնական Ժողով, լուրջ քննութիւններից յետոյ անցնենք այս հարցին. իսկ այն պալեատիւ(89) փոփոխութիւնները, որ անում է Գաշ(նակցութիւն)ը, թո՛ղ անի ժողովրդի միջոցով: Մրգաստանում արած յաջող փորձը վախառուների դէմ, զինուորների միջոցով, լաւ է, բայց այդ չպէտք է սիստեմ դարձնել:

Ստեփան Տ. Մ.(22).— Եթէ ամէն բան թողնենք ժողովրդի կամքին, ինչպէս ասում են, ոչինչ չի դուրս գայ: Գալով հողատիրութեան, ես պէտք է ասեմ, որ մեր շրջանի գիւղացու կեանքը, դիմում է դէպի համայնացումը: Երբ գիւղը համայնացում է հողը, դիմում է սեփականութեան, բաժանման սկզբունքով 5 եւ 10 տարով: Նկատուած է այն, որ որտեղ շատ է մնում հողը գիւղացու ձեռքում, լաւ է մշակում: Ինչ է մնում միջոցներին, յեղափոխական միջոցներին դիմելու հրահարաւորութիւն չկայ, իսկ միւս կողմից՝ հողի կարիքը ահագին է, պէտք է միջոցներ գտնել. եթէ հնար լինէր թուրքերի արօտատեղիներից օգտուելու, լաւ կը լինէր: Պէտք է միջոցներ ձեռք առնել պետական մարդկանց սխալ հողաբաժանման դէմ, որը արուում է ի նպաստ ոռոս գաղթականների: Ինչ մնում է կալուածատիրական հողերին, եթէ հնար չկայ յեղափոխական միջոցներով վերցնելու, պէտք է գնել: Միակ բանը՝ մեր անելիքը պէտք է լինի մատչելի տոկոսով գնել կալուածատիրական հողերը, համայնական հիմքերի վրայ:

Գարեգիմ Խաժակ.— Ստեփանի առաջարկները մեր

գործը չէ, այդ ամէն մի կուլտուրական մարդու գործն է: Ես տեսնում եմ, որ ծագած հարցերի մասին չեն խօսում. ինձ թուում է թէ խնդիրը նրա մէջն է թէ պէ՞տք է ազրարային(19) շարժում սկսել: Ինչ մնում է տասանորդի փողոյսին սիստեմին՝ Շուշում, Գանձակում հնարաւոր է. իսկ այնտեղ ուր հող չկայ, այդ փաստակար է:

Անտոն.— Ես կ'ուզէի Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներկ(այացուցիչ)ին նկատել, որ անցեալ Ռայոնական Ժողովը ընդունել է համայնացումը եւ մինչեւ այսօր ղեկավարող Մարմինները չեն պարզաբանել այդ խնդիրները: Ոնդիրը հասունացած է եւ ապահովուած մեզ մօտ՝ շնորհիւ յեղափոխական շարժման, այդ հարցերը լուծելու համար պէտք է պրոպագանդ անել. պրոպագանդի վայրը «Յառաջ»ն է, ինչո՞ւ նա լուրթիւն է պահպանել: Ահա ինչն է նկատելի: Քանի որ անցեալ ժողովին չեմ եղել ես, ցանկանում եմ ծանօթանալու: Գալով մթերքով եւ փողով տասանորդ վճարելու մասին, կ'ասեմ, որ այդ կախուած է տնտեսական զարգացման աստիճանից: Տաճկահայաստանի վերաբերմամբ ընկերոջ ասածները՝ Մարքսը նկատել է իբրեւ տնտեսական զարգացմամբ յետ ընկած երկրի: Այստեղ լաւատեսութիւնը մեր գիւղացու կեանքի (նկատմամբ) ծայրայեղութեան է հասնում. ասում են՝ նա լաւ է ապրում, որովհետեւ արդիւնքի 1/4ն է վճարում, — դա սխալ է, եթէ աչքի առաջ ունենանք տնտեսական պայմանները եւ տասանորդի յարաբերութիւնը: Եթէ այդ եւ նմանօրինակ կուլտուրական եւ այլ յարաբերութիւններ աչքի առաջ ունենանք, կը տեսնենք որ մեր գիւղացու դրութիւնը աւելի վատ է քան թէ մի ուրիշ տեղ. ազրարային շարժումը այնքան հասունացած է մեզ մօտ, որքան Վրաստանում եւայլն: Կալուածատիրական հողերի նկատմամբ կարելի է ասել, որ դրանք գտնուում են մեծ մասամբ թուրքերի ձեռքին, ուրեմն եթէ մենք սկսենք որեւէ շարժում, անկասկած է որ թուրքերը մեզ հետ կը գան: Այստեղ է որ պիտի կայանայ մեր եւ նրանց համերաշխութիւնը: Եզրակացութիւն՝ կազմակերպել, թուրքերի հետ միանալ, հրաժարուել տուրք վճարելուց:

Մրգաստան.— Կալուածատիրական հողերի վերաբերմամբ ես համաձայն եմ Անտոնի հետ: Թուրքերի հետ մենք կարող ենք կռիւ մղել տասանորդի դէմ: Եթէ ես ասում էի հարցը չէ հասունացել, այն տեսակէտից՝ որ դա մեծ շարիք է դարձել, որ վերջին պայմանները նսեմացրել են հողի սեփականութեան գաղափարը: Ծատ տեղ գիւղացին հրաւիրուում է գնալ իր հողի վրայ ապրել, ապահովութեան համար:

Ռաստամ.— Պորհրդի ժողովին մենք հրաժարուում էինք համայնացումից, վախենալով ազգային կռիւներից, բայց քանի որ այդ կռիւը եղաւ, մենք կարող ենք վերածել դրան դասակարգային կռուի, ուղղելով մեր հարուածները թուրք կալուածատէրերին: Վանական

հողերը պէտք է թողնել գիւղացիների տրամադրութեան տակ, կոնտրոլ նշանակելով: Կալուածատիրական հողերից, որոնք հայերին են, պէտք է պահպանել ներկայ փոխադարձ յարաբերութիւնը. փաստեր կան որ խոշոր գիջողութիւններ են արել սրանք գիւղացիներին: Թուրք կալուածատէրերին, այնտեղից, որտեղից յաջողուած է նրանց զելլ, պէտք է թոյլ չտալ վերադառնալ: Գալով պետական հողերին, որը նկատուում է Երեւանեան շրջանում, նախ դիմումներով, ապա յեղափոխական միջոցներով պէտք է գնալ եւ վարել:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներկ(այացուցիչ).— Ամենից առաջ մենք մեր շարժումը պէտք է կապենք Ռուսաստանի ազրարային շարժման հետ. այն ժամանակ նա ընդհանուր բնաւորութիւն կ'ընդունի եւ պետական լուծում կը ստանայ: Մասնակի կերպով այս այն կտոր հողերը խելը նշանակութիւն չունի:

Ա(ետիք) Ս(տեփան)ն.— Երբ սկսում ենք քննել այդ խնդիրները, խորխորատների մէջն ենք ընկնում. իմ կարծիքով մենք իբրեւ գործնական կուսակցութիւն պէտք է աշխատենք դոհացում տալ ծագած անհրաժեշտ պահանջներին: Գալով հողերին՝ կ'ասեմ, որ բացի վանական հողերից, որը իբրեւ մեր տնային գործ պէտք է թողնենք մի կողմ առ այժմ, մնացած հողերը պէտք է անցնեն գիւղացու ձեռքը. այդ պէտք է անել յեղափոխական միջոցներով: Ես հակառակ եմ խնդրագիրների, որոնք ոչ մի արդիւնք չեն ունենայ: Գալով միջոցներին, պէտք է ուժեղ պրոպագանդա անել, մեր շարժումը կապել համառուական շարժման հետ:

Մեծ-Քաղաք.— Տեսականի մասին չեմ խօսում, համարելով այդ հարցը արդէն շեշտուած՝ նախապէս: Այստեղ խօսում են թուրք բէկերի եւ խաների հողերը իւրացնելու մասին, այդ միանպատակ վտանգաւոր է, որովհետեւ վերջին դէպքի շնորհիւ ուսյան եւ խանը միացել են եւ շատ հաւանական է որ մենք այդ քայլով նպաստենք հայ-թուրքական ընդհարումներին: Աչքի առաջ ունենալով այդ՝ ես կարծում եմ, որ Գաշակցութիւնը երկու նպատակ պէտք է ունենայ, հեռաւոր եւ մօտաւոր: Թուրք խաների, բէկերի եւ պետական հողերի համայնացումը պէտք է համարուի հեռաւոր, իսկ համայնական եւ վանքապատկան հողերի արդար բաժանումն՝ մօտաւոր: Մօտաւոր նպատակը կարելի է իրագործել հենց այսօր, իսկ հեռաւորը պէտք է թողնել որոշ ժամանակից յետոյ, երբ համոզուած կը լինենք, որ սկսուած շարժումը տարբարային չի լինի, այլ դիտակցական. պէտք է տանել ուժեղ պրոպագանդ, եւ որ գլխաւորն է՝ միատեսակ:

Խաւահկ(եան).— Այստեղ շարունակ խօսուում է հողերը խելու մասին. հարցը նրա մէջն է, թէ խելուց յետոյ ի՞նչ պէտք է անենք: Եթէ պէտք է տրուի մասնաւոր սեփականատէրերին՝ ես համաձայն չեմ. պէտք է պարտաւորիչ լինի, որ հողերը պէտք է յատկացուին

համայնքին, որից առաջացած արդիւնքը նոյնպէս պէտք է յատկացուի համայնքին: Ժողովը փակուեց ժամը 4ին:

XIVԴՆ ՆԻՍՍ, 4/IV ԵՐԵՎՈՅԵԱՆ

(Շարունակութիւն)

Նախագահ.— Տալով անցած ժողովի վիճարանութեան ընդհանուր պատկերը, առաջարկում է բանաձեւեր տալ խնդրի գործնական լուծման համար:

Երկար վիճարանութեան առարկայ դարձաւ այն հարցը, թէ արդեօք պէ՞տք է բանաձեւների մէջ մտնի, որ այդ խնդիրը պէտք է ուսումնասիրենք, թէ ոչ: Մեծամասնութիւնը կողմնակից էր ուսումնասիրելուն: Այնուհետեւ խօսուեց կատարուելիք բանութիւնների մասին գիւղերում. մեծամասնութեան ցանկութիւնն էր, որ մշակուած բանաձեւերի իրագործումը վերապահուի միայն Կենտրոնական Կոմիտէներին, որոնք առաջնորդուեն իրենց բարոյական ազդեցութեամբ: Այդ ցանկութիւնը ձեւակերպուեց հետեւեալ ձեւով:

Ի նկատի ունենալով, որ մի կողմից հողաբաժանութիւնը մի կնճոտս եւ դժուար գործ է եւ միւս կողմից Դաշակցութեան Մարմինները, ընդհանրապէս վերցրած, ձգտում են, ինչպէս այդ ցոյց տուեց դատավարութիւնը, իշխել եւ բռնաւալ ժողովրդի վրայ, ժողովը ցանկութիւն յայտնեց առանձնապէս շեշտել, բարդութիւնների առաջն առնելու համար, որ հողաբաժիններին միջամտելու իրաւունքը վերապահուում է Կենտրոնական Կոմիտէներին, որոնք մասնակցում են այս գործին իրենց բարոյական հեղինակութեամբ եւ ո՛չ բռնի զինուորական ուժով:

Կարճ վիճարանութիւնից յետոյ, իբրեւ նախարան մեր բոլոր բանաձեւերին, ազրարային հարցի վերաբերմամբ ընդունուեց հետեւեալը.— Ռայոնական Ժողովը, ելակէտ ընդունելով սոցիալիզմի սկզբունքը եւ ձգտելով աստիճանական համայնացման միջոցով հողերից օգտուելու հնարաւորութիւն տալ այն մարդկանց, որոնք աշխատում են հողի վրայ առանց շահագործելու ուրիշի բանուորական աշխատանքը, միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով շրջապատող քաղաքական, տնտեսական պայմանները, որոշեց՝ 1. Համերաշխութեամբ հարեւան վրացի եւ թուրք գիւղացիութեան հետ, ակտիւ կռիւ մղել կալուածատիրութեան դէմ, հողային բաժինները, անտառները, արօտատեղիները գիւղական համայնքների ձեռքը տալու համար, համաձայնեցնելով մեր կռիւը կովկասեան ուրիշ վայրերի եւ համառուսական ազրարային շարժման հետ: Մասնաւորապէս ամէն շանք գործ գնել պահպանելու համար այն արդիւնքները, որ արդէն ձեռք ենք բերել մի քանի վայրերում, հանդէպ թուրք բէկերի եւ հայ կալուածատէրերի:

2. Պետական հողերի վրայ հիմնուած գիւղերում, անտառներն ու արօտները պահել համայնքների վարչութեան ձեռքում:

3. Վարելահողերը ենթարկել պարբերական բաժանումների՝ ըստ նափարի (զլխի համեմատ) եւ ըստ հողերի յատկութեան ու արժեքի (թափուած աշխատանքի համեմատ):

XVԻԴ ՆԻՍ, 5/IV ԱՌԱՌՕՏԵԱՆ

Հերթական հարցն է՝ եկեղեցապատկան եւ վանքապատկան հողերը:

Ոսկանապատ.— Այդ կալուածների հետ պէտք է վարուենք այնպէս, ինչպէս որոշել ենք վարուել մնացածների հետ:

Ուսանող.— Մենք նախազօծով ընդունել ենք եկեղեցու եւ դպրոցների բաժանումն. մենք պէտք է մեր նախազօծին չհակառակենք:

Անտան.— Իմ կարծիքով, համարելով այդ կալուածները մեր ազգային սեփականութիւն, պէտք է ենթարկել ազգային համայնացման:

Ոսկանապատ.— Ի՞նչպէս պէտք է վարուել այն հողերի հետ, որոնց վրայ ապրում են թուրքերը — մեր վանքապատկան հողերի —: Իմ կարծիքով նպատակաւորմար է թողնել իրենց՝ թուրքերին:

Ջրաբերդ.— Այն հողերը, որոնց վրայ թուրքեր են ապրում, կարելի է գոյացած արդիւնքը գործադրել(?) նրանց կուլտուրական պահանջների համար:

Ռաստամ.— Եկեղեցական կալուածները պէտք է դնել համայնքների տրամադրութեան տակ, այսօրուանից պէտք է կոնտրոլ նշանակել եկամուտի վրայ, որը մինչեւ այժմ ի չարն է գործադրուել: Միւս կողմից պէտք է այնպէս անել որ պետութիւնը չկարողանայ դրանք այդ կալուածները. այդ կարող է լինել: Իսկ եթէ դարձնենք համայնքների սեփականութիւն, կարող է ազատուել:

Արշակ.— Իսկ այն հողերը որոնք դեռ չեն շահագործուել ո՛չ թուրքերի եւ ո՛չ էլ հայերի կողմից, պէտք է ազգային սեփականութիւն համարել:

Ա. (Խոխի) Ս(աեակեա)ն.— Ես առաջ կը ցանկայի որ այդ կալուածները ճանաչուեն իբրեւ մեր ազգային սեփականութիւն. դա մեր ընտանի գործն է, հեշտ կարող ենք վերջացնել. յետոյ, այն հողերը որոնց վրայ ապրում են գիւղացիները՝ համայնացնել. իսկ ազատ հողերում տեղաւորել անհող գիւղացիներին:

Մրգաստամ.— Ես համակարծիք եմ Մարտիրոսին եւ միւսներին. իսկ առ այժմ այդ կալուածները դեկավարելու գործը պէտք է թողնել ժողովրդական ներկայացուցչութեան, որը կարող է թեթեւացնել ժողովուրդի անտանելի դրութիւնը:

Անտան.— Թուրքեր մեր կալուածների վրայ չէլ են:

Կարելի է թողնել իրենց: Այստեղ առաջարկում են այդ կալուածները համայնացնել. հարց է միանգամայն, ու՞մից էք վերցնում եւ ո՞ւմն էք տալիս. ժողովրդից խլում էք՝ համայնքին տալիս, մենք հակառակ ենք գնում համայնական էվոլյուցիային. իմ կարծիքով այդ հողերը պէտք է լինեն ժողովրդական-ազգային սեփականութիւն, իսկ ընտանի(90) մի մասը պէտք է գործադրուի հողը շահագործող գիւղացիութեան կուլտուրական պահանջներին, իսկ միւս մասը՝ ընդհանուր ժողովրդին:

Այնուհետեւ վիճարանութիւն եղաւ իրաւաբանական այն իրաւունքների մասին, որոնց հիման վրայ պէտք է կատարուի խաղաղ իրաւական համայնացումը: Երկար վիճարանութիւնից յետոյ եկեղեցական եւ վանքապատկան հողերի վերաբերմամբ ընդունուեց հետեւեալ բանաձեւը.—

Համարելով վանական կալուածները իբրեւ համայն ազգային համայնացուած սեփականութիւն, որ կառավարուելու են ժողովրդի ընտրեալների ձեռքով եւ ծառայելու՝ ընդհանուր կրթական եւ այլ կուլտուրական շահերի պահովութեան համար, որոշուում է անհրաժեշտ հողաբաժիններով հիմնապէս ապահովել աշխատող համայնքների վիճակը (առանց ազգի խտրութեան) եւ վերջիններիս դարձնել մասնակից Կոտ արդիւնքի (րէնտայի)՝ տեղական կուլտուրական պահանջների համար:

Ընդմիջումից յետոյ ժողովը շարունակուում է գրադմունքի առարկան է տէրունական արօտներից եւ անտառներից հողաբաժինները աւելացնելու հարցը:

Անտան.— Մեր գիւղացիութեան մեծ մասը ապրում է այդպիսի հողերի վրայ, որոշ պայմանների շնորհիւ, զլխաւորապէս լեռնային մասերում: Տնտեսութեան բնոյթը մնացել է նոյնը, ժողովուրդը գնալով շատացել է, որի հետեւանքն է եղել ներկայ դրութիւնը. դրան նպաստել է ուսու կառավարութեան գաղթականական քաղաքականութիւնը: Մենք կարող ենք գործել այնպէս, որ մեր ժողովրդի հողային պակասը լրացուի տէրունական հողերից:

Ա. (Խոխի) Ս(աեակեա)ն.— Ես ուզում եմ նկատել, որ այս բոլորը շատ լուրջ խնդիրներ են. ես գիտեմ, որ մեր գիւղացիութիւնը անպատրաստ է, պէտք է հետեւանքների մասին լուրջ մտածել, պրոպագանդի եւ ուժի խնդիր է: Չողեւորուենք թուրքերով: Մրանք իբրեւ նոմաս(91) ժողովուրդ, հողին այն նշանակութիւնը չեն տալիս, ինչպէս մեզ թուում է:

Այնուհետեւ խօսք եղաւ վարձատրութեան մասին, որը մերժուեց: Վիճարանութիւնից յետոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւը.—

Գիտակցելով հայ գիւղացիութեան հողի ծայրայեղ պակասութիւնը եւ կատարուող տնտեսական քայքայումը, ինչպէս եւ այն, որ շօշափելի փոփոխութիւն նրա տնտեսական կացութեան մէջ կարելի է անել միայն նրա հողաբաժինների աւելացումով, որոշուում է պրոպա-

գանդ մղել եւ գործ ածել բոլոր հնարաւոր միջոցները, որպէսզի համերաշխօրէն միւս ազգութիւնների հետ՝ տէրունական, ուղեի(?) եւ մասնաւոր կալուածատէրերի վարելահողերից, անտառներից եւ արօտներից աւելացուեն գիւղական համայնքների հողաբաժինները՝ հաւասարեցնելով վերջիններս ուս գիւղացիների ունեցած բաժիններին(92):

XVIԴ ՆԻՍ, 6/IV ԱՌԱՌՕՏԵԱՆ

Նախագահ.— Ստեփան Գանձակեցին գտնում է, որ հողային հարցը սպառած լինելով, գրադուելու է բանուորական խնդրով:

Ընկ. Արշակ.— Նկատում է, որ հողային հարցը սպառուած չէ եւ քննուելու է մասնաւոր հողերի վրայ ապրող գիւղացիների վիճակը:

Ընկ. Վնտան.— Մանր սեփականատէր գիւղացիներին հարցը հակասութեան մէջ է մեր ընդունած ընդհանուր բանաձեւի նախաբանի հետ: Վերջինս շեշտում է ընդհանուր համայնացման վրայ եւ գտնում է, որ սրա պատճառով երեւանեան դաշտում կարող են լուրջ դժուարութիւններ ծագել. պէտք է ներդաշնակութիւն մտցնել մեր նախաբանի եւ մանր հողատէրերի շահերի մէջ:

Մրգաստամ եւ Ոսկանապատ Ժամանակի սղութեան եւ հարցի անձնակ լինելու պատճառով, առաջարկում են յետաձգել առկախ հողային հարցերը մինչեւ յաջորդ Ռայոնական ժողովը:

Ընկ. Արշակը միանում է այս առաջարկութեանը, աւելացնելով, որ հարցի մշակումը յանձնելու է ձեռընհաս ընկերների:

Ընկ. Անտանը առաջարկում է մանր հողատէրերին վերաբերեալ հարցը առկախ համարել:

Ընկ. Արշակը կարծում է, որ մանր հողատէրեր համարելու է նաեւ այն գիւղացիներին, որոնց համայնքներում հողաբաժանումը չի կատարուել երկար տարիների ընթացքում:

Մրգաստամի ընկ(երը) կարծում է, որ մանր հողատէրեր պէտք է համարել միմիայն նոցա, որոնք գնել են հող. իսկ նոքա, որոնք եղել են համայնքի անդամ, պէտք է ենթարկուեն համայնական գիւղացիութեան վերաբերեալ որոշման, թէկուզ երկար տարիների ընթացքում հողաբաժանումն եղած չլինի:

Որոշուում է, մանր հողատէրերի վերաբերեալ հարցի լուծումը յետաձգել մինչեւ յաջորդ Ռայոնական ժողովը, առաջարկելով մեր ընկերներից նրանց, որոնք ձեռնհաս են այս խնդրում, ներկայացնել ժողովին մի մշակուած զեկուցում:

Ընկ. Համագասպը(93) առաջարկում է Ռայոնական ժողովի քննութեան՝ մեր կազմակերպութեան անդամների պատասխանատուութեան խնդիրը:

Որոշուում է այս խնդիրը մտցնել օրակարգի մէջ: Ընկ. Ռաստամը առաջարկում է Բիւրոյին կից ունենալ մի յանձնաժողով, որը գրադուի ազգային խնդրով. այս յանձնաժողովը կ'ունենայ գաւառներում սեկցիաներ, ուղղութիւն կը տայ այս խնդրով գրադուող գաւառական դաշն(ակցական) Մարմիններին եւ անհատ ընկերներին:

Այս առաջարկը ընդունուում է միաձայն: Ընկ. Ռաստամը աւելացնում է, որ դիւղական շրջաններում մեր նախնական քայլերը պէտք է սկսել կօօպերատիւ ձեռնարկութիւններ կազմակերպելով:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).— Այն բոլոր ձեռնարկութիւնները, որոնք տանում են դէպի համայնացումն, պէտք է մեր աջակցութեան եւ ուշադրութեան առարկան լինեն:

Որոշուեց ընդունել Ռաստամի առաջարկութիւնը՝ կօօպերատիւ ձեռնարկութիւնների անհրաժեշտ կազմակերպութեան մասին գիւղերում:

Ժողովը անցնում է բանուորական խնդրին:

Ոսկանապատի ընկ(եր).— Խօսում է պրոլետարների եւ կիսապրոլետարների — գործաւոր բանուորների, արհեստաւորների աշակերտների — կազմակերպութեան մասին: Հայ բանուորներին, նրա կարծիքով, պէտք է համախմբել իբրեւ պրոֆէսիոնալ(94) միութիւններ, միացնելով նոյն տեսակ դաշնակցական պրոֆէսիոնալ միութիւնների հետ: Կովկասի դաշնակցական պրոֆէսիոնալ միութիւնները պէտք է միացած լինեն Կովկասի այլազգի նոյն տեսակ պրոֆէսիոնալ(94) միութիւնների հետ, որոնք իրենց կողմից այնուհետեւ կը կապուեն Ռուսաստանի նոյն տեսակ միութիւնների հետ: Նոյն սիւստեմը պէտք է ընդունել նաեւ բանուորական միութիւնների նկատմամբ: Թէ՛ բանուորական եւ թէ՛ արհեստաւորների միութիւնները պէտք է ունենան ուղղութիւն տուող կենտրոնական մարմին: Որովհետեւ բանուորական եւ արհեստաւորների միութիւնները անկարող են անջատ ու անկախ գործել գիւղացիութեան միութիւններից, — ուստի նրանց միմիայն հետ պէտք է կապել շահերի համերաշխութեամբ: Առաջարկում եմ, բանուորների համար կազմել առանձին կասսա, — որը բաղկացած կը լինի բանուորների կամաւոր տուրքերից: Բազուում որոշուեց յատկացնել այդ կասսային 3 առ հարիւր, որից 1 բաժին յատկացնել ընդհանուր դաշնակցական ձեռնարկութիւններին, իսկ 2 բաժինը իրենց պրոֆէսիոնալ(94) շահերի պաշտպանութեան գործին: Ընդհանուր դաշնակցական ձեռնարկութիւններ են համարուում թրքահայոց դատի պաշտպանութիւնը, օրդանի հրատարակութիւնը եւ այլն:

Բանուորական կասսան ծառայում է անդամների փոխադարձ օգնութեան, գործադուլի եւ աշխատազրկութեան դէպքում, բանուորների ճանապարհածախսի եւ այն բոլոր դէպքերում, երբ միութեանը պատ-

կաննելուն իբրև հետեւանք՝ բանուորը վնասուում է:

Արհեստաւորներից անդամ կարելի է համարել միայն քարգարների(?), աշակերտներին, քանի որ միւս կարգի արհեստաւորները թիւրիմացութեամբ են մեր մէջ: Հետեւապէս սրանք կազմակերպուելու են. նոյն կերպով դա իրագործուած է արդէն տեղ-տեղ գաւառներում, — Ախլցիս, Ալեքսանդրապոլ եւայլն, ուր Դ(աշնակցութիւն)ը պահպանել է միշտ աղքատ բանուորներին:

Ոսկանապատի ընկ(երոջ) կարծիքով՝ պէտք է հաստատել միութիւնները, թէ՛ գիւղացիների եւ թէ բանուորների, եւ պահպանել նրանց մէջ համերաշխութեան կապ. այդ մարմինները ունենալու են իրենց յատուկ կասսաները, եւ այս ոչ միայն չի հակասում մեր ծրագրին, այլ բխում է նրանից: Կասսաներից ամէն մի միութիւն իրեն կամքով որոշ տոկոս կը յատկացնի ընդհանուր դաշնակցական գործերին:

Ընկ. վարժապետը Բաթումին վերաբերեալ տեղեկութիւններ է տալիս: Նրա կարծիքով պէտք է համախմբել ոչ միայն միատեսակ բանուորներին ըստ գործի տեսնիկայի, այլ բոլոր աշխատաւորներին, որոնք միեւնոյն արդիւնաբերական ճիւղին են պատկանում, — օր(ինակ) նաւթարդիւնաբերող — քանի որ այդ առանձին տեսակի ասուած բանուորներ ըստ էութեան թէեւ շատ են տարբերուում, — օր(ինակ)՝ Բապուի տարաալլչիկը(?) եւ Նաւահանգստի բեռնակիր մշակը, որ նոյն ճիւղի վրայ է, — բայց այս երկուսի մէջ կայ օրգանական կապ: Գործնական եւ տեսնիքական տեսակէտից անիրագործելի եւ շատ դժուար են մասնակի գործադուլները, եւ ընդհակառակն աւելի զիւրին է եւ արդիւնաւէտ՝ երբ գործադուլ են անում միաժամանակ, միեւնոյն գործարանների եւ արդիւնաբերական ճիւղին պատկանող բոլոր աշխատաւորները. աւելի եւս կապ կայ գործարանների բանուորների շահերի մէջ եւ նոյն քաղաքում ապրող միւս կարգի բանուորների, եւ նոյնիսկ միմիանց հետ շահերով կապուած այլ եւ այլ քաղաքների բոլոր բանուորների մէջ, — երբ ընդհանուր թէկուզ կարճ գործադուլով աւելի բան կարելի է անել, քան շատ աւելի երկար, բայց մասնակի գործադուլով:

Կարեւորը տեսնիքական եւ ձեւական տարբերութիւնը է, այլ շահերի համերաշխութիւնը: Վարժապետի կարծիքով երեկոյթներից եւ այլ միջոցներից օգտուելու է(?): Այդ ուղղութիւնը վնասում է գիտակցութեան, ինչպէս եղած է դաշնակցական այլ եւ այլ խաւերում, ուր բարեգործական ուղղութիւնը՝ թուլացրել է գոհաբերութեան գիտակցութիւնը: Բանուորը գիտակցելու է, որ իր մասնակցութիւնը բանուորական ընկերութիւնների մէջ, բարեգործութիւն է, այլ զուհարբութիւն, անհրաժեշտ պահանջ՝ ընդհանուր նպատակի համար: Ուստի պէտք է ա. պրոֆէսիոնալ(94) միտքը լաւ հասկանալ, ք. պէտք է կանգնել

միայն զուտ բանուորական շահերի հողի վրայ:

Ընկ. Վահանը Ոսկանապատի ներ(կայացուցչ)ի բերած խիստ բաժանումները մի քիչ արհեստական է գտնում, քանի որ մի կարգի բանուորը շատ դիւրութեամբ անցնում է միւս կարգին: Պէտք է կանգնել միեւնոյն գործարանում աշխատող բոլոր բանուորների համագործարանային հողի վրայ:

Ընկ. Սմբատը կարծում է որ սխալ է պրոֆէսիոնալ հողի վրայ կանգնելը. քանի որ մենք նոր ենք ուզում ընդհանուր պրոլետարների գիտակցութիւնը զարթեցնել, աւելի նպատակաւոր մար է աշխատել պրոլետարական ընդհանուր քաղաքական-տնտեսական հողի վրայ: Այդպէս է հարցը առաջ գնացել թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ Եւրոպայում, ուր պրոֆէսիոնալ(94) շարժումը բռնում է երկրորդ տեղը: Թէեւ ամէն տեղ էլ բանուորական շարժումը իր վերջնական կէտում յանգել է զուտ պրոֆէսիոնալ տնտեսական տեսակէտի վրայ: Սկզբում բանուորական կուսակցութեան գլխաւոր նպատակներից մէկն է եղել համախմբել եւ կազմակերպել ամբողջ պրոֆէսիոնալ պատկանող բանուորներին: Տեսնիքական տեսակէտից իսկ պրոֆէսիոնալ կազմակերպութիւն աւելի դժուար է առաջ բերել, քան ընդհ. բանուորական շարժում: Լաւ կը լինի նպատակ դնել գոնէ բանուորութեան մի մասին տալ լայն քաղաքական գիտակցութիւն ու հասունութիւն, որից յետոյ ինքնըստինքեան առաջ կը դայ պրոֆէսիոնալ գիտակցութիւն. առ այժմ պէտք է աշխատել բանուորների քաղաքական հասունութեան համար գլխաւորապէս, քանի որ պրոֆէսիոնալ բաժանումներն իսկ դժուար են մեր դեռ եւս չզարգացած եւ քողաքականապէս տհաս բանուորական դասակարգի համար: Ուրեմն մեր նպատակն է դնել բանուորների կազմակերպութիւնը գործարանների եւ շրջանների սահմաններում, ունենալով ոչ այնքան նեղ պրոֆէսիոնալ(94), ինչքան ընդհանուր-քաղաքական նպատակներ: Մանրամասնութիւնները կարող են պարզուել միմիայն մեր կազմակերպութեան ձեւի եւ սիւստեմի փոփոխութեամբ: Կասսաները լինելու են ընդհանուր, հիմնուած բանուորական դասակարգային շահերի պաշտպանութեան հողի վրայ: Այդ կասսաների ընդհանուր միջոցների բաժանումը կատարելու է այլ եւ այլ կարիքների պահանջների համեմատ: Միեւնոյն ճիւղին միայն պատկանող բանուորների կասսաներ կազմելը նպատակաւոր մար է:

Վարժապետ.— Քանի որ մենք զուտ տեղային եւ զուտ պրոլետարական հողի վրայ չենք կանգնած, առանց որոշ սիւստեմի ընդունելը մենք կը լինենք անկազմակերպուած կազմակերպութիւն: Եթէ բանուորական կասսան չլինի զուտ, այլ մտնէ ընդհանուր կասսայի մէջ, միջոցների բաշխումը կը դառնուի Կ. Մարմինների ձեռքերում, եւ բանուորական շահերը կը տուժեն ալ ու ձախ, ինչպէս դա լինում էր անցեալում

Նաւահանգիստ: Բանուորների ազատութիւնը կարող է իրագործուել միմիայն բանուորների ձեռքով, — հետեւապէս բանուորական կասսաները լինելու են առանձին եւ այդ միջոցները գործադուլու են յատուկ վարչական Մարմինների ձեռքով:

Թոստումը հետեւցնելու է, որ մենք ունենալու ենք զատ բանուորական, զատ գիւղացիական, զատ թուրքահայերի եւ այլ կասսաներ. դա անյարմար է:

Ոսկանապատի ներկ(այացուցիչը) պաշտպանում է պրոֆ(էսիոնալ) ուղղութիւնը. գրաշարների պայմաններն ու շահերը տարբեր են դերձակների շահերից ու պայմաններից, բանուորներին բաժանելու է երկու կարգի, ա. գործարանական, որ կազմակերպուում են առանձնապէս եւ ոչ գործարանական: Գործարանական բանուորները բաժանուած են այլ եւ այլ մասնազիտութիւնների. նրանց մէջ կան խոշոր տարբերութիւններ, կայ այլ եւ այլ ճիւղերի շահերի պաշտպանութիւն, այդ ճիւղերի պաշտպանութեան համար հարկաւոր են մասնապէտներ: Պրոֆէսիոնալ(94) միութիւնները չեն խանգարում քաղաքական ընդհանուր գիտակցութեան եւ ընդհանուր բանուորական շահերի գիտակցութեան զարգացման եւս: Չեզ Գերմանիայի եւ Անգլիայի օրինակները, — ուր պրոֆէսիոնալ ընկերային մտքին չեն հակասում:

Արեւ(ելիս) Բ(իւրայ)ի ներ(կայացուցիչը) նկատում է, որ ուսական ներկայ բանուորական շարժումը եւ յեղափոխութիւնը հակասում է դրան(?):

Ոսկանապատի ներ(կայացուցիչ)ը շարունակում է, որ ընդհանուր բանուորական ու քաղաքական նպատակների գիտակցութիւնը կարելի է լուրջ կերպով զարգացնել միայն այդ հողի վրայ: Յատուկ բանուորական կասսան անհրաժեշտ է, այլ կերպ բանուորական կազմակերպութիւնները չեն զարգանայ եւ կը թաւաճին: Կասսաները հարկաւոր են ոչ միայն փոխադարձ օգնութեան համար, այլեւ ընդհանուր բանուորական-քաղաքական կռիւր առաջ մղելու: Միութիւնները հանդիսանում են ամենահզօր միջոցը քաղաքական գիտակցութեան հասնելու համար: Բանուորական մարմինների մղելիք կռիւր բաժանելու է երկու մասի, քաղաքական եւ տնտեսական:

Ստեփան.— Այնուամենայնիւ ի նկատի ունենալով տեղական բացառիկ ազգային պայմանները, հայի ընդհանուր դատը եւ տեղական զինման հարցը, գուցէ դա ձեռնառու չլինի, եւ մենք ստիպուած լինենք աւելի կարեւորութիւն տալ քաղաքական կռիւր առաջ մղելու տեսակէտից (տեսակէտին ?). սխալ է թողնել բանուորներին որպէսզի նրանք որոշեն իրենց տալիք %ի չափը, քանի որ բանուորների գիտակցութիւնը դեռ եւս բարձր է: Ընդհանուր կասսայի ստորաբաժանումները անհրաժեշտ են. կարելի է դրան հասնել՝ ընդհանուր բանուորական մարմինների եկամտի 1/2ը յատ-

կացնելով Դ(աշնակցութեա)ն ընդհանուր քաղաքական նպատակներին հասնելու համար:

Անտոն(6), Ոսկանապատի ներկայացուցչի բերած օրինակին, որ զանազան պրոֆէսիոնալ միութիւնների մէջ երբեմն ծագում են հակասութիւններ, տալիս է մեծ նշանակութիւն: Դա աւելի ընդհանուր երեւոյթ է, քան թէ կարծում է: Կայ մըրցում ոչ միայն հասարակ բանուորների եւ արհեստաւորների, արհեստաւորների եւ գործակատարների, գործակատարների եւ կառավարիչների մէջ, այլեւ արդիւնաբերութեան խոշոր ճիւղերի, հողագործութեան ու արդիւնաբերութեան: Կովկասում ընդհանրապէս եւ նաւթահանքերում մասնաւորապէս՝ կռիւր ունի նաեւ ազգային գոյն, սակայն դասակարգային անտազոնիզմի հետ միասին կայ եւ այդ տարբեր ու հակառակ կողմերի համագործակցութեան անհրաժեշտութիւնը եւ տեղ-տեղ նոյնիսկ ներդաշնակութիւնը: Մեր տեղական մարմինների պարտականութիւնը կայանալու է նրանում, որ նրանք պէտք է ձգտեն համաձայնեցնել աշխատաւոր դասակարգի այլ եւ այլ մասերի շահերը թէ՛ այդ նեղ դասակարգային շահերի պաշտպանութեան համար եւ թէ՛ ներդաշնակութեան համար ընդհանուրի մէջ. բաւական է համաձայնուել, որպէսզի ընդհանուր բանուորական կասսայից յատկացուի որոշ % (50%), որը բացառիկ պարագաներում կարող է փոփոխութեան ենթարկուել, իսկ մնացածը մտցնել Դաշնակցութեան ընդհանուր կասսան:

Թոստումը գտնում է, որ դա հնարաւոր է Եւրոպայում, ուր հաստատուել է արդէն գործարանատէրերի եւ բանուորների յարաբերութիւնների որոշ նորմա, ուր այս կամ այն գործարանը կեղեքումների տեսակէտից առանձնապատկութիւններ չի ներկայացնում, ուր բնականաբար քիչ են մասնակի գործադուլներ առանձին գործարաններում: Իսկ քանի որ մեզանում գործարանները տարբերուում են զգալի կերպով, ըստ ուսյոնների եւ նոյնիսկ միեւնոյն ուսյոնում(95), ուստի աւելի նպատակաւոր մար է մեզանում դնել հարցը համագործարանային հողի վրայ. ընդհանուր պրոլետարական հողի վրայ կանգնելը ձեռնառու է:

Յովնան(35) նկատում է, որ տարբեր է Դ(աշնակցութեան) կասսան, որից որոշ տոկոս յատկացուում է տեղական կարիքներին, տարբեր է զուտ բանուորական կասսան, որը որոշ տոկոս յատկացնում է ընդհանուր կարիքներին: Վերջին տեսակէտը նպատակաւոր չի կարելի համարել:

Գիգուշ.— Եթէ չորոշուի %ը, ընդհանուր բանուորական մարմինների կարիքները կը կլանեն 95%ը միջոցների. դա բնական հետեւանք է բնական զարգացման, հետեւապէս աւելի լաւ է հենց հիմնականից բաժանել կասսաները:

Ընկ. Սմբատ աւելի նպատակաւոր մար է գտնում ազատութիւն տալ տեղական մարմիններին որոշելու

այն թույլ, որը նրանք կարող են յատկացնել ընդհանուր կարիքների համար:

Քարը յիշեցնում է, որ իրենց գործակատարների մարմինը վաղուց ի վեր յատկացնում է որոշ 0/0 ընդհանուր կարիքների համար, եւ դա չի խանգարում մեր կասսային: Նոյնը կարելի է ընդունել եւ բանուորական մարմինների համար:

Ռուստամը նկատում է, որ բան(ուորական) եւ գիւղ(ացիական) մարմինները լինելու են մեր կազմակերպութեան հիմքը, եւ իբրեւ դաշն(ակցական) մարմիններ, նոքա ըստ մեր հին կանոնների՝ պարտաւոր են, պահելով որոշ 0/0 իրենց սեփական կարիքների համար, մնացորդը մտցնել Դաշն(ակցութեան) ընդհանուր կասսայի մէջ: Բանուորական միութիւնները կազմ(ակերպութեան) հիմքի մէջ լինելով, չպիտի նկատուի իբրեւ այնպիսի մարմիններ, ինչպէս աշակերտ(ական) դաշն(ակցական) կազմակերպութիւններ են եւ այլն: Առանձնացնել բան(ուորական) կասսաները՝ ցանկալի է սկզբունքի տեսակէտից:

Արգաստան.— Մեր կողմը ժամանակի ընթացքում փոխուում է, փոխուում են եւ Մարմինների փոխադարձ յարաբերութիւնները: Թողնելով 0/0-ի որոշումը տեղական մարմիններին, կը ստեղծուի անխիչխանութիւն, եւ կազմակերպութեան ընդհանուր գործունէութիւնը կը սուսի: Միւս կողմից, առաջ են գալիս նոր բան(ուորական), գիւղ(ացիական), կազմ(ակերպական) եւ ուրիշ հարցեր: 10-20%ով անկարելի է բաւարարութիւն տալ այդ կազմակերպութիւնների կենսական պահանջներին: Բանուորական կասսաների համար նշանակելու է որոշ 0/0 եւ այլ տեղական կարիքների համար՝ որոշ 0/0: Ընդհանուր կարիքների համար 0/0-ի չափը որոշելու է, ի նկատի ունենալով մեր առաջուայ կազմած պիւտճէի նախադիժը:

Վարժապետը (Ջրաբերդ) յիշեցնում է, որ ընդհանուր մասսայական գործադուլները ունենում են քայքայիչ ազդեցութիւն մեր տնտեսական կեանքում: Միեւնոյն պիւղի բանուորը ունենալու է յատուկ կասսա եւ գնալու է համեմաշխորէն բանուորական միւս ճիւղերի հետ: Մինչեւ օրս գոյութիւն ունեցող բան(ուորական) կասսաները առաջ չեն բերած բաժանումներ:

Ա. (Կոնիք) Ս(ահակեան)ը գտնում է որ հարցերի լուծման դժուարութիւնը առաջ է գալիս նրանից, որ մենք որոշած չենք մեր գործունէութիւնը: Մենք խօսում ենք աւելի ձեւի մասին քան թէ էութեան: Աշխատաւոր մասսան ունի բազմազան անխիչներ եւ բազմազան կարիքներ, թէ՛ գիւղական խաւերում, թէ՛ բանուորական, թէ՛ կովկասում եւ թէ՛ Թուրքիայում: Մենք գիտենալու ենք թէ ի՛նչ ենք անելու, որպէսզի կարելի լինէր որոշել պահանջուած ծախսերի քանակը: Տեղական գործը շատ առաձգական է, եւ փոքր կեանքի մէջ շատ մեծանում է — ինչպէս դա տեղի ունի ներ-

կայումս, երբ ոչ մի տեղից, ոչ մի դրամական օգնութիւն չի ստացուում եւ ընդհակառակը, ամէն տեղերից պահանջուում է: Մենք ունենալու ենք ընդհանուր կասսա եւ որոշ բիւջէ, այլեւայլ գործերի համար, թէ՛ բանուորական թէ՛ գիւղ(ացիական) եւ այլ, եւ ոչ մի մարմին այդ դէպքում չի տուժի: Այդպէս ընդունած էր եւ վերջին ժողովը, որը նայած տեղին եւ ժամանակին՝ յատկացրել էր այս կամ այն վայրին որոշ դրամար: Եթէ բան(ուորական) եւ այլ մարմիններին տանք կատարեալ ազատութիւն, ընդհանուր կասսայում մենք ոչինչ չենք ունենայ: Բացի այդ մենք մոռանում ենք, որ այլ եւ այլ մարմինների գործունէութեան մէջ (թէ՛ տնտեսական եւ թէ՛ քաղաքական) լինելու է որոշ ներդաշնակութիւն: Տեղական կատարեալ անկախութիւնը կը հասցնէ հակասութիւնների, ինչպէս դա եղաւ վերջերս, — Բագուի Թուրքիկը խօսում է հանրապետութեան մասին, մոռնալով Ֆեդերալիզմի պահանջը — մի բան որ հակասում է նախադիժին եւ մեր ընդհանուր ուղղութեան:

Ոսկանապատի Վահան.— Այդ ուղղութեամբ գնալով մենք անկարող ենք պահպանել բանուորական մարմինները: Վերջիններս ստիպուած կը լինեն վճարել որոշ գումար՝ նուազագոյն պահանջների համեմատ Դաշնակցութեան մէջ մնալու համար, եւ ունենալ առանձին կասսաներ իրենց յատուկ պէտքերի համար, — մի բան որ ցանկալի չէ:

Յովնանը նկատում է, որ եթէ ամէն եւս մտածէ միայն իր մասնակի շահերի մասին, կը մոռացուին ընդհանուր կազմակերպութեան շահերը: Դաշնակցութիւնը է եւ մնալու է մի Մարմին, մի կուսակցութիւն: Ընդհանուր միջոցները բաժանելու է ըստ առաջ եկող պահանջների:

Ռ(ուստամ)ը նկատում է, որ Ոսկանապատն իր արուարձաններով ամենածաղկած ժամանակ տուել է 16.000 ռուբլ., իսկ այդպիսի գումարներով, առանց մի ընդհանուր կասսայի օգնութեան, բանուորական դրութիւնը բարելաւել դժուար է:

Գարեգին Խաժակ.— Ըստ ծրագրի տեղական ծախքերը հոպուլուց յետոյ, մնացածը յատկացնելու է ընդհանուր կարիքների համար: Ընդհ. ծախքերի բաժանումը (0/0-ով թէ՛ այլ կերպ) անկարելի է: Բանուորական մարմինների վրայ, նրա կարծիքով զիջող աչքով է նայելու եւ նրանց տալու է ազատութիւն՝ նպաստելու ընդհ. կարիքներին, ինչ չափով որ իրենք կարող են:

Երջ.(?) Ստեփան.— Կասսաների բաժանումը անհրաժեշտ եւ օգտակար է թէ՛ բանուորական խաւերի եւ թէ՛ ընդհ. Հայկական Դատի շահի տեսակէտից: մանաւանդ որ բան(ուորական) շահերին չեն կարող ծառայել միւս դասակարգերից վերցրած գումարները որ մտնում են ընդհանուր Դաշնակցութեան կասսայի մէջ. այդ տեսակ նպաստը կ'անբարոյականացնէ նոյն իսկ բանուորական խաւերը: Բանուորներին Թողնելու

է որոշել այն մասը, որ այդ տեսակ մարմիններ կարող են յատկացնել ընդհ. կարիքներին համար. աւելի նըպատակալարմար է նոյնիսկ որ ընդհ. կովկասեան կասսան ունենայ բիւջէի բաժանում, — ընդհանուր քաղաքական կուուի համար եւ բանուորական տնտեսական կուուի:

Ոսկանապատի մեր(կայացուցիչ).— Եկամուտների կենտրոնացումը փակում է բան(ուորական) շարժման ընկան զարգացումը. բանուորութիւնը ստիպուած կը լինի այդ դէպքում իր նպատակին հասնելու համար դիմել զանազան ծուռ ու մուռ միջոցների:

Ջրաբերդի մեր(կայացուցիչ).— Թուրքական հաշիւը ցոյց է տալիս, որ բանուորական կասսան անշատ իր 30%ային տուրքով ապահոված կը լինի նորմալ բանուորական կուուի: Միւս կողմից յոռետես լինելով (եմ) մեր կենտր. Կ(ոմիտէն)երի սխտեմատիայի(?) նկատմամբ դէպի բան(ուորական) կուուի եւ համոզուած՝ որ վերջինը կ'ընկնի անորմալ ընթացքի մէջ, քանի որ գտումը այնքան շուտ չի կարող տեղի ունենալ եւ մեր որոշումները առ ժամանակ կը մնան թղթի վերայ: Բանուորական կասսայի բաժանումը յատուկ բան(ուորական) վարչութեան ղեկավարութեամբ միայն կ'ապահովէ դասակարգային դիտակցութեան զարգացումը:

Ժլատը առաջարկում է առանձին բանուորական ֆոնտ, որովհետեւ մեր մէջ կան ընկերներ, որոնք դէմ են բան(ուորական) շահերի պաշտպանութեան, լուրջ նշանակութիւն չեն տալիս բանուորական խնդրին:

Ամսոմ.— Այն առաջարկութիւնը, որով կամենում են տեղական մարմինների տրամադրութեան տակ դնել այնքան, որքան հարկաւոր է տեղական պահանջների համար, կարող է ցամաքեցնել մեր ընդհանուր պահանջների համար անհրաժեշտ միջոցները: Բիւջէով մենք անկարող ենք որոշել այս կամ այն պահանջներին կամ ձեռնարկներին բաւարարութիւն տալու անհրաժեշտութիւնը: Գարեգին Խաժակի առաջարկութիւնը՝ որ անհրաժեշտ է բանուորական գործին յատկացնել իրենցից ստացած տուրքերը, աննպատակալարմար է. մենք ստիպուած կը լինենք առանձին կասսա հիմնել եւ գիւղացիական եւ արհեստական շրջանների համար. բացի այդ, այդ ուղղութիւնը չի կարող նըպաստել բարոյական կայերի հաստատելուն՝ Դաշն(ակցութեան) այլ եւ այլ խաւերի մէջ: Ընկ. Ամսոմը առաջարկում է փոխել նախկին որոշումներով հաստատուած նորմաները (10%, 20%), որոնք դրուած էին տեղական մարմինների տրամադրութեան տակ եւ որ չեն կարող բաւարարութիւն տալ ներկայիս լայնատարած պահանջներին:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի մեր(կայացուցիչ)ը գըտնում է, որ նոքա որոնք առանձնապէս ծանրանում են դասակարգային կուուի վրայ, նեղ են նայում խնդրի վրայ: Դաշնակցութիւնը նպատակ է դնում աշխա-

տաւոր հարստահարուող խաւերի շահերի պաշտպանութիւնը: Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներկայացուցիչը գըտնում է որ հարկաւոր է որոշել այն մաքսիմոմը, որ կարելի է ծախսել տեղական պրոֆէսիոնալ կարիքների համար: Սա չէ նշանակում որ այս մաքսիմոմը ամբողջապէս ծախսի. ինչպէս եւ չպէտք է եղրակացնել, որ եթէ բանուորական շահերը պահանջեն աւելի խոշոր գումարներ, այդ օժանդակութիւնը նա չպէտք է ստանայ Դաշն(ակցութեան) ընդհանուր կարիքների համար յատկացուած գումարներից:

Գարեգինը առաջարկում է անորոշութիւններին տեղիք չտալու համար կովկասեան գանձարանը գատել Թուրքահայերին յատկացուած կասսայից:

Արգաստանի մեր(կայացուցիչ)ը կարծում է որ պատակտման մասին խօսողները Թիւրիմացութեան մէջ են ընկնում: Եթէ մենք պահանջում ենք ընդհ. կազմակերպական կասսա, այդ անում ենք ընդհանրութիւն, ամբողջութիւն պահպանելու համար, մեր կազմակերպութեան մէջ: Արգաստանի ներկ(այացուցիչ)ը առաջարկում է տեղական միջոցներից որոշ 0/0 յատկացնել տեղական պործերին իսկ, մնացածը յատկացնել ընդհանուր կարիքների համար: Այս որոշումը կը պործադրուի մինչեւ Ընդհ. Ժողովը, որ պէտք է նախահաշիւ հաստատէ ամէն մի ձեռնարկութեան (բանուորական կամ գիւղացիական) եւ այլ կարիքների համար:

Մեծ-Քաղաքի մեր(կայացուցիչ).— Ամէն մի խումբ, լինի դա բանուորական, պրոֆէսիոնալ, թէ Կարմիր Խաչի, պէտք է ունենայ իր սեփական կասսան: Իրեն, խմբին պէտք է վերապահել որոշելու՝ թէ որքան 0/0 է յատկացնում նա ընդհանուր գործին, իսկ եթէ մենք ձգտենք ճշելու պրոֆ. խմբերի ազատութիւնը, դա կարող է հակառակ հետեւանքների բերել: Մի քանի այլ երկրորդական նկատողութիւններից յետոյ, ընդունուում է ընկեր Անտոնի բանաձեւը՝ հետեւալ կերպով խմբագր(ու)ած.—

— «Գտնելով որ դաշնակցական բանուորական, արհեստաւորների, գիւղացիական միութիւնները կարող են պարզանալ այն ժամանակ, երբ կ'ունենան իրենց յատուկ մարմիններն ու կասսաները,

ի նկատի ունենալով այն սերտ կապը, որ կայ դաշնակցական այլ եւ այլ մարմինների գործունէութեան մէջ, թէ՛ փոխադարձ օգնութեան եւ թէ նրանց ներդաշնակ գործակցութեան անհրաժեշտութեան տեսակէտից,

Հայ Յեղ. Դաշնակցութեան Ռայոնական Ժողովը որոշում է, որ տեղական դաշնակցական Մարմինները (թէ՛ Կոմիտէներ եւ թէ Կենտր. Կոմիտէներ) տեղական գործունէութեան համար կարող են ծախսել իրենց ընդհանուր եկամտից ոչ աւելի քան կէսը, մնացած մասը յատկացնելով Դաշնակցութեան միւսը՝ աւելի ընդհանուր բնոյթ ունեցող կարիքների համար»:

XVIII-րդ ՆԻՍՏ, 6/IV ԵՐԵՎԱՆԻԱՆ

Նախագահում է Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կա-
յացուցիչ) Հ(ամօ) Օ(հանջանեան):

Որոշում է վաշխառուների դէմ կուսելու գործը
թողնել տեղական մարմիններին:

Գրուում է նուագագոյն պահանջների հարցը:

Նախագահ Համօ Օհանջանեան.— Առաջարկում եմ
յայտնել մարմինների կարծիքները:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Մեր բանա-
ձեւն է.— «Դաշնակցական համարում է նա, ով ըն-
դունում է Դաշնակցութեան ծրագիրն ու տակտիկը եւ
իր քաղաքացիական պարտականութիւնները կատարում
է Դաշնակցութեան ծրագրի պահանջների համեմատ»:

Այդպիսիներին է վերապահում ընտրուելու եւ
ընտրելու իրաւունքը. իսկ այն անհատները, որոնք
ծրագիրն ընդունելով հանդերձ չեն ենթարկուում
կեանքում նրա պահանջներին եւ ծրագրին համակրե-
լով միայն նիւթական օգնութիւն են հասցնում, բոլոր
այդպիսիները համարում են օժանդակողներ եւ ձայ-
նատուութեան եւ ընտրուելու չեն մասնակցում:

Մրգաստան.— Իւրաքանչիւր անհատ երբ ընդու-
նում է Դաշնակցութեան ծրագրի հիմունքները եւ
նոյն ծրագրի պահանջին համաձայն ընտրուում է խրմ-
բի անդամ, իրաւունք ունի ընտրուելու անխտիր ամէն
մի դաշնակցական մարմնի մէջ:

Ռոստոմ.— Ճիշդ է որ կազմակերպութիւնը ներ-
կայացնում է բարելոնեան խառնակութիւն, բայց
այժմս վաղաժամ է դեռ այս հարցը արմատական կեր-
պով վճռելու համար, հակառակ պարագայում եղած-
ների 3/4-ը կը կորցնենք: Դաշնակցական խմբերի մէջ
մտնողները անդամ են, բայց ընտրուելու համար պէտք
է ի նկատի առնել այդպիսիների ակտիւ գործունէու-
թեան պատրաստակամութիւնը եւ ընդունակութիւնը:

Ջրաբերդի ներ(կայացուցիչ).— Կոմիտէի անդամ
լինելու համար նախապէս գիտակցական դաշնակցա-
կան որոշ անցեալ ունենայ: Անհրաժեշտ է բազային
պատկանել, Դաշնակցութեան սկզբունքի դաւանու-
մը, յեղափոխութեան շիտակութիւնը. իսկ բազայից
դուրս գտնուածների համար, իրրեւ անվստահելիների՝
պահանջն խիստ է դրուում:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Մեր Սեւ-Քա-
ղաքի կոմիտէն լուծեան է մատնել այդ հարցը, իսկ
ենթակոմիտէն ասում է՝ ակտիւ համար լինել խիստ,
իսկ օժանդակողի համար մեղմ:

Ժլատի ներ(կայացուցիչ).— Բանաձեւ չէ բեր-
ուած, բայց այսպիսի մի որոշում եղաւ, — ով չի ըն-
դունում նախագիծը եւ ծրագիրը եւ տակտիկը, նա չի
համարում դաշնակցական:

Քարի ներ(կայացուցիչ).— Թէպէտ բանաձեւ չեմ
բերել, բայց մեզանում հասարակութեան մէջ երկուքի

են բաժանուած՝ հին եւ նոր դաշնակցականներ:

Գամաղ.— Նրանք որոնք պարտաւորեցուցիչ են
համարում ծրագիրը՝ նրանք ակտիւ, իսկ որոնք ոչ՝
օժանդակող:

Հ(ամօ) Օ(հանջանեան), Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի
ներ(կայացուցիչ).— Այժմս անցնենք ըստ էութեան:
Մինչ այժմ նրանք են եղել դաշնակցական՝ որ տուել
են որոշ տուրք. (օրինակ՝) ամբողջ գիւղեր, գիւղը
ամբողջովին դաշնակցական: Այսպէս՝ Կարսի, Ալեք-
սանդրապոլի շրջանում, Երեւանի շրջանում, Թէպէտ
խմբային է եղել, բայց ցենզ չլինելու պատճառով
դարձեալ նոյնն է առաջացել: Իսկապէս առաջացել է
հայ ժողովուրդ: Ղարսում Աղաբաբեանի ծրագիրը յի-
շում էք, որ մտածում էք կազմել հայկական պարլա-
մենտ, — դա ունէր իր առաւելութիւնները ու պակա-
սութիւնները:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Ենթիւ այն
հանգամանքի որ մենք մինչեւ այժմ քաղաքական կուրի
չենք մասնակցել, այլ եղել ենք ինքնապաշտպանական
կառուածական խնդրում եւայլն, կուսակցութիւնը
լուծուել է ժողովրդի մէջ: Սակայն, որպէսզի կարելի
լինի շարունակել, ոտնձգութիւններ եղել են նոյնիսկ
կառավարութեան կողմից բուրժուաներին իրենց
ձեռք վերցնելու կ(ոմիտէ)ի կազմ եւ ղեկավարելու(?):

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).— Ժո-
ղովականները առաջարկում են խօսել մանրամասն այդ
դէպքի մասին:

Քարի ներ(կայացուցիչ).— Ես ասեմ, — Կրթմ Գի-
րէյն է ասել Ալեքսանդրապոլի քաղաքապետին թէ դուք
էք մեղաւոր, մտէք կազմի մէջ եւ ղեկավարէք: Նա յե-
տոյ սկսեց աշխատել այդ ուղղութեամբ, բայց միջոց-
ներ ձեռք առնուեցին:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Մենք որ
գործնականի մասին մտցրել ենք(?), շատ անհրաժեշտ
է որ Դաշնակցութեան որոշումներով անպատճառ ղե-
կավարուէ(?): Նրանք որոնք ընդունում են Դաշնակ-
ցութեան ծրագիրը եւ տակտիկը, նրանք նոր ցենզի
այլեւս կարիք չունեն. որ նա անցեալ ունենայ, սխալ
է. կարող է մէկը անցեալ չունենայ, բայց իր համոզ-
մունքների համար ընտրուէ, իսկ միւս անցեալ ունե-
ցողը՝ ոչ: Հաւասարապէս պէտք է ընտրուեն: Տուրք
էինք մենք դրել, այսինքն դրամական ցենզը նշանակ-
ուել է ցենզ կուսակցական, — ի հարկէ սխալ է: Հարուստ
խաւերը որոնք որոշ էտապ մեզ հետ կը գան
(տաճկահայկական հարց), դրանք այժմս մեզ հետ են,
վաղը կը հեռանան: Նրանք որոնք ծրագիրն են ընդու-
նում եւ տակտիկը՝ իսկական (դաշնակցականներ պէտք
է նկատուեն), իսկ նրանք որոնք դրամական օժանդա-
կութիւն են տալիս միայն՝ օժանդակողներ:

Գարեգին Խաժաղ.— Նրանք որոնք ծրագիրը ըն-
դունում են եւ ենթարկուում են դաշնակցական տակ-
տիկային:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).— Այս-
տեղ դրուած է արդէն այդ:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Դենք Ոսկա-
նապատի բանաձեւը:

Մրգաստան.— Այժմս ուրեմն պէտք է քայքայենք
կազմակերպութիւնները. մեր գիւղերում հիմա ինչ որ
ասենք նրանք չեն ընդգիծանայ, կը համաձայնուեն. ի
հարկէ կը լինեն անհատ բուրժուա բացառութիւններ.
բայց եթէ մենք դրանց դուրս գցեցինք հնչակեանները
ներս կը մտնեն եւ այստեղ առաջ կը գայ յիմար դրու-
թիւն: Մի գիւղում դաշնակցականները եւ հնչակե-
անները (որ գտնուեն), անպատճառ կոխ (կը լինի),
մարդ ուղղակի կը զզուի:

Արշակ.— Նա ով ընդունում է ծրագիրը եւ իր
քաղաքացիական պարտականութիւնը կատարում է
համաձայն ծրագրի եւ տակտիկայի, նա կարող է ըն-
տրուել. բայց ո՞վ պէտք է ընտրէ: Մի շարք Ֆորմու-
լաներ(96) կրել հնչում է, բայց սպասեցէք: Դուք աս-
ում էք թէ (որոշ վայրերում) նոյնիսկ կ(ոմիտէ)ն
ոչ-սոցիալիստ է: Դուք գործնականը ցոյց տուէք:

Ռոստոմ.— Մենք նախ պէտք է Ֆունկցիաները(97)
որոշենք. երբ որոշենք, գտումը ինքնստիչեան առաջ
կը գայ: Խնդիրը նրանումն է, որ այժմս կան հայ-թուր-
քական ընդհարումները: Դաշնակցութեան կազմի
մէջ կան ներկայումս մարդիկ, որոնք այդ ցենզը չեն
տալիս... ծրագրով էլ բոլորովին չեն հետաքրքր-
ուում, բայց շատ անհրաժեշտ են: Գանձակում այս-
պէս դրուեց, — եթէ մենք Ֆունկցիաները(97) բաժա-
նենք, գիտուորներին տանք առանձին ինքնուրոյնու-
թիւն, առաջ կը գայ գտումը: Այն գիւղերը, որտեղ
ամբողջովին դաշնակցական են, այստեղ պիտի ա-
ռաջ բերել նոր հիմունքների վրայ(?): Ենթադրենք մի
գիւղ կազմակերպուած է ինքնապաշտպանական, ըն-
տրել է(?) մի քանի բէկեր, կառավարիչներ: Չուլըն-
թացարար կազմակերպենք նոր հիմունքների վրայ եւ
ասում եմ՝ կը գտուեն կարճ ժամանակում:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).— Ու-
րեմն այդ դէպքում պէտք է միւսն էլ մնայ:

Ռոստոմ.— Այո, կը մնայ, բայց այստեղ մեր դէմ
չեն գայ հնչակեաններ. բացի դրանից եւ դէմ կը զը-
նանք մի ուրիշ տարրի՝ կառավարչականի: Այս էր պատ-
ճառը որ մենք գտանք որ պէտք է բաժանել սեկցիա-
ների: Պէտք է օչտուել Դաշնակցութեան հեղինա-
կութեամբ (հեղինակութիւնից ?):

Գարեգին Խաժաղ.— Ռոստոմն ասաց, որ պէտք է
օչտուել Դաշնակցութեան հեղինակութիւնից եւ կազ-
մակերպութեան մէջ մի կազմակերպութիւն ստեղծել:

Ռոստոմ.— Սահմանադրականները եւ Ռամկ(ա-
վար)ներն էլ գտում են. արդէն կայ ծերակոյտ, դա
նրանց բաժինն է:

Արշակ.— Քաղաքներում ի՞նչպէս պիտի անենք:
Ռոստոմ.— Քաղաքներում առանձին վտանգ չկայ,

արդէն կազմալուծուում են հնչըր եւ կազմակերպուում
են նորերը, այնպէս որ մենք կ'ունենանք դաշնակցա-
կան բազան:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Երբ մենք մի
նոր քայլ մտածում էինք անել, առաջ էին բերում հայ-
թուրքական ընդհարումները: Այժմս էլ գտման խնդ-
րում Մրդաստանի ներ(կայացուցիչը) հնչակեաններին
է առաջ բերում եւ զարմանալի է որ Գարեգին Խաժաղն
էլ համաձայնում է եւ առաջարկում է կոնգրէսներա-
տը(98) պահել, քանի կան հայ-թուրքական ընդհա-
րումներ, քանի կայ տաճկահայկական դատ: Հնչակե-
անները մի բոլոր ընդունենք այդպէս դաւաճան, այն
ժամանակ մենք կը կոտենք իրրեւ վաշխառուների
կազմակերպութեան հետ:

Մրգաստանի ներ(կայացուցիչ).— Բայց ամբողջ
պիւղն է մնում:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Մենք կազ-
մակերպում ենք սակաւահողերին, ուրեմն կը մնան
վաշխառուները: Ռոստոմն ասում է այն գիտուորների
մասին, որոնք իրենց կեանքն են զոհում. բայց եթէ
Ռոստոմը խօսում է ամէն մի գիտուորի մասին, որ
զէնք վերցրել է ինքնապաշտպանական գործի համար,
որ կատարեալ անգիտակից են, ես ասում եմ նրանց
պէտք է ազատել: Թերեւս կարելի լինէր թոյլ տալ գի-
տակից գիտուորների մասին, որ գնում են Տաճկահա-
յաստան: Այդ ուղղութեամբ Բազումում մենք որոշում
ենք առել: Մի ուրիշ բան՝ կարող են ծրագրի մանրա-
մասնութիւնները չհասկանալ, բայց ընդհանուր ոգին
ըմբռնել, նրանց մաքրութիւնից պէտք է օգտուել եւ
կրթել: Մի բան ես մոռացայ, մեզանում կան մարդիկ
որ բանուոր(ական) խնդրին վատ են վերաբերուում:
Բայց պէտք է ասել որ նրանց մէջ կայ սոցիալիստա-
կան տեսակէտը, միայն փաստաւ: Այնպէս որ ընկեր-
ների մէջ էական սկզբունքային տարբերութիւն ունե-
ցողներ չիլ կան: Գործունէութիւնը կեանքի մէջ՝ կրի-
տերիւմ(99) կը լինի գտման, որ մենք չխաբուենք:

Ժլատ.— Իսկ նրանք, որոնք տաճկահայկական
դատի համար միայն մտնում են:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Մենք նրանց
չենք ընդունում, պէտք է այստեղի նախագիծն էլ ըն-
դունեն, եթէ ոչ՝ գնան Տաճկաստան:

Միքայէլ Յ.(100).— Դիսցիպլինայի մասին, այդ-
տեղ թուում է որ ձեւակերպումը սխալ է դրուած: Ե-
թէ հին ծրագրի մասին է խօսքը, այդ ծրագրի հողի
վրայ մենք դիմադրութեան չենք կարող հանդիպել,
բայց եթէ նախագծի մասին էք ասում, այն ժամանակ
ինձ թուում է, որ այդ նախագիծը կուսակցական չէ,
պէտք է ընդհանուր ժողովը վաւերացնէ:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).— Սա
նոյնացման հարց է, ինչպէս եւ տակտիկան, սա կար-
ծիք է Ռայոնական ժողովի. կարող է իր շրջանի հա-
մար պարտաւորեցուցիչ լինել:

Միքայել(100).— Ես առաջարկում եմ առանձին խորհրդակցութեան առարկայ դարձնել:

Արեւ(Ելիսա) Բ(Խլրոյ)ի ներ(կայացուցիչ).— Այժմը քննենք, յետոյ խօսենք այդ տեսակէտից:

Ջրաբերդի ներ(կայացուցիչ).— Նախ պէտք է քննենք պատճառները այդ կոնզլումերատի(98) առաջանալուն: Մենք տաճկահայկական դատում որոշ յեղ(ափոխական) գործ ենք կատարել. նա ով կարող է եղել՝ ընտրուել է: Սա պատճառներից մէկն է: Այժմ էլ այդպիսի մի բան են առաջարկում՝ սեկցիաների բաժանել, ասում է Ռոստոմը, եւ կարծում է թէ կը փրկէ այդ, կը զտէ: Առանձին սեկցիա կազմել զինուորներից, ըստ իս շատ սխալ կը լինէր: Զտումը կը լինի ի հարկէ, բայց արագացնելու համար հարկաւոր է որոշ միջոցներ ձեռք առնել: Պօսքո մեր ընկերների մասին է, Կենար. Կոմիտէների անդամների եւայլն: Հարկաւոր է հենց այժմեանից հեռացնել:

Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).— Ես կարծում եմ ժողովի որոշումները նշանակութիւն ունեն այն չափով, ինչ չափով նրանք կ'իրականանան կեանքում: Ջրաբերդի ներ(կայացուցիչ)ը շեշտում է՝ թէ ինչ պատճառներից է եղել որ Դաշն(ակցութեան) մէջ մտել են ոչ-յեղ(ափոխական) տարրեր: Հենց այդ պատճառներն է որ պէտք է աչքի առաջ ունենալ: Երեւակայենք մի գիւղ, ուր շարունակուում են մի քանի ամիս հայ-թուրքական ընդհարումները, հիմա այդտեղ զինուորներին զէնք բաժանել չե՞նք կարող:

Ոսկանապատի ընկեր.— Ձայն չենք տայ: Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).— Կուրի ժամանակ ձայնի խնդիր չի կարող լինել, եթէ լինում է հոտառութիւն ունեցող մի վաշխառու, որի ձայնը պէտք է կշիռ ունենայ՝ կը տան: Բացառիկ պայմանները, բացառիկ դրութիւն են առաջացրել, պէտք է հետեւանքն էլ աչքի առաջ ունենալ. կարող ենք ընդունել՝ եւ կը կազմալուծուեն, յետոյ նորից գործեր(?): Մենք ասում ենք՝ պիւղը դաշ(նակցական) է, կոմիտէի մեղքն է որ տուել է տարերային կերպարանք: Դուք վաշխառու էք ասում. նրան դուք ցոյց էք տալիս ծրագրերը, յետոյ պէտք է հսկել որ այդ նպատակի ու տակտի մէջ չհեղուի եւ մենք իրաւունք չունենք նրանց մերժելու: Սեկցիաների բաժանուելուն ես հակառակ եմ: Ես ասում եմ, հարկաւոր է պրոպագանդ եւ գտումը ինքն-նրատիրքեան առաջ կը դայ: Բուրժուա է մտնում, մի թողնէք: Ուրեմն Դաշն(ակցութեան) անդամ կարող է համարուել նա՝ ով ընդունում է ծրագրերը եւ նախապիծը եւ ենթարկուում է տակտիկային: Եւ ես շեշտում եմ Միքայելի դէմ, գտում առաջ կը դա՛յ:

Միքայել(100).— Ես գտման մասին եմ ասում. արդեօք իրաւունք ունե՞նք առանց Խորհրդի, այդ հողի վրայ դնել:

Աւ(Ետիք) Ս(ահակեա)ն.— Նուազագոյն պահանջները ինչպէ՞ս ես մասսայում իրագործում, ինչպէ՞ս

եւ գիւղացուն բացատրում: Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).— Գործով. երբ ես հողաբաժանում եմ առաջարկում, վաշխառուները կը տեսնեն՝ որ իրենք հեռանալու են:

Աւ(Ետիք) Ս(ահակեա)ն.— Վաղը ընտրութիւններ են լինում, ինչպէ՞ս ես ձայն տալիս:

Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).— Ես ասացի որ պիտի խմբական կազմակերպութիւն լինի:

Արեւ(Ելիսա) Բ(Խլրոյ)ի ներ(կայացուցիչ).— Ես որ հարցը դրի ասացի, որ այն երեւոյթը՝ որ Դաշն(ակցութեան) մէջ ժողովուրդը ամբողջական մտել է, ունի իր առաւելութիւնները: Երբ մենք կայուածական ինքնապաշտպանական գործում յաջողութիւն ունեցանք, դրա պատճառը հենց այդ էր: Ահա մենք պիտի պահենք այդ առաւելութիւնները: Մեր ծրագրում ցոյց է տրուած բազա: Ես կարծում եմ, որ այդ բազային մենք խիստ չպէտք է դնենք պահանջները, եթէ նոյնիսկ անպիտակ են, պէտք է ընդունենք, որովհետեւ նա ըստ էութեան մերն է. իսկ մենք պէտք է խիստ պահանջներ դնենք մնացած տարրերին՝ ինտելիգենցիային: Ուրեմն ժողովրդի վերաբերմամբ մենք չպէտք է դրնենք այն պահանջները: Պէտք է վաշխառուները, ի հարկէ, դուրս մղել: Այսպէս պէտք է անենք որ մընանք ժողովրդական, հակառակ դէպքում մենք կը լինենք սեկցիա: Դա է որ զանազանում է մեզ Ս. Դ. Ե. րից(31): Բոյկոտը յաջող տարուեց կայուածքների ժամանակ, ասում եմ՝ դրանից էր որ եղաւ:

Ռոստոմ.— Երբ մի կուսակցութիւն կազմուում է գուտ գաղափարական հողի վրայ, դնում է իր բազան: Դաշն(ակցութիւնը) տարօրինակ կերպով է կազմուել: Դաշն(ակցութիւնը) 90ական թուականին երբ առաջ եկաւ՝ նա մի դաշն(ակցութիւն) էր, այնտեղ ընդունուեցին ամէն տեսակի տարրեր: Բայց մի տարուց յետոյ գտումը ինքնըստինքեան առաջ եկաւ: Յեղ(ափոխական) ճանապարհը ինքը գտեց: Մեր պահանջները ի՞նչ էին, — որոշ զոհողութիւն, համարձակութիւն, ուրիշ ոչինչ: Պատասխանատու դերերը ընկան այն անձնաւորութիւնների վրայ, որոնք աւելի զոհող էին: Այժմ մենք գտումը (եթէ) կատարենք այնպէս ինչպէս Ջրաբերդի ներ(կայացուցիչ)ը ասում է՝ չդիտեմ ինչ կը մնայ: Ես ասում եմ, մեր նուազագոյն պահանջները չնում ենք Մեծ Քաղաքի ներ(կայացուցչ)ի ասածի պէս. մենք այս էինք ասում որ լինի Դաշն(ակցութիւն), միայն մեզ չխանդարեն(?): Գործնական ճանապարհ՝ ես ասում եմ սեկցիաների բաժանումը: Այս րոպէիս ինքնապաշտպանութեան գործը, որ ծանրացել է մեզ վրայ, պէտք է ի նկատի առնենք: Սրանք անկախ չեն լինելու: Սեկցիաների է բաժանուած Դաշն(ակցութիւն)ը եւ այժմս, — կազմակերպչական, զինուորական եւ պրոպագանդայի, որոնք իրենց ներկայացուցիչներով կապուած են: Ինքնապաշտպանութիւնը գուտ մեր գործը չպիտի լինի: Դաշնակցական կազմակեր-

պութեան պարտականութիւնն է դա դարձնել ժողովրդական միլիցիա, կրթել, կազմակերպել եւ բաց թողնել: Ետևում մենք փորձ արինք բաժանել, բայց դժբախտաբար յաջողութիւն չունեցաւ. բայց չպէտք է յուսահատուենք:

Միքայել(100).— Ֆունկցիաների(97) բաժանելը ի՞նչպէս ես թոյլ տալիս: Այդ բաժանուած մասերը կարող են այն տեսակ բան թոյլ տալ, որ դէմ լինի ծրագրին:

Ռոստոմ.— Նա ընդհանուր համաձայնութեամբ է լինելու:

Յովնան(35).— Մեծ-Քաղաքի ներ(կայացուցչ)ի առաջարկութիւնը ամէն մի յեղ(ափոխական) կազմակերպութեան մէջ կայ. բայց ինչո՞ւ Դաշն(ակցութեան) մէջ այդպէս չէ: Պարզ է, պէտք է գտել: Գանք գործնականին: Սկսենք Կենար. Կ(ոմիտէներ)ից. կը տեսնենք որ այդտեղ կայ մի ստուար թիւ որ պէտք է դուրս մղել, ենթակոմիտէներից՝ աւելի, խմբերից, աւելի եւս. բան չի մնայ: Միակ բանը, ինձ թուում է, որ կարող ենք առաջ բերել, աչքի առաջ ունենալով ինքնապաշտպանական գործը, որից մենք չպէտք է ձեռք վերցնենք, — վաշխառուներին մենք պէտք է վանենք, իսկ միւս մասսան պէտք է կրթենք:

Աւ(Ետիք) Ս(ահակեա)ն.— Յենզի հարցը երկար պատմութիւն ունի մեր կազմակերպութեան մէջ. 10 տարի առաջ դրուած է եղել, բայց մենք չենք կարողացել առաջ տանել, եղել են այլ եւ այլ պատճառներ: Միւս պատճառն այն է որ մեր ժողովուրդը յեղ(ափոխական) չէ: Ես այս կ'ասեմ, — միանգամայն ձայն կը տայի եթէ վերելից մինչեւ ներքեւ միապաղաղ շարքեր ունենայինք, բայց այդ չկայ եւ ես անկարելի եմ գտնում այդ պահանջը ընդհանուր դարձնել. այժմ մեզ հետ է ժողովուրդը, որովհետեւ զարկող հանգամանքներ կան, բայց եթէ ասում ես՝ պիտի վերելից ներքեւ տանենք, ժողովուրդը մեզ հետ չի լինի. — բայց մեր գործը պիտի լինի ժողովրդի գործը: Թէպէտ բերեղացած կը լինենք, ես չեմ կարողանում համաձայնել այն բանի հետ, որ Դաշն(ակցութիւնը) ներկայումս ներկայացնէ այնպիսի կազմակերպութիւն, ինչպիսին հայ Սոցիալ Իեմոկրատիան է. հետեւապէս քանի որ մասսան դիտակցական չէ, չէ կապուած մեզ հետ ծրագրով, այդ պահանջը աննպատակաբար կը լինի դրնել, եւ ես կարծում եմ, բաւական է մեզ: Պրոպագանդայի բացակայութիւնն է պատճառ, որ մութ անձնաւորութիւններ են մտնում. այժմս պէտք է ամէն կերպ աշխատենք կազմի մէջ մտցնել յեղ(ափոխական) անցեալ ունեցողներին: Այս տեսակ պահանջ դնելը նշանակում է պառակտում առաջ բերել, դրանից կ'օգտուեն հնչակեանները, սոց(իալ) դեմ(ոկրատ)ները: Ռոստոմի առաջարկը հարցը չի վճռում: Էութիւնը այս է, ձայն չունենան. բայց Ռոստոմի առաջարկով՝ առանձին սեկցիա կազմել, ուրեմն ձայն ունենան: Եւ-

տոյ՝ ինձ վախեցնում է միլիտարիզմը դաւաճանելու. տեսէք թէ ինչ է կատարուում, — զինուորականները ամէն տեղ իշխում են եւ այդ բաժանումը կը վնասէ: Ոսկանապատի ներ(կայացուցչ)ի դրած պահանջը նեղ շրջանների համար ընդունելի է ընտրութիւնների միջոցով, իսկ մասսաների վերաբերմամբ՝ անհնար:

Քարի ներ(կայացուցիչ).— Ի՞նչ կ'անէք եթէ ժողովուրդը յայտնում է(?) որ նախագծի կողմը եղողներին չենք ընդունում:

Աւ(Ետիք) Ս(ահակեա)ն.— Նախագիծ չպէտք է դնել, պէտք է կապել ծրագրին:

Գարեգին Խաժալ.— Աւ(Ետիք) Ս(ահակեա)ն ինչպէս ասում է՝ դնացել է Քար, մասնակցել է ընտրութիւններին եւ զօտով ընտրել է տուել իր ուղածներին: Ես կարծում եմ հարցը աւելի խորն է, 15-16 տարի ժամանակ մենք եղել ենք օրգանիզացիա(101) եւ այդ տեսակէտից մենք տարել ենք մեր գործը, պրոպագանդ չենք արել, որովհետեւ ո՞ւմ պէտք է անէինք: Մենք աշխատել ենք հարուստներին մտցնել փողի համար, այն ժամանակ հարկաւոր էր կուսելու ոգին բարձրացնել. բայց այժմ մենք մեզ կուսակցութիւն ենք յայտարարում, եւ մենք պիտի ունենանք երկու նպատակ, — բերեղացում եւ ապա՝ մեր բազայի տարածումը: Այժմ մեր ձեռքում է ամբողջ կոնզլումերատը(98). դրան պէտք է մօտենանք անդամահատելով, միայն տակտով, զգուշութեամբ, եթէ խիստ լինենք՝ կը քայքայուենք: Այժմ դասակարգային հողի վրայ ենք կանդնում, պէտք է քարոզենք, մի քանի ակտեր կատարենք, հետը եւ գտումը: Պօսքի պրոպագանդը պէտք է ուղղենք մեր բազաներին, իսկ միւսներին հեռացնենք յեղ(ափոխական) ակտերով: Պէտք է կոնզլումերատը պահենք, մղենք պրոպագանդ թէ՛ բանաւոր եւ թէ՛ փաստացի: Ես համաձայն եմ Ոսկանապատի բանաձեւին, միայն խիստ չզործածել որպէսզի Տաճկահայաստանի համար եղող բազան չփախչի:

Մրգաստանի ներ(կայացուցիչ).— Առաջ պահանջում էր յեղ(ափոխական) լինել, իսկ այժմս եւ այն՝ որ պէտք է տեսակէտ ունենալ: Այն մասսան, որ մերն է, պէտք է մնայ: Քայքայման վտանգ չեմ տեսնում, հարկաւոր է դուրս ներքեւից:

Ջրաբերդի ներ(կայացուցիչ).— Ես կ'ուզեմայի որ անհատ հակայեղափոխականների դէմ գտման խիստ միջոցներ ձեռք առնուեն: Ընտրութիւններին խիստ ուշադրութիւն պէտք է դարձնել: Սեկցիական բաժանումը անպայման ունի իր առաւելութիւնները: Դա անպայման նպատակ է գտման: Ես կ'ուզէի, որ այդ սեկցիաների բաժանումով՝ զինուորական սեկցիան կենտրոնացուէր:

Աւ(Ետիք) Ս(ահակեա)ն.— Ալեքսանդրապոլի ընտրութիւններում ոչ մի բանութիւն չէ եղել:

Անտոն.— Սկզբից գտման խնդիր է եղել՝ որ նըրանք լինեն իսկական, որոնք առաջին պահանջին կը

դնային Երկիր: Ընկերները որ վախենում են, թէ եթէ գտնան հարցը մտցուի մեր շրջանները կը պակասեն՝ սխալուում են: Գիւղացիութիւնը՝ 90 առ հարիւր, բանուորները, արհեստաւորները, նոյնիսկ փոքր վաճառականները կը մնան: Այնպէս որ գտումը չի վնասի: Ժողովուրդը նշանակութիւն կ'ունենար, եթէ կարող լինէր կառավարել. (Գերմ. Սոց(իւստիստները) 3 միլիոն ձայն ունեն): (Պէտք է) որ մենք ղեկը պահենք գիտակից մարդոց ձեռքը. դրա պատճառներից մէկը այն է, որ ծրարութեամբ որոշ չէ ասուած, ասուած է՝ «համաձայն իր արած զոհարելութիւնների»: Պակաս է. պահանջները որոշակի դարձնենք: Ընդունենք մի այն տեսակ բանաձեւ, գուցէ փոխենք՝ սեկցիաներ էլ կը նպաստեն(?): Պէտք է դնել՝ «նա, ով ձրիակիր է, նա չի կարող լինել դաշնակցական»: Մտցնել «չարատաւորուած եւ բարոյական բարձրութեան վրայ կանգնած». (ոչ միայն) ծրագիրը ընդունեն, այլ եւ ակտիւ մասնակցութիւն ունենան. իսկ մնացածները պէտք է կոչուեն օժանդակող:

Ա.(Ետիք) Ս(առաջին)Ա.— Այստեղ մի տրամադրութիւն է նկատուում, ուզում են ամէն բան կերպարանափոխել: Անտոնը ասում է 95 առ հարիւր գիւղացիութիւն մեր կողմն է, սխալուում է: Դեռ հարց է թէ ծրագիրները եթէ դրուեն, Ս. Դ. երբ՝ (Սոցիալ Դեմոկրատները ?) կը յարեն՝ թէ մեզ:

Արշակ.— Չտու՞մը պէտք է սկսել ներքեւից: Անորոշ տերմիններ(102) չպէտք է մտցնել: Քանի որոշ է մեր բազան, եթէ այստեղից պրոպագանդ սկսենք, բիւրեղացումը ինքնստինքեան առաջ կը դայ: Պէտք է հիմքով դեղինֆէկցիա(103) անել, իսկ ճնշում բարձր մարմինների վրայ՝ դա դժգոհութիւն առաջ կը բերէ: Առաջարկուում են բանաձեւեր:

XVIII-ՆՈՒՅԵՐ, 7/IV ԱՌԱՌՕՏԵԱՆ

Ժողովի սկզբում նախագահը առաջարկեց բանաձեւեր տալ նուազագոյն պահանջների համար: Առաջարկուեցին երեք բանաձեւեր — ընկ. Մարտիրոսի, Անտոնի եւ Եղիշէի:

Ընդունուեց ընկեր Եղիշէի բանաձեւը:

«Դաշնակցութեան անդամ կարող են լինել այն անհատները, որոնք ընդունելով Դաշնակցութեան ծրագիրն ու տակտիկան(104) եւ ղեկավարուելով նրանցով՝ աշխատում են իրականացնել այդ ծրագիրը իրենց կեանքում, այսինքն վճարում են իրենց հասոյթից 2ից 5 առ հարիւր, պրոպագանդ են մղում, պիսուորութիւն են անում, մասնակցում են կօօպերատիւ, պրոֆեսիոնալ(94) եւ այլ դաշնակցական միութիւնների մէջ: Իսկ այն անհատները, որոնք ծրագիրը ընդունելով հանդերձ, կեանքում չեն ղեկավարուում նրա պահանջներով եւ միայն նիւթական օժանդակութիւն են հասցնում, հա-

մարուում են օժանդակողներ եւ համակրողներ եւ ձայնատուութեան ու ընտրուելու իրաւունք չունին:

Ռայոնական Ժողովը յիշեցնում է Մարմիններին, որ այն դաշնակցական անհատները որոնք արատաւորուում են իրենց վատ վարքի համար, այն է՝ գողութեան, խաբէբայութեան, վեղձու՛ների եւ մանաւանդ՝ կապմակերպութեան դրամները շռայլ ծախսելու մէջ, անպայման պատժուում են եւ հեռացուում են Դաշնակցութեան շարքերից(105):

Այդ բանաձեւը ընդունելուց յետոյ քննութեան է դրուում պրոպագանդայի հարցը:

Ոսկանապատի մեր(կայացուցիչ).— Քանի որ պրոպ(ագանդայի) հարցը բարդ է եւ երկար ժամանակ է պահանջում, ցանկալի է առանց ընդհատումների քննել այդ հարցը: Առաջարկում եմ թողնել երեկոյեան նիստին:

Սկսում են զեկուցումները:

Թմբուկ.— Մեզ մօտ պրոպագանդան շատ թոյլ է առաջ տարուել: Որ պրոպագանդան ամէն տեղ յալուղութեամբ տարուի, անհրաժեշտ է կազմել մի մնացուց մարմին, որ կազմէր մի սխտեմատիկ ծրագիր դասախօսութիւնների համար, որից զուրկ են այժմ մեր պրոպագանդիստ ընկերները: Եթէ այդ ծրագիրը կազմուի եւ ցրուի, պրոպագանդան յաջող կ'երթայ, և մենք կ'ունենանք գիտակից շարքեր: Մեր պրոպագանդան պտտել է ուսումնարանների շուրջը, աշխատել ենք հասկացնել ժողովրդի լուսաւորութեան անհրաժեշտութիւնը: Խօսուել է կառավարութեան քաղաքականութեան եւ մեր հարեւան ազգերի մասին: Ուշադրութիւն է դարձրած եւ վաշխառուների վրայ:

Ընկ. Կարօ (Քար).— Մեզ մօտ պրոպագանդան ազգային հողի վրայ է տարուել: Ժխտել ենք դասակարգային կռիւր: Նախապէ՛ծը կազմուելուց յետոյ մեր դիրքը փոխուել է: Մենք ունեցել ենք պրոպագանդիստ ուսանողներ, որոնք նախազձով են առաջնորդուել իրենց պրոպագանդայի գործում: Այդպիսի պրոպագանդ առաջ է բերել յուզում, բացուել է մի վիճ մեր եւ ժողովրդի մէջ: Մեզ հարկաւոր են երկու պրոպագանդիստներ: Պրոպ(ագանդիստների) դպրոցը պէտք է շարունակել:

Ընկ. Ստ. (Ջրաբերդ).— Մեզանում էլ նոյնն է, ինչ Քարում: Մեզանում կազմակերպուած են համայնքները, ամէն մի գիւղում մի ենթակոմիտէ ունենք, 10 գիւղի վրայ մի կոմիտէ: Յեղ(ափոխական) գիտակցութիւնը բացակայում է: Պէտք է հիմնել մի շարքաթերթ:

Ոսկանապատ.— Մեզ մօտ պրոպ(ագանդան) երկու ուղղութեամբ է կատարուում: Գաւառում գիւնուորական ոյժեր են, հետեւաբար պրոպ(ագանդան) շատ թոյլ է, համարեա թէ բացակայում է: Բազուն ունի պրոպագանդիստներ, բացի դրանցից կան եւ աշակերտներ, որոնք կարող են եւ ցանկանում են պրոպ(ա-

գանդ)այով զբաղուել: Մեր կարծիքով (կան կենտրոններ) եթէ մեր թէորեաթիկ ընկերները չըլին մեր գաւառական կենտրոնները եւ այնտեղ կարգան մի շարք դասախօսութիւններ, մէկ կատարած(?) կը լինի: Պէտք է հիմնել տեղն ու տեղը կուրսեր, որոնք օգնութեան կը գան մեր պրոպագանդիստ ընկերներին եւ կը լուսարանեն շատ մութ հարցեր:

Մեր պրոպագանդիստներին պէտք է տալ մի ուղեցոյց: Թող կազմուի մի ժողով բանուորական վայրերից եկած մեր ընկերներից եւ թէորեաթիկներից եւ դա կազմի մի կոնսպէկտ: Դա չափազանց կարեւոր բան է:

Ընկ. Արրահամ.— Բազուն Հնարաւորութիւն չէ ունեցել զբաղուել գաւառով. այդ Հնարաւոր էլ չէ նրա համար: Ընկերները կլանուում են եւ հազիւ բաւարարութիւն են տալիս տեղական պահանջներին. Բազուի շրջանը պէտք է բաժանել: Այլ կերպ՝ գաւառի գործը միշտ կը կաղայ:

Ընկ. Ստեփան (Բալայխանի).— Բաժանման հարցը վերջին Երջանային Ժողովին էր դրուած, բայց չանցաւ: Երբեք նաւթադաշտը եւ գաւառը չեն կարող միասին գնալ. նաւթադաշտը մշտաժառ մի կաթսայ է, նա ունի միանգամայն տարբեր պահանջներ: Բաժանումը անհրաժեշտ է:

Ընկ. Ստեփան (Այգեստանցի).— Մեզ մօտ պրոպ(ագանդ)ան ինքնապաշտպանութեան շուրջն է եղել: Գաւառ չըլել են կոմիտէի անդամները եւ Բիւրոյի անդամը: Մինչ(եւ) հայ-թուրքական ընդհ(արումները)՝ պրոպ(ագանդ)ան տարուել է Ռուսաստանի ազատագրական գործի շուրջ: Քարողուել է համերաշխութիւն թուրքերի հետ: Դասակարգային հողի վրայ պրոպագանդան չի արուած. շատ քիչ չափերով արուած է քաղաքում: Պրոպագանդիստների կարիք կայ: Անհրաժեշտ է հրատարակել մի թերթ եւ բրոշուրներ: Ուշադրութիւն պէտք է դարձնենք մեր դպրոցների վրայ, անհրաժեշտ է որ մեր ազգեցութեան տակ լինեն դըպրոցները: Ուսուցիչները, եթէ լինեն մեր ընկերներից, կարող են պրոպագանդիստների դեր կատարել:

Ընկեր Սարգիս.— Երեւանում 8 շրջիկ են եղել, չըլել են գիւնուորներով, կատարել են դատավարութիւն, ծեծ: Կազմակերպութիւնը մեծ ծաւալ է ստացել: Գաւառում ժողովուրդը տեղորիցացիայի է ենթարկուել: Վախեցնելը միջոց է ծառայել կազմակերպութեան համար: Երբ դաւառ գնացին մեր երիտասարդ ընկ(երները) եւ սկսեցին յեղափոխական դասակարգային պրոպագանդ, դիւղացիք ապշում զարմանում էին: Նրանց համար դա նոր բան էր: Ժողովուրդը սկզբում փախում էր, կարծելով որ փող պիտի հաւաքենք եւ ծեծենք, բայց յետոյ գալիս էին եւ հետաքրքրութեամբ լսում: Երեւանում կազմուել է պրոպագանդայի համար մի յատուկ սեկցիա, որի մէջ կայ Կենտր. Կոմ(իտէի) ներկայացուցիչը: Մրապը-

ուում էին մի շարք դասախօսութիւններ: Չայողողուցին, որովհետեւ պատրաստ մարդիկ չկային: Դպրոցները ոչինչ չեն տայ: Արհեստական բան է, մտքի թափանցում եւ գիտակցութեան արթնացում է հարկաւոր, պէտք է հեղեղել գրականութեամբ գաւառը: Գիտակցութիւն զարթեցնելու միակ միջոցն է դա: Քաղաքում պրոպագանդան աւելի լաւ հիմքերի վրայ է դրուած, լոյս են տեսել թուրքիկներ, քաղաքական պահանջների լուսարանութեամբ:

Ժլատ.— Մենք եղել ենք շահագործող մի կուսակցութիւն: Մասսայից առել ենք այն՝ ինչ Հնարաւոր է եղել: Բայց ոչինչ չենք տուել: Մեր գործը եղել է Ջիֆոնը, այդ էլ կատարել են եկուոր ընկերներ, տեղացիք մասնակցութիւն չեն ունեցել: Ռուսաց յեղ(ափոխական) շարժումը արթնացրեց եւ տեղական ժողովուրդը. նա եւս սկսեց հասկանալ, թէ ինչ է կատարուում իր շուրջը: Երջանային Ժողովը որոշել է ունենալ երկու պրոպագանդիստ ընկերներ, գրադարաններ: Մեր պրոպագանդիստները պէտք է իմանան եւ ուսուրէնը: Սպասում էինք որ «Յառաջը կը պարզէ Ֆիդիոնովիան(105), նա էլ ոչինչ չտուեց: Պէտք է պարզել մեր Ֆիդիոնովիան:

Ընկ. Համազասպ(93).— Երևում կազմակերպութիւններ երեւան են եկել 1903 թ. եկեղեցական կալուածքների դէպքից յետոյ: Պրոպագանդիստ ընկեր չենք ունեցել: Անհրաժեշտ են փորձուած ոյժեր, որոնց ձեռքի տակ գործեն երիտասարդները: Գրականութիւնը անհրաժեշտ է:

Ընկեր Արտէմ լրացնում է ընկ. Համազասպի ասածները:

Ընկ. Ռոստոմ.— Հայ-թուրքական ընդհարումները խեղդել են պրոպագանդայի գործը եւ առաջ քաշել գիւնուորական ոյժեր, կոմիտէները դադարում էին նիստեր ունենալ(ուց): Հենց այդ պատճառով էլ սեկցիաներ առաջ եկան: Այժմ պրոպագանդայի գործը լաւ հիմքերի վրայ է դրուած:

Նալբանդ.— Նալբանդում կան տեղական եւ եկուոր տարրեր. տեղացիները եկուորների վրայ նայում են իրրեւ պահապանների վրայ: Ջարդերի ժամանակ այսպէս էլ եղաւ, եկուորներից 350 գիւնուած մարդ դուրս եկաւ: Մեզ մօտ բանուորներ չկան: Լինում են շարքաթական ժողովներ, այժմս ունենք չորս դասախօս. պէտք է ուշադրութիւն դարձնել գրականութեան վրայ: Մենք մտադիր էինք թերթ հրատարակել, արդէն ուր հարկն էր դիմում արուած է:

Ընկ. Եղիշէ(11).— Պրոպ(ագանդիստ) չենք ունեցել, ունեցել ենք շրջիկներ: Ջիւնուորական գործով զբաղուած ենք եղել: Եղել են դէպքեր երբ կոմիտէներն անկամ արել են հակայեղափոխական քայլեր, — ծեծ, պատիժներ եւայլն: Այժմս սկսուել է պրոպ(ագանդ) դասակարգային հողի վրայ: Պրոպագանդիստներից ցնեղ է հարկաւոր պահանջել: Պրոպագանդիստ-

ները տարբեր սխառեմով են առաջնորդուում: Անհրա-
ժեշտ է նմանութիւն մտցնել: Գրականութիւնը անհրա-
ժեշտ է, անյետաձգելի պահանջ է:

Ընկ. Մուրաւ(14).— Այստեղ ճշմունք են սեւա-
ցրել մեր անցեալ գործունէութիւնը: Ազգային գի-
տակցութիւնը որ մենք զարթոցեցինք ենք ժողովրդի մէջ,
տուել է իր օգուտները: Ժողովուրդը կուուել է պաշտո-
նէութեան դէմ, աւազակների դէմ եւայլն:

Ընկ. Վահան.— Ես միանում եմ ընկեր Մուրաւին
եւ պնդում եմ որ մեր գործունէութիւնը տուել է իւր
աշխարայ(107) օգուտները:

Ընկ. Ստեփան (Բալախանի).— Մենք զանազան
քաղաքներում ունենք համախորհուրդ ընկերներ, ո-
րոնք իրենց պրոպագանդայում առաջնորդուում են նա-
խագծով: Անհրաժեշտ է դրանց պարբերաբար համա-
խորհել եւ լուսաբանել մութ հարցերը: Ես կ'առաջար-
կէի Յունիսին գումարել առանձին համագումար:

Ընկ. Հ(աւօ) Օ(հանգանեան).— Մենք պրոպա-
գանդայով չենք զբաղուել, ասում են բոլորը, դա չա-
փազանցութիւն է: Մենք եղել ենք գործնական կու-
սակցութիւն: Պրոպ(ագանդային) նշանակութիւն չենք
տուել: Զէնքի գործը կլանում է մեր թէորետիկ ոյժերն
անգամ, մենք ունենք զէնքի բիւզլէ, պէտք է ունե-
նանք նաեւ պրոպ(ագանդայի) բիւզլէ: Պէտք է հիմնել
մի կենտրոնական մարմին, որ զբաղուելու է միայն
պրոպագանդի գործով: Բոլոր կուսակցութիւնները
այդ ունեն, պէտք է այդ գործին յատկացնել մի խոշոր
գումար: Բացի Վառաձից պէտք է ունենալ տեղա-
կան թերթեր, անհրաժեշտ է հրատարակել մի դիս-
կուսիոն(108) թերթ:

Ընկ. Միշա.— Կենտրոնական կոմիտէն ուղարկել
է զաւառ 40 շրջիկ: Դասախօսութիւններ եղել են: Ու-
շաղրուութիւն չի դարձուում աշակերտութեան վրայ:
Պէտք է ուշաղրութեան առնել ներսիսեան դպրոցը,
որը պէտք է տայ մեզ ուսուցիչներ: Շրջիկներին պէտք
է ապահովել:

Ընկ. Միքայէլ(100).— Ողորմելի վիճակի մէջ ենք
գտնուում: Օրուայ այրող հոգիները անհնարին են
դարձնում պրոպագանդայով զբաղուել: Որքան էլ ան-
նպաստ լինեն կեանքի պայմանները, աշխատելու ենք
վերջ տալ այդ ողորմելի, անկերպարան վիճակին:
Պէտք է ոյժ տալ գրականութեան, հիմնել պրոպագան-
դայի համար դպրոցներ: Թերթը պէտք է ուժեղացնել:

Ընկ. Ստեփան (Ջրաքերդ).— Միանում եմ Հա-
մոյի առաջարկին, — Ռայոնական ժողովի որոշում-
ները թղթի վրայ են մնում, Կենտր. կոմ(իտէների)
անդամներն անգամ չեն կարողում որոշումները: Որ
պրոպագանդան լաւ հիմքերի վրայ չէ գրուած, դա ու-
նի իր պատճառները: Մեր պրոպագանդիստները լաւ
պրոպագանդիստներ չեն, հետեւաբար եւ բարոյական
ընաւորութիւն(?) չեն ստանում: Պատահել է դէպքեր՝
որ ենթակոմիտէներ դուրս են անում իրենց շուգած

մարդուն: Մեր դաւանանքը պարզ է, այդ էլ երկրորդ
պատուհանը(?): Երրորդը՝ պաշտօնականութիւնը մեր
մէջ:

Ընկ. Կարօ.— Իմ կարծիքով պէտք է ուշաղրու-
թիւն դարձնել գրագիտութեան վրայ: Դպրոցները
պէտք է աշխատել մեր ձեռք ձգել: Հենց օգուտել էլ-
միածնի համաժողովից եւ անցկացնել մեր ծրագիրը:

Ընկ. Ստ. Տ(էր Մկրտչ)եան.— Պէտք է նպաստել
ժողովրդի լուսաւորութեան գործին, պարտադիր դար-
ձնել գրագիտութիւնը: Պէտք է աշխատել միջոցներ
հայթայթել ժողովրդի լուսաւորութեան գործի հա-
մար: Այդ նպատակով կարելի է դիմել Մանթաշեանին
եւ ամէն մի բուրժուայի: Պէտք է միջամտել էլմիածնի
համաժողովին: Կուուել պէտք է կղերական ուղու դէմ,
դուրս վանել նրան մեր դպրոցներից: Առաջարկել մեր
ծրագիրը եւ ընդունել տալ: Պէտք է ուշաղրութիւն
դարձնել մայրենի լեզուի տարածման վրայ:

Ընկ. Խաժակ.— Մի գործնական միջոց առաջար-
կեմ: Ամառը հրաւիրել դաւառից ուսուցիչներին եւ եր-
կու ամսեայ կուրսեր հիմնել դրանց համար, այդ շատ
անհրաժեշտ է:

Ընկ. Ջոնան.— Ուսումնարաններում պէտք է տե-
ղաւորել մեր ընկերներին: Հոգաբարձուների ընտրու-
թեան պէտք է մասնակցել. դա կ'ունենայ քաղաքական
կրթիչ նշանակութիւն:

Ընկ. Մարտիրոս(37).— Դպրոցական գործի մէջ
մենք չպէտք է խառնուենք. կը հիմնենք դիկտատուրա,
որը միանգամայն վնասակար է: Դպրոցները չի կա-
րելի կուսակցական դարձնել, դա հակամանկավարժա-
կան քայլ կը լինի, որ եւ կը խանդարէ մանուկ սերնդի
կրթութեան գործին: Դպրոցները պէտք է կառավար-
ուեն ժողովրդի կողմից քառանգամ Փորմուլայի սիս-
տեմով ընտրուած մի Մարմնից: Հոգեւորականութիւ-
նը չպէտք է տիրապետող հանդիսանայ, այլ նա պէտք
է ենթարկուի ժողովրդական կամքին:

Ընկ. Արախամ(23).— Եթէ մենք դատավարու-
թիւնից հրաժարուում ենք, այդ անում ենք ոչ թէ վատ
լինելու պատճառով, այլ մարդ չունենալու պատճա-
ռով: Ուսումնարանների գործի մէջ պէտք է խառնը-
ւենք, այդ կարո՞ղ ենք անել: Կ'առաջարկէի կազմել մի
նախագիծ եւ ներկայացնել էլմիածնի համաժողովին,
որին թէկուզ եւ բռնի ուժով ընդունել տալ մեր նա-
խագիծը:

Ժողովը փակուեց ժամը 3ին: Բանաձեւեր առա-
ջարկելը մնաց յաջորդ ժողովին:

XIXԴ ՆՒՍ, ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ ԴԻՆ

Վիճաբանութիւնները պտտում են պրոպ(ագան-
դ)այի շուրջը:

Ոսկանապատը յարմար է գտնում, որ Մեծ-Քա-
ղաքի թէորետիկոս(109) ընկերները այցելեն զաւառա-

կան քաղաքները, եւ որոշ ժամանակամիջոցում պա-
րայելով գիւղական բանիմաց երիտասարդների որոշ
թուի հետ, պրոպագանդիստներ պատրաստեն շրջանի
համար:

Ընկ. Լիպ.(110).— Նոյնպէս անհրաժեշտ է գըտ-
նում այդ խնդիրը եւ աւելացնում է որ թէեւ այդ
խնդրումն էլ ապակենտրոնացման սխառեմով պիտի ա-
ռաջնորդուել, բայց եւ այնպէս գերադասելի է որ բո-
լոր այդպիսի ճիւղերը զլիաւորուէին մի զլիաւոր
Մարմնի ցուցմունքներով, որը պիտի լինի Բիւրոն
կամ նրա անդամներից մէկը:

Ընկ. Մրգաստան.— Թող Բիւրոն մի մարմին կազ-
մէ Խմբագրութեան կից(111), որը մի միայն պրոպա-
գանդայով զբաղուէ. այդ մարմինը բաղկացած կը լինի
երեք անդամներից, առ նուազն:

Նախագահը.— Ձեւակերպում է այսպէս.—

«Այդ Մարմինը հրաւիրում է Բիւրոն, այլեւ կազ-
մում է ընդհանուր ուղեցոյց, պրոպագանդիստներ է
ուղարկում զանազան կողմեր ըստ պահանջի, եւայլն»:

Թոստում.— Իմ կարծիքով, քանի որ մենք առ
այժմ զուտ դաշնակցական հայեցակէտ չունենք, յար-
մար կը լինէր նախ մի ընդհանուր հայեցակէտ մշակել
եւ ապա սկսել կազմեր հաստատել զանազան կէտերում՝
պրոպագանդային դասընթացներ հիմնելու տեսակէ-
տից, որպէսզի մի ընդհանուր սխառեմով առաջ տար-
ուէր այդ գործը: Այդ ֆունկցիան սկզբից եւ եթ չի
կարող անկախ գործել, այլ անհրաժեշտ է կապել թեր-
թի Խմբագրութեան հետ(111): Անհրաժեշտ է նոյնպէս
թուցիկ դասախօսութիւններ կազմել:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).— Ռ(ոստոմ)ի
վերջին առաջարկը այնքան էլ նպատակայարմար չէ.
հարցը նրանումն է որ թուցիկ դասախօսութիւններով
չի կարելի մի որոշ աշխարհայեցակէտ պատուաստել,
այլ պէտք է մի քանի սխառեմատիկ դասախօսութիւն-
ներով որոշ գաղափար, որոշ համոզմունք առաջացնել
մեր պատրաստուող պրոպագանդիստների մէջ:

Ե(ղիշէ) Թ(ափնեան).— Ռ(ոստոմ)ի առաջարկը
գործնական չէ. նա ասում է որ պրոպ(ագանդ)այի եւ
Խմբագրութեան մարմինները միասին լինեն. ես կար-
ծում եմ՝ գործի օգտակարութեան տեսակէտից անկախ
մի մարմին լինի նա, կարիք եղած դէպքում զանազան
մարմինների խորհրդակցութեան դիմի, բայց իր գոր-
ծունէութեան մէջ անկախ լինի: Մենք զանապատում
ենք որ պատրաստի պրոպագանդիստներ չունենք:
Բայց մենք այդ ուղղութեամբ գործնական քայլեր չենք
արել. այդ մարմնի տրամադրութեան տակ պէտք է
լինի որոշ բիւզլէ: (Անհրաժեշտ է) ամէն մի մարմին
մասնագիտական դարձնել: Միանում եմ Սարգսի
(Մրգ. ներկ.) առաջարկին, որ Խմբագրութեան կից
մի մարմին լինի երեք հոգուց բաղկացած, եւ միաժա-
մանակ ամէն մի Կենտր. կոմիտէի կից մի-մի պրո-
պագանդային մարմին:

Ընկ. Լիպ(արիտը) նոյն միտքն է արծարծում, որ
պէտք է Խմբագրութիւնը զատ լինի եւ պրոպ(ագան-
դ)ային մարմինը զատ. այդ մարմինը միշտ կենտրո-
նում պիտի լինի եւ մարդիկ պատրաստէ դաւառների
համար:

Ջրաք(երդի) ներ(կայացուցիչ).— Աշխատանքի
բաժանումը այն առաւելութիւնն ունի, որ պատասխա-
նատուութեան հարցն է մէջտեղ գալիս. ոչ միայն ու-
նենանք առանձին մարմիններ, այլ եւ այդ մարմիննե-
րի մէջ էլ պէտք է մտցնել պարտականութիւնների ներ-
քին բաժանում եւ պատասխանատուութիւն:

Հաւօ.— Ես կողմնակից եմ որ պրոպագանդի մար-
մինը կապուած լինի Խմբագրութեան հետ: Եթէ մար-
մինը բաղկացած լինի ոչ թէ 3-4 հոգուց, այլ վից եւ
աւել անդամներից եւ դրանք հերթով զաւառները գը-
նան, դրանով Խմբագրութիւնը աւելի կը ձօտենայ
կեանքին եւ թերեւ աւելի բաւականութիւն տայ բո-
լոր մարմիններին, քան տուել է մինչեւ այժմս. մշառ-
կան անդամներից երկուսը հերթով կը լինեն գաւառ-
ներում, իսկ մնացած չորսը այնքան ժամանակ կ'ունե-
նան, որ կը կարողանան և պրոպ(ագանդ)այով պարա-
պել. այդ բոլորը միասին կը տանեն Դաշնակցութեան
պրոպագանդայի գործը եւ պատասխանատու կը լինի
Խմբագրութեան կազմը:

Ոսկ(անապատի) ներ(կայացուցիչ).— Ես բոլորո-
վին համաձայն չեմ Հ(աւօ) Օ(հանջանեան)ի հետ, այլ
միանում եմ Թ(ոփնեան)ի եւ Լիպ(արիտ)ի կարծիքնե-
րին, — երկու մարմինները պէտք է սերտ կապեր ու-
նենան անպայման, բայց պէտք է զատ-զատ լինին:

Ե(ղիշէ) Թ(ափնեան).— Կեանքը ճանաչելու հա-
մար հարկաւոր չէ անպատճառ որ մարդ զաւառ գնայ.
Խմբագրութիւնն աւելի միջոցներ ունի կեանքի մէջ կա-
տարուած բոլոր երեւոյթներին ծանօթանալու, իր ըն-
տացած բաղմատեսակ թղթակցութիւններով. միայն
անհրաժեշտ է որ իւրաքանչիւր բաժնի ղեկավար մաս-
նագէտ լինի եւ տեւողական. մի մարդ չի կարող թէ՛
պրոպագանդայով զբաղուել եւ թէ՛ Խմբագրութեան մէջ
լինել, երկու կողմն էլ կը տուեն. մենք շարունակ
կրկնում ենք որ գտնեք Մարմինները, աշխատանքի բա-
ժանում մտցնենք եւ այնուամենայնիւ ցանկանում ենք
բոլոր ֆունկցիաները(97) ի մի կենտրոնացնել:

Մրգաստանի ներ(կայացուցիչ)ը միանում է այն
ձայներին, որոնք կողմնակից են Խմբագրութեան կից
պրոպագանդայի մարմին կազմելուն, որը միմիայն
պրոպագանդայի գործով զբաղուի:

Լիպ(արիտ).— Եթէ երկու մարմին միացած լինի,
այն ժամանակ մենք ժուրնալիստ չենք ունենայ:

Հ(աւօ) Օ(հանջանեան).— Ես թերթի վրայ նա-
յում եմ այլ կերպ, քան Լիպ(արիտ)ը եւ Թ(ոփնեան)ը.
նրանք թերթի գոյութիւնը հասկանում են այնպէս՝ որ
նա պէտք է մրցէ Մշակի եւ այլ թերթերի հետ: Ոչ,
այդպէս չէ, մեր թերթը պէտք է բաւարարութիւն տայ

մեր աշխատանքը մասսային եւ այդ ուղղութեամբ էլ պիտի տարուի: Քանի որ մեր թերթը Դաշնակցութեան օրգանը պիտի լինի, այն ժամանակ մեզ հարկաւոր չեն զուտ ժուրնալիստներ, այլ յեղափոխական մարդիկ, որոնք կարողանային արտայայտել իրենց միտքը, թերթի միջոցով, եւ հող պատրաստէին մեր մասսաների մէջ: Ամբողջ պրոպագանդի գործը պիտի լինի Պժքաբուժան ձեռքում, որոնք պարբերաբար դաւառներ պիտի դուրս գան, առ նուազն երկու ամսով:

Բժ. Թաղ(էսսեմ ?).— Պրոպագանդայի համար հարկաւոր է յատուկ սեկցիա ունենալ. այդպիսի մի մարմին հնարաւորութիւն կ'ունենայ անմիջապէս արձագանգ տալ դաւառի պահանջներին, պրոպագանդայի տեսակէտից:

Անտոն.— Ձի կարելի պրոպագանդի խնդրին մասին ընդհանուր որոշում տալ առանց թերթի մասին խօսելու: Ըստ իս հարցը լուծում կը ստանայ այն ժամանակ, երբ թերթի մասին կը խօսենք եւ որոշում կը կայացնենք: Եթէ մենք այնքան ոյժեր ունենայինք, որ կարողանայինք մեր բոլոր պահանջներին բաւարարութիւն տալ, այն ժամանակ շատ հեշտ կը լինէր խնդրին լուծում տալը, բայց այդպէս չէ դժբախտաբար:

Միքայէլ(100).— Պժքաբուժիչը պէտք է անկախ լինի. ցանկալի է ի հարկէ որ նրա անդամները այցելին դաւառները. իմ պահանջները աւելի են թերթից: Այն ձեւով՝ ինչ ձեւով Համոն է առաջարկում հրատարակել թերթը, ինձ թուում է, թէ ոչ մի, այլ մի քանի թերթեր պիտի հրատարակուեն որպէսզի բաւարարութիւն տրուի մեր բոլոր ընթերցողներին: Մեր թերթը չի կարող սահմանափակուել այդպիսի նեղ սահմաններով: Նա պէտք է մրցէ բոլոր միւս թերթերի հետ, եւ բարձր լինի բոլորից: Մենք պէտք է մեր բոլոր ոյժերը լարենք ամէն օր նորանոր թարմ յօդուածներով թերթը հետաքրքիր դարձնելու:

Ա.(Եստիք) Ս(առակեան).— Ես կը ցանկայի որ պրոպագանդի սեկցիան լինէր Բիւրոյի մէջ:

Նախագահ.— Հարցը ուրեմն դնենք ջուէարկութեան:

Անտոն.— Նորից չեշտում եմ, որ առանց թերթի մասին խօսելու, չի կարելի անցնել պրոպագանդի գործը որոշելուն:

Փոքովը որոշում է հարցը ջուէարկութեան ենթարկել: Եթէ ձայնով առաջարկուում է՝ «Պրոպագանդայի գործը տանելու եւ ղեկավարելու համար, լինի մի մարմին իր ստորաբաժանումներով — թերթ, բրոշուրներ եւ բան(ուորական) պրոպագանդա», — որը չի անցնում: Նոյնպէս եթէ ձայնով ընդունուում է զատ-զատ մարմինների անհրաժեշտութիւնը: Չայնրի հաւասարութեան պատճառով, հարցը բաց է մնում:

Ոսկանապատի Գեր(կայացուցիչ).— Եթէ հարցը գրուէր այսպէս, որ Բիւրոն է պատասխանատու թէ՛ թերթի եւ թէ՛ պրոպագանդի գործին, այն ժամանակ

կարելի էր թողնել, որ Բիւրոն իր հայեցողութեամբ կազմէր այդ մարմինը:

Ռաստոմ.— Ինձ թուում է թէ այն մարդիկ, որոնք զատ-զատ մարմինների կողմնակից են, ուզում են անգիտանալ իրականութիւնը: Անկախ մարմինները կարող են տարբեր ուղղութիւններով տանել իրենց գործը, ո՛վ պէտք է դրանց ղեկավարէ:

Նախագահը յետաձգելով պրոպագանդի հարցը ձայների հաւասարութեան պատճառով, անցնում է թերթի հարցին:

Ոսկանապատի Գեր(կայացուցիչ).— «Յառաջ» երբ հիմնուեց, ես եւ ընկերս որոշ բան էինք սպասում նրանից. ես գոնէ սպասում էի որ նա պրոպագանդ կը սկսի Դաշն(ակցութեան) Մրազրի եւ մանաւանդ նախաձի ոգով. «Յառաջ» միանգամայն լուծուի էր պահում այդ տեսակէտից: Ընկերները պատճառաւորում են որ նրանք ծրագրի, Ֆեդերացիայի մասին յօդուածներ չեն գրել, վախենալով թերթի փակումից, բայց նոյնպէս չեն տպուել այնպիսի յօդուածներ, որոնք կարելի էր տպել, օր.՝ ագրարային, տնտեսական եւն.: Ես գտնում եմ որ թերթը չէ կատարել իր դերը: «Յառաջ» պտտուել է երկու գլխաւոր հարցի շուրջ. թուրք-հայկական խնդիրը եւ պետական Դուռման: «Յառաջ» տնտեսական, գիտական եւ փիլիսոփայական յօդուածներ չէ տուել. մենք համարում ենք մեզ աշխատաւոր դասերի պաշտպան, բայց այդ տեսակէտից «Յառաջ» շատ քիչ բան է արել, եւ այդ ուղղութեամբ յօդուածները տպագրուել են միշտ 4րդ երեսում, մինչդեռ առաջին երեսում պիտի լինէին: «Յառաջ» թղթակցութիւնների մեծամասնութիւնը գրուում էր շփոթիտական ոգով թուրքերի մասին, այնպիսի ասացուածքներ էին տպագրուում, որ նոյնիսկ հակասում է մեր սկզբունքներին, որ յաւակնութիւն ունենք աշխատաւոր դասակարգի պաշտպան անուանել մեզ: Երկու ուղղութիւն է ունեցել թերթը, մէկը մշտական (? — արդե՞օ «Մշակ»ական) ոգով թղթակցութիւններ եւ լուրեր գրելը, միւս կողմից Դաշնակցութեան շահերը պաշտպանելու յաւակնութիւն ունենալով(?): Պժքաբուժիչը երբեմն այնպիսի ուժեղ յօդուածներ է տպել, որ զարմացել ենք թէ ինչո՞ւ չեն փակում թերթը, բայց նոյն Պժքաբուժիչը կրճատում է նոյնանման յօդուածները, երբ գրողը դաւառացի է եղել:

Մենք ցանկանում ենք որ «Յառաջ» գիտական-փիլիսոփայական եւ տնտեսական բովանդակութեամբ յօդուածներ տայ շարաթական մի անգամ: Գաւառներում տեղական թերթեր հրատարակելու համար ոյժերը շատ քիչ են եւ յարմարութիւններ չունենք: Այդ նկատի առնելով, ցանկալի էր որ Դաշնակցութիւնը կովկասում ունենար իր անլեզալ թերթը, որը բաւարարութիւն տար Դաշնակցութեան բոլոր մարմիններին եւ որը զուտ յեղափոխական հարցերին արձագանգ տար:

Մեծ Քաղաք, Եղիշէ.— Ես կը տամ մի զեկուցում թերթի սկզբնաւորութեան եւ հետեւանքի մասին, որպէսզի պարզ լինի խնդիրը ձեզ համար:

Թերթի սկիզբը դրուեց լրատուներից եւ հենց այդ լրատուներից պարզուեց Դաշնակցութեան Ֆիդիոնոմիան(106): Մենք սկզբում այնպիսի կարծիք ունէինք, որ ամէն տեղից մեր Մարմինները կը հեղեղեն մեզ թղթակցութիւններով, լուրերով, որ որեւէ թերթ մտքովն անգամ չի անցնի մեզ հետ մրցել. բայց յուսախարութեան մէջ ընկանք. իմ ձեռքով անցել է ոչ-կուսակցական «Արշալոյս»ի բոլոր նիւթը, որը երկու անգամ աւելի էր լինում «Յառաջ»ի թղթակցութիւններից: Մեր Մարմինները մեզ թղթակցութիւնները չեն ուղարկում: Աշխատակիցները ոչ մի աջակցութիւն չեն ցոյց տալիս, երբեմն թերթի 3/4 մի մարդու գրչի տակից է դուրս եկել: Գալով ուղղութեան, Դաշնակցութիւնը ոչ մի որոշ ղեկավարող սկզբունք չէ ունեցել թէ՛ նախաձի եւ թէ՛ այլ սկզբունքային խնդիրների վերաբերմամբ. եղել են նախադասութիւններ, որոշ կէտեր, որը նոյնիսկ կազմողների կողմից միանման կարծիքներով չեն ընդունուել: Ֆեդերացիայի մասին չէ գրուել, Պժքաբուժիչից անկախ պատճառներով: Ոսկանապատի ընկերոջ ասած չովինիդը չէ եղել թերթի մէջ, այլ իրողութիւն է գրուել, մենք չենք կարող փաստերը աղաւաղել յանուն ազգերի համերաշխութեան: Սկզբունքային անորոշութիւնը պատճառ է եղել որ զանազան հարցերի մասին չէ գրուել: Նոյնիսկ պետական Դուռմայի վերաբերմամբ կարծիք յայտնելը չնորհիւ (պատճառաւ) կազմակերպութեան շարաթներով յետաձգուում էր, որովհետեւ մենք ղեկավարող սկզբունք չունէինք:

Լիպ(արիտ).— Մեր կազմակերպութիւնը փիլիսոփայական աշխարհայեցող չէ ունեցել, որի հիման վերայ էլ մարդ դժուարանում է յօդուածներ գրել:

Այգեստանի Գեր(կայացուցիչ).— Այն յարձակման, որին ենթակայ է թերթը, արժանի չէ, քանի որ նա պոյութիւն ունի ընդամէնը մի երեք ամիս: Աչքի առաջ ունենալով որ թերթի ընթերցողների 40-50 առ հարիւրը դաւառացիներն են, պէտք է աշխատել մատչելի դարձնել ժողովրդական մասսաներին, պէտք է աշխատել դաւառական կեանքից պատկերներ գրել, որ հետաքրքրեն եւ կրթիչ նշանակութիւն ունենան դաւառի համար. հարկաւոր է յարաբերութիւն եւ միջոցներ խնդնի հետադրով հաղորդեն:

Փլատի Գեր(կայացուցիչը), կրկնելով նոյն յարձակումները ինչ որ Ոսկանապատի ներ(կայացուցիչն) էր արել, աւելացնում է, որ Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ) Եղիշէն ստում էր, թէ Դաշնակցութեան ուղղութեան մասին չէ գրուել, վախենալով որ կառավարութիւնը կը փակէ թերթը եւ կարտերը բաց կը լինեն. ուրեմն այն ժամանակ չէիմենք որեւէ յեղ(ափո-

խական) գործունէութեան, մեր կարտերը բաց չանելու համար. մենք չունենք այն թերթը որ կարողանայինք ասել՝ ահա՛ մեր պատկերը. «Յառաջ»ը ոչինչ չէ տուել մեզ. ես կ'առաջարկէի ունենալ ոչ-լեզալ թերթ, որը ղեկավարուէր կուսակցական ուղղութեամբ:

Արեւ(Ելեմ) Բ(իւրոյ)ի Գեր(կայացուցիչ).— Ուզում եմ չեշտել որ թերթը պէտք է դարձնել պրոպագանդայի միջոց. մինչեւ հիմա այդ ուղղութեամբ թղթակցութիւնները չեն տպուել, առարկելով որ ոճը հասարակ է եւայն: Մենք պէտք է ունենանք մեր բազան, որը աւելի կարիք ունի մատչելի ձեւի ու ոճի: Անհրաժեշտ է վիճարանական շարաթաթերթ ունենալ, որտեղ կը լուսարանուէին զանազան հարցեր:

Ջրաբ(Երդի) Գեր(կայացուցիչ).— Եթէ թերթը պիտի ծառայէ պրոպագանդայի համար, այն ժամանակ միանգամայն անպէտք է այժմեան թերթը, իսկ եթէ թերթի ձեւը փոխենք, այն ժամանակ կը զրկուենք հասարակական կարծիք վաստակելու աղբիւրից: Մենք շարունակ մեծամտորէն(?) կրկնել ենք թէ ոյժեր չունենք. դաւառներից շարունակ պահանջել են թերթեր հիմնել, որ գուցէ այդպիսով կարողանայինք ոյժեր ստեղծել: Որպէսզի այսուհետեւ բոլոր թերութիւններին պատասխանատու մարմին լինի, դրա համար էլ պնդում եմ, որ թերթի Պժքաբուժիչը զատ լինի, պրոպագանդայի մարմինը՝ զատ:

Միքայէլ(100).— Ես մտադիր չեմ ներբողներ կարդալ «Յառաջ»ին, բայց պէտք է նկատել որ ընկերների յարձակումների մէջ կար մի խոշոր չափազանցութիւն: Երբ մեր իրականութեան մէջ արեւն է հոսում, գիւղեր են աւերուում, մեզնից պահանջում են որ փիլիսոփայութեան եւ գիտութեան մասին գրուէր. մենք որքան կարողացանք ծանօթանալ, ընդհակառակը «Յառաջ»ը բոլոր շրջաններում լաւ ընդունելութիւն է գտել. բացի դրանից պէտք է ի նկատի ունենանք որ ընդամէնը 50-60 համար է լոյս տեսել, ուրեմն այդքան խստապահանջ չի կարելի լինել:

Անտոն.— Մանրամասնութիւնների մէջ չեմ մտնում. ես կ'առաջարկէի որ մեր դաւառական թղթակիցներն էլ վարձատրուէին այն չափով, ինչ չափով Պժքաբուժիչի անդամները, ի հարկէ ստորաբաժանումներով: Մինչեւ այժմ «Յառաջ»ը չի տուել ըստ իս էական խնդիրների մասին այն՝ ինչ որ պիտի տար: Ասում ենք՝ պաշտպանել է ազգային խնդիրը, բայց դա անում են եւ միւս թերթերը: «Յառաջ»ը չի եղել Դաշնակցութեան բերան, այլ ձեւակերպուած «Մշակ»: «Յառաջ»ը շարունակ իր յարձակողական յօդուածներով թէ՛ երիտասարդ թուրքերի, թէ՛ վրացիների եւ թէ՛ կովկասեան թուրքերի դէմ, փոխանակ շուր ամբողջ կրակի վրայ, կարծես ուզում էր իւր ամբողջ, եւ եթէ այսպէս շարունակելու լինի, մենք թերեւս նոր-նոր ընդհարումների դուռ բանանք նաեւ վրացիների հետ: Նոյնը կ'ասեմ թուրք-հայկական պատգամաւորութեան

վերաբերմամբ պրուած յօդուածներէ նկատմամբ, — սկզբում Խատիսեանի ճառը ոգեւորութեամբ տպուում էր, յետոյ ընկերներէ ճշումներէ տակ, սկսուում է հակառակ կարծիք յայտնել:

Ըստ իս թերթը՝ իրբեւ օրգան Դաշնակցութեան, ոչ թէ միայն հայկի պիտի լինէր, այլև ուղեցոյց: Մենք ասում ենք՝ որոշ աշխարհայեացք չունենք. եւ ո՞վ պէտք է այդ աշխարհայեացքը ստեղծէր, ուղեցոյց լինէր, եթէ ոչ՝ թերթը:

Այն առարկութիւնները, որ իբր թէ մեր քաղաքական դաւանանքի մասին չի գրուել, որովհետեւ վախեցել են փակուելուց, դա լուկ պատճառարանութիւն է, ուրիշ թերթեր գրել են այդ ուղղութեամբ եւ չեն փակուել:

Մեր նպատակը չէ թերթ ունենալ թերթի՝ համար, այլ թերթ՝ (որ) պէտք է արտայայտէր մեր դաւանանքը, եւ փակուելից պիտի չվախենայինք:

Թերթը չէ ունեցել այն բազմակողմանիութիւնը, որին սպասում էինք: Եթէ մեր ներկայ ուժերով չենք կարողանում մի թերթ ղեկավարել, հետեւապէս չենք կարող մի քանի օրգաններ ղեկավարել, որի առաջարկը դնում են ընկերներից մի քանիսը:

Առարկում էին թէ գաւառներից թղթակցութիւններ չեն ստանում. դա ո՞ւմ մեղքն է, եթէ ոչ նոյն Խմբագրութեան, որը պէտք է նախօրք կազմէր (Թղթակցիցներ ?), հաստատէր գաւառներում. ամէնից շատ թերթը կազում է բազմակողմանիութեան տեսակէտից:

Թերթը կազմակերպութեան կենտրոնը եւ բերանն է. իսկ ո՞վ պիտի կազմէ Դաշնակցութեան կենտրոնը, եթէ ոչ ամենահասունացած յեղ(ափոխական) ոյժերը: Նրա ղեկը կամ պէտք է յանձնել Բիւրոյին, եթէ վերջինս ընտրուած է այդ ֆունկցիայի համար, կամ Ռայոնական Ժողովը ընտրելու է մի յատուկ Մարմին, եւ կամ Կենտրոնական Կոմիտէները մի-մի ներկայացուցիչներ կ'ընտրեն՝ Թերթը ղեկավարելու:

Ռաստմ.— Թերթի մէջ փիլիսոփայական եւ գիտական խնդիրներ չեն կարող գրուել, այլ պէտք է զուտ պրոպագանդայի գործ ղեկավարէ եւ լրատուի դերում լինի: Մենք պէտք է ունենանք մի (ուրիշ) այնպիսի օրգան, որտեղ կարողանայինք լրիւ գիտական-փիլիսոփայական յօդուածներ գրել: Երբ «Յառաջ»ը սկսեց լոյս տեսնել, կարծես խմբագրական կազմը օտարացաւ կազմակերպութիւնից: Մեր խմբագիրները պէտք է ամենասերտ կերպով կապուած լինեն կազմակերպութեան առօրեայ գործերին:

Մեծ Քաղաքի մեր(կայացուցիչ) Եղիշէ.— Այստեղ ընկերները իրենց միակողմանի եւ չափազանց ծայրայեղ եզրակացութիւններով այնպիսի կարծիքներ են առաջ բերում, որ կարելի է եզրակացնել թէ «Յառաջ»ը մի աւելորդ թերթ է, որ պէտք է վաղուանից եւ եթ փակել, քանի որ նա անպէտք է: Դաշնակցութեան բա-

զան (մասան) բոլորովին ուրիշ կարծիք ունի «Յառաջ»ի մասին, քան այստեղի ընկերները: Ասացին որ թերթը ընդունելութիւն չգտաւ, այդպէս ասել՝ կը նշանակէ ծանօթ չլինել իրականութեան: Ընդհակառակը ամենայն օր գաւառներից շարունակ թղթակցութիւններ են ստացուում, որտեղ «Յառաջ»ին «պաշտօնի» մակղիրներով են բնորոշում:

Անտոնը այնպիսի խօսքեր ասաց, որ կարծես մենք ոճրագործներ ենք, որ ցանկացել ենք ընդհարումներ առաջ բերել. մենք չենք սոփիստութեան դիմել, թերթի ղեկավարող սկզբունքը ճշմարտութիւնն է, եւ մենք խօսել ենք ըստ էութեան. մենք չովիմիստութիւն(24) չենք արել, երբ երեւան ենք հանել ճշմարտութիւնը: Անտոնը ասաց, որ ոչ թէ անորոշութիւնն է եղել (պատճառը) որ նախազմային հարցերի մասին չէ գրուել, այլ անձեռնհասութիւնը. — մենք հանճարներ չենք, բայց կ'ասենք որ եթէ հենց մեր այս Ռայոնական Ժողովի վրայ մի ակնարկ ձգենք, կը տեսնենք աւելի քան անորոշութիւն. զանազան Կենտր. Կոմիտէների տարբեր գործողութիւնները զալիս են ապացուցանելու ասածներս:

Անտոնի ասածներից կարելի է եզրակացնել, որ թերթն է մեղաւոր, որ գաւառներից կապեր չեն եղել, — բայց դա կազմակերպութեան ընդհանուր թերութիւնն է, որը տարիներից ի վեր գոյութիւն ունի: Խմբագրութեան հասցէին այն արտայայտութիւնները, որ իբր թէ խմբագիրները ձգտել են փառքի, աւելի քան անհիմն եւ անարդար է. — որ մեր մէջ փառասիրութիւն չէ եղել, ապացոյց այն՝ որ յօդուածների տակ երկար ժամանակ ստորագրութիւն չէր լինում:

Ռոստոմը գուրս բերեց որ Խմբագրութիւնը գատուած է եղել, դա եւս անհիմն է: Ես եղել եմ եւ խմբագիր եւ մասնակցել եմ կազմակերպական գործերին ոչ պակաս քան միւսները, նոյնիսկ աւելի շատ քան միւսները:

Պահանջում են որ գիտական-փիլիսոփայական յօդուածներ տպենք, բայց հաւատացա՞ծ եղէք որ եթէ մեր գաւառներում արիւնահեղութիւններ կատարուած ժամանակ, մենք զանազան գիտական-փիլիսոփայական յօդուածներ տպենք, մեր ընթերցողների 9-10ը անհնձքի կ'արժանացնէ մեզ:

8/IV, ԱՌԱՌՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10ԻՆ

Քննուում է դարձեալ պրոպագանդայի մարմիններ կազմելու հարցը:

Ղարիքը շեշտում է Խմբագրութեան մարմնի անկախութեան անհրաժեշտութիւնը միւս մարմիններից, թուելով դրա առաւելութիւնները:

Ռաստմը անհրաժեշտ է գտնում պրոպագանդայի բոլոր մարմինների գործակցութիւնը՝ աշխատանքի բաժանումով:

Մրգաստանի մեր(կայացուցիչը) միանում է Ռոստոմի առաջարկին:

Ոսկանապատի մեր(կայացուցիչ).— Մեզանում եթէ մինչեւ այժմ եղել են մարմիններ, որոնք հակել եւ դործադրել են Դաշնակ(ցութեան) Ընդհ. Ժողովի որոշումները, ինձ թուում է որ նոր ընդունուելիք պրոպագանդայի մարմինը այդ ուղղութեամբ աւելի մեծ դեր ունի կատարելու: Աշխատանքի բաժանումը պէտք է ընդունենք անպայման իբրեւ սկզբունք, թող ընտրուի մի մարմին, որը բաժնուած կը լինի զանազան սեկցիաներից:

Յով(մառ) Դ(աւթեան).— Ես առաջարկում եմ ընտրել մի մարմին, որը ուղղութիւն կը տայ եւ կը ղեկավարէ թէ՛ թերթը, թէ՛ պրոպագանդայի գործը. ներկայ պայմաններում իմ կարծիքով չի կարելի թերթի կամ պրոպ(ագանդայ)ի ղեկավարութիւնը յանձնել երկու կամ երեք անձնաւորութիւնների:

Ա(ետիֆ) Ս(ահակեան).— Այս վիճարանութիւնը առաջ է դալիս նրանից, որ թերթը, իբր թէ, կանգնած չէ եղել իր բարձրութեան վրայ: Եթէ ժողովը գոհ լինէր թերթից, այս դժգոհութիւնն էլ չէր լինի: Այդ հայեացքը սխալ է, ուրիշ կերպ պէտք է նայել խնդրին. մեր գործունէութեան 15 տարուայ ընթացքում, ո՞րտեղ է ամբողջովին իր հայեցակէտը յայտնել մեր կազմակերպութիւնը, որը պահանջուում է մեր երկու ամիս գոյութիւն ունեցող թերթից: Եթէ սկսում ենք մեղադրանքներ թափել, դա պէտք է կազմակերպութեան ուղղել, որ ահա մօտ երկու տարի է ոչ մի յեղ(ափոխական) ակտ չէ կատարել(112). ուրեմն քաղաքական պայմանները կազմակերպութեանը կաշկանդել են եւ հետեւապէս թերթը մեղաւոր չէ դորանում, եւ այն բոլոր ճառերը, ուղղուած թերթի դէմ, միանգամայն անհիմն են: Եթէ պայմանները կը փոխուեն, աւելի բարեյակող կը լինեն, մենք կ'ընթանանք այդ ճանապարհով(?):

Անտոնը ասում է, որ թերթում փոխանակ ազգերի համերաշխութիւն քարոզելու, ընդհակառակը բանակուելով եւ յարձակումներով դրպուել ենք նրանց. ես կ'ասեմ որ դորանում էլ կազմակերպութիւնն է մեղաւոր, որը միշտ ուրիշ ազգութիւնների զանազան խոստումներ էր տալիս միասին գործակցելու համար, բայց գործնական ոչինչ չէր անում առիթը ներկայացած դէպքում. կեանքն է թելադրել այդ վերաբերումը. ջերմ կողմնակից լինելով (հանդերձ) համերաշխութեան, երբ մի ամբողջ տարի թափուող հայի արիւնը ոչ մի համակրական խօսքի շարժանացաւ վրացի թերթերի կողմից, եթէ մենք այդ օրերում համերաշխութիւն քարոզէինք, դա կեղծիք եւ ջոնութիւն կը լինէր:

Անուշտ հարկաւոր է պակասութիւնների մասին խօսել, աշխատել վերացնել պակասութիւնները. եթէ ներկայ կազմը անընդունակ էք գտնում, ընտրեցէք նո-

րը, որը կը կարողանայ բաւարարութիւն տալ կազմակերպութեան: Եթէ մենք գործերը թողնենք նոյն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ նա կայ այժմ, հետեւապէս միշտ կը կաղայ, — պէտք է աշխատենք որ աշխատանքի բաժանում լինի: Մանրանալ թերթի Խմբագրութեան վրայ, թէ պաշտօնապէս իր վրայ վերցնէ պրոպագանդայի գործը, անկարելի է:

Մրգաստանի մեր(կայացուցիչը) շեշտում է թերթի առաւելութիւնները, նկատելով որ ընկերները խօսելով բացասական կողմերի մասին, չեն խօսում եւ նրա դրական կողմերի մասին: Թերթը տարբերուել է մեր միւս թերթերից իր ուժեղ շեշտով: Թերթը իր քաղաքական դաւանանքների մասին չի արտայայտել այն չափով, ինչ չափով պիտի լինէր: Ինչքան էլ ուզենանք փիլիսոփայական եւ գիտական դաւանանքները լուսարանել, դա «Յառաջ»ի մէջ անկարելի է, այլ հարկաւոր է մի ուրիշ օրգան, որ կարող լինէր այդ անել, — մենք պէտք է անպայման մի շարքաթերթ ունենանք, որտեղ կը պարզուի մեր դաշնակցական դաւանանքը:

Անտոն.— Մեր մեղադրանքը ուղղուած է այն ուղղութեամբ, որ մեր Ռայոնական Ժողովում որոշուած ուղղութեան՝ թերթը չի կարողացել արտայայտիչ լինել, Բիւրոյի տարտամութեան պատճառով. երբ հրատարակուում էր Դաշնակցութեան բերանը, Բիւրոն նախապէս հող պիտի պատրաստէր մեր հրատապ խնդիրները պարզարանելու: Մեր կազմակերպութիւնը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել յեղ(ափոխական) գործում(112), եւ զրկուել է բոլոր կուսակցութիւնների համակրանքից: Իւրաքանչիւր պատասխանատուութեան հարց մտցնելով հանդերձ, անհրաժեշտ է խորհրդակցութեան պարտականութիւնը եւ գործելու համերաշխութեան հարցը(?):

Թերթը առաջ գալով Բիւրոյի դերը փոխուում է. թերթը մի կազմակերպութեան ձեռքում աւելի մեծ է, քան մի Կենտրոնական Կոմիտէ, — այդ պէտք է ի նկատի ունենալ:

Գար(եգիմ) Խ(աժակ).— Ինչո՞ւ հարց էինք տալիս, թէ թերթում ինչո՞ւ համար չենք գրել այնպիսի հարցերի մասին, որոնց մասին մի քանի տասնեակ դասախօսութիւններ ենք կարդացել եւ պատրաստի յօդուածներ ունենք. դա Խմբագրութիւնից անկախ կերպով է կատարուել եւ պատասխանատուութիւնը ամբողջովին կազմակերպութեան վրայ է ընկնում (Բիւրոյի), քանի որ նա Խմբագրութեան ոտն ու ձեռքը միշտ կապած է պահել զանազան նկատումներով:

Ղարիք.— Քննութիւնը յարգելի բան է, եթէ արդարացի է. այն սկզբնական պայմաններում, որու մէջ ենք եղել մենք, ուրիշ կերպ տանել անկարելի էր. եթէ այժմ էլ թերթը լինէր նոյն սկզբնական պայմաններում, դարձեալ կը տանէինք նոյն ձեւով, ինչ ձեւով տարուել է մինչեւ այժմ:

Մեծ-Քաղաքի մեր(կայացուցիչը) առաջարկում է

տեսական հարցերի մասին ունենալ մի ամառը՝ բրոշիւրային մասով:

Հ(ամօ) Օ(հանջանեան) կարդում է «Յառաջի երեք ամսուայ ելք ու մուտքի մասին, որից եզրակացուում է տարեկան քսան հազար ուրբլու դէֆիւսիտ(113): Որոշուում է ընդունել դէֆիւսիտի(113) խնդիրը, եւ յատկացնել դիսկուսիոն(108) թերթի եւ բրոշիւրների եւ բանաւոր պրոպագանդայի մարմնի տրամադրութեան՝ տարեկան տաս հազար ուրբլի:

11 ձայնով ընդդէմ 7ի, որոշուում է թողնել Բիւրոյին Պրոպագանդայի Մարմնի ընտրութիւնը, որը էր Հայեցողութեամբ դերերը պիտի բաժանէ:

14 ձայնով ընդդէմ 3ի, որոշուում է որ այդ ընտրութիւնը Մարմինը մէկ պիտի լինի իր ընդհանուր կազմով, ստորաբաժանումներով եւ աշխատանքի բաժանման տեսակէտից(?):

Համարեա միաձայն որոշուում է որ այդ Մարմինը ունենայ երկու սեկցիա, — մէկը խմբագրական, միւսը՝ բրոշիւրային, բանաւոր պրոպագանդի եւ դիսկուսիոն(108) օրդանի, որոնք կ'ունենան իրենց ներքին ատոնոմիան(69):

Կազմի ընտրութիւնը թողնուում է Բիւրոյին:

Ռայոնական Ժողովը միաձայն ընդունում է ընկեր Համօ Օհանջանեանի առաջարկը, որ «Յառաջը Դաշնակ(ցութեան) կովկասի մարմինների օրդանն է. նա պիտի գործունէութեան ընթացքում ղեկավարուի մեր նախագծի ոգով, Ժողովրդականացնէ նրա մէջ եղած քաղաքական եւ տնտեսական դաւանանքները, կրթէ Ժողովուրդը այդ ուղղութեամբ եւ լուսարանէ կեանքի բոլոր երեւոյթները այդ ոգով»:

Անցնում են Բիւրոյի ընտրութեան:

Ձայների պարզ առաւելութեամբ ընտրուում են Հետեւեալ անձնաւորութիւնները, — Անտոն, Բ.Տ.Դ., Հ. Օ., Ռոս., Ա. Ս., Յով. եւ Ս. Տ. Մկր.(114):

Ռայոնական Ժողովը լսելով «Ճազոնի» կոմիտէի վերաբերմամբ Շրջանային Ժողովի արձանագրութիւնը եւ այդ առիթով խմբագրողների անունից դիմումը, ընդունեց Հետեւեալ բանաձեւը. — «Ընդունելով Շրջանային Ժողովի իրաւասութիւնը Ճազոնի կոմիտէին վերաբերեալ հարցի նկատմամբ, եւ համարելով այդ

Ժողովը վերջին ինստանցիա(115) նմանորինակ հարցերի վերաբերմամբ, Ռայոնական Ժողովը հաստատում է Ճազոնի կոմիտէի լուծման մասին կայացած վճիռը եւ յանձնարարում է Մեծ-Քաղաքի կենտր. կոմիտէին՝ միջոցներ ձեռք առնել Ճազոնում դաշն(ակցական) նոր կազմ ընտրելու համար:

(1) Կուսակցական տեղամուններում համար, տեսնել ի մասնաւորի էջ 109 եւ 210: Ձիֆոնը «Ջիմուրական ֆոնտն» է, դաշնակցական խումբերու համար գէմի հայթայթման պարտականութեամբ ստեղծուած մարմինը:

(2) Փակագծի մէջ առած ենք անուններու կամ բառերու մեր կողմէ կատարուած լրացումները, կամ իմաստի ամբողջացման թէ բացատրութեան համար (երբեմն՝ հարցման նշանով) մեր կողմէ աւելցուած բառերը: Անձնանուններու կամ բառերու անորոշութեան պարագային՝ գոհացած ենք միայն հարցման նշանով:

(3) Անձնայն հաւանականութեամբ՝ Արմէն-Գարօ:

(4) Համօ Օհանջանեան, որ ժողովին մէջ կը ներկայացնէր Արեւելեան Բիւրոն:

(5) Վարձապետ: Ըստ երեւոյթին՝ Ջրաբերդի (Կարսի) ներկայացուցիչն է: Արդեօ՛ք Նորհատեանը:

(6) Սիմոն Զաւարեան (վերադարձած էր արդէն Կիլիկիոյ եւ միջերկրականեան երկիրներու իր ֆինակամ երկար պտոյտէն):

(7) Կը գոհամանի՝ տալով օտար կարգ մը բառերու իմաստը միայն: Ինչպէս այսօր՝ Հայաստանի մէջ, նոյնպէս եւ անցեալին՝ Կովկասի մէջ, այնքան գործածական էին օտար բառերը (ը՛յն իչնէ Յակոբ Պարոնեանի գեքեզմանին), որ առսերէն կամ ֆրանսերէն չգիտցողի մը համար արեւելահայ ընթացիկ լեզուն երբեմն ուղղակի անհասկնալի կը դառնար: Եթէ ուզէիմք տալ այս ստեղծագործութեանց մէջ գործածուած օտար բոլոր բառերուն բացատրութիւնը, ծանօթագրութիւնները մօտաւորապէս նոյնքան երկար պիտի ըլլային, որքան գրութիւնը ի՛նքնը:

(8) Բարսեղեանը (Շամիլ), որ շուտով պիտի դառնար վասայ Սարգիսը:

(9) Ներգործակա՞ն թէ կրաւորական, — «յարձակողական», գործօ՞ն թէ խաղաղ, հանդարտի իմաստով:

(10) Ախալխալի շրջանը:

(11) Նիշի՛ն Թոփչեան:

(12) Արդեօ՛ք Սմբատ Օհանեան, որ նոյնպէս Զաւարեանի ծածկանուններէն մէկն է, ինչպէս Անտոնը: Կրնայ եւ ըլլալ Սմբատ Խաչատրեանը (Բորիս):

(13) Հօտը կամ նախըր պարբերաբար արտավայրեր բարձրացնելու կամ ընդհանրապէս՝ պարբերաբար ու խմբովին տեղափոխելու գործողութիւնը, յատուկ ի մասնաւորի խաշնարած ծաղովուրդներու:

(14) Սերաստացի Մուրատ:

(15) Գազափարաբաններ, գազափարախօսներ:

(16) Անձնայն հաւանականութեամբ՝ Յովհ. Նուսուֆեանը: Աւելի ետ՛ք՝ յիշատակուած է Իւսուֆ:

(17) Գարնաշուքեամբ կամ ընդյատակեայ աշխատանքով:

(18) Ընչազուրկ դասակարգը:

(19) Աստիւտութիւնը:

(20) Գրգռութեանց:

(21) Վարչութիւնը, իշխանութիւնը:

(22) Անձնայն հաւանականութեամբ՝ Ստեփան Տէր Մկրտչեանը, որ Ռայոնական Ժողովին կողմէ պիտի ընտրուէր Արեւելեան Բիւրոյի անդամ:

(23) Արքայա՛ն Գիւլիանդեանը:

(24) Ազգայնագետներ, ծայրայեղ ազգայնականներ:

(25) Որոշումներու հրատարակուած տպագրութեան մէջ այս մասը որոշ փոփոխութեան ենթարկուած է ու դարձած՝ «ի նկատի առնելով որ ներկայումս անհրաժեշտ է վերականգնել խաղաղութիւնը...»:

(26) Յանձնարարութեան:

(27) Ազգակ, առիթ:

(28) Ռուսերէն գրուած:

(29) Գրգռիչ, թշնամութիւն արծարծող:

(30) Հանրաճիւտ, հաւաքական գրաւոր պահանջ:

(31) Սոցիալ-Դեմոկրատ:

(32) Անձնայն հաւանականութեամբ՝ Ալեքսանդր Պապովեանը:

(33) Մտաւորականութիւնը, մտաւորական դասը:

(34) Յու ի սիրտ, չենք կրնալ չնշի՛ր՝ որ, 1906ին, կովկասահայ մեր ընկերներէն շատեր տակաւին բուրքը չէին նանջած, հակառակ հայ-բաքարական կռիւներուն:

(35) Յովնան Դաւթեան:

(36) Աւստապետականներ:

(37) Անձնայն հաւանականութեամբ՝ Մարտիրոս Մարգարեանը, Յուցական Մարմնի Սափոն:

(38) Արե՛ն, Ա՛ր.-ն, պարագայաբար նաեւ Ա՛րր անունով նշանակուած ժողովակարգ, ամենայն հաւանականութեամբ, Արե՛ն Ա-միրեանն է (յետագայ պոլշիկի ծանօթ ղեկավարը), որ շուտով պիտի միանար սոցիալ դեմոկրատներուն:

(39) Կ'ակնարկուի կովկասեան Նախագծին:

(40) Հասկնալի են տակաւին Մուշը, Վասպուրականը, Լեւոն-բերդը (արդեօ՛ք Լեւոնապար), որոնք վարչականօրէն կ'իյնային, Յոյ եւ Յոյ Ընդ. Ժողովներու գծած սահմաններով, Արեւելեան Բիւրոյի իշխանութեան սահմաններում մէջ, եւ կրնային — յեղափոխութեան շրջանին ընդունելի էր — ժողովին վայրը գտնուող ու իրենց շրջանին ծանօթ անձեր ներկայացուցիչ նշանակած ըլլալ: Մակայն Կիլիկիոյ մասնակցութիւնը (մանաւանդ ճայնի իբրուան-բով) Արեւելեան շրջանի Ռայոնական Ժողովին՝ կը թուի տարօրինակ: Անձնէն հաւանականը այն է՝ որ Բիւրոնքը այդ իբրուան-բը տուած ըլլան Սիմոն Զաւարեանին, որ Յոյ Ընդ. Ժողովին անդամ էր ընտրուած Լեւոնապարի Պատասխանատու Մարմնին, նկատի ունենալով անոր անձնակամ ներդրումները եւ ունեցած իր օգտակարութիւնը՝ այսպիսի կարեւոր ժողովի մը մէջ:

(41) Տանկահայաստանի յեղափոխական գործին ամբողջական ղեկավարութիւնը Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներէն առնելու եւ տեղայն վրայ գործող յատուկ Մարմնի մը վստահելու սկզբնական այս մտածման բնական հետեւեանքը պէտք է նկատուի 4րդ Ընդ. Ժողովին մէջ կազմութիւնը երկրի Պատասխանատու Մարմնին (Բ. եւ Դ. Ընդ. Ժողովներուն միջեւ, 1898-1907 տարիներուն, երկրին մէջ փաստօրէն գոյութիւն ունէր միայն մէկ Պատասխանատու Մարմին՝ Բարձրաւանդակի Պատ. կեդրոնական կոմիտէն):

(42) Դիւանագիտութիւնը:

(43) Բարեկրթութեան:

(44) Աւետի Անարոնեանը:

(45) Ոչնչապաշտութիւն: Մարդկային ամէն արժէք ուրաճելու, տեղը ոչինչ կատարելու պայմանա՛ւ ամէն ինչ ֆանդելու, ամէնցընելու ճգնույթը եւ ընկերաբանական համագոյտաստիւն վարդապետութիւնը:

(46) Պատուանդան, յեմարան. նաեւ՝ առաջադրանքներու բանաձեւուած ամբողջութիւն:

(47) Առաջաւոր, մշակոյթի եւ զարգացման առաջին դիրքերուն վրայ:

(48) Ձգտումը, միտք բանին:

(49) Ազգագրութիւն, ցեղագրութիւն:

(50) Սիրողներ, — յեղափոխութեան ո՛չ գործնական մասնակցներ, այլ իրենց արուեստագէտ մտեցողներ:

(51) Տեսական:

(52) Փուլի, ժամանակաշրջանի:

(53) Ֆրանսերէն գրուած, — ամբողջ գանգուածով, գանգուածային կերպով:

(54) Չափանիշը:

(55) Ռուսերէն գրուած բառ մը. անընթեանի:

(56) Տնօրէններէ, ինֆանտարեւութեմէ:

(57) Խառնուածներու:

(58) Ենթակայական:

(59) Յոռեան:

(60) Տէրոյեանը:

(61) Վարդգէս Սերէնկիւլեանը:

(62) Տարբեր:

(63) Գրիստափոքը:

(64) Նիւթապաշտներ:

(65) Մէկ բառի տեղ բաց ձգուած:

(66) Տարբերացում, գանգաւորութեան ստեղծում, բաժանում:

(67) Հարտաբարուեստը, արդիւնաբերութիւնը:

(68) Վարդապետականութիւն, կուսակցական ներմտութեան իմաստով:

(69) Ինֆիլիտան, ինֆանտը:

(70) Յոյցեր:

(71) Արդեօ՛ք 1904ի. կրնայ անուշադրութեան սխալ մը ըլլալ քարտուղարութեան կողմէ: Կամ պէտք է ենթադրել՝ որ կ'ակնարկուի ոչ թէ Ընդ. Ժողովի մը, այլ Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմնի Ֆիլիպիի Ժողովին: Կրնայ նաեւ ակնարկուի նոյն թուականին (1901) տեղի ունեցած կովկասեան Ռայոնական Ժողովի մը, որուն մասին փաստաթուղթեր ցարդ չունինք:

(72) Անցատողականներ:

(73) Հրատարակուած որոշումներուն մէջ՝ դարձած է «...ամենազիջարու գործերից մէկը»:

(74) Հրատարակուած որոշումներուն մէջ՝ «ճայնը» վերածուած է «չայն»:

(75) Դիւցազմակէց:

(76) Արդեօ՛ք Մալխասը (Արտաշէս Յովսէփեան):

(77) Հաւանաբար՝ Թրքահայաստանով:

(78) Ձգտումներ, ոչ անաչառ:

(79) Հոգային, գիւղացիական:

(80) Անձնայն հաւանականութեամբ՝ Աւետի Անարոնեան (Հայր Արքայա՛ն):

(81) Արդեօ՛ք Ա. Իսահակեանը:

(82) Վարկ, ենթահակութիւն:

(83) Հոգային ծրագիր, յայտագիր:

(84) Արդեօ՛ք Սիմոն Շիխեանը:

(85) Ձեռնհաս, ատակ:

(86) Վիճակագրութիւն:

(87) Սոցիալիստ աւելուցիներ, — ընկերվարական յեղափոխականներ:

(88) Չարգացման, յառաջիմութեան:

(89) Սփոփիչ, ամոհիչ, բարեկարգիչ՝ ոչ-ամբողջական, մասնակի իմաստով:

(90) Հոգային եկամուտի:

(91) Վաշկատուն, բախառաշրջիկ:

(92) «Ռուս» բառը ատենագրութեան մէջ չկայ. աւելցուած է տպագրուած «Ռորոշումներուն» մէջ:

(93) Ասկերանի հերոսը, — Համագոյտ Սրուանտեանց:

(94) Նոյն ասպարէզին պատկանողներու վերաբերեալ, — արհեստակցական:

(95) Շրջան:

(96) Բանաձեւեր, տարագիր:

(97) Դերերը, պաշտօնները:

(98) Շեղակոյտ, շեղակուտակ, — այլգամ տարբերու կուսակա՛մի իմաստով:

Ընդհ. ժողովի իբրև վայր վիճման նշանով ըլլալը, կամ Դաշնակցութեան կազմած... 100.000նոց բանակը (Խեղճ Օթրանա, — Մերձաւոր Արեւելիի քաղաքական դրուածքը ընդհանրապէս — եւ Հայաստանի սահմանները մասնաւորաբար — այս ձեւը կ'ունենային ներկայիս, եթէ Դաշնակցութիւնը իր տրամադրութեան տակ միայն քառասուն, յիսուն հազարնոց բանակ մը ունեցած ըլլար...):

Ակնարկը պատրաստուած է, ըստ երեւոյթիմ, Դաշնակցութեան դատավարութեան օրերուն կամ անոր նախօրեակին: Անոր մէկ մասը կը վերաբերի 1907-1908 տարիներուն. կու տանք սակայն ամբողջութիւնը՝ գրութիւնը կտրատումի չենթարկելու համար: Ակնար-

Օտ 1.— ԱԿՆԱՐԿ
ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

I

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայերի 500 տարիներ թիւրքերի տիրապետութեան տակ գտնուելը նրանց մէջ ստեղծեց դժգոհների զանգուած, ճնշուած՝ թուրքական լուծի տակ, եւ ճրգտող՝ այս կամ այն միջոցով ազատուել թուրքերի իշխանութիւնից:

Այս նպատակով, հայերը սկսեցին բոլոր պետութիւնների մէջ պրոպագանդ մղել թրքահայերի ազատագրման անհրաժեշտութեան մասին եւ հայկական պետութեան ստեղծման մասին՝ բուլղարների օրինակով: Այդու, տեսնելով որ սոցիալիստական գաղափարները այդ ժամանակ սկսած են օգտուել մեծ յաջողութեամբ ոչ միայն Եւրոպայում, այլեւ Ռուսաստանում եւ, նրանց դրօշի տակ տեղի է ունենում քայքայումը գոյութիւն ունեցող պետական իշխանութեան, հայ երիտասարդութիւնը, բնականաբար, հակուեց այն ժամանակները Եւրոպայում գործող յեղափոխական կուսակցութիւններին:

Ռուսաստանում հայերը դատարակուում էին «Նարոդնայա Վոլիա»(*) (Ժողովրդական Ազատու-

(*) «Նարոդնայա Վոլիա» թարգմանում է երկու կերպ՝ ա) «Ժողովրդական կամք» եւ բ) «Ժողովրդական ազատութիւն»: Վերջինս աւելի ճիշդ է, շարժման առեւտրութեամբ, ուստի այդպէս եմ թարգմանում: Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

կէն ետք կու տանք նաեւ ամենէն շահեկանները Օթրանայի այն փաստաթուղթերուն եւ տեղեկանքներուն, որոնք կը վերաբերին Դաշնակցութեան կամ դաշնակցականներու՝ մինչեւ 1906 ներառեալ, ինչպէս՝ Ռուստումի եւ վալիսովսկիի նամակները անիշխանական Դեկանոզին եւ այլ թուղթեր: Շատ աւելի հետաքրքրական են 1907-1917 թուականներու փաստաթուղթերը, անոնք մահաւանդ՝ որ կը վերաբերին Դաշնակցութեան 7րդ. եւ 8րդ. ընդհանուր ժողովներուն: Այդ գրութիւնները կը վերապահենք Նիիթեմու յառաջիկայ հատորներուն, ուր տեղ պիտի գտնեն համապատասխան տարիներու արխիւային նիւթերը:

Հ. Յ.

թիւն) կուսակցութեան ոգիով, որի հետեւանքով, նարոզավորեցները, որպէս նախահայրերը արդի սոցիալիստ - յեղափոխականների, իրենց ուսմունքի էութեամբ, մօտենում էին հայերի տրամադրութեան աւելի քան սոցիալ - դեմոկրատները, որոնց համաշխարհաքաղաքացիութեան (կոսմոպոլիտիզմ) ուսմունքի ցնորամտութիւնը ուղիղ էր զնահատուած հայ յեղափոխական շարժման ղեկավարների կողմից, որոնք հասկացել էին, որ հայ ժողովրդական զանգուածները, դատարակուած իրենց հոգեւորականների կողմից վերին աստիճանի պահպանողական եւ նեղ ազգայնական ոգիով, երբեք չպիտի դնային միջազգայնականութեան (ինտերնացիոնալիզմ) ուղիով: Հայերը, վերլուծելով ժամանակակից յեղափոխական ուսմունքներն ու կազմակերպութիւնները, փոխ առան այս վերջիններից նիւթեր՝ պրոպագանդայի համար, այն մղելու ձեւերի եւ տակտիկայի եղանակներ, որոնք աւելի համապատասխան էին հայ ժողովրդի հոգեբանութեան:

Միջոցներ ձեռք բերելով եւ զանգուածը նախապատրաստելով ըմբռնելու ազատագրական գաղափարները, հայ յեղափոխականները սկսեցին արագ կազմակերպուել առանձին խումբերի մէջ, շարժմանը ամենէն աւելի նուիրուած անձերից, որոնք իրենց յանձնել էին ազատագրական շարժման վերջնական նպատակներին, պրոպագանդ տանելու թուրքերի դէմ գինուած ապստամբութեան նախապատրաստութեան համար, (քանի) առանց ապստամբութեան ազատագրութեան չէր հասել ոչ մի ժողովուրդ եւ ոչ մի յեղափոխութիւն:

Այս քարոզչութիւնը յաջողութիւն ունեցաւ եւ սկսեցին արագ կերպով ծնուել յեղափոխական խումբեր, միանալով 1890ին Հայ Յեղափոխական Կուսակ-

ցութեան մէջ, իրեն կոչելով «Դաշնակցութիւն», իրեն նշանարան ընտրելով՝ «Մահ կամ Ազատութիւն»:

1892 թուին ժընեւ քաղաքում կայացաւ «Դաշնակցութեան» ներկայացուցիչների առաջին համագումարը, որին մասնակցութիւն բերին 32 պատգամաւորներ:

Կուսակցութեան այդ առաջին համագումարում մշակուեց ծրագիրը, որը, բնութագրելով հայերի վիճակը թուրքիայում, մատնացոյց արաւ որ՝ «այս բոլորին կարող է վերջ տալ միայն բռնի յեղափոխութիւնը եւ մենք դիմում ենք նրան»:

Իր վերջնական նպատակն էր համարում այս կուսակցութիւնը, սկզբում, թրքահայաստանում ստեղծել ազատ իշխանութեամբ դեմոկրատական հանրապետութիւն, նրանից բխող կեանքի յատուկ ձեւերով: Այդ նպատակին հասնելու միջոցները պիտի լինէին՝ 1) զինեալ ապստամբութիւն թրքահայաստանում, նախապատրաստուած՝ ա) յեղափոխական պրոպագանդայով ոչ միայն հայերի մէջ, այլեւ ուրիշ ճնշուած ժողովուրդների, որոնք ապրում են թուրքիայում, բ) կազմակերպուածութեամբ եւ հայերի զինումով, գ) տեղորով եւ դ) կառավարական հաստատութիւնները աւերելով եւ կողոպտելով:

Կուսակցութեան ներքին կազմակերպութիւնը պարզ էր՝ ինքնավար կոմիտէներ եւ Բիւրօ: Կարգապահութիւն էր հաստատուած՝ խիստ: Ընդհանուր ժողովի ծրագիրն ու որոշումները փոխել՝ ոչ ոք չէր համարձակուի:

Գաղափարական ղեկավարն ու արտայայտիչը կուսակցութեան օրգան «Դրօշակ»ն է, ժընեւ հրատարակուող:

Այս կերպ, պրոպագանդի դործը եւ կուսակցութեան կազմակերպութիւնը, ուղղուած բացառապէս թուրքերի դէմ, շարունակուեց ու տեւեց, առանց էական փոփոխութիւնների, մինչեւ 1897 թիւը, երբ կուսակցութեան մէջ, նրա ուժեղացման եւ կազմակերպական մատերիալի կուտակման հետեւանքով, պահանջ ծագեց 2րդ Ընդհանուր Համագումարի, որը տեղի ունեցաւ 1898 թուի Ապրիլ 5ին:

Այս համագումարի մէջ վերաքննութեան ենթարկուած կուսակցութեան ծրագիրը մնաց առանց փոփոխութիւնների եւ զլիաւոր ուշադրութիւնը դարձուեց կուսակցութեան կանոնագրի մանրամասն մշակման վրայ: Տեսորի հարցի կապակցութեամբ հանուեց մի բանաձեւ, որ ճշգրտուած էր, թէ նրա թոյլ գործադրութիւնը վնասում է յեղափոխական պրեստիժին եւ որ այդ պատճառով պէտք է նրա աւելի լայն զարգացումը:

Տեղական կազմակերպութիւնների վրայ պարտականութիւն է դրուած թուրքերի մէջ բնակուող յոյների, մակեդոնացիների եւ երիտասարդ թուրքերի հետ մտերմութիւն հաստատել եւ նրանց առնել իրենց ղեկավարութեան տակ: Ներմուծուած է, ապակեղո-

նացման հետ, վարի մարմինների համար քողածածուկ խիստ կենտրոնացում: Կենտրոնական կոմիտէին, Բիւրոյին եւ Երջանային ժողովներին իրաւունք է տրուած մշակել կանոնադիրներ եւ հրահանգներ իւրաքանչիւր մարմնի եւ կազմակերպութիւնների սեկցիաների համար: Ճշգրտէն որոշուած են կազմը, իրաւունքները եւ պարտականութիւնները տեղական կենտրոնական կոմիտէների: Հիմնուած է Արեւմտեան Բիւրօ, որոշուած են շրջանները, գործունէութիւնը Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների եւ նշանակուած են «Միութեան» եկամուտների (տուրքեր) աղբիւրները:

Վերոյիշեալից երեւում է, որ հայերի տարածուած կարծիքը, որ «Դաշնակցութիւնը» հիմնուած է միայն պաշտպանելու համար թրքահայ հարցը «ամենահամեստ» ծրագրով, որ կայանում է Բեռլինի պայմանագրի թրքահայաստանում ճշգրտուած իրազդրման մէջ, բնաւ չի համապատասխանում իրականութեան:

1897 թուից, «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը յեղափոխական պայքարի ճամբի վրայ մտաւ ռուս կառավարութեան հետ, բայց մինչեւ 1903 թիւը այդ պայքարը տարուում էր խուլ կերպով, խնամքով դիմակաւորուելով հայերի արտաքին օրինապահութեամբ եւ զլիաւորապէս արտայայտուում էր նրա մէջ, որ «Կովկասեան կոմիտէները» նոյնպէս, ինչպէս եւ Պարսկաստանի գաղութների կոմիտէները, կայանում էին իբրեւ օժանդակ կազմակերպութիւններ, որոնք թրքահայերի ազատագրական շարժմանը հայթայթում էին դրամներ, մարդիկ եւ զէնք:

Իր ազդեցութիւնը ուժեղացնելու համար, «Դաշնակցութիւնը» իր ձեռքն առաւ ժողովրդական կրթութեան գործը եւ այդ նպատակով քաղաքներում եւ գաւառներում հիմնեց գաղտնի դպրոցներ, ուր ուսուցիչները դասաւանդութիւնն անում էին հայոց լեզուով, եւ շատ տեղերում մտցրեց ձրի ուսում, որի ծախքերը պիտի հոգար համայնքը:

Սկսելով 1902ից, Դաշնակցութեան գործունէութիւնը բացայայտ կերպով յեղափոխականանում է: Մի շարք գաւառներում «դաշնակցները» հետեւողականօրէն իւրացնում են կառավարական գործունէութեան տարբեր տեսակները: Այսպէս, օրինակ՝ կուսակցութիւնը հիմնել էր իր դատարանը եւ սեփականացրել էր դեբազոյն դատաւորի դերը, քննելով դիւղացիների միջեւ ծագած բոլոր վէճերը եւ լուծելով զանոնք: Կուսակցութեան ազդեցութեամբ, դատաւորները յաճախ ընտրուում էին տեղական մարմիններից եւ գործում էին կուսակցութեան հսկողութեան տակ:

1903 թուին, հայկական եկեղեցական ստացուածքների գրաւումը կառավարական վարչութեան կողմից, օգտագործուեց Դաշնակցութեան կողմից որպէս յարմար պահ, բացայայտ կերպով դուրս դալու ռուս կառավարութեան դէմ եւ իր յեղափոխական գաղափարների քարոզչութիւնը վարելու Կովկասի հայե-

րի մէջ, յենուելով այն բանի վրայ, որ այդ գործողութիւնը, որ կատարուած էր վարչական կարգով, հնարաւորութիւն էր ընձեռում մեղադրելու ուս կառավարութիւնը քմահաճոյքի մէջ եւ զրկում էր հայերին նիւթական միջոցներից, թուրքերոյ դէմ յեղափոխական պայքար մղելու եւ Ռուսաստանում նախապատրաստական յեղափոխական աշխատանք տանելու թուրքերոյ դէմ:

Արդէն իսկ ամրասնուած կուսակցութեան կարող օգտադրումը այս պատրուակի՝ յանդեց այն բանին, որ հայ պանդուխտը խուժեց Դաշնակցութեան մէջ եւ ամէն հայ իր պարտականութիւնը սեպեց այս կամ այն կերպ օգնութեան հասնել կուսակցութեան՝ ուս կառավարութեան դէմ իր պայքարում:

Այդ շրջանը (1903-1905 թուեր) Դաշնակցութեան Կովկասի գործունէութեան, այսպէս կոչուած «ինքնապաշտպանութեան շրջան», սկսուում է մի շարք զանազան ցոյցերով, զինեալ ապստամբութիւններով, կառավարական հաստատութիւնները բռնկողի ենթարկելով եւ ընդհանրապէս խռովարար գործերի շարքով որոնք բոլորին յայտնի են:

Եկեղեցական կալուածների գրաւումը պետական վարչութեան կողմից եւ հայկական դպրոցների փակելը, դիպաւ ժողովրդի (հայ) բարոյական զգացմունքներին եւ օգնեց «դաշնակներին» ներգրաւելու նրան յեղափոխական շարժման մէջ: Ստացուածքների գրաւման վերաբերող կառավարական ներկայացուցիչների դէմ կատարուած տեղորոշական գործողութիւններին մասնակցում էին անուղղակի, եթէ ոչ դրամով, ապա՝ համակրութեամբ համարեալ՝ բոլոր Կովկասի եւ Ռուսաստանի հայերը:

Յեղափոխական հայկական միութեան Դաշնակցութիւնը, իր ժամանակին կազմակերպուած՝ թուրքերոյ հայերի ազատագրման համար թրջական իշխանութիւնից, եւ Ռուսաստանում ներկայանալով միայն որպէս դրամահաւաք, զէնքեր պնդեալ կամաւորներ կազմակերպող՝ թուրքիա ուղարկելու համար, եկեղեցական կալուածների գրաւումից յետոյ ստացաւ բարենպաստ հող իր ազատագրական գաղափարների պրոպագանդի համար նաեւ ուս կառավարութեան դէմ: Իմֆնօրէն Հայաստան ստեղծելու գաղափարը, նրա կազմի մէջ մտցնելով ընդհանրապէս բոլոր հայերին, միանգամից նշանակալից տարածում ունեցաւ Կովկասում: Ըստ վարչութեան ունեցած տեղեկութիւնների, հայ բնակչութեամբ որեւէ տեղ չկար որ չունենար «դաշնակցական» կոմիտէ:

Այս դէպքերի ազդեցութեան տակ, 1904 թուի սկիզբը, Վիեննա քաղաքում կանչուեց արտակարգ Յրդ Ընդհանուր Ժողովը Դաշնակցութեան, որի մէջ բանաձեւ անցաւ որ Դաշնակցութիւնը անհրաժեշտաբար յեղափոխական պայքարին պիտի մասնակցի Կովկասում, սակայն առաջարկելով, որ նման պայքարը

տարուի ինքնապաշտպանութեան հողի վրայ, ինչպէս զինեալ յարձակումների դէմ մահմեդականների, նոյնպէս եւ ուս կառավարութեան, որ իբր թէ հովանաւորում էր հայ-թաթարական պառակտումը:

Յաջորդ, 1905 թուին, ի տես Ռուսաստանում ուժեղացող յեղափոխական շարժման, Դաշնակցութիւնը արդէն անհրաժեշտ գտաւ կազմելու յատուկ ծրագիր, համագործակցութեան համար Կովկասի այլ յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնների հետ: այս նպատակով, «Կուսակցութեան Պորհուրդ»ը 1905 թուի Մայիսին կազմեց «նախադիժ», որը եւ դարձաւ «խարիտ»ը Դաշնակցութեան գործունէութեան՝ Կովկասում»:

Այս նախադի առթիւ, «Պորհուրդ»ը հանեց հետեւեալ բանաձեւը.

«Կովկասի շարժման հարցում անցնել ինքնապաշտպանութեան սահմաններից դէպի իսկական յեղափոխական գործունէութիւն, մշակել նախադիժը համայն այն կարծիքների որ արտայայտուած են Կովկասեան Շրջանային Ժողովում եւ ուղարկել այդ նախագիժը Կովկասի դաշնակցական մարմիններին, ժամանակաւորապէս նրանով ղեկավարուելու, մշակումը եւ հաստատումը թողնելով ապագայ Ընդհանուր Ժողովին»:

Այս նախադի համաձայն, Հայ Յեղափոխական Միութիւնը պարտաւոր է, յեղափոխական պայքարի միջոցով, ձգտել Անդրկովկասում ստեղծելու Ֆեդերատիւ - դեմոկրատական հանրապետութիւն, հիմնուած՝ ընդհանուր, հաւասար եւ պաշտնի քուէարկութեան վրայ, ըստ որում «Անդրկովկասը կազմում է անբաժան դաշնակցային մասը զազատ Ռուսաստանի, կապուած նրա հետ ընդհանուր քաղաքականութեան, Ֆինանսական սիստեմի եւ ընդհանուր պետական ինքնապաշտպանութեան հարցերում: Անդրկովկասը ուղարկում է, վերոյիշեալ սկզբունքներով, իր ընտրեալ ներկայացուցիչները Ռուսաստանի ընդհանուր խորհրդարանը»:

Ինքնավարութեան համար, Անդրկովկասեան Միութիւնը իր կենտրոնական պարլամենտը կ'ունենայ Թիֆլիզում, պաշտօնեաները պիտի ընտրուեն ժողովրդի կողմից, իսկ ինքնապաշտպանութեան համար պիտի ծառայի ժողովրդական միլիցիան:

Տնտեսական պահանջները, նախադի կողմից դրուած, ոչնչով չեն տարբերուում Ռուսաստանի այլ յեղափոխական կուսակցութիւնների կողմից ներկայացուածներէ:

Այս համայնութեան յետոյ, կուսակցութիւնը, արտայայտելով եռուն գործունէութիւն, է'լ աւելի զարգացրեց իր կազմակերպութիւնը: Նոր կազմակերպուած սեկցիաներում մուտք գործեցին կանոնադրները. այդ հատուածներն (սեկցիա) էին՝ արհեստակցական, զիւղական, զինուորական, ինքնապաշտպան-

նութեան, տեղորոշական, սպանական եւ տեխնիկական: Հաստատուած է խիստ հաշուետուութիւն: Կարգապահութիւնը դարձաւ աւելի դաժան. խտացաւ գաղտնապահութիւնը եւ յայտարարուեց տեղոր ուս կառավարութեան ներկայացուցիչների դէմ:

Հայկական սրբականութիւնը ինչպէս Ռուսաստանում, նոյնպէս եւ արտասահմանում ընդունեց ծայրայեղ յեղափոխական ուղղութիւն եւ ուս կառավարութեան դէմ թունաւորելու բնոյթ: Կովկասեան Շրջանային Ժողովին տրուեց լիակատար ինքնավարութիւն, նկատի առնելով ծնունդը եւ արդէն արտայայտութիւնը Ռուսաստանի խռովայոյզ դէպքերի, որոնք կապուած էին ուս-ճափոնական պատերազմի հետ:

1905-1906 տարիները Կովկասում եղան խիստ փոթորկոտ եւ նշուեցին արեան վտակներով, որ արդիւնքն էր հայերի եւ թաթարների միջեւ եղած դարաւոր ստեղծութեան: Այդ պայքարի մէջ Դաշնակցութիւնը ցոյց տուաւ իր կարողութիւնը, հակադրելով անկազմակերպ թաթարական հորդանքին լիովին մարզուած, ուղիղ կազմակերպուած եւ խիստ կարգապահութեան մէջ դաստիարակուած ջոկատներ: Հայ-թաթարական ջարդը օգտագործուեց Դաշնակցութեան կողմից որպէս նոր, հզոր պիտուցիոն մատերիալ յեղափոխականացնելու համար ո'չ միայն Կովկասի հայ բնակչութիւնը, այլեւ ուրիշ ժողովուրդներ որ ապրում են այդ երկրում, ուս կառավարութիւնը մեղադրելով պատահածի առթիւ:

Դաշնակցութեան այդ շրջանի յեղափոխական ելույթից, կուսակցական տեղորոշ ոչնչացան շատ անձեր, որոնք վարչական պաշտօններ ունէին, այսինքն՝ զորավար Ալիխանով, Բագուի նահանգապետ կնեաղ (իշխան) Նակաշիձէ, Ելիզավետպոլի (Գանձակ) փոխահանգապետ Անտրէսել եւ շատ ուրիշներ:

Բացի այդ, այդ շարժումներով հայերը մասամբ հասան եւ մի ուրիշ նպատակի, այսինքն՝ կովկասեան հողերում սահմանազատութեան թաթարներից, եւ ազատապրում այն հողերի որ դրաւել էին վերջինները, այդ հողերի վրայ բնակեցնելու եւ խտացնելու այն պաշտակներին, որոնք գաղթում էին թուրքիայից, մասամբ նաեւ Պարսկաստանից:

Սակայն, սրա հետ միասին, անհրաժեշտ է նշել մի դէպք 1905ին, կուսակցութեան կեանքի մէջ, որը նրան էական վնաս հասցրեց: Այդ դէպքը կայանում է Բարձրագոյն Հրամանի մէջ, վերադարձնելու Հայ-Գրիգորեան եկեղեցուն իր ստացուածքները եւ թոյլտուութիւն հայ հոգեւորականութեան բանալու իր դպրոցները: Այս Բարձրագոյն Ողորմածութիւնը խլեց կուսակցութիւնից այն բուրժուական տարրը, որը բնականաւոր չէր դէպի յեղափոխութիւնը, սակայն, համոզուելով Դաշնակցութիւն կուսակցութեան անդամներից հակուել էր վերջինին միայն այն բանի համար, որ կալուածների գրաւման եւ դպրոցների փակման

մէջ տեսնում էր մի եղեռնափորձ իր եկեղեցու, ազգային ինքնութեան եւ հայերի բոնի ուսացման նրկատմամբ:

Միաժամանակ, դէպքերի ազդեցութեան տակ (Ռուսաստանում պատահած), կուսակցութեան մէջ հերձուած առաջացաւ: Սկիզբները իբրեւ թրջահայերի ազգային ազատագրման նպատակով ծնունդ առած, Դաշնակցութիւն կուսակցութիւնը, իր ներսում ունենալով սոցիալիստական տարրեր, ունէր նաեւ ոչնուազ բուրժուական (քաղքենի) տարրեր, որոնք ներշնչուած էին բացառապէս ազատագրութեան գաղափարով եւ միանգամայն խորթ էին սոցիալիզմին: Կովկասում սոցիալիստական բանուորական շարժման ազդեցութեան տակ եւ հայ մտաւորականութեան մէջ սոցիալիստական գաղափարների տարածման հետեւանքով, այս հզոր կազմակերպութիւնը վերջին տարիները արագ հոլովոյթով զնաց սոցիալիստ-յեղափոխականների աշխարհահայեացքի կողմը եւ աւելի ու աւելի, տեսականորէն ու գործնականորէն, սկսեց մօտենալ Սոցիալիստ - Յեղափոխական կուսակցութեան:

Հայ-թաթարական 1905-6 թուերի ջարդերը, որոնց ընթացքում Դաշնակցութիւնը առիթ ունեցաւ իր վրայ վերցնելու հայ ազգայնութիւնը պահպանողի դերը, խիստ բարդացրեց Դաշնակցութիւն կուսակցութեան սոցիալիստական գաղափարներով սողորուելու պրոցէսը: Սոցիալիստական տեղեկեցիաների կուսակցութեան մէջ թափանցելը ստեղծեց ներքին բաժանում եւ վերջացաւ «Ներտասարդ դաշնակցականներ»ի խմբի ստեղծումով, որ ամբողջովին ընկած էր սոցիալիստ - յեղափոխականների ազդեցութեան տակ, մինչդեռ առաջ կուսակցութեան մէջ էին:

«Ներտ. դաշնակցականները» ժխտում էին մէկ կուսակցութեան մէջ միացնելու հնարաւորութիւնը թրջահայերի ազգային ազատագրութեան պայքարի խնդրի եւ դասակարգային պայքարի ու սոցիալիզմի, աշխատաւոր ժողովրդի ազատագրութեան խնդրի:

Դաշնակցութեան հրդ համապումարում ընդունուեց մի ծրագիր, իր ընդհանուր գծերով միանգամայն համընկնող սոցիալիստ - յեղափոխականների ծրագրին: Այսուամենայնիւ, կուսակցութեան մէջ շարունակուող հակառակութիւնները վերջիվերջոյ յանգեցին հերձուածի: «Ներտասարդ դաշնակցականներ»ի խումբը բաժանուեց եւ ի վերջոյ (1908 թուին) ձուլուեց Սոցիալիստ - Յեղափոխականների կուսակցութեան հետ:

1905 թուի Հոկտեմբեր 17ի Բարձրագոյն Մամիֆետատից յետոյ, Ռուսաստանում ծնունդին երկու կուսակցութիւններ՝ Սահմանադրա - Դեմոկրատական (Կադետ)(*) եւ Հոկտեմբերականներ:

(*) Կադետ — բողիկոս ի վանտուցիոնի գեմոկրատների կրճատումից՝ Կադետ: Ա. Ա.

Կաղեխական կուսակցութեան հրապարակած, յատկապէս նրա ձախ թելի, ծրագիրը, զիչ տարբերուելով Սոցիալ - Դեմոկրատականից, արձագանգ գրուաւ եւ Դաշնակցութեան մէջ մասի մէջ եւ ընդհանրապէս հայ բնակչութեան: Սրան նպաստեց այն պարագան, որ կաղեխական ծրագիրը, պահանջելով աւտոնոմիա Ռուսաստանի առանձին ժողովուրդների համար, լիովին համապատասխանում էր Դաշնակցութեան չափաւոր տարրի ազգային ձգտումներին, որոնք կուսակցութեան մէջ էին մտել միայն վերը յիշուած պատճառներով: Սրա հետեւանքը եղաւ այն, որ կուսակցութիւնը բաժանուեց երկու մասի՝ ձախ թել՝ «Երիտասարդ դաշնակցականներ» եւ աջ՝ «Մշակականներ» (հայ կաղեխներ), նման անուն որդեգրելով իր օրդանից՝ «Մշակ» թերթից:

Այսպիսով 1906 թուին (հայ-թաթարական կոտորածից յետոյ) Դաշնակցութեան մէջ գոյացաւ երկու կուսակցութիւն, — մէկը, որի կազմի մէջ մտնում էր մեծամասնութիւնը նախկին կուսակցութեան, պահանջում էր փոփոխութիւն նրա ծրագրի եւ պնդում էր որ հայերի համար անհրաժեշտ է յարել Ռուսիոյ յեղափոխական շարժման, նպատակ ունենալով անմիջական իրազորումը զինեալ ապստամբութեան, որը այն ժամանակ բոլոր յեղափոխական կուսակցութիւնների կողմից համարուում էր հնարաւոր, կայսրութեան մէջ յեղափոխական շարժման ընդհանուր դրութիւնից ելնելով, եւ միւս մասը՝ բաղկացած կուսակցութեան անդամների փոքրամասնութիւնից որ աւելի հեռատես էր, զինեալ ապստամբութիւնը համարելով վաղաժամ եւ հաւատացած, որ նման ընթացքը կը տանի միայն դէպի կուսակցութեան քայքայում եւ բռնութիւնների՝ Ռուսաստանի հայ բնակչութեան նկատմամբ այն ժամանակ, երբ Ռուսիոյ սահմաններում ապաստան էին գտնում հայեր, որոնք փախչում էին թուրք իշխանութիւնների հալածանքներից, որը չէր համարում այդ տեսակետին եւ պնդում էր անհրաժեշտարար կանգնելու բացառապէս հին ծրագրի վրայ եւ չխառնուել ռուս պետութեան քաղաքական կեանքին, նպատակ ունենալով այս նպատակով(?) ձեռք բերել կուսակցութեան մէջ իշխանութիւնը:

Այս տարաձայնութիւնը հիմք ծառայեց Վիեննայում գումարել 1907ի սկիզբը 4րդ համագումարը, ուր, ձայների մեծամասնութեամբ ընդունուեց ոչ մեծ փոփոխութիւններով Սոցիալիստ - Յեղափոխական կուսակցութեան ծրագիրը եւ որոշում կայացաւ անմիջապէս ամենէն եռանդուն մասնակցութիւնը բերել յեղափոխական շարժման մէջ, որ տեղի ունէր կայսրութեան սահմաններում:

Այս համագումարի հաստատած ծրագրից երեւում է, որ նրա գլխաւոր խնդիրն է՝ տապալել պետական կառոյցը ինչպէս Ռուսաստանի, նոյնպէս եւ թուրքիոյ մէջ, եւ փոփոխել հիմնական օրէնքներով հաստատու-

ուած վարչական ձեւը եւ դրա հետ կապուած հասարակական կազմակերպութիւնը:

Եզրափակելով վերոյիշեալները, Դաշնակցութեան գործունէութիւնը կովկասում կարելի է ենթադրեալներէ երեք շրջանների.— Առաջին շրջան, որ ընդգրկում է կուսակցութեան ծաղումից մինչեւ 1903 թիւը, արտայայտուում է, սկիզբները, մինչեւ 1897 թիւը, թըրքահայերին օգնութեան մէջ, իսկ 1897ից սկսած, կառավարութեան կողմից հայերի նկատմամբ գործադրուած ճնշումների ազդեցութեան տակ, Դաշնակցութեան մէջ սկսուեց միտք յղանալ կովկասում գործօն յեղափոխական ելոյթի, բայց, ընդհանուր կերպով, առաջին շրջանում իր կովկասեան գործունէութեան, Դաշնակցութիւնը ունէր անտարբեր, մինչեւ իսկ ժխտական վերաբերմունք հայ ժողովրդի մասնակցութեան մասին, ռուսական շարժումների մէջ:

Երկրորդ շրջանը Դաշնակցութեան կովկասեան գործունէութեան՝ 1903ից մինչեւ 1905 տարիներն են: — Այս շրջանը սկսուում է ըմբոստութեամբ ռուս կառավարութեան դէմ, որը թէեւ տեղի էր ունենում «հայկական ինքնապաշտպանութեան» դրօշի տակ, բայց յամենայն դէպս իր արտայայտութիւնների մէջ ունէր վերին աստիճանի յեղափոխական բնոյթ: Ժողովրդական ցոյցեր, զինեալ բախում զօրքերի հետ, լիակատար բոյկոտ կառավարական հաստատութիւնների դէմ, ահաբեկում կառավարական պաշտօնեաների, ահա՛ այն կարմիր ակտերը, որոնք, սերտօրէն իրարու հետ կապուած, կազմում էին բարդ եւ եռուն պրոցէս, որի մէջ փոքր առ փոքր արտայայտուում էր յեղափոխական գիտակցութիւնը կովկասահայկական զանդուածների:

Երրորդ շրջանը սկսուում է նրանով, որ «Դաշնակցութեան խորհուրդը» մշակեց եւ հրատարակեց կովկասեան գործունէութեան «Նախագիծ» եւ հրամայեց Ռուսաստանի իր մարմիններին, մինչեւ յառաջիկայ Ընդհանուր Ժողովը, ժամանակաւորապէս ղեկավարուել այդ «Նախագիծով»:

Կովկասեան գործունէութեան տեսակէտից, այդ «Նախագիծ» հրատարակումը մեծ գործ էր հանդիսանում:

Դաշնակցութեան գործունէութիւնը երկրորդ շրջանում, չնայած արտայայտուում էր յեղափոխականօրէն, սակայն տարուում էր «հայկական ինքնապաշտպանութեան» երեւոյթի տակ, այնպէս որ de jure կուսակցութիւնը մնում էր հին կէտի վրայ, այսինքն՝ «Դաշնակցութեան գործունէութեան գլխաւոր խնդիրը ներկայանում էր թրքական հարցը եւ Ռուսաստանում Դաշնակցութիւնը հող չունէր յեղափոխական եռանդ վատնելու»: «Նախագիծը» հրատարակուեց թէ չէ, Դաշնակցութիւնը մի կողմ նետեց այդ տեսակէտը եւ հրապարակաւ յայտարարեց, որ ինքը սկսում է գոր-

ծօն յեղափոխական պայքար կովկասում, բռնատիրական կառավարութեան դէմ»:

1907 թուի Փետրուար ամսին Վիեննայում կայացաւ կուսակցութեան 4րդ Ընդհանուր Ժողովը, որի որոշումները Դաշնակցութեան կովկասի գործունէութեան (մասին) ուղղակի հետեւանքներն էին «Նախագիծ»:

Եթէ մինչեւ IVրդ Ընդհանուր Ժողովը Դաշնակցութեան մէջ դոյութիւն ունէին առանձին անհատներ եւ խումբեր, որոնք «Ռորհուրդ»ը իրաւագօր չէին համարում «Նախագիծ» հրատարակելու եւ այդ հիման վրայ հրաժարուում էին ենթարկուել նրա հրահանգներին, ապա Ընդհանուր Ժողովից յետոյ նման տատանում արդէն նկատելի չէր, եւ այժմ Դաշնակցութիւնը Ռուսաստանում եւ կովկասում իր գործունէութիւնը տանում է բացառապէս յեղափոխական ուղղութեամբ, հասնելու համար իր վերջնական նպատակին՝ տապալում դոյութիւն ունեցող պետական հասարակական կառոյցի եւ հիմնում հայկական դեմոկրատական հանրապետութեան, Ֆեդերատիւ՝ Ռուսաստանի հետ, եւ այդ նպատակին հասնելու համար դիմել ամէն միջոցի, մինչեւ տեւորը ներառեալ:

ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ համեմատենք Ա. Բ. Ե. Գ. համագումարների ծրագրերը, 1905-1906 թուերի «Կովկասի Երջանային Ժողով»ի «Նախագիծերը», վերջապէս որոշումները 1907 թուի վերջին համագումարի եւ 1908 թուի ծրագրերը, ապա կը տեսնենք, որ հիմնական ծրագիրը՝ «Հայերի ազատագրում եւ կազմակերպում հայկական ինքնօրէն հանրապետութեան», ոչնչով չէ փոխուած: Նա կերպարանափոխուել է միայն իր մասերի մէջ, ընդհանուր քաղաքական պայմանների կապակցութեամբ եւ դրա հետ միասին, կուսակցութեան ուժեղացումով, ամբողջ ժամանակը զարգանում էր, լրացուում եւ դառնում աւելի ծայրայեղ:

Մինչդեռ (նուազագոյն) ծրագրի հիմքը, — դաշնակցային, անպայման միայն Ռուսական Հանրապետութեան հետ, Հայկական Հանրապետութիւն, հիմնուած հինգպոչանիի(*) վրայ, սակայն նացիոնալիզմի պահպանութեամբ: Մինչեւ այժմ բոլոր յեղափոխականների մօտ 4 պոչ կար. հայերը աւելի հեռուն գնացին: Ծրագրի շարունակութեան քննութիւնը ցոյց է տալիս, որ հայ-յեղափոխականները չնայած յայտարարել էին, որ իրենք համերաշխ են Սոցիալիստ - Յե-

ղափոխականների ծրագրի հետ, սակայն իրականում մինչեւ իսկ նրանցից անցել են եւ անհատի (ինդիվիդուալ) լիակատար ինքնօրինութեան պատկերացման մէջ արտայայտում են մի ոգի, որ յատուկ է անարխիստ - կոմունիստներին:

Այլեւս ծրագրի քննութեամբ չզրադուելով, անցնենք համագումարների մշակած եւ արդէն դրսեւորուած եղանակներին, որոնցով հայերը յոյս ունին հասնել դրուած նպատակին, որին նրանք յամառութեամբ դիմում են եւ որին արդէն համարեա թէ հասել են: Այդ միջոցներն են՝ կազմակերպութիւն եւ կարգապահութիւն, պրոպագանդ, տակտիկա (գործելակերպ), միութիւններ, քաղաքականութիւն եւ զինեալ ապրտամբութիւն:

Քննելով այս տարրերից իւրաքանչիւրը, մենք անպատասխտօրէն տեսնում ենք, որ Դաշնակցութիւնը ինքնին ներկայացնում է ինչ որ պետութիւն պետութեան մէջ, լիովին ձեւակերպուած եւ գործառնող եւ մինչեւ իսկ վերջերս իր յեղափոխութիւնն ապրող:

Ո՛չ մէկ յեղափոխական կուսակցութիւն (բացառութեամբ դեռ ոչ-լրիւ քոլագերծուած «Միջազգային Հրէական Միութեան») չունի այն բարդ կազմակերպութիւնը, ինչպէս հայկական Դաշնակցութիւնը: Նա յելով ուրուագծին, մենք տեսնում ենք պետական մեխանիզմի կմախք՝ հանրապետական ձեւի: Եւ պետական այդ կմախքը, ինչպէս պիտի տեսնենք հետագայ քննութիւնից, ի դէմս իր աշխատողների ներկայացնում է ոչ այլ ինչ եթէ ոչ պաշտօնեաների կազմը հայկական պետութեան, ներգօր կերպով հետապնդող իր պետական խնդիրներին, մշակուած ծրագրի համաձայն:

Կմախքի բաղկացուցիչ մասերն են կազմում՝ խումբը (բիւրո կամ շրջանակ), կազմուած 7-10 գիտակից «դաշնակցներից»: Իւրաքանչիւր անդամի պարտականութիւնն է, կուսակցական լրիւ գաղտնապահութեամբ (պաղտնի պահել իրեն եղած յանձնարարութիւնները ոչ միայն կողմնակի, այլեւ կազմակերպութեան անդամներից), ամէն կերպ մղել իր կուսակցական քարոզչութիւնը ժողովրդի մէջ եւ ամէն բանի մասին զեկուցել վարիչին:

Յաջորդ աստիճանը, խումբի ղեկավարներից ընտրուած՝ ենթակոմիտէն է, որ դաստիարակում է «խմբականներին»(*) եւ ղեկավարում նրանց կոմիտէի ցուցմունքներով: Վարում է դրամների դանձումը եւ հաշուետուութիւնը, ամէնը յանձնելով կոմիտէին: Վերջինս, վարելով ենթակոմիտէներին եւ խմբականներին, օժտուած է մեծ լիազօրութիւններով, որովհետեւ դատ է վարում ինչպէս կազմակերպութեան, նոյնպէս եւ հայերի մէջ, ղեկավարում է իր հսկողու-

(*) Մարտական արտայայտութիւն է, սկիզբում է ընտրութիւնների հինգ պայմաններին — ուղղակի, զգաճի, հատուր եւայն: Ա. Ա.

(*) Խումբի անդամներին: Ա. Ա.

թեան տակ դանուող Կարմիր Պաշի կազմակերպութիւնը եւ վիճակագրական տուեալներ է հաւաքում իր շրջանի հայ բնակչութեան մասին. դրամ ծախսելու խնդրում ղեկավարուում է Կենտրոնական Կոմիտէի ցուցմունքներով, որին եւ ամողջովին ենթարկուում է:

Յաջորդ եւ ամենէն կարեւոր աստիճանը՝ «Կենտրոնական Կոմիտէն» է:

Ըստ Յրդ. համագումարի զեկուցագրի, 21 կոմիտէներ կային. նրանցից իւրաքանչիւրը բացի Ռէից, կրում է այն քաղաքի անունը ուր գտնուում է, բայց, դադանապահութեան նպատակներով, քաղաքները կը բրում են պայմանական անուններ:

Կենտրոնական Կոմիտէները Ռուսաստանում գտնուում են հսկողութեան տակ բայց ո՛չ ենթակայ բարձր հաստատութեան՝ «Արեւելեան Բիւրո»-ի, որ գտնուում է Քիֆիլոմ: Մնացածներին հսկում է նման հաստատութիւն՝ «Արեւմտեան Բիւրո»-ն, որ գտնուում է Փրնեւում: Մնացած կոմիտէների գտնուած վայրերն են՝ Եգիպտոսում 1, Մակեդոնիայում 1, Բուլղարիայում 1, յետոյ Վիեննայում, Փարիզում, Լոնդոնում, Բոստոնում եւ Նիւ Եորքում:

Ամէն Կենտրոնական Կոմիտէ արդէն ունի ինքնավարութիւն, ի հարկէ դուրս չգալով ղեկավարող ծրարդրի սահմաններից եւ ներկայացնում է որպէս ամբողջութիւնը մեր բոլոր նահանգային հաստատութիւնների, դատարանի հետ միատեղ, լիազոր իշխանութեամբ մինչեւ մահապատիժ ներառեալ: Նրան կից հրատարակուում է կուսակցութեան թերթիկը:

Կենտրոնական Կոմիտէների խմբակցութեան ղեկավարում է «Պատասխանատու Մարմինը» 5-6 անձերից, որը իր իրաւունքներով նման է մեր ղեներալ-նահանգապետների իրաւասութեան: Ղեկավարելով իր շրջանի հայ բնակչութեանը, «Պատասխանատու Մարմինը» վարում է ե՛ւ տեղական արտաքին յարաբերութիւնները ե՛ւ անմիջականօրէն կապուած է, նստած վայրին, «Արեւելեան» եւ կամ «Արեւմտեան Բիւրո»-յին, որոնք մի տեսակ պատասխանատու նախարարութիւններ են, որ տանում են յատկապէս իրենց վրայ դրուած պարտականութիւնները՝ հաւաքել եւ հակակշռի ենթարկել, դրութեան համաձայն, բոլոր հաշուետուութիւնները, ինչպէս ելեւմտական, նոյնպէս եւ վիճակագրական ու քաղաքական, կատարում են նաեւ դատախազական հսկիչի դեր բոլոր մարմինների (կուսակցական) նկատմամբ եւ վարում է մամուլը (վերջնիս ընծայուած է, ի հարկէ, խօսքի լիակատար ազատութիւն, սակայն խստօրէն կուսակցական ոգիով, հակառակ դէպքում հեղինակը համարուում է դաւաճան եւ տրուում է կուսակցական դատի): Բացի դրանից, Բիւրոն, վերից ու վարից ստացուած բոլոր նիւթերի հիման վրայ, մշակում է հրահանգներ եւ կանոնադրներ, կուսակցական հաստատութիւնների ներքին եւ արտաքին սպասարկութիւնների համաձայն:

Տեղական հաստատութիւններից ամենէն լայն լիազորութիւններով են օգտուում «Երջանային Ժողով»-ները, բայց Բիւրոն նրանց չի ենթարկուում, այլ ղեկավարութեան համար ընդունում է ժողովների մշակած միջոցառումները տուեալ երկրամասի (շրջան) համար: Վերջապէս մնում են սերտօրէն կապուած եւ միմեանց լրացնող հաստատութիւններ, որոնք կանգնած են ամբողջ կուսակցութեան գլուխը՝ 1) «Ընդհանուր Ժողով», որը դումարուում է բաւական հազուադիւս դէպքում եւ վայելում է ամբողջ ծաւալով, բոլոր տեսակէտներով, իշխանութիւն եւ 2) «Միութեան Խորհուրդ»:

Յիշատակուած 9 մարմինները ներկայանում են միայն հիմնականները եւ չեն սպառում, ինքնին, կառոյցը ամբողջ կազմակերպութեան. բացի դրանցից կան նաեւ լրացուցիչ (մարմիններ), յատուկ նպատակով, որոնք ըստ իրենց կարեւորութեան աստիճանի, համաձայն կուսակցութեան հայեցքների, գտնուում են կախման մէջ կամ ղեկավարութեան տակ այս կամ այն հիմնական մարմին: Լրացուցիչ մարմիններին են պատկանում՝ «Արհեստակցական եւ դեղագիտական միութիւնները», «Կարմիր Պաշ»ի կազմակերպութիւնները, «Աշակերտական կազմակերպութիւնը», «Միջկուսակցական մարմինը», «Հետազոտութեան մարմինը», «Մամուլի կազմակերպութիւնը», «Մշակութային-Կրթական Ընկերութիւնը», «Փոթորիկը»(*), «Օժանդակ անդամները», «Ինքնապաշտպանութեան Կոմիտէները», «Կազմակերպութիւն Դէյլի»(?) (Ապահովութեան Բաժանմունք), «Տեղաբնակից Գործուն Կոմիտէ», «Ահաբեկիչ կազմակերպութիւն» եւ երկու «Ուսանողական կազմակերպութիւններ»:

Դաշնակցութիւն կուսակցութեան հաստատութիւնների այս կարճ ակնարկից յետոյ տեսնում ենք, որ նա ունի իր ճիւղերը՝ օրէնսդրական, կրթական, վարչա-դատական, գերագոյն դատարանով եւ գործադիր Փոնկցիաներով, կրօնական եւ արտաքին գործերի, ստիկանութեան, ելեւմտական սիստեմ եւ քաղաքագործ (միլիցիա), այսինքն զինուորական ոյժ:

Թուում է, թէ ներքին պետական վարչական մըտքով ամէն բան կազմակերպուած է, սակայն Դաշնակցութիւնը, հետապնդելով վերականգնումը «Մեծ ու ազատ Հայաստանի» եւ դրան հասնելու համար միջոցներից մէկը համարելով զինեալ ապստամբութիւնը, չի հաշուում որ ժողովրդական քաղաքագործ (միլիցիա) կարելի է հասնել անկախութեան, ուստի եւ փորձ կատարեց հիմնել սեփական կանոնաւոր բանակ, հակառակ բոլոր ընդհանուր յեղափոխական ծրագրերների:

(* Յաճախ փոթորիկ բռնք էրում են սխալ՝ «փոթորիկ», եւ զնում եմ շիտակ ձեւը՝ «փոթորիկ»: Ա. Յ.

Զինուորներից բանակ կազմելու սկիզբը դրուած է 16 տարի սրանից առաջ, 1892 թուի Առաջին Համագումարին: Զինուորագրութիւնը եւ զինումը կուսակցութեան միջոցներով, ընթանում էին անընդհատ, սակայն գործը գտնուում էր այնպիսի անձերի ձեռքը, որ մեծ մասամբ անփորձ էին, որի հետեւանքով, ինչպէս որ ցոյց տուին հետագայ դէպքերը, այդ բանակը երեւաց իրրեւ ոչ-բարձր որակի, քաղաքական բարեյուսութեան եւ կարգապահութեան մտքով: Ռուսաստանում պայթած յեղափոխական արտայայտութիւնների ժամանակ, Դաշնակցութիւնը առանձնապէս ոչ ընտրովի զինուորներից բանակ կազմելով թիւը հասցրեց մինչեւ 100.000 մարդու: Այսու, յեղափոխական ծրագրի գրոյթների համաձայն, որ որոշում էր թէ իւրաքանչիւր զինուոր պիտի ստանայ, դրօշի տակ անցած ժամանակ, որոշ ոտճիկ, այսինքն ամիսը 30 ուրբի, բանակը պահելու համար ծախսուեց 10 միլիոն ուրբի: Զինուորների զէնքերը լիովին արդիական են, գոյութիւն ունին կուսակցական զինապահեստներ, կենտրոնականը՝ Երեւանում: Զինուորները ոտճիկ ըստանում են միմիայն արշաւանքի կամ պատերազմի ընթացքում:

Համագումարից ոչ շատ առաջ Բուլղարիայում հիմնուեց զինուորական դպրոց, որից 1907 թուին շրջանաւարտել են 53 սպաներ: Այդ դպրոցում անցնում են հետեւեալ առարկաները՝ հետախուզութիւն, զինուորական հետախուզութիւն, վիրահատութիւն, ռազմավարութիւն, վարչութիւն, գործելակերպ (տակտիկա), դաշտային-զինուորական ծառայութիւն, զորաբաժնային ծառայութիւն, թնդանօթաձուլութիւն, աշխարհագրութիւն, Հայոց պատմութիւն, յեղափոխութիւն, զինուորական կազմակերպութիւն, պայթուցիկ նիւթերի պատրաստում, մանկավարժութիւն, հըրածութիւն, երկրաչափութիւն, ծպտում (գրիմ) եւ զինուորական կարգապահութիւն:

Բացի դրանից, սպայական կազմ մասամբ պատրաստուում է նաեւ Ամերիկայի զինուորական դպրոցներում: Կուսակցութեան զինեալ ուժերի գլուխ կանգնած է «Գլխաւոր Զինուորական Խորհուրդը» 7 անձերից բաղկացած, գլխաւորապէս սպաներից, որոնք արդէն մասնակցել են կանոնաւոր բանակների կռիւներին: «Գլխաւոր Խորհուրդ»-ին կից կայ «Ընդհանուր Սպայակոյտ» 5 անձերից: Վարչութեան աւելի ցածր աստիճանը զինուորական խորհուրդներն են, Կենտրոնական Կոմիտէների շրջաններում: Վերջինները կազմուած են «հարիւրեակներ»ի հրամանատարների ժողովից: Հարիւրեակը՝ ինքնավար տակտիկական եւ տընտեսական միաւոր է: Հարիւրեակի գլուխ կանգնած է հարիւրապետը, նրան կից՝ յիսնապետների խորհուրդը. այնուհետեւ կը գան՝ յիսնապետ եւ տասնապետ. վերջինս վարում է եւ ուսուցանում 10 զինուորների,

որոնք, իրենց հերթին, զինուորագրուում են կամաւորներից որ անցել են «խումբ»ի դպրոցը:

Բանակում, բացի հետեւակազորից, կայ հեծեալների մասը, հրետանի եւ փորողներ (sapeur):

Զինուորական կազմակերպութիւնը ոչ ոքի, բացի «Միութեան Խորհուրդ»-ից, չի ենթարկուում եւ կարող է ելոյթ ունենալ միայն «Երջանային Ժողովի» արտակարգ որոշումով, քաղաքական բարեյուսութիւնների դէպքում: Կենտրոնական Կոմիտէի խնդրանքով, ինքնապաշտպանները, այսինքն իրենց, բնակիչների զինուորները, տեղական զինուորական խորհուրդի թոյլտուութեամբ, կարող են ուղարկուել ղեկավարելու համար քաղաքագործ (միլիցիա) զինուորական գործողութիւնները: Այս կերպ, ներկայիս, զինուորների բանակը գոյութիւն ունի միայն Հայաստանը ազատագրելու ապստամբութեան դէպքէ համար: Միլիցիան էլ, կամ՝ ինքնապաշտպանութիւնը ծառայում է իրրեւ նրա պահեստին կամ՝ ժողովրդական զինուորութիւնը(?) :

Կանոնադրների եւ հրահանգների ընտրող յատկանիշն է նրանց կարճութիւնը եւ յատկութիւնը, իսկ նրանց կեանքի մէջ իրագործելու եւ գործադրելու համար փոխադարձ հակակշիռ հաստատութիւնների կողմից: Ո՛չ միայն չգործադրելը, այլեւ ջմահած եւ կամ անփոյթ գործադրութիւնը օրէնքի եւ մինչեւ իսկ հրամանի, խստօրէն եւ անխուսափելիօրէն կը պատժուի: Պատժական կամ քրէական օրէնքները շատ կարճ ու պարզ են՝ — յանդիմանութիւն, վտարում կուսակցութիւնից, բանտարկութիւն (մառանում եւ կամ զեանալարկում) եւ մահապատիժ:

Զինուորների նկատմամբ գործադրուում է նաեւ մարմնական պատիժ մտրակով, ճիւղտով եւ կամ դաւազանով՝ մինչեւ 25 հարուած:

Բացի քրէական օրէնքների խտութիւնից եւ նըրանց վճռական ու արագ գործադրութիւնից, կարգապահութիւնը պահելու համար կայ նաեւ մի այլ միջոց, — հրանալիօրէն մշակուած եւ ամբօրէն կեանքի մէջ մուծուած գաղտնապահութիւնն է կուսակցութեան բոլոր անդամների, ինչպէս եւ փոխադարձ հակակշիռը:

Իւրաքանչիւր «դաշնակ»ի առաջին պարտականութիւնն է լիակատար գաղտնապահութիւն ինչպէս արտաքին, նոյնպէս եւ ներքին, եւ վարիչին տեղեակ պահելը բոլոր նկատած բաների մասին: Խախտումի եւ չգործադրելու պարագային՝ տեւոր:

Ամբապնդելու համար անձի նոյն գաղտնապահութիւնը եւ կարգապահութիւնը, կազմակերպութեան գործօն անդամ գրուողը դրաւոր երդում է առլիս եւ, բացի այդ, արձանագրուում է առանձին ցանկի մէջ:

Կանոնադրները եւ հրահանգները հրատարակուած են Կենտրոնական Բիւրոնները:

Իր նպատակին հասնելու համար, Դաշնակցութիւնը մշակել է իր քաղաքականութիւնը եւ նրա հետ սերտորէն կապուած գործելակերպը (տակտիկան)։ Վերջինս, ընդհանուր կացութիւնից կախուած, յաճախ կերպարանափոխուում է, մերթ քայքայալ գործելով, մերթ՝ զաղտնիանալով։

Ներկայիս, վերջին բացայայտ ելոյթից յետոյ, կուսակցութիւնը նորէն անցաւ զաղտնիացման ներքին կանոնների մէջ, սակայն պրոպագանդի առընչութեամբ, յատկապէս մամուլի օժանդակութեամբ, գործում է միանդամայն բացարձակ, ամենէն լայն չափերով։ Սրա հետ մէկտեղ, վերին աստիճանի խտրացում է կարգապահութիւնը եւ բռնութիւնները Ռուսաստանի եւ Թուրքիոյ կառավարական պաշտօնեաների դէմ, ինչ որ արտայայտուեց արդէն շատ սպանութիւններով։

Կուսակցական մամուլը ենթարկուած է խիստ դրաճնութեան։

Պետական մեքենան, բանակն ու սպառազինումը պահելու համար, պրոպագանդ մղելու եւ ընդհանրապէս կուսակցական նպատակներին հասնելու համար՝ պէտք է դրամ, եւ, այդու, Դաշնակցութիւնն ունի իր ելեւմտական սխտեմը։

Ամենէն առաջ, ամէն ոք որ կազմակերպութեան մէջ է մտնում, նոյնպէս եւ օժանդակ անդամը, վճարում է ոչ նուազ իր աշխատավարձի եւ կամ եկամուտի 2 տոկոսը։ Այլեւ Փոնդի մէջ են մուծուում դասախօսութիւններից, ներկայացումներից, վիճակախաղից, բարենպատակ երեկոներից, վաճառքից (բազար) եկամուտները, այլեւ այն զոհարարութիւնը, ըստ որի ամբողջ հայ բնակչութեան վրայ դրուած է 2 տոկոսի տուրք այն գործերի (դատական) համար, որ տանում է կազմակերպութիւնը, դատարանների(*) քաջաշուկից եւ կաշառումներից խուսափելով։ Այդ դատարանները հիմնել է կուսակցութիւնը, ի փոխարէն պետական դատարանների, ի պաշտպանութիւն հայերի՝ ինչպէս մահապատիւներից, նոյնպէս եւ ամէն տեսակի ճշմունքներից, շահագործումներից եւ կողոպուտներից։

Բնակչութեան նկատմամբ վերաբերմունքները փոխուած են, քաղաքական կացութեան համաձայն, արտաքուստ հաշտարար իմաստով, իսկ քարոզչութիւնը տարուած է նախկին քաղաքականութեան ոգիով որ բնորոշուում է մշտական եզուլտականութեամբ (ճիզուլիտ)։ Քաղաքականութեան եզուլտիզմը արտայայտուում է նրանով, որ ամբողջ պրոպագանդը հայերի համար տարուում է ազգային գունատութեամբ, իսկ ուրիշ ազգութիւնների համար՝ ընդհանուր սո-

ցիալիտականով, այսինքն՝ համաշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտիզմ), անցկացնելով գլխաւոր պետական եւ բարոյական սկզբունքների խորտակման գաղափարով, այսինքն՝ հաւատքի, ցարի եւ հայրենիքի, իսկ դրա հետ նաեւ՝ ընտանիքի։

Այս միեւնոյն եզուլտիզմը ընդհանրապէս նկատուում է Դաշնակցութեան բոլոր գործողութիւնների մէջ։

Այսպէս, օրինակ, 1908 թուի Դեկտեմբերին, Թիֆլիզում, «հարեկիչ մարմնի» անդամների ձերբակալութիւնից յետոյ («Պատասխանատու Մարմնի» եւ «Արեւելեան Բիւրոյի» մի քանի ականաւոր անդամների), «Արեւելեան Բիւրոյն» մի կողմ հրատարակեց, որի մէջ Բիւրոն կողմ անելով հայ բնակչութեան՝ կառավարութեան դէմ յեղափոխական պայքար մղելու, մատնացոյց էր անում կառավարութեան ձեռք առած մի շարք բռնի միջոցներ հայերի նկատմամբ, միջոցներ որոնք արտայայտուում էին զանգուածային ձերբակալութիւններով եւ աքսորով հայ մտաւորականութեան, հայ բնակչութեան բացատրելով որ (այդ) գործողութիւններով կառավարութիւնը մտադիր է վերադառնալ նախկին քաղաքականութեան, այսինքն բռնի ուսուցում հայերի՝ դպրոցները փակելու, եկեղեցական կալուածները գրաւելու եւ կաթողիկոսի իրաւունքները սահմանափակելու միջոցով։ Նման 1903 թուի դէպքերին, երբ Դաշնակցութեան ղեկավարները խեղաթիւրուած ձեւով բացատրեցին ժողովրդին այն օրէնքը, ըստ որի հայ եկեղեցիների ստացուածքներն անցնում էին պետական պանձի ղեկավարութեան տակ, Դաշնակցութիւնը օգտադրածեց այդ քայլը որպէս հզօր առիթ՝ հայութեան ատելութիւնը շարժելու համար ամէն ինչի դէմ որ ուսական էր, այնպէս էլ ներկայ պարագային, հաւատարիմ մնալով իր պրոփոպագանդական քաղաքականութեան, Դաշնակցութիւնը մտադիր է իր կուսակցականների ձերբակալութիւնը վերածել համահայկական հարցի, այդ ձերբակալութիւնների դրդապատճառներին տալով ստալոյ մեկնութիւն եւ նրանք բացատրելով որպէս ամբողջ հայ ժողովրդի ինքնատուութեան, նրա մշակոյթի զարգացման եւ հաւատքի դէմ սպառնալիք։

Ստորագրած են՝

Ռուսիականական Բաժնի

Յատուկ Բաժանմունքի վարիչ՝

Գնդապետ Կլիմով

IVրդ Բաժնի վարիչ՝

Փոխ-գնդապետ Բեկլեւիշեւի

Սեպտեմբեր 1, 1909 թիւ

(*) Ռուս-պետական դատարանների քաջաշուկի եւ կաշառակութեան մասին է։ Ա. Ա.

Օն 2.— ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԱՆԻՇԵԱՆԱԿԱՆ ԴԵԿԱՆՈՋԻՆ(*)

Ռուսիական Բաժնի վարիչ. Յունիս 21, 1906 թ., № 7084.

Յատուկ Յանձնարարութիւնների պաշտօնեայ՝ Պ. Լ. Ա. Ռատուեի.

Այսու Ձերը Գերազանցութեան եմ ուղարկում, միանգամայն գաղտնի, ի տեղեկութիւն եւ ի նկատառում, լրտեսական ճամբով, ստացուած երկու նամակների պատճէնը, ժընեւից դրուած, անիշխանական Դեկանոյի անուան, որոնցից մէկը այս Յունիս 6թ, Ռոստոմի ստորագրութեամբ, իսկ միւսը այս Յունիսի 11 թուակեր, ստորագր. Վ. Վալիովսկու ստորագրութեամբ։

Ի տեղի փոխ-վարիչի (ստորագրութիւնը անընթեանի է)

Սիրելի ընկեր,

Ընկեր Գարուշիայի(**) մասին կարող եմ հաղորդել հետեւեալը։ Չճանաչելով Բուլղարիան (այնտեղ մենք գործում ենք համարեա՛ ազատ), նա իրեն ծայրայեղօրէն զդոյշ էր պահում։ Նրա շար բախտից, ուստիկանը մօտենում եւ հարցնում է թէ ո՞վ է. իսկ նա վերցնում ու ասում է՝ հայ է եւ գնում է Կոստանդնուպոլիս։ Անմիջապէս նկատում են ինչ որ աննորմալ է, քանի որ հայերի մուտքը Պոլիս անհնարին բան է թուում։ Այդու՛ նա իր վրայ աւելի մեծ կասկած հրաւիրեց։ Այժմ ո՛ւր է նա, ոչինչ չեն գրում։ Ափսոս որ նախօրօք չեկաւ մեզ մօտ, ժընեւ։ Ես իրեն կը բացատրէի թէ ինչպէս պահէր իրեն։ Պիտի ասել, որ բուլղարական կառավարութիւնը շատ բարեացակամ է վերաբերուում դէպի մեզ։ Վառնայի մէջ ձերբակալուած էին մեր ընկերներից շորս հոգի՝ ոււմբերով, նրանց կ'արձակէին, եթէ այդ մասին մեծ պետութիւնների ներկայացուցիչները տեղեակ չլինէին. չնայած նրանց անցկացրին Սերբիա, սակայն մասնաւոր կերպով հասկացրին, որ նրանք այնտեղից կարող են վերադառնալ ուրիշ անունների տակ։ Ընկերները այդպէս էլ արին։ Յետոյ, դժբախտ մի դէպք Սոֆիայում պատահեց, ուր զոհուեցին մեր ընկերներից երկուսը, եւ կառավարութեան այլ տեսակի վերաբերումի պարագային մեծ գործ (դատ) կը բացուէր, մինչդեռ ոչ ոքի շանհանգստացրին (փորձին ներկայ էին մինչեւ 12 անձեր) եւ ուստիկանութիւնը եկաւ խուզարկելու Միքայէլեանի սենեակը այն ժամանակ, երբ բոլոր թղթերը դուրս էին տարուած այնտեղից։ Ընկեր Գարուշիան

պէտք է իրեն պահէր միանգամայն ազատ։ Չարմանում եմ թէ ինչո՞ւ են նրանից անցադիր պահանջել։ Այդ բանը համարեա՛ երբեք չի պատահում այնտեղ։

Մի քանի խօսք մեր գործերի մասին։ Մեր դրութիւնը կովկասում, ինչպէս որ մասամբ քեզ յայտնի է, դառնում է տագնապալի։

Վարչութիւնը բացայայտօրէն դրդուում է թաթարներին հայերի դէմ։ Այդ դեռ քիչ է։ Ըստ վերջին տեղեկութիւնների, Կովկաս եւ Գլխաւոր զինուում են Թիֆլիզի մուսուլմաններին եւ ուսու բանուորներին։ Նման պարագաներում ինքնասպառազինման գործը պիտի կազմակերպուի ոչ միայն հայերով, այլ ընդհանուր ճիւղերովը հայերի, վրացիների եւ ուսու բանուորների մի մասի։ Այդ կը լինի լաւագոյն ապացոյցը յեղափոխական կազմակերպութիւնների համերաշխութեան։ Շտապեցէք գրել այս մասին ձեր կովկասեան ընկերներին։ Չնայած տեղի վրայ արդէն իսկ համաձայնութիւն կայացած է այս հողի վրայ, բայց պէտք է աշխատել, որ համերաշխ գործունէութիւններ յստակօրէն կատարուեն այն բոլոր շրջաններում, որոնք բընակուած են հայերով եւ վրացիներով։

Քաղաքների մէջ մերոնք լաւ են զինուած եւ պատրաստուած։ Երեւանում արդէն ուժեղ հակահարուած տուին. մահապատիւների կորուստներն այնտեղ նշանակալից կերպով գերազանց են մերինէն։ Միայն գիւղերի մէջ մեր գործը լաւ չէ. ամէն մի գիւղ չի կարող առանձինն դէմ կենալ թուրք եւ քիւրդ զինուած խուժանին։ Մենք կազմակերպեցինք թուրքիկ խումբ 80 անձերից, գիւղերը պաշտպանելու համար. նրա առաջին քայլերը յաջող էին. մի քանի տեղերում նրան յաջողուեց ցրել թաթար ամբոխները եւ յետ վերցնել կողոպուտած ապրանքները, բայց նրա հետագայ քայլերը անդամալուծուեցին վարչութեան(*) հակառակ գործունէութեամբ եւ զօրքով որ դրուեցաւ «հանդըստութիւնը պահպանելու» համար։ Բագուի մէջ պատրաստուում է նոր յարձակում, այնտեղ այժմ ընդհանուր խուզարկութիւն է տեղի ունենում հայերի տններում եւ արհեստանոցներում, նոյնիսկ խուզարկում են անցորդներին։ Արդէն զրաւել են 20 հրացաններ, փամփուշտներ եւ ատրճանակներ։ Ռուսները արհեստանոցը վիժեց։ Յարձակումը կրկնուում է այն ժամանակ, երբ վարչութիւնը համոզուում է որ հայերի մօտ գէնքը քիչ է։ Բացի այդ, վախենում ենք զօրքի բացայայտ միջամտութիւնից, ինչպէս որ եղաւ Թուրքիայում։ Մէկ խօսքով՝ աղէտի մէջ ենք։ Մէկ բան միայն ուրախացնում է մեզ, այդ՝ առոյգ տրամադրութիւնն է մեր տեղական ընկերների, որոնք վստահ են իրենց սփական ոյժերի վրայ։ Յոյս ունինք այս եւս անցկացնել։

(*) Գէորգի Դեկանոյով, Վրաց Սոցիալիստ-Ճեզերալիստ կուս. անդամ. անիշխանական։ Ա. Ա.

(**) Գարուշիան այլազգի յեղափոխական էր, թերեւ վրացի անիշխանական։ Ա. Ա.

(*) Յարական պետական վարչութեան մասին է։ Ա. Ա.

Ընկեր Գաղափարն պէտք է որ արդէն թէ յայտնած լինի արդիւնքները մեր խորհրդակցութեան. ի՞նչ եւ մտածում բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութիւն հրաւիրելու մասին: Ի՞նչ է արուած կոմիտէ կազմակերպելու համար:

Կարող է պատահել որ ես շուտով Փարիզ գամ:

Յտեսութիւն՝ ըս ՌՈՍՏՈՄ

Կցում եմ Բազուի Կոմիտէի կողմ, Նախաձեռն մահապատժի մասին: Ափսոս որ նա չէ ստորագրուած նաեւ ձեր կողմէ:

1905 թ. Յունիս 6. Գէորգի Դեկանդին, Փարիզ 18, Rue des Fossés Saint Jacques.

Օտ 3.— ՎԱԼԵՈՎՍԿԻԻ ՆԱՄԱԿԸ ԴԵԿԱՆՈՉԻՆ

11 Յունիս 1905, Ժընև

Միջկուսակցական Բիւրոյի

Քարտուղարութիւն.

Վրացական Սոցիալիստ - Ֆեդերալիստ - Յեղափոխականների կուսակցութեան ներկայացուցիչ ընկեր Դեկանդին.

Յարգելի ընկեր,

Ինչպէս Ձեզ յայտնի է, Ժընևի Միջկուսակցական Կոնֆերանսը ի միջի այլոց որոշել է աշխատել Փարիզում կազմել օտարերկրացիների կոմիտէ, որ վայելում է հանրութեան մատակարարութիւնը (կարող է նաեւ Միջկուսակցական Բիւրոյի ներկայացուցիչների խառնուրդով), յօգուտ շարժման, որը զլիսուորում է Միջկուսակցական Բիւրոն, նուէրներ հաւաքել(?):

Այս նկատմամբ, քարտուղարութիւնս դիմում է ձեզ, որպէս Բիւրոյի անդամի, խնդրելով որ Սոցիալիստ-Յեղափոխականների և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Ֆեդերացիա) ներկայացուցիչների հետ, որ պտնուում են Փարիզում, զննէք այս հարցը: Խորհրդակցէք նաեւ Բիւրոյի մէջ մտնող այլ կազմակերպութիւնների հետ, եթէ նրանց ներկայացուցիչներից կան Փարիզում, (թէ) ինչ աւելի գործնական ձևով այդ նախաձեռնութիւնը կարելի է գլուխ բերել եւ եզրակացութիւնը, որ կը հանէք խորհրդակցութեան ընթացքում, հաղորդել քարտուղարութեանս: Այսու, քարտուղարութիւնը ձեր ուշադրութիւնն է հրաւիրում այն բանի վրայ, որ Փարիզում գեղեւս գոյութիւն ունի Comité des Organisations Socialistes de Russie, որը մինչև այժմ գործել է գերազանցօրէն, նաեւ յօգուտ շարժման նուէրների հաւաքումով եւ բաշխումով:

Անհրաժեշտ է կազմել նոր կոմիտէ (եթէ հին հաստատութիւններից ոչ մէկը դրա համար պէտքական չէ) այնպէս, որ ոչ մէկ բանով չվնասուի Comité des Organisations Socialistes de Paris-ն(?) և հանրութեան մէջ չփոթ շտապացնել նոր կոմիտէ ստեղծելու առիթով երբ հինները կան:

Ընկերական ողջոյն՝

Ֆ. ՎԱԼԵՈՎՍԿԻ

(F. Valkhovsky, 15, La Roseraie, Genève)

Օտ 4.— ԹԻՖԼԻՍԷՆ ՆԱՄԱԿ՝ ՊԵՐԼԻՆ

Ռուսիկանական Բաժնի

Քաղաքական Մասի վարիչ.

Սեպտ. 24, 1905 թ. № 12340.

Կուլեգիալ խորհրդական

պարոն Ա. Մ. Հարթիչի

Ձեզը Ձեր Գերազանցութեան եմ ուղարկում, միանգամայն պաշտի, ի տեղեկութիւն եւ ի նկատում, լրտեսական ճամբով ստացուած մի նամակի պատճէնը. նամակի ստորագրութիւնը աւերթեանի է, ուղարկուած է Քիֆլիցից, այս Սեպտեմբեր 2ին, ուստի Գործադրականի անուն, Բեռլին:

Ի տեղի փոխարէն՝

(ստորագրութիւնը անընթեանի է)

Լրտեսական ճամբով ստացուած անընթեանի ստորագրութեամբ նամակից մէջբերումներ: Նամակը գրուած է Քիֆլիցից, Սեպտ. 2, 1905 թ., ուստի Գործադրականին, Բեռլին, Կուլեգիաներ Շտրասէ 10, Կրուի մօտ:

Ա. Ա.

Տրամադրութիւնս մտայլ է: Կրծքիս մէջ ճշում է մի կատաղութիւն, ուզում եմ կազակների արիւն հոսեցնել դետերով, այդ բարձրերդին ողջ-ողջ այրել: Օպոստոս 20ին, 400 հոգիներ մի ամբոխ ներս խուժեց քաղաքային Դուժա, ուր սկսուած էր ներկայ դէպքերի քննութիւնը, այսինքն՝ Բազուի շարժը, Պետական Դուժան եւայլն:

Յանուն գեներալ - նահանգապետի Պրիստաւի(*) պահանջի վրայ՝ դատարկել սրահը, ձայներ հնչեցին՝ «Կորչի՛ գեներալ-նահանգապետը»:

Պրիստաւին հրեցին: Նիստը շարունակուում էր, Թազաւորի կիսարձանի գլխին գլխարկ խոթեցին: Այդ պահուն ներս խուժեցին կազակները, հրամայելով ցրուել: Կազակները կրակ բաց արին ամբոխի խիտ շարքի վրայ, ուր կային նաեւ կանայք: Ձայներ հնչե-

(*) Պրիստաւ, ցարական ոստիկանպետ: Ա. Ա.

ցին՝ «Կանգնէք, ընկերներ»», սակայն ամբողջ խուժեց դէպի ելքի դռները: Փողոցում կազակները փախչողներին դէմ էին ելնում գնդակներով, սրերով եւ հրացանների կոթերով: Սպանուածները երեք սայլ լեցրին: Բոլորը բորբոքուած են զայրոյթով եւ վրէժով: Բազմաթիւ ձերբակալուածներ կան: Նշանակուած է ընդհանուր քաղաքական գործադուլ: Պիտի խաղան ուումբերը, վատ կը լինի կազակների համար, ոչ էլ ժամանակաւոր դեներալ-նահանգապետը լաւ բանի պիտի հանդիպի:

Ռուրէնը Գանձակում հրամայում է հայ յեղափոխականների ջոկատին, եւ պահպանում է ամենէն վըտանդաւոր կէտը:

Գիզոն այստեղ է, հրաջքով ազատուեց:

Կոչ է հրատարակուած, փառաբանելով զինեալ ապստամբութիւնը:

Անէ՛ծք վեհատիրութեան:

Օտ 5.— ԸՆԿ. ԿՆՕ-ԳՆՈՒՆԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԻՔԱՅԷԼ ԳԱՍՊԱՐԵԱՆԻՆ, ԺԸՆԵԻ

Մարտ 30, 1905 թ.

(Ամփոփած եմ)

1) Դադարի դրականութիւն փոխադրելու համար վարչաւա (Լեհաստան) են ուղարկել մի ուսանող, պայմաններն ուսումնասիրելու համար. գրում է, որ Լեհաստանից պաղտնի գրականութիւն կարելի է ուղարկել փութը (40 փառնետ) 20-25 ուրբիով: Ուսանողը մտերմութիւն է հաստատել Բապտիստների (Միտոշական) հետ, որոնք խոստացել են օգնել: Ուսանող Պողոսեանը շուտով Ժընև կ'անցնի եւ մանրամասն կը պատմի:

2) Պարսկաստանի վրայով ամիսներ է տեւում անընդալ դրականութիւն ստանալը, մինչդեռ Լեհաստանի վրայով արագ կը լինի:

3) Ուսանողը պիտի ծանօթանայ նաեւ լեհական շարժման հետ:

4) Ուղարկում ենք յանձնախումբի բանաձևը՝ «Յեղափոխութիւն»:

5) «Եկեղեցական Կոմիտէ»ն իր խորը ցաւակցութիւնն է յայտնում «Դրօշակ»ի խմբագրութեան, գաղափարական յեղափոխական Գրիստափոր Միքայէլեանի մահուան առթիւ:

«Եկեղեցի ՔԱՂԱՔ»(*)

30/III/1905

(*) Ինչպէս երևում է Մոսկուայի կոմիտէի ծածկանունն է: Ա. Ա.

Օտ 6.— ԸՆԿ. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Ռուսիկանական Բաժնի վարիչ
6 Նոյեմբեր 1904 թ., № 12921

Յատուկ Յանձնարարութիւնների պաշտօնեայ՝ Լ. Ա. Ռատաւելին.

Անցեալ Հոկտեմբերի 8/22ին յայտնել էինք № 282ով, որ Փարիզում Սեպտեմբերի վերջերը յեղափոխական կուսակցութիւնների ունեցած համազուտում(*) Հ. Յ. Դաշնակցութեան կողմից մասնակցել է «Դրօշակ»ի խմբագիր ոմն Վարանդեան:

Այսու յայտնում եմ որ վերը յիշուած Վարանդեանը, ըստ երեւոյթին, Գրիգոր Պետրոսեան Վարդանեանն է (նոյն ինքը՝ Վարդանեանց), որի անունը դրուած էր հետախուզական շրջաբերականի մէջ Մայիս 1, 1904ին, № 5500 թիւով:

Օտ 7.— ԸՆԿ. Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

11 Մայիս 1905 թ., № 5913

Յատուկ Յայտարարութիւնների պաշտօնեայ՝ Լ. Ա. Ռատաւելին.

Թիֆլիզի «Օխրանա»յի բաժնի վարիչի տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիզի Հայ Յեղափոխական «Դրօշակեաններ»ի կազմակերպութիւնը՝ «Մեցխական»(?)(**) խմբագիր է նշանակել Սոֆիայում լոյս տեսնող Հայ յեղափոխական «Դրօշակ» թերթի սպանուած խմբագիր Գրիստափոր Միքայէլեանի տեղ, Աւետիս Ահարոնեանին, գրագէտ եւ աշխատակից «Մուրճ» ամսագրի, որը, հաւանաբար, Մայիսին Թիֆլիզից Սոֆիա կը մեկնի:

Այս մասին յայտնելով Ձեր Գերազանցութեան, կ'աւելցնեմ որ Ահարոնեանը, բացի այդ, Թիֆլիզի Հայ Յեղափոխական Ընկերակցութեան՝ Դաշնակցութեան Բիւրոյի անդամ է եւ իր պարտականութիւնն է նաեւ կոչել կազմել եւ հրատարակել զադարի գրականութիւն:

Ռուսիկանական Բաժնի վարիչ

(*) Ռուսաստանի յեղափոխական կուսակցութիւնները աշխատում էին արտասահմանում ստեղծել համադրակցութիւն եւ մշակել ընդհանուր գործունէութեան ծրագիր. Դաշնակցութիւնը եւ մասնակցում էր: Ա. Ա.

(**) Անպայման այս բառը ազատազուտ է, «Մեցխական» անիմաստ բառ է կամ՝ անուն: Մտուցելի պէտք է լինի՝ «Մեծ քաղաք»: Ա. Ա.

Օկո 8.— ԸՆԿ. ԳԵՐԱՍԻՄ ԲԱԼԱՅԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Միանգամայն գաղտնի

Ներքին գործոց նախարարութիւն.

Ոստիկանական Բաժին

Ըստ Յատուկ Բաժնի

8 Նոյեմբեր 1907 թ., № 140105

Արտասահմանեան գործակալութեան վարիչին.

Թիֆլիզի Նահանգային Ժանդարմական վարչութեան վարիչի կատարած խուզարկութեան ընթացքին՝

Շուշի քաղաքում, մեռչանին Գերասիմ Բալայեանի ընկարանում (Բալայեան խուզարկութիւնից մի օր առաջ անյայտացած էր) գրադրութիւնների մէջ գտնուած է հետեւեալ թերթիկը՝ «Հնչակի կենտրոնի հասցէն.— Mr. M. Bellard. Rue Campagne 7, Paris: Գարտուղար Վ. Արչակունի: Նախագահ Գ. Բազրատունի»:

Տեղեկացնելով այս մասին, Ոստիկանութեան վարչութիւնը խնդրում է Ձերդ Բարձրութիւնից անմիջապէս տեղեկութիւն տալ այս հասցէին:

Ի տեղի փոխ-վարիչի՝

ՎԻՍԻԼԻՈՎ

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ



ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի Բ. հատորի առաջին տպագրութենէն (1973) ասդին, Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական դիւանի արխիւային մեր պրպտումները երեւան հանած են կարեւոր թիւով անտիպ փաստաթուղթեր, որոնք կը վերաբերին Դաշնակցութեան սկզբնական 10-15 տարիներու գործունէութեան:

ՆԻՒԹԵՐՈՒ Բ. հատորի ներկայ՝ երկրորդ տպագրութեան առթիւ, իբրեւ ՅԱԻԵԼՈՒԱԾ, հրատարակութեան կու տանք ամենէն շահեկանները այդ փաստաթուղթերէն — տեղեկագիրներ, ատենագրութիւններ, շրջաբերականներ եւն. — որոնք անմիջական աղբւր ունին հատորին մէջ յիշատակուած ժողովներուն եւ անոնց մասնակցած մարմիններու աշխատանքին հետ:

Ներկայ ՅԱԻԵԼՈՒԱԾԻ նիւթերը դասատրած ենք չորս բաժիններու մէջ —

Ա.- Հ. Յ. Դ. ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

Յաջորդաբար կու տանք տեղեկագիրները՝ 1) Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ կոմիտէներու (միացեալ) — 2) Կիլիկիոյ գործին նուիրուած ընկերներու (Հրաչ, Մար եւ Պոնտացի) — 3) Ոսկեհանքի (Իվմիրի) Կեդր. կոմիտէի: Անոնք բաւական մանրամասն տեղեկութիւններ կը պարունակեն համապատասխան շրջաններու 1896 - 98 տարիներու գործունէութեան մասին եւ, ատով իսկ, մեծապէս շահեկան են Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար:

Ներկայ հատորի դասատրութեամբ, այս երեք տեղեկագիրներու տրամաբանական տեղը պէտք է ըլլար՝ էջ 78էն 80, Նիկոսիոյ կոմիտէի տեղեկագիր-նամակէն անմիջապէս առաջ կամ ետք, «Հ. Յ. Դ. ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ» բաժնին մէջ:

Բ.- «ԿԱՄՔ»Ի ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԻՒԹԵՐ

Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնի (տե՛ս այդ մասին Երկրորդ Ընդհ. Ժողովի որոշումը, էջ 64) լիազումար միակ ժողովը տեղի ունեցած է 1901 Ապրիլին, Ֆիլիպէ (Պուկարիա): Այդ ժողովն է որ, կարեւոր այլ որոշումներու կարգին, կուսակցութեան նիւթապէս շատ նեղ վիճակին դիմաց՝ տուած է բռնի հանգանակութեան ձեռնարկելու վճիռը («Փոթորիկ»ի գործը):

«Կամք»ի ժողովին առընչութեամբ, ներկայ հատորին մէջ տեղ գտած էին արդէն Կարէնի (Արամ Յակոբեան) վկայութիւնները (տե՛ս էջ 94 - 98) եւ Արեւմտեան Բիւրոյի շրջաբերականը՝ ժողովին որոշումները հաղորդող (էջ 98 - 99): Յաւելուածին մէջ յաջորդաբար կու տանք՝ 1) Մարթինի (Մուրատեան) տեղեկագիր - նամակը (15 Նոյ. 1900 թուակիր) — 2) Ամերիկայէն՝ Արշակ Վոսմեանի նամակը, օրակարգի հարցերուն մասին իր տեսակէտները պարզող (25 Մարտ 1901 թ.) — 3) «Կամք»ի ժողովին ատենագրութիւնը, զոր կու տանք ամբողջութեամբ, հակառակ անոր՝ որ որոշումներու կարեւոր մէկ մասին թուումը կրկնութիւն կը կապմէ Արեւմտեան Բիւրոյի վերոյիշեալ շրջաբերականին հետ (էջ 98 - 99) — 4) Պոլսոյ Պատասխանատու Կեդր. կոմիտէի անունով հանգանակութեան ձեռնարկող ներկայացուցիչներուն տրուած լիազօրագրի պատճէնը — 5) «Փոթորիկ» ահաբեկիչ խումբի անունով պատրաստուած (տպագիր) երկու ազդարարագրեր:

Գ.- 1904Ի ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ՌԱՑՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ հատորին մէջ, էջ 201 - 202, կարգ մը տեղեկութիւններ տուած ենք 1904 թուականին Թիֆլիսի մէջ գումարուած արեւելեան շրջաններու յաջորդական երեք

Ռայոնական ժողովներու մասին (Ապրիլ - Մայիս, Յուլիս եւ Սեպտեմբեր ամիսներուն), այդ տեղեկութիւնները առնելով ողբացեալ Սիմոն Վրացեանի կողմէ Արխիւէն քաղուած նոթերէ: Արդ կրցած ենք գտնել այդ երեք ժողովներու արձանագրութեանց արխիւային բնագիրները, կորս հրատարակութեան կու տանք ժամանակագրական միւլտիպլիկացիոն կարգով՝ ներկայ յայտնուածին մէջ:

1904 Դեկտեմբերին, նոյնպէս Թիֆլիսի մէջ, գումարուած է Ռայոնական չորրորդ ժողով մը (տեսնել այս մասին մեր ներածական ծանօթագրութիւնը՝ էջ 200), որուն մանրամասն արձանագրութիւնները տուած ենք արդէն (էջ 205 - 223):

Հոս յայտնենք, որ ներկայիս մեր տրամադրութեան տակ ունինք նաեւ 1905ի Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդի նիստերու արձանագրութեանց բնագիրը: Բաղդատութիւնը ցոյց տուաւ սակայն, որ մեր արդէն իսկ հրատարակած բաժինը, որ կը ներկայացնէ Սիմոն Վրացեանի կատարած քաղուածքները (տես՝ էջ 227 - 231), վճիռներու շարքին մէջ կարգ մը անկարեւոր տեղափոխութիւններ մէկդի դրած՝ հարապատ է արխիւային բնագրին: Ուստի անիմաստ նկատեցինք յայտնուածին մէջ անգամ մը եւս տալ 1905 Ապրիլ - Մայիսի Խորհուրդի արձանագրութիւնը:

Դ.- ԲԻՐՈՒՆԵՐՈՒ ՀՐԶԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ՆԻՒՔԵՐՈՒ Ա. ԵՒ Բ. հատորներուն մէջ տրուած են կարգ մը կարեւոր շրջաբերականներ Բիւրոներէն եւ պատասխանատու այլ մարմիններէ (Պոլսոյ եւ Վասպուրականի կեդր. կոմիտէներ եւն.): Ներկայ հատորին մէջ, տեսնել յատկապէս՝ էջ 24 - 26, 34 - 36, 47 - 48, 98 - 99, 101 - 103, 105 - 106, 202 - 203, 204 - 205, 224, 225 - 226, 236, 247 - 249, 253 - 254:

Ներկայ յայտնուածի այս վերջին մասին մէջ տեղ կու տանք ընդհանուր-կազմակերպական բնոյթ կրող ութ այլ շրջաբերականներու, ժամանակագրական կարգով, 1899 - 1905 տարիներէն: Առաջին երկուքը (Արեւմտեան Բիւրո) կը վերաբերին Լահէյի խաղաղութեան (զինաթափութեան) համաժողովին առթիւ (Մայիս 1899) Հայկական Հարցը արծարծելու կոչուած նախաձեռնութիւններու: Երրորդը 1899ի վերջերը գրուած Արեւելեան Բիւրոյի շրջաբերական մըն է, որ Երկրի կացութեան մասին տեղեկութիւններ կու տայ եւ նոր նախաձեռնութիւններու անհրաժեշտութիւնը կը նշէ: Չորրորդն ու հինգերորդը (Արեւմտեան Բիւրո) իբրեւ նիւթ ունին PRO ARMENIAն եւ Երկրէն անոր ստոյգ տեղեկութիւններ հասցնելու կարեւորութիւնը: Յոգ շրջաբերականը (Արեւմտեան Բիւրո), գրուած հաւանօրէն 1901ի վերջերը, մարմիններուն ամփոփ կերպով կը պարզէ կազմակերպութեան վիճակն ու գործունէութիւնը՝ շրջանէ շրջան: Եօթներորդը կը վերաբերի Դաշնակցութեան Խորհուրդի մատուցուած գումարման: Վերջինը՝ Արեւմտեան Բիւրոյէն «Գաղտնի նամակ Հ. Յ. Դ. Կենտրոնական կոմիտէներին» (5 Յուլիս 1905), մանրամասնութիւններ կու տայ Երեւանի շրջանի հայ-թաթարական ընդհարումներուն մասին:

Ներկայ յայտնուածի այս վերջին մասին մէջ տեղ կու տանք ընդհանուր-կազմակերպական բնոյթ կրող ութ այլ շրջաբերականներու, ժամանակագրական կարգով, 1899 - 1905 տարիներէն: Առաջին երկուքը (Արեւմտեան Բիւրո) կը վերաբերին Լահէյի խաղաղութեան (զինաթափութեան) համաժողովին առթիւ (Մայիս 1899) Հայկական Հարցը արծարծելու կոչուած նախաձեռնութիւններու: Երրորդը 1899ի վերջերը գրուած Արեւելեան Բիւրոյի շրջաբերական մըն է, որ Երկրի կացութեան մասին տեղեկութիւններ կու տայ եւ նոր նախաձեռնութիւններու անհրաժեշտութիւնը կը նշէ: Չորրորդն ու հինգերորդը (Արեւմտեան Բիւրո) իբրեւ նիւթ ունին PRO ARMENIAն եւ Երկրէն անոր ստոյգ տեղեկութիւններ հասցնելու կարեւորութիւնը: Յոգ շրջաբերականը (Արեւմտեան Բիւրո), գրուած հաւանօրէն 1901ի վերջերը, մարմիններուն ամփոփ կերպով կը պարզէ կազմակերպութեան վիճակն ու գործունէութիւնը՝ շրջանէ շրջան: Եօթներորդը կը վերաբերի Դաշնակցութեան Խորհուրդի մատուցուած գումարման: Վերջինը՝ Արեւմտեան Բիւրոյէն «Գաղտնի նամակ Հ. Յ. Դ. Կենտրոնական կոմիտէներին» (5 Յուլիս 1905), մանրամասնութիւններ կու տայ Երեւանի շրջանի հայ-թաթարական ընդհարումներուն մասին:

Հ. Տ.

Ա. - Հ. Յ. Դ. ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

1) Հ. Յ. Դ. ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ — ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՑ ԵՒ ԳԱՀԻՐԷՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Հազիւ երկու-երեք ամիսէ ի վեր կազմուած, բնական է, որ չպիտի կարողանանք որեւէ հաշիւ ներկայացնել կամ բացատրութիւններ տալ մեր գործունէութեան վրայ: Բայց Ընդհանուր Ժողովի գումարումէն օգուտ քաղելով, կ'ուզենք անգամ մը անդրադառնալ մեր դրութեան վրայ, ակնարկ մը ձգել առհասարակ ընդհանուր յեղափոխական գործունէութեան վրայ եւ մասնաւորապէս Եգիպտոսի եւ իր շրջանակներուն, որոշելու՝ թէ ո՛ր է էինք, ո՛ր է ենք այսօր եւ ո՛ր է պիտի ընէ մեզի ներկայի գոյութեան շարունակութիւնը վաղը: Պիտի աշխատինք ցուցնել ամփոփ կերպով Եգիպտոսի անցեալ գործունէութիւնը ու ներկան եւ ապագայի մէկ քանի կէտերը պիտի աշխատինք պարզել:

Լեռնավայրի հարցը(1) կապուած ըլլալով միանգամայն Եգիպտոսի հետ, կարելի եղածին չափ պիտի աշխատինք, մեր ներկայի ուժերուն եւ ապագայի հաւանականութիւններու վրայ հիմնուելով, ճշդել այն դիրքը, որ պիտի կարողանայ բռնել ան՝ այս կարեւոր հարցի լուծումին մէջ: Աւելորդ չպիտի համարենք նաեւ պատկերացնել այն գաղափարի նոր հոսանքները, որ վերջին տարուան մէջ յառաջ եկած են ժողովրդի ամէն կարգի խաւերուն մէջ, առհասարակ սկսելով ամբոխէն մինչեւ զարգացած դասակարգը. մասնաւորապէս կ'ուզենք ծանրանալ միութեան հարցին վրայ, որ ժամանակիս մտքերը զբաղեցնող ամենէն տաք խնդիրներէն մէկն է: Դաշնակցութիւնը, հակառակ 14 ամիսէ ի վեր շարունակուող գործունէութեան, այսօր չէ յաջողած տակաւին իր հիմերը զօրաւոր ժայռերու վրայ դնել. աւագի վրայ շինուած չէնք մըն է ան Եգիպտոսի մէջ: Այս իրողութիւնը, որ առիթ պիտի ունենանք դրական եւ որոշ փաստերով ապացուցանել, իր պատճառները ունի անշուշտ, որով չէ կարելի փնտռել գործիչներու բարի տրամադրութեան պակասին կամ խակ կազմակերպութեան մէջ, այլ Եգիպտոսի բնիկ հայ տարրը ար-

դէն բնականէն շատ քիչ ժշակելի հող կը ներկայացնէր Դաշնակցութեան: Հնչակեանները մեզմէ շատ առաջ տաք դնելով այս երկրին մէջ, գրաւած եւ իրենց տրամադրութեան տակ դրած էին այն ուժերը, որ երկիրը կը ներկայացնէր եւ շատ քիչ բան ձգած էին դուրս. իսկ Դաշնակցութիւնը ամենէն աւելի օգտուած է գաղթականութեան այն հոսանքէն, որ 96ի ղէպերէն վերջը Թրքական ուժերը մղեց Եգիպտոս. դաշնակցական համակիրներու շրջանակը այդ հոսանքին մէջ գտնուող անհատներով է որ ընդարձակուեցաւ, որոնք Երկրէն դուրս ելած, ամէն բան իրենց աչքով տեսած, բնական է որ ոյժ պիտի տային այս շարժումին: Այս սկզբնաւորութիւնը, թէեւ տկար, բայց իր մէջ բարոյական ոյժ մը կը ներկայացնէր. նիւթականը այն ժամանակ անշուշտ շատ մեծ բան մը պիտի չըլլար. բայց մեծ յոյս կար, թէ երթալով այդ կազմակերպութիւնը մեծ ծաւալ եւ մեծ ուժ պիտի տար, եթէ դժբախտաբար վերջին տարուան մէջ արգելքներու մեծ շղթայում մը թուճրեր չկանգնէր առջեւը: Թէ ի՞նչ բնութիւն ունին ասոնք, ի՞նչ պատճառներէ առաջ եկած են, պիտի խօսինք վերջը:

Այս համառօտ բացատրութիւնը տալէ ետքը, եթէ անցնինք դրական փաստերուն ներկայ Եգիպտոսի ուժին տկարութիւնը ապացուցանելու համար, շատ շուտ կարելի պիտի ըլլայ համոզում գոյացնել: Երբ Եգիպտոսի Կեդրոնական Կոմիտէի գործունէութեան ընդհանուր հաշիւը աչքէ անցնենք անգամ մը, պիտի տեսնենք թէ 14 ամսուայ միջոցին հաւաքուած դրամը շատ նիւար թիւ մը կը կազմէ: Իսկ ծախքերուն մէջ, ամենէն աւելի տեղական մանր մուկը ծախքերն են, որ տեղ կը բռնեն. եւ յետոյ երբ ասկէ մէկուկէս ամիս առաջ Եգիպտոսի Կեդրոնական Կոմիտէն լուծուեցաւ, հաշիւներու քննութեանէն տեսնուեցաւ, որ 15-20 ոսկի պարտք մը կը ծանրանար Դաշնակցութեան վրայ: Այս տեսակ ժամանակ մըն է, որ մեզի կը յանձնուի այստեղի գործունէութեան ղեկը եւ մենք բաներ նորէն չի նկու, կարգադրելու ստիպուած ենք — պարտիկ բայց յատկանշական օրինակ մը պիտի բաւէ մեր ըսածները

աւելի շեշտելու. ասկէ ամիս ու կէս առաջ, Կիպրոսի կոմիտէն Եգիպտոսի կոմիտէն հետագորով 40 ոսկի ուղարկեց էր. այդ պահանջը պէտք էր գոհացնել, այս բանը կը զգային կամ գոնէ զգալ կը ձեւացնէին անդամները. բայց հակառակ իրենց կարծեցեալ ջանքերուն, աշխատութիւններուն, չկրցան 1 ոսկի իսկ դրկել. անհաւաստի կեանք մը, որ մահէ շատ քիչ տարբերութիւն ունէր:

Իսկ երբ այս պզտիկ ակնարկէն ետքը Եգիպտոսի վրայ ինկած մեծ պատասխանատուութիւնները քննեք ապագային առջեւ, Լեոնավայրի հարցի մասին աւելի յոռետես պիտի դառնանք: Ոսկեհանքի, Եգիպտոսի, Կիպրոսի, Ամերիկայի կոմիտէներուն գործունէութիւնը շօշափելով Լեոնավայրի հարցը(2), կ'ուզենք բազմատական հաշիւ մը ներկայացնել անոնց ներկայ բուսական ներկայացուցած ուժերուն եւ իրենց ցուցուցած տրամադրութիւններուն մէջ. թէպէտ մեր ձեռնհասութեան իրաւունքէն դուրս համարենք այս գործը, բայց մենք, նկատելով որ յիշուած տեղերու կոմիտէները իրենց ցուցուցած տրամադրութիւններու միօրինակութեամբ կ'ապուած են իրարու եւ Լեոնավայրի հարցին, ուրիշն եւ այդ հարցը լուսարանելու համար՝ պէտք կը զգանք այս բանը ընել. իրականութիւնները ինչ որ ալ ըլլան, գէշ թէ լաւ, պէտք է լուիլ. միշտ ուժերը մեծ, կեղծ գոյններով ներկայացնել չենք ուզեր, երբ իրապէս այնպէս չեն. յեղափոխական գործի մէջ պէտք է խոշորացոյցով դիտել դէպքերը, քանի որ ինքնախաբէութեան կ'առաջնորդէ այդ մեզի: Երբ այդ 40 ոսկիի հարցը բացուեցաւ, եւ Եգիպտոսի Կեղրոնական կոմիտէն իր բացարձակ անկարողութիւնը յայտնեց, դիմուեցաւ Ոսկեհանքին. նա ալ տուաւ այն պատասխանը, որ տրուած էր Եգիպտոսը, միայն տարտամ յոյսեր աւելցնելով իր պատասխանին վրայ՝ ապագայի համար: Գալով Ամերիկային, առանց ուրիշ փաստերու դիմելու կը բաւականանանք Մեյքլի վերջերս ստացուած մէկ նամակէն հետեւեալ տողերը ղնել հոս, որոնք շատ շուտ պիտի ապացուցանեն Ամերիկայի ուժին տկարութիւնը, եթէ չըսենք ոչնչութիւնը: — «Չափազանց [ած] չեմ ըլլար, եթէ ըսեմ թէ Դաշնակցութիւնը պէտք է Պիղատոսի պէս ձեռքերը լուայ եւ դուրս ելլայ Ամերիկայէն... Ապագայի համար ոչ մէկ յոյս, ոչ մէկ նշոյլ»: Գալով Կիպրոսին՝ եւ ո'չ մէկ նիւթական ուժ կը ներկայացնէ անիկա, չունի եւ չի կրնար ունենալ. օտար երկիր մըն է, որ իր դիրքին համար միայն կարեւորութիւն ունի եւ միշտ դրամը դրսէն կը սպասէ: Այս իրողութիւնները երբ ղնենք հարցի մեծութեան չով, հակադրութիւնը (contraste) շատ ջախջախիչ պիտի ըլլայ. մէկ կողմէն անազին գործ մը, երկրի մը ճակատագիրը, ամբողջ Լեոնավայր մը եւ միւս կողմէն խոշոր գերօ մը՝ ներկայացուած ճերմկայ Եգիպտոսով, Ոսկեհանքով եւ Ամերիկայով: 40 ոսկիի հարցը մեզի հասկըցուց թէ Լեոնավայրի հարցը Եգիպտոսի, Ամերիկայի,

Ոսկեհանքի հետ կապելը աւելորդ էր, երբ ամենափափուկ պարագայի մէջ, ինչպէս էր վերջինը, անոնք չպիտի կրնային իրենց նիւթականով ուժ տալ Կիպրոսի գործիչներուն(3):

Լեոնավայրի հարցը մեզի համար ամենէն աւելի մեծ նշանակութիւն մը ունենալով, կ'ուզենք քիչ մը ծանրանալ անոր վրայ: Կիպրոսի մեր ընկերներու մէկ տեղեկագիրը, որը նաեւ ներկայացուած է Ընդհանուր Ժողովին, ուշադրութեամբ քննելէ [ետք] եւ բազմատեղով անոնց կարծիքները մերիներուն հետ, կը տեսնանք թէ շատ մեծ տարբերութիւն կայ մեր ու անոնց դադարներուն մէջ: Ամէն բանէ առաջ սակայն, ըսենք թէ սկիզբէն ի վեր Լեոնավայրի գործիչները (հետոնէն թէ մօտէն) չափազանց լաւատեսութիւն մը ունեցած են եւ այս լաւատեսութիւնն է որ անծանօթ լինելով երկրին միջեւ հիմա վիժած գործեր առաջ բերած է: Քաջբերունիի Լեոնավայրի հողին վրայ ոտք դրած վայրկեանին ձեռքաւարումը, Փափագի եւ Ալէքի հարցը, երկարներու խնդրին ցաւալի ելքը(3) եւ մանաւանդ այն ծրագիրը կազմելը՝ որուն համեմատ մեր ընկերները կը խորհէին եւ նոյնիսկ որոշած էին Երկիր մտցնել զինուած խումբ մը(3), առանց ներսը գէթ պըզտիկ ուժ մը ունենալու, լոկ յոյսերին երեւակայական անձնաւորութեանց վրայ ղնելով: Մենք դատապարտելի կը գտնանք այս որոշումը, առաւել որ երկիրը ուսումնասիրելու խնդիր եւ նպատակ կար մէջտեղը, որը ոչ թէ խմբով (այն ալ զինուած) կը կատարուի, այլ անհատներով, եւ բացի սորանից զինուած խմբի մը մուտքը Լեոնավայր ներկայ պարագաներու մէջ պիտի բաւէր ամբողջ երկիրը տակն ու վրայ ընելու ու կառավարութիւնը մղելու ամենասաստիկ խստութեան, քանի որ այդ տեսակ ուժի մը գոյութիւնը երկրին մէջ ուշ կամ կանուխ երեւան պիտի ելլար: Լեոնավայրը արդէն նախապէս պատրաստուած է, ապտամբական դադարները արմատացած են որոշ աստիճանի անոր Ժողովրդին մէջ. ունեցած է եւ իր կազմակերպութիւնները՝ կուսակցութիւններու կազմութեանէն շատ առաջ. իր բախումներով, ապտամբութիւններով Լեոնավայրը ապացուցած է, թէ ինքը ապտամբ Ժողովրդի մը բոլոր ուժերը ունի, բացի լուրջ ու հեռատես, նորագոյն պարագաներուն համապատասխանող յեղափոխական կազմակերպութենէ եւ դրամի — նիւթական օգնութենէ, որոնց համար եւ ան դիմած է կուսակցութիւններու աջակցութեան: Ի հարկէ Լեոնավայրի Ժողովուրդը համազօրութեամբ ամէն ինչ զոհելու պատրաստ դարձնելն է որ կը մնայ կուսակցութիւններու հետատես գործունէութեան վրայ:

Ի՞նչ է Լեոնավայրի Ժողովրդին ներկայի վիճակը թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական տեսակէտներով:

Հնչակեաններու վերջին յախուռն գործունէութիւնը եւ անպատրաստի մղուած կռիւր(4) շատ կոտորած է յեղափոխականի վարկը այդ Ժողովրդին առջեւ: Անցեալի այն մեծ յուսախարութիւնը, որուն ենթարկուեցաւ հնչակեաններու մեծադուրդը եւ անամէջ խոտտումներէն ետքը, շատ վատ ազդեց իր վրայ եւ գէշ գաղափար կազմեց առհասարակ բոլոր գործիչներուն վրայ, ո'ր կուսակցութեան որ ալ պատկանին ատոնք: Վերջերս լեոնավայրցիներ կը յայտարարէին հոս թէ Ժողովուրդը նոյնիսկ կառավարութեան կը մատնէ այն գործիչը, որ յանդգնի այս պահուս Երկիր մտնալ, եւ այս անոր համար, որ անցեալի պէս չ'ուզեր խաբուիլ, զգուշութեամբ կը վերաբերուի կուսակցական գործիչներու նկատմամբ, վախնալով որ Երկիր մտնող գործիչները նախապէս ոչ լուրջ պատրաստութիւններ տեսած են, ոչ զէնքի ու նիւթական ուժի բաւականաչափ տէր են. վստահ չէ ան, որ Երկիր մտնողը նախապէս խորհած է իր սկսած գործի մեծութեանը վրայ եւ Երկիր կը մտնայ առանց իր հետ ուժ մը ներս մտցնելու: Եւ մենք որ մեր Լեոնավայրի շրջանին ուժի տկարութիւնը գիտենք, իրաւունք կու տանք այդ Ժողովրդին՝ այս գէշ գաղափարը կազմած ըլլալու գործիչներու նկատմամբ: Մեր ներկայի ուժերով բան մը կարելի չէ ընել հոս. նոյնիսկ մեր ընկերներէն եթէ մէկ քանիսը ներս մտնալ յաջողին, ի՞նչ պիտի կարողանան ընել, երբ դուրսը ուժ չկայ իրենց նպատակներու. շատ հաւանական է որ պիտի դիմեն տեղական ուժերուն եւ անոնք ալ պիտի պատասխանեն այնպէս, ինչպէս պատասխանած են Աղասիին՝ վերջին ապտամբութեան ժամանակ, երբ սա դրամի հանգանակութեան համար դիմումներ կ'ընէր. այսինքն՝ «Հանէ՛ դուն ջու գրպանէդ 50 ոսկի եւ մենք անոր տաճապատիկը պիտի տանք»: Չգնեք որ Աղասին այդ 50 ոսկու կէսը միջեւ անգամ չկրցաւ ցուցնել եւ իր դիմացիներու հաւատը բոլորովին կորսնցուց: Քննենք միանգամայն քաղաքական նպատատուութեան հարցը, համոզուելու համար թէ ի՞նչ աստիճան կարեւորութիւն կրնայ ունենալ ան: Արդեօ՞ք միջեւ հիմա քաղաքականութիւնը նպատատու տրամադրութիւն մը ցուցուցած է կամ աւելի լաւ է ըսել՝ պղատոնական համակրութենէ եւ խօսքի շրջանէ դուրս ելած է Լեոնավայրի մասին, նախընտն Գ.ի գործօն, բայց ցաւալի պարագաներու բերումով անյաջող միջամտութենէն ետքը. փաստերը մեզի ո'չ կը պատասխանեն այս մասին: Եթէ քաղաքականութիւնը նպատատու ըլլար մեզի այդ կէտին վրայ, դաշտային Լեոնավայրը չէր ջարդուեր: Ուրֆա, Այնթապ, Պէրէճիք, Մարաշ եւ իրենց շրջակայ գիւղերը ջարդուեցան: Ատանա եթէ ջարդուեցաւ, պատճառը այդ նպատատուութեան մէջ չպէտք է փնտռել. Մերսինի առջեւ խարսխած ամերիկեան զբաւակարի հրամանատարին ու ամերիկեան հիւպատոսին պատահական բայց ազդու սպառնալիքներն էին

պատճառը այդ արդեւքին. այդ հրամանատարն էր, որ այդ երկու քաղաքներու մասին ջարդի հաւանականութիւնները իմացածին պէս, անմիջապէս երկաթուղով շտապեց Ատանա եւ իր խիստ սպառնալիքները ըրաւ կուսակալին ու յաջողեցաւ: Սամսոնը իր շրջականերով եւ Տիարպեթիւրը ջարդուեցան (վերջինը Գաղ. հիւպատոսին բողոքներուն շնորհիւ). արդեօք կարելի՞ է ըսել թէ անոնց մասին նպատատու տրամադրութիւն կայ. եւ յետոյ այն կէտերը, որոնք ջարդուեցան, չպիտի ջարդուէին արդեօք եթէ անոնց դիրքը ամուր եւ մէջը գտնուող Ժողովուրդը կուտող չըլլար: Նոյնիսկ եթէ քաղաքական նպատատուութիւն մը կար, ինչո՞ւ դեսպանները ձգեցին որ վերջին դաշնագրութիւնը, որ թուրք կառավարութեան եւ հայերու մէջ կնքուած էր իրենց երաշխաւորութեան տակ, բռնաբարուի թուրքերու կողմէ: Ամենայամար ժամանակը գործօն միջամտութեան՝ ներկայացած էր վերջին ապտամբութեամբ. բան մը չըրին սակայն քաղաքագէտները:

Անցնինք Երկրին բնական դիրքին եւ ազգաբնակչութեան թիւին: Լեոնավայրի մէջ, հայ ազգաբնակչութիւնը շատ պզտիկ թիւ մը կը կազմէ թուրք, քիւրտ, չերքէզ տարբերու ջովը, եւ անոնց մէկ ոտքի կ'ըլլալը բաւական պիտի ըլլայ Լեոնավայրի դաշտային հայ տարրը փճացնելու ամենափոքր ժամանակի մը մէջ: Այս դրութեան մէջ կը գտնուին Մերսին, Ատանա, Սիւս, Այնթապ, Պէրէճիք, Մարաշ, վերջապէս ամբողջ դաշտային Լեոնավայրը, որոնք եւ ոչ մէկ միջոցով կրնան լուրջ ապտամբական գործի ձեռք զարնել եւ արդէն ալ չեն փափաքիր հեշտութեամբ: Ուրիշն, կը մնան միւս այն կարեւոր կէտերը, մասնաւորապէս Չ[էյթու] եւ Հ[աճըն], որոնք ուրիշ երկու-երեք կէտերու հետ միացած կը կազմեն լեոնային Լեոնավայրը եւ ի բնական շատ ամուր դիրք եւ կուտող Ժողովուրդ ունին: Ատոնք են այդ երկրի սիրտը եւ ատոնք են որ ապագային պիտի ապտամբին:

Նոր ապտամբութեան մը ժամանակ ի՞նչ պիտի ընեն Լեոնավայրի թուրք ազգաբնակչութիւնը եւ թուրք կառավարութիւնը: Տակաւին մեծ ջարդերը չսկսած Լեոնավայրի թուրք Ժողովուրդը միշտ վախ մը կը զգար եւրոպական միջամտութենէ մը եւ նոյնիսկ ջարդած միջոցին միշտ վախով կը վերաբերուէր դէպի ապագան, ջարդին հետեւանքներուն վրայ կ'անդրադառնար: Եղան թուրքեր, որ ուզեցին ջարդը դադարեցնել, ոչ թէ մարդասիրութեան գաղափարէ տողորուած կամ ուրիշ նկատառումներով, այլ պարզապէս անոր համար, որ միշտ կը վախնային եւրոպական գործօն միջամտութենէ մը. հիմա սակայն թուրք Ժողովուրդը իր այս վախէն մերկացած, էստեմ փաշայի յաղթանակներէն ազդուած՝ կրկին ուժ մը կը զգայ իր մէջ եւ ապտամբութեան մը ձայնը զանիկա պիտի ղնէ գաղանութեան կէտին վրայ, որ նախկինը պիտի դերազանցէ եւ ամ-

բողջ հայ ժողովուրդը պիտի ուզէ խեղդել անոր արեւին մէջ: Գալով կառավարութեան բռնելիք դիրքին, մենք սա համոզումը ունինք, անցեալի վրայ հիմնուած, որ անոր որոշ ձգտումը պիտի ըլլայ փճացնել Լեռնավայրի հայ տարրը: Սասունը իրեն համար մեծ ցաւ մըն էր: Մեծ Հայաստանի մէջ ջարդեց, Լեռնավայրն ալ պէտք էր այդ օրին հասցնել: Արդէն վերջին ապստամբութեան ժամանակ(4) էտհեմ փաշա բացարձակ հրաման ստացած էր Պոլսէն՝ մտնել ներս եւ ջարդել վերջ միայն դուրս ելլալ: Անշուշտ կառավարութիւնը իր որոշումը փոխած չէ այն օրէն ի վեր երբ չյաջողեցաւ հասնել իր նպատակին: Ուրեմն, եզրակացնելով, սա հետեւութեանը կը հասնինք, որ Լեռնավայրը նախատեսելով այն ծանր պարագաները, որ պիտի ծագին իր ապստամբութենէն, մեծ հաւատք չունենալով քաղաքականութեան հզօր միջամտութեան վրայ եւ միանգամայն իր այսչափ երկար տարիներու մէջ միշտ տրեւորանալովը (առանց երբեք ընդհատելու[?]), չպիտի ուզէ ապստամբիլ, եթէ չզգայ իր մէջ կարելորդ ուժ մը գրեթէ կամ ներսէն գոյացած, երկարատեւ ապստամբութիւն մը կարողանալ առաջ բերելու համար: Ապագայ ապստամբութիւնը չի կրնար վաղանցուկ բան մը ըլլալ, իսկական ճժահ կամ ազատութիւն խօսքը այն ժամանակ պիտի հնչէ. կա՛մ պէտք է ոչնչանայ Լեռնավայրը, կա՛մ իր ազատութիւնը վաստակի:

Ժամանակաւոր հաշտութիւն մը ապստամբական պղտիկ շրջանէ մը վերջը՝ անկարելի է այս անգամ: Հետեւաբար Լեռնավայրը մեծ ուժերու պէտք ունի. Դաշնակցութիւնը իր ուժերուն մեծագոյն մասը պէտք է յատկացնէ Լեռնավայրի՝ լուրջ գործ մը պահանջելու իրաւունք ունենալու համար, որ մեր կարծիքով նպատատար պարագաներու մէջ առնուազն վեց ամիսէն ոչ պակաս դիմադրութիւն կրնայ ըլլալ: Այս հարցը շատ կարեւոր ըլլալով, մենք կ'առաջարկենք Ընդհանուր Ժողովէն վերջը Ռայոնական Ժողով մը կազմել այս կողմը՝ գծելու ապագայ տակտիկան, որ շատ փորձառութիւն եւ հետաետեսութիւն կը պահանջէ:

Մրազքի փոփոխում.— Ապակեղրոն սկզբունքին գործադրութեան վրայ կ'ուզենք մեր կարծիքը յայտնել. ընդունելով հանդերձ, որ ապակեղրոնացումը ամենէն աւելի կը յարմարի յեղափոխական մարմիններու, սակայն պէտք է խոստովանինք, որ մեր մէջ այդ ունեցաւ իր վաս կողմերը, որոնց առաջը պէտք է առնել անպատճառ, խոչընդոտներ չունենալու համար մեր առջեւ: Շատ անգամ կը պատահի, որ ապակեղրոնացումի սկզբունքին կոթնած կոմիտէները կը տեսնեն ուրիշ կոմիտէներու հետաւոր կամ մօտակայ նպատակներուն: Թուրք կառավարութիւնը, կոմիտէներու ամբողջութիւնը մէկ մարմին նկատելով, երբ Երկրին

մէկ կողմը որեւէ ցոյց կամ շարժում մը պատահի, ան կը սպասէ անոր շարունակութեան ուրիշ տեղերու մէջ. Պոլսի մէջ եղած ցոյց մը կառավարութեանը կը թելադրէ խտտութիւններ գործադրելու նոյնիսկ Վանի, Բաղէշի [մէջ] կամ ուրիշ տեղեր, եւ եթէ ենթադրենք վայրկեան մը որ Պոլսը առանց ուրիշ բան հարցնելու ցոյց մը ընէ, արդեօք չի՞ վնասեր ուրիշ տեղերու կոմիտէներուն: Վառնայի շրջաբերականը մեր աչքին առջեւն է միշտ, ինչպէս նաեւ անոր նման դէպքեր: Այս տեսակ անկանոնութիւններու առաջն առնելու համար կ'առաջարկենք բացարձակ ապակեղրոնացումը մեղմացնել եւ իսկական ապակեղրոնացման գործադրութիւնը կանոնաւորել: Կոմիտէներուն ձգելով իրենց դրամական, խմբական, կազմակերպական հարցերու լուծումը, մենք կ'առաջարկենք զանոնք կապել իրարու՝ որոշ շրջաններու բաժանելով, եւ կամ կապել ուրիշ մարմին մը, որ կոմիտէներու գործունէութեան ընդհանուր գծերուն տեղեակ ըլլալով (այսինքն զանոնք հաւաքելով իր մէջ), կարողանայ պէտք եղած ժամանակ զանազան կոմիտէներուն կարծիքներ տալ կամ անոնց կարծիքները լուսարանել: Այս մարմինը, անշուշտ հաստատուած լաւ շրջանի մը մէջ, դիւրութիւններ ունենայ քաղաքականութեան հետեւելու եւ կարելի եղածին չափ որոշելու այն բոլորները, որոնք յարմար կու գան պայթումներու կամ ապստամբութիւններու: Բնական է, որ մենք չենք կրնար եւրոպական քաղաքականութիւնը մեր ուղած ուղղութեան մէջ դնել, քանի որ այդ Սալզպլրիններու հետատես քաղաքականութիւնը մինչեւ անգամ չկրցաւ ընել, բայց գոնէ պէտք է աշխատինք անոր պատահական ձգտումներէն եւ կամ յարակից պարագաներէ օգտուել: Եւ այս մարմինն գոյութիւնը այն տեսակէտով նաեւ պէտք էր կը կազմէ, որ Երկրի մէջ մանաւանդ խորքը գտնուողները շատ պէտք ունին քաղաքական լուրերու՝ գործի բոլորները ճշդելու համար: Վերջապէս, պէտքը կը գգանք մարմին մը, որ ոչ իբրեւ ղեկավարող, այլ իբրեւ խորհրդական ուժ անհրաժեշտ է:

Թէեւ Դաշնակցութեան ընդհանուր ուժերուն վրայ չունինք ամփոփ գաղափար, բայց ծանօթ ըլլալով անոր մէկ կարեւոր մասին, մենք կ'առաջարկենք ուժերը կեղրոնացնել մէկ-երկու կէտերու վրայ միայն, ամբողջ ուժերը հոն թափել եւ, կարելի եղածին չափ զգուշանալով մանր ցոյցերէ, ձգտել լուրջ գործերու:

Դաշնակցութեան ծրագրի մէջ զանազան մէկ քանի մութ կէտերը կը խնդրենք որ լուսարանուին, թիւրքմացութիւններու տեղի չտալու համար: Պէտք է կազմել ներքին կանոնադիր մը, որոշելու համար կոմիտէներու (տեղական եւ կեղրոնական), ներկայացուցիչներու (Երկիր թէ արտասահման), խումբերու իրաւասութեան սահմանները, փոխադարձ վերաբերումները, որովհետեւ մինչեւ հիմա շատ անգամներ տեսնուած է,

որ կոմիտէներ զիրար կը հակասեն, ներկայացուցիչներ՝ որ կոմիտէ գտնուած տեղը անկախօրէն կը գործեն:

Կը փափաքէինք որ Ընդհանուր Ժողովը վերջնականապէս որոշէ թէ Եգիպտոսը ո՞ր ռայոնի մէջ կը գտնուի. մեզի համար նպատակայարմար եւ ցանկալի է որ Լեռնավայրի շրջանին մէջ [ըլլայ] (Գահիրէի, Ադիքանդերիոյ եւ Կիպրոսի հետ), քանի որ Եգիպտոսը, Կիպրոսէն ետքը, ամենէն յարմար կէտերէն մէկն է, իր դիրքին պատճառով, ապագայ գործունէութեան Լեռնավայրի մասին(5): Որոշել միանգամայն կազմութիւնը Կեղրոնական Կոմիտէի մը այս շրջանին համար, որ կարողանայ հաւաքել իր մէջ այդ շրջանի գործունէութեան ընդհանուր տեղեկութիւնները եւ կապ մը ըլլայ կոմիտէներուն միջեւ:

Ժողովրդի սրամագրութիւնները.— Հնչակեաններու վերջին պատակտումներէն ետքը, Ժողովուրդին մէջ գաղափարի նոր հոսանքներ սկսած են: Հրապարակուած աղտոտութիւնները, հրապարակային մերկացումները, շրջաբերականներու տարափէն դուրս ելած գարշահոտութիւնները շատ վատ ազդած են Ժողովուրդին վերայ. Թրքական ջարդերու վնասը աւելի զօրեղացաւ. ոչ միայն Հնչակեան կուսակցութիւնը շատ բան կորսնցուց իր բարոյական եւ նիւթական ուժերէն, այլեւ ընդհանուր յեղափոխութիւնը մեծ տաղնապ մը կ'անցընէ այսօր: Մեր Ժողովուրդը, չկարենալով տէր ըլլալ գիտակցական ոգիին, անկարող է լաւը վատէն որոշել, եւ շատ անգամ այս պատճառով ամբողջը մէկ ջուրով կը լուսայ: Թերահաւատութիւն մըն է ծագած Ժողովրդին մէջ իր կրած ազդեցութիւններէն, եւ ամենաանկեղծներու նկատմամբ իսկ երբեմն կասկածանքով կը վերաբերուի ան: Դաղափարի եւ կուսակցական անհրաժեշտ կռիւնները, որոնք շատ մը տեղեր փոխուեցան փողոցային աղտոտ կռիւններու, շատ վատ ազդեցին իր վրայ, — եւ տարիներու ընթացքին մէջ շինուած չէնքէն քարեր սկսան թափիլ: Ասոր նման դէպքեր էին պատճառ այն արգելքներուն, որոնց հանդիպեցաւ Եգիպտոսի նախկին ներկայացուցիչը 7-8 ամիսներ առաջ, հոս հանգանակութեան մը ձեռնարկած միջոցին: Այս հոսանքին զօրանալուն ոչ սակաւ նաեւ նըպատակ միութեան հարցը, որու վրայ զիջ մը վարը պիտի անդրադառնանք:

Ցաւալի է որ հրապարակէ քաշուողներու թիւը երթալով կ'աւելնայ, չէզոքները կը շատնան, բայց եթէ միութարութիւն մը ունինք այս մասին, այն ալ սա է, թէ այդ չէզոքները ոչ թէ յեղափոխութենէն յուսահատած են, այլ յեղափոխական ներկայ կազմակերպութիւններէն: Այսօր այն գաղափարը՝ թէ յեղափոխութիւնը մեզ պիտի փրկէ, ալ մինչեւ Ժողովրդին ծածը անցած է: Զօրաւոր ուժ մը, կենդանութիւն նախադա-

շակող ուղղութիւն մը՝ զանոնք ամբողջ պիտի ցնցէ նորէն եւ պիտի իջեցնէ կռիւի դաշտը: Մեր զիջ մը վերը բառներուն յատկանշական ապացոյցը կը կազմէ նաեւ այն պարագան, որ վերջերս զանազան տեղեր, մանաւանդ Ամերիկա, Ժողովրդին դրամը ամենէն աւելի սա վերջին ժամանակներս սկսած է բարեզործական հաստատութիւններու, աղքատախնամի, որբախնամի, մատենադարանի զանազաններու մէջ իյնալ, քան թէ յեղափոխութեան, որ զգալի է անշուշտ ամէնուրեք:

Վերջացնելով մեր տեղեկագիրը, կը յայտնենք թէ Ժողովուրդը շատ բան կը սպասէ Ընդհանուր Ժողովէն, մեծ յոյսեր դրած է անոր վրայ եւ մենք, որ Եգիպտոսի անցեալին ու ներկային վրայ խօսած էինք, յոյս ունինք թէ ապագայ Եգիպտոսը պիտի կարողանայ ունենալ իրեն արժանի բարձրութիւնը եւ ասիկա իրաւունք կ'ունենանք ըսելու մեր երեք ամսուայ գործունէութիւնը անգամ մը անցնելէ ետքը, որ յուսատու է:

Միութիւն.— Հայ Ժողովուրդը ոչ մի ժամանակ յեղափոխութեան այնչափ արամադրուած եւ պատրաստուած չէր, որչափ որ ընդունակ է այժմ: Արդ, ո՞վ պէտք է լաւ ճանչնայ Հայ Ժողովրդի ներկայ իսկական պահանջները եւ օգտուել գիտնայ այդ նպատատար առիթներէն: Միւս կողմանէ, հանգամանքները խիստ փափուկ [են]. որեւէ սխալ քայլ մը Հայ Յեղափոխութիւնը ծանր պատասխանատուութեան [տակ] կրնայ ձգել. ուստի պէտք է աշխատել ձեռք բերելու գործի մեծութեան եւ պահանջներու համապատասխան զօրեղ եւ լայն միջոցներ, որու ամենազլխատներէն մին պէտք է համարել ջլատուած Հայ յեղափոխական ուժերու միացման խնդիրը: Թէպէտ եւ միութեան հարցը միշտ յուզուած է, բայց դժբախտաբար իրականացումը կարելի չէ եղած. իսկ այժմ ամէն ժամանակէ աւելի անհրաժեշտ ու կարեւոր կը նկատենք միութեան հարցի վերջնական լուծումը: Ուստի, շատ նպատատար կը համարենք, որպէսզի միութեան վերաբերմամբ առաջին եւ գործնական քայլը Դաշնակցութիւնը առնէ: Եւ այդ առթիւ, Եգիպտոսի դաշնակցական կոմիտէները հետեւեալ առաջարկները կը ներկայացնեն Ընդհանուր Ժողովի, իբր դրական եւ նպատակայարմար միջոց.

ա.— Դաշնակցութիւնը իւր կողմանէ լիազօրութիւն տայ մի քանի հմուտ եւ կարող անձանց՝ հրաւեր կարողալու պաշտօնապէս բոլոր յեղափոխական մարմիններուն, յայտնի եւ կարեւոր յեղափոխականներուն եւ նաեւ չէզոք բայց վստահութեան արժանի եւ յայտնի անձնաւորութեանց եւ կազմել ընդհանուր խառն Ժողով մը եւ այդ խառն Ժողովի որոշումները լինին վճռական:

բ.— Դաշնակցութիւնը առանց նկատողութեան առնելու այս կամ այն կուսակց[ութեան] հարցը, բարեփոխի իր ծրագիրը եւ գործնական ուղղութիւնը հանգամանքներու համեմատ, ի պահանջել հարկին զոհէ

[նոյն] իսկ կուսակցութեան անունը եւ ստանայ ընդհանուր Հայ Յեղափոխութեան համապատասխանող դրոշմը եւ գոյնը կրող կերպարանք, որը շատ շատերու յամառութեան [վերջ կու տայ] եւ Դաշնակցութիւնը ուրիշները իրեն քաշել եւ կլանելու համոզմունքը կը ջնջուի ամէնու մէջէն: Դաշնակցութիւնը պէտք է Հայ Յեղափոխութեան առանցքը եւ ընդհանուր միութիւնը ներկայացնէ, ստեղծելով լայն պահանջներու եւ իր վիճակի համապատասխան եւ նպատակայարմար ուղղութիւն մը, որով կարենայ ջնջել ամէն հայու մէջէն կուսակցական նեղ ոգին եւ կարենայ քաշել հայ յեղափոխականներու մեծամասնութիւնը անխտիր՝ այդ փոփոխներու ուղղութեան տակ: Ահա, այն ատեն Դաշնակցութիւնը, վերին աստիճանի զոհողութիւն եւ մեծութիւն ցոյց տուած լինելով, անտարակոյս պիտի կարենայ գրաւել եւ միացնել բոլոր ազնիւ եւ մաքուր յեղափոխական եւ ժողովրդական տարրերը: Ի նկատի պէտք է առնել նաեւ, որ Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխութեան դեռ շարժման սկիզբները պատրաստած ծրագիրը կարօտ է որոշ փոփոխութիւններու ենթարկուելու, որովհետեւ այն ժամանակուայ եւ այժմեան ընդհանուր հայութիւնը չընդունող քաղաքական եւ ներքին հանգամանքներուն մէջ մեծ տարբերութիւն կայ. եւ յուսով ենք որ այժմեան Հայկական Հարցի, հայու կացութեան եւ յեղափոխութեան եւ անցեալ մեր ունեցած փորձի պահանջներուն յարմարեցուած ընդհանուր ծրագիր մը եւ ներքին կազմակերպական կանոնադր մը պիտի դիւրացնեն եւ լուծեն մէկ անգամ ընդմիշտ միութեան հարցը:

Գահիրէի կոմիտէի ներկայացուցիչ՝ ՊԱՐՈՅՐ Աղեքսանդրիոյ կոմիտէ (կնիք)

Իբրեւ ներկայացուցիչ այս վերոյիշեալ կոմիտէներու՝ ընտրուած են Գարոն եւ Վահագը(6):

(1) Կիլիկիոյ իրբու ուժերու կեդրոնացման վայր եւ ապագայ ապստամբայր կազմակերպելու Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը, որուն համար Երկրորդ Ընդհանուր ժողովը պիտի ընտրէր յատուկ Պատասխանատու Մարմին:

(2) Հրօշակի Խմբագրութեան (Արեւմտեան Բիրօ) կարգադրութեամբ, Երկրորդ, Կիպրոսի եւ Իսթիքի (Ոսկեհամբ) կոմիտէները պարտակազմութիւն ունենալով գործառնալ ստատարելու Կիլիկիոյ գործիչներ եւ ուժեր մտցնելու գործին: Իսկ Ամերիկայի կազմակերպութիւնը յաճախ ասած էր Երկրորդ օգտակար ըլլալ այդ աշխատանքներուն:

(3) Այդ գործով ալ 1896ի սկիզբները Կիպրոս հաւաքուի էին Արսէն Գարօ, Աշոտ Մարքիս, Մար, Գրիգոր Ներսիսեան եւ ուրիշներ: Զէյթունի ամառու սակայն ամօժամակ ազատուցիչ էր Կիլիկիոյ Երկրորդ ժողովին Երբ որ 1897ի ամառը եւ աշնան, զարմալ Կիպրոս հաւաքուած կը գտնուէր Մար, Վահագը

Տարեւած, Հրաչ, Միս-Շահէն եւ. բայց Կիլիկիոյ Երկրորդ ժողովին Երբ որ 1897ի ամառը եւ աշնան, զարմալ Կիպրոս հաւաքուած կը գտնուէր Մար, Վահագը

(4) Կ'անկարկուի Զէյթունի 1895-96ի ապստամբութեան, որուն մտածակցած էին հնչակեան կարգ մը մարտական զինավաճառ (Ազատի, Հրաչեայ Մարալ եւ.):

(5) Իրօք, Երկրորդ Ընդհանուր ժողովի որոշմամբ, Երկրորդ պիտի շարունակէր Ոկտոբրի Լեռնայի գործին օժանդակ շրջան: Տարիներ շարունակ, Արեւմտեան Կիլիկիոյ ըլլալ Յատուկ Կիլիկիոյ Պատասխանատու Մարմին:

(6) Երկրորդ Ընդհանուր ժողովին, Արսէն Գարօն եղաւ Երկրորդ շրջանի ներկայացուցիչ: Վահագը (Արշակ Վահագն) Պալատի ներկայացուցիչն էր:

2) ԿԻԼԻԿԻՈՅ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Նախ եւ առաջ արտայայտելով մեր շրջանի հայ տարրի եւ մեր հիացմունքն ու շնորհակարտութիւնը մեր քաջ Ֆէտայիների Դուշմանայ ձորում վարած ճակատամարտի(1) եւ խորին վիշտն ու յարգանքը թէ՛ նոյն կուռի եւ թէ՛ Մաղկի(2) վերջին ցոյցի մէջ հերոսաբար ընկած մեր անմոռաց ընկերների նահատակութեան անթիւ, որանով ուղղում ենք բացատրել մեր հայեացքները ընդհանրապէս մեր գործունէութեան եւ մասնաւորապէս նրա Լեռնայայրում բռնկիչ դիրքի վերաբերմամբ, որի խնդրով զբաղուելու յատուկ միտքայով եկած ենք այստեղ եւ ջանքեր կը թափենք մօտ ժամանակներումս ներս մտնել Երկիր եւ անձամբ տեսնել այն բոլորը, ինչ որ մինչեւ այժմ կարողացանք քաղել թէ՛ կողմնակի ծանօթներից ու թէ՛ Երկրէն վերադարձած մերայինների բերած տեղեկութիւններից, որոնց վրայ եւ հիմնուած այժմ պարզում ենք մեր կարծիքները, հրաւիրելով պատկառելի ժողովիդ խորին ուշադրութիւնը նրանց վրայ:

Պատկառելի մեր գործունէութեան մասին ընդհանրապէս, աչքի առաջ ունենալով անցեալ Ընդ. Ժողովից(3) յետոյ կատարած մեր գործերը — այն է՝ Վրէժստանի(4) արշաւանքն ու Մաղկի ցոյցը(2) — ցանկալի է, որ Վրէժստանի օրինակի պէս արշաւանքներ կրկնուէին, թէպէտ մենք այն հաստատ համոզմանն ենք, որ այդ ձեւի գործունէութիւնը, մեր ժողովրդի յեղափոխական ոգու բարձրանալու նկատմամբ իր անուրանալի նշանակութիւնն ունենալով հանդերձ, մեր ազգային դատի նկատմամբ վճռական նշանակութիւնն ունենալ չէ կարող: Ուստի եւ որպէսզի մեր ապագայ գործունէութիւնը յիշեալ երկու նկատումների մէջ էլ ունենար իր որոշ նշանակութիւնը, շատ աւելի ցանկալի էր, որ ներս մտած խմբերը, արդէն որոշ զոհողութիւններն ա-

նելուց յետոյ, նպատակ դնէին անպատճառ առաջ խաղաղ՝ գրաւելով Երկրի այս կամ այն յարմարագոյն կէտը եւ այդ միայն ու միայն այն դէպքում, երբ բաւականաչափ զէնք մտցրած կը լինենք այնտեղ նախօրօք, որով մերոնց հետ միանալու կարելիութիւն տուած կը լինենք եւ տեղացի երիտասարդներին, որպիսի դէպքում միայն կարելի է վստահ ստել, թէ մտնողները դէժ երկու-երեք ամիս դիմադրելու ոյժ կ'ունենան:

Գալով Մաղկի գործունէութեան՝ հայ ժողովրդի եւ յեղափոխականների մեծամասնութեան հետ, մենք եւս համոզուած ենք, որ թեթեւ ցոյցերով լուրջ հետեւանք չենք հասնելու: Զօրեղ ցնցում առաջ բերելու համար հարկաւոր է մի գործ, որի առաջ նսեմանայ 96 թիւը(5): Եւ քանի որ, ըստ մեր ընկերներից շատերի, Մաղկի գործունէութիւնը հիմնուած է եւրոպական շահերը վտանգելու սկզբունքի վրայ, մեր կարծիքով, Եւրոպայի միջամտութիւնը տեղի կ'ունենայ այն դէպքում, երբ նրա վտանգուած շահերը աւելի խոշոր կ'երեւան նրան, քան թէ նրա զոհողութիւնը միջամտութեան դէպքում. պարզ է որ այնտեղի գործունէութիւնը իր ազդեցութեամբ փոթորկելով նման մի դրութիւն ստեղծելու դէպքում միայն մեզ ձեռնտու պիտի լինի: Եւրոպական միջամտութիւն տեղի կ'ունենայ եւ այն դէպքում, երբ մեր գործունէութիւնը նրան պիտի ծառայէ իբրեւ պատերազան: Ուստի, որեւէ ծրագրի գործունէութեան միջոցին Մաղկի մարմինը անպատճառ պիտի ունենայ եւ կ'արագորութեան եւ Մեծ-Քաղաքի Բիւրոյի(6) համաձայնութիւնը, որոնք միասին խորհրդակցելով, հիմնուած որքան կարելի է ձեռնհաս քաղաքադէտների կարծիքների վրայ, բնական է աւելի ճշդութեամբ կը զբաղեն խնդիրների մասին 1895 թ. Ընդ. Ժողովի(7) արձանագրութեան մէջ որոշ կերպով ստուած է, թէ մի որեւէ ռայոնի որոշման իրագործումը, երբ նա շօշափում է հարեւան մէկ-երկու կամ բոլոր ռայոնների շահերը, տեղի պիտի ունենայ անպատճառ համապատասխան համաձայնութիւնն առնելուց յետոյ:

Վերջին ժողովի որոշած գործունէութեան վայրերից մէկի, Քարաթայուի(8) խնդրի վերաբերմամբ, մենք զժողովրդին ենք որեւէ կարծիք յայտնել, որովհետեւ նա դեռ եւս յեղափոխական ընդհանրութեան համար մի terra incognita(9) է մնացել մինչեւ այժմ, չնայելով որ անցեալ տարուայ ժողովում նրա մասին շատ խօսուեցաւ եւ չնայելով որ «Սեպտեմբր» կոմիտէի(10) կողմից այստեղ եւս ստացուեցաւ մի շրջաբերական, որի մէջ շատ խոստումներ ու յոյսեր են տրուում: Մենք զժողովրդին ենք հաւատալ այնտեղ ձեռնարկելիք գործի յաջողութեան:

Իսկ գալով միւսի՝ Լեռնայայրի խնդրին, մենք մի քիչ աւելի պիտի խօսենք, որովհետեւ նրա խոստացած ապագայ յաջողութիւնները աւելի հաւատ են ներշնչում մեզ, քան որեւէ այլ տեղ, թէ՛ երկրի բնական դիր-

քի, թէ՛ հայ տարրի անկախ լինելու տենչանքի, թէ՛ նրա ունեցած պատրաստութեան եւ թէ՛, որ զլիաւորն է, քաղաքականութեան նպատակաւորութեան տեսակէտներով: Պարզենք մեր միտքը. դարուս մէջ այդ փոքրաթիւ ժողովրդի մի քանի անգամ բարձրացրած ապստամբութիւնները(11) եւ համարեա բոլորի յաջող վախճանները փաստեր են մեր խօսքերին, իսկ վերջերս այնտեղից այստեղ եկած մերայինների եւ այլ բազմաթիւ փախուստականների վկայութիւնները հաստատում են, որ մի քանի զլիաւոր կէտերում լաւ պատրաստութիւն կայ, թէպէտ այդ բոլորը միայն յաջող պայմաններում գործածելու մտքով: Քաղաքականութեան նպատակաւորութեան տեսակէտը հիմնուած է այն բոլոր կարծիքների վրայ, որոնք յայտնուած են թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ Հիւսիսի (Գորչակովի կարծիքը) կողմից այդ փոքրիկ երկրի նկատմամբ: Վերջին ապստամբութեան ժամանակ իսկ հիւպատոսների միջամտութիւնը յօղու ապստամբողների եւ դաշտերում հայերին շարք տալու ծրագրի անյաջողութեան կենդանի փաստեր են, որ մեր իրաւունքները աւելի այդ երկրի մէջ պաշտպանուին, քան այլուրեք: Եստ քաղաքադէտ անձնակազմութիւններ այն կարծիքն են յայտնել, որ Հիւսիսը(12) չպիտի հակառակէ, եթէ հայերը այդ երկրի մէջ յաջող են ինքնավարութիւն ձեռք բերել: Բաւական է ստել, որ հնչակեանները այժմ ամէն ինչ թողած՝ միայն այդ երկրի մասին են աշխատում, հաւատացած այն բանում, որ ներկայ քաղաքական կացութեան մէջ այլ տեղերի իրենց ջանքերը ոչինչ չպիտի հասցնեն, եթէ ոչ կոտորածների եւ ընդհանուր թշուառութեան: Այս ասելով, մենք էլ նրանց պէս այն միտքը չենք ուղղում յայտնել, թէ ամբողջ Երկիրը թողնելու է դժբաղդ ճակատադրին իբրեւ խաղալիք եւ միայն ձեռք առնելու է մի փոքրիկ մասը. ոչ, մենք այնչափ յոռետես չենք, բայց սա մի իրողութիւն է, որ գալիս է ապացուցելու, թէ այդ երկրում մեր պրէտենցիաները(13) այնչափ էլ տարօրինակ չեն թուում եւ չպիտի թուան Հիւսիսին, որչափ այդ [պիտի լինէր] նրա սահմանին անմիջապէս կպած մի երկրում:

Ահա այս բոլորն բերելով Ընդհանուր ժողովիդ ի տեղեկութիւն, ցանկալի էր որ լուրջ կերպով ջնջուէր Լեռնայայրի խնդիրը եւ, փոխանակ անցեալ ժողովում կայացրած որոշման համաձայն միայն մի կազմակերպող-զինակաւարող ոյժ ուղարկելով բաւականանալու, որոշուէր մեր ամբողջ բարոյական ու նիւթական ոյժի գէթ կէտը յատկացնել այդ կէտին:

Բոլոր երկրացիների ասելով միայն դրամն է, որ գործ պիտի տեսնի. ժողովուրդը պէտք ունի հացի, աղի եւ վառօդի, միւս բաները — կուռելու պատրաստակամութիւն եւ զէնք (տեղական) — նա ունի. եւ չնայելով այս յաջող հանգամանքին, մենք դարձեալ այն կարծիքի ենք, որ նոր սխտեմի զէնքեր մտցուին Երկիր մեծ քանակութեամբ: Երբ մեզ յաջողութի մտնել Երկիր (իսկ դրա յաջողութեան մէջ մենք բաւականին

3) ՏԵՂԵԿԱԳԻՐ ՈՍԿԵՀԱՆՔԻ ԿՈՄԻՏԵԻ (1897-98 թուական)

Կոմիտէն կազմուեցաւ 1897 թուի սկիզբները, Երզրատոնէն յատուկ այդ նպատակով եկած պատուիրակի ձեռքով: Երզրատոնէն եկողին (Մարթին(1)) շուտով օգնութեան հասաւ Պուլկարիայէն Պուսոյ նախկին խումբապետ Էդուարդը(2): Այդ ալ բաւական չհամարելով՝ Երզրատոնի Կեդրոնական Կոմիտէն զրկեց մէկ երրորդն ալ, Շահէնը, որ Օստեսայէն եկած էր Աղեքսանդրիա ժամանակաւոր գործի մը համար: Այս երեք ուժերը խումբեր կազմակերպեցին, քաղաքը թիչ մը ուսումնասիրեցին եւ սպա միայն հնարաւոր դարձաւ Պուլկարիոյ 97 թուի դարնան արտասահմանեան ժողովին մասնակցող ուժերէն մէկը — Վահանը(3) — հոս զրկել, որ վարէ կոմիտէի գործերը եւ վերջնական կերպարանք ստայ: 4-5 ամիս մնալէն ետքը Վահանը կը վտանգուի. անոր հայ ըլլալը, անգործ պատիւը եւ, մանաւանդ, Դաշնակցութեան տեղւոյն ներկայացուցիչ ըլլալը կ'իմանան քանի մը հարուստներ: Լուրը բերնէ բերան կը պտտի ու կը տարածուի: Վահան կը հեռանայ Երզրատոն, հոն կը փոխարինէ Դաշնակցութեան տեղւոյն ներկայացուցիչ Բարսեղանին(4) եւ Բարան(4) կու գայ Ոսկեհանք:

Կոմիտէին հաստատման այս կարճ նկարագրութենէն կ'երեւայ, որ ամբողջովին կազմուած է եկուոր, զրոյցի եւ ոչ տեղացի ուժերէ: Տարուան մը ամէն ճիւղերը առաջմ սպարդիւն անցան՝ որեւէ տեղացի ուժ մտցնելու կոմիտէին մէջ: Զանքեր եղան նոյնիսկ օժանդակ մարմին մը կազմելու, դէթ 3-4 անձերէ բաղկացեալ, որոնք, տեղացի ըլլալով, հնար ունենային ամէն տեսակ շրջանակներու հետ շփուելու, լուրեր իմանալու այդ անգամ դեռեւ չյաջողուեցաւ: Պատճառը տեղական հայերու օտարացած, յունացած ըլլալն է: Համարեալ՝ բոլորը մանր ու խոշոր վաճառականներ են, ըզբաղուած միայն իրենց գործով, հայութենէ տեսակ մը օտարացած ու պաղած: Վախկոտութիւննին ծայրայեղ է. դեռ սրտերնին, պոլտեցիներուն պէս, պատուաւորութեան սարսափը ծայրայեղ է ամէնուն սրտին մէջ:

Կամրտէի կազմը. — ներկայիս Ոսկեհանքի վարչութիւնը կազմուած է հետեւեալ կերպով.— 1) Կեդրոնական կամրտէ՝ ամբողջ ռայոնի(5) համար, հետը հաշուած դաւառներն ալ: Կեդր. Կոմիտէն կը բաղկանայ չորս անձերէ, — Բարա, Մարթին, Էդուարդ եւ Զարեհ(6), որոնցմէ վերջին երեքը կը կատարեն, հարկ եղած պարագային, նաեւ շրջուն պատուիրակի զեր ուսյոնին մէջ: Դժբախտաբար չորսն ալ եկուոր ուժեր են: Զանքեր կ'ըլլան տեղացիներ մէջ առնելու:

2) Խումբեր. — ասոնց թիւը 9-10 հաս է, իւրաքանչիւրի մէջ միջին հաշուով 6-7 հոգի: Կոմիտէն, ի նկատի ունենալով տեղացիներու մասնակցութեան անհը-

րաժեշտութիւնը, կազմեց տեղական զարոյցական (15-20 տարեկան) տղաներէն 12-14 հոգիէ կազմուած խումբ մը, որ ահազին եռանդ ու ոգեւորութիւն կը ցուցնէ: Իսկ մնացած խումբերու համարեալ՝ բոլոր անդամները դաւառացի զաղթականներ են, որ հոս գործի են եկած:

3) Վախարդ անդամներ. — դժբախտաբար կոմիտէն սկզբնական շրջանին վճռած է եղեր սակէ միայն խոշոր նուիրատուութիւններ հաւաքել եւ ոչ մշտապէս անդամակցող վճարողներ գտնել: Ատոր համար ալ դեռեւս այդպիսիներուն թիւը թիչ է, — միայն 15-20 հոգի: Այժմ կոմիտէն այս կէտին վրայ է դարձուցեր իր ուշադրութեան մեծ մասը:

4) Համակրողներ. — Զմիւռնիոյ հայութեան մօտէն ծանօթ չեղողը դժուար կը հասկնայ, թէ որքան տգէտ են տեղական նոյնիսկ երիտասարդ կրթուած անձերը՝ մեր յեղափոխական խնդիրներու վերաբերմամբ: Շատ շատերը նոյնիսկ չեն գիտեր թէ Դաշնակցութիւն գոյութիւն ունի: Ուստի դժուար էր սպասել, որ կոմիտէին գոյութեան կարճ ժամանակամիջոցին մէջ խոշոր թիւ մը համակրողներ ունենային: Այնուամենայնիւ այժմ պարզօրէն կը նշմարուի, որ ամէն դասակարգերու մէջ համակրողներ սկսած են երեւնալ ինքնաբերաբար, շէնորհիւ կոմիտէի բռնած ճշդապահ ու խոհեմ դիրքին, շնորհիւ անոր պատուիրակներու բերանացի պրոպագանդին եւ զբաւոր դիմումներուն: Ի հարկ է թիւ մը տալ անկարելի է: Միայն այսքանը կրնանք ըսել, որ թէ՛ մտաւորական եւ թէ՛ վաճառական դասին մէջ արդէն ունինք քանի մը խորհրդատու եւ լուրեր հաղորդող համակրողներ, որոնք կողմնակի թելադրութիւններ ու պրոպագանդ կ'ընեն գործին համար:

5) Պատուիրակներ, սեպտեմբերի եւ լրտեսներ. — կոմիտէն թէ՛ դուրսէն բերած է յատուկ պատուիրակ մը, թէ՛ իր անդամները յաճախ կը կատարեն պատուիրակի դեր, եւ թէ խումբերէն կ'ընտրուին պատուիրակներ ու լրտեսներ: Իսկ բոլոր խումբերէն ջոկուած են 7-8 հոգի՝ իր յատուկ ահաբեկիչներ, որ արդէն դիմումներու եւ այլ ծանր պարագաներու մէջ գործի դըրուած են:

6) Խմբապետներու ժողով. — բոլոր խումբերու խմբապետներէն ընտրուած են 4 հոգի, աւելի ձեռնհասները, որք կը կազմեն խմբապետական ժողովը: Ուրախակի է ըսել, որ այս բանուոր դաւառացիներէ կազմուած խմբապետական ժողովի անդամները ահազին եռանդ, անձնագոհութիւն, պատրաստակամութիւն ու անկեղծութիւն կը ցուցաբերեն:

Քաղաքի մէջ կոմիտէի կազմակերպութիւնն այս է: Կը մնայ վճարող անդամներու թիւը շատցնել, տեղացիներ առնել գործի մէջ եւ, առհասարակ, աւելի ընդարձակել ու հաստատ հիմքերու վրայ դնել կազմակերպութիւնը: Կոմիտէիս՝ իր սեփական զրուութիւնը, քանի որ տեղացիներ չեն մասնակցիլ եւ խոր համակրութիւն մը չեն ցուցներ, շատ խախուտ կ'երեւայ. եկուոր ուժերը

միշտ աւելի հեշտ եւ աւելի յաճախ կրնան կասկածուիլ, քան տեղացիները:

Ընդհանուր ակնարկ կոմիտէիս տակտիքի վերաբերմամբ. — Աւելորդ չենք համարեր մտնել այն հարցերու քննութեան մէջ, որոնք պատճառ եղան Ոսկեհանքի վրայ դրուած բաւական խոշոր յոյսերու խորտակման: Թերեւս մեր փորձը դաս մը ըլլայ ուրիշ կէտերու մէջ նոր հաստատուող կոմիտէներուն: 97ի դարունէն, երբ Վահանի գալով կոմիտէն իր վերջնական կերպարանքն ստացաւ, անմիջապէս ձեռնարկեցինք տեղական ցուցակը կազմելու, որոնց վրայ պէտք է տեսակ մը յեղափոխական հարկ նշանակէինք, 1000 ոսկիէն 5 ոսկի հաշուելով, միանուագ: Կոմիտէիս ամբողջ ուշադրութիւնը գրադեցաւ միայն այդ միանուագ գանձութեան գործով եւ անդամավճարներու աւելի դանդաղ, բայց աւելի կայուն ձամբան բոլորովին աչքաթող ըրինք. առանց մտածելու, որ եթէ հարուստէ մը բռնութեամբ 100-500-1000 ոսկի միանուագ առնես, զայն չես կապեր յեղափոխական գործին հետ... ընդհակառակն՝ մեծաւ մասամբ բռնութեան տակ տուողը տեսակ մը ատելութիւն կը կրէ իր սրտին մէջ դէպի գործն ու իր ներկայացուցիչները. իսկ ամսավճարներու, եռամսեայ կամ նոյնիսկ վեցամսեայ վճարումներու եղանակը գործադրելը տեսակ մը մշտական կապ ու համակրութիւն կը հաստատէ կոմիտէի եւ հասարակութեան ամէն դասերուն միջեւ:

Հարուստներու ցուցակը, անոնց կարողութեան մօտաւոր չափը եւ գանձուելիք թիւերը կազմելէն ետք, կոմիտէն սկսեց որոնել ձեռնհաս, յարգուած ու աւելի ազգային սիրտ կրող անձեր, որ անոնցմէ կազմէ «Թելադրողներու», յորդորողներու մարմին մը: Կոմիտէն պիտի դիմումներ ընէր եւ այդ հարուստ ու յարգուած անձերէն կազմուած մարմինը թելադրէր, որ «Գտնահետնակի անձեր են, պէտք է տալ» եւ այլն: Նոյնիսկ յոյսեր կը տածէինք, որ այդ նոյն անձերը մօտ ապագային կրնային կոմիտէի անդամ ըլլալ: Բայց քանի մը սխալ քայլեր իրարու յաջորդեցին եւ սպասածներուս հակոտնեայ արդիւնքի մը հասանք, նոյնիսկ կորսնցուցինք մեր երկու համակրող լաւ ուժերը:

Կոմիտէի ներկայացուցիչը, խրախուսուելով տեղւոյն մէջ տիրող համեմատաբար աւելի ազատ պայմաններէն, հրապարակով կը տեսնուի Դաշնակցութեան հնուց համակրող երկու ուժերուն հետ, առանց մտածելու, որ վաղը կրնայ բացուիլ իր ինչ անձ ըլլալը եւ միւսները կրնան վտանգուիլ: Այդ դեռ ոչինչ: Իսկոյն, քանի մը աչքի ինկող, բաւական առատաձեռն անձեր կը ժողովուին եւ կոմիտէիս ներկայացուցիչը կը յայտնուի անոնց, որպէսզի «Թելադրող» մարմինը կազմէ: Այդ ալ ոչինչ: Անոնց իսկոյն կը յայտնուի նորահաստատ կոմիտէի իրական վիճակը, փոխանակ գաղտնի պահելու, փոխանակ կոմիտէի ուժն ու կարողութիւնը ուսած ցուցնելու: Այդ հարուստ աղաները, որ «կոմիտէ» ը-

տելով սորված են միշտ տեսակ մը գերբնական բան ըմբռնել, կը յուսախարուին... Իսկ երբ ներկայացուցիչը կը ցուցնէ անոնց հարուստներու ցանկը եւ պահանջուելիք գումարները, աղաները, որ սորված են 5-10 ոսկի տալով «ազգասէր», «մեծ բարերար» անունները վայելելու՝ կը սարսափին եւ ետ կը քաշուին: Ետ քաշուելը բաւական չէ՝ իրենք կը դառնան նորահաստատ կոմիտէիս ամենախիտ հակառակորդները եւ տեսակ մը խաչակրաց արշաւանք կը սարքեն կոմիտէի դէմ:

Վահան ստիպուած կը հեռանայ: Կոմիտէն կը ըզգայ իր սխալը եւ իր տակտիքը կը սկսի փոխել: Մէկ կողմէն աղաները բերանացի եւ նոյնիսկ զբաւոր («Արեւելեան Մամուլ»ի մէջ) պրոպագանդ կ'ընեն մեր դէմ, անուանելով զմեզ տգէտներ, երեխաներ, անբարոյսականներ, մուրացկաններ եւն., միւս կողմէն կոմիտէն ամէն ճիւղ կը թափէ բացուած գաղտնիքը նորէն ծածկելու, ինկած հեղինակութիւնը նորէն ոտքի կանգնեցնելու: Այդ նպատակով՝ բերանացի պրոպագանդը կը շատցուի կոմիտէին կողմէ: Դաշնակցութեան վերը յիշուած երկու հին համակրողները նորէն կամացուկ մը կը միացուին, թէեւ ոչ առաջուան եռանդը եւ ոչ ալ կորովն է մնացեր վրանին: Մամուրեանի «Մուրացկանութիւնը իբր արհեստ» մեր դէմ գրուած յօդուածին կոմիտէն, իբր հայու մը կողմէ՝ պատասխան մը կու տայ — «Բաց նամակ Մամուրեանին» խորագրով, որուն մէջ ամէն ջանք ի գործ կը դրուի ցուցնելու աղաներուն՝ որ «մեք ալ գիտութիւն ունեցող անձեր ունինք մեր մէջ»: Ժողովուրդը կը հասկնայ, որ այդ գրութիւնը կոմիտէի կողմէն է: Կը հրատարակուի № 1 թուոցիկ թերթը, որ նորէն խոր տպաւորութիւն կը թողու բոլորին վրայ, բարձրացնելով կոմիտէի հեղինակութիւնը եւ ուժը:

Կոմիտէիս վերջնական կերպարանք ստանալէն ետքը անմիջապէս ձեռնարկուեցան դիմումները, ըստ նախօրոք որոշուած ցանկի: Սկիզբի քայլերը շատ յաջող կ'երթային, որովհետեւ հարուստները համոզուած էին որ Պուլկէն 50-60 ուժեր հոս են լեցուեր: Առանց որեւէ ընդհարման ու աչքի գարնոց դժուարութեան՝ դանձրուեցաւ մօտ 400 օսմ. ոսկի: Կոմիտէն ոգեւորուեցաւ եւ աւելի մեծ եռանդ ցուցնել սկսաւ: Բայց ահա վրայ հասան մեր վերն յիշած անզոյշ ու սխալ քայլերը. գաղտնիքը բացուեցաւ, հեղինակութիւնը կորուցաւ...: Այլեւս դիմումները սկսան դադրիլ արդիւնք տալէն: Պատուիրակները կ'արհամարհուէին աղաներէն, կը վճռուէին եւ նոյնիսկ պարոն մը ծեծելու ելաւ մեր մէկ պատուիրակը: Կոմիտէն փոխեց իր տակտիքը: Հեղինակութիւնը նորէն բարձրացաւ. ահաբեկիչները սպարէզ հանեց, առանց սակայն էապէս բռնի միջոցի դիմելու իրաւունք տալու անոնց, այլ միայն թիչ մը սարսափեցնելու համար: Դիմումները, որ 1-2 ամիս դադրած էին, կամացուկ մը վերսկսուեցան եւ արդէն սկսած են թիչ մը արդիւնք ցուցնելու: Բայց այս ամէնուն հանդէպ կառավարութիւնը չէր կրնար անտար-

բեր մեակ. նոր-նոր սկսուած են խստութիւններ, սու- ներու եւ խանութներու խուզարկութիւններ եւ բան- ասարկութիւններ: Տեղս գտնուած եկուոր ուժերը, ծա- նօթ ըլլալով արդէն հրապարակի վրայ, բաւական խո- շոր կասկածի տակ են:

Ի միջի այլոց ըսենք եւ այն, որ տեղական ժողո- վըրդի կարծիքը բացարձակապէս դէմ էր Պոլսոյ վեր- ջին ցոյցին. ամէնքը կ'ուզեն զինուած ապստամբու- թիւն, բայց որեւէ այլ դաւաճութիւն մէջ: Մեր կուսակցու- թեան գործունէութեանն ունեցած այս դժգոհութիւնն ալ մասամբ պատճառ կը դառնայ հարուստներու սառնա- սրբութեան եւ ստակ չտալուն:

Կոմիտէի կարծիքն է, որ Ոսկեհանքի ամբողջ շըր- ջանի ամենամեծ նշանակութիւնն է դրամ հասցնելը եւ ոչ կառավարութեան դէմ գործ մը ընելը. իսկ երկրորդ՝ իրրեւ ճանապարհ ասկէ դէպի Աֆիոն-Գարահիսար, Գաղատիա, Ենոզատ, Կեսարիա եւ նոյնիսկ Զիթապը- սուղ(7):

Այս բանն աչքի առաջ ունենալով, ամէն ջանք պէտք է գործ դնել կոմիտէի գոյութիւնը կառավարութեան ե- րեւան չհանելու... Ի հարկ է՝ որքան որ հնարաւոր է:

Գաւառը.— Կոմիտէն իր հիմնարկութեան օրէն ի վեր ջանքեր չէ խնայած իր ուսյոնին մէջ հնթակոմիտէ- ներ ստեղծելու: Դժուարութիւնները ահագին են, որով- հետեւ գործով մը այդ կողմերը դացող մարդեր չունինք դեռեւս մեր մէջ: Կերպով մը մեր մէկ անդամը, իրր շրջուն վաճառական, ղրկեցինք ներս: Նա ըրաւ իր ա- ռաջին, երկրորդ ու երրորդ շրջանը, սկզբնական հիմ- քերը դրաւ, մարդեր գտաւ, կապեր հաստատեց ու վե- րադարձաւ: Իսկ վերջերս կոմիտէն իր հոս վտանգուած մէկ անդամը նորէն ղրկեց, իրր շրջուն պատուիրակ:

Ենորհիւ այս ջանքերուն, ուսյոնին մէջ կազմուած են արդէն, թիչ կամ շատ կանոնաւորութեամբ, հետեւե- ակ ենթակոմիտէները,— ա) Մամիսա (Հուր-Երկաթ) երկու ենթակոմիտէ, մօտ 40-50 վճարող անդամներով ու 5 հոգիէ կազմուած վարչութեամբ. բ) Տեմիզի (Ած- խահանք)՝ մասնաճիւղ մը, նոյնքան անդամներով. գ) Կաբ-Արաբ (Պղնձաքաղաք)՝ մասնաճիւղ մը, նոյն- քան անդամներով. զ) Օղէմիշ (Շոգի)՝ վճարողներու խումբ մը. ե) Ազիզի (նոյն). զ) Աֆիոն Գարահիսար (Սեւ Բերդ)՝ կոմիտէ մը, թէեւ դեռ անկանոն: Այս վերջին տեղի հայութիւնը բաւական խոշորկէկ թիւ մը ունի, բայց կանոնաւոր գործիչի մը բացակայութեան պատճառաւ, դեռեւս չէ ինկած կազմակերպութեան ին- կական ճամբուն վրայ: Մեր ամենամօտ դրացի Կեդ- րոնական Կոմիտէն Գաղատիան է, որուն հետ մշտական եւ կենդանի յարաբերութեան մէջ ենք:

Թէ ուսյոնի բոլոր խումբերուն, թէ Գաղատիա, կը ղրկենք մշտապէս թերթեր, ծրագիրներ, թուցիկներ եւ նոյնիսկ ուրիշ լրագիրներ: Նամակագրութիւնը կը պահպանուի ճշգրտագոյնութեամբ եւ նոյնիսկ կոմիտէս, զգալով դաւաճութեան պահանջները, յաճախ եւրոպական թեր-

թերէն քաղուած զանազան լուրեր կը հաղորդէ իր նա- մակներուն մէջ, որ խիստ գոհացում կը պատճառէ դա-ւառացիներուն:



Այս է եղած կոմիտէի կարճ գոյութեան ընթացքին մէջ ըրած գործերն ու ջանքերը, եթէ չհաշուենք Փոքր Ասիոյ երկաթուղիի գիծերուն վրայ եղած դաւառացի- ներն ալ մեզի հետ կապելու համար թափուած ջանքերը:

Ի հարկ է այս մէկ տարուան մէջ անհամեմատ աւե- լի գործ կարելի էր տեսնել, եթէ անհրաժեշտ ուժերն ունենայինք: Մարդու, կրթութեան, թիչ մը գրել գիտցող, թիչ մը յեղափոխական գործէն հասկցող մարդու կա- տարեալ սով է: Մարդու պակասութեան պատճառով մինչեւ օրս չենք կրցած Գարահիսարի կազմակերպու- թիւնը կանոնաւորել, Պուրսան մեզի հետ կապել, Գա- ղատիոյ կոմիտէին էապէս դաշնակցական գոյն մը տալ՝ քաշելով զանոնք «Մարտականութեան»(8) ծամծոց- ներու կոյուղիէն, որուն մէջ ինկեր են անգիտակցօրէն, ինքնաբերաբար, զարգացման ու շիման պակասութեան բերուածով: Նոյն մարդու սովին է, որ մինչեւ օրս չենք կրցած Կեսարիա հասնել, ճամբաներ սարքել:

Իսկ տղամարդու սովէն աւելի զգալի է կին ուժե- րու բացակայութիւնը, մանաւանդ քաղաքին մէջ, ուր թիչ մը զարգացած ու խելացի օրիորդ մը կրնայ ահա- գին գործ ընել, գէթ միայն դրամական տեսակէտով:

Ինչպէս վերն ալ ըսինք, թէ՛ Ոսկեհանքի եւ թէ՛ ընդ- հանրապէս Փոքր Ասիոյ բոլոր դաւառներուն վրայ մենք կը նայինք իրր նիւթական մատակարարող կէտերու եւ իրր դէպի նպատակակէտերը տանող ճամբաներու վրայ եւ ո'չ իրր գործունէութեան էական ասպարէզներու: Այս բանն աչքի առաջ ունենալով, կոմիտէս կ'առաջար- կէ յարգելի ժողովիդ՝ հոգ տանել գէթ 3-4 պիտանի վարիչ նոր ուժեր ներս ղրկել այդ կողմերը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՅՈՂՈՒՓԻՒՆՆԵՐ

Տխուրը եւ ուրախը, ստոր մատնութիւնը եւ հերո- սական անձնագոհութիւնը, անմիտ ցուցամոլութիւնը եւ խոհեմ գործունէութիւնը խառնուած են իրար՝ մեր յեղափոխական կարճ կեանքի անցեալին մէջ: Փարիսե- ցիներու եւ դիմակաւորներու հետ միասին, շատ ան- կեղծ, բայց պակաս խելքի ու զարգացման տէր անձեր ճիչ ու վայնասուն բարձրացուցին մեր անցեալի, «տը- խուր անցեալի» մասին: Դիմակաւորներն ու ստորները օգտուեցան մեր անցեալի սխալներէն ամբողջ յեղափո- խութեան հայհոյելու, ներկայ գործիչները անուա- նարկելու համար, որպէսզի «պղտոր ջուրերու մէջ աւելի դիւրաւ ձուկ որսան»: Իսկ կարճամիտ, բայց ան- կեղծ գործիչները խարուեցան դիմակաւորներու վայ- նասուններէն, զգուանքով ու աստիճանութեամբ սկսան նա-

յիլ մեր երէկուայ անցեալին վրայ, իրր հրէշաւոր յի- մարութեանց շարքի մը: Մարդկային յիմարութեան ու խաղութեան պատճառաւ այս երեւոյթն զգալի կերպով թուլացուց ու կը թուլացնէ յեղափոխական շարքերը, որովհետեւ շա'տ մը անկեղծ գործիչներ, իրենց տգի- տութեան բերումով, կը քաշուին յեղափոխական դոր- ծէն, իրր գիտակցական, կորստաբեր սխալմանց ասպա- րէզէ մը: Դիմակաւորները հասան իրենց նպատակին փոքր չափով մը: Այսօր Եգիպտոսը եւ Պուլկարիան լեցուած են յեղափոխութենէն դասալիք ուժերով:

Բայց «ո'չ լալ, ո'չ խնդալ, այլ հասկնալ»: Անցեա- լը անհրաժեշտ էր թէ՛ իր լաւ, թէ՛ վատ ու սխալ կող- մերով: Առանց այդ անցեալին, մենք այսօր մեր ասպա- գան որոշելու վիճակին մէջ դժուար թէ գտնուէինք: Պէտք էր «Արմենիան», պէ՛տք էր «Հնչակ»ը, պէ՛տք էին քարոզները, ճոճուան ճառերը, հնչակեան ցոյցերը, թող փչելը, ամէն բան խոշորացոյցի տակ ներկայացնելը... պէտք էին քաջերը, ուժերը... ամէն, ամէն կատար- ուած երեւոյթ պէտք էր: Պէտք է նաեւ այսօրուան դի- մակաւորներու եւ բայասական-քննադատ ուժերու վայ- նասունը, որովհետեւ այդ տեսակ մը շրջահայեցողու- թիւն եւ զգուշութիւն կը թելադրէ արեան զինուորին, թէեւ իր վնասն ալ կ'ունենայ...:

Պէտք էին այդ ամէնը. այո՛: Իսկ այսօր արդէն ծը- ներ ու բաւական զարգացեր է մեր մէջ ընդհանուր ժո- ղովորդի, ուրեմն եւ յեղափոխական անկեղծ գործիչնե- րու դժգոհութիւնը: Ամէնքը կը բողբոջեն անցեալի դէմ շատ կամ թիչ գիտակցութեամբ. ամէնքը նոր տեսակ, աւելի լայն, աւելի վճռական գործունէութիւն մը կ'ու- ղեն:

Կոմիտէս ալ այս վերջին տեսակ գործիչներու կար- ծիքին է: Մեր խորին համոզումն է, որ ցոյցերու շըր- ջանն անցեր է արդէն. մեզի պէտք է զինուած կռիւ: Այդ պատճառով կոմիտէս կ'առաջարկէ հետեւեալ կէ- տերը յարգելի ժողովիդ ուշադրութեամբ.

Ա) Զինուած ապստամբութիւն յարուցանելու հա- մար պատրաստութիւն տեսնել Զիթապուղի(7) (քանի մը կէտեր ալ հետը), Գարատայի(9) եւ Լեռնադաշ- տի(10) մէջ: Մեր գործունէութեան ձգտման կէտը, մեր գոյութեան իրաւունքը կոմիտէս կը տեսնէ միայն այս կէտին, այս ձեւի գործունէութեան մէջ: Թէ՛ բոլոր մեր նիւթական ուժերը, թէ՛ մարդերը պէտք է ձգտինք, հնար եղածին չափ, կեդրոնացնել այդ 3 կէտերուն (զու- ցէ կան եւ այլ յարմար 1-2 կէտեր ալ) շուրջը, առանց ցիր ու ցան ըլլալու, առանց ամէն տեսակ գործերու եւ ծրագիրներու ետեւէն ըլլալու: Չնչին է հայ յեղափո- խականի ե'ւ թիւր, ե'ւ նիւթականը. եթէ այդ փոք- րիկ ուժերը բաժան-բաժան ընենք ահագին տարա- ծութեանց վրայ, այն ատեն երկու նպաստակէ եւ ոչ մէկը կրնանք բռնել: Եթէ այդ կէտերուն մէջ առաջա- նելիք զինուած ապստամբութիւնը մեզմէ պահանջէ 2-

4-10 տարի ժամանակ ու լուրջ պատրաստութիւն, սպա- սե'նք, ամէն ճիգերնիս հոն թափենք, մինչեւ որ զգանք, որ կարող ենք ունեցած ուժերովս գէթ 8-10 ամիս պա- շարման դիմանալ: Երբ այս պատրաստութիւնը տես- նենք, այն ատեն միայն քանի մը կէտերը միասին պայ- թեցնենք, որ նախ՝ թշնամին կեդրոնանալ չկարենայ եւ երկրորդ՝ ապստամբութիւնը թիչ ու շատ ընդհանուր բնաւորութիւն կրէ:

Բ) Հայդուկներ.— Ի հարկէ այդ նպատակին շու- տով հասնել կարելի չէ, պէտք է նախապատրաստական կռիւ: Ատոր համար ժողովուրդը վարժեցնելու, անոր մէջ կուրի եռանդը վառ պահելու նպատակով ջանալ բազմացնել հայդուկային խումբերը — միայն թէ այն- պիսի գործնական ձեւով մը, որ այդ խումբերը ըլլան նաեւ փոխադրող ուժեր վերը յիշուած 3 կէտերուն հա- մար ու միշտ անոնց շուրջը դառնան:

Գ) Զինուած յարձակումներ պատրաստել, ինչպէս Պանասորի կռիւը, որը սարսափ կ'ազդէ թուրքերու վը- բայ, հայու արժէքը — իրր կռուող զինուորի — կը բարձրացնէ օտարներու առաջ եւ չի թողուր ժողովըր- գին կարծել, որ յեղափոխականութիւնը մեռաւ:

Միայն աչքի առաջ ունենալու է, որ Դաշնակցու- թեան ամբողջ ուժերն ատով չզբաղուին եւ ամբողջ դը- բաժանական միջոցները հոն կուլ չերթան. խոշոր մասը պահելու կամ գործադրելու է յիշուած 3 կէտերուն հա- մար:

Դ) Կառուածազիլը հանդարտ պէտք է թողնել առ- այժմ, լուռ կազմակերպել, խումբեր, ահաբեկիչներ, կռուողներու խումբեր կազմակերպել, ուժանակ ներս տանել եւ կազմ ու պատրաստ սպասել մինչեւ որ գաւա- ուր ապստամբի: Պոլսոյ վերջին, չպայթող ուժերու փորձը այնպիսի բացասական տպաւորութիւն մը ըրաւ ամէնուն վրայ որ ոչ միայն հոս, այլ եւ Եգիպտոս ու այլ տեղեր մեր վայելած համակրութիւնն ու գտած յա- ջողութիւնը կ'իտով չափ շախմատուեցան: Պանասորի փառաւոր ազդեցութիւնը կուլ գնաց, նսեմացաւ ու կո- բաւ այդ դժբաղդ ցոյցի ազդեցութեան դիմաց... Ջահնկիւլեանի(11), Գրիգոր Լիթնեանի եւ ատոնց նը- ման ուրիշ անկեղծ ուժեր, որ Դաշնակցութեան յարե- լու վերջնական միտումներ ունէին, պաղեցան՝ այդ ցոյցի բացասական ազդեցութեան տակ: «Մարտական»- ներու(8) ձեռքը համարեա՛ միակ էական գէնքը մեր դէմ՝ այդ եղած է:

Ե) Ժողովուրդի համակրութիւնը շահիլ.— Այս կէ- տի վրայ համարեա՛ երբեք ուշադրութիւն չի դարձուի մեր մէջ: Ամէնքը կը կարծեն, որ միայն գործով կրնանք ժողովուրդի համակրութիւնը շահիլ: Ո՛չ — երբեմն անգործ մնալով աւելի կը շահինք, քան գործելով հակա-

ուակ ժողովրդի ձգտման ու շահերուն: Ժողովրդի պահանջն է «Յայցելու ետ կենալ»: Այդ ժողովրդի համար է մեր աշխատանքը, անոր մէջ ծնող ու աճող կարծիքներուն լսելու պարտ ենք, եթէ ոչ միակ կը մնանք... Ժողովուրդի պահանջն է այսօր՝ «Միութիւն յեղափոխականաց մէջ»: պարտաւոր ենք լսելու, ձգտելով միայն միութիւնը ոչ թուլութիւն, այլ ուժի աղբիւր ընելու: Ժողովուրդի համակրութիւնը վայելելու համար պէտք է մենք ջերմ յողովուրդները գրեմք միութեան մասին, համակրանք լի, միայն միշտ ցուցնելով, որ ամէն պատահածի հետ միանալը ձեռնտու չէ, քայքայում եւ ո՛չ ոյժ կը ծնեցնէ: Այս կէտին մէջ կոմիտէս հարկ կը համարէ նկատել, որ «Գրոշակ»ի Խմբագրութիւնը չկրցաւ ըմբռնել ժողովուրդի ձգտումը եւ չկրցաւ հակառակորդ դիմակաւորներու ու բացասական ուժերու գէնքը խելի ձեռքերէն եւ նոյն գէնքն անոնց դէմ դարձնել:

Ժողովրդի, մանաւանդ բարձր դասակարգի (հարուստներու) համակրութիւնը շահելու համար, բռնի ստակ պահանջելու սովորութիւնը դադարեցնելու է. այդ մենք կը զգանք: Բայց դադարեցնելով ալ ստակ ճարել չենք կրնար: Ի՞նչ ընելու է, ի՞նչ դիրք բռնելու է. ըստակի համար մարդ սպաննելու է, թէ ոչ: Այս հարցը կը գնենք Ընդհ. Ժողովի քննութեան, թողնելով մեր պատուիրակին մանրամասն պարզելու մեր ունեցած գէտքերն ու տատանումները:

2) Կանոնագիր. — Ներքին կանոնագրի մը պակասութիւնը խիստ կը զգացուի թէ՛ Թուրքիոյ, թէ՛ արտասահմանի կոմիտէներուն մէջ: Թողնել, որ ամէն կոմիտէ իր տեղի համար որոշէ՛ խիստ անյարիր է, որովհետեւ մէկը սար կը տանի, միւսը ձոր: Գէթ անհրաժեշտ է մեր ծրագրի մէջ աւելի որոշ կերպով սահմանաւորել կոմիտէներու իրար հետ ունեցած յարաբերութիւնը, Կեդրոնական Կոմիտէներու եւ ենթակոմիտէներուն, կոմիտէներուն եւ Բիւրոներուն, Խմբագրութիւնը եւ արտասահմանի կոմիտէներունը եւ այլն:

3) Անհոգութիւն. — Յաճախ դուրսի կոմիտէները ճշմունտ անդամները չեն աշխատիր բաւարարութիւններ տալ, զանազան դիւրութիւնները ստեղծել Տանկահայաստանի մէջ եղած գործիչներուն: Կը խընդրուի Ընդհ. Ժողովէն այս կէտի մասին գրել բոլոր մասնաճիւղերուն:

4) Կարգապահութեան բացակայութիւնը. — Այս բանը խիստ կը զգացուի մեր մէջ: Թղթակցութեան վերաբերմամբ անհոգութիւն, ուզուած բացատրութեանց, տեղեկութեանց կամ նիւթերու վերաբերմամբ անհոգութիւն. նոյնիսկ Ընդհ. Ժողովի որոշումներու արհամարհում, ինչպէս երեւաց Պոլսոյ վերջին ցոյցի ատեն. կատարուեցաւ, առանց մէկու մը խորհուրդ հարցնելու, այն ինչ հարցը խիստ ծանրակշիռ եւ ընդ-

հանուր կուսակցութեան բախտը որոշող բնակորութիւն ունէր: Կը խնդրուի աւելի պարզօրէն որոշել, թէ ի՞նչ ձեռնարկներ ինքնազուլուս եւ ի՞նչ՝ խորհրդակցութեամբ պէտք է ընել:

Թ) Դաշնակցութեան դրամական ուժերն արդեօք մէկ տե՞ղ մը կը կեդրոնանան, թէ ապակեդրոնացած են. այս հարցը մուրհն է ծրագրի մէջ, թէեւ ամենագործնական խնդիրն է:

Ժ) Աչքի առաջ ունենալով այս կողմերու եւ առհասարակ ներքին դաւաճներու մէջ տիրող մտաւոր ուժերու չափազանց պակասութիւնը, կոմիտէս կ'առաջարկէ յարգելի Ժողովիդ ազդու կոչ մը ընել հայ երիտասարդութեան, հրաւիրել դէպի աւելի անձնազոհ գործունէութիւն եւ ո՛չ միայն պղատոնական սէր ու քիչ մ'ալ դրամ. — Յոյս ունինք, որ ամբողջ Դաշնակցութեան կողմէն տրուած այդպիսի կոչ մը կրնայ գէթ քանի մը տասնեակ նոր ուժեր քաշել դէպի ներս, դէպի արեան դաշտը:



Ոսկեհանքի Կոմիտէս վճուեց իբր լիազոր պատգամաւոր զրկել Հ.Յ.Դաշնակցութեան 1898 թուի Ընդհ. Ժողովին՝ իր մէկ անդամը — Բարան(4), որուն կը տրուի իրաւունք ներկայացնելու սոյն տեղեկագիրը, պաշտպանելու հարցերը եւ բերանացի յաւելումներ ընելու:

1898 թ. Մարտ 21/2 Ապրիլ, Ոսկեհանք.

ՐԱՐԱ ՋԱՐՆՆ ԿԱՐԹԻՆ ԻՂՈՒՄԴ

- (1) Մարթիկ Մարտան (տե՛ս ՆՈՒԹԵՐ, Ա. հատր, էջ 6-118):
- (2) Էդուարդի մտիմ (Միքտա Պայանեմ, ժամօք մտու Սիւսի ամուսնով) տե՛ս մեր շնորհ մը ճշգրտմանը, ՆՈՒԹԵՐ, Ա. հատր, էջ 280:
- (3) Վսեմ, որ 1897էն սկսեալ արտասահմանի մէջ գործած է Իզմիր, Ազեմսեմաքիս եւ ժընեւ, ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր ժողովներուն մասնակցած նիկոյ Մարտիկները:
- (4) Բարա կամ Բարայեմ՝ Գաբրիէլ համակ է:
- (5) Շրջան (կուսակցական):
- (6) Ջարեհի մտիմ եւ տե՛ս Ա. հատր, էջ 281:
- (7) Բացայայտ է, որ կ'ակնարկուի Ջէյրաբէմ:
- (8) «Մարտ» քերթի կողմակիցներուն, այսինքն նոր կամ վերականգնելու հնչակեաններուն տրուած անուն:
- (9) Տէրսիմ:
- (10) Այդ անունով կուսակցական շրջան ժամօք չէ մեզի: Արդեօք Լեւոնապարիմ (Կիլիկիոյ) կ'ակնարկուի. կամ արդեօք Բարաբազակիմ (Սասուն):
- (11) Կ'ակնարկուի հնչակեան Յարութիմ ձափկիւմանի, Գուս Գափուի ցայի գլխաւոր հերոսը:

Բ.— «ԿԱՄՔ»Ի ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆՈՒԹԵՐ

1) ՄԱՐԹԻՆ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ «ԿԱՄՔ»Ի ԺՈՂՈՎԻՆ

Հ. Յ. Դ. Կամիլը ներկայացնող Մարմնի Համագումար-Ժողովին

15 Նոյեմբեր 1900

Աչքի առաջ ունենալով մեր ներկայ բարդ ու կաշկանդեալ հանգամանքները, եւ որ համագումար ժողովը իրաւունք պիտի ունենայ 98ի Ընդհ. Ժողովի ընդունուած գործունէութեան ծրագրին մէջ փոփոխութիւններ մտցնելու, յարմար նկատեցի անհատապէս ներկայացնել ժողովիդ ներկայ տեղեկագիրը:

Այսօր մեր բոլորիս ուշադրութիւնը կեդրոնանալով մասնաւորապէս Կիլիկիոյ վրայ, այն ինչ որ 98 Ընդհ. Ժողովին ալ գործունէութեան համար ընդունուած գլխաւոր վայրերէն մին է:

1.— Կիլիկիան իբրեւ յեղափոխական գործունէութեան համար ամենայարմար վայր՝ թէ՛ իր դիրքով եւ թէ՛ բնակիչներու տրամադրութեամբ:

2.— Այդ վայրի մէջ գործ սկսելու համար ցարդ Դաշնակցութեան ըրած փորձերու եւ անոնց անյաջողութեան պատճառները՝ գործիչներու Երկրի վիճակին ու պայմաններուն անտեղեկ լինելը ու սխալ ծրագրով ընթանալուն մէջ է: (Այս մասին աւելորդ չլինէր երբ ակնարկ մը դարձունենք Կիլիկիոյ եւ Եգիպտոսի կոմիտէներու այնքան ատենամի ի գործ դրած միջոցներէ անյաջողութեանց վրայ, եւ մասնաւորապէս տեղի ունեցած այն միջադէպի վրայ, ուր Կիլիկիոյ մէջ մեր ընկերների համախմբեալ մշակած ծրագրին խմբովին ներս անցնելու համար. որոնց այդ ծրագրերը չգործադրուելէ զատ խլուած այնքան դրամական ծախքերը ու գէնքերը ի զուրը զացին. միւս կողմէ, մեր միտքը պարզուելով մեր թշնամի կառավարութեան հանդէպ, վերջինս որքան աւելի սաստկացուց արդէն ձեռք առած միջոցները Երկրի ու մանաւանդ նաւահանգիստներու մէջ)(1):

3.— Ընդհ. Ժողովէն յետոյ, Եգիպտոսի մէջ Պատասխանատու Մարմնի հետ երկար խօսած ու պաշտպանած եմ մեր այն ծրագրերը, որ իմ Ոսկեհանք եղած ատեն արծարծուած էր մեր եւ Կարմիր Բերդի կոմիտէի միջեւ, հետեւեալ կերպով.

Նկատելով որ վերջին պատասխանութիւններէն ի վեր, Թուրք կառավարութիւնը մեծ խտտութիւններ ձեռք առած է կիլիկիան նաւահանգիստներու մէջ եւ այսպիսով ուղղակի նաւահանգիստներէն ներս մտնող մեր գործիչներու դէմ ահապահ վտանգներ կան, ու միւս կողմէ՝ տեղացի ժողովուրդն ալ հնչակեաններու խաբարայու-

թիւններէն չափազանց կասկածաւ եւ զգուշաւոր դարձած, վտանգութիւն չի ցուցնէր անմիջապէս ներս մտնող գործիչներուն, պէտք է գործունէութեան ծրագրերը փոխել. նաւահանգիստներին միայն կասկածէ զերծ տեղացիները մտցնելու աշխատելով, գլխաւոր ոյժը տալ ցամաքային ճանապարհին, ուր հաղորդակցութիւնները անհամեմատ աւելի դիւրին են ու կասկածէ զերծ:

Մեզ համար համոզիչ փաստ պէտք է լինի ցարդ Կիլիկիոյ եւ Եգիպտոսի կոմիտէներուն ի գործ դրած միջոցների անյաջողութիւնը, որոնք բացի նամակադրութեան յարաբերութենէ ուրիշ դրական յաջողութիւն մը չունեցան. իսկ այլ միջոցներով նաւահանգիստէ ներս մտնող մեր ընկերներուն գործի յարատեւումը կարճ եղաւ. ուստի մեզ համար ամենապահանջով միջոցը ցամաքային ճանապարհն է:

Ա.— Ոսկեհանքի դիրքը իր շրջականերովը մեծ յարմարութիւն ունի ցամաքային ճանապարհը բանալու, որը խաղ(աղ) վիճակի մէջ պահելով, պէտք է հոն մտցնել կարող ընկերներ ու դրամական ոյժ(2):

Բ.— Ոսկեհանք-Կարմիր Բերդի(3) դիմը երկընցրեւ մինչեւ Կեսարիա, ու այս վերջինիս մէջ իր շրջականերովը հիմնել հաստատուն ու զօրաւոր կոմիտէներ, որը իր դիրքով շատ մեծ դիւրութիւններ ունի հաղորդակցելու Կիլիկիոյ հետ. միւս կողմէ Կեսարիան իր բազմաթիւ զինավարժ ու աշխոյժ հայ զինուորով կրնայ մեծ օգնութիւն հասցնել ապագայ Կիլիկիոյ պայտամութեան միջոցին թէ՛ պաշտպանողական եւ թէ՛ յարձակողական ոյժերով:

Գ.— Կեսարիան լինելով առեւտրական կեդրոն գէյթուցիներու, հաճընիներու, մարաշիներու, կիլիկիցիներու, հոն իր մէջ երթեկողներ անպակաս են շարունակ. ուրեմն, երբ մենք կարենանք Կեսարիոյ մէջ հիմնել լաւ կազմակերպութիւն մը, այն ատեն կրնայ շատ շուտ ծաւալ ստանալ վերոյիշեալ տեղերու մէջ եւս. ու այն տեղից տեղացիներու տարագով փոխադրել մարդիկ աւելի ներսի խորերը:

Վերջերս բնիկ կեսարացի ընկերով մը անձնապէս նամակներ ստանալովս, կը տեղեկանամ որ տեղացի երիտասարդութիւնը ինքնաբերաբար խանդավառութեամբ կը կազմակերպուին ու գէնքեր կը գնեն. ինչպէս նաեւ տեղացի վաճառականները օրից օր իրենց անկումը նկատելով, մեծ տրամադրելի վիճակի մէջ կը գտնուին դէպի յեղափոխական գործը. ուրեմն, ըսել է որ այնտեղի հողը ինքնին պատրաստ է ու տրամադրելի ոյժեր շատ են հոն. մեզ կը մնայ միայն հոն կարող ձեռքեր մտցնել, որ կարենան առաջադրած նպատակով գործածել այդ ոյժերը:

Գործը լուս հողի վրայ դնելու համար, պէտք է ձեռնհաս ընկերներով նախ ամրացնել Ոսկեհանքի ներկայ ամուլ վիճակը, ուրկից պէտք է ճիւղաւորուի ու հասնի մինչեւ հոն՝ Կեսարիա. Ոսկեհանքէն մինչեւ Կարմիր Բերդ ցամաքային միջոցներ շատ կան. Երզրատէն մինչեւ առաջին տեղը ամէն դարնան հայ մշակներ կուգան այգիներու եւ արօտներու մէջ աշխատելու, ու աշնան ատենները նորից ցամաքային ճանապարհով եւ առանց անցադրի իրենց տեղերը կը վերադառնան. առնոք կը հանդիպին նաեւ Կարմիր Բերդ: Ես հոն՝ Ոսկեհանք եղած միջոցին այդ մարդկանցից մի խումբ կազմեցի ցամաքային կապ հաստատելու համար. այդ մարդիկը իրենց կեանքի ու բոլոր սրբութեան վրայ երդուելով կը վստահեցնեն ամէն ինչ, մարդ եւ այլն, լեռնային ճանապարհներով նպատակադրուած տեղը ապահովապէս հասցնելու. բայց այն ատեն մենք սպասողական դիրքի մէջ կը սպասէինք 98ի Ընդհանուր Ժողովի որոշումներին: Հիմա կ'այդպիսի խումբ կազմել նորից կարելի է հոն:

ՄԱՐԹԻՆ

(1) Մարթին կ'ակնարկէ Կիպրոս հաւաքուած դաշակցական գործիներու (Հրաչ, Մար, Վահագն Տարեւած, Միս-Շամէն եւն.) 1897ի ծրագրին (տեսնել Ազեմազարին) եւ Գանիբէի կամուտներու տեղեկագրերը Երկրագնդ Ընդհանուր Ժողովին, ծանօթագրութիւն քիւ 3):

(2) Եկամէի ժողովը ըստ երկուսրիս անոնս առած չէ Մարթին տեսնելու: Հրաչ շուտով պիտի հաստատուի Ոսկեհանք (Իգմիթ), այնուհետ գեղի կիսիկիս յարաբերութեամ եւ ձեռքափակմամ գիծեր հաստատուի համար: Հոն ալ պիտի ձեռքապալուէր 1902 Սեպտեմբերին:

(3) Մեզի անծանօթ կը մնայ Կարմիր-Բերդի վայրը: Արգիօֆ Խարթըրը (ծանօթ՝ Աւար-Աւեր եւ Լեռնասար տեղամասներով), քէ՛ պարագայէ Իգմիթի եւ Կեսարիայ միջեւ գտնուող այլ կէտ մը՝ Բամի Մարթին կը խօսի «Ոսկեհանք-Կարմիր Բերդի գիծը մինչեւ Կեսարիա երկնցնելու» մտայն:

2) ԱՐՇԱԿ ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ԿԱՄՔ»Ի ԺՈՂՈՎԻՆ

25 Մարտ 1901

Դաշակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնի Առաջին(1) Ժողովին

Ընկերներ,

Մտանց կը շնորհաւորեմ ձեր գումարումը: Այլ ժամանակն էր արդէն այդ քայլը ընելու:

Եթէ ճիշտ է թէ Դաշակցութիւնը իր վերջին 2 աստուան գործունէութեան մէջ աչքի զարնող յեղափոխական ձեռնարկ մը չկատարեց, ինչ որ չէր ալ ըստպատուէր, սակայն շատ մը պարագաներ Յար խորհրդակցութեան մը պէտքը հարկեցուցիչ կ'ընէին: Մեր պատաստողական ձեռնարկներու սիրահատանում զանգա-

ղութիւնը, արտասահմանեան փրփականախ նոր փուլը, եւրոպական քաղաքականութեան արդի կացութիւնը՝ հարաւափրիկեան եւ չինական խնդիրներու հետեւանքով, միւս յեղափոխական կուսակցութիւններու կրած փոփոխութիւնները եւայլն, ասոնք ամէնքը մէկէ աւելի պատճառներ էին Ընդհանուր Ժողովի գումարումը փութացնելու:

Եւ արդէն 1898ի Ընդհանուր Ժողովի որոշումով 1900ի աշնան գումարումելու էր ան. եւ այդ մարմինը(2) միայն ձեռնհասութիւն պիտի ունենար ինչ որ այդ բարդ, պատասխանատու խնդիրները ջնջելու եւ լուծում մը տալու անոնց:

Դաշակցութեան Կամքը Ներկայացնող Մարմինը չի կրնար անոր գործը կատարել այսօր. Թո՛ղ որ լրիւ կազմութեամբ չէ որ կը ներկայանայ (բացակայ են Շամիրի եւ Բարձրաւանդակի անդամները), օրինակամ պատճառն ալ կը պակսի ընդհանուր Ժողովի իրաւասութիւնը իւրացնելու (յօդ. 63)(3):

Ձեր գումարումը երկու տեսակէտով միայն արգարանալի կը գտնեմ. Ա) Ընդհանուր Ժողովի գումարման պատրաստութիւն տեսնելու. Բ) Ընդհանուր Ժողովին ներկայանալի առկայ խնդիրներու լուծում մը կարենալ զսնելու համար. Գ) Մինչեւ այդ Ժողովի գումարումը առժամաբար տնօրինութիւններ ընելու, գործերու ընթացքը չկասեցնելու համար:

Այդ երեք տեսակէտներով ալ քանի մը թելադրութիւններ ընել թոյլ պիտի տամ ինձի:

Ա) Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ

1) Ընդհանուր Ժողովը հրաւիրել կարելի եղածին չափ շուտ, եթէ կարելի է յառաջիկայ աշնանը, ամենէն շուտը:

2) Ինչ որ ալ ըլլայ, հրաւիրէն 6 ամիս առաջ չգումարել Ժողովը, որպէսզի երկրի բոլոր ձայնատու մարմինները կարենան մասնակցել Ժողովին, կամ մշակուած տեղեկագիր զրկել, կամ ժամանակ ունենան իրենց ձայնը ուրիշ ընկերով մը տալու:

3) Միջոցներ ձեռք առնել որ ոչ միայն պատգամատարներ գան ներսէն, այլեւ ձեռնհաս գործիչներ, որպէսզի երկրին վիճակն ու արամադրութիւնը բարձրագոյն պատկերանայ Ընդհանուր Ժողովին առջեւ:

4) Ձեր ամենէն գնահատելի աշխատութիւններէն մէկը պիտի ըլլայ պատրաստել հարցարան մը, որ շօշափէ ըլլար այն խնդիրները, որոնք անխուսափելի կերպով պիտի ներկայանան յառաջիկայ Ընդհանուր Ժողովին առջեւ: Մանրամասնելու է ամէն խնդիր (մեր յեղափոխական ուժերը, քանի՞ կոմիտէ, քանի՞ անդամ, որքա՞ն զէնք. — հայ բնակչութիւնը որքա՞ն մարդ կըրնայ հանել կուռի ատեն, հրացան բռնելու ընդունակ ու վարժ. — Ի՞նչ արամադրութիւն ունի թուրք կառավարութիւնը. զինուորական ի՞նչ ուժ ունի իւրաքանչիւր

չրջանի մէջ. — մեզի դրացի ցեղերը (քիւրտ, ասորի եւ այլն) ի՞նչ դիրք բռնած են մեզի նկատմամբ, ի՞նչ պայմաններու տակ կրնան գործակցել, որքա՞ն ուժ ունին. — զէնքի փոխադրութեան դիւրութիւններ կա՞ն, կամ տեղն ու տեղը զէնք դնելու կամ ձեռք ձգելու, եւայլն, եւայլն):

Խնամով պատրաստելու է այս հարցարանը. շատ բան կարուած է անկէ: Թէ մեր ներքին ընկերները կը հարկադրուին քիչ մը խորէն ուսումնասիրելու մեր գործը եւ թէ, ասոր շնորհիւ, զինուած կրնան դալ կամ զրկել իրենց տեղեկագրերը, եւ կարող իրենց պահանջները քալեցնելու: Եւս աւելի անհրաժեշտ է այդ Հայաստանէն դուրս գտնուող ընկերներու համար, որոնք ամէն պարագայի մէջ, ցաւ է ըսել, մեծամասնութիւն պիտի կազմեն Ընդհանուր Ժողովին մէջ:

5) Ձեր պարտականութիւնն է նմանապէս խորհրդակցել ու որոշել բոլոր այն խնդիրներու մասին, որոնք նախատեսուած են կանոնադրութեան յօդ. 68ով, ծանօթ. բ., [եւ յօդ.] 69, 70, 71, 72: (Եզրպատուին ձայն պիտի տրուի՝ յառաջիկայ Ժողովին, Խարթըրի շրջանը պիտի է հրաւիրել անպատճառ, եւայլն, եւայլն):

Ընդհանուր Ժողովի հրաւիրին մէջ կրկնելու ու բացատրելու է կանոնադրութեան երկու զլխաւոր կէտերը. — 1) յօդ. 75ը՝ պատգամաւոր[ական?] գումարելիէ առաջ. Ռայոնական Ժողով գումարելու մասին. 2) յօդ. 77ը՝ փոքրամասնութեան կարծիքները բերելու մասին:

Բ) ԱՌԿԱՍ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

1) Յ. Շ. (Մխիթար) ստիպել որ վերջնական պատասխան մը տայ իր ձեռնարկած բանակցութիւններուն(4): Այդ խնդիրը վերջնապէս լմնցնելու է: «Մարտի վերջին թիւն (28) տեսաք արդէն թէ պատուոյ ատենին խնդկատակութիւնը վերստին սկսելու միտք ունին. ուստի փութացնելու է վերջ մը դնել Մխիթարի ձեռնարկին:

Արդէն ես յոյս մը չունիմ որ արդիւնաւոր հետեւածք մը ունենայ. փորձը ցոյց տուաւ որ «մարտեան» ներու նպատակը գոյութիւնն զանապառնէ է որեւէ ազնիւ, մաքուր նպատակ կը պակսի անոնց. լուսագոյն գործը պիտի ըլլար այդ Արշակաւանը քանդել: Եւ այդ ալ հնարաւոր է, եթէ պատշաճ ուշադրութիւն դարձրենք հետեւեալ երկրորդ կէտին:

2) Բանակցութիւններ սկսել միութեան կամ համերաշխութեան մասին Հին Հնչակեաններուն հետ:

ա) Որքան ալ որ սկար կարծուին ասոնք, բայց զոյութիւն ունին Կովկասի մէջ, Կիլիկիոյ մէջ եւ Հայաստանի քանի մը կէտերու մէջ:

բ) Հնչակեան անունը ունին. բարոյական ժառանգութիւն մըն է այդ:

գ) Արտասահմանի, գէթ Ամերիկայի հնչակեանները բողոքատարք զազափարական մարդիկ են, յեղափո-

խական են եւ մաքուր տարրեր են: Չստուածներն են ասոնք: Այստեղիները շատ լաւ յարաբերութեան մէջ են մերիններու հետ եւ առիթի մը կը սպասեն մեզի հետ միասին գործելու:

դ) Մեր միութիւնը եթէ նիւթական բան մը չաւելցընէ, չբերէ մեզի (եւ սակայն Կիլիկիոյ համար կրնային անոնք բաւական ընկերներ տալ մեզի), բարոյական անգին կարեւորութիւն պիտի ունենայ մեզի համար, Ժողովուրդին համակրութիւնը պիտի բերէ յեղափոխականներուն: 1898ի հակազդեցութիւնը թուլնալու վրայ է հիմա. ամբոխը կամաց-կամաց կը մօտենայ յեղափոխութեան՝ զազափարին. միութիւնը երկու այդ մարմիններու միջեւ մերձեցումը աւելի պիտի տրապանցնէ:

ե) Հին Հնչակեաններու հետ միութիւնը վերջնական ջախջախիչ հարուածը պիտի տայ «Մարտեան» ներուն:

Ծանօթ. — կը լսեմ արդէն, հնչակեաններէն լսեցի, թէ Ոսկանապատի մէջ բանակցութիւններ սկսուած են եղեր Մելիքի միջոցով: Հոս մեծ յոյսեր կը տածեն այդ միութեան վրայ:

Միութեան պայմաններու վրայ հոս տեղը չէ երկար խօսիլ, եւ թերեւս աւելորդ ալ է, քանի որ Մխիթարի բանակցութիւններու ատեն կարծիքները բաւական որոշապէս յայտնուեցան: Հնչակեաններուն դաւով, ես սաշափը կարեւոր կը դատեմ, որ նազարէկի եւ իր կնոջ հետացումը պաշտօնապէս յայտարարուի:

3) «Փրօ Արմենիայ»ի բացը գոցելու համար մասնաւոր պիւտեմէ մը բանալ: Ամէն միջոցով աշխատելու ենք պահել այդ թերթը, որ պիտի կրնայ շատ մեծ ծառայութիւններ մատուցանել մեր դատին:

Ջարդերու առջեւ աննկէ զատ, մեր յեղափոխական գործունէութիւնը պաշտպանելու եւ անոր նեցուկ մը դառնալու պէտք է սահմանել ան:

Ասոր համար անհրաժեշտ է որ Փարիզի մէջ մնալուն մարմին մը ունենանք, որպէսզի զանազան Զօպան- [եան] ներու շնորհիւ գործին ուղղութիւնը չփոխուի:

Ես կ'առաջարկեմ որ Արեւմտեան Բիւրոյի ընկերներէն մէկը Փարիզ հաստատուի, արդէն հոն գտնուող ուսանող-ընկերներու աջակցութեամբ աշխատելու եւ մինչեւ Ընդհանուր Ժողովը պարզելու համար հետեւեալ երկու կէտերը.

1) Որքա՞ն օգտակար կրնայ ըլլալ Արեւմտեան Բիւրոյի փոխադրութիւնը Փարիզ, «Երօշակ»ը եւ խմբագիր անդամ մը միայն թողնելով ժընեւ:

2) Ի՞նչ կարծիքներ կը տիրեն մեր խնդրի մասին Ֆրանսայի պետական շրջանակներու մէջ (անշուշտ մեզի համակիր Փ. Արմենիաներու միջոցով) եւ ի՞նչ խորհուրդներ կրնան տալ մեր գործունէութեան մասին յափնիստութեամ համակիր տարրերը (Quillard, Pressensac, Jaurès, Cipriani եւայլն):

Գ) ԱՌԺԱՄԵԱՅ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Մեր նախապատրաստական գործերը շատ թոյլ կ'երթան, եւ դժուար թէ ատոր յանցանքը մեր դրամական միջոցներու սակաւութեան կամ ներքին գործիչ-ընկերներու մահուան վերադրելի է: Գործին հանգամանքէն է: Սակայն, պէտք է խոստովանիլ, որ միւս կողմէն, իրերու կացութիւնը կը վատթարանայ երկրաչափական համեմատութեամբ: Երկար սպասել, երկար պատրաստել հմարաւոր չէ, մարդկային համբերութեան սահմանէն դուրս է, եւ թերեւ շատ խելացի բան ալ չէ:

Մենք անհրաժեշտաբար պէտք ունինք անակնկալ պարագաներու, անոնցմէ օգտուելու համար: Սուլթանին մահը, ներքին որեւէ ապստամբութիւն մը (մակեդոնական, արաբական եւայլն) նպաստաւոր առիթ մը կրնայ ըլլալ մեր ձայնը լսելի ընելու: Վառօղի տակաւ մը կամ աւելի ճիշդ ուժանակի ուժմբեր պէտք են՝ խուլ ականջները ծակելու համար: Մեր ուժը կրնայ Պոլիս պայթիլ, եւ հոն պայթելու է: Ուստի ես կ'առաջարկեմ որ Պոլիս պատրաստութեան մեծ ուժ տրուի, արուած վայրկեանին պատրաստ գտնուելու եւ բան մը, ու խոշոր բան մը ընել կարենալու համար(5):

2) Պատրաստութեամբ զբաղուած, մենք մոռցանք իմֆնապաշտպանութեան խնդիրը (կամ աւելի ճիշտ զանց ըրինք): Եւ սակայն 1898ի այն տեսութիւնը թէ ջարդերը ալ չեն նորոգուիր ջուրն ինկած է հիմա. Սասունի նոր ջարդերն ալ տեսանք: Հետեւաբար, խորհուրու ենք՝ տեղ մը բան մը ըրած ատեն, մնացած տեղերը սպանդանոցի մատնել չտանք:

Մուշի կողմերը կամ Վան ի՞նչ կատարուած է ցարդ, որքա՞ն յաջողութեամբ չեմ գիտեր ստուգիլ. ուստի կը հրատարիմ թելադրութիւն մը ընելէ: Թէեւ հոս հասած լուրերը իրաւունք կուտան ենթադրելու, թէ այդ կողմերու գիւղացին սթափած է, սկսած է գինուիլ, ինքնապաշտպանութեան ուրիշ միջոցներ խորհիլ, յեղափոխականը փնտտել ու սիրել, — ինչ որ կրնայ իրաւունք տալ կարծելու թէ ջանքերը ապարդիւն եղած չեն: Բայց այդ ամէնը պիտի ճշդուի յառաջիկայ ժողովին եւ դուք նոր կարգադրութեան դժուար թէ կարենաք ձեռնարկել Տարօն-Վասպուրական շրջանին համար:

Իմ առաջարկս է Տերսիմի խնդիրը ձեռք առնել: Հոս հաւաքուած տեղեկութիւնները (Չմշկածաղցիներէ) համոզեցին զիս թէ այդ չիւրտերուն հետ կարելի է հաստատուն գործ մը սկսիլ, որ երկու գլխաւոր օգուտ կըրնայ ունենալ. 1) նուազագոյնը՝ հայերու դաշնակից Տերսիմի մը գոյութիւնը եւ յայտնութիւնը կրնայ արգիւել ջարդերը Մեծ Հայքի արեւմտեան մասերու մէջ եւ իր անդրադարձ կարեւորութիւնը ունենալ նաեւ արեւմտեան մասերուն մէջ. 2) առաւելագոյնը՝ բացի ապստամբական շարժումի ատեն գործակցութենէ մը, որ հետուար խնդիր մըն է, Տերսիմը կրնայ սքանչելի շտեմարան մը, կեդրոնավայր մը, թաքսոց մը ըլլալ

յեղափոխական ամենէն հոկայ գործերու եւ ձեռնարկներու համար:

Տերսիմը թիկունքի ամրոց մըն է նաեւ Կիլիկիոյ գործերուն համար:

Այս նկատումներն էին, որ ստիպեցին զիս Ամերիկայի ընկերներու ուշը հոն դարձնելու, երբ դժգոհութիւններ եւայլն սկսան լսուիլ Կիլիկիոյ Կեդր. Կոմիտէի գործունէութեան դէմ, կամ աւելի ճիշտ Սեպուհի(6) անձնական գործունէութեան դէմ (եկողներէն լսած էին իրենք, թէ որոնք կամ քանի հոգի կը գտնուէին Կեդրոնական Կոմիտէի անունին տակ):

Տերսիմը ընդունուեցաւ անցեալ Ընդհանուր Ժողովին ատեն, իբր ուսումնասիրելի վայր մը(7): Եւ այդ հիման վրայ ալ, Ամերիկայի Պատգամաւորական Ժողովը ընդունեց նպատակ այդ գործին, մանաւանդ որ այստեղի անդամներու մեծամասնութիւնը այդ շրջանին կը պատկանին (Պարբերդ-Տերսիմ):

Այդ կէտը ընդունելու ուրիշ պատճառ մըն ալ Պարբերդի պարպուելուն առջեւն առնելու բաղձանքն է. յեղափոխական կազմակերպութեան զօրանալը այդ կողմերը՝ սիրտ ու հոգի կուտայ այդ դաւառներուն:

Պէտք է ձեռք տալ Ամերիկայի կոմիտէներուն՝ այդ գործը պատրաստելու: Չեզմէ դրական աջակցութիւն չի պահանջուիր: Ամերիկացիք աւելի մեծ գումարներ պիտի կրնան տալ, երբ իրենց երկրին եւ իրենց հաւատացած գործին համար է: Խնդիրը կը մնայ բարոյական աջակցութեան մէջ, իրաւական խճրճանքներ չհանելու մէջ (Արեւմտեան Բիւրոյի եւ Սեպուհի վերջին նամակները կը ցուցնէին թէ սխալ հասկցած են խնդիրը. Խարբերդ բառէն առաջ եկած է թիւրիմացութիւնը. բնական է որ այդ կէտը պիտի ընտրուէր, քանի որ այդ շրջանին ամենէն զօրաւոր կէտն է այդ. Պարբերդի տեղական գործերուն սէնթ մը չպիտի տրուի: Տերսիմի համար ալ՝ այն ատեն, երբ գործիչը զացած, ուսումնասիրած եւ հաւաստիքներ տուած ըլլայ):

3) Գալով Կիլիկիոյ գործերուն ասոնք քիչ մը հարթուած կ'երեւին ինծի հիմա, շնորհիւ այն համաձայնութեան, որ սկսած է տիրել Ոսկեհանքի եւ Աղբառան-դերոյ միջեւ: Պէտք է վաւերացնել ու վերջնական հանգամանք տալ իրերու բերումով առաջ եկած, բայց 2 տարիէ ի վեր պահանջուած այդ համաձայնութեան: Ոսկեհանքը կարծեմ երկարապատում տեղեկագիրներով ապացուցած էր իր ունեցած միջոցներուն առաւելութիւնները, ուստի ես զանց կ'ընեմ կրկնել, ջերմապէս յանձնարարելով ձեզի ի նկատ առնել ատոնք:

Անմիջական խնդիր մը ըլլալու է, ըստ իս, Էտ[ուար]ը ընտրել իբր անդամ Պատասխանատու Մարմինն եւ այդպիսով թոյլ տալ որ Ոսկեհանքն ալ հաւաստի չափով աջակցի Կիլիկիոյ գործերուն, ու սկսուածները չփճանան ու զարգանան:

Էտ[ուար]ը իր տակումութեամբ, իր յեղափոխականի անցեալով, իր հաստատակամ բնաւորութեամբ

ամէն կերպով յանձնարարելի է այդ գործին համար(8): Գալով դրամ հանգանակելու խնդրին սպառնալիքի տակ՝ ինչ որ օրուան խնդիրն է եղած հիմա, մանաւանդ Կովկասի մէջ, սկզբունքով հաւան ըլլալով հանդերձ, կը թողում Կովկասի արդի վիճակին ծանօթներու ձեռնհասութեանը:

Վասնզանցիկ ու անփոխարինելի կորուստներով շրջապատուած է այդ խնդիրը: Ես կը վախնամ որ Կովկաս ունեցածնիս ալ վրայ տանք, երթայ. ընկերները բռնուին, աչքի զարնող ընկերներ վարչական եղանակով Կովկասէն վտարուին, եւ բնակչութիւնը ա՛հ ու սարսափի տակ մինչեւ հիմա տուած կողպէն ալ խնայէ: Աս կ'ըսեմ, քիչ մը մօտէն ճանչնալու՝ կովկասեան կազմակերպութեան տէրվիչական վիճակը:

Արդեօք խաղաղ միջոցները սպառա՞ծ են: Մեր վստահելի եւ ծանօթ ընկերները պատա՞ծ են Կովկասի եւ Անդրկովկասի մէջ դրամ հաւաքելու համար: Ես կը կարծեմ որ եթէ Բորիսը, Էլլէնը(9) եւ ուրիշներ, ճամբորդութիւն մը ընէին, շատ աւելի նուազ վտանգի կ'ենթարկուէին, քան ինչ որ տեղորոշները պիտի առաջ բերեն, եւ թերեւ շատ աւելի գումար քաշեն հանն քան սովորական տարիները ստացուած է: Կարծեմ կովկասցիք այդ միջոցները գործ դրած չեն իր ընդարձակ չափովը: Բաւականացած են նամակի կտոր մը գրելով, եւ ամէն բան ձգելով տեղացիներուն վրայ: Բացառութիւն մը եղած է Ոսկեհանքի տեղեկատուութեամբ:

Եւ սակայն այդ ճամբորդութիւններն են որ անհրաժեշտ են, ժողովուրդը ոգեւորելու, լուր տալու, տեղեկացնելու անցած-դարձածի մասին, թիւրիմացութիւնները եւ սխալները ճշդելու, փարատելու համար: Եթէ հոս, մամուլի ազատ երկրին մէջ, պէտք կայ անձամբ տեսակցութիւններու, ո՛րը մնաց Կովկասի խուլ անկիւնները, ուր «Իրօջակ» տարին մէկ կամ երկու անգամ թերեւս մտնէ, ան ալ ոչ կանոնաւորութեամբ, կարծիք մը կազմել կարենալու համար:

Ես գոնէ այդ վերջին միջոցը կ'առաջարկէի, — վրաստահելի, կարող ընկերներու խմբեր ցրուել գաւառները: Երբ չկայ քաղաքական գործ մը, խօսքի փրփոկականտան անոր տեղը լեցնելու է:

Իսկ եթէ այս դիտողութիւնները տկար սեպուին ժողովիդ մեծամասնութեան համար եւ որոշէք անպատճառ բռնի եւ սպառնալիքով հանդանակութեան ձեռնարկել, կ'առաջարկէի որ.

- 1) Որոշ շրջանի մը համար միայն թոյլ տաք առաջին անգամ, փորձի համար:
- 2) Պահանջէք որ խիստ կարգապահ եւ անձուէր, փորձուած տարրերէ կազմուի գործադիր խմբակը:
- 3) Այդ գործը բոլորովին բաժնել տեղական կոմիտէի իրաւաստութեան:

4) Միջոցներ ձեռք առնել որ ո՛րեւէ թղթի կտորով եւայլն չմատնուի Դաշնակցութեան անունը այդ գործին մէջ:

Յաջողութիւն ձեռ յառաջիկայ գործին:

Համարներով
Ձերդ՝ ՎԱՀԱԳ

(1) Առաջիկայ, բայց միայն եզրու Պաշտպանութեան կամքը ներկայացնող Մարմնի Ֆիլիպի Ժողովը (1901 Ապրիլ): Հ. Յ. Դաշնակցութեամբ Երբորդ Ընդհանուր Ժողովէն սկսեալ՝ «Կամֆ» բնայբով եւ լիազօրութիւններով գումարուող ժողովները կոչուեցան Պաշտպանութեան Խորհուրդ:

2) «Մարմին» բառով այստեղ Ընդհանուր Ժողովը կը կոչուի:

(3) Այդպէս ալ պիտի եզրակացնէր «Կամֆ» ժողովը. տե՛ս էջ 96ի թիւ 2ր. շրջաբերակումը, 4րդ կէտ:

(4) Կակնարկուի Յովհաննէս Շահնազարի (Ժամօր՝ «Չէրֆ» եւ «Միթրաք» ծածկանուններով) միջոցով՝ միւսեան կամ համարաշէ գործակցութեան ի խնդիր վերստին կենդանացնելու յօսակցութիւնները՝ Արեւմտեան Բիւրոյին եւ Հնչակեան կեդր. վարչութեան միջեւ, 1900էն սկսեալ:

(5) Այդ «խոշոր բաժն» պիտի ըլլար Սուլթանի մտափորձի օրագիրը, որու միտքը 1895-96էն ի վեր կար արդէն զաշտակցական գիւղավարներու մօտ, բայց որուն իրականացումը կայտուած պիտի ըլլար, «Կամֆ» ժողովէն ետ, Փոքրիկի գործին ունեւալի յաջողութեան: Գործեական աշխատանքները պիտի սկսէին Երբորդ Ընդհանուր Ժողովէն ետ (1904), Յուլիան Մարմնի հալածանքներէ ետ:

(6) Պամֆայի Հրաչի (Հայկ Թիքեաճեան):

(7) Տե՛ս այս մասին Երբորդ Ընդհանուր Ժողովի աստեղագրութիւնը, մերկայ հատար, էջ 59:

(8) Էտուարի (Էդուարդ) կամ Սիսակի մտքին (Մարտտ Պաշտպան)՝ տե՛ս Նիթթիմու առաջին եւ մերկայ հատարները, յատկապէս Ոսկեհանքի 1898-1903 տեղեկագիրը, էջ 147-153:

(9) Մարտտ Խաչատուրեան եւ Քրիստոփոր Միքայէլեան:

3) ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՄՔԸ
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻ

Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներու համաձայնութեամբ, Հ.Յ.Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմնի Ժողովը տեղի ունեցաւ X քաղաքին մէջ(1):

Ժողովը բացուեցաւ 25 Մարտ/7 Ապրիլ 1901ին եւ ունեցաւ 16 նիստ(2). բոլոր որոշումները կայացան միաձայնութեամբ, առանց ջուլտարկութեան:

Ներկայ էին Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներու ներկայացուցիչները(3), Վիշապի Պատասխանատու Կեդր. Կոմիտէի երկու անդամները եւ Նոյն մարմնի մէջ մտած Արեւմտեան Բիւրոյի անդամը(4) (Երեքը մէկ

ձայնով) եւ Լեւոնավայրի Պատասխանատու Մարմնի մի անդամը(5) :

Բացակայ էր Բարձրաւանդակի Պատասխանատու Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը, թէ՛ նոյն մարմնի անդամներէն երեքին սպանուած եւ վտանգուած լինելուն եւ թէ մնացած մի անդամին Երկրէն հեռանալու անյարմարութիւններուն պատճառներով(6) : Իսկ Շամիրի Պատ. Կեդր. Կոմիտէն(7) անկազմ վիճակի մէջ գտնուելով՝ բնականաբար հրաւէր չէր ստացած :

Նախքան օրակարգի քննութեան ու վիճարանութեան սկսուելը, Ժողովին ներկայ եղող մարմինները բերանացի զեկուցումներ տուին 1898 թուի Ընդհ. Ժողովէն յետոյ կատարուած գործունէութեան մասին, ու ամփոփ համարատուութիւններով պարզեցին Դաշնակցութեան եւ առհասարակ Հայ Յեղափոխութեան գործունէութեան ընդհանուր վիճակը :

Յետոյ կարդացուեցան Ոսկեհանքի, Մովսիսի, Աւար-Աւերի(8) կոմիտէներու եւ Ամերիկայի Պատգամաւորական Ժողովի տեղեկագրերը, Ամերիկա գտնուող Արեւմտեան Բիւրոյի անդամ Վահագի(9) եւ արտասահմանեան մի քանի ընկերներու գրաւոր կարծիքները :

Համարատուութիւններն ու տեղեկագրերը ամենէն աւելի կը շեշտէին դրամական միջոցներու անձկութիւնը, որը անցեալի մէջ այդ չափով երեւան եկած չէ երբեք :

Ժողովը աւելորդ համարեց այդ զեկուցումներն ու տեղեկագրերը կցել ատենագրութեան, այլ որոշեց պահապանել Արեւմտեան Բիւրոյին :

1) Դ Ր Ա Մ Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Ր

Ա. — Հաշուետուութիւն. — Բացի Լեւոնավայրի ու Վիշապի Պատ. Կեդր. Կոմիտէներու եւ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցած հաշուետեաններէն, ոչ մի մարմնի կողմէ ազիւտակներու վերածուած կամ չվերածուած հաշիւներ չէին ուղարկուած : Ժողովը համարելով այս երեւոյթը մանաւանդ վերջին երկու տարիներուն տիրած ընդհանուր բէկեցիկի հետեւանքը, որով մեծ մասամբ կոմիտէներ կամ թուլացած են եւ կամ կազմալուծուած, կարելոր համարեց յիշեցնել բոլոր մարմիններուն՝ որ ջանան մօտ ապագային կազմակերպուել եւ Ընդհ. Ժողովին ընդունուած դրութեան համաձայն ներկայացնել իրենց հաշիւները՝ պատկանած Բիւրոններուն :

Բ. — Հանգանակութիւն եւ տեսար. — Մի կողմէ Դաշնակցութեան Ընդհ. Ժողովը աւելի հիմնական, լայն եւ ուժեղ գործունէութիւն էր գծած ու անոր համեմատ մարմիններու բախում կատարած՝ որոնք համեմատաբար շատ աւելի նիւթական միջոցներու կը կարօտէին քան անցեալի մէջ, միւս կողմէ քաղաքական եւ

այլ դժբախտ հանգամանքներու բերմամբ ժողովրդական ընդհանուր տրամադրութիւնը պակասած էր հայ յեղափոխական գործին նիւթապէս նպաստելուն մէջ : Ուստի ժողովը, ընդունելով հանդերձ թէ, մանաւանդ Մարուստանի(10) մէջ, պետական խտուութիւններ, ճնշումներ եւ հետեւաբար անձերու անխուսափելի դաժարութիւններ կարող են տեղի ունենալ, մի պարագայ որ կրնայ նոյնիսկ կազմակերպութիւնը գէթ մի ժամանակի համար անգործութեան դատապարտել Սարուստանի մէջ, բայց աչքի առաջ ունենալով անցեալի փորձառութիւնը, գործի ու ժամանակի խիստ պահանջները, եկաւ այն եզրակացութեան, որ այլեւս ժամանակն է ընդհանուր եւ կարելոր մի ժողովարարութեան դիմելու — ի հարկին չխուսափելով տեղորի միջոցին դիմելէ — որի արդիւնքը կարենայ բաւականութիւն տալ Ընդհանուր Ժողովի գծած սահմաններով Երկրի մէջ որոշ չափով յեղափոխական ձեռնարկներ յաջողանելու համար, հանգանակութեան հիմք ունենալով Արեւելեան Բիւրոյի կազմած նախահաշուի քանակը(11) :

Ի նկատի ունենալով զանազան պայմաններ, որոշուեցաւ ժողովարարութեան դիմումը եւ տեղորի կիրառութիւնը կատարել Վիշապի Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի անունով, եւ ատոր համար կազմել մի առանձին կազմակերպիչ-վարիչ մարմին, Դաշնակցութեան Կամբը ներկայացնող Մարմինն որոշուած անձնաւորութիւններէ : Այս վարիչ մարմինը ինք ընտրելու է իր ահաբեկիչ եւն. խմբերը, եւ ինք մշակելու եւ որոշելու է իր գործ ղեկիւք միջոցներն ու ձեւերը : Ժողովը սակայն կը յանձնարարէ հնարաւորութեան չափով սահմանափակ պահել տեղորի գործադրութիւնը եւ կատարել գլխաւորապէս անոնց վրայ, որոնք յայտնի են իրենց զգացումներով ու կեանքով իբրեւ հասարակութեան կողմէ արհամարհուածներ :

Գ. — Դաշնակցութեան տարբ. — Ժողովը, նկատելով որ, չնայած Ընդհ. Ժողովի վճռին՝ որով կազմակերպութեան բոլոր անդամները կը պարտաւորուին ամսական կամ տարեկան որոշ տուրք վճարել Դաշնակցութեան, շատ մը դաշնակցականներ եւ նոյնիսկ կոմիտէներ չեն կատարել իրենց այդ պարտականութիւնը, որոշեց յանձնարարել Բիւրոններուն՝ իրենց տրամադրելի միջոցներով գործադրութիւն տալ այդ տուրքին :

Դ. — Օրգանի տարբ. — Որոշուեցաւ առաջարկել Երկրէն դուրս գտնուող կոմիտէներուն, որ իրենց շքանակները Պատգ. Ժողովներուն ղեկն կազմակերպութեան օրգանի՝ «Երօշակ» տուրքի հարցը եւ տեղական պայմաններուն համաձայն կարգադրութիւն ընեն այդ մասին :

Իսկ այնպիսիներ, որոնք կազմակերպութեան չեն պատկանիր եւ չեն յանձնարարուած որեւէ մարմնի կողմէ, ատոնցմէ թերթի տուրք առնելու ձեւն ու քա-

նակը որոշուեցաւ թողուլ Արեւմտեան Բիւրոյի հայեցողութեան :

2) Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Է Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ա. — Ժողովականներու մի մասին կողմէ տրամադրութիւն յայտնուելով ԲՅՈՒՄ-ի հետեւի Լեւոն. Ժողովի գծած տակտիկը, ժողովս, համաձայն Ընդհ. Ժողովի արձանագրութեան 63րդ յօդուածին, ներկայիս պատերազմի կամ քաղաքական անակնկալ տաղանակի չնախատեսուած բացառիկ պարագաներու մէջ չըզտնուելով, իրաւունք չզգաց փոփոխութիւն մտցնելու Ընդհ. Ժողովի տակտիկի վճիռներուն մէջ :

Միայն թէ, աչքի առաջ ունենալով նիւթական ներկայ անձկութիւնը, որը մինչեւ հիմա ամենազխաւոր արգելիչ տարրերէն մին եղած է Ընդհ. Ժողովի վրձիռներու իրագործումին, որոշեց մինչեւ ընդհանուր ժողովարարութեան վերջաւորութիւնը՝ աշխատիլ գտնել եղած կապերը պահպանելու :

Բ. — Ամերիկայի Պատգամաւորական Ժողովը որոշած էր դրամական նպաստները յատկացնել Կիլիկիոյ գործին եւ Քարաթայոյի(12) ուսումնասիրութեան՝ Աւար-Աւերի(13) կոմիտէին միջոցաւ : Ժողովս, ի նկատի ունենալով որ Քարաթայոյը միմիայն ուսումնասիրութեան վայր ընդունուած է՝ իր շրջանի տեղական նիւթական միջոցներով, իսկ Կիլիկիան ունի իր Պատասխանատու Մարմինը, եւ հետեւաբար Ընդհ. Ժողովի գծած կազմակերպական 27րդ յօդուածի համաձայն Ամերիկայի շրջանը իրաւասութիւն չունէր այդպիսի քայլ մը առնելու, որոշեց յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝ առաջարկել Ամերիկայի Կեդր. Կոմիտէին, որ իրենց դրամները ղրկեն գոյութիւն ունեցող Պատասխանատու Կեդրոնական Մարմիններէն մէկուն :

3) Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. — Ընդհանուր Ժողով. — Ժողովը, լսելով Բիւրոններու բացատրութիւնները՝ Ընդհանուր Ժողով չկարենալ հրաւիրելու մասին, տեսաւ որ այդ պատճառները իսկապէս արգելք են մինչեւ իսկ մօտ ապագային Ընդհ. Ժողով գումարելու, ուստի որոշեց այդ հարցը բաց թողնել, մինչեւ առաջ կու գան աւելի հնարաւոր պայմաններ եւ կամ պահանջ կը դրուի Ընդհ. Ժողովին ձայն ունեցող մարմիններու մեծամասնութեան կողմէ :

Բ. — Կարմիր Խաչ. — Որոշուեցաւ յանձնարարել բոլոր մարմիններուն՝ ուր հնարաւորութիւն կայ, առանց վնասելու կազմակերպութեան ընդհանուր մուտքին կամ զուտ յեղափոխական հասոյթներուն, առանձին ժողովարարութիւններ ընել եւ անդամավճարներ սահմանել «Հայ Յեղափոխական Կարմիր Խաչ» անու-

նով, եւ առաջ եկած արդիւնքը, առանց երբեք խառնելու կազմակերպութեան ընդհանուր մուտքին մէջ, յատկացնել հայ յեղափոխական բանտարկեալներու եւ իրենց յեղափոխական գործունէութեամբ աշխատութեան անկարող կամ անգործ մնացած կարօտեալներուն օգնելու, խորութիւն չընելով կուտակութիւններու մէջ : Ապագային կը թողուի, երբ յաջողութիւն կը գտնէ կամ հայ կեանքի մէջ արժատ կը ձգէ այս ուղղութեամբ մարմիններ եւ անտուկներ հաստատելը, անոնց կազմութեան վերաբերմամբ ներքին կանոնադիր կազմել :

Գ. — Մարտական-մարզական խումբեր. — Ի նկատի ունենալով որ մի քանի շրջաններու մէջ այդ ուղղութեամբ յաջող փորձեր եղած են, որոշուեցաւ վերստին յանձնարարել կազմակերպութեան բոլոր մարմիններուն, մանաւանդ Երկրի սահմանակից շրջաններուն, աւելի ուժ տալ Ընդհ. Ժողովի այդ վճռին, ի հարկին ընդունակ մարզիչներ նշանակելով :

Դ. — Երկրէն դուրս կոմիտէներ եւ օժանդակութեամբ խօսիչ. — ա) Աչքի առաջ ունենալով որ, հակառակ Ընդհ. Ժողովի վճռին, դեռեւս շատ տեղեր Պատգամաւորական Ժողովներով չէ մշակուած ու սահմանուած կոմիտէներու եւ խմբերու ներքին կանոնադիր, որոշուեցաւ այս մասին եւս ստիպողաբար յանձնարարել Կեդր. Կոմիտէներուն եւ խնդրել որ հնարաւորութեան չափով խուսափին տեղական բարդ ծախսերէ եւ անպայման որոշ քանակութեամբ օժանդակին կենդանի գործին :

բ) Ի նկատի ունենալով, որ Երկրէն դուրս եղած են կոմիտէներ, որ տարիներով ո՛չ մի շօշափելի գործունէութիւն եւ օգուտ չեն ցոյց տուած Դաշնակցութեան եւ, ընդհակառակը, երբեմն վնասեր են կազմակերպութեան բարոյական հեղինակութեանը, վճռուեցաւ յանձնարարել Բիւրոններուն եւ Կեդր. Կոմիտէներուն՝ առանձին պահանջներ ղեկ այդ կարգի մարմիններու վրայ :

4) Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Ա) Լեւոնավայրի Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի անդամներէն Մարը (14) Երկրին մէջ բանտարկուած եւ Արբակը(15) սկիզբէն հրաժարած լինելով, անոնց փոխարէն ընտրուեցան՝

- 1. Բուլկարացի(16)
2. Մարթինը(17)
3 եւ 4. Արմենակ Լեւոնեան եւ Մ.(18)

Ասոնք կը հրաւիրուին գործի, խորհրդակցութեամբ Արեւմտեան Բիւրոյի, նոյն մարմնի ներկայ անդամի կողմէն այն ժամանակ, երբ կազմակերպութեան նիւթական միջոցները հնարաւորութիւն ցոյց կու տան :

Բ) Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմինը կազմողներէն՝ Սերբը եւ Գուրգէնը նահատակուած եւ

Սաքոն(19) բանտարկուած լինելով, անոնց փոխարէն ընտրուեցան՝

- 1. Գիտակը(20)
- 2. Վահան Ման [ուէլիան] (21)
- 3. Ստեփան Տէր Ղազարեան
- 4. Աբր. Մշ. (թեկնածու)(22) :

Գ) Արեւելեան Բիւրոյի գործունէութիւնը աշխուժացնելու համար, որոշուեցաւ նոր անդամ աւելցնել Արոէն (Մեկ.)ին(23),

եւ վերստին անդամակցութեան հրաւիրել հիւանդութեան պատճառով հրաժարուած

Մելիք (Ծուս.)ին(24),

ըստ տեղական պայմաններու եւ համաձայն Ընդհ. Ժողովի վճռին՝ անոնց յատկացնելով թոշակ, իրենց ժամանակը կարենալ ամբողջովին կամ մասամբ գործին նուիրելու համար :

Դ) Արեւմտեան Բիւրոյի անդամներէն Վահագը կազմակերպական, իսկ Գարոն(25) անձնական գործերով ժընեւէն առայժմ հետանալու ստիպուած լինելով, ընտրուեցան անոնց փոխարինող թեկնածուներ՝

- 1. Սարգիս(26)
- 2. Մուխան(27)
- 3 եւ 4. Մ. եւ Ղարիբ(28) :

Ե) Համգամակութեան կազմակերպիչ-վարիչ մարմին(29) անդամներ ընտրուեցան, իրենց իսկ յօտարակամ առաջարկութիւնով՝

- 1. Էլէն(30)
- 2. Ռոստոմ
- 3. Աշոտ(31)
- 4. Կարէն(32) :

5) Մ Ռ Ռ Փ Ե Ա Ն Խ Ն Գ Ի Ր

Ժողովը տեղեկացաւ որ Դաշնակցութիւնը վերջին ժամանակներս զանազան հրաւէներ ընդունել է, միութեան կամ համերաշխ գործունէութեան համար, ոչ միայն հայ յեղափոխական անուան տակ ծածկուած կուսակցութիւններէ, մարմիններէ եւ անհատներէ, այլև ոչ հայ՝ տաճիկ եւ քիւրտ ղեզն տարրերէ եւ կուսակցութիւններէ :

Ա) Ժողովը մեծ գոհունակութեամբ կ'արձանագրէ Մակեդոնական Յեղափոխական Բարձրագոյն Կոմիտէի հետ վերջապի եւ Արեւմտեան Բիւրոյի միջոցով Դաշնակցութեան կայացուցած համերաշխութիւնը, որը որոշ տեղեր մինչև գործակցութեան իսկ յանգած է :

Բ) Դաշնակցութեան ներկայացուցած բարոյական

ուժի պատճառաւ է նաեւ, որ, շնորհիւ Արեւմտեան Բիւրոյի ձեռնարկներուն, Փրանսայի մէջ իրենց խօսքով ու գրչով ի նպաստ Հայկական Դատին պրոպագանդ ընող յայտնի անձնակորութիւններ խմբուած են կազմակերպութեան նիւթական պատասխանատուութեան տակ այս տարուայ սկիզբէն Փարիզ հրատարակուել սկսած PRO ARMENIA կիսամսեայ թերթին շուրջ : Այս առթիւ ժողովս որոշեց, յանուն Հ. Յ. Դաշնակցութեան Կամբը ներկայացնող Մարմնի, պաշտօնական դրութեամբ շընորհակալութիւն յայտնել Բ. Ա. ի խմբագրութեան անդամներուն :

Գ) Ժողովը ցաւօք որտի լսեց որ ի զուր ժամավաճառութեան են յանգած Նոր-Հնչակեան կուսակցութեան հետ միանալու համար «Միութեամբ»(33) միջոցաւ վերսկսուած բանակցութիւնները, որովհետեւ Միութեամբ ցարդ չէ կարողացած անոնց յարգել տալ կայացուած նախնական պայմանները : Այսպիսով ժողովին պարզուեցաւ որ Նոր-Հնչակեան կուսակցութիւնը, իր արդի կազմին մէջ, յեղափոխական տեսակէտով կը մնայ նոյն անվտանգելի մարմինը, ինչպէս որ էր առաջ :

Դ) Հաստատելով նախապէս կայացուած որոշումը — մերժել Միութեան հարցէն զուրս որեւէ դատ մասնաւոր անձնակորութիւններու մասին(34) — ժողովս սակայն կ'արտօնէ վերջապի Պատ. Կեդր. Կոմիտէին, եթէ նա ցանկութիւն յայտնէ, ընդունել Արփիար Արփիարեանի մասին առաջարկուող դատը, այն պայմանաւ միայն՝ որ ասեանը կազմուի օտարազգի յեղափոխականներէ :

Ե) Թուրք Երիտասարդ կամ ղեզն տարրերէն վերջերս Տամատ Մահմուտի եւ որդիներուն կողմէ ալ համերաշխութեան կամ միութեան դիմումներ եղած են, որոնց հետ կատարուած բանակցութիւններու իբրև արդիւնք՝ ընդունուած է կազմակերպութեանս առաջարկը, — անոնց կողմէ հրաւէր կարգալ՝ բոլոր տաճկահայատակ ղեզն տարրերէն եւ յեղափոխական մարմիններէն մի կոնգրէս(35) կազմելու :

Այս հրաւէրը Տամատ Մահմուտի որդիներու կողմէն սպառնալուած ու ցրուած լինելով, որոշուեցաւ ընդունել այդ հրաւէրը եւ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցչի միջոցաւ մասնակցել կոնգրէսին, երբ նա տեղի ունենայ :

Կոնգրէսին մէջ ընդհանուր նպատակ ընդունելու եւ պաշտպանել Տաճկաստանի մէջ ինքնավար ազգութիւններու Ֆեդերատիւ(36) — պետական ձեւը : Նոյնպէս պաշտպանել այդ նպատակին հասնելու համար ղեզն յեղափոխական ազգերու-մարմիններու գործունէութեան ինքնուրոյնութիւնը, մինչև տաճիկ եւ քիւրտ ցեղերէն յեղափոխական ակտիվ գործունէութիւնով կազմակերպուած մարմիններու երեւան դալը. մի պայ-

ման՝ որմէ յետոյ [միայն] խօսք կարող է լինել միութեան մասին :

Զ) Վրէժի-Շամիրի(37) շրջանէն ստացուած եւ ժողովս մէջ կարդացուած թղթակցութիւններէն տեղեկանալով, որ Մկ.ի(38) քիւրտ ցեղապետներու եւ անոնց հետեւորդներուն հետ բարեկամական յարաբերութիւններ կը մշակուին դաշնակցական գործիչներու կողմէ, որոշուեցաւ յանձնարարել Արեւելեան Բիւրոյին՝ որ միջոցներ ձեռք առնուին այդ կարգի գործունէութեան ծաւալ տալու, առաջարկուած առեւտրական ձեռնարկը իրագործելով : Նոյնպէս, յանձնարարուեցաւ Արեւմտեան Բիւրոյին, որ շարունակէ իր բանակցութիւնները Պատրիստի որդի Ապտիլուհմանի հետ, Դաշնակցութեան հետ գործակցութեամբ Երկրի մէջ համերաշխութեան հաստատ հիմքեր զնելու համար :

Է) Որպէսզի Դաշնակցութեան սուղ միջոցներն ու ժամանակը ի զուր չվատնուին, որոշուեցաւ ասկէ յետոյ միութեան կամ համերաշխութեան նոր առաջարկներով զբաղուել միայն այն ժամանակ, երբ առաջարկն ու առաջարկողները լուրջ եւ անկեղծ լինելու համոզումը կը ներկայացնեն :

6) Կ Ա Ր Գ Ա Պ Ա Հ Ո Ւ Ք Ի Ի Ն

Ա) Ժողովը, լսելով Պուրկազի մէջ Դաշնակցութեան պատկանած զէնքերու գողութեան (100 հրացան եւ 20.000 փամփուշտ՝ 8.000 Փր. արժէքով) խնդրի մանրամասնութիւնները, լիազօրութիւն տուաւ վերջապի Պատ. Մարմնին՝ վերջնականապէս ճշդելու բուն յանցաւորները եւ պատիժները տնօրինելու :

Ժողովը գոհունակութեամբ տեղեկացաւ, որ ծախուածներէն 30 հրացան եւ 5.000 փամփուշտ ետ առնուեցաւ :

Բ) Որոշուեցաւ յանձնարարել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոյներուն, որ իրենց շրջաններու մէջ եղած կազմակերպութեան ռազմամթերքի եւ բոլոր զոյքերու մանրամասն ցուցակը կազմեն(39) :

3/16 Ապրիլ 1901

| | | |
|---------------------------|------------|------------|
| Արեւմտեան Բիւրո | ԲՈՍՏՈՄ | ԷԼԼԷՆ |
| Արեւելեան Բիւրո | ՆԻՔՐՈՒ | |
| Լեռնավայրի Պատ. Կ. Կոմիտէ | ՍԵՊՈՒՀ | |
| Վիշապի Պատ. Կ. Կոմիտէ | ԲՈՍՏՈՄ(40) | ԱՇՈՏ ԿԱՐԷՆ |

- (1) Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմնի առաջին (եւ միակ) ժողովը գումարուած է Ֆիլիպէի մէջ (Պուլկարիս) :
- (2) Արամ Յակոբեանի (Կարէն) շարժումները առաջի (տե՛ս ներկայ հասար, էջ 94-98) Յշտ էինք շփոքը. Կամքի ժո-

ղովը գումարուած է 1901ին, եւ ո՛չ 1900: Իսկ 25 Մարտ/7 Ապրիլը կը ճշմարտէ՝ «25 Մարտ (եիմ տոմար) / 7 Ապրիլ (ճոր տոմար)» : Արամազարութեան սակ աւելցուած 3/16 Ապրիլը ժողովի աւարտման թուակամբ պետք է ըլլայ (միշտ՝ եիմ եւ ճոր տոմարներով) :

- (3) Արեւմտեան Բիւրոն կը ներկայացնէ Ռոստոմ եւ Գրիտապո (Էլլէն), Արեւելեան Բիւրոն՝ Յ. Շահրիկեան (Նիքրոս) :
- (4) Վիշապի (Պուլկարի) Պատ. Կ. Կոմիտէի կողմէ՝ Աշոտ (Նիքրոս), Սեւ Աշոտ եւ Կարէն (Արամ Յակոբեան) : Յանձնարար, որ հաստատուած էր Ֆիլիպէի եւ Արեւմտեան Բիւրոյի որոշմամբ մտած էր այդ Պատասխանատու Կ. Կոմիտէի կողմէն մէջ :
- (5) Լեռնավայրի (Կիլիկիոյ) Պատ. Կ. Կոմիտէն կը ներկայացնէր Հրաչը (Սեպուհ) :
- (6) Երկրորդ Ընդհանուր ժողովին ազգին՝ ճանաչուած էին Գուրգէն (Պաշտասար Մայեանց) եւ Արիւր-Սերոբ (Վարդանեան) : Բարձրաւանգապի ընտրեալ Պատ. Մարմնի երրորդ անգամը՝ Սեւ Կարեցի Սաֆօ ձեռքապաշտուած էր եւ կը պահուէր Մշոյ բանաձև-վարդաձև (Խաճապուրի) հրաժարած էր կամուխէն : Երկրի կը զբաղուէր միայն ճեւաւտար ընկեր-անգամս՝ ճկատուող Դժոխքը (Հրաչար) (տեսնել էջ 97) :
- (7) Վասպուրականը, հակառակ Գիտակի (Վարդգէս Սերէն-կիւլեան) հոմ ըլլալուն՝ իբրև Դաշնակցութեան ներկայացուցիչ, ստիպուի յուրի Պատասխանատու Մարմին :
- (8) Միեւնոյն շարքով՝ Իզմիրի, Տրապիզոնի եւ Խարբըրդի :
- (9) Արշակ Վասիեան, որ Դաշնակցութեան Արեւելեան ներկայացուցիչն էր 1897ին ի վեր :
- (10) Ռոստոմաճ :
- (11) Ի պահանջիլ հարկին բանամիջոցներով իրագործուած այս դրամահաւաքն է, որ Դաշնակցութեան պատմութեան մէջ ծանօթ է «Փոքրիկ» գործ անուան տակ : «Արեւելեան Բիւրոյի կազմած նախահաշուի ֆանկի» համար (մէկ միլիոն ռուբլի)՝ տե՛ս էջ 90: Երրորդ Ընդհանուր ժողովին (Սեպտեմբ, 1904), «Փոքրիկ» կազմէ ներկայացուած մուտքը կը հաշուուի 432.500 ֆրանկ կամ, օրուան սակով, շուրջ 168.200 ռուբլի :
- (12) Տերսիս :
- (13) Խարբըրդի կոմիտէին կուսակցական անունը :
- (14) Մար կամ Մար-Շիմօն, բուն անունով՝ Միքայէլ Տէր Մարտիրոսեան, Կիլիկիոյ մէջ մտնուած ու ձեռքապաշտուած էր. կը պտտուէր Մարաշի բանաձև :
- (15) Արամ Ռոստոմի (Յովսէփ Միքայեանց) եւս, Հրաչի եւ Մարի հետ, Երկրորդ Ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած էր անգամ Լեռնավայրի (Կիլիկիոյ) Պատ. Մարմնին, բայց հրաժարած էր կամուխէն :
- (16) Պետո (Պետրոս Սերէնեան), որ Երկրէն վերադարձած էր Պուլկարիս եւ շուտով գոհ պիտի երթար հայ-մակեդոնական յեղափոխական միացեալ գործողութեան մը (պիտի ձեռքապաշտուէր Բոսնիայում կողմէ եւ կախուէր Արիւրեանցու մէջ, Ռոստոմա-ցի Օճեկի եւ մակեդոն երկու յեղափոխականներու հետ) :
- (17) Աշոտ Մարքիս (Մարտիրոս), — տե՛ս Նիքրոս Կ. Կոմիտէ :
- (18) Արմենակ Լեռնեան եւս շուտով պիտի հրաժարուէր Լեռնավայրի գործէն եւ անցնէր Երկիր՝ ուր կարճ ժամանակի մէջ պիտի դառնար ծանօթ յեղափոխական ղեկավարը՝ Աշոտ-Սերոբ : Մ. ճանաչուած է միջի :
- (19) Սեւ Կարեցի Սաֆօ, որ Մշոյ բանաձևը կը գտնուէր շուրջ երկու տարիէ ի վեր :
- (20) Վարդգէս Սերէնկիւլեան, որ վաճ անցած էր 1900ի սկիզբը : Պիտի ձեռքապաշտուէր 1902ի վերջերս եւ բանաձև մար միջի Օսմանեան Սահմանադրութեան հաշակուի :
- (21) Վասեան Մանուկեան-Տրապիզոնեան («Մանուկ Վասեան») :

Երկիր պետի անցնելու հայտարարում (1901)՝ իբրև Բիւրոյի ներկայացուցիչ եւ անկամ Բարձրագույնագի Պատ. Մարմին: Վստահ պիտի նստատակուէր 1904ի Սասնայ կախմբու օրերում:

(22) Ստեփան Տէր Զաքարեան եւ շրջանում: Արքայապետ Մարտիկան Երկիր չանցան:

(23) Արսէնի ինքնուրուի մեզի կը մնայ անձանք: «Արսէն ստորագրութիւնը կը գտնուի Երկրորդ Ընդհանուր Ժողովի ատենագրութեանց տակ (տե՛ս էջ 70), իսկ հրատարակ գործիչներում մէջ կը հանդիպենք «Մանուկ»ի մը (էջ 54). արդե՛հ միւսնայն անձն է: Արսէնը արդե՛հ Արսէն Ամիրանեան է, մինչև 1905-1906 Դաշնակցութեան մէջ ծանօթ նաեւ Մաւս անունով, որ հետագային դարձաւ համայնագր անունի գործիչ:

(24) Յովհաննէս Սուսուփեան, որու անունը կը կամուրջակիք Արեւելեան Բիւրոյի 1899 Յունուարի ընդլայնուած ժողովի ատենագրութիւնը ստորագրողներու շարքին (տե՛ս էջ 93), բայց որ, ըստ Երևոյի, դադարած էր գործնական մտածակցութիւն բերել: Այդպէս ալ շարունակուած է, հակառակ կամքի ժողովի որոշման, ինչպէս ի յայտ կու գայ Երրորդ Ընդհանուր Ժողովին ուղղած իր նամակներէն (տե՛ս էջ 182-185):

(25) Արսէն Գաթո, որ անձնական գործով փոխադրուած էր Կովկաս:

(26) Ամենայն հաւանականութեամբ՝ Մարգիս Միստեանը (Արամ Աշոտ):

(27) Կը բուռի ըլլայ Խաչատուր Մարտիկանի (Է. Ակնունի) կուսակցական ծածկանունը:

(28) Միքայէլ (Վարանդեան) եւ Աւետիս Անարանեան:

(29) Այլ անունով՝ «Փոքորիկ» կամիտն (Երբեմն կոչուած նաեւ «Իրամ» կամիտ): Կամքի ատենագրութեան մէջ յիշատակութիւն չկայ, բայց Արեւելեան Բիւրոյի կողմէ անոր մաս կազմած է նաեւ Նիքոս (Յարութիւն Եանիկեան):

(30) Գրիստափոր Միքայէլեան, որ պիտի հանդիսանար ոգին

ու գլխաւոր դեկավորը «Փոքորիկ» գործին, քէն, ըստ Արամ Յակոբեանի վկայութեան, «Գրիստափոր հակառակ էր Փոքորիկին, բայց անի էր կացութիւնը, ուրիշ էլ չկար, գլուխ ծակց իրականութեան աչքի (միտայն էր որոշումը)» (տե՛ս էջ 94): Արամ Յակոբեան կ'ըսէ նաեւ, որ կամքի ժողովին շարունակ յաշար մահափորս կատարել, Սուլթան Համիտը անարկուսի ենթարկել, բայց որովհետեւ անունագն 50-000 հարիւր ենթարկուած էր դաւադրութեան ծախքը, ուստի գործադրութիւնը կապուեց Գրամի գործին» (էջ 95): այս մասին եւս յիշատակութիւն չկայ կամքի ժողովի ատենագրութեան մէջ, հակառակ պատճառներով:

(31) Պոլսոյ գործիչներէն՝ Սեւ Աշոտը (Նախկին):

(32) Արամ Յակոբեան, Երկրորդ Ընդհանուր Ժողովին կողմէ անկամ ընտրուած կուսակցիկի (Վիշապի կամ Պոլսոյ) Պատասխանատու Կ. Կոմիտիին:

(33) «Միքայէլ» կամ «Ջէզո»՝ Յովհաննէս Եանուարեան է, վերականգնուած չհնչեան կեդրոն. վարչութեան մտտիկ անձ մը, որ 1900ին փորձած էր միջնորդ հանդիսանալ Դաշնակցութեան հետ միութեան կամ համերաշխ գործակցութեան նոր բանակցութիւններու:

(34) տե՛ս էջ այս մասին՝ «Դրօշակ», Ժ. տարի ք. 7 (Սեպտեմբեր 1900), էջ 112:

(35) Համաժողով:

(36) Դաշնակցային:

(37) Ատրպատական-Վասպուրականի:

(38) Յատկապէս Մակուի շրջանի ֆիւրս ցեղապետ Մուստաֆա Բէկի հետ (տե՛ս էջ 143 եւ 144):

(39) «Կամք»ի ժողովի այս որոշումներուն կարեւոր մէկ մասը գրեթէ բառացի վերարտադրուած է այդ ժողովին վերաբերեալ շրջաբերակներէն մէջ (տե՛ս էջ 98-99):

(40) Ռատոմ ստորագրած է երկու տեղ, իբրև անկամ Արեւելեան Բիւրոյի եւ Պոլսոյ Պատասխանատու Մարմին:

4) ԼԻԱԶՕՐԱԳԻՐ

Կ Ա Յ Ա Յ Ա Գ Ի Ր

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

(Վերահան մէկ տարւան համար)

Կ. Պոլսոյ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի անունով պաշտօն յանձնուած է սոյն վկայագիրը կրողին դրամ հանձնարանի: Ուստի կ'առաջարկուի, որ ամէն ոք, որուն պիտի գիտէ մեր պատարիակը, վստահութիւնով եւ պատշաճօրէն ընդունի զայն եւ չմերժէ վճարելու Կեդրոնական Կոմիտէի կիսիքով վարկարացած անդորրագրին համարժէքը, անհրկաւ: Չլուրով, որ վճարուած դուստրները անկորուստ պիտի հասնին Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէի անդուկը՝ գործածելու համար: Թրջաւարուանի ստորագրեան զատիւն:

Մեր յայտնակցներու շնորհակցանք կը յանձնարարեմ խուսափել զոմիտէ պատարիակին սուէ կերպով զնասնու փոքորէն:

ՊՈՒՍՏՈՅ ՊԱՏՄՈՒԹԱՆԱՏՈՒ

ԿԵՂԵՐԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ:

հոկտեմբեր 1902



5ա) ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐ

Յարգոյ Հայրենակից

Կ. Պոլսոյ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի որոշմամբ յօդուտ հայկական դատի ընթացիկ պէտքերու Ձեզմէ կը պահանջուի ըրուրի:

Այդ գումարը վճարելուն Համար Ձեզի Ժամանակ կը տրուի ընդամէնը 1 Վճարման համար խումբս Ձեզի կը թողու շրջանէն գտնել մարդիկ, որոնք ի սէր Ձեր եւ տարաբաղդ հայկական խնդրուն, յանձն կ'առնուն հասցնել յիշեալ գումարը Կ. Պոլսոյ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէին եւ ստանալ անորմէ պատշաճ անդորրագիր:

Ներկայ պահանջի մերժման պարագային՝ պիտ դատապարտուիք մահուան պատժի: Նոյն պատժին պիտ ենթարկուիք եւ այն ատեն, երբ փորձիք կառավարչական միջամտութիւն հրաւիրել եւ խմբին անդամներուն ուեէ կերպ վնասել:

«ՓՈԹՈՐԻԿ» ԱՀԱՄԵԿԻՉ ԽՈՒՄԲ

5բ) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վերջին օրեր, Ժամհարեանին սպանութենէն ետքը, կարգ մը անյայտ խմբակներ, Հանգամանքներէն օգտուելով, սպանական նամակներով շատերուն դիմումներ կ'ընեն դրամ կորզելու նպատակաւ:

Պարտք կը համարինք այդ առթիւ յայտարարել ի դիտութիւն հասարակութեան:

ա) Որ այդ խմբակները ուեէ առնչութիւն չունին

«ՓՈԹՈՐԻԿ» ԱՀԱՄԵԿԻՉ ԽՈՒՄԲ

Շուշուայ մէջ Ժամհարեանի վերայ յարձակում գործած խմբին հետ եւ պիտ ճանաչուին իբր բախտախնդիրներ, որոնց տրուած դրամները երբեք չպիտի նպատակի ծառային:

բ) Որ ներքոյ ստորագրեալ «ՓՈԹՈՐԻԿ» ահաբեկիչ խումբը, ըստ որոշման Պոլսոյ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի, իր դիմումները պիտի սահմանանափակէ Քանի մը յայտնի կրեստներով միայն:

գ) Որ մեր դիմումները կ'ուղեկցուին պատշաճ սպասոյցներով:

դ) Որ մեր իւրաքանչիւր պահանջի գանձման փոխարէն Պատասխանատու Կոմիտէի կողմէն կը տրուին անդորրագրեր, որոնց կըող անձինք կ'առնուն խմբիս անմիջական պաշտպանութեան ներքոյ եւ կրնան համարձակօրէն արհամարհել ու մերժել բոլոր բախտախնդիրներու եւ այլ կուսակցութիւններու պահանջներուն, միանգամայն վտուաւ ըլլալով, որ անոնք կ'ենթարկուին մեր անխնայ եւ անխուսափելի դատապարտութեան:

«ՓՈԹՈՐԻԿ» խմբի անդամներուն ճանաչող, ինչպէս նաեւ պատահական կերպով անոնց տեսած կամ տեսնողներ (տան տէրեր, խանութպաններ, հարեւաններ, հին ծանօթներ, ուեէ տեղ պատահած անհաստներ եւ այլն եւ այլն) սաստկապէս կը նախազգուշացուին ոտտիկանական կամ դատական ջննութիւններու ատեն միշտ խուսափել ուեէ ցուցմունքներ տալէն: Հակառակ պարագային իւրաքանչիւր ցուցմունք պիտի նկատուի եւ պատժուի իբրև բացարձակ մատնութիւն:

Գ.— 1904Ի ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ 1904 ՄԱՅԻՍԻ ԱՐՅԻՆԵՆԵԱՆ ԵՐՁԱՆԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

1904 թ. Մեծ Քաղաքում(1) կայացաւ Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյի Ռայոնական Ժողովը: Առաջին նիստին Գ. Բ. յայտնեց, որ Բիւրոն ի նրկատի ունենալով, որ այս առաջին Ռայոնական Ժողովին է Ընդհանուր Ժողովից յետոյ եւ կան ջնջելու մի քանի ծանրակշիռ եւ նոր հարցեր, կարեւոր համարուեց ոչ միայն Կենտրոնական Կոմիտէից ներկայացուցիչներ կանչել ըստ կանոնադրութեան, այլ եւ Քարից(2), Այգեստանից(3), Ժլատից(4), Սեւ Ծովից, Եկեղեցուց(5), Ոս...ի(6) տեղական Կոմիտէից, Բարձունքից, Ա...ից (Քարի շրջան), Ա...ից (Քարի շրջան) եւ Ե...ից (Մեծ Քաղաքի շրջան): Ժողովը համաձայն լինելով Բիւրոյի հայեցակէտին, ոչ միայն վաւերացրեց հրահրուածների ձայնատուութեան իրաւունքը ներկայ Ժողովին համար, այլ եւ որոշեց հետագայ Ռայոնական Ժողովին եւս հրահրել, բացի Բիւրոյից եւ Կենտրոնական Կոմիտէից, ներկայացուցիչներ ձայնի իրաւունքով, Ա...ից, Ա...ից (Քարի շրջան), Այգեստանից, Ե...ից (Մեծ Քաղաքի շրջան), Ն...ից (Մրզաստանի շրջան), Ժլատից, Ոս...ի տեղական կոմիտէներից մի ներկայացուցիչ, Անդրից (Ոս...ի շրջան, Կարմիր ջրի մօտ), ուսանողութիւնից եւ Սաղաստանի(7) գաղութից երկու կամ երեք ներկայացուցիչ ըստ հայեցողութեան Բիւրոյի, եթէ ի հարկէ, դժբա այդ ժամանակ իրանց գործունէութեամբ ձեռք բերած լինեն Ընդհանուր Ժողովի որոշած կոմիտէական ցնդը:

Ներկայ Ժողովին մասնակցում էին 12 ձայնատու անդամ եւ մի քանի ընկերներ խորհրդակցական ձայնով: Ձէին եկել Բ..., Ե..., Ա..., եւ Ա...:

Քննուելիք հարցերն էին 1) Բարձրաւանդակի(7) ներկայ գրութիւնը եւ մեր բունելիք դիրքը. 2) Ջր...ի(8)

եւ Ոս...ի համակրական ցոյցերի ջննութիւնը. 3) Դաշնակցութեան ազատ ազենտներ վարձով. 4) Կովկասեան գործունէութիւն. 5) Տեղորոններ. 6) Ընտրութիւն Բիւրոյի եւ Ինքնապաշտպանութեան Կոմիտէի. 7) Հաշուետուութիւն եւ հաշուապահութեան սխտոմ. 8) Կովկասում թերթ հրատարակելու խնդիր. 9) Ժողովուրդը զինելու եւ առ հասարակ զէնք ու ռազմամթերք հայթայթելու մարմիններ եւ 10) Եկեղեցական կալուածական խնդիր:

Նախքան վերոյիշեալ հարցերին անցնելը, Գ. Օ. առաջարկեց հրահրել էջմիածնից մի հոգեւորական, որը լիովին իրազեկ լինի էջմիածնի իրերի դրութեան եւ ստոյգ տեղեկութիւններ տայ Ժողովին, որպէսզի վերջին կալուածական հարցը(9) ջննելիս կարողանայ առաջնորդուել հաստատուն եւ նորազոյն տեղեկութիւններով: Բիւրոյի անդամը յայտնեց, որ բաւականաչափ յայտնի են այդ տեղեկութիւնները եւ նորերս էլ յատուկ մարդ է ուզարկուած դրա համար, այնպէս որ կարիք չկայ հոգեւորական հրահրելու: Երկար վիճարանութիւններից յետոյ վճռուեցաւ չկանչել:

Բարձրաւանդակի հարցին անցնելով՝ Ժողովը բաժանուեցաւ երկու կարծիքի. ոմանք կարծում էին, որ եթէ Բարձրաւանդակը ընկճուի դեռ միւս խմբերը չչարժեւած, այն ժամանակ աւելորդ եւ անօգուտ է այլեւս վերջիններիս շարժուիլը, որովհետեւ սրանց նպատակը պիտի լինէր, շփոթեցնելով տաճիկ կառավարութիւնը, ջլատել նրա ուժերը եւ թուլացնել Բարձրաւանդակի դէմ ուղղուած հարուածը: Այդ դէպքում այդ ուժերը պիտի խնայել ապագայի համար: Միւսները կարծում էին, որ, եթէ նոյնիսկ ընկճուած էլ լինի Բարձրաւանդակը, որ դեռ յայտնի չէ, այնուամենայնիւ պէտք չէ կանգնեցնել միւս խմբերի շարժումը, որպէսզի կոխը աւելի երկարատեւ լինի, մինչեւ որ դորա ձայնը, հարկաւոր շափով, զարկի Եւրոպայի ականջին եւ եւրոպական մամուլը հեղեղուի մեր կողմի լուրերով. մեր կըր-

ուի յամառութեամբ, մենք աւելի շնոս կը ստանանք պետութիւնների ուշադրութիւնը գրաւելու: Բացի այդ, եթէ Բարձրաւանդակը ընկճուելուց յետոյ [չարժուենք], մենք սառը ջուր կ'աժենք Ժողովուրդի այս լարուած ու ոգեւորուած յեղափոխական տրամադրութեան վրայ,— տրամադրութիւն, որպիսին չէ եղել երբեք. իսկ արտայայտելով մեր այժմեան աւելի քան երբեւիցէ ունեցած յեղափոխական պատրաստութիւնը եւ Ժողովրդի տրամադրութիւնը, մենք ապացոյց կը տանք եւ հաւատ կը ներշնչենք Ժողովրդին, որ յեղափոխութիւնը արդէն իւր զարգացման հաստատուն ճանապարհի վրայ է կանգնած եւ քանի գնում, աւելի եւ աւելի ուժգին են լինում նրա արտայայտութիւնները: Ժողովի մեծամասնութիւնը յանգեց երկրորդ կարծիքին եւ որոշեց շարունակել իրագործել Ընդհանուր Ժողովի վճիռները ու հաւանութիւն տուեց Ջր...ի(8), Քարի եւ Մրզ...ի(10) գործողութիւններին այդ ուղղութեամբ, միայն շեշտելով այն հանգամանքի վրայ, որ ամէն ինչ պէտք է շատ արագ կատարել:

Որոշուեց նաեւ, որ անցնող կռուող խմբերը պատահականութեան ու դէպքի բերմունքին չթողնեն ընդհարուելը, ձգտելով անպատճառ մի կերպ, առանց նրկատուելու Բարձրաւանդակ հասնել. ընդհակառակն, ներկայ պայմաններում, նրանք պէտք է Երկիր սաք ղենն նախագծած յարձակողական ծրագրով, ընտրած լինելով այս կամ այն յարմար կէտերը:

Ի նկատի ունենալով, որ խիստ կարեւոր եւ անհրաժեշտ է բոլոր մեր այդ շարժումների ու բողոքների ձայնը Եւրոպային հասցնել, Ժողովը որոշեց անընդհատ թղթակցութիւններ ուղարկել եւրոպական թերթերին: Այդ նպատակով մի խմբագրական յանձնաժողով էր կազմուած Մեծ Քաղաքում, մէկն էլ կազմուեցաւ Ոս...ում՝ երեք հոգուց բաղկացած: Դէպքերի մասին հեռագիրներ պիտի տրուին Մ. Ք...ից, Ոս...ից եւ Պարսկաստանից:

Կոթերի մասին որոշուեցաւ այսուհետեւ զնել մի-միայն իսկական՝ արքունականը — հին թէ նոր: Թողնելով առայժմ, որ մեր ուղարկուած ընկերը շարունակի զնել, յանձնել միեւնոյն ժամանակ եւ կոմիտէներին՝ նոյնպէս զնել, մանաւանդ հներից: Աշխատել յետ կանչել ուղարկուած ընկերով, նախօրօք տեղապահ ուղարկելով:

Ջր...ի համակրական ցոյցերի ձեւնարկութեան մէջ մեղաւոր նկատուեցան տեղական մի քանի դաշնակցականներ, որոնք զեկավարուելով մի սխալ եւ անպատուարեր ճշգրտականութեամբ, որոշ մասնակցութիւն են ունեցել ցոյցը կազմակերպելու գործում: Ժողովը որոշեց ամենախիստ յանդիմանութիւն կարգաւ դրանց:

Ջր...ի Կոմիտէն Դաշնակցութեան կասսայից 500 ռ. վերցրել, տուել էր մէկին իբրեւ կաշառք կամ վարձատրութիւն՝ տեղական ոստիկանութեան զեղծումն-

րը երեւան հանելու համար, Ժողովը զտաւ այդպիսի մի գործ ապօրինի եւ ոչ յեղափոխական եւ պարտաւորեցրեց Ջր...ի Կոմիտէին՝ անպատճառ յետ դարձնել այդ գումարը:

Ոս...ում կատարուած համակրական ցոյցի համար մեղադրուեց Ոս...ի Կոմիտէն, որ թոյլ եւ անփոյթ էր գտնուել ու չէր կարողացել օր առաջ իմանալ ցոյց կազմակերպողների մտադրութիւնը եւ առաջն առնել:

Ազատ ազենտների անհրաժեշտութիւնը ընդունուեցաւ սկզբունքով եւ որոշուեց, որ նրանց տրուի որոշ ամսավճար, որի քանակը կ'որոշի տեղական Կոմիտէն, նայած անձնաւորութեան եւ տեղի պայմաններին:

Ոս...ի երեք ընկերների վարձուեցին գալով, Ժողովը 7 ձայնով ընդդէմ երկուսի համարեց դատապարտել իբրեւ անդիսցիսլիս(11) եւ անիշխանական գործ: Գտնելով վերջիններիս պատժի արժանի՝ Ժողովը, 8 ձայնով ընդդէմ երկուսի, բաւական համարեց այն պատիժը, որ տուել էր նրանց Կենտրոնական Կոմիտէն մինչեւ Ռայոնական Ժողովի կայանալը: Թ...ը իւր կրկնակի ու եռակի անհնազանդութեան համար արժանացաւ Ժողովի միաձայն յանդիմանութեան:

Կովկասեան գործունէութեան հարցին անցնելով, նախագահը յայտնեց Ընդհանուր Ժողովի որոշումը այդ մասին, որ հետեւեալն է՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր վրայ է առնում թալար տեղերի հայ Ժողովուրդի իրաւունքների պաշտպանութիւնը, ի հարկին դիմելով եւ ահաբեկութեան եւ զինուորուած կամ խաղաղ ցոյցի: Դաշնակցական բանուորները ամէն տեղ եւ ամէն ժամանակ կարող են մասնակցել բանուորական ցոյցերին՝ Ինքնապաշտպանութիւն Կոմիտէի որոշմամբ: Դաշնակցութիւնը իւր Կովկասեան գործունէութեան մէջ պէտք է համերաշխ գնայ վրաց «Ժորժի», Ռուսաց սոցիալ-աւելուցիտներին եւ այլ յեղափոխական կազմակերպութիւնների հետ, հիմք ունենալով Փեղերատի(12) սկզբունքը:

Պրոպագանդայի մասին, Ժողովը որոշեց տանել այդ յեղափոխական ոգով, զարթեցնելով Ժողովրդի մէջ դիտակցութիւն՝ նրա ճնշուած ու կեղեքուած գրութեան, ինչպէս եւ ազգային իրաւունքների բռնաբարութեան: Քարողել կատարեալ համերաշխութիւն Ռուսաստանի բոլոր ազգութիւնների եւ բողոքող տարրերի հետ: Կուլտուրական գործունէութիւնը ընդունել, ոչ որպէս անմիջական պարտականութիւն, այլ ի միջի այլոց:

Ցոյցերի վերաբերմամբ, Ժողովն ի նկատի առնելով նրանց կրթիչ նշանակութիւնը՝ Ժողովրդի յեղափոխական ոգին բարձրացնելու տեսակէտից, որոշեց պարտաւորել զարձնել բոլոր կոմիտէների համար, տարեկան գոնէ մի ցոյց, ամէն տեղ միաժամանակ, որի երբ անելը կ'որոշի Ինքնապաշտպանութեան Կոմիտէն(13) եւ կը յայտարարի ամէնքին. միայն, որովհետեւ այդ ցոյցերը զանազան տեղեր կարող են զանազան հետեւանքներ ունենալ, ուստի իւրաքանչիւր տեղի ցոյցի բնաւորու-

Թիւնը կը թողնուի որոշելու տեղական կոմիտէներին՝ ըստ տեղական պայմաններին: Հարցը անցաւ 10 ձայնով: Ժողովրդին զինելը անհրաժեշտ գտնելով կռուի նախապատրաստութեան տեսակէտից, ժողովը որոշեց պարտաւորեցնել բոլոր կոմիտէներին՝ ամէն կերպ աջակցել ժողովրդին եւ մանաւանդ կազմակերպութեան մարդկանց՝ հրացան, ատրճանակ, սուր եւլն. ձեռք բերելու:

Ահաբեկումը ընդունուեց որպէս անհրաժեշտութիւն, բայց այն պայմանով, որ դա շատ չմանրանայ եւ յաճախ չկրկնուի, այլ որպէս սարսափ տարածող միջոց, կատարուի միայն Կենտրոնական Ինքնապաշտպանութեան Կոմիտէի որոշմամբ, այնպիսի պաշտօնեաների վրայ, որոնք յայտնի դեր կը խաղան ի վնաս մեր:

Կովկասահայերի ինքնապաշտպանութեան ներքին կանոնադրութիւնը եւ ընդհանուր ծրագիր մշակելը, որը պիտի կազմի Դաշնակցութեան ընդհանուր ծրագրի մի մասը, թողնուեց Ինքնապաշտպանութեան Կոմիտէին, որը կազմելուց յետոյ պիտի ներկայացնի յետագայ Ռայոնական ժողովին, ի քննութիւն:

Հետրութիւնները հարցին գալով, ժողովը երկար խորհրդակցութիւններից յետոյ, ուժերի պակասութեան պատճառով ներկայումս անիրագործելի գտաւ Ընդհանուր ժողովի որոշումը, որ Բիւրոն եւ Ինքնապաշտպանութեան Կոմիտէն մի վայրում լինեն, ուստի վայրերը զատելով, ընտրեց հինգ հոգուց բաղկացած Բիւրո մի տեղ, իսկ Ինքնապաշտպանութեան Կոմիտէի համար ընտրեց 12 հոգի (թեկնածուներ), որոնց հրաւիրելը յանձնեց Բիւրոյին. դրանցից համաձայնողները կը կազմեն Կոմիտէն:

Բիւրոյի երկու անդամը, ըստ որոշման Ընդհանուր եւ Ռայոնական ժողովների, պէտք է լինեն ազատ մարդիկ(14):

Հաշուետուութեան վերաբերմամբ նկատուեց, որ անցեալում մի քանի կոմիտէներ խիստ թերի են տարել հաշիւները եւ ժողովին գալիս էլ ոչ ոք կանոնաւոր հաշիւ չէր բերել հետը, բացի Ջր. . . Քարի, Ժլատի եւ Եկեղեցու ներկայացուցիչներից: Անճշտագաններին յանդիմանութիւն կարդացուեցաւ եւ պահանջուեցաւ, որ շատ շուտով ամէնքը իրանց բոլոր մնացած հաշիւները կանոնաւորած ուղարկեն Բիւրո: Ապագայի համար էլ որոշուեցաւ, որ ամէն ամսուայ թէ՛ դրամի, թէ՛ մթերքի ելիւմտի հաշիւը օրակարգի ձեւով կազմած ուղարկեն Բիւրո, ոչ ոչ քան յաջորդ ամսուան 15ին: Ցանկալի է դրամի ելիւմտի հաշիւը պահել երկու օրինակ եւ զանազան տեղերում, որպէսզի մէկը կորչելիս, միւսը մնայ: Բիւրոն պէտք է ուղարկի կոմիտէներին Ընդհանուր ժողովում մշակուած հաշուապահութեան ձեւի բլանկները(15):

Կովկասում թերթ ունենալու կարեւորութիւնը ժողովը 9 ձայնով ընդդէմ մէկի ընդունեց սկզբունքով եւ որոշեց յանձնարարել Ինքնապաշտպանութեան Կոմի-

տէին՝ Բիւրոյի հետ միասին ի կատար ածել այդ, հնարաւորութեան սահմաններում: Թուղթիկների վերաբերմամբ էլ որոշուեց, որ բաց թողնուին աւելի սխտեմատիկ կերպով եւ լաւ խմբագրուած, Ինքնապաշտպանութեան Կոմիտէի եւ Բիւրոյի կողմից:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ ժողովրդի մէջ շատ թոյլ է ուզմական ոգին եւ զէնքի սէրը եւ այն, որ մինչեւ այժմ Դաշնակցութիւնը համամատարար քիչ ուշադրութիւն է դարձրել ուզմագիտական արհեստը զարգացնելու վրայ, ժողովը յանձնեց Բիւրոյին եւ բոլոր կոմիտէներին՝ կազմել իրանց կից օժանդակ ուզմական մարմիններ, որոնք յատկապէս զբաղուին ուզմագիտութիւն եւ զինավարժութիւն տարածելով մեր մէջ, բազմացնելով զինուորական խմբերի թիւը. չինսայլ այդ նպատակի համար նոյնիսկ ծախսեր, պատրաստելու համար ինստրուկտորներ(13), ուզմագէտներ, լաւ զինագործներ եւ այլն, Ռուսաստանում կամ արտասահմանում: Նոյն այդ օժանդակ ուզմական մարմինները պէտք է Բիւրոյի կամ կոմիտէների խորհրդակցութեամբ եւ աջակցութեամբ առաջ տանեն զէնքեր գնելու եւ ժողովուրդին մատակարարելու գործը:

Եկեղեցական կալուածական խնդրի վերաբերմամբ որոշուեց շարունակել դեռ սկսած դրութիւնը, բայց քանի որ այդ հարցով հետաքրքրուած է ոչ միայն Դաշնակցութիւնը, այլ եւ բոլոր շրջանները, ուստի պէտք է երեք մեծ կենտրոններում — այն է՝ Երեւանում, Տիֆլիսում եւ Բազում — խառը ժողովներ կազմել բոլոր շրջանի մարդկանցից եւ այդ հարցը զննել նրանց առաջ:

- (1) Թիֆլիս: Ռայոնական յարգ ժողովի (1904 Յուլիս) տնտեսաբարնիւն կը հետեւցնեն, որ այս ժողովը տեղի ունեցած է 1904 Մայիսին:
- (2) Ալեքսանդրապոլ:
- (3) Գանձակ:
- (4) Հիւսիսային Կովկաս:
- (5) Մոսկուա:
- (6) Հաւաթօրէն՝ Ոսկանապատի (Բազում):
- (7) Մասնայ:
- (8) Հաւաթօրէն՝ Ջրաբերգի (Կարսի):
- (9) Հայ եկեղեցական կալուածներու յարգումն գրասենյակին:
- (10) Հաւաթօրէն՝ Մրգաստամի (Երեւանի):
- (11) Անկարգապահ, հակակարգապահական:
- (12) Գաշնակցային:
- (13) Մարմին՝ որ կազմուած էր Երբորգ Ընդ. ժողովէն առաջ, վաղիս համար ցարակաճ հակահայ ճաղափակումներն զէն կովկասահայ ժողովուրդի ցուցակած-իմաստաւորական գործը: Երբորգ Ընդհանուր ժողովի որոշմամբ, իմաստաւորաբար Կ. Կոմիտէն գործած էր կուսակցական մարմին՝ իրեն կովկասի Պատասխանատու Կ. Կոմիտէ (տե՛ս էջ 119):
- (14) Այլ գրազուլ չունեցող եւ լրիւ տրամադրուած կուսակցական գործին:
- (15) Ազիւսակները, տախտակները:

2) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ (1904 ՅՈՒԼԻՍ)

25-26 Յուլիսին Մ. Ք. ում(1) կայացաւ Արեւելեան Բիւրոյի շրջանի արտակարգ Ռայոնական ժողով: Հրաւիրուած եւ ներկայ էին ձայն տալու իրաւունքով պատգամաւորներ՝ 1) Ջրաբերգի, 2) Քարի, 3) Մրգաստամի, 4) Ոսկանապատի, 5) Նաւահանգիստի, 6) Արեւել. Բիւրոյի, եւ խորհրդակցական ձայնով՝ 1) Ամերիկայի ընկերը, 2) Վանի ընկերը, 3) ընկ. Գր. Վրէժից, 4) Արեւմտեան Բիւրոյին ընկեր Ղ. (2):

Առաջին նիստում Բիւրոյի ներկայացուցիչը բացատրեց, որ ի նկատի ունենալով քաղաքական բարդութիւնների հանգամանքները եւ Սարուստանի(3) բռնած սպառնական դերը դէպի մեր դատը Երկրում, հրաւիրուած է ներկայ ժողովը՝ վճռելու թէ ի՛նչ ընթացք պէտք է տալ մեր գործունէութեան եւ Ընդհանուր ժողովում ու Ռայոնական Մայիսեան ժողովում ծրագրուած տնելիքը ի՛նչպէս պէտք է շարունակենք:

Կարծիքների փոխանակութիւնից յետոյ պարզուեց, որ թէպէտ Բարձրաւանդակը(4) ընկճուած է, բայց հարցը, որ կապուած էր Բարձրաւանդակի հետ, դեռ չէ վերջացած, այլ շարունակուած է ուշադրութիւնը դրուակել թէ՛ դիպլոմատիայի եւ թէ՛ Սուլթանի. ահա թէ ինչու ժողովը որոշեց (5 ձայնով ընդդէմ 1ի) որ հարկաւոր է սահմանների վրայ շարունակել գործունէութիւնը, որքան էլ այդ գործունէութիւնը անկասկած աւելի քիչ արժողութիւն ունենայ Երկրի ներսում շարժման հետ համեմատած: Միւս կողմից, ժողովը որոշեց Երկրի ներսը ուղարկել, ինչ ճանապարհով կարելի լինի, ուզմամբերը (մանաւանդ նորի ծայրեր) ու կարող անհատներ: Ղեկավարելու եւ իրագործելու [համար] այդ որոշումները, ժողովը ընտրեց լիազօր մի զինուորական մասնախումբ՝ երկու Ջրաբերգի ընկերներից (Լ. եւ Ա.) եւ մի Բիւրոյի անդամից, Մրգաստանում լրացնելով այդ թիւը պ. Թորոսով: Մասնախումբը գործելու է մինչեւ Դեկտեմբեր, երբ կայանալու է Դաշնակցութեան Խորհուրդի գումարումը: Մի ձեռնարկ կը լինի թէ մի քանի՝ որոշելու է այդ զինուորական մասնախումբը: Այդ նիստին Ջրաբերգի ընկերը առաջարկեց ժողովին հրաւիրել մի հայ սպայ պ. Լ., որ շատ մօտիկ ծանօթ լինելով յեղափոխական մեր գործունէութեան, ունի մի առաջարկուելիք ծրագիր՝ զինուորական տեսակէտից շատ կարեւոր: Ժողովը մեծ ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկը, հրաւիրուեց սպայ Լ., որը առաջարկեց մի նոր զինուորական ծրագիր, որի հիման վրայ՝ ձեռնարկուելու է լուրջ գործ մեծ ծաւալով (Դաշնակցութիւնը կ'ունենայ մի պատկառելի զօրք, մօտ 7-10.000 հոգուց բաղկացած, նախկին ռուս ծառայութեան մէջ եղած զին-

ուորներից. պէտք է ունենայ ունտեր-օֆիցեր(6) մի զարոց եւ բաւականին թուով օֆիցերներ(7), որոնք միայն պէտք է ղեկավարեն գործը: Խաղաղ ժամանակ, նախապատրաստական շրջանում, պէտք է բոլոր հայ ազգաբնակչութիւնը բաժնել որոշ զինուորական կազմերի(8). այս վերջինները իւրեանց շուրջը պատերազմի ժամանակ համախմբելու են որոշ քանակութեամբ պահուի զինուորներ, տարեկան ծախսը լինելու է մօտ 100.000 ռուբլի: Ժողովը ողջունելով յեղափոխական այդ նոր շրջանը, երբ հայ սպաները մղուելու են ամենայն սիրով յեղափոխական ասպարէզ, որոշեց յանձնել այդ լուրջ ծրագիրը մշակելու [պատասխանատուութիւնը] մի մասնաժողովի, 6 հոգուց բաղկացած, — երեք՝ հայ յեղափոխութեանը նուիրուած սպաներից, երկու՝ հին զինուորական գործերին հմուտ ընկերներից եւ մի Բիւրոյի անդամից:

Մասնաժողովը պէտք է հաւաքուի Հոկտեմբերից ոչ ուշ եւ երկու ամսուայ ընթացքում մանրամասն ծրագիր մշակի եւ ներկայացնի մի սպայի միջոցով Դաշնակցութեան Խորհուրդին: Անդամները պէտք է ընտրի Բիւրոն՝ Կ. Կոմիտէների օգնութեամբ. Բիւրոն պէտք է հոգայ այդ ժողովի ծախքերը:

Այդ հարցից յետոյ Ռայոնական ժողովը զբաղուեց մի շարք ուրիշ հարցերով.

1.— Վրէժստամի եւ Երկրի գանազան վայրերը պահանջում են իմտիլիգն(9) ոյժեր: Որոշուեց որ այդ պահանջները բոլորն էլ արդարացի են եւ ըստ կարելու այն պէտք է զոհացնել շուտով: Դիմելու է Երեւանին եւ Վարդանին՝ Վրէժի եւ Շամի համար, դիմելու է Ս. Օ. ի: Պատմաբան Լ. Մինասեանը եւ Տիգրանը արդէն Վրէժից անցած պէտք է լինեն Շամ ու Շատախ: Դիմել Կոստի Համբ [արձուձեանին] Ոսկանապատում, եւ որի շնորհիւ: Ամերիկայի ներկայացուցիչը խոստացաւ մատակարարել կազմակերպութիւնը այդպիսի ոյժերով. [նա] պէտք է խորհրդակցի ոյժերի որակի մասին՝ Բիւրոյի հետ: Խօսուեցաւ եւ որոշուեցաւ որ Վրէժի համար հարկաւոր է ունենալ բարձր դիրքով մի ձեռնհաս ներկայացուցիչ, որը միշտ ղեկավարի եւ աշխատի բարելուելու դրութիւնը Վրէժում, եթէ ոչ այնտեղի մեր ազատութիւնը կարող է խանգարուել զանազան ազդեցութիւնների տակ: Գտնել այդպիսի մարդ:

2.— Բիւրոն տեղեկութիւններ չի ստալիս զանազան կոմիտէներին՝ գործերի ընթացքի մասին: Պարզուեց, որ ժամանակի եւ ոյժերի պակասութիւնն է եղել դորա պատճառը. որոշուեց Բիւրոյի կից ունենալ մի վարձատրութիւն ստացող քարտուղար, որը պարտաւոր է 2 շաբաթ մի անգամ բոլոր Կ. Կոմիտէները գործերին տեղեկ պահել:

3.— Մեծ Քաղաքի(1) կոմիտէի բաւարիւնը՝ կո-

Թերի եւ ծայրերի գնելու գործում: Պարզուեց, որ ընտրուած է նոր կոմիտէ՝ վեց հոգուց, որը աւելի կանոնաւոր եւ ուժեղ գործունէութիւն պիտի ցոյց տայ:

4.- Բնակիչացիքի հարցը.- պարզուեց, որ ամէն տեղ պահանջ կայ արագացնել այդ գործը. վճռուեց խնդրել Ինքնապաշտպանութիւն Կ. Կոմիտէից՝ արագացնելու գործը, ներկայացնելով յատուկ ոյժեր դորա համար:

5.- Բոլոր ցոյցերը գամագամ վայրերում պետք է միակերպութիւն ունենան (օրինակ՝ Յուն. 12ի ցոյցերը(10) տարբեր են կատարուել Մրգաստանում, Քարում եւայլն). որոշուեց խնդրել Ինքնապաշտպանութիւն Կ. Կոմիտէից՝ միակերպութիւն մտցնել եւ ունենալ մի շրջիկ, որը ամիսը մի անգամ այցելելով դաւառները, տեղեկութիւն տայ Ի. Կ. Կ.ին դաւառական կոմիտէներէ գործունէութեան եւ ծրագրուած անխիջներէ մասին՝ եթէ դոքա ծայրագոյն գաղտնիք չեն ներկայացնում:

6.- Քարի մերկայացուցիչը պահանջում է 3 պրոպագանդիստ.- նաւահանգիստին վճռուեց՝ վերջինի պահանջին գոհացում տալ (ուղարկուեց արդէն պ. Կ.): Ժողովը որոշեց՝ ուր որ կարեւոր է ուղարկել պրոպագանդիստներ եւ մեծ քաղաքներում պատրաստել մի շարք պրոպագանդիստներ (իրագործուած է Մ. Ք.ում), որովհետեւ ահապին պահանջ է զգացուած: Որոշուեց որ պրոպագանդիստ-շրջիկները չպէտք է պարապեն փող հանգանակելով, այլ լինեն միմիայն գաղափարի տարածողներ:

7.- Կազմակերպութեան մերթիւմ գործունէութեան մէջ հարկաւոր է մտցնել միակերպութիւն.- Որոշուեց յանձն(արար)ել Բիւրոյին՝ կազմել մի յանձնաժողով 2 հոգուց, որը պէտք է 2 ամսուայ ընթացքում մշակի ծրագիր եւ գրադուի օրինակելի յեղափոխական գրքուածքների ցուցակը կազմելով, գրադարանի համար:

8.- Տէր Գրիգորի եւ 40 ընտանիքների հարցը, որոնք ուզում են օրթոտքութիւնը ընդունել: Որոշուեց ա[հուր]ի ենթարկել Տէր Գրիգորին, եւ եթէ հարկաւոր է՝ օրթոտքա քահանային: Խնդրել Ինքնապաշտպանութիւն Կ. Կ.ից՝ դուրս թողնել մի թուղթիկ, որով նախազգուշացուած են բոլոր հայերը, թէ ամէն մի հայ, որ ներկայ պայմաններում ընդունում է օրթոտքութիւնը (ուղղափառութիւն), ճանաչուած է դաւաճան եւ ենթարկուելու է ամէն տեսակ հալածանքների, իր մի վարակիչ ախտ տարածող:

9.- Թուղթիկների վրայ պէտք է ուշադրութիւն դարձուի. պէտք է լինի մի խմբագրական մասնաժո-

ղով, որը միայն խմբագրելու է թուղթիկները (Ղարբի, Եղիշէ, Բիւրոյի մի անգամ):

10.- Ջրաբերդի եւ Մրգաստանի առաջարկութիւնները՝ աւազակային խմբեր ուղարկել Երկրի ներսը կամ սահմանազրիխի վրայ գործելու՝ յանձնել զինուորական մասնաժողովին:

11.- Խնդրել Արեւմտեան Բիւրոյից՝ ուղարկել շուտով Ընդհանուր Ժողովի վերջին ծրագիրը, կամ եթէ նորը պատրաստ չէ՝ գոնէ հինը. մեծ պահանջ կայ ամէն տեղ:

12.- Էկզէկուցիայից վնասուող Իգդիրի ժողովրդի օգտին հանգանակութիւն բանալ ամէն մի կոմիտէի շրջանում:

13.- Պարտաւորեցնել բոլոր Կ. Կոմիտէները ունենալ մի ազատ անդամ կուսակցութեան հաշուին ապրող:

14.- Փողի պահանջ Երկրում եւ Եամում.- Հասցընել: Բիւրոն արդէն կարգադրել է 10.000 ու. ուղարկել Փրանսական դեսպանի միջոցով Մուշ եւ Սասուն՝ տառապանքների բաժանելու. հանգանակութիւն բանալ նոցա օգտին. գիծը փորձելու համար Քարին յանձնարարուեց ուղարկել Կորոս 500, իսկ Մրգաստանից Եամ 2000 ու.:

15.- Կովկասում մի քերթ ունենալ շուտով. արդէն աշխատուած է:

16.- Հաշուետուութիւն. պէտք է կանոնաւոր ամիսը մի անգամ ուղարկել Բիւրոյին, վերջինը կ'ուղարկի Խմբագրութեանը: Հաշիւները կոնսորիի ենթարկել ըստ կարելոյն շուտ շուտ:

17.- Այն եկեղեցական փողերը որ զանազան մարդկանց ձեռք է ընկել՝ հաւաքելու ուղարկել Արեւմտ. Բիւրոյին, անգլ. բանկը մտցնելու, Հայ Եկեղեցու ազատ ներկայացուցչի տրամադրութեան տակ՝ ապագայ Հայաստանում:

18.- Հրատարակել թուղթիկ՝ որով նախազգուշացուած է, որ ամէն մի դաշնակցական որ կատարելով զեղծումներ պատժից փախչելու համար անցնում է հնչակեանների շարքերը, կը պատժուի իբրեւ մի դաշնակցական յանցաւոր:

19.- Վրէժի ընկերը առաջարկեց մօտիկ պահել հին գործիչներին, որոնք հեռացել են գործից: Ժողովը որոշեց որ հին գործիչները միշտ ուրախութեամբ գործի են կանչուած, եթէ միմիայն նոքա որեւէ ձգտում են

ցոյց տալիս իսկապէս գործելու, ոչ թէ խօսելու. ընդհանրապէս, նորերի վրայ աւելի մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել եւ գրաւել, որովհետեւ նոքա տեղեկ չեն գործի պահանջներին եւ կարիքներին, եւ քաշուած են իրենք առաջարկել իրանց՝ գործի համար:

20.- Վրէժի գիծը (Թերթեր փոխադրելու) կարող է փճանալ ուսու գրքերի շնորհիւ, որոնք վերջերս մեծ քանակութեամբ են գալիս. գրել նաւահանգիստ՝ փոխել ուսու գրքերի գիծը:



Բիւր. [?] ստացել ենք Ժընեւից նամակ. ահա նրա մօտաւոր բովանդակութիւնը.-

Յուլ. 14ին ուղարկուած է նամակ Ոսկանապատ (բովանդակութիւնը մեզ յայտնի չէ):

Տէ 7 ուղարկուած է արտ. 500, աստ 200, Ք. 400, նաւահանգիստ 500 [օրինակ]. խնդրում են գրել ո'ր գծով եւ ինչքան յարմար է ուղարկել: Փորձի համար ուղարկել են Մեշեդ՝ Չոփուտի տուած հասցէով՝ 40 օր.:

Ջրաբերդից ուզել են մի շարք Թերթերի պատճէներ. եթէ եկող լինի՝ ուղարկել, եթէ ոչ մի քանիսը գաղտնի թանաքով ուղարկել փոստով:

Սասունին դրամ ուղարկելու մասին հեռագիր է տրուած Մ. Ք.ից եւ Ոսկանապատից. դա անյարմար է, հարկաւոր է միայն մի տեղից (խնդրում են Ոսկանապատին աչքի առաջ ունենալ): Կաթողիկոսի պատգամաւորութիւնը լաւ ընդունելութիւն ունեցաւ Պարիզում. զնացին Լոնտոն. մանրամասն[ութիւն] չկայ: Աշխատում է մի եւրոպացի թղթակից ուղարկել Երկիր եւ Կովկաս. կարծում են որ կը յաջողուի: Մեր ընդհանրումները եւրոպական Թերթերում ներկայացուած են իբրեւ կոտորածներ («կոտորածներ» վերնադրի տակ). դա ցաւալի է: Մեր տուած թուերին, ինչպէս երեւում է, շատ չեն հաւատում: Քիչեաւ խնդրել է չափաւորացնել լուրերը: Երկրի ներսը առայժմ չէ կարելի ուղարկել: Յարձակողական[?] ձեռնարկներ հարկաւոր են, բայց լաւ է մէկ ձեռնարկ ուժեղ, քան մի քանիսը զանազան կէտերից: Չգալի հարուած չենք կարող տալ թշնամուն, իսկ թշնամին մեր անյաջողութիւններից օգտուած է. յեղափոխութեան վարկն էլ կարող է ընկնել թշնամու աչքին եւ մեր ժողովրդի աչքին: Երկրի նամակները հարկաւոր է մշակելուց յետոյ տպել(11):

(1) Մեծ Գազաբում, այսինքն՝ Թիֆլիս:
(2) Սինո Վրացեանի կատարած քաղաքագրութիւն օգտուելով, մերկայ հատարի առաջին հրատարակութեան մէջ տուած էինք 1904 Յուլիսի Ռայնական ժողովի արձանագրութեան կարճ հատուած մը (տե՛ս էջ 201): Տեղամուտներ յիշատակումը (քուսմի կարգով՝ Կարս, Ալեքսանդրապոլ, Երեւան, Բաքու, Պարս...) մե-

զի յստակ գազափար չի տար մեշուշտ մասնակցող անհասանելի մասին: «Ընկ. Գր. (Վրէժից)» մեզի ամեամօք է, իսկ շարունակեալ Բիւրոյի թղթեր Ղ.Յ մ պետք է Աւետիս Անարանեանը ըլլայ (Ղարբի):

- (3) Թուսաստանի (կուսակցական ծածկամուկը գործածուած է իբրեւ երկրին ամուսն):
- (4) Սասունը:
- (5) Թորոսը Գալուստ Ալայեանն է (գործածած է Յան Գալվի ծածկամուկը):
- (6) Ենթասպանբու:
- (7) Սպանիա:
- (8) Զինուորական շրջանակներու կամ շրջաններու:
- (9) Մտաւորական, կամ ամուսնացած՝ որոշ գարգացման տէր, ուսեայ, բանիւսաց:
- (10) Կակեմարի ու հայ եկեղեցական կալուածներու եւ հարքստութեանց յարգումիս գրաւման ցարակամ հրովարտակիս (12 Յունիս 1903) դէմ ծառայման արտայայտութիւններում՝ Անդրիպիկոսի գամագամ քաղաքներում մէջ:
- (11) Ձեռագրի աւարտին, էջին տակ, կամ երկու բառեր՝ շատ դժուար ընթերցանելի. արդեօ՛ք զարթեմերով՝ ԱՄՍՍԵՂՍԱՆ (Արեւելեան Բիւրոյիս համար գործածական ստորագրութիւն մը): Յամեայն դէպս, աստղամիջներով բաժնուած վերջին մասը (քեւս միւսնայն կապոյտ մատիտով ու ձեռագրով գրուած) Արեւմտեան Բիւրոյի մէկ ճամակին ամփոփ վերաբարագրութեան է եւ կտպ չաւթի Ռայնական ժողովի արձանագրութեան հետ:

3) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐՁԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ (1904 ՍԵՊՏԵՄԵՐ)

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը 1904 թուի Սեպտեմբեր 15ից դուստրից Մեծ Գաղաքում(1) Կովկասեան Երջանական(2) Արտակարգ Ժողով, որն ունեցաւ չորս նիստ: Ձեռնարկներ ներթերն էին.-

- 1) Պահեստակոչի (մորթիկապիս) խնդրը.
- 2) Դաղթականների խնդրը.
- 3) Եկեղեցական եւ դպրոցական դրամների խնդրը.
- 4) Մեր դիրքը դէպի Հնչակեանները.
- 5) Նոր խումբ Երկիր անցկացնելու խնդրը.
- 6) Գործադուլների ժամանակ բանուորներին նպաստելու խնդրը.
- 7) Դաշնակցութեան կից գրատիրաց ընկերութիւններ:



1) Պահեստակոչի խնդիրը(3).- Մօտ ժամանակներում Կովկասից դէպի Հեռաւոր Արեւելք են տարուելու պահեստի զինուորների մեծ քանակութիւն, որոնց թւում եւ հայեր: Արդեօք ինչ դիրք պէտք է բռնի Հ. Յ. Դաշնակցութիւնը այդ խնդրի վերաբերմամբ. մասնաւոր որ յիշեալ պահեստի զինուորներից շատերը զանազան ձեւերով գիժուումներ են արել Դաշնակցութեան

կոմիտեներին՝ պաշտպանել իրանց եւ միջոցներ ցոյց տալ խուսափելու, չկատարելու պետական այդ հրամաններ: Պահեստի զինուորների ընդհանուր տրամադրութիւնն է, ինչպէս պատմեցին գաւառական ներկայացուցիչները, չգնալ Հեռաւոր Արեւելք, բայց թէ ինչպէս խուսափել գալիք վտանգից, այստեղ մնում են մուրուսած եւ դիմում անում Դաշնակցութեան: Պրն. Նախագահը այս խնդրի առթիւ շեշտեց հետեւեալը. — Մենք, իբր սոսկ հայեր, պարտաւոր ենք որեւէ դրական միջամտութիւն ցոյց տալ այդ մեր առաջ դրած խոշոր խնդրում: Այն հայը, որ ճիշդ մի տարի առաջ Կովկասի համարեա բոլոր կէտերում իր դիմադրութիւնը ցոյց տուեց եկեղեցական կալուածների դրաման ժամանակ, շատ տեղ նոյնիսկ նահատակուեց, արիւն թափեց, այդ հային երբեք վայել չէ եւ շատ անպատուաբեր է եթէ նա լուռ ու մուկ ոչխարի նման կատարի պետական այդ հրամանը, — գնալ օգնութեան ուսաց զօրքին Հեռաւոր Արեւելքում: Իսկ իբր յեղափոխականներ, — առում էր նախագահը, — պարտաւոր ենք ժողովրդի արժանապատուութեան զպայմունքը բարձր պահել եւ ամէն դէպքից օգտուելով բարձրացնել ժողովրդի ապաստանական ոգին: Ուստի մենք պէտք է աշխատենք մեր առաջ դրուած այդ խնդրում դրական միջամտութիւն ցոյց տալ:

Այս խնդրի շուրջ շատ խօսակցութիւններ ու վիճարանութիւններ եղան: Մտքերի փոխանակումից յետոյ առաջարկուեցին երեք բանաձեւեր. —

ա) Ի նկատի ունենալով խնդրի ծանրակշիռ լինելը՝ չխառնուել բոլորովին, ձեռնպահ մնալ եւ ամէն ինչ թողնել իրերի ընթացքին:

բ) Խորհուրդ տալ բոլոր պահեստի զինուորներին՝ որքան հնարաւոր է փախուստ տալ. միեւնոյն ժամանակ յայտարարելով նրանց, որ Դաշնակցութիւնը չի կարող յարմարութիւններ տալ. միայն խոստանում է գրել իր ընկերներին՝ որքան կարող են աջակցեն փախչողներին:

գ) Երկրորդ բանաձեւը, աւելցրած հետեւեալը, որ պահեստի զինուորներից նրանք, որոնք կը բռնուեն եւ կ'առաջարկուի նրանց գնալ Հեռաւոր Արեւելք՝ հրամարուեն, առելով՝ «չենք ուզում գնալ» եւ զէնքերը վայր դնեն:

Այս երեք բանաձեւերից, ձայների մեծամասնութեամբ անցաւ երկրորդ բանաձեւը:

Չմոռանանք յիշելու, որ այդ խնդրի առթիւ լրացուցիչ տեղեկութիւններ մի նամակով տուել են Ջրաբերդի(4) ընկերները. — իրանց շրջանից տարուելու են 1.600 հոգի՝ 1900, 901 եւ 902 թուականների պահեստի զինուորներից, որոնցից մօտ 1.000 հոգի լինելու են բացառապէս հայերը. նրանց կարծիքով, եթէ դիմադրութիւն ցոյց արուի կառավարութեանը, նոյն ոգով աջակցելու են իրանց՝ նաեւ տեղացի յոյներն ու մալակները:

Յիշատակութեան արժանի է նաեւ այն հանգաման-

քը, որ այս գործում կարեւոր է համարուած նաեւ վերաց մասնակցութիւնը, որի առթիւ եւ դիմում է նրանց յեղափոխական երկու կուսակցութիւններին՝ ժողովուրդներին, որոնք արդէն իրանց պատրաստակա-նութիւնն են ցոյց տուել մեզ հետ լինելու, եւ սոցիալ-դեմոկրատներին, որոնք դեռ պատասխան չեն տուած:

2) Գաղթականների խնդիրը(5). — Գաղթականների մասին Ռուսաց կառավարութիւնն արդէն որոշում է կայացրել ուղարկել նրանց Ռուսաստանի ներքին նահանգները: Երջանական ժողովն այն կարծիքին էր, որ ամէն կերպ պէտք է աշխատուի չիրագործել այդ կարգադրութիւնը եւ երկար խօսակցութիւններից յետոյ եկաւ հետեւեալ որոշմանը, — նախ դիմել Դաշնակցութեան բոլոր մարմիններին՝ ճիշդ թիւ հաղորդելու իրանց շրջանում գտնուած գաղթականների մասին. եւ երկրորդ՝ դիմել Վրէժի(6) մեր ընկերներին, տեղեկութիւններ խնդրելով թէ՛ ո՛րքան հնարաւորութիւն կայ Մակուայի խանութեան մէջ գերդատեղ ընտրելու եւ կամ առհասարակ Պարսկաստանի որեւէ տեղում հնար կա՞յ նրանց տեղաւորելու:

3) Եկեղեցական եւ դպրոցական դրամների խնդիրը. — Անցեալ Երջանական ժողովում այս խնդրի առիթով խօսակցութիւն լինելով՝ որոշուել էր, — այն դրամները, եկեղեցապատկան եւ դպրոցապատկան, որոնք այսպէս թէ՛ այնպէս կառավարութեան ձեռքը չեն անցած, այլ ներկայումս գտնուում են մասնաւոր անձանց մօտ, Դաշնակցութիւնը իր վրայ վերցնի այդ դրամների հաւաքումը եւ դնի ի պահ արտասահմանեան ազատ բանկերից մէկում, մինչեւ մեր Եկեղեցին նորից ազատ դրութիւն կը ստանայ, որից յետոյ կրկին կը յանձնուի իրեն: Այս որոշման դէմ ներկայ Երջանական ժողովում առարկութիւններ եղան: Ոմանք ժողովականներից պընդում էին թէ աւելի նպատակայարմար կը լինի, եթէ դրամները հաւաքուեն եւ անմիջապէս գործադրուեն ազգօգուտ հիմնարկութիւնների վրայ, քանի որ այդ դրամները հասարակութեան սեփականութիւնն են կազմում:

Այս առթիւ երկար վիճարանութիւններից յետոյ առաջարկուեցին երեք բանաձեւեր. —

ա) Թողնել անցեալ Երջանական ժողովի որոշումը անփոփոխ:

բ) Ժողովել եւ պահել Դաշնակցութեան դրամարկում անձեռնմխելի, իսկ գործադրութեան եղանակը թողնել ապառայ Երջանական ժողովների հայեցութեանը:

գ) Ժողովել դրամները եւ պահել ազատ բանկերից մէկում. ապա յանձնարարել Դաշնակցութեան բոլոր մարմիններին՝ միջոցների ձեռնարկել իմանալու ժողովրդի կարծիքը այդ դրամները գործադրելու մասին. ըստ այնմ էլ սկսել գործադրել:

Անցաւ երրորդ բանաձեւը՝ ձայների մեծամասնութեամբ:

4) Մեր դիրքը դէպի Հնչակեացները. — Հ. Յ. Դաշնակցութեան վերջին Ընդհ. ժողովը հետեւեալ որոշումն է կայացրել այդ խնդրի վերաբերմամբ, — Չճանաչել Հնչակեան խումբը իբր իր կոչման բարձրութեան վրայ կանգնած յեղափոխական կուսակցութիւն. դրանց հետ որեւէ յարաբերութեան մէջ մտնելը թողնուած է տեղական մարմինների հայեցողութեանը(5): — Ներկայ Երջանական ժողովը, ի նկատի առնելով Ընդհ. ժողովի այդ որոշումը՝ վճռեց, — բոլորովին յարաբերութեան մէջ մտնել Հնչակեան մարմինների հետ. բայց որովհետեւ շատ տեղերում Դաշնակցութեան տեղական մարմինները ստիպուած են լինում այս ու այն դէպքի պատճառով Հնչակեան տեղական մարմինների հետ բանակցելու, այդպիսի դէպքերի համար յանձնարարուած է դաշնակցական մարմիններին՝ նրանց հետ բանակցութեան մէջ մտնելիս լինել աւելի վճռական. այսինքն՝ այնպիսի դէպքում, երբ որեւէ պատիժ կամ վճիռ վերապահուած է կատարելու Հնչակեան մարմինին եւ նա դանդաղում է, կամ խոստանում է եւ չի կատարում, այդպիսի դէպքերի համար պէտք է լինել վճռական ու գործադրել վճիռը կամ պատիժը՝ առանց նորից բանակցութեան մէջ մտնելու Հնչակեան մարմնի հետ, կամ նորից ժամանակ նշանակելու որ նա գործադրի:

5) Երկիր նոր խումբ անցկացնելու խնդիրը. — Անցեալ Երջանական ժողովը որոշել էր մի խումբ ուղարկել Երկրի ներսը, հարկաւոր աղմուկը հանելու համար: Ի նկատի ունենալով որ ներկայումս քաղաքական պայմանները փոխուած են, ներկայ Երջանական ժողովը յարմար համարեց չգործադրել անցեալ Երջանական ժողովի որոշումը. իսկ դրա տեղ աւելի ուժ տալ գործադրելու անցեալ Երջանական ժողովի այլ մի որոշումը՝ խմբերով ցոյցեր անել սահմանազուխներում. բացի այդ, որոշուեց ուժ տալ նաեւ ռազմաթիւրք եւ այլ հարկաւոր նիւթեր ուղարկելու եւ օգնութեան հասնելու վերջէստանի (6) գծով Երկրի ներսը՝ մեր ընկերներին:

6) Գործադուլների ժամանակ բանուորներին նը-

պաստելու խնդիրը. — Մնդիր ծագեց թէ արդեօք 'Իաշնակցութեան տեղական մարմինները իրաւունք ունեն' իրենց դրամարկից օգնութեան հասնելու գործադրուների ժամանակ դաշնակցական խմբերին պատկանող բանուորներին: Որոշում՝ նպաստել միայն փոխարի-նաբար, այն էլ միայն մի անգամ, որպէսզի սխտեմա-թիկ չդառնան նրանց դիմումները: Որոշուեց նաեւ այդպիսի նպատակների համար Դաշնակցութեան կից ունենալ բանուորական դրամարկը, ինչպէս ունենք Կարմիր Պաշտ անունով դրամարկը. մանաւանդ որ վերջին Ընդհանուր ժողովի որոշմամբ վճռուած է բանուոր-ների շահերը ի նկատի ունենալ եւ մեզ վրայ վերցնել:

7) Դաշնակցութեան կից գրասիրաց ընկերութիւնները. — Ջրաբերդի Կ. Կոմիտէի ներկայացուցիչը խընդիր յարուցեց թէ արդեօք մեր մարմինը իրաւունք չու-նի՞ օգնութեան հասնելու Գրասիրաց Ընկերութեանը, որը 1.600 ուրբու կարիք ունի ներկայումս: Երջանական ժողովը սկզբունքով մերժեց յիշեալ առաջարկը, եւ մեծամասնութիւնն այն կարծիքին էր՝ թէ կարելի է հիմնել Դաշնակցութեան կից այդպիսի ընկերութիւն-ներ, միայն թէ անկախ Դաշնակցութեան դրամարկից եւ բոլորովին առանձին միջոցներով:

- (1) Թիֆլիս:
- (2) «Ռայոնակաթի հայացումն է. երկու ձեւերն ալ գործածուած են, «Ռայոնակաթը ըլլալով աւելի ընթացիկ: Նոյն իմաստով (ընթացիկ շրջանի մը մէջ գործող Բիրոյի, Պատասխանատու Մարմիններու, կեդրոնական առաջին կոմիտէներու հաւաք) երբեք գործածուած է նաեւ «Երջանային» որակուած, ինչ որ սխալ է, քանի «Երջանային» կը վերաբերի մէկ կեդրոնական կոմիտէ-քեան շրջանի կոմիտէութեանց եւ կոմիտէներու ներկայացուցիչներու հաւաքին:
- (3) Հստած է պահեստի զինուորներու գորակալի կամ գորա-հաւաքի իմաստով:
- (4) Կարսի:
- (5) Կը վերաբերի Սեւ Մշակու կեդրոնները ժամանակաւոր բնակարաններ հաստատած արեւմտահայ գաղթականութեան:
- (6) Պարսկական Ատրպատականի (Երեւոյն) մարմինն է, վերջ-ժեստամը՝ շրջանը:

Դ. ԲԻՒՐՈՆԵՐՈՒ ԵՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1) ԵՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՑԻ

Հ. Յ. Դ. պաշտօնաբաշխի վրայ. ձեռագիր խմբագրի

18 Փետրուար 1899

Ընկերներ,

Նկատելով որ մօտերս տեղի պիտի ունենայ գինաթափուկի համաժողովը, օգտակար կը կարծենք — ինչպէս խորհուրդ կուտան մեզ նաեւ քանի մը ընկերներ — եթէ այլեւայլ տեղերէ ժողովրդային դիմումներ կատարուին այդ համաժողովին ջով՝ հայկական դատին պաշտպանութեան համար:

Թէեւ մտադիր էինք ի սկզբանէ այդ կարգի միտինդներու(1) վերաբերեալ յայտագիր մը ներկայացնել ձեզ, բայց թողուցինք այդ միտքը, նախ՝ անոր համար, որ յեղափոխական կազմակերպութեան ակներեւ նախագրուութիւնը(2) չընդհամարուի այդ գործին մէջ եւ միտինդները աւելի ժողովրդային հանգամանք մը ունենան, եւ երկրորդ՝ որ չափէ աւելի յայտնի է ամէնուն մեր հայրենիքին արդի կացութիւնն ու պահանջները:

Ուստի կը շատանանք միայն առաջարկելով մեր բոլոր կոմիտէներուն, որ ո՛չ մէկ ջանք չխնայեն — նիւթական թէ բարոյական — յատուկ յանձնարումներու միջոցով հոյակապ միտինդներ կազմակերպելու համար, կարելի եղածին չափ բազմաթիւ կէտերու վերայ:

Միտինդները իրենց որոշումները գրաւոր կը ներկայացնեն, մասնակցողներուն բոլորին ստորագրութիւններովը վաւերացուած, համաժողովի դիւանին, եւ մէկ-մէկ օրինակ ալ միտինդ տեղի ունեցած երկրի կեդրոնական կառավարութեան, խնդրելով որ վերջինս իր պատուիրակին պաշտօն յանձնէ հայկական խնդիրը յուզելու համաժողովին մէջ:

Չափազանց օգտակար պիտի լինէր, եթէ միջոցներ ձեռք առնուին նոյն կարգի միտինդներ կազմակերպելու երկրին տիրող տարրերէն, որոնք իրենց ձայնը բարձրացնէին յանուն հայութեան եւ այդպիսով հանրային կարծիքի ճնշումը գործ զնէին իրենց կառավարութեան վրայ:

Աւելորդ է ըսել, որ հայ միտինդներու կողմէն կատարուելիք դիմումները յատկապէս պիտի շնորհակալանք միտքը՝ թէ վրդովիչ անարդարութիւն եւ նաեւ անգործ-

նական կը լինէր, եթէ համաժողովը, պետութիւններու գինաթափուկի մասին խորհելու ատեն, զանց ընէր բառնալ այն պայմանները, որոնց շնորհիւ այնքա՛ն հայ արիւն թափուցաւ եւ որոնք, եթէ շարունակեն տեւել, անխուսափելի կերպով առաջ պիտի բերեն Խիւրքիոյ մէջ նորանոր եւ արիւնահեղ աղէտներ:

Ընկերական Բարեւներով

ԿՅԻԲ Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրոյի

- (1) Միթիմի, — հաւաք՝ ընդհանրապէս քաղաքական բովանդակութեամբ (անգլիերէն բառ):
- (2) Պետք է ըլլայ, հաւաքօրէն, նախաձեռնութիւնը:

2) ԵՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՑԻ

Նայէ:

29 Մարտ 1899

Ընկերներ,

Փետրուար 15ի մեր շրջաբերականով արդէն խընդրած էինք ձեզմէ, որ ջանաք գումարել տալ ժողովրդական միտինդներ(1) Զինաթափուկի Վեհաժողովին առթիւ, հրաւիրելով պետութիւններու ուշը(2) հայկական խնդրի անյապաղ լուծման անհրաժեշտութեան վերայ:

Որովհետեւ քանի մը նորանոր պարագաներ առիթ կուտան մեզ ենթադրելու որ այդ դիմումները կրնան բազմաթիւ ազդեցութիւնն ունենալ Վեհաժողովին անգամներուն վրայ, կրկին անգամ կու գանք խնդրել ձեզմէ, որ ոչ մէկ ջանք չխնայէք այդ միտինդներու գումարումը եւ անոնց որոշումները Վեհաժողովին ներկայացնելու գործը յաջողցնելու համար:

Պէտք է փութալ հարկ եղած միջոցները ձեռք առնել, քանի որ Վեհաժողովին գումարման օրն ալ շատ հեռու չէ՝ Մայիս 6/18, Լահէյի մէջ (Հոլլանդա):

Ընկերական բարեւներով՝

ԿՅԻԲ Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրոյի

- (1) Միթիմի, հաւաք:
- (2) Ուշագրութիւնը:

3) ԵՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՑԻ

Մեր որամագրութեան տակ գտնուած ձեռագիր օրինակը անբուսակի է, բայց որոշ է որ այս շրջաբերականը գրուած է ոչ աւելի կանուխ, քան 1899ի աշնան (Թարսուի կայսրական բարձրագույն խոփ):

Ընկերներ,

Անցեալ տարուայ Ընդհանուր Ժողովից արդէն անցած է մի տարի: Եստ չէ արուած այդ տարուայ ընթացքում, այնուամենայնիւ կատարուածը անհրաժեշտ եւ շօշափելի քայլ է կազմակերպութեան ապագայ ձեռնարկների յաջողութեան համար: Կ...ում(1) գտնուած մեր ընկերները գրում են, որ շուտով այդ շրջանի բոլոր գլխաւոր կէտերը կապուած կը լինեն միմեանց հետ: Այդ շրջանում տեղական պայմանները անհարթելի չեն եւ լուրջ աշխատանքով ու շօշափելի միջոցներով կարելի է հասնել ժողովում նախագծուած նպատակին:

Վերջապում(2), չնայած անչափ խստութիւններին, տեղական Պատասխանատու Մարմինը կարողանում է դիմանալ, իսկ մօտ ապագայում առաջ կը տանէ իրա նախագծած ծրագիրը: Յունիսի սկզբներում Վասպուրական անցած խումբը (18 հոգուց), երեք ընկեր կորցրելով, այնպիսի դատ տուեց Եւրաֆի ցեղին եւ նրա համախօսներին, որ մօտ ապագայում հաւանական է [է որ] Ֆետայիներ այդ գծով կ'անցնեն առանց դիմադրութեան հանդիպելու...: Վերջապէս Տարօնում «Սերոր Փաշան» մտում է իւր քաջերի հետ ազատ, չնայելով աւերուած զիւղերի, տառնակ սպաննուած աչքի ընկնող հայերի: Սերովը ձեռք չընկաւ եւ Մասուկում 500 զինուորով կատարուած խուզարկութիւններից յետոյ: Տարեց տարի, ամսէ ամիս նրա համակրողների ու ընկերների թիւը աւելանում է:

Բացի այդ, կազմակերպութիւնը արմատ է ձգում եւ ուրիշ երկրորդական վայրերում: Հայ շրջաններից դուրս, Դաշնակցութիւնը ակնկալութիւն է գտնում նաեւ մակեդոնացիների մէջ: Յոյսեր ունի ընկերութիւնը Տաճկաստանում գործող այլ տարրերի վրայ [եւա]:

Այս ամէնը, հարկաւ, շատ միթարական է, բայց միեւնոյն ժամանակ, ի նկատի ունենալով Դաշնակցութեան բարձրագոյն ատենի նախագծած լուրջ նախադիժը, ակներեւ է, որ գործը յաջողցնելու համար անհրաժեշտ է մեր ոյժն ու եռանդը կրկնապատկել, քառապատկել:

Մեր ժողովուրդը համակրած է լուրջ ձեռնարկութիւնների: Դեռ մի քանի տարի առաջ, երբ փոքրիկ բայց սպաւորութիւն թողնող գործերով հարկաւոր էր արքայացեալ ամբոխը դարաւոր քնից, հարկաւոր էր սիրել տալ նրան զէնքը, վարժեցնել զինակրութեան, քաղաքակիրթ ազգերի ուշադրութիւնը դարձնել տանկահայերի անտանելի վիճակի վրայ, դեռ այն ժամանակ ժողովուրդը պահանջում էր լուրջ ձեռնարկներ, հիմնական պատրաստութեամբ: Վերջին տարիների ընթաց-

քում մեր ազգային դատի պաշտպանութեան գործը որոշ չափով առաջ գնաց:

Ժողովուրդը արթնացաւ, զէնքը դնահատուեց, կատարածների ժամանակ շատ պարզ կերպով ապացուցուեց այն ճշմարտութիւնը, թէ ուր կազմակերպութիւնը ուժեղ էր՝ կոտորած չեղաւ (ինչպէս Մասուկի շրջանը), իսկ զէնք եղած տեղերը կոտորածները ստացան համեմատաբար նեղ ծաւալ, եւ հայերի հետ միասին զգալի հարուած կրեցին եւ մեր թշնամիները (յիշենք Վասպուրականը, Մալաթիան, Տիգրանակերտը): Դա բաւական չէր:

Ձէյթունի քաջամարտ կռիւը, դեպքանների միջոցաւ կատարուած բանակցութիւնները ու տարուած յաղթութիւնը (ապառնիկների, 5 տարով տուրքից ազատուելը, քրիստոնեայ կառավարիչ նշանակելը, զէնք կը բերուէ իրաւունքը) ակներեւ դարձրին որ ճակատ առ ճակատ տարած կռիւը ոչ միայն բարձրացում է հայի վարկն ու անունը օտար ազգերի առաջ, այլեւ թշնամիների, նոյնիսկ Ֆանատիկութեան տեղ առաջ է բերում որոշ պատկառանք զէպի ակներեւ ապստամբած «կեաւուրները»:

Աւելի եւս ազնիւ՝ Մասնոյ պարտութիւնը եւ կիսապատրաստ Ձէյթունի յաղթութիւնը ապացուցեց որ միմիայն զէնքով ու լուրջ դիմադրութեամբ կարելի է ձեռք բերել զիջումներ: Բոլորին համար ակներեւ դարձրին որ քանի ուժեղ լինի տարած կռիւը, այնքան զգալի կը լինեն եւ զիջումները: Մեր յաղթանակի չափը համապատասխան է մեր արտադրած ոյժի չափին: Մի՞թէ պարզ չէ, ընկերներ, որ եթէ Ձէյթունը 3 ամսուայ փոխարէն դիմադրէր 5, 10 ամիս, այլ կը լինէին 96 թուի ճակատամարտի հետեւանքները եւ քրիստոնեայ կառավարչի տեղ Ձէյթունը կ'ունենար հայ կառավարիչ, 5 տարով տուրքից ազատուելու տեղ կ'ազատուէր 10, 20, 100 տարով: Մի՞թէ պարզ չէ, որ պաշար ու պատրաստութիւն ունենալով, Ձէյթունի դժուար չէր ձեռք բերել ինքնավարութիւն, կիսանկախութիւն:

Տաճկաստանը փրած է, նա շարունակում է փոսել: Ժամանակի ընթացքում, նա կամ պիտի անդամահատուի, բաժանուի, կամ կ'ենթարկուի մեծ պետութիւնների խառը հովանաւորութեանը: Ինչպէս առաջին, նոյնպէս երկրորդ զէպում, հայն կ'օգտուի այն չափով, ինչ չափով արտադրած լինի ոյժ. ոյժ՝ զինուորական, բարոյական, կազմակերպական:

Բարոյական ոյժ մենք ունենք: Այդ ոյժը մեր դատի էութեան մէջն է. նա գրուած է մեր դրօշակի վրայ եւ պարզ ամէնին յայտնի է, որ հայ ժողովրդի կռիւը արդարութեան, հաւասար իրաւունքների համար է: Մեր բարոյական ոյժը սրբազործուած է հազարաւոր կոյսերի պատուով, տասնակ հազար անմեղ երեխաների արիւնով:

Դա էր, որ ամբողջ մարդկութեանը, բոլոր քաղաքակիրթ ազգերի դուրժը շարժեց զէպի հայերը, որ անց-

եալ տարուայ ընթացքում ուժեղացաւ եւ հայկական հարցը դարձրեց օրուայ հարց:

Եթէ այլեւայլ հանգամանքներ, քաղաքական բարեփոխումներ [հետեւանքով] այդ հարցը չլուծուեց այսօր (օրինակ 96 թուին), կը լուծուի վաղը, միւս օրը...

Այս տեսակէտից, ներկայումս մենք անկասկած աւելի բարեյաջող պայմաններում ենք գտնուում, քան 2-3 տարի առաջ: Որոշ դրական յոյսեր հայերս կարող ենք դնել Կուբայի ազատիչ ղեմակիրատիկական Ամերիկայի վրայ: Տաճկաստանի եւ Գերմանիայի կողմից խաբուած Ռուսաստանն ու Ֆրանսիան բնականաբար պիտի հակառակեն Գերմանիայի ազդեցութեան, ուժեղանալուն եւ դժուար թէ երկրորդ անգամ ան ստանձնէ քրիստոնեաների դահճի պաշտօնը...

Հանտոտն(3) եւ Լարանով Ռաստովսկին(4) մեռան. հարիւր հազար անմեղների դիակներէց՝ նրանք կանգնեցրին իրանց վրայ մի արձան, որին դժուար թէ նախանձուի մի ուրիշը: Ահա ինչու քաղաքական պայմանները, Հայկական Հարցի լուծման համար, այսօր աւելի նպաստաւոր են, քան էին մի քանի տարի առաջ: Բայց Եւրոպայի համակրութեամբ միայն չի վերջանում հարցը. սխալ է երազել, որ Հայկական Հարցը կը լուծէ միմիայն Անգլիայի ու Ամերիկայի համակրութիւնը, Ֆրանսայի ու Ռուսաստանի քաղաքականութեան փոփոխութիւնը: Մեծ է պետութիւնների ու ազգերի համակրութեան նշանակութիւնը, բայց սրանից աւելի մեծ է ոյժի նշանակութիւնը: Ոչ մի ժամանակ եւ ոչ մի դէպքում պետութիւնները չեն ազատել բռնակալութեան ճնշումից մի ազգ, մինչեւ որ ինքը՝ ճնշուածը չի բողոքել, չի կռուել, չի յաղթել. բոլոր ճնշուածները իրանց պայմանները բարեփոխել կամ ազատութիւն են ձեռք բերել միմիայն ուժի շնորհիւ, եւ քանի մեծ է եղել նրանց բարոյական, Ֆիզիքական, կազմակերպական ոյժը, այնքան լայն է եղել եւ նրանց ստացածը: 94-96 թուականներին, մենք կրեցինք Ֆիզիքական պարտութիւն, բայց ձեռք բերինք մարդկութեան համակրութիւնը, կազմակերպական տոկոսութիւն, անհրաժեշտ տիպոլոգիան(5) ոչի. տարանք բարոյական եւ կազմակերպական յաղթութիւն. այժմ այդ բարոյական ուժին ու կազմակերպական հմտութեանը հարկաւոր է աւելացնել եւ մեծ Ֆիզիքական ոյժ. հարկաւոր է կազմակերպել զինուորական խմբեր, հարկաւոր է զէնք, հարկաւոր է դրամ. այս ամէնը մեր այն տեսակ անելիքներից է, որի համար չպէտք է խնայել ձեռքից եկածը: Զէ՞ որ ցուցական շրջանից մենք մտնում ենք լուրջ ձեռնարկութիւնների շրջանը: Մեծ գործերը, որոնց ձգտում է կազմակերպութիւնը այժմ, մեծ են ոչ միայն իրանց դրական ապագայով, այլեւ դժուարութիւններով: Մեծ գործի համար պահանջուում է մեծ ոյժ, մեծ ուժի համար տեւողական աշխատանք: Երբ յաջողուեց մեզ առաջ բերել այդ Ֆիզիքական մեծ ոյժը, արած

կը լինենք դրական քայլ դէպի մեր նպատակը. մենք հասած կը լինենք մեր նպատակին. առ ճշմարտութիւն է, մի ճշմարտութիւն՝ որ ապացուցուած է բոլոր բռնակալութիւնից ազատուած ազգերի դարաւոր անցեալով, մեր վերջին տարիների փորձով: Այդ ճշմարտութիւնը պիտի իւրացնել տալ մեր ժողովրդին, հայ հասարակութեանը պիտի հասկացնել տալ, որ այժմ մեր բախտը մեր ձեռքն է. նա կախուած է այն Ֆիզիքական ոյժից, որը կը կարողանանք մենք դուրս հանել դէպի կռուի դաշտը: Մենք համոզուած ենք, թէ անհրաժեշտ է ԼՅՐ-Ղութեամբ ու մանրամասնութիւններով բացատրել այս ամէնը ժողովրդին, — չխուսափել, կատարել այն պարտքը, որը դրոււմ է նրա վրայ ներկայ պատմական ընկերին: Մեր ինտելեկտուալ(6), — ո՛չ հարկաւ բազմաթիւ, հոգուով մեռած, դիպլոմաւոր կամ կիսակիրթ աֆէրիսանները(7) ու այլեւայլ փողերի տակ զրպանները հարստացնողները, — հայ ինտելեկտուալներ, որ գոյութեան առաջին օրուանից զարոգել է ազգային գաղափար եւ օգնութիւն թշուառ տաճկահայերին, չի՛ կարող դաւաճանել իւր ամբողջ անցեալին. չի՛ անիլ դա եւ հայ հասարակութիւնը եւ հայ հոգեւորականութիւնը, որովհետեւ հայութեան գոյութիւնը պահանջոււմ է, որ տաճկահայերի դրութիւնը բարեփոխուի, որ Տաճկահայաստանում մտցուեն լուրջ ռեֆորմներ(8): Աւելորդ է խօսել հայ ժողովրդի, զիւղացու, բանուորի, կանանց, երիտասարդների մասին. ոչ մէկը չի կարող սոված թողել իւր ազգութեան դրօշակը պաշտպանողներին. անկարող է մոռանալ տասնեակ հազարների թափուած անմեղ արիւնը. քանի որ այդպէս է, ընկերներ, մի՞ թէ ժամանակ չէ սթափուել եւ մեզ: Մի՞ թէ դեռ վաղատամ է արթնացնել հայ ժողովուրդը այն լեթարգիական ջրնից(9), որի մէջ ձգել են նրան կոտորածները: Սարսափներից անցած կէս(10) տարին շատ բաւական են, որպէսզի ամէն անհատ, ամէն մարմին վերակազմուել կարողանար, մաքրել ու հարթեցնել ներքին մանր-մուկը խոշորոտները: Ազիտացիական, ցուցական շրջանից, մենք մտնում ենք լուրջ ձեռնարկութիւնների շրջանը. մեծ գործերը, որոնց ձգտում է մեր կազմակերպութիւնը մեծ են ոչ միայն իրանց դրական ապագայով, այլեւ դժուարութիւններով. մեծ գործի համար պահանջուում է եւ մեծ տեւողական աշխատանք(11): Ահա [թէ] ինչո՛ւ, ընկերներ, Արեւելեան Բիւրոյի հաւաքական ժողովը օգտակար դաւաւ. 1) Առաջարկել Դաշնակցութեան բոլոր մարմիններին ամենալուրջ ուշադրութիւն դարձնել զինուորական խմբերի կազմակերպութեան վրայ. 2) Յանուն տաճկահայերի օգնութեան, կատարել միանուագ ժողովարարութիւն, դիմելով հայ ժողովրդի բոլոր խաւերին, մեր մօտ ընկերներին եւ համակրողներից սկսած մինչեւ հեռու գտնուողները, մինչեւ թովմաս թերահաւատները: Մեզ թոււմ է, որ եթէ գոյութիւն ունեցող դատակարգային նեղ շահերի վրայ հիմնուած պետութիւնները, իրանց պէտքերը

հոգալու համար, կարող են ուժով վերցնել իրանց հրատարակների եկամուտի 5-10, նոյնիսկ՝ 20%ը, մի՞ թէ մենք, հայերս, մեր բարի կամքով, մեր ազգային գոյութիւնը պահպանելու համար, մեր սոված ու արեւնաքամ ջոյրերին ու եղբայրներին մահից ազատելու համար, չենք կարող իրագործել միեւնոյնը: Զէ՞ որ մեզ համեմատաբար շնչին բան է հարկաւոր. թող ամէն ագնիւ եւ կենդանի հայ վճարէ, չբաւարանալ իրանց տարեկան աշխատանքի 1%ը, ունեւորները, իրանց եկամուտի 2-3%ը: Եւ մեր ազգի վերածնութիւնը ապահովուած կը լինի: Ամէն տեղ, ժողովրդի բոլոր խաւերում, ժողովարարութիւնը կատարուելու է այդ ուղղութեամբ: Սիրելիք, սկսեցէք նուիրատուութիւնը ձեր շրջանից. խստապահանջ գտնուեցէք դէպի ձեզ, իսկ ներողամիտ դէպի նրանց, որոնց սիրտը դեռ նոր է ընկրուում վառուել ազգային գաղափարով: Անհրաժեշտ տեղեկութիւններ տուէք գործի դրութեան, կազմակերպութեան բռնած ուղղութեան մասին եւ հայ ժողովուրդը չի դաւաճանի իւր պատուի ու գոյութեան դրօշակը պաշտպանողներին:

Այդ նուիրական դրօշակի պաշտպանողներից մէկը Օգոստոսի 4ին զոհ բերեց հայրենիքի սեղանի վրայ ոչ թէ իւր եկամտի 1,2,5,10%ը, այլ իւր... մատաղ կեանքը...: Դա մեր անմոռանալի ընկեր Թաթուլն էր, կարնիցի Արամ Արամեանը(12): 1890 թուին, Կարնոյ Կ. Կ. ի որոշմամբ, իբրեւ հայ ազգի թշնամու՝ նա մահի էր ենթարկւած Կերեկցեանին եւ, այն օրուանից մտնելով յեղափոխականների շարքը, Թաթուլը հանգստութիւն չունէր: Նա էր, որ հանգուցեալ Արքոյի հետ կոտորածից յետոյ օգնութիւն հասցրեց սովատանջ ստուկոց: Նա էր պատրաստուում, խրախուսում սարսափած ամբոխին՝ առանց վախի յայտնել ճշմարտութիւնը Սասուն գնացած ջնիչ յանձնաժողովին: Նրա ղեկավարութեամբ անցած խմբերն էին, որ պաշտպանեցին ժողովուրդը կոտորածի ժամանակ, Բասէնում: 1896ին, Թաթուլը բանտարկուեց. դատավարութեան ժամանակ նա պարզ առել էր, որ յեղափոխական է եւ սպանած է Կերեկցեանին, յեղափոխական կոմիտէի որոշմամբ. դատարանը այնուամենայնիւ դատեց իբրեւ քրեական յանցաւորի եւ դատապարտեց մահուան: Կախազանի առաջ կանգնած՝ նախքան իրա ձեռքով թողը ձգելը իւր վիզը, նա դիմում է ամբոխին. — «Ինձ կախում են իբրեւ Կերեկցեանի սպանողի. բայց այդ պատճառաբանութեանը մի՛ հաւատա՛ք: Մարդասպանների իսկական պատիժը 15 տարի տաժանակիր աշխատանքն է. իմ մահուան պատճառը յեղափոխականութիւնն է. նա է, որ տասը տարի շարունակ ես կուռում եմ բռնակալութեան դէմ. որ նոյնիսկ բանտում ես չէի դադարում անել այն, ինչ պահանջուում է անել արդարութիւնը, ինչ պահանջուում է Տաճկաստանում ազրող բոլոր ազգերի շահն ու բարօրութիւնը: Սուլթանի բռնակալ պետութիւնը կախազանով է ուզում խեղդել մեր արդարացի բողոքները, բայց

ապարդիւն: Մեծ է Աստուածային արդարութիւնը. ես մեռնում եմ, բայց իմ տեղ կը գան տասնեակներ, հարիւրներ, դուք բոլորդ կը հեռուէք ինձ: Անմեղ Թափած արիւնի մէջ կը խեղդուեն մեր դահիճները, կատարած դազանութիւններից կը խորտակուի բռնակալութիւնը: Մնաք բարով... Զմոռանա՛ք, որ միայն ձեզ համար էի ապրում, ձեզ համար եմ ես մեռնում... ընկերներ, ճնշուածներ, նոյնիսկ դուք՝ ինձ թշնամի համարողներ, մնաք բարով: Անմոռանալի Թաթուլ, անմահ ընկեր, արդեօ՞ք կը ներեա դու ընկերներիդ, որ մենակ թողին քեզ կախազանի առաջ... կը ներե՞ս արդեօք մեզ, բոլորիս, որ կեանքներս տալու տեղ, վիճում ենք կոպէկների մասին... թող մենակ մնանք, անմոռանալի՛ ընկեր, թող թոյլ գտնուենք, բայց դաւաճանել չթափած արեան կաթիլներին... չենք կարող... չենք կարող...: Մենք կը շարունակենք զնալ այն ուղիով, որը զձազըրեցիր դու եւ տարար մինչեւ կեանքիդ վերջին օրը...:

ԿՅՈՒՄ Հ. Յ. Դ. ԱՐԵՎԵԼԻՅԱՆ ԲԻՐՈՅԻ

- (1) Կիլիկիայում:
- (2) Պոլիս (կը գործածուէին վիշապ եւ կառածազիկ ծածկաճուճիքը):
- (3) Ֆրանսայի արտաքին գործոց նախարար՝ 1894ին 1898: «Մեռաւ» այսուկ պէտք է տանի փոխարեակամ իմաստով, բռնի կապրիլ չաճաքս ապրած է մինչև 1944:
- (4) Ռուսաստանի արտաքին գործոց նախարար 1896-96ին:
- (5) Կարգապահական:
- (6) Մտաւորականութիւնը:
- (7) Եւրոպայի հոգեբանութեամբ արկածախնդիր եւ շեւտալ մարդ:
- (8) Բարեփոխումներ:
- (9) Մահաբուն, բացարձակ անգայտութիւն կամ անտարբերութիւն:
- (10) Երջարեակամները կը բազմազրուէին ընդօրինակութեամբ. արդեօ՞ք առաջի կրկնութիւն վրայ շերտակիւս կամ շարունակեալ տարիս եղած է (1895ին կամ 1896ին մինչև 1900) եւ բերի արտագրուած:
- (11) Այս պարբերութիւնը («Ազգայնական...» աշխատանք) գրեթէ բառացի կրկնութիւն է այլ մէկ պարբերութեան: Արդեօ՞ք այս եւս արտագրական շփոթի մը արդիւմէն է:
- (12) Ըստ «Դրօշակ»-ի (թիւ 8, Սեպտ. 1899), Թաթուլ կախազան բարձրացած է Օգոստոս 9/21ին:

4) ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ ԱՐԵՎԵՍԵԱՆ ԲԻՐՈՅԻ

Ցեազիք, խմբատիպ:

Ժընև, 3/16 Հոկտեմբեր 1900

Ընկերներ,
Նոյեմբեր 15ն սկսած, Դաշնակցութեան նախաձեռնութիւնով եւ ծախսով (որ սակայն ծածուկ պիտի պահուի) Բարիդի մէջ պիտի սկսի լոյս տեսնել հայերու գա-

տին նուիրուած թերթ մը (ամիսը երկու անգամ), Pro Armenia (Հայաստանի համար) անունով, Ֆրանսիայի լեզուով: Թերթի խմբագրութեան մասնակից են Ֆրանսայի ամենէն նշանաւոր դէմքերը, ինչպէս՝ Քլեմանսօ, Ժօրէս, Անատոլ Ֆրանս, Փրեսանսէ, Քիյոս, Կոհիէ, Ժազլար, Տընիս Բոչէն եւն: Անգլիացիներէն՝ ձէյմս Պրայս, Իտալիայէն Էնրիքօ Ֆէրրի, Կոստա եւ ուրիշներ:

Թերթին համար հարկաւոր է առատ նիւթ եւ լուրեր, բուն երկրի կեդրոններէն եւ ամենահիշտ աղբիւրներէ շարունակ: Հետեւաբար կը խնդրենք, այս նամակը ստանալուդ, մասնաւոր կարող մարդիկ նշանակէք օրը օրին տեղական կեանքին հետեւելու, ամէն մէկ երկուսը ճշդիւ տեղեկագրելու եւ իսկոյն մեզ ուղարկելու համար:

Հոգ չէ տեղեկագրին գրական արժէքը, մենք հոս կը լրացնենք այդ կէտը, միայն աշխատեցէք պարզ եւ որոշ գրել՝ որ կարգացուի:

Աւելի լայն ուսումնասիրութիւններու համար մանրամասն ծրագիր յետոյ կ'ուղարկենք, առայժմ կ'առաջարկենք ուղեցոյց ունենալ հետեւեալ կէտերը:

Ազգաբնակչութեան թիւը, սովորական զբաղումները, հունձքերու վիճակը, տուրքերու տեսակները եւ հաւաքումը, երթեւեկի ազատութիւնը, քաղաքական բանտարկեալներու անունները եւ անոնց վիճակը: Հարտաւարութիւններ, սպանութիւններ, բռնարարութիւններ, — միշտ անուններով, թուականներով եւ տեղագրական ճիշտ ծանօթութիւններով: Օտար ցեղերու բռնած դիրքը դէպի հայերը եւ դէպի կառավարութիւնը:

Գաւառական քահանաներու կամ Առաջնորդներու Պատրիարքարան ուղարկած տեղեկագիրները ձեռք ձրգել: Գաղթականութիւն եւ պանդխտութիւն: Կրօնափոխութիւն՝ կամաւոր եւ ստիպողական: Կառավարութեան ձեռքով հայաբնակ վայրերու մէջ մահմետական տարրեր լեցնելը: Արձանագրել նաեւ անցեալին մէջ կատարուած դէպքերը:

Ինչպէս ըսինք, կը խնդրենք, որ անյապաղ ձեռնարկէք թղթակցութիւններու առաքման: Ի հարկէ, կ'ըմբռնէք դուք ինքնին գործին մեծութիւնը եւ կարեւորութիւնը, — թերթ մը, որ պիտի ուղարկուի աշխարհի բոլոր լրագրիչներուն, պետական քաղաքական, գիտական, գրական անձնաւորութեանց եւ այլ մեծամեծ ընկերութեանց մասնակցող բոլոր գործիչներուն:

Արտասահմանի մէջ այժմ մեծ համակրութիւն կայ դէպի Հայկական Հարցը, գրեթէ անխտիր ամէն կուսակցութիւններու մէջ: Այդ թերթի հարուստ բովանդակութիւնը պիտի դիւրացնէ մեզի համակրողներու փրփականալը յօգուտ մեր դատին:

Ընկերական Բարեւներով՝
ԱՐՅԻՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

5) ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ ԱՐՅԻՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

Ձեռագիր, խմբագրով:
Ժընեւ, 21 Նոյ. /4 Դեկ. 1900

Ընկերներ, Ասկէ երեք շաբաթ առաջ դիմեցինք դաշնակցական ձեռնհաս մարմիններուն շրջաբերականով մը, որուն մէջ, աւետելով Ֆրանսերէն լեզուով հրատարակուելիք «Pro Armenia» թերթին լուրը, ստիպողաբար կը խնդրէինք տեղեկութիւններ ուղարկել մեզի երկրի հայկական կեանքէն: «Pro Armenia» ի առաջին համարը արդէն լոյս տեսաւ, երկրորդ համարը լոյս պիտի տեսնի ամսոյս 10ին (Դեկտեմբերի), բայց տակաւին ոչ մէկ տեղէ թղթակցութիւն չենք ստացեր:

Երկրիւ կրելով թէ մի գուցէ, բացի ժամանակի սրբութենէն, հոս դեր կը խաղայ նաեւ որոշ աստիճանի անհոգութիւն կամ մեր առաջարկութեան սխալ ըմբռնումն ընկերներու կողմէն, մենք ստիպուած ենք կըրկենք մեր խնդրանքը ներկայ երկրորդ շրջաբերականով: Ընկերներ, ստանալիք թղթակցութիւններու կարիքը մեծ է, անկարելի է ատոր երկրորդական նշանակութիւն տալ: Անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել այդ պահանջի վրայ եւ առաջին շրջաբերականի ծրագրին համաձայն օրաուր ուղարկել մեզի տեղեկութիւններ, տեղեկութիւններ եւ տեղեկութիւններ:

Այսուհետ պէտք է ի նկատի առնել, որ անհրաժեշտ չէ անպատճառ այդ գործին համար գտնել գրական ընդունակութիւններու տէր կամ լեզուագէտ մարդիկ: Հաղորդեցէք փաստեր եւ գրեցէք մեզի նոյն իսկ ամենամանջակ ձեւով, միայն թէ գրուածները ըլլան իրողութիւններ. մնացեալը խմբագրութիւնը կը լրացնէ:

Ընկերական Բարեւներով՝
ԱՐՅԻՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

6) ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ ԱՐՅԻՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

Մեզի հասած ձեռագիր օրիօրեալ ամբուսակիր է: Ըստ բովանդակութեան, պէտք է գրուած ըլլայ 1901ի վերջեր կամ 1902ի սկիզբը:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ - ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Պետոյի եւ Վազգէնի նահատակութիւնից յետոյ Դաշնակցութեան գործունէութիւնը ժամանակաւորապէս անդամալուծուելով՝ վերստին կենդանացաւ Վասպուրականի շրջանում յընթացք վերջին երկու տարիների: Այդ կենդանութիւնը պարտ ենք գլխաւորապէս

մեր ընկերոջ՝ Գիսակի(1) ներկայութեան, որ յաջողեցաւ — վերջին տարուայ ընթացքում, մասնաւորապէս — վերականգնել նախկին կապերը Ատրպատականի հետ, կանոնաւորել զէնքի տեղափոխութեան խնդիրը եւ բարձրացնել կազմակերպութեան հմայքը Վասպուրականի սրտում: Գիսակի(1) Գիսակին կը միանայ մեր ընկեր Վ. Մ. (2), որ արդէն ճանապարհի վրայ է:

Վասպուրական-Ատրպատականի շրջանում յեղափոխական գործունէութեան տեսակէտից վերջին տարուայ ամենաուշագրաւ իրողութիւնն է՝ հայ-քրդական համերաշխութեան սկզբնաւորումը, որ հետեւանք է մի կողմից՝ թիւրք-քրդական հակամարտութեան, միւս կողմից՝ այն հանգամանքի, որ քրդերը մեր պրոպագանդի շնորհիւ սկսել են ըմբռնել մեր շարժման բուն նպատակը եւ դրա հետ միասին դիտակցում են նրանք, որ Ֆէդայական կազմակերպութիւնը բաւական ահաւոր ու պատկառելի մի ոյժ է ներկայացնում:

Այնքան արդէն առաջ է գնացել հայ-քրդական մերձեցումը, որ մեր զէնքերի տեղափոխութիւնը յաճախ քրդերի ձեռքով է կատարուում (անձամբ աջակցում է մի ազգեցիկ շէյխ): Սա մի ծանրակշիռ հանգամանք է, որ յետագայում աւելի մեծ ծաւալ առնելով՝ շատ խոշոր ծառայութիւններ կարող է անել յեղափոխական գործին:

Կարեւորագոյն փաստն այն է, որ մեր ընկերները ներկայումս լուրջ բանակցութեան մէջ են Հէյլարանցիների ցեղապետ Մ. Բէյի(3) հետ, որը բացարձակ թշնամութեան մէջ է Սուլթանի կառավարութեան հետ: Մեր ընկերների վկայութեամբ նա վստահելի է եւ կարող է կապեր հաստատել երկրի շատ ցեղապետների հետ: Մերոնց միջոցով Մ. Բէյը au courant(4) է պահուում արտասահմանեան քրդական հրատարակութիւններին:

Ատրպատականում Դաշնակցութեան գինագործարանը շարունակում է իր աշխատանքը: Կազմակերպութիւնը այդտեղ, ըստ առաջնոյն, վայելում է բարի համբաւ ու հեղինակութիւն, չնայած զանազան շինծու լուրերին, որ անգործութեան դատապարտուած մի կարգ հակառակորդներ հրապարակ հանեցին՝ Դաշնակցութիւնը վարկաբեկելու նպատակով: Սահմանադրի հայ ազգաբնակչութիւնը չի զլանում իր աջակցութիւնը մեր գինակիր խմբերին:

Կ Ո Վ Կ Ա Ս

Արեւելեան բիւրոն հարկաւոր ջանքերը չի խնայում վերականգնանցնելու յեղափոխական գործը, որ ծանր հարուածներ էր կրել ամբողջ Ռուսահայաստանում 1895-96ի աղէտներից յետոյ: Յեղափոխական պրոպագանդը — որ առհասարակ կապուած է այդտեղ բազմատեսակ խոչընդոտների հետ, որոնցից մինն է «Երօշակ»ի

եւ այլ դաշնակցական մամուլի տարածման դժուարութիւնը — յեղափոխական պրոպագանդը վերջին տարուայ մէջ համեմատաբար զգալի յաջողութիւն ունեցաւ ուսանող ու արհեստաւոր երիտասարդութեան մէջ, ուր երեւում է կենդանի շահագրգռութիւն Հայկական Հարցի եւ շարժման վերաբերմամբ:

«Վիշապ-Լեռնավայր»(5) շրջանի գործունէութիւնը ծանօթ է ձեզ, այդ մասին չենք գրում: Աշխատանքը այդ կէտերում ընթանում է դանդաղ, բայց, ըստ երեւոյթին՝ հաստատուն քայլերով:

ՄՈՒՇ - ՍԱՍՈՒՆ

Վերջին կէտի վերաբերմամբ Պատասխանատու Մարմինների որոշումը(6) մնում է առ այժմ անիրագործելի՝ դրամի պակասութեան պատճառով: Անգլայանի է, որ այսօր իսկ այդ վայրերը յեղափոխական տեղագրին գործունէութեան թաւար են, շնորհիւ Սերորի քաղաքի յետնորդներին: Անդրանիկը վրէժխնդիր եղաւ Սերորի մահուան համար եւ այսօր իր խիզախ ձեռնարկներով լուրջ տաղտուկ է պատճառում կառավարութեան եւ բարձրացնում է ժողովրդի յեղափոխական տրամադրութիւնը:

Կովկասը յարաբերութեան մէջ է Մուշ-Սասունի յեղափոխականների հետ եւ զէնք է մատակարարում նրանց:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Մի կողմ թողնելով գաղութները՝ կանգ առնենք միայն Արեւմտեան Բիւրոյի գործունէութեան վրայ յընթացք 1901ի: Այդտեղ ամենաաչքի ընկնող իրողութիւնը Pro Armenia թերթի հիմնադրութիւնն է՝ Դաշնակցութեան միջոցներով եւ նրա շարունակական աջակցութեամբ:

Թերթը, իրեն աշխատակից ունենալով հեղինակաւոր անձեր, մեծ համակրութիւն է վայելում այսօր Շւրոպայի մէջ. եւ Ֆրանսական պարլամենտի Հարցապնդումները (երկրորդը շուտով կը լինի) մենք պարտական ենք նրա պրոպագանդին ու նախաձեռնութեան: Տարուայ միջոցում Արեւմտ. Բիւրոյի մէկ անդամը գնաց Բերն եւ Համաշխարհային Խաղաղութեան Բիւրոյին թելադրեց հակա կէտերը այն յայտարարութիւն, որ դրկուեցաւ մեծ պետութիւններին եւ որ տպուած է «Երօշակ»ի մէջ(7): Ապա մի նամակով Բիւրոն դիմեց Բրիւսէլի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին, յիշեցնելով նրան Բարեղի Սոցիալիստական Կոնգրէսի վճիռը (նոյնպէս Արեւմտեան Բիւրոյի կողմից ներշնչուած): Դրա վրայ անմիջապէս Սոց. Բիւրոն հրապարակ նետեց ձեզ

յայտնի կոչը՝ ուղղուած բոլոր երկրներէ սոցիալիստ կուսակցութիւններին(8) :

Դրանց յետոյ՝ Արեւմտեան Բիւրոյի երկու անգամները Բարիգում տեսակցեցին Ռուսներէ, Չամբայի, Դիտտուրնիի եւ ուրիշ նշանաւոր դէմքերի հետ, լուսաւորեցին նրանց հայկական խնդրի եւ շարժման էութեան վերաբերմամբ, խօսք անելով նրանցից՝ այդ խնդիրը ամէն առթիւ յուզելու պարզամտութեամբ : Վերջերս Բիւրոն նամակներ ուղղեց նաեւ գերմանական աշխարհի մի քանի գործիչներին, ի միջի այլոց եւ Բերեւիլի եւ պատասխան առաւ այդ վերջինից՝ թէ Յունուարի վերջերում կամ Փետրուարում հայոց հարցը կը յուզուի նաեւ գերմանական Ռայխստագում :

Բացի այդ բոլոր դիմումներէ, որոնք պայմանաւորուած էին բոլոր պահանջներով, Արեւմտեան Բիւրոն վերջին տարուայ մէջ շարունակեց նախորդ տարիներէ իր գործը՝ կապեր հաստատել ամէն կարգի հեղինակաւոր եւրոպացիներէ հետ, որոնք հարկ եղած դէպքում պատրաստ են աջակցել մեզ իրենց խորհուրդներով :

- (1) Վարդգէս Սերեպիլեան, որ Վասպուրական մտած էր 1900ի սկիզբը :
- (2) Վահագն Մանուէլեան, որ Երկիր պիտի անցնէր 1901ի վերջերս, իրրեւ անգամ Բարձրագոյն Գաղտնախնամաւ Մարմին :
- (3) Ամենայն հաւանականութեամբ՝ Մուստաֆա Բեկը (տե՛ս էջ 144) :
- (4) Բնագրի մէջ՝ Փրոմետրէ՛. կը Յշմայիլ՝ տեղեակ, իրազեկ :
- (5) Վիշապ՝ Պոլիս. Լեանավայր՝ Կիլիկիա :
- (6) Մարգարէի եւ ռազմաբերքի բաւարար կեդրոնացումէ ետք՝ ապստամբութեան ձեռնարկի :
- (7) Տե՛ս «Երբօրէ», 1901, թիւ 7 եւ յաւելուած թիւ 6ի :
- (8) Տե՛ս «Երբօրէ», 1901, յաւելուած թիւ 7ի :

7) ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

(Շրջաբերական ճամբար)

Տպագրուած : Վերը՝ զինձեզ :

Ընկերներ,
Համաձայն երրորդ Ընդհանուր Ժողովի որոշման՝ առաջիկայ Դեկտեմբեր ամսին պիտի գումարուի Դաշնակցութեան Խորհուրդի տարեկան ժողովը :

Երկրի մարմիններին վաղորօք արդէն յայտնուած է այդ մասին, որպէսզի նրանք ժամանակ ունենան կարելու պատրաստութիւնները տեսնելու եւ պատգամաւորներ ուղարկելու, եւ որանով էլ յայտարարուած է գրախ մարմիններին :

Դաշնակցութեան Խորհուրդը կազմուած է Գաղտնա-

խանաւոր Կենտրոնական կոմիտէներէ եւ Բիւրոններէ ներկայացուցիչներէ : Նրա պարտականութիւնները՝ գծած Ընդհանուր Ժողովի կողմից, հետեւեալներն են՝

- ա) Քննութեան ենթարկել Գաղտնախանաւոր Կենտր. կոմիտէներէ եւ Բիւրոններէ գործունէութիւնը, Ընդհանուր Ժողովի որոշած ձեռնարկներէ իրազորման սահմանի մէջ :
- բ) Յեղափոխական ուժերի եւ գրամի նպատակաշարժար բաշխումը կարգաւորել :
- գ) Վերակազմել Գաղտնախանաւոր Կենտր. կոմիտէները եւ Բիւրոնները :
- դ) Դրամական միջոցներ գտնել :
- ե) Վարել արտաքին բոլոր յարաբերութիւնները յանուն Հ. Յ. Դաշնակցութեան՝ ուրիշ կուսակցութիւններէ եւ տարրերի հետ :
- զ) Քաղաքական անակնկալ տագնապի ժամանակ իր պատասխանատուութեան տակ նոր ձեռնարկ սկսել, առանց հակասելու նախորդ Ընդհանուր Ժողովի որոշումներին :

Հրաւիրելով բոլոր ձեռնհաս մարմիններին պատրաստուել մասնակցելու առաջիկայ Խորհուրդին, Արեւմտեան Բիւրոն դարձեալ մի անգամ խնդրում է բոլոր կոմիտէներին շտապել ուղարկելու՝

- 1) Ներկայ թուականի երկու վեցամսեակներէ հաշունեկշիռը, այն մանրամասներով, որոնք յիշատակուած են Մայիսի շրջաբերականի մէջ :
- 2) Տեղեկութիւններ այն նուազագոյն պահանջներէ իրազորման մասին, որոնք նախորոշուած են Ընդհանուր Ժողովի կողմից (տես Կազմակերպական Կանոններ, էրես 19-20) :
- 3) Այն հարցերն ու առաջարկները, որ դաշնակցական մարմինները կը կամենային ենթարկել Խորհուրդի քննութեան եւ այդ՝ ըստ կարելոյն շուտ, օրակարգի մէջ մտցնելու համար :

Խորհուրդի քննութեան ենթարկուելիք գլխաւոր խնդիրներէ մասին Արեւմտեան Բիւրոն շուտով, առանձին նամակներով, կը տեղեկացնէ ձեռնհաս մարմիններին, որպէսզի վերջիններս նախնական քննութեան ենթարկեն դրանց եւ այդպիսով հնարաւորութիւն ունենան, պատգամաւորներէ միջոցով, իրանց կարծիքները հասցնել Խորհուրդին :

Խորհուրդի տեղը եւ ժամանակը կը հաղորդուի, ում հարկաւորն է, առանձին գրութեամբ : Խորհուրդին չմասնակցող մարմինները իրանց դիմումները կարող են առնել Գաղտնախանաւոր Կենտրոնական կոմիտէներէ, Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոններէ միջոցով :

Հ. Յ. Դ.

ԱՐԵՎՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

1904, Նոյեմբեր 10
Շրջան

8) ԳԱՂՏՆԻ ՆԱՄԱԿ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

Ձեռագիր, խմբարտեղ :

Երեւանի եւ նահանգի շարժումների վերաբերեալ հարկ ենք համարում հաղորդել ձեզ հետեւեալ տեղեկութիւնները, որոնք առ այժմ դաղտնի պիտի մնան :

Երեւան.— Նախիջևանի եւ գաւառի դէպքերը ակնյայտնի կերպով պարզեցին, որ ոչ մի հաւաստ չէ կարելի ընծայել մահմեդական ղեկավարների խաղաղասիրական կոչերին : Այս պատճառով էր, որ երբ Երեւանում եւս թիւրք երեւելիները մօտեցան հայերին իրենց երդումներով, մերոնց համար դա նշան եղաւ, որ այդտեղ էլ պատրաստուած է փոթորիկ : Անմիջապէս կազմուած է զինուորական մարմին լիազօր իրաւունքներով : Քաղաքի մէջ ընտրուած են 26 դիրքեր, նշանակուած են հերթապահներ, սուրհանդակներ, շրջիկ խմբեր եւ այլն : Տեղական Հնչակեանները գործում են մերոնց հետ համերաշխութեամբ : Իւրաքանչիւր զինուոր թիւրքերի յարձակումը սկսուելուն պէս պիտի շտապէր իրեն համար նախօրօք որոշուած դիրքը : Այս նախապատրաստութիւնների շնորհիւ էր, որ հայերը, չհաշուած առաջին օրուայ անակնկալ յարձակման զոհերը (4 սպանուած, 18 վիրաւոր), կարողացան հետեւեալ օրերին միայն 3 վիրաւոր ունենալով, մեծ ջարդ տալ թիւրքերին եւ նրանց թելադրել հաշտութեան պայմանները :

Գաւառները.— Նախիջևանի գաւառի առաջին յաղորդութիւնները բացին ամբողջ նահանգի մահմեդական ազդարանակութեան խորթակը : Բայց նահանգի միւս վայրերում հայերը բոլոր ընդհանուրների ժամանակ յաղթող հանդիսացան, շնորհիւ արդէն կազմակերպուած

մարմինների եւ նրանց ղեկավար փորձառու առաջնորդների : Ահա մի քանի տեղեկութիւններ՝ Երեւանեան նահանգի կողող ուժերի մասին, քաղած վերջին նամակներից .—

Ղրիբուլախի կոմիտէները վարել է Կ. Ի անդամ Ք. : Այդ շրջանում աւերուած են 7-8 թիւրք գիւղեր (ընդամէնը Երեւանի շրջակայքում՝ 11 գիւղ) : Բարսեղի խումբը ուղարկուած է Ա. կողմերը մաքրելու : Ղ. Ի շրջանը կառավարում է Սմբատը. նրա հարեւան վտանգուած շրջանը՝ Գուրգէնը : Դաւալուն իւր սեփական ուժերով է դիմադրում թիւրքերին ու քրդերին : Դ. գնացել է Աւազի խումբը Քարից եկած սարկաւազի հետ : Ս. ը յանձնուած է Պողոսի խմբին : Ս. գաւառում գործում է Առաքել աղայի խումբը : Քարից անցել են վտանգուած վայրերը 4 խումբ 25ական հոգի : Նոյն տեղից մի քանի օրից պիտի անցնէին 100 հոգի : Ապառաժի շրջանից՝ երկու խումբ՝ Ռաշիդի եւ Մուրադի առաջնորդութեամբ : Մ. Ք. եւ հարեւան ուրիշ տեղեր նոյնպէս ուղարկել են օգնական խմբեր :

Երեւանեան Կենտր. կոմիտէն իւր արամադրութեան տակ ունեցել է մինչեւ Ապրիլի 30ը՝ 5 մօսին, 985 բերդան, 84 մարտիների, 393 կրիկա (դափաղու), ուրեմն ընդամէնը 1467 փամփուշտաւոր հրացան, 575 հին ձեւի, մօտ 4000 ատրճանակ, 175 սուր, 3166 դաշոյն : Այս հաշուի մէջ չեն մտնում Լճափի հին ձեւի հրացանները, սուրբերն եւ դաշոյնները, որ մեծ քանակութեամբ են :

Երեւանի նահանգի շարժումները ղեկավարում է այժմ Դումանը :

Միւս նահանգների պատրաստութիւնների մասին կը հաղորդենք իւր ժամանակին, երբ այն տեղերը դէպքերը ծագելու լինին :

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՎՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

5 Յուլիսի (ն. տ.)
1905

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ

ԱՐՐՈՑԻ ԳԵՐԵԶՄԱՆ.— Սասուն.
 ԱՄՈՒՐ.— ?
 ԱՅԳԵՍՏԱՆ.— Գամաակի շրջան.
 ԱՊԱՌԱԺ.— Շուշի, Լեռնային Ղարաբաղ.
 ԱՐԾԻԻ.— Հաւանօրէն՝ Երզնկայի շրջան.
 ԱՐԾՈՒԱՐԵՐԴ.— Զէյթուն.
 ԱԻԱԶ (կամ ՍԵՒ ԲԼՈՒՐ).— Սեբաստիոյ շրջան
 ԱԻԱԶԱՆ.— Սեւ Ծովի աւազան (Խրիմ, Օսեթա, Եր-
 բեմն մանր՝ Տրապիզոն, Եւք.).
 ԱԻԱՐ-ԱԻԵՐ.— Խարքերդ.
 ԲԱԳԻՆ.— Պարսկաստան.
 ԲԱԶԷ (կամ ԽՈՐ ՎԻՐԱՊ).— Ատանայի շրջան.
 ԲԱՆԱԼԻ.— Սամսոն եւ շրջակայք.
 ԲԱՍՏ.— Սեբաստիա.
 ԲԱՐՁՐԱՐԵՐԴ.— Կարին ?
 ԲԱՐՁՐԱԻԱՆՆՎԱԿ.— Սասուն.
 ԲԱՐՁՐ ՍԱՐ.— Կեսաբիոյ շրջան.
 ԲԵՐԴԻԿ (կամ ԶՐԱՐԵՐԴ).— Կարսի շրջան.
 ԳԱՂԹԱՇԷՆ.— Թաղէոս Առաքելի վանքի (Ատրպա-
 տական) կամ Մակուի շրջանը.
 ԳԱՂԹԱՎԱՅԻ.— Արդեօֆ Ամերիկա (անորոշ).
 ԴԱՇՏ.— Ատանա ? Դաշտային Կիլիկիա ?
 ԴՈՒՐԱՆ.— Տարօն.
 ԵԿԵՂԵՑԻ.— Մաուկու.
 ԵԿՏԱՐ.— Եկատերիմոսար (Հիւս. Կովկաս).
 ԹՄԲՈՒԿ.— Ախալքալաք, Ախալցխա.
 ԺԼԱՏ.— Հիւսիսային Կովկաս.
 ԼԵՌՆԱՊԱՐ.— Վանայ Ծովու հարաւը, Ռշտունաց
 շրջան.
 ԼԵՌՆԱՍԱՐ.— Խարքերդ.
 ԼԵՌՆԱՎԱՅԻ.— Կիլիկիա.
 ԼԻՍ (ՎԻՇԱՊ, ԵԱՂԻԿ, ԿՈՒՈՒԱԾԱՂԻԿ).— Պալս եւ
 շրջակայք.
 ԽԱՆԱՐԱԶ.— ?
 ԽՈՐ ՎԻՐԱՊ (կամ ԲԱԶԷ).— Ատանա.
 ԵԱՂԻԿ (ԿՈՒՈՒԱԾԱՂԻԿ, ԼԻՍ, ՎԻՇԱՊ).— Պալս.
 ԵՈՎԱՍԱՐ.— Սասուն.
 ԵՈՎԱՓ.— Տրապիզոն.
 ԵՈՑ.— Հաւանօրէն Պէյրուք.

ԿԱՅԱՆ.— Մարգուամի շրջան.
 ԿԱՐԱՒԱՆ.— Իսկեմետրուն (Ալեքսանդրէք).
 ԿԱՐՄԻՐ ԲԵՐԴ.— ?
 ԿՂԶԻ.— Կիսրոս.
 ԿՈՐՕՏ.— Մուշ.
 ԿՈՒՈՒԱԾԱՂԻԿ (ԼԻՍ, ՎԻՇԱՊ).— Պալս.
 ՀԱՍԱՆ ՂԱԼԱ.— Երեւան ?
 ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՐԵՐ կամ ՀԻՒՍԻՍԱԿԵՐՏ.— Սէն
 Փեթերբուրգի.
 ՀՈՎԻՏ.— Այնթապ.
 ՀՈՒՐ-ԵՐԿԱԹ.— Մամիսա (Իզմիրի շրջան).
 ՄԱՍԻՍ ԵՈՑ.— Պայագիւ.
 ՄԵՆ ՔԱՂԱՔ.— Թիֆլիս.
 ՄԻՆԱՐԷԹ.— Սալմաստ.
 ՄՐԳԱՍՏԱՆ.— Երեւան եւ շրջակայք.
 ՆԱԼԲԱՆԻ.— Նոր Նախիջեւանի շրջան.
 ՆԱԻԱՀԱՆԳԻՍ.— Պարսկի շրջան.
 ՆՈՐ ՄԾԲԻՆ.— Ալաշկերտ.
 ՆՈՒԵԶԱՔ.— ?
 ՇԱՀԱՍՏԱՆ.— Պարսկաստան.
 ՇԱՄ, ՇԱՄԻՐ կամ ՇԱՄԻՐԱՄ.— Վասպուրական.
 ՈՍԿԱՆԱՊԱՏ (կամ ՈՍԿԵԶՈՒՐ).— Բագուի (Պաֆուի)
 շրջան.
 ՈՍԿԵՀԱՆՔ.— Իզմիրի շրջան.
 ՊՈՒՐԱԿ.— Ախալքի շրջան.
 ԶՐԱՐԵՐԴ (կամ ԲԵՐԴԻԿ).— Կարսի շրջան.
 ՍԱԼՆՈՑ ԶՈՐ.— Պիթլիսի (Բաղէշի) շրջան.
 ՍԱՀՄԱՆԱՐԵՐԴ.— Մարաշ.
 ՍԱՐՈՒՍՏԱՆ.— Բուսաստան.
 ՍԵՊՈՒՀ.— Երզնկայի (Տերսիմի ?) շրջան.
 ՍԵՒ ԲԼՈՒՐ (կամ ԱԻԱԶ).— Սեբաստիոյ շրջան.
 ՍԵՒ ՔԱՂԱՔ.— Պաֆուի մարային շրջանը.
 ՎԻՇԱՊ (ԼԻՍ, ԿՈՒՈՒԱԾԱՂԻԿ).— Պալսայ շրջան.
 ՎԻՇԱՊԱԶՈՐ.— Տիգրանակերտի (Տիգրակէֆի) շր-
 ջան.
 ՎՐԷԺ (կամ ՎՐԷԺՍՏԱՆ).— Պարսկական Ատրպատա-
 կան (Թաւրիզ).
 ՏԱՌԵՆՆՈՑ.— Արմէշ.
 ՏԱՔ-ԱՂԲԻՐ.— Դիաղիմի շրջան (արդեօֆ Իւշ-Քի-
 իսէի վանքը).
 ՏԵԼԹԱ.— Ազեմանդրիս, Եգիպտոս.
 ՔԱՐ (կամ ՔԱՐՈՏ).— Ալեքսանդրապոլ.
 ՔԱՐԱԺԱՅՈՒ.— Տերսիմ.

ՑՈՒՑԱԿ

Բ. ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

ԳՄՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՄՔԸ ՆԵՐԿԱՑԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ.- 6ա, 34ա, 61բ, 63բ, 64ա-բ, 65ա, 68ա, 87ա, 88ա-բ, 92բ, 94ա-բ, 98բ, 105ա, 127բ, 129բ, 136բ, 157բ, 182ա, 185ա, 226բ, 323բ, 341բ, 357ա-բ, 358ա-բ, 361բ, 366բ, 364բ, 365ա, 366բ.

Հ. Ե. Կ. ԽՈՐՀՈՒՐԴ.- 6ա, 34ա, 119բ, 120բ, 124ա, 125ա, 126ա-բ, 129բ, 131բ, 132ա, 136բ, 194ա-բ, 200բ, 201բ, 202բ, 203ա, 205ա-բ, 208բ, 217բ, 219ա, 222ա, 226բ, 227ա-բ, 228բ, 229ա-բ, 230ա-բ, 231բ, 236բ, 256ա, 288ա, 302բ, 328բ, 330բ, 331ա, 333բ, 371ա-բ, 382ա-բ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ.- 5բ, 6ա-բ, 16բ, 34ա, 44բ, 46բ, 47ա, 52բ, 53ա, 55ա, 63բ, 67բ, 68ա, 72ա, 87ա-բ, 89ա-բ, 90բ, 91ա-բ, 92ա, 94ա-բ, 96ա, 99բ, 106ա, 108բ, 109ա, 112ա, 123ա, 127բ, 128բ, 130ա-բ, 139ա, 146բ, 169, 173բ, 175բ, 177բ, 182ա, 184բ, 185ա, 193բ, 194ա, 201ա-բ, 205ա-բ, 208բ, 209ա, 210ա-բ, 213ա, 214ա-բ, 215բ, 216բ, 218ա, 219ա, 220ա-բ, 221ա-բ, 223ա, 227ա-բ, 230բ, 231ա, 236բ, 239բ, 240բ, 249բ, 250ա-բ, 253բ, 254բ, 257բ, 259բ, 260ա, 272ա-բ, 274ա-բ, 275ա, 294ա, 295ա, 297ա, 301ա, 302բ, 303ա, 305բ, 307ա, 309ա, 310ա-բ, 311ա-բ, 312ա, 319բ, 321բ, 322բ, 323ա, 327բ, 332ա, 334բ, 349ա, 351բ, 361բ, 364ա, 365ա-բ, 366ա, 368ա, 370ա, 377ա, 378բ, 379բ, 381ա.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ.- 6բ, 16բ, 34ա, 52բ, 61բ, 62բ, 63բ, 66բ, 67բ, 87ա, 88բ, 90բ, 91ա, 92բ, 94ա-բ, 99բ, 101բ, 103բ, 106ա, 108ա-բ, 109ա-բ, 110ա, 115բ, 116ա, 118բ, 119ա, 121ա, 123ա-բ, 127ա, 128ա-բ, 130ա-բ, 131բ, 132ա, 133բ, 134ա-բ, 135ա, 137ա, 139ա, 148ա, 150ա, 156բ, 157ա, 161ա, 169, 173բ, 175բ, 179բ, 183բ, 194բ, 200բ, 202ա, 203բ, 205բ, 206ա, 226բ, 227ա-բ, 230ա-բ, 231ա-բ, 236բ, 256ա-բ, 257բ, 323ա, 327բ, 332ա, 348ա, 359բ, 360բ, 361բ, 362ա, 363բ, 364ա-բ, 365ա-բ, 366բ, 372բ, 376բ, 379բ, 380ա-բ, 381բ, 382ա-բ, 383բ.

ԹԱՐԻՋԻ ԲԻՒՐՈ.- 16բ, 17բ, 22ա, 36ա.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԴՐՈՇԱԿԻ.- 15բ, 16բ, 32բ, 34ա, 43ա-բ, 46բ, 47բ, 49ա-բ, 50ա-բ, 78ա, 108բ, 130բ, 131բ, 183ա-բ, 215բ, 230ա, 290ա, 288բ, 345ա, 349ա, 356բ, 359բ.

ԲԱՐՁՐԱՆՆԻՎԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. ԿՈՄԻՏԷ (ՊԱՏ. ՄԱՐ-ՄԻՆ).- 67բ, 88ա, 89ա, 94ա, 104ա, 109բ, 110ա, 111ա-բ, 112բ, 122ա, 126բ, 133բ, 137բ, 174ա-բ, 323ա, 362ա, 363բ, 366ա, 382ա.

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ (ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏ. ՄԱՐ-ՄԻՆ).- 118բ, 119ա, 122ա-բ, 130բ, 193բ, 194ա-բ, 201ա-բ, 206ա, 209ա-բ, 210ա-բ, 213ա, 214ա, 221բ, 222ա, 223ա, 224ա-բ, 230բ, 231ա, 239բ, 370ա-բ, 372ա.

ՑՈՒՑԱԿԱՆ ԿԱՄ ՑՈՒՑԱ-ՏԵՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ (ՊԱՏ. ՄԱՐ-ՄԻՆ).- 118բ, 122ա, 123բ, 129բ, 130բ, 132բ, 134ա, 210ա-բ, 223ա, 229ա, 231ա, 323ա, 361բ, 370բ.

ՀՓՈՔՈՐԻԿ, ՀԴՐԱՄ ԿՈՄԻՏԷ.- 87ա-բ, 88բ, 94բ, 95ա, 96ա, 127բ, 128ա, 129բ, 130ա-բ, 132ա, 240բ, 361բ, 365բ, 366ա-բ, 367ա-բ.

ԼԵՌՆԱՎԱՑՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. ԿՈՄԻՏԷ (ԿԻԼԻԿՈՑ ՊԱՏ. ՄԱՐՄԻՆ).- 52բ, 67բ, 94ա, 109բ, 112ա-բ, 118բ, 122ա, 123բ, 130ա-բ, 134ա, 135ա, 150ա-բ, 151ա, 153ա, 169, 176ա-բ, 323ա, 360բ, 362ա, 363ա-բ, 365բ.

ՎԻՇԱՊԻ (ԿՈՒՌԱԾԱՂԻԿԻ) ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. ԿՈՄԻՏԷ (ՊՈՂԱՌՑ ՊԱՏ. ՄԱՐՄԻՆ).- 17բ, 24բ, 33ա, 34ա, 64բ, 67բ, 88ա, 96բ, 99ա, 118բ, 122ա, 351ա-բ, 361բ, 364ա-բ, 365ա-բ, 366բ, 367ա, 377ա.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԿԱՄ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԻՒՐՈ (ԿՈՎԿԱՍ).- 239բ, 250ա, 263ա, 333ա, 370բ.

ՇԱՄԻ (ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 17ա-բ, 22բ, 23ա, 34ա, 35ա, 47բ, 48ա-բ, 52բ, 64բ, 68ա, 89ա, 94ա, 111բ, 118բ, 126բ, 134ա, 139բ, 179ա, 230բ.

ՎՐԷԺԻ (ԱՏՐՊԱՏԱԿԱՆ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 16բ, 34ա, 36ա, 54ա, 65ա, 68ա, 74ա, 110ա, 111բ, 118բ, 119բ, 137բ, 139բ, 141ա, 144բ, 145ա, 146բ, 173բ, 176բ, 177ա, 206ա, 226բ, 348բ, 351բ, 365ա.

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ (ՊԱՔՈՒ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 89ա, 133բ, 194ա, 195ա, 197ա-բ, 247բ, 249բ.

ՄՐԳԱՍՏԱՆԻ (ԵՐԵՒԱՆ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 195ա, 200բ, 206բ, 383բ.

ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ.- 65ա, 69ա, 84ա, 94բ, 104բ, 109բ, 110ա, 130ա, 153բ, 154ա-բ, 155ա-բ, 157ա-բ, 158ա, 160, 175ա, 230բ.

ՏԱՐՕՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ.- 174ա-բ.

ՋՐԱՐԵՐԴԻ (ԿԱՐՍ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 89ա, 93ա, 206ա-բ.

ՔԱՐԻ (ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 207ա, 249բ.

ԾՈՎԱՓԻ (ՏՐԱՊԵՋՈՆ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 47բ, 48բ, 64բ.

ՄԵԾ-ՔԱՎԱՔԻ (ԹԻՖԼԻՍ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 207բ, 211ա, 253բ, 297ա, 299ա, 349ա, 351բ, 371բ.

ՆԱԻԱԼԱՆԿՍԻ (ՊԱՔՈՒՄ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 207բ.

ԺԼԱՏԻ (ՀԻՒՍ. ԿՈՎԿԱՍ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 217բ, 218ա-բ, 219ա-բ, 230բ, 231ա.

ՄԻՆԱՐԷԹԻ (ՍԱԼՄԱՍ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 42բ, 55բ.

ՈՍԿԵՀԱՆՔԻ (ԻՋՄԻՐ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 175ա, 176բ.

ՀԼՐԱԻԷՐ ԿՈՄԻՏԷ.- 22ա-բ.

ԲԱՋԷ (ԱՏԱՆԱ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 175բ, 176ա.

ՀՈՎԻՏԻ (ԱՏՆՔԱՊ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 175բ.

ԱՄԵՐԻԿԱՏԻ Կ. ԿՈՄԻՏԷ.- 7բ, 49ա, 50ա, 53ա, 166ա-բ, 167ա, 344ա, 363ա.

ՑՈՒՑԱԿ Բ. ՀԱՏՈՐԻ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ

Աբա-Մելիք.- 26ա.

Աբրահամյան Յակոբ (Վարդ-Մանուշակ).- 147բ, 148ա-բ, 149ա, 153ա.

Ազատյան Յակոբ.- 95բ.

Ազիզ.- 323բ.

Ազիզով.- 149բ, 150ա.

Աբարեգյան Լևոն.- 324բ.

Ախլեր.- 138ա, 139բ, 141ա, 142ա-բ, 143ա-բ, 144ա, 147ա.

Ալիխանով.- 329ա.

Ալոյսյան Գալուստ (Թորոս, Գարվիշ).- 138բ, 139բ, 141ա, 142ա-բ, 147ա, 178բ, 179բ, 185ա, 186բ, 201բ, 324բ.

Ալեուհի (Մալուխան Խաչատուր).- 134բ, 137ա, 227բ.

Ախարոնյան Ալեուհի (Վարդ).- 134բ, 227բ, 228ա, 230ա, 231ա, 237ա, 240բ, 241բ, 258բ, 277ա, 279բ, 280ա, 287ա, 288բ, 297բ, 320բ, 321բ, 323ա, 324բ, 337բ.

Ազատբ (Մելիքի).- 106ա-բ, 109ա, 134ա, 135ա, 137ա, 255բ.

Ազարյան Նիկոլ (Հանգոյց).- 8բ, 324բ.

Ազիզ-Սերաբ (Վարդանան).- 26բ, 27ա, 48բ, 67բ, 87ա, 93բ. Ամարյան Անտոն.- 7բ, 325ա-բ, 326ա, 329բ, 332ա.

Ալվազյան Կարապետ (Վ. Էսկյար).- 137ա, 147բ, 150բ, 151բ, 153ա, 176բ.

Ալվատյան Մահակ Նյխտկոյս.- 140բ, 142ա.

Անդրանիկ (Պարոյր, Զոր. Անդրանիկ Օգանյան).- 87ա, 214բ, 223բ, 227ա-բ, 228ա, 279ա.

Անտոն.- (տես Զատարյան Սիմոն).

Անտոնի.- 329ա.

Աշգրտյան Պարթև.- 191ա.

Աշոտ-Երկար.- տես Լեւոնյան Արմենակ Ս.

Աշոտ-Լեւոն.- 134ա.

Աշրկեղոյան Յ. (Տարբ).- 54ա, 70ա, 88ա, 89ա, 93բ.

Առաքիլ Վարդապետ.- 197ա.

Արամյան Ատրանյան Ս.- 29ա, 33բ.

Արաբ.- 8ա.

Արամյան Ատրանյան Ս.- 29ա, 133բ.

Արամյան Արամ (Թարսուլ).- 8ա, 29ա, 133բ.

Արծրանի.- 53բ, 70ա.

Արծրանի Գրիգոր.- 266բ.

Արզրիկյան Յովսէփ (Իշխան).- 8ա-բ, 34ա, 236բ, 238ա-բ, 239ա, 240բ, 324բ.

Արմեն-Գար.- տես Փաստրյանյան Գարեգին.

Արշակ(?).- 268բ, 269բ, 285ա, 295բ, 304ա, 305ա, 311ա, 314ա, 324ա-բ (տեսնել տես Թադևոսյան Արշակ).

Արսէն(?).- 273ա, 276ա, 288ա-բ.

Արվաթի (Պարթևիկյան Վարդ).- տես Վարդ.

Արտանյան.- 24բ.

Բարա, Բարսեղյան.- տես Գարեգին Խաչակ. Բարսեղյան Աշոտ (Նյխտկոյս ?).- 108ա, 109ա, 134ա. Բալայան Գրիգոր.- 338

Բալայան Գրիգոր.- տես Մանվանդյան Մանվան.

Բալասան Ալեքսան.- 245ա.

Բալասան-Իշխան.- տես Իշխան (Վանայ).

Բարսեղյան Սարգիս (Վանայ Սարգիս, Կամիլ).- 181ա, 228ա, 231ա, 258բ, 259ա, 261ա, 263ա-բ, 278ա-բ, 275ա, 285ա, 315ա, 322բ.

Բերկ (Ազատ).- 277բ, 282ա.

Բարս.- տես Խաչատրյան Մարտ.

Գալիպոլյան Յ. (Վանայ).- 107բ, 108ա, 109ա, 128ա, 134ա, 175բ, 176ա, 227ա-բ.

Գալլ-Վանան (Գրախո, Տալապոլյան Միքայ).- 193ա, 195ա-բ, 198ա.

Գալոն.- 225բ, 325բ.

Գալապոլյան Վրէմ (Տալապոլ).- 53բ.

Գարակոչյան Յակոբ (Ջալալ).- 96ա, 98ա.

Գարեգին Խաչակ (Բարա, Բարսեղյան).- 53բ, 67բ, 69բ, 88ա, 94ա, 236բ, 240բ, 242ա, 258բ, 259ա, 271ա-բ, 272բ, 275ա-բ, 279բ, 301ա, 302ա, 308բ, 310բ, 311ա, 318բ, 319բ, 321բ, 324բ.

Գարեգին (Լրտես).- 149ա-բ.

Գեորգ Զատուշ (Սարգիս).- 87ա, 204բ, 205բ, 255բ.

Գիսակ (Վարդգէս).- տես Սերեղիկյան Վարդգէս.

Գիլիսանյան Աբրահամ (Սեւան).- 7ա, 8ա-բ, 96բ, 97բ, 194բ, 237ա, 240բ, 243ա, 247բ, 258բ, 266ա, 271ա-բ, 272ա-բ, 273բ, 276բ, 278ա, 285բ, 315ա, 316բ, 322բ, 324բ.

Գեորգ(?).- 110ա, 337ա.

Գեորգիս.- տես Կարին.

Գեորգիսյան Միսակ (Առանձաբ, Կարին).- 71բ, 76բ, 77ա-բ, 134ա, 135ա, 137ա, 175ա-բ, 255բ.

Գեւորդ.- տես Խաչակյան Ալեուհի.

Գեորգէն (Մալոյան Պարտապ).- 67բ, 70բ, 93բ.

Գեորգիս Ա.- 205բ.

Գեշ Անտոն.- 95բ, 108ա-բ, 109ա.

Գեշայան Վերապ.- 147ա.

Գեորգիսյան Աբրահամ.- 7ա.

Գեորգ.- 23բ, 141ա, 142ա, 143ա-բ, 145ա-բ, 147ա.

Գեորգիշ.- տես Ալոյսյան Գալուստ (Թորոս).

Գեորգիս Նիկոլ (Նիկոլ Խաչակ).- 98ա, 324բ.

Գեորգիս Յովսէփ (Յովսէփ).- 8ա-բ, 134ա, 137ա, 140բ, 256բ, 259բ, 272ա, 275ա, 290ա, 307բ, 308բ, 313ա, 316բ, 321ա, 322ա, 323ա, 324ա.

Գեորգիս.- 325բ, 335ա, 336ա.

Գեորգիսյան Օննիկ.- տես Վանայան Արշակ.

Գեորգիս (Տէլխաչ).- 204ա-բ.

Գեորգի (Արմենակ Վարդարյան, Հրայր, Ուրուկյան).- տես Հրայր-Գեորգի.

Գեորգի.- տես Գալլ-Վանան (Տալապոլյան Միքայ).

Երզնկյան Կարապետ (Սեւ-Աշոտ).- 67բ, 70բ, 88ա, 94ա-բ, 95բ, 97ա.

Երզնկյան Յովսէփ (Մելիք, Վանայան Տիգրան).- 47բ, 49ա, 50ա-բ, 54ա, 70ա, 93բ, 104բ, 110ա, 133ա-բ, 135ա, 137ա, 182ա-բ, 184բ, 185բ, 258բ, 263ա, 268բ, 322բ, 324բ.

Երկար.- տես Լեւոնյան Արմենակ (Աշոտ-Երկար).

Երկար (Նիկոլ Խաչակ).- տես Գեորգիս Նիկոլ.

Զաքարիայ.- 325բ.

Զատարյան Սիմոն (Անտոն, Մարտ Օհանյան).- 5բ, 6բ, 7ա, 8ա, 33բ, 34ա, 47ա-բ, 49ա, 51ա-բ, 52ա, 53բ, 67բ, 70ա-բ, 90ա, 93բ, 97բ, 107բ, 108ա, 109բ, 134ա, 135ա, 137ա, 173ա, 177ա, 179բ, 181ա, 194բ, 195ա, 196բ, 228բ, 231ա, 237ա, 247ա, 255բ, 258բ, 259ա-բ, 260բ, 262բ, 268ա, 264ա-բ, 265ա-բ, 266բ, 267ա, 268բ, 269բ, 270ա, 271բ, 272բ, 273ա, 274բ, 275ա-բ, 277ա, 281բ, 285ա, 290ա, 292բ, 295ա-բ, 296բ, 300բ, 301ա, 302բ, 304ա-բ, 305ա, 307բ, 308ա-բ, 313բ, 314ա, 318ա, 319բ, 320բ, 3

Զաւէն.- տես Գարակէօզեան Յակոբ.
 Զաւէնեան Մ.- 195-ր, 196-ր.
 Զաւէնեան Յիլիս.- 108-ր, 109-ր, 128-ր, 190-ր, 227-ր.
 Զարեան (Բժիշկ Զարեան).- 194-ր, 255-ր.
 Զեֆի Փաշա.- 190-ր.
 Զօրեան Արիստակէս (Կարօ).- 26-ր, 33-ր.
 Զօրեան Ռոստոմ.- 5-ր, 6-ր, 7-ր, 8-ր, 18-ր, 21-ր, 23-ր, 47-ր, 49-ր, 50-ր, 51-ր, 52-ր, 53-ր, 67-ր, 70-ր, 94-ր, 95-ր, 96-ր, 97-ր, 107-ր, 134-ր, 135-ր, 153-ր, 154-ր, 155-ր, 157-ր, 186-ր, 196-ր, 227-ր, 228-ր, 229-ր, 256-ր, 257-ր, 258-ր, 259-ր, 275-ր, 276-ր, 282-ր, 284-ր, 205-ր, 296-ր, 297-ր, 298-ր, 299-ր, 301-ր, 302-ր, 304-ր, 305-ր, 307-ր, 308-ր, 310-ր, 311-ր, 312-ր, 313-ր, 315-ր, 317-ր, 318-ր, 320-ր, 322-ր, 324-ր, 326-ր, 335-ր, 336-ր.

Էլլէն (Գրիստափոս).- տես Միքայէլեան Գրիստափոս.
 Էսկար վ.- տես Այվազեան Կարապետ.
 Էսաւար, Էզվարդ, Էսվարդ (Սիսակ, Պայանեան Սմբատ).- 147-ր, 148-ր, 149-ր, 152-ր, 153-ր.

Ընծայր.- տես Նալպանեան Գեորգ Մ. վարդապետ.

Բաղէտեան Արշակ.- 7-ր, 67-ր, 70-ր, 96-ր, 324-ր (տես Ռաւս Արշակ).
 Բաղէտեան Բժիշկ.- 313-ր.
 Բաղէտեան Յովսէփ (Ռուսնոյ Յովսէփ).- 53-ր, 85-ր, 86-ր.
 Բաղէտեան Սամսոն (Սամսոն Կոնյան).- 108-ր, 109-ր, 138-ր, 189-ր, 140-ր, 141-ր, 142-ր, 143-ր, 144-ր, 145-ր, 146-ր, 230-ր.
 Բաղէտեան Տիգրան.- 67-ր, 70-ր, 89-ր, 93-ր, 324-ր.
 Բարսեղ.- տես Արամեան Արամ.
 Բաշեան Բժիշկ.- 141-ր.
 Բացիանեան Լորիս.- 227-ր, 228-ր, 231-ր.
 Բափանիկ.- 189-ր.
 Բիրեանեան Բարսեղ.- տես Կոնյան.
 Բիրեանեան Հայկ, Հրայ (Սեպուհ, Յարիստ).- 52-ր, 53-ր, 67-ր, 69-ր, 79-ր, 83-ր, 84-ր, 94-ր, 95-ր, 96-ր, 98-ր, 147-ր, 148-ր, 149-ր, 150-ր, 152-ր, 153-ր.
 Բիրեանեան վարդապետ.- 96-ր.
 Բոխմախ.- 195-ր, 196-ր.
 Բորզում (Բուսման Բուսմանեան).- 104-ր, 107-ր, 108-ր, 109-ր, 110-ր, 174-ր, 193-ր, 195-ր, 196-ր.
 Բորոս.- տես Արայեան Գալուստ (Գարգիշ).
 Բոփանեան (Բոփանեան) Նիկիտ.- 236-ր, 240-ր, 241-ր, 258-ր, 259-ր, 262-ր, 272-ր, 289-ր, 293-ր, 314-ր, 315-ր, 317-ր, 319-ր, 320-ր, 322-ր, 324-ր.
 Բուսիկ.- 181-ր.
 Բոհափանեան Կարիկ ազա.- 95-ր.

Ճամբարեան Մարգար.- 324-ր.
 Ճենեւ.- 30-ր, 295-ր.
 Ճիստափոսիկ.- 325-ր.
 Ճօրէն Ճան.- 277-ր, 293-ր.

Իշխան, Իշխան Յովսէփ.- տես Արզուրեան Յովսէփ.
 Իշխան վանայ (Բայանդուր - Իշխան, Պազուսեան Նիկոլ).- 104-ր, 110-ր, 134-ր, 137-ր, 177-ր, 179-ր, 190-ր, 219-ր.
 Իզմիրեան Մարտիրոս Գառնիկ (Տարազի).- 104-ր, 196-ր, 199-ր.
 Իլիկ (?).- 264-ր, 265-ր, 268-ր.
 Իսահակեան Աւետիք (Գաւառ).- 220-ր, 227-ր, 228-ր, 240-ր, 258-ր, 308-ր, 323-ր, 324-ր.

Լալայեան Աւետիք.- 96-ր, 98-ր.
 Լալվար.- տես Սահակեան Աւետիք (Հայր Արքայեան).
 Լեւոնեան Արմենակ Ս. (Աշոտ-Երկաթ).- 107-ր, 108-ր, 109-ր, 128-ր, 133-ր, 146-ր, 148-ր, 152-ր, 153-ր, 173-ր, 174-ր, 178-ր, 181-ր, 183-ր, 193-ր, 196-ր, 206-ր.
 Լորիս-Միլիթեան (Լուս Միլիթեան) Յովհաննէս, Բժիշկ.- 7-ր, 108-ր, 109-ր, 134-ր, 158-ր, 161-ր, 173-ր.

Կաթակ (Բարս).- տես Գարեգին Կաթակ.
 Կաշատրեան Սմբատ (Բորիս).- 52-ր, 54-ր, 67-ր, 96-ր, 98-ր, 135-ր, 137-ր, 322-ր, 324-ր.
 Կաշվանեան.- 324-ր.
 Կայրաբէկ Կարապետ (Լրտես).- 149-ր, 150-ր.
 Կան (Բիրեանեան Բարսեղ).- 137-ր, 144-ր, 145-ր, 193-ր, 197-ր.
 Կանազեան Գ.- 138-ր, 139-ր.
 Կարախանեան Ներսէս վարդապետ.- 104-ր, 186-ր, 189-ր, 192-ր.
 Կելչօ (Գաշակեան).- 145-ր, 147-ր.
 Կորեանեան Կ.- 134-ր.

Մերուկ (Բալա-ջան).- տես Ստեփանեան Ստեփան.

Կայծակ-վարդապետ (վարդապետ Պազուսեան).- 104-ր, 107-ր, 108-ր, 109-ր, 173-ր, 174-ր, 195-ր, 196-ր.
 Կարէն.- տես Յակոբեան Արամ.
 Կարին (Նաւանար).- տես Գալուստեան Միսաք.
 Կարնիկեան Կաշատր.- 324-ր.
 Կարմարշիկ (Մարգարեան Մարտիրոս).- տես Սաֆօ.
 Կերեկեան Կաշատր.- 9-ր, 133-ր.
 Կիլիկեան Բժիշկ.- 104-ր, 110-ր, 134-ր, 175-ր, 176-ր.
 Կիւրանեան Միլիթ.- 82-ր.
 Կոնս (Փափազեան վանք).- 104-ր, 110-ր, 134-ր, 177-ր, 179-ր, 180-ր, 230-ր, 258-ր, 274-ր, 283-ր, 287-ր, 324-ր.
 Կորիւն (Գաւառ իւս).- 204-ր, 205-ր.
 Կուկուրեան Մարգար.- 7-ր, 147-ր, 289-ր.
 Կոզմա.- 80-ր, 81-ր, 82-ր, 84-ր.

Համամշեան Երուսման (Հայկունի).- 108-ր, 109-ր, 137-ր, 196-ր, 324-ր.
 Համօ.- տես Օհանջանեան Համօ (Միք, Միքեան).
 Հայկունի Ա. եւ Գ.- 195-ր, 227-ր.
 Հայր-Արքայեան (տես Աւետիք Սահակեան).
 Հանգոյց.- տես Արայեան Նիկոլ.
 Հանքեան Արտաւազ.- 98-ր.
 Հասան-Քահսիս Փաշա.- 191-ր.
 Հատիկեան Մկրտիչ.- 96-ր.
 Հրայր-Գեորգի (Արմենակ Ղազարեան, Ռուսակեան).- 26-ր, 29-ր, 48-ր, 87-ր, 107-ր, 108-ր, 110-ր, 133-ր, 137-ր, 174-ր, 195-ր, 197-ր, 204-ր.
 Հրայ (Սեպուհ, Յարիստ).- տես Բիրեանեան Հայկ.

Ղազարեան Արմենակ.- տես Հրայր-Գեորգի.
 Ղազարեան Գեորգ.- 8-ր.
 Ղարա-Միլիթ (Տէր Գրիգորեան Բարսեղ).- 24-ր, 28-ր, 33-ր, 54-ր, 70-ր.
 Ղարիբ.- տես Ահարոնեան Աւետիք.
 Ղարիբեան (Բաղէտեան ?) Սամսոն.- 178-ր, 174-ր, 177-ր.
 Ղաւկասեան-Ռոստոմի.- 33-ր.

Հանկուլեան Յարութիւն (Հիւսնիկեան, Հիւսնիկեան, Հիւսնիկի).- 68-ր, 71-ր, 77-ր, 78-ր.
 Հելլուտայի (Շէյխ).- 187-ր.

Մազմանեան վանք.- 95-ր.
 Մալիճուկի Ռաման.- 325-ր.
 Մալխաս (տես Յովսէփեան Արտաշէս).
 Մալոյեան Պազուսեան.- տես Գալուստեան.
 Մալուսեան Կաշատր.- տես Ալիանի.
 Մամիկոնեան Գայեան.- 95-ր.
 Մամիկոնեան Ստեփան.- 95-ր.
 Մամաս Մարգար.- 324-ր.
 Մամասեան.- 240-ր.
 Մամբաշիւ.- 95-ր, 96-ր.
 Մամուլեան վանք (Տարամանեան).- 95-ր, 107-ր, 108-ր, 110-ր, 133-ր, 137-ր, 143-ր, 147-ր, 174-ր, 178-ր, 179-ր, 195-ր, 196-ր, 197-ր, 204-ր.
 Մամուլեան Արամ.- 80-ր, 85-ր.
 Մամուլեան Արամ (Սերգէյ).- 190-ր, 181-ր, 182-ր.
 Մատինեան Նատալիա.- 324-ր.
 Մատինեան Նիկոլ.- 324-ր.
 Մար, Մար-Շիմօն.- տես Տէր Մարտիրոսեան Միքայէլ.
 Մարգար վարդապետ.- 190-ր.
 Մարգարեան Մարտիրոս (Մաֆօ, Կարմարշիկ).- տես Մաֆօ.
 Մարքիւն.- տես Մարտիրոսեան Մարքիւն.
 Մարքա Կարլ.- 287-ր.
 Մախուտ (Լրտես).- 149-ր.
 Մելիք.- տես Կուստանեան Յովհաննէս.
 Մելիք Բարսիսեան Անդրէաս.- 142-ր.
 Մեծարեան Օրդ.- 145-ր.
 Մեծարեան Մարգար (Կամասարի վարդապետ).- տես վարդապետ.
 Մեծարեան Մեծար.- 150-ր.
 Մելիկեան.- տես Ալաւեր.
 Միհրան (Կարապետ).- 94-ր, 97-ր, 193-ր, 195-ր, 198-ր.
 Միսաքեան Արտաշէս.- 84-ր.
 Միրզայեան Յովսէփ (Արթակ Ռոստոմի).- 54-ր, 67-ր, 69-ր, 98-ր.
 Միրզայեան Գալուստ.- 191-ր.
 Միքայէլեան Գրիստափոս (Էլլէն).- 5-ր, 6-ր, 7-ր, 8-ր, 33-ր, 51-ր, 52-ր, 53-ր, 67-ր, 70-ր, 87-ր, 94-ր, 95-ր, 96-ր, 97-ր, 98-ր, 107-ր, 108-ր, 109-ր, 134-ր, 173-ր, 177-ր, 181-ր, 210-ր, 228-ր, 231-ր, 257-ր, 285-ր, 323-ր, 335-ր, 337-ր.
 Միք, Միքեան.- տես Օհանջանեան Համօ.
 Մուս-Բէկ.- 187-ր, 190-ր.
 Մուրատ Երզնկացի.- 96-ր.
 Մուրատ Սեբաստացի.- 197-ր, 256-ր, 258-ր, 263-ր, 271-ր, 274-ր, 316-ր, 322-ր, 324-ր.
 Մուրատեան Մարքիւն.- 96-ր, 98-ր, 107-ր, 108-ր, 109-ր, 134-ր, 147-ր, 150-ր, 153-ր.

Յակոբեան Արամ (Կարէն).- 33-ր, 34-ր, 53-ր, 67-ր, 70-ր, 71-ր, 86-ր, 88-ր, 94-ր, 96-ր, 98-ր, 105-ր, 127-ր.
 Յակոբեան Շաշմիկ.- 81-ր, 82-ր.
 Յարութիւնեան Մարտիրոս.- 140-ր, 143-ր, 173-ր, 324-ր.
 Յոնան.- տես Գալուստեան Յովսէփ.
 Յովհաննիսեան Միքայէլ.- տես վարդապետ Միքայէլ.
 Յովհաննիսեան Տիգրան.- 52-ր.
 Յովսէփեան Տատալիս (վանք ?).- 54-ր, 70-ր, 189-ր, 140-ր.
 Յովսէփեան Արտաշէս (Մալխաս).- 146-ր, 147-ր, 180-ր, 181-ր, 294-ր, 323-ր.
 Յօլման.- 134-ր, 175-ր.

Նազարեան Լիպարիս.- 317-ր, 319-ր, 324-ր.
 Նալպանեան Գեորգ Մայր. վարդապետ (Ընծայր).- 71-ր, 75-ր, 143-ր, 147-ր.
 Նալպանեան.- 329-ր.
 Նաւասարդեան վանք.- 7-ր, 8-ր.

Նեվրուզ.- 96-ր, 137-ր, 145-ր, 147-ր, 193-ր.
 Նիքրա.- տես Շահրիկեան Յարութիւն.
 Նիկոլ-Ռաման (Նիկ. Տէր Յովհաննիսեան).- 8-ր, 54-ր, 133-ր, 138-ր, 193-ր, 194-ր, 196-ր, 204-ր, 208-ր, 250-ր, 256-ր.
 Նորհատեան.- 322-ր, 324-ր.

Շաքիրեան Մարտիրոս.- 7-ր, 8-ր.
 Շահէն.- 53-ր, 71-ր, 80-ր, 127-ր.
 Շահիսարեան Աւետիք.- 324-ր.
 Շահ-Հիւսէյն.- 192-ր.
 Շահապ վարդապետ.- 97-ր, 107-ր, 108-ր, 109-ր, 137-ր, 143-ր, 144-ր, 146-ր, 147-ր, 178-ր, 179-ր, 208-ր, 210-ր.
 Շահրիկեան Յարութիւն (Նիքրա).- 34-ր, 54-ր, 67-ր, 90-ր, 93-ր, 94-ր, 236-ր, 238-ր, 240-ր, 241-ր, 242-ր, 324-ր.
 Շամիլ.- տես Բարսեղեան Մարգար (վանայ Մարգար).
 Շաշօ.- 141-ր.
 Շատիկեան Գ.- 110-ր, 185-ր, 186-ր.
 Շիշմանեան (Տէրսիմի Քեռի).- 8-ր, 54-ր, 70-ր, 88-ր, 89-ր, 93-ր, 93-ր, 93-ր, 93-ր.
 Շիսեան Սիմոն.- 323-ր.

Ռուսնոյ Յովսէփ.- տես Բաղէտեան Յովսէփ.

Ցիլիկեան.- 149-ր.
 Տոպանեան Արշակ.- 161-ր.

Պալիսեան.- 149-ր.
 Պազուսեան վարդապետ.- տես Կայծակ-վարդապետ.
 Պազուսեան Ալեքսանդր.- 271-ր, 272-ր, 275-ր, 280-ր, 282-ր, 302-ր, 323-ր, 324-ր.
 Պատրիկեան վարդ (վարդօ, Արվաթի).- տես վարդօ.
 Պարզեւ Ս.- 108-ր, 109-ր, 173-ր.
 Պարոյր.- տես Անգրանիկ.
 Պետօ (վասպուրականի, Ալեքսանդր Պետրոսեան).- 8-ր, 23-ր, 24-ր, 26-ր, 27-ր, 34-ր, 283-ր, 288-ր.
 Պետօ Պալկարացի.- տես Սերէմեան Պետրոս.
 Պետրով Գրիշա.- 325-ր.
 Պիոնեան Կարապետ.- 95-ր, 104-ր, 109-ր, 134-ր, 137-ր, 175-ր, 196-ր.
 Պիկ Յակոբ.- 24-ր.
 Պայանեան Սմբատ (Սիսակ, Էզվարդ).- տես Էսաւար, Էզվարդ.
 Պայանի Մատուր (Լրտես).- 149-ր, 150-ր.
 Պրեսման (Փրէսման Յարմախ աղ).- 160-ր, 161-ր, 204-ր, 205-ր.
 Պրոսպեան.- 337-ր.
 Պրոսպեան Նիկոլ.- տես Իշխան վանայ (Բայանդուր).

Ջալլազ.- 26-ր, 27-ր, 29-ր, 133-ր, 196-ր, 207-ր.
 Ջիւանիկ, Ջիւանիկեան.- տես Ջիւանիկեան (Ճիւանիկեան).

Ռահվեր.- 107-ր, 108-ր, 109-ր, 134-ր, 173-ր.
 Ռաշմանեան Տիգրան.- 140-ր.
 Ռոստոմ.- տես Զօրեան Ռոստոմ.
 Ռուբէն.- տես Տէր Միստան Ռուբէն.

Սահակեան Աւետիք (Լալվար, Հայր-Արքայեան).- 67-ր, 90-ր, 93-ր, 97-ր, 107-ր, 108-ր, 109-ր, 236-ր, 240-ր, 242-ր, 258-ր, 299-ր, 297-ր, 298-ր, 299-ր, 300-ր, 304-ր, 308-ր, 312-ր, 313-ր, 314-ր, 318-ր, 321-ր, 322-ր, 323-ր, 324-ր.
 Սահակեան Գրիգոր.- 81-ր.
 Սարգիս (վանայ).- տես Բարսեղեան Մարգար (Շամիլ).
 Սարիս.- տես Գեորգ Մարտիրոս.
 Սաֆօ Սեբաստացի.- 67-ր, 70-ր, 88-ր, 93-ր, 133-ր, 254-ր.

Մաֆո (Կարմրաբշիկ, Մարգարեան Մարտիրոս).- 97բ, 104ա, 107բ, 108ա, 109ա, 134ա, 137ա, 167բ, 171ա, 227բ, 228ա, 229ա, 231ա, 257բ, 258բ, 273ա, 277ա-բ, 285ա, 289ա, 292բ, 300բ, 314ա, 316բ, 323ա, 324բ.

Սեպուհ.- տես Քեօսեան Երուանդ.

Սերեմեան Հայկ.- 144բ.

Սերեմեան Պետրոս (Պետո, Պալկարացի).- 94ա, 95ա, 96բ, 155բ, 255բ.

Սեւ-Աշոտ.- տես Եղիկեան Կարապետ.

Սեպուհ (Հրաչ, Ֆարհատ).- տես Քիրեաբեան Հայկ.

Սեւ-Կարո.- 53բ, 54ա, 324բ.

Սերեմեան վարդգէս (Գիսակ).- 87ա, 88ա, 89բ, 93բ, 127ա, 143 ա, 144բ, 147ա, 177բ, 179բ, 180ա-բ, 204բ, 284ա, 323բ.

Սիսակ.- տես Էտուար (Պայանեան Սմբատ).

Սիմի վահէ.- 70ա.

Սլաֆ.- տես Օլիպիան Արմենակ.

Սմբատ (?).- 262ա, 266բ, 271ա, 272ա, 273բ, 275ա, 276բ, 278ա, 282ա, 290ա, 306բ, 307բ.

Ստեփանեան Ստեփան (Բալա-շան, Երուանդ).- 142բ, 147ա, 186բ, 187ա, 238ա, 256ա, 258բ, 305ա, 315բ, 323բ.

Վազգէն (Տերոյեան Տիգրան).- 34ա, 36ա, 47բ, 48բ, 284ա, 323բ.

Վալիսովսկի.- 326բ, 336ա-բ.

Վահան.- տես Մանուէլեան Վահան.

Վահան վարազ.- 80բ, 83բ, 84բ.

Վահանեան Տիգրան.- տես Եւուսեփեան Յովհաննէս.

Վահագ.- տես Վաստեան Արշակ.

Վահրամ.- տես Գալիֆայեան Յ.

Վարանդեան Միքայէլ (Յովհաննէսեան Միք.-) - 7ա, 8ա-բ, 50բ, 134բ, 137ա, 194բ, 196բ, 228ա, 243ա, 247ա, 258բ, 297բ, 311բ, 312ա, 313ա, 316ա, 318ա, 319բ, 324ա, 337բ.

Վարդան (Մեհրապետ Սարգիս).- 33բ, 34ա, 54ա, 67բ, 70ա, 83բ, 95բ, 133բ, 134ա, 135ա, 137ա, 196ա, 250ա-բ, 254բ, 255բ, 256ա.

Վարդանեան Գրիգոր.- 230բ.

Վարդանեան Սերոբ.- տես Ազրիւր-Սերոբ.

Վարդանեան Ստեփան.- 142բ.

Վարդանեան Փիլիպպոս.- 95ա.

Վարդ-Մանուչակ.- տես Արաբեանեան Յակոբ.

Վարդո (Արվաթի, Վարդ Պատրիկեան).- 53բ, 70ա, 80ա-բ, 81ա-բ, 82ա-բ, 83ա-բ, 84ա-բ, 85ա, 95բ, 96ա, 106ա, 109ա, 127բ, 153ա, 155բ, 156բ, 157ա, 175ա, 176բ, 185ա, 230բ.

Վարժապետ (?).- 260բ, 261ա-բ, 263ա, 264ա, 272ա-բ, 306բ, 322բ.

Վաստեան Արշակ (Վահագ, Գերգանեան Օճիկ).- 47ա-բ, 49ա, 50ա-բ, 51ա, 52բ, 53ա-բ, 67բ, 70ա, 77բ, 104ա, 107բ, 108ա, 109բ, 167բ, 173ա.

Վրացեան Սիմոն (Գառգիւնեան).- 6բ, 7ա-բ, 8ա, 45ա-բ, 88ա, 165ա, 186բ, 195ա, 200բ, 226բ, 227ա, 230բ, 237ա, 254բ.

Տամատեան.- 77բ.

Տաղրացի.- տես Գասպարեան Վրէն.

Տատեան Յարութիւն Փաշա.- 46բ, 60ա.

Տարագիր.- տես Իգմիրիեան Մատթէոս Պատրիարք.

Տէր Գրիգորեան Բարսեղ.- տես Ղարա-Միլիֆ.

Տէր Գալսեան Յովսէփ (Բժիշկ).- 259բ, 322ա, 324ա-բ.

Տէր Մարտիրոսեան Արտէմ.- 250բ.

Տէր Մկրտչեան Ստեփան.- 258բ, 259բ, 266ա, 282բ, 289ա, 293բ, 80ա, 96բ, 98ա.

Տէր Մինասեան Ռուբէն.- 5ա, 53բ, 69բ, 108բ, 181ա, 194բ, 210բ.

Տէր Մկրտչեան Ստեփան.- 258բ, 259բ, 266ա, 282բ, 289ա, 293բ, 302ա, 307ա, 315ա, 316բ, 322ա-բ, 324ա-բ.

Տէր Յովհաննէսեան Սարգիս.- 230բ.

Տէր Յովհաննէսեան Նիկողայոս.- տես Նիկոլ-Դուման.

Տէրոյեան Տիգրան.- տես Վազգէն.

Տորք.- տես Աշղկէօղեան Յ.

Տուրքախ.- 195ա-բ, 196բ.

Փաղիճեան Օրդ.- 139բ, 140բ.

Փաշայեան Կարապետ (Բժիշկ).- 140բ, 144ա, 145բ, 146ա, 186բ, 187ա, 236բ, 238ա-բ, 240բ, 241ա, 250բ, 258բ, 260ա-բ, 299բ, 302ա, 322բ, 324բ.

Փափագեան Վահան (Կոմս).- տես Կոմս.

Փափագեան Վրբանէս.- 179ա-բ.

Փոլիկ (Խմբապետ).- 110ա, 138ա, 139բ, 140ա, 142ա-բ, 147ա, 204բ, 208ա.

Փաշազունի Յովհաննէս.- 236բ, 238բ, 240բ, 241բ.

Քեօսեան Երուանդ (Սեպուհ).- 147ա, 237ա, 324բ.

Քիյա Փիւն.- 107բ, 108բ, 109բ, 204ա-բ, 205ա.

Քրիստափոր.- տես Միքայէլեան Քրիստափոր (Էլլէն).

Օգանեան Անդրանիկ (Զօրավար).- տես Անդրանիկ (Պարոյր).

Օլիպիան Արմենակ (Սլաֆ).- 142բ, 143բ, 144ա-բ, 145ա-բ, 147ա.

Օհանեան Սմբատ.- տես Զուարեան Սիմոն (Անտոն).

Օհանեան Քրիստափոր, Բժիշկ (Միքայիլ).- 53բ, 138բ, 147ա.

Օհանջանեան Համօ, Բժիշկ (Մեհր, Մեհրեան).- 227ա-բ, 228ա, 236բ, 240բ, 241ա-բ, 242բ, 258բ, 259բ, 260ա-բ, 261ա-բ, 262ա, 264ա, 265բ, 267ա-բ, 270ա, 271ա, 273բ, 288ա, 292ա, 293ա, 297ա, 310ա-բ, 316ա, 317բ, 322ա-բ, 324ա-բ.

Օհանջանեան Ռուբին.- 257բ.

Օհանջանեան Սարգիս.- 144ա.

Օհանեան Տիգրան.- 8ա, 123ա-բ.

Ֆարհատ (Հրաչ, Սեպուհ).- տես Քիրեաբեան Հայկ.

Ֆլէկեան Յովհաննէս (Զոչ-աղա).- 107բ, 108բ, 147ա, 208ա, 210բ.

Ֆրէճեան Երուանդ.- 147ա.

ՅՈՒՑԱԿ Բ. ՀԱՏՈՐԻ
ՅԱԿԵԼՈՒԱՅԻ
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ

Աբրո - 383բ.

Ալեք - 344բ.

Ալոյեան Գալուստ (Թորոս, Գարվիշ) - 371ա, 373ա, 373բ.

Ալմուցի (Մալուսեան Խաչատուր) - 364ա, 366ա.

Ախարոնեան Աւետիս (Ղարիբ) - 364ա, 366ա.

Ազատի - 345ա, 348բ.

Ազրիւր Սերոբ - 363բ, 377ա, 381բ.

Անդրանիկ (Պարոյր, Զօր. Անդրանիկ Օգանեան) - 348ա, 381.

Առաքել Ազ - 383բ.

Արամեան Արամ (Քարոյ) - 377ա, 379ա.

Արմէն Գարո - տես Փաստրմանեան Գարեգին

Արսէն (Ամիրեան Արսէն ?) - 304ա.

Արփիարեան Արփիար - 350բ, 364բ.

Բարա, Բարայեան - տես Գարեգին Խաժակ

Բարսեղ (?) - 383բ.

Բորիս - տես Խաչատրեան Սմբատ

Գարեգին Խաժակ (Բարա, Բարայեան) - 352ա, 356բ.

Գիսակ (Վարդգէս) - տես Սերեմեան վարդգէս

Գորչակով - 349բ.

Գուրգէն (Մալոյեան Պաղտատար) - 363բ, 363բ.

Եղիկեան Կարապետ (Սեւ Աշոտ) - 364ա, 365ա, 366բ.

Եուսուփ - 371բ.

Եուսուփեան Յովհաննէս (Միլիֆ, Վահանեան Տիգրան) - 344ա, 350բ, 350բ, 364ա, 366ա.

Զարեհ - 352ա, 356բ.

Զօրեան Ռուստոմ - 364ա, 365ա, 366ա.

Էլլէն (Քրիստափոր) - տես Միքայէլեան Քրիստափոր

Էտուար, Էզվարդ, Էտվարդ (Սիսակ, Պայանեան Սմբատ) - 352ա, 356բ, 360բ, 361բ.

Թարսուլ - տես Արամեան Արամ

Քիրեաբեան Հայկ, Հրաչ (Սեպուհ, Ֆարհատ) - 341ա, 348բ, 351բ, 353ա, 360բ, 361բ, 365ա.

Լակլակ - 350ա, 350բ.

Լեւոնեան Արմենակ Ս. (Աշոտ Երկաթ) - 363բ, 365բ.

Խաչատրեան Սմբատ (Բորիս) - 361ա, 361բ.

Կարէն - տես Յակոբեան Արամ

Կիւրանեան Մելիք - 350բ.

Կոնիէ - 380ա.

Կոստա - 380ա.

Համբարձումեան Կոստի - 371բ.

Համոթա Կարպիէլ - 378ա, 379բ.

Հատիկ (Պոստաղի) - 351բ.

Հրաչ (Սեպուհ, Ֆարհատ) - տես Քիրեաբեան Հայկ

Հրաչեայ Մարտի - 348բ.

Ղլթեան Գրիգոր - 355բ.

Ճանկիւեան Յարութիւն (Ճիւղեանկիւեան, Չիւղեանկիւեան, Չիւղեանկիւ) - 355բ.

Մալուսեան Խաչատուր - տես Ալմուցի

Մամուրեան - 353բ.

Մանուէլեան Վահան (Տոգրամանեան) - 364ա, 365բ, 381ա, 382ա.

Մաշուրեան Արաքսի - 364ա, 366ա.

Մատիւնեան Նիկոլ (Վահան) - 352ա, 353ա, 353բ.

Մար, Մար Շիմոն - տես Տէր Մարտիրոսեան Միքայէլ

Մարթին - տես Մուրաթեան Մարթին

Միլիֆ - տես Եուսուփեան Յովհաննէս

Մինասեան Արգիս (Արամ-Աշոտ) - 364ա, 366ա.

Միրզայեան Յովսէփ (Արթակ Ռշտունի) - 363բ.

Միքայէլեան Քրիստափոր (Էլլէն) - 361ա, 361բ, 364ա, 365ա, 366ա, 366բ.

Միլիքար (Յովհաննէս Շահնազար) - 359բ, 361ա, 361բ, 364բ, 366բ.

Միս Շահէն - 345բ, 358ա.

Մուրատ - 383բ.

Մուրատեան Մարթին (Քարեբունի) - 341բ, 344բ, 348ա, 352ա, 356բ, 357ա, 358ա, 363բ, 365բ.

Յակոբեան Արամ (Կարէն) - 341բ, 364ա, 366բ.

Նազարէկ - 359բ, 365ա.

Ներսէսեան Գրիգոր - 348ա.

Նիքրա - տես Շահրիկեան Յարութիւն

Նիկոլ-Դուման (Նիկողայոս Տէր Յովհաննէսեան) - 383բ.

Շահէն - 352ա.

Շահրիկեան Յարութիւն (Նիքրա) - 366ա.

ժամարեան Մարգար - 367ա, 367բ.

ժօրէս ժան - 359բ, 380ա.

Զագուա (?) 373ա.
Զոլոտովսկի Արշակ - 359բ.

Պարոյր (տես Անդրանիկ)
Պետո Գուլիարացի - տես Սերբուհեան Պետրոս
Պանոսյան (Հատիկ) - 341ա, 351բ.
Պարյան շէյխ - 330ա.
Պալան - 383բ.

Ռասուլզադեի Լարամով - 378ա, 379բ.
Ռասուլ - տես Զորեան Ռասուլ
Ռաշիդ - 383բ.

Սաֆո Սեֆարեցի - 364ա, 365բ.
Սեպուհ (Հրաչ, Տարխառ) - տես Թրքեանեան Հայկ
Սերբուհեան Պետրոս (Պետո, Պուլիարացի) - 363բ, 365բ, 380բ.
Սերբուհիլիան վարդգէս (Գիսուկ) - 364ա, 365բ, 381ա, 382ա.
Սմբատ - 383 բ.

Վազգէն (Տերոյեան Տիգրան) ? - 380բ.
Վահագ - տես Վասմեան Արշակ
Վարդանեան Միքայէլ (Յովհաննիսեան Միքայէլ) - 364ա, 366ա.
Վարդան - 371բ.
Վասմեան Արշակ (Վահագ, Գերձակեան Օհանիկ) - 341բ, 343ա-բ, 358ա, 361բ, 362ա, 365բ.

Վրացեան Սիմոն (Գուրգենեան) - 342ա, 373ա.

Տարեան վահագն - 343բ, 358ա.
Տամատ Մանուս - 364բ.
Տէր Ղազարեան Սահփան - 361ա.

Տէր Մարտիրոսեան Միքայէլ (Մար, Մար Շիմոն) - 341ա, 348ա, 351բ, 358ա, 363բ, 365բ.
Տըմիս Բոշէն - 380ա.
Տիգրան - 371բ.

Փաստրամեան Գարեգին (Արմէն Գարո) - 348ա, 404ա, 366ա.
Փափագ - 344բ.
Փափագեան - 350ա.
Փրեանուէ Պրեանիս - 359բ, 380ա.

Փայրեանի - տես Մարտեան Մարքին
Փիլա Փիլա - 369բ, 373բ, 380ա.
Փլեմանո, ժորժ - 380ա.

Պրան Անարոյ - 380ա.
Յէրբի, Էմբի - 380ա.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ել և սիւնակ

ՆԵՐԱՄԱԿԱՆ 5

Ա. — Հ Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳԻՐ
ԵՒ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ 7

1. — Հ. Յ. Դ. անդրանիկ կոչ յայտարարութիւնը (մանիփէտս) 9ա
2. — Յայտարարութիւն 9բ
3. — Հրատէր Ա. Ընդհ. ժողովի հայ յեղափոխականներին 10ա
4. — Մրագիր Հ. Յ. Դաշնակցութեան (1892) 11ա

Բ. — 1895-98 ԱՐԵՎԵԼԵԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ
ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ 17

1. — 1895ի «Ընդհանուր» Ռայոնական ժողովը 18ա
2. — Հ. Յ. Դ. Երևանի Ա. Ռայոն. ժողովի որոշումները 21բ
3. — Վասպուրականի Կ. Կ.ի նամակը Թարթուզի Բիւրոյին 22բ
4. — Գաղտնի շրջաբերական 24բ
5. — Զինուորական խորհուրդ 26ա
6. — 1896-97ի Հ. Յ. Դ. «Ընդհանուր» Ռայոն. ժողովը 29բ
7. — Վասպուրականի Կեդր. Կոմիտէի կարծիքները Ընդհ. ժողովի մասին 34ա
8. — Արձանագրութիւն Հ. Յ. Դ. (Կովկասեան Մարմիններու) 1897-98 տարեկան Շրջանական ժողովի 36ա

Գ. — Հ. Յ. Դ. ԵՐԿՐՈՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ 45

Ժողովի նախագահարարութիւնն ու ընթացքը
Ժողովի կազմը եւ որոշումները
Նիստերուն ամփոփ եւ կրճատ ատենագրութիւնը 46ա
53բ
54ա

ՅԱՆԵԼՈՒԱՆ 71

1ա. — Բիւրոյի 1895 տարուան Ա. կիսամեակի հաշուետախտակը 72
1բ. — Ատրպատականի Կ. Կ.ի 1896ի Ա. կիսամեակի հաշուեցոյցը 74
1գ. — Արարատեան Կոմիտէի 1897ի հաշուեցոյցը 74
2ա. — Գեորգ Մ. Վրդ. Նալպանտեանի (Ընծայր) նամակը 75ա
2բ. — Միսաքի (Առանձար, Կարին) նամակը 76բ
2գ. — Յ. ճանկիւղեանի նամակը 77բ
2դ. — Նիկոսիոյ Կոմիտէի նամակը 78բ
3. — Արամ Մանուկեանի (Մանուկեան ?) բողոքագիրը՝ Վարդ-Պատրիկի գործունէութեան մասին 80ա
4ա. — Յ. Թաղեանեանի բողոքի գիրը 85բ
4բ. — Կարէնի եւ Շահէնի բողոքը 86ա

Դ. — 1899-1903 ՏԱՐԻՆԵՐԸ 87

1. — Արեւելեան Բիւրոյի ժողով 89ա
2ա. — Արամ Յակոբեանի (Կարէն) պատասխանները Ս. Վրացեանի հարցումներուն 94ա
2բ. — Շրջաբերական Հ. Յ. Դ. Կոմիտէներուն 96բ
3ա. — Կոչ Կովկասահայերին 99բ
3բ. — Ոչ-աուստիպատակ հայերուն 101բ

Ն. — 1904-1905 ՏԱՐԻՆԵՐԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ 103

1. — Ալեքսանդրապոլի ժողովը եւ յարակից փաստաթուղթեր 105ա
1ա. — Ալեքսանդրապոլի ժողովը 105ա
1բ. — Նամակ Մուշէն 107ա
1գ. — Սասունի կռիւը 107ա
1դ. — Բագրեւանդի կռիւը 107բ


2. — Կովկասեան Մարմիններու 1904 բուսական ժողովները 200բ
2ա. — 1904 Ապրիլ-Մայիսի Ռայոն. ժողովը 201ա
2բ. — 1904 Յուլիսի Ռայոն. արտակարգ ժողովը 201բ

Ս. — 1. — Արձանագրութիւն Երրորդ Ընդհ. ժողովի 108ա
2. — Կազմակերպական շրջաններու տեղեկագրեր ա. — Տեղեկագիր Ատրպատականի Կ. Կոմիտէի հնգամեայ գործունէութեան 137բ
բ. — Հնգամեայ տեղեկագիր Ոսկեհամէի շրջանին մասին 147բ
գ. — Տեղեկագիր Պայհանեան շրջանի կազմակերպութեան 153բ
դ. — Տեղեկագիր Երուզական պրոպագանդի մասին 158բ
ե. — Հիւսիսակերտի Հ. Յ. Դ. Ուսանողութեան տեղեկագիրը 161ա
զ. — Տեղեկագիր Ամերիկայի շրջանի 165բ

3. — Այլ փաստաթուղթեր ա. — Հ. Յ. Դ. 1904 տարուան նախահաշիւը 168
բ. — Յուշագիր Սասնոյ ապստամբութեան առթիւ 170ա
գ. — շերտական Դաշնակցութիւնը 171ա

4. — Լիազորագրեր եւ նամակներ 173բ
Գ.Ը.Ժ.1. — Ատրպատականի Կ. Կ.ի լիազորագիրը 173բ
Գ.Ը.Ժ.2. — Ատրպատականի Կ. Կ.ի նամակը 173բ
Գ.Ը.Ժ.3. — Բարձրաւանդակի Պատ. Մարմնի լիազորագիր-նամակը 174
Գ.Ը.Ժ.4. — Պայհանի Կ. Կ.ի վկայագիրը 175ա
Գ.Ը.Ժ.5. — Երուզայի Հ. Յ. Դ. Ուսանողական Միութեան վկայագիրը 175ա
Գ.Ը.Ժ.6. — Հովիտի Կ. Կ.ի լիազորագիրը 175բ
Գ.Ը.Ժ.7. — Առանայի (Բազէ) Կ. Կ.ի լիազորագիրը 176ա
Գ.Ը.Ժ.8. — Բժ. Կիլիկեանի երկու նամակները 176բ
Գ.Ը.Ժ.9. — Ոսկեհամէի Առժամեայ Մարմնի գրութիւնը 176բ
Գ.Ը.Ժ.10. — Վնիսներու Գործադիր Ցանձնախումբի նամակը՝ Ատրպատականի Կ. Կոմիտէին 176բ
Գ.Ը.Ժ.11. — Կոմիտէի նամակը՝ Վանէն 177բ
Գ.Ը.Ժ.12. — Իշխանի նամակը՝ Վանէն 180ա
Գ.Ը.Ժ.13. — Սերգէյի եւ Մալխասի նամակը 180բ
Գ.Ը.Ժ.14. — Մելիքի (Յ. Նուսուֆեան) նամակը 182բ
Գ.Ը.Ժ.15. — Մելիքի նամակը 184բ
Գ.Ը.Ժ.16. — Մելիքի նամակը 185բ
Գ.Ը.Ժ.17. — Պ. Շատիկեանի նամակը 186ա
Գ.Ը.Ժ.18. — Կ. Պիտեանի նամակը 186բ
Գ.Ը.Ժ.19. — Նախկին Պատրիարք Իզմիրլեանի նամակները 186բ
Գ.Ը.Ժ.20. — Ներսէս Վրդ. Խարախանեանի նամակը՝ Ընդհ. ժողովին 189ա

| | | | |
|---|------|--|------|
| 2գ.— 1904 Սեպտեմբերի Ռայոն. արտակարգ ժողովը | 202ա | բ.— Արևմտ. Բիւրոյի տեղեկագրից | 255բ |
| 2դ.— Արևմտեան Բիւրոյի շրջաբերականը | 202ա | գ.— Սուլթանի մահափորձը եւ իզմիրը | 228ա |
| 2ե.— Յաւելուածական շրջաբերական | 204ա | դ.— Պոլսոյ մահափորձը | 256բ |
| 3.— Հ. Յ. Դ. Արևելեան Մարմիններու 1904 Դեկտ. 4րդ Ռայոնական ժողովը | 205բ | է.— Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ 1906 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒ | 258 |
| 3ա.— Զորքոյ Շրջանային ժողովի որոշումների արձանագրութիւնը | 206ա | Ղայ Յեզ. Դաշնակցութեան Ռայոն. ժողովի արձանագրութիւնները | 260ա |
| 3բ.— Ռայոնական ժողով 1904 ք. | 211ա | | |
| 3գ.— Հայ բանուորների | 224ա | | |
| 3դ.— Շրջաբերական-նամակ | 225ա | | |
| 4.— Հ. Յ. Դ. Խորհուրդի ժողովը եւ կովկասեան նախագիծը | 226բ | Ը.— ՅԱՐԱԿԱՆ ԼՐՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ՝ «ՕՒՆՐԱՆԱՅԻ ԱՐԽԻՆՆԵՐԸ | |
| 4ա.— Հ. Յ. Դ. Խորհուրդ | 227ա | Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ | 325 |
| 4բ.— 1905 ք. Խորհուրդը | 227բ | | |
| 4գ.— կովկասեան նախագիծը | 231բ | Օն 1.— Այնարկ կովկասեան յեղափոխական կուսակցութիւնների վրայ I Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն | 326ա |
| 4դ.— Բիւրոներու 1905 Օգոստոսի շրջաբերականը | 236բ | Օն 2.— Ռոստովի նամակը ամիշխանական Դեկամբրի | 335ա |
| 5.— 1905 Նոյեմբերի կովկասեան Ռայոնական ժողովը | 236բ | Օն 3.— Վալիսովսկիի նամակը Դեկամբրի | 336ա |
| 5ա.— 1905ի Հ. Յ. Դ. կովկասեան Ռայոն. ժողովը | 237ա | Օն 4.— Թիֆլիսէն նամակ Պերլին | 336բ |
| 5բ.— Ուղեցոյց կովկասի եւ Ռուսաստանի գործունէութեան համար | 243բ | Օն 5.— Ընկ. Կնո-Գնունիի նամակը Միքայել Գասպարեանիմ, ժընեւ | 337ա |
| ՅԱՒԵԼՈՒԱՆ I | | Օն 6.— Ընկ. Մ. Վարանդեանի մասին | 337բ |
| ա.— Եկեղեցական կալուածներու վերադարձը եւ Հ. Յ. Դ. Ոսկանապատի Կ. Կ. Ի շրջաբերականը | 247բ | Օն 7.— Ընկ. Ս. Ահարոնեանի մասին | 337բ |
| բ.— 1905 Յունիսի Գարի ժողովը | 249ա | Օն 8.— Ընկ. Գերասիմ Բալայեանի մասին | 338 |
| գ.— 1906 Փետրուարի (?) զինուորական խորհրդակցութիւնը | 250ա | ԻԲՐԵՒԻ ՎԵՐՋԱՐԱՆ | 339 |
| ՅԱՒԵԼՈՒԱՆ II | | ՅՈՒՑԱԿ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ | 341 |
| Շրջաբերական | 253բ | ՅՈՒՑԱԿ Բ. ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ ԹԻՇԱՏԱԿՈՒԱԾ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ | 342 |
| ՅԱՒԵԼՈՒԱՆ III | | ՅՈՒՑԱԿ Բ. ՀԱՏՈՐԻ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ | 343 |
| ա.— Վարդանի եւ Սաբոյի զինուորամիջ վիճակի ընդհ. ժողովին | 254բ | | |




Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԱՒԵԼՈՒԱԾԻ

| | |
|---------------------|-----|
| 4.— Լիազօրագիր | 366 |
| 5ա.— Ազգաբարոսագիր | 367 |
| 5բ.— Յայտարարութիւն | 367 |

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

| | | |
|-----|---|-----|
| 341 | Գ.— 1904ի Կովկասեան ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ | |
| | 1.— Արձանագրութիւն 1904 Մայիսի Արևելեան շրջանի Ռայոնական ժողովի | 368 |
| | 2.— Արձանագրութիւն Արևելեան շրջանի Արտակարգ Ռայոնական ժողովի (1904 Յուլիս) | 371 |
| | 3.— Արձանագրութիւն Արևելեան շրջանի Արտակարգ Ռայոնական ժողովի (1904 Սեպտեմբեր) | 373 |
| | Դ.— ԲԻՒՐՈՆԵՐՈՒ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ | |
| | 1.— Շրջաբերական Արևմտեան Բիւրոյի | 376 |
| | 2.— Շրջաբերական Արևմտեան Բիւրոյի | 376 |
| | 3.— Շրջաբերական Արևելեան Բիւրոյի | 377 |
| | 4.— Շրջաբերական Արևմտեան Բիւրոյի | 379 |
| | 5.— Շրջաբերական Արևմտեան Բիւրոյի | 380 |
| | 6.— Շրջաբերական Արևմտեան Բիւրոյի | 380 |
| | 7.— Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Մարմինների | 382 |
| | 8.— Գաղտնի նամակ Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական կոմիտեիին | 388 |
| | Ա.— ԵՎԱՄՔՅԻ ԺՈՂՈՎՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՆԱԿ ՆԻՒԹԵՐ | |
| | 1.— Մարքիս Մուրատեանի տեղեկագիրը «Կամֆ»ի ժողովին | 357 |
| | 2.— Արշակ Վասմեանի նամակը «Կամֆ»ի ժողովին | 358 |
| | 3.— Արձանագրութիւն Հ. Յ. Դաշնակցութեան կամքը Ներկայացնող Մարմին | 361 |



Հ Բ Ա Տ Ա Բ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

Ն Ի Թ Ե Բ Հ. Յ. Դ. Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Բ

Բ. Հ Ա Տ Ո Ր

Հրատարակության պատրաստեց եւ խմբագրեց ՀՐԱԶ ՏԱՄՆԱԳԵՏԵԱՆ



Հ Ա Մ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ի Վ Ա Հ Է Ս Է Թ Ե Ա Ն Տ Գ Ա Բ Ա Ն

Imprimé au Liban

Imprimerie HAMASKAYNE

Կերպարանագիր

Librairie HAMASKAINE
10, Rue Hussein Beyhoum
Beyrouth — Liban

ՀԱՄԱՂԳԱՅԻՆԻ
ՎԱՀԷ ՍԷՔԵԱՆ ՏԳԱՐԱՆ

Քառուկեր 064
Քառի 25
Ամսաթիվ 5-8-1966



ՀԱՄԱՂԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷՔԵԱՆ ՏԳԱՐԱՆ

Imprimé au Liban

Imprimerie HAMASKAINE